

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎ

**ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ**

17–19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2013 թ.

ՋԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2014

**NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA**

SECOND INTERNATIONAL CONGRESS ON ARMENIAN STUDIES

**ARMENIAN STUDIES AND THE CHALLENGES
OF MODERN TIMES**

**17–19 OCTOBER, 2013
COLLECTION OF PAPERS**

**“GITUTIUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA
YEREVAN –2014**

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

ВТОРОЙ МЕЖДУНАРОДНЫЙ АРМЕНОВЕДЧЕСКИЙ КОНГРЕСС

**АРМЕНОВЕДЕНИЕ
И ВЫЗОВЫ СОВРЕМЕННОСТИ**

**17-19 ОКТЯБРЯ 2013 г.
СБОРНИК ДОКЛАДОВ**

**ИЗДАТЕЛЬСТВО “ГИТУТЮН” НАН РА
ЕРЕВАН – 2014**

ՀՏԴ 941 (479.25):391/395=919.81:809.198.1

ԳՄԴ 63.3(2Հ)+63.5(2Հ)+81.2Հ

Հ 246

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի
բյուրոյի որոշմամբ

Գիրքը հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհուրդը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Յուրի Սուվարյան (նախագահ), Արարատ Ադալյան,

Պավել Ավետիսյան, Համլետ Գևորգյան, Ավետիք Իսահակյան,

Վիկտոր Կատվալյան, Վաչե Հովակիմյան, Լավրենտի Հովհաննիսյան, Սիեր Հովհաննիսյան,
Աշոտ Մելքոնյան, Տեր Արարատ քին. Պողոսյան, Գևորգ Պողոսյան, Ռուբեն Սաֆրաստյան,

Հրանտ Քոչարյան (պատ. քարտուղար)

Հ 246 **Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով. Հայագիտությունը և արդի
ժամանակաշրջանի մարտահրավերները: Ձեկուցումների ժողովածու.–**
Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2014. 583 էջ + 10 էջ նկ.:

Ժողովածուն ընդգրկում է «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտա-
հրավերները» խորագրով Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի նյութերը:

Նախատեսված է հայագետների և հայագիտությամբ հետաքրքրվող ընթերցող լայն
շրջանների համար:

ՀՏԴ 941 (479.25):391/395=919.81:809.198.1

ԳՄԴ 63.3(2Հ)+63.5(2Հ)+81.2Հ

ISBN 978-5-8080-1112-0

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2014

ԱՌԱՋԱԲԱՆ

2013 թվականի հոկտեմբերի 17-ից 19-ը Երևանում կայացավ «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» խորագրով Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովը, որը նախաձեռնել ու կազմակերպել էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և Երևանի պետական համալսարանը: Համաժողովն ունեցավ կարևոր հանգրվանային նշանակություն՝ արդի ժամանակաշրջանում հայագիտության նվաճումները համապարփակ ամփոփելու, լուծման ենթակա գիտական ու գործնական հիմնախնդիրները նախանշելու, հայագիտական հաստատությունների լայն համագործակցությունն ապահովելուն միտված կառուցակարգեր մշակելու, ներկա և ապագա գիտամշակութային ու ռազմավարական մարտահրավերներին դիմակայելու և դրանք հաղթահարելու նպատակով միջոցառումների ծրագրման ու իրագործման համար: Համաժողովի առաջին լիագումար նիստում բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, այնուհետև հրապարակվեցին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի ողջույնի խոսքը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի և Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի հայրապետական բանադրանքները:

Համաժողովում զեկուցումներով հանդես եկան 240 հայագետներ, այդ թվում՝ 60-ը արտասահմանյան հայագիտական կենտրոններից: Համաժողովում գործում էին ժամանակակից հայագիտության գրեթե բոլոր կարևորագույն ոլորտներն ընդգրկող 9 բաժանմունքներ՝ «Պատմություն», «Հնագիտություն և ազգագրություն», «Լեզվաբանություն», «Գրականագիտություն», «Արվեստ և ճարտարապետություն», «Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներ», «Հայ ինքնության հիմնախնդիրներ», «Հայ փիլիսոփայական, հասարակական-քաղաքական միտքը, ձեռքբերումները և զարգացման հիմնախնդիրները», «Հայագիտությունը և հայոց եկեղեցին» խորագրերով:

Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովն իր ընդունած բանաձևում արձանագրեց, որ Հայագիտական միջազգային առաջին համաժողովին հաջորդած տարիներին Հայաստանի Հանրապետությունում, Արցախում և արտերկրում զգալի աշխատանքներ են կատարվել հայագիտության մտավոր և կառուցվածքային ներուժի պահպանման ու զարգացման ուղղությամբ:

Հաշվի առնելով, որ հայագիտությունը հռչակվել է ՀՀ գիտական քաղաքականության գերակա ուղղություն, ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել են Հայագիտության զարգացման հայեցակարգը, 2012–2025 թթ. Հայաստանի Հանրապետության հայագիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը և այն կյանքի կոչելու ժամանակացույցը, որոնք ժամանակակից մարտահրավերների պայմաններում Հայաստանի Հանրապետության, Արցախի, արտերկրի հայագիտական հաստատությունների գործունեության արդյունավետության բարձրացման, համակարգման, համագործակցության ու կապերի ամրապնդման իրական հնարավորություններ են ստեղծում: Բարձր գնահատելով Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի, «Բանբեր հայագիտության» բազմալեզու գիտական հանդեսի, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ստեղծման, «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի նոր մասնաշենքի կառուցմանը միտված ջանքերը՝ համաժողովն առաջարկել է համահայկական հիմնադրամին միջոցներ նախատեսել տվյալների ընդգրկուն շտեմարանով էլեկտրոնային գրանցահամակարգ ստեղծելու համար, որտեղ կգրանցվեն հայագիտական հաստատությունները, հայագիտական հետազոտություններ կատարող գիտնականները, Հայաստանի Հանրապետության, Արցախի գիտական հաստատություններին և արտերկրի հայագիտական կենտրոններին՝ աշխատանքներ կատարել համատեղ նպատակային ծրագրեր, թեմաներ մշակելու և իրագործելու ուղղությամբ, որոնք պետք է նպաստեն համազգային խնդիրների լուծմանը, Սփյուռքում հայ ինքնության պահպանմանը, հայոց պատմական իրավունքների վերականգնմանը, Սփյուռքի համայնքների ինքնակազմակերպման ուղիներին կատարելագործմանը:

ՀՀ կառավարությանն առաջարկվել է ստեղծել ֆինանսական և կազմակերպական նախադրյալներ՝ արտերկրի տարբեր գրադարաններում, արխիվներում առկա՝ Հայաստանին և հայերին վերաբերող վավերագրերի, արխիվային նյութերի հավաքն ու թվայնացումն իրագործելու համար:

Կարևոր է համարվել Արցախի և արտերկրի հայագիտական հաստատությունների կողմից հայագիտական հետազոտությունների արդյունքների օգտագործումը քարոզչական նպատակներով՝ հայոց պատմությունը, մշակույթը միջազգային լայն հանրությանը ներկայացնելու, հայոց պատմության և մշակույթի խեղաթյուրումները կանխելու, մատաղ սերնդին կրթելու համար՝ կիրառելով հետազոտությունների տիրաժապորման համացանցային հնարավորությունները, հեռահաղորդակցության հնարավորությունների կիրառմամբ թեմատիկ գիտաժողովների, կլոր սեղանների պարբերաբար կազմակերպումը:

Հայագիտական հետազոտությունները համակարգող միջազգային նորաստեղծ գիտական խորհրդին առաջարկվել է մշակել և հաստատել հայագիտական հետազոտությունների գերակայությունների ցանկը, որոնք կիրառործվեն Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի միջոցների նպատակային օգտագործմամբ:

Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամին հանձնարարվել է աշխատանքներ կատարել և միջոցներ նախատեսել.

1. թողարկելու հայագիտական բազմալեզու կայքէջը ամբողջական տարբերակով,
2. մշակելու և իրագործելու հայագիտության տարբեր ոլորտներում աշխատող երիտասարդ գիտնականների որակավորման մակարդակի բարձրացման, կադրերի, այդ թվում՝ թարգմանիչների պատրաստման ծրագրեր,
3. կազմակերպելու հայագիտական միջազգային համաժողովներ, գիտական նստաշրջաններ, արդիական թեմաներով գիտական սեմինարներ,
4. տարբեր լեզուներով տպագրելու Հայագիտական հետազոտությունները համակարգող միջազգային գիտական խորհրդի կողմից հրատարակության երաշխավորված հայագիտական կարևորագույն աշխատություններ:

Համաժողովի շրջանակներում կազմակերպվեց կլոր սեղան՝ նվիրված հայոց հնագույն պատմության բանավիճային հարցերի շուրջ ազգային ընդունելի և հիմնավոր լուծումներ գտնելու խնդիրներին, ինչպես նաև տեղի ունեցան Հայագիտական հաստատությունների համագործակցությունը կազմակերպող միջազգային գիտական խորհրդի առաջին նիստը, վերջերս հրապարակված երկու աշխատությունների շնորհանդեսներ, արտերկրում նկարահանված հայ կերպարվեստին նվիրված ֆիլմի ցուցադրություն:

Այս ժողովածուն բովանդակում է Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի լիազորմար երկու և ինը բաժանմունքների ավելի քան չորս տասնյակ նիստերում ներկայացված ու քննարկված բազմաթիվ, հայագիտության առանձին բնագավառների արդի վիճակը և հիմնախնդիրներն արտացոլող զեկուցումները, որոնցում արտահայտված գաղափարները որոշակի ավանդ են հայագիտության տարբեր ոլորտների զարգացման ասպարեզում:

Յուրի Սովարյան

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար

ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյան

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի հարգելի՛ մասնակիցներ:

Թո՛ւյլ տվեք Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության անունից ողջունել ձեզ, ցանկանալ հաջողություններ, հետաքրքիր քննարկումներ համաժողովի ընթացքում:

Հայագիտական միջազգային առաջին համաժողովը կազմակերպվել է ուղիղ 10 տարի առաջ՝ 2003 թվականին: Այդ համաժողովում, որի նիստերը տեղի էին ունենում Երևանի պետական համալսարանում, որոշվեց, որ 3 տարի հետո և այդ պարբերականությամբ պետք է գումարվի նման համաժողով: Բայց այդ 3 տարին երկարաձգվեց, և երկրորդ համաժողովը տեղի է ունենում 10 տարի հետո:

Պետք է նշեմ, որ այդ 10 տարիների ընթացքում Հայաստանում գիտությունը, այդ թվում և հայագիտությունը, էապես զարգացել է: Լուրջ ձեռքբերումներ ունենք պատմագիտության, գրականագիտության, արվեստի և հայագիտության մյուս բնագավառներում: Այդ ժամանակահատվածում հիմնադրվել են հայագիտական մի շարք կազմակերպություններ և՛ Հայաստանում, և՛ արտասահմանյան բազմաթիվ երկրներում: Ստեղծվել է «Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ»:

Այս 10 տարիների ընթացքում բազմապատկվել են արդի ժամանակաշրջանի մարտահրավերները: Վերջին տարիներին մեր հարևանների կողմից հայոց պատմության ու մշակույթի դեմ հայագիտական հարձակումները դարձել են առավել վտանգավոր: Եվ այստեղ հայագիտությունը լուրջ անելիքներ ունի: Ուստի այս համաժողովը պետք է նախանշի այն կարևոր հիմնախնդիրները, որոնց լուծման ուղղությամբ առաջիկայում անհրաժեշտ է կատարել գիտական հետազոտություններ:

Վերջին տարիներին հայագիտության զարգացման նպատակով շատ կարևոր միջոցառումներ իրականացրեց Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Ինչպես արդեն նշեցի, ստեղծվեց «Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամը»՝ պետական ֆինանսավորմամբ: Այս իրողությունը մենք շատ ենք կարևորում: ՀՀ կառավարությունը որոշել է յուրաքանչյուր տարի հիմնադրամին տրամադրել 50 մլն դրամ: Սակայն մեր առջև դրված խնդիրները լուծելու համար պետական միջոցները բավարար չեն. հիմնադրամը պետք է սնվի նաև մասնավոր աղբյուրներից: Կարծում եմ՝ այս ուղղությամբ աշխատանքներ կկատարեն նաև մեր սփյուռքահայ հայագետները:

Շատ կարևոր էր ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումը: ՀՀ սփյուռքի նախարար տիկին Հ.Հակոբյանի անդուլ ու տքնաջան աշխատանքի շնորհիվ այս տարիների ընթացքում նախարարությունը սերտ հարաբերություններ է հաստատել ՀՀ ԳԱԱ հայագիտական ինստիտուտների հետ: Մենք շնորհակալ ենք նախարարությունից, քանի որ հայագիտության հետ կապված հարցերում միշտ էլ դժվարին պահին իր ձեռքն է մեկնում մեզ: Այդ աջակցությունը մեզ հնարավորություն է տալիս ոչ միայն կատարելու գիտական մշակումներ, այլև տպագրելու կարևոր աշխատություններ:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան հայագիտության գծով մինչ օրս հրատարակում էր երկու պարբերական՝ «Պատմաբանասիրական հանդես» և «Լրաբեր հասարակական գիտությունների»: Այսօր մենք արդեն երրորդ պարբերականն ունենք: Ինչպես հայտնի է, հիմնադրամի կողմից հիմնվել է «Բանբեր հայագիտության» հանդեսը: Արդեն ձևավորվել է խմբագրակազմը: Այն կհրատարակվի 5 լեզվով, իսկ ժամանակի ընթացքում միջոցների հնարավորության դեպքում կհրատարակվի 5-ից ավելի լեզուներով՝ նայած, թե ինչ քաղաքականություն կվարենք հաջորդ տարիներին:

Նշվածն իսկ արդեն ցույց է տալիս, որ ձեռքբերումները շատ են: Բայց կան նաև շատ ու շատ չլուծված առանցքային հիմնախնդիրներ, որոնք առնչվում են առաջին հերթին հայագիտությանը և, ինչու չէ, նաև մյուս գիտական ուղղություններին: Հուսով եմ՝ այս համաժողովը կարևոր որոշումներ

կկայացնի բազմաթիվ հարցերի վերաբերյալ, որոնք գիտության զարգացման ուղենիշ կդառնան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հայագիտական հիմնարկների, հիմնադրամի, հանրապետության հայագիտական այլ կազմակերպությունների և ՀՀ սփյուռքի նախարարության համար:

Անչափ կարևորում են նաև այն հանգամանքը, որ այս համաժողովը համընկնում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 70-ամյա հոբելյանի հետ. մենք փաստորեն հոբելյանական միջոցառումները շարունակում ենք այս համաժողովով:

Գիտությունների ազգային ակադեմիան 70 տարիների ընթացքում ունեցել է լուրջ նվաճումներ, որոնց մասին այս օրերին շատ է նշվել: Ակադեմիայի գործունեությունը շատ բարձր գնահատականի է արժանացել 12 երկրների գիտությունների ակադեմիաների նախագահների կողմից, ովքեր մասնակցում էին հոբելյանական միջոցառումներին: Դա մեզ ուրախացնում է և միևնույն ժամանակ պարտավորեցնում:

Հարգելի՛ ներկաներ, թույլ տվեք ավարտել իմ համառոտ ելույթը և համաժողովը հայտարարել բացված: Հուսով եմ, որ այս օրերին մենք կունենանք հետաքրքիր, արդյունավետ քննարկումներ:

Շնորհակալություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երևան, 11 հոկտեմբերի 2013թ.

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հարգելի՛ տիկնայք և պարոնայք

Ձերմոտեն ողջունում եմ Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի կազմակերպիչներին, մասնակիցներին և հյուրերին: Շատ ուրախ եմ, որ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախաձեռնությամբ համայն հայության և հայագիտության մայրաքաղաք Երևանում հավաքվել են հայագիտության հայտնի ներկայացուցիչներ ամբողջ աշխարհից:

Խորհրդանշական է, որ Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովն իր նիստերը գումարում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի 70-ամյա հոբելյանի օրերին:

Ուղիղ տասը տարի է անցել Հայագիտական միջազգային առաջին համաժողովից: Այժմ կրկին հավաքվել եք՝ ներկայացնելու հայագիտության ասպարեզում ձեր ձեռքբերումներն ու նվաճումները, նախանշելու հետագա անելիքները:

Հարյուրամյակների հեռվից սկիզբ առնող և պատմական արգասավոր ուղի անցած հայագիտությունն այսօր Հայաստանի Հանրապետությունում գիտության գերակա ուղղություններից է: Մեր օրերում հայագիտությունը ձեռք է բերել նոր շունչ, այն անխտնջ նվիրումով առաջ է մղում հայագետների ներկա սերունդը: Հենասյուն ունենալով հայագիտության դարավոր ու հարուստ ավանդույթները՝ Մխիթար Սեբաստացու, Ղևոնդ Ալիշանի, Միքայել Չամչյանի, Սյրտիչ Ավգերյանի և հայագիտական մտքի մյուս հսկաների գործը, դուք պատմական նոր պայմաններում հայոց անկախ պետականության հովանու ներքո ձեռնամուխ եք եղել համաշխարհային քաղաքակրթության մեջ հայ ժողովրդի ներդրման բացահայտմանը, մարդկության ընդհանուր մտավոր առաջընթացի գործում մեր ժողովրդի ծանրակշիռ ավանդի արժևորմանն ու իմաստավորմանը: Ուրախալի է, որ այսօր էլ օտարազգի հայագետները, հավատարիմ մնալով հայագիտության ասպետներ Անտուան Մեյեի, Վիկտոր Լանգլուայի, Ֆրեդերիկ Մակլերի, Հայնրիխ Հյուբշմանի և մյուս նվիրյալների պատգամներին, հաջողությամբ իրականացնում են իրենց ուսումնասիրություններն այս ասպարեզում:

Հայագիտությունը, ինչպես ամեն մի մեծ ու նշանավոր հոգևոր երևույթ, շարունակական զարգացման կարիք է գգում, և նրա վաղվա օրը ավելի լուսավոր ու պայծառ է լինելու, ինչպես մեր երկրի և ժողովրդի ապագան:

Միեկի՛ հայագետներ

Կրկին ողջունելով Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի կապակցությամբ մաղթում եմ ձեզ արգասաբեր աշխատանք և գիտական բեղմնավոր գործունեություն:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ
(17 հոկտեմբերի, 2013 թ.)**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» խորագրով Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի մասնակիցներին:

Մենք ուրախ ենք, որ տասը տարի անց Հայագիտական միջազգային առաջին համաժողովից, որը մեծ արձագանք գտավ գիտության մշակների շրջանում, կրկին աշխարհի բոլոր կողմերից ի մի են հավաքվել անվանի հայագետներ, մտավորականներ և գիտնականներ՝ իրենց ավանդը բերելու հայագիտական հարցերի քննարկմանը, նշելու հայագիտության զարգացման ուղիները:

Խորհրդանշական է, որ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի կողմից Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովը հրավիրվում է ակադեմիայի 70-ամյա հոբելյանի տոնախմբության տարում: Մեր ժողովրդի մշակութային մեծ ձեռքբերումներից մեկը՝ ակադեմիան, իր անուրանալի դերակատարությունն է ունեցել հայ գիտական մտքի նվաճումների, դրանց պահպանման և զարգացման կարևոր գործում:

Գնահատելի է, որ Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովը նպատակ ունի անդրադարձ կատարելու հայագիտության առջև ծառացած արդի մարտահրավերներին, որոնք նաև մեր երկրին ու ժողովրդին վերաբերող մարտահրավերներ են՝ սերտորեն առնչված հայության ազգային արժեհամակարգին և արագորեն փոփոխվող ներկա աշխարհում ունեցած աշխարհընկալմանը: Գիտաժողովի լայն ընդգրկումը հնարավոր է դարձնում հայագիտական ավանդական հարցերի կողքին արդի մշակույթի, գրականության և հայ կյանքի հիմնախնդիրների քննարկումը:

Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ համաժողովում արժանիորեն առանձնակի տեղ է գրավում «Հայոց Եկեղեցին և հայագիտությունը» բաժինը: Հայագիտությունը, հատկապես ողջ միջնադարագիտությունը, ուղղակիորեն և ամենասերտ կերպով առնչվում է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պատմությանը, եկեղեցաբանությանը, դավանանքին և ծիսական կյանքին: Առանց միջնադարյան խորհրդաբանական, մեկնաբանական, ծիսականոնական և դավանական հարցերի ճշմարիտ ըմբռնումի անկարելի պիտի լիներ միջնադարյան գրականության, մշակույթի, ճարտարապետության և փիլիսոփայության ուսումնասիրությունը:

Հայոց Եկեղեցի և հայագիտություն, Հայոց Եկեղեցի և գիտություն հարաբերությունը, սակայն, միայն անցյալի փորձառություն չէ: Թե՛ անցյալում և թե՛ այսօր ճանաչված հայագետների կողքին իրենց ջանքերն են բերում նաև մեր Եկեղեցու հոգևորականները՝ իրենց զեկուցումներով, հոդվածներով ու աշխատություններով հանդես գալով եկեղեցագիտության բնագավառներում, նաև հայագիտության, պատմագիտության և այլ ասպարեզներում: Ինչպես հայագիտությունն է մեծապես հենվում մեր հոգևոր և ազգային-եկեղեցական արժեքների վրա, այնպես և մեր Եկեղեցին այսօր հրամայական անհրաժեշտություն ունի հայագիտության տարբեր բնագավառների ժամանակակից ուսումնասիրության և նոր աշխատությունների հրատարակության միջոցով արժևորելու մեր հոգևոր ժառանգությունը և մեր արժեքները նորովի ներկայացնելու աշխարհին:

Ուրախալի է նաև, որ համաժողովում հայրենաբնակ գիտնականների կողքին մեծ թիվ են կազմում նաև սփյուռքահայ և օտարազգի հայագետները: Այս իրողությունը մեկ անգամ ևս վկայում է, որ մեր ժողովրդի ստեղծած մնայուն արժեքներն այսօր ևս գիտական լայն շրջանակների ուշադրության կենտրոնում են և ծառայում են ինչպես մեր, այնպես և այլ ժողովուրդների պատմության, մշակույթի ու քաղաքակրթության բազմաթիվ հանգուցային հարցերի լուսաբանմանը:

Մեր գնահատանքն ենք բերում համաժողովի նախանձախնդիր կազմակերպիչներին և մասնակից պատվարժան հայագետներին ու գիտնականներին: Առ Աստված աղոթքով մաղթում ենք, որ համաժողովի աշխատանքները լինեն արգասաբեր և դրական անդրադարձ ունենան հայագիտական մտքի և հայագիտության բոլոր ուղղությունների զարգացման վրա:

Բարի և արգասավոր ընթացք ենք մաղթում գիտաժողովի աշխատանքներին:

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, շնորհն ու օրհնությունը լինեն մեզ հետ և ամենքի, ամեն:

Օրհնությամբ



ԳԱՐԵԳԻՆ Բ՝

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

ARMENIAN CATHOLICOSATE
OF CILICIA
Antelias, Lebanon



كاثوليكوسية
الأرمن الأرثوذكس
أنطلياس، لبنان

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Անթիլիաս, Լիբանան

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ
(Երևան, 17 - 19 Հոկտեմբեր 2013)**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ, քրիստոնէական ջերմ սիրով ու ազգային վառ ապրումներով կ'ողջունենք Հայագիտական Միջազգային Երկրորդ Համաժողովի մասնակիցները: Բարձրօրէն կը գնահատենք Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի ներկայ նախաձեռնութիւնը հայագիտութեան եզակի կարեւորութիւնը շեշտող:

Արդարեւ, համաժողովի ընդհանուր խորագիրը՝ «Հայագիտութիւնը եւ արդի ժամանակաշրջանի մարտահրաւերները» կը պարունակէ այնպիսի հարցադրումներ ու հարցեր, մտահոգութիւններ ու առաջադրանքներ, որոնք կը կարօտին համապարփակ ու իրապաշտ քննարկումի: Վստահ ենք, որ համաժողովի մասնակիցները բարձրագոյն աստիճանի նախանձախնդրութեամբ եւ հայագիտութեան կալուածէն ներս իրենց ունեցած մասնագիտութեամբ ու փորձառութեամբ կարելոր նպաստ պիտի բերեն համաժողովի առաջադրած հարցերու քննարկման:

Գոհունակութեամբ կ'ուզենք հաստատել, որ համաժողովի օրակարգին մաս կը կազմէ նաեւ «Հայոց եկեղեցին եւ հայագիտութիւնը» նիւթը: Վստահաբար յիշեալ նիւթին լայնօրէն պիտի անդրադառնան համաժողովի հոգեւորական թէ աշխարհական մասնակիցները: Նոյն նիւթի կապակցութեամբ կ'ուզենք մի քանի մտածումներ բաժնել ձեզի հետ:

1. Հայագիտութիւնը հայ եկեղեցւոյ առաքելութեան բնագաւառներէն մէկը չէ սոսկ, ան անբաժանելի մասը կը կազմէ հայ եկեղեցւոյ կեանքին ու վկայութեան, ուսուցումներուն ու ծառայութեան: Այլ խօսքով, հայ եկեղեցւոյ կոչումին հետ անքակտելիօրէն ընդելուզուած է հայագիտութիւնը՝ հայ եկեղեցւոյ ծնունդէն մինչեւ այսօր: Հետեւաբար, խօսիլ հայագիտութեան մասին կը նշանակէ խօսիլ հայ եկեղեցւոյ մասին, եւ՛ փոխադարձաբար: Այս հայեցակէտով պէտք է դիտուին թէ՛ հայագիտութիւնը՝ յարաբերաբար հայ եկեղեցւոյ եւ թէ՛ հայ եկեղեցին՝ յարաբերաբար հայագիտութեան, նոյն կամարին տակ, նոյն շրջագծին մէջ, պատմական նոյն հոլովոյթի ծիրէն ներս:

2. Հայ եկեղեցին ո՛չ միայն հայոց այբուբենին ծննդավայրը եղած է, ոչ միայն հայ մշակոյթին գանձարանը դարձած է պատմութեան արհաւիրքներուն դիմաց, այլ նաեւ եղած է մշակոյթ ստեղծող, ծաւալող ու զարգացնող հոգեմտաւոր կառոյց: Արդարեւ, բազմաթիւ հոգեւորականներու տիրական ներկայութիւնը մատենագրութեան, պատմագրութեան, բանաստեղծութեան, երաժշտութեան, մանրանկարչութեան եւ հայ մշակոյթի այլ բնագա-

ւառներէն ներս պերճախօս վկայութիւն մըն է հայագիտութեան՝ հայ եկեղեցիին կատարած նշանակալից ներդրումին:

3. Հայագիտութեան աղբիւրը, պահապանը ու ջատագովը ըլլալու հայ եկեղեցւոյ կոչումը այսօր զինք կը դնէ նոր պարտաւորութիւններու ու հրամայականներու դիմաց, մանաւանդ երբ կը տեսնենք հայագիտութեան զգալի նահանջը: Հայ եկեղեցին չի կրնար անտարբեր մնալ, սոսկ դիտողի ու մտահոգուողի կրաւորական դերին մէջ ըլլալ, երբ հայագիտութեան կարելորութիւնը սկսած է դառնալ լուսանցքային թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Սփիւռքի մէջ: Փաստօրէն Հայաստանի պետութեան համար հայագիտութիւնն առաջնահերթութիւն չէ: Իսկ համալսարանական ուսանող թէ ուսուցիչ հետամուտ են եկամտաբեր այլ մասնագիտութիւններու: Հայագիտութեան վերաբժեւորումն ու անոր ունեցած յատուկ կարելորութեան վերաշեշտումը կը նկատենք հրամայական: Տարբեր չափանիշներով ու հեռանկարներով հարկ է մօտենալ այս հիմնահարցին: Հայագիտութեան ուսուցումը օտար համալսարաններէն ներս եւ հայագիտութեան ներկայութիւնը Հայաստանի եւ Սփիւռքի կրթական կառոյցներէն ներս տարբեր շեշտաւորում ու մօտեցում կ'ենթադրեն: Այս տարբեր մօտեցումներուն միջեւ ներդաշնակութիւնը կը նկատենք էական, եւ այս ուղղութեամբ Գիտութիւններու Ազգային Ակադեմիային դերը միշտ կը մնայ առանցքային: Հայ եկեղեցին, իր կարգին, կոչուած է հայագիտութեան նկատմամբ ունեցած իր յանձնառութեան նոր խորք, ծաւալ ու արտայայտութիւն տալու ներկայ ժամանակներու հրամայականներուն դիմաց:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, որուն համար հայագիտութիւնը միշտ կը մնայ առաքելութեան առաջնահերթ բնագաւառ, պարտաւոր է գործնապէս մասնակից դառնալու այն բոլոր նախաձեռնութիւններուն, որոնց նպատակը հայագիտութեան առաւել ծաւալումն ու զարգացումն է:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ յաջողութեամբ պսակէ Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի աշխատանքները:

Հայրական սիրոյ ջերմ ողջունի,

Աղօթարար՝


Վ.ՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
 ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

**ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

1. Հայագիտությունը՝ որպես հայկական պետության ազգային
ու գիտական քաղաքականության առաջնահերթ ու գերակա ուղղություններից մեկը

Ավելի քան 10 տարի է անցել Հայագիտական միջազգային առաջին համաժողովից, որ կազմակերպել էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և Երևանի պետական համալսարանը 2003 թ. սեպտեմբերի 15-ից 20-ը Երևանում: Համաժողովն ունեցավ կարևոր գիտագործնական նշանակություն հայագիտության զարգացման պատմական ընթացքի լուսաբանման ու նվաճումների գնահատման, Հայաստանի և արտերկրի հայագետների գիտական ներուժի համախմբման ու հետագա համագործակցության ապահովման առումներով: Միաժամանակ համաժողովը հայագիտության հետագա զարգացման համար կարևորեց Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող հիմնադրամի ստեղծման, բազմալեզու գիտական հանդեսի հիմնադրման, հայագիտական միջազգային կենտրոնի կազմակերպման անհրաժեշտությունը:

Հայագիտությունը դիտարկելով իբրև հայկական պետության ազգային ու գիտական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը՝ վերջերս ընդունվել են կարևոր որոշումներ, որոնք էական նշանակություն կունենան գիտության այդ ոլորտի հետագա զարգացման համար.

– ՀՀ կառավարության՝ 2012 թ. հունվարի 12-ի թիվ 1 արձանագրային որոշմամբ հաստատվել են «Հայագիտության զարգացման հայեցակարգը», «2012–2025 թթ. Հայաստանի Հանրապետության հայագիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը» և «Հայաստանի Հանրապետության հայագիտության ոլորտի զարգացման 2012–2025 թվականների ռազմավարության իրականացման միջոցառումների ժամանակացույցը»:

– ՀՀ կառավարության՝ 2012 թ. դեկտեմբերի 6-ի 1638-Ա որոշմամբ ստեղծվել է Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ՝ 50 մլն դրամ բյուջետային ֆինանսավորմամբ:

– ՀՀ-ում հայագիտական աշխատանքները համակարգելու համար գործում է ՀՀ վարչապետին կից և նրա նախագահությամբ Հայագիտության հարցերով խորհուրդ, որի կազմում ներգրավված են հայագետ գիտնականներ և պետական գործիչներ:

– ՀՀ ԳԱԱ նախագահության և հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշումներով ստեղծվել է «Բանբեր հայագիտության» հնգալեզու գիտական միջազգային հանդեսը:

– ՀՀ ԳԱԱ նախագահության որոշմամբ հաստատվել է Հայագիտական հետազոտությունները համակարգող միջազգային խորհրդի կազմը, որում ընդգրկված են Հայաստանի և արտերկրի հայտնի հայագետ գիտնականներ:

2. Հայագիտության հայաստանյան
ենթակառուցվածքներն ու հզորությունները

Հայագիտության հայաստանյան ժամանակակից ենթակառուցվածքն սկսել է ձևավորվել XX դարի 20-ական թթ. Երևանի պետական համալսարանի (1919 թ.), Էջմիածնի Կուլտուր-պատմական (1921 թ.) ու ՀԽՍՀ գիտության և արվեստի (1925 թ.) ինստիտուտների ստեղծմամբ: Հետագայում հիմնադրվեցին այլ կրթագիտական հաստատություններ ևս, սակայն հայագիտության զարգացմանը հզոր թափ հաղորդեց 1943 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի, իսկ 1959 թ. Պետական ձեռագրատան հիմքի վրա Մ. Մաշտոցի անվան ինն ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ Մատենադարանի ստեղծումը:

Այսօր հայագիտության զարգացման երեք հզոր հիմնասյուներն են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, Երևանի պետական համալսարանը, Մատենադարանը: ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի կազմում գործում են 9 գիտահետազոտական ինստիտուտներ, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը, «Հայկական հանրագիտարան» հրատարակչությունը (տես գծանկարը):

Երևանի պետական համալսարանում վաղուց գործող հայագիտական կենտրոնի հիման վրա վերջերս ստեղծվել է հայագիտական հետազոտական ինստիտուտ, գործում են հայագիտության զարգացման գործում մեծ ավանդ ունեցող 17 հայագիտական ուղղվածության ամբիոններ: Մատենադարանի թեմատիկ բաժինների թիվն ընդլայնվել է և հասել 9-ի:

Գիտարկենք նշված երեք հաստատությունների, ինչպես նաև Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) բանասիրական և պատմության ֆակուլտետների գործունեությունը բնութագրող և նրանց կարողություններն արտահայտող որոշ ցուցանիշներ (աղյուսակներ 1-5):

Աղյուսակ 1

Հայագիտական հաստատություններում գիտական աշխատողների թիվը 2012 թ.

| Հայագիտական հաստատություններ | Գիտական աշխատողների ընդհանուր թիվը | Այդ թվում | | | |
|---|------------------------------------|----------------------|----------------------|------------------|--------------------|
| | | ՀՀ ԳԱԱ իսկական անդամ | ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ | Գիտության դոկտոր | Գիտության թեկնածու |
| 1. ՀՀ ԳԱԱ ինստիտուտներ և այլ հաստատություններ | 587 | 7 | 14 | 100 | 304 |
| 2. ԵՊՀ | 219 | -- | 1 | 61 | 157 |
| 3. Մատենադարան | 116 | 1 | -- | 13 | 36 |
| 4. ՀՊՄՀ | 78 | -- | 1 | 15 | 51 |

Աղյուսակ 2

Հայագիտական հաստատությունների ֆինանսական ռեսուրսները 2012 թվականին

| Հայագիտական հաստատություններ | Ֆինանսական ռեսուրսների ծավալը, մլն դրամ | Այդ թվում | | | | |
|---|---|-----------------------|------------------------|------------------------------------|--|----------------|
| | | Բազային ֆինանսավորում | Դրամաշնորհային ծրագրեր | Նպատակային ծրագրային ֆինանսավորում | Ֆինանսավորում ազգային արժեքի պահպանման ծրագրով | Այլ աղբյուրներ |
| 1. ՀՀ ԳԱԱ ինստիտուտներ և այլ հաստատություններ | 1032,1 | 824,8 | 46,0 | 33,1 | 82,2 | — |
| 2. ԵՊՀ | 72,9 | 35,2 | 19,9 | — | — | 17,8 |
| 3. Մատենադարան | 172,1 | 151,0 | — | 21,1 | — | — |
| 4. ՀՊՄՀ | — | — | — | — | — | — |

Հարկ է նկատել, որ միայն ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտներին հատկացվում է «Հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրով (բազային) ԳԱԱ ֆինանսավորման ընդհանուր ծավալի 22,3 տոկոսը:

Աղյուսակ 3

Գիտական հրապարակումների ընդհանուր քանակը 2012 թվականին

| Հայագիտական հաստատություններ | Մենագրություններ | | Դասագիրք, ուսումնական ձեռնարկ | Հոդվածներ | | Թեզիսներ | |
|---|--------------------|---------------|-------------------------------|--------------------|---------------|--------------------|---------------|
| | Հանրապետությունում | Արտասահմանում | | Հանրապետությունում | Արտասահմանում | Հանրապետությունում | Արտասահմանում |
| 1. ՀՀ ԳԱԱ ինստիտուտներ և այլ հաստատություններ | 104 | 5 | 2 | 713 | 143 | 68 | 30 |
| 2. ԵՊՀ | 30 | — | 22 | 177 | 69 | — | — |
| 3. Մատենադարան | 13 | 2 | — | 11 | 8 | — | — |
| 4. ՀՊՄՀ | 6 | — | 5 | 182 | — | — | — |

ՀՀ ԳԱԱ համակարգի հաստատությունների հրապարակած մենագրությունների ավելի քան 90, գիտական հոդվածների շուրջ 56, արտասահմանում հրատարակությունների 20-28 տոկոսը բաժին է ընկնում հայագիտության բաժանմունքին:

ՀՀ ԳԱԱ համակարգում գիտական աշխատողների ընդհանուր թվում հայագիտության բաժանմունքի գիտական հաստատությունների գիտաշխատողների տեսակարար կշիռը շուրջ 24 տոկոս է, 1,7 տոկոսային կետով ավելի ֆինանսավորման տեսակարար կշիռը, սակայն ավելի քան երկու անգամ պակաս գիտական հրապարակումների միջին ցուցանիշից, ինչը վկայում է հետազոտական աշխատանքի հարաբերաբար բարձր արդյունավետության մասին:

Աղյուսակ 4

Կադրերի պատրաստումը (ընդհանուր թիվը, 2012 թ.)

| Հայագիտական հաստատություններ | Մագիստրատուրայում սովորողներ | Ասպիրանտներ | Դոկտորանտներ | Հայցորդներ |
|---|------------------------------|-------------|--------------|------------|
| 1. ՀՀ ԳԱԱ ինստիտուտներ և այլ հաստատություններ | 156 | 52 | – | 120 |
| 2. ԵՊՀ | 308 | 18 | 8 | 14 |
| 3. Մատենադարան | – | 7 | – | – |
| 4. ՀՊՄՀ | 55 | 2 | 3 | 23 |
| Ընդամենը | 519 | 79 | 11 | 157 |

Հայագիտական հաստատություններում գործում են կադրերի պատրաստման բոլոր եղանակները, և դրանք հնարավորություն են ընձեռում պատրաստելու բարձր որակավորման հայագետ գիտնականներ ու երիտասարդ կադրերով համալրելու համապատասխան կառույցները:

Աղյուսակ 5

Հայագիտական հաստատությունների տեխնիկական հագեցվածությունը

| Հայագիտական հաստատություններ | Համակարգիչների առկայությունը (հատ) | Ներքին համակարգչային ցանցի առկայությունը (այո, ոչ) | Էլեկտրոնային պաշարներ | | Էլեկտրոնային քարտադրանի առկայությունը | Հայագիտական կայքի առկայությունը (այո, ոչ) |
|---|------------------------------------|--|-----------------------|--|---------------------------------------|---|
| | | | Թվայնացված (էջ) | Բաժանորդագրություններ (թվարկել գրադարանները, հրատարակչությունները) | | |
| 1. ՀՀ ԳԱԱ ինստիտուտներ և այլ հաստատություններ | 66 | ոչ (5), այո (2) | ոչ | – | այո | այո (5), ոչ (3) |
| 2. ԵՊՀ | 66 | այո | 345400 | 6 | այո | այո |
| 3. Մատենադարան | 40 | այո | 1240 | 6 | ոչ | այո |
| 4. ՀՊՄՀ | 8 | ոչ | – | – | ոչ | ոչ |
| 5. ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարան | 12 | այո | 905604 | 8 | այո | այո |

Ուշագրավ է, որ վերջին տարիներին բարձրացել է հայագիտական հաստատությունների տեխնիկական հագեցվածության մակարդակը, ինչը հաստատվում է էլեկտրոնային պաշարների, էլեկտրոնային քարտադրանի և կայքէջերի ստեղծման ու շահագործման տիրապետող միտումներով:

Հրատարակվում են գլխավորապես հայագիտական ուղղվածության գիտական հանդեսներ: Հայագիտական հայտնի պարբերական «Պատմաբանասիրական հանդեսը» հրատարակվում է 1958 թվականից: Այն այժմ լույս է տեսնում տարեկան 3 անգամ: ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» գիտական հանդեսը հիմնվել է 1940 թ., ներկայումս լույս է տեսնում մույնպես տարեկան 3 անգամ:

Շարունակվում է լույս ընծայվել «Բանբեր Մատենադարանի» հանդեսը, որը հրատարակվում էր դեռևս ՀԽՍՀ կառավարությանը կից Պետական ձեռագրատան կողմից՝ 1940–1956 թթ. «Գիտական նյութերի ժողովածու» խորագրով:

ԵՊՀ-ն 1967 թ. հրատարակում է «Բանբեր Երևանի համալսարանի» հիմնականում հայագիտական ուղղվածության հանդեսը:

Ավելի քան վեց տասնամյակ հրատարակվում է Ամենայն հայոց կաթողիկոսության «Էջմիածին» պաշտոնական ամսագիրը:

Արդեն լույս է ընծայվել նոր հնգալեզու գիտական հանդեսի՝ «Բանբեր հայագիտության» առաջին համարը:

Վերջին տարիներին էականորեն ակտիվացել են միջազգային գիտական կապերը: Հատկապես ընդարձակ է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական կապերի աշխարհագրությունը, որն ընդգրկում է Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի, Ավստրալիայի, Ճապոնիայի գործընկեր հաստատությունների հետ համատեղ արշավախմբերի կազմակերպումը և հետազոտությունների արդյունքների լաբորատոր ամփոփումը: Գիտական կապերն ընդլայնում են Արևելագիտության, Պատմության, Արվեստի ինստիտուտները, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը:

Մատենադարանը արտասահմանյան գործընկերների հետ կնքել է 15 պայմանագիր, ԵՊՀ հայագիտական կառույցները՝ 3, և դրանց շրջանակներում իրագործում են համատեղ հետազոտություններ:

Միջազգային գիտական համագործակցությունը դրսևորվում է նաև միջազգային գիտաժողովներին մասնակցությամբ, համատեղ գիտական հրապարակումներով: Մասնավորապես 2012 թ. ՀՀ ԳԱԱ հայագիտական ինստիտուտների գիտնականները մասնակցել են 58, ԵՊՀ հայագետները՝ 34, Մատենադարանի մասնագետները՝ ավելի քան 3 տասնյակ միջազգային գիտաժողովների:

Շարադրվածից կարելի է եզրակացնել, որ հայաստանյան հայագիտական կառույցների կաթողությունները զգալի են, թեև դրանց բազմապատկման և արդիականացման անհրաժեշտությունն ու հնարավորություններն անվիճարկելի են:

3. Հայագիտության հիմնարար նվաճումները

Հայագիտական հաստատությունների հետազոտական աշխատանքի գերակա ուղղություններն են հայ ժողովրդի պատմության համակարգված հետազոտումը, հնագիտությունը, ազգաբանությունը, էթնոսոցիոլոգիան, բանահյուսությունը, մարդաբանությունը, վիմագրությունը, Մերձավոր և Միջին Արևելքի, Կովկասի, Արևելյան Ասիայի երկրների և ժողովուրդների պատմությունը և հարաբերությունները, հայերենագիտությունը, գրականագիտությունը, հայ տնտեսագիտական մտքի պատմությունը և արդի հիմնահարցերը, փիլիսոփայական և հայ գեղագիտական մտքի պատմությունը, գիտության փիլիսոփայությունն ու մեթոդաբանությունը, իրավունքի և հայ քաղաքական մտքի պատմության, ճարտարապետության և կերպարվեստի, ազգային երաժշտության և թատրոնի տեսության և պատմության հիմնախնդիրները:

Պատմագիտության առաքելությունը հայ ժողովրդի պատմության համակողմանի հետազոտումն է՝ հնագույնից մինչև նորագույն ժամանակաշրջան:

Պատմագիտական հետազոտությունները ծավալվել են հետևյալ հիմնական ուղղություններով.

- հին և միջնադարյան Հայաստանի պատմություն,
- աղբյուրագիտական ուսումնասիրություններ,
- հայ ազատագրական շարժումների, հայ-ռուսական և այլ ժողովուրդների հետ հարաբերությունների պատմություն,
- հայկական գաղթավայրերի պատմություն,
- Կիլիկիայի հայկական պետության պատմություն:

Իբրև հետազոտությունների արդյունք՝ հրատարակվել են բազմաթիվ արժեքավոր մենագրություններ, «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարը և ընդհանրացնող աշխատություն՝ «Հայ ժողովրդի պատմություն»՝ 8 հատորով (1967–1984 թթ.), որն արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի:

Հետխորհրդային շրջանում հետազոտական նշված ուղղություններին ավելացել են՝

- հնագույն հայկական պետական կազմավորումների պատմության համակողմանի ուսումնասիրություն,
- հայ-բյուզանդական հարաբերությունների հետազոտում,
- Հայաստանի տարածաշրջանների պատմություն և ժողովրդագրություն,

– Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ հիմնախնդիրների լուսաբանում, Հայոց ցեղասպանությունը փաստող գերմաներեն, ռուսերեն և այլ լեզուներով փաստաթղթերի ժողովածուների հրատարակում:

Խորհրդային գաղափարական սահմանափակումներից զերծ պատմագիտության ձեռքբերումները հրատարակվելու են «Հայոց պատմության» ակադեմիական նոր հրատարակությունում (4 հատոր՝ յուրաքանչյուրը 2 գրքով):

– 2010 թ. հրատարակվել են 3-րդ հատորի առաջին գիրքը (XVII դարի երկրորդ կես – 1900 թ.) և 4-րդ հատորի առաջին գիրքը (1918–1945 թթ.):

– Հրատարակվում է նաև «Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների ժողովածուն (լույս է տեսել 13 համար):

– Մատենադարանը հրատարակել է «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց» ծրագրված 35 հատորներից 7-ը: Ծարունակում է հրատարակել «Մատենագիրք Հայոց» մատենաշարը (լույս է տեսել 16 հատոր, որոնք ամփոփում են V-XI դդ. մատենագրական ժառանգությունը):

Հնագիտություն:

– Հնագիտության ուղղությամբ կարևոր արդյունքներ են գրանցվել մարդագոյացման, վաղ երկրագործական հասարակությունների ձևավորման գործընթացների, հին և միջնադարյան Հայաստանի պատմության և մշակույթի ուսումնասիրության ոլորտներում:

– Հնագույն Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան հնագիտական մշակույթների բացահայտման, լեռնաշխարհին բնորոշ հասարակական զարգացումների առանձնահատկությունների լուսաբանման համար առանցքային նշանակություն ունեն Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբերի ուժերով պեղված Կարմիր բլուրի նախաուրարտական շրջանի, Ջրահովիտի, Մեծամորի, Հառիճի, Այգևանի, Մոխրաբլուրի, Հոռոմի, Գեղարոտի, Ագարակի բնակատեղիների նյութերի ուսումնասիրությունները: Բրոնզ-երկաթեդարյան Հայաստանի մշակույթների ամբողջական նկարագրության, պարբերացման և ժամանակագրության համակարգի ձևավորման համար կարևոր տվյալներ են ձեռք բերվել ՀՀ տարբեր շրջաններում պեղված դամբարանադաշտերից (Լոռի բերդ, Լճաշեն, Օշական, Քարաշամբ, Թալին, Ծաղկալանջ, Հոռոմ, Սյունիք և այլն):

– Ուսումնասիրվել են Վանի թագավորության հեղինիստական, անտիկ շրջանների միջնադարյան խոշոր բնակավայրերը, հայոց մայրաքաղաքները, միջնադարյան վանական համալիրները (Վահանավանք, Խամշի վանք, Մարմաշեն, Ուշի, Հառիճ, Աքորի, Աղիտու, Հանդաբերդ, Յախսաց քար, Թեղենյաց և այլն):

– ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի Դաշնության, Իտալիայի, Բելգիայի, Ավստրիայի տարբեր համալսարանների ու գիտական կենտրոնների հետ համատեղ իրականացվել են հնագիտական ուսումնասիրություններ Հայաստանի տարբեր մարզերում, որոնց շնորհիվ հիմնովին թարմացվել է Հայկական լեռնաշխարհի և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության ու մշակույթի ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը:

– Հավաքվել, վերծանվել և մեկնաբանվել են Հայկական լեռնաշխարհի և գաղթօջախների հարյուրավոր վիմագիր արձանագրություններ:

– Հնագիտության և վիմագրագիտության ոլորտներում գիտական ուսումնասիրությունների արդյունքներն իրենց արտացոլումն են գտել «Հնագիտական պեղումները Հայաստանում», «Հայաստանի հնագիտական հուշարձանները», «Դիվան հայ վիմագրության» մատենաշարերում և բազմաթիվ մենագրություններում:

Ազգագրություն:

– Հիմնարար ուսումնասիրություններ են կատարվել ազգագրության ոլորտում, հատկապես հայոց նյութական և հոգևոր մշակույթի, առանձին պատմաազգագրական շրջանների, ազգագրության տեսական ու մեթոդաբանական հիմնախնդիրների ուղղությամբ:

– Վերջին տարիների ամենալուրջ հաջողությունը, որն ամբողջացնում է ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից հայ ազգագրության վերջին ձեռքբերումները, «Հայեր» հատորի հրատարակությունն է ռուսերենով (ՌԳ, Մոսկվա), որը գիտական բարձր մակարդակով ներկայացնում է հայոց մշակութային ժառանգության բոլոր հիմնական ոլորտներն ու կարևոր քայլ է հայոց մշակութային ժառանգության հանրայնացման ու միջազգայնացման ճանապարհին:

– Ազգագրության բնագավառում կատարած ուսումնասիրություններն իրենց արտացոլումն են գտել Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից 26 հատորով հրատարակված «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարում և բազմաթիվ մենագրություններում:

Արևելագիտություն:

– Թուրքագետներն իրենց ուշադրությունը կենտրոնացրել են Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության պատմության, ներքին և արտաքին քաղաքականության, սոցիալ-տնտեսական դրության, գաղափարական հոսանքների և այլ հանգուցային հարցերի լուսաբանման վրա: Առանձնահատուկ տեղ է գրավել թուրքական իշխանությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ցեղասպանության ծրագրի ուսումնասիրությունը:

– Արաբագիտության բնագավառում գերակայող է եղել արաբական երկրների ազգային-ազատագրական շարժումների, սոցիալ-քաղաքական և հոգևոր-մշակութային զարգացման ուղիների, միջարաբական, ինչպես նաև հայ-արաբական պատմաքաղաքական հարաբերությունների, իսլամի դերի և այդ երկրներում հայ համայնքների պատմության ուսումնասիրությունը:

– Իրանագիտության բնագավառում ուսումնասիրություններն ընթացել են Իրանի պատմություն, ներքին և արտաքին քաղաքականություն, իրանական բանասիրություն և հայ-իրանական պատմամշակութային հարաբերություններ ուղղություններով:

– Հետազոտական աշխատանքներում կարևոր տեղ է գրավել քրդերի, նրանց պատմության, բանահյուսության, հայ-քրդական փոխհարաբերությունների ուսումնասիրությունը:

– Ուսումնասիրվել են Ադվանքի, հայ-բյուզանդական քաղաքական-դավանական հարաբերությունների, հայ-վրացական փոխհարաբերությունների պատմության հարցերը:

– Անկախ Հայաստանի համար կարևոր նշանակություն է ձեռք բերել նաև արևելասիական աշխարհաքաղաքական տարածաշրջանի առաջատար երկրների՝ Հնդկաստանի, Չինաստանի և Ճապոնիայի հետ հարաբերությունների ուսումնասիրությունը:

– Հետազոտությունների արդյունքները հրատարակվել են Արևելագիտության ինստիտուտի հրատարակած տարաբնույթ ժողովածուներում՝ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» (յույս է տեսել 28 հատոր), «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ» (յույս է տեսել 8 հատոր), «Մերձավոր Արևելք» (յույս է տեսել 8 հատոր), «Կովկաս և Բյուզանդիա» (յույս է տեսել 6 հատոր), «Հին Արևելք» (յույս է տեսել 5 հատոր), «Արևելասիական ուսումնասիրություններ» (յույս է տեսել 2 հատոր), «Ժամանակակից Եվրասիա» (յույս է տեսել 2 հատոր):

Լեզվաբանություն:

– Հայ լեզվաբանները զբաղվել և շարունակում են զբաղվել առաջին հերթին հայերենագիտության հիմնարար հարցերով, հատկապես հայոց լեզվի կառուցվածքի և գործառության, պատմության և համեմատական քերականության ուսումնասիրությամբ, վերջին տարիներին նաև գրական արևելահայերենի և արևմտահայերենի քննությամբ, ուշադրության կենտրոնում են պահում գրական լեզվի կանոնարկման, տերմինաբանության մշակման, ուսուցողական լեզվաբանության հարցերը, ստեղծում ստուգաբանական, երկլեզվյան, բարբառային բառարաններ և տերմինարաններ, որոշակի աշխատանքներ են կատարվում հայերենագիտական ուսումնասիրություններում հաշվողական տեխնիկայի կիրառման, հանրալեզվաբանության, հոգելեզվաբանության, մաթեմատիկական լեզվաբանության զարգացման ասպարեզներում:

– Ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի և գործառության հետազոտության արդյունքների յուրատեսակ ամփոփումն է «Ժամանակակից հայոց լեզու» եռահատոր ակադեմիական հրատարակությունը:

– Զգալի աշխատանքներ են կատարվել ընդհանուր և համեմատական լեզվաբանության բնագավառում:

– Պատմաբառագիտական հետազոտությունների շրջանակում ուսումնասիրվել են գրաբարի, միջին հայերենի, վաղ աշխարհաբարի բառապաշարի շերտերը, դրանց գործառական առանձնահատկությունները, իմաստային խմբերը: Հնչյունական, հոլովման, բայական համակարգերի, բառակազմության պատմական նկարագրությունների յուրատեսակ ամփոփումն է «Հայերենի պատմական քերականություն» երկհատորյակը:

– Զգալի աշխատանք է կատարվել հայ բարբառների ուսումնասիրության ուղղությամբ: Հրատարակվել են բարբառներին վերաբերող մենագրություններ, մշակվել են հայ բարբառների հնչյունական, տիպաբանական և բազմահատկանիշ դասակարգման սկզբունքները:

– 1962 թ. Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում կազմվում և հրատարակվում են հեղինակային համաբարբառներ: Հրատարակված է գրաբար ինքնուրույն գրականության հեղինակային համաբարբառների ավելի քան 40 հատոր (2007 թ.՝ Թ. Մեծոփեցու (երկհատոր), 2011–2013 թթ.՝ Գ. Տաթևացու «Գիրք հարցմանցի» (հ. I–IV) համաբարբառները): Պատրաստ են Մ. Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի», Կ. Գանձակեցու «Պատմութիւն հայոց», Ուխտանէս Եպիսկոպոսի «Պատմութիւն հայոց» էլեկտրոնային համաբարբառները:

Գրականագիտություն:

– Լինելով ԳԱԱ հիմնադիր անդամ՝ Մ. Աբեղյանը երկհատոր «Հայոց հին գրականության պատմություն» կոթողային աշխատանքով հիմքը դրեց հայ գրականության ակադեմիական ուսումնասիրությունների: Համակողմանի ուսումնասիրման է ենթարկվել հայ միջնադարյան գրականության ժանրային համակարգը: 1950-ական թթ. առանձնակի կարևորություն է տրվել հայ միջնադարյան բանաստեղծության ուսումնասիրմանը: Առանձին մենագրություններ են նվիրվել հայ դասականների ստեղծագործությունների ուսումնասիրությանը: Հանրագումարային են Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հրատարակած «Հայ նոր գրականության պատմություն» հինգհատորյակը (1962–1979 թթ.), «Հայ քննադատության պատմություն» երկհատորյակը:

– Առանձնակի ուշադրություն է դարձվել 1910-ական թթ. վերջերով սկսվող նորագույն գրականությանը և ընթացիկ գրական կյանքին:

– Սփյուռքահայ գրականության պատմության ուսումնասիրության ուղղությամբ պատրաստվում է «Սփյուռքահայ գրականության հանրագիտարան»-ի երկհատորյակը:

– Իրականացվել է մի շարք տեսական հիմնահարցերի քննություն, որոնք վերաբերում են ազգային գրականության առանձնահատկություններին համաշխարհային գրականության համատեքստում:

– Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը, սկզբնավորման տարիներից սկսած, հրատարակել է հայ մի շարք դասականների երկերի ակադեմիական լիակատար ժողովածուներ:

Բանագիտություն:

– Հայ բանահյուսական մշակույթի հիմնական հետազոտություններն իրականացվում են հետևյալ ուղղություններով՝ բանահավաքչական աշխատանքներ, համահավաք բնագրերի կազմում, «Սասնա ծռերի» պատումների գրառում, ուսումնասիրություն և հրատարակություն, հայ բանահյուսության գրառման և հետազոտման պատմություն, բանահյուսության և գեղարվեստական գրականության փոխառնչությունների ուսումնասիրություն, բանահյուսական տեքստաբանություն և դրան առնչվող տարբեր խնդիրների ուսումնասիրություն, Մեծ եղեռնի ականատես վկաների հուշապատումների և եղեռնին նվիրված թուրքալեզու երգերի հավաքում ու ուսումնասիրություն: Բանահյուսական առանձին ժանրերի գիտական համահավաք բնագրերի կազմման և հետազոտության ուղղությամբ կատարված աշխատանքների շնորհիվ կազմվել և հրատարակվել են ավանդական գրույցների, «Հայ ժողովրդական հանելուկների», «Հայ հմայական և ժողովրդական աղոթքների», «Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգերի», «Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգերի», «Հայ ժողովրդական վիպերգերի ու պատմական երգային բանահյուսության» գիտական համահավաք բնագրեր:

Փիլիսոփայություն:

– Հայ փիլիսոփայության պատմության ոլորտում հետազոտությունները թույլ տվեցին բացահայտել ականավոր հայ մտածողների (Եզնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ, Անանիա Շիրակացի, Գրիգոր Մագիստրոս, Հովհաննես Սարկավազ, Վահրամ Բաբունի, Գրիգոր Տաթևացի, Հովհան Ռոտունեցի, Սիմեոն Ջուղայեցի, Ստեփանոս Լեհացի և ուրիշներ) գաղափարական ժառանգության տեղն ու նշանակությունը հայ փիլիսոփայության և մշակույթի պատմության համատեքստում: Ներկայացվեց հայ փիլիսոփայության պատմության ամբողջական նոր շարադրանք՝ անտիկ շրջանից մինչև XVIII դարը:

– Հետազոտություններ են կատարվել նաև փիլիսոփայության ընդհանուր հիմնահարցերի, մասնավորապես տրամաբանության բնագավառում: Առաջադրվել է բազմատրամաբանության գաղափարը, հատուկ ուշադրություն է նվիրվել ավանդական ձևական տրամաբանության և մաթեմատիկական տրամաբանության հարցերին, ձևակերպվել է լեզվաբանական լրացուցչության սկզբունքը:

– Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հիմնական հետազոտական ուղղություններից են գիտության փիլիսոփայությունը և մեթոդաբանությունը: 1960–70-ական թթ. կատարվեց անցում իմացաբանության ավանդական ընդհանուր խնդրակարգից դեպի գիտության փիլիսոփայության ու մեթոդաբանության և տրամաբանության բնագավառ, որը լայն ճանաչում բերեց «Գիտական գիտելիքի տրամաբանական վերլուծության փիլիսոփայական հարցերը» անունով հայկական դպրոցին:

– Գեղագիտության բնագավառում ուսումնասիրվել են գեղեցիկի էությանը, արվեստի առարկային, արվեստի առաջացմանը վերաբերող հիմնահարցերը, հետազոտվել են ազգային գիտակցության գեղագիտական դրսևորումները:

– Սոցիալական փիլիսոփայության ոլորտում հետազոտվել են աշխատանքի, տեխնիկայի, գիտության և գիտատեխնիկական առաջընթացի վերաբերյալ հարցեր:

Սոցիոլոգիա:

– 1988 թ.՝ Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո, հիմնվեց աղետների սոցիոլոգիան՝ որպես սոցիոլոգիայի բնագավառում հետազոտությունների նոր ուղղություն, որն առաջինն էր և միակը նախկին Խորհրդային Միությունում: Միաժամանակ հետազոտություններ ծավալվեցին արտագաղթի և փախստականների սոցիոլոգիայի, աղքատության, ընտանիքի, երիտասարդության և մանկության սոցիոլոգիայի, էթնոսոցիոլոգիայի ուղղություններով:

Իրավագիտություն:

– Իրավագիտության ոլորտում հետազոտությունները նվիրվել են իրավունքի պատմության և իրավունքի հուշարձանների, Հայաստանի պետականության, ինչպես նաև իրավունքի ձևավորման տեսական, շրջակա միջավայրի իրավական ապահովման և պաշտպանության հիմնախնդիրներին:

Ճարտարապետություն և արվեստ:

– Ճարտարապետության պատմության և տեսության բնագավառում կարևորագույն նվաճումներից է Գառնիի հեթանոսական տաճարի վերականգնման գիտական հիմնավորումը:

– Արվեստի ինստիտուտի, Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական խմբի և Վենետիկի «Հայ մշակույթի ուսումնասիրման կենտրոնի» համագործակցության շնորհիվ 1968–1998 թթ. Միլանում իտալերեն, հայերեն և անգլերեն հրատարակվեցին «Հայ ճարտարապետության վավերագրերը» մատենաշարի 23 պրակները, որոնք միջազգային գիտական հանրությանը ներկայացրին հայ շինարարական արվեստի գոհարները: Հանգրվանային աշխատանքներից է «Հայկական ճարտարապետության պատմություն» վեցհատորյակը. 1996–2004 թթ. տպագրվել են առաջին երեք հատորները, պատրաստ են հրատարակության հաջորդ գրքերը:

Կերպարվեստագիտություն:

– Կերպարվեստագիտության բնագավառում ստեղծվել են Կիլիկիայի, Գլաձորի, Վասպուրականի, Դրիմի, Արցախի մանրանկարչական դպրոցներին նվիրված մենագրություններ, ընդլայնվել են միջնադարյան հայ կերպարվեստի ուսումնասիրության շրջանակները, լուսաբանվել են նշանավոր մանրանկարիչ-ծաղկողների՝ Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի, Հակոբ Ջուղայեցու և այլոց ստեղծագործական ժառանգության յուրահատկությունները, գիտական ուսումնասիրության նյութ են դարձել հայկական զարդանկարչությունը, որմանկարչությունը, քանդակագործությունը, խաչքարերը, միջնադարյան հայ ճարտարապետության և կերպարվեստի մի շարք ճյուղերի համադրման հարցերը: Հայ կերպարվեստի պատմական զարգացումն ամբողջացնող կամ նրա առանձին խոշոր շրջափուլերին նվիրված հիմնարար ուսումնասիրություններ են «Очерки по истории армянского изобразительного искусства» կոլեկտիվ աշխատությունը և ազգային ճարտարապետության ու կերպարվեստի զարգացման ամբողջ ընթացքը ներկայացնող «Հայ արվեստի պատմությունը» (2009 թ., Հայաստանի պետական մրցանակ):

– Արգասավոր ճանապարհ է անցել հայ թատերագիտությունը՝ փաստական նյութի կուտակումից մինչև արվեստագիտական ընդհանրացումներ, մենագրական աշխատություններից մինչև թատրոնի պատմություն ու տեսություն: Համակարգվել և ամբողջացվել է հայ թատրոնի պատմությունը հնադարից մինչև XX դարի կեսը:

– Որոշակի առաջընթաց է ապրել նաև կինոգիտությունը: Հրատարակված աշխատություններում առանձին ուշադրություն է հատկացվել ինչպես հայ կինոյի ականավոր դեմքերի ստեղծագործության, այնպես էլ ազգային կինոարվեստի պատմական զարգացման ուսումնասիրությանը:

Հայ երաժշտագիտության զարգացումն ընթացել է երեք հիմնական ուղիով՝ հայ երաժշտության պատմություն ու տեսություն, հայ դասականների ստեղծագործական ժառանգության տպագրության նախապատրաստում ու հրատարակում, երաժշտական ֆոլկլորագիտություն:

4. Հայագիտության ոլորտի լուծման ենթակա հիմնախնդիրները

Հայագիտությունը՝ իբրև հայ ժողովրդի մտավոր և նյութական մշակույթի մասին գիտությունների համակարգ, ունի ներհատուկ հայտնի խնդիրներ և զարգացման օրինաչափություններ, որոնց ժամանակակից պայմաններում գումարվում են երկրի ազգային անվտանգության ապահովման և անկախ պետականության ամրապնդման կարևորագույն գործառնությունները: Ուստի գիտական այդ ուղղության համար համաշխարհային գիտությանը համընթաց զարգանալու, մարդկային քաղաքակրթության առաջընթացին նպաստելու հետ մեկտեղ կարևորվում են կիրառական կամ գործնական ու քաղաքական հայագիտության ծավալումը և ակտիվացումը առնվազն երկու հետևյալ ուղղություններով.

– մեր պատմության ու մշակույթի պաշտպանությունը տարածաշրջանային աշխարհաքաղաքական հայտնի նպատակներ հետապնդող տերությունների պետական մակարդակով կազմակերպվող կեղծարարություններից ու նենգափոխումներից: Այդ նպատակով հարկ է օտար լեզուներով թարգմանաբար հրատարակել մեր պատմության ու մշակույթի վերաբերյալ կողմնորոշող արժեքավոր աշխատությունները: Այդ խնդրի լուծմանը պետք է ծառայեն նորաստեղծ «Բանբեր հայագիտության» գիտական հանդեսը, Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող հիմնադրամի և ԵՊՀ հայագիտության ինստիտուտի համացանցային կայքերը, հայագիտական այլ հաստատությունների թղթային և էլեկտրոնային հրապարակումները: Այս և ընդհանուր գիտական առումներով չափազանց էական են միջազգային համագործակցության ակտիվացումը, արտասահմանյան գրախոսվող հանդեսներում հրապարակումների ավելացումը: Մեր ռազմավարությունը պետք է լինի ոչ թե առանձին կեղծարարություններ բովանդակող աշխատանքներին պատասխանելը, այլ համաշխարհային քաղաքակիրթ հանրության համակարգված իրազեկումը հայ ժողովրդի հարուստ պատմությանն ու բազմաբովանդակ և ինքնատիպ մշակույթին,

– հայոց պետականության զարգացման ու ամրապնդման համար շատ հրատապ, սակայն ավանդական հայագիտության շրջանակներում պատշաճ չափով չուսումնասիրված ոլորտների՝ քաղաքագիտության, միջազգային հարաբերությունների, պետական, վարչական և քաղաքացիական իրավունքի, սոցիոլոգիայի ասպարեզներում գիտական հետազոտություններն ակտիվացնելն ու բարձր որակավորման կադրեր պատրաստելը:

Շարունակում են արդիական մնալ պատմագիտության զարգացումը ազգային նշանակության հիմնախնդիրների վերաշարադրման և գաղափարախոսական նախկին կապանքներից ու սահմանափակումներից զերծ նորովի լուսաբանման, բանավիճային հարցերը գիտական հիմքով և ազգային շահերի հաշվառմամբ լուծելու, «Հայոց պատմության» մեկհատորյակը օտար լեզուներով հրատարակելու խնդիրները:

Ի դեպ, գաղափարական սահմանափակումների խորհրդային պայմաններում ձևակերպված գիտական գաղափարների վերանայման ու երևույթների նորովի լուսաբանման անհրաժեշտությունը վերաբերում է նաև գրականագիտությանը, արվեստաբանությանը, փիլիսոփայության և հայ հասարակական-քաղաքական մտքի պատմությանը: Հարկ է ընդգծել, որ համապատասխան ոլորտների մասնագետները նշված ոլորություններով, ինչպես արդեն նշվել է, կատարում են էական աշխատանքներ, սակայն անհրաժեշտ է դրանք ընդլայնել:

Չափազանց էական խնդիր է լեզվաքաղաքականության ակտիվացմանը նպաստելը՝ արևմտահայերենի և արևելահայերենի մերձեցման, հայոց լեզվի զարգացման կանոնակարգման, ժամանակակից տերմինաշինության, բարբառային հարուստ ժառանգության, համեմատական լեզվաբանության խնդիրների գիտական մշակմամբ:

Թեև հնագիտության, ազգագրության և բանագիտության նվաճումները զգալի են, սակայն շատ կարևոր է դրանց ուսումնասիրությունների աշխարհագրության ընդլայնումը՝ ներառելով Արցախի տարածքը, պատմական հայկական մյուս տարածքները, Սփյուռքը:

2012 թ. հրատարակվել է 1164 էջ ծավալով «Հայաստան» հանրագիտարանը, որը ՀՀ անկախության և ԼՂՀ հռչակումից հետո առաջին ամբողջական հանրագիտարանային հրատարակությունն է՝ հայոց պատմության, գիտության, տնտեսության և մշակույթի բոլոր բնագավառների ընդգրկմամբ, սակայն հասունացել է հայերեն նոր համապարփակ բազմահատորյա հանրագիտարանի հրատարակության անհրաժեշտությունը: Հիշեցնենք, որ Հայկական սովետական հանրագիտարանը հրատարակվել է 12+1 հատորով՝ 1974–1987 թթ.:

Վերջին տարիներին, ինչպես արդեն նշվել է, էական աշխատանքներ են կատարվել հայ մատենագրության և դասական գրականության, ընդհանրապես գրադարանային ռեսուրսների թվայնացման ասպարեզում, որտեղ մեծ դեր ունի ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանը: Հայագիտության զարգացման արդյունավետության, ձեռագրերի և արխիվային վավերագրերի պահպանության հեռանկարների տեսակետից Մատենադարանի առաջնահերթություններից են դարձել ձեռագիր և տպագիր ժառանգության թվայնացման աշխատանքները: 2007 թ. ստեղծված թվայնացման և համացանցային կայքէջի բաժինը օրեցօր մեծացնում է ձեռագրերի թվային պատճենների շտեմարանը: Սակայն կատարվածը դեռևս սկիզբն է և հարկ է շարունակել հայ մատենագրության վավերագրերի, պատմագիտական, գեղարվեստական, գիտական գրականության, արխիվային նյութերի, բառարանագրական հուշարձանների թվային գրադարանների (էլեկտրոնային ռեսուրսների) ստեղծման խիստ կարևոր աշխատանքը:

2015 թ. նշվելու է Հայոց ցեղասպանության 100 տարին, ուստի անհրաժեշտ է ոչ միայն հուժկու հակահարված հասցնել ցեղասպանությունը ժխտելու փորձերին, այլև շարունակել խոր և բազ-

մակողմանի ուսումնասիրել այն, ընդլայնել հետազոտության արդյունքների և թուրքական կառավարության կողմից իրականացված ցեղասպանության քաղաքականությունն ապացուցող փաստերի հրատարակությունը օտար լեզուներով, գնահատել ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած ժողովրդագրական, նյութական, բարոյաքաղաքական, մտավոր ու նյութական մշակույթի կորուստները՝ ապագայում փոխհատուցում պահանջելու ակնկալիքներով:

Շարունակում են օրախնդիր մնալ հայագիտական կենտրոնների համար երիտասարդ մասնագետների պատրաստման, գիտական թարգմանության արդիական դպրոցի ստեղծման, հայագիտական հաստատությունների նյութատեխնիկական ապահովվածության մակարդակի արդիականացման, հայագետ-հետազոտողների աշխատանքային կյանքի որակի բարձրացման խնդիրները:

Դիտարկենք երկու մեթոդաբանական խնդիր ևս: Ընդունված է, որ հայագիտությունը՝ որպես գիտական ուղղություն, առաջացել է XVIII դ. սկզբին՝ Մխիթարյան միաբանության արժեքավոր հետազոտությունների շնորհիվ և բուռն զարգացում ապրել XIX–XX դդ. ընթացքում: Անշուշտ, նշված ուղղության ստեղծման համար ամուր հիմք է հանդիսացել նախընթաց դարերի ընթացքում հայ պատմիչների և հայ ու օտարագիտի այլ մտածողների թողած վիթխարի ժառանգությունը: Կա մահ ուշադրության արժանի տեսակետ, ըստ որի հայագիտությունը՝ որպես գիտական ուղղություն, ձևավորվել է V դ., և առաջին հայագետները Մեսրոպ Մաշտոցն ու Մովսես Խորենացին են¹:

Այս տեսակետը կարող է խոցելի թվալ հնագույն ժամանակներում գիտական հետազոտությունների մեթոդաբանության անկատար լինելու պատճառաբանությամբ: Միաժամանակ գրեթե անվիճելի է այն դրույթը, որ հագիվ թե հնարավոր է առանց լուրջ գիտական պրպտումների ստեղծել այբուբեն, շարադրել մի ժողովրդի պատմություն, որը միջազգային ճանաչում է ստացել: Հարկ է մահ հաշվի առնել, որ Մխիթարյաններն ունեցել են գործունեության երկու հայտնի ուղղություն.

– արժևորելով նախընթաց դարերի ընթացքում ստեղծված մշակութային ժառանգությունը ոչ միայն որպես սկզբնաղբյուր, այլև գիտամշակութային որոշակի արժեք ներկայացնող, նախապատրաստել և հրատարակել են հայ պատմիչների երկերի քննական բնագրերը, համաշխարհային և հայ դասականների աշխատանքները,

– հրապարակել են ինքնուրույն պատմաբանասիրական, աշխարհագրական, բառարանագիտական արժեքավոր աշխատություններ:

Անդրադառնալով հայագիտության՝ որպես գիտական ուղղության, զարգացման փուլերի բնութագրության խնդրին՝ նշենք, որ մինչև այժմ հայտնի է մի պարբերացում, այն է՝ նախասովետական և սովետական²:

Բնականաբար, նման տեսակետն այսօր ընդունելի չէ: Քննարկման արժանի է հայագիտության զարգացման փուլերի հետևյալ տարբերակը.

I փուլ՝ V–IX դդ. (ոսկեդար և դրան հաջորդող ժամանակաշրջան),

II փուլ՝ X–XVII դդ. (հայագիտության բուռն զարգացման և ներուժի պահպանության ժամանակաշրջան),

III փուլ՝ XVIII–XIX դդ. (հայագիտության զարգացում եվրոպական երկրներում, Ռուսաստանում, Թուրքիայում, Հնդկաստանում գտնվող կենտրոններում, ինչպես մահ Շուշիում և Էջմիածնում գործող հայագիտական օջախներում),

IV փուլ՝ XX–XXI դդ. (հայագիտության վերելքը Հայաստանում և զարգացման ընթացքի պահպանումը արևմտյան երկրներում ու Մերձավոր Արևելքի հայաշատ շրջաններում գործող հայագիտական կենտրոններում):

Yuri Suvaryan (Armenia)

THE MODERN STATE OF ARMENIAN STUDIES IN ARMENIA AND PERSPECTIVES OF ITS DEVELOPMENT

¹ Տե՛ս Մարգարյան-Կատվայան Ս.Ա., Հայագիտության ձևավորման ժամանակի և հիմնախնդիրների հարցի շուրջ, Ե., 2013, 68 էջ:

² Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, Ե., 1980, էջ 130:

Considering Armenian Studies as one of the main directions of national and scientific policy of the Armenian state, the Government of the Republic of Armenia has established “The concept of development of Armenian Studies” and “The strategy of development of Armenian Studies in RA during 2012-2025”, as well as created an All-Armenian fund financing investigations in Armenian Studies. An international scientific journal “Herald of Armenian Studies” has been grounded, to be published in five languages, as well as an international council systematizing the investigations in Armenian Studies has been organized.

Armenian Studies are based in three main substructures: The National Academy of Sciences of RA (institutes of the department of Armenian Studies and Social Sciences), the Yerevan State University (faculties and the Centre of Armenian Studies), the scientific research institute of old manuscripts Matenadaran after M. Mashtots, as well as the Pedagogical and Art Studies high educational institutions, the State Universities of Gavar and Goris, chairs of Armenian Studies of other different high educational institutions. During 2012 the scientists of only the first three structures have published 147 monographs, among which 7 abroad, as well as 24 textbooks, 911 articles, among which 220 abroad. During the last years the level of technical support of Armenian Studies¹ institutions has essentially increased, which is attested by establishment and realization of corresponding electronic data bases, card-indices and sites. Six scientific journals are being published which have found wide recognition.

The main directions of research work of Armenian Studies institutions are the systematized study of history, archaeology, ethno-sociology, folklore, anthropology, epigraphy, philology, literature, problems of history of Armenian economic, philosophic and aesthetic mind, theory and history of law and Armenian political mind, architecture and fine arts, national music and theatre, history and relations of neighboring countries and peoples, towards which valuable, often world-known works have been published.

In the modern stage, parallel to fundamental investigations in Armenian Studies, is very essential to pay attention to development of applied and political approaches in Armenian Studies, as well as to activation of language politics, to broadening of geography of archaeological, ethnographic and folkloristic studies, to increasing works towards digitalization (= establishment of electronic data bases) of Armenian bibliographic and archival materials, historiographical units, dictionaries and other fundamental works.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նախ և առաջ կը փափաքիմ երախտագիտութիւնս յայտնել Հայաստանի Հանրապետութեան գիտութիւններու ազգային ակադեմիային և իր նախագահին՝ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանին այս հրաւերին համար: Մեծ պատիւ մըն է բացման այս հանդիսատիւը նիստին մասնակցիլ: Այս առաջին օրը, ինչպէս նաեւ համաժողովը նուիրուած են Ակադեմիայի հիմնադրման 70-ամեակին: Այս առիթը կը շահագործեն ամենաջերմ շնորհաւորութիւններս յայտնելու համար, այդ հեղինակատու հիմնադրութեան մաղթելով արդիւնաբեր գործունէութիւններու երկար և բազմաթիւ տարիներ ապագային:

«Հայագիտութիւնը և արդի ժամանակաշրջանի մարտահրաւերները». այն է գիտաժողովին ընդհանուր նիւթը: Հրաւիրուած են կարճ ակնարկ մը տալու Եւրոպական հայագիտութեան արդի վիճակին և իր խնդիրներուն: Այդ զեկուցումի պարտադրուած սահմաններուն մէջ անկարելի է մանրամասն նկարագրութիւն մը տալ. յոյս ունիմ որ լոկ ամենակարեւոր կողմերը ցոյց տալ պիտի յաջողիմ: Իմ ակնարկը հետեւեալ 4 կէտերուն կը վերաբերի՝

1. Եւրոպայի մէջ հայագիտութեան պատմութեան քանի մը կարեւոր փուլեր և հետազոտութեան ուղղութիւններ: Զաջածանօթ են, բայց կ'արժէ զանոնք յիշեցնել հակիրճ ձեւով, նոյնժամայն նշելով իրենց ժառանգութիւնը մինչեւ այսօր:

2. Եւրոպական համալսարաններուն հայագիտական կեդրոնները այսօր. հետազոտութեան գլխաւոր ուղղութիւններ եւ curricula: Անկարելի է բազմակողմանի եւ մանրամասն ցանկ մը տալ հոս. ընդհանուր լայնէր պիտի տամ, գիտաժողովի կազմակերպիչներուն առաջարկելով որ աւելի լրիւ ցանկ մը հրատարակուած ըլլայ Նիւթերու հատորին մէջ:

3. Պիտի փորձեմ յետոյ շեշտել ի՞նչ են իմ կարծիքով գլխաւոր խնդիրները եւ դժուարութիւնները մեր ճիւղը ներկայ եւ կենդանի պահելու նպատակով ակադեմիական աշխարհին մէջ այսօր: Այս նկատողութիւններս սերտորէն կապուած են հումանիտար գիտութիւններու ընդհանուր կացութեան հետ, որ միշտ լաւ կամ լաւատես չէ:

4. Իմ ներկայացման վերջին կէտը նուիրուած է Հայկական ուսումներու միջազգային ընկերակցութեան (AIEA)¹ գործունէութիւններուն: Ի հարկէ AIEA-ն Եւրոպայի հայագիտական ամենամեծ ընկերակցութիւնն է և մեծ ջանք կը քափէ հայագիտական գործունէութիւնները համակարգելու նպատակով միջազգային մակարդակին վրայ: Երկու տարի առաջ իր հիմնադրման 30-ամեակը տօնախմբեց:

1. Եւրոպայի մէջ հայագիտութեան պատմութեան քանի մը կարեւոր փուլեր և հետազոտութեան ուղղութիւններ

Եւրոպայի մէջ հայագիտական ասանդութիւնը երկար և հարուստ պատմութիւն մը ունի: Այս պատմութիւնը զանազան ծագումներ ունեցաւ զանազան տեղերուն մէջ: Օրինակ՝ համեմատական լեզուաբանութիւնը եւ այսպէս կոչուած «դրախտի լեզուներու» փնտրտուքը հայերէնի ալ նկատմամբ ուշադրութիւնը գրաւեցին: Ի հարկէ հնդեւրոպական լեզուներու ընտանիքին «գիտէն» ետք, արդէն 19-րդ դարու առաջին կէսին մէջ եւրոպական քանի մը արեւելագետներ հայերէնը ուսումնասիրեցին՝ ենթադրելով որ հնդեւրոպական լեզու է, նոյնիսկ եթէ սխալմամբ իրանական ճիւղին պատկանող բարբառ մը համարեցին զայն, զոնէ Հիւբշմանն (J.H. Hübschmann) աշխատանքներէն առաջ²: Հնդեւրոպական ենթադրութիւնը արուեստի պատմութեան վերաբերեալ ուսումնասիրութիւններուն վրայ եւս իր ազդեցութիւնը ունեցաւ. կը բաւէ մտածել հայկական միջնադարեան ճարտարապետութեան վերաբերեալ J. Strzygowski-ին հետազոտութիւններուն մասին³:

Ընդհանուր առմամբ Արեւելքի հանդէպ ներգրաւումը, որ 17-րդ-18-րդ դարէ սկսեալ Եւրոպայի մէջ տարածուեցաւ, կարեւոր մղում մը տուաւ հայագիտական ուսումնասիրութիւններուն: Յիշենք իբր միակ օրինակ այն ճամբորդութիւնները, որ Louis XV թագաւորը կազմակերպեց Պոլիս 1728-1730 թուականներուն: Այդ ճամբորդութիւններուն միջոցով Ֆրանսայի Ազգային Գրադարանը բազմաթիւ հայերէն ձեռագիրներ կրցաւ ստանալ: Չեռագիրներու միջոցով արեւմտեան գիտական աշխարհը

¹ Association Internationale des Etudes Arméniennes / Հայկական ուսումներու միջազգային ընկերակցութիւն:

² J. H. Hübschmann, "Ueber die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen," *Zeitschrift für vergleichende Sprachforschung auf dem Gebiete der Indogermanischen Sprachen*, 23 (1875), 5-49.

³ Strzygowski-ի եզրակացութիւններու զաղափարախօսական եւ անհիմն կողմերը ծանօթ են: St'eu C. Maranci, "The Historiography of Armenian Architecture: Josef Strzygowski, Austria, and Armenia", *Revue des Etudes Arméniennes* 28 (2001-2), 287-308.

սկսաւ հետաքրքրուիլ հայկական հին գրականութեան երկերով եւ հայ հին հեղինակներով եւս, եւ մանաւանդ Մովսէս Խորենացիի Հայոց պատմութեամբ:

Նոյն ժամանակ յունարէն եւ ասորերէն երկերու հին հայերէն թարգմանութիւններուն բանասիրական արժէքը արեւմտեան գիտնականներուն ուշադրութիւնը գրաւեց: 1734 թուականին Ֆրանսայի Ազգային Գրադարանին հայերէն ձեռագիրներուն առաջին ցուցակին պատրաստողը՝ Guillaume de Villefroy, այսպէս կը գրէր (հին ֆրանսերէն)՝

« ... Il a été des siècles tels que les 9, 10, 11, 12 et 13e où l'Arménie pouvoit donner des leçons à une grande partie de la terre et qu'elle paroît avoir eu pendant tout ce temps des hommes célèbres en tout genre d'érudition: théologiens, orateurs sacrés, poètes, philosophes, liturgistes, historiens, astronomes, traducteurs très habiles, hommes versés dans les langues grecque, syriaque, arabe, persane et latine. ... L'amour que les Arméniens ont eu pour les langues célèbres que nous venons de nommer doit nous rendre cette nation bien chère et bien précieuse, car il est arrivé de la que les sçavants d'entre eux aiant traduit ce qu'il y avoit de meilleur parmi les ouvrages écrits en ces sortes de langues ont rendu leur patrie dépositaire de toutes sortes de livres sçavants».

Մէկ դար մը յետոյ, մօտ 1830-ին, Գիտութիւններու Թագաւորական (Պրուսական) ընկերակցութեան անդամները սկսան հետաքրքրուիլ արեւելեան հին թարգմանութիւններով, առանց մոռնալու հայերէն հին թարգմանութիւնները⁴: Այն ատեն հին հայերէն թարգմանութիւններուն բանասիրական արժէքը եւ ընդհանրապէս հայկական հին գրականութեան եւ պատմութեան հետաքրքրութիւնը հետզհետէ աւելի յայտնի եղան մանաւանդ Մխիթարեան Միաբանութեան վարդապետներու ուսումնասիրութիւններուն եւ քննական հրատարակութիւններուն շնորհիւ: Մխիթարեան գրադարաններուն հարստութիւնները՝ Վիեննա եւ Վենետիկ, ինչպէս նաև Մխիթարեաններուն հմուտ աշխատանքները կարելորդ դեր մը խաղացին եւրոպական ակադեմիական եւ գիտուն աշխարհի մէջ:

Բանասիրական հետազոտութիւններու օրինակները պիտի կրնային բազմապատկուիլ: Յիշենք միայն, որ բանասիրական մօտեցումը տարբեր ուղղութիւններ առաւ: Ի միջի այլոց կրնանք յիշել Եկեղեցիի Հայրերուն յունարէն եւ ասորերէն երկերուն վերաբերեալ աշխատանքները, ինչպէս նաեւ յունական «արտաքին» (ոչ կրօնական) երկերուն վերաբերեալ ուսումնասիրութիւնները:

Հետաքրքրական է նաև յիշել, որ նոյնիսկ եկեղեցական քաղաքականութեան հետ կապուած պահանջները և դոգմատիկ հարցերը գիտական հետաքրքրութեան մը հիմքը եղան: Կը մտածեմ Propaganda Fidei գրուածներուն և հրատարակութիւններուն մասին, և օրինակ՝ Clemente Galano-ին Grammaticae et logicae institutiones linguae literalis armenicae Armenis traditae... addito vocabulario armenolatino omnium scholasticarum dictionum երկին մասին (Հռովմ 1645): Հայոց ուղղափառութիւնը ստուգելու կամքը հայոց լեզուի և կրօնական գրականութեան հանդէպ ուշադրութեան պատճառ մը եղաւ:

Առանց խօսքս երկարացնելու, կարելի է ըսել վստահ ձեւով որ հայկական մշակոյթի, արուեստի, պատմութեան, գրականութեան նկատմամբ «գիտական Եւրոպային» հետաքրքրութիւնը հեռու անցեալի մը մէջ իր արմատները կը նետէ: Այդ աւանդութիւնը իր ազդեցութիւնը ունեցաւ եւրոպական ակադեմիական աշխարհին վրայ. հայագիտական ուսումնասիրութիւններու զարգացումը աջակցեց յաջորդ տարիներուն ընթացքին: Կը բաւէ յիշել, իբր օրինակ մը, որ INALCO-ի հայագիտական ամպլոնին հիմքը արեւելագէտ և լեզուագէտ Chahan de Cirbied-ին (Շահան Ջրպետեան) հետ կապուած է, որ հայերէնի առաջին քերականութիւնը հրատարակեց ֆրանսերէնով⁵:

2. Եւրոպական համալսարաններուն հայագիտական կեդրոնները այսօր. հետազոտութեան գլխաւոր ուղղութիւնները եւ curricula

2.1. Հետազոտութեան գլխաւոր ուղղութիւնները

Վերոյիշեալ հին և ճոխ աւանդութիւնը միշտ կենդանի է այսօր հայագիտական զանազան կեդրոններուն մէջ եւ զանազան հայագէտներուն շնորհիւ, որ կարելորդ դեր մը կը խաղան: Դժուար պիտի ըլլար հայագիտական այդ հեղինակաւոր աւանդութիւնը շարունակող բոլոր դէմքերը յիշել: Խօսքս պիտի սահմանափակեմ ակադեմիական կեդրոններուն մասին, առանց փորձելու նշել բոլոր անձնաւորութիւնները, որոնք հայագիտութեան մարզին մէջ էական գործ մը կը կատարեն:

Կարելի է ըսել, որ լեզուաբանութիւնը միշտ կարելորդ դեր մը կը խաղայ: Բաղդատական քերականութեան և լեզուաբանութեան ամպլոնները երբեմն հայերէնի վերաբերեալ եւս կարելորդ հետազոտութիւններ կը ղեկաւարեն (օր.՝ EPHE-ի եւ INALCO-ի մէջ, ինչպէս նաեւ Զեյմերիջի, Լեյդենի, Փիզայի,

⁴ Տե՛ս *De Auctorum Graecorum versionibus et commentariis Syriacis, Arabicis, Armeniacis, Persicisque commentatio quam proposita per regiam scientiarum societatem quae Gottingae floret quaestione scripsit Joannes Georgius Wenrich, Leipzig 1842: Commentatio*, p. IV: “*Ut colligantur notitiae de versionibus auctorum Graecorum Syriacis, Arabicis, Armeniacis, Persicis, quarum versionum historia accurata adhuc caremus*”.

⁵ A Cirbied, *Grammaire arménienne*, Paris 1823; տե՛ս նաեւ A. Ouzounian, “La Grammaire arménienne de Chahan de Cirbied”, *Revue du monde arménien moderne et contemporain* 5 (1999-2000), 147-209:

Զալցբուրգի համալսարաններում մէջ): Վ. Բելարդիի (W. Belardi) և Ջ. Բոլոնիեզիի (G. Bolognesi) հիմնած իտալական դպրոցը, որ ուսումնասիրութիւններու նոյն աւանդութեան կը պատկանի, դեռ կը շարունակուի Իտալիոյ մէջ (օր.՝ Բրեշիա, Ջենովա, Միլան): Ինչ որ կը վերաբերի լեզուաբանութեան, հմարաւոր չէ չընդգծել, որ արդիական լեզուաբանութիւնն ալ հիմնական զարգացում մը ունեցաւ (օր.՝ INALCO-ին, Քէյմբրիջի եւ Զալցբուրգի համալսարաններում մէջ): Իտալիոյ մէջ մնալով՝ քաջածանօթ է, որ Բոլոնիեզին կարելոր մղում մը տուաւ բանասիրական հետազոտութիւններուն, մասնաւորապէս Յունաբան դպրոցի երկերու ուսումնասիրութեան համար ճշգրիտ մեթոդաբանութիւնը ճշդելով: Յունաբան դպրոցի մասին ուսումնասիրութիւնները զանազան իտալացի հետազոտողներու միշտ մասնաւոր ճիւղ կը կազմեն: Ընդհանրապէս բանասիրական աւանդութիւնը միշտ հարուստ կեանք կ'ունենայ, օր.՝ Լուվեն-լա-Նէովի (Եկեղեցիի Հայրերուն երկերուն մասին, եւ մանաւանդ Գրիգոր Նազիանզացիի երկերուն մասին), Ժընեւի (քրիստոնէական անկանոն գրականութեան եւ Յունաբան դպրոցի մասին, մանաւանդ Դաւիթ Անյաղթի երկերուն մասին), Բոլոնիայի (մանաւանդ յիշատակարաններուն մասին) համալսարաններում մէջ, ինչպէս նաեւ Բրեշիայի եւ Միլանի վերոյիշեալ համալսարաններում մէջ: Միջնադարեան գրականութեան մասին հետազոտութիւնները կը շարունակուին ի միջի այլոց Օքսֆորդի համալսարանին մէջ: Աստուածաբանութեան եւ հայկական քրիստոնէութեան պատմութեան վերաբերեալ ուսումնասիրութիւնները կարելոր դեր միշտ կ'ունենան (օր.՝ Հալլէի համալսարանին մէջ եւ, աւելի վերջերս, Զալցբուրգի համալսարանին մէջ), ինչպէս նաև միջնադարեան ճարտարապետութեան պատմութեան եւ ընդհանրապէս արուեստի պատմութեան վերաբերեալ ուսումնասիրութիւնները ի միջի այլոց Պրովանս-Մարսելի համալսարանին մէջ: Պատմութիւնը բազմաթիւ ուսումնասիրողներ ունի զանազան համալսարաններու կամ ուրիշ գիտական կեդրոններու մէջ, օր. Սորբոնի եւ Վիեննայի Գիտութիւններու ակադեմիոյ մէջ (մանաւանդ հին եւ բիզանդական պատմութիւնը), Սեյնթ Անդրյուսի, Նյուքաստի, Սոնպէյլէի, Paris-Nanterre-ի համալսարաններում մէջ (միջնադարեան պատմութիւն), Paris-VIII-ի, EHESS-ի եւ Վենետիկի համալսարաններում մէջ (ժամանակակից պատմութիւն): Յիշենք նաեւ, որ Արեւելեան Եւրոպայի հայկական պատմութեան քանի մը ծրագիրներ կը կատարուին օր. Լվիվ, Լեյպցիգ, եւ այլն:

Խօսքս չեմ կրնար երկարացնել. կ'ուզեմ յիշել սակայն, որ այս վերջին տարիներուն ընթացքին AIEA-ն գիտական եւ հրատարակչական ընդարձակ ծրագիր մը ձեռնարկեց: Այդ ծրագիրը նպատակ ունի մինչեւ 21-րդ դարու սկիզբը կատարուած ամենակարեւոր արդիւնքներուն հաշուեկշիռը ընել հայագիտութեան զանազան ճիւղերուն մէջ. լեզուաբանութիւն, բանասիրութիւն, գրականութիւն, պատմութիւն, գաղափարներու պատմութիւն, արուեստի պատմութիւն: Այդ ծրագրին շնորհիւ կարելի պիտի ըլլայ այդ վերջին տարիներուն հայագիտական հետազոտութիւնները եւ մատենագրութիւնը աւելի մանրամասնաբար գիտնալ: Այդ մասին պիտի վերադառնամ քիչ ետք (infra, § 4):

2.2. Եւրոպայի հայագիտութեան կեդրոններուն curricula այսօր⁶

Ինչ եւն այն եւրոպական համալսարանները, ուր կարելի է հայագիտական մարզին մէջ curriculum-ի մը հետեւիլ: Եթէ չեմ սխալիր, INALCO-ի, Ժընեւի եւ, քերես, Վենետիկի համալսարանները միակ համալսարաններն են որ հին և նոր լեզուի, գրականութեան և քաղաքակրթութեան մասին լրիւ ծրագիր մը կը հրամցնեն Bachelor-Շ, Master-ի եւ PhD-ի մակարդակի մէջ:

Ուրիշ համալսարաններ հայագիտական դասեր եւ ծրագիրներ կը հրամցնեն ի միջի այլոց արեւելագիտութեան, բիզանդական պատմութեան կամ լեզուաբանութեան ծրագիրներուն ներս եւ այլն: Տարբեր ուղղութիւններով կարելի է հայկական հին եւ միջնադարեան հայկական լեզուն եւ մշակոյթը սորվիլ ELCOA-ի մէջ, ինչպէս նաեւ Օքսֆորդի, Սեյնթ Անդրյուսի, Բոլոնիայի, Սոնպէյլէի, Պրովանս-Մարսելի, Լուվեն-լա-Նէովի, Զալցբուրգի, Հալլէի համալսարաններում մէջ եւ վերոյիշեալ INALCO-ի եւ Ժընեւի համալսարանին մէջ: Կարելի է գրաբարը եւ հին հայկական քրիստոնէութեան պատմութիւնը սորվիլ Pontificio Istituto Orientale-ին մէջ, Հռոմ: Քիչ եւն սակայն այն կեդրոնները, ուր կարելի է հայերէն արդի գրականութիւնը սորվիլ կանոնաւոր curriculum-ին մէջ կամ աւարտաճառեր պատրաստել (օր.՝ INALCO-ի եւ Ժընեւի համալսարանին մէջ): Արեւմտահայերէնը եւ արեւելահայերէնը կարելի է սորվիլ կանոնաւոր ձեւով ոչ միայն INALCO-ի եւ Ժընեւի համալսարանին մէջ, այլ եւ օր.՝ SOAS-ի, Վենետիկի, Պրովանս-Մարսելի եւ Սոֆիայի համալսարաններում մէջ եւ այլն:

Յաւոր պէտք է յիշել, որ այս վերջին տարիներուն ընթացքին քանի մը ամպիոններ փակուեցան կամ նոր ուղղութիւն մը ստացան, օր.՝ Գերմանիոյ մէջ, Տուբինգենի եւ Մոնակոյի համալսարաններում մէջ, ուր կարելի էր հայագիտութեամբ զբաղիլ քրիստոնէական Արեւելքի պատմութեան կամ արեւելեան ծիսակատարութեան պատմութեան 2 ամպիոններու ներկայութեան շնորհիւ: Ծիշող 2013-ին, երբ EPHE-ի հայագիտութեան ամպիոնի վարիչը գործէն քաշուեցաւ, EPHE-ն նոր ամպիոն մը բացաւ ոչ հայագիտական ուղղութեամբ մը, այլ լայնորէն իբր Կովկասի լեզուներուն նուիրեալ կեդրոն մը: Առ այժմ հայագիտութեան մարզին մէջ բանասիրական երկար աւանդութիւնը դժբախտաբար վերջը գտաւ: Երբեմն ալ, երբ ամպիոնի մը վարիչը թոշակառու դարձաւ, այդ ամպիոնը ի վիճակի չեղաւ իր գործունէութիւնը

⁶ Տե՛ս http://aiea.fltr.ucl.ac.be/AIEAfr/Outils_files/Centres.pdf /կապուիւն մինչեւ 2001/:

շարունակել իբր բուն ամպլոն մը (օր.՝ Լեյդենի կամ քանի մը իտալական համալսարաններուն մէջ): Ընդհակառակը, 2007-ին Ժընեւի համալսարանը որոշեց բարձրացնել հայագիտական կեդրոնը (որ արդէն 1974-էն սկսեալ գոյութիւն ունէր) ամպլոնի մակարդակին վրայ լրիւ curriculum-ով, ինչպէս արդէն շեշտեցի:

3. Եւրոպական հայագիտութեան խնդիրներ եւ դժուարութիւններ այսօր

Ստիպուած ենք ընդգծել, որ ոչ միայն Եւրոպայի մէջ, այլ եւ Եւրոպայէն դուրս, հումանիտար գիտութիւնները միշտ քաջալերուած չեն ակադեմիական հեղինակութիւններու կողմէն: Տարբեր չափանիշներ կը տիրապետեն ակադեմիական աշխարհին մէջ, չափանիշներ, որ յաճախ տնտեսական են և ոչ թէ գիտական: Ոչ միայն հայագիտութիւնը, բայց օրինակ՝ դասական գրականութիւնները եւս – որ սակայն երկար աւանդութիւն ունին Եւրոպայի մէջ, որուն «արմատներուն» մաս կը կազմեն – յաճախ միայն իբր երկրորդական ճիւղեր նկատուած են: Առանց չափազանցելու պիտի ըսէի, որ այսօրուան համալսարանական աշխարհին մէջ հայագիտութեան պաշտպանելու նպատակով հայագէտներուն աշխատանքը «տիտաններու» աշխատանք մըն է:

Այդ դժուարութիւններուն հակառակ եւրոպական հայագիտութիւնը ողջ-առողջ է: Այս վերջին տարիներուն գիտական գործունէութիւններուն ցանկը ճոխ է եւ կը պարունակէ հրատարակութիւններ, ցուցահանդէսներ, հետազոտութեան միջազգային ծրագիրներ եւ այլն: 21-րդ դարու սեմէն անցնելով՝ AIEA-ին կոմիտէի անդամները անդրադարձան, որ հաշուեկշռի ատենը հասած էր, եւ նոր ծրագիր մը քաջալերեց, որուն մասին քանի մը տեղեկութիւններ տալ անհրաժեշտ է:

4. Հայկական ուսումներու միջազգային ընկերակցութիւն / Association Internationale des Etudes Arméniennes (AIEA)

Իմ ներկայացման վերջին կէտը AIEA-ին գործունէութիւններուն նուիրուած է: AIEA-ն Եւրոպայի հայագիտական ամենամեծ ընկերակցութիւնն է, որ աւելի քան 330 անդամներ կը պարունակէ, ոչ միայն Եւրոպայի մէջ, այլ եւ ԱՄՆ-ում, Հայաստանի եւ Միջին Արեւելքին մէջ: AIEA-ն գիտական կազմակերպութիւն մըն է, որուն նպատակն է համախմբել այն մասնագէտները, որոնք հայագիտութեան մարզին մէջ լրիւ կամ մասամբ կ'աշխատին:

Իր գլխաւոր գործունէութիւններուն մէջ կայ եռամեա ընդհանուր գիտաժողովին կազմակերպութիւնը, ինչպէս նաև որոշակի թեմաներու նուիրեալ գիտաժողովներուն կազմակերպութիւնը: Առ այժմ ընդհանուր գիտաժողովներ կազմակերպուած են Լեյդենի, Տրիւրի, Պրիւքսելի, Ֆրիբուրգի (Շուիցերիա), Պոլոնիայի, Լոնտոնի, Լուվեն-լա-Նէօվի, Վիեննայի, Վիւրցբուրգի, Վիտորիայի, Փարիզի, Բուդապէշտի համալսարաններուն մէջ: Յատուկ նիւթերու մասին գիտաժողովներ տեղի ունեցան Պրիւքսելի, Փարիզի, Աարուսի, Հելդերբերգի, Սիլանի, Լեյդենի, Նեօշաթելի, Ժընեւի, Վասսենարի, Լեյչէի, Վենետիկի, Օքսֆորդի, Չալքքուրգի համալսարաններուն մէջ⁷: Երբեմն նիւթերը հրատարակուած են. ուրիշ կարելոր հրատարակութիւններ լոյս տեսան AIEA-ին հովանաւորութեան տակ⁸:

2003 թուականին սկսաւ “Armenian Studies 2000” ծրագիրը, որուն նպատակն է ստեղծել հայագիտութեան գլխաւոր արդիւնքներուն status quaestionis այսօր: Այս նպատակով նախապատրաստական 6 գիտաժողով տեղի ունեցաւ լեզուաբանութեան, բանասիրութեան, արուեստի պատմութեան, գրականութեան, պատմութեան և գաղափարներու պատմութեան մասին: AIEA-ն ծրագիր ունի այս զանազան ճիւղերուն վերաբերեալ 7 հատոր հրատարակել: Այս գիտական ծրագիրը ընդունուեցաւ Brill հրատարակչական տան կողմէն Handbook of Oriental Studies հեղինակաւոր շարքին մէջ (History on Armenian Studies Series): Առաջին հատորը բանասիրութեան վրայ է եւ արդէն լոյս տեսաւ⁹:

Այդ կարճ ակնարկին վերջաւորութեան մէջ կ'ուզէի շեշտել, որ իր սկիզբէն AIEA-ն Հայաստանի հետ գործակցութիւնը միշտ նկատուած է իբր կարելոր նպատակ մը: AIEA-ին ընդհանուր գիտաժողովներուն առթիւ՝ Հայաստանէն եկող մասնագէտներ միշտ հրաւիրուած են: Կ'ուզեմ յետոյ յիշել, որ AIEA-ն ունի իր Patron Member-ներէն ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարեան, որ միշտ մեծ ուշադրութիւն մը

⁷ Տե՛ս <http://aiea.fltr.ucl.ac.be>:

⁸ M. Leroy & F. Mawet, eds, *La place de l'arménien dans les langues indo-européennes*, Leuven 1986; B. Coulie, *Répertoire des catalogues et des bibliothèques de manuscrits arméniens*, Turnhout 1992; Ch. Burchard, ed., *Armenia and the Bible*, Atlanta, GA 1993; H. Lehmann & J.J.S. Weitenberg, eds, *Armenian Texts Tasks and Tools*, Aarhus 1993; M. Thierry, *Répertoire des Monastères arméniens*, Turnhout 1993; R.W. Thomson, *A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD*, Turnhout 1995; V. Calzolari Bouvier, J.-D. Kaestli & B. Outtier, eds, *Apocryphes arméniens. Transmission, traduction, création, iconographie*, Lausanne 1999. Տե՛ս նաեւ հետեւեալ ծանոթագրութիւնը:

⁹ V. Calzolari, ed. (with the collaboration of M.E. Stone), *Armenian Philology in the Modern Era : From Manuscript to Digital Text* (Handbook of Oriental Studies, Section 8. History of Armenian Studies Series 23/1), Leiden & Boston 2014.

ունեցաւ եւրոպական հայագիտութեան նկատմամբ: AIEA-ին Patron member-ներուն ցանկին մէջ իր ներկայութիւնը պատիւ մըն է մեզի համար:

Իմ խօսքս վերջացնելու համար կարեւոր ազդ մը կ'ուզեմ տալ ճիշդ հոս, Երեւան: Այն է, որ AIEA-ին յաջորդ ընդհանուր գիտաժողովը առաջին անգամ ըլլալով՝ 2014 Հոկտեմբերի տեղի պիտի ունենայ Երեւան, Մատենադարանին մէջ, իր տնօրէնին՝ դր. Հրաչյայ Թամրազյանին գործակցութեան շնորհիւ: Մատենադարանի տնօրէնը AIEA-ին անդամ է եւ այդպիսի գիտաժողովը կազմակերպել AIEA-ին առաջարկեց, առաջարկութիւն մը, որ AIEA-ին ընդունեցաւ երախտագիտութեամբ:

Իբր վերջին խօսք կը փափաքիմ մաղթել, որ Հայաստանին հետ երկար և արդիւնաբեր գիտական գործակցութեան առիթները միշտ աւելի բազմաթիւ ըլլան: Թող մեր և ձեր միջեւ անջրպետը աւելի կարճ ըլլայ:

Valentina Calzolari (University of Geneva)

THE ARMENIAN STUDIES IN EUROPE: CURRENT SITUATION AND CHALLENGES

According to the topic of the Conference, this short overview of the Armenian studies in Europe provides information about:

1. Armenian Studies in Europe in the past: some main scientific directions.
2. The academic centers of Armenian Studies in Europe today: main research directions and curricula.
3. Challenges in the defense of Armenian studies in the academic context today.

The International Association of Armenian Studies / Association Internationale des Etudes Arméniennes: its activities and publications, with special focus on the *History on Armenian Studies Series* for the *Handbook of Oriental Studies/Handbuch der Orientalistik*, Brill publisher (first volume published in 2014: *Armenian Philology in the Modern Era*).

Գևորգ Բարդակչյան (ԱՄՆ)

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ (հակիրճ ընդհանուր ակնարկ)

Քսաներորդ դարի առաջին կեսին հայագիտական դասընթացներ կազմակերպելու որոշ փորձեր արվել են մասնավոր ԱՄՆ արևելյան ափի զանազան ուսումնական հաստատություններում: Սակայն այդօրինակ նպատակապես ջանքերն ամուր հիմքերի վրա են դրվել նույն դարի երկրորդ կեսին միայն: Այս հարցում խոշոր, հիմնարար դեր է խաղացել Հայագիտական ուսումնասիրությունների ազգային ասոցիացիան (NAASR, National Association for Armenian Studies and Research), որի հիմնադիրների և անդամների աշխույժ գործունեության որպես արգասիք՝ հայագիտական ամբիոններ են հիմնվել Հարվարդ, Կոլումբիա, ինչպես նաև Կալիֆոռնիայի բուհական ցանցի՝ Լոս Անջելեսի համալսարանում (UCLA): Այնուհետև նոր ամբիոններ են հաստատվել Ֆրեզնոյի, Միչիգանի և Թաֆթս համալսարաններում և ընդամենը երկու թե երեք տարի առաջ՝ Լոս Անջելեսի Հարավային Կալիֆոռնիայի համալսարանում (USC): Այսպիսով՝ դասավանդման սահմանափակ և պարբերական ծրագրեր են հաստատվել Կալիֆոռնիայի Բերքլի համալսարանում, Չիքագոյի համալսարանում և պարբերական հաճախականությամբ՝ Ռատգերգ, Կոռնել և մի շարք այլ համալսարաններում: Ութսունականների վերջերից երկուական հայագիտական ամբիոն ունեն Միչիգանն ու Կալիֆոռնիան, Ֆրեզնոն և Թաֆթսը:

Սկզբնական շրջանում Հարվարդում, Կոլումբիայում և Կալիֆոռնիայում, որտեղ դասավանդվել են Ռ. Թոմսոնը, Ն. Գարսոյանը և Ա. Սանջյանը, շեշտը դրվել է հայ ժողովրդի միջնադարյան պատմության և գրականության վրա: Իսկ անցած մոտավորապես քառասուն տարվա ընթացքում նոր և ժամանակակից շրջանի հարցերը և Հայոց ցեղասպանությունը տիրական կերպով հայտնվել են երիտասարդ հայագետների ուսումնասիրությունների կենտրոնում:

Սկզբից եթե հայագիտական ասպարեզում բավարար թվով աշխատատեղերի չգոյության պատճառով երիտասարդ հայագետներից շատերը հեռացել են իրենց մասնագիտությունից, ոմանք զբաղվել են ուսուցչությամբ, ոմանք աշխատանք են որոնել այլ բնագավառներում, իսկ մի քանիսն էլ՝ ավարտին չեն հասցրել իրենց դոկտորական ավարտաճառերը: Սակայն նույնքան կարևոր և սովոր մի խումբ համեմատական ուսումնասիրությունների միջոցով ընդարձակել է իր մասնագիտական դաշտը և հետևաբար՝ աշխատանք գտնելու հնարավորությունները: Մինչև իննսունականները ավելի մեծ թվով

(գուցե երկու երկուսասան) հայագետներ են պատրաստվել Կոլումբիայում և Կալիֆոռնիայի համալսարանում՝ համապատասխանաբար հին և նոր շրջանի մասնագետներ Ն. Գարսիանի, Ա. Սանջյանի և Ռ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ: Այժմ դոկտորական դիսերտացիաներ պատրաստող մասնագետների մի խումբ, թվով շուրջ յոթ, սովորում են Կալիֆոռնիայի համալսարանում (UCLA) և մի այլ խումբ, թվով շուրջ տասը, սովորում են հայագիտական ասպարեզում առաջատարի դերն ստանձնած Միչիգանի համալսարանում մեծավ մասամբ՝ Գ. Բարդակչյանի գլխավոր ղեկավարությամբ: Ահա մի քանի օրինակ՝ լուսաբանելու համար այդ ուսանողների թեմաների լայն շրջանակներն ու բազմազանությունը: Ընդամենը մի քանի ամիս առաջ պաշտպանված դիսերտացիաներից մեկի թեման էր՝ «Հայաստանը և Իսլամը Ը-Թ դարերում»: Մոտ ապագայում դիսերտացիաներ կպաշտպանվեն հետևյալ թեմաներով. դարիքի (պանդուխտի) թեման հայկական, պարսկական և օսմանյան միջնադարյան գրականության մեջ, Հայաստան-Սփյուռք հարաբերությունները քսաներորդ դարում, վեպի ժանրը Իսթանբուլի տասնիններորդ դարի երկրորդ կեսի հայ և հույն գրականության մեջ, Երեմիա Զյոմուրճյանը և ժամանակակից թուրք մտավորական կյանքը, և այլն:

Բացի դոկտորական դիսերտացիաներ ղեկավարելուց, հայագիտության պրոֆեսորներն ու դասախոսները նաև դասընթացներ են կարդում բակալավրի ուսանողների համար: Օրինակ՝ Միչիգանի համալսարանում ընթացիկ կիսամյայի դասընթացներից արևմտահայերենին հետևում են յոթ ուսանող, որոնցից միայն մեկն է հայ, իսկ հայ մշակույթի դասընթացին հետևում են ութսունհինգ ուսանող, որոնցից միայն չորսն է հայ: Ե՛վ ուսանողների քանակը, և՛ դասընթացների թեմաները ԱՄՆ տարբեր մասերում տարբերվում են մի բուհից մյուսը: Կալիֆոռնիայում, օրինակի համար, ավելի մեծ թվով *հայ* ուսանողներ են հետևում հայագիտական առարկաների, քան, ասենք, Միչիգանում, որտեղ օտար ուսանողների քանակը գերազանցում է հայերին: Միչիգանում բակալավրի ուսանողները կարող են երկաստիճան թեքումով հայագիտություն սովորել: Հայագիտական առարկաների թեմաներն էլ ընդհանրապես արտացոլում են դասախոսի մասնագիտությունն ու նախասիրությունները: Կոլումբիայում դասավանդվել են հին շրջանի պատմությունն ու գրականությունը, դժբախտաբար այդ ամբիոնը թափուր է հիմա: Հարվարդում նույնպես սովորաբար միջնադարյան շրջանն է դասավանդվում: Թաֆթս համալսարանի երկու ամբիոններից մեկը ուշ միջնադարի և նոր շրջանի հայ ժողովրդի պատմության ամբիոն է, մյուսը՝ հայ արվեստի պատմության: Միչիգանի ամբիոններից մեկը նոր և նորագույն շրջանի պատմության ամբիոն է և թափուր է առայժմ, մյուսը՝ հայոց լեզվի և գրականության բոլոր շրջանների, ի մասնավորի վերջին հազարամյակի՝ ուսումնասիրության ամբիոն: Կալիֆոռնիայի երկու ամբիոններից մեկը նոր շրջանի պատմության ամբիոն է, մյուսը՝ ընդհանուր հայագիտական: Իսկ ամենաերիտասարդը՝ Հարավային Կալիֆոռնիայի համալսարանը (USC), դեռևս հարմար թեկնածու չի գտել: Բերքլիում դասավանդվում է նոր և նորագույն շրջանի պատմություն:

Հայագիտական ամբիոնների վարիչներին, ուսանողներին, գիտնականներին և հայագիտությանը հետաքրքրվող անհատներին ի մի է բերում Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցությունը՝ Society for Armenian Studies (SAS), որը հիմնադրվել է 1974-ին Ռիչարդ Հովհաննիսյանի նախաձեռնությամբ և Ռոբերտ Թոմսոնի, Նինա Գարսիանի, Ավետիս Սանջյանի և Տիգրան Գույումճյանի ջանքերով: Ընթացիկ տարվա անդամների թիվը 268 է, մեծ մասամբ Ամերիկայից, բայց նաև Եվրոպայից: Գլխավոր նպատակն է զարկ տալ հայագիտությանը գիտաժողովների և հրատարակությունների միջոցով: Մաս է կազմում ավելի մեծ հավաքական գիտական միավորների, ինչպիսին է Միջինարևելյան ուսումնասիրությունների միությունը (MESA), որն ընդգրկում է մի քանի տասնյակ կազմակերպություններ՝ հայագիտական, արաբական, պարսկական, քրդական, թուրքական, ինչպես նաև միջինարևելյան գիտական այլ կազմակերպություններ, որոնք ամեն տարի հանդիպում են Ամերիկայի քաղաքներից մեկում: Այս տարի՝ ընդամենը օրեր առաջ, այն տեղի ունեցավ Լուիզիանա նահանգի Նյու Օրլինզ քաղաքում, որտեղ երեք օրվա ընթացքում լավեց ավելի քան հազար հարյուր հիսուն զեկուցում: Մեր ընկերակցությունը կազմակերպել և հովանավորել էր երեք բաժանմունք: Դրանցից մեկը նվիրված էր հայոց լեզվի ուսուցման խնդիրներին: Արդեն չորրորդ տարին է, ինչ մենք հրավիրում ենք հայոց լեզվի դասախոսների՝ հայոց լեզվի ուսուցիչների միություն կազմելու նպատակով, ինչպիսիք արդեն կան արաբերենի, պարսկերենի, թուրքերենի և այլ լեզուների ուսուցման համար: Հուսով եմ, որ վերջապես այդ երազը կիրականանա այս տարի:

Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցությունը միշտ փորձում է ընդլայնել իր գիտական գործունեության ծիրը և նեցուկ կանգնել հայագետ գիտնականներին, որպեսզի նրանք հայագիտությունը պատշաճ ներկայացնեն տարբեր դիսցիպլինների տարեկան գիտաժողովներում, ինչպիսիք են, ասենք, պատմության, գրականության, լեզվաբանության, անտրոպոլոգիայի, դրամագիտության, սոցիալական գիտությունների, արվեստի պատմության, ֆոլկլորի և այլ բնագավառների տարեկան գիտաժողովներում: Մեր հնարավորության սահմաններում ֆինանսական նպաստ ենք հայթայթում մասնակիցների համար: Մեր ցանկությունն է, որ Հայաստանից երիտասարդ գիտնականներ էլ մասնակցեն մեր կազմակերպած կամ հովանավորած բաժանմունքներին, բայց դեռևս բավարար նյութական միջոցներ չկան այդ ցանկությունը իրականություն դարձնելու համար: Մենք կուզենայինք նաև

ցեղասպանության հարյուրամյակին ընդառաջ եվրոպացի երիտասարդ գիտնականներին օգնել՝ պեղելու իրենց տեղական արխիվները՝ ցեղասպանության և ընդհանրապես հայերին վերաբերող նոր նյութեր հայտնաբերելու նպատակով: Կուզենայինք նույնպես հետաքրքրել օտար երիտասարդ գիտաշխատողներին՝ ուսումնասիրելու Հայոց ցեղասպանության արձագանքները արևմտյան երաժշտության, արվեստի և այլ բնագավառներում: Կուզենայինք ժամանակակից աշխարհահռչակ մի քանի կոմպոզիտորների, նկարիչների, քանդակագործների, գրողների և այլ վարպետների գոնե երեք ամսով հրավիրել Հայաստան՝ որպես հայ ժողովրդի հյուրեր, որպեսզի մեր ժողովուրդը ծանոթանար նրանց արվեստին, նրանք էլ՝ մեր ժողովրդին, և ներշնչված Հայաստանով՝ նրանց ստեղծագործություններում մարմնավորվեին ապրումներ և տպավորություններ մեր ժողովրդի և՛ դառը, և՛ քաղցր փորձից: Բայց նախ՝ մենք չենք կարող այդ թեկուզ և խիստ ցանկալի երազներով տարվել, այլ ձգտելով նրանց, մենք կանենք այն, ինչը կարող ենք իրականացնել մեր հնարավորության սահմաններում՝ հուսալով, որ հարյուրամյակի պետական հանձնաժողովը ստեղծագործ երևակայությամբ կնշի հարյուրամյակը ոչ թե որպես ավարտ, այլ սկիզբ երկրորդ հարյուրամյակի: Այս ամենը թույլ չենք տա, որ մեր գիտական գործունեությունը թելադրվի ժխտողների գործունեությամբ, սխալ կլինի հակադարձելով ժամանակ վատնելը: Նրանք արդեն վաղուց է, ինչ չեն քննադատում կուտակված անժխտելի փաստագրական նյութը, այլ շարադրում, երբեմն էլ չարագրում ու հերյուրում են իրենցը:

Ինչպես տեսնում եք, ցեղասպանությունը որպես հրատապ և այժմեական հարց կլանել է և կկլանի մեր մշտատև ուշադրությունը: Սակայն մենք խորին համոզումով գիտակցում ենք նաև, որ ցեղասպանությամբ չի սպառվում հայագիտության ընդարձակ, բեղմնավոր բնագավառը: Մեր Ընկերակցությունը հրատարակում է իր գիտական պարբերաբերթը՝ *Journal of the Society for Armenian Studies (JSAS)*, որտեղ գիտական առողջ և զգաստ մոտեցումով և նորարարական ոգով ու սկզբունքներով լուսաբանվում են հայագիտության խնդիրները տարածաշրջանային և համաշխարհային կոնտեքստում: 2014-ին մենք կնշենք մեր կազմակերպության քառասնամյակը, հուսով ենք ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հայագիտական և հասարակական գիտությունների բաժանմունքի և գիտական այլ հաստատությունների հետ համատեղ: Մենք հավատում ենք, որ հայագիտությունը զարգացնելու հիմնական, անփոխարինելի միջոցներից մեկն էլ Հայաստանի և Սփյուռքի հայ թե օտար հայագետների միջև սերտ, անկեղծ կապեր ու համագործակցություն ստեղծելն է: Կան, եղել են և կլինեն այդ կապերը, բայց մեր անշեղելի կամքն է և սրտաբուխ բաղձանքը որ, հանուն հայագիտական նոր, խոշոր նվաճումների, այդ կապերն անքակտելիորեն ամրապնդվեն:

Kevork B. Bardakjian (USA)

ARMENIAN STUDIES IN THE USA: A BRIEF GLANCE

Sporadic efforts were made in the first half of the 20th century to teach courses in Armenian Studies on the East Coast. Such efforts gained momentum following the founding in 1955 of the National Association for Armenian Studies and Research (NAASR), whose dedication to the cause led to the establishment of endowed Armenian Chairs at Harvard, Columbia and UCLA. There soon followed such chairs at Michigan, Fresno State, Tufts and recently at USC. At first, Armenian Studies of the late Antiquity, and the Medieval and early Modern periods were taught. From the 1980s a greater emphasis has been placed on the modern and contemporary periods. A considerable number of graduate students have been trained at Columbia, Harvard, UCLA and, a little later, at the University of Michigan, Ann Arbor. In 1974 the Society for Armenian Studies (SAS) was founded to promote the field through scholarly gatherings and publications such as the *Journal of the Society for Armenian Studies (JSAS)*. Both the endowed chairs and the SAS have had a profound impact on the field thanks to efforts to integrate it into the larger context of scholarship, encompassing mainly the Near East and Europe, through comparative and new methodologies and theoretical approaches in teaching, research and publication.

Сергей Саядов (Россия)

АРМЕНОВЕДЕНИЕ В РОССИИ: ИСТОРИОГРАФИЧЕСКИЙ ОЧЕРК

Как самостоятельная наука арменистика формировалась в XVII-XVIII веках. До XX века она развивалась в основном за пределами исторической родины - в Европе и России. «Арменоведение в России», «история Армении в России», «русская историография Армении» – эти формулировки не обладают большой научной строгостью, они достаточно условны, вместе с тем они встречаются в исторической литературе. Это и история армянских поселений в России и шире - история армяно-русских и русско-армянских отношений.

В XVIII веке в России начался систематический сбор материалов по истории Армении. С этого времени издаются книги на армянском языке, переводы с армянского и других языков на русский. Всё больше сведений появляется и в периодической печати. Если в предшествующий период печатные известия об Армении в России касались, в основном, вопросов истории и культуры армянского населения проживающего на территории империи, то с начала XIX века в России проявляется более широкий интерес к прошлому и настоящему единоверного христианского народа. Этот интерес имеет практическую направленность: на повестке дня стоял вопрос политико-экономического освоения Закавказья. Большой вклад в изучение и популяризацию исторического прошлого армянского народа внёс Н.М. Карамзин. В своей «Истории Государства Российского», он открыл российскому читателю Мовсеса Хоренаци, как первого автора, упоминавшего о славянах¹. На рубеже XVIII-XIX вв. некоторые сведения об Армении проникают в русские учебники, справочную² и популярную литературу, которая была достоянием широкого круга читателей. Например, в словарях Льва Максимовича³ и А. Щекатова⁴ содержатся интересные фактические данные о Нахичевани – новом армянском поселении, образованном на правом берегу Дона в 1780 году выходцами из Таврического полуострова (Крыма). Важную роль в изучении кавказского региона сыграла Петербургская Академия наук, чьи экспедиции заложили фундамент научного кавказоведения. В 1799 году в Санкт-Петербурге увидела свет работа члена Российской Академии Наук Георги Иогана Готлиба «Описание всех обитающих в Российском Государстве народов»⁵. Совершенно другой тональностью выделяются работы П.С. Палласа⁶ и П. Сумарокова⁷, в которых содержались сведения об армянских поселениях Астрахани, Нахичевани-на-Дону, Крыма. Большой вклад в дело популяризации истории Армении в России внёс архидиакон армянской церкви Иосиф Иоаннесов (Овсеп Ованнисян). Им был сделан первый полный русский перевод «Истории Армении» М. Хоренаци⁸. К этой книге как к ценному историческому источнику обращались затем многие русские и армянские учёные и писатели. В 1813 году в Петербурге издаётся книга – «Жизнь и приключения Артемия Араратского»⁹. В духе литературных традиций того времени в ней

¹ См.: Хачатрян Р.Г. История Армении и русско-армянских отношений в русской историографии (XVII- н. XIX вв.): Автореф. дис. ... докт. ист. наук. Ер., 1982. С. 25; Русская историческая мысль и Армения. С. 18, 228-229.

² Так в изданном в 1793 г. «Лексиконе Российской исторической, географической, политической и гражданской» на букву «А», среди других, имелись статьи: «Аракс», «Арарат», «Армяне» (см.: Сплетение судеб // Планета диаспор, № 19 от 1 июня 2000 г.).

³ Новый и полный географический словарь Российского Государства. Ч. I-VI. М., 1788-1789.

⁴ Географический словарь Российского государства, сочинённый в настоящем оною виде. Ч. I-IV. М., 1801-1805.

⁵ «Описание всех обитающих в Российском Государстве народов. Их житейских обрядов, обыкновений, одежд, жилищ, украшений, забав, вероисповеданий и других достопамятностей. Творение, за несколько лет пред сим на немецком языке Иоганна Готлиба Георги, в переводе на российский язык весьма во многом исправленное и вновь сочинённое; в четырёх частях, с 100 гравированными изображениями народов и 8 виньетками». СПб., 1799.

⁶ П.С. Палласа, доктора медицины, профессора натуральной истории и члена Российской Императорской Академии Наук и Санктпетербургского вольного экономического общества, также Римской Императорской Академии испытателей естества и королевского аглинского ученого собрания Путешествие по разным провинциям Российской империи. Ч. I-III. СПб., Имп. Акад. Наук, 1773-1788; Отрывки из рукописей П.С. Палласа, хранившихся в Московском Румянцевском музее, опубликованные историком М.Б. Краснянским // Записки Ростовского-на-Дону общества истории, древностей и природы. Т. II, 1914. С. 203-207.

⁷ Путешествие по всему Крыму и Бессарабии в 1799 году Павлом Сумароковым с историческим и топографическим описанием всех тех мест. М., Унив. тип. Ридигера и Клаудия, 1800; Досуги Крымского судьи или второе путешествие в Тавриду Павла Сумарокова. Ч. I-II. СПб., 1803-1805.

⁸ История Армянская, сочинённая Моисеем Хоренским, с кратким географическим описанием древней Армении, перевёл с армянского на российский язык И. Иоаннесов. Ч. 1-2. СПб., 1809.

⁹ Жизнь Артемия Араратского, уроженца селения Вагаршапат близ горы Арапат, и приключения, случившиеся с ним от младенчества до совершенных лет; удаление его от своего Отечества в Грузию; оттуда в Россию, потом в Персию и наконец, возвращение обратно в Россию через Каспийское море, с описанием многих любопытных предметов, находя-

излагались перипетии жизни автора сочинения. В журнале «Вестник Европы», который с 1805 по 1830 год редактировал М.Т. Каченовский, привлекались к сотрудничеству армянские авторы – Д. Арзанов, С. Тер-Гукасов и др., публиковались материалы из книги известного армянского историка XVIII в. М. Чамчяна. Сотрудничество русских и армянских историков было новым явлением для исторической науки того времени. В 1816 году русская литература пополнилась книгой «Любопытные извлечения из древней истории о Азии...»¹⁰, которая и по сей день сохраняет своё научное значение. Она была написана на французском языке, издана в Париже известными в то время учёными арменистами Ш. Джерпетяном и Ф. Сен-Мартеном и переведена на русский язык Александром Худобашевым. Эта книга заметно выделялась в первую очередь тем, что значительное место в ней уделено описанию хранящихся в Парижской библиотеке древних армянских рукописей, а их в парижской библиотеке хранилась тогда по свидетельству А. Гакстгаузена – 160¹¹. В 1827 воспитанники Лазаревского института восточных языков братья Яков и Давид Арзановы издали в Москве книгу «Опыт начертания истории царства армянского»¹². Они написали этот труд по совету Екима Лазарева и профессоров Московского университета А.Ф. Мерзлякова и М.Т. Каченовского. Книга интересна тем, что в ней делалась попытка систематизации сведений по истории древней Армении.

В связи с русско-иранскими и русско-турецкими войнами первой трети XIX века, подготовившими вхождение Восточной Армении в состав России, открывались более широкие возможности общения русского и армянского народов. Член Южного общества декабристов Е.Е. Лачинов является автором записок «Моя исповедь», отрывки из которых «Путешествие по Эриванской области» и «Письмо из Карса» были опубликованы им анонимно в конце 20-х годов XIX века¹³. Эти записки исследованы М.Г. Нерсисяном¹⁴. Основная тема статей Е.Е. Лачинова – описание событий русско-иранских и русско-турецких войн 1-й трети XIX века, обзор политико-экономического состояния Армянской области, описание тяжёлого положения армянского населения.

Большой интерес, в свете рассматриваемых вопросов, представляет деятельность А.С. Грибоедова. По мнению Ю.А. Веселовского А.С. Грибоедов был знаком с «Историей Армении» М. Хоренаци¹⁵ и собирался написать трагедию на историческом материале Армении и Грузии второй половины I века¹⁶. Особенно много он сделал для формулировки статей, защищающих интересы Армении, в частности, благодаря его настойчивости в окончательную редакцию договора была включена статья, предусматривающая иммиграцию армян в Российскую империю¹⁷. Особое место в освещении Кавказской, и, в частности, армянской, тематики в периодической печати первой трети XIX века принадлежит первой русской газете на Кавказе – «Тифлиссские ведомости» («Т.в.») (1828-1832)¹⁸. Среди её штатных и нештатных сотрудников значились А.С. Грибоедов, А.А. Бестужев-Марлинский, Е.Е. Лачинов, а также выдающиеся просветители Закавказья – С.И. Додашвили, А.К. Бакиханов, Х. Абовян. В «Московском телеграфе» были опубликованы «Письма из Армении»¹⁹. Описанные в «Письмах из Армении» М. С-ва²⁰ события были одной из первых попыток в эпистолярном жанре поведать о про-

щихся в его стороне и прочих местах Персии, с приложением шести гравированных эстампов, изображающих виды городов персидских. Писанные и переведённые им самим с армянского на русский. 2 ч. СПб., 1813.

¹⁰ Любопытные извлечения из древней истории о Азии, почерпнутые из восточных рукописей, хранящихся в Парижской библиотеке, и из иных источников. И.М. Шаганом Чирбетом, армянином, находящимся при особливом училище, при той Библиотеке учреждённом для восточных языков, ныне употребляемых, и Ф. Мартином, французом, учёным в армянской словесности. Изданные в Париже на французском языке, в 1806 году, а ныне здесь переведённые Александром Худобашевым. СПб.: В тип. К. Крайя, 1816.

¹¹ Гакстгаузен А. Закавказский край. Заметки о семейной и общественной жизни и отношениях народов, обитающих между Черным и Каспийским морями. Ч. 2. СПб. 1857. С. 48.

¹² Арзановы Я. и Д. Опыт начертания истории царства армянского. Древняя история, украшенная 26-ю гравированными картинками. М., 1827. С. 20.

¹³ Путешествие по Эриванской области // Северная Пчела. 1828. № 21, 22; Письмо из Карса // Тифлиссские ведомости. 1829. № 5, 6.

¹⁴ См.: Лачинов Е.Е. Записки декабриста Е. Лачинова об Армении // Нерсисян М.Г. Из истории русско-армянских отношений. Кн. 1. Ер., 1956. С. 312-396.

¹⁵ См.: Ю. Веселовский Грибоедов и армяне // Об армянской литературе. Статьи и исследования русских писателей и учёных. Ер., 1941. С. 199.

¹⁶ См.: Вацуро В.Э. Грибоедовский замысел трагедии «Родамист и Зенобия» // Проблемы творчества А.С. Грибоедова / РАН. Отделение лит. и яз., Пушкин. комис. Смоленск, 1994. С. 162-193.

Ահա թե ինչն է մեր հարատևման խորհուրդը, մեր գոյապայքարի գորավոր առհավատչյան: Հայարտությամբ արձանագրում ենք այն ականառու փաստը, որ հայագիտության զարգացման գործում անգնահատելի դերակատարում է ունեցել Հայոց եկեղեցին, ինչպես միջնադարում, այնպես էլ պատմության ուշ շրջաններում: Դարեր շարունակ Հայոց եկեղեցու նվիրյալ հոգևորականներն արտասովոր նվիրումով և ինքնուրաջ տքնանքով ստեղծել են գիտությամբ և կրթությամբ հռչակված, անգամ երկրի սահմաններից դուրս ճանաչված այնպիսի գիտահոգևոր կենտրոններ, ինչպիսիք են Նարեկի, Տաթևի, Գլաձորի, Կիլիկիայի Արքակաղին վանքի, Հաղպատի, Գոշավանքի համալիրները, Սուրբ Դավաթի, Չմառնի, Փարիզի, Վիեննայի և այլ կենտրոններ: Եվ 18-րդ դարի մեր մեծ երախտավորներից մեկը՝ Մխիթար Սեբաստացին՝ զարմանալի եռանդով ու նվիրումով Ասիայի և Եվրոպայի փոշոտ ու անհյուրընկալ ճամփաներին առանց միջոցների և օգնության թափառող այս ազնիվ հոգևորականը, մեծ փորձության տանելով իր անձն ու հավատը, ուրիշ ինչ ուժով, եթե ոչ հոգևոր ու լեզվի սքանչացմամբ կարողացավ Վենետիկում հիմնել իր հզոր մենաստանը, որ հոգևոր լինելուց զատ նաև հայ ազգային ոգու և մտքի փարոս դարձավ և արդեն շուրջ երեք դար լույս և իմաստություն է սփռում իր շուրջն ու նրանից հեռու: Անհուն մաքառումով ու ծանր տքնանքով Մխիթարն ու նրա արժանավոր հետևորդները՝ Գերապատիվ հայրեր Սկրտ. Ավգերյանը, Գաբ. Ավետիքյանը, Խաչ. Սյուրմեյանը, Սուք. Սոմալյանը, Հովհ. Վանանդեցին, Ման. Ջախջախյանը, Արս. Բագրատունին, Արս. Դազիկյանը, Դ. Ալիշանը և այլք, մեկիկ-մեկիկ հավաքեցին տարասփյուռ մատյաններն հայոց, ի մի բերեցին հայոց բառ ու բանը, թարգմանեցին և հայացրին հունական անտիկ և ժամանակի եվրոպական մշակութային արժեքները՝ կամուրջ նետելով հայոց և համաշխարհային մշակույթի միջև: Նրանց է պատկանում հայագիտության՝ իբրև կայուն գիտական համակարգի ձևավորողի և ստեղծողի պատիվը: Մխիթարյանների Ուխտը դարձավ հայ մշակույթը համաշխարհային, ի մասնավորի՝ եվրոպական մշակույթին ինտեգրելու կենտրոնատեղին և գիտական դարբնոցը:

Այդ նրանք իրենց հայագիտական գործունեությամբ հետաքրքրություն և ականածանք սերմանեցին հայ մշակույթի ու գիտության հանդեպ, սկզբնավորեցին գիտամշակութային այն հրաշալի համագործակցությունը, որից օգտվում ենք այսօր, Եվրոպային ներկայացրին հայ մշակույթն ու գիտությունը, զարգացավ հայագիտության արյունատար խողովակը Արևմուտքում: ՀՀ սփյուռքի մախարարությունն

¹ Հ.Սահյան, Քարե պատարագ, Երևան, 2005, էջ 421:

² Անտուան Մեյեն, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1979, էջ 113:

³ Հր. Թամրազյան, Երկեր, հտ. 1, էջ 645, Երևան, 2005:

իր ձևավորման սկզբից եթե, գլխավոր ռազմավարական խնդիր ունենալով հայապահպանությունը, նկատի ունենալով Մխիթարյանների վիթխարի դերը հայապահպանության ազգանվեր գործում, համագործակցում է նրանց հետ՝ իրագործելով մի շարք ծրագրեր: 2011 թ. նախարարությունը միաբանության հետ համատեղ կազմակերպեց «Հայ գրքի հետքերով» խորագիրը կրող գիտաժողով՝ հայ և ալյազգի անվանի հայագետների և հոգևոր հայրերի՝ Ռուդի Կորեանի, Քլոդ Մուրաֆյանի, Ազնես Ուզունյանի, Ռայմոն Գևորգյանի, Մխիթարյան միաբանության ընդհանրական աբբահայր, Գերաշնորհ տեր Եղիա ծայրագույն վարդապետ Քիլադյանի, Հայր Ժ. վարդապետ Օհանյանի, այլոց մասնակցությամբ: Հիշյալ գիտաժողովը առանձնակի կարևորեց Մխիթարյանների մատենադարանում պահվող շուրջ 3000 ձեռագիր մատյանների, գրադարանում ու ձեռագրատանը հանգրվանած ավելի քան 200 000 հնատիպ գրքերի, նաև 1700-ական թթ. առ այսօր հավաքված դիվանագիտական և ալյաբնույթ փաստաթղթերի ազգային և համամարդկային արժեքը: Այդ ամենը կորստից փրկելու և սերունդներին հանձնելու կարևոր ուղիներից մեկը, թերևս միակը, դրանց թվայնացումն է: Եվ պատահական չէ, որ 2011 թ. դեկտեմբերի 14-ին Վենետիկի Մխիթարյան միաբանությունում ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը, ազդարարելով Հայ տպագրության գյուտի 500-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների մեկնարկը, առանձնակի կարևորեց միաբանության ձեռագրատանը և մատենադարանում պահվող անգնահատելի արժեքների թվայնացման խնդիրը, հավաստիացրեց, որ ՀՀ կառավարությունը անհրաժեշտ գումար կհատկացնի՝ հարցին շուտափույթ լուծում տալու համար: Այսօր արդեն 100 000 եվրո գումար է հատկացված, որն օգտագործվում է թվայնացման աշխատանքները կազմակերպելու համար: Մեր կարևորագույն ձեռքբերումն է նաև Վենետիկի Սուրբ Ղազարում կազմակերպված հայկական տպարանների մնալուն ցուցահանդեսը՝ հայ տպագրության 500-ամյա հոբելյանին ի նվեր: Նախարարությունը հովանավորել է նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության Ընդհանուր Աթոռակալի տեղապահ Հայր Վահան Ժ. վրդ. Օհանյանի և Ոսկան Մխիթարյանի հեղինակած «Հայերը Օսմանյան կայսրության վերջալույսին» արժեքավոր աշխատությունը: Մեր մշակութային արժեքների պահպանման և ուսումնասիրման աշխատանքները շարունակվում են նաև Չմառռի միաբանության հետ:

Հարգելի՛ գիտնականներ, անշուշտ տեղյակ եք, որ Լիբանանում պահվում են հազարավոր ձեռագիր մատյաններ: Մեր գերապատիվ հայրերը, չխնայելով ամեն ջանք ու եռանդ, շուրջ 2.5 դար անընդհատ հավաքել և խնամքով պահել են հայոց լեզվին և մշակույթին վերաբերող բազմաթիվ եզակի արժեքներ: Սփյուռքի նախարարության և Չմառռի միաբանության համատեղ մշակած ծրագրի արդյունքում 2012 թ. նոյեմբերի 26-28-ը կազմակերպվեց միաբանության պահոցներում հանգրվանած հնատիպ գրքերի և ձեռագրերի ցուցահանդես, որի արդյունքում ՀՀ Սփյուռքի նախարարության, Երևանի Հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանի և Չմառռի Պատրիարքական միաբանության միջև կնքվեց եռակողմ համաձայնագիր, որով նախատեսվում է հանրահռչակել մինչ օրս գիտականորեն չուսումնասիրված և մեծ հետաքրքրություն ներկայացնող Չմառռի Մատենադարանի հայկական մշակութային արժեքները: Ծրագրված է նաև թվայնացնել համապատասխան ձեռագրերը, հաշվառել, մատենագրել և վերջնական մշակումից հետո դրանք հրապարակել 5 հատորով: Աշխատանքներն արդեն ընթանում են: Հետաքրքրվողները կարող են իրենց մասնակցությունը բերել այս ազգանվեր գործին: Աշխարհի հայագետների պատվի գործը պետք է համարել հավաքելու, դաստիարակելու և Մատենադարանում ամբողջացնելու հայկական ձեռագրերի ողջ հարստությունը:

Արդեն նշվեց, որ պատմական ճակատագրի բերումով մինչև 1918 թ. հայագիտությունը զարգացել է առավելապես Մայր Հայրենիքից դուրս՝ Հնդկաստանում, Ռուսաստանում, Եվրոպայում, ապա նաև Թիֆլիսում և Էջմիածնում: Խոստովանենք, խորհրդային շրջանում, չնայած հասարակական գիտությունների քաղաքականացվածությանն ու կաղապարվածությանը, հայագիտությունը շարունակում էր իր ընթացքը: Ստեղծվեցին հայագիտական բազմաթիվ կոթողային աշխատություններ, որոնք այսօր էլ արդիական են: Սակայն հայության 2 հատվածների գիտական ներուժը տարանջատված էր, և չնչին բացառությամբ հայ և ալյազգի գիտնականները գործում էին առանձին, միմյանցից գրեթե անտեղյակ:

Այսօր մենք արձանագրում ենք, որ հայագիտական բազմաթիվ կենտրոններ են գործում նաև Սփյուռքում: Հայագիտական աշխատանքներ են կատարվում աշխարհի շատ երկրների համալսարանական ակադեմիական կենտրոններում և ամբիոններում: Այդ գործին իրենց նպաստն են բերում հարյուրավոր հայ և ալյազգի նշանավոր հայագետներ, բարերարներ, կազմակերպություններ: Գործում են բազմաթիվ հայագիտական թանգարաններ ու գրադարաններ, իրագործվում են բազմաթիվ գիտակրթական ծրագրեր, հրապարակվում են գիտական աշխատություններ և պարբերականներ, կազմակերպվում են գիտաժողովներ:

Այսօր հայագիտական հետազոտության կարևորագույն բնագավառներից մեկը պետք է համարվեն հայկական Սփյուռքը, նրա պատմությունն ու հոգեմշակութային առանձնահատկությունների հետազոտումը: Ձևավորվում է հայագիտական նոր առարկա՝ սփյուռքագիտությունը: ՀՀ Սփյուռքի նախարարությունը իր հիմնարար նպատակներից է համարում սփյուռքագիտության զարգացումը: Նախարարության նախաձեռնությամբ 2008 թ. հոկտեմբերի 14-ին ԵՊՀ-ում բացվեց սփյուռքագիտության ամբիոն, մեր պատվերով և ֆինանսական աջակցությամբ ամբիոնն արդեն պատրաստել է 39 մագիստ-

րոս, 20-ից ավելի ուսանողներ էլ այժմ իրենց մագիստրոսական կրթությունն են ստանում ամբիոնում: Նրանց կարիքը զգացվում է Սփյուռքը ճանաչելու, նրա վերաբերյալ ուսումնասիրություններ կատարելու, սփյուռքագիտությունը զարգացնելու, քաղաքացիական հասարակության վրա ազդելու, նախարարության աշխատանքներին օժանդակելու առումով: Սփյուռքի համար հայագետ մասնագետների և մանկավարժների պատրաստման համար կրթական ծրագրեր են իրականացվում ՀՀ մի շարք այլ բուհերում: Նախարարությունը համագործակցության համաձայնագրեր է ստորագրել հայագիտական այնպիսի կենտրոնների հետ, ինչպիսիք են ԳԱԱ-ի 5 ինստիտուտները, ԵՊՀ, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը: Մեր կարևոր հայագիտական ձեռնարկումները կապված են ՀՀ ԳԱԱ պատմության, գրականության, լեզվի, արևելագիտության, ազգագրության և հնագիտության, արվեստի ինստիտուտների հետ, որոնք զբաղվում են նաև այդ ոլորտների հետազոտություններով: Նրանց մենք տալիս ենք Սփյուռքի «մաքրագործմանը» մվիրված պատվերներ, և իրականացված աշխատանքները տպագրվում են գրքերի տեսքով:

Հարգարժան մերկաներ, անկախությունը հայագիտության զարգացման համար նոր հեռանկարներ բերելուց զատ բացահայտեց նաև բազմաթիվ մարտահրավերներ, նաև ծնվեցին նորերը: Չեզոք հայտնի են աշխարհաքաղաքական այն զարգացումները, մարտահրավերները, որոնք առկա են աշխարհում, և որոնք մեծապես սպառնում են նաև հայ Սփյուռքին: Տևական ճգնաժամերը տնտեսական և քաղաքական ասպարեզներում, այս ու այնտեղ բռնկվող ու մարդկային ռազմական բախումները պարտադրում են բնակչության մեծ տեղաշարժեր. քաղաքակրթության նոր որակների ազդեցությունները վտանգում են հայ Սփյուռքի գոյատևման հիմնական պատվարը լեզուն:

Դասական արևմտահայերենը, պատմաքաղաքական իրադարձությունների պարտադրանքով զրկված լինելով պետական հոգածությունից և հայտնվելով տարբեր քաղաքակրթական ոլորտներում, ինքը ևս մասնատվեց, կորցրեց միօրինակ ու համակարգված նկարագիրը: Սիրիահայը, լիբանանահայը, ֆրանսահայը, ամերիկահայը, ուրուգվահայը և Սփյուռքի մեր մյուս քույրերն ու եղբայրները՝ արևմտահայերենի հիմնական կրողները, հաղորդակցվում և գրում են արդեն իրարից բավականին տարբեր արևմտահայերենով: Վտանգված է արևմտահայերենը, որով ստեղծվել է հայ մշակույթի ու պատմության անգնահատելի վիթխարի ժառանգություն: Այն փրկելու մտահոգությամբ Սփյուռքի նախարարությունը ձեռնամուխ է եղել և այժմ իրագործում է արևմտահայերենի քերականությանն ու բառապաշարին վերաբերող դասագրքերի և ձեռնարկների հրատարակություն: Լույս են տեսել արևմտահայերեն այբբենարան-ընթերցարաններ Սփյուռքի դպրոցների I և II դասարանների համար, և արևմտահայերենի ուսուցմանը մվիրված դասագրքերի տպագրության աշխատանքները շարունակվելու են: Այս մտահոգությամբ նաև 2010 թվականի հուլիսի 3-5-ը Ծաղկաձորում անցկացվեց «Արևմտահայերենի ուսուցման վիճակը Սփյուռքում» գիտաժողովը, որտեղ հայրենի և սփյուռքահայ ճանաչված գիտնականներ և ուսուցիչներ իրենց ավելի քան 20 զեկույցներում վեր հանեցին վիճակը ներկայացնող բազմաթիվ խնդիրներ, մատնանշվեցին թերությունները վերացնելու և նոր զարգացումների ուղիները:

Համաշխարհայնացումը մեծապես խոչընդոտում է մայր լեզուն իմացող երիտասարդների թվի աճը: Սփյուռքի գոյատևմանը սպառնում են ոչ միայն քաղաքական, տնտեսական և բնական աղետները: Հայապահպանությանը մեծապես վտանգում են նաև հետզհետե ավելի ու ավելի հաճախացող խառնամուսնությունները: Աստիճանաբար մեծ թափ հավաքող գլոբալացման պայմաններում դրանք կյանքի օրենք են դառնում: Ասված է՝ այն ինչ բնական է, նաև բանական է: Ուստի մնում է միայն հայապահպանության խնդիրները դիտարկել և ազգային դիմագիծը փրկելու ուղիներ որոնել այդ պայմաններում, այսինքն՝ խառնամուսնությունների արդյունքում ձևավորվող կիսահայկական ընտանիքներում: Այս մտահոգությամբ Սփյուռքի նախարարությունը 2010 թվականի ապրիլի 25-26-ը Երևանում գումարեց «Հայ ինքնության որակների պահպանումը խառնամուսնություններում» գիտագործնական համաժողովը: Նրա մասնակից հայ և այլազգի գիտնականները իրենց զեկույցումներում արծարծեցին բազում արդիական ու կարևոր խնդիրներ, որոնք ունեն ինչպես գիտասոցիալական, այնպես էլ ազգապահպան մեծ արժեք: Կարևոր եզրակացությունը, որին հանգեց համաժողովը, այն էր, որ այդպիսի ընտանիքների երեխաների հետ պետք է ակտիվորեն աշխատել, որպեսզի հզորանա հայ գենը, և նրանք առավել կապվեն հայկական ինքնությամբ:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի «Տանը խոսենք հայերեն» պատգամ-կարգախոսը լավագույն ուղիներից մեկն է հայկականության մեր տեսակը պահպանելու ճանապարհին, և այն պետք է դառնա յուրաքանչյուր հայ ընտանիքի նշանաբանը:

Հայ երիտասարդներին ոգևորելու, խրախուսելու համար էր, որ նախարարությունը կազմակերպեց «Հայրենիքն իմ սրտում է» խորագրով համաժողովը, նրանց շրջանում մայրենի լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու նպատակով իրականացնում է «Ամառային դպրոց» ծրագիրը:

Այս շրջանակներում կայացած բազմաթիվ միջոցառումներ և ծրագրեր միտում ունեն նաև դասական արևմտահայերենի մաքրման ու համակարգման: Դպրոցն իր գոյության 2 տարիների ընթացքում ընդունել և վերապատրաստման դասընթացներ է անցկացրել շուրջ 400 սփյուռքահայի հետ, կազմակերպել է գործնական աշխատանքներ (պրակտիկա)՝ ձեռք բերածը ամրակայելու նպատակով,

կազմակերպել հայրենաճանաչմանը նվիրված շրջագայություններ: Ոչ միայն Հայրենիք-Սփյուռք փոխադարձ կապի, այլև արևմտահայերենի միասնականացման և արևելահայերենի յուրացման հարցում անգնահատելի դեր ունեցավ «Արի տուն» ծրագիրը, որի օգտակարության վերաբերյալ այսօր արդեն կասկածներ չունեն ժամանակին թերահավատորեն տրամադրված ամենահռոճեղձներն անգամ: Իր սկզբնավորման օրից «Արի տուն» ծրագրով Հայաստան են ժամանել շուրջ 4000 սփյուռքահայ երիտասարդներ և աղջիկներ, նրանցից 14-ը գտել են միմյանց և կազմել հայկական ընտանիքներ, կապվել հայրենիքի հետ: Հայապահպանության խթան, գործիք է դարձել համահայկական մասնագիտական համաժողովների կազմակերպումը: Հարյուրավորներն էլ սովորում են հայաստանյան բուհերում: Նման միջոցառումներից էին հայկական հիմնախնդիրների իրազեկման կառույցների ներկայացուցիչների հավաքը /2013 թ. սեպտեմբերի 19-21/, «Ճարտարագետների և ճարտարապետների համահայկական համաժողովները /2009-2011/», հայ լրագրողների, գրողների, արվեստագետների, իրավաբանների գիտաժողովները և այլն: Մյուսն էլ միայն հայ ներուժի համախմբման վկայականն են, այլև հայկական մտքի նվաճումների ճանաչողության միջոցներից մեկը: Հայագիտության տարածման, զարգացման գործում այսօր խիստ մեծանում է էլեկտրոնային մամուլի դերը: Այդ նպատակով է նաև, որ նախարարության նախաձեռնությամբ ստեղծվել է գործում են մեկ տասնյակի հասնող կայքէջեր /Սփյուռքի վիրտուալ թանգարան, էլ. գրադարան, փոխարկիչ, ճարտարապետների, իրավաբանների կայքէջեր/:

Հարգարժան հայագետներ, վերջին շրջանում նկատելի են գիտական համագործակցության, ջանքերի միավորման ողջունելի միտումներ: Ստեղծվել և տասնամյակներ շարունակ գործում են հայագիտական այնպիսի նշանավոր ընկերություններ, ինչպիսիք են ԱՆՄ-ում գործող Հայագիտական ընկերությունը /SAS/, Եվրոպայում գործող Հայագիտական միջազգային ընկերակցությունը /AIEA/, որոնք միավորում են հայ և այլազգի հարյուրավոր հայագետների, գիտական կենտրոնների աշխատանքները:

Համազգային հիմնախնդիրների լուծման գործում իրենց լուրջ ավանդն ունեն Չորյան ինստիտուտը /Կանադա/, Հայկազյան համալսարանը /Լիբանան/, Հայագիտական հետազոտությունների ծրագիրը /ԱՄՆ/, Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանը, Հայկական ազգային ինստիտուտը /ԱՄՆ/, Հայկական արվեստի և ճարտարապետության պատմության-Թաֆտա համալսարանը, Չոպանյան ինստիտուտը /Ֆրանսիա/, Հայկական ուսումնասիրությունների և հետազոտությունների ազգային ընկերությունը, Մեխիքյան կենտրոնը, Արիզոնայի համալսարանը /ԱՄՆ/ և այլն: Հայագիտության առջև ծառացած բազմաթիվ մարտահրավերներին դիմակայելու լավագույն ձևաչափը, հավատացած են, ոլորտի ներուժը համախմբելուն և կոնկրետ խնդիրները լուծելուն միտված գիտաժողովներն ու հավաքներն են: Սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ հայագիտական ուղղվածություն ունեցող գիտաժողովներ են գումարվել նաև մի շարք այլ թեմաներով, ինչպես «1946-48 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրներն այսօր», Բեյրութի Հայկազյան և Երևանի պետական համալսարանների մասնակցությամբ կազմակերպվեցին «Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում», «Արդի լեզվաքաղաքականության հիմնախնդիրները», «Հայության կրոնադավանական հատվածներ. մարտահրավերներ և հնարավորություններ», «Հայերի հետքերը Բրազիլիայում», «Մշակութային եղեռն» և այլն: Ինչպես տեսնում ենք, համառոտ թվարկումն անգամ ցույց է տալիս, որ Հայրենիքում և Սփյուռքում կատարվում է վիթխարի աշխատանք ազգային ինքնությունը և մշակութային արժեքները պահպանելու և զարգացնելու ուղղությամբ աշխարհաքաղաքական մոր զարգացումների, տեղեկատվական պատերազմների, պատմության միտումնավոր կեղծարարության, մշակութային կողոպուտի, թուրք-ադրբեջանական հակահայ հիստերիայի, մոր ցեղասպանության այս ժամանակաշրջանում պատմականորեն հասունացել է Հայաստանի շուրջ հայագիտական բոլոր ռեսուրսների միավորման պահը: Ահա և դուք էլ, հարգելի հայագետներ, ձեր այսօրվա համաժողովով մեզանից յուրաքանչյուրին հետևողական ջանքերով մղում եք շարունակելու նրանց գործը, նպաստելու միջազգային ասպարեզներում հայագիտության նորովի ներկայությանն ու ամրապնդմանը: Այս ներկայացուցչական համաժողովը տեղի է ունենում Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի շեմին, և Հայկական հարցը ամենից առաջ ձեր՝ հայագետներից հարցն է, քանի որ հարյուր տարի առաջ թուրք օսմանները մեզ ոչ միայն հայրենագրկեցին, այլև, եթե կարելի է այդպես ասել, «լեզվասպանության» ենթարկեցին: Մենք կորցրինք մեր չքնաղ լեզվի շատ ու շատ բարբառներ, կորցնում ենք մեր լեզուն, քանի որ այն ամեն օր, ամեն ժամ աղճատվում և աղավաղվում է օտար միջավայրում: Ցեղասպանությունն ուղեկցվեց մշակութային եղեռնով, որի պահանջատեղը դուք եք՝ այստեղ հավաքված մեծանուն հայագետները: Համոզված են, որ յուրաքանչյուրը ձեր երկրում, որպես մասնագետներ, մի նոր ու մեծ քայլ կկատարեք Ցեղասպանության ճանաչման ու դատապարտման, հայոց պահանջատիրության բավարարման, պատմական արդարության հաստատման ճանապարհին: Մենք պետք է միասնաբար միջոցներ գտնենք՝ լուծելու հայագիտության առջև ծառացած կարևորագույն հիմնախնդիրները՝ առաջնորդվելով այն մտածողությամբ, որ հայագիտությունը գիտական հասկացությունից վերածվել է

ազգային անվտանգության գործոնի: Հայաստանի Հանրապետությունը պետք է դառնա հայագիտության միջազգային կենտրոն:

Ելնելով այս մեկնակետից՝ առաջարկում եմ.

1. Ստեղծել Համահայկական Հայագիտական խորհուրդ, որը կհամակարգի հայագիտական ոլորտի բոլոր հիմնախնդիրները, կդառնա համահայկական հայագիտության ղեկավար մարմին:

2. Ստեղծված խորհրդի համապատասխան ուժերի համախմբման միջոցով գիտականորեն լրամշակել հայագիտության միասնական և համակարգված քաղաքականությունն ու հայեցակարգը, հստակեցնել նրա գերակա ուղղությունները:

3. Մշակել Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում գործող հայագիտական հաստատությունների առավել արդյունավետ ծրագրեր և համադրել դրանք:

Ձևավորել ոլորտի միասնական տեղեկատվական միջավայր, ունենալ էլեկտրոնային կայք, որի միջոցով յուրաքանչյուր հետազոտվող թեմա և նյութ հասանելի կլինեն բոլորին:

Ստեղծել խմբագրական խորհուրդ՝ տարվա հայագիտական լավագույն աշխատանքները գատելու, խմբագրելու և դրանք հատուկ ավանախում օտար լեզուներով, մասնավորապես անգլերենով հրատարակելու համար:

Կարծում եմ՝ ասվածի իրագործումը կնպաստի ոչ միայն կրկնություններից խուսափելուն, այլև միմյանց օգնելուն, կատարված հետազոտությունների արդյունքները հնարավորինս կիրառելուն, համախմբվելուն և ուղղորդված աշխատանքներ կատարելուն:

Հարգելի՛ ներկաներ,

Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ անկախության պայմաններում հայագիտությունն ազգային անվտանգությունը երաշխավորողի իր տեսանելի գործառնությամբ վերածվել է պետական քաղաքականության էական բաղադրիչի, որն ուղղակիորեն նպաստում է անկախ պետականության ամրապնդմանն ու ազգային ինքնագիտակցության խորացմանը: Այն աստիճանաբար դառնում է հայոց պետականության շուրջ հայերի համախմբման, երկրի պաշտպանության մեծ ներուժն ապահովող գործոն: Այդ ներուժը համախմբելու, միասնաբար գործելու վճռականությամբ ենք մենք բոլորս հավաքվել ԳԱԱ-ի շուրջ, և մեր բոլորի նպատակն այսօր հայագիտության համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է:

Կարծում եմ՝ այս գիտաժողովը կոչված է շրջադարձային լինելու հայագիտության արդի վիճակը գնահատելու, զարգացման հեռանկարները բացահայտելու տեսանկյունից և դառնալու պարբերաբար գործող համաժողովներ: Այս համաժողովը պետք է ուղիներ և կառույցներ գտնի, որպեսզի հայագիտությունը համընթաց քայլի համաշխարհային գիտության հետ, նրա նվաճումները հայոց պետականության հետագա ամրապնդման և հակահայկական կեղծ գիտականության ու քարոզչության դեմ հուսալի պատվար պետք է դառնան: Միայն այս ճանապարհով ընթանալով՝ կարող ենք դառնալ հայկական քաղաքակրթության, ազգային նյութական և հոգևոր արժեքների ճանաչողության ու պահպանման, օտար որոշ հետազոտողների հափշտակություններից դրանք փրկելու երաշխավորներ:

Հարգարժան գիտնականներ,

Խոսքս ուզում եմ ավարտել հայագիտության հիմնադիրներից մեկի՝ Մխիթար Մեքաստացու մի բնորոշմամբ, որը կարգախոս պիտի դառնա յուրաքանչյուր հայագետի համար. «Աղոթքի հետ՝ աշխատանք, առաքինության հետ՝ հայրենասիրություն, հավատքի հետ՝ գաղափարական սնեռակետ, և միշտ Հայաստան, ամեն ինչ Հայրենիքի համար, հայ ժողովրդի համար...»:

Hranush Hakobian (Armenia)

HOMELAND-DIASPORA RELATIONS AND THE ISSUES OF ARMENIAN STUDIES

It is a known fact that due to historical reasons until 1918 the development of Armenian studies took place outside modern Armenia. Throughout the Soviet era, despite the politicization of social science, Armenian studies developed in the Soviet Armenia and important scientific contributions were made. However, the scientific potential of the two parts of the Armenian nation was divided. Today numerous Armenian studies centers operate in Diaspora. Since the very establishment in 2008, the Ministry of Diaspora has considered the preservation of the Armenian identity as a strategic task. In cooperation with the Armenian Mekhitarist Congregation various projects were implemented. A tripartite agreement on cooperation was concluded between the Ministry of Diaspora, The Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts – Matenadaran and the Armenian Catholic Patriarchate of Bzoummar. Projects are on the way to digitalize the manuscripts preserved both in Venice and Bzoummar.

Another important branch of Armenian studies is now evolving – Diaspora studies and the development of this discipline is considered as a fundamental objective by the ministry. That is why on the initiative and funding of the ministry, Diaspora studies chair was inaugurated at Yerevan State University which annually

prepares 39 specialists. It should be mentioned, that several additional projects are implemented by other universities. Simultaneously, the ministry has also signed cooperation agreements with various Armenian studies centers.

The Ministry of Diaspora is greatly concerned about the problems of language preservation, because Western Armenian, a language, spoken only in Diaspora, is nowadays endangered. The native speakers lose fluency in Western Armenian due to the growing pressures of globalization, mixed marriages, multicultural environment, and various socio-psychological factors in the Diaspora.

For this purpose several activities, conferences and events, trainings of teachers and language training have been organized; manuals and books have been published.

Hence, there is a need for a comprehensive plan discussed and agreed with the community organizations and concerned institutions, the goal of which should be language and identity preservation in Diaspora. The Republic of Armenia should become a center for Armenia Studies. Simultaneously, we should establish a Pan-Armenian council of Armenian studies to coordinate the activities and raise the issues in this field. The council should develop a clear strategy and policy of the discipline, more effective action plans and programs for the Armenian studies centers. At the same time, a single information portal must be established which will act as a depository. And we think that a newly created editorial council shall annually choose the best researches and publish it in English.

And finally, united we should find means to solve the problems and challenges of the Armenian studies, guided by the idea that the Armenian studies no longer is a scientific conception, but also a national security issue.

Արամ Սիմոնյան (Հայաստան)

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴԻՄՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Իր պատմության բազմադարյա ճանապարհին հայ ժողովուրդը, մաքառելով գոյության համար, հնարավորություն չի ունեցել լիովին ինքնադրսևորվելու: Բայց, չնայած իր ընթացքի բոլոր վայրիվերումներին ու բազում խոչընդոտներին, նա չի դադարել արարելուց:

Այսօր գլոբալացվող աշխարհը նորանոր խնդիրներ է առաջադրում: Ամենուրեք ծավալվող գիտական ու մշակութային համաշխարհային ընդհանուր զարգացումներում ինտեգրվելուց զատ մեզ համար առաջնայինը շարունակում է մնալ ազգապահպանումը: Այս համատեքստում ռազմավարական մեծ նշանակություն է ձեռք բերում հայագիտությունը՝ որպես գիտահետազոտական բնագավառի գերակա ուղղություն:

Հայագիտության բնագավառում մենք ունենք հսկայածավալ ժառանգություն, որը ներկայումս հարստացվում է նորանոր ձեռքբերումներով: Օրինակ՝ կատարվել են հայոց լեզվին վերաբերող արժեքավոր ուսումնասիրություններ, որոնց լույսի ներքո գրվել ու հրատարակվել են մենագրություններ և կոլեկտիվ աշխատանքներ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, բառարաններ:

Հայագիտության կարևոր ճյուղերից մեկը գրականագիտությունն է, որտեղ նույնպես նվաճումներ կան: Բայց իր ամբողջության մեջ արդի հայ գրականագիտությունը ոչ միշտ է տեսնում այն փոփոխությունները, որ վերջին տարիներին կատարվել են ժամանակակից հայ արձակում ու չափաճյուն: Իհարկե, անուրանալի է, որ վերջին տասնամյակներին վերանայվել ու վերաարժևորվել են մի շարք գրողների գրական երկերը, նոր դիրքերից են գնահատվել մեր գրական զարգացման միտումները: Բայց գրականագիտությունը, ցավոք, դեռևս հեռու է այն մակարդակից, որ ուներ մի քանի տասնամյակ առաջ:

Հայագիտության կարևոր բաղադրիչներից է պատմագիտությունը: Վերջին տարիներին մեզանում զգալի աշխատանք է կատարվել հնագույն և հին շրջանի պատմության, հատկապես հնագիտական ուսումնասիրությունների ասպարեզներում: Որոշակի ձեռքբերումներ են արձանագրվել հայոց պետականությունների պատմության ուսումնասիրման ուղղությամբ, նորովի են արժևորվել ու գնահատվել հատկապես 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայոց ազգային-ազատագրական շարժումները: Մեծ եղեռնի թեմայով լույս են տեսել մի շարք արժեքավոր աշխատություններ: Ուշադրության կենտրոնում են եղել Արցախի պատմության հիմնախնդիրը, Զանգեզուրի գոյամարտը, Առաջին հանրապետության ստեղծման ու գոյատևման պատմությունը: Արմատապես վերաիմաստավորվել են Խորհրդային Հայաստանի գոյության ժամանակաշրջանի պատմական իրադարձությունները, հիմք է դրվել երկրի անկախության շրջանի պատմության գիտական մշակմանը:

Ներկայումս խիստ կարևոր են հայագիտության զարգացման ներկա վիճակի բնութագիրը և նրա հետագա զարգացման ուղիների բնորոշումը, որը պետք է ներառի ոլորտի գերակա ուղղու-

թյունների՝ հայոց լեզվի, հայ գրականության, հայոց պատմության, հայ մշակույթի և այլնի ուղղությամբ գործընթացների ծրագրավորումն ու համակարգումը:

Որո՞նք են հայագիտության զարգացմանը միտված մեր անելիքները:

1. Արխիվային աշխատանք

Պատմական զարգացման ընթացքի վերաբերյալ տեղեկությունների շտեմարանը պահոցներն են: Տարբեր դարերում մեր պատմամշակութային գործունեությունը այս կամ այն կերպ փաստագրվել է թե՛ հայ և թե՛ օտար վավերագիրների կողմից: Այժմ մեր առաջնահերթ խնդիրներից մեկը դրանք հայրենիքում հնարավորինս ի մի բերելն է: Այդ տեսակետից կարևոր է. հաշվառել և պատճենահանել Հայաստանին և հայ ժողովրդին վերաբերող բոլոր նյութերը, որոնք գտնվում են Հյուսիսային Ամերիկայի, Արևմտյան և Արևելյան Եվրոպայի, Միջին և Մերձավոր Արևելքի երկրների արխիվներում: Ուշադրությունն առավելապես պետք է կենտրոնացնել Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Կիևի, Խարկովի, Դրիմի, Միջին Ասիայի երկրների, Մոլդովայի, Վրաստանի, Հյուսիսային Կովկասի քաղաքների արխիվների վրա: Առանձնակի ուշադրության են արժանի Թուրքիայի և Երուսաղեմի (նաև պատրիարքարանի) արխիվների նյութերը: Հարկ է նաև հավաքել հայկական հիմնադրամների կուտակած արխիվային նյութերը: Այդ ամենի համար, կարծում ենք, պետք է ստեղծել հատուկ հիմնադրամ:

Հավաքված ու պատճենահանված նյութից առավել կարևորները պետք է տպագրել, իսկ հավաքած ամբողջ նյութը թվայնացնել:

Ժամանակն է նպատակային կրթական ծրագրերով պատրաստել օտար լեզուներին (այդ թվում՝ մեռած լեզուներին) տիրապետող արխիվավար կադրեր: Վերջապես, պետք է հասնել այն բանին, որ հանրապետության կառավարությունը ֆինանսական անհրաժեշտ միջոցներ հատկացնի մեզանում գտնվող արխիվները կարգի բերելու համար:

2. Համացանցային աշխատանք

Հայաստանի Հանրապետության՝ օրեցօր ավելի ու ավելի ընդարձակվող տեղեկատվական դաշտում և հատկապես համացանցում ու սոցիալական կայքերում հայագիտությունը պետք է ունենա իր որոշակի տեղը: Արագ տեղեկատվություն ստանալու հնարավորությանը զուգահեռ համացանցը նաև ընձեռում է դրան մույնքան արագ արձագանքելու հնարավորություն: Ներկայումս համացանցում հայագի և այլ հայագետների կողմից հայագիտական խնդիրների արծարծումը ոչ միայն լոկ տեղեկատվություն է, այլև հնարավորություն՝ հակահարված տալու մեր պատմությունն ու մշակույթը խեղաթյուրողներին: Այս առումով կարևոր է համացանցում գիտական նյութի հավուր պատշաճի մատուցումը, դրա հավաստիության մեջ հայ թե այլագի ընթերցողին համոզելը:

Հայագիտության քարոզչության առումով կարևոր են կայքերում տեղադրված առկա նյութերի համակարգումը, հավաքագրումը և թվայնացումը, ինչպես նաև բացակայող նյութերի լրացումը: Խիստ կարևոր են նյութերի մատուցման լեզուն ու ձևը, դրանց բովանդակության լիակատար բացահայտումը:

3. Գրադարանային աշխատանք

Գրադարանը մարդկային մտքի վիթխարի պահոց է, տեղեկատվության անփոխարինելի աղբյուր: Դրանից ելնելով՝ խիստ նպատակահարմար է աշխարհի խոշորագույն գրադարաններից պատճենահանել և Հայաստան բերել հայերեն եզակի գրքերը, Հայաստանի և հայերի մասին եղած գրականությունը, հին և միջնադարյան քարտեզները:

4. Հայոց լեզվի ուղղությամբ աշխատանք

Մեր լեզուն մեր լինելության հիմնական երաշխիքն է: Մայրենիի հանդեպ մշտական հոգածությունը նրա կենսունակության ու անաղարտության գրավականն է: Ուստի մեր խնդիրն է.

Աշխուժացնել աշխատանքները դասական հայերենի և հայերենագիտության ուղղությամբ, ավելի խորությամբ ուսումնասիրել հայոց լեզվի արդի վիճակը՝ հատուկ ուշադրություն դարձնելով արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցման հարցերին:

Կարևոր է հայերենի ուսումնասիրության մեջ նորագույն միջոցների՝ գործաբանական լեզվաբանության և համակարգչային լեզվաբանության ներդրումը:

Արդի տեխնոլոգիական հնարավորությունների կիրառմամբ հարկ է իրականացնել բազմազան գործընթացներ՝ համացանցում հայերեն բովանդակության նյութերի հարստացում, համակարգչային շտեմարանների ստեղծում, հայերենին վերաբերող ժամանակակից էլեկտրոնային տարաբնույթ բառարանների, հանրագիտարանների և սպասարկու այլ միջոցների ստեղծում:

Էլեկտրոնային հաղորդակցման արդի ձևերում հայերեն այբուբենի ներդրման շնորհիվ շարունակել հայերենի առցանց ինքնուսույցների և հեռուստուցման դասընթացների, հայերենի ուսուցմանը նպաստող էլեկտրոնային խաղերի ստեղծումը, մշակել հայերենի՝ որպես օտարների համար երկրորդ լեզվի ուսուցման արդիական մեթոդները:

Լուրջ ուշադրություն դարձնել ժամանակակից հայոց լեզվի կանոնարկման խնդիրներին՝ սկսած ուղղախոսական նորմերից մինչև շարահյուսական կառույցներ:

Թույլ տրված լեզվական սխալներն ուղղելու նպատակով վերանայել դպրոցական և բուհական դասագրքերը:

Հանրակրթական և բարձրագույն կրթության հաստատություններում նոր դասագրքեր ստեղծելու ուղղությամբ ծավալել լայն գործունեություն:

Սահմանել մասնագիտական վերահսկողություն դպրոցական նոր դասագրքեր ստեղծելու համար անցկացվող մրցույթների, ինչպես նաև հայոց լեզվի ավարտական-քննական թեստերի որակի նկատմամբ:

Հայոց լեզուն դասավանդել հետաքրքիր և նորովի՝ սերմանելով անխախտ սեր ու հոգածություն նրա հանդեպ:

Բոլոր մակարդակներում (գիտական, ուսումնական, գրական-գեղարվեստական, աշխատանքային և այլն) հայերեն գրագրության հիմքում ապահովել լեզվահմացությունը, գրել ոչ թե ինտուիտիվ, այլ սովորել խորամուխ լինել լեզվի օրենքների մեջ՝ ձգտելով տիրապետել գրելու արվեստին: Ճիշտ գրելը համարել անհրաժեշտություն և պահանջ:

Ընդլայնել հայերենի գործառական հնարավորությունները պաշտոնական, գործավարական գրագրության, գիտական գրականության մեջ, ԶԼՄ-ների ոլորտներում և սոցիալական ցանցերում:

Մշակել նոր միջոցներ ու դրանք կիրառել արևմտահայերենը պահպանելու, կանոնակարգելու և զարգացնելու, արևելահայերենն ու արևմտահայերենը մերձեցնելու համար:

Լեզվի կիրառման և լեզվամտածողության զարգացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հարկ է խորացնել լեզվաբանություն-ինֆորմատիկա, լեզվաբանություն-տրամաբանություն փոխառնությունները:

Վերահրատարակել և լայնորեն տարածել ՀՀ լեզվի պետական տեսչության հրատարակությունները:

Ուսումնասիրել միջազգային լեզվաբանական ժառանգությունը՝ նպաստելու համար հայ լեզվաբանության զարգացման միտումների բացահայտմանը:

Որոշել հայ լեզվաբանության բնագավառում հետագա հետազոտությունների գերակա ուղղությունները, հասնել պետության կողմից դրանց կանոնավոր ֆինանսավորմանը:

5. Գրական-գրականագիտական աշխատանքներ

Հայ գրականությունը՝ որպես հայագիտության կարևորագույն բնագավառներից մեկը, այսօր լուրջ խնդիրների առջև է կանգնած: Այս ուղղությամբ անելիքների շարքում պետք է ընդգծել հետևյալները.

Մշտադիտարկման ենթարկել միջազգային գրականագիտական ժառանգությունը:

Որոշել մեր գրականության տեղը համաշխարհային գրականության մեջ:

Օտարին ներկայացնել հայ գրականությունն ու հայ գրողին:

Յուրաքանչյուր հայ գրողի անկողմնակալ գնահատել՝ ելնելով նրա ստեղծած գրական արժեքներից:

Գործնական ուշադրություն դարձնել սկսնակ գրողի ձևավորման ընթացքին, նրա ուսուցմանը:

Կարևորել գրողի խոսքարվեստի, նրա հրապարակային խոսքի մշակույթի ուսումնասիրությունը:

6. Պատմագիտության ուղղությամբ աշխատանք

Այս բնագավառում ևս շատ անելիքներ կան՝ ուղղված բազմաթիվ կարևոր հարցերի պարզաբանմանը և ճանաչելի դարձնելուն: Առաջնահերթ են հետևյալ խնդիրները.

Ստեղծել աշխատություններ, որոնք իրենց որակով համապատասխանեն պատմագիտական մտքի չափանիշներին:

Լուծել ոլորտի տեսական, մեթոդական ու մեթոդաբանական հրատապ հարցերը:

Ուսումնասիրել պատմագիտական դպրոցների միջազգային մակարդակը:

Մեծ ուշադրություն դարձնել մասնագետ կադրերի (նաև Սփյուռքից) պատրաստմանը:

Պատմական ուսումնասիրություններով աշխարհին ներկայացնել հայի կերպարը:

Ստեղծել հայագիտական անթոլոգիա օտար լեզուներով:

Ստեղծել կոլեկտիվ ժողովածուներ պատմագիտական վիճելի հարցերի շուրջ (նաև օտար լեզուներով):

Ստեղծել թարգմանչական հզոր կառույցներ՝ օտար ընթերցողին հասու դարձնելով հայ պատմական ուսումնասիրություններին:

Պատմագիտական խնդիրների վերհանման ու քննարկման համար արդյունավետ օգտագործել համացանցը:

Սահմանել բնագավառի գերակա ուղղություններն ու գերակա թեմատիկան՝ ելնելով տնտեսական-քաղաքական նշանակությունից և գերակա խնդիրներից:

7. Աշխատանք մշակույթի ոլորտում

Հայ հին ու նոր մշակույթը հզորացնելու նպատակով այստեղ ևս պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցառումներ: Մասնավորապես հարկ է.

Ստեղծել մշակույթի զարգացման տեսամեթոդաբանական ամուր հիմք:

Հայ մշակույթը պետք է դիտարկել և ներկայացնել որպես համամարդկային ձեռքբերում:

Օտարին պարբերաբար ներկայացնել հայ մշակույթի առավել ցայտուն օրինակներն ու երևույթները:

Նպաստել թանգարանագիտության զարգացմանը:

Աջակցել ցուցահանդեսների կազմակերպմանը:

Հայ մշակույթը լայնորեն տարածելու համար օգտագործել համացանցը:

Հայոց մշակութային արժեքների մասին բարձր որակով տպագրել հանրամատչելի գրքեր, ալբոմներ, բուկլետներ:

Հայագիտության զարգացմանը միտված վերոնշյալ գործողությունները, անշուշտ, պետք է դիտել որպես համազգային խնդիրներ և դրանց կատարման գործում ներգրավել գիտական լայն հասարակությանը: Այն պետք է գտնվի պետական մարմինների մշտական հոգածության ներքո և լինի հետազոտական կենտրոնների, անհատ գործիչների պարտականությունը: Նպատակի իրագործման համար պետք է ուղղորդվեն Հայրենիքի և Սփյուռքի հայագետների համընդհանուր ջանքերը:

Այսօր օրակարգային դարձած ազգային-պետական մի շարք կարևորագույն հիմնահարցեր, ինչպիսիք են հայ-թուրքական հարաբերությունները, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորումը և այլն, պահանջում են միանգամայն նոր մոտեցումներ և նոր արժեքային համակարգեր: Ըստ այդմ՝ հայագիտությունն այսօր դարձել է ազգային-հասարակական կյանքի, երկրի անվտանգության ապահովման կարևորագույն գործոն, և հենց այս տեսանկյունից պետք է ուղղորդվեն մեր բոլոր ձեռնարկումները:

Հուսանք, որ ներկա համաժողովը նոր հզոր խթան կդառնա հայագիտության զարգացման համար և՛ հանրապետությունում, և՛ արտերկրում: Մեզ սպասվում է հայրենանվեր լարված աշխատանք:

Aram Simonyan (Armenia)

THE ISSUES OF THE ARMENIAN STUDIES AND THE WAYS OF SOLUTION.

(Summary)

Nowadays the globalizing world issues new challenges. Besides the integration into the worldwide academic and cultural development our priority is the preservation of nation. In this context, the Armenian Studies is of strategic importance as a prior research direction.

Nowadays the characteristic of the development of the Armenian Studies and the definition of its further development are very essential, it should include the planning and coordination of its main directions: Armenian language, Armenian literature, history of Armenia, Armenian culture, etc.

The main activities for the development of the Armenian Studies are archive, Internet, library, activities, as well as activities in the field of Armenian language and literature, historiography and culture.

Աշոտ Մելքոնյան (Հայաստան)

ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Հայաստանում խորհրդային տարիներին ինչպես պատմագիտությունը, այնպես էլ ամբողջ հայագիտությունը, գտնվելով գաղափարական կապանքների մեջ, լայն զարգացման հնարավորություններ չունեին: Այդ պատճառով հայոց պատմության բազմաթիվ հանգուցային խնդիրներ, հատկապես քաղաքական բնույթի մի շարք հիմնահարցեր, ոչ միայն ուսումնասիրողների տեսադաշտից դուրս էին մնացել, այլև միտումնավոր խեղաթյուրվել էին կամ հարմարեցվել տիրող մարքս-լենինյան գաղափարախոսությանը:

Այդուհանդերձ, նման պայմաններում իսկ խորհրդահայ պատմագրությունը մասնավորապես 1960-1970-ական թվականներին կարողացավ հատկապես հին և միջնադարյան Հայաստանի պատմության շատ ու շատ հարցեր բարձրացնել, տալ դրանց հայեցակարգային լուծումները: Ավելին, խորհրդային պատմագրության մշակած մի շարք մոտեցումներ հիմք հանդիսացան հետագա ավելի խոր ու ամբողջական ուսումնասիրությունների համար: Սակայն նոր և նորագույն ժամանակաշրջանի կարևորագույն հարցերից շատերը շարունակեցին մնալ փակի տակ կամ ուսումնասիրվեցին մասնակիորեն՝ որպես կանոն, միակողմանի մոտեցումներով:

Անկախության ձեռքբերումից հետո պատմաբանների համար անաչառ պատմություն գրելու լայն հնարավորություններ բացվեցին: Վերջին երկու տասնամյակների ընթացքում պատմագիտությունը լուրջ առաջընթաց արձանագրեց: Սակայն այսօր էլ մի շարք խնդիրներ դեռ խոր ուսումնասիրության կարիք ունեն, առավել ևս, որ XXI դարում ինչպես պատմագիտության, այնպես էլ ամբողջ հայագիտության առջև կանգնած են նոր մարտահրավերներ: Հայ պատմաբանների առջև ծառացած հիմնախնդիրների շարքում առանձնացնենք առավել կարևորները:

Նոր հետազոտությունների առատությամբ առանձնանում է հին Հայաստանի պատմության բնագավառը: Հնագիտական ու լեզվաբանական վերջին ուսումնասիրությունները նոր լույս սփռեցին հայոց վաղագույն պատմության մի շարք հարցերի վրա: Վերջապես ժխտվեց հայերի եկվորության վերաբերյալ վարկածը, որը շրջանառության մեջ էր մտել XIX դարի վերջին և գիտաքաղաքական առումով մեծ վտանգ էր ներկայացնում: Հայ պատմագիտությունը վերադարձավ խնդրի լուսաբանման հայագիտական ավանդույթներին՝ հայերի բնիկության, նրանց հնդեվրոպական ծագումնաբանության, Հայկական լեռնաշխարհի՝ որպես արիացի-հնդեվրոպացիների նախահայրենիքի տեղակայության և համանման այլ տեսություններին:

Այնուամենայնիվ բազմաթիվ խնդիրներ մնացին չլուսաբանված՝ Հայկական լեռնաշխարհում Բ. ա. III հազարամյակից ստեղծված վաղագույն պետականությունների՝ Արատտայի, Արմե-Շուբրիայի, Հայասա-Ազգիի, Դիաուխիի, Էթիունիի, Թոգարամայի, մասնավորապես Վանի կամ Արարատյան թագավորության (Բ. ա. IX-VI դարեր) բնակչության էթնիկ բնույթի, մշակութային ժառանգության հարցեր և այլն: Ներկայիս ընդհանուր, մասնավորապես արևմտյան հնագիտության մեջ գերակշռում է այն մոտեցումը, որ հնագույն մշակութային ժառանգորդի էթնիկ կրողի հանգամանքն այնքան էլ կարևոր չէ, ուստի նախապատվությունը պետք է տալ խնդրի մշակութային կողմի լուսաբանմանը՝ էթնիկական հարցերն առանձնապես չկարևորելով: Այդ տեսանկյունից խիստ շահեկան է թվում էթնիկ հնագիտության զարգացումը, որը Հայաստանում առ այսօր շարունակում է մնալ պատմագիտության անտեսված բնագավառներից մեկը: Այլապես կշարունակվի հայկական մշակույթի օտարացման ու այլացման, կեղծարարության գործընթացը, որը վերջին տասնամյակներին անասելի չափեր է ընդունել: Պատահակա՞ն է արդյոք, որ այսօր «էթնիկ տիրոջից» զրկված Արարատյան թագավորությունը, որն ասորեստանյան արձանագրություններում հայտնի է օտար և աղավաղված «Ուրարտու» անունով, թուրքական գրականության մեջ ներկայանում է որպես «թուրք-աղբբեջանական» պետություն:

Խիստ կարևորելով հին շրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության բնագավառը՝ խորհրդահայ պատմագրությունը հատուկ ուշադրություն էր դարձնում այդ դարաշրջանում այսպես կոչված «ստրկատիրական հասարակության» առկայության խնդրին: Հետխորհրդային շրջանում կատարված որոշ ուսումնասիրություններ լիովին հերքեցին Հայաստանում լիարժեք ստրկատիրական հասարակության գոյության վարկածը: Սակայն այդքանը բավարար նկատվեց, և այդ ուղղությամբ այլևս լուրջ հետազոտություններ չկատարվեցին: Կնշանակի՝ հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրությունը դեռևս թերի է և ունի խոր հետազոտման կարիք:

Առաջին հայացքից թվում է, թե միջնադարյան Հայաստանի պատմության հիմնահարցերը հիմնականում ուսումնասիրված են: Իրականում պատկերն այլ է:

Հայ հեղինակների մի փոքրաթիվ մասն ավանդաբար բազմաթիվ խնդիրների շարունակում է մոտենալ միանգամայն այլ դիրքերից: Այսպես, առ այսօր հնչում են կարծիքներ, թե Հայաստանում քրիստոնեության ընդունումը ճակատագրական սխալ էր, և այդ հանգամանքն է պայմանավորել

հայության մարտունակության կորուստը, դարձել զանազան դժբախտությունների պատճառ: Մոռացության է տրվում այն փաստը, որ Հայ եկեղեցին արդեն IV դ. 70-ական թվականների սկզբին բռնել էր կաթողիկե՝ ընդհանրական եկեղեցուց զատվելու և ինքնուրույն ազգային եկեղեցի դառնալու ուղին: Այդ գործընթացը փաստորեն ավարտվեց 451 թ., երբ հայ հոգևորականությունը հրաժարվեց Քաղկեդոնի ժողովին մասնակցելուց, երկաթնակությունը ընդունելուց մախրնտրելով միաբնակ դավանանքը: Իրականում քրիստոնեության ճանապարհի ընտրությունը նոր քաղաքակրթական ուղու ընտրություն էր:

Փաստորեն վերոհիշյալ նույն թեզից էլ ոմանք սկսեցին բխեցնել V դարի ազատագրական պատերազմների վերաբերյալ հույժ սխալ ու քաղաքականապես վտանգավոր կարծիքներ: Այն է՝ իբր Վարդանանց պատերազմի անհրաժեշտությունը չկար, և զրադաշտականության ընդունումը հայության համար որևէ վտանգ չէր ներկայացնում: Նույն խնդրի շրջանակներում կարևոր է պատմագրության մեջ առկա՝ Վարդան-Վասակ գնահատականի հարցը, որին ևս առ այսօր տրված չէ սպառնիչ պատասխան:

Յայսօր թյուր մակարդակով է ներկայացված պետականության խնդիրը մարզպանական Հայաստանում, Արմինիա վարչական միավորի գոյության շրջանում, Չաքարյանների տիրույթներում, Արևելյան Հայաստանում՝ մելիքությունների, Արևմտյան Հայաստանում ու Կիլիկիայում՝ Շատախի, Մոկսի, Սասունի, Չեթունի իշխանությունների կարգավիճակներում: Պետականությանը փոխարինելու խնդրում ունեցած ավանդի տեսանկյունից դեռ հավոր պատշաճի գնահատված չէ Հայաստանյայց առաքելական եկեղեցու դերը: Մեկընդմիջտ հերքման կարիք ունի այն սխալ մտայնությունը, որ 1045 թ. Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո՝ մինչև 1918 թ., մենք լիովին զրկված ենք եղել պետականությունից: Բանն այն է, որ պատմության ընթացքի զանազան փուլերում պետականությունը կարող էր ունենալ տարբեր դրսևորումներ: Հայաստանի պարագայում այն ունեցել է ոչ միայն թագավորությունների, այլ նաև պետական այլ կազմավորումների՝ իշխանությունների, տոնախների, մելիքությունների կամ այլ կարգավիճակ: Հենց այդպիսի կարգավիճակներն են ներկայացրել XI-XVIII դարերի հայկական պետական կազմավորումները:

Առանձին ուսումնասիրության թեմա են մշակութային հարցերը, մասնավորապես միջնադարում հայկական վերածննդի՝ ռենեսանսի խնդիրը: X-XII դդ. հայկական մշակութային կյանքի անմախաղեպ վերելքը՝ «Մասունցի Դավիթ» էպոսի, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի հանդես գալը և բազմաթիվ այլ հանգամանքներ հուշում են, որ հայ իրականության մեջ վերածնունդն սկսվել է ավելի վաղ, քան Արևմտյան Եվրոպայում: Այլ հարց է, որ օտար քոչվորական ցեղերի մշտական հարձակումների պայմաններում հայկական վերածննդի գործընթացը ոչ միայն դադարել է, այլև առանձին բնագավառներում հետընթաց ապրել:

Նոր պատմության հիմնահարցերի ուսումնասիրության բնագավառում ևս ձեռքբերումների կողքին շատ են անելիքները: Դեռ պահպանվում են հայ ազատագրական շարժման մեջ ժողովրդի քաղաքական կողմնորոշման ձևավորման ու ամրապնդման մասին նախկին պատկերացումները: Դեռևս հաղթահարված չէ այն կարծրատիպը, որ մեկ կամ մի քանի քաղաքական գործչի գործելակերպով չի կարող ձևավորվել ամբողջ ժողովրդի քաղաքական կողմնորոշումը: Առավել ևս, որ վիճելի է նաև այն թեզը, թե արդյոք գոյություն ունի՞ ողջ ժողովրդի քաղաքական կողմնորոշում ասվածը, թե՞ այն ավելի շատ նախորդ ժամանակներում քաղաքական կաղապարների պայմաններում ծնված մտացածին երևույթ է:

Հաճախ զանց են առնվում XVII դարի 20-40-ական թվականներին ազատագրական պայքարի շնորհիվ Արևելյան Հայաստանի մի շարք շրջաններում հայկական պետականության վերականգնման հույժ կարևոր իրողությունները: Սպառնիչ գիտական գնահատականի կարիք ունեն Հայաստանի երկու՝ արևելյան և արևմտյան հատվածներում հայության սոցիալ-իրավական կարգավիճակի առանձնահատկությունների, առանձին դեպքերում՝ ազգային կուսակցությունների գործելակերպի, Առաջին աշխարհամարտի տարիներին կամավորական շարժման նկատմամբ վերաբերմունքի և այլ հարցեր: Անկասկած, պիտի շարունակել վերջին տարիներին գիտնականների կատարած լրջագույն աշխատանքը միջազգային իրավական նորմերում Հայոց ցեղասպանությունը որպես հայրենագրկում որակելու, թուրքերի իրականացրած գեոցիդի դիմաց հողային ու նյութական հատուցման հասնելու հայեցակարգի մշակման ուղղությամբ:

Անհրաժեշտ է շարունակել աշխատանքը վերջին տասնամյակներում լուրջ հաջողություններ արձանագրած ոլորտի՝ պատմական ժողովրդագրության բնագավառում: Խնդիրն այն է, որ օտարների կողմից հայոց պատմության կեղծարարության մեծ մասն այսօր էլ բաժին է ընկնում պատմական ժողովրդագրության ոլորտին:

Պատմագիտական խնդիրները նորովի լուսաբանելու տեսանկյունից մեծ է հատկապես նորագույն պատմության մասնաբաժինը: Լիովին նոր հայեցակարգով են շարադրվել Առաջին հանրապետության (1918-1920 թթ.) և Խորհրդային Հայաստանի պատմության էջերը: Սակայն դեռ հնչում են տեսակետներ, թե ՀԽՍՀ-ն, ԽՍՀՄ-ի մաս կազմելով, չէր կարող համարվել հայոց պետականության ինքնատիպ դրսևորում, ուստի այն չի կարելի որակել որպես Երկրորդ հանրապետություն: Այդ իմաստով անհրաժեշտ են նոր ուսումնասիրություններ՝ նույնիսկ քաղաքական համակարգով միմյանցից

արմատապես տարբերվող երեք հանրապետությունների (1918-1920, 1921-1991 և 1991 թ.-ից ցայսօր) օրգանական կապը բացահայտելու, նորագույն պատմության ամբողջական շղթան պետականության պատմության հոլովույթի մեջ տեսնելու համար:

XXI դարում հայագիտության կողմից լուծվելիք խնդիրների մեջ դժվար է գերազնահատել թուրք-ադրբեջանական պատմագրության դեմ պայքարի կարևորությունը: Հայ մասնագետները պիտի կարողանան միջազգային մակարդակով գիտական հանրությանը ցույց տալ ողջ տարածաշրջանի համար այդ կեղծարարության քաղաքական վտանգավորությունը և ծանր հեռանկարի հավանականությունը:

Ashot Melkonyan (Armenia)

THE PROBLEMS OF THE ARMENIAN HISTORIOGRAPHY AT THE PRESENT STAGE

During the last decades the Armenian historiography has developed rather successfully. But XXI century sets new challenges for the Armenian historians. There are serious tasks in researching of the Armenian history from the point of view of ethnic archaeology, revealing of the fact of political expedience of declaration of Christianity as the state religion, studying of the statehood's developments in different epochs, elaborating of the state conception related to the Armenian Genocide, as well as reconsideration of the history of Soviet Armenia and many other spheres. The ideological struggle against the Turkish-Azerbaijani falsifications must be in the focus of attention constantly.

Տիգրան Զարգարյան (Հայաստան)

«ՀԱՅԿԱԿԱՆՔ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐՈՒՄԻ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

Համակարգչային և տեղեկատվական գիտությունների, գրադարանագիտության զարգացման ներկայիս փուլը նոր մարտահրավերներ է նետում գրադարանավարներին՝ նորովի իրականացնելու ընթերցողների սպասարկումը: Անհրաժեշտ է առաջարկել ծառայություններ, որոնք նյութը ընթերցողին հասանելի են դարձնում 24/7/365 սկզբունքով (շուրջօրյա, շաբաթվա բոլոր օրերին, ամբողջ տարվա ընթացքում), ընթերցողին տրամադրել միջավայր, որով հնարավոր է դառնում առանց գրադարան այցելելու աշխարհի ցանկացած կետից (ունենալով մուտք դեպի համացանց) օգտվել պահանջվող նյութերից, իսկ հայագետներին՝ օգնել իրենց գիտական արտադրանքը արագորեն համացանցի որոնող շարժիչների միջոցով տեսանելի և հասանելի դարձնել հանրությանը: Այս հիմնական նպատակների իրականացման համար Հայաստանի ազգային և Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարաններում մշակվել և կյանքի է կոչվել գործողությունների մի համալիր ծրագիր, որի առաջնային խնդիրներն են.

1. Զարգացնել ռազմավարական համագործակցությունը Հայաստանի և արտերկրի գրադարանների ու հայագիտական կենտրոնների հետ: Աշխատանքները սկսվել են 2001 թ., երբ 10 խոշոր գրադարաններ՝ Ազգային, ԳԱԱ հիմնարար գիտական, Ազգային մանկական, Երևանի քաղաքային գրադարանները, Երևանի պետական համալսարանը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը, Երևանի պետական լեզվաբանական համալսարանը, Ագրարային ակադեմիան, գիտաբժշկական, գիտատեխնիկական գրադարանները, ձեռնամուխ եղան «Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակի» ձևավորմանը: Ներկայումս գրացուցակում կա ավելի քան 800 հազար մատենագիտական գրառում՝ ձևավորված ՍՄԿԿՄ 21 ձևաչափով: Գրադարանները կարող են համահավաք գրացուցակի գրառումները բեռնաթափել սեփական քարտարաններ՝ օգտագործելով Z39.50 համաձայնագիրը: Ձևավորվում են հեղինակավոր գրառումների (Authority Records), խորագրերի (Subject Headings), կազմակերպությունների անունների (Corporate Names) շտեմարանները:

«Հայ հնատիպ գրքի» համահավաք շտեմարանի ձևավորման աշխատանքների շուրջ համագործակցում են Ազգային և ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանները, Մայր աթոռի գրադարանը, «Դուռնի» մշակութային տունը, Մատենադարանը, Ռուսաստանի ազգային գրադարանը, Չեխիայի ազգային գրադարանը: Նման համագործակցությունը կարելի է բնութագրել որպես՝ «Քայլ դեպի վաղվա գրադարան»:

2. Տրամադրել հայագիտական ուղղվածության բարձրարժեք հավաքածուներ ընթերցողներին, հետազոտական և կրթական ոլորտների աշխատակիցներին, իսկ գրադարանավարներին ապահովել

տեղեկատվական գիտության և գրադարանագիտության արդի պահանջները բավարարող համակարգերով, որոնց օգնությամբ հանրության տեղեկատվական սպասարկումը կդառնա ավելի ճկուն և արդյունավետ: Ստեղծվում է «Հայաստանի կրթական և հետազոտական պահոց» հանգույցը, որն ավելին է, քան թվային գրադարանի մի հատվածը: Այն նաև՝

- լաբորատորիա է «Բաց մատչելիության» մոդելների փորձարկման համար,
- ծրագրային միջոցներ նախագծողների և տարածողների համայնք է, որտեղ հետազոտվում և ապա գրադարանային հանրությանն են առաջարկվում Բաց/Ազատ կոդերով ծրագրաշարեր,
- ուսումնական միջավայր է «Գրադարանագիտություն և տեղեկատվական գիտություն» մասնագիտացմամբ ուսանողների գործնական աշխատանքների կազմակերպման համար,
- գիտական կենտրոն է, որտեղ հետազոտվում են Մեմանտիկ վեբի հնարավորությունները, ամպային հաշվարկների կիրառությունները հայագիտական նյութերի մշակման և որոնման համար: Աշխատանքներն իրականացվում են Հայաստանի ազգային գրադարանի և ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի մասնագետների ջանքերով: Կազմակերպությունները համատեղ օգտագործում են հաշվողական հզորությունները, թվայնացման համար նկարահանող սարքերը, մարդկային ներուժը:

Որպես ծրագրային լուծումներ՝ օգտագործվում են Բաց/Ազատ կոդերով ծրագրաշարերը: Դրանք են.

- սպասարկող կայանների համար՝ Linux, MySQL, Apache համակարգերը,
- ուսույնի կառավարման համակարգ՝ «Drupal» համակարգը,
- բովանդակության կառավարման համար՝ «Greenstone» և «ePrints» համակարգերը,
- էլեկտրոնային գրքերի հրատարակման համար՝ «Internet Archive Book Reader» համակարգերը,
- ԳԱԱ ինստիտուտների համահավաք գրացուցակի ձևավորման համար՝ «Evergreen» համակարգը.
- «Հայ պարբերական մամուլի» համահավաք գրացուցակի ձևավորման համար՝ «Koha» համակարգը:

3. Ձևավորել երկարաժամկետ համագործակցություն գրադարանների, հայագիտական կենտրոնների, պետական ու դոմոր կազմակերպությունների հետ:

Առկա է օրենսդրական բազա հայագիտական նյութերի թվայնացման և դրանք համացանցի միջոցով հանրությանը հասանելի դարձնելու համար: Դրանք են.

– Հայաստանի Հանրապետության օրենքը «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին». ընդունվել է 2005 թ. հոկտեմբերի 4-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից,

– Հայաստանի Հանրապետության՝ «Գրադարանների և գրադարանային գործի մասին» օրենքը ընդունվել է 2012 թ. մարտի 21-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից,

Կառավարության մի շարք որոշումներ ևս ուղղված են հայագիտական բնույթի նյութերի տարածման համար բարենպաստ պայմաններ ստեղծելուն: Դրանք են.

– Հայագիտության զարգացման հայեցակարգ՝ ըստ ՀՀ կառավարության 2012 թ. հունվարի 12-ի նիստի N1 արձանագրային որոշման,

– Հայաստանի Հանրապետության գրադարանների միասնական մատենագիտական համահավաք գրացուցակի ստեղծման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 29.11.2012. N1509-Ն որոշումը,

– փաստաթղթերն արժևորելու, ազգային գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկելու կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 10 հունվարի 2013 թ. N 19-Ն որոշումը,

– հայատառ գրադարանային հավաքածուի թվանշանային տարբերակի (թվանշանային գրադարանի) կազմակերպման և համակարգման կարգը սահմանելու մասին կառավարության 4.02.2013 թ. N120-Ն որոշումը:

– ՀՀ մշակույթի նախարարությունը ֆինանսավորում է Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակի ձևավորման աշխատանքները, ինչպես նաև համայնքային գրադարանների համար «Վարպետաց դասերի» կազմակերպումը:

«Հայաստանի ակադեմիական հետազոտական համակարգչային ցանցը» (ASNET) միավորում է համալսարանական, գիտահետազոտական, մշակութային կազմակերպությունները:

Ազգային գրադարանը, ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը, ԵՊՀ-ի, ՀՊՃՀ-ի, Բժշկական համալսարանի, ԳԱԱ ինստիտուտների գրադարանները ASNET-ի անդամներ են:

«Հայաստանի ակադեմիական հետազոտական համակարգչային ցանցը» տրամադրում է որակյալ կապ և հաշվողական հզորություններ գիտության և մշակույթի բնագավառների կառույցներին: Ցանցի անդամներ են Հայաստանի ազգային և ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանները, ԳԱԱ ինստիտուտների գրադարանները, համալսարանական գրադարանները: Թվայնացման աշխատանքների իրականացման համար Հիմնարար գիտական գրադարանն ունի դրամաշնորհներ ՆԱՏՕ-ից և Բրիտանական գրադարանի «Վտանգված արխիվներ» ծրագրից, ինչպես նաև՝ Բաց մատչելիության մոդելների ներկայացման համար դրամաշնորհներ «Բաց հասարակության ինստիտուտից»: Այս բոլոր միջոցներն ուղղորդվում են հայագիտական նյութերի թվայնացմանը:


Հայաստանի ազգային գրադարանն անդամակցում է Գրադարանային միությունների միջազգային կազմակերպությանը (ԻՖԼԱ), Եվրոպական ազգային գրադարանների միությանը, Եվրասիական գրադարանների միավորմանը: Ստորագրված են համագործակցության պայմանագրեր Ռուսաստանի, Չեխիայի, Իրանի Իսլամական Հանրապետության ազգային գրադարանների, Բեռլինի պետական գրադարանի, Բեյրութի Հայկազյան համալսարանի հետ:

4. Գրադարանների միջև ստեղծել տեղեկատվական տեխնոլոգիաների վերջին նվաճումների վրա հիմնված տվյալների հաղորդման լայնաշերտ ցանց, որը կապահովի տվյալների մշակումը և ներկայացումը՝ հիմնված ԳԻԻԴ տեխնոլոգիաների և ամպային հաշվողական ծառայությունների վրա: Նախատեսվում է «Հայաստանի ակադեմիական հետազոտական համակարգչային ցանցի» հզորություններն օգտագործել թվայնացված պատկերների օպտիկական ճանաչման խնդիրների լուծման և թվային պատճենների երկարաժամկետ պահպանության համար: Ամպային հաշվարկների համար օգտագործվում են Google-ի ծառայությունները:

5. Ներառել «Հայկական» գիտատեղեկատվական հանգույցի պաշարները միջազգային տարբեր կայքերում՝ «Աշխարհի հիշողություն», «Europeana», «Բաց մատչելիության ամսագրեր»-ի և «Բաց մատչելիության գրքեր»-ի ուղեցույցներում:

Ընթանում են հայագիտական բնույթի գրքերի թվայնացման և դրանք համացանցում հասանելի դարձնելու աշխատանքները: Ձևավորվում են «Հայ գիրք» և «Հայ մամուլի համահավաք գրացուցակը»: Նախագծվող «Հայկական» հանգույցը պետք է ներառի հայագիտական ուղղվածության գրքերի, թերթերի, ամսագրերի մատենագիտական նկարագրությունները, հոդվածների վերլուծական նկարագրությունները պարբերական մամուլից, «ծնված թվային» նյութեր, լրիվ տեքստային նյութեր, տվյալներ ինստիտուցիոնալ պահոցներից, կապակցված «Հեղինակավոր գրառումներ» և «Խորագրեր»:

Նախագծվող «Հայկական» հանգույցի կառուցվածքը ներկայացված է նկար 1-ում:



Նկ. 1. «Հայկական» հանգույցի կառուցվածքը

STEPS TOWARDS DEVELOPING ARMENOLOGICAL INTERNET PORTAL “ARMENIACA” IN ARMENIAN LIBRARIES

Modern achievements in computer science, information science and librarianship are opening new horizons and services for end users. They are also giving additional opportunities to the librarians to organize the Armenological collections so that they are quickly visible, searchable and accessible through the Web.

In order to do this, the National Library of Armenia is working towards 5 specific goals.

1. Develop strategic partnerships across the libraries sphere, and build stronger relationships with Armenological centers.

2. Provide end users with collections and services of high value in a flexible and effective way by also providing librarians with the necessary systems based on advancements in information science and librarianship.

3. Establish scientific educational portal “Armeniaca” and embed “The Armeniaca” Library services within international research and learning communities.

4. Implement a first-class infrastructure that continues to innovate, based on broadband data transfer network between libraries, GRID technologies and cloud computing capabilities.

5. Ensure sustainability of “The Armeniaca” Library by building long term partnerships with libraries, Armenological centers, State agencies, and donors.

During this presentation the author will discuss progress toward all five goals and tasks to be done in future.

Ռազմիկ Փանոսեան (Փորթուկալ)

ԼԻԶՊՈՆԻ «ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒՊԵՆԿԱՆ» ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՍՈՒՆՔԻՆ ՀՆԳԱՄԵԱՅ ԾՐԱԳՐԻՆ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Այս կարճ յօդուածը ամփոփումն է աւելի քան 30 էջոց ծրագրի մը, որ պատրաստուած է ամիսներու ընթացքին, հիմնուելով հայ դեկավարներու ու մտաւորականներու հետ հարիւրաւոր հանդիպումներու վրայ, թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Սփիւքի մէջ:

Այս ծրագրին մէկ մասը առաջին անգամ ըլլալով ներկայացուեցաւ Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Հոկտեմբեր 2013ի գիտաժողովին: Ստորեւ կը ներկայացնենք ծրագրի հիմնական քանի մը մտքեր՝ աւելի ընդլայնելով Հայաստանին նուիրուած բաժինը: Լման ծրագրին կարելի է ծանօթանալ՝ դիմելով «Գալուստ Կիւպէնկեան» Հիմնարկութեան կայքէջին, որ գետեղուած են անոր անգլերէն, հայերէն, ֆրանսերէն եւ փորթուկալերէն լեզուով բնագրերը:

Ամբողջ հայութեան ուղղուած ծրագրի մը մշակումը թէ՛ մարտահրաւեր է եւ թէ՛ գոհունակութեան աղբիւր: Եզակի առանձնաշնորհում մըն է այնպիսի դիրքի մը վրայ գտնուիլ, որ կարելի է կարիքներ քննել, լուծումներ առաջադրել եւ ծրագիրներ գործադրել՝ յատուկ խնդիրներու համար: Մենք՝ Հայկական Համայնքներու Բաժանմունքս, այս առանձնաշնորհութիւնը դիրքին վրայ գտնուած ենք անցեալ քանի մը ամիսներուն՝ 2014-2018 թուականներու այս հնգամեայ ծրագիրը մշակելու ընթացքին:

Հիմնական փոփոխութիւն մը կայ մեր ընդհանուր մօտեցումին մէջ: Ի տարբերութիւն անցեալի մեր գործունէութեան, յառաջիկայ քանի մը տարիներուն, փոխանակ բազմաթիւ փոքր յատկացումներ կատարելու շատ մը նպաստընկալներու, աւելի մեծ եւ արդիւնամէտ (results-oriented) յատկացումներ պիտի ընենք նուազ թիւով ձեռնարկներու:

Այս մօտեցումը հաշտ է մարդասիրական հիմնարկութիւններու աշխարհի ներկայ միտումներուն հետ, որուն մէկ առաջատար անդամն է «Գալուստ Կիւպէնկեան» Հիմնարկութիւնը: Ան կը ցոյցնէ տեղաշարժ մը «հաւատարիմ մարդասիրութենէ» (loyal philanthropy) (տարեկան փոքր յատկացումներ միեւնոյն վատահելի գործընկերներուն) դէպի «ներագող մարդասիրութիւն» (catalytic philanthropy), որ նշանակալից յատկացումներ կը կատարուին՝ ընդհանուր նպատակներ իրագործելու կամ հասարակական փոփոխութիւն հաստատելու համար: Այս փոփոխութիւնը նաեւ կը նշանակէ առաւելաբար հակազդային կերպով տրամադրուող դրամաշնորհներէն այսուհետեւ անցում կատարել աւելի ներգործական յանձնառութիւններու գործընկերներու եւ տարբեր նախաձեռնութիւններու հետ:

Ծրագիրը մեր «ճանապարհի քարտէս»ն է յառաջիկայ քանի մը տարիներուն համար: Ան մեր ապագայ գործունէութեան եւ յատկացումներու առաջնահերթութիւններուն հիմնաւորումը կը կատարէ:

Հիմնուելով հայ ժողովուրդին համար կենսունակ ապագայ մը ստեղծելու մեր առաքելութեան վրայ, ան կառուցուած է չորս առաջնահերթ բնագաւառներու նկատառումով. հայերէն լեզուի ու մշակոյթի պահպանումն ու զարգացումը կրթութեան միջոցով, Հայաստանի օժանդակութիւնը՝ անոր երիտասարդութեան ու քաղաքացիական հասարակութեան ի նպաստ ներդրումով, հայ-թրքական յարաբերութիւններու բարելաւումը եւ հայ գրական ժառանգութեան պահպանումը: Կը հաւատանք, որ մեր գործին այս չորս «յենակէտերը» կը ցոլացնեն հայ աշխարհի ներկայ իրականութիւններն ու կարիքները:

Ի մասնաւորի, պիտի կեդրոնանանք հետեւեալ հիմնական կէտերուն վրայ:

Առաջնահերթութեան մեր առաջին բնագաւառն է զարկ տալ հայերէնի ու հայ մշակոյթի պահպանումին եւ Սփիւռքի զարգացումին՝ իրարու կամրջելով Սփիւռքի տարբեր հատուածները եւ ոյժերը ներդնելով կրթութեան ոլորտին մէջ: Մեր յատկացումներուն աւելի քան կէսը, այսինքն՝ 2 միլիոն ամերիկեան տոլար՝ 3.5 միլիոնի տարեկան պիտոճէի գումարէ մը, պիտի նուիրուի այս կալուածին, քանի որ հիմնական մեր ծրագրերէն երկուքը՝ կրթանպաստներ եւ դպրոցներու օժանդակութիւն, այս խորագրին տակ կը մտնեն: Մեր ծրագրերը պիտի ընդգրկեն արեւմտահայերէնի հզօրացումը զանազան միջոցներով, ինչպէս հայ դպրոցներու օժանդակութիւն (բայց աւելի խորագնաց կերպով), ուսուցիչներու կրթութեան կեդրոնի մը ստեղծում, որոշ ակադեմական կեդրոններու աջակցութիւն եւ նոր արհեստագիտութեան (technology) ներմուծման նպաստ՝ լեզուի նորարար ուսուցման մեթոտներու մէջ: Համալսարանական կրթանպաստները պիտի շարունակուին՝ վերակազմուելով հինգ գլխաւոր ձեւերու տակ. համաշխարհային գերազանցութեան կրթանպաստ հայ ուսանողներու համար, հայագիտութեան կրթանպաստ, արեւմտահայերէնի ուսուցիչի կրթանպաստ, Հայաստանի ուսանողներու կարճ ժամկէտով գիտաժողովի եւ ճամբորդութեան յատկացումներ եւ ուսանողական կրթանպաստներ զարգացող երկիրներու մէջ:

Առաջնահերթութեան մեր երկրորդ բնագաւառն է սատարել կենսունակ Հայաստանի զարգացումին՝ գրաւը դնելով հայրենի երիտասարդութեան եւ քաղաքացիական հասարակութիւն կերտելու անոր յանձնառութեան վրայ: Քիչ մը աւելի ընդլայնելով այս բաժինը՝ կը ներկայացնենք Հայաստանին վերաբերող ծրագրին էջերը:

Հայաստանի Հանրապետութիւնը աւելի քան 20 տարի անկախ պետութիւն է: Զարգացումի մէջ գտնուող երկիր մըն է, որ կը դիմագրաւէ բազմաթիւ մարտահրաւերներ՝ յետխորհրդային այլ պետութիւններու նման: «Գալուստ Կիլպէնկեան» Հիմնարկութիւնը գործունեայ եղած է անկախ Հայաստանի մէջ՝ տարիներէ ի վեր: Այս յանձնառութիւնը պիտի շարունակենք, որովհետեւ կը հաւատանք, որ Հիմնարկութիւնը պէտք է օժանդակէ հայոց հայրենիքին՝ նկատի ունենալով, որ Հայաստանը մշակութային եւ ակադեմական արտադրութեան հիմնական կեդրոն մըն է եւ հայերը կապող համաշխարհային ցանցերու քառուղի մը:

Հայաստան ֆինանսական բազմաթիւ կարիքներ ունի, բայց գործող պետութիւն մը կայ, ինչպէս եւ մեծահարուստ հայերու դասակարգ մը, որ կրնայ սատարել (եւ պէտք է սատարէ) հասարակական եւ մարդասիրական ձեռնարկումներու: Հետեւաբար, պիտի կեդրոնացնենք մեր օժանդակութիւնը քաղաքացիական հասարակութեան, յատկապէս երիտասարդութեան վրայ:

Թերեւս կաղապարուած խօսք է ըսել, թէ երկրի ապագան կախում ունի յանձնառու երիտասարդութենէ մը, որ պէտք է ստանձնէ ղեկավար դիրքեր: Այսուհանդերձ, կը նշմարենք, որ Հայաստանի մէջ երիտասարդութեան տագնապ մը կայ՝ գործազրկութեան (յատկապէս գիտական շրջաններու մէջ), քաղաքացիական անտարբերութեան եւ, յատկապէս, այլուր առիթներ փնտռող տաղանդաւոր ու կրթուած երիտասարդ-երիտասարդուհիներու արտագաղթին պատճառով: Պէտք չէ մեղադրել զանոնք, բայց այս միտումը եւ անոր ենթադրած ուղեղահոսքը վնասակար են երկրի վերապրումին: Հետեւաբար, կենսունակ ու ժողովրդավար հասարակութեան զարգացումին օժանդակելու համար, պէտք է քաջալերենք Հայաստանի երիտասարդութիւնը, որպէսզի երկիրը մնայ եւ իր քաղաքացիական յանձնառութիւնը ցոյց տայ:

Հետեւաբար, նպաստներ պիտի յատկացնենք քաղաքացիական ընկերութեան կազմակերպութիւններու, որոնք աշխատանքային առիթներ կը հայթայթեն՝ երիտասարդներու քաղաքացիական կրթութիւնը, յանձնառութիւնը եւ զօրաշարժը քաջալերելով, մինչ գործօն քաղաքացիներ կ'ըլլան: Պիտի ընտրենք այնպիսի նախագիծեր, որոնք կը հաւասարակշռեն Երեսնի մէջ գործունէութիւնը մայրաքաղաքէն դուրս նախաձեռնութիւններով, ներառեալ՝ վերապատրաստութեան ծրագրեր, մարդկային իրաւանց կրթութիւն, նոր արհեստագիտութեան նորարար գործածութիւն եւ ազգային ցանցերու զարգացում:

Հայաստանեան մեր գործունէութեան ուրիշ մասնիկ մը պիտի ըլլայ երկրի երիտասարդ մտաւորականներու յարաբերութեան մշակումը Եւրոպայի, Հիւսիսային Ամերիկայի եւ այլ զարգացած երկիրներու իրենց գործընկերներուն հետ: Փոխանակումի ծրագրերու, ուսումնասիրական ճամբորդութիւններու եւ նման կարճաժամկէտ նախաձեռնութիւններու միջոցով, այլուր տեղի ունեցող նորարար միտումները պիտի աշխատինք ծանօթացնել Հայաստանի գիտական ու մշակութային համայնքի աւելի երիտասարդ անդամներուն: Նաեւ պիտի հովանաւորենք երկշաբաթեայ խտացած ամառնային դասընթացք մը Հայաստանի մէջ՝ յետ-աւարտական ուսանողներու եւ երիտասարդ կաճառականներու հա-

մար, հասարակական տեսութեան եւ հետազոտական մեթոտաբանութեան նորագոյն միտումներու մասին: Ծանօթ ակադեմականներ, որոնք ներգրաւուած են տեսաբնադատական բանավեճերու մէջ, դասընթացքը պիտի աւանդեն Երեւանի մէջ: Բուն նիւթը պիտի որոշուի մէկ տարիէն միւսը՝ ըստ հայկական գիտական կեանքի կարիքներուն:

Նման ձեռնարկներ պիտի օգնեն թեթեւցնելու ցարդ գոյութիւն ունեցող մեկուսացումը, որ Հայաստանի վրայ պարտադրուած էր երկաթէ վարագոյրին եւ, 1991էն ետք, նիւթականի պակասի պատճառով: Անկախութեան երկու տասնամեակէ ետք հին մտայնութիւններ կը շարունակեն գոյութիւն ունենալ, յատկապէս մարդկային եւ հասարակական գիտութիւններուն մէջ: Նման ձեռնարկ մը մաս պիտի կազմէ «առաջնորդներու պատրաստութեան» ծրագրի մը:

Հայաստանի մեր նպաստներուն շուրջ երեք քառորդը պիտի յատկացուի վերոյիշեալ ձեռնարկներուն, մեծաւ մասամբ՝ քաղաքացիական հասարակութեան եւ երիտասարդութեան հետ կապուած ծրագրերով: Կրնանք հետազօտել տեղական աղբիւրներէ համահասարակ գումարներ ձեռք ձգելու կարելիութիւնը՝ «առաջնորդներու պատրաստութեան» ծրագրին համար:

Պիտի գործակցինք նաեւ համապատասխան կառավարական հաստատութիւններու, գլխաւորաբար Սփիւռքի նախարարութեան հետ, որոշ ձեռնարկներու պարագային, որոնք ուղղուած են արեւմտահայերէնն ու արեւմտահայ մշակոյթը զօրացնելու: Միասնաբար նախագիծեր պիտի զարգանան՝ Հայաստանի մէջ թէ ալյուր գործադրուելու համար:

Վերջապէս, Արցախէն ձեռնարկներ ալ կրնան մտնել Հայաստանի յատկացումներու մեր թղթածրարին մէջ:

Մեր առաջնահերթութեան երրորդ բնագաւառը, որ գործունէութեան նոր ոլորտ մըն է, բարելաւումն է հայ-թրքական յարաբերութիւններուն՝ հովանաւորելով այնպիսի ծրագրեր, որոնք կը քաջալերեն հասարակաց երկար պատմութեան փոխադարձ ըմբռնումը: Թրքահայ համայնքին տոկոմութիւնը ուշադրութեան արժանի է: Ան ո՛չ միայն յարատեւած է շատ դժուար պայմաններու մէջ՝ 1915էն ետք, այլեւ շարունակած է արեւմտահայերէն ու արեւմտահայ մշակոյթ արտադրել, բաց պահած է տասնեակներով դպրոցներ ու եկեղեցիներ եւ, վերջերս, անոր կարգ մը խիզախ անդամներ նպաստած են Թուրքիոյ ժողովրդավարական զարգացումին: Մեր գործունէութիւնը եռակի պիտի ըլլայ այս ծիրին մէջ. ա) համայնքի կառոյցներու եւ հաստատութիւններու ամրապնդում, բ) հայ-թրքական եւ հայ-քրտական երկխօսութեան ձեռնարկներու սատարում, ներառեալ թարգմանական եւ հրատարակչական ծրագրեր, գիտաժողովներ եւ այլ նման նախաձեռնութիւններ, եւ գ) օսմանագիտական հետազօտութիւն եւ ուսումնառութիւն: Լիովին գիտակից ենք, որ հայ-թրքական յարաբերութիւնները վիճալարոյց են երկու հասարակութիւններուն համար եւ նոյնքան խորապէս գիտակից ենք վտանգներուն, սակայն Թուրքիոյ ժողովրդավարական տարածքին ընդլայնումը բոլորիս կը նպաստէ:

Մեր առաջնահերթութեան չորրորդ բնագաւառը հայ գրական ժառանգութեան պահպանումն ու տարածումն է: Շարունակելով հանդերձ հայ «դասական» բնագրերու հրատարակութիւնը՝ մեր կեդրոնացումը հինէն դէպի նորը պիտի անցնի, հաստատելով նոր մատենաշար մը, որ պիտի կոչուի «Գալուստ Կիւլպէնկեան մատենաշար ժամանակակից հայկական հարցերու եւ մշակոյթի մասին»: Աւելին. գրեթէ բացառաբար տպագիր գիրքի հովանաւորութենէն պիտի անցնինք զարկ տալու էլեկտրոնային հրատարակութիւններու: Հայ լեզուի ու մշակոյթի թուային ոտնահետքը պէտք է աճի, եթէ կ'ուզենք, որ արձագանգէ երիտասարդ ընթերցողներու մօտ, եթէ համաշխարհային մատչելիութիւն պիտի ունենայ եւ եթէ աւելի կենսունակ պիտի դառնայ 21րդ դարուն: Հետեւաբար, յաճախ առանձնապէս պիտի ընդգծենք էլեկտրոնային հրատարակութիւնները, պիտի աջակցինք թերթերու եւ հանդէսներու համացանց մուտքին եւ պիտի օժանդակենք էլեկտրոնային եւ փոխներգործող գիրքերու արտադրութեան. Առաւել՝ պիտի նպաստենք ծրագիրներու, որ կը զարգացնեն խելախօսներու (smartphone) հայկական բնոյթ ունեցող ծրագրոյթները (app), առցանց բառարաններ ու բառացանկեր (lexicon), եւ այլն: Մշակութային եւ ակադեմական բնագրերու երկկողմանի՝ հայերէնի եւ հայերէնէ թարգմանութեան ծրագիր մըն ալ պիտի մշակենք:

Վերջապէս, արեւմտահայերէն ժամանակակից գրական մշակոյթի արտադրութեան օժանդակելու համար, պիտի հաստատենք կամ աջակցինք գեղարուեստական եւ ոչ-գեղարուեստական հայկական գործերու միջազգային մրցանակի մը:

Առաջնահերթութեան այս չորս բնագաւառներուն կողքին նպատակ ունինք բաժանմունքը վերածելու ռազմավարական մտածում եւ երկարաժամկէտ ծրագրում հովանաւորող կեդրոնի մը, պարբերաբար քովքովի բերելով սփիւռքեան կազմակերպութիւններ, մասնագէտներ եւ ծանօթ ղեկավարներ՝ հայ ժողովուրդի դիմագրաւած կարեւոր խնդիրներ ու հարցեր քննարկելու եւ հաւաքաբար լուծումներ գտնելու համար: Հիմնարկութեան մէջ պիտի գործակցինք այլ բաժանմունքներու եւ ծրագրերու հետ՝ հայ մշակոյթի ու պատմութեան վերաբերեալ ձեռնարկներ կազմակերպելու համար, որոնք հարուստ հայկական ժառանգութիւնը կը բերեն Հիմնարկութեան նստավայր երկիրը:

Եզրակացութիւն

Այս առաջնահերթությունները (մեր աշխատանքին չորս յենակետերը) կը հիմնովին այն հայեցակարգին վրայ, թե Հայկական Համայնքներու Բաժանմունքը պետք է ցուցնէ հայութեան՝ Սփիւռքի ու Հայաստանի Հանրապետութեան ներկայ իրականութիւնը: Հետեւաբար, կը ջանանք, որ մեր մօտեցումը «ներկայացուցչական» ըլլայ. ընդգրկած ենք թէ՛ Հայաստանը եւ թէ՛ Սփիւռքը, միեւնոյն ատեն արդար հաւասարակշռութիւն պահելով սփիւռքեան տարբեր բաղադրիչներուն միջեւ: Արդար, ներկայացուցչական եւ հաւասարակշիռ ըլլալ, սակայն չի նշանակեր բոլորը գոհացնել կամ բոլորին հաւասարապէս գումարներ բաշխել: Մեր նիւթական նպաստներուն մեծ մասը պիտի շարունակենք յատկացնել սփիւռքահայ կրթութեան ու մշակոյթին՝ կատարելով հանդերձ շօշափելի նպաստ մը Հայաստանին:

Սփիւռքը կը նկատենք ապրող ու կերպարանափոխող գոյութիւն մը, որ ո՛չ միայն մշակոյթ ու ինքնութիւն կը պահպանէ, այլեւ մշակոյթի ու ինքնութեան նոր կերպեր կը ստեղծէ: Հակառակ մասնատուածութեան, աշխարհագրական սփռումի եւ գաղափարական բաժանումներու, Սփիւռքը պատմականօրէն «օրկանական» գոյութիւն մը եղած է, ուր բազմաթիւ կեդրոններ ներքին կապակցութիւն եւ իրերօգնութիւն պահպանած են: Դարերու ընթացքին սփիւռքեան համայնքներ ծնունդ առած ու անկում կրած են (Նոր Զուղա, Հնդկաստան, Արեւելեան Եւրոպա, Եգիպտոս միայն քանի մը օրինակներ են), բայց միշտ կապ պահած են թէ՛ իրարու հետ եւ թէ՛ հայրենի հողի կառոյցներու հետ: Նոյն յարափոփոխ գործընթացը այսօր կը շարունակուի: Օրինակ, ակնատես կը դառնանք Հալէպի՝ արեւմտահայ մշակոյթի կեդրոններէն մէկուն կործանումին, կամ Սիջին Արեւելքի հայերու (եւ այլ քրիստոնեաներու) թիւին դանդաղ, սակայն յարաճուն անկումին՝ Իրաքէն մինչեւ Լիբանան, որպէս հետեւանք դէպի արեւմտեան երկիրներ ու դէպի Հայաստան գաղթին: Սակայն, ուշադրութեան արժանի են թէ՛ պատերազմի եւ զրկանքներու զինը վճարող համայնքներուն դիմադրականութիւնը եւ թէ՛ սփիւռքեան այլ համայնքներու պատրաստակամութիւնը՝ հետեւողական կերպով անոնց օժանդակելու:

(Ի դէպ, աւելցնենք, թէ յառաջիկայ քանի մը տարիներուն պիտի սկսինք հետազօտել «նոր» Սփիւռքի կարիքները Ռուսաստանի, Ուքրաինայ եւ այլ նախկին խորհրդային երկիրներու մէջ, հասկնալու համար թէ մեր բաժանմունքը արդեօք պե՞տք է գործէ այս նորակերտ համայնքներուն հետ: Նման յանձնառութիւն առայժմ մեր ներկայ կարողութենէն վեր է, բայց այս համայնքները, որոնց անդամներուն մէկ կարեւոր թիւը Հայաստանէն արտագաղթած է վերջերս, ներկայիս ահազանգային արագութեամբ կը կորսնցնեն արեւելահայերէնը՝ իրենց լեզուն, ինչպէս եւ ինքնութիւնը: Սոյն համայնքներուն գումարներ պիտի չյատկացնենք յառաջիկայ հինգ տարիներուն, բայց պիտի ձեռնարկենք ուսումնասիրութիւններու եւ այլ հետազօտական նախաձեռնութիւններու՝ այս նոր յետ-խորհրդային տարածքը հասկնալու համար):

«Գործող ծրագրէ, ծրագիրող գործադրէ» թերեւ մաշած խօսք մըն է, բայց հիմնական ճշմարտութիւն մը կը պարունակէ. արդիւնաւետ, կեդրոնացած եւ հետեւողական ըլլալու համար, պետք է յստակ առաջնահերթութիւններ հաստատել եւ յստակ ուղղութիւն մը մշակել՝ ի մտի ունենալով ապագան: Այս ծրագիրը կը հիմնաւորէ, թէ Հայկական Համայնքներու Բաժանմունքը ո՞ր կ'ուզէ երթալ յաջող հինգ տարիներուն: Մեր աշխատանքի եղանակն ալ պիտի փոխուի եւ շատ աւելի բաց, հաղորդական, գործընկերութեան ձգտող, արդիւնքներու վրայ հիմնուած ու արժեւորումի մշակոյթով առաջնորդուած պիտի ըլլայ:

Շնորհիւ այս բաժանմունքը վարած նախորդներուս, մարդասիրական հարուստ աւանդութիւն մը ունինք հայաշխարհի մէջ: Այդ աւանդութիւնը պիտի շարունակենք, պիտի արդիականացնենք եւ պիտի դնենք ամուր հիմքերու վրայ, որպէսզի բաժանմունքը շարունակէ ծառայել շատ երկար ժամանակ իբրեւ մնայուն Հիմնարկութեան մը լիիրաւ բաժինը: Կ'ուզենք ապահովել, ապագայ սերունդներու համար, որ Հիմնարկութիւնը հայեցի կրթութիւնը, հայ մշակոյթն ու լեզուն – յատկապէս արեւմտահայերէնը – ամրապնդելու եւ փրկելու օրուան հրամայականին ընդառաջ գացած է: Ասիկա ընելու համար պետք է հին, պահպանողական մօտեցումներէ դուրս գանք, վտանգներ դիմագրաւենք եւ հայ հասարակութեան նպաստելու նոր ձեւեր որդեգրենք: Այս ծրագրով կ'ուզենք բաժանմունքը վերածել փոխակերպող գործորդի մը աշխարհասփիւռ հայութեան մէջ, որպէսզի անոր ապագան աւելի կենսունակ ըլլայ:

2020ի սկիզբներու մեր պատկերացուցած հայկական աշխարհը – որ այս ծրագրին հիմնական նպատակը է – կ'ուզենք ըլլայ տեղ մը, ուր արեւմտահայերէնը աւելի ապահով է որպէս ապրող լեզու, յենած՝ ա) երիտասարդ որակեալ ուսուցիչներու եւ մտաւորականներու ցանցի մը վրայ, որոնք կը գործածեն նորարարական ուսուցման եւ հաղորդակցութեան մեթոտներ, բ) սփիւռքեան երիտասարդ սերունդի մը վրայ, որ կը շարունակէ արեւմտահայերէն խօսիլ ու ստեղծագործել, եւ գ) համայնքային կառոյցներու վրայ, որոնք կը գործեն անոր ծիրին մէջ: Աշխարհ մը պիտի ըլլայ, ուր հայ դպրոցներ միասնաբար աշխատին հասարակաց խնդիրներու վրայ, որոնցով յարատեւ լուծումներ, փոխանակ կարճ ժամանակի յատկացումներու՝ անվերջանալի բացեր գոցելու համար:

Յոյս ունինք, որ 2020ական թուականներուն հայութիւնը մեր կրթանպաստներուն արդիւնքը կը քաղէ, երբ հարիւրաւոր համալսարանական շրջանաւարտներ դեկավար դիրքեր կը ստանձնեն իրենց համապատասխան մարզերուն մէջ, եւ երբ հայագիտութիւնը որպէս ակադեմական կալուած կ'ունենայ

շարք մը նոր շրջանաւարտներ, որոնք ո՛չ միայն կ'ուսումնասիրեն հայ ազգին դիմագրաւած հարցերը, այլեւ կ'առաջարկեն շօշափելի լուծումներ: Բաժանմունքը հպարտ պիտի ըլլայ, հնգամեայ ծրագրի ասարտին, տեսնելով նոր սերունդ մը, որ կը գործածէ տեղեկատուական արհեստագիտութեան վրայ հիմնուած ծրագրոյթներ, գիրքեր, հանդէսներ, քերթեր եւ այլ էլեկտրոնային ձեռնարկներ, որոնք արեւմտահայերէնը կ'օգտագործեն կամ հայ մշակոյթն ու կրթութիւնը կը հզօրացնեն թուային աշխարհին մէջ:

Կը փափաքինք տեսնել շատ աւելի ուժեղ քաղաքացիական ընկերութիւն մը Հայաստանի մէջ, յանձնառու երիտասարդութիւն մը, որ իր նպաստը կը բերէ երկրի ժողովրդավարական զարգացումին եւ ուսումնական համայնք մը, որ աշխարհի հետ կապուած է եւ միջազգային քննարկումներու կը մասնակցի՝ հասարակական գիտութիւններու նորագոյն տեսական մօտեցումները օգտագործելով: 2020ի մեր «իտէլալ» հայութեան մէջ, կը յուսանք հայ-թրքական յարաբերութիւններու յառաջացումը տեսնել այն աստիճանին, ուր երկու ժողովուրդներուն միջեւ երկխօսութիւնը եւ անոր քննարկած հարցերը կեդրոնական տեղ մը կը գրաւեն երկու հասարակութիւններուն մէջ՝ փոխանակ լուսանցքի վրայ մնալով: Վերջապէս, Հիմնարկութենէն դէպի ներս նայելով, կը յուսանք յառաջադէմ եւ արդիւնամէտ բաժանմունք մը ստեղծել, որ նպաստէ շահեկան հաղորդակցութեան եւ ծառայէ որպէս ռազմավարական մտածողութեան կեդրոն Սփիւռքի մէջ, միաժամանակ գործելով որպէս հայ մշակոյթը Փորթուկալ բերող առանցք մը:

Մէկ խօսքով, այս ծրագրի գործունէութեան նպատակն է աւելի կենսունակ ապագայ մը ստեղծել հայ ժողովուրդին համար, ուր իր մշակոյթն ու լեզուն պահպանուած ու արժեւորուած են: Ի վերջոյ՝ ա՛յո՛ւ է մեր առաքելութիւնը:

Razmik Panossian (Portugal)

A Summary the Five Year Programming Plan of the Armenian Communities Department of the Calouste Gulbenkian Foundation

The Armenian Communities Department of the Calouste Gulbenkian Foundation, headquartered in Lisbon, Portugal, developed in 2013 its five year programming plan for the period of 2014-2018. Based on consultations with Armenian community leaders and intellectuals around the world, the Plan outlines key areas on which the Department will focus. The main axis around which Plan evolves is the preservation and advancement of the Western Armenian language.

The mission of the Department is “To create a viable future for the Armenian people in which its culture and language are preserved and valued.” More specifically, its four core priority areas are: 1. Promote the preservation of the Armenian language and culture, and the development of the diaspora by linking its different parts and by investing in education; 2. Develop a viable Armenia through investing in its youth and their commitment to civil society; 3. Improve Armenian-Turkish relations by sponsoring projects that encourage a common understanding of their long shared history; and 4. Preserve and make available the Armenian literary heritage.

The Department will move away from multiple small grants to many recipients to larger results oriented contributions to fewer initiatives, based on a competitive process of project selection. The shift also means moving away from mostly reactive grants to more proactive engagement with partners and initiatives. It will put emphasis on innovation, problem solving and partnership development, be they in the public, educational, private or community and civil society sectors. Accountability, evaluation, communications and project management that is results-based will be an integral part of the programming methodology. Finally, the Department will play an important role in the Armenian diaspora as a convening and strategizing centre with a long term perspective.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Рубен Атоян, Лариса Атоян, (Беларусь)

МЕТОДИКА И ТЕХНИЧЕСКИЕ АСПЕКТЫ СОЗДАНИЯ СЕРИИ ОБЗОРНЫХ КАРТ АРМЯНСКОГО ИСТОРИЧЕСКОГО И КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ

Одним из важных аспектов национального картографирования является представление в картографической форме объектов армянского исторического и культурного наследия. Научность и актуальность рассматриваемой темы состоит в том, что карты историко-культурного наследия представляют собой совершенно новое направление в картографии. Как известно, существуют различные классификации карт, в основном они различаются содержанием, масштабом, территориальным охватом. Мы не будем подробно их рассматривать, только попытаемся определить место карт исторического и культурного наследия в общепринятой классификации.

Что мы понимаем под термином «карты исторического и культурного наследия»? Они должны быть созданы на основе как исторических, так и современных сведений, включать элементы исторических карт, например, исторические границы, старые названия, уже несуществующие памятники, а также современных — границы государств, современные дороги, туристическую инфраструктуру. На картах должна быть отражена история, культура, состояние и охрана существующих памятников.

Карты примерного содержания до настоящего времени были изданы разными издателями в Армении и за её пределами. Они размещались в атласах, учебниках по истории, в монографиях, а также издавались отдельными листами. Это — карты Армянского нагорья, Республики Армения и Арцаха, других территорий. На картах показывались, в основном, памятники истории, архитектуры, центры рукописной культуры.

В качестве примеров изданных карт исследуем несколько карт армянских колоний на землях Речи Посполитой: 1. Карта Станислава Донигевича называется «*Mapa Kościoła ormiańsko-katolickiego w Polsce (od XIII do XX w.)*», на польском языке, дополнена картой-схемой Львова, издана в 1928 году; карта демонстрирует размещение культовых сооружений, государственные границы даны по состоянию на 1772 г. (рис. 1). Донигевич Станислав — арменолог, автор первого известного картографического описания армянских колоний в Западной Украине. 2. Карта «Армянские колонии в населенных пунктах Подолии» Вардана Григоряна из книги «История армянских колоний Украины и Польши»; книга была издана в 1985 году, разными знаками показаны колонии. 3. На карте Яцека Хшончевского из книги «*Coscioly ormian polslich* (Варшава, 2001), отображены только памятники архитектуры. Отметим простоту этих карт, они одноцветные, схематично показаны несколько наиболее важных элементов содержания.

Следующие три карты красочные, живописно показан рельеф, наглядными условными знаками отображено основное содержание. Это — «Центры армянской рукописной культуры», карта создана в 1985 году для демонстрации географического ареала создания армянских манускриптов (авторы: А.Матевосян, Р.Атоян); карта «Армяне в Италии» (Col. 1), использовалась в «передвижной экспозиции» Матенадарана, в частности, для оформления выставки армянских манускриптов в Италии, 1986 г. (автор содержания док. ист. наук В.Григорян, художественное оформление Р.Атояна). Позднее, эта карта была издана на немецком языке в качестве иллюстрации к книге «Венеция и армяне». Аналогичная по тематике карта — «Армяне в Крыму» — карта-буклет историко-культурного наследия крымских армян была издана в 1990 году. На этой панорамной карте, которая одновременно является и справочником, наиболее полно представлены все поселения, где проживали армяне, армянские монастыри, церкви и даже хачкары, указаны старые и новые названия населенных пунктов.

Рассмотрим также несколько карт из атласов, изданных в последние годы: карты диаспор из Национального Атласа Армении, 2008г., Атлас Арцаха (гл. редактор М.Варданян, 2009г.), Атлас Нахичевана (автор С.Карапетян, 2012г.). Говоря об этих атласах, следует отметить их научность, информативность, в них отражены глубокое и всестороннее изучение поставленных задач. Тем не менее, материал представлен в сухой форме, карты перегружены и трудночитаемы. За исключением представленных карт из атласов, остальные карты данной тематики создавались разрозненно, интуитивно, в основном историками, которым было важно связать картографическое изображение с текстом книги или статьи.




Рис. 1. Карта армяно-католических костелов Польши С. Донигевича, 1928 г.

Таким образом, анализ рукописных и изданных карт показывает на отсутствие системного подхода к созданию этой группы карт. И все же карты должны следовать определенной смысловой и художественной схеме, то есть соответствовать поставленной цели сбора и систематизации исторических сведений для их дальнейшей популяризации среди населения Армении и диаспоры. Необходимо разработать некий алгоритм, позволяющий в наглядной, доступной, занимательной форме передавать все элементы содержания.

Проблема может быть решена научной разработкой не одной, а серией кадастровых карт армянского исторического и культурного наследия по единой методике, включающей сбор и систематизацию исторических данных, единство способов и приемов составления и художественного оформления по единой технологии подготовки к изданию с применением современных технических средств.

Методика составления и художественного оформления серии карт заключается в следующем:

- в научном подходе к историческим аспектам содержания;
- в едином подходе к картографической основе, изображению элементов содержания, приемам художественного оформления;
- в использовании единой системы картографических условных знаков в ассоциативно-наглядной форме передающих отображаемые объекты местности;
- в подборе наиболее выразительных приемов художественного оформления, делающих карту интересной и занимательной, привлекая этим возможно большее число пользователей.

Карты также должны соответствовать основным критериям качества картографического изображения — достоверности, наглядности и выразительности.

Основа. Для данной серии карт не существует точный масштаб, так как они не предназначены для картометрических исследований. Поэтому они могут быть созданы на основе с переменным масштабом, которым обладают перспективно-панорамные карты, передающие местность в наглядной форме.

Специальная нагрузка этой группы карт заключается в изображении как существующих, так и объектов исторического прошлого. Такая форма показа должна быть наглядной, использованы выразительные картографические знаки разных размеров и цветов, при помощи которых можно передать количественные или качественные характеристики объектов.

Специфика. Основные трудности создания этой серии карт заключаются в подборе и систематизации источников — картографических, фотографических, текстовых (научные работы, исторические документы). Необходимо в данной серии карт в выходных сведениях указать основные источники, хотя на обычных картах это не принято.

Технология. Предлагается совмещенная технология создания карты ручным и автоматизированным способом. Панорамные ландшафтные карты сейчас принято называть 3D картами, это — панорамы местности, аксонометрия и перспектива, блок-диаграммы, где иллюзорно смоделировано третье измерение — высота объекта, что позволяет в наглядной форме представить объемное изобра-

жение на плоскости. Разработка современных 3D-карт основана на изучении средневекового опыта создания карт-панорам, выполненных по принципу художественной живописи. Это является трудоёмким кропотливым процессом и требует художественных навыков и всесторонних знаний. Поэтому до настоящего времени постоянно ведутся поиски путей автоматизации процесса создания трехмерной карты.

Наличие технических средств и графических программ, позволяющих осуществлять рисовку любых графических изображений, существенно облегчают работу картографа на всех этапах создания карты. Однако в этом же скрыта и большая опасность, заключающаяся в том, что неспециалистам процесс создания карты с помощью компьютера представляется как построение обычной графики. При этом мало учитывается специфика именно картографического изображения, создание которого требует знания законов картографии.

Ручным способом панорамные карты создавались до конца XX века. Существуют методики и технологии автоматизированного выполнения оригиналов рельефа, городских кварталов и отдельных сооружений в программах растровой и векторной графики (Adobe Photoshop, Corel Draw, 3ds max). Изображения строятся в компьютере с применением графического планшета на «чистом» экране или же по сканированному эскизу, который используется в качестве подложки. Красочное полутоновое оформление может быть выполнено в программе Adobe Photoshop по заранее разработанной цветовой палитре.

Говоря о «техничности» созданных на компьютере художественных картографических оригиналов часто приходится обращать внимание на их слабые эстетические достоинства. Созданные рукописные оригиналы более соответствуют требованиям картографического дизайна — выразительности, эстетичности, художественной ценности. Поэтому, как представляется, вышеуказанным требованиям соответствует совмещение технологий ручного и компьютерного дизайна на различных этапах создания 3D-карт.

Совмещенная технология создания трехмерной карты основана на автоматизированном построении штриховых и некоторых фоновых элементов карты, а также формировании подписей на уже созданном вручную и отсканированном живописном оригинале местности с использованием персонального компьютера и программы векторной графики (например, CorelDraw). Формирование изображения в векторном формате осуществляется путем ручной обрисовки линейных и площадных объектов по растровой основе и построения немасштабных условных знаков точечных объектов с помощью инструментария программы.

Составление и одновременная подготовка карты к изданию производится в цветах издания по слоям, на каждом из которых располагался один элемент содержания или его часть. Количество слоев в каждом конкретном случае определяется сложностью картографического изображения. Каждый из элементов содержания карты (гидрография, пути сообщения, населенные пункты и др.) помещается на отдельный слой. Такое распределение картографического изображения по слоям позволяет производить его быстрое редактирование на любой стадии компьютерного составления карты, изменять порядок наложения слоев друг на друга, отключать слои и т. д. Одновременно производятся редактирование, генерализация и корректура изображения.

Таким образом, мы создаем серию 3D-карт исторического наследия по единой технологии на желаемую территорию с использованием современных технологий и технических средств. По данной технологии создана карта Арцаха (Col. 2), в настоящее время ведутся работы по составлению «Карты армянских колоний на землях Речи Посполитой».

Atoyan Ruben, Atoyan Larisa (Belarus)

TECHNIQUES AND TECHNOLOGY OF THE ARMENIAN HISTORICAL AND CULTURAL HERITAGE REFERENCE MAPS CREATION

The Armenian historical and cultural heritage objects representation in any cartographic form is one of the most important aspects of national mapmaking. It represents mostly a new direction in cartography. A review of printed maps indicates on system approach absence. This kind of maps must follow definite meaning and art scheme. For this purpose it's necessary to create not one but complete range of cadastral maps of Armenian historical and cultural heritage by means of common techniques and methods, which contain scientific approach to historical aspects, geographical base, showing elements, technique of art performance, symbol systems. They can be created on geographical base with changeable scale, which have perspective panoramic maps.

THE PLACES AND PATHS OF ARMENIAN PRESENCE IN ROME OVER THE CENTURIES

The research of Armenian presence in Italy and in particular in Rome is a study to examine in depth the historical-cultural relations that linked armenians to Rome. My research underlines the importance of the Armenian presence that also nowadays is visible in Rome. The interest generated by the sources comes through the discovery of places such as the church of Santa Maria Egiziaca and other monuments that have seen the transition of the armenian people in Rome¹. The chance to get access to original sources including old books and ancient manuscripts that testify the path of armenian people, has allowed me to be able to study the cultural and social aspects and enhance the importance of it. The research data on the Armenian presence in Rome was possible thanks to the access at the library of the Pontifical Armenian College in Rome, which preserves the memory of a huge part of the armenian history in Rome. I considered the religious factor as priority and has been very remarkable considering how armenians were seen from other people. An important result could emerge from this research because there is not a guide or literature dedicated to. The majority of visitors in fact would be able to retrace the steps of the ancient armenian presence in Rome.

Unlike other Italian cities such as Venice, Genoa or later Livorno, where the settlement of the Armenian community was characterized by economic and commercial reasons, the presence in Rome was always distinguished for religious and political reasons. Over the centuries, from the fall of the Roman Empire to the present, you can experience an unbroken continuity of the Armenian presence particularly focused on the theological confrontation and diplomatic issues. The method of settlement and the presence of this community in Rome were strongly influenced by historical events or cultural changes known to the mother country as in the diaspora.

The Armenian presence in Rome during the High and Late Middle Ages. In a first step, at the beginning of the Middle Ages the Armenian presence in Rome is related to the effort of Byzantium trying to take control of the peninsula, and after the recapture of the West Bank promoted by Justinian, many Armenians were active participants to the long Gothic war and the subsequent reorganization of political life, militating among the ranks of the Imperial Army or into the administrative system. Among them the most famous was definitely Narses (Nerses), nicknamed the "Hammer of the Goths", commander of the Byzantine troops in Italy in the second part of the conflict. This is in fact the period (VI -X sec.) on which the Armenian aristocracy plays a major role in the political life of Constantinople. The political and cultural rapprochement between the two imperial cities, Rome and Byzantium, meant that it would create a bridge with the Christian East and facilitated the free passage of religious and Armenian pilgrims to the places of martyrdom and burial of apostles Peter and Paul, who have always been the pillars of the Christian faith. The continuous state of war suffered by the mother country at the turn of IV and VII century, the disagreements related to religious doctrine and the subsequent Arab-Islamic pressure, encouraged the emigration from those lands. In this difficult situation, Italy certainly represented one of the favorite destinations, providing opportunities for merchants, soldiers, officials and clerics. In Rome, the first mention of a religious complex run by Armenian monks dates back in the Acts of the Lateran Council of 649: the monastery here called "Renati" was dedicated to the Virgin and St. Andrea, but we have no certainty about its precise location, it seems to arise on the Esquiline hill. Unfortunately, the sources of this period as well as being particularly rare are also ambiguous because, throughout the Middle Ages, the term "Greek" is widely used to define any form without distinction or religious presence coming from the Christian East. However, the arts and other cultural phenomena we encounter in bridging the gaps of written sources and providing an indirect but explicit testimony to the significant presence of Armenians monks and pilgrims in Italy at that time, this is the case of the widespread devotion present into the peninsula to the saints with Armenian origin, such as Davino, Simeone, Emiliano, Liberius, Arsacio or the well known San Miniato and San Gregorio Armeno. The presence of these figures in the popular tradition and in the artistic representations in the Middle Ages, shows that the presence of the Armenian culture has been able to influence and fertilize through its rich hagiographical traditions inaugurating what an intercultural exchange which will feature the relationships between these two nations. During the following centuries (XI-XIII), the historical and political events in the East, significantly influenced on the activities and objectives of the Armenian community in Rome and in particular on diplomatic and theological relations with the Holy See. This phase is marked by the theological dialogue aimed to the rapprochement of the two churches, separated since the time of the Council of Chalcedon (451), concerning

¹ Armellini M., *Le Chiese di Roma dal IV al XIX secolo* (Roma, Edizioni del Pasquino, 1982).

the elimination of all those formal differences particularly in the rite and the liturgical calendar. Mutual relations between the two official church leaders began under Pope Gregory VII in the last quarter of the eleventh century. This Pope worried about the overwhelming advance of Seljuk Turks in Anatolia, a region with a long Christian tradition, so that he tried to weave ties with the Armenian people and its political institutions, considering them a bulwark of Christianity in these remote regions. First evidence of these relationships is a letter that the same Gregory VII sent to the Catholicos Grigor II Martirofilo after receiving the visit of his ambassador defined by the Pope himself a man of "orthodox" faith. While the Roman Church has always supported the substantial orthodoxy of the Armenian Church, on the other hand has always tried to standardize it to the Latin rite. Since this first official correspondence, emerge in fact, precisely those issues that will be the characteristics of inter-religious dialogue between the two Churches. In a letter to the Catholicos, Pope Gregory VII, invites the Armenian official clerics to follow some formal injunctions regarding the wine diluted with water, remove some of the text formulas concerning the Christ or reaffirm the profession of faith laid down in the fourth ecumenical council. However, it is thanks to a letter of Pope Innocent II (1130-1143), addressed to the Catholicos Grigor III and which was in its Armenian translation, which we witness the first official statement regarding the orthodoxy of the Pope of the Armenian Church which follows the usual call to review some liturgical practices. From this time, the exchange of letters between the two Holinesses is becoming more intense and is accompanied by a dense series of diplomatic missions often involving prominent personalities of the Kingdom of Cilicia.² The Kingdom of Cilicia³ and the clergy close to them, realize in fact a policy of rapprochement to the Latin world not only from an economic point of view but also cultural and especially religious facing the possibility of a union with the Church of Rome instead remaining with the clergy of the Great Armenia more determined to maintain the distinctive peculiarities of their autonomy. After a visit to Rome of an ambassador of the Armenian Catholicos, Pope Lucius III reaffirm in a letter the orthodoxy of the Armenian Church, hoping for the future in a complete union between the two Churches. At this regard, the Pope sent a pallium and a miter, concrete symbols of participation to the powers of Pope and a latin missal survived until now thanks to the translation of the great scholar Nerses Lambronatsi. The center of the thriving community settled in Rome, with a monastery, a church and a hospice, was located next to St. Peter, on the south of the square in front of the Basilica, what was used to call "Portico of the Armenians". As it is in the tradition of this people, the monastery is distinguished for its intense cultural life where many manuscripts were transcribed and translated in Armenian and also theological works as well as texts from the canon of the Latin Rite (Latin Missal, Rule of St. Benedict, etc.). Proof of this are the churches and monasteries with several inscriptions in honor of the Virgin Mary, St. Gregorio, S. Giacomo etc. This widespread practice was used also in other Italian Armenian communities. Valuable evidence of this growth are the epigraphic traces and especially the colophons of manuscripts worked in Rome showing the intense activity of this monastery devoted to the conservation and protection of their cultural and national identity. These illuminated works, now preserved in libraries and museums of the Vatican, in Venice and in Yerevan, reported several notes of the authors. These manuscripts are also elements that symbolises cultural exchange between the Latin and Armenian tradition and different influences could be found in the illuminated decorations or in some headers in Latin, and also many works of theology and liturgy which were translated into Latin Armenian. Many of the writers and patrons of manuscripts who worked in Rome in this period came from the eastern regions of Greater Armenia, from those lands devastated by mongols and they have left in several colophons appealing the divine mercy in order to intercede for the souls of their compatriots killed and for the freedom of their homeland. For example, a colophon reported in a Gospels transcribed in Rome from the monk Vardan Khachentsi concludes with the following prayer: "That Christ... God have mercy on Vanakan and his [companions] killed by the sword, who have not received burial"⁴. Similarly, other colophons shows the perilous trip towards the west of these monks; the scribe Toros in a New Testament in 1262 wrote: "Me...Toros, minister of the word in the regions of the East, in the city of Gandzak, instructed and educated in the great monastery of Getik, dragged hither and thither, in a terrible trip I arrived to the great Rome, where is the tomb of Peter and Paul ... [please] so that through their intercession we survive these tremendous days". All these sources as well as providing an historical record on the serious situation in which the Armenian homeland and the difficulties faced by exiles, sheds light on the cultural and social ties that bound Armenia to the Italian peninsula.

² **Bozoyan A.**, La cultura del "Secolo d'argento" e Roma (fine XI secolo - inizio del XIII), in *Roma - Armenia* a cura di Claude Mutafian, pagg. 131-136, Roma, 1999.

³ See **Ferrari, A.** (2003), *L'Ararat e la gru*; studi sulla storia e sulla cultura degli Armeni, Milano.

⁴ See Chobanian P., Gospel's Colophon copied in Rome in 1239, (Gli armeni a Roma nel XIII secolo, in *Roma - Armenia*, a cura di Claude Mutafian, pp. 211-215, Roma).

ՀԱՅԵՐԻ ԴԱՐԱՎՈՐ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՍՍՈՒՄ

Այս ուսումնասիրությունը նվիրված է հայերի ներկայությանը (պատմական, մշակութային) Հռոմում և նպատակ ունի ցույց տալ այն պատմամշակութային հարաբերությունները, որ կապել են հայերին Հռոմին: Այն մանրամասն նկարագրում է Հռոմի բոլոր վայրերը, որտեղ հայկական ներկայություն է գրանցվել, եկեղեցիները, դպրոցները, ձեռագրերը, հայ նշանավոր անձանց:

Քնարիկ Ավագյան (Հայաստան)

ՀՈՂԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՇՐՋԱՓՈԽԵՐՈՒՄ

1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության հետևանքով պապենական հայրենիքից արմատախիլ եղած, տարագրված, աշխարհով մեկ սփռված և տարբեր գաղթօջախներում գոյատևած հայությունը պատմական տարբեր շրջափուլերում իր մասնակցությունն է բերել հայրենի բնօրրանի պաշտպանության գործին, ինչը սակայն քանակական ու որակական փոփոխության է ենթարկվել անցած մեկ դարի ընթացքում:

Առաջին աշխարհամարտի (1914-1918 թթ.) ընթացքում ու դրան հաջորդող տարիներին առավելապես առաջին սերնդի ամերիկահայերի համար հողապահպանության և հայրենի երկրի ու ժողովրդի սատարմանն ուղղված ջանքերը եղել են գործնական ու ծանրակշիռ՝ կրելով թե՛ քաղաքական ու դիվանագիտական և թե՛ հասարակական, տնտեսական ու ռազմական բնույթ: Վերջինս արտահայտվել է ռազմամթերքի, դրամական միջոցների, ինչպես նաև մարդկային ուժի՝ կամավորների առաքումով, որն իրականացվել է գլխավորապես հայ քաղաքական տարբեր կուսակցությունների ու կազմակերպությունների կողմից: Պատերազմի հենց սկզբից ամերիկահայ մի խումբ ազգայինների ջանքերով հնարավոր է դարձել համախմբել տեղի հայ քաղաքական տարբեր ուղղությունները, որոնք ժողովրդի ու հայրենի երկրի համար ճակատագրական այդ պահին, որոշ բացառություններով հանդես են բերել միասնաբար գործելու պատրաստակամություն:

Ամերիկահայերն իրենց գործուն մասնակցությունն են ունեցել Առաջին աշխարհամարտի տարիներին և հետո Կովկասում, ապա՝ Կիլիկիայում կազմակերպված կամավորական շարժումներին՝ սկսած 1915 թ. Վանի ինքնապաշտպանական կռիվներից մինչև 1918 թ. Արարայի ճակատամարտը՝ Անտանտի տերությունների, ցարական Ռուսաստանի և Ֆրանսիայի զորամիավորումների հետ կողք-կողքի քաջաբար մարտնչելով գերմանա-թուրքական ուժերի դեմ:

1914 թ. նոյեմբերին Բոստոնում հրավիրվել է Միջկուսակցական խորհրդածողով, որն ընդունել է ազգային չորս կուսակցությունների (Սոցիալ-դեմոկրատ հնչակյան, Հայ հեղափոխական դաշնակցական, Վերակազմյալ հնչակյան, Հայ սահմանադրական ռամկավար) միասնական գործունեության ծրագիր: Խորհրդածողովին հաջողվել էր ԱՄՆ-ի Կոնգրեսի հետ համատեղ Ուաշինգտոնում Ռուսաստանի դեսպանի միջոցով ստանալ ցարական կառավարության համաձայնությունն ու հովանավորությունը՝ Կովկասում ռուսական բանակի կազմում կռվելու պատրաստ ամերիկահայ երիտասարդ կամավորներ առաքելու և մի շարք այլ խնդիրների վերաբերյալ¹:

1914 թ. դեկտեմբերին Խորհրդածողովին Ամերիկահայոց առաջնորդարանից երկուական ներկայացուցիչների մասնակցությունը համազգային բնույթ է հաղորդել հիշյալ միջկուսակցական մարմնին՝ այն վերանվանելով Ազգային պաշտպանության ամերիկահայ հանձնախումբ (ԱՊԱՀ)²:

Միաժամանակ, ՀՅԴ կուսակցության գործիչները կարողացել էին ստանալ ռուսական կառավարության պաշտոնական հավաստումը արևմտահայության ազատագրման վերաբերյալ, ինչպես նաև հասնել կամավորական շարժումը կազմակերպելու նպատակով Կովկասում (Թիֆլիս) Ազգային բյուրոյի ստեղծմանը: Կովկասում հայ կամավորական շարժումը սատարելու նպատակով հանգանակվել էր 160.000 դոլար, ընդ որում՝ ԱՊԱՀ-ը՝ 60.000, իսկ առանձին ՀՅԴ-ն՝ 100.000 դոլար: Դաշնակցությունը

¹ Ավագյան Ք., *Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչև 1924 թ.)*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 111-112: *Համերաշխական բանակցություններ (1914-1915)*, Պոսթոն, 1916, էջ 5:

² *Տեղեկագիր Հայ Ազգային Միության Ամերիկայի. 1917-1921 թթ.*, Պոստոն, 1922, էջ 8:

ընդամենը երկու ամսվա ընթացքում Կովկաս է առաքել 800 կամավոր³:

Անտանտի տերությունների առջև Հայ դատը ներկայացնելու նպատակով 1912 թ. Փարիզում հիմնված Ազգային պատվիրակության նախագահ, Ամենայն հայոց կաթողիկոսի դիվանագիտական ներկայացուցիչ Պողոս Նուբարի և Կահիրեում գործող Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) ջանքերով, Եգիպտոսի օրինակով, մի խումբ ամերիկահայերի կողմից (ղուկտոր Սմբատ Մ. Գաբրիելյան, Սիիրան Սվազյան /Սվազը/, պատվ. Խաչատուր Կ. Պեննեյան և այլք) ԱՄՆ-ում ևս ստեղծվել էր Ազգային շահերի պաշտպանության միությունը (ԱՇՊՄ): Այն բաղկացած էր հայ քաղաքական երեք կուսակցություններից, Հայ առաքելական և Հայ ավետարանական եկեղեցիներից ու ՀԲԸՄ-ից ընտրված ներկայացուցիչներից: ՀՅԴ-ն հրաժարվել է ենթարկվել Ազգային պատվիրակության և անձամբ Պ. Նուբարի հսկողությանը և գործել է անկախ ընդհուպ մինչև 1917 թ. սկիզբը⁴:

Պ. Նուբարի ջանքերով Ազգային պաշտպանության ամերիկահայ հանձնախումբն ու Ազգային շահերի պաշտպանության միությունը համագործակցված զգալի օգնություն են առաքել Սբ. Էջմիածին՝ ի նպաստ հայ գաղթականների, Կովկասում ապաստանած փախստականների ու կամավորների: Ծրագրված էր նաև բոլոր միջոցներով սատարել Փարիզի Ազգային պատվիրակությանը՝ Կիլիկիայի ազատագրման ու Եվրոպայում և Ամերիկայում Հայ դատի պաշտպանությունը հետամտող նրա քաղաքական, դիվանագիտական և ռազմական բնույթի ջանքերին⁵:

1915 թ. սեպտեմբերին ազգային վերոհիշյալ երկու կազմակերպությունները (ԱՊԱՀ և ԱՇՊՄ) միավորվել են որպես Ազգային պաշտպանության Ամերիկայի միություն (ԱՊԱՄ)՝ աջակցելու Փարիզի Ազգային պատվիրակությանը: Միությունը բաղկացած էր ազգային վեց կուսակցությունների ու կազմակերպությունների (ՍԴՀԿ, ՎՀ, ՀՍՈ, ՀԲԸՄ, Հայ առաքելական և Հայ ավետարանական եկեղեցիներ) ներկայացուցիչներից: Նոր միության կազմում էին Սիիրան Սվազյանը (ատենապետ), Ա. Նազարեթյանը (ատենադպիր), Բաբկեն եպս. Կյուլեսերյանը և այլք: Միավորման գործում մեծ էր ամերիկահայ ավետարանական եկեղեցու քարոզիչներ, վերապատվելիներ Եսարտըմյանի, Կարապետ Մանավյանի, Մ. Գալայճյանի դերը⁶:

Միության ջանքերով կազմակերպվել են հայրենանպաստ հանգանակություններ: Պ. Նուբարի կարգադրությամբ որոշվել է հանգանակությունների արդյունքները լիովին առաքել անձամբ կաթողիկոսին՝ գումարի կես բաժինը հատկացնելու Կովկասի կամավորներին, իսկ մյուս կեսը՝ փախստականներին: Միությունն իր գոյության ընթացքում նյութական ու բարոյական զգալի օգնություն է տրամադրել նաև Կիլիկիո կաթողիկոսին, Կ. Պոլսի հայոց պատրիարքին, Թիֆլիսում Հայաստանի վերաշինության հանձնախմբին, ինչպես նաև՝ Ամերիկյան նպաստամատույց ընկերությանը, Ռուս-ամերիկյան նպաստից ընկերությանը և այլոց: Միությունը բժշկական օգնություն, սնունդ, հագուստեղեն է առաքել Կովկասում ապաստանած հայ փախստականներին, մշտապես կապ պահպանել ԱՄՆ-ի պետական շրջանների ու հայասեր ամերիկացիների հետ, ջանքեր գործադրել վերականգնելու ՀՅԴ-ի հետ համագործակցությունը⁷:

Ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ից և Եվրոպական երկրներից տարբեր ճանապարհներով հայրենի երկրի ազատագրմանը մասնակցելու նպատակով Կովկասյան ռազմաճակատ է մեկնել շուրջ 3.000 հայ: Ամերիկահայությունը Կովկաս կամավորներ տրամադրելուց բացի, զգալի նյութական նպաստ է հատկացրել վերոհիշյալ շարժմանը: Ընդհանուր առմամբ, ողջ ամերիկահայությունը կովկասյան կամավորական շարժմանը տրամադրել է շուրջ 342.000 դոլար, իսկ առանձին ԱՄՆ-ի ՀՅԴ կենտրոնական կոմիտեն 1915-1917 թթ. Թիֆլիսի Ազգային բյուրոյին է ուղարկել 328.047 ռուբլի գումար⁸:

Բայց և այնպես, Կովկասում կամավորական շարժման լուծարումով արևմտահայության շրջանում չի մարել հայրենի տարածքներն ազատագրելու և իր ժողովրդի ապրելու բնական իրավունքը պաշտպանելու սրբազան զգացումը, և նա ձեռնամուխ է եղել սեփական ուժերով կամավորական նոր շարժում կազմակերպելուն:

1916 թ. նոյեմբերի 26-ին հիմնվել է օսմանյան հպատակներից կամավոր հիմունքներով հավաքագրված «Արևելյան լեգեոնը» (հետագայում՝ «Հայկական լեգեոն»), որի կորիզը կազմում էին Ֆրանսիայի շնորհիվ Փոթթ-Սաիդում ապաստանած 600 մուսալեռցիները⁹: Կամավորական շարժումը մեծ ոգևորություն է առաջացրել տարագիր հայության, հատկապես ամերիկահայության շրջանում:

1917 թ. մարտի 16-26-ը Բոստոնում կազմակերպվել է Ամերիկայի հայ ազգային միությունը

³ Թեոդիկ, *Ամենուն տարեցոյցը*, ԺՁ տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 282: **Լազեան Գ.**, *Հայաստան եւ Հայ Դատը* (Վաւերագրեր), Գահիրէ, 1946, էջ 202:

⁴ Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 9, 10: **Հայկ Վ.**, *Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը*, Նիւ Եորք, 1959, էջ 994:

⁵ *The Armenians in Massachusetts*. Boston, 1937, p. 52. Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 283:

⁶ Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 9, 10: **Ճիգմեճեան Մ. Գ.**, *Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925)*, Ֆրէզնո, 1930, էջ 202:

⁷ **Կիլիկիայան Զ.**, *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914-1916 թթ.)*, Երևան, 1965, էջ 187:

⁸ Համառոտ տեղեկագիր Հ. Կ. Ազգային Բիւրօի գործունէութեան. 1915-1917 թթ., Թիֆլիս, ա.թ., էջ 5-7:

⁹ **Սահակյան Ռ. Գ.**, *Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան. 1919-1921 թթ.*, Երևան, 1970, էջ 115, 116:

(ԱՀԱՄ, ատենապետ՝ իրավաբան Միհրան Սվազյան)՝ բաղկացած քաղաքական չորս կուսակցությունների (ՄԳՀ, ՎՀ, ՀՅԴ՝ առաջին և միակ անգամը լինելով, ՀՍՈ), ազգային երկու եկեղեցիների (առաքելական, ավետարանական) և ՀԲԸՄ ներկայացուցիչներից: Կարճ ժամանակում ԱՄՆ-ում այն արդեն ստեղծել էր 187 մասնաճյուղ և ամերիկյան պաշտոնական շրջանների կողմից ճանաչվել որպես ամերիկահայ գաղութը ներկայացնող մարմին՝ դառնալով հայկական առաջին լոբբիստական կազմակերպությունը Միացյալ Նահանգներում¹⁰:

Հայաստանի ազատագրության նպատակով միության իրականացրած կարևոր ձեռնարկներից է ամերիկահայության շրջանում կամավորական շարժման կազմակերպումը: Կարճ ժամանակում (1917թ. հունիսի 9 - նոյեմբերի 3) ֆրանսիական հովանավորության ներքո սկսված կամավորական շարժման իրենց մասնակցությունը բերելու նպատակով արձանագրվել է 5.000 ամերիկահայ, սակայն փոխադրական միջոցների սղության պատճառով մեկնելու հնարավորություն է ընձեռվել ընդամենը 1.172-ին (վերապրել է ընդամենը 250 հայ)¹¹:

1918 թ. դեկտեմբերի 17-19-ին «Հայկական լեգեոնը» ուղք է դրել բաղձալի Կիլիկիա՝ վերահսկելու և պաշտպանելու տարածքի ստրատեգիական հենակետերը՝ հայաբնակ Ադանան, Այնթապը, Մարաշը, Ուրֆան, Հաճընը և այլն¹²: Չնայած 1921 թ. սկզբին «Հայկական լեգեոնը» վերջնականապես լուծարվել է, այդուհանդերձ այն Հայոց ցեղասպանությունից ընդամենը երկու տարի անց ձևավորված առաջին զուտ հայկական զորամիավորն էր՝ տարբեր երկրներից (ԱՄՆ, Եվրոպա, Եգիպտոս, Հարավային Ամերիկա, Ավստրալիա և այլն) եկած 4.000-5.000 պանդուխտների մասնակցությամբ¹³, արդիական բանակի կազմությամբ, ռազմաճակատով, թեև ֆրանսիական բանակին առընթեր, սակայն՝ նրանից անջատ, իր յուրահատուկ ազգային դիմագծով:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին (1939-1945 թթ.) սփյուռքահայության, այդ թվում նաև՝ ամերիկահայության, առաջադեմ հատվածը, կիսելով նաև մայր հայրենիքին բաժին ընկած դժվարությունները, անմնացորդ մարտնչել է ընդդեմ ֆաշիզմի, ընդդեմ բռնության և իր զգալի ավանդը ներդրել հաղթանակի նվաճման գործում՝ դրա հետ կապելով նաև Հայ դատի վերանայման և հողային պահանջատիրության հույսերը:

Պատերազմի ամենավճռական տարիներին աշխարհով մեկ սփռված հայությունը միավորվել է Ազգային ճակատներում, որոնց գործունե կազմակերպություններից էր նաև 1944 թ. մարտի 19-ին Նյու Յորքում վերջնականապես ձևավորված Ամերիկահայ ազգային խորհուրդը՝ ամերիկահայ տարբեր կազմակերպությունների միասնական ճակատը (բաղկացած ՌԱԿ, ՄԳՀԿ, Ամերիկահայ առաջադիմական միության, ՀԲԸՄ, հարանվանական եկեղեցիների, տարբեր հայրենակցական և այլ միությունների ներկայացուցիչներից), որը երկրով մեկ տարածված իր բազմաթիվ մասնաճյուղերով միջոցառումներ, հանգանակություններ ու նվիրատվություններ է կազմակերպել՝ ի նպաստ ամերիկյան և խորհրդային բանակների, Կարմիր խաչի և մայր հայրենիքի, իսկ պատերազմի ավարտից հետո (մինչև 1950 թ.) ձեռնամուխ եղել նաև նորակազմ ՍԱԿ-ի շրջանակներում Հայ դատին արդարացի լուծում տալու խնդրի¹⁴:

Պարաբաղյան շարժման տարիներին (1988-1994 թթ.) արտերկրից ևս հայ կամավորներ են մասնակցել իրենց հայրենի բնօրրանի ազատագրմանը, իհարկե, ոչ նախկին սովոր թվաքանակով (ավելի քան 10 միլիոնանոց սփյուռքից՝ մի քանի տասնյակ հայ) և ոչ նախկին համահամայնքային կամ կուսակցական կազմակերպվածությամբ:

Արցախյան ազատամարտին իրենց մասնակցությունը բերած սակավաթիվ սփյուռքահայ կամավորների շարքում իր ուրույն բաժինն է ունեցել նաև ԱՄՆ-ի հայահոծ համայնքի անձնուրաց հատվածը: Արցախի ազատագրման գործում իր անօրինակ սխրագործությունների համար ազգային հերոսի կոչմանն արժանացած նահատակ հրամանատար Մոնթե Մելքոնյանը (ծնվ. 1957 թ. Վիսնյիա, Կալիֆոռնիա) հայ քաջարի կամավորի առասպելական-տիպար օրինակ է դարձել: Հերոսաբար

¹⁰ Տեղեկագիր Հայ Ազգային Միության Ամերիկայի, էջ 11, 12: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Ավագյան Ք.**, Իրավաբան-դիվանագետ Միհրան Սվազյանը ԱՄՆ-ում հայ առաջին լոբբիստական կազմակերպության հիմնադիր. *Օրենք և իրականություն*. Միջազգային իրավաբանական գիտական հանդես, Երևան, 2006, Մայիս, թիվ 5 (127), էջ 33-35:

¹¹ Տեղեկագիր Հայ Ազգային Միության Ամերիկայի, էջ 27: **Yeretzian, A. S.** *A History of Armenian Immigration to America with Special Reference to Conditions in Los Angeles*. A Thesis. California, 1923, p. 11.

¹² Ավելի մանրամասն տե՛ս **Ավագյան Ք.**, Կիլիկիահայությունը ԱՄՆ-ում եւ նրանց նպաստը Բնօրրանին. Ամերիկահայերը եւ «Արեւելեան-Հայկական լեգեոնը». - *Հասկ*. Հայագիտական տարեգիրք, Նոր Շրջան, ԺԱ Տարի, 2007-2008, Ամբիլիաս-Լիբանան, 2009, էջ 61-79:

¹³ **Պոյաճեան Տ. Յ.**, *Հայկական Լեգեոնը. Պատմական յուշագրություն*, Ուոթերթաուն, 1965, էջ 71: *Forgotten Heroes. The Armenian Legion and the Great War. An Exhibit Commemorating the 83rd Anniversary of the Armenian Legion's Victory on September 19, 1918 at Arara (Palestine). September 23-December 31, 2001.* Prepared by Barbara Merguerian (ALMA), Watertown, 2001, p. 3.

¹⁴ Ավելի մանրամասն տե՛ս **Ավագյան Ք.**, Ամերիկահայերի նպաստը Երկրորդ Աշխարհամարտում հաղթանակի նվաճման գործին. - *Հայկական բանակ*, Երևան, 2005, թիվ 2-4 (44-46), Հատուկ թողարկում, էջ 145-167: **Անդրեասեան Ա., Խոհեր գրական**, ազգային եւ հասարակական, հ. Բ, Լոս Անճելես, 1976, էջ 11-12, 119-120:

գոհված հրամանատար ֆրեզնոյաբնակ Կարո Քահքեյանը (ծնվ. 1962 թ., Հալեպ) կազմավորել է «Խաչակիրներ ջոկատը»: Արցախյան ազատամարտում անձնուրաց կռվել են ամերիկահայեր Շահեն, Արան, Շահիկը, Վաչիկը, Սաքոն և ուրիշներ¹⁵: Ջգալի է եղել Արցախյան ազատամարտում ԱՄՆ-ի հայ համայնքի ցուցաբերած նյութական աջակցությունը, ինչպես նաև՝ ռազմական տեխնիկա, հանդերձանք, դեղորայք և այլն առաքելու առումով:

Այնպես որ, ԱՄՆ-ում հողապահպանությունը պատմական տարբեր շրջափուլերում տարբեր ընկալում և դրսևորում է ունեցել, ինչը բացատրվում է միջազգային պատմաքաղաքական զարգացումներով, ժամանակի ընթացքում հայրենիքի նկատմամբ հայ քաղաքական կուսակցությունների փոփոխվող դիրքորոշումներով, ինչպես նաև տասնամյակների ընթացքում Սփյուռքում տեղի ունեցող սերնդափոխության գործընթացներով և համահարթեցնող համաշխարհայնացմամբ:

Knarik Avakian (Armenia)

THE DEMONSTRATION OF PRESERVING LAND IN THE ARMENIAN COMMUNITY OF THE USA IN DIFFERENT HISTORICAL PERIODS

The ideas of preserving land have different perception and demonstration in the Armenian Diaspora, especially in the USA. The explanation to these is the changeable attitude of the Armenian political parties towards native land and Motherland, as well as the changes of generations that are taking place in the Diaspora through decades.

Վահրամ Բալայան (ԼՂՀ)

ԼՂԻՄ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Խորհրդային 70 տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղի հայությունը, ՀԽՍՀ-ից կտրված, ԽՍՀՄ կազմում ապրեց ներքին ինքնավար կյանքով՝ խոր հավատով, որ պայքարի արդյունքում կվերամիավորվի մայր Հայաստանին:

Նկատենք, որ ԽՍՀՄ-ը չորս ձևի վարչատարածքային միավորներ է ունեցել և, անկախ տվյալ ինքնավարության չափաբաժնից, բոլորի վրա էլ տարածված է եղել ԽՍՀՄ ինքնիշխանությունը: ԼՂԻՄ-ը, ունենալով ինքնավար կարգավիճակ, գործող օրենսդրության համաձայն, որոշ հարցերում մեկ այլ միութենական հանրապետության միջոցով կենտրոնական իշխանությունների կողմից վարչական կառավարման է ենթարկվել:

1923 թ. հուլիսի վերջին ձևավորվում է նաև ԼՂԻՄ կառավարության կազմը: Որոշվեց մարզը բաժանել չորս շրջանների՝ Դիզակի, Վարանդայի, Խաչենի, Ջրաբերդի: Շուրջի տրվեց առանձին քաղաքի կարգավիճակ:

1924 թ. Շուրջի քաղաքին հարակից գյուղերի հիմքի վրա ձևավորվեց նոր շրջան:

Շրջաններն էլ, իրենց հերթին, բաժանվում էին ենթաշրջանների (վոյստ): 1928թ. ԼՂԻՄ-ում նոր վարչական բաժանում կատարվեց. Դիզակի, Վարանդայի, Խաչենի, Ջրաբերդի և Շուրջի փոխարեն կազմավորվեցին Ստեփանակերտի, Շուրջի, Մարտունու, Հաղբուքի և Մարտակերտի շրջանները¹: Ստեփանակերտը՝ որպես մարզկենտրոն, 1978թ. դարձավ հանրապետական նշանակության քաղաք: Դրանից հետո Ստեփանակերտի փոխարեն շրջկենտրոնի կարգավիճակ ստացավ Ասկերանը:

1923 թ. օգոստոսի 10-ին մարզիեղկոմի որոշմամբ ձևավորվեցին նաև շրջանային գործկոմները: Նախապատրաստական աշխատանքներից հետո՝ 1923թ. նոյեմբերի 6-7-ը, Ստեփանակերտում կայացավ Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի առաջին համագումարը²:

¹⁵ http://en.wikipedia.org/wiki/Monte_Melkonian, http://en.wikipedia.org/wiki/Garo_Kahkejian.

Պետրոսեան Ա., Սփյուռքահայերը մարտադաշտի վրայ. Խաչակիրներ ջոկատը, «Հրազդան» հրատ., Երևան, 2000, էջ 9, 64:

¹ **Ստ.Լիսիցյան**, Լեռնային Ղարաբաղի հայերը, /ազգագրական ակնարկ/, Հայ ազգագրության և բանահյուսության նյութեր և ուսումնասիրություններ, հ.12, Երևան, Հայկ.ՍՍՀ հրատ., 1981, էջ 39-40:

² **История Азербайджана**, т. 3, ч. 1, Баку, Изд. АН Аз. ССР, 1963, с.306; Գ.Հովհաննիսյանը սխալմամբ համագումարի հրավիրման օր է մատնանշել հոկտեմբերի 19-ը, տե՛ս **Գ.Հովհաննիսյան**, Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, «Երևանի համալսարան»-ի հրատ., 1971, էջ 237:

172 պատգամավորներից համագումարի աշխատանքներին մասնակցեցին 132-ը, որոնցից 116-ը հայեր էին, 16-ը՝ թուրքեր³:

Համագումարը դադարեցրեց մարզիեղկոմի գործունեությունը և ընտրեց 25 անդամներից և 7 թեկնածուներից կազմված գործադիր կոմիտե: Համագումարից անմիջապես հետո 1923 թ. դեկտեմբերի 11-ին, ձևավորվում է ԼՂԻՄ կոմկուսի 9 հոգուց բաղկացած մարզկոմը:

ԼՂԻՄ-ի հիմնական օրենքի մշակման նպատակով 1923 թ. հուլիսի սկզբներին Ա.Ղարապյոզյանի գլխավորությամբ ստեղծվում է հանձնաժողով:

1924 թ. հուլիսի 6-ին «Սահմանադրություն Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Շրջանի» տիտղոսաբերթով հրատարակվեց ԼՂԻՄ հիմնական օրենքը⁴:

ԼՂԻՄ սահմանադրության երրորդ գլխում արձանագրված էր.

«1. Ինքնավար Լեռնային Ղարաբաղի իշխանությունը նրա ընդգրկած ամբողջ տարածության վրա պատկանում է խորհուրդների համագումարին, կենտրոնական գործադիր կոմիտեին և տեղական խորհուրդներին:

2. Ինքնավար Լեռնային Ղարաբաղի բարձրագույն իշխանությունը հանդիսանում է խորհուրդների համագումարը, որը հրավիրվում է ոչ պակաս, քան տարին մի անգամ:

3. Մեկ համագումարից մինչև մյուսի հրավիրելու ժամանակամիջոցը լիակատար իշխանությունն ամբողջովին անցնում է խորհուրդների կենտրոնական գործադիր կոմիտեին:

4. Խորհուրդների համագումարների և Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Կենտրոնական գործադիր կոմիտեի որոշումները կյանքի մեջ անցկացնելու համար Կենտրոնական գործադիր կոմիտեն ընտրում է Ժողովրդական կոմիսարների խորհուրդ, որը կենտրոնացնում է իր մեջ շրջանի կառավարության գործը՝ ստանձնելով Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահության իրավունքները:

Ծանոթություն. Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահը միաժամանակ հանդիսանում է Ժողկոմխորհի նախագահ:

5. Ինքնավար շրջանի կառավարության առանձին բաժինները վարելու համար սահմանվում են ժողովրդական կոմիսարիատներ՝ ներքին գործերի, արդարադատության, լուսավորության, առողջապահության, երկրագործության, կենտրոնական վիճակագրական վարչության և ժողովրդական տնտեսության խորհուրդ:

6. Շրջանի զինվորական գործերը վարում է Զինվորական Կոմիսարիատը՝ կազմակերպված ընդհանուր հիմունքներով»⁵:

Սահմանադրության առաջին գլխի երկրորդ հոդվածում նշված է. «բոլոր գործավարությունը, դատավարությունը և ուսուցումը դադարեցնում Ինքնավար Լեռնային Ղարաբաղում կատարվում է մայրենի լեզվով»⁶: ԼՂԻՄ-ում պաշտոնական գործավարությունը պիտի կատարվեր մայրենի՝ հայոց լեզվով⁷:

Այսպիսով, այս սահմանադրությամբ խորհրդային համակեցության իրավաքաղաքական համակարգում ԼՂԻՄ տեղն ու դերը, որոշակիացված սահմաններով, փաստորեն, հստակեցվեց և ամրագրվեց:

Ինչպես խորհրդային մյուս ժողովուրդները, արցախահայությունը ևս իր կամքին հակառակ չստեղծեց ազգային պետական կառույցներ: Նրանց վրա դրոշմված էր խորհրդային երկրի գաղափարաբանությունը:

Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը գիտակցելով, որ արցախահայությունն իշխանության օրենսդիր, գործադիր, դատական մարմիններով և պետության հիմնական օրենքով՝ սահմանադրությամբ, անկասելի մի ուժ է՝ կանգնած պանթուրքիստական ծրագրերի իրագործման ճանապարհին, 70 տարիների ընթացքում հնարավոր ամեն մի մեթոդով փորձել է խուզել, կրճատել ԼՂԻՄ իրավասությունները: Այդ ճանապարհով նրանք ձգտում էին երկրամասը հայաթափել և վերջնական կլանել:

Պատահական չէ, որ ԼՂԻՄ սահմանադրությունն այդպես էլ կիրարկության մեջ չդրվեց: Դրա փոխարեն 1924թ. նոյեմբերի 26-ին հրապարակվեց «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի» կանոնադրությունը⁸: Սահմանադրության համեմատ այն առավել սահմանափակ իրավասություններ էր վերապահում ԼՂԻՄ-ին:

Այնուամենայնիվ, այս կանոնադրության մեջ նույնպես ուրվագծված էր ԼՂԻՄ տարածքը, սահմանված կենտրոնական և տեղական իշխանությունների կազմակերպման ձևերը, հստակեցված նրանց իրավունքներն ու խնդիրները: ԼՂԻՄ կանոնադրության առաջին գլխի երկրորդ հոդվածում

³ Дж. Гулиев, Из истории образования Нагорного Карабаха, Известия АН Аз.ССР, серия истории, философии и права, 1973, н. 3, с. 17.

⁴ «Կոմունիստ», 6 հուլիսի, 1924:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

⁷ “Бакинский Рабочий”, 21 августа, 1923.

⁸ “Бакинский Рабочий”, 26 ноября, 1924.

ասված էր. «ԽՍՀՄ, ԱԽՖՍՀ և ԱԽՍՀ օրենսդրական ակտերը ԼՂԻՄ տարածքում պարտադիր կիրարկելի են»⁹:

Վերոնշյալ կանոնադրությունը նորից վկայում է, որ ԼՂԻՄ-ը իրավասություններ ունի տեսանկյունից որպես վարչական առանձին միավոր, միջնորդավորված ձևով գտնվում էր ԽՍՀՄ կազմում և ենթակա էր միութենական մարմիններին:

Ի դեպ, նկատենք, որ ԼՂԻՄ-ի համար, որպես միջնորդ սուբյեկտ, հանդես է գալիս ոչ միայն Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, այլ նաև Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիվ Հանրապետությունը, որի կազմում էր գտնվում նաև ՀԽՍՀ-ն:

Չնայած Ադրբեջանի իշխանություններն ամեն կերպ ձգտում էին ԼՂԻՄ-ի հետ կապված փաստաթղթերում չօգտագործել երկրամասի ազգային կերպը բնորոշող հայկական անվանումը, այնուամենայնիվ, 1929թ. ընդունված նոր կանոնադրության մեջ դա ավելի քան ակնառու էր: Նոր կանոնադրության առաջին գլխի մեջ ասված էր, որ երկրամասը «...իր ազգային կազմի հատկանիշներով կազմավորվում է որպես առանձին միավոր»¹⁰:

Հետխորհրդային շրջանի ադրբեջանական պատմագրությունը փաստերի ճնշման տակ նույնպես գտնում է, որ, հանձինս ՀԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի, ԽՍՀՄ կազմում հայությունն ուներ երկու պետականություն¹¹:

Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը 1987թ. ԼՂԻՄ-ի մասին ընդունած օրենքով նույնպես ճանաչել է ԽՍՀՄ կազմում հայկական ազգային միավորի գոյության փաստը¹²:

Ի տարբերություն ԼՂԻՄ-ի՝ ինքնավարությունից զրկված, թուրքական աշխարհով շրջապատված Արցախի հյուսիսային մասի բնակավայրերը Խորհրդային 70 տարիների ընթացքում արագ հայաթափվեցին, իսկ արցախյան շարժման առաջին տարիներին էլ հեշտությամբ կլանվեցին Ադրբեջանի կողմից:

Խորհրդային ամբողջատիրության պայմաններում չնայած ԼՂԻՄ-ը հանրապետական իշխանությունների և Մոսկվայի կողմից կրկնակի ճնշման տակ էր գտնվում, այնուամենայնիվ, պետությանը բնորոշ, թեկուզև սահմանափակ կարողություններով դարձել էր հույսի կղզյակ Ադրբեջանի հայաշատ մյուս վայրերի համար:

Այսպիսով, ներկայացված փաստերից նկատելի է, որ ինչպես ԼՂԻՄ-ը, այնպես էլ ԱԽՍՀ-ն ԽՍՀՄ կազմում ունեին ներքին ինքնավար կարգավիճակ: Ուստի, եթե Ադրբեջանի թրքությունն իրեն իրավունք է վերապահում ստեղծելու իր ազգային պետությունը, ապա այդ նույնն անելու իրավունք ունի ԼՂԻՄ հայությունը:

Vahram Balayan (Armenia)

THE STATUS OF NKAO IN THE ADMINISTRATIVE AND POLITICAL SYSTEM OF THE USSR

There were 4 administrative-territorial types of units in the structure of the Soviet Union and Soviet Power was spread on them independent from their status and part (share) of self-government.

Being indirectly dependent on the Soviet power the NKAO was an autonomous region of the USSR which meant it was under the administrative control of the USSR through another administrative-territorial unit.

For seventy years Soviet Azerbaijan endeavored to limit the rights of the Armenian autonomy by hounding and force. However the Armenians of the region united around the patriotic-minded local government and intellectuals and resisted the anti-Armenian policy of Baku authorities. Furthermore, during the existence of the Armenian autonomy in the entire Soviet period the Armenians managed to preserve the Armenian spirit. During these years, the Armenians of the region preserved historical memory. Directly and indirectly they transmitted the idea of the reunification and statehood to the new generation.

⁹ ԼՂՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 1, ք. 16:

¹⁰ ԼՂՀ պետարխիվ, ֆ. 2, ց. 1, գ. 354, ք. 5:

¹¹ www.isr-az.com/100331140534.pdf.

¹² Ст'я Закон Азербайджанской Советской Социалистической Республики о Нагорно-Карабахской автономной области, Баку, Изд. "Азернешр", 1987.

ՀԱՅԵՐԸ ԵՎ ԼԵՎԱՆՏՅԱՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ XVII ԴԱՐՈՒՄ

Միջին դարերում և նոր ժամանակներում Լևանտ էին անվանում արևելյան միջերկրածովյան երկրները՝ Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը, Կիպրոսը, Փոքր Ասիայի արևմուտքում ընկած երկրամասերը և այլն։ Հնագույն ժամանակներից սկսած՝ Լևանտը հանդիսացել է միջազգային առևտրափոխանակության կարևորագույն հանգույցներից մեկը։ Խաչակրաց արշավանքների հետևանքներից մեկը հանդիսացավ Լևանտի հետ Եվրոպայի անմիջական ու մշտական կապերի հաստատումը¹։ Այդ ժամանակ Արևելքի երկրներ տանող գլխավոր առևտրական ճանապարհը դարձավ Միջերկրական ծովը։

Դեռևս XII-XIII դարերում միջերկրածովյան երկրների տնտեսական աշխուժացումն անմիջականորեն իր արտացոլումը գտավ Կիլիկյան Հայաստանում, որը վերածվեց միջերկրածովյան առևտրի խոշորագույն կենտրոններից մեկի։ Կիլիկիայի հայ վաճառականությունն ընդգրկվեց համաշխարհային առևտրի մեջ և իր այդ դիրքերը պահպանեց ընդհուպ մինչև 1375 թ., այսինքն՝ Կիլիկիայի հայկական թագավորության կործանումը։

Փոքր Ասիայում, Բալկաններում և Հյուսիսային Աֆրիկայում թուրքական նվաճումները և հատկապես 1453 թ. Կոստանդնուպոլսի գրավումն ու Բյուզանդական կայսրության անկումը Եվրոպայի արևելյան առևտրի համար իսկական աղետ եղան։ Եվրոպան կտրվեց արևելյան շուկաներից։ Նման պայմաններում Եվրոպայի համար այլ երկրներում չկար, բացի ծագումով արևելքի միջնորդ վաճառականների ծառայությանը դիմելուց։ Այսպիսով, հայ վաճառականների համար վերստին բացվում էին առևտրական լայն գործունեություն ծավալելու մեծ հնարավորություններ²։ Ընդ որում, հայ վաճառականներ ասելով պետք է նկատի ունենալ ոչ միայն Հայաստանի զույգ հատվածների, այլև Իրանի, Օսմանյան կայսրության, Սիրիայի, Եգիպտոսի և առհասարակ ասիական և եվրոպական երկրների հայկական գաղթավայրերի հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչներին։

XVI-XVII դարերում Լևանտը նաև այն հիմնական շուկան էր, որտեղ հարաճուն զարգացող եվրոպական մանուֆակտուրաները կարող էին ձեռք բերել հույ՝ մետաքս։ Սակայն հաճախակի բռնկվող թուրք-իրանական պատերազմների, Օսմանյան կայսրության տարածքով անցնող քարավանային ճանապարհների վտանգավորության, եվրոպացի վաճառականների համար ցամաքային քարավանային առևտրի անսովոր լինելու և բազմաթիվ այլ պատճառներով, եվրոպացի վաճառականները հնարավորություն չունեին Փոքր Ասիայի վրայով անմիջական առևտրական հարաբերություններ հաստատելու Իրանի հետ և անձամբ կազմակերպելու այդ երկրից մետաքսի արտահանումը լեանտյան շուկաներ ու Եվրոպա։ Այսպիսով, ստեղծվում էր մի վիճակ, երբ Եվրոպայի համար կենսական նշանակություն ունեցող այդ հարցի լուծման համար ևս միակ ճանապարհը դարձյալ մնում էր հայ վաճառականների միջնորդական ծառայություններից օգտվելը, առավել ևս, որ XVII դարում Փոքր Ասիայի ցամաքային քարավանային ճանապարհներով, իրանական հույ՝ մետաքսի արտահանության բնագավառում հայ վաճառականներն ըստ էության մրցակիցներ չունեին³։

Բնականաբար Լևանտում, ի դեմս եվրոպական պետությունների հովանավորությունն ու աջակցությունը վայելող եվրոպացի վաճառականների, հայ առևտրական խոջաները հանդիպելու էին լուրջ առևտրական մրցակիցների ու ախոյանների։ Կապիտուլյացիաների հաստատումով XVI դ. վերջերին եվրոպական առևտրական կապիտալի ներթափանցումն արդեն ավարտվել էր Մերձավոր Արևելքում, և դրանով լեանտյան շուկան կռվադաշտ էր դարձել Արևմտյան Եվրոպայի առևտրական պետությունների միջև, որոնց գլխավորները Անգլիան, Ֆրանսիան և Հոլանդիան էին։ Նրանցից ամենավտանգավորը անգլիացի վաճառականներն էին։ Իրենց առևտրական-տնտեսական ախոյանների՝ ֆրանսիացի, հոլանդացի, լեանտյան, այդ թվում և հայ վաճառականների առևտրական մրցակցությունը հաղթահարելու համար դեռևս 1592 թ. նրանք ստեղծել էին «Լևանտյան առևտրական ընկերությունը»։ Այդ ընկերության մրցողունակությունը բարձրացնելու նպատակով 1617 թ. այսպես կոչված «Արկածախնդիր վաճառականների ընկերությունը» նույնիսկ հրաժարվեց Եվրոպայից Լևանտ ապրանքներ արտահանելու իր ձեռք բերած համարյա մենաշնորհային իրավունքից հոգուտ «Լևանտյան ընկերության»⁴։ Վերջինիս

¹ St' u Poullet. *Nouvelles relations du Levant*, partie I-II, Paris, 1668; Lopez R. S., *Medieval Trade in the Mediterranean World*, New York, 1955.

² Այդ մասին մանրամասն տե՛ս V. Baibourtian, *International Trade and the Armenian Merchants in the Seventeenth Century*, New Delhi, 2004.

³ St' u Байбуртян В. А., *Армянская колония Новой Джульфы в XVII веке (Роль Новой Джульфы в ирано-европейских политических и экономических связях)*, Ереван, 1969; Բայբուրդյան Վ. Ա., Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը 17-րդ դարում, Թեհրան, 1996; Baghdiantz McCabe, Ina. *The Shah's Silk for Europe's Silver: The Eurasian Trade of the Julfa Armenians in Safavid Iran and India (1530-1750)*, Atlanta, 1999.

⁴ St' u Epstein M., *The Early History of the Levant Company*, London, 1908.

համար, բնականաբար, բնավ ձեռնադրել չէր իրանական հում մետաքսը և արևելյան այլ ապրանքներ գնել երկրորդ ձեռքից՝ գլխավորապես հայ վաճառականներից: Ուստի 1607 թ. նրանք թուրքական սուլթանից իրավունք ստացան մուտք գործելու Սև ծով, որը փակ էր եվրոպացիների առջև, և ծովային ճանապարհով կազմակերպելու իրանական հում մետաքսի արտահանումը Եվրոպա: 1609 թ. Կոստանդնուպոլսում Անգլիայի դեսպանին նույնիսկ հաջողվեց թույլտվություն ձեռք բերել, որպեսզի բրիտանական «Ռոյալ Դիֆենս» նավը անցնի Բոսֆորոսի լիճանից և ուղղություն վերցնի դեպի Տրապիզոն, որտեղ անգլիացիները ցանկանում էին բացել առևտրական գրասենյակ՝ կազմակերպելու համար Իրանից բերվող հում մետաքսի արտահանումը Եվրոպա՝ ծովային ճանապարհով⁵:

Թուրքասիրությունն ընտրելով որպես իր նպատակներին հասնելու ազդու միջոց՝ «Լևանտյան ընկերությունը» սկսեց եռանդուն ճնշում գործադրել սեփական կառավարության վրա, որպեսզի վերջինս հակաթուրքական դաշինքի վերաբերյալ պայմանագիր չկնքի Իրանի Շահ Աբաս Ա-ի հետ՝ իր վերոհիշյալ մեծ ծրագիրը հաջողությամբ կյանքի կոչելու համար⁶:

Թեև անգլիացիների մտահոգացած այդ լայնական ծրագիրը ձախողվեց, սակայն այնուամենայնիվ, ողջ XVII դարի ընթացքում նրանք անդադրում կերպով, թեև անհաջող, փորձում էին հայ վաճառականների ձեռքից խլել Իրանից մետաքսի արտահանման նրանց ձեռք բերած մենաշնորհը և հատկապես սահմանափակել այդ ապրանքի արտահանումը դեպի Լևանտի առևտրական կենտրոններ: Ի դեպ, չնայած գործադրած բազում ջանքերին, բրիտանական Օստ-Հնդկական ընկերությանը ևս չհաջողվեց կազմակերպել իրանական մետաքսի զանգվածային արտահանության գործը ծովային ճանապարհով՝ Պարսից ծոցի վրայով⁷:

Հայ վաճառականների լևանտյան առևտրի վրա բարերար ազդեցություն ունեցավ 1639 թ. կնքված Քասր-ե Շիրինի թուրք-իրանական հաշտության պայմանագիրը, որը երկու պետությունների միջև ավելի քան 80-ամյա խաղաղ զարգացման մի շրջան բերեց: Շահագրգռված լինելով, որ ողջ իրանական առևտուրը կատարվի Թուրքիայի ցամաքային ճանապարհներով, սուլթանական կառավարությունը գործում միջոցներ էր ձեռնարկում՝ ապահովելու համար հայ վաճառականների առևտրական քարավանների դյուրին տեղաշարժերը Օսմանյան կայսրության տարածքով, ինչպես նաև ապահովելու համար միջազգային առևտրով զբաղվող վաճառականների գործարար ակտիվությունը լևանտյան շուկաներում⁸:

Լևանտի առևտրական կենտրոն հանդիսացող քաղաքներում բազմամարդ հայ գաղութների և գաղթօջախների առկայությունը ևս նշանակալիորեն հեշտացնում էր հայ վաճառականների գործունեությունը և բարձրացնում նրանց մրցողունակությունը:

Լևանտում հայերի կողմից բերված ապրանքների գնողների շրջանակը չափազանց լայն էր: Նրանց թվում էին ֆրանսիացի, հոլանդացի, իտալական քաղաք-հանրապետությունների վաճառականները և այլն: Սակայն հայերն իրենց առևտրական գործառնությունները չէին սահմանափակում լոկալ Լևանտի առևտրական կենտրոններով: Արևելյան առևտրի գլխավոր ուղիները դեպի արևմուտք անցնում էին Միջերկրական ծովով: Իրենց ապրանքները բարձրելով եվրոպական նավերի վրա՝ հայ վաճառականները դրանք տեղափոխում էին Ֆրանսիա, Իսպանիա, Պորտուգալիա և այլն, որտեղից ցամաքային ու գետային ճանապարհներով՝ նաև Գերմանիա, Ավստրիա, Սկանդինավյան երկրներ և այլն: Նրանք հոլանդական առևտրական նավերի միջոցով ուղիղ հաղորդակցություն ունեին նաև Հոլանդիայի առևտրաշատ կենտրոնների, հատկապես Ամստերդամի հետ:

Լևանտում առևտուր անող հայ վաճառականները Միջերկրական ծովի վրայով սերտ կապերի մեջ էին հատկապես Մարսել նավահանգստի հետ: Լևանտի հետ առևտուրը կենսականորեն կարևոր էր Ֆրանսիայի համար: Կարդինալ Ռիշելյեն նույնիսկ ստեղծել էր Լևանտի գործերով պետական քարտուղարի պաշտոն: 1629 թ. նոյեմբերի 23-ին Լյուդովիկոս XIII-ը և կարդինալ Ռիշելյեն հրապարակել էին հատուկ արտոնագիր հայ վաճառականների՝ Մարսել ազատ մուտք ու ելք ունենալու մասին: Իսկ 1669թ. Կոլբերը Մարսելը հայտարարեց «պորտո ֆրանկո» (ազատ քաղաք): Վարելով մերկանտիլիզմի և առևտրի հովանավորության քաղաքականություն՝ Ֆրանսիան իր դռները լայնորեն բացում էր հայ վաճառականների առջև¹⁰:

⁵ Knorr K., *British Colonial Theories 1570-1850*, Toronto, 1944, p. 29; տե՛ս նաև Hayd W., *Histoire du Commerce du Levant au Moyen-Age*, t. II, Amsterdam, 1967.

⁶ Տե՛ս Edward Denison Ross, *Sir Anthony Sherley and His Persian Adventure*, London, 1933.

⁷ Տե՛ս Ferrier R. W., *The Armenians and the East India Company in Persia in the Seventeenth and Early Eighteenth Century*. Economic History Review, 2nd series, vol. XXVI, 1973, *Armenian Merchants of the Seventeenth and Early Eighteenth Centuries: English East India Company Sources*, edited by Vahe Baladouni and Margaret Macepeace, Philadelphia, 1998.

⁸ Տե՛ս Inalcik H., *The "Ottoman Economic Mind and Aspects of the Ottoman Economy"*, Studies in the Economic History of the Middle East, London, 1970.

⁹ Տե՛ս Tongas G., *Les relations de la France avec l'Empire Ottoman durant la première moitié du XVII siècle*, Toulouse, 1942; Masson P., *Histoire du Commerce Français dans le Levant au XVII-e siècle*, Paris, 1896.

¹⁰ Rocca N., *La France en Orient depuis les Rois Francs jusqu'à nos jours: "Aperçu historique"*, Paris, Chalamel, 1976.

Որպես կանոն, իրենց բեռները Եվրոպա տեղափոխելու համար հայերն օգտվում էին եվրոպական պետությունների առևտրական նավերից: Սակայն առավել խոշոր վաճառականներն ունեին նաև սեփական նավեր: Մեզ են հասել մի քանի այդպիսի նավերի և նավատերերի անուններ¹¹: Ջուրկ լինելով պետականությունից և հետևաբար չունենալով ազգային դրոշ հայ խոջաներն իրենց նավերի վրա ամրացնում էին ինքնահնար դրոշներ:

Այսպիսով, հանրահայտ իրողություն է, որ պետականության բացակայության պայմաններում, զուրկ ամեն տեսակի հովանավորությունից, հայ առևտրական կապիտալը եվրոպական արդյունաբերական երկրների սուր մրցակցության պայմաններում, դրսևորելով կենսունակություն և զարմանալի նախաձեռնող ոգի, հանդես էր գալիս որպես կարևոր գործոն և կապող օղակ Արևելքի և Արևմուտքի միջև միջազգային ապրանքափոխանակության բնագավառում:

Vahan Baibourtian (Armenia)

THE ARMENIANS AND THE LEVANTINE TRADE IN XVII CENTURY

After the decline of the Mediterranean port of Ayas and loss of its mercantile prominence, the Armenians continued to play a predominant role in the Levantine trade. Adapting to the newly formed political and economic environment, they continued to have a significant position trade.

The Armenian merchants residing in the Levantine cities as well as the Armenian Khojas, living in both parts of Armenia (Western and Eastern), as well as other areas of the Ottoman Empire and Safavid Iran were actively involved in the Levantine trade.

Reviving the traditions of the Armenian maritime trade of the Middle Ages, the merchants khojas loaded their goods on European ships, crossed the Mediterranean Sea and brought to Europe the Eastern goods (Iranian, Central Asian, Indian, Chinese, etc.).

Օլեքսանդր Բոժկո (Ուկրաինա)

ԿԱՄԵՆԵՑ-ՊՈԴՈԼՍԿ ԶԱՂԱՔԻ ՀԱՅ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ XV–XVII ԴԱՐԵՐԻ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆ

Ուկրաինայի հայկական գաղթօջախների մեջ Կամենիցի հայկական համայնքը եղել է ամենաբազմամարդն ու բարգավաճը՝ զիջելով թերևս միայն Լվովի համայնքին¹: Հենց այնտեղ է գրվել «Կամենեցի տարեգրությունը», որ ստեղծվել է XV–XVII դարերում գրաբարով և հայ-ղփչաղերենով և համարվում է Ուկրաինայի հայկական գրավոր հուշարձաններից ամենատառադրավը:

Ներկա հաղորդման մեջ մեր ուշադրությունը կսևեռենք առավելապես գրաբարով գրված տեքստերին, քանի որ մեզ բախտ է վիճակվել աշխատել դրանց հետ ուկրաիներեն թարգմանելու ընթացքում:

Առաջինը, որ աչքի է զարնում այդ տեքստերում, բավականին ճիշտ, երբեմն թուրքական և այլ օտար լեզուների մասնակի խառնուրդով դասական գրաբարն է՝ ի տարբերություն, օրինակ, Կամենեցի հայկական դատարանի հայալեզու արձանագրությունների², որ գրված են միջին հայերենով³:

Չնայած այս տարեգրությանը բնորոշ որոշ անճշտություններին, որ կարելի է բացատրել հետագա գրիչների միջամտությամբ, նշենք, որ Կամենիցի տարեգրությունն այնուամենայնիվ պարունակում է կարևոր տեղեկություններ, որոնք այս կամ այն չափով արտացոլում են Ռեչ Պոսպոլիտայի տիրապետության ներքո գտնվող ուկրաինական հողերում տեղի ունեցած իրադարձությունները: Տարեգրությունից նաև որոշ տեղեկություններ ենք ստանում Ռեչ Պոսպոլիտայի որպես պետական կառույցի, կազմավորման և զարգացման, ինչպես նաև նրա սահմաններում ապրող տարբեր ազգագրական և սոցիալական խմբերի միջև տեղի ունեցող հակասությունների ու հարևան երկրների հետ փոխհարաբերությունների մասին:

Ռեչ Պոսպոլիտա անվանված այս խայտաբղետ պետական միավորման մի բաղադրյալ մասն էին կազմում նաև հայերը: Եվ բնական է, երբ խոսքը վերաբերում էր այնպիսի կարևոր իրադարձության,

¹¹ Տե՛ս **Ղ. Ալիշան**, *Հայ-Վենետ, Վենետիկ*, 1896, էջ 503-504:

¹ В.Р.Григорян, История армянских колоний Украины и Польши (Армяне в Подолии), Ереван, 2005, с.69

² Կամենեցի-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դ.), աշխատասիրությամբ Վ. Ռ.Գրիգորյանի, Երևան, 1963, էջ 46:

³ **Օ.Բոժկո**, Ուկրաինաբանությունները Կամյանեց-Պոդիլսկ քաղաքի XVI-XVII դարերի հայկական դատարանի վավերագրերի լեզվում//Պատմաբանասիրական հանդես Օ. Bozhko, 2010, №2, էջ 110:

ինչպիսին, ասենք, պատերազմն է, որը Ռեչ Պոսպոլիտան մղում էր իր հարավային և հյուսիսային հարևանների՝ Թուրքիայի, Մոլդավիայի, Վալախիայի, Մոսկովյան իշխանության դեմ, զգացվում է, որ տարեգիրն իրեն իրոք պետական հանրության մաս է համարում: Օրինակ, 1562 թվի սեպտեմբերի 15-ին հատուկ ոգևորությամբ է նա տեղեկացնում այն մասին, թե ուրախության ինչ զգացում ապրեցին Կամենիցի բնակիչները մոսկովցիների երեսունհազարանոց զորքի դեմ Ջիզմունդ (Սիգիզմունդ) քաղաքի տասնվեցհազարանոց այրուծի տարած հաղթանակի առթիվ⁴: Կամ թե ինչպես «1579. Թվ. ՌԻԸ. Հոկտ. ԺԴ. Թագաւորն Ստեփանոս մեծ եւ բազում զորօքն գնաց ի Մոսքովի երկիրն, պատերազմել ընդ Մոսքովի քնազին. և աստուածային կարողութեամբ զԲոլոցքան էառ»⁵:

Սակայն մեզ՝ ուկրաինացիներին համար առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում, իհարկե, հայկական տարեգրության այն էջերը, որոնք պատմում են Ռեչ Պոսպոլիտայի տիրապետության ներքո գտնվող ուկրաինական հողերում տեղի ունեցած իրադարձությունների, ինչպես նաև ուկրաինական հանրության վիճակի մասին, որը սոցիալական, ազգային և կրոնական զգալի ճնշման էր ենթարկվում: Դրան էլ ավելացրած այն, որ Կամենիցի և նրա շրջակա գյուղերի բնակչությունը և ընդհանրապես ողջ Ուկրաինայի ժողովուրդը տառապում էր թաթարական ասպատակություններից: Բավական է ասել, որ տարեգրության մեջ ավելի քան տասը մյուս ասպատակություններ են նկարագրված, սկսած 1509 թվից մինչև 1605 թվականը, երբ «Դադարն եկաւ այս յաշխարհս ի միում ամին եօթն անկամ»⁶: Հայ տարեգրի բերած տվյալները խոսում են մյուս ավերիչ ասպատակությունների հետևողական և պարբերական բնույթի ու նրանց ահռելիորեն ընդարձակ աշխարհագրության մասին՝ սկսած Կիևի շրջակայքից⁷ և հասած մինչև Լվով ու Արևմտյան Գալիցիա՝ Յարոսլավ⁸: Ասել կուզի, թաթարական խուժումների առարկա էին փաստորեն ուկրաինական բոլոր տարածությունները, թեև առավել մանրամասնությամբ հեղինակը նկարագրում է այն ներխուժումները, որոնք տեղի էին ունենում Պոդոլյայում և հատկապես Կամենիցում: «Երկովէն (այսինքն՝ Լվովից) մինչեւ ի Կամենից,- գրում է նա 1575 թվի հոկտեմբերի 12-ին,- տեղ ոչ թողին որ չգերեցան. եւ աւարեցին զմարդիկք և զանասունս, որչափ ինչ կայր՝ զամէն սրբեցին, եւ հանին գերկրի բարութիւնս. այլ եւ մինչեւ ի Լուցքան՝ զԼիդվայի գաւառաւն եւ Վոլնին գաւառաւն եւ Բոտոլեային գաւառաւն, որչափ կարաց եւ ձեռն բաւեց զամենայն ինչ տարաւ, անթիւ եւ անբաւ»⁹:

Մշտական ամայացնող ասպատակությունները և դրանց դիմագրավելու՝ շլախտայի ու լեհական կառավարության անկարողությունն արագացնում էին Ուկրաինայում կոզակության ձևավորումը, որն աստիճանաբար կարևոր գործոն էր դառնում Ռեչ Պոսպոլիտայի հասարակական և քաղաքական կյանքում: Ի հավաստումն դրա՝ բազմաթիվ գրառումներ ենք գտնում տարեգրության մեջ, որի էջերում այստեղ կամ այնտեղ աչքի են զարնում կոզակական այնպիսի հայտնի առաջնորդների անուններ, ինչպիսիք են Դմիտրո Վիշնևեցկին, Իվան Պիդկովան, Սևերին Նալիվայկոն, Հրիհորի Լոբոդան: Նաև տեսնում ենք, թե ինչպես կոզակները հետզհետե ավելի գործուն դեր են խաղում անգամ Ռեչ Պոսպոլիտայի սահմաններից անդին: Պարզ է, որ հայ տարեգրի՝ կոզակների ապստամբական գործողություններին առնչվող իրադարձությունների բնութագրությունն ու գնահատականը դուրս չեն ելնում դրանց հանդեպ այն ժամանակվա Ռեչ Պոսպոլիտայում գոյություն ունեցող ստերեոտիպներից: Այնուամենայնիվ, հանդես գալով որպես ազգային փոքրամասնության ներկայացուցիչ Ռեչ Պոսպոլիտայում, եկեղեցական պաշտոնից զատ հայկական համայնքում նաև դատավորի պարտականություններ կատարելով և այդ իսկ պատճառով հանդուրժողականություն ցուցաբերելով լեհական իշխանությունների նկատմամբ, տարեգիրն ակամայից նշում է, որ ուկրաինացիները և լեհական շլախտան լուրջ հակասությունների մեջ են, որոնք հետագայում, ինչպես հայտնի է, խորապես ցնցեցին Ռեչ Պոսպոլիտան և հանգեցրին 1648-54 թթ. ուկրաինացիների ազատագրական պայքարին:

Այդ մասին մույնպես Կամենիցի ժամանակագրության մեջ 1649 թ. հուլիսին արված գրառում ենք գտնում: «Խըմելիցքին Քրիվինոսն մէյտան ելան,-տեղեկացնում է հայ տարեգիրը,- Լեհաց երկիրն այսչափ զէն արին ... Այսչափ խեղճերն վասն մեր ծովացեալ մեղացն եղաւ»¹⁰: Եվ որպես այս թեմայի շարունակություն՝ 1650 թվի օգոստոսի 18-ի գրառման մեջ կարդում ենք. «Խազախ (կազակական,- Օ. Բ.) ազգն այսչափ արունհեղութիւն արաւ. յետոյ իմաստութեամբ բարեպաշտ թագաւորն Գազիմիրն պարիչութիւն արաւ. զերէ այս ամէն բանս վասն անգէտ պարոնաց եղաւ...»¹¹:

Հայ անամուն տարեգրի այս պերճախոս եզրակացությունը մեկ անգամ ևս մատնանշում է, որ

⁴ Կամենից. Տարեգիրը հայոց Լեհաստանի եւ Ռումինիոյ հաւաստչեայ յաւելումովք, Վենետիկ, 1896, էջ 31:

⁵ Նույն տեղում, էջ 50:

⁶ Նույն տեղում, էջ 65:

⁷ Նույն տեղում, էջ 16:

⁸ Նույն տեղում, էջ 13:

⁹ Նույն տեղում, էջ 46:

¹⁰ Նույն տեղում, էջ 110:

¹¹ Նույն տեղում:

մրա ազգակիցների մեջ կային այնպիսիք, ովքեր ուկրաինացիներին զինված ապստամբության մղող պատճառների նկատմամբ հասկացողություն էին ցուցաբերում, թեև պարզ է, որ պատերազմական գործողությունները վնաս էին հասցնում երկրի խաղաղ բնակչությանը, արհեստագործներին, վաճառականներին, որոնց դասին էր պատկանում ուկրաինական հայության զգալի մասը:

Տարեգրական բոլոր գրառումների մեջ վառ անհատականության դրոշմով նկատելիորեն առանձնանում են այն էջերը, որ գրել է ավագերեց Տեր-Հովհաննեսը: Դրանք հիմք են տալիս եզրակացնելու, որ Տեր-Հովհաննեսը՝ որպես եկեղեցական, ոչ միայն պատշաճ չափով տիրապետել է գրավոր լեզվին, այլև բավականաչափ գիտելիքներ է ունեցել պատմությունից, աշխարհագրությունից, դպրոցությունից և աստվածաբանությունից: Նրա տեքստերի շարադրման ոճը, այս կամ այն իրադարձության գնահատականը, առանձին անձանց բնութագրությունները բավականաչափ հիմք են տալիս ենթադրելու տարեգրի անհատականության, նրա նախընտրած արժեքային համակարգի, նրա համակրանքների և հակակրանքների մասին: Այսպես, օրինակ, նա իրեն համարում է հայ մարդ, որը մեծ զգացմունքայնություն է ցուցաբերում զուտ հայկական թեմաների նկատմամբ, առանձնապես վրդովեցնում է նրան հարևան Մոլդավիայում ապրող իր հայրենակիցների հալածանքը, բայց միևնույն ժամանակ նա նաև Կամենից բերդաքաղաքի կարևոր առևտրական կենտրոնի բնակիչ է: Իսկ նրա համաքաղաքացիների բարեկեցությունը մեծ մասամբ կախված է առևտրից: Այդ պատճառով հասկանալի է նրա դառնանալը. «1571. Թվ. Ռ-ԺԹ. Բարեպաշտ Թագաւորն մեր Ձիկմունդ Ակուստոս խոռվեցաւ ի վերայ քաղաքիս Կամենիցոյ, եւ զտամղան (մաքսատուրքից ազատումը, - Օ.Բ.) որ շնորհել էր քաղաքացոյ՝ որ չէին ի տալ տամղա Իլախի աշխարհ, նայ հիմիկ յայլի հրաման առաւ՝ զի տալցեն. բայց յոյս ունին քաղաքացիքն՝ զի այլի գթացի եւ ողորմեսցի ի վերայ այս աղքատ քաղաքիս, եւ կրկին ազատութիւն շնորհիցէ, որպէս առաջ քան զայս. զի թէ ըստ պատշաճի իրացն երթայցեն եւ հայցեսցեն ի մմանէ, կարող է նոցա զայդ առնել, որպէս քրիստոսասէր Թագաւորն»¹²:

Ընդհանուր առմամբ, Կամենիցի կյանքը՝ նրա բնակիչների առօրյա հոգսերը, քաղաքի և համայնքի ավագանու գործունեությունը, այս կամ այն իրադարձությունը, այդ թվում նաև տարերային աղետները՝ հրդեհ, ջրհեղեղ կամ համաճարակ, պաշտոնավոր հյուրերի այցը, քաղաքացիների ծնունդը և վախճանը, մշտապես գտնվում էին տարեգրի տեսադաշտում: Մյուս գրառումների շարքում իր հուզականությամբ ուշադրություն է գրավում պատումը 1602 թ. մեծ հրդեհի մասին, որն ամսյացրեց երբեմնի բարգավաճ քաղաքի մեծ մասը: Նկարագրության հուզական հագեցածությամբ և գրական միջոցների գործադրմամբ այս գրառումը նկատելիորեն առանձնանում է ավանդական հակիրճ ժամանակագրության ֆոնի վրա: Ահա թե ինչպես է նա նկարագրում այս «հրո պատուհասն». «1602. Թվ. Ռ-ԾԱ. Ազոստոս ամսոյ ԺԶ, օրն երկուշաբթի: Փառք Աստուծոյ Հօր անմահի եւ Ռդոյն Սիածնի եւ Ս. Հոգոյն Աստուծոյ ճշմարտի. այժմ եւ յաւէտ յաիտեանս. ամէն: Եւ արդ պարտ եւ արժան է մեզ զայսպիսի ամենայն ինչ գրով աւանդել, զի առ յապա եկեալքն ընթեռնելով փառս տացեն Աստուծոյ: Ո՛հ, ո՛հ, ո՛հ. եթէ որպէս հրամանն Աստուծոյ եկն ի վերայ մեր, վասն ծովացեալ մեղաց մերոց. այս ինքն է զոր եղել այսմ ամի Կամենից ողորմելի քաղաքիս մեծ եւ անողորմ ցասումն պատուհասի հրոյ, որ բովանդակ եւ ամենայն քաղաքն հրկիզ այրեցաւ ի փոքր եւ ի սուղ ժամանակի. ամենայն ինչ մարդկային ազգի այրեցաւ, եթէ տներ, եթէ խանութներ. ոչ թէ միայն փայտեղէն շէնք՝ այլ եւ քարուկիր շինուածք, եթէ խանութներ, եթէ տներ մեծագոյնք եւ եթէ սրբերներ, ամենայն բարութեամբ, որչափ ինչ ոք ունէր՝ բովանդակ այրեցաւ: Եւ քանզի մեծ եւ ահագին էր ցասումս այս, զի բնաւ ոչ կարացին դէմ կալով շիջուցանել զհուրն, քանզի իբրեւ կայծակունս հրոյ բորբոքելով այրէր եւ տոչորէր զքարինս եւ զփայտս. այլ եւ մարդիկք փոքր ի շատէ այրեցան. այլ և մարդասիրութիւն Աստուծոյ՝ որ զիշեր չէր բանս այս, այլ երեկոյին ժամուն էր, մինչեւ նսեմացաւ՝ ամենայն քաղաքն փռչի եւ մոխիր դարձաւ: Այլ եւս այս մեծ պատուհաս էր, զի եկեղեցիք Հայոց այրեցան, եւ զանկակներ հալեցան ի մէջ պուրճերուն. մեծ եւ ողորմելի կսկիծ եղաւ վասն հրաշալի եւ փառաւոր զանկակներուն. նոյնպէս եւ Իլախ ազգի եւ Ընուզ ազգի եկեղեցիք զանկակներով այրեցան. ո՛հ, թէ մեծ եւ գեղեցիկ զանկակներ այրեցան, զի զին չունէին: Եւ այս եղել վասն չարաչար եւ ազգի ազգի անօրէնութեանս մերում. զի անօրէնութիւնք մեր առաւել բարձրացան քան զգլուխ մեր, ըստ Դաւթայ. զի ոչ գոյ ի միջի մերում սէր եւ միաբանութիւն եւ ոչ խոնարհութիւն, ոչ ի մէջ եկեղեցականաց եւ ոչ ի մէջ աշխարհականաց բարեգործութիւն ոչ գտանի. այլ ամբարտաւանութիւն եւ հպարտութիւն եւ ռիսակալութիւն, ազահութիւն եւ նախանձաբեկութիւն. վասն որոյ մարդասէրն Աստուած պատուհասեաց զմեզ իբրեւ զՍողոմ եւ զԳոմոր: Չոր նմա փառք ի յամենայնի յաղագս այսորիկ. ամէն»¹³:

Տարեգրի այս հուզախոռով պատումը ներկայացնում է տարեգրին ոչ միայն որպէս Կամենիցի քաղաքացու, որն անկեղծորեն սգում է իր հարազատ քաղաքի վիճակը, ոչ միայն որպէս հայ համայնքի անդամի, որի աչքի առջև հրդեհի ճարակ են դառնում, ավերվում՝ հոգևոր սրբավայրերը և մարդկանց

¹² Նույն տեղում, էջ 39:

¹³ Նույն տեղում, էջ 64:

տները, այլև որպես մարդու, որը ցավով է ընդունում այն ժամանակվա Ռեչ Պոսպոլիտայում գոյություն ունեցող հակասությունները:

Պատմագրական արժեք ներկայացնելուց բացի, Կամենիցի տարեգրությունը մասամբ նաև հետաքրքիր աղբյուրաբանական նյութ է հրամցում նույն այդ տարեգրությունը խորապես ու բազմակողմանիորեն ուսումնասիրելու համար: Այսպես, օրինակ, հետազոտողի ուշադրությունը չի կարող չգրավել տարեգրի գրառումներում առկա և նրա գրչով ընդգծված տեղական անվանաբանական և տեղանվանական ցանկը, ինչպես նաև հայկական տառադարձության միջոցով հաղորդվող առավելապես տերմինաբանական և մասնագիտական, ինչպես նաև տվյալ ժամանակ Կամենիցում և նրա շրջակա տարածքում շրջանառության մեջ գտնվող լեզվապաշարը: Այն կարելի է անվանել նույնիսկ միջագային, քանի որ ի նշ լեզուներից ասես փոխառություններ չէր պարունակում այդ լեզուն՝ թուրքերենից, գերմաներենից, լեհերենից, ուկրաիներենից, մոլդավերենից, հունգարերենից և այլն: Այսինքն՝ պատմական արժեք ներկայացնելուց բացի, հայկական այս տարեգրությունը նաև մշակութալեզվաբանական հուշակոթող է, որում դրոշմվել են ժամանակի էթնոլեզվական երևույթները՝ որպես Պոդիլյայում և նրա շրջակայքում տեղի ունեցած պատմական գործընթացի հետևանք: Դրա հետ մեկտեղ Կամենիցի հայկական գաղութի կողմից մասն տարեգրությունների գրառման փաստն ինքնին ուշագրավ է այն տեսակետից, որ հաստատում է նրա ստեղծողների բավարար կրթական մակարդակը, որը գրական լեզվին պատշաճորեն տիրապետել և պատմական, գրական և հոգևոր գիտելիքներ ունենալ է ենթադրում:

Այս ամենը թույլ է տալիս ասել, որ «Կամենիցի տարեգրությունը» կարևոր աղբյուրաբանական հուշակոթող է ինչպես էթնոմշակութային առանձնահատուկ կոնտեքստում, որ ստեղծել են Ուկրաինայում ապրող հայերը տեղական ժամանակի ընթացքում, այնպես էլ մշակութաբանական և պատմական գործընթացների լայն հենքում, որ ունեցել են հայերը ուկրաինական հողերում բնակվելով:

Oleksandr Bozhko (Ukraine)

ARMENIAN CHRONICLE OF TOWN KAMYANETS-PODILSKYI AS AN IMPORTANT HISTORIC AND CULTURAL HERITAGE OF THE 15TH-17TH CENTURIES

“Kamyanets chronicle” was written in the 15-17th centuries in the Ancient Armenian language in the town Kamyanets, where in those times there was a significant Armenian colony. In 1896 the famous armenist Ghevond Alishan (1820-1901) published it in the historical documents edition “Kamenic”. In the report, the chronicle is being perceived as the historical document, which helps to better understand the separate episodes from the history of Ukraine and the neighboring lands, as well as the activities of the historical personalities of those times. The reporter, who translated the “Kamyanets chronicle” into Ukrainian, devotes special attention to the specifics of retelling the events by one of the authors of the writing - the chronicler Ter-Hovhannes, who was keeping notes from 1560 to the 1605. The texts written by him state that Ter-Hovhannes was quite a knowledgeable person, had some knowledge in history, geography, spiritual literature. He as well mastered the classical Armenian language, which is very important as among Armenians of town Kamyanets in that time was widely common Armenian Kipchak language. The scholar divides the texts in the chronicle into 3 categories: a) those that highlight different aspects of lives of the Armenians of the 16-17th centuries, as well as the attitude of Armenians to the events of those times, b) those who describe the internal life of the town Kamyanets and peculiarities of the co-existence of the three main national groups – Ukrainian, Polish and Armenian, c) those devoted to the problems of the Polish-Lithuanian Commonwealth, where Ukrainian lands were the part of it. The chronicler draws his attention to the existing contradictions between separate groups of its population, between orthodox and catholic people. The emotions reflected in the chronics describe the chronicler as a person, who cared about those and other internal contradictions of the society of the Polish-Lithuanian Commonwealth, where the Armenian community was the part. The pages of the chronics reflect the complicated picture of the relations of the powerful countries in that important region, where their strategic interests were interlinked. All that gives us grounds to perceive the “Kamyanets chronicle” not only in the context of the unique etnoculture, which was created during the long time by the Ukrainian Armenians, but on the more wide background of the cultural and historical processes, which took place in that part of the Europe.

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ (ԿՈՄՆԵՆՏԱՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ)

Կիլիկիայի Հայոց պետության պատմության բազմակողմանի հետազոտությունը հայագիտության կարևորագույն ձեռքբերումներից է, որը շուրջ երկդարյա ճանապարհ է անցել: Միքայել Չամչյանի (1786), Էդուարդ Դյուլոբիեի (1861), Վիկտոր Լանգուայի (1863), Դևոնդ Ալիշանի (1885), Գրիգոր Միքայելյանի (1952), Սարգիս Բոռնազյանի (1973) և այլոց ջանքերով բացահայտվել են Կիլիկիայի պատմության հիմնական սկզբնաղբյուրները, քննարկման առարկա դարձել այդ պետության ներքին և արտաքին քաղաքականության շրջադարձային իրադարձությունները: Ի դարի 80-ական թթ. հետաքրքրությունն այս պետության պատմության նկատմամբ նոր թափ ստացավ: Ժ. Դեդեյանի (2003), Լ. Տեր-Պետրոսյանի (2007) և Կ. Մուրաֆյանի (2012) համապարփակ հանրագիտարանային աշխատությունների հրապարակումից հետո կարծես ամբողջացավ Կիլիկիայի Հայոց պետության հետազոտության ևս մեկ փուլ:

Կիլիկիայի Հայոց պետությունը, ծնունդ առնելով Արևմուտքի ու Արևելքի բանուկ խաչմերուկներից մեկում, կամա թե ակամա դարձել է իսլամ-քրիստոնեություն քաղաքակրթական երկխոսության ամենակնճռոտ մարտահրավերներից մեկի՝ խաչակրաց շարժման, մոնղոլական ռազմարշավների և տարածաշրջանի քրիստոնեական ու մուսուլմանական պետական կազմավորումների բազմաբարդ փոխհարաբերությունների ակտիվ մասնակից, որոնք էլ կանխորոշիչ են եղել նրա պատմական ճակատագրի համար:

Այս տեսանկյունից առանձնանում են Բյուզանդական կայսրության դիրքորոշման հետազոտությունը, նրա պետական կառույցների արձագանքը Կիլիկիայի հայկական իշխանության վարած քաղաքականության նկատմամբ: Այստեղ պիտի հաշվի առնել, որ մինչև ԺԱ դարի 70-ական թթ. Կիլիկիա երկրամասը, երբեմն որպես սահմանային գոտի, հարում էր Բյուզանդիայի տարածքներին, սակայն ավելի հաճախ ամբողջությամբ ենթարկվում էր կայսրությանը: 1071 թ. Մանազկերտի ճակատամարտից հետո Բյուզանդական կայսրության ռազմական ուժերը ջախջախվեցին Սելջուկյան Մեծ սուլթանության բանակների կողմից:

Հայկական զինական ուժերը Բյուզանդիայի հետ քաշվելուց հետո փորձում էին հաստատվել Կապադովկիայի, Կիլիկիայի և Հյուսիսային Ատրիքի տարածաշրջանում, ձեռք էին բերում ավատներ: Նրանք հիմնականում կայսրության ստորականներն էին:

Մինչև ԺԲ դարի առաջին կեսը ներառյալ, Կայսրությունը Փոքր Ասիայի և Հյուսիսային Ատրիքի տարածաշրջանում վարում էր չափազանց ակտիվ արտաքին քաղաքականություն, նշանակում էր զորահրամանատար-կառավարիչներ, որոնք նշված տարածքներում ունեին անսահմանափակ ռազմական իշխանություն: Սակայն, հակառակ Բյուզանդիայի եռանդուն տիեզերակալական քաղաքականության, Ռուբինյան հայկական իշխանությանը հաջողվեց միավորել Կիլիկիայի գրեթե բոլոր շրջանները, դուրս գալ Բյուզանդական կայսրության ստորակայի կարգավիճակից և ԺԲ դարի երկրորդ կեսին կատարեց իր առաջին հաջող և նպատակաուղղված դիվանագիտական քայլերը միջազգային փոխհարաբերությունների ասպարեզում, որը երկրին բերեց լիակատար՝ և՛ փաստական, և՛ իրավական անկախություն:

Մինչև ԺԲ դարի առաջին կեսը և անգամ Միքիոկեֆալոնի ճակատամարտը (1176 թ.) ներառյալ, հայկական այն իշխանությունները, որոնք ինքնուրույնաբար շարունակում էին իրենց գոյությունը Կիլիկիայի տարածքի վրա, քաղաքական և տնտեսական սերտ կապերով էին կապված Բյուզանդական կայսրությանը ու ճանաչում էին նրա գերակայությունը: Այդ մասին հիմնականում տեղեկություններ են հաղորդում բյուզանդացի պատմիչներ Աննա Կոմնենեն, Հովհաննես Կիննամոսը և Նիկետաս Խոնիատեսը: Հովհաննես Բ և Մանուել Ա Կոմնենոսների արևելյան քաղաքականության հիմնական խնդիրն էր ելակետային դիրքեր գրավել Սև և Միջերկրական ծովերի ափամերձ շրջաններում, օգտագործելով դինաստիական ամուսնությունները՝ կայսրությանը ենթարկել Մերձավոր Արևելքի խաչակրաց իշխանությունները, բարձրացնել կայսրության միջազգային հեղինակությունը: Այդ քաղաքականությունն իրագործելու հիմնական պայմաններից մեկը Կապադովկիայում, Կիլիկիայում և Հյուսիսային Ատրիքում հաստատված հայկական բնակչության և հատկապես զինական ուժերի հպատակեցումն էր Բյուզանդական կայսրության արտաքին քաղաքական շահերին: Քաղաքական այս

մոտեցումներն էլ իրենց ազդեցությունն են թողել դարաշրջանի բյուզանդական պատմագրական մտքի վրա: Այստեղ կարելի է ընդգծել երկու հակադեմ գործընթաց: Եթե Բյուզանդական կայսրությունը ԺԲ դարի երկրորդ կեսի ընթացքում ավելի ու ավելի էր հեռանում իր առջև դրված նպատակներից և իրար հաջորդող պարտություններով, մանավանդ Միրիոկեֆալոնի ճակատամարտում (1178 թ.), հետզհետե դուրս էր մղվում Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում ծավալված քաղաքական պայքարից, ապա Կիլիկիայի Ռուբինյան իշխանապետությունը հետևողական քաղաքական ձեռքբերումների շնորհիվ հաստատում էր իր դիրքերը տարածաշրջանում և ստանում էր անկախ քաղաքական միավորի կարգավիճակ:

Դեաբոլի հաշտության պայմանագրում (1108 թ.) առաջին անգամ բյուզանդական պատմագրության մեջ և միջազգային վավերագրերում հիշատակվում են Ռուբինյան երկու եղբայրները, որոնք համարվում են Կիլիկիայի տարածաշրջանի Բյուզանդական կայսրության վասալներ: Դեաբոլի պայմանագրում Թորոսն ու Լևոնը համարվում են Բյուզանդական կայսրության, ավելի բառացի՝ կայսերական իշխանության ստորականներ. «γεγονότων ἀνθρόπων τοῦ κράτους ὑμῶν»: Այդ պայմանագիրը կնքված է Բոհեմունդ Անտիոքացու (կամ Տարենտացի) և բյուզանդական կայսր Ալեքս Ա Կոմնենոսի միջև: Բոհեմունդ Անտիոքացին Բյուզանդական կայսրության առջև պարտավորվում է ճանաչել Թորոս և Լևոն իշխանների՝ Լեռնային Կիլիկիայում գտնվող տարածքների անձեռնմխելիությունը, որոնք, ըստ հիշատակված վավերագրի, Բյուզանդական կայսրության ստորականներն են: Վավերագրում օգտագործված ἀνθρόπος բյուզանդական տերմինը, որը հաճախ հանդես է գալիս ժամանակի բյուզանդական մատենագրության մեջ λῆζιον-lige-ի՝ լատինական եզրաբառի ուղեկցությամբ, գրականության մեջ (Լայք, Ֆեռուգա, Դեդեյան) քննարկվել է իր բոլոր հնարավոր հոմանիշներով: Այսօրվա բառապաշարով մասնագետներն այն թարգմանում են վասալ-ստորակա իմաստով¹: Ըստ այդ միջազգային-քաղաքական պայմանագրի՝ Բոհեմունդ Անտիոքացին պարտավորվում էր Բյուզանդական կայսրությանը հանձնել Կիդնու և Հերմոն (Պիրամիս) գետերի միջև ընկած ողջ Դաշտային Կիլիկիան. «Τό τε θέμα τὸ Ποδανδὸν καὶ Λογγινίαν καὶ πρὸς τοῦτοις τὸ στρατηγᾶτον τῆς Ταρσοῦ πόλεως καὶ ἡ Ἀδανα πόλις καὶ αἱ τοῦ Μόψουεστίας ἡ Ἀνάβαρζα καὶ συνελόντα φάναι, ἡ χώρα πᾶσα τῆς Κιλικίας, ὅσην ὁ Κύνδος καὶ ὁ Ἐρμών περιορίζουσιν»²: Նշանակում է Կիլիկիայի դաշտային հիմնական հատվածը՝ Պողանդոն և Լոնգինիա թեմերը, Տարսոն, Ադանա, Մոպսուեստիա և Անավարգա քաղաքների հետ միասին 1108 թ. պետք է անցնեին Բյուզանդական կայսրությանը: Մնում է միայն ավելի ուշ շրջանի սկզբնաղբյուրների՝ հաղորդած վկայությունների հիման վրա վերականգնել Ռուբինյանների կազմավորած սկզբնական ավատի աշխարհագրական դիրքը: Ըստ հայկական, ասորական, արաբական սկզբնաղբյուրների Կիլիկիայի Ռուբինյան հայկական իշխանությունը մինչև ԺԲ դարի 30-ական թվականները տարածվում էր գերազանցապես Տավրոսյան լեռներից գահավիժող Մարոս գետի ջրային ավազանի լեռնային շրջանների վրա:

Ինչ խոսք, Բյուզանդական կայսրությունն այդ տարածքներն էլ համարում էր կայսրության անբաժանելի մասեր, իսկ նրա իշխաններին՝ կայսրության հավատարիմ ծառաներ կամ ստորականներ: Դրա ապացույցներից է Էրմիտաժում պահպանվող մի արձնե բյուզանդական կնիք, որը, ըստ Շանդրովսկայայի, պատկանել է Թորոս Ա Ռուբինյան իշխանին: Իբրև վերջինիս տիտղոս վկայված է սեբաստոս բյուզանդական պատվանունը: Այդ տիտղոսը հանդիպում է նաև Թորոս Ա իշխանի թողած Անավարգայի Ս. Ջորավար եկեղեցու հայկական արձանագրության մեջ, որը հրապարակել է Գևորգ Ալիշանը: ԺԲ դարի ընթացքում բյուզանդացիները նման պատվանուններ շնորհում էին թե՛ Ռուբինյան և թե՛ Հեթումյան իշխանական ընտանիքների պայազատներին: Հետաքրքիր է, որ Աննա Կոմնենեի պատմության մեջ ընդօրինակված Դեաբոլի պայմանագրի արձագանքը պահպանվել է ժամանակակից և ուշ շրջանի հայկական, արաբական և ասորական սկզբնաղբյուրներում՝ «Թորոսի երկիր» կամ «Լևոնի երկիր» արտահայտությունների մեջ (տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, Վահրամ Բաբունի, Ուսամա իբն Մունկիզի, Միքայել Ասորի, Անանուն Եդեսացի, ևն):

ԺԲ դարի ընթացքում հզորացած կիլիկյան իշխանները պայքար են սկսում Կիլիկիայում անկախ իշխանապետություն ստեղծելու համար և դարավերջին հասնում են հաջողության: Այդ պայքարում Ռուբինյանները բախվում էին Բյուզանդական կայսրության պետական շահերի հետ: Այդ զարգացումների ազդեցության ներքո էլ ձևավորվում է Կիլիկիայի հայկական պետության և նրա ղեկավար-

¹ **Քոզոյան Ա.**, *Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին*, Երևան, 1988, էջ 71-75:

² **Honigmann E.**, *Die Ostgrenze des byzantinischen Reiches von 369 bis 1071*, Bruxelles, 1935, p. 128.

ների նկատմամբ Բյուզանդական կայսրության պաշտոնական վերաբերմունքը, որն արտացոլված է Կոմենենոսների դարաշրջանի պատմագրության մեջ և մատենագրական երկերում: ԺԲ դարի երկրորդ կեսի բյուզանդացի պատմիչ Հովհաննես Կիննամոսը, լռելով ԺԲ դարի 20-30-ական թթ. տեղի ունեցած մի շարք իրադարձությունների մասին, որոնց պատճառով թշնամանք էր առաջացել Կիլիկիայի հայկական իշխանության և կայսրության փոխհարաբերություններում, պատմում է 1136-38 թթ. Հովհաննես Կոմենենոսի ձեռնարկած Կիլիկյան ռազմարշավի մանրամասների մասին: Այս տեղեկություններից տեղեկանում ենք, որ Դեաբոլի պայմանագրին հաջորդած երեք տասնամյակների ընթացքում Կիլիկիայի հայկական իշխանությունը Լևոն Ա Ռուբինյան իշխանի ղեկավարությամբ ժամանակի ընթացքում զավթել է Դաշտային Կիլիկիայի ողջ տարածքը և պաշարել է անգամ Իսապրիայի մայրաքաղաք Սելևկիան: Բյուզանդացի պատմիչներ Հովհաննես Կիննամոսը և Նիկետաս Խոնիատեսը հիշատակված իրադարձության մասին խոսելիս ամենայն հավանականությամբ իրենց ձեռքի տակ ունեցել են Հովհաննես Կոմենենոս կայսեր, Կիլիկիայից և Հյուսիսային Ասորիքից բյուզանդական արքունիք ուղարկված պաշտոնական զեկուցագրերը, ականատեսների վկայությունները, մատենագրական գործիչների արձագանքները, որոնց հիման վրա էլ կայսրության մեջ ձևավորվում էր հասարակական կարծիքը: Այդ վավերագրերի արձագանքներն ամենուր են հիշատակված բյուզանդական սկզբնաղբյուրներում:

Նմանատիպ երկերից է ԺԲ դարի նշանավոր բյուզանդադի մատենագիր Միքայել Իտալիկոսի «Ներքողյանը» նվիրված բյուզանդական կայսր Հովհաննես Բ Կոմենենոսին: Այն, ըստ մասնագետների, գրված է ամենայն հավանականությամբ ոչ ավելի ուշ, քան 1139 թ. Կոստանդնուպոլսում, հիշատակված իրադարձություններից անմիջապես հետո, թեպետ որոշ հատվածներ կարծես թե անմիջական արձագանքն են այդ արշավանքի ժամանակ տեղի ունեցած որոշակի իրադարձությունների: Ըստ Բոլոնիայում պահպանվող Bononien 2412 ձեռագրի՝ երկի բնագիրը հրապարակել է Ֆրանչեսկա Ֆուսկոն 1970 թ.: Բնագրի «պատմական հետաքրքրություն ներկայացնող» հատվածները 1984 թ. հայերեն է թարգմանել և ուշագրավ հետազոտությամբ հրապարակել երջանկահիշատակ բյուզանդագետ, ՀՀ ԳԱԱ անդամ Հրաչ Բարթիկյանը³: Հիմնվելով այս սկզբնաղբյուրի վրա՝ նա հայագիտության մեջ առաջին անգամ ցույց է տվել, որ Լևոն Ա Ռուբինյան իշխանը (1129-1137) «իրեն հռչակել էր թագավոր Հայոց, իր երկիրը՝ թագավորություն, վերակենդանացած Արշակունյաց թագավորություն, կապել թագ և հագել թագավորական կարմիր կոշիկներ» (ՊԲՀ, 4, էջ 219):

Այս «Ներքողյանը» էլ մեր հիշատակած այն երկերից է, որի հիման վրա Բյուզանդական կայսրության Էլիտայի մոտ կարծիք էր ձևավորվում Կիլիկիայի հայկական իշխանության նկատմամբ և բյուզանդական պաշտոնական պատմագրության կողմից օգտագործվում էր իբրև սկզբնաղբյուր: Իհարկե պետք է ընդգծել, որ անտիկ հռետորական արվեստի բոլոր օրենքներով գրված այս երկը առաջին հերթին Հովհաննես Բ Կոմենենոս կայսեր գործունեության, հատկապես նրա վերջին մեծագործության՝ Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայում սանձազերծած պատերազմի գովերգությունն է Միքայել Իտալիկոսի կողմից: Բյուզանդացի հեղինակը ճարտասանական տարբեր միջոցներով զուգահեռներ է անցկացնում իր հերոսի /Հովհաննես Բ Կոմենենոս/ և պատմական գործիչների (Ալեքսանդր Մակեդոնացի, Պոմպեոս, Լուկուլոս), անտիկ աստվածությունների (Աթենաս աստվածուհի, Չևս) և հերոսների (Հերակլես, Աքիլլես, Պերսևս ևն) հետ, ըստ աստվածաշնչյան պատկերացումների՝ Իսրայելի փրկիչ, փարավոնի կործանող և Աստծո հրեշտակ է անվանում իր հերոսին: Ըստ Միքայել Իտալիկոսի. «Աստված կարող է երկրաշարժով երկիրը սասանել, իսկ թագավորը հնարքներով է այն տեղաշարժում...» (էջ 222): «Ներքողյանում» վարպետորեն միաձուլված են անտիկ դարաշրջանին և Աստվածաշնչին հատուկ դարձվածքներ, ոճեր և հայտնի պատմական գործիչների անուններ:

Ըստ Միքայել Իտալիկոսի՝ Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայում կայսեր քաջագործությունների մասին լուրերը կայսերական նամակների շնորհիվ հասել են մայրաքաղաք Կոստանդնուպոլիս և առիթ են հանդիսացել բազմամարդ հավաքների, որտեղ պատմվել են այդ քաջագործությունների մասին, ոգևորելով հավաքվածներին (էջ 221): Այս տողերը մեզ թույլ են տալիս ենթադրել, որ կայսերական իշխանությունները ժամանակ առ ժամանակ փորձել են ազդել երկրի քաղաքական վերնախավի աշխարհընկալման վրա, ճարտասանության միջոցներով միմյանց հակադրելով բյուզանդական արքունիքի տեսանկյունից խրախուսելի բարին ու առաքինին և մերժման արժանի չարն ու անբարոյականը: Եթե բարին ու առաքինին բյուզանդական կողմն է հանձին կայսեր, ապա չարն ու անբարոյականը նրա թշնամիներն են, ում դեմ «արդարացի» պատերազմ են սանձազերծում իրենց աստվածահաճո թա-

³ Բարթիկյան Հր., Միքայել Իտալիկոսի «Ներքողյանը» և Կիլիկիայի հայոց առաջին թագավորի խնդիրը, ՊԲՀ, 1984, 4, էջ 216-224:

գավորները: Միքայել Իտալիկոսը բառախաղով և քամահրական արտահայտություններով է ներկայացնում Կիլիկիայում ինքնանկախ իշխանություն ստեղծած Լևոն Ա-ին՝ նրան անվանելով βασιλίσκος, որը հունարենում երկիմաստ է. նշանակում է թե՛ «փոքրիկ (նվաստ) արքա», թե՛ «արքայիկ օձ» (քարք): Կայսերը համեմատում է երկնքում սավառնող արծվի հետ, որին թշնամի գեռումները (քարք, առյուծ և վիշապ) տրորվում են նրա ոտքերի տակ: Այստեղ արհեստավարժորեն օգտագործվում է 90-րդ սաղմոսի 13-րդ տունը՝ երկիմաստ կիրառելով λέων-λέοντα (առյուծ) գոյականը, ակնարկելով Ռուբինյան իշխանի անունը: Միաժամանակ, բյուզանդական մատենագիրը Կիլիկիայի իշխանության պահպաններին անվանում է «Արշակունիների տոհմ», որը. «հզորագույնն է, ամեն մի ցեղից ավելի անհաշտ, նրանց զորքը՝ մարտական, որ բազմիցս ընդդիմակայեց պարսիկներին և հռոմեացիներին, Պոմպեոսին կատարյալ կործանման դուռը հասցրեց» (էջ 223): Բերված հատվածից կարելի է ենթադրել, որ Միքայել Իտալիկոսը Կիլիկիայի պաշտպաններին համարում է Արշակունյաց տոհմի ներկայացուցիչներ, ինչն էլ Հր. Բարթիկյանին իրավացիորեն հանգեցրել է այն մտքին, որ Լևոն Ա-ը իրեն Արշակունի է հայտարարել: Այնուամենայնիվ, ավելի հավանական ենք համարում գիտնականի այն պնդումը, որ. «Հռետորը (Միքայել Իտալիկոսը-Ա.Բ.) շատ լավ գիտակցում էր, որ Հովհաննես Կոմնենոսի հզորությունն ու «հերոսությունը» ընդգծելու, իր կուռքին վեհացնելու համար պետք է բարձրացնի և նրա հակառակորդին, նրա դեմ կայսեր տարած հաղթանակը է՛լ ավելի մեծացնելու, ընդգծելու համար»: Այդ իսկ պատճառով, Միքայել Իտալիկոսը, բերված նախադասությունից անմիջապես հետո հավելում է. «Բայց հակառակ դրան, քո նիզակից նրանք խայտառակ պարտություն կրեցին» (էջ 223): Այդ իսկ պատճառով Արշակունիների հիշատակությունը Միքայել Իտալիկոսի երկում կարելի է համարել իբրև բյուզանդական հռետորի գրական հնարանք:

«Ներքողյանի» հաջորդ դրվագից պարզ երևում է, որ Միքայել Իտալիկոսը և Հովհաննես Կինմանուր ունեցել են մի ընդհանուր սկզբնաղբյուր, որը մեզ չի հասել: Այդ մասին է վկայում Կիլիկիայի պաշտպանների կողմից բյուզանդական բաբանները կրակի մատնելու և այդ աղետից հնարամտորեն խուսափելու պատմությունը (էջ 223-224): Թեպետ Միքայելը աղետից խուսափելու հնարանքը վերագրում է կայսերը, սակայն Հովհաննես Կինմանուս պատմիչը բաբանները հում աղյուսով ծածկելու առաջարկի հեղինակ է համարում Հովհաննես Կոմնենոսի որդի Իսահակին, նշելով ևս մեկ այլ մանրամասն. դեպքը տեղի է ունեցել Անավարզայի պաշտպանության ժամանակ (I.C., p. 17): Հավանաբար հռետորական շեշտադրումը ավելի ընդգծելու հետևանք է նաև հետևյալ արտահայտությունը. «Բայց դու թիկունքդ շրջելով, ու՞ր ես փախչում ապստամբ ու բռնակալ, սուտանուն թագավոր (ψευδώνυμε βασιλεῦς)» (էջ 224): Պարզապես բյուզանդական իրավական պրակտիկայում ծանրագույն հանցագործություններից է տիրոջ դեմ ապստամբելը, նրա թշնամիների հետ համագործակցելը:

Հոգևորական Միքայել Իտալիկոսի⁴ և արքունական վերնախավի համար հայերը և Լևոն իշխանը «քարքարոս» են. «Դիոսկորոսի հետևորդ և Սևերոսի ուղեկից» (էջ 221): Բանաձև, որը հակերանք պիտի ծներ ուղղափառ բյուզանդացու պատկերացումներում այդ աղանդին հետևող քրիստոնյաների նկատմամբ, թեպետ Հայոց եկեղեցին ի սկզբանե նգովել է Դիոսկորոսյան հերձվածը: ԺԱ դարի վերջի և ԺԲ դարի առաջին կեսի մատենագիրներ Եվթիմիոս Ջիզաբենոսի և Աննա Կոմնենեի մեզ հասած երկերում ևս հեղինակները շեշտադրում են Հայոց հերձվածի վտանգավորությունը: Սակայն ժամանակակիցներին և բյուզանդական արքունիքին ավելի մեծ մտահոգություն էր պատճառում այն փաստը, որ Լևոն իրեն թագավոր էր հռչակել և համապատասխանաբար թագավորական իշխանության նշաններ (դիադեմա, կարմիր կոշիկներ) սեփականել: Այստեղ խոսքն ամենայն հավանականությամբ Լևոն Ա իշխանի կողմից Բյուզանդական կայսրության նկատմամբ իր ստորակայական պարտավորությունները չկատարելու, կայսրությանն ընդդիմադիր քաղաքական ուժերին սատարելով՝ նրա դեմ Դանիշմանյան ամիրայությանը և Անտիոքի լատին իշխանապետությանը դաշնակցելու մասին է: Թեպետ Կիլիկիան ժամանակ առ ժամանակ դաշնակցում էր Դանիշմանյան ամիրայությանը և Անտիոքի լատին դքսությանը, այնուամենայնիվ դժվարանում ենք պատկերացնել 1129-1136 թթ. այնպիսի մի իրավիճակ, որը թույլ տար Ռուբինյան իշխան Լևոնին պաշտոնապես մերժել Բյուզանդական կայսրության գերակայությունը և թագավոր օծվել: Նման կեցվածքը Միքայել Իտալիկոսը բնութագրում է իբրև «ամբարտավանություն» և «զալիրշություն» (էջ 221): Միքայել Իտալիկոսը, սակայն, լռության է մատնում այն հանգամանքը, որ Հովհաննես Կոմնենոսի եղբայր Իսահակը ևս մասնակցել է Իկոնիայի

⁴ Նա 1143 թ. ընտրվել է Փիլիպուպոլիս քաղաքի մետրոպոլիտ:

սուլթանության Դանիշմանյան ամիրայության և Կիլիկիայի իշխանապետության ստեղծած հակաբյուզանդական դաշինքին:

Մեր խորին համոզմամբ, Ռուբինյան իշխանությունը առանց հզոր արտաքին հովանավորության, չէր կարող միայնակ նման որոշում կայացնել: Մնում է ենթադրել, որ Դանիշմանյանների և Անտիոքի դքսության հետ դաշնակցելու փորձերը, որոնք կատարվում էին ի հեճուկս Բյուզանդական կայսրության, վերջինիս այնքան էին մտահոգել, որ նա ամեն գնով փորձում էր վերացնել Կիլիկիայի հայկական իշխանությունը, որը ըստ Բյուզանդական կայսրության քաղաքագետների, հիմնական խոչընդոտն էր դարձել Դեաբոլյան խաղաղության պայմանագրի (կամ բյուզանդական արտաքին քաղաքականության) հիմնական դրույթները գործադրության մեջ դնելու համար: Բյուզանդական կայսրությունը պահանջում էր Կիլիկիայի հայկական իշխանապետությունից անվերապահորեն ենթարկվել իրեն: Կայսրությունը հաշվի չէր առնում այն հանգամանքը, որ իր ուժերն անբավարար էին պաշտպանելու համար Կիլիկիայի տարածքը, որին հասնելու համար հարկավոր էր շրջանցել Դանիշմանյան ամիրայության և Իկոնիայի սուլթանության տարածքը: Բյուզանդական կայսրության թուլությունը ակնհայտ դարձավ Կիլիկիայի տարածքից 1138 թ. բյուզանդական զորքերի հեռանալուց հետո, երբ Իկոնիայի սուլթանությունն ու Դանիշմանյան ամիրայությունը ներխուժեցին հայկական իշխանության տարածք: Հովհաննես Կոմնենոսը ստիպված էր 1143 թ. կրկին ռազմարշավ կազմակերպել դեպի Կիլիկիա՝ փրկելու համար Բյուզանդիայի քաղաքական հեղինակությունը տարածաշրջանում: Քիչ անց՝ 1158 թ., նրա որդի Մանուել Ա-ը ստիպված էր վերստին պաշտոնապես ճանաչել Թորոս Բ-ի կողմից Ռուբինյան իշխանապետության վերականգնումը Թորոս Բ-ի գլխավորությամբ:

Azat Bozoyan (Armenia)

CILICIAN ARMENIA IN THE PERCEPTION OF BYZANTIN EMPIRE (during the Komnenian period)

I will attempt to pinpoint the official names and nomenclature of Cilician Armenia (periods of the principality and the kingdom) and to provide an accurate picture of the relationship of Byzantium and its successor the Empire of Nicea with the Armenian state.

Էդուարդ Դանիելյան (Հայաստան)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹՈՒՐԶ-ԱԴԻԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԵՂՃԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց ավելի քան հինգհազարամյա էթնո-հոգևոր և մշակութային ակունքներով պետականության վկայություններն են Հայկական լեռնաշխարհի հնագիտական և ճարտարապետական հուշարձանները, ժայռապատկերները և սեպագիր արձանագրություններն ու պատմական բազում այլ սկզբնաղբյուրներ: Համաշխարհային մշակույթի գանձարանում ունեցած մեծ ավանդով, որպես քաղաքակրթության բնօրրան՝ Հայոց հայրենիքը՝ Հայաստան-Արմենիան¹, հնադարյան՝ սեպագիր (Ք.ա. III-I հազ. կեսեր) և անտիկ, ու միջնադարյան գրավոր սկզբնաղբյուրներում համապատասխանաբար վկայված է Արատտա (Արարատ), Արմանում (Արմանի-Արմի), Հայասա, Նաիրի, Արարատ (Ուրարտու)-Բիայնա՝ Վան, Արմե, Արմինա, Մեծ Հայք և Փոքր Հայք² անուններով:

Հակառակ պատմական փաստերի՝ թուրք կեղծարարները նենգափոխում են համաշխարհային և, հատկապես Հայաստանի պատմությունը: Հետևելով օսմանյան և երիտթուրքերի իշխանությունների ցեղասպան քաղաքականությունից բխող կեղծարարությանը՝ 1930-ական թթ. Քեմալ Աթաթուրքի հրահանգով քոչվոր թուրքերի համար մոզոնվեց գոյություն չունեցած «հին պատմություն»՝ շինծու «թուրքական պատմության թեզը», որը խիստ քննադատության է ենթարկվել հայ և օտար պատմաբանների

¹ David M. Lang, Armenia: Cradle of Civilization, London, 1970, p. 9.

² Բուն Փոքր Հայքի հետ մեկտեղ Կիլիկիայի Հայաստանը եվրոպացի ճանապարհորդները նույնպես կոչել են *Փոքր Հայք*՝ *l'Arménie Mineure*, ինչպես նաև՝ *Հայաստանի քաղաքություն*՝ *royaume d'Arménie* [տե՛ս Deux voyages en Asie au XIII^e s., Guillaume de Rubruquis et Marco Polo, Paris, 1888, p. 156, Guillaume de Rubrouck, Ambassadeur de Saint Louis en Orient, récit de son voyage, traduit de l'original latin et annoté par Louis de Backer, Paris, 1877, p. 243]:

կողմից: Մ. Զուլայանը քննադատել է Հայոց պատմությունը խեղաթյուրող թուրք կեղծարարներին³: Քլայվ Ֆոսն իր «Երբ թուրքերը քաղաքակրթեցին աշխարհը» հոդվածում, քննադատելով պատմությունը կեղծող թուրքական «թեզը», նշել է. «Դա բացարձակ անհեթեթություն է, քանզի, հատկապես, ակնառու է, որ չինացիները և հնդիկները թուրքեր չէին»: Նաև շումերների ու խեթերի ժառանգության «սեփականացմամբ» թուրքական հորինված «թեզում» մոլագար տգիտությամբ ասվում է. «Հնագիտությունը բացահայտում է թուրքերի քաղաքակրթության վեհությունը: Թուրքերը Ք.ա. մոտ 5000թ. մտան իրենց սրբազան երկիրը՝ Անատոլիա և հազար տարի անց հիմնեցին խեթական քաղաքակրթությունը»: Ֆոսը, մերկացնելով թուրքական այդ կեղծ «թեզի» պանթուրքական ուղղվածությունը, նշել է. «Աթաթուրքը իր ձեռքբերումներում մեծագույնս պարտական էր նախորդ՝ հեղինակագրված վարչակարգին՝ «երիտ-թուրքերին»...»⁴: Հայոց ցեղասպանության համար տարածքային փոխհատուցումից, Հայոց պահանջատիրությունից խուսափելու նպատակով Թուրքիան ցեղասպանության ժխտման հանցավոր քաղաքականությանն է ծառայեցնում պատմության նենգափոխումը: Թուրք իշխանությունները, հատկապես Եվրոպական միություն մտնելու նպատակով, 1980-ական թթ. փորձում են կեղծիքներով փոխել դեռևս XIX դ. թուրքերի մասին ձևավորված համընդհանուր ծայրահեղ բացասական պատկերացումը⁵: Եվրապալամենտը 1987թ. ընդունեց «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը⁶, ճանաչելով Հայոց ցեղասպանությունը՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ 1948թ. ընդունած «Ցեղասպանության հանցագործության կանխման և պատժման կոնվենցիայի» հիման վրա: Իսկ, օրինակ՝ Թուրքիայի վարչապետ (1983-1989 թթ.)⁷ Թ. Օզալը, կեղծելով պատմությունը և քողարկելով թուրքերի կատարած հանցագործությունները, նրանց հանդեպ եղած խիստ բացասական պատկերացումը ներկայացրել է լոկ որպես կրոնական ատելության հետևանք⁸: Այնինչ, դեռևս 1915թ. մայիսի 24-ի հայտարարությամբ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի կառավարությունների՝ Թուրքիային ներկայացված «մարդկության և քաղաքակրթության դեմ» գործած հանցագործությունների մեջ մեղադրանքը՝ Հայոց ցեղասպանության միջազգային առաջին ճանաչումն ու դատապարտումն է: 1917թ. դաշնակիցները, դիմելով ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնին, հայտարարել էին, որ իրենց նպատակներից մեկն է «Օսմանյան կայսրությանը դուրս մղել Եվրոպայից՝ որպես քաղաքակրթության համար որոշակիորեն օտարի»¹⁰:

Տխրահոշակ թուրքական «թեզի» մարտակառքին են լծվել Թուրքիայի հետ համագործակցող հետազոտական կենտրոնները և հեղինակները, որոնց հրապարակումներում հնագիտական նյութերի մեկնությունները կեղծված տեղեկատվությամբ քաղաքականացվում են, և Արևմտյան Հայաստանի ու Փոքր Ասիայի պատմամշակութային ժառանգությունը թալանի միջոցով վերագրվում է գոյություն չունեցած «հին Թուրքիային»¹¹: Սակայն այսպիսի կեղծիքը բախվում է այն պատմական փաստին, որ

³ **Մանվել Զուլայան**, Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր), Երևան, 1995:

⁴ **Clive Foss**, “When Turks Civilized the World”. - History Today, Vol. 55, 2005, pp. 10-16.

⁵ Հիշենք Վ. Հյուգոյի («Թուրքերն անցել են այնտեղով, ամեն ինչ ավերված է և սգավոր», **V. Hugo**, Oeuvres complètes. Poésie I. Paris, 1985, L'enfant, p. 476) ու Մ. Տվենի («Մուլթան Արդու Ազիզը քնությամբ և վարժվածությամբ զարշնի, վայրենի, տգետ, հետամնաց, անահավատ ժողովրդի ներկայացուցիչ է, որի կառավարման երեք շնորհներն են՝ բռնապետությունը, ազատությունը և արյունը», **M. Twain**, The Innocents Abroad, New York, 1964, p. 75) տողերը:

⁶ http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc_meeting/resolutions/1987_07_2_0.pdf:

⁷ 1986թ. թուրքական ոստիկանությունը ձերբակալեց Հ.Պոտտոլուին՝ հանցանք համարելով «Բրիտաննիկա» հանրագիտարանի թուրքերեն հրատարակությունում նրա կատարած հետևյալ նշումը. «Խաչակրաց արշավանքների ժամանակ Կիլիկիայի լեռնային շրջանը Հայկական Կիլիկյան թագավորության գերիշխանության տակ էր» (տե՛ս **Speros Vryonis Jr.**, The Turkish State and History: Clio Meets the Grey Wolf, New York, 1993, pp. 107-108):

⁸ **Turgut Özal**, “Turkey in Europe and Europe in Turkey”, Revised English edition, printed in Great Britain, 1991, pp. 233-234. Այս գերիավակնոտ վերնագրով կեղծիքը 1988թ. հրատարակվել է ֆրանսերեն [Ս. Վրիոնիսը խիստ քննադատաբար նշել է, որ Օզալը «փորձել է դիտարկել Թուրքիայի եվրոպական կապերը Նոր քարի դարից՝ Ք.ա. շուրջ 7000-6000-ից մինչև ներկան» (**S. Vryonis**, op. cit., p. 2)], այնուհետև անգլերեն թարգմանությամբ, որտեղ Օզալը, նույն համառությամբ կեղծելով պատմական փաստերը, պնդել է. «Այդ մենք էինք, որ իրականացրինք նեոլիթյան հեղափոխությունը...» (**Turgut Özal**, op. cit., p. 346):

⁹ History of the United Nations War Crimes Commission and the Development of the Laws of War, London: His Majesty's Stationery Office, 1948, p. 35, տե՛ս **W. A. Shabas**, Genocide in International Law, The Crime of Crimes, Cambridge, 2000, p. 16.

¹⁰ **A. P. Hacopian**, Armenia and the War. With a Preface by the Rt. Hon. Viscount Bryce, London, New York, Toronto, 1917, <http://historyarmenia.org/2854.html>; Ch.III.

<http://net.lib.byu.edu/~rdh7/www/comment/Armenia2/ArmeniaTC.htm>.

¹¹ **Seton Lloyd**, “Ancient Turkey: a Traveller's History”, London, 1999, **A. Sagona, P. Zimansky**, “Ancient Turkey”, London, 2009, **A. Sagona**, The Heritage of Eastern Turkey: From Earliest Settlements to Islam, Melbourne, 2006 և այլն: Բրիտանական թանգարանի 54-րդ սրահը կեղծված անվանվել էր «Հին Թուրքիա» (քննադատությունը տե՛ս **E. L. Danielyan**, Progressive British Figures' Appreciation of Armenia's Civilizational Significance Versus the Falsified «Ancient Turkey» Exhibit in the British Museum, Yerevan, 2013): Իսկ 2013թ. հուլիսից այն վերանվանվել է «Անատոլիա և Ուրարտու» (վերջինս, օրինակ՝ Ռուսաստանի կապակցությամբ սխալ նշված է «աքեյյան Անատոլիայում», տե՛ս http://www.britishmuseum.org/explore/highlights/highlight_objects/mc/i/griffinheaded_ivory_figure.aspx): Բայց, քանի որ

սելջուկ և օղուզ ցեղերը անդրալթայան տափաստաններից ներխուժել էին Առաջավոր Ասիա XI դ. 2-րդ կեսից ոչ շուտ: Ա. Թոյնբեյն նշել է, որ նրանք թուրք փախստականների ամանուն ավագակախումբ էին՝ մարդկային թափափուկների մի չնչին բեկոր¹²:

Քրիստոֆեր Ուոքերը, 1990թ. բացահայտելով Էսաթ Ուրասի կեղծարարությունները, եզրակացրել է. «Ուրասը Հայաստանի պատմության և նույնիսկ իրականության մասին ոչ մի պատկերացում չունի»¹³: Հայոց պատմության և պատմական աշխարհագրության կեղծարարությունը Ուրասը ծառայեցրել է Հայոց ցեղասպանության ժխտման՝ Թուրքիայի վարած հանցավոր քաղաքականությանը¹⁴:

XX դ. վերջին Ռ. Կապլանը, ճանապարհորդելով Արևմտյան Հայաստանում, հասել էր մինչև Տրապիզոն՝ վկայելով, որ բացառությամբ հազվագյուտ ավերակների, «հայկական քաղաքակրթության բոլոր հետքերը ջնջված էին...»¹⁵:

Հայոց պատմության թուրք-աղբրեջանական կեղծարարության բազում օրինակներից է 2009թ. գերմանական հնագիտական ինստիտուտի հովանավորությամբ Բաքվում տեղի ունեցած հակագիտական խորագրով՝ «Աղբրեջան՝ Արևելքի և Արևմուտքի միջև երկիր. գիտելիքի և տեխնոլոգիայի փոխանցում Բ.ա. VII-IV հազարամյակների «առաջին գլոբալիզացիայի» ժամանակ» միջազգային գիտաժողովը¹⁶: Այլ գեկուցողների թվում, թուրք և աղբրեջանական կեղծարարները Հայկական լեռնաշխարհի վայրերը և պատմական ժառանգությունը բացարձակ նենգափոխմամբ ներկայացրել են որպես «Արևելյան Անատոլիայի» և «Աղբրեջանի» հնավայրեր: Սակայն հայտնի ճշմարտություն է, որ «Արևելյան Անատոլիա» տերմինը ոչ մի կապ չունի Փոքր Ասիայից արևելք գտնվող Հայկական լեռնաշխարհի տարածքի հետ: Իսկ ուշ ժամանակներում անդրալթայան տափաստաններից մերձկասպյան և Կուրի ձախափնյակի որոշ շրջաններ ներխուժած օղուզ-թյուրքական ծագումով ցեղերին օգտագործելով պանթուրքական ազդեցիկ նպատակներով՝ 1918թ. մայիսի վերջից արհեստական՝ «Արևելակովկասյան մուսուլմանական»¹⁷ կամ «Աղբրեջանի թաթարական հանրապետություն» ստեղծելիս¹⁸ կեղծ կիրառված «Աղբրեջան» անունը¹⁹ կողոպտվել էր Իրանի հյուսիսարևմտյան՝ Ադարբայջան-Աղբրեջան երկրամասի (անտիկ սկզբնաղբյուրների՝ Ատրոպատենե, հայկական սկզբնաղբյուրների՝ Ատրպատական) անունից: Բաքվում (1918. 09. 15-17, 1990. 01. 13-19), Շուշիում (1920. 03. 23-26), Սումգայիթում (1988թ. 02. 27-29), Գանձակում (Կիրովաբադ, 1988թ.), Մարաղայում (1992. 04. 10) ու այլ վայրերում հայ բնակչության դեմ ցեղասպան գործողություններ իրագործած «Աղբրեջան» հորջորջվող ավագակապետությունը, Արցախ-

Անատոլիան համապատասխանում է միայն Փոքր Ասիային, իսկ Հայոց Արարատյան (Ուրարտու)՝ Վանի թագավորությունն ընդգրկում էր Հայաստանի ամբողջական տարածքը՝ Հայկական լեռնաշխարհը, ուստի անհրաժեշտ է 54-րդ սրահի հնագիտական նյութերը ներկայացնել «Հին Հայաստան» և «Հին Փոքր Ասիա» անվանումները կրող երկու ցուցասրահներում՝ ճշգրիտ ժամանակագրական, պատմական և աշխարհագրական տվյալներով:

¹² Arnold J. Toynbee, A Study of History, vol. II, London, New York, Toronto, 1955, p. 151.

¹³ Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland, 1990, N I, p. 166.

¹⁴ Esat Uras, "The Armenians in History and the Armenian question", An English translation of the revised and expanded second edition, Ankara, 1988, pp. 123, 155. Հայոց պատմության նենգափոխման նպատակով Ուրասի կողմից ստահող տեղեկություններ օգտագործելու օրինակներից է հետևյալ կեղծիքը. «Պատերազմի սկզբին հայերի և թուրքերի միջև լարվածությունը շատ մեծ էր: Չորսհազարի ընթացքում սովետական արտադրության հրացաններ հայտնաբերվեցին շատ հայերի մոտ... Այս հանգամանքներում էր, որ 1915թ. ապրիլին բռնկվեց հայկական ապստամբությունը» (Ibid., p. 884): Սակայն 1915թ. «սովետական արտադրության» զենքի մասին խոսք լինել չի կարող, քանզի մինչև 1917թ. նոյեմբերը խորհրդային իշխանություն գոյություն չի ունեցել Ռուսաստանում (Ուրասի կեղծիքների քննադատությունը տես՝ Ռ. Սահակյան, Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան, 2005, էջ 154, 256): Իսկ 1920թ., ի պատասխան Լենինին ուղարկած Քեմալի նամակի, որով նա նյութական օգնություն էր խնդրում, իբրև թե, միացյալ ուժերով՝ «հանուն բոլոր ճնշվածների ազատության» համաշխարհային իմպերիալիզմի դեմ կռվելու համար (տես՝ Международная жизнь, 1963, N 11, с. 147-148), խորհրդային կառավարությունը հանցավոր կերպով զենք, զինամթերք ու ոսկի տրամադրեց հենց թուրքերին, որոնք աշնանը, իրենց ցեղասպան քաղաքականությամբ՝ հայկական տարածքների բռնազավթումը շարունակելու նպատակով, պատերազմ սանձազերծեցին Հայաստանի Հանրապետության դեմ:

¹⁵ Robert D. Kaplan, Eastward to Tartary, New York, 2000, p. 318.

¹⁶ "Azerbaijan - Land between East and West. Transfer of knowledge and technology during the „First Globalization“ of the VIIth - IVth millennium BC International Symposium Baku, April 1-3 2009, Deutsches Archäologisches Institut, EURASIEN-ABTEILUNG, Baku, 2009".

¹⁷ Հ.Ա. Ավետիսյան, Հայկական հարցը 1918թ., Երևան, 1997, էջ 285:

¹⁸ "Christian Science Monitor", 05.08.1919, Haykaram Nahapetyan, Publications in American Periodicals Concerning Nagorno-Karabakh in 1918-20, http://www.noravank.am/eng/articles/detail.php?ELEMENT_ID=3534: Ամերիկյան նշված հրապարակումներում խոսքն ամբողջ Արցախի մասին է:

¹⁹ Պանթուրքական վտանգներով լի այդ կեղծիքի դեմ Իրանը Թուրքիային բողոք էր ներկայացրել, ինչպես նաև իրանական մի շարք քաղաքական և հասարակական գործիչներ վրդովմունք էին հայտնել (K. Bayat, Storm over the Caucasus, Tehran, 2002 (պարսկերեն), p. 66-67, տես՝ R. Galichian, The Invention of History, London/Yerevan, 2010, p. 7): Անտիկ սկզբնաղբյուրներից հայտնի է, որ հնուց Մեծ Հայքի և բուն Աղվանքի միջև սահմանն անցնում էր Կուր գետով (Ptol., V.12. 1; հմմտ. Strabo, XI, 14. 4), իսկ Ատրպատականը տեղադրված էր Մեծ Հայքից հարավ-արևելք (Strabo, XI, 13, 1):

յան ազատագրական պատերազմի մարտադաշտերում ջախջախիչ պարտություն կրելով, ներկայումս զբաղված է սահմանային դիվերսիաներով, ապատեղեկատվությամբ, պատմության կեղծարարությամբ²⁰ և այլն: «Պետպատվերի» շրջանակներում պատմության կեղծարարության գլխավոր հրահանգողն է Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլիամ Ալիևը: Զննադատելով նրա հակահայկական ոտնձգությունները՝ Վ. Ջախարովը նշել է. «...Ալիևը փորձում է հիմնավորել ադրբեջանական կողմի հավակնությունները ոչ միայն Ղարաբաղի, այլև բուն Հայաստանի Հանրապետության տարածքի նկատմամբ... ամոք է իրեն՝ ՄԳԻՄՕ-ի շրջանավարտին, չիմանալ պատմությունը...»²¹: Ադրբեջանական կեղծիքներով լի հրատարակությունների մասին Ջախարովը գրել է. «...Ոչ մի հեղինակավոր արևմտյան գիտական կենտրոնում չեն կարդում նման գրականություն: Ցանկացած ֆորումի մասնակիցներին հանձնված Բաքվի հրատարակությունների մուշները մնում են հյուրանոցային համարներում կամ էլ հայտնվում են աղբարկղներում»²²:

Այսպիսով, Հայոց պատմության թուրք-ադրբեջանական կեղծարարությունները՝ հիմնված պանթուրքական զավթողական, ցեղասպան գաղափարախոսության վրա, քաղաքական նպատակների են ծառայեցվում և, հատկապես, Հայոց ցեղասպանության հանցավոր ժխտմանը: Թուրքիան և Ադրբեջանը ահռելի գումարներ են ծախսում պատմության կեղծարարությամբ սադրիչ ապատեղեկատվություն տարածելու համար: Արցախյան ազատագրական պատերազմում պարտված ագրեսիվ Ադրբեջանը պատմության նենգափոխումը վերածել է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության (ԼՂՀ) դեմ ռազմամոլ քարոզչության: Հայոց պատմական ժառանգությունը ազգային անվտանգության կարևոր հոգևոր և գաղափարական զենք է տեղեկատվական պատերազմում: Հայ և որոշ օտար պատմաբաններ Հայաստանի և այլ երկրների պատմության թուրք-ադրբեջանական կեղծարարությունները ջախջախիչ քննադատության են ենթարկել: Հայոց պատմական ժառանգության պաշտպանության ազգապետական երաշխավորներն են Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը:

Eduard Danielyan (Armenia)

THE CRITICISM OF TURKISH-AZERBAIJANI FALSIFICATIONS OF THE HISTORY OF ARMENIA AND OTHER COUNTRIES

More than five millennia old ethno-spiritual, political and cultural roots (in the Armenian Highland) of the Armenian statehood are attested by the archaeological and architectural monuments, petroglyphs and cuneiform inscriptions, antique and medieval written and other historic sources. Armenia as cradle of civilization has contributed greatly to the treasury of world culture.

Continuing the Ottoman and Young Turk genocidal policy of falsification of the history of Armenia, since 1930s (aiming at fabrication of non-existent “ancient history” for the nomadic Turks) falsifications of world history were realized by Kemal Ataturk’s order and until now are carried out in Turkey. At the end of May of 1918 was artificially formed “the Tartar (Tatar) Republic of Azerbaijan” [the name was stolen (with Pan-Turkic goals) from the province of *Iranian Azerbaijan*]. In Soviet and post-Soviet Azerbaijan the distortion of history intensified. After the aggressive Azerbaijan’s defeat in the Artsakh Liberation War, falsifications of history in Azerbaijan are used in militaristic propaganda against the Republic of Armenia and the Artsakh Republic (NKR). Based on the annexionist genocidal pan-Turkism Turkish-Azerbaijani falsifications of history are put into service of the criminal denial of the Armenian Genocide. Armenian and some Western and Russian historians crushingly have criticized Turkish-Azerbaijani falsifications. The state guarantors of the Armenian historic heritage’s protection are the Republic of Armenia and the Artsakh Republic.

²⁰ Խորհրդային իշխանության տարիներին «Ադրբեջան» անվանումը կեղծ կիրառմամբ կրկին քաղաքականացվեց՝ Իրանական Ադրբեջանը «խորհրդայնացմամբ» բռնակցելու նպատակով (**В. В. Бартольд**, Сочинения, т. II (1), Работы по истории Кавказа и Восточной Европы, М., т. 2, часть I, 1963, с. 703, 775-776): Դեռևս Խորհրդային Ադրբեջանում կատարված «բուլղարաբանության» տիպի կեղծարարությունները (քննադատությունը տե՛ս **Асатур Мнацаканян**, **Паруйр Севак**, По поводу книги З. Буниятова «Азербайджан в VII-IX вв.». – **ՊԲՀ**, 1967, №1, с. 177-190; **Гегик Саркисян**, **Паруйр Мурадян**, «Буниятовщине» не видно конца. – «Լրաբեր» հաս. գիտ., 1988, №5, с. 41-49, տե՛ս նաև **В. А. Шнирельман**, Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье, М., 2003, с. 92, 158-162, 202-211, 221-222 և այլն) շարունակվում են հետխորհրդային Ադրբեջանում (տե՛ս, օրինակ՝ **Ф. Мамедова**, «Кавказская Албания и албаны», Баку, 2005 և այլն):

²¹ “Нагорно-Карабахской Республике 20 лет”, ред., проф. **В.А.Захаров**. М., 2011, с. 4, 53-58.

²² Там же, с. 130-150. Ադրբեջանի շինծու և քաղաքականապես կեղծ «պատմության» դարձական դասագրքերը (քննադատությունը տե՛ս **Д.Я. Бондаренко**, **А.И. Вдовин**, **А.Д. Жуков** и др., “Освещение общей истории России и народов постсоветских стран в школьных учебниках истории новых независимых государств”, М., 2009, с. 5-6, 17, 24-26, 59, 69-70, 242, 244 և այլն) նույնպես լի են Հայոց պատմության կեղծարարությամբ և հայերի դեմ թշնամանքով:

THE MILITARY ROLE OF THE ARMENIANS IN CYPRUS (6th – 11th CENTURY)

The arrival of Armenians in Cyprus was most often due to the perilous situation of Armenia at the crossroads of empires: that is the conflicts between Byzantium and Persia and between Byzantium and the Arabs. But there was also, in an intermittent way, a military colonisation organised by Byzantium, expeditions of re-conquest, the command of which the Empire entrusted to generals of Armenian origin, the setting up of an administration in which senior officials of similar origin appeared. The sigillographic evidence (examined especially by D.M. Metcalf for Cyprus)¹, equally the Greek numismatic evidence, and the evidence of place-names can sometimes fill the gaps in the historiographic sources, or sometimes complete them.

I) Immigration in the 6th-7th centuries

The narrative sources are primarily: Evagrius Scholastikos (536 - after 594), who was a councillor of the patriarch of Antioch, resided not far from Cyprus, and was a contemporary of events – and also the author of an *Ecclesiastical history* in Greek; Theophylact Simokatta (in the beginning of the 7th century) whose work, in Greek, is dedicated to the emperor Maurice (582 – 602); John of Ephesus (507 – 586), a monophysite bishop of Ephesus and the author of an *Ecclesiastical history* in Syriac². A seal of the Byzantine emperor Tiberius II (578 – 582) could be contemporary with the settlement of the Armenians from the Aghdznik³. Heraclius's⁴ coins are more delicate to interpret⁵.

1- The transfer of Aghdznik's population to Cyprus

Located between the Western Tigris and the Armenian Taurus, the province of Aghdznik was divided between a mountainous part with a continental climate in the North, that is in the Taurus area (Sanasunk'/Sasun's canton, etc.), and a region of plains in the South, with a warm climate (canton of Arzen, etc.). After the Roman-Persian treaty of 387, the Western part, except for the canton of Arzen, came under the authority of the Roman Empire. The population of the province of Aghdznik' seems to have been marked by Syriac influence. The marcher-lords of Aghdznik', who were perhaps members of the Armenian dynasty of the Orontids, were claiming to be – just like the Armenian princes of Sasun – the descendants of Sanasar, son of Sennacherib, king of Assyria⁶. According to the Armenian *Military list*, the marcher-lord of Aghdznik' was to supply a contingent of 400 men⁷. Yet, if Arzen is correctly located by the Syriac sources as being beyond the 'frontier of Armenia', that is to say within Armenia itself, the Jacobite Syriac bishops are much more often mentioned than the Armenian bishops: in fact, for the period of the 5th to the 8th centuries, an Armenian bishop is only mentioned, in connection with the Armeno-Syriac Council of Manazkert in 725-726⁸. That is why the inhabitants of Aghdznik' were not necessarily Armenian, but may also have been, at least in part, of Jacobite Syriac denomination.

One year after the resumption of the war under the Sassanid king Khosrov Anocharvan, the conflict was once again very violent when the Persians, who came and threatened Theodosiupolis/Karin in Byzantine Armenia, clashed with Count Maurice, the future emperor, who pursued them into Aghdznik'. He deported this province's population to Cyprus and reduced it to a desert in order to avoid it becoming an operational base for the Persian onslaughts on Byzantium⁹.

2- The settlement in Cyprus

According to Theophylact Simokatta, during the operations in Aghdznik', the Byzantine army captured 30.000 prisoners in total. A third of them were given to the Count Maurice. Informed of this dividing up,

¹ D. Metcalf, *Byzantine Cyprus 491-1191*, Nicosia, 2009, id., *Byzantine lead seals from Cyprus*, Nicosia, 2004.

² H.G. Melk'onyan, *Syriac Sources* (John of Ephesus, *Ecclesiastical History*, 321-460), armenian translation, Erevan, 1976.

³ Metcalf, *Byzantine lead seals*, p. 157-158.

⁴ Id., *ibid.*, p. 158-160.

⁵ S. Yeremyan, «Aghdznik'», in *Armenian Soviet encyclopedia* (in Armenian), vol. 1, Erevan, 1974, p. 258.

⁶ C. Toumanoff, *Studies in Christian Caucasian History*, Georgetown University Press, p. 304-305.

⁷ N. Adontz, *Armenia in the period of Justinian*, translated and revised by N.G. Garsoïan, Lisbon, 1970, p. 193.

⁸ Id., *ibid.*, p. 100*-102*.

⁹ R. Grousset, *Histoire de l'Arménie*, Paris, 1984, 1995, p. 245-248.

Tiberius II, according to the author, gave these §spoils§ to Cyprus¹⁰. John of Ephesus reports that Aghdznik' 's inhabitants came to the army with the cross and the Gospels, and also that Maurice imposed an ultimatum: those who had not joined him within three days, with their goods and animals, would be slaughtered. Maurice had these eastern Christians transported to Cyprus where they were divided up amongst the various villages¹¹.

Evagrius Scholastikos makes an explicit assessment of the consequences of their settlement: farming, which was at the time in abeyance, was resumed vigorously, and levies of troops, who turned out to be particularly valiant against the enemies of the Empire, were undertaken¹². So these were evidently military colonists who were established in Cyprus. The purpose of this transfer of population was strategic: it strengthened Byzantium's authority in the island, as the Cypriot seal of Tiberius II testifies.

3- Cyprus, an operational base in the reign of Heraclius (610 - 641)

Numismatic evidence makes a valuable contribution here. We know that the future emperor Heraclius, who was the son of the exarch of Carthage, Heraclius-Vahan, and may have been of Arsacid origin, stayed in Cyprus in 609, on the journey which was taking him to Constantinople with the intention of seizing the throne. Some coins he had minted, between 613 and 631, have been found, showing him sometimes with his son Heraclius and sometimes alone¹³. Lead seals vouch for the presence of many important officials¹⁴.

Cyprus, which was wealthy, populous, situated one or two days sailing from the coast of Asia Minor, and never threatened by the Persian fleet, was an excellent operational base once the conflict with Persia had led to a renewed naval war.

We do not know whether the monophysites – or those of similar religious persuasion – from Cyprus were drawn into the quarrels aroused by the doctrines of monoenergism and of monothelism which had been imposed by the basileus.

II) The Byzantine-Arab condominium (from around the middle of the 7th century to 965)

The works of the emperor - encyclopaedist Constantine VII Porphyrogenitus (reigned *de iure* 912-920, *de facto* 944-959) are the main narrative sources. A few seals of persons of Armenian origin are also preserved.

1- The new situation

Cyprus became the target of the Arabs once these had learnt the art of sailing from the residents of the Syrian-Palestinian region. They then seized all the cities of the island, put 12.000 men in the garrison, and deported tens of thousands of Cypriots. Because Byzantium had adopted a defensive strategy (apart from the operations led by the Mardaïtes of Lebanon) and because the Arab Empire was torn by internal struggles, the emperor Justinian II (685 – 694, 705 – 711) and caliph Abdal al-Malik (685-705) came to a compromise (688) according to which:

- the caliph would pay a weekly tribute
- the revenues from Cyprus, Armenia and Georgia would be shared equally between them
- the Mardaïtes would be removed from Lebanon
- the Cypriots had to inform either of the two empires of any offensive move on the part of the other one

The administrative arrangements may have been in the process of development but, in point of fact, they resulted in a condominium: the island was divided into a Christian area and a Muslim one, the Christian zone being administered by a Muslim governor and a Muslim civilian judge, with no partition of the island. Some Byzantine archons (governors) emerged, recognised by Constantinople, and taking advantage of the distance away of the new Arab capital, Baghdad, which replaced Damascus from the mid-8th century¹⁵.

¹⁰ Michael and Mary Whithby, *The History of Theophylact Simocatta*, Oxford, 1988, p. 97.

¹¹ Melk'onyan, p. 436.

¹² Cf. P. Charanis, *The Armenians in the Byzantine Empire*, Lisbon/Paris, 1965, p. 14.

¹³ Metcalf, *Byzantine lead seals*, p. 157-160.

¹⁴ Id., *ibid.*, p. 160-161.

¹⁵ Concerning the condominium, cf V. Prigent, «Chypre entre Islam et Byzance», in *Chypre entre Byzance et l'Occident. IV^e-XVI^e siècle*, (N. Durand and D. Giovannoni, editors), Paris, 2012, p. 80-87.

2- The Byzantine attempts to reconquer Cyprus : Alexios Mousele

Constantine VII, in the *Book of themes*, mentions Alexis, §Armenian by nation', who must have ruled Cyprus for seven years, during the reign of Basil I (867-886) and whom Heratch Bartikyan, in his translation of the work into Armenian, identifies with the famous Alexios Mousele (from the Armenian *Mouchegh*), the son-in-law of the emperor Theophilos¹⁶. Admittedly, there is a wide chronological gap between the reign of Theophilos and that of Basil I; moreover, in the meantime, it seems that Alexios had been disgraced and relegated into a monastery. Yet the name of the village of Mousere (Mousele?) may suggest the ownership, by Alexios, of a domain where his troops would have been in part established and leads us to conclude that the same Alexios was in question¹⁷. The last word may belong to Leo the Grammarian (11th century), who mentions, in his *Chronografia* (in Greek), "Alexis the Armenian, nicknamed Mousele"¹⁸. Basil I raised Cyprus to the rank of a theme (an administrative-military district), of which Alexios was the *strategos* (the commander of the theme)¹⁹.

3- The Byzantine attempts to reconquer Cyprus: Leon Symbatikes

It is again Constantine Porphyrogenetus, in his *Book of Ceremonies*, who reminds us that the archon of Cyprus, the *protospatharios* (a high dignitary) Leon Symbatikes (from the Armenian *Sembat*) had to carry out reconnaissance missions in the gulf of Tarsus and towards the Syrian coast²⁰. Leon Symbatikes could have been a relative of the famous Symbatikios, the Byzantine governor of southern Italy and the Ionian Islands at the end of the 9th century. There may have been a *strategos* superior to Leon Symbatikes, whose area of command was above all naval. The existence of the village called Spathariko, which is still mentioned in the 16th century, may be evidence for the presence of Leon Symbatikes in Cyprus.

The mention, at the same period, of the villages of Platanion and Prine, names which are the same as those of villages in southern Asia Minor, where, according to the *Book of Ceremonies*, Armenian cavalymen were stationed, may suggest a transfer of troops to Cyprus, in order to conduct operations against the Arabs of Crete and Syria. In the *Description de toute l'île de Chypre* (in french), the Dominican Etienne de Lusignan (16th century) writes that Spathariko and Platanion are Armenian villages (like Kornokipo)²¹.

Two seals with Narses' name have been found in Cyprus: the first one, from the first half of the 7th century, is that of an imperial *vestarios* (a title equivalent to the responsibility of a treasurer)²², the second, which is not dated, is that of a *stratilates*, a low or high function (for exemple, general), depending on the period²³.

III) The Byzantine reconquest (965 – mid-11th century)

Our evidence for the presence of Armenians is historiographical, toponymic but not sigillographic. The narrative sources are, first, Greek: at the end of the 10th century, Leo the Deacon (he was a deacon in the imperial palace) recounts the history of the period 959-976, using the now lost chronicle of the Phokas family. But they are also Armenian: Step'annos Asoghik of Taron was charged by the catholicos Sargis (992-1019) with overseeing the monasteries and churches and with writing a *Universal history* stretching to the beginning of the 11th century, in which the author shows himself to have been attentive to the Byzantine expansion of the 9-10th centuries.

1- Officers and troops

The architect of the Byzantine reconquest was Nikephoros Phokas, of Armenian ancestry by the female line, who first acted as a general-in-chief (*Domestikos tôn Scholôn*) from 954 (961 the conquest of Crete), then as an emperor, from 963 to 969 (965, the conquest of Cyprus and Cilicia; 968, the conquest of

¹⁶ H. Bart'ikyan, *Kostandin Tziratzin*, Erevan, 1970, n.70.

¹⁷ K. Kyrris, «Military colonies in Cyprus in the Byzantine period : their characters, purpose and extend», in *Byzantinoslavica*, XXXI, 1970, fasc. 2, p. 169-170.

¹⁸ Kyrris, « Military colonies », *ibid.*, p. 170, n.31.

¹⁹ Metcalf, *Byzantine Cyprus*, p. 439.

²⁰ Bart'ikyan, *Kostandin Tziranzin*, p. 146-147. Cf E. Malamut, *Les îles de l'Empire byzantin*, Paris, 1988, vol. 2, p. 506.

²¹ About Spathariko and Platanion, cf. Kyrris, «Military colonies», p. 166-168.

²² Metcalf, *Byzantine lead seals*, p. 297.

²³ Id., *ibid.*, p. 380.

Antioch). Around the middle of the 10th century, maybe a quarter of the army of the themes was made up of Armenian soldiers²⁴. The territories reconquered from the Arabs were called *mikra arménika thémata* (small Armenian themes), on account of the important proportion of Armenian soldiers and to distinguish them from the ancient themes of Asia Minor and the Balkans, the *mégala rômaïka thémata* (large Roman themes)²⁵.

After its re-conquest (completed during the summer of 965), Cilicia was raised to the rank of theme in the winter the same year, and the Byzantine fleet, commanded by Niketas Chalkoutzes, occupied Cyprus, which became a special theme ruled by a *katepano* (superior, commandant)²⁶.

2- The question of the Armenian settlement

After Nikephoros Phokas' conquests, there was set up (as we have seen) a vast march-frontier in the South-East of the Byzantine Empire, including small themes, governed by *stratègoi* – in Cilicia, in Northern Syria, in the area of the Euphrates, these *mikra arménika thémata* being brought together into duchies – of Antioch, Mesopotamia, and Chaldia. In spite of its character as an island, Cyprus was smoothly linked with this whole, but, although it had been conquered with the participation of Armenian soldiers, it was not regarded as a *mikron arménikon théma*. Events in Asia Minor had nevertheless an impact on the island: thus the revolt of Bardas Skleros, who was proclaimed emperor in the theme of Mesopotamia in 976, is recorded in the painted inscription in the church of a Cypriot village²⁷.

Leo the Deacon tells us that, at the end of the conquest of Crete, in 961, Nikephoros Phokas, then *Domestikos tôn Scholôn* for the East, set up in Chandax (Candia) *phratriai* (originally meaning subdivisions of the tribe) composed, amongst others, of Armenians and “Romans”, that is to say Greeks²⁸.

Place-names may suggest a similar military colonisation in Cyprus at the end of the 10th century, as they have already given us some clues for the beginning of the same century: thus the name *Armenochôri* could mean “the Armenians' village”, in the same way as that of *Syrochôri* refers to the “Syriacs' village”²⁹. The few place-names with *Arménoi* which occur are harder to interpret since the word *arménon* (plural, *ta arména*) means a ship's tackle³⁰.

3- Secular and ecclesiastical officers

Sigillography only provides limited evidence: the seal of Bardas (Armenian *Vard*), mentioned as *Basilikos* of Cyprus, may date from the 10th or 11th century and may have belonged to a civil servant of quite modest rank³¹.

We do not have any convincing evidence about ecclesiastical officers. Step'annos Asoghik of Taron indicates that the catholicos Khatchik I (971 – 992) consecrated some bishops for Seleucia, Tarsus, and Antioch; but it was only much later, in 1179, with regard to the council of Horomkla, that an Armenian bishop of Cyprus was mentioned³²: the existence of an Armenian episcopal see in Cyprus, in the aftermath of the reconquest, is a plausible but not documented hypothesis.

* * *

At the age of the Crusades, starting from the 12th, it's from Cilicia, gradually occupied by the Armenians, that the Byzantines carry on their military colonisation effort, using Cyprus as an advanced position against the Franks. Then, when Richard the Lionheart undertakes the conquest of the island (1191), this one is defended, probably with the same amount of troops, by the Greek and Armenian soldiers.

²⁴ Charanis, *The Armenians*, *passim*.

²⁵ N. Oikonomidès, «L'organisation de la frontière orientale de Byzance aux X^e-XI^e siècles», in *Documents et études sur les institutions de Byzance. V^e - XV^e siècles*, ch. 34, London, 1976.

²⁶ «Cyprus» in A.P. Kazhdan (editor), *Oxford Dictionary of Byzantium*, vol. 1, p. 567.

²⁷ E. Malamut, «Chypre nouvelle province byzantine (965-1191)», in *Chypre entre Byzance et l'Occident*, p. 96.

²⁸ Bonn, p. 28.

²⁹ Malamut, *Les îles de l'Empire byzantin*, vol. 1, p. 192, p. 245.

³⁰ Id., *ibid.*, p. 162, p. 245..

³¹ Metcalf, *Byzantine lead seals*, p. 211.

³² G. Dédéyan, *Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés*, vol. 1, Lisbon, 2003, p.

ՀԱՅԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԿԻՊՐՈՍՈՒՄ (6-11-ԲԴ ԴԱՐԵՐ)

Բյուզանդացիները, որոնք սովորություն ունեին ներգրավելու հայերին, պարսիկների հետ պատերազմելու ժամանակ իրականացնում են Կիպրոսի առաջին գաղութացումը 6-րդ դարի վերջում՝ տեղափոխելով այդ կղզի «Ադենիքի» բնակչության մի մասը: Կղզին դառնում է պարսիկներին հակադրվող բյուզանդական կարևոր մի հենակետ մինչ արաբների ներխուժումը 7-րդ դարի կեսերին:

Անկախության տարիներին նոր եռանդով ուսումնասիրվեցին Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին հայերի և հայկական ազգային զորամիավորումների մասնակցության, հայազգի զորահրամանատարների և հերոսների, թիկունքի աշխատանքների, Հայաստանում ռազմապաշտպանական արդյունաբերության ձևավորման պատմության հիմնախնդիրները: Ծանրակշիռ մենագրություններ, աշխատություններ և հոդվածներ հրատարակեցին Կլիմենտ Հարությունյանը, Հրաչիկ Մանուկյանը, Մարատ Սահակյանը, Գոհար Խաչատրյանը, Կարեն Խաչատրյանը և այլք⁴:

² Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատասխանատու խմբագիր և կազմող՝ Վ. Դազախեցյան, Ե., 1999: Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.), կազմողներ՝ Ա. Մելքոնյան, Վ. Դազախեցյան, Ե., 2008:

³ Վ. Դազախեցյան, Հայաստանը 1920–1940 թթ., Ե., 2006: Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Ե., 1999: Լ. Խուրշուդյան, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Ե., 2002: Է. Ջոհրաբյան, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Ե., 1997, **Մույնի**՝ Նախիջևանյան հիմնահարցը (1920 թ. մայիս – 1921 թ. հոկտեմբեր), Ե., 2010: Ա. Սիմոնյան, Ջանգեզուրի գոյամարտը 1920–1921 թթ., Ե., 2000: Հ. Հարությունյան, Լեռնային Դարաբաղը 1917–1923 թթ., Ե., 1997: Կ. Խաչատրյան, Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ., Ե., 2007: Ս. Բեհրուդյան, Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921–1938 թթ.), Ե., 1994: Է. Գևորգյան, Հայաստանի գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան 1920–1930-ական թթ., Ե., 1994: Ք. Կазанджян, К вопросу об оценке московского русско-турецкого договора 1921 г., Ե., 2001: Ա. Հակոբյան, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Ե., 2010: Է. Մելքոնյան, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Խորհրդային Հայաստանում 1923–1937 թթ., Ե., 1999, **Մույնի**՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Ե., 2005: Ա. Մանուկյան, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920–1953 թթ., Ե., 1999, **Մույնի**՝ Քաղաքական կյանքը Հայաստանում 1920–1940 թթ., Ե., 2002: Ս. Ստեփանյան, Հայ եկեղեցին ստալինյան բռնությունների օրոք, Ե., 1997: Վ. Պետրոսյան, Հայաստան. 1919–1922 թվականներ, հ. 2 (1921–1922 թթ.), Ե., 2011: Ս. Գарибджанян, Научная интеллигенция Армении (1920 – середина 1930-ых гг.), Ե., 2013:

⁴ Կ. Հարությունյան, Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թվականներին, Ե., 2002, **Մույնի**՝ Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941–1945 թթ.), Ե., 2002, **Մույնի**՝ Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին (1939–1945), Ե., 2004, **Մույնի**՝ Հայ ռազմիկների մասնակցությունը խորհրդա-ֆիննական պատերազմին, Ե., 2008, **Մույնի**՝ Մարшал Советского Союза, дважды герой И.Х. Баграмян, Ե., 2007, **Մույնի**՝ *Маршал авиации С.А. Худяков – А.А. Ханферянц*, Ե., 2008, **Մույնի**՝ *Армяне в боях за Ленинград, Санкт-Петербург*, 2009, **Մույնի**՝ *Главный маршал бронетанковых войск А.Х. Бабаджанян*, Ե., 2009, **Մույնի**՝ *Участие воинов-армян Нагорного Карабаха и Северного Арцаха в Великой Отечественной войне Советского Союза (1941–1945 гг.)*, Ե., 2009, **Մույնի**՝ *Маршал инженерных войск Сергей Христофорович Аганов*, Ե., 2012 և այլն: Կ. Арутюнян, М. Саакян, *Участие сотрудников Национальной Академии наук Республики Армения в Великой Отечественной войне (1941–1945)*, Ե., 2001: Հ. Մանուկյան, Խորհրդային Հայաստանի աշխատավորության ավանդը Հայրենական մեծ պատերազմի հաղթանակում (1941–1945 թթ.), Ե., 2000: Գ. Խաչատրյան, Հայաստանի արդյունա-

Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան տարիների սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի պատմության, Հայկական հարցի և հայրենադարձության, քաղաքական բռնաճնշումների, 60–70–ական թվականների ազգային զարթոնքի, Հայաստանում ալյախոհության դրսևորումների, 1988 թ. Սպիտակի աղետալի երկրաշարժի, արցախյան ազատագրական շարժման սկզբնական փուլի հիմնահարցերին են անդրադարձել Ամատունի Վիրաբյանը, Վլադիմիր Պետրոսյանը, Արմենակ Մանուկյանը, Կարեն Խաչատրյանը, Ավագ Հարությունյանը, Գուրգեն Գեղամյանը, Ռուբեն Ազիզբեկյանը, Հրանտ Աբրահամյանը, Համո Սուքիասյանը և այլ հեղինակներ⁵, հրատարակվել են փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ⁶:

Խորհրդային Հայաստանի պատմության ուսումնասիրության բնագավառում արդի հայ պատմագիտության ձեռքբերումներն արտացոլված են հրատարակված բուհական ձեռնարկներում, հանրակրթական և ավագ դպրոցի «Հայոց պատմության» դասագրքերում, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակվող «Հայոց պատմություն» ակադեմիական նոր հրատարակության չորրորդ հատորի առաջին (1918–1945 թթ.) և երկրորդ (1945–1991 թթ.) գրքերում⁷:

Karen Khachatryan (Armenia)

CURRENT TRENDS IN RESEARCH ON THE BASIC PROBLEMS OF THE HISTORY OF THE SECOND (SOVIET) REPUBLIC OF ARMENIA

A new phase of the Armenian statehood began by declaration of independence of the Republic of Armenia in 1991. New perspectives opened for the Armenian historiography in conditions of independence. Historians got opportunity to undertake objective and impartial researches, taking as a basis the principal of historicism and historical truth. Reconsideration and objective research in basic problems of the history of Soviet Armenia is a very actual and urgent task.

բերությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941–1945 թթ.), Ե., 2005: **Կ. Խաչատրյան**, Ռազմա-պաշտպանական արտադրությունը Հայաստանում Հայրենական մեծ պատերազմի տարիներին, «*Լրաբեր հասարակական գիտությունների*», Ե., 2012, թիվ 2–3, էջ 32–41, **Ույնի**՝ Խորհրդային Հայաստանը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ԽՍՀՄ ռազմական մախսապատրաստությունների ոլորտում, *Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)*, Ե., 2011, հ. 12, էջ 255–269 և այլն:

⁵ **Ա. Վիրաբյան**, Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով. հասարակական-քաղաքական կյանքը 1945–1957 թթ., Ե., 2001: **Վ. Պետրոսյան**, Գրիգոր Հարությունյանի ժամանակը, հատոր I–III, Ե., 2008, **Ույնի**՝ Անտոն Քոչինյանի ժամանակը, Ե., 2013: **Կ. Խաչատրյան**, Армянский вопрос и репатриация армян в Советскую Армению в 1945–1949 гг., *Историческое пространство (Проблемы истории стран СНГ)*, М., 2007, N 2, с. 124–133, **Ույնի**՝ Великий друг армянского народа – Н.И. Рыжков, Ե., 2004: **Ա. Մանուկյան**, Քաղաքական ալյախոհությունը Հայաստանում 1950–1988 թթ., Ե., 2005: **Ռ. Ազիզբեկյան**, **Գ. Գեղամյան**, Հայաստանը 1945–1990–ական թվականներին, Ե., 1994: **Ռ. Ազիզբեկյան**, Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Ե., 1992: **Ռ. Միրզախանյան**, Խորհրդահայ մշակույթը 1956–1990 թթ., Ե., 2009: **Հ. Սուքիասյան**, Երրորդ գյուղից մինչև Երևանի Միլիկյան թաղամաս, Ե., 2012:

⁶ **Հ. Ավետիսյան**, **Ա. Ավետիսյան**, **Ա. Վիրաբյան**, **Կ. Հարությունյան**, Գրիգոր Հարությունյան. կյանքը և գործունեությունը, Ե., 2000: **Ա. Հարությունյան**, Հայոց ցեղասպանության 50–ամյակը և Խորհրդային Հայաստանը, Ե., 2005: *Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945–1946 гг.* Под редакцией **А. Киракосяна**, Ե., 2010. *Անտոն Քոչինյան: Փաստաթղթեր, նամակներ, հուշեր:* Կազմողներ՝ **Է. Հովսեփյան**, **Ա. Հարությունյան**, **Ա. Վիրաբյան**, Ե., 2003: *Ալեքսանդր Մյասնիկյան: Երկեր, 5 հատորով, հ. 5:* Կազմողներ՝ **Հ. Օհանյան**, **Ա. Հարությունյան**, Ե., 2007: Հայության պայքարը ԼՂԻՄ–ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմողներ և խմբագիրներ՝ **Կ. Խաչատրյան**, **Հ. Աբրահամյան**, Ե., 2011:

⁷ **Մ. Կարապետյան**, **Է. Գևորգյան**, Խորհրդային Հայաստանը 1920–1991 թվականներին, Ե., 2007: Հայոց պատմություն, Ե., ԵՊՀ, 2012: Հայոց պատմություն, դասագիրք ավագ դպրոցի 12–րդ դասարանի հումանիտար հոսքի համար, Ե., «Չանգակ–97», 2011: Հայոց պատմություն, հատոր IV, գիրք առաջին (նորագույն ժամանակաշրջան. 1918–1945 թթ.), Ե., «Չանգակ–97», 2010:

Հայկո Կոնրադ (Գերմանիա)

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. ՊԱՏՄԻՉԻ ՄՏՔԵՐԸ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

Շուտով լույս կտեսնի Կիրակոս Գանձակեցու «Պատմություն Հայոց» աշխատությունը գերմաներեն թարգմանությամբ: Սույն գեկուցման նպատակը թարգմանության հետ կապված բանասիրական խնդիրների քննարկումը չէ, այլ մի քանի մտքեր արտահայտել Գանձակեցու պատմության վերաբերյալ:

Ո՞վ է Կիրակոսը, ինչի՞ մասին է նա գրում, ու՞մ համար և ի՞նչ հանգամանքներում, ի՞նչ միջավայրից է նա ծագում, որո՞նք են նրա աղբյուրները:

Կիրակոսը իր պատմության առաջաբանում իրեն դասում է այն պատմիչների շարքում, որոնք նախորդել են նրան, սկսելով Եվսեբիոսից և Սուրբատ Սքոլաստիկոսից՝ դրանից անմիջապես հետո անցնելով հայ պատմագիրներին: Սա համապատասխանում է նրա աշխատության մեթոդին և կառուցվածքին: Նրա բերած ցանկն այնքան էլ չի համընկնում իրական ժամանակագրությանը: Նա թվարկում է հետևյալ հաջորդականությամբ՝ Ագաթանգեղոս, Մովսես Խորենացի, Եղիշե, Ղազար Փարպեցի, Փավստոս Բուզանդ, Մեբեոս, Կորյուն, Խոսրով, Ղևոնդ, Թովմա Արծրունի, Շապուհ Բագրատունի, Հովհաննես Կաթողիկոս, Մովսես Կաղանկատվացի, Ուխտանես, Ասողիկ, Արիստակես Լաստիվերցի, Մատթեոս Ուռհայեցի, Սամվել Անեցի, իր ուսուցիչ և ընկեր Վանական Վարդապետ և վերջում ինքը՝ համեստորեն չառանձնացնելով իրեն:

Գանձակեցու պատմությունը բաժանված է երկու մասի, առաջինը պարունակում է մինչև իր ապրած ժամանակը, որը նկարագրելիս նա հղում է քիչ առաջ նշված հեղինակներին, իսկ երկրորդ մասը շարադրվում է որպես ականատեսի պատմություն: Առաջին մասը, Ագաթանգեղոսի հետևողությամբ, սկսվում է Գրիգորի և Տրդատի դեպի Հռոմ կատարած ուղևորությամբ: Բերելով կաթողիկոսների և բյուզանդական կայսրերի իշխանության տարեթվերը՝ Կիրակոսը ժամանակագրորեն հետզհետե հասնում է մինչև Պաիվալունի կաթողիկոսները՝ Գրիգոր Գ-ն և Ներսես Շնորհալին՝ հանգամանորեն գնահատելով նրանց գործունեությունը: Այնուհետև սկսվում է արդեն հեղինակի սեփական ժամանակը: Ըստ դրում՝ ուշագրավ է, որ երկրորդ մասը նրա մոտ երեք անգամ է սկսվում. առաջին անգամ՝ Կիլիկիոյ Լևոն թագավորի և Մեծ Հայքի Ջաբարյան եղբայրների՝ Ջաբարեի և Իվանեի պատմությամբ: Այնուհետև իր հայրենի երկրի՝ Աղվանքի մասին խոսելիս նա երկրորդ անգամ է հայտարարում, թե սկսում է իր ժամանակի պատմությունը: Վերջապես երրորդ անգամ, երբ անցնում է Հայաստանում մոնղոլների պատմությանը, որն էլ հենց իր իսկական ժամանակն է:

Հետաքրքիր են առհասարակ նրա մեթոդը և ոճը: Չոր ու ցամաք ժամանակագրական տվյալների և աշխարհիկ կամ հոգևոր առաջնորդների տաղտուկ թվարկումը հանկարծ աշխուժանում է հրաշքների մասին ժողովրդական և վանական գրույցներով, դեպքերի կենդանի շարադրմամբ՝ հաճախ արձակ խոսքի և էպոսային ողբի ձևով, ինչպես Անիի գրավման դեպքում, այնուհետև պատմությունը դարձյալ կորցնում է իր գրավչությունը՝ մտնելով եկեղեցական վավերագրերի և հավատամքի հետ կապված հարցերի ոլորտը:

Կիրակոս Գանձակեցին հենվում է գրավոր աղբյուրների վրա. վերը նշված բոլոր հեղինակներին նա այս կամ այն կերպ նշում է իր աշխատության մեջ, մանավանդ Սամվել Անեցուն, որից ընդարձակ հատվածներ է մեջբերում: Այսուհանդերձ առաջին մասում ևս նա չի սահմանափակվում այդ աղբյուրներով, այլ շարադրանքը լրացնում է ինչպես աշխարհիկ, այնպես էլ վարքագրական ոլորտից ծագող բանահյուսությամբ: Այս առումով նա հավանաբար հետևել է Մովսես Խորենացու օրինակին:

Առանձնահատուկ տեղ է գրավում Կիրակոսի պատմության ներածությունը: Այստեղ նա ներկայացնում է իր հայացքները պատմության, աստվածաբանության պատմության և փիլիսոփայության պատմության նկատմամբ: Նման ձևաչափ արդեն օգտագործվել էր Ասողիկի, Սամվել Անեցու կողմից, գուցե նաև Հովհաննես Սարկավազի, որի գործը մեզ չի հասել:

Կիրակոսը, հիմնավորելով իր գրածը, ասում է. «Պետք է պատմությունը գրել, և չի կարելի պատմության վրայով վարկապարագի (այսինքն՝ թռուցիկ) անցնել»: Կիրակոսի «Պատմություն Հայոցի» առաջին բառը կիրքն է: Կիրքը, սակայն, նշանակում է հետազոտության կիրք, և այն մեզ տրված է Արարչի կողմից, իսկ հետազոտել նշանակում է հայտնաբերել այն, ինչ անցյալում է և այն, ինչ դեռ գալու է: Սա էլ իր հերթին նշանակում է, որ պատմության հետ միաժամանակ պետք է իմանալ նաև գալիքը: Այլ կերպ ասած՝ պատմագիրը մարգարեի հակառակ բեռն է: Եվ իրոք, Կիրակոսը Մովսեսին՝ հենց նրան, ով գրավոր օրենք էր բերել իր ժողովրդին՝ դիտում է որպես բոլոր մարգարեներից ամենամեծը: Այստեղից բխում է այն մանկավարժական հետևությունը, որ պատմագիրների և մարգարեների նպատակն է ուսուցանել մարդկանց՝ մանավանդ նոր սերնդին այն դեպքերի մասին, որոնք անցել են կամ դեռ գալու են: Պատմագիրներն ու մարգարեները երկուսն էլ նկարագրում են այն, ինչը

չկա, այսինքն՝ կամ այլևս չկա, կամ դեռ չկա: Սա կարևոր նշանակություն ունի Կիրակոսի համար, քանզի, այսպիսով, պատմագիրն իր արժեքով հավասարվում է մարգարեին: Իր սեփական ժամանակը, սակայն, Կիրակոսն ընկալում է որպես վերջին ժամանակ: Նա տարածում է իր ժամանակի վրա այն, ինչ ասել են մի կողմից Աստվածաշնչի, մյուս կողմից սեփական ազգի ու եկեղեցու սուրբ այրերը, հատկապես Ս. Ներսեսը, այն է, որ աղեղնավորների ազգը գալու է որպես «կործանման որդու նախամարտիկ»: Սակայն այստեղ Կիրակոսը կանգ է առնում: Ճիշտ է, նա ևս երկու անգամ իր երկի կարևոր հատվածներում կրկնում է նույն միտքը, սակայն մինչև վերջ չի զարգացնում: Նա առհասարակ չի անդրադառնում Հովհաննեսի Հայտնության գրքին կամ դրան առնչվող մյուս հատվածներին, բացառությամբ Մատթեոսի Ավետարանի 24-րդ գլխի, որը մեջբերում է կիսով չափ, կարծես միայն մտաբերելով:

Նախաբանի վերջում իր վանական եղբայրներին նա խորհուրդ է տալիս իր գրած Պատմության հետ լավ վարվել: Սա մի տեսակ հակասություն է ստեղծում աշխարհի վերջին օրերի հետ:

Մոնոլոների մասին Կիրակոսի սկզբնական կարծիքը բացասական է, որպես մահաբեր արհավիրքի: Հետագայում, սակայն, այդ կարծիքը փոխվում է, երբ մոնոլոներն աշխարհի վերջին օրերի նախակարապետներից մասամբ վերածվում են քրիստոնյաների:

Երկի մեկ այլ հատված ևս հետաքրքրական է, որտեղ հասկանալի է դառնում, որ Գանձակեցին իր պատմության միջոցով փորձում է հավերժանալ ինչպես պատմության մեջ, այնպես էլ ոչ երկրային կյանքում: Առաջաբանի վերջին նախադասության մեջ երկը նկարագրվում է որպես իր «արձան գերեզմանի ոչ ըստ նմանության Աբիսողոմեան քարին, այլ կենդանի գի յիշեսցի ի նմա անուն Կիրակոսի»¹: Այս մտքի նշանակությունը լիովին հասկանալի է դառնում, երբ Կիրակոսը երկի մեկ այլ հատվածում պատմում է Կիլիկիայի եպիսկոպոս Իզնատիոսի մասին: Գարեգին Գ.-ն Իզնատիոսին պատվիրել էր մեկնել Դուկասի Ավետարանը: Վերջինս հետաձգում էր այդ աշխատանքը մինչև երազ տեսնելը: Երազի բովանդակությունը հետևյալն էր. տեսնում է մի լուսավոր տուն, որտեղ հավաքված էին բոլոր հայտնի վարդապետները: Սակայն երբ նա փորձում է ներս մտնել, արգելում են, քանզի չէր մեկնել Դուկասի ավետարանը: Իսկ Իզնատիոսը այնուհետև «սկսաւ մեկնել զաւետարանն Դուկայ խորհրդական և մտաւոր բանի»²:

Այստեղից կարող ենք ենթադրել, որ Կիրակոսի նպատակը նույնն է. հասնել նրան, ինչին Իզնատիոսը հասավ իր մեկնությամբ: Այսինքն՝ ոչ թե Դավիթ արքայի որդի Աբիսողոմոսի նման քարե երկրային արձան ունենալ, այլ Իզնատիոսի նման երկնային արձան ունենալ և վարդապետների հետ երկնային սեղանի շուրջ նստելու իրավունք: Այսպիսով՝ հասկանալի է դառնում, որ Կիրակոսի գլխավոր նպատակներից էր նաև պատմությունը մեկնելու միջոցով թողնել իր կենդանի կերպարը ապագա սերունդներին:

Heiko Conrad (Germany)

KIRAKOS GANDZAKEC'I: HISTORY OF ARMENIA - REFLECTIONS OF AN HISTORIAN ABOUT HISTORY

An edition of the *History of Armenia* of Kirakos Gandzakec'i in German language is coming soon. In this context, the form and style of his history will be shortly discussed in the article. The actual subject is however, reflections on the *Introduction* of the *History*. Here the author develops his view of history, his theology; and philosophy of history. Here he makes clear that prophets and writers of history have both a pedagogic task, and the same purpose; they are both engaged with the issue of *time* – only from opposite sides.

Bálint Kovács (Germany)

ON THE MYTHS OF BELONGING TO THE ORIGIN: ARMENIANS ABOUT HUNGARIANS AND THEMSELVES IN TRANSYLVANIA IN THE 19th CENTURY

In my paper I examine two theories about origin which are connected to the Armenians in Transylvania in the 19th century. From one side Armenians in Transylvania spoke about their own origin by adopting the Ani-topos, which became a part of their collective memory, in the other case they established a theory about the origin of Hungarians, which did not become a part of Hungarian collective memory.

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց. աշխատասիրությամբ Կարապետ Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 10:

² Նույն տեղում, էջ 111–112:

Ani Topos: Origin of the Armenians in Transylvania

A people's consciousness of their origins and derivation is more often than not devoid of factual historical sources. On the basis of historical evidence, it remains undecided whether the Armenian population that entered Transylvania in the 17th century was a homogeneous Ani-Armenian group, or whether they had mingled with Armenian groups of other origins along their migration route. Nevertheless, the ancestors of the Armenians entering Transylvania from Moldova probably have to be sought in several different areas.¹ But perhaps this whole problem is secondary.

One of the central issues in Armenian history is the memory of the centralized Bagratide government, the destruction of which became a symbol for a missing Armenian state entity.

There are basically two ways to interpret Ani in a historical perspective. On the one hand, it can be seen as a former city that had an existence in reality;² on the other, it is a site of national memory.³ When investigating the historic consciousness of the Armenians in Transylvania, it is the latter aspect that comes to the forefront. Thus it would be difficult to tell whether the Armenians in Transylvania really came from Ani; the 19th and 20th-century texts give a much clearer image of the way in which the historic sense of origin connected their consciousness with Armenian identity. It was the Ani topos that linked the Armenians in Transylvania with other Armenians, long after they had swapped their language for Hungarian.

Ani appears as a *lieu de mémoire*, *Erinnerungsort*, i.e. site of memory in the collective historic consciousness of 19th-century Armenians in Transylvania.⁴ Yet a people's consciousness of its origin is a point where the immediate connection between the past and the present is no longer accessible. Among the Armenians of Transylvania, Ani assumed such a role as a specific place that developed into a topos.

Ani, the *lieu de mémoire* of the Armenian nation, was linked with Armenopolis by Eghia Hovhanesian, and thus he turned Armenopolis into the site of memory of the Transylvanian Armenians. Ani as the universal capital of Armenians, then, is analogous to the "capital" of the Armenians in Transylvania: "*As though Ani, once flourishing at the foot of the Ararat, had continued at Armenopolis and the other Armenian settlements, as though the incense-scented churches and chapels of Ani had moved to the groves of Transylvania, together with their faithful. We can understand the profound religion of Hungarian Armenians if we depart from Ani and go all the way to Transylvania...*"⁵

As a rule, the quotations refer to the 1001-towered Ani, a quasi-mythical depiction of a historical city that no longer exists. The magic numbers are all the more conspicuous in Félix Ávedik's writing: "*Legend has it that 1001 churches, a hundred thousand buildings, collapsed, and a million souls ceased to proclaim, among Ani's walls, the prosperity and power of Armenia!*"⁶

Kristóf Szongott, a grammar-school teacher in Armenopolis and one of the most eminent historians of the Armenians in Transylvania, emphasized two features of the Armenians that had been prevalent from the time of their exodus: their wealth, as they hid gold and gems in one of their bags, and their religiosity, as they put the Armenian hymnary in the other. In his monograph of Armenopolis, Szongott has the following to say about the Ani topos: "*The domestic Armenians took their origin from the most excellent families in the royal seat of Ani, capital of Armenia, which numbered a million inhabitants and 1001 churches. They thrived in luxury and pomp all around. ... But the envious hordes around them wanted to avenge them [and] headed towards the glorious Ani, for the first and best of the nation dwelt there. They announced to the inhabitants of the treasure-filled city, the opulent aristocrats, that they can save their lives and incredible wealth if they deny Christ. But the noble Armenians esteemed the treasure leading to heaven, the redeeming Christian faith, higher than earthly goods, and remained relentlessly loyal to the doctrine that Saint Gregory the Illuminator had scattered over the Armenian soil. Many, however, still had some time to escape through the northern gate, so every man brought forth two bags, one for their prayer-beads, the prayer and church-books, especially the beloved §sharagans,¹ so that they might praise the Lord in their native tongue even in strange lands, and the other for all the gold, jewellery, and gemstones... and then they took into their hands the bitter ash-plant. Thus*

¹ About the settlement and integration of the Armenians in Transylvania: Pál, Judit: *Armeni în Transilvania. Contribuții la procesul de urbanizare și dezvoltare economică a provinciei / Armenians in Transylvania. Their Contribution to the Urbanization and the Economic Development of the Province*. Cluj-Napoca, Romanian Cultural Institute, Center for Transylvanian Studies, 2005.

² Hakobyan, Tadevos: *Anii patmutyun*. (2 vol.). Yerevan, 1982.; Hovannisian, Richard (ed.): *Armenian Kars and Ani*. Costa Mesa, 2011.

³ Chobanian, Pavel: *Ani et son mythe (XIII-XIX siècles)*. In: *Ani capitale de l'Arménie en l'an mil Catalogue of exhibition*. 276-282.

⁴ Pierre Nora (Ed.) *Erinnerungsorte Frankreichs*. München, 2005.; Assmann, Jan: *Das kulturelle Gedächtnis. Schrift, Erinnerung und politische Identität in frühen Hochkulturen*. München, 1997. Troebst, Stefan: *Erinnerungskultur – Kulturgeschichte – Geschichtsregion. Ostmitteleuropa in Europa*. Stuttgart, 2013.

⁵ Hovhannesian Eghia: *A hazai örmények a nemzet szolgálatában*. Gödöllő, 1940. 21–22.

⁶ Ávedik Félix: *A magyar-örménység multja és történeti jelentősége*. In: *Ávedik Félix–Hermann Antal–Hovhannesian Eghia: Az örmények*. Budapest, 1921. 9.

left our forefathers their shining marble palaces, and with eyes full of tears they said a final farewell to the ancient homeland, the Ararat, and Paradise..."⁷

Félix Ávedik's writing, published in Budapest, also names Ani as the original homeland of the Armenians in Transylvania. His source is Schweiger and Lerchenfeld's *Armenien*, printed at Jena in 1878: *"The original homeland of Armeno-Hungarians is the royal city that is grandiosely marvellous even in its ruins—Ani, the key to Armenia. Assyrians, Arabs, Persians, Tartars, Mongolians, Turks had vied for the domination of the beautiful city. The changing tides of war devastated the precious city. Legend has it that 1001 churches, a hundred thousand buildings collapsed, and a million souls ceased to proclaim, among Ani's walls, the prosperity and power of Armenia!"*⁸

Hovhannesian Eghia, a lawyer from Pest, stressed the wealth of Armenians rather than their religiosity at the beginning of World War II: *"From this prosperous city, the Armenians of Hungary did not leave with a bag on their back, nor with a beggar's staff, nor starved, and even less hungry for pray—but with plenty of gold and a fortune of treasures... One can also learn this from their fortunes and family assets but especially from many Hungaro-Armenian family names that denote noble, leader, prefect, prince, lord, etc. It was the Ani nobility and their retinue that came towards Transylvania."*⁹

In the national memory of the Armenians in Transylvania, the consciousness of Armenian origins was all-important at the turn of the 19th and 20th centuries. It was their primary link with the Armenian body spiritual, having switched to Catholicism (though in an Armenian rite) and the common Hungarian language. Their political, religious, and social integration subsequent to their settlement in Transylvania had its peculiar stages.¹⁰

Do Hungarians Really Derive from the Armenians?

In the 19th century, a central issue in Hungarian historiography and linguistics was the origin and ancestry of the Hungarian people.¹¹

Transylvanian Armenologists such as Kristóf Lukácsy and Kristóf Szongott studied Armenian sources in their research and developed their own hypothesis about the shared origins of Armenians and Hungarians. Their suggestion was taken seriously by Hungarian scientists, especially by the Hungarian Academy of Science. Géza Kuun, secretary of the Academy, even commissioned Szongott to present his thesis in a book-length treatise, while Lukácsy came close to being elected member of the Academy.

In his work *On the Origin and Ancient Home of Hungarians*, Szongott explained that in Etelköz, Armenian women married "Basili," soldiers of the Emperor of Byzantium, and hence comes the Hungarian nation:

*"The Christian Basili, among whom there were much more males than females, mostly married Christian Armenian women. [...] Two Indo-Germanic tribes thus united in Etelköz and gave birth to a new people: the Hungarians. And if the Basili are the father of the Hungarian people, then the Armenians are its mother... the Hungarians inherited all these good qualities of their noble ancestors. Thus the Hungarian people was born in Etelköz and its cradle was rocking there too."*¹²

Szongott claimed that the Hungarians spoke Greek, Latin, and Armenian; later, after becoming fully adult, they created the Hungarian language developed from various elements loaned from the different tongues. In order to prove this, Szongott compared Hungarian with Armenian as well as other languages.

The authors' approach highlights the linguistic wars and prehistoric debates between the Ugric and the Turkish branches. While Kristóf Lukácsy used Armenian sources to link Hungarians to the Armenian family, positing their shared ancestry,¹³ Kristóf Szongott dedicated a separate chapter to summarizing the Turkish and Ugric connections. Lukácsy was trying to create his own, peculiarly Armenian version of the Oriental descent, Szongott attempted to merge certain points of Oriental and Finno-Ugric theories together. The juxtaposition of the two works thus helps understand the shifts in 19th-century historical thinking and their consequences.

Conclusion

From a 21st-century viewpoint, these theories may seem mere myths; at the time, they must have been taken seriously. It was not for self-entertainment or the promotion of some Romantic view of Armenian-

⁷ Szongott Kristóf: Szamosújvár Szab. Kir. Város Monográfiája 1700–1900. III. Szamosújvár, 1901. 3.

⁸ Ávedik Félix: A magyar-örménység multja és történeti jelentősége. In: Ávedik Félix–Hermann Antal–Hovhannesian Eghia: Az örmények. Budapest, 1921. 9.

⁹ Hovhannesian Eghia: i. m. 22.

¹⁰ About integration, religious union look: Bálint Kovács, Emese Pál (Ed.): Far Away from Mount Ararat: Armenian Culture in the Carpathian Basin. Budapest-Leipzig, 2013. Catalogue of exhibition.

¹¹ Vámbéry Ármin: A magyarok eredete. Budapest, 1882; Vásáry István: Magyar Őshazák és Magyar Őstörténetek. Budapest, 2008, Györfly György: Krónikáink és a magyar őstörténet. Régi kérdések - Új válaszok. Budapest, 1993; Kránitz Péter Pál: A kaukázusi magyarság gondolata a 19. században. Világtörténet folyóirat, 2014. Under publication process.

¹² Szongott, Kristóf: A magyarok eleje és őslaka. Szamosújvár, 1906.

¹³ Lukácsy Kristóf: A magyarok őselei, hajdankori nevei és lakhelyei; eredeti örmény kútfők után. Szamosújvár, 1870

Hungarians that these works were published but they were whole-heartedly encouraged by the Academy. As it is well documented, Lukácsy and Szongott were both tightly connected personally to the most prominent Hungarian scholarly circles. To conclude, i would like to mention, that here we have the very case when a group deals with creating its own group identity which is „We” identity. But this „We” identity will be well determined and constructed if there is „They” identity. The same group made an attempt to construct also „They” identity with this controlling the social power between the two groups. The „They” identity could not succeed because of not being accepted by the group in this case it is host society, hence it could not come a part of their collective memory.

| Ani - Topos | Armenian Origin of Hungarians |
|--|--|
| Adopted theorie | Created theorie |
| Adopter: Armenian intelligencia in Transylvania | Creator: Armenian intelligencia in Transylvania |
| Time of adoption: 2. Part of 19. Century | Time of creation: 2. Part of 19. Century |
| Part of collective identity | Not part of collective identity |
| Place of publication: Articles in the hungarian monthly journal: „Armenia” | Place of publication: 2 Monograph + Articles in the Hungarian monthly journal: „Armenia” |
| Background: Connection with Armenians | Background: Hungarian Scientific Academia |

Բալինտ Կովաչ (Գերմանիա)

**ԾԱԳՍԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.
ՀԱՅԵՐԸ ՀՈՒՆԳԱՐԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԻՐԵՆՑ ՍԱՍԻՆ
19-ԲԴ ԴԱՐԻ ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅՈՒՄ**

Հոդվածում քննարկվում են երկու տեսակետներ, որոնք երկուսն էլ վկայում են ազգերի ծագման մասին. մի կողմից հայերը սերում են Տրանսիլվանիայից՝ իրենց անվանելով Անիի-հայեր, իսկ մյուս կողմից՝ հունգարացիները սերում են հայերից: Երկու տեսակետներն էլ փոխկապակցված են, և դեռևս 19-րդ դարի վերջում Տրանսիլվանիայի հայկական համայնքը այդ տեսակետները համարում էր ընդունելի:

Գեոլոգի (Հայաքաղաքի) մտավորականությունը յուրացրել էր Անիի հայերի մասին առկա տեսակետները: Պատմական աղբյուրներում Անին համարվում էր “lieux du memoire”, որին էլ նրանք վերաբերում էին որպես իրենց երևակայական հայրենիքի: Նույն մտավորականները զարգացրել են մասն առնալ տեսակետը, ըստ որի հունգարացիները սերում են հայերի նախահայրերից. հունգարացիների մայրերը հայերն էին, իսկ հայրերը՝ բյուզանդացի զինվորները: Մեր աշխատության մեջ մենք փորձել ենք համեմատել վերը նշված երկու տեսակետները:

Ալեքսան Զակոբեան (Հայաստան)

**«ԱՌԱՆՇԱՀԻԿՆԵՐ – ՄԻՀՐԱՆԵԱՆՆԵՐ» ՏՈՀՍԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՍՊԵԼԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

Մասնագիտական գրականության մեջ Զ-Թ դդ. Ադուանից երկրի պատմությունը դիտարկուել է Հայոց Արեւելից կողմանց երկու իշխանատոհմերի՝ «Առանշահիկների» եւ «Միհրանեանների» անհաշտ պայքարի յետնախորքի վրայ: Սակայն նրանց մասին տեղեկությունները քաղուել են լոկ Ժ դ. պատմիչ Մովսէս Դասխուրանցու (գրականութեան մէջ կոչուած նաեւ՝ *Կաղանկատուացի*) «Պատմութիւն Ադուանից»-ում (յետայսու՝ ՊԱ) շարադրուած տոհմաբանական աւանդութիւնից՝ առանց նրա մէջ պատմականը վիպականից գատելու քննական փորձի:

ՊԱ-ում *Առանշահիկներ* (կամ *Եռանշահիկներ*) անուան տակ¹ հանդէս են գալիս Մովսէս Խորենացու յիշատակած՝ Հայկ Նահապետից սերող *Առան* նահապետի ուշ սերունդները, որոնք մի քանի հատուածներում կոչուած են ուղղակի *Հայկազնայք* կամ *Հայկազունի*²: Պատմահօր ըստ մեզ հասած բնագրի՝ Մեծ Հայքում Պարթեւ Արշակունիների իշխանութիւնն աւանդաբար Բ. ա. Բ դարում հաստատուած Վաղարշակ արքան (որի կերպարի տակ իրականում հանդէս է գալիս գլխաւորապէս

¹ Տե՛ս Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Ադուանից աշխարհի*, Բնական բնագիրը եւ ներածութիւնը Վ. Առաքելեանի, Եր., 1983 (յետայսու՝ *Դասխ.*), գլ. Ա.իւ, էջ 97, Բ.ժէ, էջ 172, Գ.ժգ/ժէ/, էջ 320, Գ.ժք /ի/, էջ 326:

² Տե՛ս *Դասխ.*, Բ.ժէ, էջ 172, Գ.իւ /իք/, էջ 336, Գ.իք /իզ/, էջ 338, 340: Մի դէպքում *Հայկազուն* է կոչուած նաեւ Թ դ. վերջի Սիւնեաց իշխանը (Գ.իւ /իք/, էջ 336-337):

Տրդատ Ա-ն՝ Բ. յ. Ա դ.³) Հայաստանի հիսիսարեւելեան «կողմնակալ բիրատր» էր նշանակել Հայկից սերող եւ Սիսական-Սիւնիք նահանգը խորհրդանշող Սիսակ նահապետի սերնդից Առանին, որից էլ ծագել են Ուտիք եւ Արցախ նահանգների տարածքի («ի գետոյն Երասխայ մինչեւ ցամուրն, որ ասի Հնարակերտ») իր ժամանակի չորս իշխանատոհմերը՝ *Ուտէացոց* (Ա խմբի ձձ.՝ *Աւտէացոց*), *Գարդմանացոց*, *Ծաղէացոց* (*ՏԽ* խմբի ձձ.՝ *Ծոփէացոց*) եւ *Գարգարացոց* («Զօրանամակ»-ում կոչուած՝ *Գ[ո]ր[ո]զճունի*, իսկ «Ներսէսեան գահնամակ»-ում՝ *Գորոզուայք*⁴), ընդ որում Սիսակի «աղու» (= «քաղոք», «մեղմ») մականունից այդ տարածքն անուանուել է «Աղուանք»⁵: Ի դէպ, Ժ դարում քաղելով Խորենացու պատումը՝ Մովսէս Գափսուրանցին մի քանի լուրջ շեղումներ է կատարել, օր.՝ «Աղուանք»-ի մէջ ընդգրկել է նաեւ Կուրի ձախափնեայ, Կովկասահայեաց տարածքները՝ դրանց վերագրելով այն, ինչ Պատմահայրը գրում էր Եգերքի ու Վիրքի հիսիսային կողմերի մասին⁶, ինչպէս նաեւ Սիսակի «աղու» մականունը վերագրել է Առանին⁷ (ցաւօք, այդ շեղումները ոչ միայն անցնել են որոշ հետազայ պատմիչների, այլեւ անքննադատաբար ընդունուել մերօրեայ գրականութեան մէջ)⁸:

Ե դ. վերջերին շրջանառուած եւ Խորենացու օգտագործած այս տոհմաբանական աւանդութիւնը ուշ ծագում ունի եւ գուրկ է իրական պատմական հիմքից: *Առան* անձնանունն իսկ՝ որպէս նշուած չորս հայկական իշխանութիւնների ընդհանուր նախնու անուն, կարող էր յօրինուել լոկ 428 թ. Հայոց Արշակունեաց թագաւորութեան վերացումից յետոյ, երբ Ուտիքն ու Արցախը Սասանեանների կողմից 2-2,5 տասնամեակի ընթացքում մտցուեցին Կուրի ձախափնեակում գտնուող Աղուանից թագաւորութեան (Կապադակ մայրաքաղաքով) հիմնաբազայի վրայ նրանց ստեղծած *Աղուանք* կամ իրանական պաշտօնական անուանումով՝ «Առան» – «Ռ-ան» (յուն. «Ալբանիա», վրաց. «Ռ-անի») մարզպանութեան մէջ: Դրան յաջորդած տարիներին Կուրի աջափնեակի հայ բնակչութիւնը միջնադարի համար բնորոշ աշխարհընկալման սկզբունքներով իր նոր մարզպանութեան անունն ընդունեց որպէս «իր երկրի» սովորական անուանում, եւ դրա արդիւնքում ի յայտ եկաւ հայկական լեզուա-մշակութային յենքի վրայ այդ անուանման ստուգաբանութեան փորձը: Անշուշտ, նոյնը պէտք է մտածել նաեւ «Աղուանք»-ը հայերէն «աղու»-ով ստուգաբանելու հաւանական ժամանակի մասին:

Ընդ սմին, Գափսուրանցուն ժամանակակից իշխանատոհմի *Առանշահիկ* անուանաձեւի (= *Առանշահեան*, *Առանշահական*⁹) փխն., օր.՝ **Առանեանք*-ի) պատմական հիմքում, հետեւելով Ա. Կրիմսկուն եւ այլոց¹⁰, առաւել մեծ հաւանականութեամբ պէտք է վերականգնելի համարել Բուն Աղուանքի վերջին Արշակունի թագաւոր եւ Սասանեաններից լայն մարզպանական լիազօրութիւններ եւս ստացած Վաչագան Բ Բարեպաշտի (485-523¹¹) պաշտօնի իրանական պաշտօնական **Առանշահ* անուանումը (= «Առանի թագաւոր»): Վերջինս մեզ հասած աղբիւրներում ուղղակիօրէն արձանագրուած

³ Հմմ., օր.՝ **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя*, СПб., 1908 (վերահրատ.՝ Ер., 1971), էջ 431-433:

⁴ Տե՛ս **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана*, էջ 251, 259; **Ա. Յակոբեան**, *Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազոտութիւններ (Արցախ եւ Ուտիք)*, Վիեննա – Եր., էջ 281-282, նոյնի՝ «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց Հայոց» եւ «Զարանամակ». Հետազոտութիւն եւ քննադր., – «Բազմավէպ», 2011, թիւ 3-4 (Վենետիկ – Ս. Ղազար), էջ 537-538, 546:

⁵ **Մովսիսի Խորենացու** *Պատմութիւն Հայոց*, Աշխատութեամբ Մ. Արեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տիֆլիս, 1913 (յետայսու՝ **Խոր.**), գլ. Բ.ը, էջ 113:

⁶ Տե՛ս **Դաւիթ**, Ա.դ, էջ 8: Հմմ. **Խոր.**, Բ.գ, էջ 108-109 («դառնայ զհիսիսեաւ առ ստորոտովն Պարսարայ ընդ մէջ Տայոց... Եւ աստ կոչեցեալ զվայրենի եկամնու ազգն, որ ի դաշտին հիսիսոյ եւ որ գտնորոտով մեծի լերինն Կաւկասոյ, եւ որ ի հովիտս կամ ի ձորս երկայնածիզս՝ խորացեալս ի լեռնէն, որ զհարաւով իջեալ մինչ ի դաշտաբերանն մեծ... Եւ ինքն արձակեալ զարեւմտեայ բազմութիւնն՝ իջանէ ի տեղիս խոտաւէտս մերձ ի սահմանն Շարայի»):

⁷ **Դաւիթ**, Ա.դ, էջ 8:

⁸ Տե՛ս, օր.՝ **К. В. Тревер**, *Очерки по истории и культуре Кавказской Албании. IV в. до н. э. – VII в. н. э.*, М.-Л., 1959, էջ 4, 146:

⁹ Ըստ դադստանցի արեւելագէտ Մուրտազաի Գաջիեի (**М. С. Гаджиев**, *Гемма-печать царя Албании Асвагена*, – ВДИ, 2003, № 1, էջ 118)՝ «Առանշահիկ»-ի **իկ**-ը կարող է դիտարկուել իբրեւ նուագական (դիմիւնուտի) վերջածանց, ինչպէս «Խնչիկ» անձնանունն մէջ է (Վաչագան Բարեպաշտի դուստրը ըստ «Վաչագանի վէպ»-ի՝ **Դաւիթ**, Ա.իգ, էջ 85. ուսումնասիրողը յղում է՝ **Г. А. Климов**, *Азганский язык*, – "Памяти Г. А. Климова". Дагестанский лингвистический сборник, вып. 4, М., 1997, էջ 12): Սակայն աւելի հաւանական է այն համարել հայերէնում պատկանելութիւն ցոյց տուող **իկ** մասնիկը, որն առկայ է բազմաթիւ ցեղանուններում, օր.՝ *պարսիկ*, *դերմիկ*, *տաճիկ*, *հնդիկ*, *խուճիկ*, *պահլաւիկ*, *ռուզիկ*, *արաւիկ* եւն (ըստ Յովհ. Կարազեղեանի՝ նմանատիպ կազմութիւն է ունեցել նաեւ հայերիս **հայիկ* ինքնանուանումը, որն **ի**-ի տղմամբ վերածուել է *Հայկ* Նահապետի անունն). տե՛ս **Г. Капанян**, *Историко-лингвистические работы*, т. II, Ер., 1975, էջ 82; **Յ. Կարազեղեան**, *Հայկական լեռնաշխարհի սեպագիր աղբիւրներում*, հտ. 1, Եր., 1998, էջ 174: **Ա. Ե. Петросян**, *Армянский эпос и мифология. Истоки. Миф и история*, Ер., 2002, էջ 64-69:

¹⁰ **А. Е. Крымский**, *Страницы из истории северного или кавказского Азербайджана (классической Албании)*, – "С. Ф. Ольденбургу: к 50-летию научно-общественной деятельности, 1882-1932". Сборник статей, Л., 1934, էջ 290, 294-295; նոյնի՝ *Страницы из истории северного или кавказского Азербайджана (классической Албании)*. Шеки, – "Памяти академика Н. Я. Марра (1864-1934)". Сборник статей, М.-Л., 1938, էջ 371; **М. С. Гаджиев**, *Гемма-печать царя Албании Асвагена*, էջ 118-119:

¹¹ Շրտում ժամանակագրութիւնը տե՛ս **Ա. Յակոբեան**, *Աղուանքում Արշակունեաց թագաւորութեան անկման ժամանակի մասին*, – ՍՍՍԵԺ, հտ. XXVI, Եր., 2008, էջ 72-88:

չէ, սակայն կարող է վերականգնուել այն փաստի գուցադրումով, որ ըստ ուշասանեան պատմական աւանդոյթից արաբալեզու աղբիւրների քաղած վկայութիւնների (ալ-Բալազուրի, Իբն Խորդադեհ, Իբն ալ-Ֆակիհ, ալ-Մասուդի, ալ-Իսֆահանի, Իբն ալ-Ասիր, «Դերբենդ-նամէ» եւն)՝ Կովկասեան լեռնաշղթայով ու Չոդ-Ճորայ-Դերբենդով ձգուող ռազմավարական սահմանագծի ամրացման միջոցառումների շրջանակում Խոսրով Անուշիրուան արքայից արքան (531-579), բայց, ենթադրաբար՝ արդէն նրա հայր Կաւատ Ա «շահանշահը» (488-496, 498-531 թթ., Սասանեանների տուեալ գործելատճն սկիզբ է առնել, գուցէ, արդէն Յազկերտ Բ արքայից՝ 438/439-457¹²) «շահ»-ական, այսինքն՝ թագաւորական տիտղոսով էր օժտում Կովկասեան լեռների այս եւ այն կողմը զբաղեցնող ցեղերի ու վասալ պետական կազմաւորումների տիրակալներին՝ կոչելով նրանց (հեղինակներից ոմանց խօսքերով՝ «նրանց երկրները») «Շիրվանշահ», «Լայզանշահ» («Լիրանշահ», Լփինք), «Խուրսանշահ» (Լակզ), «Բաբրանշահ», «Վարդանշահ» (Վատն, Մասքաթ), «Վարազանշահ» («Վահրաբանշահ», Սարիր), «Ջուրջանշահ» (Վիրք), «Ալանշահ», «Ֆիլանշահ», «Թումանշահ», «Լուրանշահ», «Տաբարսարանշահ» եւն¹³:

Նշենք, որ Ալիյ Կոլեսնիկովի դիտարկմամբ տէրութեանը ենթակայ մանր պետական կազմաւորումների տիրակալներին «շահ»-ական տիտղոսներ բաժանելու գործելատճը կանոնակարգուած է եղել եւ արձանագրուած է Սասանեան պաշտօնական գրագրութիւնը ներկայացնող «Տանսարի նամակում»: Այստեղ ասուած է (ընդգծումները մերն են). «Եւ ոչ մէկի, որ մեր տոհմից չէ, թոյլատրուած չէ *շահ* կոչել՝ բացի նրանցից, ովքեր կառավարիչներ են *սահմանային մարզերի* եւ *ալանների* եւ արեւմուտքի մարզերի եւ Խորեզմի [*իմա* Խորուարանի եւ Խորասանի – *Ս. Յ.*]¹⁴: Ս. Գաջիեի ենթադրութեամբ՝ այս բնագրի սկզբնօրինակ փաստաթղթում (մեզ է հասել լոկ նրա կրկնակի թարգմանութիւնը՝ Ը դարում միջին պարսկերէնից արաբերէն, սրանից էլ ԺԳ դ.՝ նոր պարսկերէն) անգամ կարելի է «ալանների» ընթերցման փխն. վերականգնելի համարել «*առանների» (*ʾl'n'n Ārānān*), այսինքն՝ *աղուանների*, նկատի առնելով վերոնշեալ արաբ. աղբիւրների տեղեկութիւնները եւ այն, «որ միջին պարսկերէն գրում /եւ r տառերը դրուում էին նոյն նշանով»¹⁵:

ՊԱ-ի Բ.Ժք գլխում (նաեւ Գ.իք /իզ/ եւն) Մովսէս Դասխուրանցու հրամցրած աւանդութեան համաձայն՝ «Սիրիանեան» տոհմը սերում էր իբրեւ թէ Սասանեան Խոսրով Բ Ապրուէզ արքայից արքային (590-628) «ազգակից» Սիրիանից, ով 595 թ. Բնդոյի եւ Վատամի խռովութեան ճնշումից յետոյ 30 հազ. «երդով» փախել էր հիւսիս, բայց խազարների մօտ չհասած՝ Խոսրովի ներման «հրովարտակով» հաստատուել էր Գարդման գաւառում եւ դաւադրաբար սպանելով տեղի «Առանշահիկներից» 12 իշխանների՝ գրաւել նրանց տիրոջները: Սիրիանի թռռան որդի Վարդանը, ով արդէն քրիստոնէութիւն էր ընդունել, իբրեւ թէ նոր հաշուեյարդար էր տեսել մնացեալ «Առանշահիկների» հետ՝ կենդանի թողնելով միայն իր փեսան դարձած Չարմիհրին:

Դասխուրանցին Բ.Ժք գլխի բուն տոհմացանկը քաղել էր, ամենայն հաւանականութեամբ, «684 թ. պատմութիւն»-ից, որը ժամանակակից հեղինակի մի հաւաստի շարադրանք է 630-680-ական թթ. անցքերի մասին եւ բառացի արտագրութեամբ պահպանուել է ՊԱ-ի Ա.իէ-լ եւ Բ.Ժք-իս գլուխներում¹⁶: Սակայն տոհմացանկում Սիրիանի 6-8-րդ սերունդներ համարուած է դ. «Աղուանից իշխաններ»¹⁷

¹² Հմմ. **А. А. Акопян**, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ер., 1987, էջ 119-120: Իբն Խորդադեհին այդ գործելատճը վերագրում է դեռեւս Արտաշիր Ա-ին:

¹³ Տե՛ս **Н. А. Караулов**, *Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане*, – СМОМПК, вып. XXXI, Тифлис, 1902, էջ 15, вып. XXXII, Тифлис, 1903, էջ 15, вып. XXXVIII, Тифлис, 1908, էջ 41, 43; **Баладзори**, *Книга завоевания стран*, Текст и перевод П. К. Жузе, Баку, 1927, էջ 7, **В. Ф. Минорский**, *История Ширвана и Дербенда*, էջ 190-191: **Ибн Хордадбех**, *Книга путей и стран*, Пер. с арабского, комментарии, исследование, указатели и карты Н. Велихановой, Баку, 1986, էջ 161: *Միւսլիմի աղբիւրները*, Գ. /Օտար աղբիւրները Հայաստանի և հայերի մասին/, 16/, Թարգմ. բնագրից, առաջարկներ եւ ծանոթագրութիւնները Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., 2005: *Միւսլիմի աղբիւրները*, Բ. /Օտար աղբիւրները Հայաստանի և հայերի մասին/, 11/, **Իբն ալ-Ասիր**, Թարգմ. բնագրից, առաջարկներ եւ ծանոթագրութիւնները Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., 1981, էջ 42: *Дербент-наме (Румянцевский список)*, – **А. Р. Шихсанов**, **Т. М. Айтберов**, **Г. М.-Р. Оразев**, *Дагестанские исторические сочинения*, М., 1993, էջ 38: Հմմ. **А. А. Акопян**, *Албания-Алуанк*, էջ 119; **М. С. Гаджиев**, *Гемма-печать царя Албании Асвагена*, էջ 118; **А. К. Аликберов**, *Эпоха классического ислама на Кавказе. Абу Бакр ад-Дарбанди и его суфийская энциклопедия Райхан ал-хака'ик (XI-XII вв.)*, М., 2003; նոյնի՝ *Сасанидская титулатура правителей Кавказа по арабо-мусульманским источникам*, – Сборник докладов, прочитанных на Международном научном симпозиуме "Государственность Кавказской Албании и ее этнокультурное наследие" (Ереван, 3-5.09.2007), М., 2013:

¹⁴ **М. Boyce**, *The Letter of Tansar: Tansar-name*, Rome (Istituto Italiano per il Medio ed Estremo Oriente. Serie Orientale, XXXVIII), 1968; **А. И. Колесников**, *Иран в начале VII века*, – ПС, вып. 22 (85), Л., 1970, էջ 20, 94; նոյնի՝ *Завоевание Ирана арабами (Иран при "праведных" халифах)*, М., 1982. Հմմ. **М. С. Гаджиев**, *Гемма-печать царя Албании Асвагена*, էջ 118:

¹⁵ **М. С. Гаджиев**, *Гемма-печать царя Албании Асвагена*, էջ 118-119:

¹⁶ Այս աղբիւրի մասին տե՛ս **А. А. Акопян**, *Албания-Алуанк*, էջ 196-201, նոյնի՝ *О хронологии последних событий в "Истории 684 года"*, – "Кавказ и Византия", вып. 6, Ер., 1988, էջ 24-36:

¹⁷ «Աղուանից իշխան»-ի հաստատութիւնը ստեղծուել էր Խոսրով Ապրուէզի կողմից 616 կամ 618 թ. Տիգրանում նրա հրաւիրած «Պարսից ժողովում», «Հայոց իշխան»-ի եւ «Վրաց իշխան»-ի հաստատութիւնների հետ միասին. տե՛ս **Անանու**

Վարազ Գրիգորի, Ջեւանշիրի եւ Վարազ Տրդատի մասին շատ հանգամանալից գրում են ուրիշ սկզբնաղբիւրներ (օր.՝ նոյն «684 թ. պատմութիւն»-ը), եւ այդ հաւաստի աղբիւրները ոչինչ չգիտեն նրանց՝ «միհրանեան» կամ «սասանեան» ծագման մասին: Իսկ ՊԱ Բ.Ժէ գլուխը շարադրանքի լեզուով ու ճոճով էապէս տարբերում է ՊԱ-ի այն կտորներից, որ բառացի արտագրուած են «684 թ. պատմութիւն»-ից, ուստի եւ, անկասկած, ամբողջացուած է հէնց Ժ դ. պատմիչի կողմից, ով վերապատմել է վերը նշուած տոհմաբանական աւանդութիւնը՝ զուտ կցելով այն Վարազ Գրիգորի նախնիների տոհմացանկին:

Մովսէս Դասխուրանցու բերած ծագումնաբանական աւանդութիւնը լիովին վիպական է եւ նոյնպէս գուրկ (անկախ որոշ ուսումնասիրողների շտապողական մտքերից¹⁸) իրական պատմական հիմքից: 595-626 թթ. երեսնամեակում անհնարին էր ինչպէ՛ս վեց իշխանական սերունդների յաջորդումը, այնպէ՛ս էլ ծնունդով պարսիկ իշխանի՝ քրիստոնէութիւն ընդունելը եւ ուղղակի մահապատժի չենթարկուելը (հաւատաւիտիւնների՝ պրոզելիտների համար իր պապ Անուշիրուանի «կանոնակարգած» պատժի՝ անյապաղ մահապատժի համեմատ՝ Մարիկիոս կայսերը «հայր» կոչող Խոսրով Ապրուէզի միակ մեղմացումն այն էր, որ մեղաւորին նախապէս մէկ տարի բանտում էին պահում՝ մագդէականութեանը վերադառնալու հնարաւորութիւն տալով)¹⁹: Նման բան ինչ-որ չափով հնարաւոր էր միմիայն Վաղարշ արքայի (484-488) եւ Վաչագան Բարեպաշտի օրերում, այն էլ լոկ ծնունդով քրիստոնէայի համար, ով ստիպուած գրադաշտականութիւն էր ընդունել: Բացի այդ՝ Վարազ Գրիգորի պապ Վարդան Քաջի անունը կայ Վաչագան Բարեպաշտի հրաւիրած Աղուէնի ժողովի մասնակիցների ցանկում («Վարդան Քաջ» Գարդմանայ տէր»), որը պահպանուել է ՊԱ-ում եւ «Կանոնագիրք Հայոց»-ում²⁰, եւ որի ճշտուած մօտաւոր ժամանակն է 515-523 թթ. միջակայքը²¹: ՊԱ-ում Վարդանը երկիցս կոչուած է նաեւ Գարդման բերդի կառուցող²²: Ընդ սմին, արաբ հեղինակները նոյն Կաւատ Ա եւ Անուշիրուան արքաներին են վերագրում (պիտի հասկանալ՝ նրանց ժամանակաշրջանին ու կամքին) «Ջարդաման քաղաք»-ի (=Գարդմանի), ինչպէս եւ Մուղղաբիլ (=Յուրտաւ՝ Գուգարաց բղէշխութեան կենտրոնը) ու Կարկառ (Գորոգուաց իշխանութեան հիւսիսում՝ Շուշիից 3 կմ արեւելք) քաղաքների կառուցումը²³: Ուշագրաւ է, որ այս երեքը կարեւոր ռազմավարական («կողմնապահական») կենտրոններ էին՝ ուղղուած Կովկասեան սահմանագծի պաշտպանութեանը²⁴:

Գիտարկելով Գարդմանացի իշխանատոհմի հետագայ «Միհրական-Միհրանեան» անուանման պատմական հիմքերը՝ կարելի է հաւանական համարել Ե-Ջ դդ. ընթացքում այդ տոհմի մի ճիւղի, թերեւս՝ խնամիական եւ դաւանաւիտիութեան ճանապարհներով որոշակի մերձեցումը Սասանեան տէրութեան մէջ Կովկասեան սահմանի պաշտպանութեան լիազօրութեան հիմնական իրագործող՝ պարթեական ծագումով, սակայն Ատրպատականում հաստատուած *Միհրան* ազգատոհմի հետ, որի մի քանի ներկայացուցիչների յիշատակում են հայկական, վրացական եւ ասորական աղբիւրները (Վարդանանց դէմ պատերազմող Միհրներսէս, Գրիգոր Ռաժիկ նահատակ Միհրան տոհմից²⁵, սկզբնապէս Ատրպատական շահրի մարզպան Վահրամ Չուբին եւն): Այդօրինակ մերձեցման շնորհիւ Գարդմանացի իշխանների ձեռքում մի պահ պիտի կենտրոնացուած լինէր Կովկասեան ողջ սահմանի պահպանութեան լիազօրութիւնը, որը նախկինում նրանք կիսում էին (այդպէս՝ նաեւ հետագայում) Գուգարաց բղէշխներին, Սիւնիքի եւ նրան ենթակայ Գորոգուի «կողմնապահ» իշխանների հետ: Ջ դ. սկզբների գործիչ Վարդան Քաջ Գարդմանացու Արմայէլ պապի հայր եւ «առաջին Միհրանեան» Միհր-Միհրանը, ում Դասխուրանցին վերագրում է Միհրաւան քաղաքի կառուցումը²⁶, եւ ով, առաւել մեծ հաւանակա-

(Է դար), *Աշխարհացոյց*, Գիտա-քննական բնագիր Ա. Յակոբեանի, – «Հանդէս ամսօրեայ», ԴԻԷ տարի, Վիեննա-Եր., 2013, էջ 35-45:

¹⁸ Տե՛ս, օր.՝ **К. В. Тревер**, *Очерки по истории и культуре Кавказской Албании*, էջ 235:

¹⁹ Հմմ. **А. И. Колесников**, *Иран в начале VII века*, էջ 71-72: Արքայից արքայի այդ «հրաման»-ի մասին տե՛ս նաեւ **Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն**, Ի ձեռն Ստ. Մալխասեանց, Եր., 1939, գլ. ԺԱ, էջ 47-48: *Պատմութիւն Սեբեոսի*, Աշխատասիրությամբ Գ. Վ. Արգարյանի, Եր., 1979, էջ 85:

²⁰ **Դասխ.**, Ա.իգ, էջ 89-94: *Կանոնագիրք Հայոց*, Աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, հտ. Բ, Եր., 1971, էջ 91-100: Կանոնների վերջին հրատարակութիւնը տե՛ս **Վաչագան Աղուանից արքայ**, *Սահմանադրութիւն կանոնական՝ ... եղեալ ի ժողովոյն, որ յԱղուէնն եղեւ*, Գիտա-քննական բնագիրն Ա. Յակոբեանի, – «Մատենագիրք Հայոց», հտ. Գ, Ջ դար, Անթիլիաս, 2004, էջ 51-112:

²¹ Հմմ. **Ա. Յակոբեան**, «Վաչագանի վէպ»-ը եւ *Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Ջ դարերի Աղուանքում*, – «Հանդէս ամսօրեայ», ԴԺԷ տարի, Վիեննա-Եր., 2003, էջ 45-142:

²² Տե՛ս **Դասխ.**, Բ.Ժէ, էջ 172, Գ.իբ/իգ/, էջ 339: Հմմ. նաեւ երկի Գ.Ժ գլխում, որը 704 թ. փաստաբնութիւն է:

²³ Տե՛ս *Միհրական աղբիւրներ*, Գ, էջ 265-266, 448-449, 495, 560: Հմմ. **Н. А. Караулов**, *Сведения арабских писателей о Кавказе...*, – СМОМПК, вып. XXXI, Тифлис, 1902, էջ 17; вып. XXXII, Тифлис, 1903, էջ 15-16; **Баладзори**, *Книга завоевания стран*, էջ 5-7:

²⁴ Հմմ. **Գ. Սարգսեան**, **Ա. Յակոբեան**, *Նորայայտ Կարկառ քաղաքատեղին Արցախում*, – «Վարձք», թիւ 5, 2012 (Եր.), էջ 43-45:

²⁵ Նրա մասին տե՛ս **G. Hoffmann**, *Auszüge aus Syrischen Akten Persischer Märtyrer*, Leipzig, 1880, էջ 78-86: **Ա. Յակոբեան**, *Ծիծեռնավանքի եկեղեցու անուանումը, նահատակի գերեզմանը եւ շինարարական փուլերը*, – «Հանդէս ամսօրեայ», ԴԺԴ տարի, Վիեննա, 2000, էջ 146-149, 177-178:

²⁶ Այլուստ անյայտ այս Միհրաւան քաղաքը, գուցէ, հէնց Գարդաբանին է՝ Վիրք-Քարթլիի արեւելքում, որի կառուցումը ուշ վրացական աղբիւրները վերագրում են աւելի վաղ ժամանակների:

նութեամբ, պիտի նոյնացուի Եղիշէի ու Դասխուրանցու մօտ իբրեւ Ե դ. կէսերի անցքերի մասնակից յիշուած **Մերսերուխտ**-Սերուխտ «ճորայ մարգպան»-ի²⁷ եւ վրաց աղբիւրների Բերգարող «Ռանի էրիսթաւ»-ի հետ²⁸ (վերջինիս դուստր Սագդուխտը կինն էր Վրաց թագաւոր Սիրդատի եւ մայրը Վախթանգ Գորգասաւի)²⁹, ժամանակով լիովին կարող էր լինել Մաշտոցի աջակից Խորս Գարդմանացի քրիստոնէայ եւ «հայկազուն» իշխանի³⁰ անմիջական յաջորդը:

Ըստ Դասխուրանցու՝ Ը դարից «Սիիրանեան» տոհմն աստիճանաբար թուլացաւ, իսկ նրանց փեսայ Ջարմիրի յաջորդ «Առանշահիկները» վերելք ապրեցին: Թ դ. 20-ական թթ. Դադիվանքի «խորածորում» սպանուեց «Սիիրանեան» վերջին «Աղուանից իշխան» Վարազ Տրդատ Բ-ն, եւ նրա մագապուրծ կինը դստերը կնութեան տուեց Խաչէնի «Առանշահիկ» Սահլ Սմբատեանի որդի Ատրներսեհին (արաբական երկերում՝ Մուալիա): Այդ «պատուաստութիւնից» ծնուեցին հօգր «Աղուանից իշխաններ» Գրիգոր Ատրներսեհեանը (Թ դ. վերջ), Սահակ Սեւադան (Թ – Ժ դդ.) եւ Փառիստսի թագաւոր Յովհաննէս Սենեքերիմը (Ժ դ. երկրորդ կէս)³¹: Ըստ ամենայնի՝ հէնց դա էլ եղել է Առանշահիկների ու Սիիրանեանների պայքարի եւ խնամիանալու վիպականացումը պատումի ստեղծման հիմքը: Թ դ. վերջից մահւ Փառիստում ու Գարդմանում հաստատուած եւ Մեծ Հայքի Բագրատունիներից անկախ, արքայական շուքով իշխելուն յաւակնող Խաչէնի ու Փառիստսի տէրերն իրենց ձգտումների «պատմական» հիմնաւորման համար կարելի էր դիտել (աւատական մասնատումութեան դարաշրջանի հայ աւագանու ուրիշ ներկայացուցիչների մման) սեփական ծագումը կապել առաւել նշանաւոր արքայական նախնիների հետ: Թ-Ժ դդ. ձեւաւորուած տոհմաբանական առասպելը խորենացիական «կողմնակալ քիւրաւոր» Առանի ու նրա սերունդների մասին շրջանառուող տուեալներին վիպական ոճով միախառնել է Ե դ. միւս «Առանեաններին» հաւասարագօր, բայց է դարում անմախաղէպ հօգրացած Գարդմանացի իշխանների ծագման մասին մի պատում, որի գլխաւոր իմաստը նրանց՝ Սասանեան արքայական տոհմաբանութեան վերագրելն էր: Աւելի վաղ գլուխներում (Ա.Ժդ-Ժե) Դասխուրանցին ճիշտ նոյն եղանակով միախառնել էր Հայկ Նահապետի սերունդներին եւ իրականում Արշակունի Վաչագանեաններին, որը նրան թոյլ էր տուել էլ աւելի նշանակալի ու «արժանի» ծագումնաբանական պատկեր ստանալ խաչէնցի «Առանշահիկների» համար³²:

Aleksan Hakobyan (Armenia)

THE HISTORICAL BASIS OF THE "ARANS SHAHIS – MIHRANIDS" GENEALOGICAL LEGEND

In the specialized publications, the history of *Ahuank'* of 6th to 9th centuries is always seen in parallel with the conflict of the two major prince dynasties, the "Aranshahiks" and the "Mihranids". The legends narrated by Movses Daskhuranc'i's in his "The History of Ahuank'" (10th century) were the only source of information about them, and no attempt was so far made to discriminate the real facts from tales in them.

This new study shows that the very opinion of the real existence and the conflict of the prince dynasties named "Mihranid" and "Aranshahik" should be reconsidered. The genealogical legend about the Mihranids, prince dynasty of the Sassanid origin was created after the annihilation of the prince dynasty *Gardmanac'i* (9th century), who originated from the Armenian patriarch Hayk, and the Khachen princes (probably the successors of the prince dynasty "Tzavdeaci", who also originated from Hayk) got the name "Aranshahik" not earlier than in the 9th to 10th centuries.

²⁷ Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ի լոյս ածեալ...աշխատութեամբ Ե. Տէր-Սիմասեան, Եր., 1957, Գ, էջ 77: Դասխ., Բ.ք, էջ 113-114: Եղիշէի ձեռագրերում պահպանուել է «Սերուխտ» ընթերցումը, որը պիտի վերականգնուի «Մերսերուխտ»-ի՝ ըստ պատմիչի այդ հատումը Ժ դարում բառացի արտագրած (եւ այլ աղբիւրներ չունեցող) Մովսէս Դասխուրանցու բնագրի:

²⁸ Վերջիններիս նոյնացման հնարաւորութիւնն արդէն նկատել է Իգոր Սեմեոնովը (И. Г. Семенов, *Генеалогия Картийских царей: от Мириана III до Вахтанга Горгасала*, Махачкала, 2007, էջ 50-51):

Հարկ է նշել, որ խեթերենի և հայերենի փոխադարձ կապը չի սահմանափակվում միայն նրանց՝ հնդեվրոպական լեզուների ընտանիքին պատկանելու հանգամանքով: Այդ կապն ավելի կարևոր է դառնում նրանց երկուստեք հարևանության, միատեսակ պատմական պայմանների և միևնույն շրջապատի լեզուներից կրած ընդհանուր ազդեցության հանգամանքներով: Կարևոր է շեշտել նաև խեթա-հայկական, խեթա-լուվիական նոր ընդհանրությունների բացահայտումը, որը կնպաստի ոչ միայն խեթագիտության ու հայագիտության առաջընթացին, այլև անգնահատելի ավանդ կդառնա ընդհանուր լեզվաբանության զարգացման ճանապարհին՝ ընձեռելով նրա տեսական դրույթները հաստատող նոր ապացույցներ: Շեշտենք նաև, որ պատմական Հայաստանի մի շարք տարածքներ՝ Փոքր Հայքը, Ծով-

¹⁴ Ст'ю Архивъ русской революціи, издаваемый Г. В. Гессеномъ, т. IX, издат. "СЛОВО", Берлинъ, 1923 - Воспоминанія о революціи въ Закавказьи (1917-1920) - Б. Байкова, с. 122:

քը, Աղձնիքի և Բարձր Հայքի արևմտյան կողմերը, գտնվել են Խեթական տերության կազմում կամ նրա քաղաքական և մշակութային ազդեցության ոլորտում: Այսինքն՝ Խաթթիի արևելյան շրջանների պատմությունն աշխարհագրական առումով սերտորեն շաղկապվում է Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասի պատմության հետ: Այդ ամենը հայ խեթագետների առջև խնդիր է դնում առավել մեծ ուշադրություն դարձնել այն խեթական աղբյուրներին, որոնք լույս են սփռում այդ տարածքների վաղ պատմության վրա: Հայ խեթագետների առջև մի կարևոր խնդիր ևս ի սկզբանե հայտնվեց՝ Հայկական լեռնաշխարհի միջին և ուշ բրոնզեդարյան հնագիտական տվյալները, միջագետքյան, սիրիական սկզբնաղբյուրների տեղեկությունները համադրել խեթական սեպագիր և հիերոգլիֆ արձանագրությունների տեղեկությունների հետ՝ ամբողջացնելու Հայաստանի Ք.ա. 2-րդ հազարամյակի քաղաքական և մշակութային պատմությունը:

Աշխատության հիմնական նպատակներից մեկն է ցույց տալ այն պատմական ուղին, որ անցել է հայկական խեթագիտությունը, տալ նրա զարգացման հիմնական փուլերը, ներկա վիճակը, ինչպես նաև հեռանկարային հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում: Պատկերն ամբողջական դարձնելու համար կտրվեն նաև հայ խեթագետների լույս ընծայած կարևորագույն հրատարակությունները: Մինչև բուն նյութին անցնելը հարկ է անդրադառնալ նաև Խաթթիի քաղաքական և մշակութային պատմությանն անդրադարձած հայ մասնագետներին, որոնք որոշակի աշխատանք կատարեցին, մինչև Խորհրդային Հայաստանում խեթագիտությունը սկսեց իր առաջին քայլերը:

Հայ պատմաբաններից առաջինը, որ սկսեց ուսումնասիրել Խաթթիի, խեթերենի, ինչպես նաև խեթա-հայկական լեզվական զուգահեռների պատմությունը, խեթագիտության ակունքներում կանգնած անվանի գիտնական Բ. Հրոզնու աշակերտն է՝ Ն. Մարտիրոսյանը¹: Հետագայում խեթագիտության ասպարեզում նորանոր աղբյուրների ի հայտ գալով՝ ընդլայնվեց նաև այն հայ պատմաբանների շարքը, որոնք գտնում էին, որ առանց Խաթթիի քաղաքական և մշակութային պատմության ուսումնասիրման հնարավոր չի լինի լուսաբանել Հայկական լեռնաշխարհի՝ Ք.ա. 2-րդ հազարամյակի պատմության շատ իրադարձություններ: Նրանց շարքում առաջիններից էին Ե. Քասունին, Հ. Տաշյանը, Ա. Սաֆրաստյանը, Ն. Ադոնցը և այլք², որոնք, չլինելով խեթագետներ, այնուամենայնիվ իրենց անուրանալի դերն են կատարել պատմագիտության այս ուղղության զարգացման մեջ:

Գրան գուգահեռ՝ Խաթթիի քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային պատմությունը մտավ Խորհրդային Հայաստանի պատմաբանների հետաքրքրությունների ոլորտը: Այդ ուղղությամբ իրենց անգնահատելի ավանդը բերեցին Հր. Աճառյանը, Աստ. Խաչատրյանը, Հ. Մանանդյանը, Գր. Ղափանցյանը, Ս. Երեմյանը, Լ. Բարսեղյանը և այլք³: Առանձնահատուկ հարկավոր է շեշտել Խորհրդային Հայաստանում խեթագիտության փաստացի հիմնադիր Գր. Ղափանցյանի «Հայաստան-հայերի բնօրրան» հիմնարար աշխատությունը⁴: Այս ուսումնասիրության մեջ ամփոփվել է հայագիտության համար կարևորագույն հարցերից մեկի՝ Հայաստանի (Ազգի) էթնիկ պատկանելության, տեղադրության, լեզվամշակութային փոխառնչությունների պատմության ամբողջական վերլուծությունը՝ տվյալ ժամանակի խեթագիտության ձեռքբերումների հիման վրա: Հարկ է շեշտել, որ հայագիտության համար կարևորագույն այս հարցը մինչ օրս մնում է արդիական և ուսումնասիրման կարգու:

Գեռնա Ն. Մարտիրոսյանի նախանշած և հիմք դրած կարևորագույն ուղղություններից մեկը՝ խեթա-հայկական լեզվական փոխառնչությունների և զուգահեռների հարցը, իր հետագա զարգացումը գտավ նշանավոր լեզվաբան Գ. Ջահուկյանի աշխատություններում⁵:

Խեթագիտական տարաբնույթ հարցերով զբաղվող նոր սերունդը, որ 20-րդ դարի 60-80-ական թթ. բազմակողմանի կրթություն էր ստացել ԽՍՀՄ գիտական կենտրոններում, ավելի զարգացրեց և նոր մակարդակի վրա բարձրացրեց պատմագիտական այս ուղղությունը Հայաստանում: Նրանք են Վ.

¹ Ն. Մարտիրոսյան, Հայերենի յարաբերությունը հեթիտերենի հետ. - «Հանդես ամսօրեայ» (ՀԱ), 1924, 9-10, էջ 453-459, 1926, 7-8, էջ 369-374: Նույնի՝ Պրպտումներ փոքրասիական անուններու մասին.-«Պատմաբանասիրական հանդես» (ՊԲՀ), 1961, 3-4, էջ 82-107: Նույնի՝ Նպաստ մը հեթ և հայ բառաբանության. - ՊԲՀ, 1972, 2, էջ 163-186:

² A. Safrastian, Hittite place names. - *Masis*, 1929, I, 8, pp. 189-192. Յ. Տաշյան, Հայեր եւ ուրարտեանք, Վիեննա, 1934: Նույնի՝ Թէ ի՞նչպէս կազմուեցաւ հայ ազգը, ՀԱ, 1934, 1-2, էջ 28-31: Ե. Քասունի, Նախահայկական Հայաստան, Պէյրութ, 1950: Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972:

³ Հ. Աճառյան, Նոր հրատարակություններ հիթիթների մասին. -«Նորք», 1925, 5-6, էջ 389-393: Նույնի, Հայոց լեզվի պատմություն, մ. 1, Երևան, 1940, էջ 127-149: Գ. Ղափանցյան, *Chetto-armeniaca*, Երևան, 1931: Նույնի, *Историко-лингвистические работы*, Ереван, 1956-1975, тт. 1-2. Ա. Խաչատրյան, Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Երևան, 1933: Я. Манандян, О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, Ереван, 1956, с. 68-155. Ս. Երեմյան, Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում. - ՊԲՀ, 1958, 3, էջ 59-74: Նույնի՝ Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը. - ՊԲՀ, 1970, 2, էջ 27-56: Լ. Բարսեղյան, Հայաստան-Ազգիի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին. - *Տեղեկագիր*, 1963, 6, էջ 101-106: Նույնի՝ Հայաստան-Ազգիի ռազմա-քաղաքական պատմությունից. - «Տեղեկագիր», 1964, 7, էջ 73-79:

⁴ Г. Капанян, Хайаса-колыбель армян. Этногенез армян и их начальная история. Ереван, 1947.

⁵ Գ. Ջահուկյան, Հայերենի և խեթա-լուվական լեզուների բառային կազմի ծագումնաբանական զուգահեռները.- ՊԲՀ, 1967, 4, էջ 57-74: Նույնի՝ Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1987, էջ 338-339: Նույնի՝ О соотношении хайасского и армянского языков.- ՊԲՀ, 1988, 1, էջ 60-79, 2, էջ 68-88:

Խաչատրյանը, Լ. Գոլովյովան, Ա. Առաքելյանը, Ա. Քոսյանը, Հ. Հարությունյանը⁶: Խեթագիտության տարաբնույթ՝ հիմնականում խեթա-հայկական լեզվաբանական, դիցաբանական, ինչպես նաև խեթա-խուռիական հարաբերություններին են անդրադարձել նաև Ն. Սկրտչյանը, Ս. Պետրոսյանը, Հ. Ավետիսյանը, Ա. Պետրոսյանը, Գ. Վարդումյանը⁷: Անհրաժեշտ է նշել նաև խեթագետ Վ. Խաչատրյանի ներդրումը Հայաստանում խեթագիտության զարգացման մեջ: Իր աշխատանքներում նա հատուկ շեշտ է դրել Հայոց հին շրջանի պատմության, խեթա-հայկական փոխհարաբերությունների, Խեթական տերության մահանգների և երկրամասերի տեղադրության հարցերին⁸:

Այսպիսով, վերոնշյալ գիտնականների ջանքերի շնորհիվ Երևանը ԽԱՀՄ այլ քաղաքների՝ Մոսկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի հետ միասին 20-րդ դարի 30-80-ական թթ. ընթացքում դարձավ խեթագիտական կենտրոններից մեկը:

1991 թ. Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո նոր խնդիրներ առաջացան և նոր հորիզոններ բացվեցին հայ խեթագիտության համար: Մի կողմից թուլացան մախկին ակտիվ կապերը ԽԱՀՄ խեթագիտական կենտրոնների հետ, մյուս կողմից հնարավորություն ընձեռվեց նոր կապեր հաստատելու արևմտյան խեթագիտական կենտրոնների հետ, նոր գրականություն ձեռք բերել, ինչպես նաև մասնագիտական հմտությունները զարգացնելու այդ կենտրոններում: Հնարավորություն ընձեռվեց նաև այցելելու խեթական հուշարձաններ:

Խոսելով ներկա փուլի մասին՝ անհնար է պատկերացնել հայկական խեթագիտության զարգացումն առանց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի գործունեության, որի բացման առաջին իսկ օրվանից պատմագիտական այս ուղղությունը դարձավ առանցքայիններից մեկը: Այստեղ իր կարևոր դերակատարումն ունի բաժնի վարիչ Ա. Քոսյանը: Նրա աշխատանքներն աչքի են ընկնում Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորներին վերաբերող սեպագիր աղբյուրների համակողմանի վերլուծությամբ: Դրանք առանձնանում են նաև նորահայտ սկզբնաղբյուրների օգտագործմամբ, Հայկական լեռնաշխարհի երկրների հետ Խաթթիի հարաբերությունների նորովի մեկնաբանություններով⁹: Լինելով հայտնի արևելագետներ Վ. Իվանովի, Ի. Դյակոնովի աշակերտը՝ նա իր փորձն ու գիտելիքները փոխանցել է և շարունակում է փոխանցել երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին, որոնցից մեկը տողերիս հեղինակն է¹⁰: Նրանց շարքում են նաև ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի գիտաշխատողներ Հ. Հմայակյանը և Մ. Խանգաղյանը¹¹:

Հարկ է նշել, որ աշխատանքները Հայաստանի և հարակից երկրների պատմության համար առանցքային նշանակություն ունեցող խեթական սկզբնաղբյուրների ուսումնասիրման ուղղությամբ շարունակական բնույթ են կրում: Բացի ամենամյա հրատարակություններից՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի աշխատակիցները նախաձեռնել են խեթագիտության հետագա զարգացման համար մի կարևոր քայլ ևս. 2013-2015 թթ. ընթացքում Ա. Քոսյանի ղեկավարությամբ ուսումնասիրության առանձին առարկա կղառնա «Միջպետական պայմանագրերը Խեթական տերության և Հայաստանի միջև» թեման: Կիրականացվեն Հայաստանի (Ազգի) և Խաթթիի փոխհարաբերություններն արտացոլող երկու միջպետական պայմանագրերի (Թուդխալիյա III -

⁶ А. Аракелян, Термин ^(E)sinapsi в хеттских клинописных текстах, - *ՊԲՀ*, 1975, 3, էջ 238-241: Նույնի՝ «Дом для омовений» по данным хеттских источников, *Древний Восток*, 5, 1988, с. 16-20. Л. Головлева, Царство Алзи во второй половине II тыс. до н.э. - *Древний Восток*, 3, 1978, с. 71-87. Р. Арутюнян, Некоторые особенности хеттских домашних праздников. - *Вестник древней истории*, 1992, 1, с. 119-135. Նույնի՝ The Hittite Ritual Against a Curse (CTH 429), in *Hittite Studies in Honor of H.A. Hoffner, Jr. on the Occasion of his 65th Birthday*, 2003, pp. 149-168.

⁷ Ն. Սկրտչյան, Խեթա-հայկական մի քանի բառային ընդհանրություններ, - *ՊԲՀ*, 1969, 1, էջ 238-246: Նույնի՝ Խեթա-հայկական ընդհանրություններ. - «*Լրաբեր հասարակական գիտությունների*» (ԼՀԳ), 1970, 7, էջ 58-69: Ա. Պետրոսյան, Հայկական դիցարանի հնագույն ակունքները. - *ՊԲՀ*, 2004, 2, էջ 205-233: Նույնի՝ Հայերենի եւ Փոքր Ասիայի հնագույն լեզուների առնչություններ. - «Հայկագետ հայագիտական հանդես», 2011, ԼԱ, էջ 393-404: С. Петросян, Племенной союз Хайаса-Аззи в системе двоичных противопоставлений. - *ԼՀԳ*, 1987, 3, էջ 77-87: Г. Вардунян, Дохристианские культы армян, *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, 1991, 18, էջ 65-70: Հ. Ավետիսյան, *Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների քաղաքական պատմությունը մ.թ.ա. XVII-IX դդ.*, Երևան, 2002:

⁸ В. Хачатрян, *Восточные провинции Хеттской империи*, Ереван, 1971. Նույնի՝ *Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում*, Երևան, 1998:

⁹ Ա. Քոսյան, *Лувийские царства Малой Азии и прилегающих областей в XII-VIII вв. до н.э.*, Ереван, 1994. Նույնի՝ *Խեթական տերությունը և Ափսիյական (Տրոյական պատերազմը)*, Երևան, 1997: Նույնի՝ *Տուն Թրոգոմայ*, Երևան, 1998: Նույնի՝ *Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը*, Երևան, 1999: Նույնի՝ Հայաստանի աստվածները. - *ՄՄԱԵԺ*, 2005, XXIV, էջ 444-457: Նույնի՝ Towards the Hittite Eastern Periphery. - *Aramazd*, 2011, VI/2, pp. 87-94. Նույնի՝ *Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների)*, Երևան, 2004:

¹⁰ Ռ. Ղազարյան, *Հայաստ. քաղաքական և մշակութային պատմությունը*, Երևան, 2009: Նույնի՝ *Մուրսիի II-ի «Տանամյա» տարեգրությունը*, Երևան, 2013:

¹¹ Հ. Հմայակյան, Հայաստան ^(U)U.GUR-ը և Արա Գեղեցիկը, *ՄՄԱԵԺ*, XXIII, 2004, էջ 381-394: Նույնի՝ Խեթա-հայկական լեզվական փոխառություններ. - *Մերձավոր Արևելք*, 2009, VI, էջ 307-313: Մ. Խանգաղյան, Խեթական արտաքին քաղաքականության որոշ հարցերի շուրջ. - *ՄՄԱԵԺ*, 2007, XXVI, էջ 13-24:

Մարիյա, Սուպիլիուլիումա I - Խուլկանա, Բ.ա. 14-րդ դ.) գիտական հրատարակությունը և պատմագիտական ուսումնասիրությունը:

Առանձնահատուկ պետք է նշել նաև, որ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը գիտական հանրությանը կներկայացնի նաև կարևորագույն մի աշխատություն՝ «Հայաստանի հարակից երկրների պատմություն» քառահատորյակի առաջին հատորը (պատասխանատու խմբագիր՝ Ա. Քոսյան): Վերջինիս մեջ առանձին գլուխներով, ժամանակակից խեթագիտության ձեռքբերումների հիման վրա, տրվել է նաև Փոքր Ասիայի հին շրջանի, Խեթական տերության, Լուվիական պետությունների պատմությունը, ուսումնասիրվել են հայ-խեթական, հայ-լուվիական տարաբնույթ փոխառնչությունների հարցեր:

Սակայն ժամանակն իր նոր պահանջներն է առաջ քաշում: Խեթագիտությունը, նոր սկզբնաղբյուրների ի հայտ գալով, բուռն կերպով զարգանում է, և տարեցուտարի նորանոր աշխատություններ են ի հայտ գալիս: Այս ամենը հրատապ է դարձնում հետ չմնալ և փորձել համընթաց քայլել ժամանակակից խեթագիտության հետ: Հայաստանում այս ուղղության ապագան մասամբ կապված է նաև ասպիրանտուրայի, մագիստրատուրայի միջոցով նոր կադրեր պատրաստելու, ինչպես նաև համապատասխան արևմտյան կենտրոնների հետ կապերն ավելի խորացնելու և զարգացնելու հետ, որը բավականին արդյունավետ իրականացնում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժինը:

Հանրագումարի բերելով այս ամենը՝ մենք կարող ենք փաստել, որ հայկական խեթագիտությունը արևելագիտական կայացած ուղղություններից մեկն է, որն ունի իր ուրույն դիմագիծը, այն է՝ խեթագիտական տվյալները ծառայեցնել հայագիտության տարաբնույթ հարցերի վերհանմանը, քննարկմանը և լուծումներ գտնելուն: Այն դեպի ապագա միտված գիտական ուղղություն է, որը ժամանակի ընթացքում նորանոր նյութեր կտրամադրի, որոնք նոր լույս կսփռեն Հայաստանի և հարակից երկրների հին շրջանի պատմության տարբեր հարցերի վրա:

Robert Ghazaryan (Armenia)

HITTITOLOGY IN ARMENIA: PAST, PRESENT AND FUTURE

One of the main goals of the work is to show the historical path that the Armenian Hittitology has passed; the main stages of its development, its current status and future possibilities in the Republic of Armenia. The first Armenian historian who began to explore the history of Hatti and Hittite-Armenian linguistic parallels was N. Martirosyan. It is important to emphasize the fundamental work (Hayasa - the cradle of Armenians) of Gr. Ghapantsyan, actual founder of Hittitology in the Soviet Armenia. The new generation that was educated in the scientific centers of the Soviet Union in the 60-80s of the 20th century developed this field of historiography even more. The representatives of this generation are L. Golovlyova, A. Arakelyan, A. Kosyan, H. Harutyunyan, etc. It should also be mentioned that V. Khachatryan greatly contributed to the development of Hittitology in Armenia. Talking about the current stage of Hittitology, it is impossible to imagine the development of Armenian Hittitology without the activities of the Department of Ancient Orient of the Institute of Oriental Studies of NAS RA.

Վարդան Մառքեռեսյան (ԱՄՆ)

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱԿԱ-ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ (1890-1914)

19րդ դարու վերջերուն, քնիկապաշտութիւնը (nativism) վերելք կ'ապրէր ԱՄՆի մէջ: Ազգային բացառիկութեան այս ուրճացած դրսեւորումին ուղեկից էին քաղաքացիութեան, էթնիկ պատկանելութեան, գաղթականութեան, դասակարգի ու խտրականութեան հարցերու քննարկումներ, ինչպէս եւ օրէնսդրական միջոցառումներ, հիմնուած՝ սպիտակ ցեղի տիրապետութեան խօսքիին (discourse) վրայ: Ըստ քաղաքացիութեան օրէնքի 1870ի բարեփոխումին՝ քաղաքացի դառնալու իրաւունք ունէին միայն սպիտակ եւ սեւամորթ ցեղին պատկանող «ազատ անհատներ»՝ տեղաբնիկ թէ օտարերկրացի¹: Որպէս ցեղային ստորակայ արժէք ունեցողներ՝ «դեղին» եւ «թուխ սպիտակ» (off-white) օտարականները պարտաւոր էին երկրէն դուրս մնալ կամ քաղաքացիութեան իրաւունք գրկուիլ:

«Դեղին» (չինական) ներգաղթի արգիլումէն ետք (1882) մամնօրինակ փորձեր սկսան յաջորդ գաղթալիքին նկատմամբ, որ 1890ական թուականներուն միլիոնաւոր «թուխ սպիտակներ» կը բերէր

¹ William Mack and William B. Hale (eds.), *Corpus Juris: Being a Complete and Systematic Statement of the Whole Body of the Law*, vol. II, New York and London, The American Law Book Co. and Butterworth and Co., 1915, p. 1113.

հարաւային ու արեւելեան Եւրոպայէն եւ արեւելեան Միջերկրականէն, որոնց շարքին՝ հայերը: Առաջին փուլը պիտի տւէր մինչեւ 1914:

Հակասութիւններով լի հայ-ամերիկեան այս փոխազդեցութիւնը տեղի ունեցած է երկու հիմնական վայրերու մէջ՝ Պոստոն-Նիւ Եորք գիծը (արեւելք) եւ Ֆրէզնո (արեւմուտք): Պոստոն-Նիւ Եորք գծի գաղափարախօսական գրոհները սահմանափակուած էին հռետորական արտայայտութիւններով հայոց դէմ: Ֆրէզնոյի պարագային, սակայն, հակա-գաղթականական կեցուածքը արտայայտուեցաւ ոչ միայն գաղափարախօսական, այլեւ ընկերային ու տնտեսական խտրականութեան միջոցառումներով (բնակարան գնելու արգելք, եկեղեցիէ վտարում, ակումբներու անդամակցութեան արգիւտմ եւ այլն), որոնք շարունակուեցան մինչեւ 1950ական թուականները²: Սոյն զեկուցումը պիտի անդրադառնայ առաջինին:

1890ական թուականներուն, Պոստոնի ու Նիւ Եորքի քաղաքական, ընկերա-տնտեսական եւ մշակութային ընտրանին, որ շրջանի բարձրակարգ համալսարանները (Հարվարտ, Եէյլ, եւ այլն) դաստիարակուած էր ու եւրոպական մարդաբանութեան նորագոյն միտումներուն կը հետեւէր, ցեղային մաքրութեան պաշտպանի եւ անգլօ-սաքսոնականութեան պահակի դերը ստանձնած էր:

1891ին շեշտելով անգրագիտութեան քննութեան կարիքը գաղթականներուն համար ծերակուտական Հենրի Գապոթ Լոճ զանոնք սահմանած էր որպէս «ցեղեր, որոնց հետ անգլիախօս մարդիկ երբեք չեն խառնուած, եւ որոնք ամբողջովին օտար են Միացեալ Նահանգներու ժողովուրդի մեծ մարմնին»³: Նոյն տարին, «ամերիկացիներու սարսափը աւելցնելու նպատակով», ան պաշտօնական տեղեկանք մը մէջբերած էր, թէ արեւելեան գաղթականութիւնը աճ կ'արձանագրէր եւ աւելցուցած, որ «սուրիացիներն ու հայերը կը սկսին ժամանել» եւ որ «ամենէն անցանկալի գաղթականները ռուս հրեաներն են, որոնք մեծաւ մասամբ շրջիկ մանրավաճառներ են»⁴: Ի դէպ, Լոճ 1918ին Հայաստանի Անկախութեան Ամերիկեան Կոմիտէի սատարող գլխաւոր ուժերէն պիտի ըլլար, իսկ 1920ին՝ Հայաստանի ամերիկեան հովանաւորութեան (mandate) գլխաւոր ընդդիմադիրներէն մէկը⁵:

Գաղթականութեան Սահմանափակման Լիկայի քարտուղար Փրեսքոթ Հոլ 1896ին հռետորական հարցում մը կը դնէր. ամերիկացիները արդեօք կ'ուզէին «այս երկիրը բնակեցնել բրիտանական, գերմանական եւ սկանտինաւեան ցեղերով, պատմականօրէն ազատ, ուժական եւ յառաջադէմ, կամ սլաւական, լատինական եւ ասիական ցեղերով, պատմականօրէն հալածուած, առհաւական (atavistic) եւ լճացած»⁶: Պարզ է, որ հայերը «ասիական» (= արեւելեան) բառին տակ կը մտնէին:

Նոյնպէս յաճախակի մէջբերուած խօսքերով տնտեսագէտ Ֆրանսիս Ուոքըր 1896ին նման մեկնաբանութիւններու շարժառիթը կը բացատրէր. «Անոնք ծեծուած մարդիկ են ծեծուած ցեղերէ, որոնք կը ներկայացնեն ամենէն խոր ձախողութիւնը գոյապայքարի մէջ եւ որոնց կը պակսին այն գաղափարներն ու ընդունակութիւնները, որոնցմով մարդիկ յանձն կ'առնեն... սեփական խնամքի եւ ինքնակառավարման խնդիրը»⁷: Հակա-գաղթականական հոսանքը կը մեկնէր այն հասկացութենէն, որ նորեկները ի բնէ անկարող էին հաւասարիլ «մաքուր» սպիտակ ցեղի անդամներուն՝ Ամերիկայի առաջատար բնակիչներուն, ատակ՝ կառավարելու եւ յառաջդիմելու, ի տարբերութիւն «ծեծուած» ու անկեալ ցեղերուն, որոնց անսովոր դիմագծերն ու լեզուները արդէն բաւարար էին զանոնք «օտար» ու ստորակայ նկատելու, անկարող՝ ամերիկեան «մեծ մարմնին» հետ ձուլուելու:

Անոնց մուտքին արգելք հանդիսանալու նպատակով 1897ին հակա-գաղթականական հոսանքը յաջողեցաւ «անգրագիտութեան քննութեան» (illiteracy test) օրէնք մը վաւերացնել տալ Գոնկրէսին մէջ, որ վերջինի ենթարկուեցաւ նախագահ Կրովըր Գլիվլէնտի կողմէ: Անոր ճիգերը ամբողջ քսանամեակ մը ապարդիւն մնացին, մինչեւ որ 1917ին նման օրէնք մը վաւերացուեցաւ նախագահ Վուդրօ Ուիլսոնի օրօք:

Բազմաթիւ հայասիրական հատորներ աշխատեցան հայերը ներկայացնել որպէս ամերիկեան հանրութեան յարմարող՝ կովկասեան (= սպիտակ), արիական (= հնդեւրոպացի) եւ արեւմտեան ժողովուրդ: 1893ին Թուրքիոյ ամերիկեան առաջին դեսպանը՝ Սամուէլ Գոքս, հայերը սահմանած էր որպէս «աշխարհի ամենախելացի ժողովուրդը» եւ «Արեւելքի եանքիները՝ շատ աւելի մտային սրու-

² Համառօտ անդրադարձի մը համար, տե՛ս **Յաամիկ Յասյեան**, Հայերի գիղատնտեսական գործունէութիւնը Ֆրէզնոյում, «Սփիւռքագիտութիւն» տարեգիրք, Երեւան, 2012, էջ 257-258:

³ **Henry Cabot Lodge**, *Speeches and Adresses, 1884-1909*, Boston and New York, Houghton Mifflin Company and The Riverside Press Cambridge, 1909, p. 247.

⁴ **Henry Cabot Lodge**, The Need for Restricting Immigration, *The Review of Reviews*, June 1891, p. 589.

⁵ Տե՛ս Sevan G. Terzian, Henry Cabot Lodge and the Armenian Mandate Question, 1918-1920, *Armenian Review*, Autumn 1991, p. 23-37.

⁶ Մէջբերումը տե՛ս **Desmond King**, *Making Americans: Immigration, Race, and the Origins of the Diverse Democracy*, Cambridge (Ma.) and London, Harvard University Press, 2000, p. 53է

⁷ **Francis A. Walker**, *Discussions in Economics and Statistics*, vol. II, New York, Henry Holt and Company, 1899, p. 447.

թեամբ»⁸։ Ամերիկացի թարգմանչուհի եւ հանրային գործիչ Ալիս Սթոն Պլաքուել բնորոշ տողեր կ'արձանագրեր հայ բանաստեղծութեան ժողովածուին մէջ (1896). «Հայաստանը կեդրոնն էր աշխարհի ամենահին քաղաքակրթութիւններէն մէկուն։ Անոր ժողովուրդը ժամանակակից էր ասորեստանցիներու եւ բաբելոնացիներու։ Անոնք արիական ցեղէ եւ մաքուր կովկասեան արիւնէ են»⁹։ Այլուր, կ'աւելցներ. «Աշխարհագրականօրէն, Հայաստան կամուրջ է Եւրոպայի եւ Ասիոյ միջեւ։ Վաղ դարերուն հայերը Ռատիոսի դերը կատարեցին եւ «կամուրջը պահեցին», պաշտպանելով Եւրոպայի դարպասը ընդդէմ Ասիոյ անքաղաքակիրթ հորդանքներուն...»¹⁰։ Նման հաստատումներ, սակայն, բաւարար եղած չեն համոզելու ընդդիմադիր հոսանքը, որ երկար ժամանակ հայերը ներկայացուցած է ամենէն ժխտական գոյներով (օրինակ՝ «անձնապէս անհրապոյր», «չափազանց ջղայնացուցիչ» եւ «ժանտաբոյր անհատներ»)»¹¹, «Միջին Արեւելքի մակաբոյժներ» եւ «Լեւանտի տականք»¹²), այն կեղծ դրոյթով, որ անոնք անատակ էին երկրագործութեան եւ միայն կը զբաղէին շրջուն առետուրով, ինչ որ ամենաստորին զբաղումներէն էր ամերիկացիներու աչքին։ 1919ին քաղաքական գործիչ Ուոլթըր ճորճ Սմիթ կ'ամփոփէր ամերիկեան պատկերացումը. «Միջին ամերիկացիին ընթացիկ գաղափարը հայուն մասին այն է, որ ան խելացի, գերխելացի, վաճառական մարդ մըն է։ Կ'ենթադրուի, ինչպէս թրքանպաստ ամէն տեսակ թշնամիներ կ'ամբաստանեն զանոնք, որ մակաբոյժներ եւ տգրուկներ են, իսկ թրքական ատելութեան ու հալածանքի պատճառը թէ՛ կրօնքն է եւ թէ՛ այն, որ ամէնուրեք, անոնք խեղճ թուրքը կ'աղքատացնեն՝ ոճիրն ու մարդասպանութիւնը գրեթէ անհրաժեշտ դարձնելով։ Արդ, հայ ժողովուրդին 85 առ հարիւրը երկրագործ է։ Այդ ժողովուրդին միայն 15 առ հարիւրը արհեստագործ եւ արհեստավարժ (professional) մարդիկ են»¹³։

1909ին կրթական գործիչ Էլվուտ Գըպըրի, ակնարկելով նոր գաղթականներուն բնոյթի (ներառեալ՝ «յոյները, սուրիացիները եւ հայերը՝ հարաւէն») կտրուկ փոփոխութեան, կ'աւելցներ. «Անգրագետ, հլու, ինքնավստահութեան եւ նախաձեռնութեան պակասներով, օրէնքի, կարգի եւ կառավարութեան անգլօ-գերմանական հասկացութիւնները չունենալով, անոնց գալուստը ծառայած է մեր ազգային տոհմագիծը խորապէս լուծարելու եւ մեր քաղաքացիական կեանքը աղաւաղելու»¹⁴։ Նոյն տարին բանակի գնդապետ եւ բժիշկ Չարլզ Վուտըրֆ կը բանաձեռէր բացայայտ ցեղապաշտ դրոյթ մը. «Գաղթականները այժմ կու գան Եւրոպայի եւ Ասիոյ այնպիսի մասերէ, ուր շատ աւելի քիչ ուղեղ կայ, քան արիացիին ունեցածը. տարբեր ծագումով մարդիկ են, դժուար ձուլելի՝ արիացիներու հետ»¹⁵։

Չարմանալի չէ, ուրեմն, որ նման փաստարկումներու յաճախակի կրկնութեան լոյսին տակ ԱՄՆի գաղթականութեան բաժնի պետ Ռիչըրտ Գէմփպէլ Նոյեմբեր 3, 1909ին կը վճռէր, որ թուրքերը, հայերը, սուրիացիները եւ արաբները «ազատ սպիտակ անհատներ» չէին, այլ «դեղին ցեղ»ին կը պատկանէին եւ, հետեւաբար, քաղաքացիութեան իրաւունք չունէին¹⁶։ Ամիս մը ետք գաղթականութեան բաժինը դատ կը բանար Պոստընէն չորս հայերու դէմ (Հալաճեան, Էքմէքճեան, Մուրատեան եւ Պալեմնց), որոնք քաղաքացիութեան դիմած էին՝ պատճառաբանելով, որ անոնք «ասիացի» եւ ոչ-սպիտակ էին, քանի որ անոնց հայրենիքը Վուսիոյ արեւելքը կը գտնուէր։ Այս փաստարկը կտրուկ մերժումի արժանացաւ. Դեկտեմբեր 24, 1909ին, Մասաչուսեցի շրջանային դատաւոր Ֆրէնսիս Լուրը չորս հայերուն ի նպաստ վճիռ կ'արձակէր՝ «ցեղ»ի սահմանումը, պատմական վկայութիւնները եւ գրականութիւնը ուսումնասիրելէ ետք¹⁷։

Դատաւորը եզրակացուց, որ հայերը «ազատ սպիտակ օտարականներ» էին, եւ որ կառավարութեան անպաշտպանելի պնդումը երկրորդում չէր որեւէ հեղինակութենէ։ Օսմանեան կայսրութեան արեւմտեան սահմանագծին ժողովուրդները աշխարհագրականօրէն Ասիոյ, բայց ցեղայնօրէն՝ Եւրոպայի կը պատկանէին, իսկ «հայերը միշտ նկատուած են կովկասեաններ եւ սպիտակ անձեր», եւ «անոնց քաղաքակրթութեան հայեացքը ուղղուած է դէպի Եւրոպա»¹⁸։

⁸ Samuel S. Cox, *Diversions of a Diplomat in Turkey*, New York, Charles L. Webster, 1893, p. 181f Հմմտ. ամերիկացի միսիոնար Հ. Տուայթի արտայայտութիւնը 1854ին՝ «Արեւելքի անգլօ-սաքսոններ» Քրիստոֆ Դ. Գ. Օ. Դուայթ, *Christianity in Turkey: A Narrative of the Protestant Reformation in the Armenian Church*, London, James Nisbet, 1854, p. 14)f

⁹ Alice Stone Blackwell, *Armenian Poems Rendered into English Verse*, Boston, Roberts, 1896, p. III.

¹⁰ Անդ. էջ 90։

¹¹ Benjamin Wheeler, Greece and the Eastern Question, *The Atlantic Monthly*, June 1897, p. 727.

¹² Allan McLaughlin, Hebrew, Magyar, and Levantine Immigration, *The Popular Science Monthly*, September 1904, p. 442.

¹³ *Maintenance of Peace in Armenia: Hearings*, Washington, D.C. «Government Printing Office, 1919, p. 73.

¹⁴ Ellwood P. Cubberley, *Changing Concepts of Education*, Boston, Houghton Mifflin, 1909, p. 14.

¹⁵ Charles E. Woodruff, *Expansion of Races*, London and New York, Rebman, 1909, p. 389.

¹⁶ Robert Mirak, *Torn Between Two Lands: Armenians in America 1890 to World War I*, Cambridge, Ma., Harvard University Press, 1983, p. 282.

¹⁷ Citizenship for Armenians. Circuit Court Declines to Bar Them on Government's Plea, *The New York Times*, December 25, 1909; Decision for Armenians, *The Boston Globe*, December 25, 1909.

¹⁸ *The Federal Reporter (annotated)*, vol. 174, January-March 1910, p. 845.

Դատավճիռը «օտար ազգութիւններու մեծ հորդաներուն»¹⁹ դէմ նկրտումները չկասեցուց: 1912ին բժիշկ Ալֆրէտ Ռիտ կ'ահագանգէր. «Օտար երկիրներու տականքը եւ թափափուկները, անցանկալիները՝ որոնցմէ իրենց սեփական ազգերը ազատելու խիստ հետամուտ են, որոնք ամբոխներով կու գան մեր ափերը», առաջարկելով մերժել Յունաստանէն, Հարաւային Իտալիայէն եւ Սուրիայէն գաղթականները, «ինչպէս եւ մեծ մասը հրեաներու, հունգարացիներու, հայերու եւ թուրքերու»²⁰: Գովելով սուրիացիներու, հայերու, արաբներու եւ թուրքերու բնական խելքը ընկերաբան էտուարտ Ռոս 1914ին կը դատապարտէր անոնց մաքրութեան, ֆիզիքական եւ բարոյական քաջութեան պակասը, եւ համայնքներու կազմութիւնը, որոնք «կը կասեցնեն ձուլումը անոնց, որոնք ձուլումի պէտք ունին» եւ «ատակ են գերբնակութեան, հիւանդութեան եւ անբարոյականութեան բոյներ դառնալու»²¹:

Հայոց «սահմանային» սպիտակութիւնը զանոնք խոցելի կը դարձնէր: 1911ին ԱՄՆ Գոնկրէսի համար պատրաստուած «Յեղերու եւ ժողովուրդներու բառարանը» հայերը կը սահմանէր որպէս «ասիական թուրքոյ արիական ցեղը կամ ժողովուրդը», մինչ կասկած կը յայտնէր անոնց կարճ հասակին եւ կարճագլուխ գանկերուն նկատմամբ, որոնց հարթութիւնը համեմատած էր մալայացիներու, այսինքն՝ «դեղիններու» հետ²²: Լոուի դատավճիռը հիմնուած էր այնպիսի փաստերու վրայ, որոնք նորէն կրնային վիճարկուիլ օրինական կամ գիտական հիմքերով: «Հայերը սպիտակ են, բայց...» երկուութիւնը կրկին պիտի դրսեւորուէր 1923-1925ին՝ Թադոս Գարթոգեանի դատաւարութեան ընթացքին, ուր հայ համայնքը միասնական ուժերով վերջնական հակահարուած պիտի տար ամերիկեան կառավարութեան՝ փաստելով հայոց թէ՛ սպիտակութիւնը եւ թէ՛ քաղաքացիութեան իրաւունքը²³: Մինչ այդ, հակա-գաղթականական ալիքին երկրորդ՝ 1917-1924 փուլը, յաջողութեամբ կը պսակուէր 1924ի Ազգային Ակունքներու օրէնքով (National Origins Act, սովորաբար կոչուած՝ «քոթա»-ի (quota) օրէնք)²⁴, որ բացայայտօրէն ուղղուած էր «թուիս սպիտակ» գաղթալիքին դէմ եւ ի զօրու մնաց մինչեւ 1965, գրեթէ ամբողջութեամբ արգիլելով հայոց գաղթը Միացեալ Նահանգներ:

Vartan Matiossian (USA)

ANTI-IMMIGRATIONISM IN THE UNITED STATES AND THE ARMENIANS (1890-1914)

At the end of the nineteenth century, nativism was the driving force of a wide conversation and a series of legislative measures on immigration, citizenship, ethnic identity, class, and discrimination in the United States, based on the dominant discourse of race. Right of citizenship was extended to “free aliens” of white and African descent in 1870. It was claimed that yellow and “off-white” aliens should stay outside the country or not have access to citizenship because of their racial inferior quality.

The prohibition of Chinese immigration (1882) was followed by attempts to restrict the wave of the 1890s, which brought millions of “off-white” immigrants from southeastern and eastern Europe, and the eastern Mediterranean, including Armenians. Those immigrants were considered “races most alien to the body of the American people” (Henry Cabot Lodge), lacking spirit of enterprise and self-government. Social and moral features of Armenians, their whiteness, and their ability to integrate within the American society were questioned. In 1909 the U.S. government disputed their whiteness in the courts, but the Boston Circuit Court ruled in favor of Armenians. The paper analyzes the first phase of the relation between anti-immigrationism and the Armenians until 1914.

¹⁹ Henry Pratt Fairchild, *Greek Immigration to the United States*, New Haven: Yale University Press, London, Henry Frowde, 1911, p. 242.

²⁰ Alfred Reed, The Medical Side of Immigration, *Popular Science*, April 1912, p. 391-392.

²¹ Edward Alsworth Ross, *The Old World in the New: The Significance of Past and Present Immigration to the American People*, New York, The Century, 1914, p. 190-194.

²² *Dictionary of Races and Peoples*, Washington, Government Printing Office, 1911, p. 168 Տե՛ս նաեւ *Abstracts of the Report of the Immigration Commission*, vol. 1, Washington, Government Printing Office, 1911, p. 217:

²³ Տե՛ս Earlene Craver, On the Boundary of White: The Cartozian Naturalization Case and the Armenians, 1923-1925, *Journal of American Ethnic History*, 28, 2 (2009), p. 28-56:

²⁴ 1921ին ժամանակաւոր հիմքերով վաւերացուած Արտակարգ Քոթայի օրէնքը (Emergency Quota Act) փոխարինւած այս օրէնքը սխալմամբ թարգմանուած է «Ազգային Ծագումների Բվոտայի օրէնք» անունով: Տե՛ս Քննարկի Անագեան, *Ամերիկայի Միացեալ Նահանգների հայ գաղութի պատմութիւնը (սկզբնաւորումից մինչեւ 1924 թ.)*, Երեւան, «Գիտութիւն», 2000, էջ 37:

Արտակ Մաղալյան (Հայաստան)

ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ

1375 թ.՝ Կիլիկիայի հայոց թագավորության անկումից հետո, այնուհանդերձ, հայկական մի շարք լեռնային մասն իշխանությունների հաջողվեց պահպանել իրենց կիսանկախ գոյությունը ողջ միջնադարի ընթացքում: Այդ իշխանություններից առավել հզորը Արցախի մելիքություններն էին, որոնց հենքի վրա հնարավորության դեպքում կարող էր վերստին հառնել հայոց պետականությունը:

1752 թ. Վարանդայի տխրահռչակ Մելիք-Շահնազար Բ-ի թողովությամբ Արցախում հաստատվեց քոչվոր ջլանչիի ցեղի սարըջալլու ճյուղի ցեղապետ Փանահ խանը: Այդ առիթը ներկայացավ այն ժամանակ, երբ Մելիք-Շահնազարը իր հետ թշնամացած Արցախի մյուս չորս մելիքությունների տիրակալներին դիմադրելու համար դաշնակցեց Փանահի հետ՝ նրան տրամադրելով իր մելիքության տարածքում գտնվող Շուշի բերդը: Այս կապակցությամբ ռուս նշանավոր գորավար Ա. Սուվորովը իրավացիորեն նկատել է. «Իր հայրենիքի այս դավաճանը կանչել է Փանահ խանին..., տվել նրա ձեռքը իր ամուր բերդը՝ Շուշի դալան և սղնախով հանդերձ հպատակվել նրան»¹:

1775 թ. հուլիսի 6-ին Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանի կողմից Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցուն ուղղված մի նամակում նրա մասին կարդում ենք. «Եւ եթէ ի կողմանցս յայսցանէ հարցանիցես. **հնգեքին մէլիքքն են ընդ մեզ բաց ի մէլիք Շահնազարէն, որ դեռևս խարդախութեամբ ընդ մեզ գնայ, և ոչ զնախանձն իւր հատանէ ի մէնջ**»²: Կարծում ենք՝ ում ում, սակայն Գանձասարի կաթողիկոսին և միաբաններին անհնար է մեղադրել Արցախի՝ իրենց ապրած ժամանակի պատմության չիմացության մեջ:

Մեկ այլ ժամանակակից՝ ռուսահայոց թեմի առաջնորդ Հովսեփ արքեպս. Արղությանը, 1780 թ. հերթականությամբ ներկայացնելով Խամսայի մելիքներին, Մելիք-Շահնազարի մասին գրում է. «**Ջորացուցին է տաճկաց և միաբան ընդ խանին**»³: Իսկ ահա գեներալ Պավել Պոտյոմկինին Հ. Արղությանի՝ 1783 թ. հունվարի 28-ին գրած նամակում կարդում ենք. «Մելիք Աղամի, մելիք Յովսեփի և մելիք Եսայու խորհուրդն մի էր, բայց **ի մէջ նոցա որպէս թէ խտրոցէր մէլիք Շահնազարն, որ է այր խորամանկ, քերահաւատ և ամենայն գործս բարեաց անախտան, նենգաւոր և դաւաճանօղ եղբարց**: Ի Ղարաբաղ գայր էլ ինչ, որպէս յերկրիս նօղայիքն խորանաշրջիկ, որք կոչիւր Ջվանշիր, որոյ գլխաւորին անունն էր Փանայ խան: Խորամանկն ի չարիս մէլիք Շահնազարն զնա կոչեալ ի յօգնութիւն իւր, կամաւ իւրով հնազանդեցաւ նմա և զբերթն իւր ետ նմա... Բացի մէլիք Շահնազարէն և ի տանէն իւրմէ, այլ մէլիքքն և բոլոր բնակիչքն հնգեքին գաւառացս և հոգևորքն սոցա, եթէ գտին առիթ ինչ օգնութեան, ապստամբելոց են ի խանէն..., զի ի ձեռաց բարբարոսացն ոչ ունին զյանդորր և զապահով կեանս, յաղագս կեղեքելոյն նոցա և կամ մշտապէս պատերազմացն»⁴: Այս վկայությունները գրվել են Բաֆթու «Խամսայի մելիքությունները» հանրահայտ աշխատության ստեղծումից ուղիղ մեկ դար առաջ, երբ դեռևս ծնված չէին մաս Գարաբաղի խանության պատմությունը շարադրող գրագիր-միրզաները, և **չափազանց հստակ ցույց են տալիս իրերի իսկական դրությունը Արցախում**:

Այդ մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում մաս Սիրգա Աղիգյոզալ-բեկը. «Մելիք-Շահնազարն, տեսեալ զտկարութիւն իւր, ի հոգս անկաւ զհետևանաց գործոյն և եկն առ գերաստիջան խանն, որում և ծառայէր հաւատարմութեամբ, որպէս և զտեղին, ուր հիմնեցաւ Շուշի բերդաքաղաքն, եցոյց յիշեալ խանին»⁵: Բերված տեղեկությունները չափազանց հստակ ցույց են տալիս տխրահռչակ Մելիք-Շահնազարի իրական դերակատարությունը նորաթուխ խանի՝ Արցախում հաստատվելու գործում: Սորթապաշտ դավաճանից հետին թվով «դիվանագետի» ստեղծումը ոչ այլ ինչ է, եթե ոչ պարզունակ պատմաշինարարություն, որն այս անգամ իրականացվում է հայ առանձին հեղինակների կողմից⁶: Ընդ որում, առանց որևէ փաստի առաջ է քաշվում մի անհեթեթ վարկած, ըստ որի, ի՛բր...

¹ М. Нерсисян, А. В. Суворов и русско-армянские отношения в 1770–1780-х годах, Ереван, 1981, с. 91, 136.

² Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 258, վավ. 25, բնագիր:

³ Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, Ереван, 1990, с. 153.

⁴ Там же, с. 212-213.

⁵ Սիրգա Աղիգյոզալ-բեկ, Ղարաբաղ-նամե, Մատենադարան, ձեռ. 4463, էջ 6ա: Հրատ. տե՛ս Ա. Մաղալյան, Սիրգա Աղիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամե» աշխատության տեղեկություններն Արցախի մելիքությունների մասին. – «Հանդես ամսօրեայ», 2011, թիւ 1–12, էջ 400:

⁶ Մենք նկատի ունենք քաղաքագետ Դ. Բաբայանի, Մելիք-Շահնազարի շառավիղ Ա. Մելիք-Շահնազարովի և պատմաբան Պ. Չոբանյանի հրապարակումները (տե՛ս Դ. Բաբայան, Политическая история Карабахского ханства в контексте арцахской дипломатии XVIII века, Ереван, 2007; П. Чобанян, Проблема легитимности Карабахских ханов в контексте политической истории Шуши. – «Рабочие тетради». Приложение к военно-научному журналу «Айканак банак», 2013, N 1–2, с. 10-29):

Փանահ խանին հատուկ խորհրդակցությունից հետո Արցախ են «հրավիրել» տեղի մելիքները: Նրանք մոռացության են տալիս այն պարզ իրողությունը, որ Փանահի և նրա որդի Իբրահիմի իշխանությունը, նրանց՝ Արցախում հաստատվելու առաջին իսկ օրից **իր սուր ծայրով ուղղված էր տեղի հայոց մելիքությունների և դրանց հոգևոր կենտրոն Գանձասարի կաթողիկոսության դեմ**: Բարեբախտաբար, Արցախում այդ ժամանակաշրջանում իշխած բոլոր մելիքների անուններն էլ քաջ հայտնի են, և Արցախի պատմությանը քիչ թե շատ ծանոթ յուրաքանչյուր ոք գիտե, որ այդ մելիքներից երկուսը՝ Ջրաբերդի Ալլահդուլի սուլթանը⁷ և Խաչենի Մելիք-Ալլահվերդին սպանվել են հենց Փանահի կողմից՝ նրա Արցախում հաստատվելուց շատ չանցած: Ընդ որում, Մելիք-Ալլահվերդու մահով անդառնալի հարված էր հասցվում Խաչենի նշանավոր Հասան-Ջալալյանների տոհմի աշխարհիկ իշխանությանը: Փանահի որդի Իբրահիմի կողմից 1781 թ. սպանվեց Դիզակի Մելիք-Եսային, իսկ 1786-ին՝ Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանը: Իբրահիմ խանի կողմից սպանվեցին նաև Դիզակի Մելիք-Բախտամը, Մելիք-Աբասը և Մելիք-Եսայու որդի Բաղդադ-բեկը, իսկ Մելիք-Եզանյանների տոհմի մի ճյուղը բռնությամբ մահմեդականացվեց: Խաների կողմից մելիքական տների ներկայացուցիչներին բռնությամբ մահմեդականացնելու փորձերի կապակցությամբ նշանավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը դիպուկ նկատել է. «Հիմնականում խաների կրոնական անհանդուրժամությունը ուղղված էր մելիքական տների դեմ, սրվելով քաղաքական և հաճախ նաև դրա հետ կապված նրանց մուլքադարական իրավունքների դեմ»⁸:

Փաստերը ցույց են տալիս, որ Մելիք-Շահնազարի «դիվանագիտական» ծրագրերը չէին անցնում սեփական կաշին հայ մելիքների վրիժառությունից փրկելու ցանկությունից անդին, որի համար չի խորշել անգամ դավաճանությունից: Իսկ անթաքույց դավաճանությունը որպես քողարկված «դիվանագիտություն» ներկայացնելը սպառնում է նորանոր «դիվանագիտական» դավաճանություններով: Եվ, վերջապես, դավաճանի արդարացումը կյանքի հիմնական նպատակ դարձրած՝ Մելիք-Շահնազարի նորոյա «փաստաբանները» թող պատասխանեն այն հարցին, թե բազում վնասներից բացի ի՞նչ են շահել Խամսայի մելիքություններն ու արցախահայությունը նրա «դիվանագիտությունից»: Այդ ի՞նչ «ամվանական» իշխանություն ունեցող խաներ էին Փանահն ու Իբրահիմը, որ յուրաքանչյուր պատեհ առիթի դեպքում սպանում էին Արցախի մելիքներին ու մելիքագույններին, թունավորում Գանձասարի կաթողիկոսին, կողոպտում վանքը և բնավեր դարձնում կաթողիկոսությունը, բռնի իսլամացնում ուրիշների, խլում այս կամ այն մելիքի ունեցվածքը⁹: Այդ ի՞նչ «ամանաթներ» էին նրանք¹⁰, որ իրենք էին պատանդառում Արցախի մելիքների մայրերին, կանանց ու որդիներին: Իբրահիմ խանի հարեմում էր գտնվում անգամ Մելիք-Շահնազարի դուստր Հուրիզադ խանումը: Մի՞թե հնարավոր է դստերն ուղարկել սեփական «ամանաթի» հարեմ... «իր գործերը բարելավելու և դիրքերն ամրապնդելու համար»¹¹:

Այստեղ ցանկանում ենք հիշատակել նաև մեկ այլ չափազանց ակնառու օրինակ. 1780-ական թթ. վերջերին Իբրահիմ խանը ցանկացել է Բայազանի մոտ թաղված Աղվանից Շուփահադիշո հայրապետի գերեզմանի վրա մզկիթ կառուցել, ու թեև Սարգիս եպս. Հասան-Ջալալյանը «ջանացեալ է խափանել զայն, բայց խանն այսու առթիւ ի կատար հասուցեալ է, ասելով՝ չէ՛ փոյթ թէ կաթողիկոս է հայոց, զի գործն ի՛ն է Աստուածահաճոյ»¹²: Իսկ XVIII դարի հայ մարդու համար սրանից ավելի մեծ վիրավորանք դժվար է պատկերացնել:

Ի վերջո, եթե Արցախի հայերը և նրանց մելիքները քիչ թե շատ մարդավայել կյանք ունենային խանական կարգերի օրոք, ինչո՞ւ պետք է սեփական կյանքը վտանգելու գնով մինչև Պետերբուրգ խնդրագրեր ու պատվիրակություն ուղարկելին՝ խանական լծից իրենց ազատելու և Ռուսաստանի հովանու ներքո հայկական պետականության վերականգնման խնդրանքով: Նշված և չնված բազմաթիվ փաստերի լույսի ներքո պարզապես անյուրջ են թվում որոշ հեղինակների՝ հետին թվով Շահնազարին «դիվանագիտական» ինչ-ինչ հորինովի ծրագրեր վերագրելու ճիգերը:

Խամսայի մելիքները ստիպված էին նոր մարտահրավերների դիմակայելու Արցախում Փանահ խանի հայտնվելուց հետո: Հենց Փանահի ժամանակներից սկսվեց այլացել և այլակրոն էթնիկ տարրի ներթափանցումն Արցախ: «Լարաբադի նորահաստատ խանության համար կարևոր քաղաքական հարց էր մահմեդական ազգաբնակչություն կազմելը երկրի այն կողմերում, ուր չկար այնպիսի տարր, որը պիտի խանական իշխանության նեցուկը դառնար: Փանահ խանը, դավաճանությամբ (խորամանկությամբ – Ա. Մ.) սողոսկելով զուտ հայաբնակ Խամսայի երկրի սիրտը, շուտ զգաց, որ Շուշու ժայռերը դեռ բավարար հիմք չեն տիրապետություն հաստատելու համար, – իրավացիորեն գրում է

⁷ Մատենադարան, ձեռ. 7816, էջ 20բ: Հրատ. տե՛ս Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ., հ. I, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 396, որտեղ կարդում ենք. «Ռ-Ճ-ԸԸ (1749) թվին Փանահն էսպան մելիք Ալլադուլին՝ սեպտեմպեր ամսումն»:

⁸ Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք II, Երևան, 1959, էջ 256:

⁹ Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 172, 236; Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий, сост. Ю. Барсегов, т. I, М., 2008, с. 79–80.

¹⁰ Հմմտ. II. Чобанян, указ. соч., с. 17.

¹¹ Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, Երևան, 2000, էջ 42:

¹² Ս. Ջալալյան, Կաթողիկոսը Աղուանից, Մատենադարան, ձեռ. 8066, էջ 62բ:

Լեոն,– և նա շտապեց թուրք թափառական ցեղեր գրավել դրսից՝ հարևան խանություններից, խոստանալով նրանց զանազան արտոնություններ: Այսպիսով, Վրաստանից և այլ տեղերից Ղարաբաղ փոխադրվեցին փյուսյան, կարաչարի, ջինլի, դեմիրչի-հասանլու, դըզլ-հաջիլի, սաֆի-քյուրդ, բոյ ահմեդլի, սահաթլի, քենգերլու և այլ շատ թափառական ցեղեր: Հոր օրինակին հետևելով, Իբրահիմ խանն էլ ամեն ջանք գործ էր դնում՝ դրսից բերելու նոր մահմեդական տարրեր»¹³: Հաջիսամլու, քուլանի, ալիանլու, սուլթանլու և միմջուվանլու քրդական ցեղերը հիմնականում բնակեցվեցին Քաշաթաղի և Քարվաճառի գավառներում¹⁴: Վերոնշյալ ցեղերի շարանին կարող ենք ավելացնել թուրք-թաթարական և քրդական քոչվոր ու կիսավայրենի այնպիսի ցեղախմբեր, ինչպիսիք են ջևանշիրցիները, սարը-ջալլունները, օթուզիքիները, քյաբիրլունները, իգիրմիդորդները և այլք, որոնց բնակեցումը Ղարաբաղի տարածքում **իսկական չարիք դարձավ արցախահայության համար:**

Այդպիսով, Արցախում բնակվող միատարր ու միաձուլ հայության մեջ մտավ օտարասեռ էթնիկ տարրը՝ իր հետ բերելով մտքի և մշակույթի ահավոր հետամնացություն¹⁵: Խաշմարած ցեղերի՝ Արցախ ներթափանցելուց հետո ընկած ողջ ժամանակաշրջանը հագեցած է եղել բնիկ հայերի և եկվոր էթնիկ տարրերի հակամարտությամբ: Բերված ցեղախմբերը, առաջին հերթին, Փանահ խանի համար հուսալի դաշնակիցներ էին Արցախի՝ իրեն չենթարկվող մելիքությունների դեմ պայքարի ժամանակ¹⁶:

Մելիք-Շահնազարը վախճանվել է 1792 թ.՝ իրենից հետո որպես տխուր ժառանգություն թողնելով Ղարաբաղյան հակամարտությունը: Հայ ականավոր գրող Բաֆֆին նրան անվանել է ոչ այլ կերպ, քան **«Ղարաբաղի կործանիչ»**¹⁷, իսկ Լեոն՝ **«Խամսայի հայկական անկախության բուն և սկզբնական կործանիչ»**¹⁸: Բնավ էլ պատահական չէ, որ ինչպես տեղեկանում ենք Ամարասի Իսրայել կաթողիկոսի՝ Մելիք-Շահնազարի վերջին օրերի մասին մի ուշագրավ վկայությունից, անգամ նրա չորս որդիները սկզբնապես հրաժարվել են մահվան մահճում պառկած իրենց հոր հետ վերջին տեսության ժամանակ առաջարկված հայրական ժառանգությունից: «Ի Ռ-ՄԽԱ (1792) թվին Հայոց, որ Մելիք Շահնազարն մին ազար գտավ,– գրում է Իսրայել կաթողիկոսը,– **Ջումշուտն** մեծ որդին էր, նորանից վերն Հուսեինն էր, առաջ **Ջումշուտին** հրավիրեց, թե՛ որդի՛, ես ծերացել եմ, քիչ մի ազար էլ ունիմ, դու ինքդ էլ իմ մեծ որդին ես, եկ իմ էլածն, թե՛ նաղդ, թե՛ վէջ, թե՛ հայվանաթ, թե՛ մյուլք քեզ հիպա անեմ, քանի որ խելքս գլխիս է. քանի որ ասեց՝ **Ջումշուտն** հանձն չառավ՝ թե լալա, ես քու ապրանքին թամահ չունեմ, ես էնչափ ունեմ, որ ինձ հերիք է: Սրանից ետն **Հուսեինին** կանչեց մոտն, էս թաքլիպս էսպես էլ Հուսեինին արավ, սա էլ հանձն չառաւ: Սրանից ետն **Ջհանկիրին**՝ թե որդի, ես քանի կենդանի եմ, եկ իմ ապրանքս քեզ հիպա անեմ. էս **Ջհանկիրն** էլ չի հանձն առավ: Նորանից ետն **Ջհանպախշն** կոչեց մոտն՝ ասաց, որդի՛, ես էս Խամսումս մին մարդ եմ, ինձ աշխարքս գիտեմ, կարում չեմ, որ ես էս դովլաթս կառավարեմ, շատ է, և էլ մենակ եմ, եկ ես քեզ հիպա անեմ, էս տունս, էս դովլաթս դու յո՛լ տար, էս **Ջհանպախշն** հանձն չառավ. ետն Մելիք Շահնազարն շատ նեղացավ, մինչա **Ջհանպախշին** անիծեց»¹⁹: Բերված հատվածը հստակ ցույց է տալիս, որ Մելիք-Շահնազարը փոքրիշատե հարգանք և հեղինակություն չի ունեցել անգամ սեփական որդիների աչքում, էլ ուր մնաց թե դրականապես «տնօրիններ» բովանդակ արցախահայության ճակատագիրը: **Այդ առումով մահամերձ Մելիք-Շահնազարի որդիների վարմունքը ոչ միայն նրա ազգադավ գործունեությանը տրված մի յուրահատուկ և դաժան գնահատական է, այլև Մելիք-Շահնազարի նորագույն «փաստաբանների» ամուլ ջանքերի վրա քաշված սև խաչ:**

Մելիք-Շահնազարի ազգադավ գործունեությունը չափազանց ծանր ազդեցություն ունեցավ Արցախի հայկական իշխանությունների վրա: Նրա գործունեությունը գնահատելիս միշտ պետք է նկատի ունենալ այդ հանգամանքը: Այս խորապատկերում կարծում ենք սխալված չենք լինի, եթե պնդենք, որ **Մելիք-Շահնազարի բացասական կերպարի հեղինակը ոչ թե Բաֆֆին է կամ մեկ այլ ուսումնասիրող, այլ հենց ինքը՝ Մելիք-Շահնազարը, իր ազգադավ գործերով:**

Փանահ խանի մահից հետո (1762 թ.) նրա որդին և հաջորդը՝ Իբրահիմ խանը (1762–1806), ստիպված էր դեռ երկար պայքար մղել հայկական ինքնիշխան մելիքությունների դեմ: Ղարաբաղի խաներին չհաջողվեց վերջնականապես ճնշել այստեղ մնացած մելիքների դիմադրությունը: Վեճերը նրանց միջև շարունակվեցին ընդհուպ մինչև 1813 թ., երբ Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքված Գյուլիստանի պայմանագրի համաձայն Արցախն անցավ Ռուսաստանին:

Ամփոփելով նշենք, որ այնքան ժամանակ, քանի դեռ մելիքություններից մեկի տիրակալի սրտում բուն չէր դրել դավաճանության ախտը, նրանք ըստ էության ազատ և ինքնիշխան էին, իսկ երբ Մելիք-Շահնազար Բ-ի թողտվությամբ Արցախում հաստատվեց վաչկատուն սարըջալլունների ցեղա-

¹³ Լեոն, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Երևան, 1973, էջ 303:

¹⁴ Լ. Հովհաննիսյան, Էթնիկական գործընթացները Քաշաթաղի և Քարվաճառի գավառներում 18-րդ դարում և 19-րդ դարի առաջին կեսին. – «Եզերք», 2006, N 1, էջ 13:

¹⁵ Վ. Սևյան, Շուշի, Երևան, 1991, էջ 31:

¹⁶ Ա. Մաղալյան, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Երևան, 2007, էջ 182:

¹⁷ Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1987, էջ 452:

¹⁸ Լեոն, նշվ. աշխ., էջ 375:

¹⁹ Նույն տեղում, էջ 376:

պետ Փանահ խանը, վերջինիս և նրա որդուն՝ Իբրահիմ խանին՝ հաջողվեց զգալիորեն թուլացնել Արցախի մելիքությունները: Եվ միայն Արցախյան հերոսական ազատամարտի շնորհիվ հաջողվեց սրբազրել Մելիք-Շահնազարի թույլ տված շուրջ 240-ամյա ճակատագրական սխալը:

Artak Maghalyan (Armenia)

ON SEVERAL ASPECTS PERTAINING TO THE HISTORY OF THE MELIQDOMS OF ARTSAKH

In 1752, following the permission of Varanda's notorious ruler Meliq Shahnazar II, chieftain of the Sarijallu branch of the nomadic Jevanshir tribe, Panah khan, settled in Artsakh (Karabakh). After his appearance, the local Armenian meliqs of Khamsa confronted new challenges. It was precisely after Panah, that ethnically and religiously foreign elements started penetrating into Artsakh. As a result, the treacherous actions of Meliq Shahnazar II had very harsh consequences on the Armenian principalities of Artsakh. This factor must be always beared in mind while assessing Meliq Shahnazar's legacy. Only thank to the heroic Artsakh liberation war the 240-years old mistake of Meliq Shahnazar was rectified.

Էդուարդ Մելքոնյան (Հայաստան)

ՀԱՅԱՍՏԱՆ – ՍՓՅՈՒՌ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՍՊԱՍՈՒՄՆԵՐ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Երրորդ հանրապետության և Սփյուռքի աշխույժ հարաբերությունների դրական հետևանքները, անշուշտ, ակնհայտ են: Դրա հետ մեկտեղ նկատելի է, որ որքան կարևոր խնդիրների շուրջ են ընթանում հարաբերությունները, այնքան նրանք ավելի մեծ բարդությունների են հանդիպում: Դա առավել նկատելի է տնտեսական և քաղաքական ոլորտներում, որտեղ Հայաստանի և Սփյուռքի փոխադարձ սպասումներն ու ակնկալիքները հաճախ փոխարինվում են փոխադարձ հիասթափությամբ:

Հայաստանում 1980-ականների վերջին առանձնահատուկ սպասումներ ունեին Սփյուռքում գործող Հայ հեղափոխական դաշնակցություն, Ռամկավար-ազատական և Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություններից: Ամեն բանից զատ՝ թվում էր, թե հատկապես Արևմուտքի երկրներում իրենց գոյության ընթացքում այդ կազմակերպությունները, դառնալով քաղաքական մշակույթի կրողներ, դրանք կներմուծեն Հայաստան: Դրա հետ մեկտեղ, Հայոց համագգային շարժման (ՀՀԸ) մեծ ժողովրդականության պայմաններում, այնուամենայնիվ, երկրի բնակչության մի մասը գաղափարական կամ անձնական պատճառներով նրանց հետ էր կապում քաղաքական այլընտրանքային գործունեության հնարավորությունը: Նշված և այլ հանգամանքների բերումով ՀՀԳ-ն և ՌԱԿ-ը շատ շուտով հայտնվեցին առաջատար կուսակցությունների շարքում՝ ՀՀԸ-ից հետո: Մոլորության մեջ ընկնելով նման՝ իրենց իսկ համար անսպասելի հաջողությունից՝ կուսակցությունների, նախ և առաջ ՀՀԳ-ի առաջնորդները դրսևորեցին մեծ հավակնություններ և դիմեցին գործողությունների, որոնք կարևոր հետևանքներ ունեցան ինչպես երկրի ներքաղաքական զարգացման, այնպես էլ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների համար: Խոսքը 1991 թ. վերջին Հայաստանում կայացած նախագահական առաջին ընտրությունների մասին է: Թեև ՀՀԸ-ի առաջնորդներից մեկի՝ Լ. Տեր-Պետրոսյանի հաղթանակը սպասելի էր և ակնհայտ բոլորի համար, այնուամենայնիվ ՀՀԳ-ն առաջադրեց սեփական թեկնածուին: ՀՀԳ-ի այս քայլը ՀՀԸ-ն գնահատեց որպես մարտահրավեր, այն էլ մի կուսակցության կողմից, որը նոր-նոր էր հաստատվել Հայաստանում, որը անմասնակից էր անկախության համար վարած պայքարին, և որը ղեկավարվում ու ֆինանսավորվում էր արտասահմանից: ՀՀԸ-ն, որի ժողովրդականությունը այդ օրերին հասել էր իր գագաթնակետին, ընդունեց մարտահրավերը և դիմեց կոշտ գործողությունների բոլոր ընդդիմադիր ուժերի դեմ: 1994 թ. դեկտեմբերին երկրի նախագահը կասեցրեց ՀՀԳ-ի գործունեությունը Հայաստանում: ՀՀԳ-ի հիմնական՝ սփյուռքյան հատվածը խստորեն դատապարտեց Հայաստանի իշխանությունների, ըստ իրենց, «հանցավոր քաղաքականությունը», «բռնաճնշումները»: Ավելին, ի պատասխան՝ նրանք դիմեցին ծայրահեղ քայլի. դադարեցրին կամ ընդհանրապես չեղյալ հայտարարեցին Հայաստանի հետ իրենց համագործակցության գրեթե բոլոր ծրագրերը: Իսկ ՌԱԿ-ը, գուրկ լինելով գաղափարաբանական, քաղաքական և կազմակերպական հստակ դիրքորոշումից և տոկոսությունից, պառակտվեց և հայտնվեց, ինչպես և Սփյուռքում, երրորդական կազմակերպությունների շարքում: Ստեղծված իրավիճակում Հայաստանի իշխանությունները, ի դեմս ՀՀԸ-ի, որոշեցին հակամարտությունը տեղափոխել նաև Սփյուռք՝ ազգային կուսակցությունները լրիվ չեզոքաց-

մելու նպատակով: Հայեցակարգային առումով խնդիր դրվեց հիմնավորել, որ կուսակցությունների՝ որպես քաղաքական կազմակերպությունների գոյությունը Սփյուռքում ընդհանրապես անիմաստ է ու ավելորդ: Այս ամենի հետ մեկտեղ ՀՀԸ-ն փորձեց (առանց քիչ թե շատ շոշափելի արդյունքների) Սփյուռքում, մասնավորապես ԱՄՆ-ում ստեղծել սեփական կառույցներ՝ որպես այլընտրանք գործող կուսակցություններին: Այսպիսով, Երրորդ հանրապետության առաջին իսկ օրերից իշխանության հարցը, ինչպես և Առաջին հանրապետության ժամանակ, դարձավ մի կողմից՝ երկրի ղեկավարության և մյուս կողմից՝ Սփյուռքի որոշ շրջանակների բացահայտ առճակատման պատճառ:

1998 թ. իշխանափոխությունից հետո Ռ. Քոչարյանի համար բարդ խնդիր էր դարձել ձեռք բերած իշխանության պահպանումը: Դրա համար նրան անհրաժեշտ էր ոչ միայն և ոչ այնքան առանձին անհատների, որքան որևէ կայացած քաղաքական ուժի օժանդակությունը: Նա վարպետորեն օգտագործեց ստեղծված իրավիճակը. ի տարբերություն Լ. Տեր-Պետրոսյանի՝ նա ոչ թե շարունակեց ՀՀԴ-ի հետ առճակատումը, այլ հակառակը՝ նախ դարձրեց իր հավատարիմ դաշնակիցը, ապա իր բարեկամական ամուր գրկում չեզոքացրեց ՀՀԴ-ին, ստիպեց նրան բավարարվել եղածով և մի կողմ դնել իր իշխանական հավակնությունները՝ փոխարենը տալով նրան որոշակի մասնաբաժին իշխանության հետ սերտաճած ֆինանսատնտեսական համակարգում: Գործելակերպի մասն վերափոխման արդյունքում ՀՀԴ-ի ներկայացված լինելը երկրի իշխանության որոշ օղակներում չէր նշանակում, սակայն, որ նրա «հայաստանյան» հատվածը, իսկ վերջինի միջոցով՝ կուսակցության սփյուռքյան շրջանակները (էլ չասած՝ ընդհանրապես Սփյուռքը) քիչ թե շատ լուրջ մասնակցություն ունեին երկրի ղեկավարման գործում: Ամեն դեպքում, դրա շնորհիվ Ռ. Քոչարյանը դաշնակից ձեռք բերեց հենց Սփյուռքում՝ ի դեմս տարբեր երկրներում գործող ՀՀԴ-ի կառույցների ու նրա համակիրների: Դրան մեծապես նպաստեց նաև այն, որ նրա օրոք Ցեղասպանության ճանաչման հարցը ընդգրկվեց ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում՝ որպես առաջնահերթ խնդիրներից մեկը: Նույն այդ տարիներին իշխանությունների նշած սերտաճումը ֆինանսատնտեսական համակարգի հետ, տարբեր ոլորտներում մենաշնորհների ստեղծումն ու հովանավորումը խիստ սահմանափակեցին Սփյուռքի հետ այդքան սպասված տնտեսական փոխշահավետ համագործակցության հնարավորությունները:

Նույն կերպ գործեց նաև նորընտիր նախագահ Ս. Սարգսյանը: Իրադրությունը փոխվեց 2009 թ., երբ ստորագրվեցին հայ-թուրքական հարաբերությունները կարգավորող արձանագրությունները: Սփյուռքահայերի արձագանքը ընդհանուր առմամբ եղավ բացասական: Ստեղծված իրավիճակում երկրի նախագահը իշխանությունների դիրքորոշումը պարզաբանելու նպատակով ուղևորվեց արտասահման և հանդիպումներ ունեցավ Բեյրութի, Փարիզի, Նյու Յորքի, Լոս Անջելեսի և Դոմի Ռոստովի հայ համայնքների հետ: Հանդիպումները անցան լարված մթնոլորտում, իսկ Փարիզում տեղի ուսուկանությունը նույնիսկ ստիպված եղավ ուժ գործադրելու հայ ցուցարարներին ցրելու համար: Դա աննախադեպ մի երևույթ էր. Հայաստանի Հանրապետության իշխանությունների արտաքին քաղաքականության դեմ, այն էլ արտասահմանում հրապարակավ հանդես էին գալիս քաղաքական տարբեր կողմնորոշումների, տարբեր տարիքի, սոցիալական տարբեր կարգավիճակ ունեցող սփյուռքահայեր: Ինչպես 1919 թ., այնպես էլ 90 տարի անց Հայկական հարցի խնդիրը ի հայտ բերեց սկզբունքորեն տարբեր մոտեցումներ մի կողմից՝ Հայաստանի իշխանությունների և մյուս կողմից՝ Սփյուռքի հայության միջև: Հայ-թուրքական արձանագրությունները ունեցան մեկ այլ կարևոր հետևանք ևս արդեն երկրի ներսում: Դաշնակցությունը, հետևելով սփյուռքյան գործընկերների օրինակին, թե՛ իր անհամաձայնությունը հայտնեց իշխանությունների քաղաքականությանը ու դուրս եկավ քաղաքական կոալիցիայից և թե՛ այդուհետ ձգտեց հանդես գալ ընդդիմադրի վաղուց մոռացված դերում:

Պարզապես հիշատակեմ նաև ոճանց համար ինքնանպատակ դարձած Հայ Առաքելական եկեղեցու կացմակերպական վերամիավորման հարցը, որը թվում էր, թե պետք է շուտափույթ լուծվի նոր պայմաններում: Նման կարծիքին էր նաև նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, որը Կիլիկիո կաթողիկոսի, մոտ մեկ ամիս անց՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի լուռ համաձայնությամբ 1995 թ. մարտին առաջարկեց վերամիավորման մի ծրագիր, որը, սակայն, հեռու էր իրատեսական լինելուց և մոռացության մատնվեց նախագահի հրաժարականի, իսկ քիչ անց նաև կաթողիկոսի մահից հետո:

Հայաստան - Սփյուռք հարաբերություններին այսօր էլ հատուկ են մի կողմից՝ փոխըմբռնման պակասը ու անիրատեսական սպասումները, մյուս կողմից՝ շտապողականությունը, բարդ խնդիրներն արագ լուծելու ձգտումը, և որպես հետևանք՝ անհամաձայնեցված և ոչ արդյունավետ գործողությունները: Նկատի առնելով երկու կողմերի ներկա գոյակերպը, ըստ իս, դա պատահական չէ: Սփյուռքում պահպանվում է մեկուսի գործող եկեղեցական և եկեղեցական-կուսակցական համայնքների վրա հիմնված կառուցվածքը, որը եթե արդարացված էր սառը պատերազմի տարիներին, ապա այսօր՝ ոչ: Հայաստանը, իր հերթին, դեռ շարունակում է մնալ այսպես կոչված «անցումային շրջանում», զարգացման առաջնահերթությունների և նրանց իրագործման վերաբերյալ իր անորոշ պատկերացումներով: Արդեն ասվեց անտեղի շտապողականության մասին, մինչդեռ շտապողականությունը իսկապես անհրաժեշտ է (եթե չասենք՝ պարտադիր) երկու գերխնդիր լուծելու համար: Սփյուռքի պառզայում դա ինքնակազմակերպման որակապես նոր ձևերի մշակումն ու կիրառումն է, ինչի շնորհիվ,

ամեն բանից զատ, նա կունենա իր ընդհանրական կարծիքը, դիրքորոշումը համազգային կարևորության հարցերի վերաբերյալ: Հայաստանի պարագայում բազմաթիվ ճգնաժամային երևույթների հաղթահարումն է, որոնց մեծ մասը հետևանք է չարաքաստիկ մի սկզբունքի, այն է՝ հակառակորդներին՝ օրենք, իսկ ընկերներին՝ ամեն ինչ: Դրանով են պայմանավորված լինելու թե՛ նրանց ապագա գոյակերպը և թե՛ փոխհամագործակցության արդյունավետությունը, այդ թվում՝ նաև քաղաքական ոլորտում:

Այս գիտաժողովի վերնագրում նշվում են «Արդի ժամանակաշրջանի մարտահրավերները»: Ընդհանրապես ենթադրվում է, որ մարտահրավերները գալիս են դրսից: Հարկ է ընդունել, սակայն, որ Հայաստան - Սփյուռք հարաբերությունների դեպքում մարտահրավերների մի զգալի մասի հեղինակները մենք ինքներս ենք՝ հայերս, և ուրիշ ոչ ոք:

Eduard Melkonian (Armenia)

RELATIONS BETWEEN ARMENIA AND THE SPYURK: EXPECTATIONS AND REALITY

Since its proclamation in 1991, the Third Republic of Armenia has been actively cooperating with the Spyurk (the Armenian Diaspora) in a wide variety of spheres. This paper especially deals with some aspects of political relations between Armenia and the Sryurk.

Էդիկ Մինասյան (Հայաստան)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՈՒ ՀԱՅ ՊԱՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Երրորդ հանրապետության հռչակման և կայացման, նրա քսանից ավելի տարիների պատմության բազմակողմանի քննությունն ու գիտական հետազոտումը հայ պատմագիտության կարևոր խնդիրներից են: Այն ունի արդիական ու քաղաքական կարևոր նշանակություն: 20-րդ դարի վերջին Հայաստանի ազգային անկախության վերականգնումը և հայկական գույգ հանրապետությունների ստեղծումը շրջադարձային իրողություն եղան հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ:

Հայաստանի Երրորդ հանրապետությունը կյանք առավ Առաջին (1918-1920) և Երկրորդ (1920-1991) հանրապետությունների հիմքի վրա, դարձավ նրանց ժառանգորդն ու իրավահաջորդը:

Գիտապատմական ու գործնական առումներով պահանջվում է խորապես վերլուծել և իմաստավորել կատարված պատմական իրադարձություններն ու երևույթները, գնահատել դրանք և գրել Երրորդ հանրապետության ամբողջական պատմությունը: Անցած տարիների ընթացքում առաջացած խնդիրները, թույլ տրված սխալներն ու թերությունները մասամբ և աստիճանաբար համակարգվում և լուծվում են, սակայն այդ գործընթացը լիովին հունի մեջ դնելու համար անհրաժեշտ է կենսագործել մի շարք կարևոր սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, միջազգային ոլորտի հիմնախնդիրներ, որոնց պատմաքննական հետազոտությունն ու արված առաջարկները կարևոր գիտագործնական նշանակություն ունեն պատմությունից դասեր առնելու առումով:

Հայաստանի անկախ հանրապետության հռչակման շեմին հայ քաղաքական միաբնակները ինքնիշխան պետությունը պատկերացնում էր որպես ազգային ժողովրդավարական գաղափարների և ներմուծված շուկայական ազատականության մեխանիկական համադրում: Բայց շուտով պարզ դարձավ, որ ազգային գաղափարը գործնականում մշակված չէ:

Նորանկախ պետությունը թեպետ թույլ էր քաղաքական ու տնտեսական կառույցներով, մշակված չէր համազգային գաղափարախոսությունը, սակայն պետությունը պահպանելու համար օժտված էր քաղաքականապես ակտիվ և ժողովրդավարության ձգտող հասարակությամբ: Մեր կարծիքով, ի տարբերություն անցյալի, դա էր Երրորդ հանրապետության կայացման գլխավոր գրավականը: Զսանից ավելի տարիներ են անցել անկախության հռչակման օրվանից, սակայն առ այսօր հրապարակի վրա չկա մի ամբողջական ուսումնասիրություն, որտեղ քննության առնված լինեն այդ ժամանակահատվածի ներքին և արտաքին քաղաքականության հիմնախնդիրները, այդ բնագավառների զարգացման փուլերն ու առանձնահատկությունները: Այդ կարևոր խնդիրն ենք ձեռնամուխ եղել մենք:

Հայաստանի Երրորդ հանրապետության պատմությունը վկայում է, որ երկար սպասված անկախությունն ու տնտեսական կյանքի ազատականացումը առաջ բերեցին քաղաքական ու տնտեսական համակարգերի կտրուկ փոփոխություններ: Բազմաթիվ ձեռքբերումների հետ մեկտեղ՝ խոսքի ազատություն, բազմակուսակցականություն, ժողովրդավարական հաստատությունների կայացում,

հոգևոր-մշակութային կյանքի գաղափարական սահմանափակումների վերացում, կառավարման համակարգի կայացում՝ ժամանակակից պետության բոլոր հատկանիշներով, հանրապետության ինտեգրումը միջազգային գործընթացներին, հավասարակշռված արտաքին քաղաքականությունը և այլն, ունեցան մաս բացասական հետևանքներ՝ բերելով աղքատություն և սոցիալական բեռնացում, գործազրկություն և արտագաղթ, օրինազանցություն, կոռուպցիա, կախվածություն արտաքին ֆինանսատնտեսական կենտրոններից և այլն:

Անկախության շրջանի ամենամեծ նվաճումներից մեկը հայկական բանակն է՝ Արցախի ազատագրողը՝ քաջարի պաշտպանը Հայաստան հայրենիքի, երաշխավորը նրա ժողովրդի անվտանգ կյանքի: Անկախության շրջանի ամենամեծ ձեռքբերումներից են հայ ժողովրդի հպարտությունը՝ հերոսական Արցախը, համաժողովրդական սխարանքով կերտած նրա անկախությունը և կայացած պետականությունը:

Փաստորեն Հայաստանի Երրորդ հանրապետության պատմությունը հայ պատմագիտության ուսումնասիրության կարևոր բնագավառներից է:

Հայաստանի Երրորդ հանրապետության պատմության (1990-2012 թթ.) ուսումնասիրության վերաբերյալ հրապարակի վրա եղած գրականությունը կարելի է բաժանել երկու մասի՝ առաջին՝ ՀՀ անկախության գործընթացի և ՀՀ ներքին քաղաքականության վերաբերյալ եղած սկզբնաղբյուրներ և ուսումնասիրություններ, երկրորդ՝ ՀՀ միջազգային դրության և արտաքին քաղաքականության մասին եղած փաստաթղթեր և ուսումնասիրություններ: Առաջին մասի մեջ են մտնում մաս հասարակական-քաղաքական կյանքի, բանակաշինության, սոցիալ-տնտեսական, այդ թվում՝ գիտակրթական ու մշակութային ոլորտի վերաբերյալ ուսումնասիրությունները: ՀՀ անկախության վերաբերյալ տպագիր սկզբնաղբյուրներից կարելի է առանձնացնել ՀՀ անկախության մասին հռչակագիրը, ինչպես նաև փաստաթղթեր Արցախյան շարժման և Հայաստանի անկախ պետականության հռչակման վերաբերյալ, որոնք գետեղված են պ.գ.թ. Ռուբեն Ազիզբեկյանի աշխատությունների հավելվածներում¹: Ընդ որում Է. Մինասյանի նույն աշխատությունում (էջ 254-430) ներկայացված են նաև ՀՀ պետականության կայացման գործընթացի, ՀՀ ներքին քաղաքականության վերաբերյալ փաստաթղթեր: Փաստագրական հարուստ նյութեր ու գիտական լուրջ վերլուծություններ են պարունակում հատկապես Հայաստանի Հանրապետությունում տարբեր միջազգային կառույցների ծավալած գործունեությունն ու դրանց արդյունքները լուսաբանող ժողովածուները, որոնցից կարելի է առանձնացնել ՀՀ Ազգային գնահատման զեկույցները և ՀՀ-ում ՄԱԿ-ի գործունեությունը նկարագրող տեղեկատվական ժողովածուները², Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում, 15 տարի, Երևան, 2007 թ. և Հայաստան, ՆԱՏՕ՝ առաջընթացի 10 տարիներ 1999-2008 թթ., Երևան, «Տիգրան Մեծ» հրատ. – 2008 թ.: ՀՀ ներքին քաղաքականության վերաբերյալ հարուստ փաստական նյութեր և վերլուծություններ են պարունակում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի նախաձեռնությամբ և օգնությամբ հանրապետության անկախ փորձագետների կողմից մշակված և 1995 թվականից սկսած պարբերաբար հրատարակված «Մարդկային զարգացման ազգային զեկույցի» ամենամյա համարները և Հայաստանի ազգային մրցումակության զեկույցը 2012 թ., որը վերաբերում է բարձրագույն կրթության մարտահրավերներին³: Հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքի, բնակչության սոցիալական վիճակի վերլուծությանն են նվիրված ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրատարակված այնպիսի վիճակագրական ժողովածուներ, տեղեկատվական-վերլուծական զեկույցներ, վիճակագրական բնույթի հրատարակումներ, ինչպիսիք են՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1991 թ. հունվար-դեկտեմբերից մինչև 2012 թ. հունվար-դեկտեմբերն ընկած ժամանակահատվածը», Հայաստանի վիճակագրական տարեգրքերի և վիճակագրական գրքույկների ամենամյա համարները, Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, ամենամյա և հորելյանական ժողովածուները, ՀՀ սոցիալական վիճակն արտացոլող ամենամյա վերլուծական զեկույցներն ու ժողովածուները, հարավ-կովկասյան

¹ Ռ. Ազիզբեկյան, *Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն*, Համառոտ ակնարկ, Եր., ՀԳԱ հրատ., 1992, էջ 102-108: Է. Մինասյան, *Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.)*, Եր., ԵՊՀ հրատ., 2003, էջ 236-430:

² *Էլեկտրոնային զարգացումը և Հայաստանը գործալ մարդկային զեկույց* 2001, Երևան, 2001: *Ազգային գնահատման զեկույց*, Հայաստանի Հանրապետություն (կայուն զարգացման համաշխարհային զագաթնաժողով, Յոհանեսբուրգ, 2002), Երևան, 2002թ., *Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում, 15 տարի*, Երևան, 2007թ., *Հայաստան-ՆԱՏՕ՝ առաջընթացի 10 տարիներ 1999-2008թթ.*, Երևան, 2008թ.:

³ *Մարդկային զարգացման զեկույց*. Հայաստան 1995, Եր., 1995թ., *Մարդկային զարգացման զեկույց*. Հայաստան 1996, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 1996թ., *Մարդկային զարգացման զեկույց*. Հայաստան 1997, Եր., 1997թ., *Մարդկային զարգացման զեկույց*. Հայաստան 1998, Պետության դերը, Եր., 1998թ., *Մարդկային զարգացման զեկույց*. Հայաստան 1999, *Մարդկային զարգացման հինգ տարին Հայաստանում*, Եր.: 1999թ., *Մարդկային զարգացման ազգային զեկույց*. Հայաստան 2000, *Մարդու իրավունքները և մարդկային զարգացումը, գործողություն հանուն առաջընթացի*, Եր., 2000թ., *Մարդկային զարգացման ազգային զեկույց*. Հայաստան 2001, *Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում*, Երևան, 2001թ.: *Մարդկային զարգացման հիմունքներ*, Երևան, 2004թ., *Մարդկային զարգացման ազգային զեկույց 2006*, Կրթությունը Հայաստանում, Երևան, 2006թ.:

երկրների վիճակագրական տարեգրքերը և ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվությունները⁴։ Հանրապետության ներքին կյանքին վերաբերող տպագիր սկզբնաղբյուրների մեջ առանձնանում են այնպիսիները, որտեղ սոցիալ-տնտեսական իրավիճակային վերլուծություններն անմիջականորեն կապվում են հասարակական-քաղաքական կյանքի հետ։ Նման հետազոտություններից են ՀՀ հասարակական հաստատություններից մեկի՝ «Մարդու իրավունքների ժողովրդավարության ինստիտուտի» (ՄԻԺԻ) կողմից իրականացված հետազոտությունների արդյունքում հրատարակված «Աղքատությունն ու ժողովրդավարությունը Հայաստանում» ուսումնասիրությունը, ինչպես նաև «Պատմություններ աղքատության մասին» երկհատոր ազգաբանական հետազոտությունը։ Առավել արժեքավոր հետազոտություններ են պարունակում «Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը» ամենամյա վիճակագրական-վերլուծական զեկույցները, որտեղ ներկայացված է ոչ միայն հանրապետության ազգաբնակչության աղքատության ձևավորման պատմությունը, այլև տրված են նրա գնահատականն ու ցուցանիշների դինամիկան և նրա կրճատման նպատակով արված առաջարկները⁵։ Երկրի տնտեսական վիճակն ուսումնասիրելու տեսակետից արժեքավոր սկզբնաղբյուրներ կարող են հանդիսանալ ՀՀ արդյունաբերության և գյուղատնտեսության իրավիճակը ներկայացնող վիճակագրական ժողովածուները, ՀՀ-ում տնտեսական աճի, աղքատության կրճատման, տնտեսական ակտիվությանը վերաբերող իրավիճակային վերլուծական զեկույցները, ՀՀ արդյունաբերությունը 1990-1997 և 1998-2003 թթ.» և «ՀՀ գյուղատնտեսությունը 1990-1999 թթ.» վիճակագրական ժողովածուները, 2002 թ. հրատարակված «Տնտեսական աճն արդարացի բաշխման պայմաններում, աղքատության կրճատմանն ուղղված տնտեսական քաղաքականության ընտրություն», «Տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում» և «Կրթությունը, աղքատությունը և տնտեսական ակտիվությունը Հայաստանում, իրավիճակային վերլուծական զեկույց» ուսումնասիրությունները։ ՀՀ ժողովրդագրական ցուցանիշներին, ազգաբնակչության զբաղվածությանը, աշխատանքային պայմանների, հանրապետության կրթության, առողջապահական վիճակի, ապրանքների և ծառայությունների, սպառողական շուկայում գների փոփոխման դինամիկայի վերլուծությանն են մվիրված Հայաստանի ժողովրդագրական ժողովածուների ամենամյա համարները, ՀՀ 2001 թ. մարդահամարի տվյալներն ամփոփող 11 հատորանոց ուսումնասիրությունները, «Սպառողական շուկան 1995-2001 թթ.» վիճակագրական-վերլուծական ժողովածուն և առողջապահական ոլորտի հետազոտությունների արդյունքներն ամփոփող զեկույցագրերը⁶։ Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի լուսաբանման

⁴ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1990թ., Երևան, 1991: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1991թ., «Զանգակ» հրատ., Երևան, 1994, Հայաստանը թվերով 1992թ., Երևան, 1994, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1993-1994, Երևան, 1995, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1995, 1996, Երևան, 1998, Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1997, 1998), Երևան, 2001, Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), Երևան, 2001: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005, Երևան, 2005, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010, Երևան, 2010, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011, Երևան, 2011, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Երևան, 2012, *Содружество независимых государств: Десять лет спустя. 1991-2001*. /Исполнительный комитет СНГ, Минск, 2001г., *Содружество независимых государств в 2002 году*, 285 стр. Статистический ежегодник /Межгосударственный статистический комитет СНГ, М. 2003г. Հայաստանի Հանրապետության սոցիալական ոլորտի իրավական ակտերի ժողովածու, Ազգային վիճակագրական ծառայություն, Ե. 2001թ., Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային դիրքը 1997-2001 /Վիճակագրական ժողովածու, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Ե. 2002թ., ՀՀ կենտրոնական բանկ. Հայաստանի բանկային համակարգ: Հոդվածներ /խմբ.՝ Լ. Դավթյան, Բ.Ասատրյան, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2002թ., Հայաստանը թվերով 2003թ., Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2003:

⁵ Պատմություններ աղքատության մասին, գիրք առաջին, Եր., «Լուսաբաց» հրատ., 2001, Պատմություններ աղքատության մասին, գիրք երկրորդ, Եր., 2007: Արտագաղթը Հայաստանից, Եր., «Լուսաբաց» հրատ., 2003: Հայաստանի ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտություններ 2000, Եր., 2001: Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2001: Զեկույց իրական ակտիվներում իրականացված ներդրումների, ընտրանքային հետազոտություն, Եր., 2002: Հետազոտություն Հայաստանի Հանրապետությունում մասնավոր հատվածի զարգացման մասին, Վերջնական զեկույց (ամփոփագիր), Տոկիո, 1999:

⁶ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 2003-2006թթ. ամփոփ հաշվետվություն, Եր., 2007: Սոցիալական բարեփոխումները Հայաստանում, Եր., 2011: Սոցիալական պետության հայեցակարգեր, հայկական իրողություններ և հեռանկարներ, Միջազգային գիտաժողովի նյութեր, փետրվար 2006թ., Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2007: Հայաստանի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգ, Երևան, «Լուսաբաց» հրատ., 2006, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Եր., 2004, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2005թ., Եր. 2005, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2009թ., Եր., 2009: ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Արագածոտնի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Եր., 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Արարատի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Եր., 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Արմավիրի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Գեղարքունիքի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Եր., 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Լոռու մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Եր., 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Շիրակի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Եր., 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Վայոց ձորի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Եր., 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Տավուշի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ.

առումով որոշակի գիտական արժեք են ներկայացնում պետական և հասարակական տարբեր մակարդակների գիտահետազոտական բնույթի հաստատությունների, կազմակերպությունների կողմից հրատարակված, գործնականում մաս աղբյուրագիտական նշանակություն ունեցող բազմաթիվ ուսումնասիրություններն ու քաղաքական բնույթի հրապարակումները: Դրանցից կարելի է առանձնացնել Քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամի կողմից հրատարակված «Հայաստանի Հանրապետության քաղաքական կուսակցություններ» 2007 թ. տեղեկագիրը, «ՀՀ գերագույն խորհրդի 1990-1995 թթ.» Եր., 1995, և ՀՀ Ազգային ժողովի 1996 թվականից սկսած՝ բոլոր գումարումներին նվիրված տեղեկատու գրքույկները, ինչպես նաև ՀՀ հասարակական, քաղաքական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների գործունեությունը ներկայացնող ուսումնասիրությունները: ՀՀ անկախության հռչակման, ՀՀ միջազգային ճանաչման և արտերկրի հետ հարաբերությունների ձևավորման ու զարգացման, ՀՀ արտաքին քաղաքականության ուսումնասիրման առումով կարևոր սկզբնաղբյուրներ են դիվանագիտական բնույթի փաստաթղթերի ժողովածուները, որոնցից կարելի է առանձնացնել 2002 թ. Երևանում հրատարակված ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995 թթ., 1996-1998-ի, 1999-2001-ի երեք հատորները, ինչպես նաև ԱՊՀ-ի և ՄԱԿ-ի շրջանակներում կնքված պայմանագրերի ժողովածուները, որոնք հրատարակվել են Երևանում 2004 թ.: Կարևոր սկզբնաղբյուրներ են նաև ՀՀ արտգործնախարարության ամենամյա հաշվետվություններն ու նույն նախարարության հրատարակած Դիվանագիտական ծառայությունը Հայաստանում, Եր., 1999 թ. աշխատանքը: Հանրապետության ինչպես ներքին, սոցիալ-տնտեսական, այնպես էլ արտաքին քաղաքականության շատ հիմնահարցերի ուսումնասիրման լավագույն սկզբնաղբյուր կարող է հանդիսանալ ՀՀ պատմության ամփոփ ժամանակագրությունն ընդգրկող գրքույկների հինգ հատորյակը⁷:

Երրորդ հանրապետության պատմության համար սկզբնաղբյուրի նշանակություն են ձեռք բերում ուսումնասիրվող ժամանակաշրջանում պետական բարձր պաշտոններ զբաղեցրած Լ. Տեր-Պետրոսյանի, Վ. Մանուկյանի, Ս. Հարությունյանի, Վ. Մովսիսյանի, Հ. Բագրատյանի, Ֆ. Սարգսյանի, Ա. Կիրակոսյանի, Վ. Օսկանյանի աշխատություններն ու հուշերը, ինչպես նաև ՀՀ երեք նախագահների ելույթներն ու հարցազրույցները, զեկույցները⁸: Հայաստանի Երրորդ հանրապետության բանակաշինության հիմնախնդիրների ուսումնասիրության ոլորտում անկասկած արժեքավոր են ՀՀ ներկայիս պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի «21-րդ դարի բանակ» և «Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը» աշխատությունները: Հայաստանի Երրորդ հանրապետության անկախության հաստատման գործընթացի և առաջին տարիների պատմության լուսաբանմանը նվիրված առաջին պատմագիտական բնույթի հետազոտությունը Ռ. Ազիզբեկյանի վերոնշյալ աշխատությունն է, որին հաջորդում է նրա և պրոֆեսոր Գ. Գեղամյանի հեղինակած «Հայաստանը 1945-1990-ական թվականներին» 1994 թ. լույս տեսած ուսումնասիրության ձեռնարկը: Այս նույն հիմնահարցերին անդրադարձել է նաև տողերիս հեղինակ Է. Մինասյանը իր վերոնշյալ ծավալուն մենագրության առաջին երկու գլուխներում: Այս նույն հիմնահարցին ծավալուն մենագրություն է նվիրել պ.գ.դ. Է. Պողոսյանը⁹ «Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001 թթ.)» վերնագրով: Այս արժեքավոր աշխատությունն ընդգրկում է հիմնահարցի միայն առաջին տասնամյակի պատմությունը և այնքան ընդգրկում հարցեր է պարունակում հատկապես արտաքին քաղաքականության և միջազգային հարաբերությունների ոլորտին առնչվող, որոնք շատ դեպքերում շեղել են հեղինակի ուշադրությունը

վիճ. ծառայություն, Եր., 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Սյունիքի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Եր., 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Կոտայքի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Եր., 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ք.Երևանի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Եր., 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Եր., 2003:

⁷ ՀՀ պատմության ամփոփ ժամանակագրություն 1996 (ներքին, սոցիալ-տնտեսական և արտաքին քաղաքականություն), Եր., Բավիղ ՍՊԸ հրատ., 2002: ՀՀ պատմության ամփոփ ժամանակագրություն 1997 (ներքին, սոցիալ-տնտեսական և արտաքին քաղաքականություն), Եր., Բավիղ ՍՊԸ հրատ., 2002: ՀՀ պատմության ամփոփ ժամանակագրություն 1998 (ներքին, սոցիալ-տնտեսական և արտաքին քաղաքականություն), Եր., Բավիղ ՍՊԸ հրատ., 2002: ՀՀ պատմության ամփոփ ժամանակագրություն 1999, (ներքին, սոցիալ-տնտեսական և արտաքին քաղաքականություն), Եր., Բավիղ ՍՊԸ հրատ., 2002: ՀՀ պատմության ամփոփ ժամանակագրություն 2000 (ներքին, սոցիալ-տնտեսական և արտաքին քաղաքականություն), Եր., Բավիղ ՍՊԸ հրատ., 2002:

⁸ Լ.Տեր-Պետրոսյան, Ընտրանի (ելույթներ, հոգվածներ, հարցազրույցներ), Երևան, Փրինթինֆո ՀՀ ՍՊԸ հրատ., 2006թ., Ս.Հարությունյան, Անցյալի և ներկայի մասին, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2011թ., Վ.Մանուկյան, Հայկական երազանքը գոյատևման փակուղում, Եր., «Ամարաս» հրատ., 2002, նույնի՝ Գնացքից թռչելու ժամանակն է, հոգվածների ժողովածու, Եր., «Ամարաս» հրատ., 2002, Հ.Բագրատյան, Հայաստանում անկախ քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի և դրանց դուրս գալու ելքերի մասին, Եր., «Նաիրի» հրատ., 2000: Նույնի՝ Հասարակությունը և պետությունը, Եր., Նաիրի հրատ. 1999: Գ.Բագրատյան, «Земельная реформа вопросы теории и практики», Է., «Նաիրի» հրատ., 2003, Վ.Մովսիսյան, Հողի ճակատագրով, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 2001, Ֆ.Սարգսյան, Կյանքի դասերը, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2013, նույնի՝ հոգվածներ, Եր., 2013, Ա.Կիրակոսյան, Մայրամուտի շեմին, Ե., 2002թ.:

⁹ Է. Պողոսյան, Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001 թթ.), Եր., «Լուսաբաց» հրատ., 2013թ.:

բուն հիմնահարցի հարցադրումներից: ՀՀ ներքին քաղաքականության մի ամբողջական ոլորտի՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վերափոխումների մեկ տասնամյակից ավելի պատմությանն անդրադարձել է տողերիս հեղինակը իր վերոնշյալ ծավալուն մենագրության մեջ, որը, առաջիններից մեկը լինելով, հանրապետության պատմության ուսումնասիրության ոլորտում, ճանապարհի հարթեց հիմնահարցի պատմագիտական հետազոտության համար, որին հաջորդեցին Է. Մինասյանի ղեկավարությամբ հանրապետության տարբեր ոլորտների վերաբերյալ պաշտպանած շուրջ մեկ տասնյակ ատենախոսությունները¹⁰:

Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի բազմաթիվ հիմնահարցեր քննության են ենթարկված Գ. Քեռյանի, Հ. Աբրահամյանի, Գ. Պողոսյանի, Տ. Թորոսյանի և այլոց աշխատություններում¹¹:

Հանրապետության տնտեսական քաղաքականության առանձին խնդիրներին են նվիրված Վ. Խոջաբեկյանի, Հ. Սարգսյանի, Ա. Մարկոսյանի, Լ. Անանյանի, Մ. Սկրտչյանի, Գ. Ավագյանի, Մ. Գևորգյանի, Վ. Մանասյանի, Ս. Դավոյանի, Ս. Մելքունյանի, Հ. Մամիկոնյանի, Թ. Մանասերյանի աշխատությունները: Հանրապետության սոցիալական ոլորտին առնչվող բազմաթիվ հիմնահարցեր արծարծված են Մ. Գաբրիելյանի, Ն. Մարգարյանի, Ա. Եսայանի, Ա. Սկրտչյանի, Հ. Աղաջանյանի, Ա. Դանիելյանի, Հ. Խառատյանի աշխատություններում և հոդվածներում¹²:

Երրորդ հանրապետության երկրորդ հիմնահարցին՝ ՀՀ արտաքին քաղաքականությանն ու միջազգային հարաբերությունների ոլորտին են անդրադարձել պ.գ.թեկնածուներ Վ. Ավագյանը, Տ. Բալյանը, Ա. Շահնազարյանը, Մ. Սողոմոնյանը, Ա. Կարապետյանը, Յ. Մալխասյանը, Ա. Անանյանը, Լ. Մալեքյանը, Տ. Մարտիրոսյանը, Ա. Մելիքյանը, Ժ. Մանուկյանը և պ.գ.դ. Վ. Տողոնյանը իրենց ատենախոսություններում¹³: Նրանցում քննարկվում են ՀՀ հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, ԱՊՀ-ի, Հունաստանի հետ, ինչպես նաև Դարաբաղյան հիմնահարցը միջազգային դիվանագիտության մեջ և Հայոց ցեղասպանության գործունը հայթորակական հարաբերությունների ոլորտում:

Այս վերջին հիմնահարցին, ինչպես նաև ՀՀ ժողովրդագրության և ներքին քաղաքականության այլ հիմնախնդիրներին է անդրադարձել նաև ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Մելքոնյանը իր «Հայոց պատմության դասերն ու պատգամները», Եր. 2013 թ., արժեքավոր և խիստ արդիական աշխատության մեջ: ՀՀ արտաքին քաղաքականության որոշ հիմնահարցերի և հատկապես Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին են անդրադարձել նաև Է. Մինասյանը իր մի շարք հոդվածներում և Լ. Բարսեղյանը իր աշխատություններում¹⁴:

¹⁰ Ս. Չափաբեկյան, *Գիտությունը Հայաստանում 1990-ական թվականներին*, ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2010, Մ. Գևորգյան, *Ազրաբային վերափոխումները ՀՀ-ում 1991-2000թթ.*, ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2011, Լ. Սկրտչյան, *Կրթական վերափոխումների գործընթացը Հայաստանի Հանրապետությունում 1991-2005թթ.*, ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2012:

¹¹ Պողոսյան Գ., *Հայ հասարակությունը 21-րդ դարակերպին*, Եր., 2006, Թորոսյան Տ., *Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա*, Եր., 2006, Քեռյան Գ., *Հայաստանի երրորդ հանրապետության կուսակցության համակարգը և քաղաքական կուսակցությունները*, Եր., 1996, Քեռյան Գ., *Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը*, Եր., 2002, Հայրիկյան Պ., *Անկախության ճանապարհի երեք վավերագրեր*, Եր., 1997, Հայրիկյան Պ., *Մեկտեմբեր*, Եր., 1997, Հայրիկյան Պ., *Ժողովրդավարություն խոսքով և գործով*, Եր., 2002, Աբրահամյան Հ., *Խորհրդային և հետխորհրդային հասարակությունը*, Եր., 2011: Աբրահամյան Հ., *Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները*, Եր., 2009:

¹² Խոջաբեկյան Վ., *Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը 19-20-րդ դարերում*, 21-րդ դարի շնչին, Եր., 2001, Խոջաբեկյան Վ., *Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը (1828-1978)*, Եր., 1979, Մարգարյան Հ., *Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում, պետության դերը*, Եր., 2001, Մարկոսյան Ա., *Տնտեսագիտություն բոլորի համար*, Եր., 2001, Մարկոսյան Ա., *Հայաստանը 21-րդ դարի մարտահրավերների առջև*, Եր., 2004, *Аналитический журнал, "Рынок капитала в Армении"*, № 7,8 (65,66), Եր., 2001: Կիրակոսյան Գ., *Անցումային տնտեսության վերափոխումները*, տնտեսության հարցեր, Եր., 2002:

¹³ Ազյան Վ., *Դարաբաղյան ու տարածաշրջանային մյուս զինված հակամարտությունները Անդրկովկասում և Ռուսաստանի Դաշնությունը (1991-1994թթ.)*. պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2001թ., Բալյան Տ., *Դարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994 թթ.*, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2002թ., Շահնազարյան Ա., *Հայ-վրացական հարաբերությունները հետխորհրդային շրջանում (1991-1999թթ.)*. ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2002թ., Արշակյան Գ., *Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001թթ.* ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2008թ.:

¹⁴ Է. Մինասյան, *Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացները վերջին չորս տասնամյակում*, Մեծ եղեռն-90, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի 2005, էջ 66-74, Նույնի՝ *Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը*, Հայոց մեծ եղեռն 90, հոդվածների ժողովածու, Երևան 2005, էջ 285-301, *Հայոց ցեղասպանության ճանաչման միջազգային նոր փուլի առանձնահատկությունները*, Պատմություն և մշակույթ, «Հայագիտական հանդես», Ա, Երևան 2011, էջ 323-331, *Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության*

Այս ամենով հանդերձ դեռևս հրապարակի վրա չկա մի ամբողջական աշխատություն, որը նվիրված լինի Հայաստանի Հանրապետության պատմության անցած 20-ից ավելի տարիներին, որը մեր օրերի համար խիստ կարևոր է և արդիական:

Հաշվի առնելով Հայաստանի Երրորդ հանրապետության պատմության ուսումնասիրության կարևորությունն ու ազգային գիտական և քաղաքական նշանակությունը՝ հայ պատմագետներից պահանջվում է ուսումնասիրություններ իրականացնել ոչ միայն քաղաքացիական պատմության քննության առումով, այլև տնտեսական, հասարակական զարգացման և աշխարհաքաղաքական զարգացումների, տարածաշրջանային գործընթացների և այլ հարցադրումների տեսանկյունից: Ուսումնասիրությունների արդյունավետությունը էապես կարելի է բարձրացնել գիտական համագործակցություն հաստատելով նշված հարցերով զբաղվող Ակադեմիայի համապատասխան ինստիտուտների և ԵՊՀ ֆակուլտետների, ինչպես նաև արտասահմանյան գիտնականների և մասնավորապես սփյուռքահայ պատմաբանների հետ:

Edik Minasyan (Armenia)

THE CURRENT SITUATION OF STUDY OF HISTORY OF THE THIRD REPUBLIC OF ARMENIA AND PROBLEMS OF THE ARMENIAN HISTORIOGRAPHY

The article presents the current situation of the study of the history of the Third Republic of Armenia. It is noted that up to date a single study entirely devoted to more than 20-year period history of RA has not been published. The article thoroughly analyzes the available published scientific primary sources and literature on the subject, at the same time concrete suggestions on the realization of comprehensive study of the history of RA are given.

Ֆելիքս Մովսիսյան (Հայաստան)

ՄԻԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՆԱՊՈԼԵՈՆ ԲՈՆԱՊԱՐՏԻ ՄԱՍԻՆ

1805թ. Իտալիան նվաճած Նապոլեոն Բոնապարտը հրովարտակ արձակեց կրոնական կազմակերպությունները կազմալուծելու մասին: Վենետիկի Միսիթարյանները 1806թ. սկզբին որոշեցին միաբանությունը չկազմալուծելու խնդրագրերով դիմել ֆրանսիական իշխանություններին: Ընդհանուր աթոռակալ Գաբրիել Ավետիքյանը փետրվարի 20-ին խնդրագիր հանձնեց կարդինալ Ժոզեֆ Ֆեչին, Հովհաննես վարդապետ Զոհրապյանը՝ Իտալիայի փոխարքա Էժեն Բոհարնեին, իսկ ապրիլին Մեսրոպ վարդապետ Աղաչաղյանը Փարիզում աղերսագիր հղեց Նապոլեոնին: 1807թ. դեկտեմբերի 6-ին Վենետիկում Նապոլեոնն ընդունեց Ստեփանոս Ազունցի և Գաբրիել Ավետիքյանին: Հասկանալով, որ գործունի ոչ սովորական վանական միաբանության հետ, նա 1810թ. օգոստոսի 17-ին կայսերական հրովարտակով որոշեց. «հայ միաբանները թողնվում են իրենց ներկա վիճակում ցմոր կարգադրություն»¹:

Միսիթարյանները երախտագիտությամբ ընդունեցին Նապոլեոնի հրովարտակը և նրա նկատմամբ որոշակի բարեհաճ վերաբերմունք պահպանեցին Եվրոպայում կատարած նվաճողական պատերազմները լուսաբանելիս: «Դիտակ Բյուզանդյանում» Գրիգոր վարդապետ Խապարաճյանը պատմում է, որ իսպանացիները ֆրանսիական զորքերին «աստիս անդին կզարնեն... բայց որովհետև դիմացնին եղողին ուժը շատ, զորքը անհատնում, իրենք դեմով կելլեն»: Նա Ռուսաստանի վրա Նապոլեոնի հարձակման պատճառը համարում է ոչ թե նրա նվաճողական ձգտումը, այլ Տիլզիտի հաշտության պայմանները չկատարելը: Նապոլեոնը շատ ջանք թափեց, որ «խաղաղութեամբ վճարե՛ այս բանը, բայց ճարը չեղավ»: Եվրոպական մամուլի նյութերի և ստացված լուրերի հիման վրա նա պատմում է Նապոլեոնի ռուսական արշավանքի մանրամասնությունների, Սմոլենսկում և Բորոդինոյում «շատ կտրիճութեամբ» տարած հաղթանակների և Մոսկվան գրավելու մասին: Նա ռուսների կողմից Մոսկվայի հրդեհումը բնութագրում է որպես «անողորմութիւն և բարբարոսութիւն»²:

հարաբերությունները (1991-2001թթ.), Պատմություն և մշակույթ, «Հայագիտական հանդես», Ա, Երևան 2011, էջ 3-22, **Լ.Քարսեղյան**, Միջազգային հանրությունը դատապարտում է հայոց ցեղասպանությունը, Եր., 1998, Նույնի՝ Ֆրանսիան հայոց ցեղասպանությունը օրենսդրությամբ ճանաչած առաջին պետությունն է աշխարհում, Եր., 2002, Նույնի՝ Տարեգրություն հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման (1915-2000թթ.), Եր., 2004:

¹ «Բազմավեպ», 1921, օգոստոս, էջ 255, **Հայր Տաճատ Եսարտըմեան**, Մուրբ Ղազար կղզին Մայրավանք Միսիթարյաններու, Վենետիկ, 1989, էջ 37; Վենետիկ և հայերը, Վենետիկ, 1990, էջ 110:

² «Դիտակ Բյուզանդյան», 1812, օգոստոսի 15, էջ 9, օգոստոսի 1, էջ 8, նոյեմբերի 1, էջ 36:

Մադաթիա վարդապետ Փյունկյուճյանը, առանց նյութերի բժախնդիր ընտրության, «Դիտակ Բյուզանդյանում» տպագրում է բավական ուշագրավ տեղեկություններ իսպանացիների «վերջի աստիճանի կատաղութեամբ պատերազմելու», «սաստիկ կատաղութեամբ» հարձակումներ կատարելու և ֆրանսիական «քաջ պահապան զորքի կտրիճութեամբ դիմադրելու»³, ինչպես նաև ռուսական զորքերի՝ Լեհաստանում և գերմանական պետություններում մղած կռիվների մասին:

Նապոլեոն Բոնապարտի մահից հետո Մխիթարյանները 1850-1870-ական թվականներին հրատարակած իրենց աշխատություններում հիմնականում անկողմնակալ ներկայացնում են նրա անցած զինվորական ճանապարհը, պատմում վարած պատերազմների մասին, գնահատում ռազմական տաղանդը:

Ղևոնդ վարդապետ Հովնանյանի բնութագրմամբ՝ Նապոլեոնը 1796թ., երբ ստանձնեց իտալական բանակի հրամանատարությունը, «ամենայն ինչ կերպարանափոխ եղավ: Նույն զորավարը բնութենէն զինվորական ձիրքերով զարդարուած ըլլալով, շուտ մը վիատեալ զօրքերն անանկ քաջալերեց և իրեն հետ կապեց, որ իր առաջնորդութեան տակ սկսան ամէն վտանգներն արհամարհել և յաղթութունէ յաղթութիւն իր ետևեն երթալ»⁴: Ամբրոսիոս վարդապետ Գալֆայանը տպագրում է Նապոլեոնի ուղերձը՝ ուղղված վիատված ու հուսահատված զորքին, որը «մեծ ուրախութեամբ ընդունեցաւ նրա խոսքերը և պատրաստուեցաւ իր զորավարին խոսքէն դուրս չելլելու»: Նա կարևորում է ֆրանսիական զինվորների «հասարակապետական եռանդը», ընդգծում Նապոլեոնի քաջությունը Արկոլիի, Լոդիի, Ռիվոլի կռիվներում, որտեղ տարած հաղթանակներից «Բոլոր Եվրոպա սարսափեցաւ ու զարմացաւ»⁵: Ըստ Պողոս վարդապետ Հովնանյանի՝ իտալական արշավանքի ընթացքում Նապոլեոնի տարած «կատարեալ հաղթանակները... մեծ շփոթութիւն պատճառեցին» Եվրոպային: Նապոլեոնն իր «զինվորական տաղանդները դեռ նոր մեկ քանի երևելի առիթներու մեջ ցուցըցած էր ու իր ապագա առաջադիմության և մեծության նշանները տալու սկսած էր»⁶:

Մխիթարյաններն անկողմնակալ դիրքերից պատմում են իտալական պետություններում Նապոլեոնի «մեծամեծ հաղթանակներ» տանելու, հանրապետություններ ստեղծելու և Փարիզ վերադառնալով՝ «չլաված պատիվների» արժանանալու մասին: Ա. Գալֆայանն ընդգծում է, որ Ֆրանսիայի ակադեմիայի անդամ դարձած, անվանի մարդկանց ուշադրությանն արժանացած և «մեծ համբավ» ձեռք բերած Նապոլեոնը ժողովրդի կարծիքով «այնչափ փառաց մէջ ասանկ անփառասեր էր»⁷:

Մխիթարյանները Նապոլեոնին անվանում են «անպարտելի կայսր», «մեծամեծ հաղթություններ» տարած զինվորական, որի «քաջությունն ու հանճարը» թշնամիները բազմիցս զգացել են մարտի դաշտում: Ա. Գալֆայանը գրում է, որ այդ հաղթանակներից հետո ֆրանսիացիները մինչև «երկինք կը բարձրացնէին իրենց նոր Աննիբալը՝ որ քիչ ատէն Կեսարին ըրածը պիտի ընէր»⁸:

«Բազմավեպ» նույնպես Նապոլեոնին համեմատում էր Հին աշխարհի նշանավոր զորավարների հետ: Հանդեսը գրում է. «Եթէ զՆաբոլեոն Ա. մեծ մարդկանց հետ բաղդատելու ըլլանք..., իր տաղանդն ու ճակատագիրը մեկտեղ մտածելով, եթէ դիտելու ըլլանք հնչած համբավը, աշխարհքիս վրայ ձգած ազդեցութիւնը, իրեն նմաններ գտնելու համար պէտք է դիմել Ալեքսանդրի, Աննիբալայ, Կեսարու, մեծն Կարողոսի, Փրեդերիկոսի, և իր պատկերը այս գորաւոր դիմաց քովը դնելով, կրնանք աւելի ճիշտ և աւելի կատարեալ գաղափար մը ստանալ ի վերայ մեր մտացը մէջ»⁹:

Մխիթարյաններն անկողմնակալ պատմում են նաև Նապոլեոնի «անհնարին դժուարութիւններ յաղթելով» իտալական երկրորդ «համարձակ արշավանքը» ձեռնարկելու, «կատարել յաղթութիւն» և «հռչակավոր հաղթանակներ» տանելու, Լյունեվիլի հաշտության և անգլո-ֆրանսիական հակամարտության մասին: Նա «գորութեամբ և շրջահայացութեամբ կարգաւորեց ելևմուտքը»¹⁰, ճնշեց իր դեմ կազմակերպված դավադրությունները, հռչակվեց կայսր և «տիեզերական իշխանութիւն հիմնեց»¹¹:

Ա. Գալֆայանի կարծիքով՝ Նապոլեոնի «այսչափ մեծնալը հարկաւ անոր դեմ պիտի հաներ Եվրոպայի մեկ մասը», որի ժամանակ նա Աուստերլիցում «հռչակավոր հաղթանակ» տարավ և ցույց տվեց, որ «քաջութեամբ և ճարտարութեամբ քիչ մարդով ալ բազմագունդ բանակի դեմ փառավոր հաղթութիւն կրնայ ըլլալ»¹²:

Պողոս և Ղևոնդ Հովնանյանները հանդիմանում են Նապոլեոնին Հռոմում «անիրավութիւններ»

³ «Դիտակ Բյուզանդյան», 1813, 7-9 օգոստոսի, թիվ 60, էջ 244, 13-15 օգոստոսի, թիվ 62, էջ 252, 16-31 օգոստոսի, թիվ 63, էջ 258-259:

⁴ Ղ. Հովնանեան, Պատմութիւն քաղաքակրթութեան եվրոպական տէրութեանց ընդհանրապես, հ. Գ, երրորդ շրջան, Վիեննա, 1857, էջ 119:

⁵ Ա. Գալֆայեան, Համառոտագրութիւն ժամանակակից պատմութեան, Վենետիկ, 1851, էջ 104-108:

⁶ Պ. Հովնանեան, Պատմութիւն Իտալիոյ ի սկզբանէ մինչև մեր օրերը, Վիեննա, 1864, էջ 114:

⁷ Ա. Գալֆայեան, նշվ. աշխ., էջ 115:

⁸ Նույն տեղում, էջ 109:

⁹ «Բազմավեպ», 1869, հունիս, էջ 172:

¹⁰ Գ. Գովրիկեան, նշվ. աշխ., էջ 260:

¹¹ Ղ. Հովնանեան, նշվ. աշխ., էջ 288:

¹² Ա. Գալֆայեան, նշվ. աշխ., էջ 136-137:

և «բռնավորական գործքեր կատարելու», պապական տիրույթը «հափշտակելու», իշխանավորներին ու հոգևորականներին բանտարկելու և աքսորելու, Հռոմի պապի «հպատակներին մահվան դատապարտելու համար»¹³: Ա. Գալֆայանի դիտարկմամբ՝ Հռոմի պապի հետ ունեցած «գծադրություններում պատճառովը Նապոլեոնին անունը շատ կոտրեցավ, ու եկեղեցականք իրմէ պաղեցան»։ Նրանից երես թեքեցին մաս աշխարհիկ մարդիկ, ովքեր «սկսան իրենց կորսնցուցած ազատութեանը վրայ ցավիլ»¹⁴:

Մխիթարյանները զուգահեռ են անցկացնում Նապոլեոնի իսպանական և ռուսական արշավանքների միջև, որոնք նա իրականացնում էր «իր տիեզերական իշխանութիւնը կատարեալ հաստատելու համար»¹⁵: Նրանք ընդգծում են, որ ռուսները և իսպանացիները «այսպիսի ահավոր արշավանքին առջևն առնելու և իրենց հայրենիքը ազատելու» համար համաժողովրդական պայքարի ելան և «անպատմելի քաջությամբ ահավոր թշնամվոյն կընդդիմանային»:

Ղ. Հովնանյանի բնութագրմամբ՝ իսպանական արշավանքը Նապոլեոնի «զինուորական պարծանքն ավելացնելուն չծառայեց», քանզի Պիրենեյան թերակղզում «թափուած արիւնէն ելլող շոգին Նապոլեոնին յաջողութեան աստղը մթնցուց»¹⁶:

Ա. Գալֆայանը Ռուսաստանի վրա հարձակումը համարում է «ձախորդ» և «անխոհեմ արշավանք», որի ժամանակ Մոսկվան Նապոլեոնի «գորաց գերեզման» դարձավ: Մխիթարյաններն ընդգծում են Ռուսաստանում Նապոլեոնի պարտության նշանակությունը եվրոպական ժողովուրդների ազատագրական պայքարի համար: Նրանք պատմում են, որ գերմանական պետությունները ոտքի են ելել «Գաղղիոյ բռնակալութեան դէմ իրենց ազգութիւնն ու ազատութիւնը պահելու» համար: Անգամ գաղտնի ընկերություններն «ամէն ալ գէնք առին» և Պիրենեյան լեռներից մինչև Դանուբ և Ելբա գետերը ընկած տարածքում բոլոր ժողովուրդները պատերազմեցին Ֆրանսիայի դէմ¹⁷:

Պրուսիայի թագավորը «բովանդակ ազգին գէնք առնելու և հայրենեաց անկախութեան համար պատերազմելու կհորդորեր»¹⁸: Լսելով իրենց թագավորի հորդորը՝ «պրուսացիք ազգովին ոտքի ելնելով Նաբոլեոնին գործիւնը բոլորովին խորտակելու և իրենց ազատութիւնը նորոգելու համար վերջին ճիգն ի գործ դնելու եռանդմամբ գէնք առնուլ սկսան»¹⁹:

Գաբրիել Ալվազովսկին, Ղևոնդ Հովնանյանը, Գրիգոր Գովրիկյանը պատմում են, որ թիրուցիները «ազատութեան սիրով վառուած ոտքի ելան»²⁰ և «ոյուցազմաբար պատերազմեցին»²¹: Նապոլեոնը հասկացավ, որ «մոխրի տակ թաքնված կրակը» կարող է այնպիսի «հրդեհ մը պատճառել, որուն մարիլն այնչափ ավելի դժուար կընար ըլլալ»²²:

Ղևոնդ Հովնանյանի գնահատականով՝ «Նապոլեոնի տիրած և կամ իր ազդեցության տակ եղող բոլոր օտար երկրները» շարունակեցին պայքարը, որի արդյունքում նրա «տիեզերական իշխանութեան շինուածքը կանգնուածէն ավելի շուտով՝ մասն մասն կ'իյնար կը կործանէր»²³:

«Դիտակ Բյուզանդյանի»՝ 1813-1814թթ. համարները պատմում են Նապոլեոնի դէմ եվրոպական ժողովուրդների անկախության համար պատերազմների մասին: «Բազմավեպը» փաստում է, որ իսպանացիների պայքարը «ի գին անկախութեան... խորտակեց նաբոլեոնեան հսկան»²⁴:

Պ. Հովնանյանն ընդգծում է «հասարակաց թշնամի» Նապոլեոնի կայսրության կործանման նշանակությունը Եվրոպայի համար: Ըստ նրա՝ Բոնապարտի պես «հզօր և ահավոր աշխարհակալին կատարեալ պարտութեանը հետեւեցաւ Եվրոպայի ընդհանուր խաղաղութիւնը»²⁵:

Մաղաթիա վարդապետ Փյոսկյուլճյանը, Ամբրոսիոս Գալֆայանը, Գրիգոր Գովրիկյանը գրում են, որ Նապոլեոնի պարտությունը և դաշնակից զորքերի Փարիզ մտնելը «անսահման ուրախութիւն» պատճառեցին Բուրբոնների վերահաստատման կողմնակիցներին և տրտմություն ֆրանսիացիներին, որոնք մեծագույն կորուստներ տվեցին պատերազմների տարիներին: Մ. Փյոսկյուլճյանը Նապոլեոնի թողած համբավի մասին գրում է. «Ինքը գլխուն մնացած ժողովրդեան ատելությունը չափ չունի, Ներոնի գերեզմանին վրա եղած նախատական նշանները թեթև են ասոնց քով, որ Նաբոլեոնի տերության վրա դրվեցավ»²⁶:

Մխիթարյանները չէին ողջունում Նապոլեոնի՝ Ելբայից փախուստը և կրկին իշխանության

¹³ Պ. Հովնանյան, նշվ. աշխ., էջ 200-203, Ղ. Հովնանյան, նշվ. աշխ., էջ 286-287:

¹⁴ Ա. Գալֆայան, նշվ. աշխ., էջ 139:

¹⁵ Ղ. Հովնանյան, նշվ. աշխ., էջ 253, 260, Ա. Գալֆայան, նշվ. աշխ., էջ 146:

¹⁶ Ղ. Հովնանյան, նշվ. աշխ., էջ 260, 263:

¹⁷ Ա. Գալֆայան, նշվ. աշխ., էջ 151, 158, 186:

¹⁸ Գ. Գովրիկյան, նշվ. աշխ., էջ 265:

¹⁹ Պ. Հովնանյան, նշվ. աշխ., էջ 208:

²⁰ «Բազմավեպ», 1848, 1 հունիսի, թիվ 11, էջ 168:

²¹ Գ. Գովրիկյան, նշվ. աշխ., էջ 264:

²² Ղ. Հովնանյան, նշվ. աշխ., էջ 279:

²³ Նույն տեղում, էջ 330:

²⁴ «Բազմավեպ», 1875, հ. 33, պրակ Ա-Դ, էջ 88:

²⁵ Պ. Հովնանյան, նշվ. աշխ., էջ 208:

²⁶ «Դիտակ Բյուզանդյան», 1814, 16-31 ապրիլի, թիվ 8, էջ 55:

գալը: «Դիտակ Բյուզանդյանում» Մանուել վարդապետ Ջախջախյանը նշում է, որ դա «Նոր նյութ տվավ աշխարհիս՝ Նաբոլեոնի վրա խոսելու, նոր նյութ մտածողութեան և հոգեբու Եվրոպայի»²⁷:

Ըստ Ա. Գալֆայանի՝ Նապոլեոնը շատ ջանք թափեց հայրենակիցների «հայրենասիրությունը նորեն վառելու համար, բայց անօգուտ»: Նրա նկատմամբ «հավատարմությունը շատ տարակուսական էր»²⁸:

Ղևոնդ Հովնանյանի գնահատմամբ՝ Նապոլեոնը դրանով Եվրոպայի խաղաղության «հազիվ նորոգումը շենքը կործանելու ձեռք զարկավ»²⁹:

Մխիթարյաններն օրինաչափ էին համարում «Նաբոլեոնեան հսկայաձև շինուածոյն կործանումը»: «Բազմավեպի» համոզմամբ՝ «քնութիւնն մարդկութեն և իր հաշիվներեն ավելի հզորագոյն ըլլալով, հարկ էր որ տապալեր այս արուեստական կարգադրութիւնը, ճամբա բանալու ազգաց ու ժողովրդաց ինքնահոգ տար միութեան»³⁰: Նրանք, Նապոլեոնին համեմատելով մեծագոյն զորավարների և «առասպելական հսկաների» հետ, միաժամանակ գտնում էին, որ Աստված նրան «աշխարհը դրկել է իբրև Եվրոպայի համար պատիժ և միանգամայն ընդունայն փառաց տխուր օրինակ»: Նրանք հակադրվել են իրենց այն ժամանակակիցներին, ովքեր ցանկացել են նրա «անարդարանալի բռնութիւնները արդարացնել»: Ըստ նրանց՝ Նապոլեոնին արդարացնելու անհրաժեշտություն չկա, որովհետև նա «զինվորական քաջություններն զատ աշխարհաշինութեան պարծանքն ալ ունեցավ» թե՛ Ֆրանսիայում և թե՛ նվաճած երկրներում, ուստի «պատմութեանց և ավանդութեանց մեջ անջնջելի պիտի մնա»³¹:

Նապոլեոնին տված անաչառ գնահատականների հետ մեկտեղ Մխիթարյանները երբեք չեն մոռացել նրա բարյացակամ վերաբերմունքն իրենց միաբանության նկատմամբ: Նապոլեոնի մահվան 100-ամյակի կապակցությամբ հայր Սինաս Նուրիխանը գրում էր. «Բազմավեպը» յանուն Մխիթարայ Տան, և կը համարձակիմ ըսել, յանուն Հայ Ազգին, երախտագիտական պարտք մը կը համարի յիշել այս հարյուրամեակին առթիվ, այն մեծ բարիքին՝ զոր ստացավ Նապոլեոնէ, որ կրօնավորաց կարգերու ընդհանուր Ջնջման օրէնքէն՝ զարտոդրութիւն մը վճռեց Մխիթարայ Ուխտին նկատմամբ, և պահեց անոր էութիւնը միանձնական և գիտնական»³²:

Մխիթարյանների երախտագիտության դրսևորումներից մեկը Վենետիկի Սուրբ Դավաթ կղզու թանգարանում ներկայումս պահվող նապոլեոնյան մի քանի մասունքներն են:

Feliks Movsisyan (Armenia)

THE MEMBERS OF MECHITARIST CONGREGATION ON NAPOLEON BONAPARTE

Highly appreciating Napoleon's military talent the members of Mechitarist Congregation considered him one of the greatest servicemen in the world history. At the same time they called Napoleon "anti-socialist" and the wars he led "predatory" which expose to danger the peace in Europe. The Mechitarists considered the war with "inexpressible bravery" of the European Nations against Bonaparte as liberating, and the destruction of his empire as regular.

Claude Mutfian (France)

QUELQUES ERREURS RÉCURRENTES CONCERNANT L'ARMÉNIE CILICIENNE

Il y a quelques années, j'avais publié un article intitulé « Trente-six erreurs concernant l'Arménie cilicienne »¹. Ce choix du nombre d'erreurs était bien sûr arbitraire et non limitatif, tant ces erreurs récurrentes sont nombreuses. Les causes en sont variées :

– De nombreux auteurs reprennent certaines affirmations de leurs prédécesseurs sans chercher à les vérifier. Certes, ils ont des circonstances atténuantes : pendant longtemps – et encore souvent maintenant – on n'avait pas la discipline de citer ses sources, il fallait donc les rechercher si on voulait contrôler lesdites affirmations, ce qui était un travail bien fastidieux. C'est ainsi que des savants de l'envergure de Tchamtschian

²⁷ «Դիտակ Բյուզանդյան», 1815, 9-15 մարտի, թիվ 10, էջ 102:

²⁸ Ա. Գալֆայան, նշվ. աշխ., էջ 160-161:

²⁹ Ղ. Հովնանյան, նշվ. աշխ., էջ 354:

³⁰ «Բազմավեպ», 1875, հ. 33, պրակ Ա-Գ, էջ 86:

³¹ Ա. Գալֆայան, նշվ. աշխ., էջ 155, 181-182:

³² «Բազմավեպ», 1921, օգոստոս, էջ 246:

¹ Barlow Der Mgrdechian (ed.), *Between Paris and Fresno, Armenian Studies in Honor of Dickran Kouymjian*, Costa Mesa, CA, 2008, p. 361-378.

ou Alichan ont été involontairement causes d'erreurs qui se sont perpétuées, car leurs écrits ont longtemps été considérés comme parole d'Évangile.

– Quand on possède des sources, encore faut-il, avant de les prendre pour argent comptant, vérifier leur fiabilité : époque, circonstances, auteur,...

– Dans le domaine généalogique, de nombreuses erreurs sont dues à une interprétation trop restrictive des mots traduisant les liens familiaux, en latin comme en arménien. C'est ce qu'a fait Rüd't-Collenberg dans son ouvrage qui fait malheureusement autorité². Leur sens est plus large au Moyen Âge qu'il ne l'était dans la langue classique. Ainsi le mot arménien *t'orn* signifie au départ « petit-fils », mais peu à peu il désigna tout descendant. De même un *avunculus*, au sens classique un frère de la mère, est devenu un oncle quelconque, voire un cousin.

Nous allons donner ci-dessous quelques exemples de ces erreurs, autres que les « trente-six » déjà publiées.

La réhabilitation de Hét'oum de Lambron

On sait que le seigneur Constantin de Lambron, fils de Hét'ou-Héghi, s'était opposé à la politique mongole du régent Constantin de Papéron, père du roi Hét'oum I^{er}, qui le fit mettre à mort en 1250 pour haute trahison³. Il est universellement admis que son fils Hét'oum, père de la reine Kéran, le suivit dans sa trahison et partagea son sort. Or, si on examine les sources, tant franques qu'arméniennes, de cette histoire, aucune ne mentionne ce fils, à une exception près. Il s'agit là d'une copie d'une chronique attribuée au roi Hét'oum II, faite au XVIII^e siècle, donc très tardive. On y lit : *Le 29 juin 699 [1250] fut tué mon špap¹ Hét'oum, seigneur de Lambron*⁴.

Fils de Kéran, Hét'oum II avait bien pour grand-père (*pap*) Hétoum de Lambron, mais cette phrase, écrite bien après les événements, est suspecte pour plusieurs raisons, l'une d'elles étant l'absence de mention du principal intéressé, Constantin, le véritable *seigneur de Lambron*. De plus, dans la copie la plus ancienne connue de cette chronique, on lit qu'à cette même date *mon špap¹, le seigneur de Lambron, périt par le fer*⁵. Il s'agit ici de Constantin, arrière-grand-père du roi, ce qui signifie que le mot *pap* est à prendre au sens plus large de « ancêtre ». Il est hors de doute que le copiste tardif a ajouté lui-même le nom de Hét'oum, prenant *pap* au sens classique.

On peut donc affirmer que Hét'oum n'a pas suivi son père dans la trahison, et qu'il n'a pas été mis à mort en 1250.

L'épouse de Constantin de Lambron

Le nom, *Stéphanie*, de l'épouse de ce Constantin de Lambron est donné par son fils, le maréchal Ôchin, dans le colophon de son somptueux Évangile de 1274⁶. À la suite d'une interprétation douteuse d'un passage d'une chronique par Rüd't-Collenberg, il est admis de voir en elle une sœur du roi Hét'oum I^{er}⁷. Or aucune source ne corrobore cette affirmation et, de plus, le roi avait déjà une sœur du nom de Stéphanie, épouse du roi Henri I^{er} de Chypre⁸. En fait, on ne sait rien de cette Stéphanie épouse du seigneur de Lambron.

L'épouse de Constantin de Papéron

C'est encore l'un de ses fils, le connétable Smbat, qui donne le nom, *Avitz* (Alice ?), de l'épouse du régent Constantin de Papéron⁹. Son identification est fournie par Kirakos, pour qui le roi Hét'oum I^{er} est *fils de la sœur* du seigneur rebelle Constantin de Lambron¹⁰ : Avitz est donc une sœur de ce dernier.

À deux reprises, en 1263 et en 1266, l'évêque Jean, frère cadet du roi, mentionne sa *mayrik* [petite mère] *Béatrice*¹¹. On en a déduit que Constantin, probablement devenu veuf, avait eu une seconde épouse. Le principal argument en faveur de cette interprétation est un troisième colophon, daté de 1271, où cet évêque

² Weyprecht Rüd't-Collenberg, *The Rupenides, Hethumides and Lusignans, The structure of the Armeno-Cilician Dynasties*, Paris, 1963.

³ Kirakos de Gandzak, *Histoire d'Arménie* (en arm.), éd. Karapèt Mélik'-Ôhandjanian, Erevan, 1961, p. 287-288. Voir Claude Mutafian, *L'Arménie du Levant*, Paris, 2012, 2 vol., t. I, p. 152.

⁴ *Colophons de manuscrits arméniens, XIII^e siècle* (en arm.), éd. Artachès Mat'évosian, Erevan, 1984, p. 705.

⁵ Ardavazte Surmêyan, *Description du Bréviaire manuscrit du roi Ôchin, 1319* (en arm.), Antélias, 1933, p. 98.

⁶ *Colophons XIII^e siècle*, p. 441.

⁷ *Chronique de Smbat le Connétable* (en arm.), éd. Séropê Akelian, Venise, 1956, p. 250 ; Rüd't-Collenberg, n° 58 bis, p. 58 et tableau III (H2).

⁸ *Recueil des historiens des croisades, Historiens occidentaux*, t. II, Paris, 1859, p. 408.

⁹ *Colophons XIII^e siècle*, p. 363.

¹⁰ Kirakos, p. 287.

¹¹ *Colophons XIII^e siècle*, p. 322, 343.

Jean précise qu'il est un frère *§hamahayr*¹² [du même père] du défunt roi Hét'oum¹². Pourquoi ce besoin de précision, si ce n'est pour insister sur le fait qu'ils ne sont pas de la même mère ?

Cela dit, il y a aussi de forts arguments contre. Cette Béatrice n'est mentionnée nulle part en dehors de ces deux colophons, et le nom est rarissime dans l'anthroponymie arménienne – Adjarian n'en signale qu'un unique autre exemple¹³. Serait-elle franque ? Certainement pas, car aucune source latine n'en parle, et une telle union arméno-franque aurait nécessairement eu sa place dans les *Lignages d'Outremer*. De plus, le diminutif est étrange, et en regardant de près ces deux colophons on constate que la *mayrik* est loin d'y être à l'honneur, reléguée en fin d'énumération, ce qui est étonnant pour la mère de l'auteur. On préférera voir en cette Béatrice la nourrice, peut-être franque, de Jean plutôt que sa mère, pour en conclure que le régent n'a pas eu de seconde épouse. Si le colophon de 1271 insiste sur le « même père », il n'en exclut pas pour autant qu'il y ait une « même mère ».

Le père de la reine Zabêl, première épouse d'Ôchin

C'est en donnant naissance au futur roi Léon IV que Zabêl, première épouse du roi Ôchin, est morte en couches en 1310¹⁴. À la suite d'Alichan, on voit en elle une fille de Hét'oum l'Historien cousin germain du roi Léon II. Couronné en 1321, Léon IV, mineur, s'était vu imposer par le régent Ôchin de Korykos, fils de Hét'oum, le mariage avec sa fille Alice¹⁵. Dans ce schéma, les époux royaux étaient tous deux petits-fils de Hét'oum, Léon par sa mère et Alice par son père ; ils étaient donc parents au deuxième degré. Or, dans la lettre pontificale de dispense relative à ce mariage consanguin, il est dit explicitement que Léon est, par voie maternelle, apparenté à Alice au troisième degré¹⁶, ce qui suppose que Zabêl soit non pas fille mais nièce de Hét'oum, donc fille de son frère Ôchin de Kantchi¹⁷.

L'ascendance du premier roi Constantin de Négghir

Après l'assassinat du roi Guy de Lusignan en 1344, la couronne passa à un Constantin, fils du maréchal Baudouin, lui-même fils du seigneur Constantin de Négghir et *§t'orñ* de Constantin de Papéfon ; si on prend *§t'orñ* au sens classique de « petit-fils », ce Constantin de Négghir, grand-père du roi homonyme, est un fils de Constantin de Papéfon¹⁸. Or il ne figure sur aucune des nombreuses listes des fils de ce seigneur, en particulier pas sur son inscription de 1241¹⁹. De plus, on se trouverait alors en présence d'un fils cadet portant le nom de son père. Or les dynasties arméniennes sont d'une manière générale fidèles à la « règle de l'alternance », selon laquelle un seigneur donne à son fils aîné le nom de son père : les noms sautent donc une génération. Dans les rares cas où un père et un fils portent le même nom, il s'agit du fils aîné.

Dès lors, suivant Têr-Petrosian, il convient de prendre le mot *§t'orñ* au sens plus large de « descendant », et de voir en lui un fils de Vasak de Dchandchi, fils de Constantin de Papéfon, donc un petit-fils de ce dernier²⁰. Ce schéma respecte parfaitement la « règle de l'alternance » et s'accorde avec bien d'autres questions généalogiques : ainsi, ce roi Constantin I^{er} est alors parent de Léon IV au troisième degré alors que Guy de Lusignan l'était au deuxième, ce qui explique le choix de ce dernier comme successeur de Léon en 1342.

L'interrègne entre Constantin I^{er} et Constantin II

Constantin I^{er} avait pris pour épouse Marie de Korykos, fille de Jeanne d'Anjou et du régent Ôchin, fils de Hét'oum l'Historien ; il mourut en 1363 après le décès de ses enfants²¹. Il s'écoula plus d'un an jusqu'au couronnement de son cousin germain homonyme, et on admet souvent qu'un roi du nom de Léon aurait assuré la transition²². On a même parfois vu là un premier règne du dernier roi, Léon V Lusignan, que le

¹² *Colophons XIII^e siècle*, p. 410.

¹³ Hratchia Adjarian, *Dictionnaire des anthroponymes arméniens* (en arm.), t. I, Erevan, 1942, p. 409.

¹⁴ Hét'oum de Négghir, in Lévon Têr-Petrosian, *Les Croisés et les Arméniens* (en arm.), t. II, Erevan, 2007, p. 546.

¹⁵ Hét'oum de Négghir, p. 547.

¹⁶ Pontificia Commissio ad redigendum Codicem iuris canonici orientalis, *Fontes*, Series III, éd. Aloysius Tautu et al., vol. VII 2, t. II, Vatican, 1952, p. 84-85.

¹⁷ *Colophons XIII^e siècle*, p. 562. Voir Mutaïan, t. II, généalogies 49, 73.

¹⁸ *Colophons de manuscrits arméniens, XIV^e siècle* (en arm.), éd. Lévon Khatchikian, Erevan, 1950, p. 343 ; Eugène Tisserant, *Codices armeni Bybliothecae Vaticanae*, Rome, 1927, p. 99. Voir Rüd't-Collenberg, n° 113, p. 65 et tableau III (H2) ; Têr-Petrosian, p. 429.

¹⁹ Maxime Goepp, Claude Mutaïan et Agnès Ouzounian, « L'inscription du régent Constantin de Papéfon (1241), Redécouverte, relecture, remise en contexte historique », *Revue des Études arméniennes*, nouvelle série, 34 (2013), p. 243-287.

²⁰ Voir Têr-Petrosian, p. 431-432 ; Mutaïan, t. I, p. 354-355, t. II, généalogies 36 et 51.

²¹ Jean Dardel, in *Recueil des historiens des croisades, Documents arméniens*, t. II, Paris, 1906, p. 22, 36. Voir Mutaïan, t. II, généalogies 34 et 76.

²² Avétik' d'Amid, in Têr-Petrosian, p. 573 ; Paul Bedoukian, *Coinage of Cilician Armenia*, 2^e éd., Danbury, 1979, p. 20, 97-98, 395-399.

pape Urbain V avait effectivement tenté de faire monter sur le trône de Sis en 1365²³. C'est encore Têr-Petrosian qui a résolu le problème par la découverte d'une brève chronique du XIV^e siècle où l'on trouve, après *Constantin, fils du baron Baudouin, la reine Marioun, 1 an*, suivie de *Constantin, fils du baron Hét'oum*²⁴. C'est donc la reine veuve qui a assuré l'interim, et pas un quelconque Léon.

Problèmes généalogiques chez les Pahlavouni

L'une des principales familles du XII^e siècle arménien, connue sous le nom de Pahlavouni, est issue du célèbre duc Grégoire Magistros. Curieusement, on ne trouve aucun renseignement sur son épouse, ni même son nom, que ce soit dans son abondante correspondance ou dans les nombreuses sources contemporaines. C'est d'ailleurs loin d'être le seul point obscur dans l'arbre généalogique de cette dynastie. Ainsi, on sait que les catholicos Grégoire III et Nersès Chnorhali étaient *fils du puissant prince Apirat*, lui-même *fils d'une sœur* de Grégoire II, fils de Grégoire Magistros²⁵, mais malgré l'abondance de la production historiographique concernant ces deux personnalités exceptionnelles les informations sont déficientes sur plusieurs points essentiels : le nom de leur grand-mère paternelle, fille de Magistros, et surtout l'identification de leur mère et de leur grand-père paternel, c'est-à-dire de l'épouse et du père d'Apirat. Pourtant, les écrits de ces deux catholicos, surtout de Nersès, ne manquent pas, mais ils n'en disent pas un mot.

Seuls deux colophons nous donnent quelques éclaircissements sur leur mère. Le premier, écrit en 1174, à la mort de Nersès, fournit son nom, *Vanéni*²⁶, mais sa crédibilité n'est pas totale à cause de quelques erreurs. Selon le second, non daté mais tardif, elle serait sœur du catholicos Basile d'Ani, fils du prince hassanide Vasak et d'une autre fille de Magistros²⁷. S'il faut ajouter foi à ces deux sources, les parents de Nersès et Grégoire III seraient des cousins germains par leurs mères, donc des parents au deuxième degré. C'est peut-être à cause de cette union consanguine contraire au droit canon que leur mère est passée sous silence.

La situation est encore pire pour le père d'Apirat, à cause de l'absence totale de source. Il est d'usage de voir en lui le prince hassanide Apldjahap, frère de Vasak²⁸, mais c'est là une affirmation purement gratuite : pourquoi Nersès ne mentionnerait-il pas un tel prince hassanide comme son grand-père paternel ?

On peut avancer une hypothèse, selon laquelle le père d'Apirat serait passé sous silence car il ne serait pas un Pahlavouni, donc ses descendants non plus. Or ces derniers tenaient à l'appartenance à cette prestigieuse dynastie, supposée *liée par le sang à la postérité de notre saint Grégoire l'Illuminateur*²⁹. D'ailleurs, contrairement à tous les autres catholicos qui avaient un surnom accolé à leur nom, le frère et prédécesseur de Nersès s'est auto-intitulé « Grégoire III Pahlavouni », peut-être pour insister sur sa (fausse) ascendance Pahlavouni. On comprend dès lors la prudence de Tchamtchian, qui précisait qu'Apirat était *Pahlavouni par sa mère*³⁰.

Կլոդ Մութաֆեան (Ֆրանսիա)

ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՔԱՆԻ ՄԸ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՄԽԱԼՆԵՐ

Բազմազան պատճառներու համար, Կիլիկեան Հայաստանին շուրջ շատ սխալներ կը կրկնուին մէկ հեղինակէն միւրը։ Անոնց զգալի տոկոս մը ազգաբանական խնդիրներու կը վերաբերին։

Սոյն յօդուածին մէջ քանի մը օրինակներ կը բերենք։

– 1250 թուին դաւաճան Կոստանդին Լամբրոնացի իշխանը սպաննուեցաւ, սակայն իր որդին՝ Հեթումը, որը չհետեւեցաւ ու չպատժուեցաւ։

– Այս Կոստանդինին կինը Հեթում Ա թագաւորին քոյրը չէր։

– Հեթում Ա թագաւորին հայրը՝ Կոստանդին Պապեռոնացին, միայն մէկ անգամ ամուսնացաւ։

– Օշին թագաւորին առաջին կինը՝ Զաբէլ թագուհին, Հեթում Պատմիչին դուստրը չէր, այլ իր եղբոր՝ Օշին Կանչցիին դուստրը։

²³ Pontificia Commissio, vol. XI, Vatican, 1964, p. 121.

²⁴ Têr-Petrosian, p. 555.

²⁵ Nersès Chnorhali, *Bank' Tchav* (en arm.), Venise, 2^e éd., 1928, p. 588, 601 ; *Histoire de saint Nersès Chnorhali* (en arm.), *Sop'erk'* 14, Venise, 1854, p. 30.

²⁶ *Colophons de manuscrits arméniens, V^e-XII^e siècle* (en arm.), éd. Artachès Mat'evosian, Erevan, 1988, p. 216.

²⁷ Garégin Hovsep'ian, *Colophons de manuscrits, t. I (du V^e siècle jusqu'en 1250)* (en arm.), Antélias, 1951, col. 306.

²⁸ Rüd't-Collenberg, tableau IV (SP).

²⁹ *Histoire de saint Nersès*, p. 12.

³⁰ Mik'ayêl Tchamtchians, *Histoire de l'Arménie* (en arm.), t. III, Venise, 1786, index, p. 133. Voir Mutaftian, t. II, généalogies 40 et 11.

– Կի Լուսինեան թագաւորին յաջորդին՝ Կոստանդին Նեղրցիին հայրը Պաղտուն մարշալն էր, սակայն Հեթում Ա թագաւորին եղբորորդին չէր, այլ իր Վասակ եղբոր թոռն:

– Այս թագաւորին մահուրէն ետք, մինչև իր յաջորդին թագադրութիւնը, իր այրի կինը՝ Մարիուն, իշխեց, և ոչ որևէ Լեւոն մը:

– ԺԲ դարու Պահլաւունի կոչուած տոհմին ազգաբանութեան մէջ շատ մը մութ կողմեր կան:

Ներսէս Շնորհալին իր մօր ու իր հօր՝ Ապիրատին՝ հօր մասին որևէ տեղեկութիւն չի տար: Հաւանական է, որ Ներսէսին մայրը իր հօր մօրաքրոջ դուստրը ըլլայ: Իսկ Ապիրատին հօր մասին բան չենք գիտեր, հաւանաբար Պահլաւունի չէր, ու այդ դէպքին միակ Պահլաւունի կաթողիկոսը Գրիգոր Բ Վկայասէրն էր:

Ալբերտ Մուշեղյան (Հայաստան)

ՀԱՅԿԱԶՈՒՆԻՆԵՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (ՈՒՐԱՐՏՈՒ) Մ.Թ.Ա. 585 Թ. ԵՎ ՆՐԱ ՀԻՄՆԱԴԻՐ ԱՐՄԵՆԻՈՍ ԹԱԳԱՎՈՐԸ

Պարսկաստան կատարած անհաջող արշավանքից Հունաստան վերադարձող հելլենական Բյուրի հետ մ.թ.ա. 401-400 թթ. Հայաստանով անցնելիս զորավար-պատմագիր Քսենոփոնը, հայ մարդկանց տներում հյուրընկալվելով և խնջույքներում նրանց զարեջրի կարասների զարմանալի ոգեշնչող հեղուկն ու հորած (պահունի) հին գինին վայելելով¹, ունկնդիր է եղել հայ վիպերգուների պատմած գրույցներին՝ 7-6-րդ դդ. Հայոց և Մարաց թագավորությունների միջև տեղի ունեցած անցուղարձի շուրջ: Մովսէս Խորենացու վկայությամբ, *մեր հները փանդիռներով երգում էին, թե այս Երվանդյան Տիգրանը մեծիմաստ և պերճաբան էր*². «որ և Կիրոսի աջակցեալ, զՄարացն ի բաց բառնալով զիշխանութիւնն, և զՅոնն ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեաւ նուաճեալ հնազանդէր: Եւ զսահմանս մերոյ բնակութեանս ընդարձակեալ՝ ի հինսն մեր հասուցանէր յեզերս ծայրից բնակութեան...»³: Հետագայում, իր արիստոկրատիզմի պատճառով վտարվելով հայրենի Աթենքից և որպէս վտարանդի ապրելով Սպարտայում, Քսենոփոնը Հայաստանում գրի առած գրույցների հիման վրա ստեղծեց իր նշանավոր «Կյուրոպեդիա» պատմավեպը (մ.թ.ա. 365 - 358 թթ.): Թեև բանասիրության մէջ «Կյուրոպեդիա»-ն գնահատվում է իբրև ուսուցողական վեպ, որ նպատակ ունի պանծացնելու Կյուրոսին որպէս արդարադատ միապետի, սակայն Խորենացու պահպանած ավանդությունը հաստատում է, որ իր պատմական հենքով Քսենոփոնի երկը ներկայացնում է հնագույն հայկական վիպասանությունը վերստեղծելու մի բացառիկ օրինակ:

Խորենացու մոտ հիշված են նույն Տիգրանը և Կյուրոսը, ովքեր հանդես են գալիս Քսենոփոնի «Կյուրոպեդիա»-ում՝ երիտասարդ հասակում իբրև մտերիմ ընկերներ և որսակիցներ, իսկ հետագա արշավանքներում՝ հավատարիմ զինակից - զորավարներ: Քսենոփոնը արքայազն Տիգրանի հորը՝ Հայոց թագավորին, ամենուրեք անվանում է «արմենիոս», ուստի մինչ այժմ բոլոր հայ և օտար հետազոտողները նրա գործածած *արմենիոս* անունը ընդունել են իբրև ցեղանուն՝ *արմեն* (հայ) իմաստով, կարծելով, թե հայոց թագավորի անունը Քսենոփոնին հայտնի չի եղել: Այս պատճառով գրեթե բոլոր հայ պատմաբանները՝ սկսած Մ.Չամչյանից⁴, Քսենոփոնի *արմենիոս* թագավորին *Երուանդ* են անվանում, քանի որ Խորենացին Հայկյան Տիգրանի հորը *Երուանդ սակաւակեաց* է կոչում⁵: Մինչդեռ «Կյուրոպեդիա»-ում տեսնում ենք բոլորովին հակառակ պատկեր. Տիգրանի հայր հայոց թագավորը ոչ միայն սակավակյաց չէ, այլև անցյալում պատերազմել է Աստիագես-Ածյահակի դէմ և նկարագրվող դէպքերի ժամանակ՝ տարեց հասակում, դեռևս գահի վրա է, ու նրա կողքին է երիտասարդ արքայազն Տիգրանը, որն արդեն ամուսնացած է: Ահա և մի ուրիշ փաստ. ըստ հայ պաշտոնական պատմագիտության՝ Երվանդ Սակավակյացը գահակալել է 10 տարի (մ.թ.ա. մոտ 570-560)⁶: Պարզ է, որ տարիքն առած թագավորին կամ թեկուզ 10 տարի թագավորած մեկին Խորենացին չէր կարող *սակաւակեաց* (վաղամեռիկ) կոչել: Այս ամենը մեզ բերում է այն հետևության, որ Երվանդ Սակավակյացն իր Տիգրան որդուն ծնելուց հետո զոհվել է պատերազմում 20-22 տարեկան հասակում, երբ դեռ թագաժառանգ էր: Ուստի, արմենիոս թագավորը, որի միայն դուստրերն էին չափահաս, իսկ Սաբարիս(Շավարշ) որդին կրտսերն էր⁷, ի հիշատակ իր վաղամեռիկ թագաժառանգ որդու,

¹ Քսենոփոն, *Անաբասիս*, քարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, գիրք IV, գլուխ V (25-29), էջ 97-98:

² Մովսիսի Խորենացույ *Պատմութիւն Հայոց*, Տփղիս, 1913, Ա, ԻԳ(ԻԵ), էջ 73:

³ Խոր., Ա, ԻԳ(ԻԵ), էջ 71:

⁴ Միքայել Չամչյանց, *Հայոց պատմություն*, հ.Ա, Երևան, 1985, գիրք I, գլ.ԺԲ, էջ 107:

⁵ Խոր., Ա, ԻԲ(ԻԳ), էջ 69:

⁶ Տե՛ս *Ժամանակագրություն, Հայ ժողովրդի պատմություն*, Երևան, 1971, հ. I, էջ 922:

⁷ Քսենոփոն, *Կյուրոպեդիա*, քարգմ. Ս.Կրկյաշարյանի, Երևան, 2000, գիրք III, գլուխ I, §2, էջ 94 և գլուխ III, §2, էջ 116:

գահաժառանգ կամ գահակից է հռչակել իր թոռ Տիգրան Երվանդյանին՝ իբրև որդեգիր, որին սնուցել էր փոքր հասակից: Այդ պատճառով էլ Քսենոփոնը նրան Տիգրանի հայրն է համարում:

Խորենացու արքայացանկում վերջին երեք հաջորդական թագավորներն են՝ *Հայկակ* – *Երուանդ սակաւակեաց* – *Տիգրան*⁸, այսինքն՝ Տիգրանի հայրը *Երուանդ սակաւակեացն* է, իսկ պապը՝ *Հայկակը*: Ուրեմն, Քսենոփոնի *արմենիոս* թագավորը ոչ այլ ոք է, քան Խորենացու Հայկյան 9 թագավորներից 7-րդը՝ *Հայկակ*: Իմ «Արմենիոս=Հայկակ» բացահայտումով վերջապես լուծվում է այն կարևոր հարցը, որ հատկապես վերջին դարերում զբաղեցրել է հայ և օտարագի բանասերներին ու պատմաբաններին. «Կյուրոպեդիա»-ում Քսենոփոնն *արմենիոս* գործածել է ոչ իբրև ցեղանուն, այլ իբրև հայոց թագավորի անձնանուն՝ *Հայկակ*:

Անդրադառնալով Ուրարտու պետության վերջին տարիներին՝ Ի.Մ.Դյակոնովը գտնում է, թե Ուրարտական պետությունը կործանվեց մ.թ.ա. 590 թ. մեդացիների ու բաբելոնացիների, սկյութների ու կիմերների զորեղ և անընդմեջ հարվածների հետևանքով, որոնց պայքարին ակնհայտ *գործուն մասնակցություն են ունեցել նաև տեղական ցեղերը*⁹: Նրա տեղական ցեղերը ասելով հետազոտողը նկատի ունի Ուրարտուում բնակվող ցեղերին, ապա մեր բացահայտած փաստերը հաստատում են, որ Ուրարտուի տեղաբնիկ ցեղերը այն ընդդիմադիր ուժերն էին, որոնք ոտքի ելան օտար նվաճողների դեմ և Տուշպայի անկումից հետո ապահովեցին Ուրարտուի՝ Արարատյան թագավորության անկախությունը: Այս կապակցությամբ ուշագրավ է Բ.Բ.Պիտրովսկու կարծիքը, որը, հակադրվելով Դյակոնովի տեսակետին, գտնում է, որ մեդացիները կարող էին դեր խաղալ միայն Ուրարտուի մայրաքաղաք Տուշպայի անկման գործում, բայց այդ տեսակետը դժվար է տարածել Ուրարտուի՝ Անդրկովկասում գտնվող ադմինիստրատիվ կենտրոնների, մասնավորապես Թեյշեբաինի վրա¹⁰:

Մ.թ.ա. 616-585թթ. Վանյան կամ Ռշտունյաց թագավորությունից անջատված Արմեն-Շուպրիա (Ադնիք-Տարոն) երկրամասում իշխում էր Հայկյան թագավորների ճյուղը՝ Սկայորդու որդի Պարուրից մինչև Փավոռու ներառյալ¹¹: Վանյան հարստության անկումից հետո, երբ մեդա-բաբելոնյան միացյալ ուժերը գրավել էին Տուշպան և սպառնում էին ամբողջ Ուրարտուին, Փավոռու որդի Հայկակ-Արմենիոս թագավորը 590 թ. համախմբեց Ուրարտուի տեղաբնիկ հայկական ցեղերը և ջախջախիչ հակահարված հասցրեց նվաճողներին, և մեդական զորքը պարտություն կրեց՝ ընկնելով արևելքից Արմեն-Շուպրիայի թագավոր Արմենիոսի համախմբած հայկական ուժերի և արևմուտքից՝ լյուդիացիների¹² և Հայուս գետի հովտում բնակվող արմենների միացյալ զինակցության կրկնակի հարվածի տակ: Այդ մասին է վկայում Մեդիայի հզոր թագավոր Կիաքսարեսի կործանումը 585թ.: Իսկ Արմեն-Շուպրիայի Հայկակ-Արմենիոս թագավորը նույն թվականին հռչակվեց ամբողջ Ուրարտուի թագավոր հայկական հոծ ցեղերով բնակեցված Այրարատ ուստանում, Էրեբունի բերդաքաղաքում: Սրանով Արմենիոս-Հայկակ թագավորը փաստորեն վերականգնեց Ուրարտուում Վանյան կամ Ռշտունյաց հարստությանը նախորդած Հայկակ-գունիների իշխանությունը հանձին Արամ(ե)ի, որի մայրաքաղաքն էր Արմավիրը (9-րդ դ. առաջին կես):

Ամենայն հավանականությամբ, հենց 585թ. գահ բարձրացած Արմենիոս թագավորի անունն է դրոշմված Կարմիր բլուրում հայտնաբերված կավե սալիկի գլանաձև կնիքի վրա, որտեղ միանձնյա նշված է *Արմենի(ոս)* անունը, որ սեպագրագետները կարդում են *Erimena*: Եվ քանի որ Արմենիոս թագավորից է սկսվում Հայկակազունիների նոր հարստությունը Այրարատ նահանգում, այս պատճառով էլ նախորդ թագավորի անունը կնիքի վրա նշված չէ:

Դեռևս 1960-ական թվերին Էրեբունի ամրոցում՝ Խալդի աստծո տաճարի հյուսիսային կողմում, հնագիտական պեղումներով բացվել էր սյունազարդ մեծ դահլիճ՝ 30 սյուներով: 2008-2011 թթ. ֆրանսիական արշավախմբի շարունակած քառամյա պեղումները թույլ տվեցին որոշել նաև սյունազարդ մեծ դահլիճի կառուցման ժամանակը՝ մ.թ.ա. 7-րդ դ. վերջ – 6-րդ դ. սկիզբ: Հնախույզների կարծիքով, եթե այս գիտական վարկածը հաստատվի, կնշանակի խոսքը վերաբերում է ուրարտականից այսպես կոչված արեմենյան ժամանակաշրջան անցման փուլի մի նշանավոր հուշարձանի, որն իր ճարտարապետությամբ համեմատելի է մեդական ժամանակաշրջանի նմանատիպ մեծ դահլիճների հետ, ինչպիսին է Գողին թեփեն: Այստեղից հետևում է, որ Էրեբունի ամրոցում հնախույզների հայտնաբերած սյունազարդ մեծ դահլիճը ոչ այլ ինչ է, քան նոր բացահայտած Հայկակազունիների հարստության հիմնադիր Արմենիոս-Հայկակ թագավորի կառուցած գահանիստ հանդիսասրահը, որ նախատեսված է եղել արքունական արարողությունների համար: Միմյանցից անկախ բացահայտված այս իրողությունները՝ նորահայտ հայոց թագավորը և Էրեբունի ամրոցի սյունազարդ հանդիսասրահը, փոխադարձաբար հաստատում են պատմագիտությանը մինչ այժմ անհայտ հայոց թագավորության և նրա հիմնադիր

⁸ Խոր., Ա, ԻԲ(ԻԳ), էջ 69:

⁹ И.Дьяконов, *Последние годы Урартского государства...«Вестник древней истории»*, 1951, № 2, с.39.

¹⁰ Б.Пиотровский, *Ванское царство (Урарту)*, М., 1959, с. 241.

¹¹ Խոր., Ա, ԻԲ(ԻԳ), էջ 68-69:

¹² Լյուդիացիների և մեդացիների միջև տեղի ունեցած 6-ամյա պատերազմի մասին տե՛ս Հերոդոտոս, *Պատմություն ինը գրքից*, Թարգմ. Ս.Կրկյաշարյանի, Երևան, 1986, գիրք I, §74, էջ 33:

թագավորի գոյությունը: Ուստի վերոհիշյալից բխող մեր գլխավոր եզրակացությունն է. այսուհետև պետք է խոսել ոչ թե մ.թ.ա. 590 թ. Ուրարտու պետության կործանման, այլ այդ թվականից Ուրարտու պետության մեջ Վանյան կամ Ռշտունյաց հարստությանը փոխարինելու եկած Հայկազունիների հարստության մասին, որի արքայանիստ ուսումը վերստին դարձավ հիմնավորը Այրարատ նահանգը:

Մ.թ.ա. 585թ. Հայկազունիների հարստության վերահաստատումը Ուրարտուում և նրա հիմնադիր Արմենիոս-Հայկակ նոր թագավորի բացահայտումը առ ոչինչ են դարձնում այն սմանկ վարկածը, իբր մ.թ.ա. 6-րդ դարում հայ ժողովուրդը թևակոխել է կազմավորման երկրորդ փուլ, որն այլ բան չէ, քան մ.թ.ա. 6-րդ դարում արմենների եկվորության մերժված վարկածի փոխնակը կամ փոխակերպումը: Պատահական չէ, որ այդ երկու հակազիտական վարկածներն էլ համառոտ են կաշույն են մ.թ.ա. 6-րդ դարից: Եվ խոսքը մի ժողովրդի մասին է, որն իր արիությամբ, ազատատենչ ոգով և բարոյական կերպարով մասնակցել է անտիկ աշխարհում տեղի ունեցած երկու համաշխարհային պատերազմներին. 612 թվին Սկայորդու որդի Պարույրի գլխավորած հայկական զորքը, Մարաստանի, Բաբելոնի և այլ երկրների հետ դաշնակցած՝ ելավ ընդդեմ արյունարբու Ասորեստանի¹³, և ժողովուրդների այդ ճակատամարտը 607 թվին ավարտվեց Նինվեի կործանումով: Իսկ երկրորդ անգամ՝ 539/38 թվերին, երբ Տիգրան Երվանդյան արքայի և նրա զորավար Էմբասի գլխավորած հայոց այրուծին ու հետևակը,¹⁴ պարսից Կյուրոս արքայի հետ դաշնակցած, խորտակեց արյունոտ Քաբեղոնի զորությունը: Իր երիտասարդ կնոջ հետ Տիգրանը հաղթանակով մտավ Բաբելոն: Երբ նիզակակիցները բաժանվում էին, Կյուրոսը Տիգրանին պարզեց թանկագին գոհարներ և խնդրեց դրանք նվիրել իր տիկնոջը՝ մինչև պատերազմի դաշտ իր ամուսնուն արիաբար ընկերակցելու համար¹⁵: Այսպես, Քսենոփոնը հայ վիպերգուներից փոխ առած իր վերոհիշյալ դրվագներով մեզ օգնում է հասկանալ, որ բարոյական վեհացնող գծերը հայ ազգային բնավորության վաղնջական հատկանիշներն են՝ երիտասարդ արքայազն Տիգրանի պատվասիրությունը իր նրբագեղ կնոջ նկատմամբ, վերջինիս անձնվեր հավատարմությունը և ճակատամարտերում զորավար-ամուսնուն ընկերակցելու անընկճելի կամքը հայ ժողովրդի հնագույն ընտանեկան չգրված կոդեքսի առաքինություններից են՝ զրավոր ավանդված օտարազգի զորավար-պատմագրի ձեռքով: Արդյոք շա՞տ են այն ցեղերն ու ազգերը, որոնց բարոյական առաքինի կերպարն արտացոլող այսպիսի գողտրիկ դրվագներ էին պատմում դեռևս մ.թ.ա. 6-րդ դարում, երբ, ըստ որոշ հայ պատմաբանների, հայ ժողովուրդը իբր նոր-նոր էր մտել իր կազմավորման ավարտական փուլը և հայտնի չէ, թե այդ ավարտական փուլն էլ ե՞րբ է ավարտվելու¹⁶:

Պայքարելով իր անկախության համար՝ Հայաստանը Մեդիայի և մյուս երկրների հետ 522 թ. ապստամբեց *Աքեմենյան* Պարսկաստանի նոր արքայից արքա Դարեհ Ա Վշտասպյանի դեմ և երկու տարում հինգ զորեղ ճակատամարտ մղեց Դարեհի ուղարկած հայ զորավար Դադարշիշի (կարդա՝ *Դատ Արշես*) և ապա պարսից զորավար Վաուսիսայի գլխավորած պարսկական ուժերի դեմ: Եվ չնայած Դարեհը, որ այդ ժամանակ կռվում էր Մեդիայում, շարունակ սպառնում էր, թե իր նիզակը հասնում է օգնության, բայց հայ ապստամբները հետզհետե առաջացան Ադանիքից մինչև Միջագետքի Իզալա (Իծալա) լեռները և այնուհետև դեպի արևելք՝ մինչև Կորճայք, ընդհուպ մինչև Ատրպատական: Ուստի Դարեհը ստիպված էր հաշտություն կնքել Ատրպատականին սպառնացող հայկական ուժերի հետ: Այժմ հասկանալի է դառնում, թե ինչու նրա մ.թ.ա. 520 թ. եռալեզու Բեհիստունյան արձանագրության հին պարսկերեն, էլամերեն և ակկադերեն բնագրերում մեր երկիրը կոչված է *Արմինա*, *Հարմինույա* և *Ուրաշտու(Ուրարտու)*: Այստեղ, Արմինա-ն ոչ թե Արմե-Շուպրիա երկրամասն է, ինչպես կարծում են ոմանք, այլ համարժեք է նախկին Ուրարտու երկրի տարածքին: Նշանակում է, արձանագրության մեջ Դարեհը, նախորդ տարում ձեռք բերված հաշտության համաձայն, պաշտոնապես ճանաչել է ամբողջական Ուրարտու-Հայաստան թագավորությունը: Ահա թե ինչու անտիկ շրջանի փանդոնահար հայ գուսանները, ինչպես և Խորենացին, փառաբանում են հայոց ամենահզոր արքա Տիգրան Երվանդյանին, որ նա, մեր երկրի սահմանները ընդարձակելով, հասցրեց մինչև մեր հին բնակության ծայրագույն եզրերը:

Գալով ներկայումս ընդունված Երվանդունիների հարստության հարցին՝ հարկ է շեշտել, որ մ.թ.ա. 6-րդ դարից Հայաստանում իշխած թագավորական հարստությունը Խորենացին աներկբա անվանում է *Հայկազանց*, այսինքն՝ Հայկազունիների, իսկ երկիրը՝ *Հայկազանց երկիր*¹⁷: Չամչյանը նույնպես Խորենացու Հայկյան թագավորների տիրապետության շրջանը անվանում է «Ժամանակ

¹³ Խորենացին Ասորեստանի նվաճումը վերագրում է ոչ թե Կիաքսարին, այլ նրանից առաջ Մարաստանում իշխած մեդացի Վարբակես թագավորին, որը Հայոց քաջ նախարար Պարույրի օգնությամբ տապալեց Ասորեստանի Սարդանապալ թագավորին (*Խոր.*, Ա, ԻԱ(ԻԲ), էջ 65):

¹⁴ Քսենոփոն, *Կյուրոսյեդիա*, գիրք V, գլուխ III, § 38, 42, էջ 199:

¹⁵ Յարոսլին Աստուրեան, *Դոկտոր Դպրութեանց, Պատմութիւն Հայոց սկիզբէն մինչեւ մեր օրերը*, Պուենոս Այրես, 1947, տպարան «Միլիան», էջ 11-12:

¹⁶ Տե՛ս Ա.Մուշեղյան, *Ընդդեմ հակահայկական հայագիտության* («Ազգ» օրաթերթ, 2010 թ. հուլիսի 3) և *կրկին ընդդեմ հակահայկական հայագիտության* («Ազգ», 2010 թ. նոյեմբերի 20):

¹⁷ *Խոր.*, Ա, ԻԶ(ԻԷ), էջ 75 և ԼԱ(ԼԲ), էջ 85, Բ, ԿԵ, էջ 199:

իշխանութեան նախնի հայկազանց»¹⁸: Պատմական գիտությունը չպետք է անտարբեր անցնի ազգային պատմագրության այս ուղենիշ տեսակետի կողքով:

Albert Musheghyan (Armenia)

THE RESTAURATION OF HAYKAZUN DYNASTY IN ARMENIA (URARTU) IN 585 B.C. AND ITS FOUNDER KING ARMENIOS

The sources of the image of the Armenian king Tigran I are Khorenatsi's work and Xenophon's (430-354 B.C.) "Cyropedia", which inform about Tigran who lived and acted in the 6th century BC. Xenophon mentioning Tigran's father - the Armenian king, calls him "Armenios". Almost all Armenian historians beginning with M. Chamchyan till our times have mentioned Ervand as such one, considering "Armenios" to be ethnonym. But the author of this research reveals that Armenios mentioned by Xenophon is not an ethnonym, but he is identified with Haikak, the seventh of nine kings of the Haikyan list of kings mentioned by Khorenatsi, who in 585 B.C. was proclaimed in Erebuni as King of Armenia (Urartu). That prince Tigran is not the son of the king Armenios, as presents Xenophon, but his grandson. The son of Armenios was Ervand Sakavakyats (short-living). Here Khorenatsi also exactly preserved historic reality. After the birth of his son Tigran, Ervand Sakavakeats being a crown prince, died at the age of 22 at the war, that his father Armenios waged 570 B.C. against king of Media Astiages. Thus, the king Armenios-Haikak proclaimed the king his grandson Tigran Ervandyan in memory of his crown prince son. The lately discovered in citadel Erebuni hall of columns by the cathedral of god Khaldi is the throne palace founded by the King Armenios. It is possible that the name of king Armenios - *Erimena* is mentioned on a plate excavated in the Karmir Blur archeological site.

Anna Sirinian (Italy)

THE ARMENIANS IN MEDIEVAL ROME THE MOST ANCIENT MANUSCRIPTS AND INSCRIPTIONS (with a newly discovered epigraph of the 16th century)*

Although the existence of an Armenian Monastery [*monè tòn Armenion*] is documented in the Acts of the Lateran Council of 649¹, we have to wait six centuries to come across the first traces left by Armenians in Rome, represented by manuscripts and epigraphs dating back to the 13th century.

A) Manuscripts

Thanks to the Armenian custom of leaving long colophons rich in historical news, we know of a group of Armenian manuscripts (10 in all) copied or taken to Rome during the 13th or the first decade of the 14th century². In the most ancient one, dating from 1221³, the monk Grigor writes that he took his book from the

¹⁸ Մ. Չամչյանց, Ա, գլուխ Գ-ԺԳ, էջ 63-125:

* Due to the limited space, only the basic bibliography will be given in the notes.

¹ J.-M. Sansterre, *Les moines grecs et orientaux à Rome aux époques byzantine et carolingienne (milieu du VI^e s. – fin du IX^e s.)*, I, Bruxelles 1980, pp. 9-31; L.B. Zekiyan, *Le colonie armene in Italia e le relazioni culturali italo-armene (Materiale per la storia degli Armeni in Italia)*, in G. Ieni – L.B. Zekiyan (eds.), *Atti del Primo Simposio Internazionale di Arte Armena* (Bergamo, 28-30 giugno 1975), San Lazzaro – Venezia 1978, pp. 803-946: 833-835, 851-859 *et passim*; C. Mutafian (ed.), *Roma-Armenia*, [Catalogue of the Exhibition: Salone Sistino, Biblioteca Apostolica Vaticana, March 25-July 16, 1999], Roma 1999, pp. 120, 211-213, 334-338 and *passim*.

² See the following list of the relevant manuscripts in chronological order, with reference to A.M. Mat'evosyan, *Hayeren je'agreri hišatakaraner, ŽG dar*, Erevan 1984 (= MAT'EV). As for no. 1, see below, n. 3. 1) Città del Vaticano, Biblioteca Apostolica Vaticana, Arch. Cap. S. Pietro B 77, year 1221; 2) Città del Vaticano, Biblioteca Apostolica Vaticana, Vat. arm. 4, year 1226/1228 (MAT'EV no. 112, pp. 155-156); 3) year 1239 (MAT'EV no. 172, pp. 216-217: nowadays lost); 4) Erevan, Matenadaran, 218, year 1240 (MAT'EV no. 174, pp. 218-219); 5) year 1242 (MAT'EV no. 178, pp. 224-225: nowadays lost); 6) Venezia, Biblioteca dei PP. Mechitaristi, 90, year 1254 (MAT'EV no. 222, pp. 274-275); 7) New Julfa (Isfahan), Holy Savior Cathedral Library, 30, year 1262 (MAT'EV no. 259, pp. 313-314); 8) year 1268 (MAT'EV no. 299, p. 367: nowadays lost); 9) Erevan, Matenadaran, 142, year 1269 (MAT'EV no. 300, pp. 368-372); 10) New Julfa (Isfahan), Holy Savior Cathedral Library, 39, year 1310, see L.S. Xaç'ikyan, *ŽD dari hayeren je'agreri hišatakaraner*, Erevan 1950, no. 93, pp. 69-70. On their colophons see P. Chobanian [Č'obanyan], *I manoscritti armeni di Roma ed i loro colofoni (XIII secolo)*, in Mutafian, *Roma-Armenia*, pp. 213-215; id., *Hfomum grvac hayeren je'agreri hišatakaranerə (XIII dar)*, in *Hayastanə ev K'ristonyə Arevelk'ə / Armenia and Christian Orient*, [Proceedings of the Congress: Erevan, September 1998, edited by P.M. Muradyan], Erevan 2000, pp. 127-132.

monastery of Drazark, in Cilicia, where he had written it, to “the sacred places of Peter and Paul, in remembrance of my family and myself”. After completing the colophon, the same monk specifies, in a note scribbled in the outer margin of the last page:

Ե[ւ] Գրիգոր ապեղայս⁴ որ գիրքս բերի եւ յետու գիրք⁵ յիշատակս վ(ա)ս(ն) շին[ու]թեան | տանս զոր Ա(ստուա)ծ պատրաստել էր ինձ յիշատակ ինձ եւ ծնողաց իմ[ոց] եւ եղբ[այր]ն

“I, Grigor *abelay* brought this book and donated it as a small memento for the building of this home that God has prepared for me, in remembrance of myself, my parents and my brother”.

Grigor here wanted to leave a testimonial of his having contributed, through the donation of his book, to the building of the hospice for Armenian pilgrims in Rome (called simply *tun*, i.e. “home”), which evidently was being built at the time. This is the first time the existence of an Armenian hospice in Rome is mentioned. As the other colophons testify, together with several later Latin sources, it was situated close to St. Peter’s Basilica⁶.

If, at the time of this manuscript’s transcription, the hospice was under construction, with the second “Roman-Armenian” manuscript, i.e. Vat. arm. 4, which was written in 1226 or 1228, the hospice was completed. In fact, the scribe T’adēos states in a note that he gave his book *i Hrōmay ospet’al* (“to the hospice of Rome”), this time using, instead of *tun*, a loanword from the Latin *hospitale*, which refers to the various national shelters that arose near Saint Peter’s to host pilgrims. All of them were later destroyed when today’s Basilica was built during the 16th century.

As for the guests of the Armenian hospice, the colophons of the manuscripts copied in Rome allow us to trace a vivid portrait of this community, the solidarity among its members and the religious motivations that guided them. Let us sum up some of the information.

The community called itself a “fraternity” (*elbayrut’iwn*) and was organized around a leader (*arajñord*). It was composed, besides monks, of lay people including women, children and married couples. Many of its members came from the Eastern Armenian territories (Ganjak, Xaç’ēn, Marmašēn), which at that time suffered from Turkish and Mongolian invasions: memories of slaughters, famine, slavery are recurrent in these colophons, together with prayers to God imploring peace and liberation for their land. The most complete list of the people living in the Armenian hospice at the time is found in the colophon of the MS. Erevan, Matenadaran, 142, dated 1269, where about 40 people are mentioned by name: first of all, we have “venerable aged priests, pure and immaculate”, then we have young boys who “are fortifying themselves to resist the multifarious evils of Beliar”, we then have monks “bearing Christ’s cross”, whose functions within the community are sometimes referred to (e.g., we find a Vardan “baker” and a Sirun “shoe-maker”). All of them are said to have “left their country, their people, their homes, their belongings (...) to come here in exile, to the threshold of Saint Peter’s and Paul’s, hoping in eternal and ineffable rest”. At the end of the list we find the women, mentioned collectively, not by name. It is said of them that “they made themselves poor for the sake of Christ”, that “they fast and sleep on the floor”, that some of them “devoted themselves to virginity”, while others had once been married, and had later followed “the heavenly hope”. Including the women, we can imagine a community composed of about 50 members of various ages and both sexes, some of whom used to live there permanently, while others were just passing through.

Its promiscuity must have been noticed by the compiler of the so-called “Catalogue of the Anonymous of Turin” (Torino, Biblioteca Nazionale Universitaria, Cat. A 381) – an important description (in Latin) of the churches, chapels and monasteries around Saint Peter’s, dating back to the early 14th century –, who writes: “isti Harmeni habent uxores et filios iuxta ritum suum” (“these Armenians have wives and children, according to their custom”).

The Armenian colony present near Saint Peter’s had the important role of hosting their compatriots travelling to Rome. Most of them were pilgrims, but others came for diplomatic and ecclesiastical reasons, to ask the pope for support against the invaders⁷. In the colophons, the scribes themselves show their gratefulness to those of the community who received and fed them, imploring God to remunerate them with His boundless reward “a thousand times over” for just one good action.

As for its location, the hospice is said to be near “the Holy Mother of God”, an expression that referred to the Armenian church close to it, as later Latin sources confirm, talking about a church “Sancta

³ This manuscript has only recently been discovered, see A. Sirinian *Da Drazark a Roma: una pagina di storia ciliciana nel colofone del manoscritto Arch. Cap. S. Pietro B 77*, in V. Calzolari - A. Sirinian - B.L. Zekiyan (eds.), «*Bnagirk’ yišatakac’*» / Documenta memoriae. *Dall’Italia e dall’Armenia. Studi in onore di Gabriella Uluhogian*, Bologna 2004, pp. 67-95.

⁴ ապեղայս for աբեղայս.

⁵ գիրք for գիրք.

⁶ See below, n. 9.

⁷ See Č’obanyan, *Hrōmum grvac hayeren jeğageri hišatakarannerə*.

Maria de Hermenis de Portica Sancti Petri”⁸. The church, which was also known by different names, such as “Saint Gregory” or “Saint James” – this last was the name under which it is catalogued by the afore-mentioned “Anonymous of Turin” –, stood close to where the left-hand side of the colonnade of St Peter’s now stands, “in the district of the Armenians” (*“in contrata, que dicitur Armenorum”*)⁹.

B) Epigraphs

The area of Saint Peter’s was also where the most ancient, and the most beautiful, Armenian epigraph was found in Rome. It dates back to 1246¹⁰. The epigraph is now held in the Vatican Museums (Lapidario medievale e moderno 33115), in an area not accessible to the public¹¹. The text states:

*In the Armenian year six hundred and ninety-five (= 1246), this cross was lifted to intercede for Mxit’ar and his parents under the guidance of Step’an from the monastery of Lazarus*¹². *You who adore it, remember them in your prayers.*

At the basis of the monument – which we can consider a sort of *xač’k’ar* revisited in a Latin form, with the use of marble instead of tuff, and Latin crosses instead of the Armenian-style ones – we notice the presence of Latin letters together with Armenian ones, in the warning directed at the Romans that “this cross has been consecrated”. One can also notice the co-presence of Latin and Armenian letters in some of the Armenian manuscripts copied in Rome in the same period: see, for instance, the manuscript from Venice, Library of Mechitarist Fathers, 1347/90, of the year 1254, with its highly original miniatures, where the title of each Gospel is written in both Latin and Armenian letters.

But the most significant contact with contemporary Armenian manuscripts is the very fact that the name of the monk leading the community, Step’an from the monastery of Lazarus, appears in one of the manuscripts copied in Rome four years earlier than our epigraph, which is to say in 1242. So, for at least four years, the Armenian community in Saint Peter’s was led by the same person, from the region of Tarōn.

Going forward in time, the other two most ancient Armenian epigraphs found in Rome take us to the so-called “Three Fountains Abbey”, the monastery complex built in the place where Saint Paul was beheaded, and where, according to the legend, three fountains had sprung up from the soil in the three places where his head had bounced. The epigraphs are currently found embedded in the wall along the northern side of the cloister¹³.

The history of their discovery is reported by the well-known Italian archaeologist Giovanni Battista de Rossi in an article published in 1869¹⁴. He states that both inscriptions were retrieved from the paving on the occasion of the reclamation of the monastery in the years 1867-1868: the most ancient one was found as a headstone in the small upper church dedicated to the beheading of Saint Paul, while the second, a stele, was found in the portico of the church of Saints Vincent and Anastasius, where it had been re-used as a stone step.

In the oldest one, the Armenian inscription appears perpendicularly to a pre-existing Latin epigraph that de Rossi dates back to year 689. The Armenian epigraph laconically declaims:

Step’an, year 1267, remember.

The apparent absence of the letter *un* (“t”) in the name ՍՏԵՓԱՆ / Step’an (Stephen), has always represented a difficulty for researchers; however, having examined the inscription on the spot, I ascertained the presence of that letter in *nexus* with the second vertical stroke of the first letter U (“s”). Smaller in size than the others, the letter escaped the attention of the man who rubricated the inscription, who clearly did not know Armenian. Therefore the text of the inscription is complete and, as is true for all the other Armenian-Roman inscriptions, had been made in accordance with Armenian epigraphic customs.

The second inscription is the longest (it amounts to 19 lines) and the most interesting of all, for the numerous historical data it offers. Let me point out that at the top, by a series of three crosses, one can read the names of Saints Grigor and Vardan together with Saints Paul, Theodore, and Constantine. This represents an interesting grouping of Armenian saints together with saints of the universal Church: Grigor and Vardan are also the names of the two brother monks cited in the epigraph, while the other three saints most probably reflect the local worship.

⁸ See, e.g., a document on parchment of the year 1325 kept in the Vatican Library (Arch. Cap. S. Pietro, caps. 28, fasc. 110, n. 5), mentioned in ZEKIYAN, *Le colonie armene* p. 854, nt. 140.

⁹ F. EHRLE, *Ricerche su alcune antiche chiese del Borgo di San Pietro*, in *Dissertazioni della Pontificia Accademia Romana di Archeologia*, Ser. II, 10/1 (1910), pp. 1-43 (and pl. III): 31-36, 40.

¹⁰ See C. Mutafian (ed.), *Arménie. La magie de l’écrit*, [catalogue de l’exposition: Marseille, 27 avril-22 juillet 2007], Paris-Marseille 2007, p. 202.

¹¹ I thank Dr. Giorgio Filippi for permission to see it.

¹² That is to say the Holy Apostles Monastery of Mush, see Č’obanyan, *H’romum grvac hayeren jeragreri hišatakarannerə*, p. 131 n. 6.

¹³ *Roma-Armenia*, pp. 120, 213. As they are in the seclusion area, I thank the Abbot, Brother Jack, for permission to see them.

¹⁴ G.B. de Rossi, *Recenti scoperte nella chiesa alle Acque Salve dedicata alla memoria del martirio dell’apostolo Paolo*, in *Bullettino di Archeologia Cristiana* 7 (1869), 5-6, pp. 83-92: 87-92.

The text reads:

In the Armenian year 754 (= 1305), the 7th of May, the sign of the Holy Cross was erected in the name of the priest Vardan, religious hermit, who passed to Christ on the 11th of April, the day of Palm Sunday, and his brother, the monk Grigor, cleaner and candlestick-lighter (of the church) of the Beheading of Saint Paul the Apostle, erected this holy Cross to intercede for his own brothers and for other brethren. You who come across this Holy monastery, plead to Christ for the remission of the above-mentioned people's sins and remember me too, undeserving maker of this Cross, Frankish stone cutter, together with my parents. And may Christ have mercy on you. Amen.

The detail of the “Frankish” (that is to say “Latin”) nationality of the stone cutter is remarkable because through this we learn that the monk Grigor commissioned his cross from local workers.

The epigraph appears today damaged along all its sides, except for the lower one: besides having lost some letters at the edges, clear signs of chiselling are visible on the main cross, most likely due to the re-use of the stone as a step in the portico of the church of Saints Vincent and Anastasius, as de Rossi informed us.

During my research, I came across two documents that had never been collated with our inscription, i.e. two drawings of the epigraph held in the Vatican Library (MSS. Vat. lat. 8217, f. 12v and Barb. or. 130, f. 1r)¹⁵. It is clear, looking at the shape of the letters, that these two pictures were made by someone who did not know Armenian. Even though they are both anonymous and undated, the former, and most complete one, which served as model for the latter, should be considered made in the seventeenth century, on the basis of the Latin caption on the upper margin. Both of these drawings testify to a better state of conservation of the inscription compared to the current one, as the pictures were evidently made before the stone was re-used. Thanks to them, it is possible to reconstruct, at least partially – since some letters remain difficult to decipher – the upper part of the epigraph, bearing a dedication to St. Peter.

To conclude this paper, I am glad to announce the recent discovery of another interesting Armenian inscription in Rome, dating back to the 16th century. The epigraph represents new, important evidence for the history of the Armenian presence in Rome. The discovery is due to the archeological architects of the Special Superintendence for the Archaeological Heritage of Rome together with the restorers who since 2006 have been carrying out the conservative restoration of the Temple of Portunus, commonly known as “Temple of Fortuna Virilis”, situated on the banks of the River Tiber, not far from the Capitol¹⁶. Transformed into a church in the Middle Ages and dedicated to St. Mary of Egypt, in 1566 the building was donated by Pope Pius V to the Armenian community in Rome, who used it as their national church until Pope Gregory XIII, in 1832, gave them the church of San Biagio in via Giulia. The inscription is at the basis of a large marble cross that stood out against the top of the façade until its removal in 1925¹⁷. Embossed in two lines at the basis of the cross, the text reads:

ՅԻՇ(Ա)Տ(Ա)Կ Տ(Է)Ր ՅՈՎ(Ա)Ն(Է)Ս

ՏԷՐԶՆՅՈՆ ԵՒ ԻՒՐՈՅ [...]

In remembrance of Tēr Yovhanēs

Tēznc‘i and of his [...]

At first glance, the last word seems to be missing because of the breaking of the right-hand corner of the quadrangular basis of the cross. However, on closer observation I realized, curiously, that in that point the stone had not been carved at all. So the inscription had been left incomplete. Whatever happened, it is not difficult to guess that the missing word is “son”, *ordi* in Armenian, in the form *ordo* or *ordoy* in the inscription. In fact, Yovhanēs Tēznc‘i is a well-known figure in the history of Armenian culture, being one of the first printers of Armenian books. In 1587 he edited a Psalter in Venice with the help, as he states in the colophon, of his son Xač‘atur, the same person alluded to in our inscription. At the beginning of his edition, Yovhanēs is

¹⁵ *Codices Armeni Bybliothecae Vaticanae*. Borgiani, Vaticani, Barberiniani, Chisiani schedis F.C. Conybeare adhibitis recensuit E. TISSERANT, Romae 1927, pp. XIX and 354-355.

¹⁶ The archaeological restoration, carried out thanks to contributions from the World Monuments Fund, won the Italian Heritage Award 2013. Technical direction: M.G. Filetici; Restoration: C. Vazio; Studies: C. Cagiano de Azevedo, L. Scaroina. I thank Dr. Maria Grazia Filetici for permission to study the epigraph, and Dr. Carla Cagiano de Azevedo for pointing it out to me and helping me in many ways during my research. In June 27th 2013 I presented this finding to the annual session of the Pontifical Archaeological Academy of Rome, on the invitation of its President, Prof. Marco Buonocore: a more detailed paper on this subject will be published in the next issue of the Proceedings of that Academy (*Rendiconti della Pontificia Accademia Romana di Archeologia*).

¹⁷ At that time the architect Antonio Muñoz (1884-1960), who undertook the restoration of the church back to pagan temple, placed the cross inside the temple cell, where it remained invisible to the general public and neglected until now.

portrayed in his role as a printer together with Xač'atur¹⁸. It is ascertained that, before going to Venice, father and son sojourned in Rome for some years. In Rome, in 1583, Tēznc'i wrote a letter to the Armenian Patriarch of Jerusalem¹⁹, where he appears to be an influential member of the Armenian community, as the inscription of Saint Mary of Egypt now demonstrates. So the epigraph dates back to the period when Tēznc'i was in Rome, namely the early 1580s.

In conclusion, thanks to the finding of this epigraph, the role of Yovhanēs Tēznc'i within the Armenian community in Rome deserves to be reconsidered today, especially in the light of the documents from the archive of St. Mary of Egypt, which are now held in the Pontifical Armenian Seminary of Rome, where they await a long-planned process of re-ordering and cataloguing.

Աննա Շիրինեան (Իտալիա)

ՀԱՅԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀՈՍՄՈՒՄ

Հնագոյն ձեռագրեր և արձանագրութիւններ

(Վերջերս յայտնաբերուած ԺՁ դարի արձանագրութեան հետ միասին)

Միջնադարեան Հռոմում անմիջականօրէն հայերի կողմից թողնուած հնագոյն հետքերը դրանք ԺԳ դարին և ԺԴ դարասկզբին պատկանող ձեռագրեր և արձանագրութիւններ են: Շնորհիւ հայ գրիչների՝ ձեռագրերի վերջում ծավալում և մանրամասն յիշատակարաններ թողնելու սովորութեան, մեզ է հասել այդ շրջանում Հռոմում ընդօրինակուած կամ Հռոմ բերուած տասը ձեռագրից բաղկացած մի հավաքածու: Այդ նոյն ժամանակաշրջանին են պատկանում եւս երեք արձանագրութիւն, որոնցից մեկը գտնուել է Սբ. Պետրոսի տաճարի տարածքից, միւս երկուսը՝ Սբ. Պօղոսի մահատակութեան վայրում հիմնուած Երեք Աղբիւրների Մենաստանից (Abbazia delle Tre Fontane): Այս երկու տեսակ վաւերագրերի տուեալների համադրութիւնը թոյլ է տալիս կարեւոր տեղեկութիւններ հաւաքել միջնադարեան Հռոմում հայերի ներկայութեան մասին: Եւ ի վերջոյ տեղեկութիւն է տրուում ԺՁ դարի մի արձանագրութեան մասին՝ յայտնաբերուած վերջերս, Սրբ. Մարիամ Եգիպտացի եկեղեցում (հնում՝ Պորտունոսի տաճար)՝ Կամպիդոլիոյից ոչ հեռու՝ Տիբեր գետի ափին:

Էռնա Մանեա Շիրինյան (Հայաստան)

ԱԿՆԱՐԿՆԵՐ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Ներկայացվող գեկուցման վերնագրում «դպրություն»-ը (որը յուրահատուկ բառ է և հաճախ դժվարություններ է հարուցում օտար լեզվի թարգմանելիս, ինչ-պես, ի դեպ, մաս «մատենագրություն» բառը) օգտագործել ենք ավելի գրաբարյան իմաստով՝ «գրագիտութիւն, գիր իբրեւ ուսումն» (ՆՀԲ, հտ. I, 640), քանզի թվում է, թե արդի իմաստը՝ «գիր և գրականութիւն», չի արտացոլում բառի մեջ դրված նախնական, ավելի լայն իմաստը, այն է. «գիր և գրականութիւն ուսանելը»: Այս առումով, թերևս ավելի ճիշտ կլիներ գեկուցումն անվանել «Ակնարկներ հայ միջնադարյան դպրության և կրթության պատմությունից»: Թեպետև թեման լայնածավալ ուսումնասիրության նյութ է պարունակում, և առկա են բավարար չափով հետազոտություններ¹, սակայն կան խնդիրներ որոնք սահմանված չեն կամ հստակ լուսաբանված չեն, հարցեր, որոնք լիարժեք ուսումնասիրված չեն, որոնցից մի քանիսը մենք կփորձենք ներկայացնել այստեղ: Խնդրո առարկա խնդիրները և հարցերը կարելի է սահմանել հետևյալ կետերով.

1. Կրթության վերաբերյալ հայկական սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունների վերլուծությունը:

2. «Դպրոց» հասկացությունը և դրա շարունակականությունը Հայաստանում:

¹⁸ R.H. Kévorkian, *Catalogue des "incunables" arméniens (1511/1695) ou chronique de l'imprimerie arménienne* (Cahiers d'Orientalisme, 9), Genève 1986, pp. 28-29 no. 8.

¹⁹ L. Ališan, *Hayapatum*, Venetia 1901, pp. 599-603.

¹ Տե՛ս, օրինակ՝ Ա. Ալպոյաճյան, *Պատմություն հայ դպրոցի*, Կահիրե, 1946, Ա. Մովսիսյան, *Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության*, Երևան, 1953, Ե. Բաաթունի, *Պատմություն հին հայ դաստիարակության*, Պեյրուք, 1959, Ա. Մաքսոյան, *Հայոց միջնադարյան համալսարան*. - «Լրաբեր», 1984 1(62), էջ 62-71, Լ. Գ. Խաչերյան, *Գլաժորի համալսարանը*, Երևան, 1973, С.С. Аревшатын, А.С. Матевосян, *Гладзорский университет – центр просвещения средневековой Армении*, Ереван, 1984, Ա. Ժամկոչյան, *Հայ ժողովրդի պատմություն*, Երևան, 1992, Լ. Գ. Khacherian, *Educational Centrees of Armenian Learning: Schools, Seminaries, Monasteries, Lyceums, Academies and Universities in the Middle Ages of Armenia and Cilicia (V-XVI centuries)*, in two parts, Lisbon 1998; Լ. Գ. Khacherian, *History of Armenian Scripture, Learning and Education with a Theoretical Survey* (in three volumes), Lebanon: Armenian Catholicosate of Cilicia, 2000, Ա. Գոլյան, *Տաթևի համալսարանը*, Երևան, 2003 և այլն:

3. Ի՞նչ բնութագրություններ և առանձնահատկություններ են առկա Բյուզանդիայի ու Հայաստանի դպրության կազմավորման և զարգացման, կրթության, ուսուցման ընթացքի և մեթոդների միջև:

4. Արդյոք հնարավոր է խոսել Հայաստանում փիլիսոփայական դպրոցի առկայության մասին:

5. Մեկնողական ո՞ր դպրոցի հետևորդն էր Հայաստանը՝ Ալեքսանդրյան, թե՞ Անտիոքյան:

6. Միջնադարյան Հայաստանի հայտնի դպրոցները, վարդապետարանները, համալսարանները և դրանց ուղղվածությունը:

7. Սև Լեռան վանքերի «դպրոցի» նշանակությունը և այդ վանքերում կատարված գործունեության ուսումնասիրության կարևորությունը:

8. Միջնադարյան Հայաստանի դպրոցների տեսակները և անվանումները:

9. Հայկական տարրական և բարձրագույն դպրոցներում կիրառվող դասագրքերը:

10. Արդյոք վճարովի՞ էին հայկական դպրոցները:

11. Ինչո՞ւ են Հայաստանում պահպանվել, իսկ այլուր անհայտացել կամ շղարշվել են այս կամ այն առարկաների կամ ժանրերի («արտաքին գրեանք», «նուրբ և լայն գրեանք»), ուսուցման եղանակների և ձևերի («ներշնչական» կամ «շուրջ եկեալ վարդապետութիւն») վերաբերյալ տեղեկությունները:

Այս բոլոր խնդիրների լուսաբանումը, իհարկե, անհնարին է մեկ զեկուցման շրջանակում, և դրա կարիքն էլ չկա, քանզի որոշ հարցերի անդրադարձ կա իմ ուսումնասիրություններում, իսկ կրթության վերաբերյալ համապարփակ հետազոտություն ենթադրվում է ներկայացնել Օքսֆորդի հայագիտական ամբիոնի վարիչ Թեո վան Լինտի կողմից նախաձեռնված միջնադարյան Հայաստանի մշակույթի բոլոր ոլորտներն ընդգրկող ձեռնարկում²: Կարճ ակնարկներով, որոնք այստեղ հնարավոր է ներկայացնել միայն պատասխան պահանջող հարցադրումների տեսքով, կանդադարանա՞մք քննարկվելիք կետերից մի քանիսին:

Հայկական աղբյուրները բավական հարուստ նյութ են ընձեռում հայ միջնադարյան դպրության (5-15-րդ դդ.) կազմավորման և զարգացման, կրթության, ուսուցման ընթացքի և մեթոդի վերաբերյալ: Հետաքրքրական է, որ այս հարցերը լուսաբանող հայ մատենագրության մեջ առկա տեղեկությունները վերաբերում են ոչ միայն հայ իրողությանը, այլև ուշագրավ նյութ են պարունակում հունական դպրության, ուսուցման եղանակների և ձևերի վերաբերյալ: Իհարկե, սա զարմանալի չէ, քանի որ այսպես կոչված *ἑλληνοκλή παιδεία*-ն («հունական դպրությունը» կամ «կրթությունը») վաղուց ի վեր տարածված էր ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ քրիստոնյա աշխարհում: Չպետք է մոռանալ նաև այլ փոխազդեցությունների մասին, որոնք ակնհայտ էին տարբեր հարևան ժողովուրդների հետ շփվելիս: Այս ամենի հետ մեկտեղ Հայաստանում կար մի առանձնահատկություն՝ հայոց եկեղեցու դերն ու նշանակությունը հայ մտքի ձևավորման, գիտության և կրթության կազմակերպման գործում: Ավելին, հայագետները գրեթե համոզված են, որ հայոց եկեղեցին, ավելի ստույգ՝ Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը, քաղաքական և դավանաբանական խնդիրներով պայմանավորված, լայնածավալ գործունեության մի ծրագիր էին մշակել, որը գործեց թերևս 5-15-րդ դդ.:

Լայն իմաստով «դպրոց» («schola») հասկացության սկզբնավորումը թերևս կարելի է կապել վերոնշյալ ծրագրի և, մասնավորապես, այսպես կոչված Հունաբան դպրոցի և Դավիթ Անհաղթի գործունեության հետ: Հետագայում «դպրոց»-ի շարունակականության գործն ստանձնեցին վանական վարդապետարանները, որոնց առաջնորդներն իրենց պարտքն էին համարում աշակերտներին փոխանցել այն ամենը, ինչ որ սովորել էին իրենց ուսուցից: Այդ ուսանողներից առաջադիմածները, դառնալով վարդապետ, գնում և հիմնում էին իրենց դպրեվանքը՝ շարունակելով այն ավանդույթները և գիտելիքները, որոնք ստացել էին ուսանելիս: Նույնն անում էին հետագա աշակերտներից ամենաարժանիները: Ավելին. ինչպես տեղեկացնում է Կիրակոս Երզնկացին, ուսուցանելը, իր գիտելիքները փոխանցելը, վարդապետի սրբազան պարտքն է համարվել, իսկ աշակերտներ չպատրաստելը՝ հավասարազոր էր մեղք գործելուն: Կարելի է բերել Մխիթար Գոշի օրինակը, որը, սկզբում աշակերտելով Հովհաննես վարդապետ Տավուշեցուն Գետիկի վանքում կամ դպրոցում, հետագայում ստանալով վարդապետական իշխանությունը, իր բարեկամ իշխանների օժանդակությամբ, Կայենի գավառի «Տանձուտայ» ձորի մեջ, կառուցում է 1195 թ. Նոր Գետիկ վանքը (Գոշավանք) և հիմնում այնտեղ իր դպրոցը, որտեղ նրա շուրջը շատ աշակերտներ են հավաքվում, որոնցից մեկը՝ Վանական Վարդապետը (Հովհաննես Տավուշեցին), հետագայում հիմնում է իր դպրեվանքը Խորանաշատում, որը հայտնի էր նաև իր մատենադարանով: Մեկ այլ օրինակ մեկ այլ Մխիթարի վերաբերյալ. 17-18-րդ դդ. Մխիթար վրդ. Մեբաստացին անգամ լքեց իր հայրենիքը և փոխեց իր դավանանքը, որպեսզի կարողանա իրագործել իր ցանկությունը, երազանքը՝ «դպրոց» հիմնել վանական վարդապետարանների օրինակով: Ի դեպ, հենց նրա ստեղծած Մխիթարյան միաբանությունն էր, որը, հետևելով միջնադարյան վարդապետարանների պես ավանդույթների վերականգնմանը և, կարելի է անգամ ասել, սահակ-մաշտոցյան ծրագրին, ինչ-որ չափով ապահովեց հայկական «դպրոցի» շարունակականությունը:

²⁹ Three of these letters are conserved in *Lettres universelles*, p. 216-218. The forth, which regards the translation of the life of saint Sergius in Armenian, can be found in *Colophons of Armenian manuscripts (1st-XIIth c.) (Hayeren jeřagrieri hiřatakaraner (e-řb dd.))*, edited by A. S. Mat'evosyan, Erevan, 1988, n°205, p. 178-179. Letters translated in Vanĕrian, *Correspondance*, p. 439-443.

³⁰ *Universal letters*, p. 209-210.

³¹ *Universal letters*, p. 209 : « Վասն որոյ և մեր ի ձեռն աղօթական եղբարցոյ որք գան յարեւելս շրջել ի սուրբ տեղիս ուխտից Հայաստանեայց, գրեցաք զայսոսիկ սակաւութ ծանօթ լինել ձեզ ճշմարտապէս վերագրելոց իրաւործութեանց, զի մի՛ յանիմաստից ոմանց անուղղապէս ինչ լուեալ, այլընդայլոյ ինչ կարծիցեք »:

Այս նամակները թույլ են տալիս կարծիք ստեղծել հայկական քրիստոնեության մասին XII դարի երկրորդ կեսին. քրիստոնեության, որը տառապում էր հարձակումներից, քրիստոնեության, որում ի հայտ են եկել և դիմակայել հակասական համոզմունքներ, և որտեղ կան բազմաթիվ ներքին հակասություններ:

Այս իրավիճակում ի՞նչ միջոցներ ունի կաթողիկոսը, ինչպե՞ս կարող է նա համագործակցել իր տարանջատված ժողովրդի հետ, ինչպե՞ս պահպանել համախմբվածությունը և ինչպե՞ս ամրապնդել իր հեղինակությունը:

Ներսես Շնորհալու գրած նամակների ուսումնասիրությունը լույս է սփռում այս բացառիկ անհատականության կողմից տրված պատասխանների վրա:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կարինե Բազեյան (Հայաստան)

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ. ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդական դեկորատիվ-կիրառական արվեստը ծնվել է մարդու աշխատանքային գործունեության հետ միաժամանակ և իր մեջ կրում է տվյալ ժամանակի աշխարհաճանաչողությունն ու աշխարհընկալումը: Կոնկրետ պատմական դարաշրջանի հետ կապված՝ այն փոփոխվել է, ընդունել տարբեր անուններ՝ պահպանելով իր բոլոր գործառնությունները, քանի որ ավանդական կիրառական արվեստի ստեղծագործություններն ուղեկցել են մարդկանց իրենց ողջ կյանքի ընթացքում: Ժողովրդական արվեստը, որպես էթնիկ մշակույթի բաղկացուցիչ մաս, արտահայտելով ժողովրդի պատմական զարգացման յուրահատկությունը, դիմամիկ երևույթ է, այն որքան հին է, այնքան էլ նոր: Ավանդական ժողովրդական մշակույթի առարկայական-մյուսական աշխարհը շարունակում է ապրել նաև ժամանակակից պայմաններում: Այն ընդարձակ է, բազմաբնույթ, սակայն մեծ մասամբ կրում է այլ, նախնիներից տարբերվող բնույթ, որը նշանակալիորեն տարբերվում է հինից: Հայկական ժամանակակից ժողովրդական արվեստի հիմքում ձգտումն է կրկնելու հին վարպետների կողմից սիրված գեղարվեստական օրինակները, շնորհիվ իրենց հուզող, պարզ մաքրության ու ձևի նպատակահարմարության, դեկորատիվության ու գեղեցկության, այսինքն՝ այն բոլորի, ինչը շարունակում է գոյություն ունենալ որպես արդի՝ XXII դ. մարդու ռացիոնալիստական մտածողության հակադրություն:

Այսօր գոյություն ունեցող ժողովրդական արվեստի բոլոր տեսակներն անկասկած մեծ գեղարվեստական արժեք են ներկայացնում ինչպես մեր երկրի, այնպես էլ ողջ աշխարհի համար: Սակայն հարկավոր է նկատի ունենալ, որ դրանցից ոչ բոլորն են արվեստի տվյալ ճյուղի ուղղակի շարունակությունն իրենց այն բոլոր առանձնահատկություններով, որոնք բնութագրական էին նախնյաց մշակույթին: Ըստ էության սա արդեն նոր երևույթ է, գեղարվեստական գործունեության նոր եղանակ, որը հարում է նախկին ժողովրդական մշակույթին, առաջացել է նրա հիմի վրա, սակայն արդեն տարբերվում է իր կոնկրետ դրսևորումներով: Մշակութաբանները նույնիսկ միտք են հայտնում, որ ժողովրդի արժեքային-նորմատիվ կենսապահովման ամբողջական համակարգը մեր օրերում մասնատվում է առանձին դրվագների, որոնք ժամանակի ընթացքում կորցնում են իրենց իմաստային-գործառնության ինքնությունը արդի ժողովրդական մշակույթի շրջանակներում¹:

Ժողովրդական արվեստը էթնոսի ավանդական մշակույթում կատարել է մի քանի գործառնություն: Առաջին հերթին դա առօրյա-կենցաղային գործառնություն է, որովհետև գեղարվեստի յուրաքանչյուր առարկա ավանդական կենցաղի անհրաժեշտ մասն էր կազմում: Գեղագարդված իրերը երբեմն աչքի զարնող չեն, քանի որ դրանք չէին ստեղծվում ցուցադրության համար: Առտնին կյանքում այդ իրերը կարծես շնչավորում էին բնակչության միապաղաղ կյանքը:

Ժողովրդական արվեստի գլխավոր գործառնությունը կարելի է սահմանել որպես գեղարվեստագեղագիտական, քանի որ այն խնդիր ուներ զարդարել, գեղեցկացնել բնակարանի ներսույթը, իրերը, հագուստը, շրջապատը: Այդպիսի ցանկացած իր կամ առարկա ընկալվում է որպես մի ամբողջական գեղարվեստական ստեղծագործություն, որն ունի իր բնորոշ արտահայտման ձևը, կառուցվածքը, նախշերի ու զարդաօրինակների հստակ ուրվագծերը: Կիրառական-գեղագարդման արվեստի նմուշները ժողովրդին տալիս էին այնպիսի հոգևոր հագեցում, որը միևնույն է, ինչ բարձր արվեստի հետ շփումը:

Ժողովրդական արվեստի մյուս գործառնությունը տոնածիսականն է, որովհետև ժողովրդական ստեղծագործության և կիրառական գեղարվեստի շատ նմուշներ ու հատկապես դրանց զարդանախշերը կապված են հավատալիքների, ծեսերի ու սովորույթների որոշակի համակարգերի հետ:

Արդի պայմաններում հիշյալ գործառնությունները կորցրել են իրենց նշանակությունը, քանի որ փոխվել են ժամանակակից մարդու կյանքն ու ապրելակերպը, ստեղծվել են նոր աշխարհընկալում ու արժեքային համակարգ: Դրանց համապատասխան էլ ձևավորվել են նոր գործառնություններ, որոնցից առաջինը կարելի է ձևակերպել որպես «մշակութային հիշողություն»: Ավանդական և խորհրդային տարիների ժողովրդական արվեստի նմուշներն այսօր դարձել են թանգարանային առարկաներ, որոնց արժեք այն է, որ դրանք՝ որպես անցյալի գեղարվեստական մշակույթի նմուշներ, իրենց մեջ կրում են մեր նախնիների փորձը, ճաշակն ու աշխարհայացքը:

Հաջորդը հուշանվերային գործառնությունն է. սա ավանդական ժողովրդական արվեստի նմուշների՝ որպես էթնիկ նշանի վերարտադրությունն է: Այս գործառնությունը ձևավորվել է դեռևս XX դ. կեսերին, երբ

¹ Культурология. XX век. Словарь. - СПб., 2005, с. 295.

ստեղծվեցին հուշանվերների արտադրության արտելներ ու կոմբինատներ: Հարկ է նշել, որ ժողովրդական արվեստի նշանային գործառույթը բնորոշ էր նաև ավանդական մշակույթին, սակայն տարբերվում էր իր իմաստով ու բովանդակությամբ: Եթե նախկինում դա արտահայտվում էր առանձին դպրոցների առկայությամբ, որոնք տարբերվում էին իրենց յուրահատուկ տեխնիկական հնարքների կիրառմամբ, բնորոշ զարդանախշերով ու գունային համալիրով, ապա այսօր, ցավոք, նման կենտրոններ ու դպրոցներ չենք կարող առանձնացնել: Ժամանակակից կիրառական արվեստի նմուշները, որոնք ստեղծվում են որպես հուշանվերներ, ունեն մեծ ընդհանրություններ՝ անկախ նրանից, թե որտեղ են արտադրվել:

Մյուս գործառույթը կարելի է անվանել տնտեսական կամ առևտրային: Այս գործառույթը ևս բնութագրական է ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից ժողովրդական արվեստի համար, սակայն դարձյալ մեծ տարբերություններով: Ավանդական կենցաղում թե՛ տնայնագործները, թե՛ քաղաքային վարպետ արհեստավորներն աշխատում ու արտադրում էին վաճառքի համար, այսինքն՝ դա ուներ նաև տնտեսական նշանակություն: Սակայն մեր նախնիներն իրենց արտադրանքը ստեղծում էին դարավոր ավանդույթների շրջանակներում՝ ամխաթար պահպանելով ժողովրդական զարդարվեստի հիմնավորը գծերը: Արդի պայմաններում փոխվել է գեղարվեստական ստեղծագործության արտադրության նպատակադրությունը. գործառնականության ու գեղեցկության սինթեզի փոխարեն արհեստավորի համար առաջնային է դառնում արտադրանքը վաճառելու ձգտումը, իսկ պրոֆեսիոնալի համար՝ ինքնանույնականացումը: Հուշանվերային արտադրանքի սպառողների ճաշակի հետ կապված՝ վարպետները հարմարեցնում են իրենց ստեղծագործությունների զարդարվեստը, դեկորատիվությունն ու ազգային գծերը ժամանակի ու արդի սպառողի պահանջարկի հետ:

Ինչպես տեսնում ենք, ժողովրդական արվեստը՝ որպես ազգային մշակույթի բաղկացուցիչ մաս, ուղեկցել է հայ ժողովրդին իր գոյության ողջ ընթացքում՝ փոփոխվելով, հարմարվելով նոր պայմաններին ու բնակչության աշխարհայացքին: Անհրաժեշտ է ընդգծել, որ ավանդական կիրառական արվեստի դերը արդի հասարակության, պետության ու մարդու կյանքում մեծանում է՝ ձեռք բերելով ռազմավարական նշանակություն: Ավանդական ժողովրդական արվեստի ոչ թե առանձին նմուշների, այլ որպես պատմամշակութային երևույթի վերաբերյալ գիտական տեղեկություն ստանալու միջազգային հանրության պահանջարկը մեծանում է բառացիորեն ամեն օր, քանի որ շատ բան նրանից, ինչ կուտակվել է անցած հազարամյակների ընթացքում, այսօր դրսևորվում է որպես նորության երևույթ մարդկային կենսագործունեության տարբեր ոլորտներում: Ժողովրդական արվեստի ստեղծագործություններում կուտակված մարդու փորձը հիրավի անգնահատելի է «ռիսկերով» ու ճգնաժամերով լի գյուրալացված աշխարհում՝ մարդու ֆիզիկական ու հոգևոր անվտանգությունն ապահովելու առումով:

Ցավոք սրտի ժամանակակից հայագիտությունն այսօր սուր զգում է ավանդական կիրառական արվեստի վերաբերյալ մասնագետների ու ուսումնասիրությունների պակաս, որի տեղը արվեստների պատմության մեջ դեռ արժանի չափով չի ներկայացվել, այն չի դարձել զուտ գիտական հետաքրքրության ու հատուկ ուսումնասիրության օբյեկտ: Հատկապես արվեստաբանության բացթողումները, կապված ժողովրդական արվեստի ուսումնասիրության հետ, արտահայտվում են հիմնական տեսական դրույթների թույլ մշակվածության, սահմանումների բացակայության, տերմինների ու հասկացությունների բազմանշանակ բացատրության և անսխառն գործածության մեջ: Մինչ օրս լիովին չեն պարզաբանվել ժողովրդական արվեստի յուրահատկությունը, բովանդակությունը, չեն սահմանվել գեղարվեստական արհեստների հասկացություններն ու կառուցվածքային առանձնահատկությունները: Վերջապես, հենց բուն «ժողովրդական արվեստ» հասկացությունը չի հստակեցվել: «Ժողովրդական արվեստ» տերմինը կամ հասկացությունը գիտական շրջանառության մեջ է դրվել XIX դ. սկզբներից: Մինչ այդ գրականության մեջ ընդհանրապես խոսք չի եղել արվեստում «ժողովրդական» կամ «պրոֆեսիոնալ» ուղղությունների, դրանց՝ որպես գեղարվեստական ստեղծագործության ուրույն տեսակների մասին:

Մեծանուն հայագետ Գարեգին Հովսեփյանը հայ իրականության մեջ առաջինն էր, որ ժողովրդական արվեստը գնահատեց պատմական, մշակութային և ազգային արժևորմամբ: Նրա մեծարժեք հրապարակումների շնորհիվ շրջանառության մեջ դրվեցին և ճանաչելի դարձան հայկական գեղարվեստական գործվածքը, ոսկերչությունն ու փայտի փորագրությունը: Առանձնացնելով դրանք որպես «մանր արվեստներ»՝ Գ. Հովսեփյանը գիտական աշխարհի ուշադրությունը հրավիրեց դրա ուսումնասիրության վրա²: «Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից» հոդվածում նա գրում է. «Նորագույն արվեստը հետևելով նոր գաղափարախոսության և հասարակական կյանքի ձևակերպման, չպետք է կտրե յուր օրգանական կապը անցյալի հետ, և պետք է օգտագործե այն, հատկապես ձևերի ստեղծագործման և տեխնիկայի զարգացման մեջ: Որչափ նյութեր կան կահ-կարասիքի, անոթների, ասեղնագործության, գորգագործության, կտավեղենների ու մետաքսեղենների մշակության համար, որ մինչ այժմ կատարյալ անուշադրության են մատնված մեր կողմից: Ապրում ենք պետական նոր կյանքով, որ խրախուսում է ազգային մշակույթների պահպանությունն ու զարգացումը, պետք է որոնենք և գտնենք այն ուղիները, որ նոր արվեստի ծագման և ծաղկման հիմունքներն են կազմում: Իսկ

² Գ. Հովսեփյան, *Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության*, հ.Ա, Գ.Ա հրատ., Եր., 1983:

այդ հիմունքներից մեկը, եթե չասենք ամենակարևորը, անցյալ նյութերի հավաքումն է, ցուցադրումը և նրա ուսումնասիրությունը»³:

Հայկական ժողովրդական արվեստի առանձին ոլորտներին հետազայում անդրադարձել է Արմենակ Սազգյանը, որն իր «Հայերու գեղարուեստական գործունեությունը Իկոնիոյ եւ Կ. Պոլսոյ սուլթաններու օրով» հոդվածում⁴, բերելով պատմական բազմաթիվ տվյալներ հայ վարպետների բազմատեսակ արվեստների մասին, կանգ է առել դրանցից յուրաքանչյուրի վրա: 1940թ. Փարիզում հրատարակված «Հայ արվեստի էջեր» հոդվածների ժողովածուի մեջ հեղինակն արդեն լուրջ գիտական վերլուծության է ենթարկել Եվրոպայի թանգարաններում գտնվող հայկական դեկորատիվ-կիրառական արվեստի առանձին մոտիվներ՝ փորձելով ցույց տալ դրանց ընդհանրությունն ու ազգային ավանդույթների պահպանողականությունը⁵:

Խորհրդային տարիներին հայկական ժողովրդական արվեստի ուսումնասիրությունն իրականացում էր ԳԱ արվեստի ինստիտուտում, որտեղ ստեղծվել էր դեկորատիվ-կիրառական արվեստի սեկտոր՝ վաստակաշատ հայագետ, արվեստագետ Սերիկ Դավթյանի գլխավորությամբ: Ս.Դավթյանի հրատարակած ալբոմների ու հոդվածների շնորհիվ լայն հասարակությունը ծանոթացավ հայկական ժանյակի, կարպետի, ասեղնագործության ողջ հարստությանը⁶: Ամփոփելով տարիների գիտական պրպտումները՝ նա ի մի բերեց կիրառական արվեստի բոլոր ճյուղերը՝ ստեղծելով ժողովրդական կիրառական արվեստին նվիրված մեծարժեք մի աշխատություն, որն իր թեմատիկ ու ժամանակային ընդգրկմամբ, հնագիտական ու ազգագրական նյութի օգտագործմամբ, մշակութաբանական համակողմանի քննությամբ մինչ օրս մնում է անգերազանցելի⁷:

Նրա գործը շարունակեցին Մ.Ղազարյանը⁸, Զ.Թառայանը⁹, Ե.Սարգսյանը¹⁰: Ինչպես տեսնում ենք վերջին երեք տասնամյակում ժողովրդական արվեստի ուսումնասիրության բնագավառում ոչինչ արված չէ: Արվեստի ինստիտուտում ոչ ոք չի զբաղվում հիշյալ հարցերով: Չեն պատրաստվում մասնագետներ, քանի որ ՀՀ բուհերի արվեստաբանության ամբիոններում ուսանողներին չեն տալիս գիտելիքներ հայկական ժողովրդական արվեստի պատմության ու տեսության մասին: Եվ դա այն դեպքում, երբ ժողովրդական արվեստը, որպես մշակույթի հիմնախնդիր, մարդու և ազգի, նրանց աշխարհընկալման հիմնախնդիր է:

Այսպիսով, այսօր կարևոր նշանակություն են ստանում ժողովրդական գեղարվեստական մշակույթի պահպանման ու ապագա սերունդներին անխաթար փոխանցման խնդրի նկատմամբ գիտական մոտեցման մշակումը, հայկական ժողովրդական արվեստի ու նրա առանձին ճյուղերի վերաբերյալ կրթական ծրագրերի մշակումն ու կյանքի կոչումը՝ երիտասարդ սերնդի գեղագիտական ճաշակը զարգացնելու, ազգային ինքնագիտակցությունը բարձրացնելու, սեփական արժեքները գնահատելու միտումով:

Ժամանակակից պայմաններում, երբ կորստյան են մատնված էթնիկ գեղարվեստական մշակույթի ժառանգորդման, ժողովրդի բազմադարյա փորձի ու գիտելիքների փոխանցման ավանդական, էթնոմանկավարժական մեխանիզմները, առավել քան կարևոր են դառնում պետական քաղաքականությունն այս ոլորտում ու տարբեր վարչական, գիտակրթական, հասարակական և այլ բնույթի կազմակերպությունների համագործակցությունն ու գործուն մասնակցությունը:

Karine Bazeyan (Armenia)

THE DYNAMICS OF EVOLUTION OF FOLK ART: TRADITION AND MODERNITY

Folk art is a historically evolving, multi-layered system of material values created by human being. The evolution of traditional applied art corresponds with the phases of the history of mankind.

Depending on concrete historical period it takes different names, but retains its main distinctive feature: works of the traditional applied art followed human being during all his life.

This type of art has not yet become an object of strict scientific attention and special studying. This article reveals phases of evolution of Armenian folk art and problems of its research.

³ Նույն տեղում, էջ 186:

⁴ Ա. Սազգյան, Հայերու գեղարուեստական գործունեությունը Իկոնիոյ եւ Կ. Պոլսոյ սուլթաններու օրով, «Անահիտ» հանդես, Փարիզ, 1933, հ.2,3:

⁵ Sagzian A., *Les pages des arts arme'nienne*, Paris, 1940.

⁶ Ս. Դավթյան, Հայկական ժանյակ, ԳԱ հրատ., Եր., 1966, նույնի՝ Հայկական ասեղնագործություն, ԳԱ հրատ., Եր., 1972, նույնի՝ Հայկական կարպետ, ԳԱ հրատ., Եր., 1975:

⁷ Ս. Դավթյան, Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, ԳԱ հրատ., Եր. 1981:

⁸ Մ. Ղազարյան, Հայկական գորգ, «Էրեբունի» հրատ., Լոս Անջելես, 1988, նույնի՝ Փայտի գեղարվեստական փորագրությունը Հայաստանում, «Խորհրդային գրող» հրատ., Եր., 1989:

⁹ З.Тараян, *Набойка в Армении*, изд. АН., Ереван, 1978.

¹⁰ Е.Саркисян, *Гончарное искусство Армении*, изд. АН., Ер., 1978.

Երվանդ Գրեկյան, Համիկ Հմայակյան (Հայաստան)

ՄԻԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԽԱՐՀՈՒՄ

Մարդկության պատմության ընթացքում մինչ միապաշտական կրոնների հաստատումը, տեղ են գտել մի քանի միաստվածական ռեֆորմներ (ինչպիսին էր, օրինակ, Էխնաթոնյան ռեֆորմը)։ Միապաշտական պատկերացումները խորթ չեն եղել մաս Հայկական լեռնաշխարհի և հարակից տարածքների բնակչության համար։

Օրինակ, ուրարտական պետությունն աչքի էր ընկնում Խալդի աստծու պաշտամունքի բացարձակացմամբ, պաշտամունք, որը Գրիգոր Ղափանցյանի կողմից բնորոշվում էր որպես «խալդամություն»։ Արդեն Միերի դռան դիցազանկում նկատվում է Խալդի աստծու գերազանցությունը մնացյալ աստվածների նկատմամբ։ Հաշվի առնելով մաս այն, որ ուրարտական սեպագիր արձանագրություններում Խալդի աստվածը սկսում է հիշատակվել Իշպուինիից սկսած, ենթադրվում է, որ Խալդիի պաշտամունքը նրա կամքով է ներդրվել և գերագույն աստծու կարգավիճակ ստացել¹։

Խալդի աստծու մասին գրվել է բազմիցս²։ Եթե հակիրճ՝ նա Արև էր, պտղաբերության աստվածություն, ընդ որում, չի բացառվում սկզբնապես նրա՝ իգական աստվածություն լինելու հնարավորությունը, և այս առումով Վարուբանին, որը ուրարտական դարաշրջանում կարծես թե համարվում էր նրա կինը (այս տեսակետը շրջանառվում է գիտական գրականության մեջ), կարող էր պարզապես լինել Խալդիի իգական կողմի կրողը, նրա իգական կրկնակը։ Խալդին մաս ռազմիկ էր ու ռազմի աստված։ Միաժամանակ, հնարավոր է թվում նրա կերպարը կապել հիմարսեյան ժայռածին կամ լեռ-աստվածների հետ։ Բացի դրանից, Խալդին կարծես թե մեռնող-հարություն առնող աստվածություն էր, թերևս մաս՝ Անդրաշխարհի տիրակալ և Արև (Արևը, սովորաբար, ուներ իր ընդգետնյա կրկնակը՝ անդրաշխարհի «Արևը»)։ Խալդիի պաշտամունքի բացարձակացման վկայությունն էր այն, որ Ուրարտում պաշտամունքային բոլոր արարողությունները կատարվել են Խալդիի «սուսի» տաճարում, «խալդյան դարպասների» կամ բաց-արբավայր «խալդյան կոթողների» առջև։ Ընդ որում, Ուրարտում ընդհանրապես «տաճար» հասկացությունը կարող էր պատկերացվել որպես «Խալդիի տաճար»։

Այս ամենից ելնելով՝ պատահական չի թվում, որ Խալդին չուներ իր համապատասխանությունը խոռիական աշխարհում։ Փոխարենը, ուղղակի ապշեցուցիչ է նրա կապը ասորեստանցիների հարազատ աստծո՝ Աշուրի հետ։ Հատկանշական է, որ այս աստվածներն ունեին միևնույն ֆունկցիոնալ ընդհանրությունները։ Աշուրը լեռ էր, լեռ-աստված, նրա տունը (տաճարը) կոչվում էր «մեծ լեռ»։ Ինքը՝ աստվածությունը, իրեն ձոնված հիմներգերից մեկում բնորոշվում է որպես «լեռները բնորոշող /լեռների պատճեն», աստվածների կերտող և Իշթարի արարիչ։ Աշուրը երկսեռ աստվածություն էր՝ հանդես գալով Աշուր-Իշթար անունով։ Ընդ որում, ուսումնասիրությունները վկայում են, որ նա սկզբնապես եղել է իգական աստվածություն և անգամ նորասորեստանյան դարաշրջանում շարունակում էր ընկալվել որպես պտղաբերող ծառ։ Աշուրը չուներ կին, չուներ ընտանիք, իսկ Իշթար/Նինիլիի հետ նրա ամուսնական կապը ծագում էր հետագայում Աշուրի՝ որպես «ասորեստանյան Էնիլ» ընկալումից, իսկ Էնիլի կինն էր Նինիլը։ Աշուրի պաշտամունքը միանշանակ կապվում էր բուսականության և մասնավորապես կենաց ծառի հետ։ Ինչպես Ուրարտում, Ասորեստանում ևս նկատվում է Աշուրի պաշտամունքի բացարձակացման միտում։ Աշուրին դիմում էին որպես «փմ աստված», «տեր» և ընդհանրապես՝ *ilu(m)*՝ «աստված» ասելով հասկանում էին պարզապես Աշուրին։ Նա չէր մարմնավորում բնության և աստվածային կոնկրետ ուժի, ինչպես մյուս աստվածությունները, նա կարծես ոչինչ չուներ և միաժամանակ ուներ ամեն ինչ։ Աշուրը միանշանակ առանձնանում էր իր կերպարով և Սիջագետքում ևս չուներ իր գուգահեռը³։

Այսպիսով, Խալդին և Աշուրը մոտ են միմյանց իրենց կերպարով, եթե չասենք՝ միևնույն կերպարի երկու դրսևորումներն են։ Երկու աստվածներն էլ «ունիվերսալ» են, կարող են ինքնուրույն ներկա-

¹ M. Salvini, La formation de l'état urartéen. – *Hethitica* 8, 1987, p. 402 ff., **նույնի**՝ Le panthéon de l'Urartu et le fondement de l'état. – *Studi epigrafici e linguistici sul Vicino Oriente antico*, 6, 1989, p. 79 ff.; Ս. Հմայակյան, Իշպուին և Մինուս արքաների բարեփոխումների ծրագիրն ու քիսկական պետության և մշակույթի գոյացումը. – *Հայաստանի Հանրապետությունում 1991-1992 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան*՝ նվիրված Գ.Ա. Տիրացյանի հիշատակին, Ջեկուցումների թեզիսներ, Երևան, 1994, էջ 18-23։

² Ս. Հմայակյան, *Վանի թագավորության պետական կրոնը*, Հայաստանի ԳԱ հրատ., Երևան, 1990, էջ 33 հաջորդիվ : A.M. Dinçol, T. Kutlu, Kurze Notiz über die Bedeutung des Götternamens Haldi. – *Anadolu Araştırmaları*, 14, 1996, p. 213 ff.: Ս. Պետրոսյան, Ուրարտական գլխավոր աստվածների եռյակը և պետության իշխող վերնախավի ծագման խնդիրը (Կ.Ֆ. Լեման-Հաուպտի ծննդյան 140-ամյակի առթիվ). – «Պատմաբանասիրական հանդես», 2002, 2, էջ 256 հաջորդիվ, և այլն։

³ Հմմտ. W.G. Lambert, The God Aššur. – *Iraq*, v. XLV, issue 1, 1983, p. 82-86; P.-A. Beaulieu, The Cult of AN.ŠAR/Aššur in Babylonia. – *State Archives of Assyria Bulletin*, v. XI, 1997, 72 f.

յացնել ողջ դիցարանը: Եվ, ըստ էության, մենք այստեղ գործ ունենք ակնհայտ միապաշտության դրսևորումների հետ: Այս առումով հետաքրքրական է, որ Խալդու պաշտամունքում առկա մի շարք ասպեկտներ նրան համեմատելի են դարձնում Միթրա-Միհրին, ինչպես նաև Դիոնիսոսին: Եվ այս գուգադրումների առանցքում, մեր խորին համոզմամբ, ընկած են նաև միապաշտական պատկերացումները, ինչը կփորձենք առավել փաստարկել ստորև:

Արդեն իսկ հայտնի փաստ է, որ միթրայականությունը գաղափարաբանությամբ, մասնավորապես վախճանաբանական պատկերացումների առումով, աշխարհայեցողությամբ և ծիսականությամբ մեծ ընդհանրություններ ունի քրիստոնեության հետ: Հիշենք Միհրի հետ կապված հավատալիքներից, օրինակ՝ հոգիների փրկության ուսմունքը, խորհրդավոր ընթրիքը, մկրտության, հաղորդության, հացի և ջրախառն գինու խորհուրդները, նվիրագործման յոթ աստիճանները և այլն: Հայտնի են նաև Ֆրեզերի ձևակերպումները Միթրայի պաշտամունքի մասին, ըստ որի՝ քրիստոնեական աստվածաբանները, նկատելով Միհրի պաշտամունքի նմանությունը քրիստոնեությանը, այն մեկնաբանում էին որպես սատանայի ձեռքի գործ, որ ձգտում է մարդկանց հոգիները շեղել քրիստոնեական ճշմարիտ ուղուց⁴: Հայտնի է նաև, որ Քրիստոսի ծննդյան օրը Արևմուտքում հարմարեցվեց Միհրի ծննդյան օրվան՝ դեկտեմբերի 25-ին: Ինչևէ, այս փաստերը բազմաթիվ են:

Վերադառնալով Խալդի, Միթրա-Միհր նույնականացմանը՝ հարկ ենք համարում նշել, որ Ի.Դյակոնովը ակնհայտ ընդհանրություն է տեսնում «Սասնա ծռեր» էպոսում Փոքր Սիների հանգրվանը հանդիսացող Վանա ժայռի «Սիների դուռ» կոչվող վայրի և նույն տեղանքի ուրարտական Խալդի աստծուն նվիրված խալդյան դարպասների, ինչպես նաև Խալդու և հայկական Սիների միջև՝ ենթադրելով, որ էպիկական Սիների կերպարի հնագույն նախատիպը ծագում է Խալդիից⁵: Ա. Պետրոսյանը, առավել զարգացնելով այս տեսակետը, նշում է, որ արևմտյան, հռոմեական Միթրասի և հայկական Միհրի ընդհանրություններն ակնհայտ են, որոնք, սակայն, չեն հանգում իրանական Միհրին⁶, այսինքն՝ ասվածից կարելի է ենթադրել, որ արևմտյան միթրաիզմի և հայկական Միհրի հիմքերը գալիս են ոչ թե իրանական Միհրից, ինչպես ընդունված է կարծել, այլ կապված են Հայկական լեռնաշխարհում հնուց ի վեր գոյություն ունեցող ժայռում փակված աստծո պատկերացումների հետ, որի վաղագույն մեզ հայտնի դրսևորումներից մեկը Խալդին էր: Խալդու և Միթրա-Միհրի պաշտամունքներում, ըստ Ա. Պետրոսյանի, ընդհանրական են, օրինակ՝ քարանձավային պաշտամունքը, ցլի գոհաբերության կենտրոնական մոտիվը, կապը ագռավի, խաղողի և գինու հետ⁷: Մյուս կողմից, թե՛ Միթրա-Միհրի, թե՛ Խալդու պաշտամունքն ակնհայտ աղերսներ է դրսևորում Դիոնիսոսի հետ:

Խալդի-Դիոնիսոս կերպարային ընդհանրություններին անդրադարձել է դեռևս Ա. Մատիկյանը⁸, իսկ Խալդի-Դիոնիսոս-Միթրա-Միհր ընդհանրություններն առավել համակարգված ներկայացրել է Ա. Պետրոսյանը⁹: Հայտնի է, որ Դիոնիսոսի պաշտամունքը ևս տարածված է եղել Հայաստանում, այս մասին է նշում Ալիշանը՝ վկայաբերելով այն փաստը, որ հայոց թագավոր Արշակը Նյուսա մակագրությամբ մանյակ է հայտնաբերել հովազի վզին: Ալիշանը նշում է հայտնի այն փաստը, որ Նյուսան այն վայրն է, որտեղ դաստիարակվել է Դիոնիսոսը, որը հնում տեղադրում էին մերթ Եգիպտոսում, մերթ Հնդկաստանում, իսկ Ալիշանը խոսում է նաև այս վայրի հայաստանյան տեղադրության մասին¹⁰: Հայտնի է, որ Դիոնիսոսն ունեցել է տարբեր կերպավորումներ՝ նոխազ, եգ, առյուծ, ցուլ և հովազ, իսկ պատկերագրության մեջ հաճախ հանդես է գալիս նաև հովազին հեծնաձ: Հայտնի է նաև, որ աստվածաշնչային թարգմանության մեջ Դիոնիսոսը նույնացվել է Սպանդարամետի հետ: Սրանք կարող են վկայել Հայաստանում Դիոնիսոս աստծո պաշտամունքի տարածվածության մասին: Ավելին, Ռ. Մանասերյանը կարծում է, որ Դիոնիսոսի պաշտամունքը հարատևել է Հայաստանում անգամ քրիստոնեության ընդունումից հետո և լրջորեն մրցակցել վերջինիս հետ¹¹:

Բննարկված նյութի արդյունքում մենք տեսնում ենք, որ միապաշտական դրսևորումները Հայկական լեռնաշխարհում ունեցել են հնագույն ավանդույթներ՝ կապվելով Խալդու հետ, որն էլ իր հերթին զարմանալի ընդհանրություններ է հանդես բերում Աշշուրի հետ, եթե չասենք, որ դա միևնույն պաշտամունքի տարբեր դրսևորումներն են: Իհարկե, հարց կարող է առաջանալ, թե արդյո՞ք այդ ազդեցությունները հյուսիսից հարավ են ընթացել, թե՞ հակառակը՝ տեղական ծագում ունեն, հարց, որի

⁴ Զ. Ֆրեզեր, Ոսկե ճյուղը, Երևան, 1989, էջ 421:

⁵ И. Дьяконов, К вопросу о символе Халди, Древний Восток, 4, 1983, с. 193.

⁶ A. Petrosyan, Haldi and Mithra/Mher, Aramazd. Armenian Journal of Near Eastern Studies, v. I, 2006, p. 224-227.

⁷ А. Петросян, Армянский Мхер, западный Митра и урартский Халди, Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Երևան, 2004, էջ 42-60:

⁸ Ա. Մատիկյան, Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930, էջ 332:

⁹ Ա. Պետրոսյան, Հայկական ավանդական դրամայի ակունքների շուրջ. – «Պատմաբանասիրական հանդես», 2006, 2, էջ 268-270:

¹⁰ Գ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնը Հայոց, Վենետիկ-Ս. Ղազար, 1910, էջ 333-334:

¹¹ R. Manasseryan, The Eagle Killing the Leopard (Towards an Interpretation of the scene on a medallion from Armenia). – Aramazd. Armenian Journal of Near Eastern Studies, v. IV, issue 1, 2009, p. 95.

պատասխանն այսօր դժվար է միանշանակ գտնել, սակայն մեկ բան ակնհայտ է, որ այս տարածաշրջանում միապաշտական պատկերացումներին առնչվող Միթրա-Միհրը և Դիոնիսոսը իրենց կերպարներով և հիմնական բնութագրերով համադրելի են թե՛ միմյանց, թե՛ Խալդու հետ: Մյուս ուշագրավ և կարևորագույն փաստն այն է, որ դիտարկված բոլոր կերպարների պաշտամունքը (Աշշուր, Խալդի, Միթրա-Միհր, Դիոնիսոս) այսպես թե այնպես առնչվում է ժայռի կամ քարանձավի պաշտամունքին:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ ժայռից ծնվող (Միթրա) կամ ժայռում, քարանձավում փակվող (Խալդի, Միթրա-Միհր, Դիոնիսոս) կամ ժայռ-աստծո (Աշշուր) պատկերացումներն այս տարածաշրջանում ունեն հնագույն ավանդույթներ, զարմանալիորեն այս բոլոր աստվածներն էլ ունեցել են կամ միապաշտական տարրեր (Խալդի, Աշշուր), կամ առնչվել են միապաշտական կրոնին՝ քրիստոնեությանը (Միթրա, Դիոնիսոս-Սաբազիոս)՝ մեծապես պայմանավորելով նաև այդ նոր ուսմունքի ընկալումների տեղական առանձնահատկությունները, ինչպես նաև ակնհայտորեն, դրսևորվել քրիստոնեական տեղական եկեղեցական ճարտարապետության մեջ՝ ուրույն նկարագիր հաղորդելով նրան, իսկ խորհրդապաշտության, սիմվոլիկայի և պատկերագրական որոշ առանձնահատկությունների առումով երևան եկել նաև խաչքարային արվեստում, ինչն առավել մանրամասն դիտարկել է Ա. Զարյանը¹²:

Yervand Grekian, Hasmik Hmayakyan (Armenia)

MANIFESTATIONS OF MONOTHEISM IN THE ARMENIAN HIGHLAND (PRE-CHRISTIAN PERIOD)

During the history of the mankind there were several attempts of monotheistic reforms (Akhenatenian reform, Zoroastrianism) before establishing of the monotheistic religions. The ideas of monotheism have not been alien also for the population of the Armenian Highlands and the adjacent regions: they were based on ancient traditions such as cult of Aššur in Assyria, Haldi-Mithra-Dionysus in the Armenian Highlands. All this stipulated distinctive perception of the Christianity by the local population.

Բորիս Գասպարյան (Հայաստան)

ԱՐԵՆԻ-1 ԶԱՐԱՅՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Արենի-1 քարայրը գտնվում է համանուն գյուղից մոտ 1,5 կմ հյուսիս-արևելք՝ Երևան-Եղեգնաձոր խճուղու աջ կողմում՝ խճուղուց դեպի Նորավանք տանող ճանապարհի սկզբնամասում՝ Արփա գետի ձախափնյա ժայռային գոյացությունների մեջ (Col. 3):

Հուշարձանի տարածքում իրականացվող հնագիտական աշխատանքները մեկնարկել են 2007 թ. և շարունակվում են մինչև օրս: Դրանք ղեկավարվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արփա գետի հովիտն ուսումնասիրող արշավախմբի կողմից՝ Քորքի համալսարանի (Իռլանդիա), Կալիֆոռնիայի համալսարանի Կոտսենի հնագիտության ինստիտուտի (ԱՄՆ) և այլ գիտական հաստատությունների (Կոնստանտինոպոլի համալսարան, Հայֆայի համալսարան և այլն) հետ իրականացվող համատեղ ծրագրերի շրջանակներում¹:


Արենի-1-ը կարստային տիպի քարայր է՝ առաջացած կավճի հասակի կրաքարային ապարներում²: Քարայրը բաղկացած է թվով երեք դահլիճներից, որոնցից երկուսը՝ առաջինը և երկրորդը, միմյանց հետ կապված են անցումներով: Առաջին դահլիճում առկա են նաև տարաբնույթ անցուղիներ կամ խորշեր (գաղտնի սենյակներ), որոնք բացվում են դահլիճի տարբեր մասերում, և որոնց հիմնական մուտքերն այսօր արգելափակված են մատվածքներով: Առկա են նաև առաջին դահլիճի մակարդակից դեպի ներքև և դեպի վերև բացվող խորշեր կամ այսպես կոչված «նկուղային» և «վերին» հարկեր: Առաջին և երկրորդ դահլիճների մուտքերը բացվում են դեպի հյուսիս, երրորդ դահլիճի մուտքը նայում է հյուսիս-արևելք: Բոլոր դահլիճների ներսում չոր է: Առաջին դահլիճը, որը չափերով ամենամեծն է, ունի դեպի ժայռի ներքին մասը տանող երեք անցուղի՝ մեկ աջ և երկու ձախ: Քարայրի՝ ծածկի տակ եղած

¹² Ա. Զարյան, Խաչքարերի խորհրդանշաններին և միթրականությանը վերաբերող պատկերագրական հարցեր. – «Պատմաբանասիրական հանդես», 1989, 1, էջ 202-219:

¹ Sagona A., Past and Present Directions in the Archaeology of the Transcaucasus. – TUBA AR, 13/2010, p. 152.

² Л.А.Валесян, С.П. Бальян, Комплексное исследование пещер Арени Ехегнадзорского района. – Тезисы докладов международного симпозиума “Проблемы методики, охраны и реставрации пещерных комплексов”, Ереван, 1982, стр. 15-16.


ընդհանուր մակերեսը 870 քառակուսի մետր է, իսկ մինչև Արփա գետը հասնող և լանջնիվայր իջնող մերձքարայրային հրապարակով հանդերձ՝ մոտ 0,8 հեկտար (հատակագիծ 1):



Հատակագիծ 1.

Քարայրից կտրուկ դեպի գետն իջնող լանջի տեղամասում՝ աջ և ձախ կողմերի ժայռային գոյացություններին հարող հատվածներում, նկատելի են հզոր պարսպաշարի մնացորդներ, որոնք, ինչպես պարզվեց պեղման աշխատանքներից, վերաբերում են զարգացած միջնադարում քարայրի մուտքն արգելափակող պաշտպանական համակարգին: Լանջի ստորին, աջակողմյան մասում ժայռի արևմտյան պատին հարող հատվածում, տեսանելի է փոքր, խորշանման բացվածք, որը, պարսպաշարի առկայության պայմաններում կարող էր գաղտնի մուտքի դեր կատարել, քանի որ նրա վերջնամասը իր վերին, առաստաղային հատվածում բացվում է քարայրի հրապարակի՝ պարսպաշարից ներս ընկած տեղամասում:

Արենի-1-ի տարբեր հատվածներում 8 պեղաշրջանների ընթացքում իրականացված աշխատանքների արդյունքում հաջողվել է բացել ընդհանուրը 461 քառակուսի մետր մակերես՝ ներկայացված թվով 5 պեղավայրերի միջոցով (պեղավայրեր N 1-5): Դրանցից երկուսը՝ N 4-ը և 5-ը, տեղակայված են քարայրի դիմացի լանջին (հատակագիծ 1): Պեղումների ընթացքում այստեղ բացված լանջային նստվածքները պարունակում են ուշ միջնադարից մինչև էնեոլիթյան ժամանակաշրջանին վերաբերող՝ տեղատարված նյութեր (անտիկ, երկաթեղարյան, միջինբրոնզեղարյան): Այս պեղավայրերի ստորին շերտերում բացվել է էնեոլիթյան շրջանի աղբանոցը, որի տարբեր մակարդակներից հայտնաբերվել են նաև ստորին պալեոլիթի վաղագույն փուլերին բնորոշ գլաքարային գործիքներ: Դրանք ներկայացնում են Արփա գետի կիրճի բնակեցման սկզբնափուլերը (աղյուսակ 1):



N 1, 2 և 3 պեղավայրերը տեղակայված են քարայրի առաջին դահլիճի ներսում, ընդ որում՝ N 3-ը դահլիճի սկզբնամասում՝ անմիջապես մուտքի մոտ, իսկ N 1-ը և 2-ը՝ նույն դահլիճի ներսում (Հատակագիծ 1): N 3 պեղավայրում իրականացված աշխատանքների արդյունքում փաստագրվել են ուշ, զարգացած և վաղմիջնադարյան ժամանակաշրջաններին բնորոշ նյութական մշակույթի մնացորդներ, որոնք ներկայացված են ինչպես խեցեգործական նմուշներով, այնպես էլ ապակյա, մետաղական, փայտյա, ոսկրյա իրերով, դրամներով, բուսական մնացորդներով և այլն: Պեղավայրի վաղմիջնադարյան շերտում բացվել են կլոր հատակազով կացարանի մնացորդներ, որը հասակագրվում է 7-9-րդ դարերով (Col. 4): Քարայրի ներսում առկա՝ զարգացած միջնադարյան փուլի (12-14-րդ դդ.) գործունեության արգասիք են երկու՝ ժապավենաձև թոնիրների մնացորդները և N1 պեղավայրի սահմաններում թաղված գինու կարասը:

Գիտաճանաչողական առումով անչափ կարևոր է նշված պեղավայրերի սահմաններում բացված՝ 2,5-ից մինչև 5 մ հզորությամբ՝ Զ.ա. V հազարամյակի վերջին քառորդից մինչև IV հազարամյակի կեսերն ընկած ժամանակագրական միջակայքով հասակագրվող ուշ էնեոլիթյան՝ թվով երեք բնակեցման հորիզոնների հերթափոխը, որոնք տարանջատված են միմյանցից թափվածքներով ու թրքաշերտերով: Վերջիններս ներկայացված են ամրացված հատակներով, դրանց հետ ասոցացվող հորերով, ինչպես նաև արտադրատնտեսական և ծիսական նշանակություն ունեցող կավակերտ կառուցվածքներով³ (Col. 4):

³ Areshyan G.E., Gasparyan B., Avetisyan P.S., Pinhasi R., Wilkinson K., Smith A., Hovsepyan R., Zardaryan D., The Chalcolithic of Near East and the South-Eastern Europe: Discoveries and New Perspectives from the Cave Complex Areni-1, Armenia. – *Antiquity*, 86, 2012, pp. 115-130; Wilkinson K., Gasparyan B., Pinhasi R., Avetisyan P., Hovsepyan R., Zardaryan D., Areshian G.E., Bar-Oz G., Smith A., Areni-1 Cave, Armenia: A Chalcolithic – Early Bronze Age Settlement and Ritual Site in the Southern Caucasus. – *Journal of Field Archaeology*, vol. 37, No. 1, 2012, pp. 20-33.

Կավակերտ կառուցվածքների շարքում առանձնանում է քարայրի առաջին դահլիճի ներսում փաստագրված՝ Բ.ա. IV հազարամյակի առաջին քառորդով հասակագրվող գինու արտադրական համալիրը, որն աշխարհում դեռևս գուգահեռներ չունի և համարվում է հնագույնը⁴ (Col. 5): Այն ուղեկցվում է թաղման և ծիսական նշանակության յուրօրինակ համալիրներով:

Ընդհանուր առմամբ, քարայրի առանձնահատուկ միկրոկլիմայի շնորհիվ օրգանական ծագում ունեցող նյութերն այստեղ խիստ լավ են պահպանվել: Արդյունքում, հուշարձանից հայտնաբերված գործվածքների, կաշվե, փայտե, ոսկրե, մետաղե առարկաների, ինչպես նաև հնաքուսաբանական ու մարդաբանական մնացորդների ուսումնասիրությունը հնարավորություն է ստեղծում լիարժեք վերակազմելու քարայրի հնագույն բնակիչների գյուղատնտեսական և արտադրական-կենցաղային և այլ բնույթի տնտեսական գործունեության, արհեստների, արվեստի, ինչպես նաև ծիսական պատկերացումների և աշխարհընկալման մանրամասները: Նշված իրերի շարքում եզակի է առաջին էնեոլիթյան հորիզոնից հայտնաբերված՝ աշխարհում դեռևս հնագույնը համարվող ամբողջական կաշվե կոշիկը, որը հասակագրվում է Բ.ա. IV հազարամյակի կեսերով⁵ (Col. 8): Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում թաղման համար օգտագործված՝ ծիսական նշանակության գունագարդ անոթները, որոնք զարմացնում են իրենց չափերով և զարդարման պատկերակարգով⁶ (Col. 6):

Արենի-1-ի պեղումների արդյունքում ի հայտ են բերվել մի քանի տասնյակը գերազանցող հյուսածո և գործած առարկաներ: Հնագիտական տարբեր իրավիճակներից պեղվել են զանազան բույսերից ոլորված քուղեր, եղեգից հյուսված խսիրների հատվածներ, զամբյուղներ, ձկնորսական ցանցի մի հատված, որոնք հասակագրվում են ուշ էնեոլիթով (Բ.ա. V հազարամյակի վերջին քառորդից մինչև IV հազարամյակի կեսերը): Հյուսածո առարկաների մի մասն ունի համեմատաբար պարզ, իսկ մյուսը՝ բավականին բարդ կառուցվածք: Առկա է ուշ էնեոլիթյան գործվածքի մեկ նմուշ, որի մանրաթելերը, ամենայն հավանականությամբ, պատրաստված են վուշից: Քարայրից պեղված գործվածքների գերակշիռ մասը վերաբերում է միջնադարի զանազան փուլերին՝ վաղից մինչև ուշ (4-ից մինչև 17-18-րդ դդ.): Դրանք բազմազան են իրենց տեխնիկատեխնոլոգիական հատկանիշներով և հումքի տեսակով, որոնց մեջ աչքի է ընկնում կարպետային գործվածքի՝ 7-9-րդ դդ. հասակագրվող մի հատված (Col. 7): Նշված գտածոները թույլ են տալիս որոշակի պատկերացում կազմել Արենի-1 քարայրի բնակիչների տնտեսական կյանքում անկվածագործության ունեցած տեղի և դերի վերաբերյալ:

Այսպիսով, Արենի-1 քարայրը առաջնակարգ հնագիտական սկզբնաղբյուր է, որի համալիր ուսումնասիրությունը ցույց է տալիս Հայկական լեռնաշխարհում կոմպլեքս հասարակությունների ձևավորման գործընթացը՝ սկսած առնվազն Բ.ա. V հազարամյակի վերջին քառորդից, ինչպես նաև ընդգծում է քարայրների ունեցած դերն ու նշանակությունը Վայոց ձորի բնակչության կենսագործունեության, նյութական մշակույթի և հոգևոր պատկերացումների ձևավորման մեջ տարածաշրջանային տեսանկյունից:

Boris Gasparyan (Armenia)

Main Results of the Investigations in Areni-1 cave

The archaeological excavations in Areni-1 cave started since 2007. The site is located in the Arpa River canyon, around 1,5 km north-east from the Areni village (Voayots Dzor Province of Armenia). The investigations at the site brought to light cultural remains reflecting at least three occupational phases or

⁴ **Barnard H., Dooley A.N., Areshyan G., Gasparyan B., Faull K.F.**, Chemical Evidence for Wine Production Around 4000 BCE in the Late Chalcolithic Near Eastern Highlands. – *Journal of Archaeological Science*, 38, 2011, pp. 977-984.

⁵ **Pinhasi R., Gasparian B., Aresyan G., Zardaryan D., Smith A., Bar-Oz G., Higham T.**, First Direct Evidence of Chalcolithic Footwear from the Near Eastern Highlands. – *Plos ONE*, JUNE 2010, vol 5, Issue 6: e10984. doi: 10.1371/journal.pone.0010984; **Зардарян Д. Э., Гаспарян Б.**, О двух разновидностях древней обуви из Армении. – “Новые Материалы и Методы Археологического Исследования”, Тезисы докладов научной конференции молодых ученых, Москва, 15-17 марта 2011 года, ИА РАН, Москва, 2011, стр. 8-9.

⁶ **Зардарян Д.Э., Гаспарян Б.**, Позднеэнеолитическая керамика пещеры Арени-1. – Международная Научная Конференция “Археология, Этнология и Фольклористика Кавказа”, Сборник Кратких Содержаний Докладов, Тбилиси, 25-27 июня 2009 года, Ответственный редактор Г. Гамбашидзе, Издательство “Меридиани”, Тбилиси, 2010, стр. 154-156; **Зардарян Д.**, Керамика позднего энеолита Армении. – Международная Научная Конференция “Археология, Этнология и Фольклористика Кавказа”, Сборник Кратких Содержаний Докладов, Тбилиси–Гори–Батуми, 27-30 сентября 2010 года, Ответственный редактор Г. Гамбашидзе, Издательство “Меридиани”, Тбилиси, 2011, стр. 123-124; **Зардарян Д.Э.**, О ранних проявлениях элементов Куро-Аракской культуры в позднеэнеолитической керамике Арени-1. – “Проблемы Археологии Кавказа (К 70 летию Ю.Н. Воронова)”, Сборник Материалов Международной Научной Конференции посвященной к 70 летию Ю.Н. Воронова, 10-11 мая 2011 г., г. Сухуми, Ответственный редактор А.Ю. Скаков, Издательство “АБИГИ”, Сухум, 2011, стр. 53-57; **Зардарян Д. Э.**, Расписная посуда конца V - начала IV тыс. До н.э. из пещеры Арени-1. – “Новые Материалы и Методы Археологического Исследования”, Материалы II международной конференции молодых ученых, Москва, 19-21 марта 2013 года, Ответственные редакторы В.Е. Родинкова и А.Н. Феодорова, ИА РАН, Москва, 2013, стр. 49-51.

horizons of the Late Chalcolithic sequence, which are dating back to the Last Quarter of the V to Mid IV Millennia BCE. Among the most important discoveries of the site are the oldest leather shoe and the wine production complex. Due to the unique microclimate of this ecological niche artifacts with organic origins have exceptional state of preservation, which is making Areni-1 as an outstanding source for study of the origins of the complex societies in Armenians Highlands. The cave site yielded important finds dating back to the medieval period as well, especially fragments of textile and carpets, proving the ancient roots of the Armenian carpet production.

Лусинэ Гуцян (Россия)

ИЗ ИСТОРИИ ФОРМИРОВАНИЯ ЗАПАДНО-АРМЯНСКИХ КОЛЛЕКЦИЙ В СОБРАНИИ РЭМ

Российский этнографический музей является одним из крупнейших музеев мира, в котором хранятся более полумиллиона экспонатов, характеризующих традиционный быт более 150 народов Российской империи и сопредельных ей стран.

РЭМ был основан в 1902 году как Этнографический отдел Русского музея императора Александра III. Созданием комплексного музейного института практически завершается идеологически и научно обоснованный период музеестроительства империи, длившийся около одного столетия.

Коллекции по этнографии армян начали собираться с первых лет организации Этнографического отдела и продолжают до сих пор. В настоящее время они являются одними из наиболее полных и представительных – всего насчитывается более 3 000 предметов, отражающий армянскую традиционную культуру, которые охватывают период с XIX в. до настоящего времени. Кроме того, в музейном собрании имеются иллюстративные и фотоколлекции, относящиеся к этнографии армян, насчитывающие более 2 500 экспонатов.

Обширной по составу и количеству экспонатов представляется группа вещевых и фотоколлекций из Ванской области не лучше: области Вана, датированная временем сбора – 1916 годом, которая представляет традиционную культуру армян (4 предметных и 6 фотографических коллекций), айсоров (две коллекции), курдов (2 коллекции) и турок-османов – одна коллекция. Причем армянские коллекции и предметы составляют абсолютное большинство – около 400. Географический диапазон собранных предметов традиционной культуры армян охватывает территорию вокруг озера Ван. Представлены вещи из Вана, Алура, Битлиса, Муша, Шатаха и 23 сел.

Основу армянских коллекций из Ванской области представляют 5 полных костюмных комплексов: 3 мужских костюма из Алура и Шатаха и два – женских из Алура и Битлиса. Кроме того в собрание вошли головные уборы (мужские вышитые шапки, женские платки, девичьи накосные украшения), образцы вышивок мужских рубах, детская одежда, а также многообразные ювелирные украшения – налобные, височные, шейные украшения, серьги, браслеты, пряжки и др.

Источниковедческая ценность данных предметов придает уверенность в том, что вещи бытовали – использовались их владельцами, на это указывает в первую очередь сохранность практически всех предметов коллекций. В качестве примера можно привести пару вязанной из разноцветной шерсти мужской обуви, которая была приобретена потертой и со следами грязи на подошве.

Текстильное ремесло представлено обширной коллекцией (153 предмета) набойных досок и другими инструментами ванского набоечного производства, а ковроткачество – тремя коврами, изготовленными в г. Битлисе. Таким образом, данные коллекции дают возможность также уточнить степень распространения и ареал бытования ремесла и промыслы армянского населения региона, например, ювелирного, набойного дела – как мужского ремесла, ковроткачества, вышивки – как женского.

Некоторые отдельные элементы костюма позволяют составить типологический ряд, так, например, 14 вышитых мужских шапок *арахчи* позволяют выявить локальные особенности техник изготовления и орнаментальных особенностей или наоборот схожести декора.

Предметы хорошо аннотированы, с указанием на то, кто именно носил тот или иной элемент костюма, так например, *перек* – подвеска к косе девочки из Алура, меджкап – пояс мальчика, *взноц* – шейный платок мальчика, *фес* – девичья шапочка, что делает их ценным источником для выявления способов маркирования половозрастных и социальных статусов в армянской среде.

Краткая характеристика ванских коллекций показывает, что им присущи два важных компонента научного этнографического материала – комплексность и типологическая полнота.

Между тем, обращает на себя внимание и тот факт, что в коллекциях отсутствуют достаточно распространенные в других собраниях предметы из серебра с чернью, а также, например, игольные кружева. Отсутствие предметов этого типа, ярко характеризующих ювелирное и кружевное дело Вана, в данных коллекциях, наводит на мысль об определенной концепции сбора предметов, которая должна была основываться на некоем научном обосновании.

Формирование ванских коллекций связано с деятельностью Александра Александровича Миллера — археолога, музейного деятеля, ученого-кавказоведа, яркого представителя российской палеоэтнографической школы, который провел более 20 археологических и этнографических экспедиций как на Кавказе, в основном на Северном, так и на западных окраинах империи. Получивший военное образование и имевший опыт военных экспедиций, после нескольких лет обучения в Европе, в частности, под руководством Федора Кондратьевича Волкова, Миллер в 1909 году был утвержден на должность хранителя отдела этнографии Востока за подписью Николая II.

Согласно архивным материалам, в 1916 году по инициативе петербургских востоковедов была предпринята комплексная экспедиция в новоприобретенную империей Ванскую область. По проекту вел. кн. Георгия Михайловича, который был и председателем РАО и управляющим Русским музеем, она включала исследование археологических памятников, в котором участвовали академик Н.Я. Марр и приват-доцент Петроградского университета И. А. Орбели, а также сбор этнографического материала, который был поручен хранителю ЭО РМ штабс-капитану саперного ополчения А. А. Миллеру. В этнографической части экспедиции участвовали также преподаватель Эчмиадзинской Духовной академии Павел Никитич Макинцян (по рекомендации акад. Н. Я. Марра) — как человек, «знакомый научно с армянским языком», и выпускник Петроградского университета Александр Гаврилович Алешо (по рекомендации Ф. К. Волкова, под руководством которого он проходил курс теоретической и практической антропологии) — в качестве антрополога и фотографа экспедиции.¹

Для реализации экспедиционной поездки в зону военных действий Кавказского фронта, на имя императора было составлено научное обоснование, которое дает возможность выяснить цели, задачи и научную мотивацию, которые стали действительными аргументами и позволили реализовать данный проект.

В обосновании, в частности, можно выделить три основных аргумента

1. Аргумент о древнем населении, связанном с современной автору территорией русского Закавказья:

«К Кавказу присоединяются... местности древнего Ванского царства, оставившего многочисленные памятники, царства, преемственно связанного с древнейшими очагами культуры и истории, в сущности, неотделимого от нашего Закавказья в его отдаленном прошлом».

2. Аргумент о необходимости срочных действий по фиксации памятников:

«Условия военного времени не могли не отразиться пагубно прежде всего на памятниках старины: многие монастыри с богатейшими собраниями древних рукописей и ризницами были совершенно разграблены турками, многие храмы разрушены; кроме того, в этот край, широко известный своими памятниками старины, неумовимо проникнут частные коллекционеры и скупщики, которые принесут немало вреда планомерным научным работам. Не в меньшей степени нарушен будет и характерный уклад жизни местного населения, в большинстве случаев вынужденного бросить свои поселения и имущество...»

3. Аргумент о цивилизаторской роли России в новоприобретенных землях:

«Эти обстоятельства возбудили в русских научных кругах мысль о крайней необходимости путем специальных экспедиций теперь же начать планомерное исследование исключительно интересной местности и этим прежде всего ознаменовать проникновение русской культуры в новый край». На проекте рукой императора 16 апреля 1916 г. было написано: «Вполне одобряю, нужно торопиться».²

Согласно программе этнографической части экспедиции основной научный интерес представляли армяне, населяющие «древнее Ванское царство». В собственном обосновании экспедиции, Миллер, подчеркивая, что «нет никаких сомнений в том, что лишь русские научные силы, сделавшие уже столько завоеваний в области кавказоведения, в состоянии будут плодотворно работать в области Вана, столь тесно связанной в древнее и историческое время с Кавказом», высказывал мнение, что этнографическое, лингвистическое, а так же антропологическое исследование именно армянского населения Ванской области пролило бы новый свет «на сложные и запутанные вопросы происхождения, миграции и взаимного родства народностей Кавказа».

¹ АРЭМ, ф. I, оп. 2, ед. хр. 411, л. 46.

² Дмитриев С.В. Фонд Этнографического отдела русского музея по культуре народов зарубежного Востока: история формирования и судьба (1901-1930-е гг.). СПб, 2012. С. 253

Представления А.А. Миллера о том, что ванские армяне сохранили в своем физическом образе, языке и материальной, бытовой культуре отголоски не только средневековья, но и доисторической древности, нашли свое отражение в основной концепции сбора информации.

Так, при сборе материальных памятников традиционной культуры, А.А. Миллер, по собственному его признанию, ориентировался в первую очередь на предметы, которые представлялись ему носителями архаичных черт, а кроме того на те, которые позволили бы проследить исторические влияния и заимствования.

В рамках общей тенденции сбора архаичного материала за пределами интереса исследователя оставалась городская, модернизированная культура. Так, в своем отчете Александр Александрович пишет: «Сведения, полученные от интеллигентных армян, бывших уже во время войны в Ване, а также от армян, состоявших в военных дружинах, были неблагоприятны. Указывают на то, что большинство армянского сельского населения находится не в Ванской области, а в пределах России, именно в Эриванской губернии, что в самый Ван начинают возвращаться армяне, но более зажиточные, именно тот класс, который всего меньше мог представлять собой интерес для этнографии».³

Именно поэтому у собирателя вызвали разочарование кружева, ювелирные изделия, которые продавались на рынках и в благотворительных обществах в Тифлисе, куда он проследовал с художником Сарьяном. Благодаря архивным материалам, кстати, становится известно о том, что «антиквариат» концентрировался именно в административном центре Кавказа – Тифлисе, минуя Эривань, куда направился Миллер и где, между тем, было большое скопление беженцев, по свидетельству Александра Александровича. Беспокойство о том, что в Ванской области вообще уже не осталось армянского населения были рассеяны военными, которые сообщили, что «вероятно армянское население в крае есть, т.к. в штабе имеются донесения о нападении курдов на армян в Ванской области».⁴

Проявив настойчивость, этнографическая экспедиция двинулась через Иран в Ванскую область, где были не только собраны вещевые материалы и проведена фотофиксация природного и городского ландшафтов, но и проведены антропологические измерения. Составленные антропологические карточки,⁵ заполненные в Ване на основании данных, полученных от 147 человек из Хазана, Мокса и Шатаха дают не только сведения антропометрических данных исследованных людей, но и о занятиях, предпочтениях в выборе имени, а также о фамилиях жителей тех или других населенных пунктов и в общих чертах обрисовывают срез состава беженцев в определенном временном промежутке.

На территории области был собран также лингвистический материал, в основном ономастический, терминологический и топонимический.

Таким образом, экспедиция Миллера – стала одной из значимых страниц не только в истории формирования армянских коллекций ЭО, но и имперского востоковедения в целом. Интерес к собственному христианскому Востоку России вписан в общую тенденцию актуализации научного (вслед за политическим) интереса к Востоку вообще, тому востоку, который принадлежал империи.

Российская имперская наука видела в бытовой культуре армян Ванской области важное связующее звено, в первую очередь, с урартской древностью. То есть армяне представлялись как один из эталонных древних народов – носителей древней цивилизации, которые, не сознавая, сохраняли дописанные традиции в собственной бытовой культуре.

Иначе говоря, благодаря экспедициям происходило новое обретение и осмысление судеб древнего христианского народа, связанного с ранними цивилизациями Передней Азии и античного Востока, что в свою очередь давало возможность конкурировать российской имперской науке с академическими традициями других великих держав как в сугубо исследовательском, так и статусно-символическом плане (в частности, в приоритетном изучении отныне «собственной» древности).

³ АРЭМ, ф. I, оп. 2, ед. хр. 411, л. 47.

⁴ АРЭМ, ф. I, оп. 2, ед. хр. 411, л. 49.

⁵ АРЭМ, ф. I, оп. 2, ед. хр. 411.

FROM THE HISTORY OF THE WEST ARMEIAN COLLECTION IN THE RUSSIAN MUSEUM OF ETHNOGRAPHY

The collection on Armenian ethnography began to enter the Ethnographical department of the Russian museum (now The Russian museum of Ethnography) in the first years of its existence and still have been collecting. Number of objects started to be used since 1902. In 1916 the acquisition of the collections on traditional culture of the Armenians from the Van region was started. During the complex expedition the staff of the Ethnographical department gathered a big collection on the traditional Armenian culture. The basis of the collections is five sets of costumes. The research of the collections, photo and archival materials corroborates, according to the A. Miller ideas, that Armenian population of the Van region had preserved echoes of Medieval and prehistoric times. It could be seen in physical representation, language, material culture and life style. This idea was reflected in the conception of collecting information during the expedition to the Van region.

Լարիսա Եգանյան (Հայաստան)

ԱՍՏՂԻ ՊԱՏԿԵՐՈՎ ՀՄԱՅԱԹԱՍ ՎԱՂԲՐՈՆՁԵԴԱՐՅԱՆ ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐԻՑ

Վաղբրոնզեդարյան Մեծ Սեպասարից գտնված գալերի զոհաբերության նյութական մնացորդները վկայում են, որ ծեսը կատարվել է զարմանամուտին¹: Գտածոների մեջ կա վեցաթև աստղի պատկերով թասի բեկոր (նկ. 1):

Շումերից դեռևս մ.թ.ա.V հազարամյակից հայտնի հմայաքաները² երկինք պարզելով՝ նպատակ են ունեցել³ երկնային ջրերը հմայելու: Համբարձման վիճակի փարչը երկնքի տակ էին թողնում՝ ներառելու կախարդական գիշերվա «աստղունքը»⁴:

Վեցաթև աստղի պատկերը հաճախ է հանդիպում Հայաստանի ժայռապատկերներում (նկ. 2), վաղմիջնադարյան պատկերաքանդակների և քառակող կոթողների (նկ. 3), խեցեղենի, գաթանախշերի, գուլպաների կաղապարների, փայտյա աղամանների, օրորոցների, դադաղանների, նաև գորգերի վրա⁵: Աստղի նշանը համարվել է չարխափան և կապվել է պտղաբերության հետ: Արևի, լուսնի և աստղերի պատկերներով «երկինք» կոչվող ծիսական հացեր էին զոհաբերում խեթերը⁶: Աստղեր են պատկերում Նոր տարվա «Տարի» գաթայի վրա:

Ի՞նչ խորհուրդ ունի աստղը և ինչո՞ւ է պատկերվել թասի մեջ:

Ելնելով տեսանելի երկնային լուսատուների շարժումների մի շարք օրինաչափություններից՝ գյուղատնտեսական աշխատանքների սկիզբը և ավարտը կապել են երկնային լուսատուների դիրքի, պայծառ աստղի հայտնվելու հետ: Այս հենքի վրա ձևավորված հնդեվրոպական հավատալիքներն արտացոլվել են աստղի և նրա մարմնավորում աստվածուհիների պաշտամունքներում:

Շումերա-աքքադական դիցաբանության մեջ յուրաքանչյուր աստված ուներ իր լուսատուն (մոլորակը): Կարևորվում էր հատկապես սիրո և պտղաբերության Վեներա մոլորակը, որին մարմնավորում էր Ինաննա աստվածուհին⁷: Հնդկաստանում վեցաթև աստղը խորհրդանշում էր «հորիզոնի վեց կողմերը»⁸: Հույների մոտ վեցը հաջողության խորհրդանիշ էր⁹, հավանաբար այն պատճառով, որ

¹ Л. Еганиян, Памятник раннебронзового периода Мец Сепасар в контексте индоевропейских верований и ритуалов // Труды Маргарианской археологической экспедиции, Институт этнологии и антропологии им. Н.Н. Миклухо-Маклая РАН, т.4, Москва 2012 . стр. 272-290.

² J.Mellaart, Earliest civilisation of the Near East, London, 1965, p. 66.

³ Б. Рыбаков, Космогония и мифология земледельцев Энеолита, СА, ном.1, 1965, стр. 26.

⁴ Հ. Խառատյան-Ստաբեյան, նշվ. աշխ., էջ 164:

⁵ Տե՛ս Հ. Մարտիրոսյան, Գիտությունն սկսվում է նախնադարում, Երևան, 1978, աղ. XXX1 : Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան քառակող կոթողները, Երևան, 2012, նկ. 107գ, 187ա, 189գ, 206ա: Ֆ. Բաքալյան, Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական խեցեղենի զարդաները, Երևան, 1981, նկ. 23, 24, 62 : Levon Abrahamian, Nancy Sweezy, Armenian Folk Arts, Culture, and Identity, 2001, f. 5.1.14, f. 4.2.26, f. 4.1.6. , f. 4.1.4 Հայկական գորգարվեստ, XVII-XXդդ. Հայաստանի պատմության բանգարան, 2012, էջ 29, 183, 189:

⁶ В. Г. Ардзинба, Ритуалы и мифы древней Анатолии, Москва, 1982, стр. 66-67.

⁷ Վեներա մոլորակը պաշտվում էր սեմական բոլոր ժողովուրդների կողմից (Աստար, Իշտար, Աստարտա), ասլա բախանցել է նաև հնդեվրոպական լեզուներ (В. В. Иванов, Астральные мифы, Мифы народов мира, т.1, 1991, Москва, с. 116).

⁸ А. Голан, Миф и символ, Москва, 1991, стр. 150.

⁹ Дж. Трессидер, Словарь символов, Москва, 1999, стр. 419.

վեցաթև աստղը¹⁰ խորհրդանշում էր Վեներային: Ի տարբերություն հույների՝ հռոմեացիները Վեներային կապում էին Լուցիֆերի՝ հետ¹¹:

Պտղաբերության աստվածուհիները կոչվում էին «Առավոտյան» կամ «Ծովային» աստղ¹² և կապված են ջրի պաշտամունքին¹³: Հայոց հավատալիքներում աստղի հետ է կապվում սիրո և գեղեցկության, երկնային լույսի և պտղաբերության Աստղիկ դիցուհին, որի մասին վկայում է Ագաթանգեղոսը. «...մեհեանն անուանեալ Աստղկան դից...»¹⁴: Աստղիկ անունը կապում են Իշտարի ասորեստանյան մականվան՝ Անատուի հետ¹⁵: Անունն ամանցված է «աստղ»-ից՝ շեշտելով արշալույսի կամ այգաբացի լուսատուին, որին մարմնավորում էր¹⁶: Աստղի պաշտամունքը արտացոլվել է նաև պաշտամունքային կառույցների լուծումներում¹⁷:

Աստղ-Աստղիկի պաշտամունքն արտացոլված է Մեծ պասի և Վարդավառի տոներում: Մեծ պասի առաջին օրը տունը մաքրելուց հետո մրից սևացած առաստաղը, պատերը և սյուներն այլուրով աստղազարդում էին¹⁸: Դիցուհու մարմնավորումն է Արծալի լճում ապրող «ճախի վրեն վառման աստղը» ունեցող հրեղեն ջրահարսը, որի աղբյուրից ջուր խմողը կորոքեքվի անարատ սիրով, ձայնը կլինի անուշ, երգը՝ դյուբող¹⁹ (հմմտ. աստղի տակ ծնվել, աստղով մարդ...):

Ըստ հայոց հավատալիքների՝ ծննդյան գիշերը հոսող ջրերը մի պահ կանգ էին առնում, և այդ ջրերին վերագրվում էր հատուկ գործընթաց: Ջուր հեղելու ծիսակատարությունը հաջողության խորհրդանշ է համարվել²⁰: Պտղաբերության տոները կապված են ջրի պաշտամունքի հետ: Քնեսապում ծննդյան կեսգիշերն անց, երբ երևում էր Լուսաստղը, տարեց կանայք արթնացնում էին պատանիներին, ովքեր մերկ վազում էին ամենամոտ ջուրը, սուզվում, հատակից քար վերցնում, առանց հետ նայելու վազում և քարը դնում ծառի բնում, որից շատ բերք էին ակնկալում, կրկին առանց հետ նայելու, վազքով մտնում տուն, որտեղ վառվում էր կրակը²¹:

Վարդավառը՝ նվիրված է ջրի աստվածուհի Աստղիկ դիցուհուն²², լեռների գագաթների պաշտամունքին²³, նշում են ի հիշատակ Նոյյան Տապանի՝ Արարատ լեռան վրա նստելու, բերք ու բարիքի հովանավոր Անահիտ դիցուհու²⁴, «գեթաճոսական»²⁵:

Մարաշում հավատում էին, որ Վարդավառի շաբաթ, լույս կիրակի գիշերը ջրերը շատանում են, Արցախում կարծում էին, որ Վարդավառին բոլոր սրբերի վրա լույս է իջնում, և ով որ տեսնի այդ լույսը, ինչ խնդրի, կկատարվի, և որ Հոգեգալստին բոլոր սրբերը բարձրանում են երկինք, Վարդավառին լուսավոր աստղերի կերպարանք ընդունելով՝ իջնում իրենց տեղը, իսկ Դերսիմում դեռ լույսը չբացված, ճանապարհ էին ընկնում դեպի ուխտավայր՝ Սուրբ Լույս սար՝ հետիոտն, շատ կանայք՝ ոտաբորիկ²⁶:

¹⁰ Հրեական խորհրդանշիչ համարվող վեցաթև աստղը: Հին Իսրայելում առաջին անգամ, որպես սեփական խորհրդանշիչ, սկսել է օգտագործվել 12-14րդ. (Մագեն-Դավիթ - Դավիթի վահան (*А. Голан, Миц и символ, Москва, 1991, стр. 148-150*):

* Երկնքի հարավային կիսագնդում է գտնվում Գայլ համաստեղությունը (լա): Անունը կապվում է աստվածների գոհաբերված գայլի հետ և պատկերվում է գոհասեղան տանող Կենտաուրներից, գայլի պաշտամունքից, Վեներա մոլորակը համարել են «ջարի աստղ»:

¹¹ *А. Голан*, նշվ. աշխ., էջ 146:

¹² *А. Дониш, Лоды, идолы и божы, Москва, 1966, с. 105.*

¹³ Դերկետոն (Ատարգատիս) պտղաբերության և ջրի աստվածուհին է: Հերապոլիտոս դիցուհու տոնի երկու օրերին Ասորիքի բոլոր կողմերից ուխտավորներ էին գալիս և ծովից ջուր էին բերում և այնտեղ սրսկում, տարին երկու անգամ ուխտագնացության ժամանակ դիցուհու արձանը ծովը կամ գետն էին տանում (*Մ. Արեղյան*, նշվ. աշխ., էջ 54-155): Ըստ «Արդվիխտոր» կամ «Աբան-յաշտի»՝ Անահիտն առաջին հերթին ջրի և պտղաբերության աստվածուհի է (*Ա. Իսրայելյան, Մ. Հովհաննես Օձնեցի ժողովրդական ավանդության մեջ, Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, 2001, էջ 75*):

¹⁴ *Ագաթանգեղոս*, 809:

¹⁵ *Մ. Արեղյան*, Երկեր, հ. Ե, Երևան, 1975, էջ 155:

¹⁶ *Հր. Աճառյան*, Հայերեն արմատական բառարան, հ. I, Երևան, 1971, էջ 278), ըստ Գ. Ջահուկյանի՝ հավանաբար ծագումը - ? աստղից (*Գ. Ջահուկյան*, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 152):

¹⁷ Բուրգերը և գիկուրատները կողմնորոշված են ըստ աշխարհի կողմերի կամ պայծառ աստղի (*Է. Խանգաղյան*, Մեծամոր, Երևան, 1973, էջ 143-144):

¹⁸ *Հ. Խառատյան-Առաքելյան*, Հայ ժողովրդական տոները, Երևան, 2005, էջ 119:

¹⁹ *Մ. Ավագյան*, Արձակ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, 8, Երևան, 1978, էջ 111:

²⁰ *Д. Редер, Мифы и легенды древнего Девреча, Москва, 1965, стр. 113.*

²¹ *Հ. Խառատյան-Առաքելյան*, նշվ. աշխ., էջ 49:

* Վարդավառ անունը կազմված է վարդ (ա)+ վառ արմատներից: Առաջին արմատը «վառ- տաք, փայլուն, վառել, այրել», ինգվիստները հանգեցնում են *- վառել և - խոնավություն, քաց(ջրի հոսելու գաղափարից) բառերից: *Հր. Աճառյան* արմատը փոխառյալ է համարում (Հայերեն արմատական բառարան, հ.4, Երևան, 1979, էջ 307 վառ):

²² *Մ. Արեղյան*, նշվ. աշխ., էջ 165:

²³ *Մո. Լիսիցյան*, Ջանգեղուրի հայերը, Երևան, 1969, էջ 278:

²⁴ *Հ. Խառատյան-Առաքելյան*, նշվ. աշխ., էջ 217:


²⁵ Նոր բառգիրք հայկազենան լեզուի, հ.2, Երևան, 1981, էջ 792:

²⁶ *Հ. Խառատյան-Առաքելյան*, նշվ. աշխ., էջ 216-217:

Հավատալիքներում աստղի պաշտամունքին, անցնող տարին ճանապարհելուն և բնության զարթոնքին նվիրված հմայական ծեսերի արձագանքներ կան (Մեծ պասին տարեց կանանց կողմից պատանհներին արթնացնելը, վերջիններիս մերկանալը, ջրի մեջ սուզվելը, տան կրակը չմարելը), նաև արտացոլված է կրակ-ջուր հակադրությունը (հմտ. գիշերները Արածանիի ջրերում Աստղիկի մերկ լողալը՝ ընդունելը և կտրիճների կրակ վառելը²⁷, Անահիտին նվիրվող երինջների «...խարանեալ ի նոսա խարան գրիցուիոյն ջահ»²⁸): Կրակ-ջուր հակադրության օրինակ է խեթական ծեսերում երկու անոթի օգտագործումը. մեկը՝ կրակ վառելու, իսկ մյուսը՝ ջրով լի²⁹, զոհի միսը եփվում էր թաղարներում կամ խորովվում էր³⁰: Կրակի և ջրի հակադրությունը նաև հարսանեկան ծեսերում է արտահայտված: Հին Հռոմում շեմի մոտ դրվում էին ամուսնուն և կնոջը խորհրդանշող կրակ և ջուր (ռուսները կրակն ու ջուրը թագավոր և թագուհի էին կոչում)³¹: Բերվածին զուգադիր են հայոց հարսանեկան ծեսում փեսային թագավոր և հարսին թագուհի կոչելը, շեմի մոտ հարսի և փեսայի ափսե կոտրելը, առանց «Մամէրով պարին» մասնակցելու առագաստ մտնելու փեսայի իրավունք չունենալը, հարսնախոսության ժամանակ աղջկանից ջուր ուզելը:

Վարդավառի մեջ (վառել և խոնավություն) ներառված է կրակ-ջուր հակադրությունը: Տոնը համընկնում էր տարվա վերջին օրերին, Նոր տարվա՝ Նավասարդի սկզբին, հին Բարեկենդանին, իսկ Նավասարդը հայոց առաջին ամիսն է՝ Նոր տարին³² և սկզբում (բուն տոմարով) համապատասխանել է զարնանամուտին³³:

Աստղի և Աստղիկ դիցուհու պաշտամունքի հետ կապված հավատալիքների և ծեսերի համադրումը բերում է այն համոզման, որ Վարդավառը Վիշապի դեմ Շանթառաքի տարած հաղթանակին նվիրված տոնի բաղադրիչներից է, աստղի երևալուն, երկնային ջրերը բացելուն նվիրված ծիսական գործողություն, որի արձագանքները պահպանված են մերօրյա ծեսում (ջրի մոտ նշելը և ջուր ցողելը): Վարդավառը կապված է ոչ թե ամառվա կիզիչ արևի, այլ պայծառ աստղի և այն կրակների հետ, որ վառ էին պահվում Նոր տարվա և Մեծ պասի ողջ ընթացքում:



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5

²⁷ Դիցաբանական բառարան, Երևան, 1985, էջ 27-28:

²⁸ Պլուտարքեսի Քերովմացոյ Չուգակշեռք, հատ. Գ, Թրագմ. Ե. Թոմաճեան, Վենետիկ, 1833, էջ 562:

²⁹ Դիցաբանական բառարան, էջ 210-211:

³⁰ B. Г. Ардзинба, նշվ. աշխ., էջ 210:

³¹ И. М. Снегирев, Русские народные праздники и суеверные обряды, т. 1, Москва, 1837 стр. 31.

³² Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 158-159:

³³ Հայոց հին շարժական տոմարի տարեսկիզբը եղել է զարնանամուտը՝ զարնանային գիշերահավասարի օրը (մարտի 20-ը): Քանի որ հին արեգակնային տոմարը շարժական էր (չորս տարվա ընթացքում մեկ օրվա հավելումով), ուստի օրերի տեղաշարժման հետևանքով փոխվել է նաև Նավասարդի 1-ը՝ տարեմուտը, և տարբեր ժամանակներում նշվել է տարբեր օրերի (եթե հայոց բուն տոմարի սկզբում (մ.թ.ա. 457թ.) Նավասարդի 1-ը համապատասխանել է մարտի 20-ին, ապա այդ նույն տոմարի վերջում՝ մ.թ. 428թ.՝ օգոստոսի 11-ին (Էդ. Աղայան, Ալկմարկներ հայոց տոմարի պատմության, Երևան, 1986, էջ 36, 42-47):

Հնդեվրոպական դիցաբանության մեջ Վիշապաքաղի հաղթանակով աշխարհի նորացմանն ու տիեզերական կարգուկանոնի հաստատմանը նվիրված ծիսակարգը խորհրդանշել է նոր տարին՝ զարմանամուտը: Ըստ աստղագետ-տոմարագետ Գ. Բրուտյանի՝ հին հայերի համար Հայկ-Օրիոն³⁴ համաստեղության Բետելգեյզե ամենապայծառ աստղի հեղիտիկ ծագումը եղել է տարվա սկիզբ՝ զարմանամուտ³⁵: Այգաբացի աստղը ամպրոպի աստծու ուղեկիցն է, որ ճեղքում է խավարը՝ ապահովելով Վիշապաքաղի հաղթանակը: Աստղի մարմնավորում Աստղիկը Վահագնի ուղեկիցն է («Մենեակ Վահագնի կարդացեալ...»³⁶), ամպրոպային մարտում Վիշապաքաղի հաղթանակի նախանշան աստղը (որոշմագարդ կարասների զարդագոտիներում աստղը հաճախ է կենաց ծառի կողքին՝ Վահագնի խորհրդանիշ այծի հետ): Վեցաթև աստղ-վարդյակը խորհրդանշում է Աստղիկ դիցուհուն, ինչպես Գառնահովիտի կոթողի (նկ. 4) վրա գլխից վեր, շրջանակի մեջ վեցաթև երկու վարդյակ պահող աստվածուհին³⁷ և Մարմաշենի IXդ. ջնարակապատ մի թասի հատակին՝ վեցաթև աստղի մեջ, պատկերված կնոջ դեմքը³⁸ (նկ. 5):

Այսպիսով, Մեծ Մեպասարում աստղի ծագմանը հաջորդել է Նոր տարվան՝ զարմանամուտին, նվիրված ծիսակարգ, որի վկայությունն է նաև Նոր տարվա՝ պտղաբերության և վերածնության խորհուրդը կրող, կախարդական գիշերվա հմայիչ աստղը ներառած, երկնային ջրերը հմայելու նպատակով երկինք պարզվող հմայաթասերին և Համբարձման վիճակի փարչին զուգադիր թասը:

Larisa Yeganyan (Armenie)

A BOWL WITH A STAR PICTURE FROM EARLY BRONZE AGED METS SEPASAR

Mets Sepasar, which dates back to III millennium BC, is a cult complex where a ritual for wolves is certified. The latter proves that the people who realized the ritual were Indo-European tribes and have celebrated new year in the beginning of spring.

There is also a fragment of a small bowl in the material remains of the preserved ceremony, in which, under the neck, there is the overhead picture of a star.

In III millennium BC, the natives of Mets Sepasar had some knowledge concerning stars.

The emergence of stars could be connected with the beginning of the year..

There are numerous beliefs connecting with the star cult, which are reflected in Lent and Vardavar.

Vardavar is a ritual devoted to the triumph of Vishapaqagh in the struggle of boa, which is one of the components of New Year, a ritual action of making rain.

Astghik is a partner of Vishapaqagh, the guiding star of her triumph (VahagnSeneak). The bowl with a star picture is an evidence of a ritual devoted to the guiding star of Vishapaqagh's victory.

Սուրեն Հոբոսյան (Հայաստան)

ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՌՈՒ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՍԱՐՁԵՐՈՒՄ

Ըստ վերջին տարիների հնագիտական հայտնագործությունների՝ Հայկական լեռնաշխարհը խաղողի մշակութեմացման և գինեգործության հնագույն բնօրրաններից մեկն է:

Այժմ էլ խաղողագործությունն ու գինեգործությունը կարևոր տեղ են գրավում Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ:

Հայաստանի հիմնական խաղողագործական գոտիներն են Արարատյան դաշտը, Արարատյան դաշտին հարող նախալեռնային գոտին, Հյուսիսարևելյան շրջանը, Վայոց Ձորը և Սյունիքը: Երկրագործական մշակույթի այս ոլորտում իր յուրահատուկ տեղն ունի նաև Արցախը:

Հայաստանի խաղողագործական Հյուսիսարևելյան շրջանն ընդգրկում է Տավուշի և Լոռու մարզերը: Տավուշում երկրագործական տնտեսության այդ ավանդական ճյուղով զբաղվում են Այգեձոր, Չի-

³⁴ Աստվածաշնչի թարգմանության մեջ Օրիոն անունը փոխարինված է Հայկով (**Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 280):

Հայկի անունով է կոչվել նաև Մարս մոլորակը: Օրիոնը բեռտացի մի հսկա որսորդ էր, իսկ Մարս մոլորակը կապվել է պատերազմի աստծու հետ, և Օրիոն-Հայկը նույնացվել է պատերազմի աստծու՝ «շուն սպանողի հետ» (**Ա. Պետրոսյան**, «Թուխ Մանուկ», հնագույն ակունքներ, Թուխ Մանուկ մատաշրջանի նյութեր, Երևան, 2001, էջ 22):

³⁵ **Հ. Խաչատրյան**, Հին հայկական օրացույցի մասին, ԵՀՀԿ, Գիտական աշխատություններ, I, Գյումրի, 1998, էջ 8: **Գ. Բրուտյան**, Հայոց տոմարի որոշ հարցերի մասին, «Էջմիածին» հանդես, թիվ 2, Երևան, 1985, էջ 54-55:

³⁶ **Ագաթանգեղոս**, 809:

³⁷ **Գ. Գրիգորյան**, նշվ. աշխ., էջ 65, նկ. 107գ:

³⁸ Ընդհանրականություն **Ս. Հարությունյանին** չհրատարակված նյութից օգտվելու թույլտվության համար:

նարի, Պառավաքար, Վազաշեն, Այգեհովիտ, Սևքար, Կոթի, Կողբ, Բերդավան, Արծիս և այլ գյուղերում, իսկ Լոռիում՝ Շոճկանում և Շնողում:

Դիտարկենք Կոթիի և Շնողի տվյալները. խորհրդային վերջին տարիներին Կոթին ուներ 175, իսկ Շնողը՝ 32 հա խաղողի այգի:

Վերջին տարիների հնագիտական պեղումների արդյունքները Լոռու և Տավուշի մարզերում թույլ են տալիս նորովի գնահատել խաղողագործության ու գինեգործության տնտեսական նշանակությունը միջնադարում:

Հնագիտական և ազգագրական ուսումնասիրությունները վկայում են, որ հնձանները գտնվել են այգիներում, բնակավայրերում և եկեղեցական խոշոր համալիրներում: Այգիներում կառուցված հնձաններն ունեցել են նաև բնակելի հատված: Դրանք հիմնականում քարաշեն կառույցներ էին, միջնադարում գտնվում էին առավելապես այգիներում, հետագայում նաև՝ բնակելի տներին կից:

Հնձանի հիմնական բաղադրամասերն էին խաղողի տրորման հատվածը, որը հայոց մեջ ամենուր կոչվում է առագաստ, և գտված քաղցուն պահեստավորելու տաքարներն ու կարասները:

Առագաստների մեծությունը կապված էր վերամշակվող հումքի քանակի հետ և կարող էր ունենալ 1,5-2 մ լայնություն և մինչև 10 մ երկարություն:

Խաղողի տրորման ժամանակ քաղցուի կորուստները կանխելու համար առագաստի պատերն ու հատակը կրաշաղախով սվաղում էին, որը թարմացվում էր հին տարին մեկ անգամ: Որպես կանոն, հին շերտը չէր հեռացվում, այլ օգտագործվում էր որպես նորի հիմք:

2009 թ. Տավուշի մարզի Կոթի գյուղի «Բաբանց» գերեզմանոցի տարածքում՝ Սարատիկյանների տոհմական մատուռի հարևանությամբ, վաղմիջնադարյան եկեղեցու պեղումների ժամանակ, հարավային ավանդատանը կից ի հայտ եկավ XII-XIII դդ. հնձան: Գործող գերեզմանոցի տարածքում այն հնարավոր չէր ամբողջովին պեղել:

Կոթիում պեղված հնձանը պատկանում է հայկական մմանատիպ արտադրական կառույցների դասական տիպին, որոնք տարածված են եղել պատմական Հայաստանի գրեթե բոլոր խաղողագործական շրջաններում:

2009-11 թթ. Լոռու մարզի Շնող գյուղի մերձակա հանդամասերում պեղումներով հայտնաբերվեց XII-XIII դդ. հինգ հնձան, որոնցից երեքը լիովին տարբերվում են հայկական միջնադարյան համանման կառույցներից:

2009 թ. Շնող գետի ձախ բարձրադիր ափին՝ Դարաքոթուկի հողեր հնավայրում (միջին բարձրությունը՝ 720 մ), պեղվեց երեք հնձան:


Առաջինը միջնադարյան մեզ հայտնի հնձաններից տարբերվում է թերևս միայն նրանով, որ քարե առագաստի փոխարեն ունեցել է միակտուր գերանից պատրաստված ավազան՝ նավ, որպիսիք օգտագործվել են մինչև XX դ. կեսերը:



Նկար 1. Շնող, հնձան 3

Երրորդ հնձանն ուներ անդեգիտով և գետաքարով շարված, 08-1,0 մ հաստ և 1,18-1,4 մ բարձր պատեր: Ուղղանկյուն շինության (ներքին չափերը՝ 4,9x1,35 մ) հատակն ու պատերը ներսից կրաշաղախով սվաղված էին: Հատակի տակ դրված կավե խողովակով քաղցուն ավազանից հոսել է դուրս: Ավազանի արևելյան պատի մոտ բացվեց մանր քարերով շարված տաքարը, որի բերանի տրամագիծը 0,35 մ է, խորությունը՝ 1,42 մ: Առագաստը և տաքարը շինել են քար ու կրից և սվաղել կրով, ապա օծել հալած ճարպով¹:

Հնձանի ավազանի հյուսիսային՝ նեղ պատի վրա, մոտավորապես 1 քմ մակերեսով կրով սվաղված հարթակ կա, որտեղից, ամենայն հավանականությամբ, ավազանի մեջ են լցրել խաղողը:



Նկար 2. Հնձան 3 (չափագրություն)

Քանի որ 6,5 խմ ծավալով ավազանն ունի մոտ 500 լ տարողությամբ միայն մեկ տաքար, որտեղ հնարավոր էր կուտակել ստացված գինու տասներորդ մասը, պետք է ենթադրել, որ մաճառը պահեստավորել են մոտակայքում գտնվող մառանում կամ տեղափոխել բնակավայր:

2011 թ. Շնողից 2,5 կմ հարավ՝ Բաղերի ճալա հանդամասում՝ Խառատանոցի ջուր գետակի ձախ, բարձրադիր ափին, պեղվեց 5,8x2,4 մ արտաքին չափերով ևս մեկ հնձան, որի պատերի միջին հաստությունը 0,6 մ էր, իսկ բարձրությունը՝ 1,57 մ:

Ավազանի արևելյան պատից 0,9 մ հեռու բացվեց չորս կարաս, որոնցից մեկը 1,4 մ բարձր էր և մոտ 400 լ տարողություն ուներ:

«Բաղերի ճալա» ճալա տեղանունն արդեն հուշում է այդ տարածքում այգեգործության, այս դեպքում մասնա՝ խաղողագործության մասին²:

Նման հնձաններ, որոնք խաղողի տրորման առագաստներ չունեն, Հայաստանի մյուս խաղողագործական շրջաններում հայտնի չեն:

Նորահայտ հնձաններում, հավանաբար, գործ ունենք գինու ստացման մի այլ եղանակի հետ, որը ազգագործեն փաստագրված է Վայոց Ձորի մարզում միայն:

Հնձանների նման ավազանները օգտագործվել են երկու նպատակով՝ խաղողը տրորելու և նույն տեղում, քաղցուն տրորված զանգվածի մեջ խմորելու համար: Խաղողը տրորելուց առաջ խողովակի ելքը խցանել են:

Գինու պատրաստման ավանդական և ժամանակակից տեխնոլոգիաներում հայտնի է կարասների, տաքարների, տակառների և այլ տարաների մեջ առանձնացված մաքուր քաղցուին խաղողի տրորված զանգվածի ինչ-որ քանակություն ավելացնելու եղանակը: Չափը որոշվում էր ըստ խաղողի տեսակի, ու, թե ինչ քնդության և ինչ գույնի գինի էր հարկավոր ստանալ: Այդ զանգվածը, կապված եղանակի հետ, մոտ 10 օր մնում էր, բայց օրը մի քանի անգամ խառնում էին, որպեսզի պտղանյութի և կեղևի ֆերմենտները անցնեին քաղցուին:

Շնողում գործ ունենք ոչ միայն երկու տեսակի հնձանների, այլև գինու պատրաստման բացարձակապես տարբեր երկու համակարգերի հետ: Առաջինն ամենուր տարածված ձևն է, երբ խաղողը առագաստում ճմլելով քաղցուն առանձնացնում և հատուկ տարաններում գինի էին ստանում:

¹ *Տեր-Մանուէլեան Մ.*, Արարատեան բարբառի ժողովրդական բառերի ցանկ բառափնջիկ, Վաղարշապատ, 1911, էջ 14:

² *Հոբոսյան Մ.*, «Այգին» միջնադարյան հայերեն վիմագրերում // Հայ ժողովրդական մշակույթ, XII, Եր., 2004, էջ 84-85:

³ *Մելիք-Շահնազարեանց Կ.*, Ուղեցոյց գործնական գիներգործութեան, Տփլիս, 1885, էջ 18-19, *Նույնի* Գիներգործութիւն, Վաղարշապատ, 1909, էջ 53-54, *Հ. Խալիֆախյան*, Հայաստանի արտադրական կառուցվածքները, Եր., 1961, էջ 8:

Հնձանների երկրորդ տեսակը ազգագրորեն հայտնի է Վայոց Ձորում: Տնային պայմաններում պատրաստվող արենի զինու որակի հիմնական գրավականն այն է, որ խաղողի քաղցուն անմիջապես չի գտվում, և տրորված պտղանյութն ու կեղևը յուրահատուկ համ և բույր են տալիս զինուն:

Կոթիում և Շնողում հայտնաբերված հնձանները զալիս են հաստատելու միջնադարյան վիմագրերի ու գրավոր տարբեր աղբյուրների վկայությունները զարգացած խաղողագործության վերաբերյալ:

Կոթիում հայտնաբերված հնձանը ուշագրավ է հատկապես նրանով, որ գտնվում է «Եքաննի» կոչվող տարածքում՝ վկայելով այնտեղ եղած երբեմնի խաղողի այգիների մասին⁴: «Եքաննի» տեղանվան արմատը էգի՝ խաղողի այգի բառի բարբառային ձևն է, որը բազմիցս հանդիպում է միջնադարյան վիմագրերում:

Տավուշի Կողբ գյուղի մոտ, ս. Աստվածածին եկեղեցի. «Ի ք. ԷՃԲ (1253) ես Վասակ...էգի ետու Աստուածածնիս...»⁵: Հետաքրքիր է, որ Սանահինի մեծ գավթի հյուսիսային պատի արձանագրության մեջ հանդիպում են էգի և իգի ձևերը. «Կմն Այ ամեյնակալին, ես Բարսեղ արհեպիկա, թոռի թոռն պր Արդուքին, որդի պր Վասակին, տվի վախմ Սամծէրա :Բ: էգին իր ընձանովն, ...Բրտայծորի իգին ուր ընձանովն...»⁶:

Էգի և իգի խոսակցական բառաձևերը դեռևս հիշվում են Արագածոտնում, Վայոց Ձորում, Տավուշում և Լոռիում:

Լոռու Այգեհատ գյուղի անվան ավանդական ճիշտ ձևը Իգահատն է, որը, ժամանակին համարվելով բարբառային, մերժվեց՝ աղավաղելով տեղանվան բուն նշանակությունը: Արդի հայերենում այգեհատ բառակապակցությունը կարելի է հասկանալ կտրված, հատված այգիներ նշանակությամբ, այնինչ իրականում ունեցել է բոլորովին այլ իմաստ, այն է՝ այգիների, տվյալ դեպքում՝ խաղողի այգիների վերջ, ավարտ, վերջին սահման: Իգահատ է կոչվել այն պատճառով, որ այգիներն այստեղից դարձնում են⁷:

Ուշադիր տեղագնության դեպքում կարելի է նկատել, որ Ալավերդի քաղաքից հարավ-արևմուտք՝ Դեբեդ գետի ձախափնյա բարձրադիր լանջերին, կան երբեմնի դարավանդների հետքեր, որոնք որոշ ընդհատումներով հասնում են մինչև Քոբայրի հարևանությամբ գտնվող Իգահատ գյուղատեղի: Հավանաբար այդ այգիներին է վերաբերում Օձունի մոտ գտնվող Հոռոմայրի վանքի Տերունական խաչարձանի վիմագիրը. «...արկի զմատնարկն, շինեցի տակոպետոց», որտեղ տակոպետոց բառը հավանաբար ունի հնձանի իմաստ⁸:

Լոռիում էգի արմատով մեկ այլ տեղանուն հիշատակվում է Դեբեդի աջ ափին՝ Մարցի շրջակա մի գյուղատեղի եկեղեցու մոտ՝ խաչքարի արձանագրությունում (1255թ.). «Ես Գրիգորի որդի Մարծպանս, թողի զԱզադակո ձորոյս զաբգանն...», որտեղ տեղանունը միանշանակորեն կազմված է այգի և տակ բառերից և նշանակել է այգիների տակ, այգիներից ներքև:

«Իգատակ» անվան հիշատակությունը «Ազադակ» ձևով հանդիպում է նաև Դսեղի Ս. Գրիգոր վանքի գավթի մի արձանագրությունում: Ազադակը նույն այգետակի ոճավորված ձևն է, որը ուշ շրջանում դառնում է Իգատակ, տեղի բարբառում՝ իքատակ⁹:

Նորից դառնալով Իգահատին՝ նշենք, որ խաղողագործությամբ զբաղվել են ոչ թե այժմյան գյուղում, այլ Դեբեդի կիրճի բարձրադիր թեք լանջերին՝ Քոբայրին հարող տարածքներում: Կարծում ենք, որ տնտեսության այդ ճյուղով միջնադարում զբաղվել են Օձունում, հավանաբար նաև Ծաթերում և Արևածագում:

Suren Hobosyan (Armenia)

FOLK SKILLS OF WINEMAKING IN THE REGIONS LORY AND TAVUSH

According to archaeological investigations of last years, Armenia seems to be one of the cradles of winemaking. Excavations conducted in the regions Lori and Tavush demonstrate, that this branch of economy was wide spread even in the 12-13th centuries. Especially worth mentioning are excavated winepresses in Shnogh village, Lori, the pressed masses of which were left in basins with must for the ferments of fruit and skin to give the wine desirable density and colour.

⁴ *Քաղանքարյան Ա., Հորոսյան Ս.*, Կոթի (2008թ. դաշտային հետազոտական աշխատանքների արդյունքները)// Տավուշ. նյութական և հոգևոր ժառանգություն, Եր., 2009, էջ 252:

⁵ *Բարխուտարեանց Մ.*, Արցախ, Բագու, 1895, էջ 386:

⁶ *Ղաֆադարյան Կ. Գ.*, Սանահին, 1957, էջ 136-138:

⁷ *Էփրիկյան Հ. Ս.*, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903-05, էջ 143:

⁸ *Ավագյան Ս. Ա.*, Վիմական արձանագրությունների բառաբանություն, Եր., 1978, էջ 311-313:

⁹ *Քաղանքարյան Ա.*, Նոր նյութեր Թումանյանի շրջանի պատմական հուշարձանների վերաբերյալ, «Լրաբեր հաս. գիտ.», 9, 1975, էջ 98:

Հարություն Մարության (Հայաստան)

ՂԱՐԱՔԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ (1988-1990) ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մասնագիտական գրականության մեջ Ղարաքաղյան շարժումը, որոշ փոքր բացառություներով, դիտարկվում է լոկ հայ-ադրբեջանական, «Էթնոտարածքային» որակում ստացած կոնֆլիկտների համատեքստում: Մեր կարծիքով, Ղարաքաղյան շարժման հայաստանյան մասը, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մաս լինելով հանդերձ, նաև 1989 թ. արևելակովկասյան հեղափոխությունների շարքի առաջնեկն է, և որպես այդպիսին, այն մեծ դեր է խաղացել խորհրդային հասարակության ժողովրդավարացման և նշանակալի դեր՝ Խորհրդային Միության ապամոնոպոլիզմի ու այդպիսով՝ կոմունիզմի վտանգի վերացման գործում: Լինելով առաջինը՝ այն չի նկատվել, չի ընկալվել որպես հեղափոխություն, որպես այդպիսին մնացել է անհայտ մասնագիտական շրջանակների համար, մինչդեռ «չճանաչված հեղափոխության» օրինաչափությունները կարող են մոտ լույս սփռել 20-րդ դարի վերջի արևելակովկասյան ժողովրդավարությունների ծագման ուսումնասիրման ու գնահատման գործում:

Ղարաքաղյան շարժման կարևորագույն բնութագրական գիծը նրա համաժողովրդական լինելն էր: Միակ խավը, որն այս կամ այն կերպ ընդդիմանում էր Շարժման զարգացումներին՝ Հայաստանի Կոմունիստական կուսակցության նոմենկլատուրային բյուրոկրատական վերնախավն էր, որը շատ լավ տեսնում էր, որ Ղարաքաղի՝ Հայաստանին միացման հարցի լուծման ճանապարհ էր ընտրված ժողովրդավարական վերափոխումների քաղաքականությունը: Ընդ որում, Շարժման համաժողովրդական դառնալը ևս միանգամից չեղավ: Այսպես, 1988 թ. փետրվարին դրան նպաստող կարևորագույն գործունեությունը, Ղարաքաղի ինքնորոշման հարցին չսատարելուց զատ, նաև միութենական ու հանրապետական իշխանությունների պահվածքն էր, ինչը դրսևորվեց, մասնավորապես, հետևյալ երկու տիպի գործողություններում. միութենական մամուլն ու «Վրեմյա» հեռուստատեսային լրատվական ծրագիրը, Հայաստանի քաղաքացիների գնահատմամբ, իրականությանը չհամապատասխանող, ոչ լիարժեք տեղեկատվություն էին հաղորդում ԼՂՀՄ-ում և Երևանում տեղի ունեցող իրադարձությունների մասին, դրանք որակում էին որպես «ծայրահեղական» բնույթ ունեցող և երկրորդը՝ Երևանում գտնվող ԽՍՀՄ ԿԿ Քաղբյուրոյի անդամության թեկնածու Վ. Դոլգիխը հարյուրիսկզբից հանրահավաքները որակեց որպես «մարդկանց խուճ»: Այս երկու որակումներն ընկալվեցին պարզապես որպես վիրավորանք, ազգային արժանապատվության ոտնահարման դրսևորում:

Շարժման համաժողովրդական լինելու կարևոր ցուցիչներից էին.

ա) մի քանի հարյուր հազար մարդկանց մասնակցությամբ ընթացող հանրահավաքներն ու երթերը ավելի քան երկու տարի շարունակ,

բ) արդեն 1988 թ. մարտին հանրապետության հարյուրավոր աշխատանքային կոլեկտիվներում ձևավորված «Ղարաքաղ» կոմիտեները, որոնք կոչված էին սատարելու Ղարաքաղյան շարժման ղեկավարությանը: Սրանք ԽՍՀՄ մի քանի այլ հանրապետություններում ավելի ուշ ձևավորված *ժողովրդական ճակատների նախատիպն էին*, յուրահատուկ այլընտրանքներ խորհրդային ձեռնարկություններում ու հիմնարկություններում գործող կուսակցական, կոմերիտական, արհմիութենական կոմիտեներին: Այս նորաստեղծ մարմիններն ավելին էին, քան պարզապես «աջակցության խմբեր», և շատ կարճ ժամանակում նրանց մեծ մասը կարողացավ իրենց ձեռքը վերցնել հասարակական ակտիվության կազմակերպման և ուղղորդման գործը: Մի քանի տարի անց նրանց միջից դուրս եկան երկրի ղեկավարման ապարատում մեծ ու փոքր դիրքեր զբաղեցնող հարյուրավոր պաշտոնյաները:

գ) «Տոնական» տարրերի *քաղաքականությունը*: Ինչպես ցույց է տրված հետազոտություններում¹, Շարժման սկզբնավորման պահից ի վեր հանրահավաքների կենտրոնատեղիում՝ Օպերայի (Ազատության) հրապարակում, տեղի ունեցավ մեծ-փոքր [տարիքով-երիտասարդ], կին-տղամարդ, քաղաքացի-գյուղացի, հայախոս-ռուսախոս և այլ նման հակադրությունների թուլացում և վերացում: Սրանք հետո՝ որոշ ժամանակ անց՝ արդեն 1989 թ. երկրորդ կեսին, հետ եկան:

դ) *պատկերագրական նյութի* (պլակատներ, տրանսպարանտներ) *քաղաքականությունը* (մեզ հաջողվել է ամրագրել շուրջ հազար միավոր) և *քաղաքականությունը* (դրանց մեջ առանձնանում են մոտ

¹ **Լ. Աբրահամյան**, Ծեսը, նախաբառեր և Թատերական հրապարակը. - «Բեն», 1990, 1, էջ 7-19: **Նույնի**՝ Քառսը և կոսմոսը ժողովրդական ելույթների կառուցվածքում. Ղարաքաղյան շարժումը ազգագրագետի հայացքով. - «Մշակույթ», 1990, 2-3, էջ 14-21: **Լ. Abrahamian**, The Karabagh Movement As Viewed by an Anthropologist. - *The Armenian Review*, 43, 2-3 (1990), pp. 67-80.

քսան խմբեր)²: Նման առատությունը վկայում է Շարժման մեջ բազմակարծության բարձր աստիճանի մասին ու, այդպիսով, Շարժման ոչ զուտ քաղաքական բնույթ ունենալուն, որպիսին էր վիճակը, օրինակ, Մերձբայթյան հանրապետությունների պարագայում: Ուսումնասիրողի առջև հառնում է բազմադեմ, աստիճանաբար ազատականացող մտածողության տեր, բայց և միևնույն ժամանակ կարևորագույն հարցերի շուրջ միակամ մարդկանց բազմությունը:

ե) *Շարժումն ուներ խորապես ազգային բնույթ*, ինչի ցուցիչներից էին, օրինակ, մաս հայերի համախմբությանը կոչող պլակատային տեքստերը. «Հայեր բոլոր երկրների, միացե՛ք», «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է», «Հայ ժողովրդի միասնությունը Արցախի հարցի լուծման գրավականն է», իսկ բազմահազար երթերի ժամանակ հնչող կոչերից ամենատարածվածն էր «Հայեր, միացե՛ք» բանաձևը:

Դարաբաղյան շարժումը ծավալվում էր ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության հռչակած *վերափոխման, ժողովրդավարացման, հրապարակայնության* պայմաններում: Մասնագիտական գրականության մեջ ռեֆորմների այդ շարքը որակված է որպես «*հեղափոխություն վերևից*»³: Ընդհանրապես, խորհրդային հասարակարգի բնութագրական գծերից էր՝ ինչ էլ ծագեր ներքևում, հետո այն անպայման պետք է ուղղորդվեր վերևից, երկրի ղեկավարության կողմից: Ցանկացած շեղում այդ գծից, չնայած զանգվածների ակտիվության անընդհատ հնչող կոչերին, որակվում էր որպես վերակառուցման գործը խոչընդոտող: Այս տեսանկյունից *Դարաբաղյան շարժումը սկզբից մինչև վերջ ուղղորդվում էր ներքևից*: Այդ պատճառով էլ իր ձևավորման առաջին իսկ օրերից Շարժումը ենթարկվում էր ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության հարվածներին:

ա) Շարժման ներքևից ուղղորդումը դրսևորվում էր տարբեր ձևերով: Դրա բնութագրական կարևորագույն գիծը *պայքարի խաղաղ, սահմանադրական եղանակն ու մեթոդներն* էին, ինչը Շարժումը որդեգրել էր իր սկզբնավորման օրվանից: Եթե մինչև Շարժումը սահմանադրությունն ընկալվում էր իբրև թղթի մի անպետք կտոր, իսկ Գերագույն խորհուրդը դիտվում էր իբրև մի վայր, որտեղ բոլոր պատգամավորները լոկ ձևական բնույթ ունեցող քննարկումներով ու միաձայն կողմ էին քվեարկում վերևից իջեցվող օրենքների նախագծերին, ապա Շարժման տարիներին մարդիկ աստիճանաբար սովորեցին մաս գնահատել գործող օրենքները, Գերագույն խորհուրդը սկսեց դիտվել իբրև մի վայր, որի որոշումներում պետք է դրսևորվի ժողովրդի կամքը, իսկ պատգամավորները պարտավոր են ի պաշտոնե լսելի դարձնել այդ կամքը: Ստեղծվեցին «սահմանադրական» կոչվող հատուկ խմբեր, որոնք համակարգում էին պատգամավորների հետ տարվող աշխատանքները:

1988 թ. փետրվարից ի վեր ժողովրդական անհնազանդության, բողոքի, պահանջների ներկայացման հիմնական ձևը խաղաղ, տարբեր կարգախոսներով, սակայն առանց բռնությունների և ոստիկանության հետ ընդհարումների հանրահավաքները, ցույցերը, երթերը, ինչպես մասնատացույցերն ու հացադուլներն էին: Դարաբաղյան շարժման ժամանակ էր (1988 թ. փետրվար, հուլիս, սեպտեմբեր), որ *առաջին անգամ ԽՍՀՄ-ում օգտագործվեց պայքարի գործադուլային եղանակը՝ համաժողովրդական ընդգրկմամբ*, որպես բողոքի դրսևորում կենտրոնական իշխանությունների գործողությունների դեմ: Այն ուներ իր յուրահատկությունները, և թերևս այդ պատճառով է, որ անգամ միութենական առաջադիմական մամուլի գնահատականներում չընդգրկվեց ԽՍՀՄ տարածքի առաջին գործադուլների շարքում:

Պայքարի սահմանադրական եղանակի ցուցիչներից էր 1988 թ. մայիսին դրված Հայաստանի խորհրդարանի նստաշրջանի հրավիրման պահանջը, որն ուղեկցվում էր նստացույցերով, հացադուլներով, մասնատգամավորների հետ բացատրական աշխատանք կատարելով: Ի վերջո ստացվեց այնպես, որ նստաշրջանը գումարվեց պատգամավորների իսկ պահանջով:

Նույնը կրկնվեց 1988 թ. նոյեմբերի վերջին ավելի լայնամասշտաբ ձևով. այդ ժամանակ խորհրդարանի ղեկավարությունը նպատակահարմար չէր գտնում արտահերթ նիստի կայացումը՝ քննարկվելիք հարցերի նկատմամբ այլ վերաբերմունք ունենալու պատճառով, ուստի և նստաշրջանը ժողովրդական պատգամավորների մի զգալի մասի իսկ պահանջով գումարվեց հանրահավաքների կենտրոնավայրում՝ Օպերայի շենքում: Նիստի ժամանակ պատգամավորները մերժում են ԽՍՀՄ-ում ընտրությունների անցկացման նոր օրինագծի և ԽՍՀՄ սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելու մասին հրամանագրի ընդունումը՝ նկատի ունենալով դրանց հակաժողովրդական բնույթը: Նիստի հրավիրումը դեմոկրատական շարժման կենտրոնավայրում և նիստի ընթացքում ընդունված որոշումները ժողովրդի հաղթանակի վկայություններն էին, իրոք ժողովրդավարական խորհրդարանի ձևավորման սկզբի ազդարարում. այդ օրն առաջին անգամ ժողովուրդն ինքն արեց իր ուզած նստաշրջանը, քննարկեց իր ուզած հարցերը, ընդունեց իր ուզած որոշումները և այդ ամենը՝ առանց «վերևների» ներկայության, ինչը ցույց տվեց անդունդի առկայությունը ղեկավարության և ժողովրդի միջև: Սակայն նույն գիշեր Երևանում մտցվում են հատուկ դրություն և պարետային ժամ, իսկ ժողովրդական դարձած

² Հ. Մարության, *Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Յեղասպանության հիշողությունը և Դարաբաղյան շարժումը*, Երևան, «Գիտություն» հրատ., 2009, էջ 22-23:

³ Տե՛ս Н. Эйдельман, «Революция сверху» в России. М., 1989.

խորհրդարանի որոշումները ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները հայտարարում են հակասահմանադրական ու անօրինի:

Այն հանգամանքը, որ այդ միատի ժամանակ Լեռնային Ղարաբաղի հարցը մղվեց երկրորդ պլան, նշանակում էր, որ Շարժումն իրոք ընթանում է վերակառուցման (իրական, այլ ոչ թե գորբաշովյան) ոգով, հոգուտ ընդհանրապես երկրի ժողովրդավարացման, այլ ոչ թե նեղ ազգային շարժում է: Մարդիկ Ղարաբաղի հարցի լուծումը տեսնում էին միայն ողջ ԽՍՀՄ մասշտաբով իրական վերափոխումների մեջ:

բ) Ղարաբաղյան շարժման ժամանակ էր՝ 1988 թ. հոկտեմբերին, որ *առաջին անգամ* Խորհրդային Միությունում, ու թերևս նաև Արևելյան բլոկի երկրներում, տեղի ունեցան *այլընտրանքային ընտրություններ*: Հայաստանի խորհրդարանի պատգամավորներ ընտրվեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Աշոտ Մանուչարյանը և «Գթություն» բարեգործական կազմակերպության ղեկավար Խաչիկ Ստամբոլյանը: Այստեղ նրանք (ինչպես նաև որպես դիտորդներ միատերին հրավիրված Կոմիտեի մի քանի անդամներ) սկսեցին լսելի դարձնել ժողովրդի ձայնը: Խորհրդարանում աշխատելու առաջին ընդամենը մեկուկես ամսվա ընթացքում երկու պատգամավորների ակտիվությունը, և որ շատ կարևոր է, ժողովրդավարական գործընթացներով պայմանավորված ընդհանուր պաթոսն այնքան էական դեր խաղացին խորհրդարանի աշխատանքներում, որ հանգեցրին վերջինիս ընդհանուր ժողովրդավարացման: Գերազանցապես այս հանգամանքով էր պայմանավորված վերը հիշատակված 1988 թ. նոյեմբերի 24-ի նստաշրջանը:

1988 թ. նոյեմբերի 7-ի «շքերթը» և նոյեմբերի 18-ի հարյուր հազարավոր մարդկանց երթը ցույց տվեցին, որ Շարժումն իրոք ուղղորդվում է ներքևից, իսկ Կոմիտեի որդեգրած պայքարի սահմանադրական եղանակը բերեց նրան, որ ժողովուրդն ու նրա պայքարը ղեկավարող Կոմիտեն ունեցավ իշխանություն *դե ֆակտո*, իսկ նոյեմբերի 22-ի և 24-ի խորհրդարանի նիստերը հաստատագրեցին, որ ժողովուրդն ու Կոմիտեն ձեռք բերեցին նաև *դե յուրե* իշխանություն: Այսինքն, պայքարի սահմանադրական եղանակը տվեց իր դրական արդյունքները, չնայած և մերժվեց «վերևից հեղափոխություն» իրականացնող ԽՍՀՄ ղեկավարության կողմից:

Պայքարի սահմանադրական եղանակի արդյունավետության բարձրակետը 1990 թ. մայիս-հունիսի խորհրդարանական ընտրություններն էին, որի արդյունքում ձևավորված խորհրդարանում ոչ-կոմունիստները հասան առավելության, և քվեարկությունների մի քանի փուլից հետո «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Լևոն Տեր-Պետրոսյանն ընտրվեց խորհրդարանի նախագահ: 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունվեց «Անկախության հռչակագիրը», որն սկիզբ դրեց խորհրդային ոճի կառավարում ունեցող երկրից անկախ ժողովրդավարական պետություն կառուցելու գործընթացին:

գ) Ի տարբերություն Մերձբալթյան երկրների, որտեղ շարժումներն սկզբից ևեթ միտված էին անկախության ձեռքբերմանը⁴, Հայաստանում հակախորհրդային տրամադրություններն աճում էին *աստիճանաբար*, ինչը ևս Շարժման՝ ներքևից ուղղորդված լինելու ցուցիչներից է: Նման գործընթացի հիմնական «մեղավորը» ընկալվում էր ժողովրդավարական վերափոխումների կուրս հռչակած ԽՍՀՄ ու ԽՍՀՄ ղեկավարությունն իր քայլերով: Դրանց թվում էին՝ ժողովուրդների «լենինյան» որակվող ինքնորոշման իրավունքի կիրառմանն ընդդիմանալը, սումգայիթյան իրադարձություններին (որոնք մարդկանց գիտակցության մեջ միանշանակ համադրվել էին 1915 թ. ցեղասպանության հետ) քաղաքական ու իրավական գնահատական չտալը, խորհրդային-ռուսական բանակային ստորաբաժանումների պատժիչ գործողությունները Հայաստանում և ԼՂՀՄ-ում, խորհրդային արժեքների նկատմամբ հավատի կորուստը և այլն: Արդյունքներից մեկը ինքնամաքման գործընթացի ձևավորումն էր. 1988 թ. հուլիսից սկսեցին հանձնել կոմերիտական տոմսերը, իսկ 1989 թ.-ից՝ զանգվածաբար դուրս գալ նաև Կոմունիստական կուսակցության շարքերից: Սկսվեց նաև անցյալի ու ներկայի վերագնահատման գործընթաց, ինչը դրսևորվում էր ժողովրդի միակամության արժեքի գիտակցման, ինքնուրույն գործելակերպի հնարավորության նկատմամբ հավատի աճի, հայության հանդեպ ռուս ժողովրդի փրկարար դերի վերաբերյալ դարերի պատմություն ունեցող հավատի սասանման, ռուսական մշակութային ասիմիլյացիայի դեմ պայքարի գիտակցման և ինքնության այլ ձևափոխումների մեջ: Այսինքն, արտաքին և ներքին գործոններով պայմանավորված գաղափարները, ծնվելով ներքևներում, աստիճանաբար հասունանալով, քայլ առ քայլ էին ձեռք բերում համաժողովրդական ընդգրկում:

Հայկական հեղափոխությունն առաջինն էր նախկին ԽՍՀՄ տարածքում ձևավորված ազգային-դեմոկրատական շարժումների և հեղափոխությունների շարքում: Շատ երևույթներ Հայաստանում զարգանում էին ինքնուրույն, պետական մեքենայի հետ դիմակայության պայմաններում, բայց և գործող օրենքների շրջանակներում: Սիս այս պատճառով կարծում ենք, որ Հայկական հեղափոխության հետազոտման ճանապարհով ձեռք բերված գիտելիքը կարող է և առաջարկել նոր, թերևս նրբերանգային տարրեր հեղափոխությունների արդի տեսությունների մեջ:

⁴ Л. Абрамян, А. Марутян, Борьба за национальную независимость в Прибалтике и Закавказье: различия и сходство. — Всесоюзная научная конференция «Межнациональные проблемы и конфликты: поиски путей их решения». Тезисы докладов, Бишкек, 1991, часть 1, с. 36-37.

Որպես կանոն, ցանկացած առաջին երևույթ ունի յուրահատկություններ, որոնց իմացությունը կարող է նոր պարզաբանումներ բերել իրեն հաջորդող իրադարձությունների ուսումնասիրման գործում: 20-րդ դարի վերջում հայ ժողովուրդը պայքարի ելավ ամենագոր խորհրդային կայսրության դեմ և հաղթեց նրան ոչ թե ուժով, այլ ազգային արժեքների վրա հենված ժողովրդավարական, հեղափոխական այնպիսի մի ալիք առաջ բերելով, որն ի վերջո քանդեց Բեռլինի պատը և պատմության գիրկն ուղարկեց կոմունիզմի նկատմամբ ունեցած վախը: Գարաբաղյան շարժումը կամ Հայկական «չճանաչված» հեղափոխությունը մինչ օրս Հայաստանում կամ արտերկրում դեռևս չի դարձել հատուկ հետազոտության առարկա հեղափոխությունների արդի տեսությունների լույսի ներքո, երբեք մասնագիտորեն չի համեմատվել 1980-ականների վերջին - 1990-ականների սկզբին ԽՍՀՄ և Արևելյան Եվրոպայի տարածքում տեղ գտած համանման իրադարձությունների հետ: Ահա սա այն խնդիրներից մեկն է, որ այսօր կանգնած է հայ հասարակագետների առաջ:

Harutyun Marutyan (Armenia)

THE MAIN REGULARITIES OF THE KARABAGH MOVEMENT OR ARMENIAN REVOLUTION (1988-1990)

I believe that the Armenian part of Karabagh Movement was the pioneer of the 1989 Eastern European revolutions. As such, it had a significant importance for democratization of the Soviet society and played an important role in the dismantling of the Soviet Union and hence in the vanishing of the Communism threat. Being the first, this Movement was not noticed, was not perceived as a revolution and as such remained unknown to expert circles.

Լաուրա Մելիքյան (Հայաստան)

ԱՇԽԱՐՀԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԻ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐՈՒՄ

Այսօր ցանկացած ոլորտում կատարած հետազոտությունները բնութագրվում են միջառարկայական մոտեցման բարձր մակարդակով: Հատկապես դա վերաբերում է տվյալ ազգի մտածողության և վարքի վրա հոգեբանական, սոցիալական, մշակութային, պատմական և այլ երևույթների ազդեցությունների հետազոտությանը և այս ամենի արտացոլմանը լեզվում: Ժամանակակից լեզվաբանության մեջ լեզուն ոչ միայն հաղորդակցության և գիտելիքի ստացման ու փոխանցման, այլև ազգի մտածելակերպն ու մշակույթը հասկանալու միջոց է:

Բանն այն է, որ արտահայտությունների ձևավորման գործում մեծ ազդեցություն ունեն մտավոր կատեգորիաները և արժեքային համակարգերը: Այս հեռանկարով լեզվի ուսումնասիրությունը՝ լեզվաբանությունը, շաղկապվում է փիլիսոփայության, հոգեբանության, մարդաբանության հետ, և լեզվաբանության ուսումնասիրության առարկան կառուցվածքայինից դառնում է ընդհանուր հումանիտար՝ լեզուն որպես մշակութային երևույթ:

Յուրաքանչյուր էթնիկ հանրության աշխարհի ընկալումը ցայտուն արտահայտված է ավանդություններում ու սովորույթներում, բանահյուսության, ժողովրդական հավատալիքների մեջ, որոնք բարդ սոցիալական և մշակութային կառուցվածքներ են և ձևավորվում են ազգի պատմական զարգացման ընթացքում:

Այս կապակցությամբ բավական հետաքրքիր է բարենադթանքների ուսումնասիրությունը, որոնք կարելի է դիտարկել որպես ազգային արժեքներն արտացոլող կաղապարներ: Որպես կանոն, դրանք հիմնված են համամարդկային արժեքների վրա՝ միևնույն ժամանակ արտացոլելով տվյալ ազգին հատուկ հոգեկերտվածքը, աշխարհայացքը, բնավորությունը:

Բարենադթանքներում ցայտուն են արտահայտվում ազգային առանձնահատկությունները, սովորույթները, ավանդույթներն ու հավատալիքները:

Բարենադթանքները դասվում են խոսքի էթիկետի խմբերից մեկին¹: Դրանք, բացի առօրյա կյանքում տարբեր երևույթների և իրավիճակների կապակցությամբ օգտագործելուց, կիրառվում են նաև արարողությունների և ծիսակատարությունների ժամանակ:

Բարենադթանքները հետաքրքիր նյութ են ուսումնասիրության համար, հնարավորություն են տալիս թափանցելու լեզվի պատմության, մշակույթի, ավանդույթների և ազգային հավատալիքների

¹ Խոսքի էթիկետի կաղապարները դասակարգվում են ըստ խմբերի՝ ողջույն, հրաժեշտ, շնորհավորանք, հաճոյախոսություն, ցավակցություն և այլն:

մեջ: Հայագիտության մեջ կան մի շարք ուսումնասիրություններ՝ նվիրված հայկական արարողություններին և ծիսակատարություններին²:

Հայկական բարենադրանքների բառարանագիտական վերլուծությունը ցույց է տվել, որ տարբեր հեղինակներ նույն դարձվածաբանական միավորին տարբեր մեկնաբանություններ են տալիս. ոմանք դրանք համարում են բարենադրանք, մյուսները՝ օրհնանք, ինչը, բնականաբար, մեզ թելադրեց կատարել այս երկու հասկացությունների իմաստային վերլուծությունը:

Օրհնանք, օրհնություն բառերի արմատը «օրհն» է, որը, ըստ Հ. Աճառյանի, ծագում է պահլավերեն *afri nam* ձևից՝ «օրհնել», «գովաբանել»: Այն կազմված է «a» նախդիրից և «fri» արմատից /«սիրել», «հարգել»/³:

Հետաքրքրական է, որ «Նոր բառգիրք Հայկագեան լեզուի» բառարանում⁴ «բարենադրանք» բառը բացակայում է, մինչդեռ «օրհն» բառը բացատրվում է որպես «բարենադրանք»: «Բարենադրանք» բառը մենք հանդիպում ենք Ս. Մալխասյանցի Հայերենի բացատրական բառարանում, ինչ վերաբերում է «օրհնել» բառին, ապա այն բացատրվում է որպես «լավը ցանկանալ», «լավը մաղթել»⁵:

Հր. Աճառյանի Հայերենի արմատական բառարանում «օրհն, օրհնություն» բառերը բացատրվում են նաև որպես «բարենադրություն»:

«Մաղթանք» բառը հին գրաբարով նշանակում է «աղոթք», «աղաչանք», «աղերսանք», որտեղից էլ կազմվել են «աղոթել», «աղաչել», «աղերսել» բառերը, մինչդեռ նոր հայերենով «մաղթել» նշանակում է «ցանկանալ լավը», «ցանկանալ բարին», «բարենադրել»:

Ըստ Սարգիս Հարությունյանի՝ «օրհնանքի բանաձևերը» բաժանվում են 2 խմբի՝ օրհնանքներ և բարենադրանքներ: Բարենադրանքները կամ մաղթանքները օրհնանքներից տարբերվում են երկրորդական առանձնահատկություններով⁶: Նպատակ չունենալով այստեղ մանրամասն ուսումնասիրելու այդ տարբերությունները՝ նշենք, որ մաղթանքը իր էությանը և բնույթով հստակ է, ավելի կոնկրետ և իր ստուգաբանական նշանակությամբ ավելի մոտ է «աղերսել», «խնդրել», «թախսանձել» բառերին: Այդուհանդերձ, օրհնանքների և բարենադրանքների ձուլումը դժվարացնում է դրանց տարբերակումը:

Հայերենում գոյություն ունեն մաղթանքների տարբեր խմբեր, որոնք կարելի է բաժանել ըստ թեմաների.

- Ամուսնության դեպքում, հարսանեկան արարողության ժամանակ օգտագործում են, օրհնակ՝ «Աստված միապսակի», «Մի բարձի ծերանաք» և այլն:
- Երեխայի աշխարհ գալու ժամանակ՝ «Աչքդ լույս, բախտավոր գավակ լինի», «Աստված հորով-մորով պահի»:
- Կենցաղային մաղթանքներ.

- Նոր կառուցված տան համար ասում են. «Աստված տունդ շեն պահի» կամ «Տանդ հիմքը հաստատ լինի»:

- Որևէ նոր իր ձեռք բերելու դեպքում ասում են. «Բարով մաշես», «Բարով վայելես», «Ուրախությունով», «Առողջ-անփորձանք», «Ուրախ օրով, կուշտ փորով»:

- Ցավակցություններ.
- «Լույս դառնա», «Լույսի բաժին լինի», «Աստված հոգին լուսավորի», «Դու ողջ լինես»:
- Ծերերին հղվող մաղթանքներ.
- «Լույս դառնա», «Լույսի փայ լինես», «Հոգիդ լույս դառնա», «Հոգիդ դրախտը էթա»:

- Մաղթանքներ կոնկրետ դեպքի կամ իրադարձության համար:

Օրհնակ՝ երեխա ունենալ պատրաստվող կնոջն ասում են. «Աստված բարի ազատում կամ ազատություն տա», «Բարի ազատում լինի», «Մի ձեռով ազատվես», իսկ երեխայի ծնունդից հետո ասում են. «Բարձր բարի լինի»:

- Լավ երգչին բարենադրելիս ասում են՝ «Ձայնդ անսպառ»,
- լավ խոհարարին՝ «մատներդ կանաչի» և այլն:

Ավանդական հայկական բարենադրանքները հիմնված են քրիստոնեական բարքերի արժեքների վրա: Ինչպես շատ ազգերի, այդպես էլ հայերի մոտ մեծ տեղ են զբաղեցնում այն մաղթանքները, որտեղ նշվում է **Աստծո** անունը (Աստված անի, Աստված արեղ երկարե, Աստված բարին կատարի,

² Տե՛ս, օրհնակ, հայկական «Ազգագրական հանդես» (1899-1916) ամսագիրը, որտեղ հարուստ նյութեր են պարունակվում Հայաստանի տարբեր մարզերի ավանդույթների, հավատալիքների, ծիսակատարությունների մասին. այստեղ գետեղված է հարսանեկան, նշանդրեքի և թաղման արարողակարգերի մանրամասն նկարագրություն: Տե՛ս նաև Սարգիս Հարությունյանի «Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ» աշխատությունը /ՀՄՍՀ ԳԱ, Երևան, 1975/:

³ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերենի արմատական բառարան, Երևան, 1979, հ. Դ:

⁴ Տե՛ս Նոր բառգիրք Հայկագեան լեզուի, հ. 1, 1836:

⁵ Տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերենի բացատրական բառարան, Երևան, հ. 1, 1944, հ.2, 1945:

⁶ Ս. Հարությունյան, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, ՀՄՍՀ ԳԱ, 1975:

Աստված կոներիդ ուժ տա, Աստված օջախը շեն պահի և այլն), ինչպես նաև ուրախությանը, հաջողությանը, բարգավաճմանը, երկարակեցությանն ու ապաքինմանը վերաբերող մաղթանքները:

Բոլոր ազգերի մաղթանքներում կարելի է առանձնացնել հիմնաբառեր՝ **կոնցեպտներ**, որոնք արտացոլում են տարբեր մշակութային իդեալներ, ազգի նկարագիրը և գաղափարները: Դրանք իրենց իմաստներում պահում են ազգի փորձն ու բարոյական դիրքորոշումը: Այդպիսի հիմնաբառերը լայն կիրառություն ունեն, բնականաբար, և հայերենում: Որպես այդպիսին, այս հոդվածում առանձնացրել ենք «լույս», «բարի», «արև», «օջախ» կոնցեպտները:

Բարենմաղթանքների վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ «լույս» հասկացությունը ազգային արժեքային համակարգում կենտրոնական տեղ է զբաղեցնում: Այն կապված է «երջանկություն», «ուրախություն», «լավ», «զեղեցիկ» հասկացությունների հետ և ընկած է շատ էթիկետային կաղապարների հիմքում:

- ողջույնի խոսք ասելիս՝ Բարի լույս, Լույս քեզ տեսնողին, Բարի լույսը միշտ քեզ հետ լինի,
- գիշերային «Բարի գիշեր» մաղթանքի ժամանակ որպես պատասխան՝ Լույս բարի,
- ինքն իրեն կամ ուրիշներին շնորհավորելիս՝ Աչքդ լույս, Աչքներդ լույս, Աչքս լույս, Աչքներս լույս,
- ցավակցելիս՝ Լույս իջնի գերեզմանին, Լույսի փայ դառնա և այլն:

Հայկական բարենմաղթանքներում մեծ տեղ է զբաղեցնում «բարի» բառը: Այն օգտագործվում է տարբեր նշանակություններով.

- լավ, գովասանքի արժանի՝ Բարի զավակ լինի,
- հաջողակ, անվտանգ, ապահով՝ Բարի ճանապարհ, Բարի օր, Բարի վայելում,
- հաջողակ, անվտանգ, օգտակար՝ Բարով գնաս, Բարով գաս, Բարով մաշես, Բարով վայելես:

Այսպիսով, «բարի» բառն ասոցացվում է «բարություն», «հաջողություն», «երջանկություն» հասկացությունների հետ և հանդիպում էթիկետի շատ կաղապարներում /ողջույնի խոսքը և դրան հետևող պատասխանը, հրաժեշտի խոսքը, տարբեր առիթներով շնորհավորական խոսքը և այլն/:

«Արև» հասկացությունն իր առանձին տեղն ունի հայերեն մաղթանքներում և փոխաբերական իմաստով նշանակում է «կյանք, գոյություն, ուրախություն»: Այսպիսով, հայերը «կյանք» բառն ասոցացնում են արևի հետ: Օրինակ՝ «Երկայն արև լինես», «Ջրի պես երկայն արև լինես», «Կարմիր արև», «Արևշատություն», «Արևդ երկարի», «Արևդ ապրի», «Աստված երկար /երկայն/ արև կամ կյանք տա», «Աստված կանաչ ու կտրիճ արևդ անվնաս պահի» և այլն:

«Օջախ» հասկացությունը հայերի բարոյական, հոգեբանական և կրոնական գաղափարախոսությունում հատուկ տեղ է զբաղեցնում: Միտքը ընտանիքի գաղափարի մարմնացումն է: Ժողովուրդը ընտանիքը կոչում է «օջախ» (կրակարան): Այս երկու բառերը հոմանիշներ են: Եթե կրակը մարում է, ընտանիքը քանդվում է: Ժողովրդական խոսքում օգտագործվող օրհնությունները, բարենմաղթանքները, անեծքները վերը նշված գաղափարն ունեն: Օրինակ, որպես մաղթանք ասում են. «Օջախիդ մուխն ու ծուխն անպակաս լինի», «Օջախդ չմարի», «Օջախիդ անկոտրում սյուն դառնա որդիդ» և այլն, իսկ անեծքների ժամանակ օգտագործում են «Օջախդ հանգչի, օջախիդ ծուխը կտրվի» և այլ արտահայտություններ:

Հին ժամանակներում խոսք ուղեղիս ասում էին. «Ձեր օջախից ուզում ենք մի կրակ տանել, մեր օջախը վառել»: Պատմական Հայաստանում յուրաքանչյուր ընտանիք ուներ իր օջախը, որը մի սրբավայր էր, և որտեղ էլ տեղի էին ունենում ամուսնական արարողությունները: Օրինակ, երբ գյուղը եկեղեցի չէր ունենում, օջախները ծառայում էին որպես սրբավայրեր: Այսպիսով, օջախը հայերի համար սուրբ վայր է:

Հայաստանի մի շարք մարզերում կարծում են, որ արու զավակը տան սյունն է, օջախը շեն պահողը, ծնողների հիշատակը պահողը: Եթե օջախում արու զավակ չի լինում, ասում են՝ «Մարած օջախ է» կամ «Օջախից ծուխ հանող չի լինի»: Խ.Սամուելյանը նշում է, որ հայկական գաղափարախոսության մեջ խորապես արմատացած է երեխա ունենալու, հատկապես տղա երեխա ունենալու կարևորությունը⁷: Այն իր արտացոլումն է գտնում ազգային բարենմաղթանքներում, օրինակ՝ «Առաջնեկը դոջ/այսինքն՝ տղա/ լինի», «Յոթը որդով սեղան նստեք»:

Հայերենի բարենմաղթանքների բազմակողմանի ուսումնասիրությունը՝ պատմական, մշակութային, սոցիալական, հոգեբանական, լեզվական և այլ տեսանկյուններից հարուստ նյութ է հայ ազգի առանձնահատկության, հոգեկերտվածքի, հոգևոր և նյութական արժեքների վերաբերյալ պատկերացում կազմելու համար:

⁷ Խ.Սամուելյան, Հայ ընտանիքի պաշտամունքը, «Ազգագրական հանդես», գիրք 13, 1906 թ., հ. 1, էջ 123:

REFLECTION OF THE VALUE IMAGE OF THE WORLD IN THE ARMENIAN GOOD WISHES

In the modern linguistics the language is considered not only as an instrument of communication and knowledge, but also as the cultural code of a nation. All peculiarities of culture of the nation, its spiritual world, world outlook, the way of thinking, desires, preferences are reflected in its language which specifically and uniquely fixes the way of life and thinking of the nation.

The paper deals with Armenian good wishes as a reflection of the value picture of the world. General questions concerning Armenian good wishes are viewed from the standpoint of reflection of the Armenian character, mentality, spiritual and material values, desires and preferences.

Special attention is paid to linguistic and cultural concepts of "light", "God", "family/hearth", "Sun", etc.

Հուսիկ Մելիքյան (Հայաստան)

ՄԵՏԱԶՍԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎԱՅՈՑՁՈՐՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վայոց ձորի արշավախումբը տարիներ ի վեր ուսումնասիրում է Եղեգիսի կիրճի պատմահնագիտական հուշարձանները: Հետախուզական աշխատանքների շնորհիվ արշավախմբի կողմից հայտնաբերվել են մի շարք ամրոցներ, որոնք, իբրև պաշտպանական համակարգի մի կարևոր օղակ, մեծ դեր են խաղացել Սյունյաց աշխարհի պատմության մեջ (տե՛ս քարտեզը):

2006-2007 թթ. «հուշարձանների ուսումնասիրություն» ծրագիրն իրականացվել է երկու փուլով: Առաջինում նախատեսվում էր կատարել Եղեգիս և Սուլեմա գետերի հովիտների պատմաճարտարապետական և հնագիտական հուշարձանների վերգետնյա ուսումնասիրություն և դրանց քարտեզագրում: Հետազոտության համար ընտրվել էր Եղեգնաձոր քաղաքի մերձակայքից Մելիմի քարավանատունն ընկած հատվածը: Արշավախումբը երեք ամիս հետազոտել է վերոհիշյալ տարածքի հնավայրերը շուրջ 25 կմ² տարածության վրա: Նշված աշխատանքների արդյունքում լրացումներ են կատարվել Վայոց ձորի պատմահնագիտական և ճարտարապետական հուշարձանների քարտեզի վրա: Գտնվել են բազմաթիվ հուշարձաններ, այդ թվում նաև ամրոցներ, որոնք ապահովել են երկրամասի և հիշյալ ճանապարհների անվտանգությունը: Քարտեզագրման աշխատանքներից զատ տեղում ուսումնասիրվել են նաև հուշարձաններում հայտնաբերված արարքերն և պարսկերեն վիմագրերը:


Պատմահնագիտական հետազոտություններով (Հ. Մանանդյան, Բ. Հարությունյան, Ա. Ժամկոչյան և ուրիշներ)¹ հաստատված է, որ հնում Վայոց ձորը կազմում էր Դվին-Պարտավ միջազգային տարանցիկ առևտրական ճանապարհի կարևոր հատվածներից մեկը:

Այն Դվինից անցել է Շարուրի դաշտ, ապա Վայոց ձորի Արենի, Աղավնաձոր, Գետափ բնակավայրերով, Մելիմի լեռնանցքով՝ Գեղարքունիք, որից հետո՝ Սողքով ընթացել Պարտավ: Այս ճանապարհը ներկայիս Եղեգնաձորի մոտ բաժանվում էր երկու մասի: Մեկն, ինչպես ասվեց, հյուսիսով՝ դեպի Մելիմ, ապա Գեղարքունիք: Այստեղից այն տանում էր հարևան Աղվանքի մայրաքաղաք՝ Պարտավ: Մյուսը՝ արևելքով տանում էր Թավիրզ և Իրանի վրայով դեպի արևելքի երկրներ: Նշված ճանապարհները այն հատվածն էր, որտեղ Եղեգիսը թափվում էր Արփա գետը: Այս վայրը, փաստորեն, երեք մեծ ձորերի միացման վայրն էր: Տարածքի ռազմաստրատեգիական կարևոր նշանակությամբ էլ բացատրվում է ներկայիս Արենի, Աղավնաձոր, Շատին, Գետափ, Ագարակաձոր գյուղերի շրջակա պաշտպանական համակարգը:²

¹ Հ. Մանանդյան, Դվին-Պարտավ հին ճանապարհը, Երկեր, Երևան, 1984, էջ 192-218: Բ. Հարությունյան, Դվին-գծամասը, Պատմա-քանասիրական հանդես, 1968, թիվ 1, էջ 112-220: Ա. Ժամկոչյան, Դվին-Պարտավ ճանապարհը վաղ միջնադարում (V-IX դդ.), «Էջմիածին», 2005, ԺԲ, էջ 40-46:

² Պատմություն նահանգին Միսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, տպ. Ն Աղանեանցի, 1910, էջ 14: Հ. Եղիազարյան, Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Հայպետհրատ, Երևան, 1955, էջ 20, 37, 44, 46, 48, 78: Գ. Մարգարյան, Ա. Խաչատրյան, Վայոց ձոր, «Հայաստան» հրատ., Երևան, 1980, էջ 58-66: Հ. Կարապետյան, Վայոց ձորն ու նրա հուշարձանները. պատմական ակնարկ, «Մուսալեռ տպագրատուն», Երևան, 2012, էջ 113-126:

Արփա և Եղեգիս գետերի կիրճերի պաշտպանական ամրությունները




2006-2007 թթ. գիտարշավի կողմից ուսումնասիրված նորահայտ հուշարձանների ճարտարապետությունը և վերգետնյա նյութերը հիմք են տալիս պնդելու, որ մետաքսի ճանապարհի այս ենթաճյուղի ռազմաստրատեգիական մեծ նշանակությունը գնահատել են դեռևս Ուրարտուի տիրակալները:

Քանի որ աշխատանքների երկրորդ փուլում նախատեսված էր հնագիտական պեղումներ իրականացնել Գետակի մերձակա ամրոցներից մեկում, իսկ դրանց թիվն այստեղ մի քանիսն են, ուստի որոշեցինք համարակալել այդ հուշարձանները թվային հերթականությամբ: Այստեղ էլ կենտրոնացվեցին հնագիտական պեղումները, որոնք շարունակվում են առ այսօր³: Ամրոցը գտնվում է Եղեգիս գետի ափին, 56 մ բարձրությամբ բլրի վրա: Բլրի գագաթին տեղադրված է ամրոցի միջնաբերդը: Հուշարձանը կառուցապատված է տեղանքը առավելագույնս օգտագործելու սկզբունքով: Պարիսպները դրվել են բլրի համեմատաբար հարթ գագաթին՝ հենվելով ժայռեղեն մակերեսների վրա: Այն հատվածներում, որտեղ ժայռերը իրարից հեռու են, միջանկյալ տարածությունը լցվել է լրացուցիչ հիմք-հենապատով, հարթեցվել մակերեսը՝ պարսպի այդ հատվածը տեղադրելու համար: Որոշ հատվածներում էլ հղկվել են ժայռերի անհարթ հատվածները: Ընդ որում, ժայռերը հարթելիս, նրանց տրվել է փոքր թեքություն՝ դեպի ներս, ինչը ևս նպաստակ ուներ նպաստել տեղադրվող պարիսպների հուսալիությանը:

Բլրի գագաթին բացվեց և բավական որոշակիացավ մեծ սրահի հատակագծային պատկերը: Այն ունի 12,20x12,20 մ ներքին տարածք: Սրահի կենտրոնում գետեղված են եղել 2,10 մx2,10 մ չափերի քառակող քարաշար, բավականին ամուր չորս մույթեր, որոնցից լավ պահպանվել են երկու հյուսիսայինները: Բացվել են նաև սրահին կից արևելյան սենյակները: Սրահի հյուսիսային կողմում մառան

³ **H. Melkonyan**, I. Karapetyan N.Yengibaryan, The excavations of the newly found Urartian fortress in Getap, Aramazd, volume V, ISSUE 2 – 2010, p. 90-98, 267-268, 305-315.

Է՝ երկու շարքով իրար կից շարված երեքական, բավականին տարողունակ կարասներով: Պեղումներով բացվել են իրար զուգահեռ ձգվող ամրոցի ամրոցի քարաշար հիմնապատերը, որոնց վրա դրված են եղել աղյուսաշար որմերը: Ընդ որում, նշված հիմնապատերը, տեղանքին հարմարեցված, հորիզոնական հարթություններով սանդղակաձև ձգվում են տարբեր ուղղություններով (տե՛ս հատակագիծը):



Գետափ I ամրոցի մակերեսից և պեղումներով ձեռք բերված խեցեղենը ներկայացնում է ուրարտական, հետուրարտական՝ հին հայկական և միջնադարյան ժամանակաշրջաններին վերաբերող հարուստ տեսականի: Պեղումները ցույց են տալիս, որ հուշարձանի տարածքը բնակեցված է եղել մաև XII- XIVդդ.:

Նորահայտ հուշարձանների մեջ առաջին հերթին կարևորում ենք ուրարտական շրջանի ամրոց-բնակատեղիների արձանագրումն այս հատվածում, որոնց հնագիտական ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռի պատասխան տալ մ.թ.ա. VIII-VII դդ. ուրարտական տիրակալների կողմից դեպի հյուսիս և հյուսիս-արևելք կատարած նվաճումների որոշ մանրամասներ:

Ամրոցների տեղի ընտրությունը պայմանավորված էր հնագույն ժամանակներից Արենի-Եղեգիս ճանապարհ-հանգույցով՝ հարավից և հարավ-արևմուտքից եկող և դեպի հյուսիս ու արևելք գնացող ռազմավարական և առևտրատարանցիկ ուղիների պաշտպանության նկատառումներով և բլուրների գերիշխող դիրքով գետի ավազանի նկատմամբ: Այստեղով էր անցնում հին քարե դարից մինչև միջնադար գործող կարևորագույն ճանապարհը, որի պաշտպանությունն ապահովող օղակներից մեկն էլ հանդիսանում է Գետափ I ամրոցը:

Husik Melkonyan (Armenia)

FORTIFICATION SYSTEM OF THE VAYOTS DSOR KNOT OF THE SILK ROAD

Surveys and excavations of the last years in the territory of Vayots Dzor attest that as an important knot of trade routes this region was appreciated and protected since the time of Urartian kings. The Urartians have not only fortified the valley of the rivers Eghegis and Arpa with an immense network of fortresses but used the territory as military basis for their expansion in northern and eastern directions.

Գայանե Շագոյան (Հայաստան)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՄԱՆԻՔ. ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՊԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Ավանդական ծեսերն ու սովորույթները, ազգային լեզվի հետ մեկտեղ, ազգայնականության և ազգային պետության կայացման հիմնասյուներից են հռչակում ինչպես ազգայնականությունն ուսումնասիրող գիտնականները,¹ այնպես էլ ազգայնական գործիչները՝ յուրաքանչյուրը դրա տակ դնելով տարբեր բովանդակություն: Պատահական չէ, որ լեզվի ուսումնասիրության, հատկապես ստուգաբանության, որոշ գործիքներ սկսեցին կիրառվել նաև ազգագրության և սոցիալ-մշակութային մարդաբանության մեջ: Ազդվելով համեմատական լեզվաբանությունից՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տարածվեց ծեսի վերակազմության մեթոդաբանությունը (հմտ. ֆրանսիական ստրուկտուրալիզմն ու հատկապես խորհրդային նշանագիտությունը՝ մոսկովյան և Տարտուի դպրոցները): Այդ մոտեցումը որոշ իմաստով արխաիկացնում է XIX-XX դդ. գրանցած ծեսերը և այսպիսով հիմք ստեղծում դրանց ազգայնական մեկնության համար (հմտ. «որքան հին, այդքան մաքուր ազգային»): Ի դեպ, հաշվի առնելով, որ մինչև արդիականացում մշակութային փոփոխությունները շատ դանդաղ էին ընթանում, նախաարդիականացման շրջանի մշակույթն իրոք կրում էր զգալի արխաիկ ծավալ: Մյուս կողմից, տարբեր ժողովուրդների ծեսերի վերակազմած իբրև թե արխաիկ կառուցվածքային և իմաստային ընդհանրությունները գրկում էին ծեսը նեղազգային ընթերցման հնարավորությունից: Սակայն գործնականում տեղի էր ունենում բարդ և տվյալների մեծածավալ շտեմարան պահանջող վերակազմության անհիմն պարզեցում: «Ծիսարար մասնագետների» մեծ բանակ սկսում է հորինել «հինավուրց հայկական» ծեսեր՝ այդ թվում հարսանեկան, դրանք հիմնավորելով կիսագիտական կամ ժողովրդական ստուգաբանություններով՝ ձգտելով վերակազմել «հնագույն, իսկական, ճիշտ հայկական» հարսանիքը: Ընդ որում, այս գործընթացը հատկապես ակնառու է հետխորհրդային ժամանակաշրջանում, երբ իսկապես տեղի է ունենում ազգային պետության կառուցումը, և «ազգային» ծեսերի «վերակազմության» ու «ավանդականի» հանրայնացումը ստանում են որոշակի սոցիալական պահանջարկ²:

Սինդեռ Ժ. Դերրիդայի «դեկոնստրուկցիայի»³ (ապակազմության) հիման վրա համանուն մեթոդաբանության կիրառումը հնարավորություն տվեց վերանայել հարսանիքն իբրև «հնագույն ազգային ավանդույթ» կարծրացած պատկերացումը՝ վերակազմելով ոչ թե «իդեալական հարսանիքը», այլ այն վերաիմաստավորող, վերընթերցող, վերադասավորող փորձերն ու միտումները, համադրելով ավանդական հարսանիքի գրավոր նկարագրությունների ու շուրջ 15 տարվա գրանցածս դաշտային նյութը: Ըստ էության կիրառելով լեզվաբանությունից ծնունդ առած մի նոր գործիք՝ տրամասական (դիսկուրս) վերլուծությունը:

Սինչև ասածս օրինակով պարզաբանելը, նշեմ, որ կա մի կարևոր հակադրություն «ազգայինի» և «ազգագրականի» միջև: Եթե ազգայինը ենթադրում է քիչ թե շատ նույնական մշակույթ, ապա ազգագրականին բնորոշ է բազմազանություն՝ գրեթե յուրաքանչյուր բնակավայրի կամ շրջանի մակարդակում, ինչը մերօրյա ազգայնական տրամասության մեջ հաճախ պարզեցվում է, ներկայացվելով իբրև մեկ այսպես կոչված «ավանդական»⁴ տարբերակ: Բազմաթիվ ծեսեր, որոնք այսօր նույնական են Հայաստանի գրեթե բոլոր բնակավայրերում, մոտ 100 տարի առաջ ունեին տարբերակների հարուստ ներկայանակ⁵:

¹ Э. Геллер, *Нации и национализм*, Москва, Прогресс, 1991, с. 123-132.

² Այդ պահանջարկի մասին են վկայում այս շրջանում հրատարակած հայ ավանդական մշակույթին՝ մասնավորապես հարսանիքին և ամուսնությանը նվիրված մենագրություններն ու հեռուստահաղորդումները: Հմտ. Հ. Պողոսյան, Զ. Օրբայան, *Հայկական հարսանիքը հնի և նորի խաչմերուկներում*, Երևան, «ԻնտերԿոմակ», Ռ. Նահապետյան, *Աղձնիքահայերի ընտանիքը* և ընտանեկան ծիսակարգը, Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտ, 2004, Ռ. Նահապետյան, *Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը*, Երևան, Հեղինակային հրատարակչություն, 2007: Գ. Շագոյան, *Յոթ օր, յոթ գիշեր. հայոց հարսանիքի համայնապատկեր*, Երևան, «Գիտություն», 2011 ևն:

³ Ж. Деррида, *Письмо и различие*, Москва, Академический проект, 2000, с. 319-369.

⁴ «Ավանդականի» տակ գիտական ազգագրական գրականությունը հասկանում է հիմնականում XIX դ. վերջում – XX դ. սկզբում արձանագրված ազգագրական իրողությունները: «Ավանդական» հասկացությունը եղել է գիտական բռն ընմարկումների առարկա, որն այսօր մասամբ տեղափոխվել է միջազգային իրավունք՝ մասնավորապես այս կամ այն երևույթը մշակութային ժառանգություն ճանաչելու առիթով (սրա մասին տե՛ս Գ. Շագոյան, *Ոչ նյութական մշակութային ժառանգության խնդիրների շուրջ*, Գիտելիք և խորհրդանիշ, հավատարիք և սովորույթ. Միջազգային չորրորդ գիտաժողովի հովվածների ժողովածու, Երևան, «Նշանակ» հրատարակչություն, 2009, էջ 153-167):

⁵ Դրանց մի մասին առիթ ենք ունեցել անդրադառնալու այլ աշխատանքներում, տե՛ս Գ. Շագոյան, *Թագվերացից՝ կարմիր խնձոր. Կուսության ինստիտուտի «կրոնական» և «ազգային» ծիսականացումը*, Հայ ժողովրդական մշակույթ

Այստեղ կանոնադաշտում հարսանեկան ընդամենը մեկ, առավել տարածված ծեսի՝ փեսայի տան շեմին ափսե կոտրելուն: Այս ծեսը կարելի է «կազմալուծել» մի քանի հատկանիշների ու կոտրում, ինչ է կոտրվում, ով է տրամադրում կոտրվող իրը, որտեղ է այն կոտրվում (հարսի կամ փեսայի տանը), շեմի որ մասում, ինչպես է այն մեկնաբանում ծեսը կատարողը: Ժամանակակից հարսանիքում այս բոլոր հարցերն ունեն գրեթե նույնական պատասխանները կամ նույնացվելու ճանապարհին են: Մինչդեռ ավանդականում, դրանցից յուրաքանչյուրն ուներ առնվազն արձանագրված մի քանի տարբերակներ (ենթադրում են, որ չգրանցվածները շատ ավելին էին): Տեղ խնայելու նպատակով աղյուսակում ներկայացնեն վերոհիշյալ ծեսի բաղադրիչների ընդամենը երկուսի պատկերը, թեև դրանք քանակապես ներկայացուցական չեն, այլ ամփոփում են «ավանդական հարսանիքի» շուրջ 70 գրավոր նկարագրությունների և 1992-2010 թթ. գրառածս մոտավորապես նույնքան հարցազրույցների նյութը (տե՛ս տախտակներ 1, 2):

Այս ծեսի ընդհանուր բնութագիրը կարելի է ձևակերպել իբրև «որևէ մեկը որևէ բան է կոտրում որևէ շեմի մոտ»: Սակայն արտաքինապես այս բնորոշմանը համապատասխանող տարբերակների վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ, կախված առանձին բաղադրիչների փոփոխականներից, փոխվում է ամբողջ գործողության նպատակն ու ծիսական գործառույթը, ինչի մասին վկայում են նաև ծեսը կատարողների բազմապիսի մեկնությունները (տե՛ս տախտակ 3):

Կարճ լինելու համար չեն անդրադառնա վերոհիշյալ բաղադրիչներից յուրաքանչյուրին, միայն նշեն որ «ափսե կոտրելու» ծիսական գործողությունը կարելի է բաժանել մի քանի սեմանտիկ փնջերի. ա) ծեսի այն տարբերակը, երբ հարսի տնից բերած ափսեն կոտրում է ինքը՝ հարսը, ինչպես ցույց է տվել Չ. Խառատյանը, ծիսական գործառույթի իմաստով դասական անցումային ծեսերից է, այս պարագայում կոտրվող ափսեն կարող է խորհրդանշել հարսի և նրա հայրական տան միջև եղած կապը, նման մեկնաբանություն են տվել նաև այս տարբերակը կատարողների մի մասը⁶, բ) տարբերակը, երբ ափսեն կոտրում է միայն փեսան, կարող էր մեկնաբանվել իբրև խորհրդանշական կուսագրվում⁷ կամ առնականությունը չկորցնելու նպատակով արվող մոգական գործողություն⁸, գ) տարբերակ, երբ ծեսի մասնակիցը միայն հարսն է, ով կոտրում է ոչ թե ափսե, այլ պատին նուռ է խփում, որի թափված հատիկներով գուշակում են, թե քանի զավակ է նա ունենալու, այսինքն՝ ծեսի խորհրդանշանային իմաստն է հարսի պտղաբերության և բարեկեցության ապահովումը⁹, դ) այն տարբերակները, որտեղ կա մրցույթ հարսի և փեսայի միջև՝ օրինակ, նրանցից ով առաջինը կկոտրի իր կամ նաև զուգընկերոջ ափսեն, հիշեցնում է նվիրագործման ծեսի փորձություն¹⁰, ե) ափսե կոտրելու որոշ տարբերակներ կարելի է մեկնել որպես հղում փոխարինող զոհաբերությանը¹¹, այս տարբերակն այսօր ամենատարածվածն է, գ) անկախ ծեսը կատարողից, ինքնին կոտրելու գործողությունը մեկնվում է իբրև պայքար և հաղթանակ «չար ուժերի» դեմ (հմմտ. «չարը խափանվեց» ծեսի տարածված բնութագրումը), և որը առասպելաբանական սյուժեի մակարդակում աղերսվում է նախորդ զոհաբերության մեկնության հետ¹²:

Այս ծեսի ժամանակակից տարբերակում առաջացել է մի նոր բաղադրիչ, որին նախկինում ուշադրություն չէին դարձնում, կամ դրան չէին անդրադառնում գրավոր աղբյուրներում: Խոսքը կոտրված ափսեի փշուրների մասին է, որոնց հանդեպ ձևավորվել է ծիսական որոշակի վարք: Թեև ոմանք դրանք աղբի հետ գցում են, սակայն շատերն այս փշուրներն ընկալում են որպես վտանգավոր ծիսական մնացորդ, որի միջոցով հնարավոր է թուղթ ու գիր անել, ուստի դրանք թաղում են որևէ գաղտնի տեղում կամ գցում հոսող ջուրը (ճիշտ այնպես, ինչպես վարվում են «բացված» թուղթ ու գրի հետ): Ուշագրավ է, որ փշուրները չտարածելու համար (և՛ չկոտրվելու, և թուղթ ու գիր չանելու

XV, Եր., 2010, էջ 345-358; Գ. Շագոյան, *Инварианты и трансформация армянской свадьбы* (диссертация на соискание степени к.и.н.), Ереван, ИАЕ НАН РА, 2009; Գ. Շագոյան, *Յոթ օր, յոթ գիշեր*:

⁶ Մ. Սարգսյան, *Մերաստիս գավառի ազգագրական նյութերը*, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ-ԱԲԱ, ֆ. 121/1, 1991, էջ 147; Տ. Կարապետյան, Երևանը XX դ. առաջին քսամյակում (ակնամտեսի աչքերով), ՀԱԻ - ԱԲԱ, Մ.Մ. 1/112, ֆ. 54, 1982, էջ 101; Դաշտային ազգագրական նյութեր (այսու՝ ԴԱՆ) 2007, Բոնակոթ, Հաղարծին:

⁷ Մ. Մանասարյան, *Կարևո նահանգի ազգագրական նյութեր*, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ-ԱԲԱ, թղթապանակ 121, (ծեռագիր) (34), Մաս VI, 1965, էջ 108:

⁸ Բ. Խաչիկեան, *Մեր գյուղը Խանաձառ (Մերաստիս հայ գյուղերը՝ 1915 էն առաջ)*, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ-ԱԲԱ 10/94, 1979, ֆ. 50, էջ 121:

⁹ Գ. Գյոզայան, Մուսա լեռան ազգագրությունը, Երևան, «Գիտություն», 2001, էջ 205; Մ. Սարգսյան, նշվ. աշխ. էջ 147; Բ. Թովթիկ, *Վանի Հայոց-ձոր շրջանի Հնդստան գյուղի կյանքից (կենցաղային պատկեր)*, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ-ԱԲԱ 6/6, 7/7, ֆ. 47, N 328, էջ 66; ԴԱՆ 2007, Թալին:


¹⁰ Բ. Խաչիկեան, նշվ. աշխ. էջ 121; հմմտ. Բենսե, Բուլանդիս կամ Հարք գաւառ, «Ազգագրական հանդես», Ե. գիրք, 1899, N 1, էջ 114:

¹¹ Հմմտ. «Կոտրի քյասեն՝ ապրի փեսեն» արտահայտությունը, որը հաջորդում է բռնցքով ափսե կոտրելու փեսայի գործողությանը: Մ. Ավագյան, Արճակ, Հայ ազգագրություն և բանահյուսություն 8, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1978, էջ 68:


¹² Տե՛ս Գ. Շագոյան, *Инварианты и трансформация армянской свадьбы*, с. 134-140:

պատճառով) ավիսների տակ սկսեցին փռել մի կտոր, որի մեջ փաթաթելով փշրանքները միանգամից դարձնում էին մյուսների համար անմատչելի: Ընդ որում, այս տարբերակի տարածմանը նպաստում է ավիսների այսօրվա զարդածևր՝ առնելով թափանցիկ կտոր-պատյանի մեջ, որն ըստ էության կատարում է նախկինում ավիսների տակը փռած կտորի դերը: Այս փշուրների մեկ այլ ընկալում էլ կա. դրանք «վարագվելով» հարս ու փեսայի բախտավորությունից, ձեռք են բերում այլոց ապագան գուշակելու կարողություն: Հենց այդ պատճառով չամուսնացած աղջիկները կոտրած ավիսի փշուրները դնում են բարձի տակ՝ հուսալով երագում տեսնել ապագա գուգրնկերոջը: «Ափսե կոտրել» ծեսի այս զարգացումը լավագույնս ցույց է տալիս, թե որքան փոփոխական կարող է լինել ծեսի իմաստային հենքը, երբեմն էլ՝ կախված պատահական հանգամանքներից (օրինակ՝ զարդարելու տեխնոլոգիայից):

Տախտակ 1.



Տախտակ 2.



Այս օրինակով փորձեցինք ներկայացնել մեկ ծեսի մեկնության հնարավոր ուղիները, պնդելով, որ ծիսական վերակազմությունների անարդարացի պարզեցումն հարուստ ժառանգությունից ընտրելով մեկ տարբերակ, ըստ էության խեղաթյուրում են ծեսի և՛ ձևը, և՛ բովանդակությունը:


Այսօրվա «հայկական հարսանիք» ապակազմության փորձը հանգեցրեց ավելի շատ խորհրդրդային և հետխորհրդային, քան ավելի վաղ շրջանների, զարգացումներին: Խորհրդային շրջանում տեղի է ունենում հայկական հարսանիքի արդիականացում մի քանի իմաստներով: Առաջինը՝ այն դառնում է ավելի քաղաքացիական, դուրս մղելով եկեղեցու կարգավորիչ դերակատարությունն ու մի շարք ծեսեր, կրոնական ոլորտից տեղափոխվում են քաղաքացիական ոլորտ (սկսած ՔԿԱԳ-ում ամուսնության գրանցումից մինչև առագաստ մտնելու իրավունքը¹³): Մյուս կողմից՝ խորհրդային շրջանում սկսվեց «ազգային» հարսանիքի ձևավորումն այն իմաստով, որ Հայաստանի Հանրապետության սահմանների ներսում համեմատաբար զարգացած հաղորդակցությունն ու բնակչության մոբիլությունը, ինչպես նաև մայրաքաղաքի ազդեցության գործոնը նպաստեցին միատեսակ հարսանիքի առաջացմանն ու տարածմանը՝ ներառելով գլոբալացված «սպիտակ հարսանիք» որոշ տարրեր միջնորդավորված ռուսական ազդեցությամբ:

Հետխորհրդային հարսանիքի արդիականացման տրամաբանությամբ ընթացող զարգացումը հանգեցրեց նրան, որ այսօր ունենք «ազգային», իմա՝ «նույնական» հարսանիք գրեթե ամբողջ նորանկախ ՀՀ-ի տարածքում և մասամբ էլ սփյուռքում, ինչը ձևավորվեց ի հաշիվ տեղական ծեսերի բազմազանության ոչնչացման (տե՛ս տախտակ 1, 2), մասամբ զարգացնելով որևէ տեղական տարբերակ՝ այն դարձնելով համահայկական, մասամբ էլ ներմուծելով գլոբալացված «սպիտակ հարսա-

¹³ Գ. Շաղոյան, *Թագվերացից՝ կարմիր խնձոր*, 345-358:

նիքի» այսօրվա միջազգային շուկայի ազդեցությամբ քելադրված ծիսական առարկաներն (հմմտ. «տարտիկները», հարսի ծաղկեփունջը ևն) ու դրանք ուղեկցող ծեսերը¹⁴:

Տախտակ 3



Խորհրդային և «գլոբալացված սպիտակ հարսանիքների» առանձին ծեսեր ձևավորվել և տարածվել են՝ միախառնվելով և միմյանց վրա ազդելով: Ուշագրավ է, որ անկախ ծեսի առաջացման շրջանից և աղբյուրից, դրա հանրային «լեգիտիմություն» այսօր որոշվում է միայն «ազգային» ճանաչվելու պարագայում՝ որի տակ հիմնականում հասկանում են «ավանդական» ու «հնագույն հայկականը»՝ անկախ տվյալ գործողության ծիսական, սոցիալական և գեղագիտական գործառույթներից¹⁵: Այսինքն արդի ամուսնական ծեսի ձևավորությունն ակնհայտորեն պայմանավորվում է գերիշխող՝ ազգայնական տրամասությամբ (դիսկուրսով):

Gayane Shagoyan (Armenia)

ARMENIAN WEDDING: FROM RECONSTRUCTION TOWARDS DECONSTRUCTION

The comparison of the written sources and fruitful fieldwork data for doing the reconstruction analysis of the Armenian wedding in fact exposed the potential and possibilities its deconstruction (in term of J. Derrida). Decomposition of the wedding complex into the separate ritual components let to follow the process of their rearrangements, changes of their ritual functions and forming different interpretations depending on the ritual actor and the cultural and political context of wedding rites functioning. So the structural methodological toolset in case of reforming the ultimate research goal could be used as an effective means for the post-structural analysis and work in the post-modernism paradigm as well.

¹⁴ Գ. Շագոյան, Հարսանիքն իբրև հայ ինքնության խորհրդանիշ և հայ ինքնության խորհրդանիշները հայոց հարսանիքում, Հայ ժողովրդական մշակույթ XIV. Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Երևան, «Գիտություն», 2007, էջ 232-237:

¹⁵ Գ. Շագոյան, Թագվերացից՝ կարմիր խնձոր, 345-358:

**ԸՆՏԱՆԻՔԻ ՆԱՀԱՊԵՏՈՒ
ԵՎ ՆՐԱ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ
(ՀԱՅ-ՄԻՋԱԳԵՏՔՅԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ)**

1. Ընդունված է կարծել, որ հին հնդեվրոպական համայնքը կազմակերպված էր հայրիշխանական մեծ ընտանիքների ձևով, նահապետի՝ ընտանիքի հոր գլխավորությամբ, որի շուրջն են համախմբվել նրա արական ժառանգները իրենց ավելի փոքր «բջջային» ընտանիքներով (ընդհանրապես, Եվրասիայում մնամատիկ հայրագիծ (պատրիլինեալ), համայնքային տիպի ընտանիքները առավել տարածվածն են՝ 43%)¹: Տան, ընտանիքի և կլանի նահապետը կոչվում էր *pot(i)- «տեր, ամուսին» արմատով՝ *dems-pot- «տան տեր», *wik'-pot- «կլանի առաջնորդ (տեր)»²:

Հայկական նահապետական ընտանիքը, որը պահպանվել էր մինչև XVIII-XIX դդ., սովորաբար կոչվել է ազգ: Այն ընտանեկան մի խումբ էր, որը ներառում էր մի քանի՝ սովորաբար վեց-յոթ, հազվադեպ՝ ութ սերունդների ընտանիքներ, վայրընթաց և կողմնային ճյուղերով, ծագած մեկ նախահորից, որի անունով է կոչվել ազգը³: Միևնույն ժամանակ ազգ տերմինը նշանակում է նաև «ժողովուրդ»: Նույն նշանակությունն ունեն նաև նահապետական ընտանիքի համար օգտագործվող մյուս անվանումները (ցեղ, տուն և այլն):

Լեզվաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ հայերենում ոչ մի հին ազգակցության տերմին չի անհետացել, բացի մեկից, մինչդեռ մյուս հնդեվրոպական լեզուները կորցրել են շատ ավելի շատ, կամ մույնիսկ բոլոր տերմինները⁴: Հայերենը ո՛չ արխաիկ, և ո՛չ էլ պահպանողական լեզու է. այն կորցրել է իր հնդեվրոպական բառապաշարի մի սովոր մասը: Այդ բացառիկ պահպանվածությունը կարող է վկայել, որ հայկական ավանդական ընտանիքը լավագույնս է պահպանել հնդեվրոպական նահապետական ընտանիքի կառույցը:

Ըստ ազգային ավանդության, Հայկ նահապետը գալիս է Հայաստան իր հսկայական նահապետական ընտանիքով՝ որդիներով, դուստրերով, որդիների որդիներով, ու հարած մարդկանցով, թվով մոտ երեք հարյուր հոգի (Խորենացի, Ա. Ժ): Դա հայոց ավանդական ընտանիքի հնագույն՝ առասպելական նախատիպն է: Նահապետի անունով հայ է կոչվել նրա սկզբնական ազգ-ընտանիքը, ապա՝ դրանից սերված ազգ-ժողովուրդը: Հայ ազգը, այսինքն՝ Հայկի ժողովուրդը ընկալվել է որպես Հայկի նախնական՝ առասպելական ընտանիքի ժառանգորդը՝ ընթացիկ վիճակը:

Հայկական որոշ բարբառներում տարիքով կանայք իրենց ամուսիններին կոչում են հայ անվանումով⁵ (հմմտ. հատկապես մեր հայը արտահայտությունը «իմ ամուսինը, մեր ընտանիքի գլխավորը» իմաստով)⁶: Այդ բառը կարող է ստուգանվել հնդեվրոպական հիշյալ «տեր, տանտեր, ամուսին» արմատի *poti-yo- ածանցյալից (> *haphi- > *haji- > հայ ճանապարհով): Դրա հետ պետք է կապվեն և հայ ցեղանունն ու Հայկ դիցանունը: Վերջինս՝ հնդեվրոպական *-ko-n ածանցով, որը բաղադրվել է իրանական ծագման փոքրացուցիչ-փաղաքական -իկ ածանցի հետ՝ Հայկն (Հայկի անունով կոչվող Օրինո համաստեղության անվանումն է), Հայ-իկ > Հայկ (նվազական ածանցի համար հմմտ. Աստղիկ դիցանունը)⁷: Ավելացնենք, որ Հայկի մշտական նահապետ կոչման երկրորդ մասը ծագում է *poti-ի իրանական արտացոլումից⁸:

2. Արդեն շումերական ժամանակներից հին Միջագետքում հայտնի էր ընդարձակ ընտանեկան համայնքը՝ նահապետական ընտանիքը, որը միավորում էր հոր կողմից ընդհանուր ծագմամբ, հողատիրության և միասնական տնտեսական կյանքով ապրող մեկից ավել ընտանեկան-ամուսնական բջիջներ: Այդ ընդարձակ ընտանիքի գլուխը՝ նահապետը, կոչվում էր lugal «տեր» (բառացի՝ «մեծ տղա-

¹ Mallory J. P., Adams D. Q. Encyclopedia of Indo-European Culture. London, Chicago, 1997, p. 193.

² St'ya, օրինակ, Бенвенист Э. Словарь индоевропейских социальных терминов. М., 1995, с. 75 сл., 144.

³ Карапетян Э. Т. Родственная группа «азг» у армян. Ереван 1966, с. 25.

⁴ Bonfante, G. The Armenian Family Terminology. International Symposium on Armenian Linguistics. Yerevan, 1984, p. 29.

⁵ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Գ. Երևան, 2004, էջ 238:

⁶ Այս արտահայտության վերաբերյալ տե՛ս հատկապես Խաչատրյան Հ., Ամուսին հասկացության բառանվանումները հայերենի բարբառներում, «Գիտություն և տեխնիկա», 2003, 1, էջ 19:

⁷ Այս ածանցի վերաբերյալ տե՛ս Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 238:

⁸ Հայկի անվան այս մեկնաբանության վերաբերյալ տե՛ս Petrosyan, A.Y. The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic. Washington D.C., 2002, p. 58, 61, 161. Petrosyan A. Y. Forefather Hayk in the Light of Comparative Mythology. - Journal of Indo-European Studies. 2009. Vol. 37. № 1-2, p. 157-158: Հայ ցեղանվան տարբեր ստուգաբանությունների վերաբերյալ տե՛ս Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, էջ 284: Իր վերջին աշխատություններում Ջահուկյանը ընդունում էր հայ ցեղանվան և Հայկի անվան ծագումը հնդեվրոպական *poti-ից (տե՛ս, օրինակ, Джаукян Г. Б. О соотношении хайасского и армянского языков. - Историко-филологический журнал, 1988, 1, с. 68), ինչը վերացնում է լեզվաբանական հատուկ հիմնավորման անհրաժեշտությունը:

մարդ», հմմտ. lu «տղամարդ» և gal «մեծ»), նա ngal «մեծ տան» ղեկավարն էր: Շումերերենում lugal բառը նշանակել է նաև «տեր, ինչ-որ բանի սեփականատեր», ապա՝ «տիրակալ, արքա» և օգտագործվել նաև աստվածների համար⁹:

Հայերենում ընտանիքի համար կա ևս մեկ տերմին՝ տեր «աշխարհիկ և հոգևոր տեր, աստված», որը ստուգաբանվում է որպես *տի-այր՝ տի «մեծ» և այր «տղամարդ» բառերից¹⁰: Կա և տանուտեր «ընտանիքի և գերդաստանի գլուխ»¹¹: Հայերեն ազգակցության տերմինաբանությունը, ինչպես ասվեց, ամենալավ պահպանվածն է հնդեվրոպական լեզուների մեջ, բայց տեր «մեծ այր» բարդությունը չունի հնդեվրոպական զուգահեռներ: Այդ բառի ստեղծումը կարող է բացատրվել այն հանգամանքով, որ դրա համար եղած *pot(i)- արմատով կոչումները, *poti-ի ցեղանուն դառնալուց հետո, դարձել էին երկ- իմաստ և կարող էին խառնաշփոթ առաջացնել (հայ «մահապետը», այսպիսով, պահպանվել է միայն որոշ բարբառներում):

Ինչևէ, Հայկական լեռնաշխարհին հարևան հին և նոր լեզուներում ևս շումերերեն lugal «մեծ այր, տեր» բառի կառուցվածքային զուգահեռներ չկան: Մինչդեռ տի «մեծ» տարրով եղած մյուս երկու բառերը ևս՝ տիկին և տիեզերք, թվում է, թե զուգահեռներ ունեն շումերերենում (հմմտ. ningal «մեծ տի-կին», kurgal «մեծ երկիր, Շումեր»):

3. Աբադերենում ընտանիքի մահապետը կոչվել է bēlu «տեր» (սեմական b' և նույնիմաստ արմատից): Այդպես են կոչվել նաև իշխանավորները, արքաները¹²: Այդ բառն օգտագործվել է որպես մեծ աստվածների մակդիր կամ անուն (հատկապես Բաբելոնի մեծ աստված Բել-Մարդուկի համար): Հենց այդ աստվածն է, որ առասպելում հանդես է գալիս որպես Հայկի հակառակորդ, ընդ որում, Բելը գործառույթներով նույնական է Հայկին, նույն կերպարի բացասական «հայելային անդրադարձը»¹³: Հատկանշական է, որ Հայկը սպանում է Բելին նետով՝ այնպես, ինչպես բաբելոնյան տիեզերածնության առասպելում Մարդուկն է սպանում իր հակառակորդ Տիամատին: Այսինքն՝ Հայկը հայկական առասպելում ունի այն դերը, ինչ բաբելականում (Բել) Մարդուկը: Այսպիսով, Հայկի անունը և կերպարը համապատասխանում են նրա հակառակորդի՝ Բելի անվանը և կերպարին:

4. Մեր թեմայի տեսակետից հետաքրքիր է հին խուռիական նյութը, հայտնի հատկապես Առապխայից (Հայկական լեռնաշխարհի հարավում), առավել ևս, որ նույն սոցիալական պատկերը, կարծում են, բնորոշ է եղել մ.թ.ա. II հազարամյակի ողջ Առաջավոր արևելքին: Խուռիական հողագործ բնակչությունը ապրում էր ընդարձակ ընտանեկան համայնքներով, որոնք, ըստ աբադերեն աղբյուրների, կոչվում էին bītu «տուն», ʾnūqihūdim dimtu բառացի՝ «աշտարակ»՝ «ամրացված տարածք, շրջան» իմաստով, իսկ համայնքների ղեկավարը՝ bēl dimti¹⁴ (տները, հավանաբար, աշտարակաձև էին): Ընդարձակ ընտանիքի մահապետը խուռիերեն կոչվում էր ewri «տեր», որը հետագայում ձեռք է բերել նաև «արքա» նշանակությունը (սրան ուրարտերենում համապատասխանում է նույնական ewri «տե-րը»): Ընտանիքներն ունեին իրենց ամբողջական հողային ֆոնդը՝ ewru (աբադական հաղորդմամբ՝ ebiru, eburu), որը գտնվում էր ewri-ի տիրապետության տակ: Որոշ առավել թույլ ընտանեկան խմբեր կարող էին իրենց հպատակությունը հայտնել հարևան առավել ուժեղ ընտանիքի ewri-ին: Այսպիսի ընտանիքների խումբը կարող էր ձևավորել նոր միավորում՝ գյուղ, որը, կամ որոնց միավորումը, իր հերթին, կարող էր աճելով վերածվել քաղաքի կամ քաղաք-պետության¹⁵:

Այս հիմնարկեյան, հատկապես խուռիական մահապետական ընտանիքի պատկերը միանգամայն համապատասխանում է Հայկի ընտանիքին: Այսպես, Հայկի անունը, ինչպես տեսանք, նշանակում է «տեր, մահապետ», նա ինքը հայոց մախնական, առասպելական ընտանիքի մահապետն է (*poti-): Հայկի հետևորդները, ինչպես և նրա տիրապետության տակ եղած երկիրը կոչվում են Հայք («հայեր, Հայաստան»), Հայկի հետ նույնարմատ անվանումով՝ ինչը հիշեցնում է խուռիական ewri «տեր, մահապետ» և ewru «մահապետի հողային ժառանգական տիրապետություն» տերմինների հարաբերությունը: Հայկին և նրա ժառանգներին իրենց հպատակությունն են հայտնում տեղական ավելի թույլ կազմակերպված բնակիչները (Խորենացի, Ա. Ժ, ԺԲ), Հայկի սերունդները, բազմանալով և միավորվելով, սկիզբ են դնում Հայք պետությանը:

Բաբելոնից Հայաստան անցնելու ճանապարհին Հայկը սկզբից հանգրվանում է մի լեռան մոտ, որը հետագայում թողնում է իր թոռ Կադմոսին: Հայկի այս առաջին հանգրվանը հայկական աղբյուր-

⁹ Gelb, I. Household and Family in Early Mesopotamia. - State and Temple Economy in the Ancient Near East. Louvain, 1979, p. 68; Westenholz A. The Sumerian City-State. - A Comparative Study of Six City-State Cultures: Copenhagen, 2002, p.34-35.

¹⁰ Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1979, էջ 401-403:

¹¹ Նոր հայկազյան բառարան, հ. 2, Երևան, 1981, էջ 843:

¹² Chicago Assyrian Dictionary. Chicago-Gluckstadt 1956 ff., Vol. 2, p. 192 ff.

¹³ Ahyon S. Les débuts de l'histoire d'Arménie et les trois fonctions indo-européennes. - Revue de l'histoire des religions, 1982, CIC-3, p. 270-271; Petrosyan A. Y. Forefather Hayk in the Light of Comparative Mythology, p. 160.

¹⁴ Chicago Assyrian Dictionary. Vol. 3, p. 144, 147.

¹⁵ Дьяконов И. М. Предыстория армянского народа. Ереван 1968, с. 60-64. Ewri և ew(u)ru բառերը բխեցվում են միևնույն արմատից, որպես, համապատասխանաբար, «տեր» և «տիրապետություն» (տե՛ս և Chicago Assyrian Dictionary. Vol. 4, p. 415; Laroche, E. Glossaire de la langue hourrite. Revue hittite et asianique. T. XXXIV-XXXV. Paris, 1976-77, p. 85-87):

ների Կադմեաց տունն է (ասորեստանյան աղբյուրների Kadmuhi/ Katmuhu երկիրը)¹⁶, իսկ լեռը՝ Կորդվաց լեռը (ասոր. Նիբուր, հայ. Կորդվաց Արարատ, քուրդ. Ջուդի դաղ): Մ.թ.ա. II-I հազարամյակներում այստեղի Kummē /Qumēnu երկիրը խուռա-ուրարտական ամպրոպի/ փոթորկի աստված Թեշուր/ Թեյշեթայի պաշտամունքի կենտրոնն էր: Վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայկը էպիկական անդրադարձն է հայոց հին ամպրոպի աստծու, որը նույնացվել է Թեշուրի հետ¹⁷: Այդ են վկայում նաև անվանական և տերմինաբանական ուղղակի համընկումները: Այսպես, խուռիական դիցաբանության մեջ ewri «տերը» հիմնականում Թեշուրի կոչումն է (երբեմն կիրառվել է նաև այլ մեծ աստվածների համար)¹⁸, միանգամայն համապատասխան Հայկի անվան ստուգաբանությանը *poti-ից: Հայկի երկրորդ որդի Խոռը անունով նույնական է Թեշուրի կառքի երկրորդ ցլիկին՝ Hurri-ին (կարդալ՝ Խոհը): Ըստ այդմ, նրանց էպոնիմը հայոց առասպելում առնչվել է Հայկի, իսկ խուռիականում՝ Թեշուրի առասպելներին¹⁹: Խորենացին Հայկի ընտանիքը կոչում է աղխ տերմինով, որը, հավանաբար, խուռիական փոխառություն է²⁰:

5. Բերված հայ-շումերական գուգահեռը կառուցվածքային է: Տեր բառը կարող է պատճենված լինել շումերերենից կամ ձևավորվել նրա հետ ինչ-որ ընդհանուր աղբյուրի հիման վրա (տիպաբանական նմանությունը ևս տեսականորեն հնարավոր է, բայց տարածաշրջանի այլ լեզուներում նման բարդություն հայտնի չէ): Հայկական և աքադական ընդհանրություններն առավել էական են՝ ընտանիքի մահապետի դիցաբանական արտացոլումները համարյա նույնական են՝ «հայելային անդրադարձներ», որոնք առասպելում հակադրված են իրար: Հայ-խուռիական կապերը ցույց են տալիս ոչ միայն ընդհանուր կառուցվածք և զարգացում. հայկական և խուռիական ավանդույթները, կարելի է ասել, ներթափանցվել են իրար մեջ, իսկ կերպարները՝ նույնացվել: Հայկը նույնացվել է Թեշուրին, խուռիների էպոնիմը հանդես է գալիս որպես Հայկի զավակ՝ նա մտել է հայոց հին ազգ-ընտանիքի կառույցի մեջ:

Ավաճի հիման վրա հնարավոր է հետևյալ եզրակացությունը: Հայերենի կրողները հնուց ի վեր բնակվել են մեր տարածաշրջանում, թերևս՝ շումերներից ոչ հեռու, աքադերենի կրողների հարևանությամբ, խուռիերենի կրողների հետ միասին և իրենց են ձուլել վերջիններիս:

Armen Petrosyan (Armenia)

THE PATRIARCH OF FAMILY AND HIS MYTHOLOGICAL REFLECTION (ARMENIAN-MESOPOTAMIAN EARLY ASSOCIATIONS)

In Armenian ethnogonic myth, Hayk the forefather of Armenia is represented as a patriarch of a large patriarchal family. His name, most probably, is derived from Indo-European *poti- 'lord, patriarch of family'. In Akkadian and Hurrian traditions the patriarchs of families were also called 'lord' (bēlu and ewri, respectively). Those terms were used as the epithets of the great gods – Babylonian Marduk and Hurrian Teshub. Notably, in the myth Bel the Babylonian (= Bel-Marduk) is represented as the adversary of Hayk. On the other hand, it may be shown that Hayk was identified with Teshub. Thus, one can constate that the image of Hayk, the patriarch of the first (mythic) Armenian family, corresponds with the Akkadian and Hurrian great gods, the patriarchs of the families of gods. Among the Indo-European languages the Armenian kinship terminology is the most preserved, yet the other Armenian term for the patriarch tēr < ti-ayr 'great man' does not have Indo-European parallels. It is comparable with the Sumerian lugal 'great man; patriarch of family, lord'. The other words with the component ti 'great' – tikin 'lady' ('great women') and tiezerk 'universe' ('great edges /margins') may also have parallels in Sumerian, cf. Sumer. ningal 'great lady' and kurgal 'great land; Sumer'. This would evidence the early associations of Armenian with the ancient languages of Mesopotamia.

¹⁶ Այս երկրի մասին տե՛ս Reallexikon der Assyriologie, Bd 5. Berlin 1980, S. 487-488:

¹⁷ Հմայակյան Ա., Հայկ մահապետի մասին առասպելն ու Կիբլա քաղաքը Նիբուրի լեռներում. Պատմաբանասիրական հանդես, 1992, 1, էջ 125-132. Petrosyan A. Y. Forefather Hayk in the Light of Comparative Mythology, p. 160-161:

¹⁸ Laroche E. Glossaire de la langue hourrite, p. 86.

¹⁹ Պետրոսյան Ա., Հայոց ազգաձագման հարցեր, Երևան, 2006, էջ 63, 88, հարցի գրականությամբ:

²⁰ Дьяконов И. М. Предыстория армянского народа, с. 68, 77, прим. 7 (այս տերմինի վերաբերյալ տե՛ս և Martirosyan, H.K. Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon. Leiden-Boston, 2010, p. 25 f.):

Համլետ Պետրոսյան (Հայաստան)

ՀՈՒՇԱՐՁԱՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ.
ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Տիգրանակերտի հնագիտական հետազոտությունը հայ մշակութային ժառանգության հայտնաբերման, հետազոտության, հանրահռչակման և այն ներկա մշակութային գործընթացի մաս դարձնելու վերջին տարիների ամենահաջող ձեռնարկներից է: Դա քաղաքական նախաձեռնություն էր՝ ցույց տալու հայկական և միջազգային գիտական և քաղաքական շրջանակներին, որ աղբյուրաբանական «պատմական էքսկուրսներն» այն մասին, թե հայերն Արցախ են եկել ընդամենը 19-րդ դարում, զուտ քաղաքական առասպել է: Այդ նախաձեռնության շրջանակներում 2005թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախումբը ձեռնամուխ եղավ նշված տեղանքի հնագիտական հետազոտությանը¹:

Հավաքած տվյալները բավարար էին, որպեսզի հաջորդ տարի՝ 2006թ., ձեռնարկեինք երկշաքայա հետախուզական պեղումներ, որի արդյունքում հայտնաբերվեց քաղաքի Ամրացված թաղամասի հյուսիսային պարսպապատը, Միջնաբերդի պարիսպ-հենապատը, վաղքրիստոնեական բազիլիկան: Հաջորդ տարիներին պեղվել են մ.թ.ա. առաջին – մ. թ. 13-րդ դարերին վերաբերող, մոտ յոթանասուն հազար հեկտար քաղաքի Ամրացված թաղամասի հարավային պարսպի մոտ 450մ ձգվող ժայռափոր հիմքերը, նրա վերնամասում գտնվող Միջնաբերդը, հյուսիսային պարսպի մինչև 5մ բարձրություն ունեցող և մոտ 220 մ ձգվող հատվածը, Անտիկ առաջին թաղամասը, Կենտրոնական թաղամասի վաղքրիստոնեական հրապարակը՝ զույգ եկեղեցիներով, կոթողներով և դամբարաններով հանդերձ: Հետախուզական պեղումներ են կատարվել Ամրացված թաղամասի ու Կենտրոնական թաղամասի մի քանի հատվածներում, վաղքրիստոնեական դամբարանադաշտում, Արքայական աղբյուրների անմիջական շրջակայքում: Հետազոտվել են նաև քաղաքի մերձակայքում գտնվող Արևելյան անտիկ դամբարանադաշտը, Պաշտամունքային-քարայրային համալիրը, նրա ստորոտով անցնող ժայռափոր ջրանցքը, Խաչենագետի ձախ ափին գտնվող վաղմիջնադարյան ամրոցը²: Պեղումները խիստ ծավալուն են, հուշարձանը լրացուցիչ մաքրվում է՝ տեսանելի դարձնելու այն նաև շատ հեռվից, փորձում ենք պահպանել լանդշաֆտային տեսքը, ինչը նշանակում է բացառել ժամանակակից որևէ օբյեկտի տեղադրում ոչ միայն հուշարձանի տարածքում, այլև նրա մերձակայքում, եթե այն կարող է խաթարել ամբողջական ընկալումը:

Մշակութային ժառանգությանն ուղղված մեր քաղաքականության հաջորդ բաղադրիչը կարելի է համարել հանրահռչակմանն ուղղված միջոցառումները՝ մոտ մեկ տասնյակ ցուցահանդեսների կազմակերպում Արցախում, Հայաստանում, մեկ անգամ Շվեյցարիայում, հրատարակություններ, այդ թվում և ֆրանսերեն և անգլերեն լեզուներով, ինտերնետային կայքի ստեղծում, ֆեյսբուքյան էջի ստեղծում, հեռուստա-ռադիո մի քանի տասնյակ հաղորդումներ, ի վերջո, Տիգրանակերտի հնագիտական թանգարանի ստեղծում հենց հուշարձանի տարածքում³: Երկուս ու կես տարիների ընթացքում թանգարանն ունեցել է մոտ 45 հազար այցելու: Չնայած Լեռնային Ղարաբաղը միջազգայնորեն ճանաչված պետություն չէ, և շատ երկրների կառավարություններ խորհուրդ չեն տալիս իրենց քաղաքացիներին այցելել, թանգարանի այցելուներից մոտ 8 հազար հինգ հարյուրը սփյուռքահայեր են, 4500՝ ոչ հայեր, որոնց մեջ շատ են հատկապես Շվեյցարիայի, ԱՄՆ-ի, Կանադայի և Ֆրանսիայի քաղաքացիներ: Արդյունքում Տիգրանակերտն այսօր ամենաշատ այցելվող, ինտերնետում լայնորեն ու մանրամասնորեն ներկայացված, հանրությանն առավել քաջածանոթ հուշարձանն է Արցախում: Այն ոչ միայն նպաստում է Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգության հանրահռչակմանը միջազգային և ազգային

¹ Հ. Պետրոսյան, Ժ. Խաչատրյան, Ա. Փիլիպոսյան, Վ. Սաֆարյան, Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները - Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը, Երևան, 2006, էջ 361-365:

² H. Petrosyan, L. Kirakosyan., V. Safaryan, A. Zhamkochyan, R. Vardanyan, I. Karapetyan, T. Vardanesova The discovery and first results of archaeological investigation of Tigranakert in Artsakh, 2005-2009. - *Archaeology of Armenia in Regional Context*, Yerevan, "Gitutyun", 2012, p. 223-235. Հ. Պետրոսյան, Լ. Կիրակոսյան, Վ. Սաֆարյան, Ա. Ժամկոչյան, Ռ. Վարդանյան, Ի. Վարապետյան, Տ. Վարդանեսովա, Արցախի Տիգրանակերտի հետազոտության հիմնական արդյունքները. 2005-2009թթ. - Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2005-2010թթ., Ստեփանակերտ, 2011, էջ 3-23: H. Petrosyan La Tigranakert d'Artsakh. - *Les douze capitales d'Arménie*, Marseille, 2010, pp. 105-109. Հ. Պետրոսյան, Լ. Կիրակոսյան, Մշակութային հետազոտություններն Արցախում, Երևան, 2009, էջ 24-48: Հ. Պետրոսյան, Ա. Ժամկոչյան, Հայերեն արձանագրություններով սկավառակ Արցախի Տիգրանակերտից, «Պատմաբանասիրական հանդես», 2009, թիվ 1, էջ 166-176: H. Petrosyan Archaeological Research in Tigranakert. - *AIEA Newsletter*, 2007, N 42, p. 31-38.

³ Հ. Պետրոսյան, Լ. Կիրակոսյան, Տիգրանակերտի հնագիտական թանգարանը, *Թանգարան*, Երևան, 2010, թիվ 2, էջ 130-132:

առումով, այլ տեղաբնակների մեջ ամրապնդում է հպարտության զգացումը, նրանց ավելի կապում աշխարհագրական միջավայրին, դառնում նրանց սրբազան կենտրոնը:

Տիգրանակերտի հնագիտական հետազոտությունների համար Լեռնային Ղարաբաղի կառավարությունը տարեկան հատկացնում է մոտ 50 հազար ԱՄՆ դոլար, որի գերակշիռ մասը ծախսվում է երկամյա պեղումների վրա: Արշավախումբն այլ ֆինանսական միջոցներ չունի: Հետազոտության ընցացքում օգտագործվող ողջ թվային տեխնիկան՝ համակարգիչներ, թվային լուսանկարչական ապարատներ, տպիչ, սկաներ, պրոյեկտոր, ՋԻ ՊԻ էս, պատկանում է արշավախմբի անդամներին: Նույնը կարելի է ասել <http://tigranakert.am/> կայքի մասին, որ պահում ենք մեր միջոցներով: Միայն այս վերջին չորս տարիներին մենք Հայաստանի Գիտության պետական կոմիտեի շատ ծանր մրցույթում շահած գիտական թեմայի ֆինանսավորմամբ կարողացանք ձեռք բերել մեկ համակարգիչ և մեկ տպիչ սարք, մեկ լուսանկարչական սարք: Կարելի է ասել, որ Տիգրանակերտի քարոզչությունը հաջողված քարոզչություն է, բայց, ինչպես տեսնում ենք, այն դժվար է որակել որպես պետական քարոզչություն:

Այս ֆոնի վրա ուշագրավ է աղբբեջանական արձագանքների քննությունը: Այն կարելի է բնութագրել որպես անլրջությունից դեպի զգաստացում, փաստերի անտեսումից մինչև դրանց ընդունման ու մեկնաբանության գործընթաց, որի քննությունն օգնում է հասկանալ նաև սեփական ձեռնարկումների հաջողության և անհաջողության պատճառները: Առաջինը դա օպերատիվությունն է. 2006 թ. պեղումներից անմիջապես հետո աղբբեջանական մամուլն ու կայքէջերը հայտնում էին մեր պեղումների մասին: Այդպես է մինչև այսօր՝ սկսած ֆինանսավորումից, պեղումների տևողությունից, արշավախմբի եզրակացություններից: Սկզբում միայն կատակներ, քամահրանք, որ կարելի է անվանել առաջին փուլ: Երկրորդ փուլում արդեն փորձում էին մի քիչ լրաջանալ և միայն քաղաքական պատասխաններ փնտրել մեր նախաձեռնությունների մեջ: Միանում է նաև Աղբբեջանի ակադեմիան, որը հատուկ որոշում է ընդունել Տիգրանակերտի պեղումների վերաբերյալ,⁴ ընդ որում այդ որոշումը տեղադրվել էր նաև Աղբբեջանի ազգային անվտանգության նախարարության կայքում: Այսօր ինտերնետային կայքերում Տիգրանակերտի ամենավերջին պեղումների արդյունքները ներկայացված են մի քանի տասնյակի հասնող գրառումներով, հարյուրավոր նյութերի ու կառույցների լուսանկարներով: Եվ հիմա դժվար է աղբբեջանցի հետազոտողի համար պնդել, թե այնտեղ քաղաք չկա, անհնար է պնդել, թե դա անտիկ քաղաք չէ, ավելին, այսօր հողվածներ են գրում նույնիսկ այն մասին, որ եղել է նույնիսկ Տիգրանակերտ քաղաքը, բայց այն եղել է ոչ թե հայկական, գտնվել է մի այլ տեղում և այլն⁵: Աղբբեջանական այս վերջին մեկնաբանությունները ես համարում եմ մեր ակնհայտ հաջողությունը, որը ձեռք է բերվել ակադեմիզմից քայլ իսկ ետ չգնալու, հնագիտական փաստերն աղեկվատ ներկայացնելու, սնապարծ կամ միտումնավոր քննություններից խուսափելու արդյունքում:

Աղբբեջանցի ընդդիմախոսները հաճախ են շեշտում, թե արտասահմանյան հետազոտողները չեն համագործակցում մեզ հետ, որովհետև չեն վստահում մեր գիտական բարեխղճությանը: Աղբբեջանցի մեր կոլեգաներն անշուշտ գիտեն, որ նման համագործակցության բացակայության պատճառը զուտ քաղաքական է, մշակութային ժառանգության խնդիրներով զբաղվող միջազգային կառույցները և առանձին երկրների պետական համապատասխան հաստատությունները խուսափում են այդ համագործակցությունից, որովհետև Լեռնային Ղարաբաղը միջազգայնորեն ճանաչված պետություն չէ: ՅՈՒՆԵՍԿՕ-ն երկու անգամ հրաժարվել է ընդունել ազատագրված տարածքների և ի մասնավորի Տիգրանակերտի շրջակայքի բոլոր հուշարձանների, ներառյալ և մահմեդական հուշարձանները, չեզոք, զուտ մասնագիտական ինտերնետային պորտալ ստեղծելու իմ նախագծերը՝ միայն մեկ պատճառաբանությամբ՝ այդ տարածքներին վերաբերող մշակութային ծրագրերը քննարկման չեն ընդունվում: Անշուշտ մենք համագործակցում ենք ասպարեզի որոշ մասնագետների հետ, որպես օրինակ նշեմ հայագետ-հռոմեագետ Փարիզ 4 համալսարանի պրոֆեսոր Զուստո Տրախնային, ով երկու անգամ այցելել է Տիգրանակերտ, 2012թ. հունիսին Տիգրանակերտ են այցելել Միլանի պոլիտեխնիկի մի խումբ ճարտարապետներ, որոնք զբաղվում են հնագիտական միջավայրի վերկանգնմամբ: 2013թ. հնագիտական պեղումներին մասնակցել են Ֆլորենցիայի համալսարանի ասպիրանտներ Ֆրաչեսկա Քելին և Սառա Չամպին: Սակայն դրանք կրում են անձնական բնույթ: Ինձ մի քանի նամակ է գրել Հայաստանի բրոնզեդարյան և երկաթեդարյան հուշարձանների հայտնի հետազոտող, Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր, հնագետ Ադամ Սմիթը, ով հորդորել է դադարեցնել պեղումները, իբր դրանք չեն նպաստում «երկու ժողովուրդների հաշտեցմանը»: Ստացվում է, որ քաղաքական իրավիճակը նաև գրկում է Ղարաբաղի ժողովրդին մշակութային կյանքով ապրելու իրավունքից, իրավունք, որը սահմանված է մարդու իրավունքների համընդհանուր կոնվենցիայով, և որի բաղկացուցիչներից մեկն էլ սեփական մշակութային ժառանգությունը մշակութային կյանքի ակտիվ բաղադրիչ դարձնելն է:

⁴ Очередная фальсификация армян или «поиски Тигранакерта» на оккупированной территории Агдамского Азербайджана. - <http://www.science.gov.az/ru/news.php?id=1467>.

⁵ М. Халилов О локализации албанского Тигранакерта – *IRS Heritage*, 2007, 4, с. 31-33.

Հայաստանի գիտական և մտավոր հանրույթը Տիգրանակերտի խնդրում աչքի է ընկնում հայտնի բազմակարծությամբ: Օրինակ, հայտնի հայագետ պրոֆեսոր Բաբկեն Հարությունյանը գտնում էր, որ Արցախի Տիգրանակերտը հիմնել է ոչ թե Տիգրան Մեծը, այլ Տիգրան Երվանդյանը: Նա այս կարծիքը հայտնում է նաև Տիգրանակերտին նվիրված ֆիլմում⁶: Նշենք, որ պեղումները երևան են բերել մ.թ.ա. առաջին դարում կառուցված քաղաք, և պնդել, թե այն հիմնադրվել է մի քանի հարյուր տարով ավելի վաղ, առանց լուրջ գիտական ապացույցների և այն էլ Արցախի Տիգրանակերտին նվիրված ֆիլմում, նշանակում է ուղղակի կասկածի տակ առնել Արցախի Տիգրանակերտը: Քիչ չեն նաև ուղղակի սիրողական կամ զավեշտալի մոտեցումները: Դարաբաղի Զբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վարչության աշխատակից Սլավա Սարգսյանը պնդում է, թե Տիգրանակերտի տեղական անվանումը՝ Տկռակերտը, որևէ կապ չունի Տիգրանակերտ անվան հետ. այն մոնղոլների կողմից 13-րդ դարի կեսերին կառուցված մի քաղաքի ավերակներն է, որը կոչվում էր Դառանյուրտ:⁷ Տիգրանակերտին հաճախ են դիմում քաղաքագետները՝ թերագնահատելով կամ գերագնահատելով պատմական ճշմարտության դերակատարումը քաղաքական խնդիրների լուծման հարցերում, ազգայնականները, որոնք երազում են Տիգրան Մեծի մասն արքայի վերադարձը, հումորիստները, որոնք հայտարարում են, թե Տիգրանակերտում համակարգչային դետալներ են գտել և այլն: Այս ամենը նախ և առաջ նշանակում է, որ հասարակությունը քաջամանոթ է մեր հայտնագործությանը, այն ընդունում է որպես նշանալի մի հուշարձան: Մշակութային քաղաքականությունը վերջին տասնամյակներում աշխարհում փոխում է իր հիմնական հասկացությունն ու նպատակային ընկալումը: Մարդու մշակութային իրավունքը և մշակության դեմոկրատիայի ընկալումը որպես մարդուն ուղղված քաղաքականություն, լայն տարածում են գտնում: Այս տեսակետից Տիգրանակերտի հայտնագործման ու հետազոտության ամենամեծ արդյունքն այն լայն ժողովրդականությունն է, որ վայելում է այս հուշարձանը, այն հազարավոր մարդկանց հոսքն է, ներառյալ միջազգային ու հայրենի քաղաքական գործիչները, որ գալիս է այստեղ՝ ամենևին նկատի չունենալով, թե ինչ չափով է սա պետական միջոցառում կամ թե հայրենի գիտնականները, այդ թվում և ես, ինչ լրջությամբ են այն ներկայացնում և ինչ կասկածներ են հայտնում: Տիգրանակերտի հայտնագործումն ինձ և իմ ընկերների համար սկզբում ներկայանում էր որպես մի նախաձեռնություն, որով ուզում էինք պատասխանել Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևի այն հայտարարությանը, թե հայերն Արցախում հայտնվել են տասնիններորդ դարում: Բայց այսօր այն ներկա մշակութային առաջընթացի ազդակներից մեկն է, և ցանկացած քաղաքականություն պետք է հաշվի նստի այս իրողության հետ:

Hamlet Petrosyan (Armenia).

THE MONUMENT AND THE SOCIETY: TIGRANAKERT OF ARTSAKH.

The archeological research of Tigranakert is one of the most successful undertakings to uncover, research and make public the Armenian cultural heritage. This is facilitated by large excavations, preservation of the details and topographical face of the monument as well as the whole publicity around the monument – creation of a website, different publications, regularly organized exhibitions, as well as the establishment of an archeological museum of Tigranakert on the territory of the monument. As a result, Tigranakert is the most visited as well as widely presented on the internet and publicly recognized monument in Artsakh today. The reaction of Azerbaijan is interesting in the context of the Armenian-Azerbaijani conflict. Politically this is the petition to international organizations, ban of the visit to Azerbaijan of those foreigners who have visited Tigranaker, threats. Scientifically this can be described as a process starting from ignoring to acceptance and interpretation of excavations. The publicity process around Tigranakert brought to light various issues from the diversity of the Armenian scientific society to amateur and boastful scientific research, from the policy toward cultural heritage to various issues with the state policies of science and culture, the examination of these issues is one of the main topics of the report as well. Another interesting aspect is the attitude of the people who resettled in the surrounding to the monument villages after their home communities were occupied by Azerbaijan. Tigranakert became the object of their pride, geographical and sacred environment.

⁶ Նկատի ունենք 2010թ. նկարահանված «Տիգրանակերտ. վերադարձող քաղաք» փաստավավերագրական ֆիլմը (ռեժիսոր Ռուբեն Գրիգորյան):

⁷ Ս. Սարգսյան, Տիգրանակերտ. նորահայտ տեղավայրի մասին, *Ազատ Արցախ*, 31 մայիսի 2010թ.:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՎԻՍԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐԸ

Հայոց վիմագրական ժառանգության մեջ աղբյուրագիտական բացառիկ նշանակությամբ աչքի են ընկնում իրավականոնական բնույթի արձանագրությունները: Մեր համոզմամբ դրանք հիմնականում կարելի է բաժանել երեք խմբի:

Առաջին խմբում միավորում ենք այն վիմագրերը, որոնք արտացոլում են միջնադարյան եկեղեցական ու աշխարհիկ իրավական նորմերի կիրառական գործընթացները: Դրանք ներառում են եկեղեցական-դավանաբանական խնդիրները, ընտանեկան-ամուսնական հարաբերությունները և հիմնականում միտված են հասարակական կյանքում ազգային և ավանդականի պահպանման կամ վերահաստատման անհրաժեշտության գիտակցմանը:

Երկրորդ խմբում են կազմում երկրորդ իրականացվող հարկային քաղաքականության զանազան գործառնություններին վերաբերող վկայագրերը: Դրանց բովանդակային գլխավոր առանցքը հարկերից ազատման կամ թեթևացման և հարկահանության կանոնակարգման հիմնախնդիրներն են:

Երրորդ խմբում ընդգրկված վիմագրերը, որոնց անդրադառնում ենք սույն զեկուցման մեջ, իրենց բնույթով ու նշանակությամբ առավել կարևորվում են հայ եկեղեցու կառուցվածքային համակարգի, ի դեմս եպիսկոպոսական թեմերի կամ վիճակների ստեղծման կամ հաստատման, գործունեության կազմակերպման ու կանոնակարգման հիմնահարցերի ուսումնասիրման համար:

Հայոց մեջ եպիսկոպոսական աթոռների գոյությունը չնայած փաստված է դեռևս մ.թ. առաջին դարի կեսերից, սակայն կազմակերպված համակարգ ստեղծվեց Գրիգոր Լուսավորչի կողմից, որը տարբեր գավառներում կառուցեց վանքեր, յուրաքանչյուր երկրամասի ու նախարարական տան համար ձեռնադրեց առանձին անկախ եպիսկոպոսներ¹:

Վաղ միջնադարում եպիսկոպոսական աթոռների գոյության ու թվաքանակի մասին հիշատակություններ են պահպանվել Ագաթանգեղոսի և ավելի ուշ դարերի պատմիչների երկերում՝ Սամուել Կամբջաձորեցի, Ուխտանես, Ստեփանոս Օրբելյան և այլք: Մոտավոր հաշվարկներով, արդեն IV դարի I կեսին Հայաստանում եղել է գրեթե 60 եպիսկոպոսական աթոռ²:

Ընդհանուր առմամբ, մինչև XI դարը հայ եկեղեցու եպիսկոպոսական աթոռների, դրանց վիճակների սահմանների ու հարկատու բնակավայրերի և աթոռակալ առաջնորդների թվաքանակի վերաբերյալ վկայություններ պահպանվել են միայն մատենագրական սկզբնաղբյուրներում: Դրանք սակավախոս են, երբեմն հակասական: Այդ իրողության պատճառով ոչ միայն սկզբնաղբյուրների «թերացումն է», այլ նաև այն հանգամանքը, որ ժամանակի ընթացքում թեմերի քանակը իրապես փոփոխվում էր, ստեղծվում էին նորերը, իրար էին միացվում կամ բաժանվում հները: XI դարից խնդրո առարկայի աղբյուրագիտական հենքը որոշակի հարստանում ու վավերականանում է շնորհիվ թեմային վերաբերող վիմական արձանագրությունների: Պահպանվել են մոտ մեկ տասնյակ արձանագրություններ, որոնք վերաբերում են եպիսկոպոսական աթոռների կամ թեմերի ստեղծմանը, դրանց վիճակների սահմանների փաստագրմանը:

Ժամանակագրական առումով ամենավաղը Բջնիի եպիսկոպոսական աթոռի և նրա վիճակի ստեղծման ու հաստատման արձանագրությունն է՝ գետեղված Ս. Աստվածածին եկեղեցու հարավային դռմին, թվագրված 1031թ.: Իր տեսակի մեջ այս վկայագիրը դասական օրինակ է, որում հստակ նշված են բոլոր անհրաժեշտ իրողությունները. Պետրոս Գետադարձ հայոց կաթողիկոսի հրամանը՝ համաձայնեցված Հովհաննես-Սմբատ արքայի հետ, հռչակավոր ռազմաքաղաքական և մշակութային գործիչ Գրիգոր Մագիստրոս Վասակյանի կողմից Ս. Աստվածածին եկեղեցու հիմնադրումը և, վերջապես, աթոռին ենթակա տարածքների սահմանային աշխարհագրական միավորների մատնանշումը: Որպես եպիսկոպոսական վիճակի աշխարհագրական սահմաններ նշված են Փոշեհան, Նիգ գավառները և Ախուրյան, Աղստև ու Ծար գետերը: Այստեղ խնդրահարույց են Փոշեհանքը և Ծար գետը: Փոշեհանքին և նրա տեղորոշմանն անդրադարձել ենք մեր նախորդ մի հոդվածում, ուստի այստեղ կներկայացնենք միայն վարկածային բնույթի եզրակացությունը. Փոշեհանքը համապատասխանում է Վայոց ձոր, Ուրծ և Վեղի գավառներին սահմանակից, մինչև VII դ. Արած կոչված գավառին:

Մյուս խնդիրն առնչվում է «Ծար գետ»-ին: Ծար անունով հայտնի են ավան, գավառ (Արցախ աշխարհի Վայկունիք գավառի միջնադարյան անվանումը): Կարելի է ենթադրել, որ Ծար է կոչվել այդ ավանով անցնող Թարթառ գետի վտակներից մեկը: Այն հանգամանքը, որ Բջնիի թեմի վիճակի արևելյան սահմանը կարող էր հասնել մինչև նշյալ Ծար գետը՝ այնքան էլ անհավանական չէ, նկատառելով մյուս սահմանային կետերը՝ Ախուրյան, Աղստև գետերը, Արած-Փոշեհանք գավառը: Այս

¹ Պիոն Հակոբյան, *Հայագիտական ուսումնասիրություններ*, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 2003, էջ 9:

² Նույն տեղում, էջ 31:

խնդրում, կարծում ենք, անուղղակի փաստարկ կարող է դիտվել Գրիգոր Մագիստրոսի կողմից իր նամակներում (ուղղված Գագիկ Բ արքային և իր փեսա Թոռնիկ Մամիկոնյանին) Ծար ավանի կամ գավառի քանիցս հիշատակումը, օրինակ. «Ասեմ քեւ ի մերում սեփականին իսկ յԱղուանեանն աշխարհի աւանն կոչեցեալ Ծար»:

Ծար անունով ոչ թե գետ այլ բնակավայր որպէս Բջնիի թեմի Կոտայք գավառում գտնվող վիճակներ հիշատակում է Սիմէոն Երևանցին. «Արտագաքան, Մեղուս, Դալուար, Բջնի եւ Ծար»³ գյուղերը: «Ջամբռ»-ի պատմաաշխարհագրական ծանոթագրություններում, ներկայացնելով Նիգ գավառի գյուղերը, Գ. Բաղայանը Ծարը համեմատելով Բջնիի նշյալ արձանագրության համանուն գետի հետ, գտնում է, որ այն «գտնվել է Բջնու հարեւանությամբ՝ Հրազդանի ձորում»: Մեկ այլ ծանոթության մեջ նույն հեղինակը Ծարը նույնացնում է ներկայիս Կոտայքի մարզի Ջառ գյուղի հետ:

Բջնիի թեմը դառնում է Արևելյան Հայաստանի ամենախոշոր ու համբավավոր թեմերից մեկը և պատահական չէ, որ 1114թ. Սև լեռան վանքում գումարված եկեղեցական ժողովում որոշում է ընդունվում, որ այդուհետ Հայոց կաթողիկոս ընտրվելուն առաջնահերթ հավանություն տվող չորս եպիսկոպոսական աթոռների առաջնորդների թվում էր նաև Բջնիի թեմակալը: Այդ հռչակի առհավատչյա կարելի է դիտարկել նաև այն իրողությունը, որ դեռևս V դարից գոյություն ունեցող Արարատյան թեմը, առնվազն XIII դարի առաջին կեսից միավորվում է Բջնիի թեմին: 1270թ. տեղի ունեցած Ջազավանի եկեղեցական ժողովի գլխավոր դեմքերից մեկն էր Բջնիի և Խոր Վիրապի եպիսկոպոս Գրիգորը:

Հաջորդ երկու արձանագրությունները վերաբերում են Հաղբատավանքին:

Մասնագիտական գրականության մեջ, կարծում ենք վերջնականապես, ապացուցված է, որ Հաղբատավանքը հիմնադրվել է 976թ. Հայոց Խոսրովանույշ թագուհու կողմից⁴: Որպես առաջին վանահայր 991, 996, 997, 1004, 1005թթ. հիշվում է վանքի ս. Նշան եկեղեցու հիմնադիր-կառուցող հայր Սիմէոնը, որը մի խումբ վանականների հետ Հաղբատ էր տեղափոխվել Սանահինից: Այնուհետև վանքն առաջնորդել են հայր Հովսեփը՝ 1008թ. և հայր Հովհաննեսը՝ 1067թ.: Մատենագրական ու վիմագրական սկզբնաղբյուրների հաղորդումներով 976-1060-ական թթ. վանքում գործել է սովոր միաբանություն, սակայն այնտեղ դեռ չէր ձևավորվել թեմ և եպիսկոպոսական աթոռ-նստավայր: Այս կապակցությամբ կարևոր վկայություն է պահպանվել Կիրակոս Գանձակեցու երկում, որտեղ խոսվում է Հաղբատում եպիսկոպոս ձեռնադրելու և եպիսկոպոսական աթոռ ստեղծելու մասին: Պատմիչն անդրադառնում է Բարսեղ եպիսկոպոսին Հաղբատում Հայոց կաթողիկոս ձեռնադրելուն⁵, միաժամանակ մատնանշում է. «զԱրագիս ոմն դրան երեւց Կիրիկէի՝ ձեռնադրեն եպիսկոպոս Հաղբատայ և յայնմհետէ եղև աթոռ եպիսկոպոսի»:⁶ Բարսեղի կաթողիկոս ընտրվելուն անդրադարձել է նաև Մատթեոս Ոռհայեցին: Ըստ նրա հաղորդման՝ Կյուրիկեն «ի յամի ՇԼ (1081)» հավաքում է «զեպիկոպոսունս Աղուանից աշխարհին ... ի վանքն, որ կոչի Հաղբաթ, ձեռնադրեցին զտէր Բարսեղ կաթողիկոս յԱթոռ սրբոյն Գրիգորի ի վերա ամենայն աշխարհին Հայոց, հրամանաւ Կիրիկէ թագաւորին...»:⁷ Պատմիչների այս հաղորդումները փաստում են առնվազն երեք կարևոր իրողություն. վանքի հիմնադրումից մոտ 100 տարի հետո միայն առաջնորդ է ընտրվում նորոժյա եպիսկոպոս, միաբանությունը ստանում է եպիսկոպոսական թեմի կենտրոն-աթոռանիստի կարգավիճակ և ձեռք է բերում այնպիսի մեծ հռչակ, որ այստեղ է օծվում Ամենայն հայոց կաթողիկոսը:

Հաղբատի մեծահամբավ վանական միաբանության պատմությունը հիշյալ դարերում (հատկապես XI-XII) ունեցել է զարգացման ու ետընթացի, անհայտության ու հռչակվածության ժամանակաշրջաններ: Վայրընթացների տարիները ուղեկցվել են վանական միաբանության թուլացմամբ, թեմի եպիսկոպոսական վիճակների, վանքապատկան կալվածքների, նույնիսկ թեմի կենտրոնի կարգավիճակի կորուստներով:

Հաղբատավանքի վիմագրերում առկա են երկու բավական եղծված վիմագրեր, որոնք առնչվում են վանքի եպիսկոպոսական աթոռի վերահաստատման հետ: Ժամանակագրորեն առաջինը փորագրված է ս. Նշան եկեղեցու արևմտյան մուտքի վերևում, մեծ գավթի մեջ, բաղկացած է 22 տողից: Վիմագիրը քանիցս հրատարակվել է, սակայն եղծվածության պատճառով վերծանությունը խիստ թերի է: Վերջին, անհամեմատ հմտալից վերծանությունը Կ. Ղաֆադարյանինն է,⁸ մասամբ լրացված Ս. Սա-

³ Սիմէոն Կաթողիկոս Երևանցի, *Ջամբռ*, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ.Գ. Համբարձումյանի, պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրությունները և քարտեզները՝ Գ.Մ. Բաղայանի, «Մուղնի» հրատ., Երևան, 2003, էջ 398:

⁴ Կարո Ղաֆադարյան, *Հաղբատ*, ՀՍՍՌ- ԳԱ հրատ., Երևան, 1963, էջ 13:

⁵ Բարսեղը, փաստորեն, 1081թ. (օծման տարին), մինչև 1105թ. (Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի մահը) հանդիսացել է վերջինիս աթոռակիցը, իսկ մինչև 1113թ. «միանձնյա կաթողիկոս» (Կ.Մաթևոսյան, *Անի*, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997, էջ 49):

⁶ Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայոց*, Երևան, 1961, էջ 98:

⁷ Մատթեոս Ոռհայեցի, *Ժամանակագրություն*, (աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Հ. Բարթիկյանի), Երևան, 1991, էջ 236

⁸ Կարո Ղաֆադարյան, *Հաղբատ*, էջ 144:

դումյանի կողմից⁹։ Արձանագրությունը թվագրված չէ, սակայն մոտավոր ժամանակը կարելի է որոշել վրաց Դավիթ Շինարար թագավորի հիշատակմամբ (1089-1125թթ.)։ Կ. Ղաֆադարյանը գտնում է, որ «արձանագրությունը գրված է 1110 թվականին կամ քիչ հետո, երբ Դավիթ Շինարարը թուրքերից խլեց Սամշուլեն և Հաղբատը»¹⁰։ Դավիթ Շինարարի կողմից խնդրո առարկա տարածքների ազատագրման թվական նշվում է նաև 1118թ.¹¹։ Արձանագրության առաջին հրատարակիչ Հովհաննես Ղրիմեցին բնագրի վերջում վերծանել է ՇՀ (1121) թվականը, ինչը, կարծում ենք, անհարիր չէ վկայագրի, մասնավորապես Դավիթ թագավորի ժամանակաշրջանին¹²։ Մենք առավել հակված ենք արձանագրությունը թվագրել 1118-1121թթ.։ Վիմագրի շատ հատվածներ խիստ եղծված են, և բովանդակային տեսակետից դժվար է որևէ ամբողջական միտք առանձնացնել, սակայն վերծանվող որոշ բառեր և արտահայտություններ թույլ են տալիս ընդհանուր գաղափար կազմել արձանագրության բնույթի և նպատակաւորվածության մասին։ Հենց վերջիններիս առկայությունն է, որ հնարավորություն է տվել Կ. Ղաֆադարյանին նշելու, որ վկայագիրը «վերաբերում է վանքում (եպիսկոպոսական) աթոռ հաստատելուն (ավելի ճիշտ՝ վերահաստատելուն)»¹³։ Անշուշտ, այստեղ խոսք կարող էր գնալ աթոռի և վիճակի վերահաստատման մասին, քանի որ, ինչպես վերևում նշեցինք, վանքն այդ կարգավիճակն ստացել էր դեռևս 1081թ.։

Հաղբատավանքի մյուս արձանագրությունը բովանդակային և պահպանվածության տեսակետներից՝ առավել խոսում է։ Այն մի շրջաբերական է, արձակված վանքի առաջնորդ Բարսեղ եպիսկոպոսի և վարդապետների կողմից 1180թ., որով «վերահաստատվել և Հաղբատի վանքին է վերադարձվել նրա առաջնորդական վիճակը»¹⁴։ Չորրորդ տողում «գիրեանց պապանցն գիրամանսն» բառակապակցությամբ հավաստվում է, որ նախկինում վանքն ունեցել է այդ կարգավիճակը։

Մյուս վկայագիրը Արցախի Դադի վանքից է, թվագրված 1214թ.։ Այն փաստում է Հաթերքի նշանավոր իշխանուհի Արգու-խաթունի կողմից վանքի «գմբեթավոր» եկեղեցին կառուցելու իրողությունը, այնուհետև իշխանուհին ավելացրել է. «սահմանեցաք ժառանգութիւն եկեղեցոյս գեղոս և ագարակս իրեանց սահմանաւքն, զԱպահէն, եւ զԳնարածանց եւ զԲճանց եւ զԿանաչատրն որ ի Վայո ձոր եւ երկու տուն յԱրփա»¹⁵։ Արգու-խաթունն իր կատարածը ձևում է «ի փառս ԱՅ եւ ի նորոգութիւն սբ ուխտիս»։ Կարծում ենք, որ երկրորդ արտահայտությունը վերաբերում է ոչ թե շինարարությանը, այլ միաբանության վերականգնմանը, վանքի, այսպես կոչված, «վերագործարկմանը», ինչին և հաջորդում է վերընձնորված միաբանության «վիճակի» սահմանումը, դրա մեջ ընդգրկված բնակավայրերի և այլ տարածքների հատկացմամբ։

Կարևոր «թեմահաստատ» վկայագիր է առկա Կեչառիսի վանքում։ 1226թ. Շահնշահ և Ավագ Ջաքարյանների հովանավորությամբ Բջնի-Արարատյան թեմի առաջնորդ Վանականի և Կեչառիսի առաջնորդ Համազասպի նախաձեռնությամբ սահմանվում է «ժողովուրդ Կեչառուաց», այսինքն վանքի վիճակում ընդգրկված բնակավայրերը. «Բուժկան, Շողակաթն, Աղաւրածոր, Դադմաշէն,... Հռոմտամալն, Գառնեղի, Յալքն, Կոռնկաձոր, Թառին Քալատակն»։

Արցախից հայտնի է ևս մեկ արձանագրություն։ Այն փորագրված է Գտչա վանքի եկեղեցու հյուսիսային պատին։ Ինչպես նախորդներից շատերը, վկայագրում նշվում է եկեղեցու շինարարության մասին, որն իրականացրել են Ամարասի եպիսկոպոսներ Սարգիսն ու Վրթանեսը 1241-1246թթ., խոսվում է նաև ալյազգիների անցած Ս. Գրիգորիսի աթոռն ու վիճակը վերականգնելու և սահմանները վերահաստատելու մասին, որոնք հնում «հաստատեալ Սբ Նշանաւ եւ Սբ Աջովն եւ եւ գաւազանով»¹⁶։

Գտչա վանքի գոյությունը փաստված է դեռևս VIII դարի սկզբներին։ Մովսես Կաղանկատվացին Պարտավի եկեղեցական ժողովի մասնակիցների թվում հիշատակում է «Գտայ վանաց տանուտէր»-ին։ Այսինքն XIII դարի քառասնական թվականներին վանքի հիմնական շինությունները կառուցելուց առաջ, տեղում գործել է վանական միաբանություն, որը մոնղոլական ավարառության գոհ է դարձել։ Կարծում ենք վիմագրում խոսք է գնում ոչ միայն վանքի շինությունների, այլև սուրբ Գրիգորիսի աթոռ և վիճակ հորջորջվող հաստատության մասին, ինչն իր հերթին ավանդում է Գրիգոր Լուսավորչի թոռ (Վրթանեսի որդի) Գրիգորիսի կողմից այստեղ եպիսկոպոսական աթոռ ստեղծելու և վիճակ հաստատելու պատմությունը/աթոռս եւ վիճակս սրբոյն Գրիգորիսի)։ Արձանագրության մեջ

⁹ Դիվան հայ վիմագրության, պր. IX, Լոռու մարզ, Կազմեցին՝ Ս.Գ.Բաքիտյան, Կ.Գ.Ղաֆադարյան, Ս.Տ.Սահումյան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2012, էջ 130։

¹⁰ Կարո Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 145։

¹¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1976, էջ 524։

¹² Ակադեմիական հատորի այս գլխի հեղինակ Լ. Բաբայանը անդրադառնալով մեր արձանագրությանը՝ առաջնորդվում է հենց այս թվականով։

¹³ Նույն տեղում, էջ 144։

¹⁴ Նույն տեղում, էջ 143։

¹⁵ Դիվան հայ վիմագրության, պր. V, Արցախ, Կազմեց Ս.Գ.Բաքիտյան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1982, էջ 199։

¹⁶ Նույն տեղում, էջ 183։

մեկառմեկ նշված են վանքի վիճակի տարածքներն ու բնակավայրերը, որոնց մեծ մասը հայտնի են և քանիցս վկայված սկզբնաղբյուրներում.

Չափազանց ուշագրավ վկայագիր է պահպանվել Արագածոտնի մարզի Աստվածընկալ վանքի Ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատին: Ի տարբերություն մախորդների այստեղ չեն նշվում եպիսկոպոսական վիճակի սահմանները կամ հարկատու բնակավայրերը, այլ խոսվում է 1207թ. եկեղեցին նորոգելու և վանք-միաբանության ստեղծման մասին. «հաստատեցաք զուխտ միաբանութեան» և թվարկվում են միաբանության անդամները՝ Գրիգոր և Ղազար վարդապետների առաջնորդությամբ: Սեզ առաջին անգամ է հանդիպում նման բովանդակությամբ արձանագրություն, ոչ միայն որպես միաբանության հիմնադրման, այլև ուխտի հիմնական ներկայացուցիչների մատնանշման տեսանկյունից:

Gagik Sargsyan (Armenia)

THE EPIGRAPHIC EVIDENCE FOR THE FORMATION OF EPARCHIES OF THE ARENIAN CHURCH

The first systematic bishops' residences (later also eparchies) of the Armenian Apostolic Church were established by Gregory the Illuminator. Later their quantity increased and they underwent transformations. The main sources for this process are attestations of manuscripts. However in High Middle Ages it became wide spread to inscribe the fact of creation of bishop's residences and their eparchies on the walls of bishops' monasteries. In Armenian epigraphy there are ca. 10 such inscriptions of juridical content, seven of which are presented in this report.

Konrad Siekierski (Poland)

ARMENIAN FILES IN THE ARCHIVE OF THE KESTON CENTER FOR RELIGION, POLITICS AND SOCIETY: AN OVERVIEW

This article presents the results of the research conducted by the author in February 2013 in the archive of the Keston Center for Religion, Politics & Society at Baylor University in Waco, United States.¹ First, it provides some brief information on the Keston Center and its parent-institution – the Keston Institute, then, it describes the content of files relating to Soviet and post-Soviet Armenia that are collected in the archive of the Center.

The Keston Institute, was established in 1969 in Oxford, United Kingdom and first operated under the name of the Centre for the Study of Religion and Communism. As its former name suggests, it has specialized in the study of expressions of religious life, implementation of atheist policies and state secularism, restrictions imposed on religious organizations and persecutions of believers in communist and – after the 1989-1990 revolutions – former communist countries. Another often related field of interest for the Center, was a dissident movement in the region. Furthermore, various materials on socio-cultural and political life in Soviet and People's Republics were collected.

The main outcome of the forty-five year-long activity of the Institute is its unique library and archive which consists of around thirteen thousand books, four thousand samizdat, more than one hundred journal titles, and a vast amount of press cuttings, pamphlets, and reports from newspapers and journals published in the USSR, countries of the Socialist Camp, and the West (the first mainly in the Russian language, the latter mainly in English). The collection includes the world's most extensive collection of atheist and anti-religious books published in the Soviet Union, and a rich catalogue of materials on East European Church history since the Second World War. Additionally, there is also a significant number of items in the area of religious persecution under non-European communist regimes, including those in Africa, Asia, and Latin America. In 2007 the library and archive of the Keston Institute were relocated from the United Kingdom to the newly established Keston Center for Religion, Politics & Society, hosted by Baylor University, United States.

The Keston Institute has also been active in publishing, including the journal “Religion in Communist Lands”, later renamed to “Religion, State & Society”, which is today one of the leading academic platforms in

¹ The author would like to thank the Chairman of the Keston Institute, Ms. Xenia Dennen, and the members of Keston's Council for granting him the opportunity to conduct this research, as well as Ms Larisa Seago, the Keston Center's librarian for her invaluable help during his stay at Baylor University.

the field of religious studies and sociology/anthropology of religion.² It is worth mentioning that in 1996-1998 Felix Corley published in this journal a series of three articles,³ which provide to date the most detailed and comprehensive study of the history of the Armenian Apostolic Church in communist and early post-communist times. Furthermore, two studies on the religious situation in post-Soviet Armenia authored by Ani Sarkissian⁴ and Kimitaka Matsuzato, Stepan Danielyan⁵ have been published by Religion, State & Society in recent years, making a vital contribution to a very limited body of literature on this topic.

At the time of research, the archive of the Keston Center was in an ongoing process of restructurization due to its relocation, nevertheless, the author was granted access to twelve files where the data on Soviet and post-Soviet Armenia is gathered: SU/Arm, SU/Arm(1), SU/Arm(8/2), SU/Arm(11/2), SU3/AR(1), SU3/AR(2), SU3/AR(3), SU3/AR(4), SU/ARM, Armenia, Armenia(1), and Armenia(2). These files include a collection of press articles, reports and other materials on the religious, political and socio-cultural situation in Armenia from the late 1960s to the beginning of the 21st century. Generally, most of the materials collected in the files marked as SU relate to Soviet Armenia, however, there are a significant number of exceptions to this rule, particularly in SU/Arm(1) and SU3/AR(1), where religious life in Armenian is documented up until 2002. The files marked: Armenia, Armenia (1) and Armenia (2) rather than being limited to the post-Soviet era, are to a large extent filled with materials on the Armenian way to independence in 1988-1990. Of particular interest are the documents on the dissident movement in Armenia, materials pertaining to the modern history of the Armenian Apostolic Church and the religious situation in Soviet and post-Soviet Armenia, as well as press articles on the Karabakh movement and the 1988 Spitak earthquake. Generally, one can see from the following description that there is a certain disorder regarding the content of the files, with some materials being contradictory within a given file, while some files cross over the thematic scope of other files.

Below, a short overview of the Armenian files of the archive of the Keston Center for Religion, Politics & Society is offered:

1) SU/Arm: contains materials from the 1960s-1980s: mainly on issues related to the functioning of the Armenian Apostolic Church in this period, including a number of English-language articles on Catholicos Vazgen I's visits abroad and statements on positive religious situation in Armenia were made during these visits. Additionally, materials on Armenian dissidents are included, particularly on the activities, harassment, interrogations, and trials of Paruir Airikian, Deacon Robert Nazarian, Khachik Stamboltsian, and Father Garnik Tsarukian.

2) SU/Arm(1): firstly contains press materials pertaining to the religious situation in Armenia in Soviet and post-Soviet times (mostly in English, but also in Russian and German) including reports on Catholicos Vazgen I's visits abroad; on the shortcomings in the implementation of the Soviet state ideology; on the 1965 conflict in the Armenian Apostolic Church in the United Kingdom, on the celebration of the Blessing of Muron in 1976, and of the 1,700th anniversary of Christianity in Armenia in 2001. A number of obituaries of Vazgen's I successor – Catholicos Garegin I – who died in 1999 is also collected. Secondly, materials on Armenian dissidents are kept here, including information on Paruir Airikian's arrest in 1988, and a Soviet press article against Robert Nazarian titled *Lozhnyi Prorok* (The Fake Prophet).

3) SU/Arm(8/2), SU/Arm(11/2), SU/ARM: these three files are devoted to the dissident movement in Soviet Armenia. Their content includes the following documents:

- Press materials on the trial of Stepan Zatikian, Akop Stepanian and Zaven Bagdasarian, sentenced to death after the attack on the Moscow subway in 1977.
- press materials on growing nationalism and the dissident movement in Armenia in late 1970s;
- letters by and regarding Robert Nazarian, written in 1969-81: his disciplinary expulsion from Komsomol and the university; resignation from work in the Byurakan observatory; request for ordination to the priesthood in the Armenian Apostolic Church and the negative response he received; establishing of the Armenian branch of the Helsinki Group, letters to the US president Jimmy Carter, to the Madrid Conference, and to the Armenian KGB titled "About my Convictions".
- Press materials on the trial of Robert Nazarian in 1978.

² Since 1999 the journal has been under the control of Carfax Publishing, Taylor and Francis Group.

³ Felix Corley, "The Armenian Church under the Soviet Regime, Part 1: The Leadership of Kevork", Religion, State & Society, 24 (1) 1996, pp. 9-53; The Armenian Church under the Soviet Regime, Part 2: The Leadership of Vazgen; Religion, State & Society, 24 (4), 1996, pp. 289-343, pp. Felix Corley, The Armenian Church under the Soviet and Independent Regimes, Part 3: The Leadership of Vazgen, Religion, State & Society, 26 (3/4), 1998, pp. 291-355.

⁴ Ani Sarkissian, "Religion in Post-Soviet Armenia: Pluralism and Identity Formation in Transition," Religion, State & Society, 36 (2), 2008, pp. 163-80.

⁵ Kimitaka Matsuzato, Stepan Danielyan, "Faith or Tradition: the Armenian Apostolic Church and Community Building in Armenian and Nagorno Karabakh," Religion, State & Society, 41 (1), 2013, pp. 18-34.

- documents pertaining to Paruir Airkian's trial in 1980-1981, mainly his letters from prison and records from interrogations.
- Letters written on behalf of the imprisoned Paruir Airikian by his wife, Yuri Orlov and Andrei Sakharov to Amnesty International and to Armenian communities worldwide.
- Documents issued in 1976 on the occasion of the tenth anniversary of an underground National United Party, including a letter of support for Armenia's right to self-determination signed by a group of imprisoned Soviet dissidents.
- Letters of protest to Soviet authorities written by Aleksander Malkhasian and Ambartsum Khlgayan (his renunciation of Soviet citizenship).
- Eduard Arutunian's letters of 1979 to Catholicos Vazgen I and USSR Supreme Soviet, and to the Pope (written in defense of Robert Nazarian);
- Letters and documents regarding the persecution and imprisonment of Fr. Garnik Tsarukian (prepared by Vardan Verinchorohian and by Amnesty International) and Shagen Arutunian (written by his wife and mother in 1977-1978).
- Documents on the imprisonment of the Armenian activists of the Helsinki Group: Edmund Avetyan and Rafael Papayan.

4) SU3/AR(1): contains various materials on the religious situation in Armenia from the late 1980s until 2002, including articles on persecution on religious grounds, copies of religious laws of the Republic of Armenia and the Republic of Nagorno-Karabakh, and information on the Protestant Christian organization's humanitarian missions to Nagorno-Karabakh.

5) SU3/AR(2), SU3/AR(3): consist of various press articles (mostly in English and Russian,) from the 1980s to 1992 on the socio-political situation in Armenia, the economic development of the republic, cultural events, and the renovation of historical monuments, etc.

6) SU3/AR(4): consists of Western press materials, mainly from the 1970s regarding the economic development of the republic, the Armenian diaspora, and the Armenian genocide. It also presents a collection of relations by Western journalists and other guests visiting Soviet Armenia. Some of these articles were published in Christian journals, and most contain information on expressions of official and popular religiosity in Armenia, including celebrations of ecclesiastical feasts in Etchmiadzin, pilgrimages to the monastery of Geghard, and animal sacrifice (madagh) practiced in these locations.⁶

7) Armenia, Armenia (1), Armenia (2): contain press materials related to the period of 1988 – 2001. Particularly rich is the collection of press reports from December 1988 on the Spitak earthquake in Armenia and humanitarian aid to the victims of the cataclysm; the development of the Karabakh movement and conflict and on the Armenian road to independence (mass demonstrations in Yerevan against pogroms of Armenians in Azerbaijan and in support of Armenians of the Nagorno-Karabakh enclave, the reaction of Soviet authorities to Armenian demands and the escalation of conflict). Second, information on Christian missions and humanitarian aid for Armenia and Nagorno Karabakh is gathered. Finally the files contain materials on the 1995 presidential election, the Armenian Parliament shooting in 1999, and the 2001 celebration of the 1,700th anniversary of Christianity in Armenia.

These twelve files on Soviet and Post-Soviet Armenia are only a small part of the archive of the Center for Religion, Politics & Society, and the quantity and bulk of materials gathered there are clearly not equal to those regarding the European part of the USSR or People's Republics of Central Eastern Europe. Nevertheless, they provide a rich, and as yet, not exhaustively-studied collection of data on Armenian modern history in general, and on the Western perception of this history in particular.

Կոմրադ Սիեկիերսկի (Լեհաստան)

ԿՐՈՆԻ, ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՍԹՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՐԽԻՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ ՄԻ ԿԱՐԵՎՈՐ ԱՂԲՅՈՒՐԻ ԱԿՆԱՐԿ

Ակնարկով ներկայացված է «Կրոնի, քաղաքականության և հասարակության Կեսթոն կենտրոնի» արխիվում (Բեյլորի համալսարան, Վակո, ԱՄՆ) հավաքված հայագիտական աղբյուրները: Կեսթոնի կենտրոնի և դրա մայր հաստատության Կեսթոնի ինստիտուտի մասին որոշ տեղեկություններից հետո, խոսվում է արխիվում պահվող այն փաստաթղթերի մասին, որոնք վերաբերում են խորհրդային և հետխորհրդային Հայաստանին: Այս փաստաթղթերը նշված են իբրև SU/Arm, SU/Arm(1), SU/Arm(8/2),

⁶ For more on these practices, as described in Western press articles collected in the Keston archive see: Konrad Siekierski, "The Armenian Apostolic Church and Vernacular Christianity in Soviet Armenia", Keston Newsletter, 18, 2013, pp. 15-20.

SU/Arm(11/2), SU3/AR(1), SU3/AR(2), SU3/AR(3), SU3/AR(4), SU/ARM, Armenia, Armenia(1), and Armenia(2): Արխիվի հայկական փատաթղթերում առկա են լրատվամիջոցներում տեղ գտած հոդվածներ, հաշվետվություններ և տարբեր նյութեր, որոնք վերաբերում են 1960-ականներից մինչև 21-րդ դարասկիզբ Հայաստանում տիրող կրոնական, քաղաքական և սոցիալական իրավիճակին, 1988թ. երկրաշարժից տուժածներին միջազգային օգնությանը և Ղարաբաղյան շարժմանն ու Հայաստանում ժողովրդավարացման գործընթացին:

Հակոբ Սիմոնյան (Հայաստան)

ԲՐՈՆԶԻ ԴԱՐԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ ԱՐԱԳԱԾՈՏՆՈՒՄ

Ավելի քան 100 հա տարածք զբաղեցնող Վերին Նավեր դամբարանադաշտը ՀՀ Արագածոտնի մարզում է, Երևանից 25-30 կմ արևմուտք, Արագած լեռան հարավային ստորոտում, Շաղվերտ գետակի աջ ափին: 1976 թ. ի վեր այստեղ պեղումներ են իրականացրել տարբեր կազմակերպությունների արշավախմբեր (դեկ.՝ Հ. Սիմոնյան)¹: 2011-2013 թթ. ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի» արշավախումբը՝ ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ, ձեռնարկեց դամբարանադաշտի հարավարևելյան մասում, Աշտարակ քաղաքի այգիներ տանող հիմնահողային ճանապարհի աջ և ձախ կողմերում, տուֆե ժայռի վրա կառուցված հսկա դամբարանաբլուրների պեղումները²: Խորհրդային ժամանակներում դամբարանախմբի տարածքն օգտագործվել է այգեգործական, հողաշինական՝ ճանապարհի և ջրատարի կառուցման և այլ նպատակներով: Արդյունքում դամբարանաբլուրները մասնակի ավերվել են, ծածկվել շինարարական աղբով, իսկ Մեծ դամբարանաբլուրի հյուսիսային մասում կառուցվել է պահակի քարաշեն տնակ: Ի տարբերություն Վերին Նավերի մինչև այդ պեղված դամբարանների, որոնք ունեն արաբական համարակալում, այս հսկա դամբարաններին տրվեցին հռոմեական թվանշաններ: I դամբարանաբլուրը Արագածոտնի, թերևս նաև Հայաստանի մեծագույն դամբարաններից է (տարամագիծը՝ 50 մ, բարձրությունը՝ 2 մ): Դամբարանաբլուրն ուներ հյուսիսից հարավ երկարող ձվաձև տեսք, զագաթային մասում հարթ հրապարակ՝ կենտրոնում գոգավոր նստվածքով (Col. 9):

Քարահողային դամբարանաքմբի ներքո բացվեց երկու մեծ դամբարանաքահ³: Չնայած երկուսն էլ մասամբ թալանված էին, սակայն ժամանակակից մեթոդներով կատարված պեղումները և թաղման գույքի ճշգրիտ փաստագրումը, գտածոների վերականգնումը, դասակարգումն ու տարաբնույթ լաբորատոր հետազոտությունները բացառիկ արժեքավոր հայտնագործությունների հիմք հանդիսացան, որոնք էապես լրացնում են մեր պատկերացումները Հայաստանի՝ միջինից ուշ բրոնզի անցման փուլի վերաբերյալ (Ք. ա. XVI-XV դդ.): Տեղի տղության պատճառով ստորև կանդրադառնանք միայն I դամբարանին:

IA դամբարանաքահը կառուցված է մեծ, մինչև մեկ տոննա կշռող, ցից դրված տուֆ սալաքարերով: Այն շրջափակված է ընտրված, միաչափ, միմյանց հպված գետաքարերից խնամքով շարված կրողլեխով, որից պահպանվել են հյուսիսային և արևելյան հատվածները: Արևելյան կողմում դամբարանամուտքն է՝ լցված տափակ դրված տուֆե սալքարերով: Դամբարանաքահը կազմում է դամբարանաքմբի արևմտյան շարունակությունը: Սրա հյուսիսային պատի մեջ ձևավորված է խորշ: Դամբարանաքահի արևմտյան՝ լայնական պատի վերին տուֆ քարն արտաքուստ ունի խորադիր փոսիկ, իսկ ճակատային, դեպի դամբարանաքահը նայող մասում հորիզոնական գիծ՝ վերևում գույգ փոսիկ⁴: Դրանք կարծես աչքեր լինեն, որոնք հսկում են դամբարանի անդորրը⁵: Ծածկն ամբողջությամբ ավերված է (Col. 10):

¹ Հ. Սիմոնյան, *Վերին Նավեր, գիրք II (1976-1990 թթ. պեղումների արդյունքները)*, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2006:


² Արքայական դամբարանների կառուցման համար տուֆե ժայռի ընտրությունը պատահական չէ, քանզի, ըստ հինարիական աշխարհընկալումների, դին չպետք է շփվեր սրբազան հողին, որպեսզի այն չաղծվի, տե՛ս Симо́нян А. Древнеарийские традиции в погребальном ритуале Армении эпохи бронзового века, В кн.: *На пути открытия цивилизации. Сборник статей к 80-летию В. И. Сарцианиди. Труды Маргянской археологической экспедиции*, Санкт-Петербург, 2010, с. 621-638, цветная таблица.

³ Hakob Simonyan, New Discoveries at Verin Naver, Armenia // *Backdirt, Annual Review of the Cotsen Institute of Archaeology at UCLA*, 2012, p. 110-113.

⁴ Տեղում հուշարձանն ուսումնասիրած երկրաբան Ա. Կարախանյանի կարծիքով գիծը և փոսիկներն արհեստածին են, այսինքն՝ հստակ է, որ արվել են մարդու ձեռքով:

⁵ Ուշագրավ է, որ 2013 թ. Կարմիր բլրի դամբարանադաշտի տարածքում մեր արշավախմբի պեղումների արդյունքում հայտնաբերվեցին կրողլեխների մոտ դրված տուֆակերտ 4 կուռք-սալիկներ՝ աչքեր հիշեցնող գույգ փոսիկներով: Ենթադրում ենք, որ սրանք դամբարանները հսկող «աչքեր» են, որոնք հին Հայաստանի թաղման ծեսի նորահայտ քաղաքիչներից են:

Պատկեր 1



ԴԱՄԲԱՐԱՆ I Ա՝ 1-3. Սև փայլեցված սափորներ: 4. Սև փայլեցված գավաթ՝ նետասլաքների դաշվածքներով: 5. «Կավթի աստղի» պատկերով բրոնզե գլխիկ: 6. Սև փայլեցված սափոր՝ կենդանիների պատկերներով: 7. Դամբարանաբաժնի հատակագիծը:

Թեք կտրած ժայռե հատակին զետեղել էին թաղման գույքը և զոհաբերությունները, որոնք ամբողջովին խառնել էին գանձախույզները: Միայն դամբարանաբաժնի հարավարևելյան հատվածում, դրոմասի հարևանությամբ, կղզյակաձև պահպանվել էր տեղում ճգնված թաղման գույքի մի փոքրիկ հատված (պատկեր 1⁷): Մարդկանց ոսկորներ այս դամբարանում չհայտնաբերվեց: Կարելի է ենթադրել, որ թաղումը կատարվել էր դիակիզման ծեսով: Դամբարանում հայտնաբերվեցին խոշոր եղջերավոր անասունի, խոզի և ոչխարի/այծի ոսկորներ⁶: Հայտնաբերվել են մաս գետային՝ սաղաֆե խխունջների տասնյակ փեղկեր: Գտածոներից առանձնապես արժեքավոր է երկու հավասարասրուն եռանկյունիներից ձևավորված վեցաթև՝ «Կավթի աստղի» պատկերով, բրոնզե գլխիկը, որի բաժանմունքներում ագուցված են եղել տարբեր գույների շաղախե ներդրումներ (մի հատվածում պահպանվել էր կարմրավուն փխրուն նյութ): Ժամանակին օրգանական հիմքի վրա ամրացված այս եզակի գտածուն չունի իր զուգահեռը (պատկեր 1⁵): Վեցաթև աստղի պատկերով, սակայն փոքր-ինչ այլ հորինվածքով բրոնզե դաշույնի գլխիկ հայտնաբերվել է Վրաստանում՝ Ցազվիլեի N 62 դամբարաններում⁷: Այն տեսակետը, որ այս զարդանախշը բնորոշ է եղել հնդեվրոպական զարդարվեստին և հետագայում, շատ ուշ փոխառել են հրեաները, իր հավաստումն է ստանում Վերին Նավերի գտածոյով:

⁶ Բնորոշումները՝ Նինա Մանասարյանի:

⁷ **Костантин (Коте) Пицхелаури**, *Археологическая культура центральной части Южного Кавказа во второй половине II тыс. до н.э. (сущность культуры, характерные признаки и ареал распространения)*, Тбилиси, «Мецниереба», 2005, табл. СXXX.

Բավականին հարուստ է պերճանքի առարկաների տեսականին՝ սկավառակաձև (8), խողովակաձև փաթաթված լարից՝ հնգապտույտ (3) և տակառաձև (2) ոսկյա ուլունիկներ, ոսկե թևերով և արծաթե իրանով «թիթեռնիկ» տիպի գլխազարդ (Col. 11): Սկավառակաձև ուլունիկները խիստ կայուն և լայն տարածում ունեցող զարդեր են, որոնք առանց փոփոխության հարատևում են շուրջ երկու հազարամյակ: Դրանցից հնագույնները հայտնի են Հյուսիսային Կովկասի՝ Մայկոպի հանրահայտ Մեծ դամբարանաբլրից և Կուրախուրտի դամբարանից (Ք.ա. IV-III հազարամյակներ)⁸: Հայաստանում մնամատիպ ոսկյա ուլունքներ հայտնաբերվել են Վանաձորի Թագավորանիստ դամբարանադաշտում⁹, Լճաշենի N 2 դամբարանում¹⁰ և Լոռի բերդի N 19 դամբարանում¹¹: Սրանք բոլորն էլ թվագրվում են ուշ բրոնզի վաղ փուլով:

Փաթաթված լարից խողովակաձև ուլունքները, որոնք կոչվում են մաս «գալանակավոր», հայտնի են Հին Արևելքի և Հայաստանի մի շարք հուշարձաններից: Դրանցից վաղագույնները հայտնաբերվել են Ներքին Նավերի N 1 (Ք.ա. XXIV-XXII դդ.) և Լոռի բերդի N 94 (Ք.ա. II հազարամյակի առաջին քառորդ) դամբարաններից¹²: Չարդի այս տիպը բացահայտվել է մաս ուշ բրոնզի և մույնիսկ վաղ երկաթի դարերով թվագրվող Լոռի բերդի N 29, N 30 և N 62 դամբարաններից¹³: Ոճական առումով Վերին Նավերի գտածոները գրեթե մույնական են Լոռի բերդի N 30 դամբարանի ուլունքներին:

«Թիթեռնիկ» գլխազարդը բարձրարժեք պերճանքի առարկա էր ողջ Հին Արևելքում՝ Տրոյա II, Սիրիա, Շումեր, Քարաշամբի մեծ դամբարանաբլուր, Լճաշենի N 2 դամբարան, Լոռի բերդ N 3 և N 94 դամբարաններ¹⁴ (քարտեզ 1): Վերին Նավերի գտածոն՝ խողովակաձև միջուկի վրա գամերի գլխիկներ հիշեցնող հատիկաշարով, մեծ նմանություն ունի Լճաշենի N 2 դամբարանի զարդին: Գլխական գրականությունում շրջանառվում է խիստ ինքնատիպ այս գլխազարդի ավելի քան մեկ և կես հազարամյակով զատորոշված թվագրումները: Տարբեր քաղաքական և մշակութային իրավիճակներում, ժամանակի մոդայով պայմանավորված այս ինքնատիպ զարդի այդքան երկար կիրառումը, մեր կարծիքով, գրեթե անհնար է: Թեև անհրաժեշտ է վերանայել ավերված կամ իջեցուկ դամբարաններից հայտնաբերված գտածոների զգուշավոր թվագրման ավանդույթը, որի արդյունքում Հայաստանի հուշարձանները մեկուսացվում են Հին Արևելքի նմանատիպ հուշարձանների համատեքստից: Ուշագրավ է, որ Վերին Նավերի IA դամբարանից հայտնաբերված ոսկյա զարդերի, մասնավորապես գալարաձև փաթաթված լարից խողովակաձև ուլունքի և թիթեռնիկաձև գլխազարդի համադրությունն առկա է մաս Լոռի բերդի N 94 դամբարանում: Այս դիտարկումը կարևոր է թվագրման տեսակետից և վկայում է, որ Վերին Նավերի ու Լոռի բերդի դամբարանները ժամանակագրորեն չէին կարող միմյանցից էապես խզված լինել:

Դամբարանից հայտնաբերվել են մաս սարդիոնե, ապակե և հախճապակե երկնագույն, կաթնագույն, կարմրավուն տասնյակ ուլունքներ և մանրաուլունքներ: Մուգ կարմիր և վարդագույն սարդիոնից պատրաստված ուլունքներն ունեն անհարթ կտրած եզրերով գնդաձև, երկկոն, խողովակաձև իրան: Նմանատիպ ուլունքներ փաստված են Հայաստանի միջին և ուշ բրոնզի դարերի բազմաթիվ հուշարձաններում: Սրանց մեջ առանձնանում է սակրաձև ուլունք-կախիկը, որի հնագույն օրինակները փաստվել են Ք. ա. III հազարամյակի երկրորդ կեսի հուշարձաններում՝ Քարաշամբի Մեծ դամբարանաբլուր և Ներքին Նավերի N 1 դամբարան¹⁵: Հայտնաբերվել է մաս ուղղանկյունաձև սարդիոնե կախիկաձև ուլունք, որոնք իրենց կրկնօրինակներն ունեն Մեծամորի N 11 դամբարանում¹⁶: Ուշագրավ է մաս քառակուսի, երկու անկյունում միջանցուկ անցքերով ոսկրե ուլունք՝ ճակատային մասում շրջանի փորագիր զարդով: Այս ուլունքի նմանակը հայտնի է Շենգավի դամբարանադաշտից¹⁷:

⁸ Кореневский С. Н. Древнейшие земледельцы и скотоводы Предкавказья. Майкопско-новосвободненская общность. Проблемы внутренней типологии. Москва, Наука, 2004, с. 47-48, лист 5; он же, Древнейший металл Предкавказья. Типология. Историко-культурный аспект, Москва, Издательство ТАУС, 2011, л. 7₂₅.

⁹ Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա. III հազարամյակ - մ.թ. XIV դար), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007, աղ. XXXII₁:

¹⁰ Նույն տեղում, աղ. XXXVII₁:

¹¹ Նույն տեղում, աղ. LIV₃:

¹² Մեղա Գևեջյան, Լոռի բերդ II (Միջին բրոնզ), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2006, էջ 126-127, նկար 112_{13,16}, աղ. 44:

¹³ Հին Հայաստանի ոսկին, աղ. LIII, LIV₅ և LXXVII_{3,5}:

¹⁴ Մեղա Գևեջյան, Լոռի բերդ II, էջ 126-127, նկար 112₂₀, աղ. 44: Մենք չենք կիսում հեղինակի այն տեսակետը, որ դրանք ուլունքներ են, և որ Լոռի բերդի N 3 դամբարանից հայտնաբերված ոսկյա գլխազարդը պատկանում է ուրարտական ժամանակաշրջանին: Մեր կարծիքով այս գլխազարդերի թվագրության ներքին սահմանը չի կարող ցած իջնել ուշ բրոնզի դարից:

¹⁵ Հին Հայաստանի ոսկին, աղ. VII:

¹⁶ Նույն տեղում, աղ. LXVII:

¹⁷ Հակոբ Միմոնյան, Շենգավիթ. Շարքային բնակավայր, թե՞ վաղ քաղաք // «Հուշարձան» տարեգիրք, հատոր Ը, Երևան, 2013, էջ 5-53, պատկեր 16₁₆:



Քարտեզ 1

Եգալիի է վառ կանաչ, թափանցիկ վանակատի սրածայր բեկորը, որն ամենայն հավանականությամբ ներմուծվել է Վանա լճի ավազանից՝ Նեմրութ լեռան հանքից: Այն վկայում է Ք.ա. II հազարամյակի կեսին Արագածոտնի և Վանա լճի ավազանի միջև եղած կապերի և առևտրական հարաբերությունների մասին: Դամբարանում հայտնաբերվել են նաև շուրջ մեկ տասնյակ սև և ծխագույն վանակատի բեկորներ ու ցլեպներ: Հիշատակենք նաև բրոնզե երկարուկ, չորս մասի բաժանված ձողը:

Դամբարանից հայտնաբերված կավանոթները (10), առանց բացառության, սև գույնի են: Խեցեղենի հավաքածուն բաղկացած է գնդաձև կամ փքված իրանով կճուճներից, քրեղաններից, բաժակներից, սափորներից և գավաթից (պատկեր 11_{1-4, 6}): Եգալիի է սև փայլեցրած մեծ գավաթը, որի մակերեսը զարդարված է չորս շարք ձգվող նետասլաքների դաջվածքներով (պատկեր 14): Իր ձևով և հատկապես զարդանախշով այս անոթը բացառիկ է Հայաստանի հնագիտական հարուստ ժառանգությունում: Այն հավանաբար նախատեսված է եղել խմիչքի՝ գինու կամ գարեջրի համար: Մյուս ինքնատիպ անոթը գնդաձև իրանով և երկար, խողովակաձև վզիկով սափորն է: Վզիկի հիմքում 6 շարք հորիզոնական, փորագիծ գոտիներ են, որոնց ներքո կետագարդման, փորագրման և փայլեցման տեխնիկայով պատկերված են սուր ծայրերով վեր ուղղված հավասարասրուն եռանկյունիներ՝ լցված փայլանախշ գծերով: Սրանք հավանաբար խորհրդանշում են լեռներ, որոնց ստորոտում պատկերված է շների կամ գայլերի կողմից եղջերուների հետապնդման տեսարան: Գայլերի և եղջերուների միջակայքի կենդանիների տեսակը դժվար է որոշել՝ վնասված լինելու պատճառով: Փորագիր, փոքրիկ ֆիգուրները ժամանակին ծածկված են եղել կարմիր շաղախով, որի շնորհիվ ավելի լավ են ընկալվել: Հետապնդման տեսարանն օղակում է համաշխարհային վիշապօձը (պատկեր 16): Այս սյուժեն գրեթե նույնությամբ կրկնում է Գետաշենի գունագարդ հիդրիայի թեման, որը՝ ըստ Գրիգոր Արեշյանի, ներկայացնում է կյանք-մահ-վերածնունդ հնդեվրոպական առասպելը¹⁸: Նավերի գավաթի վրա առկա լրացուցիչ տարրերը լեռնաշղթան և համաշխարհային վիշապօձը, ավելի են շեշտում պատկերի դիցաբանական լինելը: Դամբարանից հայտնաբերված խեցանոթները բնորոշ են Հայաստանի ու բրոնզի դարի վաղ փուլին (Ք.ա. XV-XIV դդ.), թեև, որոշակի է, որ Գետաշենի (միջին բրոնզի դար) և Նավերի անոթների եղջերուների պատկերագրությունը բացարձակ նույնական է: Զարդերի տիպերը նույնպես բնորոշ են ավելի

¹⁸ Арешян Г.Е. Индоевропейский сюжет в мифологии населения междуречья Куры и Аракса II тысячелетия // Вестник древней истории, Москва, 1988, N 4.

վաղ ժամանակաշրջանին: Թվագրության համար որպես հիմք ընդունել ենք կավանոթների ձևերը, թեև չենք բացառում դամբարանի ավելի վաղ լինելու հավանականությունը:

Դամբարանի անադարտ հատվածներից և կավանոթների ներսից վերցված հողերի պոլիոնոլոգիական տարրալուծումները վկայում են Նավերում՝ ուշ բրոնզի դարում, վուշե հագուստի և գիմու մշակույթի լայն տարածման մասին¹⁹: Թաղման գույքից պահպանված փշրանքները փաստում են, որ այստեղ կատարվել է վերնախավի ներկայացուցչի հարուստ և շքեղ թաղում:

Երկրորդ՝ IB ժայռափոր, քարաշար պատերով դամբանասրահը, դամբանամուտքով հանդերձ, ունի 17 մ երկարություն: Ժայռափոր հատվածի լայնքը 4,2 մ է: Պատկանում է Ք.ա. XVI-XIV դդ.: Դամբարանում հայտնաբերվել են զոհաբերված կենդանիների՝ շների, ցուլի, ձիու, մանր եղջերավոր անասունների և մարդկանց ոսկորներ (զոհաբերություններ): Հնդեվրոպական ծեսի համաձայն՝ տիրոջ մարմինը դիակիզել էին: Նրա սոցիալական բացառիկ բարձր դիրքի մասին են վկայում ներմուծված իրերը՝ Չինաստանից նեֆրիտի բնակտորը, Միջագետքից՝ կավե ջնարակած ուլունքները, բիտումից՝ ոսկյա քիթեղով երեսապատված 5-7 սմ տրամագծով սկավառակաձև արքա-հերոսների հիանալի դիմաքանդակները (Col. 12) և կենաց ծառի ու արխարների քանդակներով ուսագոտու ճարմանդները (նման երևույթ մինչ այժմ հայտնի չէր Հայկական լեռնաշխարհի և Կովկասի բրոնզի դարի հուշարձաններում): Դրանց միակ զուգահեռները հայտնի են միջին էլամական արվեստում: Հատակին, պատերի տակ շարված էին պաշտամունքային և կիրառական բնույթի սև փայլեցրած տասնյակ կավանոթներ: Այստեղ հայտնաբերվեցին արծաթե բաժանարարներ, ապակե և սարդիոնե հարյուրավոր ուլունքներ, կարմիր կայծքարից և վանակատից 63 նետալաք, մարտակառքի բրոնզե մասեր՝ երկու սանձ, սանձափոկերի երկու բաժանարար, կապարճների բրոնզե պնդողակներ, թափքը զարդարող բրոնզե հարյուրավոր կիսագնդիկներ, հասպիսից բրգաձև կնիք՝ ձիու պատկերով և այլն:

Դամբանաբլրի և դամբանասրահների մեծ չափերը, կոթողայնությունը, ձիերի և մարդկանց զոհաբերությունները, դիակիզման ծեսը, մարտակառքը, կնիքը, ներմուծված իրերի տեսականին, թանկարժեք պերճանքի առարկաները և, մասնավորապես, թագի կամ գլխազարդի հատվածները փաստում են, որ այս դամբանաբլուրը կառուցվել է սոցիալական խիստ բարձր աստիճանին կանգնած անհատների համար: Դամբարանների թաղման գույքը պարունակում է եզակի և ինքնատիպ գտածոներ, որոնք թաղման ծեսի հետ միասին հիմնավորում են Արարատյան դաշտում, Ք.ա. XVI-XIV դդ. արքայական կանոնակարգված ծեսի, հետևաբար նաև մոռացված թագավորության մասին:

Hakob Simonyan (Armenia)

THE ROYAL TOMB OF VERIN NAVER

The royal tomb I of Verin Naver (1600-1400 BC) was excavated in 2011-2012 and contained imported objects such as glazed beads from Babylon, seashells from the Persian Gulf, and nephrite from China. Most notable among the Verin Naver artifacts are medallions made of bitumen and covered with gold foil, featuring the image of a heroic personage, together with sacred animals and the tree of life. This set of medallions and buckles has close parallels in the art of Middle Elamite culture.

Նվարդ Տիրացյան (Հայաստան)

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՆ ԾԻՍԱԿԱՐԳԻ ՈՐՈՇ ԴԻՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ԱՐԳԻՇՏԻՆՆԻԼԻԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻՑ

Արգիշտիխինիլի դամբարանադաշտը գտնվում է հին քաղաքը հյուսիսից, արևմուտքից և հարավից շրջապատող տարածքում՝ ուշ ուրարտական առանձնատների, ինչպես նաև նոր Արմավիր և Նալբանդյան գյուղերի տների և այգիների տակ:


Դամբարանադաշտի հետազոտությունը սկսվել է Հ. Մարտիրոսյանի կողմից, 1964-68 թթ., քաղաքի պեղումներին զուգահեռ և որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև մեր օրերը: Տարածքի հետազոտությամբ զբաղվող հնագետների աշխատանքները բարդացնում է այն հանգամանքը, որ դամբարանները գուրկ են վերգետնյա նշաններից: Սակայն այդ դժվարությունը չի խոչընդոտել, որ վերջին տարիներին Արգիշտիխինիլի դամբարանադաշտում կատարվեն համակարգված հնագիտական

¹⁹ Տարրալուծումները՝ Էլիստ Կվավաձեի:


աշխատանքներ: Դամբարանադաշտի պեղումները փաստում են թաղման երեք ծիսակարգերի գոյությունը: Դրանք են՝ դիաթաղումը, դիակիզումը և դիամասնատումը¹:

Ի մի բերելով պեղումների արդյունքները, կարելի է ճշգրտել թաղումների քանակը ըստ տարբեր ծիսակարգերի:


- 1) Դիաթաղման ծես (կարասային թաղումներ՝ 9 դամբարան).
- 2) Դիակիզման ծես (թաղումներ աճյունասափորներում՝ 4 դամբարան).
- 3) Դիամասնատման ծես (1 դամբարան՝ նույն սարկոֆագում տեղադրված 4 աճյունասափորով):



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3

¹ Արգիշտիխինիլի դամբարանադաշտի վերաբերյալ տե՛ս Мартиросян А. А. Аргистихинили. Ереван 1974, с. 50-53. Մարտիրոսյան Հ., Թորոսյան Ռ., Արգիշտիխինիլիի սարկոֆագը. Պատմա-բանասիրական հանդես, 1986, 3, էջ 221-227, Տիրացյան Գ. Ա., Արմավիրի պեղումները, Հայկական ՍՍՀ-ում 1985-1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գեկուցումների թեզիսներ, Երևան, 1987, էջ 38-39, Կարապետյան Ի., Թումանյան Գ., Ավետիսյան Պ., Հակոբյան Հ., Հմայակյան Ս., Վարդանյան Ռ., Տիրացյան Ն. Երիտասարդ ուրարտուի թաղումը, Հայկական ՍՍՀ-ում 1993-95 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գեկուցումների թեզիսներ, Երևան, 1996, էջ 36-37, Կարապետյան Ի., Ենգիբարյան Ն., Արգիշտիխինիլի քրմի կնիքով թաղումը, Բանբեր Երևանի համալսարանի 2, 218-225. Tiratsyan N. G. An Urartian Jar Burial from Nor Armawir. - Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, 2010, V/2, 134-146:

Դիաթաղման ծեսը բնորոշ է Հայկական լեռնաշխարհում մշակույթի զարգացման բոլոր փուլերին: Դիակիզման ծեսը տարածում է գտնում Միջին բրոնզի դարաշրջանից (մ.թ.ա. III հազարամյակի վերջից), իսկ դիամանատման թաղման սովորույթը տարածվում է Ուշ բրոնզի և Վաղ երկաթի դարերում (մ.թ.ա. II հազարամյակի կեսից):

Դամբարանների պեղումների արդյունքների զգալի մասը հրատարակված է: Թաղման գույքը իրենից ներկայացնում է ուրարտական խեցեգործության, մետաղագործության, քարի մշակման և կնքագործության բացառիկ նմուշների մի հավաքածու: Նյութի ուսումնասիրությունը հետազոտողներին թույլ է տվել հանգել այն եզրակացության, որ անկախ թաղման ծիսակարգի տարբերություններից, դամբարանները համաժամանակյա են և թվագրվում են մ.թ.ա. VIII-VII դդ.: Թվագրման ճշգրտման մեկ այլ փաստարկ է թաղումներից գտնված խեցեղենի վրա եղած պատկերավոր դրոշմիչով դաջվածքների և ձեռքով արված վարպետի նշանների գոյությունը (ավելի ուշ դարաշրջանների խեցեղենի վրա վարպետի նշան կամ դրոշմ չի հանդիպում): Ինչևէ, խեցեղենի որակից և ձևաբանական որոշ առանձնահատկություններից ելնելով, մեր կարծիքով, չի կարելի բացառել, որ որոշ դամբարաններ հնարավոր է թվագրել մաս մ.թ.ա. VII-VI դդ.: Ուշ թվագրության օգտին են խոսում նաև 1986 թ. պեղված կարասային թաղումից գտնված սկյութական նետասլաքները²:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև 1994 թ. պեղված կարասային թաղումը, որտեղ թաղման գույքը՝ խեցեղենը և զարդերը, ուրարտական են, թաղման ծեսը՝ առանձնահատուկ, ոչ տեղական, իսկ թաղման խուցը, որտեղ տեղադրված է կարասը, շարված է հում աղյուսով: Հնարավոր է պատկերացնել, որ դա տեղական մշակույթին հատուկ սալարկղային թաղումների ազդեցության արդյունք կամ նմանակման փորձ լինի:

Հատկանշական է ևս մեկ հանգամանք: Դամբարանադաշտի երեք տարբեր ծիսակարգերով արված թաղումներն էլ չունեն սոցիալական տարբերակման բնութագրիչներ: Առկա են թե՛ աղքատ, թե՛ միջին և թե՛ միջինից բարձր սոցիալական դիրք ունեցող հանգուցյալների թաղումներ: Ինչ վերաբերում է սեռատարիքային տարբերակմանը, ապա, զոհն դիաթաղման ծիսակարգով կարասային թաղումներից հայտնի են տարբեր սեռերի և տարիքի հանգուցյալներ:

Թե՛ կարասային, թե՛ դիակիզումով աճյունասափորային թաղումները Հայաստանի Հանրապետության տարածքում առաջին անգամ են ի հայտ գալիս ուրարտական դարաշրջանում: Ավելին, դրանք առաջին դեպքերն են ողջ Անդրկովկասում³: Իսկ ուրարտական դարաշրջանից հետո, ողջ Անդրկովկասում, սկսած մ.թ.ա. IV դ., կարասային թաղումները լայն տարածում են ստանում: Աճյունասափորով արված դիակիզումով միայն մեկ նախաուրարտական թաղում է հայտնի ՀՀ տարածքից՝ Քարաշամբի միջինբրոնզեդարյան դամբարանադաշտից, որը չնայած խեցեղենի գույնի, որակի տարբերություններին, իր ձևաբանական առանձնահատկություններով հիշեցնում է ուրարտական աճյունասափորները⁴:

Արգիշտիխիմիլի դամբարանադաշտի դիակիզման ծեսով թաղումներից երկուսը աղքատիկ են, իսկ մյուս երկուսը միջին, կամ միջինից էլ ցածր խավի ներկայացուցիչների են պատկանում: Մինչդեռ Էրեբունիի կողմբարիումը⁵ և Էրեբունիից ոչ շատ հեռու գտնվող Ավտոագրեգատ գործարանի ուրարտական դամբարանը (մ.թ.ա. VIII դ.)⁶ աչքի են ընկնում իրենց հարստությամբ և անկասկած պատկանել են ռազմական կամ քրմական վերնախավի ներկայացուցիչների: Այսինքն, դիակիզման ծեսը կիրառվել է սոցիալական շատ տարբեր դիրքեր ունեցող խմբերի կողմից:

Թաղման ծիսակարգի այս ձևերը (կարասային թաղումներ, դիակիզում և դիամանատում աճյունասափորներում) բնորոշ չեն եղել Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքի հին բնակչությանը: Ընդհանրապես ուրարտական դարաշրջանի թաղման ծեսի վերաբերյալ չկան գրավոր աղբյուրների վկայություններ: Արձանագրություններում բացակայում է կրոնական հիմքի վրա ամրագրված քրմական դասի կամ հանգուցյալների հարազատների կողմից կիրառվող հուղարկավորման ծեսի նկարագրությունը: Թաղման ծեսը, հետևաբար, հնարավոր է վերականգնել հիմնվելով զուտ հնագիտական նյութի ուսումնասիրության վրա⁷: Մյուս կողմից, արձանագրությունները վկայում են մարդկանց մեծ վերաբնակեցումների մասին և կարող են տվյալներ տալ, թե այս թաղման ծեսերը որ տա-

² Տիրացյան Գ. Ա., նշվ. աշխ.:

³ Կարասային հին թաղումներ, արդեն մ.թ.ա. II հազարամյակում (Միջին բրոնզի դարաշրջան), հայտնի են Հյուսիսային Կովկասից՝ Դաղստանից (մեկ բացառությամբ՝ մանկական թաղումներ), տե՛ս Гаджиев М. О погребальном обряде племен горного Дагестана в бронзовом веке. - Ученые записки Дагестанского филиала АН СССР. Институт Истории, языка и литературы, XIII. Махачкала 1964, с. 247-248.

⁴ Геворгян А. Ц. Раскопки карашамбского некрополя. Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, Երևան, 1993, с. 50-60:

⁵ Մարտիրոսյան Հ., Մնացականյան Հ., Նոր Արեշի ուրարտական կողմբարին. - ՀՀ ԳԱ Տեղեկագիր 1958, 10, էջ 63-71:

⁶ Есаян С. А., Биягов Л. Н., Амаякян С. Г., Канесян А. Г. Биайнская гробница в Ереване. Ереван 1991.

⁷ Ուրարտական թաղումների վերաբերյալ տե՛ս Հմայակյան Ս. Գ., Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 78-82. Burney Ch. Urartian Funerary Customs. - The Archaeology of Death in the Ancient Near East. Oxford 1995, p. 205-208. Herles M. Überlegungen zur Sitte der Kremation bei den Urartäern. - Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, 2011, VI/1, S. 50-90.

րածքներից կարող էին ներմուծված լինել: Հանրահայտ փաստ է, որ Արգիշտի I-ը 6600 «ռազմական մարդկանց» է վերաբնակեցրել Էրեբունի նորակառույց քաղաքում մ.թ.ա. 782 թ.: Այս մարդիկ դուրս էին բերվել Խաթի և Ծուփանի արևմտյան երկրներից (հետագա Մալաթիա և Ծոփք)⁸:

Համարվում է, որ Էրեբունիի հիմնադրումից վեց տարի անց, մ.թ.ա. 776 թ. Արգիշտի I-ը հիմնադրում է Արգիշտիխինիլին: Սակայն Հ. Մարտիրոսյանը կարծում է, որ Արգիշտիխինիլի կառուցումը սկսվել է մի քանի տարի առաջ, իսկ Արգիշտի I-ի կառավարման տասնմեկերորդ տարին, այսինքն, 776 թ., քաղաքի կառուցման ավարտն է մատնանշում: Ըստ աղմ, հնարավոր է, որ Արգիշտի I-ը արևմուտքից տեղափոխված մարդկանց մի մասին բնակեցնել Արգիշտիխինիլիում: Հնարավոր է նաև, որ Արգիշտի I-ի որդին, Սարգուրի II-ը, որը ևս բազում նվաճումներ է կատարել և մարդկանց հոծ խմբեր տարաբնակեցրել, արևմուտքից բերված մարդկանց նոր խմբեր բնակեցնել Արգիշտիխինիլիում:

Հիշյալ արևմտյան տարածքներում մ.թ.ա. III հազարամյակից արդեն հայտնի են կարասային թաղումները, իսկ ավելի ուշ, II հազարամյակի սկզբից, Խեթական կայսրության տարածքից հայտնի է դիակիզումով թաղումը աճյունասափորներում: Ըստ այդմ, պետք է կարծել, որ նշված թաղումները պատկանել են Հայկական լեռնաշխարհի արևմուտքից բերված բնակչությանը:

Nvard Tiratsyan (Armenia)

SOME MANIFESTATIONS OF MORTUARY RITES IN THE ARGISHTIHINILI CEMETERY

The characteristics of burials of the Argishtihinili Urartian cemetery are different from those of the local population. Obviously, the inhabitants of the Urartian city were not of local origins. They were settled there by the kings Argishti I and Sarduri II from other regions of their kingdom. Some specificities of burials give us possibility to conclude that the inhabitants of the city were derived from the extreme south-west of the kingdom.

Պատրիկ Տոնապետյան (Ֆրանսիա)

ՆՈՐ ՊՐՊՏՈՒՄՆԵՐ ԵՐԵՐՈՒՅՔ ՀՆԱՎԱՅՐՈՒՄ

2009 թվից սկսած հայ-ֆրանսիական արշավախումբը (ՀՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից՝ Գյումրու երկրագիտական թանգարանը¹, իսկ Ֆրանսիայի Էքս-Մարսել համալսարանի² ու CNRS³-ի կողմից՝ LA3M փորձարանը⁴) ուսումնասիրում է Շիրակի մարզի Երեբունյե վաղ քրիստոնեական ու միջնադարյան հնավայրը:

Ուսումնասիրությունն ունի միջմասնագիտական ուղղվածություն և միտված է համընդգրկող ու շրջապատային հնագիտությանը (archéologie globale et environnementale) ծառայելու: Ուստի այն ընթանում է միաժամանակ մի քանի ուղղություններով, համադրելով մասնավորապես դասական հնագիտություն, հնագիտական մարդաբանություն, «կառուցվածքների հնագիտություն», հայկական բանասիրություն, արվեստի ու ճարտարապետության պատմություն և երկրաձևաբանություն (géomorphologie):

Գիտարշավի առաջին գործերից եղավ հնավայրի ամբողջական, մանրամասն ու ճշգրիտ հատակագիծը հանելը (նկ. 1), քանի որ այդպիսի հանույթ դեռ չկար: Ուշադրության կենտրոնում է եռանավ հայտնի բազիլիկը, որ բազմակողմանի՝ աղբյուրագիտական, ճարտարապետական, արվեստաբանական, հնագիտական... քննության է ենթարկվում: Դրա արդյունքում փորձ է արվում հուշարձանի հիմնական թվագրումը և շինարարական փուլերի համեմատական թվագրումները ճշտելու: Պրայրտումների այսօրվա փուլում, բազիլիկի վիմագրության, ճարտարապետության ու զարդարանքի, ինչպես և սիրիական աղերսների ուսումնասիրությունը (կարելի չէ այստեղ մանրամասնել) հավանական է դարձնում դրա հիմնական թվագրումը VI դարով:

⁸ Арутюнян Н. В. Корпус урартских клинообразных надписей. Ереван 2001, КУКН 173 II, 36-37; 174 A2, 21-22.

¹ Գյումրու երկրագիտական թանգարանի տնօրեն Համազասպ Խաչատրյան:

² Aix-Marseille Université (AMU).

³ Centre National de la Recherche Scientifique = Գիտական հետազոտության ազգային կենտրոն:

⁴ Laboratoire d'Archéologie Médiévale et Moderne en Méditerranée (LA3M, UMR 7298, Aix-en-Provence) = Միջերկրածովյան ավազանի միջնադարյան-XVIII դդ. հնագիտության փորձարան [լաբորատորիա] (Էքս-ան-Պրովանս):




Fig. 1 - Plan du site
Erebuni (Yerevan) en 1910 - G. Marchand, L. Schach, D. Martini et F. Kienast, CNRS, L'ASU, UMR 7206, 2010-2013.

Նկ. 1. Երեբույք հնավայրի ընդհանուր հատակագիծ:
Հեղ. Ժ.Մարշան և Լ.Շնեյդեր (LA3M, 2010-2013)

Բազիլիկի հարավարևմտյան անկյունային սենյակի հատակը հետաքրքրություն էր շարժում իր հարավային կեսի կենտրոնական հատվածի քանդված վիճակով: 2013 թվի մասնակի պեղումները (sondage) պարզեցին, որ սենյակի տակ, սկզբնական ենթադրության հակառակ, ստորգետնյա ծավալ չկա, ոչ էլ նախաքրիստոնեական շերտի հետք: Միաժամանակ, այդ մասնակի հորատման շնորհիվ, անմիջապես այժմյան հատակի տակ բացվեց նախնական, ավելի խնամյալ, բայց վնասված հատակը: Դրա տակ էլ՝ գետնի նախապատրաստական շերտի մեջ գտնվեցին փայտածխի բեկորներ, որոնց ռադիոածխածնային վերլուծումը (արդյունքները սպասվում են 2014 թվի զարմանք) խոստանում է օգտակար տվյալներ բազիլիկի հիմնադրման թվագրման համար:


Բազիլիկի շինարարական պատմության համեմատական թվագրումները ճշտելու գործին իր ավանդն է բերում «կառուցվածքների հնագիտությունը»: Մանրակրկիտ գննելով պահպանված պատերի մակերեսները, այն փորձում է վերականգնել շինարարական պատմության փուլերը: Երեբույքի բազիլիկի դեպքում այդ քննությունը հանգեցնում է այն ենթադրությանը, որ շարվածքի մեջ նկատելի տարբերությունները համապատասխանում են համեմատաբար կարճատև ընդհատումների և ուղիղ մտահղացման հիմնավոր փոփոխությունների:

XX դարի վերանորոգումները չհաշված, կառույցի վրա նկատվում են մակերեսային մի քանի միջամտություններ: Ավելի նշանակալի է արևմտյան սյունասարահի՝ գուցե բավական վաղ կատարված վերակառուցումը, որի արդյունքում կարծես ստեղծվել է սիրիական բազիլիկների արևմտյան ճակատի «պատշգամբները» հիշեցնող ցածր մի հարթակ՝ աշտարակաձև երկու կողային սենյակների միջև:

Եռաչափ, դեռ զուտ վարկածային վերակազմության փորձի մեջ (նկ. 2) պատկերված է բազիլիկի հավանական ընդհանուր ծավալը այդ վերակառուցումից առաջ, երբեմն արտասովոր իր յուրահատկություններով: Դրանցից են հս-հվ ուղղվածություն ունեցող՝ արևելյան անկյունային սենյակների վերին հարկի երկվանջ տանիքների թեքությունը՝ ավելի բարձր նավի կողմում, ավելի ցածր արտաքին ծայրում⁵: Դրանցից է նաև հարավային սյունասարահը՝ իր արևելյան կամարից պահպանված առաջին քարի նախնական հաշվառմամբ ենթադրվող վեց սյուներով, որոնց կշռությամբ ու հարաբերությունը հարավային ճակատի շքամուտքերի հետ խնդրահարույց են: Թեական են մնում նաև հուշարձանի մի

⁵ Անսովոր է այստեղ ոչ թե տանիքի թեքությունը: Այն հետևում էր կողային սյունասարահների ծածկերին և դիտվում է մասնատիպ սիրիական եկեղեցիներում՝ օրինակ Տուրմանիի արևելյան սենյակների հարթ ծածկերը: Անսովոր է այն, որ երկթեք կտուրներ ունեն այսպիսի թեքություն:

շարք այլ հատվածներ, օրինակ արևմտյան երկու անկյունային սենյակների երկրորդ հարկի, եթե ոչ գոյությունը, գոնե բարձրությունը:



Նկ. 2. Երեբունյքի բազիլիկի վերակազմության փորձ:
Հեղ. Պ.Տոնասյետյան, կատարում՝ Դ.Ոլլիվյե (LA3M, 2012 թ.):

Բազիլիկից բացի, Երեբունյքի ընդարձակ համալիրի բազմապիսի ու հաճախ առեղծվածային մյուս շինությունների ավերակները նույնպես արժանանում են քննության: Եկեղեցուն հարավից հարող գոտին աչքի է ընկնում քառակուսի, աստիճանավոր պատվանդանների հետքերի քանակով: Հատկապես տարածքը մաքրելուց հետո լավ տեսանելի են դրանցից յոթի կամ ութի մնացորդները: Այդ քանակը բացառիկ է ամբողջ վաղ քրիստոնեական Հայաստանում, ուր դրանց թիվը 2-3-ից չի անցնում մի հնավայրում: Այստեղ ամենախիտ խումբը գտնվում է հարավային գոտու արևելյան մասում՝ եկեղեցու հարավարևելյան անկյան մոտ, ուր հատկապես ուշագրավ է բազիլիկի խորանի գծի վրա՝ հս-հվ առանցքով տեղադրված չորս պատվանդանների շարքը: Հայտնի է, որ ուշ անտիկ և վաղ միջնադարյան Հայաստանում ու Վրաստանում բավական տարածված այս տեսակ պատվանդանների վրա կանգնեցվել են քառանիստ կոթողներ կամ սյուներ⁶: Ի դեպ Երեբունյք հնավայրը հարուստ է կոթողների բեկորներով: Բայց դեռ անհայտ է մնում, արդյո՞ք նման հուշարձաններ ունեցել են միաժամանակ այլ՝ մահարձանային գործառույթ, իրենց կենտրոնում թաղումներ պարունակելով⁷, թե՞ ծառայել են միայն որպես հիմք՝ կոթողի կամ սյան համար:

Այդ հարցը պարզելու նպատակով 2011 թվին քննվեց մի պատվանդան⁸, որի պեղումը թույլատրվել էր «շնորհիվ» նրան, որ արդեն վնասվել էր գանձախույզների կողմից: Ավա՞ղ «այցելուները» հուշարձանը քրքրել էին մինչև խորքը: 2013 թվին թույլատրվեց պեղել մեկ այլ պատվանդանի⁹ մնացորդի ներքին ծավալը, որ նման այցելությունից զերծ էր մնացել ու դեռ լցված էր նախնական հողով: Իջնելով մինչև բնական գետինը պարզեցինք, որ այնտեղ թաղում չի եղել: Այսպիսով, գոնե մի նմուշով, առայժմ հերքվում է մահարձանային գործառույթի վարկածը:

⁶ Ս. Մնացականյան, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Երևան, 1982, էջ 9-46, Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան քառանիստ կոթողները, Երևան, 2012, էջ 47: Հեղինակը նախընտրում է պատվանդանը «խարիսխ» անվանել:

⁷ Ա. Սահինյանը (Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955, էջ 55) միակն է, որ կարողացել է նման մի պատվանդան ուսումնասիրել: 1944-47 թվերին Քասաղի բազիլիկայի հվ-ալ անկյան մոտ պատվանդանի կենտրոնական «խորշում» (փոստ մ) նա գտել է երկու կմախք՝ «ոչ պառկած վիճակում» (այդգա՞մ): Սակայն հնագիտական նյութերի և նկարագրության բացակայությունը թույլ չի տալիս կմախքների վաղեմությունը ճշտելու:

⁸ Վերը նշված չորս պատվանդաններից արևմուտք:

⁹ Վերը նշված չորս պատվանդաններից երկրորդը՝ եկեղեցու որմնախարիսխից հաշված:

Եկեղեցու հարևանությամբ կանգնեցրած այդ կոթողները հավանաբար որոշակի դեր են խաղացել տարածքի վերակազմակերպման մեջ՝ իրենց շուրջը քաշելով բազմաթիվ թաղումներ: 2011 թվից սկսած արշավախումբը գնում է այդ գոտին և դրանից արևելք տարածքը, ուր մի քանի քարարկղեր են պահպանվել: Այստեղ կատարված պեղումները բացել են մի գերեզմանոց, որ տարածվել է եկեղեցու որմնախարիսխից մինչև դրանից մոտ տասնհինգ մետր հարավ՝ ամ-ալ ուղղությամբ ընթացող մի պատ: 2011-13 թթ. բացվել ու ուսումնասիրվել են վաթսուներկու գերեզմաններ: Մարդկային ոսկորների վրա կատարված ռադիոածխածնային վերլուծումներից ստացվել են տասնհինգ թվագրումներ, և ևս ութի արդյունքները սպասվում են 2014 թվի գարնանը:

Առկա տվյալները ցույց են տալիս, որ թաղումներ են կատարվել ուշ անտիկ շրջանից մինչև մեր օրերը. վաղագույն գերեզմանը IV-VI դարերից է, նորագույնը՝ XVIII-XX: Սակայն վաղագույն թվագրումները միայն երկուսն են, և գերեզմանոցը սկսել է իսկապես զարգանալ VIII-X դարերում, երբ գլխավոր պատվանդանների շարքից անմիջապես արևմուտք ստեղծվել է կարծես «առանձնաշնորհյալ» գոտի: Իսկ XI-XII դարերում՝ ծիսական, դավանաբանական կամ ինչ-որ այլ փոփոխմամբ գերեզմանոցը ստացել է նոր «մասնագիտացում», ընդունելով հիմնականում կանանց և մանավանդ ցածրահասակ ու նորածին երեխաների: Ինչ վերաբերում է թաղման կարգերին, դրանք մնացել են մոտավորապես նույնը դարերի ընթացքում. կմախքները մեջքի վրա են պառկած ամ-ալ ուղղությամբ, ոտքերը դեպի արևելք, բազուկները հաճախ խաչված կրծքի վրա: Սակայն նկատվում է որոշակի մի ժամատիպաբանական ընթացք: Մինչև X դարը թաղումները սեղանակերպ արկղի ձև ունեն՝ կազմված կողի վրա կանգնեցրած ուղղահայաց քարե սալիկներից, որոնց ծածկում են իրար կպած հորիզոնական սալեր: Իսկ XI դարից սկսած երևան են գալիս ավելի համեստ թաղումներ՝ անմիջապես գետնի մեջ փորված փոսերի ձևով:

Հայտնաբերված սակավաթիվ իրերի մեջ աչքի է ընկնում գոտու մի բրոնզե ճարմանդ (նկ. 3), որի տեսակը՝ Հայաստանում արդեն հայտնի հատկապես Դ-վինի պեղումներից, համարվում էր միջնադարյան¹⁰, մինչդեռ Երեբույքում գտած նմուշը՝ տակը եղած ոսկորի ռադիոածխածնային վերլուծության շնորհիվ վստահորեն թվագրվում է 606-766 թվերի միջև:

Ամենայն հավանականությամբ, Երեբույք հնավայրի ամեն գերեզմանի տեղը, անկախ դրա թվագրումից, նշվում էր դրանից մի քանի տասնյակ սմ վեր՝ գետնի մակերեսի վրա կանգնած տապանաքարով: Միակտոր տուֆի այդ փոքր զանգվածներն ունեն փոքր-ինչ ավելի լայն «հարթակի» վրա «դրված» երկթեք «կտուրի» ձև: Հնավայրում պահպանված բազմաթիվ (մոտ հիսուն) նմուշները դժբախտաբար իրենց նախնական տեղում չեն մնացել և արձանագրություններից զուրկ են: Հավանական է թվում, որ ամենացածր, համարյա տափակ նմուշները, որոնք հիշեցնում են անտիկ ամբողջական քարարկղերի կափարիչները, ամենահինն են, և որ դարերի ընթացքում աստիճանաբար ընդգծվել է լանջերի թեքությունը: Երեբույքում օրորոցաձև, ուղղանկյուն կամ խոյաձև տապանաքար չի պահպանվել, իսկ խաչքարերի բեկորները խիստ սակավաթիվ են:



Նկ. 3. Երեբույք, 606-766 թթ. թաղում, գոտու ճարմանդ, բրոնզ (լ-նկար Դ.Մարտիրոսյան, LA3M, 2012 թ.):

Բազիլիկը հյուսիսից և արևելքից եզերող՝ խնամքով կառուցված, բայց շատ վատ պահպանված «պարսպապատը» հետաքրքրություն է շարժում ի միջի այլոց իր՝ եկեղեցուց թեթևորեն տարբեր կողմորոշմամբ, որը ռելիեֆից թելադրված չէ: Արդյո՞ք դա նշանակում է, որ «պարսպապատը» նախորդել է այժմյան եկեղեցուն: 2012 թվի մասնակի հորատումներն ու դիտարկումները մտածել են

¹⁰ **Б. Аракелян**, Армения в IX-XIII веках, *Археология. Крым, Северо-Восточное Причерноморье и Закавказье в эпоху средневековья*, под ред. Б.А.Рыбакова, Мнсклп, 2003, էջ 335-350, տախտակ 157, էջ 443, նկ. 26-28: Հաղինակը թվագրում է Դ-վինի ճարմանդները IX-XIII դարերով:

տվել, որ «պարսպապատին» դրսի կողմից հաված՝ համեմատաբար կանոնավոր դասավորությամբ որմնամույթերը սկզբնական շարվածքին ավելացվել են: Ստեղծվում է այն տպավորությունը, որ ցանկացել են ընդգծել ավելի գեղագիտական-խորհրդանշական, քան պաշտպանական այդ պատի հանդիսավորությունը: Ի դեպ տեղանքի ընդհանուր հանույթը հուշում է «պարսպապատի» և ձորակը փակող «ամբարտակի» միջև կապի հնարավորությունը, իր հե-ի) մշուշոտ, գուտ վարկածային պատկերը...:

Բազիլիկից արևելք փոքր ձորակում կիսաթաղված շենքն¹¹ ու դրանից հարավ՝ ձորակը հատող պատերի մնացորդների առկայությունը մի շարք հարցեր են հարուցում՝ կապված դրանց թվագրման ու գործառույթի հետ: Պատասխանների մի մասը կարող է տալ ձորակի ստորգետնյա շերտերի ուսումնասիրությունը, որին լծված է արշավախմբի երկրաձևաբան (géomorphologue) հնագետը: Կիսաթաղված շենքից արևելք կատարված հորատումն ի հայտ բերեց շինարարական խրամատը և փոքր-ինչ ավելի արևելք, ժայռերի արհեստական մի կուտակում՝ հավանաբար շենքի պաշտպանության համար ստեղծված: Այս վերջին հանգամանքը թուլացնում է ջրամբարի վարկածը և ուժեղացնում ի սկզբանե կիսաթաղված շինության դամբարանային գործառույթի վարկածը: Այս հանգամանքը մտածել է տալիս մաս, որ գետակի սկզբնական հունն ու տեսքը այժմյանից տարբեր են եղել, մի տարբերություն, որ տրամաբանորեն կապվում է ձորակը հատող երեք-չորս պատերի համակարգի հետ: Այդ պատերի հյուսիսային (հոսանքն ի վեր) երեսը խնամքով մշակված ու որմնամույթերով ուժեղացրած լինելն իր հերթին մատնանշում է ամբարտակից տարբեր, սկզբնական մի այլ գործառույթ, կապված գուցե եկեղեցու արևելյան պարսպի հետ, որի գուցե շարունակությունն է կազմել այդ պատերի համակարգը: Այստեղ ևս, դեռ բազմաթիվ հարցականներ են մնում...:

Հավելենք, որ գիտարշավի նպատակներից է մաս հնավայրի տարբեր մասերում գտնվող քանդակազարդ քարերի բազմաթիվ բեկորների կատալոգը կազմելը: Զանդակված բեկորների ուսումնասիրությունը հավելյալ լույս կափռի Երերույքի հուշարձանների պատմության ու գեղարվեստական արժեքի վրա:

Կիրառելով այսպիսի բազմակողմանի մոտեցում, արշավախումբը հույս ունի պատասխանելու վերը նշված հարցերից մի քանիսին: Իսկ հնավայրի պահպանումն ու արժեվորումը, ինչպես և հարևան բնակավայրում ապրող համայնքի կապը նրա հետ նույնպես ուշադրության արժանի են: Ահա ինչու արշավախումբը համագործակցում է ՀՀ մշակույթի նախարարության հետ մաս այդ ուղղությամբ՝ մասնակցելով բարեկարգման և արժեվորման ծրագրերի մշակմանն ու իրագործմանը:

Patrick Donabedian (France)

NEW INVESTIGATIONS ON THE SITE OF YERERUYQ

Since 2009 a joint Armenian-French archaeological mission is carrying out a survey on the important Early Christian and Medieval site of Ereruyq, in the North-West of the Republic of Armenia. The first campaigns, in 2009 and 2010, consisted in external studies of the remains of monuments, and the elaboration of a detailed plan of the ensemble. Since 2011, the mission has begun a more thorough program including excavations. On the whole, an attempt is made to implement a multidisciplinary approach combining archaeology, history of art and architecture, Armenian philology, building archaeology, archaeological anthropology and sedimentology (geomorphology). The paper aims to briefly present the first results of this new study, as well as some questions still unresolved.

¹¹ Դրա մասին տե՛ս *Փ. Թեր-Մարտիրոսով*, Мало изученные памятники Ереруйка, *Հայոց սրբերը և սրբավայրերը*, Երևան, 2001, էջ 234-243, այստեղ էջ 241-243:

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անահիտ Աբրահամյան (Հայաստան)

ՀԱՅԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՅԱԼ ԳՈՐԾԻՔԱՆԻՇ ԲԱՌԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՅԼ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ

Անդրկովկասյան տարածաշրջանի ժողովուրդները, դարեր շարունակ ապրելով կողք կողքի կամ գտնվելով մեկը մյուսի լեզվական միջավայրում, քաղաքական ու տնտեսական սերտ հարաբերություններ են ունեցել միմյանց հետ, որի արդյունքով բազմաթիվ հասկացություններ արտահայտող բառերին զուգահեռ գործածել են նաև հարևան լեզուներից փոխառված բառեր: Անկասկած, դրանց մեջ զգալի են նաև տնտեսության, այդ թվում երկրագործության ոլորտն արտացոլող հասկացությունների բառանվանումները: Հայերենի բարբառներում փոխառություններ հանդիպում են երկրագործության գրեթե բոլոր ոլորտներում օգտագործվող գործիքների անվանումներում: Նույնը պետք է ասել նաև տարածաշրջանի լեզուներում հայերենից փոխառյալ գործիքանիշ բառերի վերաբերյալ:

Մեզ հարևան ժողովուրդների լեզուներում հայերենից փոխառյալ բառերի վերաբերյալ հետազոտություններ են կատարել ինչպես հայ (Յ. Գազանճեան, Ն. Մկրտչյան, Խ. Ամիրյան, Գ. Ասատրյան), այնպես էլ ոչ հայ (Ռ. Դանկոֆ, Ա. Պիսովիչ, Ու. Բլեյզինգ) հեղինակներ¹: Իրենց բառարաններում այդ փոխառություններն արտացոլել են Հ.Աճառյանը, օտարազգի լեզվաբաններ Ա. Թիթցեն, Հ. Էրենը և ուրիշներ²: Նշված հեղինակների աշխատություններում արձանագրված են նաև հայերենից փոխառված մի շարք գործիքանիշ բառեր: Նշենք մի քանիսը.

Մանկեռ

Թուրքերենի Վանի խոսվածքում առկա է *manger* «փայտե փոցի»³ բառը, որը, ինչպես նշում է Ռ. Դանկոֆը, փոխառություն է հայերենից⁴:

Քուրա /բրի/

Բառը գործածվել է թուրքերենի բարբառներում⁵: Ըստ Ն. Մկրտչյանի՝ բառանունը հայերենի հին փոխառություններից մեկն է աքքադերենից և թուրքերենին է անցել հայերենի միջոցով⁶: Թուրքերենում բառը հայերենից փոխառյալ են համարում նաև Ռ. Դանկոֆը և Հ. Էրենը⁷:

Հառոլ

Առկա է թուրքերեն բարբառների Ախլաթի (Խլաթ /Բիթլիս/) խոսվածքում՝ *harol* «ցորենը ուղիղ գծով ցանելուն նպաստող արօր, որ հետևից ունի երկու երկար տախտակ» ձևով⁸, որը Ռ. Դանկոֆը և Ա. Թիթցեն համարում են փոխառություն հայերեն բարբառային *հարօր* ձևից⁹:

¹ Տե՛ս **Յ.Գազանճեան**, Հայերեն փոխառյալ բառեր թրքերենի մեջ. – *Յուշարձան գրական ժողովածոյ առթիւ 100-ամեայ յոթնիցի հաստատման Մխիթարեան միաբանութեան ի Վիեննա (1811–1911) եւ 25-ամեայ տարեշրջանի «Հանդէս ամսօրեայ» ուսումնաբերքի (1887–1911)*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1911, էջ 325 – 330, **Ն.Մկրտչյան**, Հայերենից փոխառություններ թուրքերենի բարբառներում, Երևան, «Աստղիկ», 2007, **Խ.Ամիրյան**, Հայերենից փոխառյալ բառեր արդի թուրքերենում, Երևան, «Արաս», 1996, **Գ.Ա.Ասատրյան**, Արդյոք կա՞ն հայկական փոխառություններ նոր պարսկերենում, *ՊԲՀ*, 1990, 3, էջ 139–144, **R.Dankoff**, *Armenian loanwords in Turkish*, Wiesbaden, Otto Harrassowitz, 1995, **A.Pisowicz**, *Die armenischen Entlehnungen in den türkischen Dialekten*. – *Folia Orientalia*, XXVI, 1989, S. 123–129, **U.Bläsing**, *Armenisch-Türkisch. Etymologische Betrachtungen ausgehend von Materialien aus dem Hemsingebiet*, Amsterdam/Atlanta, Rodopi, 1995 և այլն:

² Տե՛ս **Հ.Աճառյան**, Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), Երևան, ԵՊՀ հրատ., հ. Ա–Դ, 1971–1979, **A.Tietze**, *Tarihi ve Etimolojik Türkiye Türkçesi Lugatı*, c. 1. A-E, İstanbul-Wien, Simurg Kitapçılık, Yayıncılık ve Dağıtım Ltd. Şti., Verlag der Österreichische Akademie der Wissenschaften, 2002, c. 2. F-J, Wien, Verlag der Österreichische Akademie der Wissenschaften, 2009, **H.Eren**, *Türk dilinin etimolojik sözlüğü*. Ankara, Bizim Büro Basım Evi, 1999 և այլն:

³ Տե՛ս *Türkiye’de Halk Ağzından Derleme Sözlüğü (DS)*, c. IX, Ankara, Türk Tarih Kurumu Basımevi, 1977, էջ 3121:

⁴ Տե՛ս **R.Dankoff**, նշվ. աշխ., էջ 103, նաև **Ն.Մկրտչյան**, նշվ. աշխ., էջ 155:

⁵ Արձանագրված է *kulbik* «բրի» (Սվազ), *külbe* «փոքր բրի» (Երզնիզյան, Մալաթիա /Արաբկիր/, Սվազ, Անկարա), *kürbe* «երկկողմանի փոքր բրի» (Ելյազիք) բառաձևերի գործածությունը (տե՛ս *DS*, c. VIII, Ankara, 1975, էջ 2995, 3027, 3042), *külbe* «միակողմանի բրի» (Ելյազիք) (տե՛ս *DS*, c. XII, Ankara, 1982, էջ 4576):

⁶ Տե՛ս **Ն.Մկրտչյան**, նշվ. աշխ., էջ 203:

⁷ Տե՛ս **R.Dankoff**, նշվ. աշխ., էջ 157, **H.Eren**, նշվ. աշխ., էջ 273:

Մանգալ

Բառը հայերենից են փոխառել մի շարք լեզուներ: ՀԱճառյանը նշում է վրացերենը (მანგალი [mangali]), լազերենը (mangali), մինգրելերենը (mangana), ինգուշերենը, ուտիերենը և թուշերենը (mangal), լեզգիերենը (mangal, makkal), արխազերենը (amagana), ագուլերենը (mağqal), չեչեներենը (māngal)՝ բոլորն էլ «մանգալ» նշանակությամբ, ուտիերենում՝ նաև «երկարակոթ ցաքատ՝ փշաքիներ կտրատելու համար»¹⁰: Օ. Վինոգրադովան ու Գ. Կլիմովն այս ցանկին ավելացնում են ցախուրերենն ու ռուտուլերենը (mangal)¹¹: Անշուշտ, հայերենից է փոխառված նաև ադրբեջաներենի Օրդուբադի խոսվածքում գործածվող məngəlx «ոչ մեծ մանգալ» բառածինը¹²:

Գերանդի

Հայերենից բառանունը փոխառել են մի շարք լեզուներ. Ռ. Դանկոֆը և այլ հեղինակներ նշել են թուրքերենն ու ադրբեջաներենը¹³: ՀԱԲ-ը նշել է քրդերենն ու լազերենը¹⁴: Լազերենում բառանվան հայերենից փոխառյալ լինելը նշել է նաև Գ. Ղափանցյանը¹⁵:

Մարանդի

Ըստ Ռ. Դանկոֆի՝ բառը հայերենից են փոխառել թուրքերենն ու ադրբեջաներենը¹⁶:

Եղան

Գ. Զահուկյանը, անդրադառնալով հայերենի և արևելակովկասյան լեզուների փոխհարաբերության հարցին՝ նշում է այդ լեզուներում հայերենից զգալի թվով փոխառությունների՝ այդ թվում նաև *եղան* բառանվան առկայությունը¹⁷: Բառն առկա է նաև թուրքերենի Գյումուշհանեի բարբառի Բայբուրդի խոսվածքում՝ «բերքը կալսելու ժամանակ գործածվող գործիք» նշանակությամբ¹⁸:

Եվ այսպես շատ ու շատ բառեր:

Գործիքանիշ փոխառյալ բառերը, լինելով շատ գործածական առօրյա խոսակցականում, այն աստիճան են մերվել փոխառող լեզվին, նրա բարբառներին, որ հաճախ ընկալվել են որպես սեփական և նույնիսկ արտացոլվել տվյալ բարբառը կրողների բանահյուսության մեջ, աշխատանքի երգերում: Մակայն մի բան է սեփական ընկալվելը, որը բնական է, և մի այլ բան՝ սեփականացնելը: Հարևան որոշ երկրների մասնագետների կողմից երբեմն փորձեր են արվում սեփականացնելու հայերենից փոխառյալ որոշ բառեր:

Դրանց շարքում են նաև *տափան* և *գութան* գործիքանիշ բառերը:

Տափան /անատույզ/

Տափանը հողը հարթելու, սերմը հողով ծածկելու գործիք է: *Տափան* բառը վկայված է 5-րդ դարի և ավելի ուշ շրջանի հայ թարգմանական գրականության մեջ /Ոսկերբան, Գիրք վաստակոց/:

⁸ Տե՛ս DS, c. VII, Ankara, 1974, էջ 2294:

⁹ Տե՛ս R.Dankoff, նշվ. աշխ., էջ 23, A.Tietze, *Tarihi ve Etimolojik Türkiye Türkçesi Lugatı*, c. 2, էջ 262:

¹⁰ Տե՛ս ՀԱԲ

¹¹ Տե՛ս О.И.Виноградова, Г.А.Климов, Об арменизмах в дагестанских языках. — *Этимология 1977*, Москва, Наука, 1979, էջ 157

¹² Տե՛ս *Azərbaycan dialektologi lüğati*, c. 2, Ankara, Türk Dil Kurumu, 2003, էջ 388

¹³ Տե՛ս R.Dankoff, նշվ. աշխ., էջ 35, H.Eren, նշվ. աշխ., էջ 233, U. Bläsing, նշվ. աշխ., էջ 76: Բառանունը լայնորեն գործածվել է թուրքերենի բարբառներում, տե՛ս DS, c. VI, Ankara, 1972, էջ 1999 (gerenti «փոքր գերանդի» /Տրապիզոն/), c. VIII, էջ 2753 (kerendi /Տրապիզոն, Գյումուշհանե, Ռիզե/, kerenti /Ամասիա, Տրապիզոն, Ռիզե, Կարս/ kerimti /Տրապիզոն/, kerindi /Կարս, Էրզրում, Էրզինջան, Կայսերի/, kerinti /Օրդու, Մարաշ, Տրապիզոն, Էրզինջան, Սվազ/, «գերանդի» /Տրապիզոն/՝ նշված բոլոր վայրերում՝ «գերանդի» նշանակությամբ, Կայսերիում kerenti-ն՝ «երկապի մանգալ» նշանակությամբ), էջ 2878 (kirinti «գերանդի, մանգալ» /Օրդու, Գիրեսուն/) և այլն: Տե՛ս նաև Ն.Սկրտչյան, նշվ. աշխ., էջ 96, 206:

¹⁴ Տե՛ս ՀԱԲ, հ. Ա, էջ 541: Մոկսի քրդերը գործածել են k'elendü ձևը (տե՛ս И.Орбели, Курдско-русский словарь. — И.Орбели, *Избранные труды*, т. 2, вып. 2, Ереван, 2002, «Зангак-97», էջ 108):

¹⁵ Տե՛ս Гр. Капанцян, *О взаимоотношении армянского и лазо-мегрельского языков*, Ереван, Изд-во АН Арм.ССР, 1952, էջ 33:

¹⁶ Տե՛ս R.Dankoff, նշվ. աշխ., էջ 35, նաև՝ Ն.Սկրտչյան, նշվ. աշխ., էջ 206: Թուրքերենի բարբառների Կարսի խոսվածքում այդպես է կոչվել (merendi) փոքր գերանդին (տե՛ս DS, c. IX, էջ 3167): Ադրբեջաներենում նույնպես բառը գործածվել է բարբառներում. այդ անվամբ մանգաղը (mərandi) գործածել են մասնավորապես Նախիջևանի և Շարուրի շրջանների /Նախիջևան/ գյուղերի, ինչպես նաև Սաղյանի /Ադրբեջան/ բնակիչները (տե՛ս *Azərbaycan dialektologi lüğati*, c. 2, էջ 382):

¹⁷ Տե՛ս Գ.Բ.Զահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 613:

¹⁸ Տե՛ս DS, c. V, Ankara, 1972, էջ 1672, R.Dankoff, նշվ. աշխ., էջ 43:

Պետք է նշել, որ բառը գործածվել է թուրքերենի բազմաթիվ բարբառներում¹⁹: Հ. Աճառյանը, Յ. Գազանճյանը և այլ հեղինակներ գտնում են, որ թուրքերենը բառը փոխառել է հայերենից²⁰:

2012 թ. թուրքական պարբերականներից մեկում տպագրվել է մի հոդված, որտեղ քննարկման առարկա է դարձել *tapan* /մաս «տափան» նշանակությամբ/ բառի՝ թուրքերենում հայերենից²¹, թե՞ հայերենում թուրքերենից փոխառյալ լինելու հարցը²²: Վերջին տեսակետի օգտին հեղինակի /Էրբայ/ հիմնական կռվաններից մեկն էլ այն է, որ հայագի է. Սևորտյանը *tapan*-ը /մաս «տափան» նշանակությամբ/ համարում է բնիկ թուրքերեն բառ՝ սերված **da:ban* ձևից²³, և հնարավոր չէ՝ թուրքերենում նման արմատի առկայության պայմաններում բառը փոխառվել հայերենից: Սակայն հեղինակը հաշվի չի առնում այն հանգամանքը, որ թուրքերենի հանրահայտ մասնագետներ, ինչպիսիք են Ռ. Դանկոֆը և Ա. Թիքցեն, անգամ ծանոթ լինելով Է. Սևորտյանի տեսակետին, պնդում են բառի /«տափան» նշանակությամբ/ հայերենից փոխառյալ լինելը²⁴:

Ռ. Դանկոֆը նշում է, որ բառը հայերենից է փոխառել ոչ միայն թուրքերենը, այլև ադրբեջաներենը²⁵: Հ. Աճառյանը նշել է բառանվան փոխառությունը «Լազախի թուրքերի» խոսվածքներում²⁶: Ի դեպ, Լազախի թաթարների /ադրբեջանցիների/ խոսվածքներում բառանվան՝ «սերմը ծածկելու գործիք» նշանակությամբ գործածությունը նշել է Ա. Երիցյանը դեռևս 1886 թ.²⁶: Ադրբեջաներենում բառանվան՝ հայերենից փոխառյալ լինելը փաստել է նույնիսկ ադրբեջանցի լեզվաբան, Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, այդ ակադեմիայի լեզվի ինստիտուտի տնօրեն Է. Բուդաղովան²⁷:

Գութան /անատույզ/

Բառը վկայված է դեռևս հայ միջնադարյան մատենագրության մեջ («Ռսկիփորիկ» ժողովածու, XII–XIII դդ. վիմագիր նվիրատվական արձանագրություններ): Ն.Բյուզանդացին գտնում է, որ *գութայ* բառին նախորդել է *գութան* ձևը, և հղում է Ճառընտիր ժողովածուն («Ոչ ուստեք գտանի ողորմութիւն, բայց ի տեղիս տեղիս շարժին ի սերն Բրիստոսի, ոմն պատարագ եւ ընծայ նուիրելով, ...եւ ոմն ռիվ առնելով, եթէ ազարակ եւ կամ ջրադաց, եւ այլ ոք՝ *գութան*»²⁸):

Մի շարք հեղինակներ գտնում են, որ բառանունը հայերենից են փոխառել թուրքերենը²⁹, քրդերենը³⁰, նոր պարսկերենը³¹: Հ. Աճառյանը նշում է, որ հայերենից բառը փոխառել են «Ռւմիյոյ ասորիները»³²: Ռ. Դանկոֆը գտնում է, որ հայերենից է բառանունը փոխառել մաս ադրբեջաներենը³³:

¹⁹ Տե՛ս *DS*, c. IV, Ankara, 1969, էջ 1313 (*daban* «տափան» /Բոլու, Կաստամոնու, Չանկիրի, Անկարա/, c. X, Ankara, 1978, էջ 3823 (*taban* /Բոլու, Չանկիրի, Սամսուն, Գիրեսուն, Տրապիզոն, Նիզդե, Կիբրիս/, *tahan* /Մարաշ/, *tapa* /Արդվին/, *tapan* /Աֆրոնկարահիսար, Բալիկեսիր, Քութահիա, Բոլու, Սակարիա, Չանկիրի, Չորում, Սինոպ, Սամսուն, Ամասիա, Թրքատ, Օրդու, Գիրեսուն, Տրապիզոն, Գյումուշհան, Կարս, Արդվին, Էրզրում, Ագրը, Վան, Բիթլիս, Էյլազիք, Մարաթիա, Գազիանթեպ, Հաթայ, Կրշենիր, Սվազ, Կայսերի, Նեվշենիր, Նիզդե, Ադանա, Իչել, Կրկլարելի/, *tapanlama* /Արաբկիր /Մալաթիա/՝ բոլորն էլ «տափան» նշանակությամբ), էջ 3824 (*tapanlamak* /Կոջանի, Չորում, Արդվին, Էրզրում, Էյլազիք, Սվազ, Յոզգաթ, Անկարա, Նիզդե/, *tapan çekmek* /Ամասիա/, *tapan etmek* /Տրապիզոն, Արդվին, Կոնիա, Իչել/, *tapannamak* (Անկարա)՝ բոլորն էլ «տափանել, դաշտը հարթեցնել...» նշանակությամբ) և այլն:

²⁰ Տե՛ս ՀԱԲ, հ. Գ, էջ 391, **Յ. Գազանճյան**, նշվ. աշխ., էջ 326, 329, **Ն. Սկրտչյան**, նշվ. աշխ., էջ 303, **Խ. Ամիրյան**, նշվ. աշխ., էջ 29, 48, և այլն:

²¹ Տե՛ս **F. Erbay**, Türkçe-Ermenice kelime alışverişi ve Tapan kelimesi üzerine [Turkish-Armenian Vocabulary Exchange: The Case of the Word Tapan]. – *Ä. Ü. Türkiyat Araştırmaları Enstitüsü Dergisi*, 48(2012) (Erzurum), էջ 9–16:

²² Տե՛ս **Э. В. Севортян** *Этимологический словарь тюркских языков. Общетюркские и межтюркские лексические основы на буквы “В”, “Г”, “Д”*, Москва, Наука, 1980, էջ 110–112:

²³ Տե՛ս **R. Dankoff**, նշվ. աշխ., էջ 140, **A. Tietze**, Die Zusammensetzung des gewerblichen Wortschatzes in der Provinz Kars. – *Zeitschrift für Balkanologie* 18 (1982), էջ 159–215, N 244:

²⁴ Տե՛ս **R. Dankoff**, նշվ. աշխ., էջ 140: Ադրբեջաներենի բացատրական բառարանում *tapan* բառն արձանագրված է «հողը... տոփանելու գործիք...» նշանակությամբ, թեև նշված չէ փոխառության աղբյուրը (տե՛ս *Azərbaycan dilinin izahli lügəti*, c. 4 Baku, “Şərq-Qərb”, 2006, էջ 265): Ադրբեջաներենի բարբառային բառարանը գրանցել է բառանվան՝ «փոցի» նշանակությամբ գործածությունը Լազախի, Օրդուբադի, Շահբուզի և այլ տարածաշրջանների ադրբեջանաբանակ վայրերում, նույնպես առանց փոխառության աղբյուրը նշելու (տե՛ս *Azərbaycan dialektoloji lügəti*, c. 2, էջ 547):

²⁵ Տե՛ս ՀԱԲ, հ. Գ, էջ 391:

²⁶ Տե՛ս **А. Д. Ерицов**, Экономический быт государственных крестьян Казахского уезда Елисаветпольской губернии. – *Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края*, т. II, Тифлис, тип. А. А. Михельсона, 1886, часть II, էջ 157, 230:

²⁷ Տե՛ս **Э. И. Будагова**, К истории азербайджанско-армянских языковых контактов. – *Советская тюркология*, 1984, 3, էջ 14:

²⁸ Տե՛ս **Նորայր Ն. Բիզանդացի**, *Բառագիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ–ԺԷ դարուց*, Ժնև, Martiros Minassian, 2000, էջ 147 (*Ճառընտիր*, ԻԹ, 715):

²⁹ Տե՛ս **Յ. Գազանճյան**, նշվ. աշխ., էջ 330, **Խ. Ամիրյան**, նշվ. աշխ., էջ 19–20, 54, ՀԱԲ, հ. Ա, էջ 588, **A. Pisowicz**, նշվ. աշխ., էջ 124, **R. Dankoff**, նշվ. աշխ., էջ 38–39 և այլն: Բառանունը լայնորեն գործածվել է թուրքերենի բարբառներում: տե՛ս *DS*, c. VI, Ankara, 1972, էջ 2203 (*gutan* «գութան» /Արդվին/, c. VIII, էջ 2981 (*köten* /Չանաքկալե, Բուրսա, Չորում, Սամսուն, Ամասիա, Թրքատ, Կարս, Հաթայ, Սվազ, Անկարա, Քրշենիր, Կայսերի, Ադանա/, *kotan* /Սամսուն,

Չնայած Վ. Ռադովը և Լ. Բուդադովը գտնում են, թե «kotan»-ը աղբբեջաներեն բառ է³⁴, սակայն այս տեսակետը կասկածի տակ են առնում նույնիսկ աղբբեջանցի մասնագետները: Օրինակ՝ Գ. Ջավադովը իր մի հոդվածում նշում է, որ բառի «ստուգաբանությունն ու ծագումը... պարզ չեն և պահանջում են հատուկ հետազոտություններ»³⁵: Սակայն աղբբեջանցի մասնագետները, չհամակերպվելով Ռ. Դանկոֆի տեսակետին, դիմում են այլ քայլերի՝ առաջ քաշելով այդ բառով կազմված տարբերակների՝ բուն աղբբեջաներեն լինելու մասին կարծիքներ: Խոսքը մասնավորապես *ղարակոթան* բառի մասին է: Գ. Ջավադովի վերոնշյալ հոդվածն ունի հետևյալ խորագիրը՝ «Традиционное азербайджанское пахотное орудие *гара котан*». Ըստ նրա՝ «ղարա» բառը այստեղ ունի «մեծ» նշանակությունը, այսինքն՝ «մեծ գութան», որն այնքան էլ հիմնավորված չէ: Սովորաբար գութանին ասում են *մեծ արոր*, բայց ոչ *մեծ գութան*: Մեր կարծիքով՝ ղարակոթանը ոչ թե աղբբեջանական ավանդական գործիք է, այլ աղբբեջանցիները վերցրել են հայերից, իսկ անվանումն էլ Դարաբաղի բարբառից հայտնի *կրորկյութան* է /կեռ գութան/, որն այդպես է կոչվել՝ նկատի ունենալով կառուցվածքը: Գ. Ջավադովը նույնիսկ հոդվածում գործիքը նկարագրելիս օգտագործում է *կոր* բառը, նշում գործիքի կեռ լինելը:

Հարևան որոշ երկրների մասնագետների կողմից փորձեր են արվել սեփականացնելու հայերենից փոխառյալ այլ գործիքանիշ բառեր ևս, ինչպիսիք են *ճրղլա/ճրղլի* «արոր» /Աղբբեջան/³⁶, *հերգի-մաղ* «երկումատնի» /Թուրքիա/³⁷ և այլն:

Anahit Abrahamyan (Armenia)

WORD NAMES OF AGRICULTURAL IMPLEMENTS IN OTHER LANGUAGES OF TRANSCAUCASIAN REGION BORROWED FROM ARMENIAN

Some word names of agricultural implements existing in the Armenian language are studied in the report. According to Armenian and foreign authors, other languages of Transcaucasian region have borrowed these words from Armenian, for example: *գութան* [gut'an] "plough" (was borrowed by Turkish, Azerbaijani, Kurdish, New Persian), *գերանդի* [gerandi] "scythe" (- by Turkish, Azerbaijani, Kurdish, Laz), *տափան* [tap'an] "harrow" (- by Turkish, Azerbaijani), etc. Recently there is a tendency by the experts of the neighboring countries to "appropriate" some words borrowed from Armenian. In the report I tried to refute the validity of such viewpoints.

Սարգիս Ավետյան (Հայաստան)

ՀՈՐԱՆՋԻ ԴԻՐՔՈՒՄ / ԵՒ Ս ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ԲԱՌԱՍԿՉՔՈՒՄ ԵՒ ԲԱՌԱՍԻՋՈՒՄ (տարածամանակյա-տիպաբանական քննություն)

Ինչպես հայտնի է, հորանջը ինքնին արտասանական դժվարություն է ներկայացնում, և լեզուները սովորաբար ձգտում են որևէ կերպ հաղթահարել այն: Մասնավորապես, *i* կամ *u + մեկ այլ ձայնավոր* կապակցությունների դեպքում հորանջը վերացվում է հետևյալ եղանակներով. ա) երկու վանկարար ձայնավորների միջև զարգանում են միջանցումային (թուլցիկ) հնչյուններ, բ) ձայնավորների

Տրապիզոն, Գյումրի, Մոսկով, Կարս, Էրզրում, Ադրի, Վան, Բիթլիս, Էդիրնե/, *kōtan* /վան/, *kutan* /Իզմիր/՝ բռնում էլ «գութան, մեծ արոր» նշանակությամբ), էջ 3017 (*kutan* /Օրդու/), էջ 3053 (*kūtan* /Ադրիան/, *kūt* /Չանաբլակ/ «գութան / արոր», с. XII, էջ 4570 (*kōtan* /Չորում/ «մեծ արոր», /Կախերի/ «մեծ արոր / գութան»):

³⁰ Տե՛ս ՀԱԲ, հ. Ա, էջ 588: Ի դեպ, Մոկսի քրդերը գործածել են *k'utan* [*pūpūtan*] ձևը (տե՛ս **И.Орбели**, նշվ. աշխ., էջ 111):

³¹ Տե՛ս **Գ.Ս.Ասատրյան**, նշվ. աշխ., էջ 143:

³² Տե՛ս ՀԱԲ, հ. Ա, էջ 588: Ուրմիայի ասորիները գործածել են *k'ūt'ān* ձևը (**А.Калашев**, Русско-айсорский и айсорско-русский словарь. – *Сборник материалов для описания местностей и племен Кавказа*, вып. XX, Тифлис, Изд. Управления Кавказского учебного округа, 1894, էջ 143):

³³ Տե՛ս **R.Dankoff**, նշվ. աշխ., էջ 38:

³⁴ Տե՛ս **В.В.Радлов**, *Опыт словаря тюркских наречий*, т. 2, ч. II, Санкт-Петербург, тип. Императорской АН, 1899, у. 1216, **Л.Будагов**, *Сравнительный словарь Турецко-татарских наречий...*, т. 2, Санкт-Петербург, тип. Императорской АН, 1871, էջ 144:

³⁵ Տե՛ս **Г.Д.Джавадов**, *Традиционное азербайджанское пахотное орудие гара котан*. – *Советская этнография*, 1981, 6, էջ 120:

³⁶ Տե՛ս **Г.А.Гулиев**, *О пахотных орудиях в системах земледелия в Азербайджане*. – *Азербайджанский этнографический сборник*, вып. II, Баку, Изд-во АН Аз.ССР, 1965, էջ 17:

³⁷ Տե՛ս <http://www.sozce.com/nedir/153349-hergimat>:

երկվանկ հնչյունակապակցությունը վերածվում է երկբարբառի, գ) *i-* և *u-* և հաջորդող ձայնավորից առաջ համապատասխանաբար վերածվում են *y* և *w/v* բաղաձայնների: Ըստ այդմ, թե՛ բառասկզբում՝ ձայնավորից առաջ, թե՛ բառամիջում՝ բաղաձայնի ու ձայնավորի միջև, լեզուներում նկատվող *i > y* և *u > w/v* պատմական հնչյունափոխությունները պայմանավորված են հորանջը վերացնելու ընդհանուր միտումով: Սակայն, լեզուներում բաղաձայնի ու ձայնավորի միջև, հորանջից խուսափելու միտումից բացի, գործում է մեկ այլ տարածամասնակյա հակադիր միտում, որը փորձում է վերացնել *Cy* և *Cw* (այն է՝ որևէ բաղաձայն + *y* կամ *w*) տիպի բաղաձայնային կապակցությունները. դրա հետևանքն են ներկայացնում *y > i* և *w > u* հնչյունական անցումները: Նայած այն բանին, թե այս կամ այն լեզվում տվյալ ժամանակահատվածում որ միտումն է գերիշխող դառնում, ըստ այդմ էլ տեղի են ունենում մի կողմից՝ *i > y* և *u > w/v*, մյուս կողմից՝ *y > i* և *w > u* հնչյունափոխությունները:

Այսպես, հ.-ե. **ǵ* և **ǵ* կիսաձայնները լատիներենում բաղաձայնի ու ձայնավորի միջև (իհարկե այն դեպքում, եթե նախորդող բաղաձայնի հետ փոխազդեցական հնչյունափոխության չեն ենթարկվել և պահպանվել են որպես ինքնուրույն հնչյուններ) վերածվել են *i* և *u* ձայնավորների (**ǵ > i* և **ǵ > u*), որոնք հաջորդող ձայնավորի հետ երկվանկ ձայնավորային կապակցություններ են կազմել, այսինքն՝ *i-* և *u-* գտնվել են հորանջի դիրքում. հմմտ. հ.-ե. **medhjo-* > (հմմտ. հ. հնդ. *mádhyā-*, հուն. *μέσ(σ)ος*) > լատ. *medius* «միջին», հ.-ե. **spekǵō* > (հմմտ. հ. հնդ. *pásyāmi*, գաբա-ավեստ. *spasyā*) > լատ. *speciō* «նայում եմ, տեսնում եմ»: Նմանապես, հ. հնդ. *čatvāras* ձևի դիմաց ունենք լատ. *quattuor* (< **kʷatʷor*) «չորս», հ. պ. *mṛtvī* (ռուս. *мертвый*) ձևի դիմաց՝ լատ. *mortuus* (< **mortʷos*) «մահացած, մահկանացու» և այլն¹: Ի դեպ, լատ. *veniō* (< **gʷenjō* < **gʷemjō* < **gʷm-jō*) «գալիս եմ» ձևի դեպքում տեղի ունեցած *-mj-* > *-nj-* առնմանական հնչյունափոխությունը, որը բացատրելի է միայն *j*-ին նախորդող դիրքում (այլապես, *-mj-* հնչյունակապակցությունը կպահպանվեր անփոփոխ), ակնհայտորեն վկայում է լատիներենի ավելի վաղ շրջանում նշված դիրքում *j*-ի բաղաձայնային արտասանության մասին²:

Նմանատիպ *y > i*, *v > u* (ավելի ճիշտ՝ *w > u*) հնչյունական զարգացում է նկատվում նաև հին պարսկերենում. հմմտ. հ.-ե. **solʷos* > (հմմտ. հ. հնդ. *sarva-*, ավեստ. *haʷrva-*, հուն. *ὅλος*) > հ. պրսկ. *haruva* «ամբողջ, ողջ» և այլն³:

Մյուս կողմից, լատիներենում ավելի ուշ գործել է հակառակ միտումը. հետդասական շրջանում՝ մ.թ. I դարից սկսած, բաղաձայնի ու ձայնավորի միջև *i* և *u* ձայնավորները կրկին վերածվում են *j* և *ǵ* կիսաձայնների, իսկ այնուհետև՝ շփական հնչյունների, որոնք *jē*, *ǵō*, *ǵu* հնչյունակապակցությունների դեպքում անհետանում են. հմմտ. *quiēscas* «որպեսզի հանգստանաս, հանդարտվես» > **quiescas* > *quescas*; *battuō* «խփել, հարվածել, կռվել» > *battuō* > *batto*; *quattuor* «չորս» > *quattuor* > *quattor* և այլն⁴:

Հին հնդկերեն վեդ. *iya*, *uva* > հետվեդ. *ya*, *va* հնչյունական զարգացումները⁵ նույնպես, չնայած *y* և *v* միջանցումային հնչյունների առկայությանը, ըստ էության, ձայնավորից առաջ (այսինքն՝ հորանջի դիրքում) տեղի ունեցած *i > y*, *u > v* հնչյունափոխություններ են: Ի դեպ, վեդաներում *iya* և *uva* հնչյունակապակցությունների *y*-ն և *v*-ն հաճախ բացակայում են (որը թերևս պայմանավորված է միջանցումային *y*, *v*-ի բույլ արտասանությամբ), և գուգահեռաբար ունենք *iya/ia*, *uva/ua*. հմմտ. *vṛkī* «էգ գալ» բառից՝ *vṛkī(y)am* - եգ. հայց., *tanū* «մարմին» բառից՝ *tanu(v)ā* - եգ. գործ., *tanu(v)ē* - եգ. տր. և այլն⁶: Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ թեև վեդաներում *iya* և *uva* կապակցությունները հաճախ գրությամբ արտահայտվում են *ya*-ի և *va*-ի միջոցով, այդուհանդերձ, վեդ. *ya*-ի և *va*-ի՝ վաղ շրջանում ունեցած *iya* և *uva* հնչյունական արժեքը և, ըստ այդմ, երկվանկությունը ակնհայտ կերպով երևում են Ռիգ-Վեդայի հնագույն տեքստերի տաղաչափությունից, իսկ բուն *i(y)a* > *ya*, *u(v)a* > *va* հնչյունական փոփոխությունները հետվեդայական կամ առնվազն ուշվեդայական շրջանի երևույթ են⁷:

Չնայած արտաքին նմանությանը, վեդ. *i(y)a*, *u(v)a* > հետվեդ. *ya*, *va* հնչյունափոխությունները չպետք է շփոթել վեդաներում «Զիվերս-Էջերտոնի օրենքի» համաձայն տեղի ունեցող *ya/ia* և *va/ua* (հմմտ. *dyaus/diyas* «երկինք», *dvā/duvā* «երկու») հերթագայությունների հետ, որոնց ծագումը պայմա-

¹ И. М. Тронский, *Историческая грамматика латинского языка*, Москва, издательство Литературы на иностранных языках, 1960, с. 122-123; A. Ernout, A. Meillet. *Dictionnaire étymologique de la langue latine. Histoire des mots*. Paris, éditions Librairie C. Klincksieck, 1959, p. 414-415, 553-554.

² M. Meier-Brügger, *Indogermanische Sprachwissenschaft*, Berlin-New York, Verlag Walter de Gruyter, 2010, S. 217.

³ W. Brandenstein, M. Mayrhofer, *Handbuch des Altpersischen*, Wiesbaden, Verlag Otto Harrassowitz, 1964, S. 33-35.

⁴ И. М. Тронский, *Աշխ.* աշխ., էջ 101-102; М. В. Сергиевский, *Введение в романское языкознание*, Москва, издательство Литературы на иностранных языках, 1952, с. 137-138.

⁵ T. Burrow, *The Sanskrit Language*, London, Faber and Faber publishing house, 1955, p. 36.

⁶ Т. Я. Елизаренкова, *Грамматика ведийского языка*, Москва, издательство «Наука», Главная редакция восточной литературы, 1982, с. 107-108.

⁷ T. Burrow, *Աշխ.* աշխ., էջ 36, 113, 253; Т. Я. Елизаренкова, *Աշխ.* աշխ., էջ 107-108.

նավորված է խոսքի շղթայում նախորդող վանկի քանակային բնույթով⁸: Այնինչ, վեդ. $i(ya)$, $u(v)a >$ հետվեդ. ya , va հնչյունական անցումները իրենց էությամբ համապատասխանում են հորանջի դիրքում տեղի ունեցած դաս. լատ. i կամ $u +$ մեկ այլ ձայնավոր $>$ հետդաս. լատ. $y(i)$ կամ $w(y) +$ մեկ այլ ձայնավոր հնչյունական զարգացումներին և, որպես այդպիսին՝ միանգամայն անկախ լինելով նախորդող վանկի քանակային բնույթից, պատմական հնչյունափոխություններ են ներկայացնում:

Իհարկե, լեզուներում միշտ չէ, որ $i > y$ և $u > w$ (իսկ մյուս կողմից՝ $y > i$ և $w > u$) նույնաբնույթ փոփոխությունները տեղի են ունենում միաժամանակ, ինչպես եղել է, ասենք, լատիներենի կամ հին հնդկերենի պարագայում: Այլ դեպքերում հորանջը վերացնելու միտումը ($i > y$ և $u > w/v$ փոփոխության կամ երկբարբառի առաջացման միջոցով), ինչպես և դրա հակադիր միտումը ($y > i$ և $w > u$) կարող են i -ն և u -ն (մյուս կողմից՝ y -ն և w -ն) ընդգրկել միաժամանակ կամ էլ տվյալ փոփոխությունը կարող է տեղի ունենալ միայն i -ի կամ միայն u -ի (մյուս կողմից՝ միայն y -ի կամ միայն w -ի) դեպքում, իսկ մյուսը կարող է պահպանվել անփոփոխ կամ համեմատաբար ավելի ուշ համապատասխան փոփոխության ենթարկվել: Բայց հատկանշական է, որ նշված երկու հակադիր միտումները սովորաբար միաժամանակ չեն գործում: Այլ կերպ ասած՝ $w > u$ փոփոխության ժամանակ y -ն կարող է պահպանվել անփոփոխ և չվերածվել i -ի, բայց $w > u$ հնչյունափոխությանը զուգահեռ չի կարող $i > y$ փոփոխություն տեղի ունենալ կամ հակառակը: Այսպես, երբ գրք. mi ձայնավորը հայերենի հետագա զարգացման ընթացքում (համեմայն դեպս, հայոց գրերի ստեղծումից հետո) հորանջի դիրքում, այդ թվում՝ mi -ի հանգող միավանկ բառերի թեք հոլովածներում ու բաղադրյալ կազմություններում, վերածվել է $v(v)$ բաղաձայնի (հմմտ. գրք. $\delta mi - \delta miuj$, $\delta miadeti >$ աշխրհ. գր. և բրբռ. $\delta mi - \delta v(h)$, $\delta v(adeti)$, $\delta v(adeti)$ և այլն), i ձայնավորը հնչյունական նմանատիպ պայմաններում $h(i) > j(y)$ փոփոխության չի ենթարկվել (հմմտ. գրք. $\delta h - \delta huj >$ աշխրհ. գր. և բրբռ. $\delta h - \delta hui$, գրք. $i(h) > j(y)$, $i(h) > j(y)$ աշխրհ. $i(h) > j(y)$ (բրբռ.), $i(h) > j(y)$ (գր. և բրբռ.) և այլն): Եվ ընդհակառակը, երբ հայերենի նախագրային շրջանում բառամիջում i ձայնավորը հաջորդող a և o ձայնավորների հետ երկբարբառներ է կազմել՝ $ia > ea(ia)$, $io > so(io)$ ⁹, և տվյալ դեպքում հորանջը վերացել է այդ եղանակով, ապա $u +$ մեկ այլ ձայնավոր (այդ թվում՝ ua , uo) կապակցության դեպքում հորանջը պահպանվել է, ուստի դասական հայերենում ունենք ui , ui ու ui , ui և այլ երկվանկ ձայնավորային կապակցություններ¹⁰. հմմտ. մի կողմից՝ հ.-ե. $*g^{h}iā - > *k^{h}iā - >$ գրք. $k^{h}iā$, $*d^{h}i - > *k^{h}i - >$ $aj >$ գրք. $k^{h}iā$, $*m^{h}iā > *m^{h}iā + bhi >$ գրք. եզ. գործ. $m^{h}iā$, $*portio-sio > *portio-jn >$ գրք. եզ. սեռ. որդւյ, մյուս կողմից՝ հ.-ե. $*snuso - >$ գրք. ui , եզ. սեռ. ui , $*srut - > *ui >$ գրք. ui , եզ. սեռ. ui , ui առու/առույ, հոգ սեռ. ui , $*pluso - >$ գրք. ui , եզ. սեռ. ui ¹¹:

Ուշագրավ է, որ լեզուներում $y > i$ և $w > u$ հնչյունական անցումները, ի տարբերություն $i > y$ և $u > w/v$ փոփոխությունների, սովորաբար բառակազմում՝ ձայնավորից առաջ, չեն հանդիպում: Անշուշտ, դրա պատճառն այն է, որ տվյալ դեպքում բացակայում է $y > i$ և $w > u$ փոփոխությունների համար անհրաժեշտ նախադրյալ՝ նախորդող բաղաձայնը: Կարծում ենք՝ դրանով է բացատրվում այն փաստը, որ բառակազմում հորանջից խոսափելու միտումը գործում է ավելի ազատ, հետևաբար $i > y$ և $u > w/v$ հնչյունական զարգացումներն ավելի արագ և հեշտությամբ են տեղի ունենում, քան բառամիջում՝ բաղաձայնի ու ձայնավորի միջև: Ըստ այդմ՝ լեզուներում հանդիպում են այնպիսի դեպքեր, երբ հորանջի դիրքում.

1) $i > y$ և $u > w/v$ փոփոխությունները միաժամանակ տեղի են ունենում թե՛ բառակազմում և թե՛ բառամիջում. հմմտ. մի կողմից՝ հ.-ե. $*ei/i -$ «գնալ» արմատական հիմքից $>$ հ. հնդ. ներկա հոգ. I դ. $i - mas$ «մենք գնում ենք», հոգ. III դ. $yanti$ ($< *i - enti < *i - enti$) «նրանք գնում են»¹², մյուս կողմից՝ հ.հնդ. $kratu -$ «միտք, բանականություն», եզ. սեռ. $kratv - as$, եզ. տր. $kratv - ē$, $avi -$ «ոչխար», եզ. սեռ. $avy - as$, $pati -$ «ամուսին», եզ. տր. $paty - ē$ և այլն¹³:

2) $i > y$ և $u > w/v$ փոփոխությունները տեղի են ունենում բառակազմում, իսկ բառամիջում i , u ձայնավորները շարունակում են պահպանվել հորանջի դիրքում, ինչպես եղել է, ասենք, հայերենի

⁸ O. Szemerényi, *Einführung in die vergleichende Sprachwissenschaft*, 2., Aufl., Darmstadt, Verlag Wissenschaftliche Buchgesellschaft, 1980, S. 100-102, 166, 205, M. Mayrhofer, *Indogermanische Grammatik*, Bd. I, Halbbd. 2, Lautlehre (Segmentale Phonologie des Indogermanischen), Heidelberg, Carl Winter Universitätsverlag, 1986, S. 164-167.

⁹ Գ. Բ. Джаукян, *Сравнительная грамматика армянского языка*, Ереван, издательство Академии наук Армянской ССР, 1982, с. 24; հին հայերենի ui կապակցության i -ի ծագման և նրա հնչյունական արժեքի վերաբերյալ տե՛ս նաև՝ Ս. Ավետյան, ՎԻՄԻ-ի հնչյունական արժեքը և հնչյունային կարգավիճակը դասական հայերենում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, էջ 184-190, 218-228:

¹⁰ Հին հայերենի ui , ui ու ui կապակցությունների հնչյունական արժեքի վերաբերյալ տե՛ս Ս. Ավետյան, նշվ. աշխ., էջ 147-157, 165-169, 183-184:

¹¹ Բերված ձևերի հնդեվրոպական նախաձևերի համար տե՛ս Գ. Բ. Джаукян, նշվ. աշխ., էջ 24, 39-40, 70, 133, 136, 188; Գ. Բ. Ջաուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախադրյալի ժամանակաշրջան, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 115, 137, 143, 149, 151:

¹² J. Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch*, Bd. I, Bern und München, Francke Verlag, 1959, S. 293-294.

¹³ O. Szemerényi, նշվ. աշխ., էջ 163.

նախագրային շրջանում: Հ. Աճառյանը նշում է, որ հ.-ե. *uper-ը նախ դարձել է *ուեր, իսկ այնուհետև՝ վեր¹⁴: Այդ ինքնին հասկանալի է, քանի որ հ.-ե. միջձայնավորային *p-ն տալիս է հայ. լ, ինչպես՝ *epi > եւ (շաղկապ), *oipā > հովիւ, -ug և այլն: Սակայն Հ. Աճառյանը չի բացատրում, թե *ուեր-ը կոնկրետ ինչպես է դարձել վեր. արդյոք սղվե՞լ է շեշտագուրկ m-ն, իսկ լ(w)-ն՝ վերածվել վ(v/b)-ի, (*ուեր > *ւեր > վեր), թե՞ միջձայնավորային լ(w)-ն ընկել է, որից հետո տեղի է ունեցել m(u) > վ(v/b) հնչյունական զարգացում (*ուեր > *ուեր > վեր): Եթե նկատի ունենանք, որ հայերենում շեշտագուրկ m-ն և ի-ն բառասկզբում մեկ բաղաձայնից առաջ սղման օրենքին առհասարակ չեն ենթարկվել, ինչպես՝ հժ, սեռ. հժհ, մւ, սեռ. մւոյ և այլն¹⁵, ապա կարելի է ենթադրել, որ *ուեր (uwer) ձևի լ(w)-ն՝ որպես միջանցումային հնչյուն, անհետացել է m(u)-ի և հաջորդող ե(e) ձայնավորի միջև, իսկ այնուհետև ձայնավորից առաջ տեղի է ունեցել m(u) > վ(v/b) փոփոխություն՝ այն է՝ *uwer > *uer > ver/ber (վեր)՝ թերևս w միջակա աստիճանով՝ *uer > *wer > ver/ber (վեր): Բացի այդ, քանի որ վերջնականի ձայնավորների սղումը տեղի է ունեցել ավելի վաղ, քան շեշտանախորդ վանկերի ի և m ձայնավորների թուլացումը կամ անկումը¹⁶, ապա այդ հանգամանքը ևս հաստատում է, որ *ուեր (uwer) ձևից վեր-ը չէր կարող առաջանալ շեշտանախորդ m(u)-ի անկմամբ, քանի որ նախքան m(u)-ի սղումը վերջնականի ե(e)-ն արդեն սղված կլիներ, և դրա հետևանքով առաջացած կլիներ միավանկ *ուր(uwr) > *ուր(ur) ձև՝ բաղաձայնից առաջ m(uw) > m(u) ձուլումով: Ըստ այդման պետք է ընդունել, որ *ուեր-ը վեր է դարձել միջանցումային լ-ի անկման, իսկ այնուհետև հորանջի դիրքում m(u) > վ(v/b) կամ թերևս m(u) > լ(w) > վ(v/b) փոփոխության հետևանքով՝ *uper > *uwer > *uer > ver/ber կամ *uer > wer > ver/ber (վեր): Իսկ բառամիջում m(u) + մեկ այլ ձայնավոր կապակցությունների դեպքում, ինչպես վերը տեսանք, հորանջը հաղթահարվել է ավելի ուշ՝ հայերենի արդեն հետգրային շրջանում:

Սակայն սովորաբար այնպես չի պատահում, որ տվյալ լեզվում հորանջի դիրքում $i > y$, $u > w/v$ փոփոխությունները տեղի ունենան բառամիջում, իսկ բառասկզբում i , u ձայնավորները պահպանվեն անփոփոխ: Հետևաբար հորանջի դիրքում i , u ձայնավորները համեմատաբար ավելի կայուն են բառամիջում, քան բառասկզբում: Իսկ դրա պատճառը, ինչպես տեսանք, այն է, որ բառամիջում հորանջից խուսափելու միտումից բացի գործում է մեկ այլ հակադիր միտում, որը փորձում է վերացնել Cy, Cw տիպի բաղաձայնային կապակցությունները: Մինչդեռ բառասկզբում հորանջից խուսափելու միտումը չի հակակշռվում նշված հակադիր միտումով:

Sargis Avetyan (Armenia)

THE DEGREE OF STABILITY OF THE VOWELS *I* AND *U* IN HIATUS INITIALLY AND MEDIALY (diachronic-typological examination)

As known, hiatus usually poses an articulatory difficulty. Thus the historical changes $i > y$ and $u > w/v$ before a vowel both initially and medially are accounted for by the tendency to remove hiatus. However, the elimination of hiatus in the above-mentioned way, leads to another articulatory difficulty, namely the sequences Cy and Cw. As a result, an opposite tendency comes to operate which aims at obliterating the sequences Cy and Cw. The historical developments $y > i$ and $w > u$ are manifestations of this tendency.

It is noteworthy that the changes $y > i$ and $w > u$ usually do not occur initially. This fact, in its turn, appears to confirm that the phonetic transition $y > i$, $w > u$ is indeed conditioned by the tendency to eliminate the sequences Cy and Cw medially. This also explains why the opposite tendency – the tendency to avoid hiatus – operates more intensively in initial position, and, accordingly, the vowels *i* and *u* more readily develop into *y* and *w*, respectively.

Յուրի Ավետիսյան (Հայաստան)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Գրական լեզվի հիմնական հատկանիշներից մեկը նրա կանոնակարգված լինելն է: Դա ենթադրում է լեզվի բոլոր մակարդակներում լեզվական միջոցների գործածության օրինաչափությունների հաստատում և ամրագրում:

¹⁴ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1979, էջ 330:

¹⁵ A. Meillet, *Altarmenisches Elementarbuch*, Delmar-New York, Verlag Caravan books, 1981, S. 19.

¹⁶ H. Hübshmann, *Kleine Schriften zum Armenischen*, Hildesheim - New York, Verlag Georg Olms, 1976, S. 337.

Լեզվական նորմի ձևավորումը և զարգացումը հակասական գործընթաց է. մի կողմից այն ձգտում է հնարավորինս քիչ փոփոխության ենթարկվել: Կուլտուրական հանրության խնդիրն էլ այն է, որ լեզվի փոփոխությունը արհեստականորեն չարագացնի: «Որքան բարձր է հանրության քաղաքակրթության մակարդակը, այնքան ավելի քիչ է փոփոխվում լեզուն»¹:

Մյուս կողմից՝ լեզվի նորմավորմամբ չափից ավելի տարվելը հակասության մեջ է մտնում լեզվի իրական կյանքի հետ: «Անսահման նորմավորումը լեզվի համար աղետավոր է. այն ամլացնում է լեզուն՝ զրկելով նրան ճկունությունից»²: Լեզվում կատարված տեղաշարժերը նորմավորման որոշակի չափանիշները բավարարելու դեպքում ժամանակ առ ժամանակ պետք է ամրագրվեն լեզվում՝ որպես լեզվագործածության համապարտադիր կանոններ:

Լեզվի նորմավորման չափանիշները հստակ են՝ լեզվական միջոցի գործածականությունը, հասարակության կողմից համընկալումը և տարածվելը, լեզվական իրականության համապատասխանությունը լեզվի կառուցվածքին, լեզվի զարգացման ներքին օրինաչափություններին: Դա նշանակում է, որ զարգացման գործընթացում տեղաշարժերը էական հակասության մեջ չեն կարող մտնել գործող օրինաչափությունների հետ, քանի որ կիսախտվի լեզվի բուն կառուցվածքը: Տեղաշարժերը հիմնականում օբյեկտիվորեն հանգում են այդ օրինաչափությունների հաստատմանը: Գործում են նաև այլ չափանիշներ, ինչպես՝ **հասկացության բովանդակությունը հատակորեն արտահայտելը**, լեզվական նշանի **ձևային-արտասանական հատկանիշները** (օրինակ՝ բառի կարճ և բարեհունչ լինելը), **գործառական ճկունությունը**, կամ այլ կերպ ասած՝ **արտադրողականությունը** և այլն:

Լեզվական կանոնները ձևավորվում են լեզվի բնականոն զարգացման արդյունքում: Դրանց կանոնակարգումը (կողիֆիկացիան) և ամրագրումը իրականացնում են **լեզվաբանները**. Ես սա հատուկ եմ ընդգծում, և խոսքս վերաբերում է նաև հին ուղղագրության վերականգնման հարցի բնարկումներին. այստեղ **դիլետանտիզմը**՝ սիրողականությունը, տեղ չպետք է ունենա. գործը պետք է տնօրինեն միայն մասնագետներ:

Ժամանակակից գրական հայերենում վերջին տասնամյակներին կատարվել են լեզվի նորմավորման չափանիշները բավարարող էական տեղաշարժեր: Սակայն դրանք մեծ մասամբ չեն արձանագրվել նորմատիվ քերականության դասագրքերում և բառարաններում: Եվ դա էական խզում է առաջ բերել արևելահայերենի կենդանի խոսակցական և գրական տարբերակների միջև:

Տեղաշարժեր առկա են ժամանակակից հայերենի բոլոր մակարդակներում՝ հնչյունային, բառային, քերականական:

Հնչյունային մակարդակ: Անվերապահորեն կարող ենք պնդել, որ այսօր արևելահայ գրական լեզվի ձայնեղ պայթականների արտասանության մեջ մի շարք բառերում իշխող միտումը խուլ-ձայնեղ տեղաշարժն է: Դրանցում ձայնեղների խուլ հնչումը անախորհիվ է և գրական լեզվում չպետք է հանձնարարվի որպես արտասանական տարբերակ. ոչ թե՝ **գարքացում, հաշմանքամ, հաջողություն, մակարթակ, արքելք, զուքահեռ**, այլ՝ **գարգացում, հաշմանդամ, հաջողություն, մակարդակ, արգելք, զուգահեռ**, որպես և է կենդանի լեզվում:

Կ և **չ** քերականական մասնիկներից հետո **ռ** և **ե** ձայնավորները արտասանվում են ոչ թե **օ** կամ **է**, ինչպես սահմանում է արդի հայերենի գրական արտասանական կանոնը, այլ **վօ** և **յէ**, ինչպես հնչում է արդի կենդանի գրական հայերենում, այսինքն՝ ոչ թե՝ **կ[օ]րոշեն, կ[է]նթադրեն, չ[օ]ղջունեն, չ[օ]րակեն**, այլ՝ **կ[ըվօ]րոշեն, կ[ըյէ]նթադրեն, չ[ըվօ]ղջունեն, չ[ըվօ]րակեն**: Վերջին դեպքում պահպանվում է նաև սերող ձևակազմական հիմքերի արտասանական պատկերը:

Ան- ժխտական նախածանց ունեցող որոշ բառերում, հիմնականում՝ գրքային-գրական ծագումով արմատական հիմքերում, ակնհայտորեն գերակշռում է **է-ի՝ յէ**, և **օ-ի՝ վօ** արտասանությունը, այսինքն՝ ոչ թե՝ **ան[է]կամտաբեր, ան[օ]ղմաշարավոր**, ինչպես հանձնարարվում է գրական լեզվի կանոնով, այլ՝ **ան[վօ]ղմաշարավոր, ան[յէ]կամտաբեր**, ինչպես կենդանի լեզվում է:

Առնվազն տարակուսելի է **իա, եա, իու** և նման ձայնավորական զուգորդումներում պահանջել **յ** ձայնակապի անպայման հստակ արտասանություն՝ **է[յ]ական, մի[յ]անալ, Վի[յ]եննա**, կամ առանձին բառերում դրանց՝ երկհնչյունային **յա** արտասանություն, օրինակ՝ **քրիստոնյական, Անդրյասյան**, ինչը թելադրում է արդի գրական լեզվի կանոնը, որը ակնհայտ հակասության մեջ է դրանց իրական արտասանության հետ:

Բառային մակարդակ: Հայերենի բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրներից մեկը **փոխառություններն** են: Տերմինային համակարգում չպետք է խուսափել արդեն գործածության մեջ հաստատված փոխառյալ տերմիններից կամ նորագույն փոխառություններից, եթե դրանց հայերեն փոխարինիչները չեն արտահայտում հասկացության ամբողջ իմաստը կամ չունեն անհրաժեշտ արտադրողականություն, ինչպես՝ **հրասայլ-ը տանկ-ի փոխարեն, կերպար-ը իմիջ-ի փոխարեն, ալյուրեքություն-ը ալիբի-ի փոխարեն, դրամատուն-ը բանկ-ի փոխարեն, եզրույթ-ը կամ եզրաբանություն-ը և**

¹ Տե՛ս Լ. Богданова, Стилистика русского языка и культура речи, М., 2011, էջ 27-28:

² Լ. Щерба, Избранные работы по языкознанию и фонетике, т. I, Л., 1958, с. 126.

կամ թե **գիտաբառ**-ը **տեքմին**-ի փոխարեն. հայերեն տարբերակները ակնհայտորեն երկար են, մասամբ՝ անբարեհունչ, երբեմն էլ ամբողջությամբ չեն արտահայտում հասկացության իմաստը, իսկ ամենակարևորը՝ օտար համարժեքի համեմատությամբ անարտադրողական են, չունեն գործառական և բառակազմական ճկունություն:

Էական տեղաշարժեր կան բայի խոնարհման համակարգում: Դասագրքից դասագիրք են փոխանցվում և իբրև թե կանոնական ձևեր հանրությանը մատուցվում կազմություններ, որոնք հնացած են և կենդանի գրական լեզվից դուրս են մղված, ինչպես, օրինակ՝ սոսկածանցավոր և պատճառական բայերի եզակի և հոգնակի արգելական հրամայականների, **ա** խոնարհման աններածանց բայերի հոգնակի արգելականի կազմությունները՝ **մի՛ կարդաք, մի՛ կարդար, մի՛ մոռանաք, մի՛ մոտեցնիր, մի՛ հագնիր** և այլն: Դրանց փոխարեն կենդանի լեզվում այսօր միանշանակ գերիշխում են գրական հայերենի կանոնով և օրինաչափությամբ կազմված տարբերակները, այն է՝ **մի՛ արգելականով** և հրամայականի դրականի ձևերից կազմությունները՝ **կարդա՛մի՛ կարդա, մոռացե՛ք-մի՛ մոռացեք, մոտեցրո՛ւ-մի՛ մոտեցրու, հագիր-մի՛ հագիր** և այլն:

Տեղաշարժեր կան անկանոն և պակասավոր բայերի ուղիղ և թեքված ձևերում: Գործածությունից դուրս են եկել պակասավոր **կենալ** և հավելավոր **գիտենալ** բայերը՝ փոխարինվելով համապատասխանաբար **մնալ** և **իմանալ** բայերով: Բայց ուսումնական գրեթե բոլոր ձեռնարկներում ու դասագրքերում դրանք մատուցվում են որպես գործածական բայեր:

Գրական լեզվի կանոնի տեսակետից հնացել և գրական հայերենում գնալով անգործածական են դառնում մի շարք անկանոն բայերի անցյալ կատարյալի զուգաձևեր՝ **ասի, բերի, թողի, դրի, տվի** և այլն: Ակնհայտորեն առավել կենսունակ ու գործուն են դրանց՝ ցոյական հիմքով կազմությունները՝ **ասացի, բերեցի, թողեցի, դրեցի, տվեցի**: Կանոնական քերականության դասագրքերում որպես զուգահեռ տարբերակներ ներկայացվող այդ ձևերը պետք է դիտվեն ոչ միայն որպես խոսակցական կազմություններ, այլև գրական նորմի տեսակետից հնացած և գրական լեզվում ոչ հանձնարարելի:

Չ ներածանցով **ուռչել** և **սառչել** բայերի անցյալ կատարյալի կանոնական **ուռա** և **սառա** ձևերին զուգահեռ վերջին շրջանում գործառական մեծ ակտիվություն են դրսևորում ցոյական հիմքով կազմությունները՝ **ուռեցի** և **սառեցի**: Դրանք գնալով հաստատուն տեղ են գրավում բայի խոնարհման հարացույցում և ընդունված ձևերի հետ պետք է արձանագրվեն որպես առավել գործածական և նախընտրելի տարբերակներ:

Շարահյուսական համակարգ: Նկատելի տեղաշարժեր կան խնդրառության մեջ և շարահյուսական առանձին կառույցներում: Իբրև խնդրառական տարբերակներ գնալով կանոնի իրավունք են ձեռք բերում թեքված ձևով խնդիր պահանջող մի շարք բայերի՝ անորոշ դերբայով լրացումների՝ նաև ուղիղ ձևով գործածությունները՝ **օգնեց** սովորելու/սովորել, **օգնեց** աշխատելու/աշխատել, **դադարեց** խոսելուց/խոսել: Ակնհայտ փոփոխություններ են առկա առանձին բայերի խնդրառական հատկանիշներում՝ **կարոտել** հայրենիքին//հայրենիքը, **դավանել** սկզբունք//սկզբունքի, **ձեռնարկել** գործի/գործ, **կրակել** մեկի վրա// **կրակել** մեկին և այլն:

Գրական լեզվում հետզհետե ամրապնդվում են շարահյուսական առանձին **օտար կառույցներ**, ինչպես՝ **կայացած համակարգ**, այդ միության անդամ **հանդիսացող** իրավաբաններ, **ինձ մոտ** տպավորություն է ստեղծվում և այլն: Այս կարգի իրողություններից սկզբունքորեն հրաժարվելը լեզուն գրկում է հնարավոր ճկունությունից, ինչ-որ առումով դարձնում է կաղապարված: Խնդրառական վերջին երկու կարգի փոփոխությունները քննարկման առարկա են և նորմավորման չափանիշները բավարարելու դեպքում կարող են արձանագրվել գրական լեզվի կանոններում:

Նշված փոփոխությունների մի մասին և առանձին նոր տեղաշարժերի ժամանակ առ ժամանակ անդրադարձել է ՀՀ ԿԳՆ լեզվի պետական տեսչությունը, սակայն նրա իսկ որոշումները մի շարք դեպքերում ենթակա են վերանայման և նոր որոշումներով ամրագրման ու նորովի հրապարակման: Նշենք դրանցից մի քանիսը:

Տերմինաբանական և ուղղագրական վերջին տեղեկատվում (2006 թ.) արձանագրում է առանձին բառերի արտասանական տարբերակներ, որոնք այսօր ուղղակի անընդունելի են, ինչպես՝ **հեզ-ը՝ հե[ք], մոզ-ը՝ մո[ք], աջակցել-ը՝ ա[չ]ակցել** ևն:

Մեծատառերի գործածությունը կամ չգործածությունը հիմնավորում է անունների բովանդակային և գործառական հատկանիշներով՝ կատարելով բազմաստիճան խմբավորում, ըստ որի՝ **Վճռաբեկ դատարան**-ը պետք է գրել մեծատառով, քանի որ, ի տարբերություն դատախազության, ոչ թե վերահսկողական, այլ դատական մարմին է, **Տրդատի քախտ** կապակցության միայն առաջին բաղադրիչը պետք է գրել մեծատառ, որովհետև դրա ավանդական ուղղագրությունը դեռևս պիտի պահպանվի, իսկ մույն կաղապարով այլ կապակցություններում (**Հայկական պար, Մեծ արջ**) պահանջվում է երկրորդ բաղադրիչները գրել մեծատառ, այն տրամաբանությամբ, որ բաղադրիչը ունի պայմանական, փոխաբերական գործառույթ: **Վայոց ձոր**-ի **ձոր**-ն էլ հանձնարարվում է գրել փոքրատառ՝ պատճառաբանությամբ, թե նախ այդ կապակցությունը հարյուրամյակների գործածություն ունի, և երկրորդ՝ **ձոր**-ը իբր շարունակում է պահել իր ոչ փոխաբերական՝ բառային նշանակությունը: **Գիտությունների ազ-**

գային ակադեմիա-ն պահանջվում է սկսել մեծատառով, քանի որ վերջինս մյուս **ազգային** կոչված կառույցների շարքում չէ. «նա բացառություն է»:

Տեղեկատվություն գործածության մեջ է փորձում դնել առանձին անհաջող տերմիններ. նշենք բազում օրինակներից միայն մեկը՝ ժողովածուի 260-րդ էջում կարդում ենք. «**մեխանիկ** բառի փոխարեն այսուհետև գործածել ...**մեխանիկոս** անվանումը՝ գրելով այն բարձրագույն կրթության վկայագրում»³:

Տերմինաբանականի ձևակերպումների տրամաբանությամբ՝ շրջանառության մեջ է դրվում **ԱՄՆ** հապավումի արտասանական անճիշտ տարբերակը, ըստ որի՝ հապավումը իբր կարդացվում է կամ պիտի կարդացվի ոչ թե **ԱՄՆ**, այլ՝ **ԱՄՆ**, այսինքն՝ պիտի կարդանք ոչ թե **ԱՄՆ**-ի Կոնգրես, որը ճիշտ տարբերակն է, այլ՝ **ԱՄՆ**-ի Կոնգրես, որը սխալ արտասանություն է⁴:

ԶԼՄ հապավումի փոխարեն որոշ հիմնավորումներով փորձ կատարվեց շրջանառության մեջ դնելու հապավումի **ԶՏՄ** տարբերակը (զանգվածային տեղեկատվության միջոցներ)⁵: Փորձը, ինչպես տեսնում ենք, յոթ տարիների ընթացքի մեջ ձախողության է մատնված: Դրա փոխարեն կարելի էր, սակայն, ժամանակին գոնե ճշգրտել և որոշումնառուի իրավունքով ամրագրել **ԶԼՄ** հապավումի՝ հոգնակի գործառական ճիշտ ձևը՝ ոչ թե՝ **ԶԼՄ-ներ**, ինչպես գործածվում է ամենուրեք, այլ **ԶԼՄ**, ոչ թե՝ **հայկական ԶԼՄ-ների**, այլ՝ **հայկական ԶԼՄ-ի**: Դրանով կկանխվեր սխալագրության տարածումը:

Անհարկի շրջանառության մեջ են դրվել որոշումներ նաև քերականական առանձին ձևերի նախընտրության վերաբերյալ: Նշենք դրանցից միայն մեկը: 2000 թ. որոշմամբ՝ գրական լեզվում հանձնարարվում է **Գյումրի** և **Լոռի** բառերի սեռական-տրական հոլովի՝ **ու**-ով ձևերը՝ **Լոռու**, **Գյումրու**⁶: Ասել է թե՝ այդ բառերի համար գործիական և ներգոյական հոլովներում պիտի ունենանք **Լոռով**, **Գյումրով**, **Լոռում**, **Գյումրում** ձևերը, փոխանակ **Լոռիում**, **Գյումրիում** անհնչյունափոխ հիմքով կազմությունների, որոնք ավելի բարեհունչ են, պահպանում են բառապատկերը և՛ գրության, և՛ արտասանության մեջ:

Ամփոփում: Արդի գրական հայերենում առկա են էական տեղաշարժեր լեզվի բոլոր մակարդակներում: Բայց միշտ չէ, որ դրանք լեզվաբանների և համապատասխան կառույցների ուշադրության կենտրոնում են: Մինչդեռ դրանք պետք է առանձնացվեն, մշակվեն և ամրագրվեն նորմատիվ քերականության մեջ: Պատասխանատուները նախանձախնդրությամբ պետք է վերաբերվեն իրենց գործին, հակառակ դեպքում վտանգում ենք լեզուն:

Yuri Avetisyan (Armenia)

STANDARDIZATION ISSUES OF MODERN LITERARY ARMENIAN

In the course of historical development some shifts are made and the problem to work out and regulate them arises from time to time.

Shifts are available at all the levels of literary Armenian – in the phonetic system, vocabulary and grammar. The article is devoted to the examination of these issues.

Արմինե Գազինյան (Գերմանիա)

ՔԵՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈԽԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Լեզվի պատմական փոփոխությունները ենթարկվում են որոշակի դասակարգման՝ ըստ լեզվական մակարդակների: Ընդ որում, կարելի է առանձնացնել ներմակարդակային և միջմակարդակային փոփոխություններ: Վերջիններիս մեջ ուրույն տեղ ունի քերականացումը, որը բնորոշվում է որպես քերականական կայուն կառույցների աստիճանական առաջացում թույլ խոսույթային (դիսկուրսիվ) կառույցներից և միաժամանակ վերացական քերականական միավորների առաջացում՝ կոնկրետ բառային միավորներից: Ըստ գերմանացի լեզվաբան Մ. Հասպելմատի՝ քերականացումը խոսքին զուգահեռ առաջացող երևույթ է, որ արդյունք է հասարակական ներգործության:

Այսպիսով, ենթադրվում է խոսքային իրացումների և քերականության կապը, այսինքն՝ այն, որ խոսքային իրացումներից են աստիճանաբար առաջանում քերականական կառույցները, որի նախապայմանը տվյալ երևույթի հաճախակի գործածությունն է: Ինչպես նշում է Էդ. Ադայանը՝ «Որևէ լեզվական երևույթ աստիճանական ծավալումով ու տարածումով, լեզվի մեջ իր կիրառության դեպքերի

³ Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Եր., 2006, էջ 260:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 190:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 227:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 280:

քանակական կուտակման հետևանքով, վերջապես դառնում է որակ, մինչդեռ հին երևույթը, աստիճանաբար իր տեղը զիջելով դրան, դուրս է մղվում լեզվից, մահանում»:

Ըստ Ա. Վերների՝ քերականացումը կարգայնացման տարածամասնակյա և համաժամանակյա գործընթաց է: Այստեղ խոսքը վերաբերում է ոչ միայն լեզվի հիմնական բաժիններին, այլև խոսքին, այլ կերպ՝ համակարգից դուրս, հարացուցային հարաբերությունների համար մատչելի միավորներին:

Ըստ Բ. Հայնեի, Մ. Ռեհի և Բ. Լեհմանի՝ տարածամասնակյա քերականացման դեպքում լեզվական միավորները կորցնում են իրենց իմաստային ամբողջականությունը, գործաբանական նշանակությունը, շարահյուսական անկախությունը և հնչյունական նյութականությունը, կամ այս հատկանիշները իրենց տեղը զիջում են այլ՝ ոչ ինքնուրույն հատկանիշներին:

Բառային ազատ միավորից անցումը քերականական միավորի տեղի է ունենում որոշակի ժամանակահատվածում, որը կարող է տևել հարյուրավոր տարիներ:

Բ. Հայնեն տարբերակում է քերականացման հետևյալ չորս հիմնական փուլերը՝

- ապահիմաստավորում (նշանակության կամ իմաստային բովանդակության կորուստ),
- տարածում (գործածություն նոր համատեքստերում),
- ապակարգայնացում (ձևաշարահյուսական առանձնահատկությունների կորուստ, անկախ բառի կարգավիճակի կորուստ/ծուլում/),

- քայքայում (էրոզիա) (արտահայտության պլանի քայքայում):

Այս չորս փուլերը ներկայացնում են քերականացման միջակարգակային բնույթը: Առաջին և երկրորդ փուլերը տեղի են ունենում իմաստաբանական և գործաբանական մակարդակներում: Ապահիմաստավորման դեպքում լեզվական միավորի իմաստն ավելի վերացարկված է դառնում, այլ կերպ՝ տեղի է ունենում իմաստային ընդհանրացում:

Ինչպես Դ. Նյուբրինգը և մյուսները իրավամբ նշում են, առաջին երկու փուլերը հաճախ միմյանցից դժվար է սահմանազատել, քանի որ ապահիմաստավորումը միայն այն ժամանակ է նկատվում, երբ տարածումն արդեն ի կատար է ածվել: Բառույթը կամ քերականույթը գործածվում է նոր համատեքստում, որտեղ նրա գործածությունը մինչ այդ բացառվում էր: Ապահիմաստավորման և տարածման հիմքը փոխաբերությունները և փոխանունություններն են, ինչպես նաև ներառումը (die Implikatur): Սակայն նոր վերացական իմաստը որպես կանոն սահմանափակվում է որոշակի համատեքստով:

Ապահիմաստավորումը և տարածումը քերականությունների առաջացման համար վճռորոշ են, քանի որ այդ միավորները, ինչպես սահմանումն է հուշում, որևէ խոսքի մասի պատկանող բառերի հնարավորինս մեծ քանակի հետ պետք է հանդես գան և այդ պատճառով իրենց իմաստով էականորեն ավելի վերացական և ընդհանրական պետք է լինեն քան նրանց նախնական բառայինները: Դ. Նյուբրինգը ապահիմաստավորման և տարածման աստիճանը որոշելու համար բերում է օժանդակ բայի քերականացման օրինակը: Բայը գործածում են կամ ա/իր իսկ հետ կամ բ/ իր հականիշի հետ: haben <ունենալ> – ի դեպքում երկու դրոշմումներն էլ հնարավոր են՝ a) Sie hat das Buch gehabt <Նա ունեցել է գիրքը> b) Sie hatte das Buch verloren. <Նա կորցրել է գիրքը>: Այստեղ ակնհայտ է ապահիմաստավորման և տարածման բարձր աստիճանը:

Ապակարգայնացումը տեղի է ունենում ձևաշարահյուսական մակարդակում: Սրան է վերաբերում որևէ քերականության կամ բառույթի ձևաշարահյուսական հատկանիշների յուրաքանչյուր փոփոխություն: Նախնական ազատ կապակցությունը ժամանակի ընթացքում շարադասության տեսանկյունից ավելի կայուն և ի վերջո՝ պարտադիր միավոր է դառնում: Դրանով այդ միավորը շեղվում է իր բառային դասի այլ բառային անդամներից, որը հանգեցնում է ապակարգայնացման:

Այս դեպքում ի հայտ է գալիս մեկ այլ երևույթ, այն է՝ շարահյուսական վերավերլուծությունը, որը ենթադրում է ասույթի կառուցվածքային մեկնաբանման անհամաձայնություն խոսողի և լսողի միջև:

Չորս փուլերից վերջինը առաջին հերթին ազդում է հնչյունաբանական մակարդակի վրա, որով էլ դրսևորվում է նշանի քերականացումը հնչյունական կողմով: Դրանով նկատի է առնվում արտահայտության պլանի թուլացումը, որը բխում է երկու գործոններից: Առաջինը՝ քերականությունները ավելի թույլ են շեշտված: Որքան ավելի թույլ է միավորի շեշտվածությունը, այնքան ավելի ուժեղ է հնչյունական կողմի մաշումը խոսքաշարում: Մյուս կողմից՝ քերականական միավորները ունեն գործածության ավելի մեծ հաճախականություն իրենց նախնական ձևերի հետ համեմատ: Այս տեսանկյունից նշանի նվազող հնչյունական կշիռը արտացոլում է նրա նվազող իմաստաբանական կշիռը:

Սակայն բոլոր փուլերի իրականացումը պարտադիր պայման չէ քերականացման համար: Շատ հաճախ վերջին փուլը՝ քայքայումը (էրոզիան) չի իրականանում: Թե քանի փուլ է անհրաժեշտ քերականացման համար, անշուշտ վիճելի է: Եթե ոմանց համար բավարար է ապահիմաստավորումն ու տարածումը, ապա մյուսները նախապայման են համարում նաև հստակ ապակարգայնացումը: Մյուս կողմից՝ կան նաև դեպքեր, երբ հնչյունական սղման (էրոզիա) դեպքում բառի ծագումը կա՛մ մթագնում է, կա՛մ ձևը վերածվում է գրոյի, կա՛մ լիովին անհետանում: Այս սղված քերականությունից հաճախ փոխարինում է մեկ այլ՝ քերականացման արդյունքում ի հայտ եկած քերականությ:

Քերականացման գործընթացը ընթանում է կոնկրետից վերացականի անցումով, գործաբանական տեսանկյունից՝ ուժեղից դեպի թույլը, շարահյուսական տեսանկյունից՝ ինքնուրույնից դեպի կապվածը, ինչպես նաև կարգային տեսանկյունից՝ միանշանակությունից դեպի ոչ տարբերակվածը: Այսպիսով, քերականացումը լիարժեք իրականանում է, երբ՝

1. առաջանում է քերականացված ձևերի՝ գոյություն ունեցող հարացույցների մեջ ներառվելու միտում,

2. առաջանում է աճող կապակցվածության միտում, ոչ պարտադիր գործածությունը դառնում է պարտադիր,

3. տեղի է ունենում ձևերի կրճատում և խտացում,

4. հարադրությունը (Juxtaposition) զարգանում է միասնական բառի,

5. տեղի է ունենում հերթականության ամրագրում (ազատ հերթականության կորուստ):

Ըստ էության, քերականացումը տվյալ միավորի գործածության շրջանակի նեղացումն է և նրա հարացուցայնության աճը: Այս կամ այն երևույթի քերականացման համար Ք. Լեհմանը բերում է հետևյալ չափանիշները՝ հարացուցայնություն, կցում, հարացուցային փոփոխականություն, յուրացում, շարակարգային փոփոխականություն և հարաբերակցում այլ միավորների հետ :

Ընդ որում, քերականացման դեպքում հարացուցայնությունը և կցումը աճում են, իսկ մնացած բոլոր չափանիշները, այսինքն՝ հարացուցային փոփոխականությունն ու յուրացումը հարացույցում, իսկ շարակարգային փոփոխականությունն ու հարաբերակցումը այլ միավորների հետ՝ շարակարգում՝ նվազում:

Հարացուցայնության դեպքում նշանը ազատ բառադաշտից անցում է կատարում դեպի լիակատար հարացույց: Հարացուցային փոփոխականությունը բնորոշվում է նրանով, որ հաղորդակցական նկատառումներից ելնելով՝ նշանը ազատ գործածությունից անցում է կատարում դեպի պարտադիր գործածություն, այլ կերպ՝ նշանի ընտրությունը սահմանափակ է կամ պարտադիր:

Յուրացումը նույնպես նվազում է քերականացման դեպքում և հակադրվում է էրզիային, այլ կերպ՝ անցմանը իմաստային հատկանիշների կոյտից դեպի քերականական հատկանիշի կամ բազմավանկությունից դեպի մենահատույթայինի:

Կցման դեպքում նշանը անկախ գործածությունից վերածվում է ածանցի կամ գոտ հնչույթային հատկանիշ կրողի: Շարակարգային փոփոխականության դեպքում նշանը ազատ շարադասությունից անցում է կատարում դեպի կայուն շարադասություն: Նշանը շարությամբ հարաբերակցվում է այլ միավորների հետ ցանկացած ամբողջականությամբ, այնուհետև թանձրացվում է և փոփոխում հիմքը:

Վեց չափանիշներն էլ սերտորեն կապված են միմյանց հետ: Որպես կանոն քերականացման դեպքում վեց չափանիշները միաժամանակ չեն կարող գործել, սակայն չկա այնպիսի դեպք, երբ չափանիշներից որևէ մեկի զարգացումը հակառակ ընթացքն ունենա:

Քերականացումը սկսվում է տեքստի մակարդակի միավորներից, որոնց ընտրությունն ու համակցումը ենթարկվում են միայն գործաբանական և իմաստային խոսույթի սկզբունքներին, և որոնք վերջում հանդես են գալիս որպես բառակազմական կցյալ տարրեր՝ լիովին ենթարկվելով ձևաբանական կանոններին:

Ինչպես կարելի է նկատել, Ք. Լեհմանի քերականացման չափանիշներից մի քանիսը որոշակիորեն առնչվում են Բ. Հայնեի առաջարկած քերականացման փուլերին: Այսպես՝ հարացուցայնությունն ու կցումը, մոտենում են ապակարգայնացմանն ու քայքայմանը, հարացուցային փոփոխականությունը ու յուրացումը հակադրվում են ապաիմատավորմանը, տարածմանն ու քայքայմանը:

Ըստ Լեհմանի՝ այս կամ այն միավորի քերականացումը սկսվում է խոսույթային մակարդակից և անցում կատարելով շարահյուսական ձևաբանական ու ձևահնչյունաբանական մակարդակներով՝ երբեմն լիովին անհետանում է: Այլ կերպ՝ տեղի է ունենում շարահյուսացում, ձևայնացում, ապա-ձևայնացում, այնուհետև՝ կորուստ:

Այսպիսով, քերականացումն ինքնին կախված է տվյալ միավորի հաճախակի գործածությունից, որն էլ պայմանավորում է նրա առավել կայունությունը լեզվական հարացույցում, նրա կենսունակությունը, այսինքն՝ անցումը նշույթավորվածությունից դեպի ոչ նշույթավորվածություն: Ընդ որում, որևէ երևույթի քերականացումը ենթադրում է տվյալ միավորի գործածության շրջանակի նեղացում, ամրագրում այս կամ այն իմաստին, որով էլ պայմանավորվում է տվյալ միավորի իմաստային զարգացումը:

Armine Gaginyan (Germany)

THE STEPS AND PARAMETERS OF GRAMMATICALIZATION

Going free lexical unit in grammatical unit is in a certain period of time, often lasting for centuries. B.Heine distinguishes between the following four stages of grammaticalization: desemantization, expanding ,

decategorization and erosion. In the case of grammaticalization of a phenomenon the paradigmatic and fusion, which are considered as the parameters of grammaticalization, amplified, and the paradigmatic variability and integration, as well as syntagmatic variability and compatibility with other units in the syntagm narrowed.

Անահիտ Գալստյան (Հայաստան)

ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Հայ լեզվաբանության տերմինաբանությունը դարեր շարունակ գործածվել, հասել է մեր օրերը՝ ծառայելով լեզվական այս կամ այն իրողությունը ճշգրիտ արտահայտելուն, միտքը, գաղափարը ձևակերպելուն և ներկայացնելուն: Հունարան հայերենի շրջանից ստեղծվել, թարգմանվել և պատճենվել են մի շարք լեզվաբանական տերմիններ, որոնք առ այսօր գործածվում են: Այսօր նոր գիտաճյուղերի առաջացման, բազմաթիվ միջգիտակարգերի ստեղծման, գիտության և տեխնիկայի զարգացման հետևանքով ի հայտ եկած գաղափարները, իրողությունները, հասկացությունները, նաև առարկաները, սարքերն ու սարքավորումները անվանելու համար տվյալ լեզվի բառակազմական հնարավորությունների շրջանակում ժամանակի պահանջով ստեղծվում են նոր բառեր ու բառակապակցություններ, շրջանառության մեջ են առնվում նոր տերմիններ: Հայաստանում յոթանասունական թվականների կեսերից գործածության մեջ մտան *հոգելեզվաբանություն, հանրալեզվաբանություն*, մի փոքր ավելի ուշ՝ *ազգահոգելեզվաբանություն, մշակութաբանություն* և այլ տերմիններ, դրանցից յուրաքանչյուրը իր հետ բերեց նաև միաբառ և բառակապակցական տերմինների մի ամբողջ շարք, ինչպես՝ *լեզվակիր, երկլեզվակիր, երկլեզվություն, վաղ երկլեզվություն, միջմշակութային հաղորդակցում, բառագուգորդում, գուգորդային գիտափորձ, լեզվական քաղաքականություն, լեզվահարաբերություններ* և այլն:

Այսօր արդեն գործածության մեջ են՝ *կորպուսային լեզվաբանություն, համակարգչային լեզվաբանություն, պրագմալեզվաբանություն*՝ որպես համապատասխան ոլորտների իրողությունները արտահայտող միավորներ:

Տվյալ ոլորտի մասնագետները հաճախ լեզվաբանի խորհրդատվությամբ ստեղծում են կիրառական նշանակություն ունեցող՝ դասագրքերին, ձեռնարկներին կից կամ առանձին բառացանկեր, տերմինաբաններ, բառարաններ, որոնք ուսուցման գործում կարևոր դեր ունեն:

Հ. Աճառյանի անվան լեզվի իմաստիտուտում տերմինաբանության բնագավառում որոշակի ուսումնասիրություններ կատարվել և կատարվում են (Ֆ. Հայրապետյան, Կանաչ շինարարության հայ-ռուսերեն բառարան, Ե., 1986, Ֆենոլոգիայի հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական բառարան, Ե., 2007, Գոյապահպանության հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական բառարան, Ե., 2007): Իմաստիտուտի աշխատակիցները կատարել են համակարգչային ոլորտի տերմինապաշարի քննություն (Ս. Տիոյան), թատերագիտական, կրոնակեղեցական բառապաշարի ուսումնասիրություն (Ս. Պապիկյան): Լեզվաբանական տերմինաբանության քննությանն են նվիրված Լ. Ղազանչյանի, Ս. Սիրունյանի, Ա. Գալստյանի աշխատանքները:

Այսօր հրատապ է տերմինաբանական կոմիտեի աշխատանքները վերսկսելը: Ժամանակին տերմինաբանական կոմիտեն բազմիցս անդրադարձել է տերմինաշինության ընդհանուր տեսական և գործնական հարցերին, մշակվել և կանոնարկվել են տարբեր բնագավառների հանձնարարելի տերմինների տարբերակները (մաթեմատիկայի, մարզական, տնտեսագիտական, հասարակական-քաղաքական, բժշկական և այլն), գործածվող մեկից ավելի տարբերակներից ընտրվել և կիրառության համար առաջարկվել է դրանցից մեկը՝ անհանձնարարելի տերմիններից խուսափելու, անհարկի հոմանիշությունը նվազագույնի հասցնելու, տերմինների գործածության մեջ միօրինակություն հաստատելու համար:

Ինչ վերաբերում է լեզվաբանության բնագավառում գործածվող տերմինների տարբերակայնությանը, ապա կարելի է նշել, որ այստեղ զուգաձևերը, տերմինատարբերակները ավելի շատ են, քան կարող է թվալ առաջին հայացքից:

Դրանք ներկայացնենք մի քանի խմբավորումներով:

1. Օտար բաղադրիչ պարունակող տերմինի և դրա համապատասխան հայերեն համարժեքով տերմինի միաժամանակյա գործածություն, ինչպես՝ *սոցիոլինգվիստիկա* և *հանրալեզվաբանություն*:

2. Բառակապակցությամբ արտահայտված տերմինի փոխարինում բառով (լեզվի փոխառություն-լեզվափոխառություն, լեզվի համակարգ-լեզվահամակարգ, տերմինային տարբերակ-տերմինատարբերակ, տերմինների համակարգ-տերմինահամակարգ, բայի սեռ-բայասեռ, բայական ածանց-բայաձանց): Է. Աղայանը այս երևույթը անվանում է բաղադրական ամփոփում:

3. Բաղադրիչների փոխատեղման հետևանքով առաջացող տերմինային տարբերակներից

նշենք մի քանիսը. *ուզրաֆիննական/ֆիննաուզրական լեզվաընտանիք, տիպաբանական-գուգադրական/գուգադրական-տիպաբանական հետազոտություն* և այլն:

4. *Ետ-հետ* բաղադրիչով տարբերակներին մանրամասն անդրադարձել ենք «Տարբերակայնությունը լեզվաբանական տերմինահամակարգում» հոդվածում^{*}: Եվս մեկ անգամ նշենք, որ տերմինաբանական կոմիտեն 1986թ. որոշում է ընդունել *հետ* արմատով կազմված բառերի գրության և արտասանության մասին, որտեղ նշված է, որ *հետ-* (*ետ*) բաղադրիչով բառերը (հետազոտության, հետընթաց, հետնալեզվային և այլն) անհրաժեշտ է գործածել, գրել և արտասանել *հետ*: Չնայած այս որոշմանը՝ լեզվաբանական աշխատություններում, հոդվածներում երբեմն գործածվում են *ետ-ով* տարբերակները, որոնք ավանդաբար կիրառվել են հայերենագետների աշխատություններում: Տերմինաբանական կոմիտեի նշված որոշումից հետո դրանք հանձնարարելի չեն:

5. Անհրաժեշտ է նշել նաև հոդակապային, հնչյունափոխական տերմինատարբերակները (*տարածամանակյա* և լեզվաբանական աշխատություններում, պաշտպանության ներկայացվող ատենախոսություններում ոչ քիչ դեպքերում շրջանառվող *տարածամանակյա* անհանձնարարելի ձևը, *հոմանիշային-հոմանշային, հականիշություն-հականշություն, հատկացուցիչային-հատկացուցչային* և այլն):

6. Առկա են նաև այլ կարգի գուգաձևեր. ուղղագրական տերմինատարբերակներ, տառադարձությամբ պայմանավորված գուգաձևություններ, բառակազմական բանաձևերի լատինատառ և հայատառ տարբերակներ, նույն շարահյուսական կախումը ներկայացնող գծապատկերների անմիօրինակություն, պայմանական նշանների անհարկի բազմաձևություններ, արդեն համընդհանուր գործածություն ունեցող տերմինների չարդարացված ձևափոխումներ (*կրավորակերպ չեզոքի* փոխարեն *կրավորաձև չեզոք* տերմինի գործածությունը) տերմինների անտեղի, ինքնանպատակ ներմուծումներ (*ձևաբայ* տերմինը գործածության մեջ դնելը):

Տերմինների անհարկի տարբերակները շրջանառությունից դուրս թողնելու, հայալեզու տերմինների կիրառությունը կանոնարկելու, միօրինակացնելու խնդիրները կարող են լուծվել, եթե ստեղծվի և վերագործարկվի տերմինաբանության ոլորտը կարգավորող օրենսդիր մարմին:

Լեզվաբանական տերմինների գործածության կանոնարկմանը իր նպաստը կրերի «Լեզվաբանական տերմինների բառարանը», որտեղ կարտացույվ են վերջին 40-50 տարիների աշխատություններում շրջանառվող նոր և նորագույն տերմինները:

Anahit Galstyan (Armenia)

SOME CONSIDERATIONS ON REGULATING ARMENIAN LINGUISTIC TERMS

Restarting the work of terminological committee (or supreme council of Armenian) is actual nowadays. "The Dictionary of Linguistic Terms" will contribute to the regulation of the usage of the linguistic terms and it will also depict new and the latest linguistic terms included in linguistic works of the last decades. Cases of the usage of some not recommended linguistic terms are observed.

Գոհար Գրիգորյան (Հայաստան)

ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՀՈՒՁԱԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԽՄԱՍՏԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ավանդական քերականության մեջ որպես միջարկություն հայտնի խոսքի մասի իմաստային և ձևական բնութագրերի հարցի ուսումնասիրությամբ զբաղված գրեթե բոլոր լեզվաբաններն ընդունում են այն տեսակետը, որ գոյություն ունի հուզական և գնահատողական վերաբերմունք արտահայտող խոսքային միավորների մի ամբողջություն, որը միշտ չէ, որ նույնանում է բառային միավորների հետ: Տպագրված նախորդ մի քանի ուսումնասիրություններում¹ ցույց տվեցինք դրանց ավել կամ պակաս հաջողությամբ արված դասակարգման փորձերը: Յուրաքանչյուր հաջորդ քերականի մոտ կարելի է առանց դժվարության նկատել նախորդների հիման վրա լրացման սկզբունքով այս խոսքի մասերի դասակարգման հատկանիշների կատարելագործումը, որոնք, սակայն, մնում են իմաստի և ձևի հարաբերակ-

^{*} Ձառուկյանական ընթերցումներ, Ե., 2012, էջ 34-37:

¹ Գ. Գրիգորյան, Հուզագնահատողական արտահայտությունների ճանաչողական և հաղորդակցական առանձնահատկությունները, Լեզու և կրթություն, Հավելված «Մանկավարժական միտք» հանդեսի, 2012, 4, էջ 3-9:

Գ. Հովհաննիսյան, Գ. Գրիգորյան, Հուզագնահատողական արտահայտությունների միջլեզվական բնութագրման հարցեր, Բանբեր Երևանի Վ. Բյուտովի անվան պետական լեզվաբանական համալսարանի, 2013, 1(27), էջ 157-165:

Գ. Գրիգորյան, Բառը որպես հաղորդակցման հուզագնահատողական բաղադրիչի հիմնական կրող, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումներ (Երևան, 2012 թ., հունիսի 14-15), 2012, էջ 169-181:

ցության սահմաններում: Ակադեմիկոս Գ. Ջահուկյանը, զարգացնելով Ա. Բագրատունու նկարագրությունը, իր ուսմունքում ներմուծում է նաև հաղորդակցական կարգային հատկանիշներ՝ ուշադրություն գրավելու կոչական կարգը²: Հարցի ուսումնասիրությամբ զբաղված գրեթե բոլոր լեզվաբաններն³ ընդունում են նաև, որ հուզագնահատողական արտահայտությունները (այսուհետև՝ ՀԳԱ) տարբեր լեզուներում կարող են տարբեր ձևախմբման և գործաբանական վարքագիծ դրսևորել. մի բան, որ դժվարացնում է դրանց հստակ նույնացումը լեզվի տիրույթում և տարանջատումը խոսքաշարի մեջ: Այսպես, օրինակ, հայերենում ՀԳԱ համանիշություն են դրսևորում կապերի ու շաղկապների հետ, անգլերենում ՀԳԱ կարող են դառնալ հապավումներ, նախդիրներ և այլն: Այն, որ խոսքի մասերի՝ ՀԳԱ մասին արևմտյան ուսմունքները նույնացնում են միջարկությունների հետ, իր հերթին խոսում է այս միավորների խոսքային-շարքային հատկանիշներին գերապատվություն տալու մասին: Միանգամայն ընդունելով հարցի զարգացման այս տրամաբանությունը՝ կարելի է հանգել հետևյալին.

ա. եղած ուսմունքներում ՀԳԱ-ի ձևախմբման բնութագրությունները բավարար հիմք են դրանք որպես առանձին լեզվախոսքային միավորներ առանձնացնելու համար:

բ. ՀԳԱ եղանակավորող բառերից տարբերվում են իրենց թե՛ ձևային, թե՛ իմաստային և թե՛ գործառական սահմանների չտարրորոշվածությամբ:

գ. ՀԳԱ բնութագրման եղած բոլոր փորձերը արտաքին են, եթե չասենք՝ մակերեսային, այն իմաստով, որ երբեք փորձեր չեն արվել լեզվախոսքային համատարած ընտրանքի միջոցով դրանք առանձնացնելու⁴:

դ. ՀԳԱ հարացուցային առանձնահատկությունները չի կարելի ավելի հստակ սահմանազատել՝ առանց առնվազն երկու լեզուներում դրանք դիտարկելու և համեմատության ընդհանուր եզրեր դնելու:

ե. Առնվազն երկու լեզուներում ՀԳԱ ուսումնասիրությունը վեր է հանում դրանց ձևի և իմաստի զուգաբանությունը, այսինքն, ՀԳԱ իմաստային և ձևային կաղապարների միջև նկատվում է զուգահեռաբար աճող բարդություն: Սա վկայում է այն մասին, որ լեզվախոսքային երևույթներում գործում է ձևի և բովանդակության միասնության սկզբունքը:

Այսպիսով, ՀԳԱ ներքին բնութագրման համար մենք առաջարկում ենք դրանք բաժանել հետևյալ շերտերի՝ ըստ հոգելեզվաբանական և լեզվաճանաչողական հատկանիշների հետևյալ չորս կարգերի.

- Ինքնաբուխ-չգիտակցված կամ չձևակերպված տեղեկություն, զուտ հուզական ՀԳԱ՝ զգացական վիճակի ձայնարկային արտահայտության գործառնություն. *Ա՛յ, օ՛հ, է՛, վա՛ռ, լո՛, ի՛յա, հո՛շ, բը՛ռռռ*:
- Մասնակի ձևակերպված՝ պարզ բառային հուզանիշ ՀԳԱ. *Էլի՛, տե՛ս, լա՛վ, յա՛, հո՛, գնա՛, արա՛, աղջի՛, ջա՛ն*:
- Կոնկրետ ՀԳԱ ձևակերպում՝ զգացմունքային բաղադրյալ ձայնարկային-բառային ՀԳԱ. *Վա՛յ մեզ, գնա՛ է՛, ա՛խ աստվա՛ծ, ա՛յ բալա՛*:
- Նորմավորված ձևակերպում՝ բաղադրյալ բառային ՀԳԱ՝ վերաբերմունքի կաղապարային արտահայտման ձգտող. *Շա՛տ լա՛վ, հրաշալի՛ է, գերազա՛նց է, լա՛վ է՛ լի, ա՛յ քեզ բա՛ն*:

Աղյուսակի վերածելով, ստանում ենք հետևյալ համակարգը.


| Գիտակցում | Իմաստ | Ձև/ Կաղապար | Գործառնություն |
|--|-----------------------------|---------------------|-------------------------------------|
| ինքնաբուխ-չգիտակցված ձևակերպված տեղեկություն | իրադրական | բնաձայնություն | արտահայտչական |
| մասնակի ձևակերպված | առաջնային հույզեր | պարզ ձայնարկություն | ընդհանուր հուզանիշ գնահատման տարրով |
| կոնկրետ ՀԳԱ ձևակերպում | երկրորդային հույզեր | բառ | մասնակի գնահատողական |
| նորմավորված ձևակերպում | կարծրատիպային նշանակություն | ձայնարկություն+բառ | ուղղակի գնահատողական |
| | | բառակապակցություն | վերաբերմունքային |

² Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, էջ 357:

³ Գ. Հովհաննիսյան, Գ. Գրիգորյան, Հուզագնահատողական արտահայտություններ խոսքիմասային պատկանելության հարցը հայերենում, Հանրապետական գիտաժողով՝ նվիրված պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանի 60-ամյակին. Գիտական նյութերի ժողովածու, 2013, էջ 107-114:

⁴ Բացառություն է կազմում Ա. Բագրատունու կազմած ցանկը, որ ներառում է մոտ երկու տասնյակ, հիմնականում կոչական միավորներ և անգլերենի միջարկությունների, նորագույն տեխնոլոգիաների միջոցով կազմված տարբեր ցանկեր, որոնք հիմնականում ուսումնական նպատակներով են կազմվել և ավանդականից տարբերվող տեսական ընդհանրացումներ չեն պարունակում:

Պատկերավորության համար կենտրոնախույս շրջանների տեսքով ներկայացնենք գոհունակության զգացումի հուզագնահատողական արտահայտությունների կարգայնացման, ապա նաև համապատասխան վերաբերմունքի ձևավորման և դրա գնահատման աստիճանականությունը: Շրջաններից յուրաքանչյուրը կարող է միանգամայն անկախ հանդես գալ խոսքնթացում, սակայն յուրաքանչյուր հաջորդ օղակի ավելացումն ընդգծում է անցումը խոսողի զգացական վիճակից դեպի վերաբերմունքայինն ու գնահատողականը:



Ակնհայտ է, որ ՀԳԱ այս շերտավորումը իր տրամաբանությամբ հանգեցնում է եղանակավորման կարգին, որն այլևս նոր իմաստագործառական դաս ներկայացնելով հանդերձ, իր արտահայտությունն ունի լեզվի տարբեր մակարդակներում: Մենք ձեռնպահ ենք մնում եղանակավորման լեզվական ձևերն այստեղ շոշափելուց, քանի որ կարծում ենք, որ դա հուզագնահատողականից տարբերվում է գիտակցվածության իր ավելի բարձր աստիճանով և ավելի հստակորեն է սահմանազատված լեզվաբանական ուսմունքներում:

Հայերենում որպես հուզագնահատողական արտահայտությունների ձայնարկային բաղադրիչներ կարող են ձևավորվել բոլոր ձայնավորները՝ ա՛, է՛, ի՛, ու՛, ը՛, օ՛:

Մեկ ձայնավորից ու մեկ բաղաձայնից կազմված ձայնարկություններ են՝ ա՛յ, է՛յ, օ՛յ, ու՛յ, ա՛հ, օ՛հ, ու՛հ, ա՛խ, ի՛ֆ, օ՛ֆ, ու՛ֆ, ու՛խ, ու՛յ, օ՛ն, վա՛, յա՛, հա՛, հե՛, հո՛, տո՛, ծո՛, ֆո՛, ֆի՛ և այլն:

Շատ են նաև այն ձայնարկությունները, որոնք կազմված են երեք հնչյունից՝ երկու ձայնավորից և մեկ բաղաձայնից կամ մեկ բաղաձայնից և երկու ձայնավորից: Այդպիսիք են՝ վա՛յ, վա՛խ, վա՛հ, վո՛ւհ, հա՛յ, հո՛ւյ, հե՛յ, հո՛յ, ջա՛ն, թո՛ւհ, փո՛ւհ, փա՛հ, պա՛հ, վա՛շ, վի՛շ, ըհը, օ՛հո, էհե՛ և այլն:

Արտահայտության պլանում որոշակի կադապտային միասնության մեջ լինելով հանդերձ՝ անմիջականության տարբեր աստիճաններ ցույց տվող հուզագնահատողական արտահայտությունները բովանդակության պլանում հանդես են գալիս գնահատման երկու տարբեր շերտերով. մեկը՝ ներքին վիճակի արտահայտման ուղղվածության (վա յ իմ օրին), մյուսը՝ արտաքին ուշադրություն հրավիրելու, դիմելու ուղղվածություն ունեցող (ո՛վ թշվառական):

Այս արտահայտությունների թարգմանաբանական և միջլեզվական համեմատության խնդրին անդրադառնալիս առավել ակնհայտ է դառնում, որ պետք է գործ ունենալ ոչ թե լեզվական բառային միավորների, այլ խոսքային, մասնավորաբար իրադրական միավորների հետ:

Խոսքային հաղորդակցման միջոցները, մասնավորապես ՀԳԱ հանդես են գալիս որպես ազգային և լեզվամշակութային հաղորդակցական վարքագծի կայուն ցուցիչներ: Հաղորդակցական վարքագիծը սերտորեն կապված է **մշակույթ** և **գիտակցություն** հասկացությունների հետ, և իր լեզվախոսքային բնույթի շնորհիվ, այն կապ ունի նաև լեզվի տիպաբանական, իմաստաբանական, կարգայնացման բնութագրերի հետ: Խոսքային վարքագծում կարծրատիպային մտածողությունը նախ և առաջ արտահայտված է զգացական ընկալումների, խոսքային ծեսերի, վարքային նորմերի, գնահատականների խոսքային արտահայտման ձևերում: Դրանք փոխանցվում են սերնդեսերունդ, արտացոլում են տվյալ հանրության արժեքային, կառուցվածքային շերտերը, վերաբերմունքի խոսքային կառուցվածքը, հուզականության թույլատրելի սահմաններն ու արտահայտչամիջոցները:

Ուսումնասիրած նյութի վերլուծությունը թույլ է տալիս վեր հանել մի քանի իմաստակառուցվածքային օրինաչափություններ, որոնք համընդհանուր են հայերենի և անգլերենի ՀԳԱ համեմատության համար: Հայերենի և անգլերենի ձայնարկությունների հնչյունական կառուցվածքը համեմատելիս նկատում ենք, որ դրանց ընդհանրությունները պայմանավորված են առաջինը՝ մարդու արտաբերման օրգանների ընդհանրություններով. երկու լեզուներում էլ կան *օհ*, *ահ* ձայնարկությունները և

դրանց տարբերակները: Վերջիններիս բազմազանությունը, սակայն պայմանավորված է տվյալ լեզվի՝ հայերենի և անգլերենի հնչյունական կազմի առանձնահատկություններով, իսկ սրանք էլ իրենց հերթին, հանդես են բերում հանրալեզվական կախում: Այսպես, հայերենի խ-ով ձայնարկային տարբերակները՝ *ախ, օխ* և այլն, մի կողմից բացատրվում են հայերենի հնչյունական կազմում խ-ի առկայությամբ (հմմտ. անգլ. *Wow, whoops* ձայնարկություններում), մյուս կողմից վիճակագրական ոչ մեծ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս հնչյունների օգտագործումը հատուկ է հանրության որոշակի շերտերի:

Երկրորդ համընդհանուր օրինաչափությունը մարդու հուզական վիճակների նույնությունն է՝ անկախ մշակույթից և ազգային պատկանելությունից: Չայնարկությունների իմաստային դասակարգումն այս առումով կատարվում է մարդուն ընդհանրապես բնորոշ հուզատեսակների իմաստային խմբավորման հիմունքով: Ավելի կոնկրետ հուզատեսակի հատկանշման համար պետք է նկատի ունենալ, որ դրանք կոնկրետանում են որոշակի արտահայտություններում, որոշակի լեզվական համատեքստերում և որոշակի արտալեզվական հանգամանքներում:

Այսպիսով, հուզագնահատողական արտահայտությունները, հիմքում համամարդկային բնույթ ունենալով, լեզվական մյուս երևույթների նման հանդես են բերում ոչ միայն ազգամշակութային, այլև հանրալեզվական տարբերակվածություն:

Հաղորդակցական վարքագծի մշակութային տարբերակվածության լավագույն ցուցիչները լինելով՝ հուզագնահատողական և խոսքակազմիչ այս արտահայտություններն ունեն արտալեզվական պայմանականություններն արտացոլող երեք կողմ. ա) հուզական արտահայտչականություն, բ) գնահատողական վերաբերմունք և գ) ճանաչողական-իմացաբանական կադապարներ: Վերը մենք փորձ կատարեցինք ամփոփել հայերենի և անգլերենի ՀԳԱ ձևաբանական հարաբերակցման սկզբունքները հոգելեզվաբանական՝ ճանաչողական և հաղորդակցական հարթություններում:

Gohar Grigoryan (Armenia)

MORPHOLOGICAL-SEMANTIC CORRELATION OF EMOTIONAL-ATTITUDINAL EXPRESSIONS IN ARMENIAN AND ENGLISH.

The paper is a brief summary of author's research carried out on emotional-attitudinal speech units. Emotional-attitudinal expressions can display various morphological-semantic and pragmatic behavior in different languages. These differences complicate their identification in the language domain and their differentiation in speech. For their internal description categories according to psycholinguistic and cognitive linguistic features are proposed.

Verbal means of speech, particularly emotional-attitudinal expressions act as stable indicators of communicative behavior of language and culture bearers. The paper also comprises some semantic structural regularities that are common for the comparison of emotional-attitudinal expressions.

Սուսաննա Գրիգորյան (Հայաստան)

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԳԻՐԶ ՀԱՐՑՍԱՆՑ»-Ի ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ

Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը Սուրբ Գրքի ամենալիակատար գրված մեկնությունն է, և պատահական չէ, որ հատկապես այս գրքում հանդիպում ենք չորս հարյուրը գերազանցող նոր բառերի. դրանք երևան եկան հատկապես «Գիրք հարցմանց» - ի Համաբարբառն ավարտելուց հետո: Գրաբարյան բառագանձը ներառող հայտնի բոլոր բառարաններից այսքան բառերի դուրս մնալը բացատրվում է միայն մեկ հանգամանքով. բոլոր բառարանագիրները այս կամ այն կերպ հիմք են ընդունել Նոր հայկազեան բառարանը, իսկ Տաթևացու աշխատություններին միաբարյան միաբանները չեն անդրադարձել ընդհանրապես:

Սուրբ Գրքի համակողմանի այն մեկնությունը, որ տվել է Գրիգոր Տաթևացին՝ մի կողմից ողջ վարդապետական նախորդ մեկնություններն էր ամփոփում, մյուս կողմից՝ բերում հեղինակի բյուրեղացած, նոր երանգներով հարստացած խոսքը: Սա իր հերթին հայերենի խիստ ճկուն լեզվամտածողության դրսևորումների գունագեղ մի ներկայանակ է, որ «Գիրք հարցմանց»-ի խիստ արժեքավոր մեկնության չափազանց հետաքրքրական կողմերից մեկն է:

Նորակերտ բառերը հեղինակի համար դարձել են հնարավորության նոր միջոց՝ բացատրելու մեկնաբանվող նյութը. այսկերպ Տաթևացին իբրև Սուրբ Գիրքը մեկնող աստվածաբան վարդապետ

շրջանառության մեջ է դրել, օրինակ, երկու տասնյակից ավելի ծիսակրոնական բառեր. **անմկրտեալ, բազմաքրիստոս, ողջոյնառաք** (իմա՝ աստված), **ողջոյնընկալ** (իմա՝ աստվածածին), **որթապաշտ, նախարարչութիւն, նախաճաշակումն**. օրինության կարգի հետ կապված՝ մի ամբողջ բառախումբ. **գերեզմանօրհնէք, դեզօրհնէք, մայրօրհնէք, ջրօրհնէք, սերմնօրհնէք, քահանայօրհնէք** և այլն:

Նորակազմ բառերում կա մի խումբ, որի գործածությունը այսօր շատ սովորական է, ինչը վկայում է, որ Տաթևացին ոչ միայն հրաշալի տիրապետել է բառաստեղծման կադապարներին, այլև հարազատ է մնացել լեզվամտածողությանը այնչափ, որ հետագա դարերում շատ նորակազմություններ մտել են բառապաշարի համագործածական բառերի շարքը, ինչպես օրինակ՝ **ամբողջութեամբ, ամնորոք, անստոյգ, արհեստական, արհեստաւոր, բաժանորդ, բացարձակապես, բացորոշ, բռնամիտ, երկխօսութիւն, մշտապէս, մասկոյտ, հակասական, հասանելի, յիշատակութիւն, յախտեմականութիւն, նախապատրաստութիւն, ներգոյական, նշանադրութիւն, ուղղաձև, պատահական, սևամորթ, սրտային, սրտոտ, վատահամբաւ, տեսակաւորել, փոշիանալ, փոքրիշատէ, փութանցիկ** և այլն:

Ապագային են նայել նաև Տաթևացու այն նորակազմությունները, որոնց մի մասը Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ում հիշատակվում է որպես նոր բառ. դրանց մեջ են (առանց հեղինակային վկայության) ԱՐՀԱՄԱՐՀԵԼԻ, ԲԱԺԱՆԵԼԻ, ԽԱՉՀԱՄԲՈՅՐ բառերը, սակայն, դրանք Տաթևացին ոչ միայն օգտագործել է, այլև նույն բաղադրիչով նաև այլ բառեր կազմել, այսինքն՝ նույն բաղադրիչով կազմել շարքեր, ինչը մեկ անգամ ևս վերահաստատում է դրանց այդ հեղինակին պատկանելու հանգամանքը. ասենք՝ **ԲԱԺԱՆԵԼԻ, ԲԱԺԱՆԻՉ, ԲԱԺԱՆՈՐԴ** (վերջինս ժամանակակից հայերենում դարձյալ համագործածական բառերի շարքում է). կամ՝ **ԲԱՆԱԿԱՆԱԲԱՐ, ԲԱՆԱԿՐՈՒԹԻՒՆ, ԲԱՆԱԻՌԻԼ. ԱՅԼԱԳԻԾ, ԱՅԼԱԿԱՍԱՐ, ԱՅԼԱՍԱԶ, ԱՅԼԱՅԼՈՏ, ԱՅԼԱՎԻՃԱԿ. ԱՐՏԱԳՆԱՅՈՒՄՆ, ԱՐՏՏԱԳՈՒՆԵԼ, ԱՐՏԱԾՈՐՈՒՄՆ, ԱՐՏԱՀՈՍՈՒՄՆ, ԱՐՏԱՅԱՅՏՈՒՄՆ, ԱՐՏԱԶԱՐԸԵԼ, ԱՐՏԱԶՍԵԼԻ** և այլն:

Մեկ այլ հետաքրքիր փաստ. գրաբարի գործածական բառարմատները խիստ կենսունակ են նաև Տաթևացու նորակազմությունների պարագայում. օրինակ՝ «բազմ» բաղադրիչով գրաբարյան բառարանները ավելի քան երեք հարյուր բառ են վկայում: Տաթևացին նոր բառեր կազմելիս նույնպես հաճախ դիմել է «բազմ» բաղադրիչին և գրաբարյան բառերին ավելացրել **բազմաբաշխութիւն, բազմեղանակ, բազմակուլ, բազմամայր, բազմաքրիստոս** ձևերը: Նույնն է նաև հայերենի հաճախական **ան-** նախածանցի դեպքում. գրաբարյան հսկայական շարքին Տաթևացին ավելացնում է շուրջ երկու տասնյակ նորակազմություններ. **անաջատութիւն, անբախելի, անբովանդակապէս, աներչոտ, անթառամելի, անխելամուտ, անհատողութիւն, անմաշելի, անմեղր, անմկրտեալ, անուսումնապէս, անպարագրելի, անստոյգ, անվարձատրելի** և այլն:

Նշենք նաև, որ մի շարք հեղինակներ, Հր. Աճառյանը, հետագայում՝ Ռ. Ղազարյանը, Լ. Հովհաննիսյանը, որոնք իրենց աշխատություններով համալրել են գրաբարյան բառարանները, բազմաթիվ անգամ հղում են Գրիգոր Տաթևացուն, ինչը դարձյալ հաստատում է այդ բառերի Տաթևացու հեղինակած լինելու փաստը: Օրինակ, Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր» աշխատության մեջ **ԱԽԹԱՐՍԱՅ. ԱՆՀԱՏՈՂՈՒԹԻՒՆ, ԱՌՆՉԱԿԱՆ, ԲԱՅԲԱՐՁՈՒԹԻՒՆ, ԿՈՊԻՏ, ՄԻՋԱԿՕՐԵՆ, ՊԱՏԱՐԱԳԵԼԻ, ՓՈԽԱՐԿԱՊԵՍ** բառերի դեպքում հղվում է դարձյալ Գրիգոր Տաթևացուն (տարբեր աշխատությունների): «Միջին հայերենի բառարանի» դեպքում այդ հղումները կազմում են՝ ընդամենը՝ 100, որից **«Գիրք հարցմանց»-ին՝ 79-ը:**

Նոր բառեր կազմելիս Տաթևացին դիմել է հայերենի ավանդական բառակազմական եղանակներին՝ **բառաբարդմանը** և **ածանցմանը**, որոնց մեջ հանդիպում ենք հնարավոր գրեթե բոլոր ենթակադապարներին: Սակավաթիվ են նորակազմ բառերի մեջ **փոխառությունները**՝ գրեթե մեկ տասնյակ: Հազվադեպ ունենք նաև **արմատական** բառեր: Եվ միայն մի քանի նորակազմ բառ հիշատակվում է **ուրիշի ուղղակի խոսքում. անփորձել, մաքրելիք, նախաճաշակումն:**

Շատ ավելի քիչ են բառակազմական առումով խնդրահարույց նորակազմությունները, որոնցից մեկին փորձենք անդրադառնալ:

Տաթևացին **շինականի երեխայի ծննդյան օրը** կոչում է **ԱՂԱՐՈՒԶ** («Նախ՝ որպես հասարակ շինականը ի ծննդեան զաւակաց զմին օրն պատուեն աղաքուք կոչելով»): Գրիգոր Տաթևացի, *Գիրք հարցմանց*, Կ.Պոլիս, էջ 321): Այս բառի պարագայում մինչև բառակազմական վերլուծություն կատարելը պետք է պատասխանել, թե ինչ է այն նշանակել: Եթե հիմք ընդունենք **ՆՀԲ-ի՝ ԱՂԻ(Զ) - Որդի աղետաց. Միրելի զաւակ.** բացատրությունը, ապա կարելի է մեկնել՝ **զավակ, երեխա:** Կա նաև մեկ այլ տարբերակ. «Հայերեն զաւառական բառարան»-ում **ԱՂ** բառահոդվածի տակ Սեբաստիա, Պօլիս բարբառների համար բերվում է մարմնի այն մասի բացատրությունը, «որ կը շոշափէ ծննդական գործարանները» (Գարաբաղի բարբառում՝ **աղուէսինք, ըղվեսուք**) մամանախայ բացատրություն բերում է նաև Ստեփանոս Մալխասյանցը՝ «Հայերեն բացատրական բառարան»-ում, այսինքն այս կամ այն կերպ բառը եթե նշանակում է **ծնունդ, ժառանգ** (այս դեպքում, ծագումնաբանորեն դրա հետ կարող ենք կապված տեսնել նաև **ԱՂԻ** բառը՝ «ցեղ, զարմ, ժողովուրդ» բացատրությամբ), ապա բառը կարելի է համարել **գոյական հիմքով կազմված ածանցավոր բառ** (-ուք վերջածանցի գոյականակերտ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԵՂԱՆԱԿԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՁՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

Հայերենի եղանակաժամանակային համակարգերը պատմական զարգացման ընթացքում ենթարկվել են որոշակի փոփոխությունների, որոնք իրենց արտացոլումն են գտել բարբառային միավորումներում: Չուգադրական քննության ենթարկելով հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի հետ առնչվող իրողությունները շուրջ 500 բնակավայրերի լեզվական փաստերի հիման վրա՝ կարելի է նշել մի քանի առանձնահատկություններ:

1. Հայերենի բարբառներում միմյանց հակադրվում են 5 եղանակաձև՝ սահմանական, ըղձական, հարկադրական, ենթադրական և հրամայական: Առաջին չորսը հրամայականին հակադրվում են եղանականիշ մասնիկի առկայություն-բացակայություն հատկանիշով, ինչպես նաև կազմության վերլուծական կամ համադրական տիպով: Ըղձական եղանակի ժամանակաձևերին հատուկ չէ եղանականիշ մասնիկի գործածությունը, և նրանց եղանակային իմաստը արտահայտվում է բայահիմքով և դիմաթվանիշ թեքությամբ: Սահմանական եղանակը արևմտյան խմբակցության բարբառներում հատկանշվում է եղանականիշ մասնիկի առկայությամբ, իսկ արևելյան խմբակցությունում՝ վերլուծական կազմությամբ: Արևելյան խմբակցության բարբառներում (բացառությամբ Ագուլիս-Սեդրիի բարբառախմբի) ենթադրական եղանակի ժամանակաձևերը ըղձականին հակադրվում են *կո* եղանականիշ մասնիկի առկայությամբ: Հարկադրական եղանակը ըղձականին և եղանականիշ մասնիկով սահմանականին ու ենթադրականին հակադրվում է հարկադրական և սահմանական ապառնիների իմաստներ արտահայտող *պիտի* եղանականիշով: Հրամայական եղանակի ժամանակաձևերը նշված եղանակների կազմություններին հակադրվում են միայն 2-րդ դեմքում գործառնող դիմաթվանիշների առկայությամբ:

Արևելյան և արևմտյան խմբակցության բարբառներում եղանակային ձևերը հակադրվում են ոչ միայն արտահայտության պլանում, այլև բովանդակության: Այսպես՝ ըղձական եղանակի ժամանակաձևերը արտահայտում են գործողության կատարման ցանկություն, հրամայականինը՝ հրաման, խնդրանք: Սահմանական եղանակի ժամանակաձևերը արևելյան խմբակցության բարբառներում դրսևորում են խոսելու պահին, նրանից առաջ կամ հետո կատարելի գործողություն, արևմտյան խմբակցությունում՝ նաև ենթադրաբար կատարվելիք գործողություն: Ենթադրականը արևելյան խմբակցությունում ևս արտահայտում է պայմանով կամ ենթադրաբար կատարելի գործողություն և ունի առանձին ձև, մինչդեռ արևմտյանում ենթադրականի և սահմանականի եղանակային իմաստները հատկանշվում են ձևային նույնությամբ: Դրանց իմաստային տարբերությունը դրսևորվում է խոսքաշարում: Հարկադրական եղանակի ժամանակաձևերին արևելյան խմբակցության բարբառներում բնորոշ է հարկադրաբար, արևմտյան խմբակցությունում՝ նաև հաստատապես կատարելի գործողության իմաստներ:

2. Տարածքային տարբերակների եղանակաժամանակային համակարգերը, կրելով ներլեզվական ու արտալեզվական գործոնների ազդեցությունը, ժամանակի ընթացքում ենթարկվել են տեղաշարժերի: Դրանք պայմանավորված են բարբառային ազդեցություններով և ներթափանցումներով, եղանականիշ կամ ժամանականիշ մասնիկների հնչյունական և իմաստային անցումներով, դրանց անկմամբ կամ մեկ ուրիշով փոխարինմամբ, ինչպես նաև կաղապարային կառույցների գործառնական սահմանափակմամբ: Բարբառային միավորների մի մասում տեղաշարժեր տեղի են ունեցել եղանականիշ կամ ժամանականիշ մասնիկներով կազմություններում. եղանականիշ փոխարինվել է մեկ այլ մասնիկով (*կոր*-ի փոխարեն գործածվում է *ունի/զունի*-ն, *դէ* եղանականիշի փոխարեն *դար*-ը¹), գործածությունից դուրս է բնկել (*էր*-ը²), ենթարկվել հնչյունափոխության (*հայկակ-հայ*) կամ կրել իմաստագործառնական փոփոխություն (*ա, ը, կա* մասնիկներ)՝ շարունակականի ժամանականիշ մասնիկներից վերածվելով ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի իմաստակիրների: Համշենի բարբառի խոսվածքներում ապառնի ժամանակաձևերի կառուցվածքային կաղապարների գործառնության տեղաշարժ է նկատվում սահմանական և հարկադրական ապառնիների կազմություններում: *Պիտի* եղանականիշ մասնիկով բայաձևերին գուգահեռ գործածվող ենթակայական դերբայով հարադրությունները, նախապես արտահայտելով հարկադրական և սահմանական ապառնիների իմաստներ, ներկայումս որոշ վայրերում պահպանվել են միայն ժխտական խոնարհման հարացույցում:

3. Տարածքային տարբերակների եղանակաժամանակային համակարգերում առկա են քերականական համանունության ներհարացուցային և միջհարացուցային տիպերը՝ իրենց տարաբնույթ դրսևորումներով: Միջհարացուցային համանունությունը արտահայտվում է դիմավոր բայաձևերի, դեր-

¹ Տե՛ս Հ. Խաչատրյան, Շապին Գ-արահիսարի բարբառ, Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 2, Երևան, ՀՀԳԱԱ հրատ., 1985, էջ 149:

² Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, ՀՍՍՌ- պետ. հեռ. մանկ. ինստ. հրատ., 1953, էջ 184:

բայի և դիմավոր բայաձևի, դերբայական ձևերի միջև՝ դիմաթվանիշների և վերջամասնիկների համա-
մունությամբ պայմանավորված: Դիմավոր բայաձևերի միջև առկա համահամունությունը դրսևորվում է
ըղծական ապառնիի և անցյալի ապառնիի չղծական ապառնիի եզակի 3-րդ (կրթեմ, կրթես, կրթի) և
ըղծական անցյալի եզակի 1-ին (խօսի, խօսիր, խօսեր), ի լծորդության բայերի չղծական ապառնիի
եզակի 3-րդ (հավնիմ, հավնիս, հավնի) և անցյալի եզակի 1-ին (հավնի, հավնիր, հավներ), ինչպես նաև
ապառնիի (հավնիմք, հավներք, հավնին) և անցյալի (հավնիմք, հավնիրք, հավնինք) հոգնակի 1-ին և 3-րդ,
ըղծական ապառնիի (զր գրիմ, զր գրիս, զր գրիս, զրգրիմք, զրգրիրք, զրգրինք) և անցյալի (կրխօսի,
կրխօսիր, կրխօսեր, կրխօսիմք, կրխօսիրք, կրխօսինք) հոգնակի բոլոր դեմքեր, չղծական ապառնիի
հոգնակի 2-րդ (կրբմ, կրբս, կրե, կրբք, կրեք, կրբն), անցյալի եզակի 1-ին, հոգնակի 1-ին և 2-րդ (կրեք,
կրեր, կրեր, կրեք, կրեք, կրեմ) դեմքեր, չղծական ապառնիի և հրամայական եղանակի չղծական
ապառնիի եզակի 3-րդ դեմք (ըսիմ, ըսիս, ըստ) և եզակի հրամայական (զրթե՛, բրնե՛, գաթե՛), չղ-
ծական անցյալի եզակի 3-րդ դեմքի (ընծեր, ընծեր, ընծեր) և եզակի հրամայականի (ընծե՛ր) }
բայաձևերի միջև:

Համահունության հաջորդ դրսևորումները չղծական և հրամայական եղանակների հոգնակի
թվի կազմություններին են վերաբերում չղծական ապառնիի հոգնակի 2-րդ դեմք (խրմեմ, խրմես, խրմե,
խրմիրք, խրմեք, խրմին) և հոգնակի հրամայական (խաճե՛ք), չղծական անցյալի հոգնակի 2-րդ դեմք և
հոգնակի հրամայական (ընծեք (հնծեի, հնծեք)): Միջհարացուցային համահունություն է առկա նաև
դիմավոր բայաձևերի և ժխտական չղծական ապառնիի եզակի 3-րդ դեմք (խումիմ, խումիս, խումե) և
ժխտական դերբայ (չըքօմ) խումե), չղծական անցյալի ապառնիի 1-ին դեմք (խուսի (խուսեի) և ժխտա-
կան դերբայ (չիմ) ասի), չղծական անցյալի ապառնիի եզակի 3-րդ դեմք (պաներ էմ (գործեի), պաներ
ես, պաներ) և ժխտական դերբայ (չի) պաներ էմ, (չի) պաներ էս): և վաղակատար դերբայների միջև
չղծական անցյալի ապառնիի 3-րդ դեմք (գիխօսի, գրխօսիր, գրխօսեյ) և վաղակատար դերբայ (կրեյ
էմ), չղծական անցյալի ապառնիի եզակի 2-րդ դեմք (կրբիմ, կրբիր, կրբեր) և վաղակատար (կրբիր
էմ):

Ներհարացուցային համահունությունը դրսևորվում է չղծական անցյալի ապառնիի ժամանա-
կաձևերում՝ դիմաթվանիշ վերջավորությունների մույնարժեքությամբ պայմանավորված: Վերջիններս
համահուն գույգեր են կազմում եզակի և հոգնակի թվի տարբեր դեմքերում՝ եզակի 2-րդ և 3-րդ՝ մրնե,
մրնեք, մրնեք, մրնեք, մրնեք, եզակի 1-ին, 2-րդ, 3-րդ՝ խօսեք, խօսեք, խօսեք, խօսեմք, խօսեք,
խօսեմ, եզակի 2-րդ, 3-րդ (էր), ինչպես նաև եզակի և հոգնակի 1-ին (էնք)՝ խօսեմք, խօսեք, խօսեք,
խօսեմք, խօսեք, խօսեմ, եզակի 2-րդ, 3-րդ, հոգնակի 1-ին ու 2-րդ՝ խօսեմ, խօսեք, խօսեք, խօսեկ, խօսեկ,
խօսեմ, եզակի 2-րդ, 3-րդ (էր), ինչպես նաև եզակի 1-ին, հոգնակի 1-ին ու 2-րդ՝ (էկ)՝ խօսեկ, խօսեք,
խօսեք, խօսեկ, խօսեկ, խօսեմ, հոգնակի 1-ին և 2-րդ՝ գինայի, գինայր, գինար, գինայկը, գինայկը,
գինայնը, եզակի և հոգնակի 1-ին՝ մրնեմք, մրնիր, մրնեք, մրնեմք, մրնիրք, մրնեմ:

Ի մի բերելով դիմաթվանիշների նյութական արտահայտության ձևերը՝ կարելի է անել հետևյալ
եզրահանգումը: Քանի որ բարբառներում առկա է եզակի 2-րդ և 3-րդ դեմքերի դիմաթվանիշների համա-
մունություն, սակայն չի արձանագրվել եզակի 1-ին և 3-րդ դեմքերի թեքության մույնության որևէ
դեպք, հետևաբար ենթադրելի է, որ նախապես ի հնչյունի անկմամբ ձևային միևնույն արտա-
հայտությունն են ստացել եզակի 2-րդ և 3-րդ դեմքերը, որոնք գրաբարում տարբերվում էին միայն ի
հնչյունի առկայությամբ (էիր-էր), այնուհետև՝ 1-ին դեմքը՝ առաջացնելով եզակի թվի դիմային վերջա-
վորությունների համահունության եռանդամ շարք: Համանման ճանապարհով, ըստ երևույթին,
սկզբնապես կատարվել է նաև հոգնակի թվի 1-ին և 2-րդ դեմքերի մույնացում, որոնց տարաբեքու-
թյունը գրաբարում պայմանավորված էր ա և ի հնչյուններով (աք-իք): Ենթադրելի է, որ ավելի ուշ
դիմային վերջավորությունների զարգացման գործընթացը հաջորդաբար ընդգրկել է նաև եզակի և
հոգնակի թվի 1-ին դեմքերը: Թերևս հիշյալ երևույթը նախորդել է ն ռնգայինի հավելմանը, քանի որ
բարբառային մի շարք միավորներում արձանագրված է հոգնակի և եզակի 1-ին դեմքերի համահուն-
ություն առանց ն դիմանիշի: Նման դեպքում նկատելի է եռանդամ համահունություն. եզակի և հոգ-
նակի 1-ին, ինչպես նաև հոգնակի 2-րդ դեմքերում գործածվում է -էք վերջավորությունը: Կարելի է
ենթադրել, որ վերոնշյալ եռանդամ համահունությունն էլ ն ռնգայինի հավելման պատճառ է դարձել:

4. Հայերենի տարածքային տարբերակների եղանակաժամանակային կազմություններին բնո-
րոշ է համանիշությունը, այսինքն՝ մույն իմաստի դրսևորման համար քերականական տարբեր կա-
ռույցների կիրառումը բայական հարացույցներում: Դրանք եղանակաժամանակային ձևերը կազմելիս
գործառում են ձևաբանական այնպիսի միջոցներ, որոնք հատկանշվում են իմաստային համարժե-
քությամբ և ձևային տարաբեքությամբ: Նյութի դիտարկումից պարզվում է, որ բայական համակար-
գում առկա համանիշության դրսևորումները գուրկ են միօրինակությունից և անհամասեռ պատկեր են
ներկայացնում ոչ միայն ըստ տարածական բնութագրի, այլև բայական միևնույն հարացույցի ներսում³:

³ Քանի որ լեզվաբանական գրականության մեջ մույնանիշները համանիշների մի տեսակ են համարվում և կոչվում են
բացարձակ համանիշներ (տե՛ս Ն. Պառնապյան, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում,

Ներկայի և անցյալ անկատարի ժամանակաձևերում, ըստ համանիշ կազմությունների գործառնության, առանձնացնում ենք բարբառային տարածքներ, որոնցում համանիշների առկայությունը պայմանավորված է դերբայակազմ և մասնիկակազմ (*սիրիլ իմ//գրսիրքմ*), դերբայակազմ և գրաբարատիպ ձևերի (*խօսքմ ի//խօսի*), դերբայի և նրա փոփոխակի (*մընում//մըմըմ էմ*) գործածությամբ, նույն բայի տարբեր դեմքերով (*ապրէլիս ըմ (1-ին), ապրէլըմ ըս (2-րդ), ապրէլըմ ի (3-րդ)*, ժխտական օժանդակ բայով (*չըքօմ սիրէ//չիմ սիրէ*): Անցյալ ժամանակաձևերում առկա համանիշության դրսևորումները պայմանավորված են տարբեր կազմությունների՝ մասնիկակազմ և դերբայակազմ (*խըմամ//խըմալ ըմ (խըմեցի)*), դերբայական տարաբժեք ձևերի (*կըրած էմ//կըրէր էմ*), նույն դերբայի փոփոխակների (*չըմ (չի) խակիր//խակիրի*)⁴, բայական տարբեր հիմքերի (*չափիցի//չափի*) գործածությամբ:

Ապառնի ժամանակաձևերում համանիշ կազմություններ են առաջանում՝ պայմանավորված նույն դերբայի տարբեր վերջամասնիկներով (*ըհըլական ըմ (ի)//ըհըլան ըմ (ի)* (ասելու են, էի), դերբայակազմ և մասնիկակազմ ձևերի (*նըստիմ ինի կամ փօրօղ ըմ*):

5. Եղանակի կարգը տարածքային տարբերակներում բնորոշվում է քերականական բազմիմաստությամբ (բովանդակության պլանում): Նկատելի է, որ ձևային նույնությամբ բնութագրվող եղանակաժամանակային կազմությունները հաճախ իմաստային տարբեր բեռնվածություն ունեն: Ժամանակաձևերի քերականական բազմիմաստությամբ նույնպես հակադրվում են արևելյան և արևմտյան խմբակցության բարբառները: Բազմիմաստություն հիմնականում առկա է արևմտյան խմբակցության բարբառների եղանակաժամանակային համակարգերում, որոնցում բացակայում է եղանակաժամանակային իմաստի արտահայտման այս կամ այն ձևը: Սակայն եթե գրաբարում դրանց ձևաբանական հակադրությունը արտահայտվում էր դիմաթվային վերջավորությունների միջոցով, ապա բարբառներում վերջինիս գումարվում է նախամասնիկների առկայություն կամ բացակայություն հատկանիշը: Արևելյան խմբակցության բարբառներում բազմիմաստություն է դրսևորվում հարակատար և վաղակատար դերբայներով կազմված վերլուծական ժամանակաձևերում: Վերոնշյալով պայմանավորված՝ սահմանազատում ենք բազմիմաստության երկու շարք՝ երկանդամ և եռանդամ: Երկանդամ շարքում տարբերակվում են հետևյալ ենթախմբերը՝

ա) սահմանական ու հարկադրական ապառնիի և անցյալի ապառնիի (*բըր կըրիմ* (գրելու են, պիտի գրեն), *բըր կըրէր* (գրելու էի, պիտի գրեի),

բ) սահմանական ներկայի և անցյալ անկատարի, ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի (*կընձիմ* (հնձում են, կհնձեն), *կընձէր* (հնձում էի, կհնձեի),

գ) մի կողմից՝ սահմանական ու հարկադրական ապառնիի և անցյալի ապառնիի, մյուս կողմից՝ սահմանական ներկայի և անցյալ անկատարի, ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի (*կըխըմիմ* կազմությունը ունի խմում են և կխմեն, *կըխըմէի-ն*՝ խմում էի և կխմեի, իսկ *պի խըմիմ* և *պի խըմէի* ձևերը՝ համապատասխանաբար խմելու են, պիտի խմեն և խմելու էի, պիտի խմեի իմաստները)⁵,

դ) հարակատար-վաղակատար ներկա-անցյալի (*բիրձրիյած ըմ* (բարձրացել են, բարձրացած են),

ե) վաղակատար ներկա-անցյալի և անցյալ կատարյալի (*խըմալ ըմ* (խըմել են և խըմեցի):

Եռանդամ շարքում առանձնացվում է երկու ենթախումբ՝

ա) սահմանական ներկայի և անցյալ անկատարի, սահմանական և ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի (*կըմընամ* (մնում են, մնալու են, կմնան), *կըմընէ* (մնում էի, մնալու էի, կմնայի),

բ) ըղձական, ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի, սահմանական ներկայի և անցյալ անկատարի (*գըրիմ* (գրում են, գրեն և կգրեն):

Վաղակատար դերբայով արտահայտվող բազմիմաստությունը կոչել ենք միջբարբառային, քանի որ առկա է բարբառային տարբեր միավորներում, իսկ բազմիմաստության մյուս բոլոր արտահայտությունները անվանել ենք ներբարբառային՝ տարածքային նույն միավորի ներսում դրսևորվելու համար:

Այսպիսով, հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերը տարաբնույթ փոփոխությունների և հետագա զարգացման արդյունք են և ձևավորվել են՝ լեզվի ներքին զարգացման օրինաչափություններով, ձևաբանական ու հնչյունական օրենքներով պայմանավորված:

Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 1970, էջ 24), այդ պատճառով էլ դրանց դրսևորումները կներկայացվեն *քերականական համանիշություն* անվանմամբ:

⁴ Տե՛ս Մ. Մուրադյան, Շատախի բարբառը, Երևան, Երևանի համալս. հրատ., 1962, էջ 21:

⁵ Գ. Կոստանդյան, Երզնկայի բարբառը, Երևան, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., 1979, էջ 105:

OBSERVATIONS ON COMPARATIVE STUDIES OF TENSE AND MOOD SYSTEMS OF ARMENIAN DIALECTS

Armenian dialects have five mutually exclusive mood forms. The contrast lies primarily in the presence/absence of mood indicating element, as well as analytical or synthetic types of formation. Mood and tense forms of regional varieties are marked with grammatical homonymy, homography, and polysemy.

Հովհաննես Չաքարյան (Հայաստան)

ԼԵՁՎԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Ազգային լեզվի պահպանման խնդիրը ենթադրում է դրա արդիականությունն ու մրցունակությունն ապահովող արդյունավետ և մշտական լեզվաշինական աշխատանքներ, որոնք վերաբերում են լեզվի կառուցվածքին, գործառությանը, կանոնարկմանն ու կանոնակարգմանը, ուսումնասիրությանը, ուսուցմանը, քարոզչությանը, տարածմանը, ՀՀ, ինչպես նաև սփյուռքի լեզվավիճակին, ՀՀ լեզվական օրենսդրությանը,

Հայաստանում այս ուղղություններով աշխատանքներ այս կամ այն չափով կատարվում են: Առավել կայուն ավանդույթներ ձևավորված են լեզվի կառուցվածքի կարգավորման, կանոնարկման, ուսումնասիրության և ուսուցման ոլորտներում: Խորհրդային տարիներից գործում են ակադեմիական հիմնարկներ, բուհերի հայագիտական բաժանմունքներ ու ամբիոններ: Մինչև 1993 թ. կառավարությանն առընթեր գործում էր նաև տերմինաբանական կոմիտեն: Հետո դա փոխարինվեց ՀՀ լեզվի պետական տեսության հայերենի բարձրագույն խորհրդով: Սակայն 2000 թ. սկսած՝ այդ մարմինը կա միայն թղթի վրա:

Հետխորհրդային տարիներից ձևավորվեց նաև լեզվական օրենսդրություն:

Նվազ արդյունավետ են աշխատանքները լեզվի գործառության ընդլայնման, ՀՀ լեզվավիճակի կարգավորման և լեզվական քարոզչության ուղղություններով:

Իրավիճակից ելնելով՝ հայերենի մրցունակության բարձրացման առումով հրատապ բազում խնդիրներից կարելի է առանձնացնել հետևյալները:

1. ՀՀ լեզվաքաղաքականության առավել ազգայնացում և արմատականացում: Ներկայումս ՀՀ լեզվաքաղաքականությունը զգալի չափով ենթարկված է օտար շահերի. քույլ է տրվում, որ անգլերենը, ռուսերենը, ֆրանսերենը ազատ տարածվեն Հայաստանում հաճախ ի հաշիվ հայերենի: Օրինակ՝ ցուցանակներում և արտաքին գովազդներում անգլերենը հաճախ գերիշխող դիրք ու ծավալ ունի հայերենի նկատմամբ: Թեև դա օրենքի խախտում է, սակայն գործադիր և դատական իշխանությունների թողտվությամբ վիճակը չի շտկվում: Նույնպիսի թողտվությամբ օտար լեզուները, հատկապես անգլերենն ու ռուսերենը անհարկի և ապօրինի մեծ տեղ ունեն հեռուստառադիոէներում, ապրանքապիտակների վրա, կրթության ոլորտում և այլուր: Հայաստանում, ինչպես և ամբողջ աշխարհում, շարունակվում է անգլերենի ծավալումը: Դա անհանգստացնում է ոչ միայն մեզ, այլև այնպիսի հզոր երկրների, ինչպիսիք են Ֆրանսիան ու Ռուսաստանը: Բայց դա առավել վտանգավոր է մեզ նման փոքր երկրների և աշխարհասփյուռ ազգերի համար: Ուստի ամեն ինչ պետք է անել Հայաստանում անգլերենի հետագա ծավալումն արգելակելու համար, որպեսզի նա չյուրացնի հայերենի գործառության ոլորտները, գործածությունից դուրս չմղի հայերենը և չդառնա գերիշխող լեզու մեր երկրում: Այդպիսի հնարավոր վիճակը կարող է դառնալ հայ ժողովրդի լեզվափոխության և հայերենի իսպառ կորստի պատճառ: Դրան անխուսափելիորեն կհետևի հայ ազգի ուժացումն ու վերացումը: Այսօր ամեն մի շարքային անհատ, իր շահերից ելնելով, դեմ չէ անգլախոսությանը: Սակայն հայոց ազգային պետությունը, որի գերագույն խնդիրը հայ ազգի հարատևության ապահովումն է, պետք է այնպիսի քաղաքականություն վարի, որ իր երկրի քաղաքացիները օտարախոս դառնալու ցանկություն չունենան. նրանց լիովին բավարարի հայախոս լինելը և 1-2 օտար լեզվի չափավոր իմացությունը: Ի դեպ, հերիք է ծանոթանալ Ֆրանսիայի, Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի լեզվաքաղաքականությանը՝ հասկանալու համար, թե որքան մեծ վտանգ է սպառնում հայերենի պես կիսանտեր լեզվին ու հայկական մշակույթին, և որքան քիչ բան ենք մենք անում մեր ինքնությունը պահպանելու նպատակով:

2. ՀՀ լեզվական օրենսդրության ամբողջացում և կատարելագործում: Լեզվական օրենսդրության բոլոր պահանջների լիարժեք կիրառման ապահովում, այս առումով լիազորված մարմինների

գործունեության բարելավում: 1993-ին ընդունվեց «Լեզվի մասին» օրենքը: Այնուհետև լեզվին առնչվող հոդվածներ ու օրենսդրական դրույթներ տեղ գտան զանազան ոլորտների վերաբերող հիմնական կարգավորող օրենքներում («Չանգվածային լրատվության», «Քրեական դատավարության», «Վարչական իրավախախտումների», «Սպառողի շահերի պաշտպանության» մասին և այլն), թեև ոչ միշտ պատշաճ ձևակերպումներով: Այս գործընթացը պետք է շարունակվի առավել հետևողականությամբ: Անհրաժեշտ է ոչ միայն լրացնել մի շարք ոլորտներում տեղ գտած բացը, այլև վերանայել արդեն գործող որոշ օրենքների՝ լեզվին վերաբերող հոդվածները: Օրինակ՝ «Գովազդի մասին» օրենքում այնպիսի վերապահումներ են արված ապրանքանիշերի և մակնիշերի վերաբերյալ, որ հսկայական սողանք են բացում օտարալեզու ցուցանակների, պիտակների և գովազդերի համար: Խիստ անբավարար են պատժամիջոցները լեզվական օրենսդրության խախտումների համար: «Վարչական իրավախախտումների մասին» և այլ օրենքներում կարիք կա լրացնելու այդ բացը: Անբավարար են մաս լեզվական օրենսդրության կատարման վերահսկողության համար լիազորված մարմինների քանակակազմը, լիազորությունները և գործունեության արդյունավետությունը: Օրինակ՝ «Գովազդի մասին» օրենքը նախատեսում է այդ օրենքի պահանջների կատարումը վերահսկող լիազորված մարմնի ստեղծում: Սակայն ավելի քան մեկուկես տասնամյակ է, ինչ այդ մարմինը չի ձևավորվում: Եղած մարմինները՝ լեզվի պետական տեսչությունը, տեղական ինքնակառավարման մարմինները և այլն, խիստ անհետևողական են լեզվական օրենսդրության խախտումների վերացման խնդրում: Նրանք մի կողմից կաշկանդված են խախտում կատարողների նկատմամբ իշխանությունների հովանավորչությամբ, մյուս կողմից՝ բավարար լիազորությունների բացակայությամբ: Օրինակ՝ ԼՊՏ-ի կարգավիճակը իր գոյության ընթացքում ոչ թե բարձրացել է, այլ իջել: Կառավարությանն առընթեր հանրապետական մարմին լինելուց դարձել է ԿԳՆ-ի առանձնացված ստորաբաժանում:

3. Համացանցում հայերեն բովանդակության էապես հարստացում: Որպեսզի այլ լեզուների կողքին հայերենը գոյատևի, պետք է լիարժեք սպասարկի հայախոս հանրությանը, նրան առաջարկի հավաստի, հետաքրքիր և հրատապ ուսումնական, տնտեսական, քաղաքական, գիտական, մշակութային, զվարճալի և այլ կարգի տեղեկատվություն: Ներկայումս մրցունակ են այն լեզուները, որոնք ունակ են համացանցում առկա ամբողջ տեղեկությոնը իրենցով արտահայտելու: Այդ լեզուները դրանով իսկ ազատագրվում են իշխող լեզուների (անգլերենի, ռուսերենի և այլն) թե՛ գործառական, թե՛ կառուցվածքային ճնշումից, դուրս են գալիս երկլեզվության ու բազմալեզվության պարտադրված կապանքներից: Այս առումով հայերենը պետական աջակցության բացակայության պատճառով խիստ հեռ է մնում առաջատար լեզուներից: Դրա հետևանքով հայերենը կորցնում է իր վարկը, նոր սերունդները նախընտրում են հայերենի փոխարեն սովորել անգլերեն:

4. Բջջային կապի և էլեկտրոնային հաղորդակցման այլ ձևերում հայերեն այբուբենի պարտադիր ներդրում և կիրառության խրախուսում: Այսօր բազմահազար հայեր «հայերենիքում և ի սփյուռս աշխարհի» էլեկտրոնային միջավայրում և հատկապես բջջային կապով հաղորդակցվելիս օգտվում են մեծ մասամբ լատինատառ հայերենից: Եվ դա կատարվում է ոչ այն պատճառով, որ այդ մարդիկ հայրենասեր չեն, այլ որովհետև դա է մատչելի: Որովհետև նախորդ քսան տարիների ընթացքում պետությունը հոգ չի տարել տեխնիկական նոր պայմաններում հայ մշակույթի զարգացման ռազմավարության մասին: Չի լուծված մույնիսկ այնպիսի հասարակ տեխնիկական հարց, ինչպիսին է հայերեն ստեղնաշարերի արտադրությունը կամ ներմուծումը, որը 1993 թվականից օրենսդրական պահանջ է, և որի իրականացման ժամկետը եղել է մինչև 1994 թ. վերջը:

4. Հայերենին վերաբերող ժամանակակից էլեկտրոնային տարաբնույթ բառարանների, հանրագիտարանների և սպասարկող գործիքների (որոնման համակարգերի, տառաճանաչ, սրբագրիչ, թարգմանիչ, ընթերցիչ ծրագրերի) ստեղծում: Ակնհայտ է, որ հատկապես թարգմանիչ ծրագրերի լիարժեք աշխատանքի դեպքում կտրուկ կմեծանա հայերենի տեղեկատվական արժեքը, կդադարի հայախոսության ծավալների նվազումը, մեծապես կբարձրանան հայախոս զանգվածի զարգացման հնարավորությունները ոչ միայն մտավոր, այլև տնտեսական առումով: Բայց դարձյալ մեր հույսը այսօր փաստորեն ոչ թե պետությունն է, այլ անհատներն ու ՀԿ-ները և հատկապես արտասահմանյան ձեռնարկությունները («Մալթրոսոֆ», «Գուգլ» և այլն):

5. Հայերենի ձևայնացված ամբողջական նկարագրության իրականացում: Սա խիստ հրատապ է էլեկտրոնային վերոհիշյալ գործիքների ստեղծման նպատակով: Այս խնդրի լուծումը ամենից ավելի կպատշաճեր ազգային ակադեմիային: Խորհրդային և հետխորհրդային տարիներին այդ ուղղությամբ աշխատում էին լեզվի և ինֆորմատիկայի ինստիտուտները, սակայն առայժմ ասպարեզում չկան համընդհանուր կիրառելի վերջնական արդյունքներ:

6. Տարբեր լեզուներից հայերեն և հակառակը տառադարձման կանոնների մշակում: Դրա կարիքը մեծ է հատկապես տեղանվանագիտության, քարտեզագրության ասպարեզներում: Մասամբ մշակված են ռուսերենից և անգլերենից հայերեն տառադարձման կանոնները: Սակայն դրանք էլ նոր

միասնական սկզբունքներով վերանայման ու լրամշակման կարիքն ունեն: Հրատապ է նաև տառա-
դարձման տեղեկատվությունների ստեղծումը:

7. ՀՀ-ում հայալեզու կրթության այլընտրանքների սահմանափակում և վերացում: ՀՀ լեզվա-
վիճակի կարգավորումը մինչև 2010 թ. ընթացքում էր դրական ուղղությամբ: Այդ թվին «Լեզվի մասին» և
«Հանրակրթության մասին» օրենքներում կատարված տխրահռչակ փոփոխությամբ տեղի ունեցավ
հետընթաց վճռական շարժում: Թույլատրելի դարձավ հայերի համար օտարալեզու հանրակրթական
հաստատությունների հիմնումը: Այդ վտանգավոր երևույթի նախադեպը եղել է խորհրդային տարի-
ներին, երբ ռուսական դպրոցները արդեն սպառնում էին հայոց ազգային դպրոցի գոյությանը և հայա-
խոսությանը: Ռուսական կրթությունը և ռուսախոսությունը հենց Հայաստանում դարձել էր սոցիալական
առաջընթացի պայման: Իրավիճակը փոխվեց ՀՀ անկախացումից հետո, երբ արգելվեց հայերի համար
օտարալեզու հանրակրթությունը: Այժմ, փոխանակ նաև օտարալեզու բարձրագույն կրթությունը ար-
գելելու, իշխանությունների կողմից կատարվում է հետընթաց դեպի խորհրդային ժամանակների
տխրահռչակ իրավիճակը՝ ռուսերենի սպառնալիքին ավելացնելով հատկապես անգլերենի սպառ-
նալիքը:

8. Հայերենի՝ որպես օտար (երկրորդ) լեզվի ուսուցման արդիական մեթոդների մշակում: Հատ-
կապես սփյուռքի լեզվականորեն ուժացած համայնքների, ինչպես նաև ՀՀ ներգաղթած օտարախոս
հայերի և ոչ հայերի համար հայերենը օտար լեզու է, հետևաբար նրանց հայերեն ուսուցանելու համար
անհրաժեշտ է կիրառել համապատասխան մեթոդաբանություն: Սակայն պետք է նկատել, որ հայե-
րենը՝ որպես օտար լեզու դասավանդելու ավանդույթներ և արդյունավետ մեթոդաբանություն առայժմ
չունենք: Առանձին փորձեր այդ ուղղությամբ արվում են, սակայն բացակայում է դրա հասարակական
ու պետական պատվերը:

9. Տարբեր լեզուների հիման վրա հայերենի առցանց ինքնուսույցների և հեռուսուցման դասըն-
թացների, հայերենի ուսուցմանը նպաստող էլեկտրոնային խաղերի ստեղծում: Այս ուղղությամբ կան
անհատների ու ՀԿ-ների առանձին փորձեր: Մինչդեռ այս աշխատանքները ևս պետք է կատարվեն
պետական ծրագրով: Սակայն ո՛չ ԿԳՆ-ն, ո՛չ սփյուռքի նախարարությունը, ո՛չ ՀՀ ԳԱԱ-ն իրենց ընթա-
ցիկ ծրագրերում չունեն նման խնդիրների ամբողջական փաթեթներ:

10. Արտերկրում հայերենի ուսուցման խրախուսում, հայախոսության շարժման ստեղծում:
Հայախոսության խրախուսման տնտեսական ու վարչական լծակների ստեղծում: Հետընթաց կա հայե-
րենի տարածման առումով. վերջին տասնամյակներում հայախոսությունը աշխարհում նվազել է, գնա-
լով խորանում է հայերի լեզվական ուժացումը հատկապես սփյուռքում, ու մի շարք բացասական զար-
գացումներ են արձանագրվում: Նվազում կամ փակվում են հայկական դպրոցները, թերթերը, հանդես-
ները: Մեծանում է խառնամուսնությունների թիվը, հայերենը դուրս է մղվում անգամ ներընտանեկան
հաղորդակցման ոլորտից: Մի շարք գաղթավայրերում հայերենը դադարել է մայրենի լեզու լինելուց:
Պատահական չէ, որ Եվրոպայում արևմտահայերենը մտցվել է «Վերացող և վտանգված լեզուների
կարմիր գրքի» մեջ: Պատերազմի պատճառով մեծ կորուստներ ունեցավ Սիրիայի հայկական հա-
մայնքը: Անգամ ՀՀ-ում հայախոս լեզվական հանրությունը գնալով նվազում է արտագաղթի պատ-
ճառով: Երբ աշխարհում ֆրանսերենը սկսեց դիրքերը զիջել անգլերենին, Ֆրանսիայի իշխանու-
թյունները նախաձեռնեցին ֆրանսախոսության (ֆրանկոֆոնիայի) համաշխարհային շարժումը: Հիմա
էլ մենք՝ հայերս, կարիք ունենք հայախոսության շարժման, որը պետք է նախաձեռնի կառավա-
րությունը, մասնավորապես սփյուռքի նախարարությունը: Իսկ ՀՀ-ում հայախոսությունը խրախուսելու
նպատակով պետք է կիրառվեն տնտեսական ու վարչական լծակներ: Մինչդեռ իրականում հակառակ
պատկերն ենք տեսնում. հատկապես աշխատանքի տեղավորվելիս խրախուսվում են ռուսերեն ու անգ-
լերեն իմացողները մույնիսկ այն դեպքում, երբ այդ իմացության անհրաժեշտությունը չկա:

11. Հայերենի օգտին քարոզչության ծավալում Հայաստանում և արտերկրում: Քարոզչության
ասպարեզում մրցակցությունը թերևս ամենից թեժն է: Բավարար չափերով չի կատարվում հայերենի ու
հայախոսության քարոզչություն այն դեպքում, երբ մեծ ու վտանգավոր ծավալների է հասնում օտար
լեզուների, հատկապես անգլերենի քարոզչությունը, տարածումն ու խրախուսումը: Հաճախ գուցե
ակամա անգլերենի քարոզչություն են անում մույնիսկ ՀՀ հանրային ռադիոն ու հեռուստատեսությունը,
թերթերը, լրատվական կայքերը, երբ անգլերեն երգերի անունները, մի շարք հապավումներ, ձեռնար-
կությունների և ապրանքների անուններ հնչեցնում կամ գրում են հենց անգլերեն ու լատինատառ:

12. Հայաստանի և սփյուռքահայ գաղթավայրերի լեզվավիճակի ուսումնասիրում և մշտադի-
տարկում: Սա կարևոր է՝ իմանալու համար, թե որտեղ ինչ գործունեության կարիք կա: Սա ևս պետք է
նախաձեռնի սփյուռքի նախարարությունը՝ ներգրավելով լեզվի մասնագետների:

13. ՀՀ լեզվավիճակի կարգավորում՝ հօգուտ հայերենի լիարժեք գործառնության: ՀՀ անկախա-
ցումից հետո աստիճանաբար հայերենացվում են երկրի կյանքի տարբեր ոլորտներ: Բայց այդ գործըն-
թացը ավարտված համարել չի կարելի: 1997-2010 թթ. լեզվի պետական տեսչությունը, համաձայն
«Լեզվի մասին» օրենքի պահանջի, 4-5 տարին մեկ անգամ կազմում էր «Հայերենի զարգացման պե-
տական ծրագիր», որը հաստատում էր կառավարությունը: Ճիշտ է, դրա իրականացման համար

կառավարությունը այդպես էլ որևէ գումար չէր հատկացնում, սակայն ծրագրով նախատեսված բազմազան գործերի մոտ մեկ երրորդը վերջին հաշվով իրականություն էր դառնում անհատների և հասարակական կազմակերպությունների ջանքերով: Ներկայումս այդպիսի ծրագիր չկա, քանի որ ԼՊՏ այժմյան անմիջական վերադասը՝ ԿԳ՝ նախարարը, հրաժարվում է կառավարությանը ներկայացնել այն՝ պատճառաբանելով, թե դա նախատեսված չէ ԿԳՆ կանոնադրությամբ:

Hovhannes Zakaryan (Armenia)

MODERN ISSUES OF THE LANGUAGE PLANNING FROM THE POINT OF VIEW OF THE ARMENIAN LANGUAGE COMPETITIVENESS IMPROVEMENT

The problem of national language preservation and development supposes an effective and ongoing work on the language planning to ensure the relevance and competitiveness of the language. These activities relate to the structure, functioning, normalization, codification, study, propagation and teaching of the language; the language situation in Armenia and in the Diaspora; the linguistic legislation of Republic of Armenia; propaganda of the Armenian language.

In this report there are given urgency corroborations of some problems in terms of the Armenian language competitiveness, and discussion about effective ways to implement them.

Լեոնիդ Թելյան (Հայաստան)

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀՈՍԱՆԻՇՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոմանիշության երևույթը լեզվաբանական աշխատություններում մեկնաբանվում է որպես լեզվական նշանի երկու կողմերի՝ նշանակիչի և նշանակելիի կամ արտահայտության և բովանդակության պլանների, անհամաչափ համապատասխանության դրսևորում: Անհամաչափությունը (ասիմետրիան) հատուկ է լեզվի էությանն ընդհանրապես, առկա է նրա և՛ համակարգային, և՛ կառուցվածքային, և՛ գործառական ոլորտներում, միավորների հարացուցային և շարակարգային հարաբերությունների մեջ: Հարացուցային պլանում նշանակիչի և նշանակելիի անհամաչափ հարաբերությունը ծնում է նշանի իմաստաբանական բնութագիրը ձևավորող այնպիսի երևույթներ, ինչպիսիք են բազմիմաստությունը, համանունությունը, հոմանիշությունը, սինկրետիզմը, լրացուցիչ բաշխման հարաբերությամբ կապված՝ արտահայտության գուգահեռ ձևերը: Հարաբերության այսպիսի անհամաչափությունը ներհատուկ է լեզվական բոլոր մակարդակների միավորներին՝ բառային, ձևաբանական, շարահյուսական, ինչպես նաև միապլանային միավորներին, եթե նկատի առնենք ուղղագրական-ուղղախոսական կարգի իրողությունները:

Չնի և բովանդակության նշված կարգի փոխհարաբերությունների բնությունը իմաստաբանության բուն խնդիրն է, և բնական պետք է համարել, որ դրանք առավել խորությամբ ուսումնասիրվել են բառային իմաստաբանության շրջանակում: Հոմանիշությունը լեզվական միավորների հարաբերության տեսակ է, որ բնութագրվում է դրանց նշանակությունների լրիվ կամ մասնակի նույնությամբ: Այս ընդհանուր սահմանումը պետք է վերաբերի արտահայտության և բովանդակության պլաններով օժտված բոլոր լեզվական միավորներին. յուրաքանչյուր դեպքում, սակայն, հոմանիշային, ինչպես նաև ձևաիմաստային այլ կարգի հարաբերությունները պետք է հանդես բերեն դրսևորման յուրահատկություններ՝ կապված նախ և առաջ բառային և քերականական իմաստների յուրահատուկ բնույթի հետ: Չմտնելով բառային իմաստաբանության խորխորատները՝ նշենք հոմանիշների բնության ոլորտում համընդհանուր ընդունելության արժանացած որոշ դրույթներ: Բառային հոմանիշները բաժանվում են համանիշ և նույնանիշ տեսակների: Նույնանիշները սակավաթիվ են. ցանկացած համատեքստում իրար փոխարինող բառերը ժամանակի ընթացքում որոշակիորեն տարբերակվում են: Համանիշների միջև առկա են լինում իմաստային, ռճական, գործառական բնույթի տարբերություններ:

Կարևոր է նկատի առնել, որ հոմանիշային հարաբերությունը բառերի իմաստային կառուցվածքը բաղադրող հարաբերություններից մեկն է միայն. հոմանիշային շարքում միավորված բառերից յուրաքանչյուրը նաև այլ կարգի հարաբերությունների մեջ է իմաստային տվյալ դաշտը կազմող բառերի հետ, և այդ հարաբերություններից էլ ձևավորվում է տվյալ բառի իմաստը: Անգլիացի լեզվաբան Ջոն Լայոնգի ձևակերպմամբ «այն, ինչ մենք անվանում ենք բառային միավորի իմաստ, իրենից ներկայացնում է իմաստային հարաբերությունների այն ողջ բազմությունը (ներառյալ հոմանիշությունը), որը

առկա է նրա և լեզվի բառապաշարի այլ միավորների միջև»¹: Բառի իմաստային այդ նկարագիրը բաղադրող հիմնական հարացուցային հարաբերություններից է ենթանունությունը (հիպոնիմիան): Սա իմաստային դաշտի սատորակարգությունը ներկայացնող հարաբերություն է, որը հիմնված է հասկացությունների սեռատեսակային կապերի վրա: Հմմտ., օրինակ, կարմիր, կապույտ, կանաչ.... բառերը, որոնք «գույն» սեռային հասկացության ենթանուններն են: Ենթանունների իմաստային կապը միակողմանի է («Վարդը ծաղիկ է» ասությոնը չի կարող փոխարինվել «Ծաղիկը վարդ է» ասությոնով): Հոմանիշ բառերը փաստորեն փոխադարձ փոխարինելիության հարաբերությամբ կապված ենթանուններ են: Ենթանվանական դաշտի հիմնաբառը կամ գերիշխող անդամը («հիպերոնիմը») տվյալ սեռային հասկացությունն արտահայտող բառն է, որը մի աստիճան բարձր է ենթանուններից՝ ի տարբերություն հոմանիշային շարքի հիմնաբառի, որը մտնում է նույն այդ շարքի մեջ: Ըստ էության ենթանվանական դաշտի յուրաքանչյուր անդամ իր հերթին կարող է մաս կազմել մի հոմանիշային շարքի, որի անդամները դարձյալ տեսակային հարաբերությամբ կապված կլինեն «հիպերոնիմի» հետ. հմմտ. կապույտ, լաջվարդ, լուրթ.... «գույն»:

Իսկ այժմ փորձենք անդրադառնալ սույն զեկուցման մեջ մեզ հետաքրքրող հիմնական խնդրին. հնարավոր է արդյոք բառային իմաստաբանության՝ վերևում ներկայացված կադապարը կիրառել նաև շարահյուսական հոմանիշների քննության ընթացքում:

Լեզվի շարահյուսական միավորները որոշակի կառուցվածք են ներկայացնում, և դրանց իմաստային կողմի գնահատականը, բնականաբար, սկզբունքորեն տարբեր է բառիմաստի գնահատումից: Շարահյուսական միավորը որոշակի կադապարով է կառուցվում, որը կարող է բազմաթիվ իրացումներ ունենալ: Դրանց միջև առկա իմաստային հարաբերությունների բացահայտումը հաճախ տարբերակումների առիթ է հանդիսացել: Մասնավորապես շարահյուսական հոմանիշության երևույթը սահմանելիս մասնագիտական գրականության մեջ, այդ թվում նաև հայերենի նյութը քննող աշխատանքներում², առաջ են քաշվել տարբեր չափանիշներ ու մոտեցումներ: Առավել հաճախ տարբերաց մեկնությունների առարկա են դարձել տեսական հետևյալ խնդիրները.

1. Ի՞նչը պետք է համարվի շարահյուսական հոմանիշության պայման՝ կառույցների արտահայտած նյութական բովանդակությամբ, թե՞ դրանց քերականական իմաստների ընդհանրությունը: Այսինքն, կարո՞ղ են հոմանիշ համարվել նույն բովանդակությունը տարբեր բառակազմերով (հոմանիշ կամ հակահիշ բառերի գուգորդումներով) արտահայտող նախադասությունները (օրինակ՝ «Նա ուտում է տատիկի եփած ճաշը» և «Նա ճաշակում է մեծ մոր պատրաստած կերակուրը», «Նա միշտ ներկա է լինում դասերին» և «Նա երբեք չի բացակայում դասերից» և այլն): Ակնհայտ է, որ կառույցների շարահյուսական իմաստների միջև առկա հարաբերությունը սահմանելու նախապայման պետք է համարվի դրանց բառային կազմերի նույնությունը, այլապես բառային և շարահյուսական հոմանիշության սահմանները հնարավոր չի լինի տարազատել: Այս պայմանը կարող է խախտվել նյութական իմաստից զուրկ բառերի փոխարինումների հաշվին, եթե դրանք նույն վերացական-քերականական նշանակությունն են արտահայտում (հմմտ., օրինակ, Գ. Ջահուկյանի առանձնացրած ընդհանրական կարգերից կազմի կարգի արտահայտությունը համադասական շաղկապների կամ համապատասխան կապերի միջոցով. «Գրիգորը և Հակոբը» և «Գրիգորը Հակոբի հետ միասին», «Ոչ թե Գրիգորը, այլ Հակոբը» և «Գրիգորը Հակոբի փոխարեն» և այլն³): Նույն այս չափանիշով են սահմանվում նաև հոմանիշային կապերը բարդ նախադասությունների միջև. այստեղ էլ բաղադրիչ մասերի բառային կազմերի նույնության պայմաններում հոմանիշությունը հանգում է բաղադրիչ նախադասությունների միջև առկա իմաստային հարաբերության նրբերանգներին, որոնք արտահայտվում են կապակցության միջոցների (շաղկապներ, շարահարություն) կամ կապակցության բնույթի (համադասություն, ստորադասություն) տարբերություններով:

2. Շարահյուսական կառույցների միջև իմաստային հարաբերության ձևավորման վրա ի՞նչ ազդեցություն ունեն դրանք կազմող բառերի (հատկապես բայ-ստորոգյալների) քերականական կարգերի, բարդ նախադասությունների դեպքում՝ հատկապես մասերի եղանակաժամանակային բնութագրերի տարբերությունները: Այսինքն, իմաստային ի՞նչ կարգի հարաբերություն է առկա, օրինակ, «Գնում է տուն», «Գնաց տուն», «Կգնա տուն» և այս կարգի պարզ կամ «Եթե հանդիպեմ, կասեմ», «Եթե հանդիպեի, կասեի» և այս կարգի բարդ նախադասությունների միջև: Ակներևաբար սրանք հոմանիշ կառույցներ չեն (սրանց իմաստային կապի մասին՝ ստորև), սակայն պետք է նկատի առնել, որ ձևաբանական տարբերությունները որոշակի համատեքստերում կարող են չեզոքանալ և այդպիսով գոյացնել հոմանիշ միավորներ (հմմտ. «Վաղը մեկնում եմ» և «Վաղը մեկնելու եմ» և այլն):

3. Ընդունելի՞ է արդյոք տարամակարդակ միավորների (ասենք՝ պարզ և բարդ նախադասու-

¹ **Дж. Лайонз**, Введение в теоретическую лингвистику, М., 1978, с. 453

² Օրինակ՝ **Ն. Ա. Պառնասյան**, Շարահյուսական հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970, **Լ. Գ. Թեյլան**, Ժամանակային և պատճառահետևանքային հարաբերություններ արտահայտող բարդ նախադասությունների հոմանիշ կառույցները ժամանակակից հայերենում, Լեզվի և ոճի հարցեր, IX, Երևան, 1985, էջ 3-126:

³ **Գ. Բ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:

թյան, նախադասության և բառակապակցության, բառակապակցության և բառի և այլն) միջև հոմանիշային առնչության գոյությունը, թե՞ հոմանիշության պարտադիր պայման պետք է համարել կառուցվածքների զուգահեռությունը՝ բացառելով նաև համադասական և ստորադասական, պատմողական և հարցական և այլ կարգի միավորների հոմանիշությունը (ինչպես որ վարվում է, օրինակ, ռուս լեզվաբան Ի. Ի. Կովտունովան⁴): Հարցը կարելի է նաև այլ կերպ ձևակերպել. հոմանիշության չափանիշ կարելի՞ է համարել միավորների փոխադարձ փոխակերպելիության հնարավորությունը (օր.՝ Հակոբը, որ լրագիր է վաճառում-լրագիր վաճառող Հակոբը-լրագրավաճառ Հակոբը և այլն): Նշենք, որ մասնագիտական գրականության մեջ գերիշխող է այս կարգի միավորները հոմանիշ համարելու տեսակետը:

Շարահյուսական հոմանիշության երևույթի տարբեր մեկնաբանություններն ընդհանուր առմամբ պայմանավորված են շարահյուսական միավորի արտահայտության և բովանդակության պլանների, կառուցվածքային վերացական կաղապարների և դրանց խոսքային իրացումների փոխհարաբերության տարբեր պատկերացումներով: Արտահայտվել են նաև շարահյուսական կառույցների հոմանիշությունը և այդ տերմինի գործածության նպատակահարմարությունն ընդհանրապես կասկածի տակ առնող տեսակետներ⁵:

Թեև լեզվի բառային և շարահյուսական միավորների իմաստային կառուցվածքների քննությունը տարբեր սկզբունքներ է ենթադրում, մենք կարծում ենք, որ դրանց միջև գոյություն ունեցող իմաստային հարաբերությունները ներկայացնելիս կարելի է պահպանել մոտեցման ընդհանրությունը: Մասնավորապես շարահյուսական մակարդակում ևս կարելի է առանձնացնել բառային իմաստաբանության մեջ ընդունված՝ ենթանվանական (հիպոնիմիական) և հոմանիշական դաշտերին զուգահեռ իմաստային դաշտեր: Ենթանվանական դաշտին շարահյուսական մակարդակում համապատասխանող իմաստային դաշտը կոչում ենք **ստորակցական**: Սրա գերիշխող (դոմինանտ) անդամ կարելի է համարել տվյալ միավորի կառուցվածքային կաղապարը, որն իր կոնկրետ իրացումների հետ կապված կլինի քերականական իմաստների սեռատեսակային հարաբերությամբ: Ստորակցական դաշտի անդամ միավորները բառակազմերի մույնության պայմաններում տարբերվում են քերականական կարգային իմաստներով՝ եղանակ, ժամանակ, սեռ, հոլով և այլն, որոնք, ինչպես նշեցինք, որոշակի համատեքստերում կարող են չեզոքանալ և առաջացնել հոմանիշներ: Ստորակցական դաշտի անդամներից յուրաքանչյուրը միաժամանակ մտնում է նաև հոմանիշների շարքի մեջ, որի անդամները տարբերվում են կառույցի քերականական իմաստի նրբերանգները ձևավորող կապակցության միջոցներով և ստորակցական դաշտի գերիշխող անդամի նկատմամբ գտնվում են նույն՝ տեսակային հարաբերության մեջ:

Leonid Telyan (Armenia)

THE CRITERIA OF SYNONYMOUSNES AT SYNTACTIC LEVEL

In the article an attempt is made to define the criteria of syntactical synonymy in the general context of defining the phenomena of synonymy as a reflection of asymmetric coincidence of the two sides of the language sign. According to the principles of discovering lexical synonyms, two types of relations between the paradigm members of the realization of the given syntactical model (construction): hyponymous and synonymous are distinguished. Permissible cases of the disruption of lexical content and structural parallelism of synonymous syntactical units are indicated.

Ռոբերտ Թոխմախյան (Հայաստան)

ԴԱՍԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՉՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԸ

Հայտնի է, որ լեզուն ժամանակի ընթացքում մշտապես փոփոխվում է, զարգանում, և երբեք չի եղել մի այնպիսի ժամանակաշրջան, որ լեզուն հանդես գա որպես մի միասնական, անմիօրինականություններից զերծ համակարգ: Լեզվի (մասնավորապես հայերենի) զարգացման ողջ ժամանակաշրջանում նրան ուղեկցել են բարբառները: Մեր ուսումնասիրության նյութը 5-րդ դարի գրաբարն է, և այն նույնպես եղել է մի այնպիսի վիճակում, որ ընդհանրացված հայերենի կողքին՝ գործել են նաև բարբառները: Այս առումով ինչպիսին է մաշտոցյան աշբուրները: Մեր խորին համոզմամբ՝ Մաշտոցը կարողացել է գտնել հայերենի հնչույթային համակարգի այն բոլոր միավորները, որոնք կարող էին ար-

⁴ Ст'я И. И. Ковтунова, О синтаксической синонимике, в кн. Вопросы культуры и речи, вып. I, М., 1955:

⁵ Ст'я, օրինակ, А. П. Чуланова, К вопросу о целесообразности и значении термина “Синтаксическая синонимия”, Вестник Томского государственного университета, № 320, 2009.

տահայտել ընդհանրական հայերենի բնորոշ հատկանիշները: Կարծում ենք, որ հայերենը իր երկարատև գոյության ընթացքում պետք է կազմավորեր մի ընդհանրական լեզու, որը հասկանալի պետք է լիներ գրեթե բոլոր բարբառների ներկայացուցիչների համար/ պատերազմի ժամանակ գործը լեզվական հայեցակետով միասնական հաղորդակցության պահանջ ունի/:

Գրաբարի հնչույթային համակարգի վերաբերյալ արտահայտած բազմաթիվ կարծիքների մեջ մենք առավել հակված ենք այն տեսությանը, որը ներկայացրել է ակադեմիկոս Է. Աղայանը իր «Գրաբարի քերականություն» ծանրակշիռ գիտական հետազոտության մեջ: Աղայանի ներկայացրած տեսության բազմաթիվ ըմբռնումները գիտական անժխտելի իրողություններ են և մեր ապացուցման կարիքը չունեն:

Մեր գեկուցման մեջ մենք փորձում ենք ներկայացնել մի քանի նկատառումներ, որոնք տարբերվում են Աղայանական ըմբռնումներից:

Առաջինը վերաբերում է ձայնավորական համակարգին: Գրաբարում Աղայանը ընդունում է 6 ձայնավոր՝ ա, ո, ե, ը, ի, ու և մեկ բարբառակերպ՝ է: Մեր առարկությունը առաջին հերթին բարբառակերպ հասկացությանն է վերաբերում: Այն հստակ չէ. սա մի կողմից ոչ ձայնավոր է, ոչ երկբարբառ: Պետք է կարծել, որ է-ն նույնպես ձայնավոր է: Այսինքն գրաբարում առկա են ե և է ձայնավորները: Սրանց տարբերությունը հավանորեն բերանի բացվածքի մեջ է: Ըստ բարձրության է-ն վերին բարձրացման ձայնավոր է, իսկ ե-ն միջին բարձրացման: Ու ձայնավորը գրության մեջ արտահայտվում էր երկու նշանով՝ բառասկզբում ու, իսկ երկբարբառներում ւ նշանով: Այն, որ ու-ն բոլոր դեպքերում դիտարկվում է որպես պարզ ձայնավոր, կարող է կասկածներ հարուցել, քանի որ 5-րդ դարում այն դեռևս մի շարք դիրքերում պետք է պահպանած լիներ երկբարբառային արտաբերությունը և ամենայն հավանականությամբ այս է եղել պատճառը, որ այն ինչպես գրությամբ, այնպես էլ արտասանությամբ մեկ միավոր չի դիտարկվել Մաշտոցի կողմից: Ու ձայնավորի տեղը հանդես է եկել ւ-ը՝ նույն գործառնությամբ հատկապես երկբարբառներում: Ընդ որում այն կարող է լինել ինչպես բարձրացող, այնպես էլ իջնող երկբարբառի միավոր:

Մեր համոզմամբ, ասենք՝ նիւթ, հիւթ, գիւտ և նման կազմություն ունեցող բառերում ւ-ը բարձրացող երկբարբառ է, մինչդեռ Աղայանը բոլոր դեպքերում այն դիտարկում է որպես բաղաձայն: Ի միջի այլոց, ւ-ի ձայնավորական կազմությունը ընդունում էր Մ.Աբեղյանը (տե՛ս «Գրաբարի երկբարբառներն» հոդվածը, Երկեր, հ. Ը, Երևան, 1985, էջ 292-329):

Նույնպիսի գործառնությ է ունեցել նաև յ-ն, որը որպես ձայնավոր հանդես է եկել երկբարբառների կազմում՝ ի-ի տարբերակ, և թերևս որպես բաղաձայն՝ ձայնավորից առաջ: Իովանն-Յովան-Հովան, Իուդա-Յուդա-Հուդա:

Մեր մյուս առարկությունը բաղաձայնական ենթահամակարգում վերաբերում է լ>ղ հակադրությանը: Կան իհարկե բազմաթիվ փոխառություններ, ուր օտար լեզուների լ-ին հայերենում փոխարինում է ղ տարբերակը՝ ինչպես տիտղոս, աստղ, Պողոս և այլն, որոնց կողքին կան նաև լ-ով կազմություններ, ասենք՝ գայլ:

Մի կողմից այն կարելի է դիտել որպես տարածքային, հավանաբար կենտրոնական բարբառի արտահայտություն:

Այստեղ մենք հակված ենք այն կարծիքին, որ հայերենը հնագույն շրջանից սկսած տարբերակել է 2 հնչյունն էլ, ինչպես լ-ն, այնպես էլ ղ-ն: Թերևս այս կարելի է կապել հայերենի ավելի վաղ շրջանի իրողությունների հետ, նկատի ունենք նոստրատիկ շրջանը. այսինքն դիտարկել հնդեվրոպականին առնչվող այլ լեզվաընտանիքներին բնորոշ ընդհանրությունները:

Այսպես Գ. Ջահուկյանը նոստրատիկ է համարում հնդեվրոպական լ ածանցը, որը հայերենում ստացել է դերբայական ածանցի արժեք՝ բերել-բերեալ (էջ 70), ինչպես և այլ բառում լ-ի առկայությունը, մյուս կողմից նոստրատիկական ազդեցության արդյունք են եղն, եղնիկ բառերը (նույն տեղում, էջ 71): Հայերենում նոստրատիկ հետք է տեսել լեզվաբան Վ. Համբարձումյանը լայն, ալիք բառերում, որոնց դեպքում կան լ>լ համապատասխանությունները: (տե՛ս Վ. Համբարձումյան, «Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ», Ե., 2012, էջ 52): Սա ևս հիմք կարող է ծառայել այդ երկու հնչույթների առանձին, ինքնավար գոյությանը և չներկայացնել սրանք, որպես նույն հնչույթի տարբերակներ կամ այն համարել հայերենի զարգաց մաս ու շրջանի իրողություն:

Կարելի է կարծել, որ նոստրատիկ տեսության կիրառությունը կարող է նպաստել մեր լեզվի հնագույն շրջանների մի շարք դեռևս պարզություն չստացած խնդիրների բացահայտմանը:

Robert Tokhmakhyan (Armenia)

THE PHONEMIC SYSTEM OF CLASSICAL ARMENIAN

The analysis of the Classical Armenian phonemic system by different authors has reviewed somewhat different results. In the subsystem of vowels the quantity of them flag to adds between 5 and 7. It refers

particularly to the description to the vowels է and ե. Sometimes the phonemic value of the vowel is put to question. There is no clarity in the description of diphthongs. In the classification of consonance there is no unanimity. It is specifically evident in the description of the consonance լ and ղ. They are considered as variants of one and some units and there functioning as independent units referees to the post classical period.

If we take into consideration the phonetic forms of lexical from the nostratic linguistic point of view we have to consider them as different phoneme.

Ամալյա Խաչատրյան (Շվեդիա)

ԱՐԴՅՈ՞Ք ՊԱՏԱՀԱԿԱՆ Է ՇՎԵԴԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈՂԵՐԻ ՆՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Շվեդերենը պատկանում է գերմանական խմբի լեզուներին, իսկ ավելի նեղ դասակարգումով՝ հյուսիսգերմանական կամ սկանդինավյան ենթախմբին, որի մեջ բացի շվեդերենից մտնում են նորվեգերենը, դանիերենը, կղզային լեզուներ՝ իսլանդերենը և ֆառերենը: Ի տարբերություն գերմաներենի և իսլանդերենի՝ շվեդերենը ենթարկվել է այլ լեզուների ազդեցության, որի հետևանքով խիստ պարզեցվել են հոլովման և խոնարհման համակարգերը: Չնայած մեծ քանակությամբ փոխառություններին՝ շվեդերենը պահպանել է մեծաքանակ բառեր, որոնք ընդհանուր են սկանդինավյան լեզուների հետ:

Ինչպես մյուս գերմանական լեզուներում՝ շվեդերենի գոյականը զուգակցվում է հոդով: Գոյականներն ունեն որոշիչ և անորոշ հոդեր: Անորոշ են -en և -ett հոդերը, որոնք գործածվում են որպես ինքնուրույն բառեր՝ դրվելով գոյականից առաջ: Որոշիչ հոդը մեծամասամբ հավելվում է բառի վերջին որպես ածանց: Այդ ածանցներն են՝ -(e)n, -(e)t, -na, -a, -en:

Շվեդերենում բոլոր գոյականները բաժանվում են 2 խմբի՝ ըստ քերականական սեռի: Մեկը կոչվում է utrum կամ ընդհանուր սեռ, մյուսը՝ neutrum կամ չեզոք սեռ:

Առաջինները ստանում են -n կամ -en հոդ վերջածանց, իսկ երկրորդները՝ -t կամ -et վերջածանց:

| Այսպես՝ | Անորոշ առում | Որոշյալ առում |
|---------|----------------------|-----------------|
| | en hund (մի շուն) | hunden (շունը) |
| | ett hus (մի տուն) | huset (տունը) |
| | en flas ka (մի շիշ) | flaskan (շիշը) |
| | ett äpple (մի խնձոր) | äpplet (խնձորը) |

Նշենք, որ բառերի 80 տոկոսը վերաբերում են utrum (ընդհանուր) սեռին, իսկ 20 տոկոսը՝ չեզոք սեռին: Նշենք, որ սեռերի բաժանման հիմքում չկա որևէ իմաստային տարբերակում՝ բացի շնչավորանշունչ առարկաների սահմանազատումից: Մարդիկ, կենդանիները պատկանում են ընդհանուր սեռին, մյուսները՝ կամ ընդհանուր, կամ չեզոք սեռին: Հոդերը փոփոխվում են ոչ միայն ըստ սեռի, այլև ըստ թվի: Անորոշ հոդը, որը միաժամանակ նշանակում է նաև մեկ, չունի հոգնակի թիվ: Իսկ որոշիչ հոդը ունի նաև հոգնակիակերտ ածանցներ՝ -a, -na, -en:

Հոդերը սերտորեն կապված են գոյականի բոլոր ձևերի հետ և դրվում են հոգնակիակերտ ածանցներից հետո այնպես, ինչպես հայերենում:

տուն – տներ- տները

կատու – կատուներն ու շները:

| Շվեդերենում՝ | flaska (շիշ) | flaskor (շշեր) | flaskorna (շշերն/ը) |
|--------------|--------------|----------------|-----------------------------|
| | telefon | telefoner | telefonerna |
| | äpple | äpplen | äpplen a (խնձոր, խնձորները) |

Հաշվի առնելով, որ շվեդերենում տարբերակում են հոգնակի թվի կազմավորման 5 կամ 6 խումբ՝ որոնց ածանցվում են որոշիչ հոդերը, ընդհանուր պատկերը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով.

| Անորոշ | Որոշ | Հոգ. անորոշ | Հոգ. որոշ |
|---------------|------------|-------------|-----------------------|
| 1. en penna | pennan | pennor | pennorna (գրիչ) |
| 2. en penna | permen | permar | permarna (թղթապանակ) |
| 3. en telefon | telefonen | telefoner | telefonerna (հեռախոս) |
| 4. ett äpple | äpplet | äpplen | äpplen a (խնձոր) |
| 5. ett hus | huset | hus | husen (տուն) |
| 6. en målare | en målaren | målare | målarena (ներկարար) |

Այսպիսով տեսնում ենք, որ որոշիչ հոդը մտնում է հայերենի **ճ** կամ **ջ** հոդին: Ե՛վ հայերենում, և՛ շվեդերենում կան հնչյունական տարբերակներ՝ պայմանավորված բառի հնչյունական ձևավորմամբ: Եթե բառը ավարտվում է ձայնավորով, ավելացվում է միայն **-ո** հոդը, իսկ եթե բաղաձայնով, ապա՝ **-են**: Պետք է ենթադրել, որ հին հայերենի **ճ** հոդը նույնպես ունեցել է հնչյունական տարբերակ, որը հետագայում վերածվել է ինքնուրույն ձևույթի և նույնպես կիրառվում է ըստ հնչյունական պայմանների:

սեղան – սեղանը, բայց սեղանն ու աթոռները կամ շունն ու կատուն:

Շվեդերենում չեզոք սեռի բառերը ստանում են **-t** կամ **-et** ածանցը, ընդ որում ձայնավորից հետո հավելվում է **t**, իսկ բաղաձայնից հետո **-et**՝ *brev, pianot*. գործածության պայմանները նույնն են:

Այստեղ բացառություն են կազմում ձայնորդները, մասնավորապես՝ **-el, -er, -or, -ar** այդ վերջավորություններին հավելվում է **-n** որոշիչ հոդը առանց ձայնավորի. օր. *cykeln, dollarn, motorn, herrn, himmeln, fadern, karl-n, kopparn*:

Շվեդերենի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ գոյություն ունի ինքնուրույն (ազատ) որոշիչ հոդը, որն օգտագործվում է առարկայի հատկանիշը ավելի ստույգ դարձնելու համար:

Դրանք օգտագործվում են հատկապես, երբ գոյականին նախորդում է ցույց տվող ածականը կամ ցուցական դերանունը: Օրինակ՝

den nya stolen (այն նոր աթոռը)

det nya bordet (այն նոր սեղանը)

det där huset (այն տունը)

den här lägenheten (այս բնակարանը):

Այդպես չէ սովորական, ոչ ընդգծված որոշիչ դեպքում, օր. *en ny stol* (մի նոր աթոռ), *ett nytt bord* (նոր սեղան): Այս դեպքերում գոյականը նույնպես բնութագրվում է նաև ածանցավոր հոդով: Ստացվում է կրկնակի հոդավորում:

Մի քանի խոսք հոդերի գործածության մասին: Անորոշ հոդը գործածվում է այն դեպքում, երբ նշվում է միանման առարկաներից մեկը, կամ երբ անձանոթ մի անձ կամ առարկա է հիշատակվում:

1. *Jag har en hund* (Ես մի շուն ունեմ):

En kvinna väntar på dig (Մի կին է ձեզ սպասում):

2. Երբ ստորոգելիական գոյականը տալիս է մարդու սոցիալական բնութագիրը կամ ազգությունը, մասնագիտությունը և չի զուգակցվում որոշիչով, ապա անորոշ հոդը չի օգտագործվում (ավելի ճիշտ՝ ոչ մի հոդ չի գործածվում):

Martin är läkare (Մարտինը բժիշկ է):

Han är en bra läkare (Նա լավ բժիշկ է):

Jag tycker om te (kaffe) (Ես սիրում եմ թեյ (սուրճ):

Birgit är svenska (Բիրգիտը շվեդուհի է):

3. Որոշիչ հոդը օգտագործվում է, երբ առարկան կամ անձը արդեն հիշատակվել են կամ հասկացվում են ենթատեքստից: Նման գործածությունը որոշիչ հոդի հիմնական գործառնությունն է և նույնական է երկու լեզուներում:

Դուք տեսնում եք մի սև մատիտ: *Du ser en svart penna.*

Մատիտն ուրեմն սև է¹: *Pennan är förstås svart.*

Սա մի գորշ կատու է: *Här är en grå katt.*

Կատուն շատ բարի է: *Katten är snäll.*

Երբ գոյականը նշում է որևէ նյութի մի մասը, որը հայտնի է տվյալ իրավիճակում: Օր.

Kaffet står och svalnar. Սուրճը սառչում է:

Anna sitter och läser. Աննան (նստած) կարդում է:

Այժմ նշենք գործածության տարբերությունները:

1. Անձնական անունները շվեդերենում օգտագործվում են առանց հոդի (այսինքն՝ զրո հոդով):

Martin har redan kommit. Մարտինը արդեն եկել է:

Erik är på landet. Էրիկը քաղաքից դուրս է գնացել:

2. Քաղաքների ու երկրների անունները նույնպես տարբեր են. հայերենում օգտագործվում է որոշիչ հոդով, իսկ շվեդերենը՝ առանց հոդի:

Օր. Մոսկվան Ռուսաստանի մայրաքաղաքն է:

Moskva är Rysslands huvudstad.

Ֆրանսիան հնագույն երկրներից է: *Frankrike är ett av gamla länder.*

3. Աշխարհագրական անունները հայերենում օգտագործվում են սովորաբար առանց հոդի, իսկ որոշ դեպքերում՝ որոշիչ հոդով.

Օր. Ատլանտյան օվկիանոս (Ատլանտյան օվկիանոսը բաժանում է երկու կիսագնդերը):

Խաղաղ օվկիանոս

¹ Հայերենում անորոշ հոդը չունի որևէ ածանց. հաճախ օգտագործվում է **մի** բառը:

Կովկասյան լեռնաշղթա
Սևանա լիճ
Բայկալ լիճ
Մոնղոլիա, Ալժիր, Լիբանոս, Թուրքիա
Մինչդեռ Շվեդերենում շատ անվանումներ (գետեր, լճեր և որոշ երկրների անուններ) օգտագործվում են որոշիչ հոդով:

Mälaren, Vättern, Östersjön (Բալթիկ ծով, Մելարե):
Medelhavet (Միջերկրական ծով), Mongoliet, Turkiet, Algeriet.

4. Հայերենում հոդը չի արտահայտվում հոլովական ձևերում՝

սեռ. հոլով Աշոտի կինը, իսկ տրականում շատ հաճախ է օգտագործվում. Օր. Մոտեցա սեղանին, Աշոտին: Որոշ բարբառներում հոդ կարող է օգտագործվել բացառական, գործիական և ներգոյական հոլովներում: Օր.՝ Մտքումը դրել է: Կերանք հացի միջիցը: Հանենք միջիցը:

5. Գոյություն ունի էական մի տարբերություն որոշիչ հոդի գործածման ոլորտում:

Եթե շվեդերենում ստացական դերանունների օգտագործումը բացառում է որոշիչ հոդի կիրառումը, ապա հայերենում այն սովորական է:

Օրինակ՝
min katt (իմ կատուն)
ditt hus (քո տունը)
kattens svans (կատվի պոչը)
våra (era) böcker (մեր (ձեր) գրքերը):

Այսպիսով, հայերենում որոշյալությունը ունի կրկնակի արտահայտում՝ ստացական դերանվանք և հոդով:

6. Գոյություն ունեն այլ դեպքեր, երբ հոդի գործածությունը մերթ մման է, մերթ տարբեր: Օրինակ՝ հայերենում ասացվածքներում օգտագործվում է որոշիչ հոդը.

Սևին ասպունձ ինչ կանի, խեղճ խրատը:

Նույնը և շվեդերենում՝ Sanningen lever (Ճշմարտությունը երկար է ապրում):

Interasset för boken är stort (Գրքի նկատմամբ հետաքրքրությունը մեծ է):

Շատ դեպքերում երկու լեզուներում էլ հոդը չի օգտագործվում, մասնավորապես՝ երբ լեզուների անուններն են նշվում:

Օր. Ֆրանսերեն խոսո՞ւմ ես: Talar du franska?

Իտալերեն գիտե՞ս: Kan du italienska?.

Որևէ գործողության անվանումը՝ Գաշնամուր նվագո՞ւմ ես: (Spelar du piano?)

Դուդուկ նվագել (փչել) (Spela duduk)

Ֆուտբոլ խաղալ (Spela fotbäll).

Տրանսպորտով երթևեկելու ձևը շվեդերենում օգտագործվում է առանց հոդի, իսկ հայերենում այն փոխարինվում է հոլովական (գործիական) ձևով: Օր.՝ Շվեդերեն՝ åka buss, tunnelbana, tåg, tar taxi (երթևեկել ավտոբուսով, մետրոյով, տաքսի նստել):

Գործածության այս բոլոր նմանություններով և տարբերություններով հանդերձ՝ ակնհայտ է, որ որոշիչ հոդի հիմնական գործառնությունը որոշյալության նշումն է:

Լեզվաբանները վաղուց են նշել, որ ի տարբերություն գերմաներենի՝ սկանդինավյան լեզուների կարևոր գծերից մեկը գոյականի ածանցումն է որոշիչ հոդի միջոցով: Նշում են նաև, որ այդ ածանցվող հոդը ծագում է ցուցական դերանունից, որը նույնպես ածանց է եղել: Սակայն տարակարծություններ կան, թե այդ ածանցը եղել է -hinno, թե -inno, թե՛ enno. Տարբեր են նաև դիտարկվում ժամանակագրական թվերը: Ոմանք դրանց ծագումը վերագրում են IX դ.-ից առաջ, մյուսները հասցնում են այն մինչև XIII դ.: Այդ տարակարծությունները պայմանավորված են նյութի բարդությամբ: Ուսումնասիրությունները հիմնված են նորդիկ լեզուների աղբյուրների և գլխավորապես ռունական փորագրությունների, ինչպես նաև վաղ միջնադարյան տեքստերի վրա: Ռունական փորագրությունները տարածված են Շվեդիայում և Դանիայում, իսկ վաղ ձեռագրերը գտնվել են Իսլանդիայում և Նորվեգիայում:

Նշենք, որ տիպաբանական տեսանկյունից հայերենը և շվեդերենը ենթարկվել են զգալի փոփոխությունների: Հայերենը կորցրել է քերականական սեռը՝ պահպանելով հոլովները, իսկ շվեդերենը պարզեցրել է քերականական սեռը, բայց կորցրել է հոլովները: Հայերենը ձեռք է բերել կցորդականություն և վերլուծության հատկանիշներ, մինչդեռ շվեդերենը դարձել է առավելապես վերլուծական լեզու: Հայերենում, ինչպես և շվեդերենում, լավ են պահպանվել դերանունները, հատկապես ցուցականները:

Դեռ գրաբարում, ինչպես նշում են դասական հայերենի մասնագետները (Ա. Մեյե, Ռ. Գողել, Է. Թումանյան), ցուցական դերանունները բացի ցուցականությունից և դեմքից արտահայտում էին նաև որոշյալություն: Չուկն նշանակում էր 'the fish', ձուկնս 'the fish here', աստղն «the star», աչքդ «your eyes».

Պետք է ենթադրել, որ հետագայում այդ արժեքը ձեռք է բերել որոշիչ հոդի իմաստ ու գործառնություն, քանի որ -ս, -դ, -ն (1, 2, 3 դեմքերի) համակարգում առավել վերացական է -ն, որը և ստացել է ինքնուրույն որոշյալության ածանցի արժեք: Հոդի կապը ցուցական դերանունների, մասնավորապես՝ -ն-ի հետ հաստատվում է այն փաստով, որ նույնիսկ ժամանակակից հայերենում հոդը դիտվում է դերանունների համակարգում, որպես գոյականի առում- առկայացում (Ջահուկյան): Մյուս կողմից՝ կասկած չի հարուցում հայերենի ցուցական դերանունների հնդեվրոպական ծագումը, որտեղ -ս, -դ, -ն վերջածանցները ունեն լիակատար հարաբերակցություն մյուս հնդեվրոպական լեզուների հետ:

Այս ծագումնային (հնդեվրոպական) ընդհանրությունից և պետք է ենթադրել հետագա ածանցավոր հոդի զարգացումը շվեդերենում և հայերենում, ընդ որում հայերենի ծագումը ցուցական դերանունից ավելի ցայտուն և ավելի ուշ տեղի ունեցած փաստ է: Ինչ վերաբերում է տարածքային հարցին, ապա իհարկե սա չի ենթադրում երկու լեզուների անմիջական շփումներ ու ազդեցություն: Այս հարցի բացատրությունը կարելի է գտնել նաև Ջոհաննա Նիկոլսի տեսության մեջ, որի համաձայն՝ լեզվական ընդհանրությունները կարող են ունենալ լայն և ներփակ գոտիներ, ընդ որում լայն գոտում տարածումը կարող է ընդգրկել մեծ մակերեսներ առանց խոչընդոտների, իսկ ներփակ գոտում տիպաբանական զարգացումը ավելի փոխազդեցական բնույթի է, քանի որ այդ նեղ գոտում գտնվում են ծագումնաբանորեն բազմազան լեզուներ: Դեռ ավելին, Նիկոլսի կարծիքով՝ լեզվաընտանիքներում կարող են առաջանալ զուգահեռ նորաբանություններ, եթե դրանք ունեն ծագումնաբանական ընդհանրություն:

Amalya Khacatryan (Sweden)

SIMILARITY IN ARMENIAN AND SWEDISH ARTICLE - ACCIDENTAL?

Such geographically remote languages as Armenian and Swedish reveal an unusual similarity in the form and function of the definite article. In the stretch of time both languages being indo-european by origin have undergone essential changes in their nominal systems. The Armenian has re-modelled it on clearly agglutinative principles, the Swedish has essentially simplified it. Yet both languages have rich pronominal systems, particularly the demonstrative pronouns, to which goes back the inflectional definite article –n, -en in Swedish. and –n /shwa (as positional variant) in Armenian. This similarity cannot be accidental the more so that they both have similar origin- from the demonstrative pronouns. It might be explained by the indo-european origin, which gave rise to the parallel development of inflectional suffix-article from the demonstrative pronouns.

Լալիկ Խաչատրյան (Հայաստան)

ԾԱՆԱՀՈՂԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Ծանաչողական կամ կոգնիտիվ լեզվաբանությունը ծագել է մի շարք գիտաճյուղերի փոխազդեցության հետևանքով: Այն ուսումնասիրում է լեզվի և գիտակցության, լեզվի և մտածողության կապի հարցերը, բացատրում է լեզվի զարգացումները մտածողական կարգերի միջոցով: Այս ուղղության ուշադրության կենտրոնում են գտնվում հետևյալ հարցերը՝ լեզուն որպես ճանաչողության գործիք և նշանային համակարգ, որ որոշում է տեղեկույթի մշակումը, տեղեկույթի ներկայացումը մարդու գիտակցության և լեզվական ձևերի մեջ, տեղեկույթի կողավորումը և փոխակերպումը, միաժամանակ այն որոշում է հիշողության կառուցվածքը և նրանում ընթացող որոնման գործընթացները, արհեստական ինտելեկտը և այլն:

Ծանաչողական լեզվաբանությունը նաև անվանում են գերխորը իմաստաբանություն, որ թույլ է տալիս լեզվական իմաստների հետևում տեսնել ընդհանուր հասկացական կարգեր և դրանք դիտարկել որպես ճանաչողության միջոցով աշխարհը յուրացնելու հետևանք¹:

Ծանաչողական լեզվաբանության ձևավորման գործընթացում կարևոր դեր են ունեցել՝ լեզվաբանական տիպաբանության և էթնոլեզվաբանության տվյալները, նեյրոլեզվաբանությունը, հոգելեզվաբանությունը, մշակութաբանությունը, բառերի նշանակության ուսմունքը և այլն²:

Հետևաբար ճանաչողական լեզվաբանությունը համարվում է ոչ թե պարզապես միջգիտակարգային բնագավառ, այլ ըմբռնվում է որպես համադրական գիտություն, որը մարդու ճանաչողական

¹ В.Д. Стариченко, *Большой лингвистический словарь*, Ростов-на-Дону, 2008, էջ 247-248.

² В. А. Маслова, *Современные направления в лингвистике*, М., 2008, էջ 98.

գործընթացների ժամանակ միավորում է մաթեմատիկական, փիլիսոփայությունը, լեզվաբանությունը, հոգեբանությունը, տեղեկության տեսությունը և այլն:

Այս ուղղությունը ձևավորվել է ԱՄՆ-ում, մախապես այն կոչվում էր **ճանաչողական քերականություն**, 1975թ. ամերիկացի լեզվաբաններ Ջ.Լակոֆֆը և Հ.Թոմսոնն առաջին անգամ այս գիտաճյուղի համար առաջարկեցին **ճանաչողական լեզվաբանության** եզրույթը³, որ լայն ճանաչում գտավ գիտական աշխարհում:

Ռուսաց լեզվով առաջին ճանաչողական քերականությունը հեղինակել է Վ. Ի. Գերասիմովը⁴: Ռուսաստանում ճանաչողական լեզվաբանության զարգացման գործում զգալի ավանդ ունեցան անվանի գիտնականներ Ն. Դ. Արուստյունովան, Ե. Ս. Կուբրյակովան, Յու. Ս. Ստեպանովը, Ի. Ա. Ստեռնինը, Վ. Ն. Թելիան և ուրիշներ:

Ճանաչողական լեզվաբանության զարգացման գործում կարևոր դեր խաղաց Յու. Ս. Ստեպանովի աշխատությունը⁵, որ առաջին փորձն էր համակարգելու ռուսական մշակույթի արժեքները, որոնք ներկայացնում էին հասկացությունների (կոնցեպտների) և մշակութային արձանագրությունների մեջ:

Ճանաչողական լեզվաբանության հիմքում ընկած է լեզվաբանական իմաստաբանությունը. որոշ հետազոտողներ լեզվի իմաստաբանական կարգերի մեջ տեսնում են առավել ընդհանուր հասկացական կարգեր, որոնք կարելի է ներկայացնել որպես մարդկային գիտակցության միջոցով արտաքին աշխարհի յուրացման արդյունք: Մյուս կողմից՝ ճանաչողական լեզվաբանությունում ստացված որոշ արդյունքներ կիրառելի են ոչ միայն լեզվի իմաստաբանության, այլև հնչյունաբանության, ձևաբանության, բարբառագիտության նկատմամբ և այլն:

Ընդհանրապես ճանաչողական լեզվաբանության հիմքում ընկած է այն դրույթը, որ մարդու վարքագիծն ու գործունեությունը նշանակալի չափով որոշվում են նրա գիտելիքների մակարդակով, իսկ նրա լեզվական վարքագիծը՝ լեզվաիմացությամբ:

Ճանաչողական լեզվաբանության առարկան **լեզուն** է, այժմ, սակայն, գիտնականները դրան վերաբերում են այլ կերպ: Առանց լեզվին դիմելու անհնարին է հասկանալ մարդկային ճանաչողական այնպիսի ունակությունների էությունը, ինչպիսին են՝ ընկալումը, դատողությունը, ուսուցումը, ինչպես նաև, գիտելիքների ձեռքբերումն ու օգտագործումը:

Ճանաչողական լեզվաբանության զարգացման արդի էտապում գլխավոր հիմնախնդիրներ են դիտվում հետևյալ երեք հարցադրումները՝ **լեզվական իմացության բնույթը, նրա յուրացումը, նրա օգտագործման ձևը**: Ըստ այդմ, հետազոտությունները տարվում են հետևյալ ուղղություններով. իմացության ձևերի ու տեսակների բացահայտում, նշանների և օրենքների ծագման ու զարգացման պայմանների վերհանում, լեզվական նշանների և մշակութային իրողությունների հարաբերակցության որոշարկում⁶:

Ճանաչողական լեզվաբանության կենտրոնական հիմնախնդիրների շրջանակը լրացնում են մի շարք հարցեր, որոնք կապված են կախումների և ճանաչողական շղթայում նրա բաղադրիչների բացահայտման հետ՝ իմացություն-լեզու-ներկայություն-տեղեկատվական հոսքի բազմափուլ գործընթացի անդամատում հասկացությունների (կոնցեպտների) կարգայնացում – ընկալում⁷:

Ճանաչողական լեզվաբանությունը համակողմանիորեն մշակել է նոր ուսմունքներ աշխարհի նկարագրի (կոնցեպտուալ և լեզվական կտրվածքներով), կոնցեպտների (հասկացությունների՝ լայն առումով) և կարգայնացման վերաբերյալ, ինչպես նաև ընդհանուր կողմնորոշվածություն է ցուցաբերում արտալեզվաբանական գործոնների և աշխարհի վերաբերյալ մարդու գիտելիքների նկատմամբ⁸:

Ճանաչողական լեզվաբանության մեջ առաջնային նշանակություն ունի որոշ հասկացությունների բովանդակության մեկնաբանությունը, ինչպես՝ **կոնցեպտ, հասկացություն և նշանակություն**:

Այս հասկացությունների մեկնաբանման հիմնախնդիրը համարվում է լեզվաբանության վիճահարույց հարցերից, քանի որ կոնցեպտի վերլուծության ընթացքում առաջին պլան է մղվում բովանդակության պլանի առկայացումը, որ հետազոտողին անմիջականորեն ընկալելի չէ. նրա էության և հատկանիշների մասին կարելի է դատողություններ անել միայն անուղղակի տվյալների հիման վրա:

Վերջին շրջանի ուսումնասիրություններում ընդունված է այն տեսակետը, որ կոնցեպտները յուրատեսակ միջնորդներ են բառերի և արտալեզվական իրականությունների միջև, և բառերի իմաստները

³ Лакофф Дж., Томсон Г., *Представляем когнитивную грамматику*, М., 1975.

⁴ Герасимов В. И., *К становлению “когнитивной грамматики”* // *Современные зарубежные грамматические теории*, М. 1985.

⁵ Степанов Ю. С., *Константы: словарь русской культуры*, М., 1977.

⁶ В. А. Маслова, *Современные направления в лингвистике*, էջ 100.

⁷ Кравченко А. В., Поляков В., *Когнитивная парадигма в языкознании и новые вызовы* // *Когнитивное моделирование в лингвистике: сб докладов* – Варна, М., 2003.

⁸ Е. С. Кубрякова, *Части речи в когнитивной точке зрения*, М. 1997.

չեն կարող բացառապես հանգեցնել կոնցեպտների⁹։ Ընդունվում է նաև այն մոտեցումը, որ կոնցեպտն ավելի բազմանշանակ է և ըստ այդմ բառին հարաբերակցում է իր նշանակություններից միայն մեկով։ Բառերին հատուկ այնպիսի հատկանիշները, ինչպիսին են, օրինակ, միջբառային հարաբերությունները (հոմանշային, հականշային, համանունական և հարանունական), վերաբերում են ոչ թե բառին ընդհանրապես, այլ նրա բառիմաստային տարբերակներից միայն մեկին¹⁰։

Մյուս կողմից՝ կոնցեպտը կարող է ներկայանալ ոչ թե բառի նշանակությամբ կամ իմաստով, այլ բառերի ամբողջ ասպեկտով՝ կապակցություններով, դարձվածքներով, առածներով, ասացվածքներով և նույնիսկ ամբողջական բնագրերով՝ ավելացրած այլևայլ զուգորդություններ, որոնք տվյալ բառի նշանակությունների մեջ ընդգրկված չեն։ Այսպես, **Տուն** կոնցեպտը կարող է ներկայանալ ամենատարբեր բառերով և նրանց նշանակություններով՝ **բնակարան, կացարան, գերդաստան, տոհմ, ցեղ, հայրենիք, ունեցվածք, հարստություն, դիմաստիա, տնային տնտեսություն, մշակութային-գիտական-կենցաղային հաստատություն, առևտրական հիմնարկություն, սենյակ, գյուղ, քաղաք, երկիր, ծովա, (ժող.) խելք, միտք** և այլն։

Կոնցեպտ և հասկացություն բառերը իրենց ներքին ձևով համընկնում են. դրանք ծագում են լատ. *conceptus* «հասկացություն» բառից, թեև երկուսն էլ ըստ նշանակությունների տարբերակվում են։ Եթե հասկացությունը «իրականության առարկաների ու երևույթների ընդհանուր և էական հատկանիշներն արտահայտող տրամաբանորեն տարրորշված գաղափար» է արտահայտում, ապա կոնցեպտը ազգային յուրահատուկ մտածողական կառուցվածք է, համապատասխանում է բառերի իմաստային-թեմատիկ որևէ խմբի, որի բովանդակային պլանը կազմում է տվյալ առարկայի մասին գիտելիքների ամբողջությունը, իսկ արտահայտության պլանը՝ լեզվական միջոցների ամբողջությունը (բանական, դարձվածաբանական, առած-ասացվածքային և այլն)։

Լեզվաբանության մեջ **կոնցեպտ-հասկացություն-նշանակություն** եզրերի փոխհարաբերության հարցերը տարբեր մեկնաբանություններ են ստացել։ Ոմանք նկատում են, որ կոնցեպտը զգալիորեն լայն ըմբռնում է, քան բառական նշանակությունը (Վ. Ի. Կարասիկ). համեմատենք բառիմաստային թեմատիկ որևէ խումբ և նրա մի բաղադրիչը՝ բառը, ոմանք էլ ենթադրում են, որ կոնցեպտը հարաբերակցում է ոչ թե բոլոր բառերին, այլ նրանց նշանակություններից միայն մեկին (Դ. Ս. Լիխաչև). հմմտ. **Տուն** կոնցեպտը և նրա տարածքում գտնվող բառերից որևէ մեկի իմաստը (1.բնակարան, 2.տոհմ, 3. դիմաստիա և այլն)։ Կոնցեպտը և հասկացությունը, որպես զուգահեռ եզրույթներ, պատկանում են տարբեր տեմինահամակարգերի, հասկացությունը՝ տրամաբանության և փիլիսոփայության, իսկ կոնցեպտը՝ մաթեմատիկական տրամաբանության, մշակութաբանության, լեզվամշակութաբանության, ճանաչողական լեզվաբանության։

Կոնցեպտ և նշանակություն եզրույթները նույնպես տարիմաստ ըմբռնումներ են։ Կոնցեպտը հոգևոր կամ նյութական առարկայի մտածական և հարաբերականորեն կայուն ճանաչողական կաղապար է, որ գիտակցության մեջ անմիջականորեն համապատասխանում է որոշակի լեզվական նշանի։ Կոնցեպտի միջոցով արտահայտվում է հասկացության բովանդակությունը, արտահայտվում է որոշակի միտք (օրինակ, որևէ գրողի երկերում՝ տարածության կոնցեպտը, ժամանակի կոնցեպտը Ա.Բալունցի գործերում կամ տխուր մարդկանց կոնցեպտը Ստ.Զորյանի պատմվածքներում և այլն)։ Այնինչ բառն իր նշանակությամբ միշտ արտահայտում է կոնցեպտի միայն մի մասը՝ հանդես գալով իբրև նրա դրսևորման լեզվական արտահայտություն՝ լեզվական նշան։ Դրանով հանդերձ, կոնցեպտի տիրույթ կարելի է թափանցել առաջին հերթին լեզվական միջոցների ուղիով՝ բառերի, արտահայտությունների, դարձվածքների, նախադասությունների, բնագրերի (տեքստ) և այլն։

Ճանաչողական լեզվաբանությունը տարբերակում է կոնցեպտի երեք հիմնական մոտեցում։

Առաջին մոտեցման դեպքում կոնցեպտն արժևորվում է մշակութաբանական իրողություն. ազգային մշակույթը ըմբռնվում է որպես կոնցեպտների և նրանց միջև առկա հարաբերությունների համակարգ։ Հետևաբար կոնցեպտը ազգային մշակույթի հիմնական ցանցն է մարդու հոգևոր-մշակութային աշխարհում (Յու. Ս. Ստեպանով)։

Երկրորդ մոտեցման դեպքում կոնցեպտի բովանդակության ձևավորման միակ միջոց է համարվում լեզվական նշանի իմաստը (Ն. Ֆ. Ալեֆիրենկո)։

Երրորդ մոտեցման դեպքում նկատում են, որ կոնցեպտն անմիջականորեն չի առաջանում բառի նշանակությունից, այլ այն դիտվում է որպես բառիմաստի և անձնական ու հասարակական փորձի բախման հետևանք. կոնցեպտը համարվում է միջնորդ՝ բառերի և իրականության միջև (Դ. Ս. Լիխաչև, Ե. Խ. Կուրբյակովա)։

Կոնցեպտի տարատեսակ ըմբռնումները թույլ են տալիս առանձնացնելու հետևյալ հիմնական հատկանիշները.

⁹ Карасик В. И., *Культурные доминанты в языке // Языковая личность: культурные концепты*. Волгоград, Архангельск, 1996.

¹⁰ Лихачев Д. С., *Концептосфера русского языка // Русская словесность*. Антология, М., 1997.

- 1) Դ-ա մարդկության փորձի նվազագույն միավորն է՝ իր իդեալական դրսևորման մեջ, որ լեզվական նշանակություն է ձեռք բերել բառերի միջոցով և ունի իմաստային դաշտի կառուցվածք:
- 2) Դ-ա իմացության (գիտելիքի) մշակման, պահպանման և փոխանցման հիմնական միավոր է:
- 3) Այն հասարակական երևույթ է. նրա ասոցիատիվ (զուգորդական) դաշտը պայմանավորում է նրա պրագմատիկ դերը:
- 4) Դ-ա մշակույթի հիմնական ցանցն է, հետևաբար կոնցեպտները ներկայացնում են աշխարհը մարդու գիտակցության մեջ՝ ստեղծելով կոնցեպտուալ համակարգ, իսկ մարդկային լեզվի նշանները բառի կառուցվածքում ծածկագրում են այդ համակարգի բովանդակությունը:

Ի վերջո, **կոնցեպտը** իմաստաբանական կազմավորում է, որ հատկանշվում է լեզվամշակութային յուրահատկություններով և այս կամ այն առումով բնութագրում է որոշակի մշակույթի կրողների: Կոնցեպտը, արտացոլելով էթնիկական հանրության աշխարհայացքը, ձևակերպում է էթնիկական հանրության լեզվական քարտեզը: Կոնցեպտը շրջապատված է զգացական, արտահայտչական և գնահատողական դաշտերով¹¹:

Որո՞նք են կոնցեպտի բաղադրիչ տարրերը: Մասնագիտական գրականության մեջ տրվում է դրա բացատրությունը. կոնցեպտը բաղադրված է՝ ա) մարդու զգայական անմիջական փորձից, բ) մարդու առարկայական գործունեությունից, գ) մարդու գիտակցության մեջ առկա այլ կոնցեպտների մտային գործողություններից, դ) լեզվական գիտելիքներից (կոնցեպտը կարող է մարդուն իրազեկ դարձնել և բացատրել որևէ բան՝ լեզվական ձևի մեջ), ե) լեզվական միավորների գիտակցական ըմբռնումից և այլն (Չ. Դ. Պոպովա, Ի. Ա. Ստերնին)¹²:

Գիտության մեջ կոնցեպտները դասակարգվում են տարբեր հիմունքներով. առանձնացնում են առաջնային (ճանաչողական) և անհատական (գեղարվեստական) տեսակները: Ընդունված է ասել՝ ճանաչողական կոնցեպտներն արտահայտում են հանրային նշանակություններ, գեղարվեստական կոնցեպտները՝ անհատական: Առաջնային կամ ճանաչողական կոնցեպտներն ընդգրկում են խմբային, ընդհանուր խմբային, ազգային, համամարդկային, անհատական և այլ բնագավառներ:

Այս համակարգում առանձնակի նշանակություն է ձեռք բերում անհատական-գեղարվեստական կոնցեպտը: Որևէ գրողի կամ բանաստեղծի գեղարվեստական մտածողության կամ աշխարհայացքի էությունը բացահայտելու համար նախ անհրաժեշտ է բացահայտել նրա գեղարվեստական կոնցեպտի բնագավառը (կոնցեպտոսֆերան): Այդ առումով, ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, ազգային մշակույթի (արվեստի, գրականության, պատմության, ազգագրության և այլնի) խոշոր դեմքերի կոնցեպտոսֆերաները միավորելով՝ կարելի է կազմել տվյալ ազգային մշակույթի համարժեք բառարանը:

Մասնագիտական գրականության մեջ մինչ այժմ կոնցեպտները ուսումնասիրվել են առարկայական աշխարհի և նրա հատկանիշների իմաստավորման տեսանկյունից. այլ կերպ ասած, կոնցեպտներ են համարվել բառիմաստ արտահայտող հասկացությունների խմբերը: Մենք կարծում ենք, որ կոնցեպտները կարելի է ուսումնասիրել նաև լեզվական իմաստների առումով, որոնք արտահայտում են վերացական ըմբռնումներ: Այդ կարգի կոնցեպտները կարելի է անվանել **լեզվական (լեզվաբանական) կոնցեպտներ**, որոնք ձևավորում են քերականական իմաստների ընդհանրական խմբեր, քերականական կարգեր, որոնց բաղադրիչներ են դառնում նրանց կարգային անդամները՝ համապատասխան քերականական իմաստներով:

Օրինակ, լեզվաբանական կոնցեպտ կարելի է համարել խոսքիմասային կոնցեպտը՝ համապատասխան կարգային անդամներով (խոսքի մասերով), գոյականի կոնցեպտը՝ հոլովման, թվի և առկայացման կարգերի քերականական իմաստներով, այդպես նաև՝ բայի կոնցեպտը՝ նրան հատուկ կարգային անդամների քերականական իմաստներով: Միևնույն լեզվական կոնցեպտի ներսում կարելի է առանձնացնել ենթակոնցեպտներ, որոնք հարաբերակից քերականական իմաստների շարքեր կամ հարացույցներ են կազմում, ինչպես, օրինակ, գոյականի ներսում՝ հոլովման կոնցեպտը, բայի ներսում՝ եղանակի կոնցեպտը, ժամանակի կոնցեպտը, սեռի կոնցեպտը և այլ ճանաչողական կարգեր:

Լեզվաբանական կոնցեպտների առանձնացումը մեր կողմից կատարվում է առաջին անգամ: Այս կարգի մոտեցման դեպքում ընդլայնվում կամ ամբողջանում է կոնցեպտի բովանդակության ըմբռնումը, որ բացահայտում է կոնցեպտի բովանդակության և արտահայտության պլանների փոխհարաբերության նոր կողմեր:

¹¹ В. А. Маслова, *Современные направления в лингвистике*, էջ 110.

¹² Նույն տեղում, էջ 111:

PROBLEMS ON COGNITIVE LINGUISTICS SUMMARY

The theory of the concept is a priority research subject in cognitive linguistics, which appears to be relatively stable cognitive model and is connected with the outside world more directly than the meaning of the object. The concept, reflecting the ideological features of the ethnic community, also forms its linguistic map.

It is possible to enter the field of concept first of all through language, i.e. through words, word combinations, sentences, etc.

We suggest to examine the concepts from the perspective of linguistic meanings as well, which express abstract conceptions. These kinds of concepts can be called **linguistic concepts**, which form holistic groups and grammatical categories of grammatical meanings, the components of which are formed by their members of category with their corresponding grammatical meanings.

Հասմիկ Խաչատրյան (Հայաստան)

«ՃԱՆԱՊԱՐՀ» ՀԱՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ-ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Հայերենում լայնորեն ներկայացված են շարժման և տեղափոխության տարբեր տեսակների նշանակումներ, և ժամանակի ընթացքում վաղնջահայերենի և հին հայերենի միջև զգալի տարբերություններ են ի հայտ եկել բառերի գործածությունների և իմաստային ծավալների հարցում:

Վաղնջահայերն ունեցել են ճանապարհի, ճանապարհաշինության և անիվավոր փոխադրամիջոցների հետ կապված զգալի թվով բառանվանումներ, որոնցից սույն հոդվածի շրջանակներում մեր քննության առարկան «ճանապարհ» հասկացության բարբառային դրսևորումներն են:

«Ճանապարհ» հասկացությունը հայերենի բարբառներում ներկայացված է բնիկ հայերեն՝ հնդեվրոպական ծագման բառանուններով, փոխառյալ բառերով, անհայտ ծագման բառերով, ինչպես նաև իմաստափոխված բառանուններով:

Այս հասկացության **ճանապարհ** բառանունը վաղնջահայերենում չի եղել: Հր. Աճառյանը բառը համարում է իրանական փոխառություն: Բառը վկայված է դեռևս 5-րդ դարում Սուրբ գրքում: Իրան. *čarana-parg ձևից արագաբանությամբ (իբր. *ճարանապարհ) կազմված է čarana-«երթալ» + parg «անցք» բառերից¹:

Դեռևս միջին հայերենում բառը գործածվել է **ճանպարհ** բառաձևով: Հայերենի բարբառներում «ճանապարհ» հասկացության **ճանապարհ** բառանունը տարածական մեծ ընդգրկում ունի. այն գրեթե համահայերենյան կիրառություն ունի և գործածվում է թե՛ արևելյան, թե՛ արևմտյան բարբառախմբերի խոսվածքներում:

Ճանապարհ բառանունը հայերենի բարբառներում հանդես է գալիս բարբառային հնչյունական հետաքրքիր և բազմապիսի տարբերակներով:

1. Վերոհիշյալ հասկացության **ճանապարհ** բառանունը բարբառների մի ստվար հատվածում՝ Արարատյան (Աշտարակ ք., Լոռի, Իգդիր, Պարսկահայք, Նախիջևան), Փոքր Ասիայի (Եվդոկիա, Երզնկա, Խոտորջուր, Ջավախք) բարբառախմբերի խոսվածքներում, վկայված է **ճամփա**, **ճանպա** բառաձևերով, Բայազետի Կարմիր գյուղում արձանագրված է շրթնային *ա*-ով տարբերակը՝ **ճամփա**:

Ինչպես տեսնում ենք, բարբառային այս տարբերակներում տեղի է ունեցել հնչյունների բարդացում: Ըստ Հ. Մուրադյանի՝ այստեղ նախ ընկել է միջնավանկի *ա* ձայնավորը, իսկ *փ*-ն *պ* և *հ* հնչյունների միասնական, մի հնչյունի տևողությամբ արտաբերվելու հետևանք է: Նաև *ռ* հնչյունի անկում է տեղի ունեցել, ինչպես նաև *ն* ձևակազմի ձայնորդը որոշ բարբառներում դարձել է *մ*²:

2. Բառակազմի խուլերի ձայնեղացմամբ՝ **ջամպա**, մասամբ բառամիջի շնչեղ խուլերի խլացմամբ՝ **ջամփա**, և որոշ դեպքերում նաև *ա>ը*՝ **ջամպը**, *ա>օ*՝ **ջամփա**, հնչյունական տարբերակներն են վկայված Փոքր Ասիայի, Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբերի, Կիլիկիայի միջբարբառախմբի խոսվածքներում (Չմշկածագում, Խարբերդում, Սասունում) առկա են **ջամփը**, **ջամպը**, Սվեդիայում, Խտրբեկում՝ **ջամպրկ**, **ջամպրգ**, Սեբաստիայում՝ **ջամբա**, Եդեսիայում՝ **ջամփագ**, Մալաթիայում՝ **ջամփա**, Խարբերդի Բազմաշեն գ.-ում վկայված է առաջնալեզվային *ան*-ով տարբերակը՝ **ջանփան**, Չեյ-

¹ Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Ե., 1977, էջ 182-183:

² Հ.Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, Ե., 1982, էջ 335:

թունում՝ *ջամփոնք*, *ջամփո*, Հաջընում՝ *ջամպ/փ/օգք*: Համշենի բարբառի խոսվածքներում վկայված են ճանապարհի հասկացության *ջոմփա*, *ջոմպա* բարբառային զուգաբանությունները:

3. Հայերենի բարբառների արևելյան խմբակցության Խոյ-Մարադայի (Նախիջևանի Ազա, Միսիանի Ուզ, Արտաշատի Մասիս, Խոյի Մեյրավար գ.-երում), ինչպես նաև հարավկենտրոնական բարբառախմբի խոսվածքներում (Մուշի Դուզնուզ գ., Արծկե, Վան, Մոկս, Շատախ և այլն) «ճանապարհ» հասկացությունը վկայված է *ճամբախ* կամ *ճամբախ* բարբառային տարբերակներով: Վանի և Խոյի բարբառներին բնորոշ հնչյունափոխություն է *h>խ* անցումը, որը տեղի է ունենում թե՛ բառասկզբում, թե՛ բառամիջում, թե՛ բառավերջում: Ինչպես նշում է Հ. Աճառյանը «Բնութիւն Վանի բարբառի» աշխատության մեջ, «րի-ով վերջացած բառերը երկու ձևի փոփոխություն են ներկայացնում. ջնջված է աշխարհ>աշխար և խոնարի>խոնար բառերի վերջում, իսկ ճանապարհ>ճամբախ և շնորհք>շնոխք. հիշյալ բառերի մեջ ր-ն աղված է, և հ-ն փոխվել է խ-ի»³: Ըստ Մ. Մուրադյանի՝ Շատախի բարբառում ռնգայիններին հաջորդելիս *պ*-ն ձայնեղանում է և դառնում *բ*, օրինակ՝ *ճամբախ*⁴:

Վանի, Մոկսի որոշ խոսվածքներում ճանապարհի հասկացությունը փաստված է նաև առաջնալեզվային *ան* հնչյունով, ինչպես, օրինակ, Վանի Խոշաբի շրջ-ի Հուռթուկ գ., Մոկսի Կճավ գ. (*ճանմ-բանխ*), Շատախում նաև՝ շրթնային *ա*-ով տարբերակը՝ *ճանմբանխ*:

4. Բարբառների արևելյան խմբակցության ծայր հյուսիսարևելյան միջբարբառախմբի Դարաբադի բարբառի Գորիսի մի շարք խոսվածքներում և արևելյան բարբառախմբի Ագուլիսի, Յոնայի խոսվածքներում «ճանապարհ» հասկացության բառանուններ են դիտարկվել ճանապարհի բառանվան *ճրնհապար* (Օրդուբադի Յոնա գ.), *ճրնհապա* (Գորիս, Նախիջևանի Փառակա), *ճրնհապա* (Գորիսի Վերինշեն, Բռուն), *ճրնհապա* (Գորիսի Վաղատուր) հնչյունական զուգաբանությունները, որոնք, մեր կարծիքով, ավելի ուշ շրջանի բառաձևեր են և հավանաբար պայմանավորված են գրական լեզվի ազդեցությամբ: Ասվածի վկայությունն են մույն խոսվածքներում հանդիպող *հրդէ ինցիլ (ինիլ)* (ճանապարհ ընկնել), *հրդէ տինիլ* (ճանապարհի դնել) դարձվածքները, Գորիսի Խնածախ գ.-ում զուգահեռաբար գործածվող *հրդիլ// հրդէց//ճրնհապա*, Գորիսի Տաթևում և Սևարանցում՝ *ճրնհապա/հրդրէ* տարբերակները, իսկ Դաշքեսանի Բանանց գ. թեև առկա է *ճամպա* բառանունը, սակայն *ճանապարհվել* բայական իմաստը արտահայտվում է *հրդիլ իլիլ* դարձվածքով: Հիշատակության է արժանի *ճամփա* բառով ձևավորված *վօտաց ճամփա* բառանունը, որը բարբառներում գործածվում է «զուգարան» նշանակությամբ (Վան, Մուշ և այլն):

Հայերենի բարբառներում «ճանապարհ» հասկացության բառանուն է դիտարկվել *ուղի* բառանունը: Վաղնջահայերենում լայնորեն գործածվել է *ուղի* բառի սկզբնաձևը:

Հ. Աճառյանը բառը համարում է բնիկ հայկական բառ. հնդեվրոպական մախալեզվի *ul* արմատից, հին ալ. *ulica*, ռուս. *улица*: «*Ուղի* «ճամբայ, ճանապարհ» Սուրբ գիրք. Ագաթ» : Ըստ լեզվաբանի՝ հետին հեղինակների մոտ առկա է *ուղ* «անցք, ճանապարհ» ձևը, որը նրան խորհելու տեղիք է տալիս. արդյոք *ուղի* բառի հնագույն տարբերակը չէ՞, որից էլ *ուղարկել*, *ուղանցական* բառերն ունենք: Հ. Աճառյանը վկայակոչում է նաև Պեդերսոնին, որը հայերեն *ուղի* բառից է բխեցնում օսմ. *yol*-ը, որից և թուրքերեն *yollamag* «ուղարկել»⁵:

Ուղի բառին անդրադարձել է նաև Գր. Դափանցյանը: Հանգամանորեն ներկայացնելով հայ-ուրարտական լեզվական առնչությունները՝ գիտնականը «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ բերում է ուրարտերենի և հայերենի համար ընդհանուր 20 բառ, որոնցում ընդգրկված է նաև *ուղի* բառը: «սլ-adi «ուղևորվեցի»: Այս չեզոք սեռի սև ձևի կողքին կա և սև «ուղարկել, գնացուցանել ձևը»: Ըստ Դափանցյանի՝ այս արմատը առկա է հայոց *ուղի*- «направление, путь», *ուղիղ* (որից՝ *ուղղորդ*) «правильный» և նման բառերի մեջ⁶:

Ուրարտացիների դարավոր համակցությունը հայերի հետ, ապա նրանց ծուլվելը պետք է հիմք տար մախ փոխառությունների, ապա ենթաշերտային ազդեցության համար: Գ. Ջահուկյանը գտնում է, որ կան հայ-ուրարտական մի շարք զուգադիպումներ, որոնց դեպքում դժվար է որոշակի ընտրություն կատարել հայերեն բառերի բնիկ, թե փոխառյալ լինելու հնարավոր ենթադրությունների միջև: Ըստ նրա՝ *ուղի* բառը մի կողմից համեմատվում է հուն. սրինգ, խողովակ *αυλός*, ռուս. *улица* փողոց, մյուս կողմից՝ ուրարտական սլ(a) «զնալ» սլ(u) - «տանել», թերևս նաև սևսի - «առաջնորդել» բառերի հետ: Գ. Ջահուկյանը նմանությունը պատահական է համարում՝ մասնավորապես նկատի ունենալով հայերենի սկզբնական ոչ բայական (անվանողական) արժեքը և նշում, որ *ուղարկել* ու *յղել* բայերն ակնհայտորեն

³ Հ.Աճառյան, *Բնութիւն Վանի բարբառի*, Ե., 1953, էջ 67-68:

⁴ Մ.Մուրադյան, *Շատախի բարբառը*, Ե., 1962, էջ 55:

⁵ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 3, էջ 595-596:

⁶ Գր.Դափանցյան, *Հայոց լեզվի պատմություն*, Ե., 1961, էջ 136-137:

երկրորդական բնույթի են: Իհարկե, կարելի է ենթադրել, որ իմաստային մերձեցումով տեղի է ունեցել հայերեն *ուղի*-ի բաղարկում ուրարտերեն բառերի հետ⁷:

Ուղի բառը՝ որպես «ճանապարհ» հասկացության բառանուն, առկա է հայերենի բարբառներում: Այն կղզիացած գործածվում է Ղարաբաղ-Շամախի միջբարբառախմբի խոսվածքներում հնչյունական որոշակի տարբերակներով: Այսպես՝ *հրդի* (Կարճևան, Շամախիի Սաղյան, Ասկերանի շրջ. Սեհտիշեն), ավելի հաճախադեպ գործածվում է *հրդե* (Կապանի Վերին և Ներքին Խոտանան, Մարտակերտի Ղազանչի, Հաթերք, Առաջաձոր, Ղարադաղի Խանազահ գ.), Գորիսի Կորնիձոր գ.՝ *հրդդե*: *Հրդեգ* հնչյունական զուգաբանությունն է վկայված Խանկարի Գետաշեն, Արցախի Խանաբաղ, Շահումյանի Բուզլուխ գ.-երում, *հրդեգե*-ն՝ Հաղորթի Խժարերդ գ.: Հարկ է նշել, որ *հրդե*-ին զուգահեռ Արցախի որոշ խոսվածքներում (Նոր Շեն) առկա է նաև *հրդեցկ* (*հրդեսկ*) բառաձևը, որը հնարավոր է՝ ավելի հին բարբառային բառաձև լինի: Հ. Մուրադյանը «Կարճևանի բարբառ» աշխատությունում արձանագրել է նաև *ջրհրդի* բառաձևը՝ որպես ջրի ճանապարհ⁸:

Աղագ: Գ. Ջահուկյանը հնագույն հայերենի բարբառային տարբերակները ներկայացնելիս *ուղի* բառի հոմանիշ է դիտարկել *աղագ* բառանունը (ուղի-աղագ-ճանապարհ-ճապաղ (հմմտ. արահետ): Հ. Աճառյանը *աղագ*՝ ճանապարհ իմաստով մեկ օրինակ է բերում՝ վկայակոչելով Ոսկերեքանին «Արատիցի որմ, խրամատիցի և ամենեցուն աղագ լինի (այգու պատի համար է ասում, որ քանդվելով՝ ամենքի ազատ անցողաբձի ճանապարհ է դառնում), գործածված են նաև հղովված ձևերը՝ գործիականը՝ *աղագալ* «պատճառով», հայցական կամ ներգոյական՝ *յաղագս* «համար, վասն»: Դիտարկված է նաև *աղագ* բառի մեկ ուրիշ տարբերակ՝ *եղագ* «ճամբայ»: Ըստ Աճառյանի՝ բոլոր ձևերի նախնական նշանակությունը ճանապարհն է⁹:

Գ. Ջահուկյանը, բառի ծագումն անհայտ համարելով, գտնում է, որ այն հազիվ թե կապ ունենա ակկադ. *alāku(m)*, *alaktu*, «ընթացք, ճանապարհ, ուղի» բառերի հետ¹⁰:

Հայ բարբառների մեծ մասում *աղագ* բառը հանդես է գալիս *աղաք* բարբառային տարբերակով և ունի առջև, առաջ իմաստը: Օրինակ՝ Աղագս մի՛ կանգնիր, Նրա աղագիցը փախչում է: Սակայն ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերում եզակի մնուշներ ունենք, որտեղ *աղագ* բառանունը անաղարտորեն պահպանել է իր նախնական ճանապարհ իմաստը: Օրինակ՝ Հավարիկում՝ *հրդդե*, Կրգենում՝ *հրդեք* (*Հրդդեքըն ման գյօր*՝ ման էր գալիս), Կարճևանում՝ *հրդաք*, (*հրդաքնի*՝ ճանապարհի): Ըստ Հայոց լեզվի բարբառային բառարանի՝ *աղագ* բառանունը առկա է Արարատյան, Թիֆլիսի, Ղարաբաղի, Կրգենի բարբառներում՝ առաջ, առջև, նախ, նախապես նշանակություններով: Իսկ Մեղրու բարբառի համար արձանագրված է *աղաք* բառի ճանապարհ իմաստը: Բարբառներում ճանապարհը կտրել իմաստով առկա են նաև *աղաք*-ով դարձվածային կառույցներ, ինչպես՝ *աղաքը կտրել*, *աղաքը առնել*¹¹:

Աղագ բառանունը Տավուշի մարզի որոշ գյուղերի և Հաղպատի խոսվածքներում այսօր էլ գործածական է *կրքճաղաք* ձևով, այսինքն՝ *կարճ աղաք(ք)*՝ որպես նեղ և կարճ ճանապարհ, արահետ: ՀԼԲԲ-ում ևս արձանագրված է *կարճաղաք* բառաձևը: «*Կարճաղաք*-Արարատյան, *Կարճաղագ*, Ղազախ/ կարճ կտրող, կարճ տանող, կարճակտրուկ (ճանապարհի մասին): *Կարճաղագ ճամփով* գնանք, շուտ կհասնենք»¹²: Բառարանում առկա է նաև դարձվածային հետևյալ արտահայտությունը՝ *կարճաղաք անել*, այսինքն՝ *կարճ ճանապարհով* գնալ:

Հարկ ենք համարում հիշատակել նաև Սասունի բարբառում վկայված *աղագ* բառանունը, որը, սակայն, խոսվածքում ծառի ճյուղերից գործված դուռ կամ ցանկապատ նշանակությամբ է փաստված¹³:

Հայերենի բարբառներում *ճամփա* բառաձևի հետ գործածվում են նաև որոշ փոխառյալ բառանուններ.

1. Ռոդոսքոյում և Ջավախքի Օլավերդ գ.-ում գործածվել է *յօլ*-ը (Ռոդոսքոյում *յօլ չի քիդեր* արտահայտությունը նշանակում է ճամփա չգիտի, նաև՝ պատշաճությունը չի հարգում), իսկ որպես արահետ՝ *յայան յօլի ճամփա* բառակապակցությամբ է վկայված Ախալքալաքի Օլավերդ գ.-ում:

Ինչպես գիտենք, հայերեն խոսակցական լեզվում հաճախադեպ կիրառություն ունի *յօլա գնալ* դարձվածքը, որի հիմքում ընկած է թուրքերեն *յօլ* և հայերեն *գնալ* բառերը, որի իմաստն է հարմարվել, համակերպվել, նաև մի կերպ գլուխը պահել:

2. *յօխը* բառանունն է վկայված Նախիջևանի Կյաղ գ.-ի խոսվածքում, որը, կարծում ենք, դարձյալ փոխառություն է թուրքերենից:

⁷ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 432-433:

⁸ Հ. Մուրադյան, Կարճևանի բարբառը, Ե., 1960, էջ 228:

⁹ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971, էջ 117:

¹⁰ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 33:

¹¹ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Ե., 2001, էջ 37:

¹² Նույն տեղում, հ. Գ, Ե., 2004, էջ 63:

¹³ Վ. Պետոյան, Սասունի բարբառը, Ե., 1954, էջ 101:

3. Եղեգնաձորի Ենգիջա գ.-ում (խոյեցիներ) փաստված են **ճամբախ/յոլաղ** և **ուղոր** բառաձևերը, ինչպես նաև փոխաբերացմամբ ճանապարհ նշանակությամբ գործածվող **իզ** բառանունը, որը տաճկերենից փոխառյալ բառ է, և նրա նախնական իմաստն է հետք:

Իմաստային ճյուղավորումով **ճառ** բառանունը, բացի հնար, ելք իմաստից, բարբառներում գործածվում է նաև որպես ճանապարհ: Գավառի Սարուխան գ.-ում **դռան ճնր** նշանակում է դռան դեմի ճանապարհ: **ճառ** «հնար» առաջնային իմաստով ավանդել է դեռևս Խորենացին հինգերորդ դարում. «Չի այսպես իմ գելս իրացն հնարեր յարդարել, զի ապրելոյ ճար լիցի Տիգրանուհեայ»: Լ. Հովհաննիսյանը բառը համարում է իրանական փոխառություն¹⁴:

Ջաղղա: Մուշի, Վանի տարածաշրջանի մի քանի խոսվածքներում «ճանապարհ» հասկացության դիմաց վկայված է **ջաղղա** բառանունը, որի ծագումը մեզ հայտնի չէ: Ընդ որում որոշ խոսվածքներում բարբառը գրանցողները արձանագրել են, որ, օրինակ, Վան ք. և Վանի Թիմարի շրջ.-ի Մարմետ և Պողանց գ.-երում ճանապարհը **ճանքսնի** է, իսկ **ջանդսն** մայրուղի (Վեր **ջանդին** կայնուկ ին): Ընչեղ ձայնեղ **ջ**-ով՝ **ջաղղա** բառաձևն առկա է Մուշի Բուլանուխի Շերվանշեխ, Ալաշկերտի Ուշքիլիսա գ.-երի խոսվածքներում: Բացառված չէ, որ մեր բարբառներում գործածված **ջաղղա**-ն առնչություն ունի պարսկերեն **ջաղա** բառի հետ, որ հենց մայրուղի է նշանակում:

Այսպիսով՝ «ճանապարհ» հասկացության բառանվանումների քննությունից ակնհայտ է դառնում, որ հայ բարբառներում պահպանվել է հնդեվրոպական ծագման բնիկ հայերեն **ուղի** բառանունը, թեև բարբառների գերիշխող հատվածում կիրառվում է իրանական **ճանապարհ** բառանունը՝ բազմաշերտ հնչյունական տարբերակներով: Ուշագրավ է հայերենի բարբառներում **աղազ** բառանվան՝ որպես «ճանապարհ» հասկացության նշանակելի վկայությունը, ինչպես նաև նրանից կազմված **կղր-ճաղաք** բարբառային յուրահատուկ դրսևորումը: Իրանական **ճառ** բառանունը փոխաբերացմամբ գործածվում է որպես ճանապարհ: Իսկ բարբառների մի որոշակի հատվածում առկա են փոխառյալ **յոլ**, **շոշ**, **յոլաղ**, **ջաղղա** փոխառյալ բառերը:

Hasmik Khachatryan (Armenia)

FUNCTIONAL-GENEOLOGICAL STUDY OF THE WORDS REPRESENTING THE CONCEPT OF “ROAD” IN THE DIALECTS OF THE ARMENIAN LANGUAGE

The subject matter of the study conducted within the framework of this article is the dialectal manifestations of the concept of “Road”. In the dialects of the Armenian language, the concept of “Road” is represented with native Armenian, i.e. Indo-European words ([ughil/ուղի], [araget] /աբահետ, [katsan]/կաճան), borrowed words ([chanaparh]/ճանապարհ, [shavigh]/շավիղ, [jaghda]/ջաղղա, [yol]/յոլ, [yolagh]/յոլաղ), words of unknown origin ([aghag]/աղազ), as well as words that have undergone a semantic change ([char]/ճառ).

The article will represent the word-formative and phonetic versions of the abovementioned words observed in the dialects of the Armenian language, the idioms formed with them, as well as their territorial characteristics.

Վիկտոր Կատվալյան (Հայաստան)

ՏԱՐԲԵՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐԵՎ ԲԱՐԲԱՈՒ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՏԿԱՆԻՇ

Ինչպես մարդկային լեզուն ընդհանրապես, այնպես էլ յուրաքանչյուր կոնկրետ լեզու գործառնում է որպես բազմազանությունների, տարբերակային ձևերի մի ամբողջություն¹: Տարբերակայնությունը լեզվի կարևորագույն հատկանիշներից է, և իրականության մեջ լեզվական ցանկացած համակարգ ու լեզվի ցանկացած մակարդակի միավորներ հանդես են գալիս տարբերակային ձևերով²: Լեզվական միավորների տարբերակային դրսևորումները դիտարկելի են ինչպես համակարգի գործառնում:

¹⁴ Լ.Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 194:

¹ Տե՛ս Է.Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1987, էջ 90-92:

² Խոսքը ոչ թե լեզվի համակարգային մույնարժեք ձևերի մասին է, որոնք գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերությունների մեջ և իրար փոխարինել չեն կարող, այլ մույն իրողության ձևային գույքահեղ դրսևորումների մասին է, որոնք ազատ իրար փոխարինում են համակարգի ներսում կամ համարժեք են համակարգի տարբեր դրսևորումներում:

թյան ներսում, լեզվական նույն հանրույթի լեզվագործածության մեջ՝ առանց խոսողների շերտավորման, այնպես էլ նույն համակարգի տարբերակային դրսևորումները (հասարակական և տարածական) համեմատելիս: Տարբերակայնությունը, այսպիսով, ունենում է ներհամակարգային և արտահամակարգային արտահայտություններ: Ներհամակարգային տարբերակայնությունը նույն լեզվական արժեքով և իմաստով մեկից ավելի համագործակցող ձևերի գոյապահպան գործածությունն է նույն լեզվակիրների խոսքում, իսկ արտահամակարգային տարբերակայնությունը լեզվի տարածական ու հասարակական դրսևորումներում նույն լեզվական արժեքով և իմաստով տարբեր ձևերի գործածությունն է տարբեր լեզվակիրների խոսքում³: Այսպիսով, եթե առաջին դեպքում լեզվական տարբերակայնությունը դրսևորվում է նույն լեզվակիրների խոսքում, ապա երկրորդ դեպքում տարբերակայնությունը դրսևորվում է տարբեր լեզվակիրների խոսքում: Տարբերակայնությունը արտահայտվում է և՛ գրական լեզվում (թե՛ գրավոր, թե՛ բանավոր), և՛ ժողովրդախոսակցական լեզվում, սակայն տարբեր ծավալներով: Գրական լեզուն, հասկանալի է, ձգտում է ձևերի ըստ հնարավորին միօրինականացման, ուստի այստեղ տարբերակայնության ծավալմանը խոչընդոտում է նորմավորման գործընթացը: Ժողովրդախոսակցական լեզվում տարբերակայնությունը դրսևորման ավելի լայն հնարավորություններ ունի, սակայն ընդհանուրի կողմից հասկանալի և ընդունելի լինելու մղումը այնուամենայնիվ որոշակի սահմանափակումների պատճառ է դառնում: Երևույթը առավել ազատ դրսևորվելու հնարավորություններ ունի բարբառային խոսքում, որտեղ լեզվական ցանկացած ձև կարող է գոյատևել, եթե հասկանալի է տվյալ լեզվական հանրությանը և այս կամ այն չափով գործածական է լեզվական այդ միջավայրում: Այլ կերպ ասած՝ բարբառում, ինչպես կենդանի բնության մեջ, իրողությունները զանազանությունների ավելի մեծ հնարավորություններ ունեն, քան լեզվի այլ գոյավիճակներում: Տարբերակայնությունը պայմանավորված է լեզվի էությամբ, խոսքային յուրաքանչյուր դրսևորման դեպքում անհատական դրոշմ կրելու յուրահատկությամբ: Միաժամանակ, լեզվի կենդանի գործածության ընթացքում լեզվակիրների ֆիզիկական, մտավոր, հոգևոր, սեռատարիքային ու այլ հատկանիշների հետ տարբերակվածության ու բազմաձևությունների առաջացմանը նպաստում են նաև լեզվական հանրության տարածական որոշակի անմիասնականությունը, լեզվի զարգացման տարաբնույթ գործընթացները, ժողովրդի կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, ներքին ու արտաքին լեզվական ազդեցությունները և այլն: Այսպիսով, որևէ լեզու, լինելով միասնական ու կայուն գործառույթի համակարգ, միաժամանակ իր դրսևորումներում տարբերակային միավորների ու հատկանիշների մի ամբողջություն է ներկայացնում:

Որևէ տարածքի լեզվական հանրության խոսքում տվյալ լեզվի մեջ եղած տարբերակային միավորների ու հատկանիշների ոչ գիտակցական, պատմականորեն ձևավորված յուրօրինակ համատեղումը առաջ է բերում համակարգի մասնավոր ու ինքնատիպ դրսևորում՝ բարբառ:

Հայ լեզվաբանությունը անդրադարձել է բարբառային տարբերակվածությանը նպաստող միայն արտալեզվական հանգամանքներին (ցեղերի տրոհում ու միավորում, ֆեոդալական մասնատվածություն, գրագիտության պակաս և այլն)⁴, և անտեսվել է լեզվի բուն էությունից բխող տարբերակայնությունը՝ իբրև բարբառի առաջացման գլխավոր պայման: Պետք է նկատի ունենալ, որ տարբերակային են ոչ միայն լեզվական միավորները, այլ նաև հատկանիշները, և բարբառը ընդհանուր լեզվի մի դրսևորումն է դառնում նախ և առաջ նրանով, որ ունի այդ լեզվում գործառույթի տարբերակային հատկանիշների միայն իրեն հատուկ փունջ, երբեմն էլ՝ միայն իրեն հատուկ հատկանիշներ: Հատկանիշների յուրաքանչյուր նման փունջ, այսպիսով, բարբառային առանձին միավոր է, ընդհանուր լեզվի տարբերակային դրսևորում: Բարբառում հատկանիշները գուցե ավելի են լեզվակիրների կամքից անկախ, ընդ որում՝ բարբառի ներսում յուրաքանչյուր իրողություն կամ հատկանիշ կարող է իր հերթին ունենալ տարբերակային դրսևորումներ: Սակայն այդ համընդհանուր տարբերակայնությունը չի նշանակում, թե բարբառներում քառս է, և ամեն կարգի շեղում ու տարբերակ կարող է գործառնել: Յուրաքանչյուր բարբառային միավորի շրջանակներում հստակ գիտակցվում են թույլատրելի տարբերակները, որոնք հասկանալի ու գործածական են լեզվական հանրության անդամների կողմից: Այլ կերպ ասած՝ բարբառային խոսքում տարբերակայնությունը չի խոչընդոտվում, բայց յուրաքանչյուր կոնկրետ պահի գործառում են հանրության կողմից ընդունված և հասկանալի տարբերակները: Ընդ որում՝ տարբերակային ձևերը անհատական բնույթ չունեն և գործածական են շատերի կողմից, բայց, մյուս կողմից էլ, գուգաձևությունների գործածությունը պարտադիր չէ բոլոր լեզվակիրների համար:

Տարբերակայնությունը դրսևորվում է լեզվի թե՛ հնչյունական, թե՛ բառապաշարային և թե՛ քերականական մակարդակներում: Այստեղ մենք Բայազետի բարբառի ընձեռած նյութի միջոցով կանոնադառնա՞նք հնչյունական գուգաձևություններին⁵:

³ Երկու դեպքում էլ նկատի չունենք ոճական գուգաձևությունները:

⁴ **Ա.Ղարիբյան**, *Հայ բարբառագիտություն*, Երևան, 1953, էջ 64-65: **Ա.Գրիգորյան**, *Հայ բարբառագիտության դասընթաց*, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1957, էջ 49-57:

⁵ Հասկանալի է, որ հնչյունները ինքնին իմաստակիր միավորներ չեն, ուստի հնչյունական տարբերակայնությունը նպատակահարմար է դիտարկել բառային մակարդակում, երբ բառային նույն միավորը նույն իմաստով դրսևորվում է

Հնչյունական տարբերակայնություն դիտարկվում է, երբ զուգահեռ գործառնում են՝

1) նույն բառային միավորի հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերը, ընդ որում՝ հնչյունափոխված եզրը կարող է ներկայացնել հնչյունափոխական զանազան իրողություններ, ինչպես՝

ա) **հավելում**. կրճեփ – կրճեփ, դրկել – հրդրկել, լիքը – լինքը, քրսանխինգ – քրսանխինգ, տըսնութ – տըսնութ, ճիրել – ճիրքել, բալա – բալամ և այլն.

բ) **անկում**. խիվընդնալ – խիվըննալ, հառավորնէ – հառավնէ, բըխկըռտալ – բըկըռտալ, հիմանալ – հիմնալ, ժողվել – ժողել և այլն.

գ) **դրափոխություն**. ծըզդալ – ծըզգալ, չըփլաղ – չըփաղ, զըզվալ – զըվզալ, լըվասկ – վըլասկ, սօվրել – սօրվել, փըշրել – փըրշել, կէսարա – կէրսար և այլն.

դ) **առնմանում**. ըսպիշկա – ըշպիշկա, դ'ալար – դ'ալալ, հավել – հեվել, ըզգուշ – ըշկուշ և այլն.

ե) **տարնմանում**. գուլըլել – գուլըրել, լուկա – լուրկա, հէրես – հիրես, հեդեվ – հիդեվ և այլն.

զ) **դիրքային փոփոխություններ**. կօդրել – կօյրել, պըռծընել – պըռզնել, հընցընել – հընսնել, ջըղիզ – ջըղինձ և այլն.

է) **համաքանություն**. շինել – շիքել, ուցուն – ութանասուն, յօթանասուն – յօցուն և այլն.

ը) **կրճատում**. բ'առցէք – բ'առց, հըլը – լը, մէ փշուր – մէշու, մէ փըշուր էլ – մէշօլ, քառսունմէկ – քառմէկ, յեռսունէրկու – յեռկու և այլն.

թ) **մասնավոր փոփոխություններ**. բ'արլուս – բ'ալլուս, մեռլի – մեռնի, սըխալ – սըղալ, գ'ըթալ – գ'ըթէլ, գ'իշեր – գ'ըշեր, գիժ – գէժ, դ'ըրկից – դ'ըրկեց, դ'էմ – դ'եմ, քեռթել – քըռթել և այլն.

ժ) **հաջորդական փոփոխություններ**

ժա) երբ հնչյունական մի փոփոխության հետևանքով բառի մեջ կատարվում է մեկ այլ փոփոխություն ևս. կըմըշտել – կըժմըթել, հընցըցընել – հընսցընել, ջըղիզ – ջըղինձ, պըռծընել – պըռզնել, թըզբէխ – թըդբէս, ըշպիշկա – իպիշկա և այլն.

ժբ) երբ հնչյունական մի փոփոխության ուղղակի հաջորդում է մեկ այլ փոփոխություն. հեդեվանց – հիդեվանց – հիդվանց, հէրեսանց – հիրեսանց – հիրսանց, հէրեսօվ – հիրեսօվ – հիրսօվ, հէրեսատեղ – հիրեսատեղ – հիրսատեղ և այլն.

2) նույն նախնական ձևին հանգող և տարբեր զարգացման ընթացք ներկայացնող տարբերակներ. հարիր – հարուր /հարել/, դրկել – հրդրկել – հօդրկել /յուրի արկանել/, հըղեղ – հըղօղ /ուղեղ/, շընոխկ – շընորք /շնորհք/, տըսնէրկու – տըսվէրկու /տասնուերկու/, յեռթում – հօռթում /երդումն/, գիդալ – գինալ /գիտենալ/ և այլն.

3) փոխառյալ բառի հնչյունափոխական տարբեր ձևեր. *աբէլանցի* – *ապէրացյա*⁶, ջըհուդ – ջըվուդ, մըխստառ – մուխտառ, մուրազ – մուրաղ, տէլէվիզոր – տէլէվիզօր և այլն.

4) գրական լեզվի ազդեցությամբ առաջացած և բուն բարբառային ձևեր. խառնիս – հառսանիք, խառնըսվոր – հառսանքավոր, խավսար – հավասար, շընոխկ – շընորք, օխտ – յօթ, լուս – լույս, խանգիստ – հանգիստ, խանէլուկ – հանէլուկ, խօքի – հօքի և այլն:

Ինչպես տարբեր են հնչյունական տարբերակայնության առաջացման ուղիները, այնպես էլ նույնական չեն այդ իրողությունը պայմանավորող մասնավոր գործոնները: Բերված օրինակներից երևում է, որ հաճախ տարբերակայնություն դրսևորվում է հնչյունափոխական գործընթացների հետևանքով, երբ նախնական ձևը շարունակում է գործառնել հնչյունափոխված ձևին զուգահեռ: Դեպքերի մի մասում լեզվական հանրության մտապատկերում և խոսքում անհնչյունափոխ ձևի պահպանումը կարող է պայմանավորված լինել բառի բաղադրիչ ձևային՝ այլ պայմաններում անհնչյունափոխ գործածությամբ: Օրինակ, **խիվընդնալ - խիվըննալ, հառավորնէ – հառավնէ, սօվրել – սօրվել, մեռլի – մեռնի** և բառի աճմամբ պայմանավորված մնան այլ դեպքերում անհնչյունափոխ ձևերի գործածությունը թերևս պայմանավորված է **խիվանդ, հառավորտ, սօվոր, մեռել** ձևերի գիտակցմամբ և հաճախակի գործածությամբ (նաև՝ այլ կազմություններում, ինչպես՝ խիվընդների, հառավորտ, սօվորուտ, մեռըլների): Ամբողջական և կրճատ ձևերի զուգահեռ գործածությունը թերևս պայմանավորված է առաջինների՝ անհրաժեշտության դեպքում իմաստը ավելի ամբողջական և տարբերակված արտահայտելու ունակությամբ (բ'առցէք – բ'առց, մէ փշուր – մէշու, մէ փըշուր էլ – մէշօլ, քառսունմէկ – քառմէկ, յեռսունէրկու – յեռկու): Խոսքի տեմպը, իմաստը ընդգծելու մղումը, շեշտադրությունը նույնպես կարող են հիմք դառնալ տարբերակների գոյության: Օրինակ, **հընցըցընել – հընսցընել** կարգի դեպքերում դեր է խաղում խոսքի տեմպը. առաջինը բնորոշ է դանդաղ տեմպին, երկրորդը՝ արագ տեմպին: Խոսքային իրադրությունը ևս կարող է պայմանավորել տարբերակներից մեկի ընտրությունը. օրինակ, խոսողի բուն ցանկությունը և Աստծուն ներկայացվող ի սրտե խնդրանքը կարող են պայմանավորել **առաջված** ձևի գործածությունը (**Աստըված**, էնենց *արա*՝ մեզի փօռցանք ռաստ չի գ'ա), մինչդեռ սովորական հի-

հնչյունական այս կամ այն տարբերակներով: Իհարկե, յուրաքանչյուր հնչյուն ունի մաս արտաբերական ու ձայնաբանական տարբերակներ, սակայն դրանց մենք այստեղ չենք անդրադառնում:

⁶ Շեղագիր *ա* տառով ներկայացնում ենք շրթնայնացած *ա* հնչյունը՝ տպագրական անհարմարություններից խուսափելու նպատակով:

շատակման դեպքում գործածական է **աւական** ձևը (**Աւական** յեղ ու յեռուն *աւնա*): Նախնական ձևի գործառնության շարունակումը կարող է պայմանավորված լինել նաև լեզվական հանրության մեջ արտասանական ավանդույթների պահպանմամբ, հնի և նորի միջև իմաստային տարբերության բացակայությամբ: Թերևս այդ պատճառով է, որ հանդիպում են այնպիսի գուգաձևություններ, ինչպիսիք են՝ **հերես – հիրես, հեղեմ – հիղեմ, գ'իշեր – գ'ըշեր, դ'եմ – դ'եմ, քեթեմ – քրթեմ, լիքը – լինքը, գ'ըթալ – գ'ըթեմ** և այլն: Երբեմն տարբերակայնության առկայությունը կարող է պայմանավորված լինել բառի հնչյունական ձևավորման ոչ հստակ պատկերացմամբ և այս կամ այն ձևի գործածությունը առանձնապես չկարևորելով, ինչպես՝ **գուլլել – գուլլրել, լուկա – լուրկա, խալալ – խալար, չըփլաղ – չըփաղ, քըզրելիս – քըզրես** և այլն:

Նույն նախնական ձևին հանգող և տարբեր զարգացման ընթացք ներկայացնող տարբերակների առկայությունը թերևս կարող է պայմանավորված լինել բարբառի շրջանակներում խոսվածքային տարբերակների ընդհանրացմամբ և գուգահեռ գործածությամբ, նաև բարբառային այլ միավորներից կատարված ներթափանցումներով, ինչպես՝ **կաթ – կեր, հարիր – հարուր, գիդալ – գինալ, պաշտ – պաշրաստ, կոդրել – կոյրել, հիրար – հիրուր** և այլն:

Բանավոր փոխառությունների պարագայում տարբերակայնության առաջացմանը նպաստում են օտար բառերի հնչապատկերների տարատեսակ յուրացումներն ու ընկալումները, ինչպես՝ **կաստուրկա – կաստրուկա – կաստրուտկա, ջրհուղ – ջրվուղ, տեղեփզոր – տեղեփզոր, մուրազ – մուրադ, կաշրաս – կաշրաստ** և այլն: Զուգաձևություններ առաջ են գալիս նաև այն դեպքում, երբ նույն բառը բարբառ է մուտք գործում և՛ խոսակցական, և՛ գրական աղբյուրներից (*կապեկ – կօպեկ, շակալաթ – շօկօլաթ, պաճաղոր – պաճիղոր*): Տարբերակայնություն առկա է նաև այն դեպքում, երբ գրական լեզվից բարբառ մուտք գործած ձևը դեռևս լիովին չի փոխարինել համարժեք նախնական, բարբառային ձևին, ինչպես՝ **հառսանիք – խառնիս, շընորք – շընոխկ, յօթ – օխտ, հավատալ – ալատալ, կաշծակ – կեծակ** և այլն:

Շատ դեպքերում տարբերակայնությունը կարող է բացատրվել մեկից ավելի գործոններով: Օրինակ, **պաշկասություն – պաշտություն** գույգի դեպքում առաջին ձևի գործածությունը կարող է պայմանավորված լինել **պաշկաս** արմատի (նաև՝ **պաշկասավոր** և նման այլ կազմությունների) առկայությամբ, խոսքի դանդաղ տեմպով, բառի արմատական իմաստը ընդգծելու մղումով, արմատի վրա երկրորդական շեշտ ընկնելու հանգամանքով և այլն:

Նշենք, որ խոսքը վերաբերում է գուգահեռ ձևերի գոյության հիմունքներին ընդհանրապես, բայց շատ դեպքերում բարբառային խոսքին հատուկ այս կամ այն ձևի ընտրությունը կարող է լինել ակամա, առանց որևէ նախադրյալի, այսինքն՝ եթե բարբառախոս միջավայրում տարբերակային ձևերը շրջանառում են, ապա դրանցից որևէ մեկի օգտագործումը կարող է և տեղի ունենալ առանց որևէ հիմունքի:

Պետք է նկատի ունենալ, որ տարբերակայնություն ներկայացնող ձևերը միշտ չէ, որ հավասարաչափ գործածական են: Հաճախ դրանցից մեկը պակաս գործածական է և, թվում է, դուրս է մղվում նոր սերնդի խոսքից: Օրինակ, հետևյալ տարբերակային ձևերում առաջին եզրը ներկայացնում են նման ձևեր. **խազար – հազար, շընոխկ – շընորք, օխտ – յօթ, կեծակ – կաշծակ, տըսվերկու – տըսներկու, հօռթում – յեռթում** և այլն: Սակայն այդ դուրսմղումը բավականին դանդաղ է ընթանում, որովհետև բարբառային խոսքը գիտակցական կանոնարկման չի ենթարկվում, և տարբերակային այս կամ այն ձևը շարունակում է գործառնել լեզվական հանրության առանձին հատվածներում: Ի դեպ, այսօր Բայազետի բարբառում գործառնում են տարբերակային ձևեր, որոնք դեռևս միջինհայերենյան շրջանից են գալիս՝ Օրինակ, միջին հայերենի **յղրկել – յողրկել** գուգաձևությանը համապատասխանում են բարբառային **հըղրկել – հօղրկել** տարբերակները, այդպես նաև՝ միջ. հյ. **մուրադ/մուրատ/մուրազ** – Բ.բրբ. **մուրադ/ մուրազ**, միջ. հյ. **ջիուտ/ջֆուտ** – Բ.բրբ. **ջըիուղ/ջըվուղ**, միջ. հյ. **սֆաթ/սիֆաթ** – Բ.բրբ. **սըֆաթ/ սիֆաթ**, միջ. հյ. **սովրիլ/սորվել** – Բ.բրբ. **սօվրել/սօրվել**, միջ. հյ. **տափկիլ/տափկնալ** – Բ.բրբ. **տափկել/ տափկընալ** և այլն:

Ինչպես արդեն նշել ենք, բարբառում տարբերակային ձևերի գուգահեռ գործածությունը տարատեսակ դրսևորումներ ունի նաև բառապաշարում և քերականական համակարգում, ներհամակարգային տարբերակայնությունը գուգորդվում է տարածական և հասարակական տարբերակայնությամբ, ուստի բարբառի համար տարբերակայնությունը էական և բնութագրիչ հատկանիշ պետք է համարել:

⁷ Տե՛ս Ռ.Ղազարյան, Հ.Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Երևան, Երևանի համալսարանի հրատ., հ. Ա, 1987, 420 էջ, հ. Բ, 1992, 472 էջ:

VARIABILITY AS AN IMPORTANT FEATURE OF DIALECTS

Each dialect is a variational expression of the whole language system, has its own bunch of variational features functioning in the language, and possesses features that are sometimes peculiar only to the dialect itself. Variability is an essential and descriptive feature of the dialect, and different phonetic, lexical and grammatical variations for one and the same word can be simultaneously used in a dialectical speech. The following report represents the phonetic differentiations in a dialectical speech, studies the phonetic parallels and causes of their existence based on the example of the dialect of Bayazet.

Վազգեն Համբարձումյան (Հայաստան)

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ «ՀԱՅԵՐԵՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԻ» ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայոց լեզվի բառաքնության և ստուգաբանության բնագավառում մեծ վաստակ ունի Հ.Աճառյանը: «Հայերեն արմատական բառարանը» հեղինակի տասնամյակների տքնաջան և տևական աշխատանքի արդյունքն է, որ այսօր ևս մնում է չգերազանցված՝ իր բնույթով, ծավալով և կառուցվածքով: Բառարանն ընդգրկում է հայերենի բառ(արմատ)ի վերաբերյալ մինչև 1920-ական թթ. եղած ստուգաբանական ամբողջ նյութը, հազվագյուտ աղբյուր է հայերենի բառերի բնագրային գործածությունների մասին քաղված ոչ միայն հայ հին և միջին շրջանի գրական հուշարձաններից, այլև հայերենի բարբառներից:

Բառարանը տպագրվել է երեք անգամ, վերջինը՝ համառոտված:

Մինչ այդ բառարանի երևան գալը եղել են ստուգաբանության փորձեր (Գ. Դպիր Պալատացի, 1826, «Նոր հայկազյան բառարանի» հեղինակներ. 1836-1837 և այլք): Պալատացին «Պարսկերեն-հայերեն» բառարանի հավելվածում դնում է 400-ից ավելի (ըստ Աճառյանի մի նշումի՝ 435, իսկ մեկ այլ նշումի՝ «հազարի չափ») հայերեն և պարսկերեն բառերի համեմատական ցանկ (ըստ բանասիրական ճշգրտման՝ ցանկը կազմել է ոչ թե Պալատացին, այլ գրքի հրատարակիչ Տյուգյանը): «Հայկազյան բառարանը» սովորաբար գլխաբառին կից տալիս է նաև իրանական, արաբերեն, եբրայերեն, հունարեն, լատիներեն և այլ համարժեքները, որպիսով հետագա ուսումնասիրողի համար հնարավորություն է ստեղծվում բառաքնական և ստուգաբանական ամեն կարգի համեմատության: Հայերենի պատմահամեմատական ուսումնասիրությամբ, մասնավորապես ստուգաբանությամբ զբաղված հայերենագետները թե՛ նախկինում, և թե՛ հետագայում ըստ ամենայնի նկատի են ունեցել այդ բառարանի մեջ տեղ գտած լեզուների համեմատության տվյալները:

Հայերենի ստուգաբանական բառարան կազմելու առաջին փորձը պատկանում է Պ. դը Լա-գարդին, որն իր «Armenische Studien» (Göttingen, 1877) գրքում քննում է 2413 (բառ)արմատ՝ ի համեմատություն սանսկրիտի, Ավեստայի լեզվի, նոր պարսկերենի, այլև հունարենի, լատիներենի և եվրոպական մի քանի նոր լեզուների: Երկրորդ փորձը Հ. Հյուբշմանին է, որն իր «Armenische Grammatik» (Bd. 1-2, Leipzig, 1895-1897) գրքում տալիս է ոչ միայն բնիկ, այլև փոխառյալ 1971 (բառ)արմատի ստուգաբանությունը: Ընդ սին նա հայերենն առանձնացնում է իբրև հնդեվրոպական լեզուների մի առանձին ճյուղ, սահմանում որոշակի հնչյունական օրենքներ, մշակում սկզբունքներ, ստեղծում ներքին վերականգնման մեթոդիկա և այլն, որոնք հիմք են հանդիսանում հետագա գրեթե բոլոր նմանատիպ ուսումնասիրությունների համար՝ հասնելով մինչև մեր օրերը:

Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» պարունակում է 11,000-ից ավելի (բառ)արմատ, որից միայն 5062-ն է ստուգաբանված (բնիկ, այսինքն՝ հնդեվրոպական ծագման, կամ օտար փոխառություններ), այսինքն՝ ընդհանուր թվի կեսը, մնացածը բնածայնություններ են, հայերենի հիման վրա կազմվածներ, կեղծ կամ շինծու բառեր: Բառարանն ավարտվում է 1920-ական թթ., որից հետո հայերենի համեմատական-տիպաբանական ուսումնասիրության, մասնավորապես ստուգաբանության բնագավառում երևան են գալիս բազմաթիվ աշխատանքներ՝ տարբեր դպրոցների ներկայացուցիչների ջանքերի շնորհիվ, ընդ որում հնդեվրոպական լեզուների համեմատական-ստուգաբանական քննության տարբեր տեսությունների առաջադրմամբ և կիրառմամբ:

Լինելով Հ.Հյուբշմանի և Ա.Մեյերի տեսական հայացքների կրող, հայերենի բառապաշարի ստուգաբանության հարցում ելնելով նրանց սկզբունքներից և մոտեցումներից, խստագույն կիրառելով նրանց մշակած մեթոդիկան՝ Հ. Աճառյանը ստեղծում է մի անմախաղեպ աշխատություն, որն իր ժամանակի համար մեծագույն խիզախում էր: Ի դեպ՝ Գ.Ջահուկյանի «Հայոց լեզվի պատմություն» աշխատության

տության քարտարանի հիման վրա կազմված «Հայերեն ստուգաբանական բառարանը» (Ե., 2010) նույնպիսի աշխատություն է, ներառում է մասն աշխատություններ 1920-1970-ական թթ. կատարվածը, թեև լույս է տեսել հեղինակի ոչ անմիջական հսկման պայմաններում:

Այնուհետև, 1970-ական թթ. հայերենի համեմատական-ստուգաբանական ուսումնասիրությունը նոր փուլ է մտնում, որի սկիզբը 50-ական թթ. են (Pedersen, 1951, Martinet, 1953, Широков, 1972, Гамкрелидзе-Иванов, 1972, Гамкрелидзе, 1984, Hopper, 1973, Kortlandt, 1978 և այլք): Սա այն դեպքում, որ հնդեվրոպական մյուս լեզուների համեմատությամբ հայերենի հնչյունաբանության և ձևաբանության վերաբերյալ Մեյեի կազմած տարբերակիչ հատկանիշներով բնութագիրը մնում է դասական համեմատաբանության մեջ (Meillet, 1903/1936, Solta, 1960 և այլն): Այնինչ նորագույն ուսումնասիրություններից պարզվում է, որ «համեմատական լեզվաբանության ժամանակակից վիճակի լույսի ներքո այն (իմա՞հ այդ բնութագիրը – Վ.Հ.) չի համապատասխանում իրերի ճշմարիտ դրվածքին, և հայերենի և ընդհանուր հնդեվրոպական մոդելի փոխհարաբերության հարցն ունի արմատական վերանայման կարիք» (Макаев, 1977, էջ 169) : Այսուհանդերձ, հայերենին նվիրված գրեթե ամեն մի ուսումնասիրություն, առավել ևս ստուգաբանական առանձին կամ ամբողջական քննություն շարունակում է ընթանալ Աճառյանի ստեղծած ավանդույթի հիմունքներով:

6. Բառարանը հիմնարար նշանակություն ունի մեր օրերի հայերենի համեմատական-ստուգաբանական ուսումնասիրության համար, այնուամենայնիվ նրանում կան որոշ իրողություններ, որոնք ոչ այնքան հնացած են, որքան ունեն վերաձևակերպման կամ վերանշանակման կարիք: Դա պայմանավորված է վերջին տասնամյակների ընթացքում համեմատական լեզվաբանության նոր ձեռքբերումներով՝ ոչ միայն ընդհանուր դրվածքով, այլև հատկապես ստուգաբանության նկատառումով: Ավելին, հայերենի տվյալներին ներկայումս տրվում է մեծ, նույնիսկ վճռական նշանակություն այդ բնագավառում շատ հարցեր վերանայելու, նոր մոտեցումներ առաջ քաշելու համար:

ա) Առաջնային նշանակություն ունի համեմատվող լեզուների ոչ միայն եղած, այլև նորագույն տվյալների ավելի լայն օգտագործմամբ ստուգաբանական վերականգնումների հարցը (հմմտ. հին անատոլիական կամ խեթալուվական և թոխարական լեզուների, իրանական լեզուների նորահայտ բարբառների, նախահունական վիճակի լեզվի տվյալներ և այլն):

բ) Առաջ է քաշվում ընդհանուր հնդեվրոպական հնչյունական համակարգի, ավելի կոնկրետ՝ վերջինիս բաղաձայնական ենթահամակարգի վերանայման հարցը՝ հիմնված առաջին հերթին հայերենի տվյալների վրա: Նկատի են ունենում այն, որ վերջինս հավաստիորեն է արտացոլում հնդեվրոպական վիճակը՝ կապված խոլ բաղաձայնների (p, t, k) ինչ-ինչ արտասանության հետ, որ եղած պիտի լինի նախահայերենի մեջ:

Ավանդական համեմատաբանությունը շարունակում է ուսումնասիրություններ կատարել այն հաշվով, որ ցեղակից լեզուներում տեղի է ունեցել, այսպես կոչված, բաղաձայնական տեղաշարժ (արտացոլված գերմանականում, հայերենում, մասն խեթալուվականում), այնինչ նորագույն տեսություններից մեկի պնդմամբ դա բացառելի է, եթե նկատի են առնվում այս դեպքում հայերենի ամենահին և ամենավատահելի փաստերը: Ըստ այսմ՝ հնդեվրոպական բաղաձայնական համակարգի քառաշարք եռաստիճան (ավանդական՝ առավելապես սանսկրիտի, հունարենի և լատիներենի վրա հիմնված, *b_h, *b, *p, *p_h և այլն) համակարգի փոխարեն առաջարկվում է եռաշարք եռաստիճան (նոր՝ ամենից առաջ կամ միայն հայերենի տվյալների նկատառումով՝ ((*p'), *b_h/b, *p) համակարգ: Իսկ սա նշանակում է, թե որքան է մեծանում հայերենի նշանակությունը հնդեվրոպական արմատի վերաձևակերպման և ըստ այդմ հայերենի արմատի նշանակման համար:

գ) Չգալի փոփոխություններ են եղել հնդեվրոպական արմատի վերականգնման և նշանակման հարցում: Այսպես, Հ.Աճառյանը հայ. երիւր «պատշաճ, հարմար» բառը բխեցնում է հե. *ar- արմատից՝ հետևելով Ա.Մեյեին, «ենթադրելով *ar-/er- ձայնդարձ: Գ. Ջահուկյանը դա համարում է «քիչ հավանական»՝ «դնելով *ri-tro- նախածն՝ *ar-ի և r-ի (*rēi-) հիմքային տարբերակից. հմմտ լատ. rītus «ծես, սովորույթ», rite «ըստ ընդունված կարգի. պատշաճորեն», հվգերմ. rīm «շաք, թիվ»:

դ) Կարևոր է մաս վերականգնված արմատի տառադարձման հարցը՝ կապված ոչ միայն հնդեվրոպական կոկորդային («լարինգալ»՝ H1, H2, H3), այլև ծերպաձայնային («գլոտալ»՝ (p', t', k') հնչյունների տեղորոշման և նշանակման հետ: Աճառյանի «Արմատականում» վերականգնվող ձևերի նշանակումները բավականին հին են, ուստի այս հարցում անհրաժեշտ է առավել նոր մոտեցում: Այսպես, օրինակ, պայթական բաղաձայններից հետնալեզվայինների պարզ (g, k), քմայնացած (g', k') և շրթնայնացած (gu, ku) տարբերակների նշանակումները վերջին տասնամյակներում իրականացվում են բոլորովին այլ կերպ, մանավանդ շրթնայնացած հետնալեզվայինների դեպքում (հմմտ. gw և kw// gu, ku):

7. Հ.Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը», մանավանդ եթե նկատի ունենանք, որ հայերենի (բառ)արմատների գրեթե կեսը մնում է «անհայտ ծագման», մեր օրերի համեմատաբանու-

թյան բնագավառում կարող է միայն հիմք հանդիսանալ նոր ստուգաբանությունների, բառաբանական լրացումների և ճշգրտումների համար: Վերջիններս վերաբերում են մի կողմից՝ տեսական նոր հարցադրումների, հնդեվրոպական լեզուների մեջ հայերենին ներկայումս առավել մեծ տեղ տալու տեսակետից, մյուս կողմից՝ ստուգաբանական նորագույն տեխնիկայի գործադրման առումով (արմատի ավելի համոզիչ վերականգնում, գիտական նոր տառադարձման գործադրում, ցեղակից ավելի մեծ թվով՝ հայտնի կամ նոր հայտնի դարձած լեզուների տվյալների հաշվառում և այլն):

ա) Բառաբանական-ստուգաբանական ճշգրտումներն առավել անհրաժեշտ են, եթե ավելի լայնորեն են ներառվում համեմատվող լեզուները: Այսպես, Աճառյանի բառարանում ավելի քիչ տեղ է տրվում խեթալուվական, ֆոխարական լեզուների, իրական նորահայտ բարբառների տվյալները: Վերջիններս բավարար չափով հաշվի են առնվում հետագա ուսումնասիրություններում: Այսպես, հայ, ուստր «արու զավակ» և դուստր «աղջիկ զավակ» նախկինում ստուգաբանվել են միմյանց նկատմամբ ունեցած, այսպես կոչված, փոխազդեցությամբ, այնինչ նոր տվյալներն այս հարցում առավել ճշգրտում են մտցնում: Գ. Ջահուկյանը գրում է, որ «ուստր-ի –տր-ի համար ենթադրվում է դուստր-ի ազդեցություն, ուս-ը զուգահեռ ունի կիմր. *hogen* (**sukā*) «աղջիկ» ձևի մեջ՝ ընդհանուր **k*-ով, որ հայերենում **u*-ից հետո տալիս է –*u*–»: Այս օրինակով մերժվում է ոչ միայն Հյուբշմանի և Ջոլտայի հայտնած կարծիքը, այլ վերանայվում է Աճառյանի տված ստուգաբանությունը:

ա) Այնուհետև, հայ. փոշի բառը Պիզանին համեմատում է խեթ. *parš*-«փշրել» բառի հետ. Աճառյանը այդ բառը փշուր և փուխր բառերի հետ միասին «հակված է համարելու կովկասյան փոխառություն», որն, իրոք, հավանական չէ: Այսպես նաև հայ, փասքուս «շատախոս» բառը թե՛ նախկինում, և թե՛ Աճառյանի բառարանում, այլև հետագայում ընդհանուր առմամբ դիտվել է իբրև անհայտ ծագման: Ըստ Ջահուկյանի՝ բառը կազմված է փաս- և քուս «քսու» բաղադրիչներից, զուգահեռ է անցկացվում խեթ. *paškušai* «արհամարիել(?)», մոռանալ (?)» ձևի հետ [Ջահուկյան, 1970, էջ 148]: Հաշվի առնելով այդ դեպքում նորագույն ուսումնասիրությունների տվյալները՝ կարելի է կարծել, որ բառը բնիկ է, ծագում է հնդեվրոպական տարբերակային արմատից. հայ. փասք-ուս < հեթ. **pgsk-ei/psk-nti*. հմմտ. խեթ. *pašku-zi* «ժխտել, մերժել, զանց առնել, հեռացնել», լուվ. *[pa-aš]-ku-ti* (ներգործ. ներկ. եզ. 3-րդ դ.), *pa-aš-ku-ua-an-zi* (ներգործ. ներկ. հոգն. 3-րդ դ.) «նույնը» և այլն, հիտ. *pasku-* (ներգործ. ներկ. եզ. 3-րդ դ.) «բաց թողնել, արհամարիել. բանի տեղ չդնել, քամահրել» և այլն, որոնք հանգում են խեթ. *pāšk-i* / *pašk-* [*pa-aš-ka-ah-hi*, *pa-aš-ga-mi*] (ներգործ. ներկ. հոգն. 1-ին դ.), *pa-aš-ki*, *pa-aš-ki-ez-zi* (ներգործ. ներկ. հոգն. 1-ին դ.) «պինդ, ամուր նստել, կապել՝ ամրացնել. սերմել՝ ցանել, կարգի բերել և այլն» ընդհանուր արմատին: Իսկ առհասարակ այդ խմբի լեզուների համար վերականգնվում է հին անատ. **pasku* արմատը: Նկատենք նաև, որ իմաստի տեսակետից հայերենին առավել մոտ է **pasku* (ներգործ. ներկ. եզ. 3-րդ դ.) «բաց թողնել, արհամարիել, բանի տեղ չդնել, քամահրել արմատը»:

Vazguen Hambardzumyan (Armenia)

OBSERVATIONS ON ETYMOLOGIES OF H. ADJARYAN'S "ARMENIAN ROOT DICTIONARY"

From 1970 the comparative investigations come in to new level, but the new investigations indicate (Makaev, 1977, p. 169), that the etymological characteristics of the language is not valid and the problem of the co-relations of Armenian and IE model must be substituted. H. Adjaryan's "Armenian Root Dictionary" contains about 11,000 root-words, and only 5062 of them are etymologized. According to it this dictionary can be the root in the comparative field of the time for the new etymological and semasiological additions and specifications.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԸ XIV-XV ԴԱՐԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Անձնանունների կարևորությունը գիտակցվել է դեռևս անհիշելի ժամանակներից, և ինչպես Աճառյանն է ասում. «Մարդկային հասարակության մեջ չկա թեկուզ ամենավաղների մի ցեղ, որի անդամները անձնանուն չունենան: Անձնանունը համաշխարհային երևույթ է»¹: Ռուս հայտնի լեզվաբան Մուպերանսկայան զարգացնում է այս միտքը՝ ասելով. «Հասարակության մեջ անուն ունենալը մարդուն տալիս է որոշակի իրավունքներ և պարտականություններ: Հնում անվան դերն այնքան մեծ է եղել, որ հենց միայն վերջինիս շնորհիվ լուծվել են մի շարք հարցեր»²:

Մեր պատմության մեջ էլ մեծ թիվ են կազմում այնպիսի անձնանունները, որոնք էական դեր են ունեցել հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքում, ուստի միշտ էլ բառարանագիրներն ինչ-որ կերպ անդրադարձել են նրանց: Հայկական անձնանունների ուսումնասիրության հարցում մինչ օրս անգերազանցելի է Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը», որի աղբյուրների մեջ կարևոր տեղ են զբաղեցնում հայերեն ձեռագրերի հիշատակարաններում վկայված անձնանունները: Առաջաբանում անվանի լեզվաբանը գրում է. «Այս աշխատության նպատակն է հավաքել, դասավորել և ուսումնասիրել այն բոլոր անունները, որ պատմության ընթացքում որևէ հայ անհատ կրել է երբևիցե, անկախ իր ունեցած դիրքից ու աստիճանից, ընդունած կրոնից ու դավանանքից և ապրած շրջանից կամ երկրից»³:

1950-ական թվականներից հիշատակարանների ժողովածուների հրատարակությունից հետո ի հայտ են գալիս բազմաթիվ նոր անձնանուններ, որոնք հասկանալի պատճառներով դուրս են մնացել նշյալ բառարանից և նույնպես ուսումնասիրության կարիք ունեն:

Առանձին հոդվածով 12-14-րդ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների անձնանուններին է անդրադարձել նաև հոլանդացի հայագետ Յոզեֆ Վայտենբերգը: Աշխատանքում քննության առնված անձնանունները դիտարկվում են որպես Մերձավոր Արևելքի մշակութային ներթափանցումների արտահայտություն⁴:

Մեր զեկուցման մեջ համառոտ կներկայացնենք XIV-XV դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում վկայված անձնանունները և դրանց իմաստային խմբերը⁵: Յուրաքանչյուր միավորի կողքին տրված է համապատասխան դարաշրջանի հիշատակարանը և էջը, 15-րդ դարի հիշատակարանների հղումներում կրկնություններից խուսափելու համար տրված են հատորները և էջերը (օր.՝ Ա,44 - ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հտ.Ա, կազմեց Լ.Խաչիկյան, Եր. 1955, էջ 44):

Դուրս գրված անձնանունները նպատակահարմար ենք գտնում ներկայացնել հետևյալ խմբերով⁶.

1. Ծագմամբ հայկական անձնանուններ: Այս խմբի մեջ մտնող անձնանունները հիմնականում ծագում են հասարակ անուններից:

Աւետ(ա)տր ԺԴ,215, Աւետաբեր ԺԴ,504, Խելաւր ԺԵ,Ա,112, Թովսիւսամ Բ,65, Անպետ (Ամպետ) ԺԴ,251, Ամուր ԺԴ,176, Անքառան ԺԵ,Բ,33, Բոյս ԺԴ,342, Դեղիկ ԺԵ,Ա,123, Թագիկ ԺԵ,Ա,83, Վարդեր ԺԴ,250, Աչեր ԺԵ,Բ,106, Աւագ ԺԵ,Բ,420 (նաեւ Աւագ-ով բարդված՝ Աւագտիկին ԺԵ,Բ,52, Աւագտեր ԺԵ,Բ,114, Աւագուհի ԺԵ,Բ,197, Աւագերէց ԺԵ,Բ,78, Ամենաւագ ԺԴ,96), Ազգատիկին ԺԴ,262, Ակներ ԺԴ,674, Աւծել ԺԴ,350, Ասել ԺԵ,Ա,395, Կարել Բ,210, Առաջ ԺԵ,Բ,60, Խնդրած Բ,307, Բղոր Բ,341 և այլն:

Հաճախ անձնանունները վկայված են **նվագափաղաքշական մասնիկներով, ինչպես՝** *Խաչուկն, Պապուկն Գ,123, Պարոնիկ Գ,126, Աղբարիկ ԺԴ,156, Թանգիկ, Աստուածատրիկ ԺԵ,Ա,41, Թղթիկ ԺԵ,Ա,392, Խնկիկ ԺԵ,Ա,361, Շահիկ Բ,71, Շաշիկ Բ,119, Գիշուկ Բ,184* և այլն:

2. Ծագմամբ օտար անձնանուններ: Այս խմբի մեջ մտնող անձնանունները կազմում են նշյալ դարերի հիշատակարաններում վկայված անձնանունների մեծամասնությունը կամ մոտ 65%-ը: Առա-

¹ Աճառյան Հ., *Հայոց անձնանունների բառարան*, հ.Ե, Եր., 1962թ., էջ 340:

² А.В. Суперавская, *Общая теория имени собственного*, Москва 1973 г., стр. 22.

³ Աճառյան Հ., նշվ. աշխ., հատ.Ա, Եր., 1942թ., էջ 7:

⁴ J.J.S. Weitenberg "Cultural Interaction in the Middle East as Reflected in the Anthroponomy of Armenian 12th-14th Century Colophons", *Orientalia Lovaniensia Analecta* 134. Redefining Christian Identity. Cultural Interaction in the Middle East since the Rise of Islam, edited by J.J. Van Ginkel, H.L. Murre-Van Den Berg, T.M. Van Lint, Leuven-Paris-Dudley, MA 2005, p.265-273.

⁵ Թեման դեռևս ուսումնասիրության ընթացքում է՝ առաջիկայում ավելի ընդարձակ ներկայացնելու նպատակով:

⁶ Անձնանունների ծագման հարցում առաջնորդվել ենք Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ով:

վելապես մեծ է ծագումով պարսկական, արաբական, թուրքական, հունական անձնանունների թիվը: Նշենք մի քանի օրինակ՝

| Պրակ. | Հուն. | Թրք. | Արաբ. | Այլ |
|-------------------------------------|--------------------------------------|----------------------------|--|--|
| Բահատուր ԺԴ, 265 bahadur «քաջ» | Բասիլիու/Բասիլ ԺԴ, 110 «թագավոր» | Բուդայ bugday «ցորեն» | Ազիզ Բ, 102 aziz «փառավոր, վեհաշուք անձ» | Բեներ երբ. Abener անունից «հայր լուսյ» |
| Բանաշայ ԺԴ, 651, banafša «մանիշակ» | Բարդուղիմեոս ԺԴ, 377 «գարմ Աստուծոյ» | Աբդալ Ա, 639 abdal «անհոգ» | Ամիր Բ, 195 amir «իշխան» | Աբդուսեհ Ա, 457 ասոր. abda+mšihā «Մեսիա» |
| Բեհնամ Ա, 112 Behnām «լավանուն» | Բարսեղ ԺԴ, 501 հուն. «թագավոր» | Ղարայ Բ, 245 qara «սև» | Հասան Բ, 103 hasan «գեղեցիկ» | Ազարիա Բ, 68 երբ. Azariāh «օգնութիւն Աստուծոյ» |
| Սինա Բ, 7 mīnā «մանրանկար-չություն» | Մարտիրոս Ա, 643 «վկա, նահատակ» | | Ղամաթ Բ, 311 qismat «բախտ» | Ծղարաւէլ Բ, 447 – վրաց. |
| Սիրան Բ, 128 Mīrān «իշխաններ» | Մելիտե Ա, 370 «մեղրաւետ» | | Մելէք Բ, 197 malak «հրեշտակ» | Վարձիգուլ Բ, 447 – վրաց. |

Այս խմբի մեջ մտնող անձնանունների մի մասն էլ կազմվում են տարբեր ծագում ունեցող բաղադրիչներով, ինչպես՝

ԱՍԻՐՇԱՀ Բ, 76 - արաբ. amir «իշխան» + պրակ. šah «թագավոր»

ԲԱՐԱԿՇԱՀ ԺԴ, 176 - արաբ. mubaraq «օրհնեալ» + պրակ. šah «թագավոր»

ԲԱԲԱՃԱՆ ԺԴ, 288 - թրք. baba «հայր» + պրակ. jan «հոգի»

Հիշատակարաններում ամենամեծ թիվը կազմում են *խաթուն, մելիք, բէկ, շահ* բառերով բարդված անձնանունները, ինչպես՝

ԽԱԹՈՒՆ - Արմանի խաթուն ԺԵ, Բ, 238, Արուս խաթուն Բ, 6, Աւագ խաթուն Բ, 10, Բեկում խաթուն Բ, 172, Էմին խաթուն Բ, 11:

ՄԵԼԻՔ/ՄԵԼԷՔ - Արդուն Մելէք Բ, 305, Գոհար Մելիք Բ, 11, Դշխոյ Մելիք Բ, 418, Թաջ-Մելէք Բ, 104:

ՇԱՀ - Արդունշահ Բ, 431, Աւետշահ Բ, 364, Բէկիշահ Բ, 403, Գարմանշահ Բ, 364, Դովլաթշահ Բ, 182, Էտկարշահ Բ, 183:

ԲԷԿ - Այրանբէկ Բ, 231, Գուռքիբէկ Բ, 20, Գօզարբէկ Բ, 170, Թումարբէկ Բ, 137:

Ըստ որում՝ այս արմատներն ազատորեն գործածվում են նաև ծագումով հայկական անձնանունների հետ՝ կերտելով նոր անուններ՝ *Աւետշահ Բ, 364, Ազատշահ, Թանկխաթուն Բ, 165* և այլն:

3. Հնչյունական փոփոխությունների արդյունքում ձևավորված անձնանուններ: Այս ենթախմբի մեջ են մտնում այն անձնանունները, որոնք մեկ անձնանվան հնչյունական տարբերակներ են, սակայն վկայված են իբրև առանձին միավորներ: Ծագումն այս դեպքում նշանակություն չունի: Հատկապես մեծ է բարբառների ազդեցությունն այս անձնանունների ձևավորման հարցում: Այսպես, օրինակ, *Հայրապետ* անձնանունը, որ ծագումով հայկական է և սերում է «հոգևորական» հասարակ անունից⁷ վկայված է հետևյալ հնչյունական տարբերակներով՝

ՀԱՅՐԱՊԵՏ Բ, 312 - Հէրպետ Բ, 312 (այ>է) - Հըրապետ Գ, 90 (այ>ը) - Հերապետ Գ, 109 (այ>ե) - Խերպետ (h>խ, այ>ե),

ԳՈՀԱՐ ԺԴ, 437 - Ճաւհար Գ, 19 - Ջոհար Գ, 90 - Ճաւլար, Ճաւար Գ, 100 - Ճոհար ԺԴ, 250 - Ջուխար ԺԵ, Ա, 94,

ՇՆՈՐՀԱԲՈՐ ԺԴ, 43 - Շնոհոր Ա, 137 - Շնախոր Գ, 98 - Շնոֆոր Գ, 96

ՀԵՐԻՔ Ա, 191 - Խէրիք Գ, 99

ԱԼԵՔՍԱՆ - Էլէքսան Ա, 137 և այլն:

4. ՆՈՐԱՀԱՅՏ ԱՆՉՆԱՆՈՒՆՆԵՐ - Այս խմբի մեջ են մտնում այն անձնանունները, որոնք տեղ չեն գտել Հր. Աճառյանի «Անձնանունների» բառարանում: Նշենք մի քանի օրինակ՝

ԱԻՏՇՇԱՀ ԺԴ, 280 - ար., հյ Աւետ «աւետիս» և պրակ. šah «թագավոր»

⁷ Տե՛ս Հր. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ.Գ, Եր., 1946, էջ 38:

ԱԻԾԵԼ ԺԴ,350 - ար., հյ. «աւծել» բառից
 ԲԱՆՏԻԿ ԺԴ,368 - իգ., հավանաբար հյ. «Բախտաւոր» անձնանվան կրճատ տարբերակ,
 ԲԱՆԻԿ Բ,185 - իգ., պոսկ. bahār «գարուն» բառից, հ>խ փխ. եւ նվիողը. մասնիկ
 ԲԱՆՈՒԿ ԺԴ,538 - իգ., հյ. բանուկ «շատ, առատ» բառից
 ԲԱՐԵԼԻ ԺԴ,364 - ար., հյ. բարի+լի «բարոյթյամբ լցված»
 ԲԱԲԳԱՆ Բ,88 - ար., հնարավոր է Բաբիկ բառի սեռականից է՝ Բաբկայ> Բաբգան (տե՛ս
 Աճառյան, Բաբիկ)

ԲԵԿԻՋԱՆ ԺԴ,174 - իգ., արդյո՞ք արաբ. bikr .կույսե բառից: Ունենք Բեկրի անուն, գուցե
 հնչյունական մի տարբերակ,

ԲՈՒԼԻԿ ԺԴ,543 - իգ., ծագ. անհայտ, հնարավոր է «Բուդա» անվան նվագափողաբշական
 տարբերակ

ԽԷՐՊԱՐՈՆ Գ,128 - ար. հյ հէր>խէր (հայր) և պարոն բառերից

Բաւնբաւ/Բոնպոս - իգ., ծագ. անհայտ

ԲԱՐԻՈՔ(ԲԱՐԻՈՒ) Բ,143 - ար., Արդյո՞ք հյ. *բարի* և *ոգի* բառերից

ԳԵՐՍԱՐԱԿԷ Բ,364 - ար., ծագ. անհայտ

ԿԱՆԷՔ (Կանա՞յք) Բ,15 - իգ., հավանաբար Կանայք բառի հնչյունափոխված տարբերակ

ԿԻՐԱԿԷՏՈՒՐ Բ,279 - իգ., հուն. Կիրակէ «տերունական» և տուր բառերից «տիրոջ տված»

ՇԱՏՆԱՄ Բ,316 - իգ., արդյո՞ք հյ. շատնալ «քաղամնալ» բայի ըղծ. ապ. առաջին դեմքից

ՊԱՐԸՆԳՈՐԾ (ՊԱՆԸՐԳՈՐԾ) Բ,260 - ար., հավանաբար «պանրագործ» նշանակությամբ:

Ծագմամբ հայկական անձնանունները կարելի է դասակարգել նաև ըստ խոսքի մասային
 պատկանելության, ըստ որում՝ խոսքի մասերից անձնանվանակերտմանն առավելապես մասնակցում են
ածականը և **գոյականը**: Ածական - *Աւետ(ա)տոր ԺԴ,215, Աւետաբեր ԺԴ,504, Բախտաւոր ԺԴ,67,*
Խելաւք ԺԵ,Ա,112, Թուխծամ Բ,65, Ազատ, ԺԵ,Բ,454, Անպետ (Ամպետ) ԺԴ,251, Ամուր ԺԴ,176, Ան-
բառան ԺԵ,Բ,33:

Գոյական - *Բոյս ԺԴ,342, Դեղիկ, ԺԵ,Ա,123, Թագիկ ԺԵ,Ա,83, Վարդեր ԺԴ,250, Աչեր*
ԺԵ,Բ,106, Աւագ ԺԵ,Բ,420 (նաեւ Աւագ-ով բարդված՝ Աւագտիկին ԺԵ,Բ,52, Աւագտեր ԺԵ,Բ,114,
Աւագուհի ԺԵ,Բ,197, Աւագերեց ԺԵ,Բ,78, Ամենաւագ ԺԴ,96), Ազգատիկին ԺԴ,262, Ակներ ԺԴ,674 և
 այլն:

Այլ խոսքի մասեր - բայ՝ *Աւծել ԺԴ,350, Ասել ԺԵ,Ա,395, Կարել Բ,210, մակբայ՝ Առաջ ԺԵ,Բ,60,*
դերբայ՝ Խնդրած Բ,307, դերանուն՝ Բոլոր Բ,341 և այլն:

Կարևոր է նաև այդ դարաշրջաններում անձնանունների իմաստային կողմի քննությունը, այ-
 սինքն՝ անձնանվանակերտման կամ անվանադրման գործընթացներում իմաստի տեսանկյունից ի՞նչն է
 առավել կարևորվել: Այսպես, նախնական քննության հիման վրա առանձնացրել ենք հետևյալ իմաս-
 տային խմբերը.

ա. **ՊԱՇՏՈՆ ՆՇԱՆԱԿՈՂ** անձնանուններ՝ *Հայրապետ Բ,312, Արեղայ Բ,402, Հագարապետ*
Գ,104, Տէրտեր Գ,109, Արքայ Բ,58, Գինեպետ Ա,233, Գրապետ Բ,340, Թագաւոր Ա,612, Թագուհի
Ա,43, Քահանայապետ Ա,526, Իշխան Ա,318, Վանական Ա,86, Սարկաւագ Ա,201:

բ. **ՏԵՂԱՆՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՂ** անձնանուններ՝ *Բաղտատ ԺԴ,281, Իսրայէլ Բ,87, Իրաք Բ,187,*
Յորդանան Բ,132, Աւան ԺԴ,347, Փողոց Ա,575, Քաղաք Ա,550, Թաւրէզ Ա,227, Դրիմ Ա,300 և այլն:

գ. **ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ** անձնանուններ - *Անձրեւ Բ,275, Արեւ Բ,54,*
Արեւտիկին ԺԴ,226, Արեւշահ, Լուսին:

դ. **ԿԵՆԴԱՆԻՆԵՐ** - *Առիծ Բ,12, Կորիւն, Ասլան, Գառնուկ Ա,369, Սիրամարգ Ա,161, Վիշապ*
Ա,49, Կաքաւ Բ,404:

ե. **ԳՈՒՆԱՆՈՒՆՆԵՐ** - *Կապուտ Ա,407, Կարմիր:*

զ. **ԲՈՒՍԱՆՈՒՆՆԵՐ** - *Բոյս, Դամպար Ա,529, Ծաղիկ Ա,65, Նարգիզ Բ,70, Շուշան Բ,78* և այլն:

Գրավոր այս հուշարձաններում սակավ վկայվածություն ունեն մականունները, ինչպես
 օրինակ՝ *Հաւկիթ Ատոմ Բ,6, Չաքալ Գ,118, Շէկ Կարապետն, Խըժսցի Կարապետն, Գառնուկ Բ,295,*
Դռնիկ Ա,424, Խուլ Ա,436:

Վայտենքերգը նշում է, որ 12-14-րդ դարերում արական ամենից տարածված անուններն են՝
 Յովհաննէս, Մարտիրոս, Դավիթ, Գրիգոր, Ստեփանոս, Վարդան անունները, իսկ իգական անուննե-
 րից՝ Հռիփսիմէ, Խաթուն, Մարթայ, Շնորհաւոր եւ այլն⁸: Հավելենք, որ 15-րդ դարի հիշատակարաննե-
 րում ևս այդ անուններն են մեծ թիվ կազմում: Նշյալ աղբյուրում անձնանունների թիվը հասնում է
 2500-ի, որոնցից մոտ 800-ը իգական են, իսկ 1700-ը՝ արական:

Հղովման տեսանկյունից անձնանուններն հիմնականում *ի* արտաքին թեքման են պատկանում,
 ինչպես՝ «*Եւս առաւել ողորմեա՛, Տէ՛ր Աստուած, Սիրունի՛ն և կողակցոյն՝ Համենի՛ն, և տղայոց՝ Հանէսի՛ն*

⁸ J.J.S. Weitenberg, *նշվ. աշխ., էջ 267-268:*

և Վանէսին, Հայրապետին, Թուրանդին, Մուրամին, և Նարրնջին, Գուլատանին, և Առաքելին, ամէն» Ա,202:

Khachik Harutyunyan (Armenia)

PROPER NAMES IN THE COLOPHONS OF ARMENIAN MANUSCRIPTS XIV-XV CENTURIES

The study of Armenian proper nouns are always occupied a special place among the researchers. In our report presents a number of proper names of Armenian colophons XIV-XV centuries, which are not found in the famous dictionary Acharyan. These names appear in origin and phonetic variants. Briefly studied also the system of declension of proper names in the colophon of Armenian manuscripts XIV-XV centuries.

Նագիկ Հովհաննիսյան (Հայաստան)

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈՍԱՆԻՇՆԵՐԻ՝ XV-XVI ԴԱՐԻ ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Հայկական վերածնության ժամանակաշրջանում, ինչպես վկայում են ուսումնասիրությունները, Հայաստանյայց դպրոցներից շատերը, վայելելով արքունիքի և եպիսկոպոսական աթոռների հովանավորությունը, աջակցություն և օժանդակություն ստանալով նաև քաղաքային ու գյուղական համայնքներից, հետագայում դարձել են ուսումնագիտական կենտրոններ: Սրանց մեծ մասը, ըստ հետազոտողների հիմնվելով IX-XI դդ., առավել բուռն գործունեություն է ծավալել XII-XIV դդ.: Ուսումնագիտական այս կենտրոններում ուսուցչապետած Հովհ. Իմաստասերի, Գր. Մագիստրոսի, Հովհ. Երզնկացու, Վ. Արևելցու, Մխ. Գոշի, Ես. Նչեցու, Գր. Տաթևացու, Վ. Այգեկցու և այլոց գործունեությունը, սերտորեն առնչվելով դպրոցի խնդիրներին, հետապնդել է ուսուցողական, գործնական նպատակ. գրվել, կազմվել են այբբենարաններ, գրուցարաններ, դասագրքեր, հեղինակվել քերականական և ուղղագրական աշխատություններ¹: Վերջիններիս կարիքը զգացվում էր՝ ելնելով «... հենց ձեռագրերը ճիշտ վերարտադրելու, ձեռագրերի ուղղագրությունը կայունացնելու և տեսականորեն հիմնավորելու պահանջներից»²:

Կրթօջախներից շատերը եղել են գրչության արվեստի կենտրոններ, որոնցում նաև լայնորեն ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր: Այս կենտրոններում է զարգացել ազգային ու թարգմանական գրականությունը, ուսուցանվել են լեզուներ (հունարեն, ասորերեն, պահլավերեն, պարսկերեն, լատիներեն)³, իբրև դասընթացներ դասավանդվել են պատմագրություն, ճարտասանություն, աստվածաբանություն, քերականություն, տոմարագիտություն, աստղաբաշխություն, իմաստաբանություն, բնագիտություն, երաժշտություն, այլ առարկաներ⁴:

Միջնադարում մտավոր ընդհանուր զարգացման հիմք ու նախապայման է եղել քերականությունը, որը դիտվել է «ամենայն իմաստասիրության դուռն ու բանալին»⁵: Եվ որքանով տրամաբանությունը բնորոշվել է որպես մտածողության քերականություն, ուսումնական ծրագրերում առավել ուշադրություն է հատկացվել ճարտասանությանն ու տրամաբանությանը, այն է՝ մտածել սովորելուն, խոսքը կառուցելուն, տրամաբանորեն ընդհանրացնելուն, մտահանգումներին, փաստարկներն ապացուցելուն (կամ հերքելուն), դատողությունը, միտքը ունկնդրին հասցնելուն և համոզելուն:

¹ Գ. Զահուկյան, *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.)*, Երևան, ԵՊՀ հրատ., 1954, էջ 205-221, 243-259, 259-280, 282-291, 292-298: Հեղինակը նկատել է՝ XII-XIII դդ. հայ քերականությունն «... իր լեզվով դառնում է ավելի ժողովրդական ու հասկանալի». նույն տեղում, էջ 225:

² Նույն տեղում:

³ Ա. Խ. Մովսիսյան, *Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության*, Երևան, Հայպետուսմանկիրատ, 1958, էջ 342, 383:

⁴ Դասավանդվող առարկաների մասին մանրամասն տե՛ս Ա. Խ. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 381-397:

⁵ Լ. Խաչեղյան, *Գլխավորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ (XIII-XIV դդ.)*, Երևան, «Լույս» հրատ., 1973, էջ 111:

Դասավանդվող առարկաների բազմազանությունը, հատկապես լեզուների ուսուցումը, զարգացող գիտություններին վերաբերող աշխատությունները թելադրել են նորանոր ձեռնարկների, գրուցարանների, բառարանների անհրաժեշտություն⁶:

«Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ» երկհատոր աշխատության էջերում Հ.Ամալյանը հավաստում է, որ այդ շրջանում գրված, թարգմանված ամենատարբեր գիտությունների վերաբերող աշխատություններում, այլևայլ ստեղծագործություններում հանդիպող անհասկանալի բառերի մեկնություններն ու բացատրությունները սկզբնապես կցվել են բնագրերին: Հետագայում ստեղծվել են բացատրական, ուղղագրական, թարգմանական, մասնագիտական բառարաններ, որոնք, սակայն, ինչպես արձանագրում է հեղինակը, փոքրածավալ են եղել, չեն արտացոլել լեզվի բառային ողջ կազմը: Այդուհանդերձ, դրանք անչափ կարևոր են եղել գիտությանը ծառայելու, ուսումնական գործին նպաստելու առումներով⁷:

Հընթացս, այլև հետագայում բառարանները ընդօրինակվել են՝ ըստ ընդօրինակողի՝ լեզվին տիրապետելու մակարդակի: Եվ թեև «...մի չգրված օրենք է եղել նախատիպ ձեռագրին հարազատ մնալը»⁸, բայց և չի կարելի բացառել ընդօրինակողի ապրած միջավայրի լեզվի ազդեցությունը, որքանով Գ. Միքայելյանի հավաստումով Հայաստանի տարբեր վայրերից XI դ. և հետագա գաղթերի ժամանակ ձեռագրեր են տարվել Կիլիկիա՝ ընդօրինակելու-վերակազմելու, և այնուհետև հետ են բերվել⁹, իսկ Ա. Մովսիսյանն էլ գտնում է, որ ձեռագրեր են ընդօրինակվել նաև թելադրելով¹⁰: Նշվածից թերևս կարելի է եզրահանգել, որ ձեռագրերում հավանական են ուսուցողական նպատակներով մեջբերվող և հավելվող նկարագրական կամ բացատրական բառակապակցություններն ու արտահայտությունները, հղումներն ու ծանոթությունները, մանրամասնող բացատրությունները: Եվ եթե XII-XVII դդ. վկայված ձեռագիր բառարաններում, ըստ դիտարկումների, դրանք սահմանափակվում են մի քանի օրինակով¹¹, ապա XVIII դ. վկայվածներում¹² զգալի քանակ են կազմում:

Հոմանիշային շարքերում որոշակիորեն առանձնանում են բայական հարադրությունները, բացատրական երանգով բառակապակցություն-արտահայտությունները:

Վերջինները մեծ մասամբ տրվում են հոմանիշային շարքի վերջում՝ ասես ամփոփելով կամ եզրափակելով այն, ինչպես Չեռ. 6762-ից քաղված հետևյալ շարքերում՝ *Աղքատ ... մերկ յամենէ կամ թափուր յամենէ (101բ)¹³. Ամաչել...ամօք երեսաց նոցա ծածկեաց զնոսա (101բ). Առաւօտ... ի ծագիլ արևոյն. ընդ լուսանալ առաւօտուն (102ա). Արգելու...ոչ թոյլ տալ (102բ). Ձգնուլ... արկանել զիրև հանդերձ (107ա). Թագուցանել... ոչ բացայայտել (108ա). Լռել... ոչ բանալ զբերան իւր (110ա). Ծերունի... լցեալ հասակաւ. անցեալ զաւուրբ. հնացեալ ժամանակաւ. մերձեցեալ ի գերեզմանն (111ա). Կերակրել... տալ նմա ուտել (112բ). Հարուստ ... առատացեալ ընչիւր. Մայել... է՛ ձայն կատույ (117ա). Մերկացուցանել... հանել ի նմանէ զհանդերձն (117ա). Յագել...ուտել մինչև ցայգ ...եթէ առաւել իցէ. խճողել զորովայնն. կշտապինդ վայելել (118ա). Սերմանել... արկանել զսերմանիս յերկիր (124ա). Վաճառել... ի յսո և ի տուրս պարսպիլ (125բ). Վիրաւորել... հարկանել սրով կամ նետիւ (126ա). Վրիպել... ոչ հաջողիլ... կամ զարտուղին երթալ (126ա). Տքնիլ... արթուն կալ. ոչ ննջել (128ա). Փարիլ... անկանիլ զպարանոցաւ (128բ). Քաղել... ամանել յամսն... ժողովել ի շտեմարան կամ լնու ի հնձան և կամ ի գոգ իւր. (129ա). Քաղցեալ... ոչ կերեալ ինչ (129ա). Քերթել... հանել զմորթն (129բ). Քննել... ի քննութիւն մտանել (129բ-130ա) և այլն:*

Հարադրավոր բայերի մեծ մասը կազմվում է *առնել, լինել, առնուլ, ածել, արկանել, տալ* բայերով:

⁶ Հ.Ամալյան, *Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ* (V-XV դդ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966, էջ 42-43:

⁷ Հ.Ամալյան, նշվ. աշխ., էջ 22-23, 42-43, 47:

⁸ Լ.Հովհաննիսյան, *Բառային տարբերակներ V դարի գրաբարում. «Հայոց լեզվի պատմության հարցեր»*, պրակ 3, Երևան, ՀԳԱ հրատ., 1991, էջ 8-9:

⁹ Г.Г.Микаелян, *История Киликийского армянского государства*, Е., изд. АН Арм.ССР, 1952, с.286.:

¹⁰ Ա.Խ.Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 402:

¹¹ «Ամբողջական բառակապակցության միջոցով, նկարագրական եղանակով» արտահայտությունների մասին նշում է Հ.Ամալյանը՝ պայմանավորելով դրանք «բառարանի իսկական գործնական բնույթով», տե՛ս. Հ.Ամալյան, նշվ. աշխ., էջ 129-130:

¹² Ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակների՝ XVIII դ. ավանդված մի շարք ձեռագրերում ամփոփված են հոմանիշների առավել ամբողջական բառարանները՝ հետևյալ խորագրերով՝ «Նշանաբանն նոյնանշան բառից ըստ դասաւորութեանց մերոց տառիս» (Չեռ. 566, 234բ-279ա), «Հաւաքումն բառից որք նշանակութեամբ նոյն կամ մերձաւորք են. Մատթեոսի վ. Բառգիրք հոմանիշ բառից» (Չեռ. 3110, 75ա-112ա), «Բառք նոյնանշանք՝ ժողովեալք ըստ այբուբենից, ի մխիթարեան Մատթեոսի գերերջանիկ վարդապետէ» (Չեռ. 873, 185ա - 220բ և Չեռ. 775, 53ա-80ա): Նշվածներից հարկ է հավելել նաև Չեռ. 6762-ում ամփոփված անխորագիր բառարանը (101ա-130բ), քանի որ ձեռագրերի համեմատությունից պարզվեց, որ վերջինս և Չեռ. 566-ինը որոշ տարբերություններով հանդերձ նույնն են: Պահպանված է ձեռագիր բառարանների ուղղագրությունը:

¹³ Փակագծերում նշվում է ձեռագրի էջը: Պահպանված է ձեռագիր բառարանների ուղղագրությունը:

Կազմությունների համադրություն - համեմատությամբ պարզվում է, որ դրանք մեծ մասամբ գործածվել են գրաբարում, վկայված են գրաբար մատենագրության մեջ՝ մասնավորապես Աստվածաշնչում. ինչպես՝ *տապաստ արկանել* (*Կոտորել*. Ձեռ. 6762, 113ա)¹⁴, *երկայնայմիտ լինել* (*Համբերել*. Ձեռ. 566, 255ա), *ծայրաքաղ առնուլ* (*Կրճատել*. Ձեռ. 6762, 113ա. 566, 254ա), *ճառ արկանել* (*Պատմել*. Ձեռ. 6762, 122բ. 566, 267բ), *սպաս կալ* (*Սպասաւորել*. Ձեռ. 6762, 127բ), *ձեռն ի գործի արկանել* (*Սկսանիլ*. Ձեռ. 566, 271ա), *խրախոյս բառնալ* (*Քաջալերել*. Ձեռ. 6762, 129բ. 566, 277բ), *ափ ի բերան լինել* (*Լռել*. Ձեռ. 6762, 110ա. 566, 248բ) և այլն:

Առանձնացված բոլոր կազմությունները բնագրային օրինակներով որպես դարձվածային միավորներ արձանագրված են Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձվածաբանական բառարանում»¹⁵ (համապատասխանաբար՝ *երկայնամիտ լինել*, *ծայրաքաղ առնել*, *ի սպասու կալ*, *ձեռն ի գործ արկանել*, *ափիբերան առնել* տարբերակներով):

Ըստ բառարանային տվյալների՝ Խորենացու, Եղիշեի, Բուզանդի, Փարպեցու, Կողբացու, Ագաթանգեղոսի երկերում են վկայված հետևյալ կազմությունները՝ *բնաջինջ առնել* (*Աւերել*. Ձեռ. 6762, 103ա. 566, 238ա), *ի հիացման լինել* (*Չարմանալ*. Ձեռ. 6762, 106բ. 566, 243ա), *խնդրել կամ առնուլ զվրեժ* (*Պատժել*. Ձեռ. 6762, 122ա. 566, 267բ), *հեղուլ զարտոսր* (*Լալ*. Ձեռ. 6762, 109բ. 566, 247բ), *զիշխանութիւն վարել* (*Տիրել*. Ձեռ. 6762, 127բ. 566, 274բ), *պաշտօն տանիլ* (*Սպասաւորել*. Ձեռ. 6762, 124բ. 566, 270բ), *ազատ կացուցանել*, *ի ձեռաց կորզել* (*Ազատել*. Ձեռ. 6762, 101ա. 566, 234բ), *զգենուլ զամօթ* (*Ամաչել*. Ձեռ. 6762, 103բ. 566, 235բ)¹⁶, *գուժական հասանել* (*Գուժել*. Ձեռ. 6762, 105ա. 566, 241ա), *ուրաստ լինել* (*Ուրանալ*. Ձեռ. 6762, 120բ. 566, 265ա) և այլն:

ԳԴԲ-ում արձանագրված են՝ *բնաջինջ առնել* (*Աւերել*), *խնդրել կամ առնուլ զվրեժ* (*Պատժել*), *ուրաստ լինել* (*Ուրանալ*)¹⁷:

Որոշ հոմանիշային շարքերում էլ հենաբառին հաջորդում են մանրամասնող երանգով կառույցներ, ինչպես՝ *Ամբաստանել՝ հակառակ նմա վկայել* (Ձեռ. 6762, 101բ. 566, 235բ. ՆՀԲ-ն հղում է յուն.՝ հակառակ վկայել¹⁸). *Բորբորիլ՝ բոցոյն բարձրանալն. բոցոյն ծառանալն* (Ձեռ. 6762, 104ա. 566, 239ա). *Լոսել՝ ի փոշի դարձուցանել* (Ձեռ. 6762, 109բ. 566, 248ա). *Լռել՝ ոչ տալ զպատասխանի. ոչ բանալ զբերան իւր* (Ձեռ. 6762, 110ա. 566, 248բ). *Ծամել՝ մանրել ատամամբ. ճմլել լեզուաւ* (Ձեռ. 6762, 111բ. 566, 250բ). *Կցել՝ միաորել ընդ նմա* (Ձեռ. 6762, 113. 566, 254ա). *Հնազանդել՝ ենթարկել զինքն հրամանաց* (Ձեռ. 6762, 115ա. 566, 256բ). *Ճշմարտել՝ բառնալ զերկբայութիւն* (Ձեռ. 6762, 116բ. 566, 259ա). *Մերկանալ՝ ի բաց հանել զհանդերձն. հոլանի լինիլ* (Ձեռ. 6762, 117ա. 566, 260ա). *Միարանիլ՝ մտերիմ լինիլ նմա* (Ձեռ. 6762, 117բ. 566, 260բ). *Յուսահատել՝ անյոյս լինել. հատել յոյս նորա* (Ձեռ. 6762, 118բ. 566, 262ա). *Նեղել՝ վիշտ հասուցանել* (Ձեռ. 6762, 119ա. 566, 262բ). *Վիճել՝ բանակոչիւ լինել* (Ձեռ. 6762, 126ա. 566, 272բ). *Քակել՝ հարթայատակ կամ հիմնայատակ առնել* (Ձեռ. 6762, 129ա. 566, 277ա) և այլն:

Կան տպագիր բառարաններում չարձանագրված կազմություններ. *անձնացոյց լինել* (*Հայարտանալ*. Ձեռ. 6762, 115ա. 566, 256բ), *անպատկառ լինել* (*Յանդրգնել*. Ձեռ. 6762, 118ա. 566, 261ա), *հետագօտ լինել* (*Քննել*. Ձեռ. 6762, 129բ. 566, 278ա), *հլու լինիլ* (*Հնազանդել*. Ձեռ. 6762, 115ա. 566, 256բ), *նշատակ առնել* (*Կատակել*. Ձեռ. 6762, 112բ. 566, 252բ), *զամայութիւն խնդրել* (*Մեկուսանալ*. Ձեռ. 6762, 117բ. 566, 260բ), *ողջակէզ առնել* (*Սատուցել*. Ձեռ. 6762, 117ա. 566, 259բ):

Թերևս կարելի է անդրադառնալ *Լռել* և *Պապանձել* հոմանիշային շարքերում (Ձեռ. 6762, 110ա, 122ա. 566, 248բ, 266բ) արձանագրված լեզուն ի քիման կցել արտահայտությանը: Թեև ՆՀԲ-ում՝ *Կցել* և *Քիմք* բառահոդվածներում, վկայված են *Լեզու իմ ի քիմս իմ կցեցաւ*, *Լեզուք նոցա ի քիմս իւրեանց կցեցան*, *Կցեցան լեզուք դիեցիկ մանկանց ի քիմս իւրեանց ի ծարաւս իւրեանց* բնագրային օրինակները, բայց և գրաբարի տպագիր բառարանները չեն արձանագրում նշված արտահայտությունը՝ «լռել, պապանձվել» նշանակությամբ¹⁹: Ստ. Մալխասյանցի բառարանը նույնպես չի հիշատակում այն²⁰: Իսկ ահա «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան»-ը փաստում է՝ «Լեզուն կոկորդին կաչել, - Նույնն է՝ Լեզուն կապ ընկնել, կապվել». վերջինս էլ բացատրում՝ «... պապանձվել (վախից, հուզմունքից)»²¹: Ուրեմն և կարելի է՝ ենթադրել, որ *լեզուն ի քիման կցել* արտահայտությունը դարձվածային արժեք է ձեռք բերել XVIII դ.:

¹⁴ Փակագծերում տրվում են հոմանիշային շարքի հենաբառը, ձեռագրի համարը և էջը:

¹⁵ Ռ. Ղազարյան, *Գրաբարի դարձվածաբանական բառարան* (այսուհետև՝ ԳԴԲ), Երևան, ԵՊՀ հրատ., 2012:

¹⁶ *Չգենուլ զամօթ*-ը «նմանությամբ ասուի» հղումով է առանձնացնում ՆՀԲ-ն. Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, 1836, հտ. Ա, էջ 727:

¹⁷ Տե՛ս ԳԴԲ, էջ 55, 260. *ուրաստ լինել*-ը ԳԴԲ-ում վկայված է *յուրաստ կալ* տարբերակով. ԳԴԲ, էջ 217:

¹⁸ ՆՀԲ, հտ. Ա, էջ 53:

¹⁹ Տե՛ս ՆՀԲ, հտ. Ա, էջ 1139. հտ. Բ, 1837, էջ 1006:

²⁰ Հմմտ. Ստ. Մալխասյանց, *Հայերեն բացատրական բառարան* (այսուհետև՝ ՀԲԲ), Երևան, Հայպետհրատ, հտ. 2, 1944, էջ 190-191:

²¹ Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան* (այսուհետև՝ ՀԼԴԲ), Երևան, ԵՀ հրատ., 1975, էջ 267:

Առկա են տպագիր բառարաններում վկայված կազմությունների մամուլային բաղադրվածներ, այսպես՝ *մեկնել յամբոխէ (Մեկուսանալ)* (Ձեռ. 6762, 117բ. 566, 260բ). գրաբարում հանդիպող *մեկնել յաշխարհէ (Մեռնել, վախճանվել)*²² մամուլային.

զպէտս հոգւոյն վճարել (Մեռանել) (Ձեռ. 6762, 117բ. 566, 260ա). Ստ. Մալխասյանցը «հին բառ կամ նշանակություն» հղումով արձանագրում է *զպէտս հոգւոյն հատուցանել (Հոգին ապանդել, մեռնել)*²³.

խօսել ի սիրտ նորա (Մխիթարել) (Ձեռ. 6762, 117բ. 566, 260բ). գրաբարում գործածվող *խօսել ի սրտի (Մտածել, խորհել)*²⁴ մամուլային.

յերկուս ծուենս բաժանել (Պատառնել) (Ձեռ. 6762, 122բ. 566, 267բ). Ղ. Փարպեցու «Բաժանեալ աշխարհ Հայոց՝ պատառնեալ յերկու ծուէնս» արտահայտության մամուլային²⁵.

պնդել զպսակ և թագիւ պճնել (Պսակել) (Ձեռ. 6762, 123ա. 566, 268բ). ըստ ՆՀԲ-ի *պսակեալ բազին և թագով պսակեալ* կառույցները վկայված են X-XI դդ.²⁶: ՀԼԴԲ -ում մույն նշանակությամբ հանդիպում է *պսակ կապել*-ը²⁷:

Վերը նշվածներից հարկ է առանձնացնել ձեռագիր բառարաններում՝ *Թագչիլ, Գերծել և Յագել* հեմաբառերով հոմանիշային շարքերում (Ձեռ. 6762, 104 բ, 108ա, 118ա. 566, 240ա, 245բ), հանդիպող համապատասխանաբար *թագթագուր շրջել, փոքրել զհերս և կշտապինդ վայելել*²⁸ կազմությունները, որոնք առկա են ՆՀԲ-ում՝ *թաքթաքուր, փոքրել, կշտապինդ* բառահոլվածների բոլոր բնագրային օրինակներում, ինչպես՝ Պանդուխտք եղիցին, և *թաքթաքուր շրջեսցին*, Հանին գնա ի բանտե անտի, և *փոքրեցին զհերս* նորա, *Կշտապինդ վայելեցեք* ի գալստենե փառաց դորա²⁹:

Կարելի է թերևս ենթադրել, որ գրիչները (կազմող կամ ընդօրինակող), քաջածանոթ պատմիչների երկերին, ուսուցողական նպատակներով հավելել կամ ներառել են մամուլ կառույցները:

Nazik Hovhannisyan (Armenia)

ANALYTIC CONSTRUCTIONS IN THE XVIII C. MANUSCRIPT DICTIONARIES OF SYNONYMS

In the XVIII century manuscript dictionaries of synonyms analytic constructions occupied a considerable place. In the synonymic rows phrase verbs, word combinations with explanatory nuances are differentiate. Those in majority of cases converge at the end of the synonymic row, as if to generalize and conclude it. Most of the compound verbs are formed by verbs *առնել, լինել, առնուլ, ածել, արկանել, տալ*. These constructions by the lexical data are found in the works of Xorenatsi, Yeghishe, Buzand, Parpetsi.

There are also analytic constructions unattested in the dictionaries.

Լիանա Հովսեփյան, Շուշան Ասիլբեկյան (Հայաստան)

ՀՈԼՈՎԱԿԱՆ ԶՈՒԳԱԶԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ V դարի ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ

Հայտնի է, որ գրաբարի հոլովական համակարգն աչքի է ընկնում ինչպես հոլովատիպերի բազմազանությամբ¹, այնպես էլ հոլովական գուգաձևությունների առատությամբ: Մինևույն բառը հաճախ կարող է հոլովվել երկու և ավելի հոլովատիպերով: Այսպիսի բազմազանությունը խնդիր է դնում ճշգրիտ

²² Տե՛ս Գ.Դ.Բ, էջ 196:

²³ ՀԲԲ, հտ. 4, 1945, էջ 97:

²⁴ Տե՛ս Գ.Դ.Բ, էջ 154:

²⁵ Հմմտ. **Ղազար Փարպեցու** Պատմութիւն Հայոց, Հայկական համալսարան, հ.2, Երևան, 1978, էջ 182:

²⁶ Տե՛ս ՆՀԲ, հտ. Ա, էջ 788:

²⁷ ՀԼԴԲ, էջ 503:

²⁸ Ձեռ. 566-ում առկա է *կշտապինդ լինել* տարբերակը (261ա):

²⁹ Տե՛ս ՆՀԲ, հտ. Ա, էջ 803, 1108. հտ. Բ, էջ 961:

¹ Ջահուկյանի «Հին հայերենի հոլովման սխառմը և նրա ծագումը» աշխատության մեջ, որտեղ բերվում են հոլովման բոլոր տիպերն ու ենթատիպերը, բացառություններն ու շեղումները, ներկայացված է 87 հարացույց, որոնցից 75-ը գոյական անուններինն է, իսկ 12-ը ընդգրկում են ածականները, թվականներն ու դերբայները: Եթե նկատի ունենանք, որ այստեղ ներառված չեն հավաքական մասնիկներով կազմված հոգնակիի հոլովումները, օր.՝ *մանկտի-մանկտոյ, մարդիկ-մարդկան, որեւոր-որերոյ* և այլն, ապա այդ թիվն ավելի կմեծանա: Նկատելի է, որ տարբերակային ձևերը հաճախ առաջանում են ոչ թե ամբողջ հարացույցում, այլ այս կամ այն առանձին հոլովածի կազմության մեջ:

վիճակագրական տվյալներով պարզել գուգաձևությունների տեսակները և նրանց բաշխումը տարբեր աղբյուրներում: Ուսումնասիրության նպատակն է պարզաբանել V դարի պատմագրության մեջ հոլովական գուգաձևությունների արտացոլումը թե ամբողջական հարացույցների, թե առանձին հոլովականների սահմաններում: Այսպիսի քննությունը հետաքրքրական նյութ կարող է մատակարարել ինչպես լեզվի պատմական զարգացման ընթացքը, այդ թվում տիպաբանական փոփոխությունները պարզելուն, այնպես էլ այդ գուգաձևությունների պատճառները բացահայտելուն, մասնավորապես կարող է նպաստել որոշելու՝ արդյոք դրանք հնագույն բարբառային տարբերակվածության արդյունք են: Նշված խնդիրները պարզաբանելու համար ուսումնասիրվել են գոյականի հոլովակազական տարբերակները՝ ըստ Ղազար Փարպեցու, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Կորյունի պատմությունների համաբարբառներում եղած նյութի: Սույն զեկուցման մեջ ներկայացնում ենք միայն սեռական հոլովով արտահայտված գուգաձևությունները, քանի որ հոլովման տիպերի առանձնացման, հետևաբար նաև նրանց անվանման համար հիմք ենք ընդունում եզակի սեռական հոլովի կազմությունը՝ մյուս հոլովումներում առկա տարբերությունները դիտելով որպես ենթատիպերի կամ հոլովակազմական փոփոխակների արտահայտություն: Ըստ սեռական հոլովաձևի կազմության սկզբունքի՝ առանձնացվում են հոլովման տիպերը՝ ներկայացվելով արտաքին, ներքին և համակցական խմբերի մեջ:

Դասական գրաբարի համար առանձնացվում են հետևյալ քսանմեկ հոլովատիպերը կամ հոլովումները՝ Ա, Ի, Ո, Ու, Ան, Եան, Նջեան, Ուան, Ի-Ա, Ո-Ա, Ու-Ա, Ոջ-Ա (արտաքին թեքում), Ա, Եա, Ե, Ի, Ու, Աւ (ներքին թեքում), Ա, Ե, Ու (համակցական):

Նշենք, որ գրաբարի հոլովատիպերի վերոնշյալ կառուցվածքային դասակարգումը հաշվի է առնում հայագիտության մեջ մինչև հիմա արված ուսումնասիրություններն ու դասակարգումները, ներառում է բոլոր «շեղումներն» ու «անկանոնությունները» և հնարավորություն է տալիս միասնական կառուցվածքային հատկանիշի հիման վրա հասնելու դասակարգման առավել լիակատարության ու անհակասականության:

Ի դեպ, գրաբարի հոլովման համակարգը մինչև այժմ չի նկարագրվել հետևողական համաժամանակյա-կառուցվածքային տեսակետից: Սույն զեկուցման հոլովական գուգաձևությունների նկարագրության հիմքում ընկած են հոլովատիպերի առանձնացման՝ Լ.Հովսեփյանի «Գրաբարի հոլովատիպերի կառուցվածքային դասակարգում» հոդվածում առաջադրված սկզբունքները (Ձախուկյանական ընթերցումներ, Երևան, 2012, էջ 148-162):

Նշված հայեցակետից գրաբարի հոլովման համակարգը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է բացահայտել հոլովակազմության և հիմքակազմության հիմնական առանձնահատկությունները, հատկապես տվյալ ժամանակագրական կտրվածքում հիմքի առանձնացման սկզբունքները:

Հիմքը և՛ պատմականորեն, և՛ համաժամանակյա կտրվածքում փոփոխվող միավոր է՝ պայմանավորված բառակազմական և բառափոխական գործընթացներով: Յուրաքանչյուր միավորի կցման ժամանակ նախորդ միավորը հիմք է ծառայում հաջորդի համար: Բառակազմության դեպքում սկզբնահիմքը կամ առաջնային հիմքը հերթականորեն կցված բոլոր միավորների առանձնացմամբ ստացված բառակազմական կամ ձևակազմական տեսակետից տարբեր կառուցվածք ունեցող միավորն է: Սկզբնահիմքը բառակազմական տեսակետից այլևս չհատույթավորվող միավորն է, որը կարող է կազմված լինել մեկ արմատից, կամ արմատից և որևէ հիմքակազմ տարրից, կամ կարող է ունենալ բառի ձևաբանական հարացույցի որևէ անդամին համընկնող քերականական ձևավորում:

Բառափոխության դեպքում բառի ձևաբանական սկզբնահիմքը հոլովիչ ներառող, վերջավորությանը հակադրվող այն անփոփոխ մասն է, որն առկա է բոլոր հոլովաձևերում՝ անկախ ավելացող մասնիկների քանակից: Գրաբարում այսպիսի սկզբնահիմք կարելի է առանձնացնել միայն արտաքին թեքման մեջ. այն համընկնում է ուղղական հոլովին և չունի քերականական բեռնվածություն: Մինչդեռ ներքին թեքման դեպքում անհնար է քերականորեն չեզոք սկզբնահիմք առանձնացնել, քանի որ հիմքը և վերջավորությունը գծային հաջորդականությամբ անհնար է անջատել: Եթե արտաքին հոլովման դեպքում քերականական իմաստների կրողները վերջավորություններն են՝ հոլովաթվանիշ ձևությամբ, ապա ներքին թեքման դեպքում քերականական իմաստները արտահայտվում են հիմքի կրած փոփոխություններով, այն է՝ ձայնավորների հերթագայությամբ: Սրանով էլ հենց պայմանավորված է հիմքակազմության քննության կարևորությունը հոլովների ուսումնասիրման ժամանակ:

Գոյականների հոլովման մեջ գործ ունենք երկու կարգի հիմքերի հետ՝ սկզբնահիմքի և ձևաբանական արժեք ունեցող փոփոխություններով արտահայտված հիմքի: Սրանցից առաջինը սկզբնահիմքն է, որը համընկնում է բառի ուղիղ ձևին: Ստորև ներկայացնում ենք սեռական հոլովի հոլովական գուգաձևությունները, որոնց հոլովման մեջ գործ ունենք անփոփոխ սկզբնահիմքի հետ.

| Թիվ | Չուգաձևություն | Օրինակներ |
|---------|----------------|---|
| Եզակի | n-ու | Այրարատոյ-Այրարատու, չափոյ-չափու, համարոյ-համարու |
| | ի-ո | գեհենին-գեհենոյ, ուժի-ուժոյ, աղանդին-աղանդոյն, |
| | ա-ու | Խոսրովայ-Խոսրովու, Յոհանայ-Յոհանու |
| | ու-ան | մահու-մահուան |
| | ա-ոս | Նիխորայ-Նիխորոյ, Գնեյայ-Գնեյոյ, Բասենոյ-Բասենայ |
| | ի-ու | լեզուի-լեզուոյ, առաւօտի-առաւօտու, գանձի-գանձու |
| | ա-եայ | Թորգոմայ-Թորգոմեայ |
| | ա-ի | Սամուէլայ-Սամուէլի, Մուշեղայ-Մուշեղիի, Հայկայ-Հայկի |
| | n-ու | երիցոյ-երիցու, Տարօնոյ-Տարօնու, համբաւոյ-համբաւու |
| | ա-ու | Եփրատայ-Եփրատու, Յովսեփայ-Յովսեփու, Անտիոքայ-Անտիոքու |
| | n-ու | Այրարատոյ-Այրարատու, չափոյ-չափու, համարոյ-համարու |
| Հոգնակի | աց-ից | ախոյենաց-ախոյենից, կանոնաց-կանոնից, տոհմաց-տոհմից |
| | ոց-ից | վաներայոց-վաներայից |
| | ից-ուց | վնասից-վնասուց |
| | աց-ուց | գօրաց-գօրուց |
| | եաց-ոց | երկաթեաց-երկաթոց |

Սկզբնահիմքը, համընկնելով բառի ուղիղ ձևին և պահպանվելով ամբողջ հարացույցում, կարող է կրել շեշտափոխական հնչյունափոփոխություններ:

| Թիվ | Չուգաձևություն | Հնչյունափոփոխություն | Օրինակ |
|---------|----------------|----------------------|--|
| Եզակի | ի-ո | ի>Ք, ու >ը | բաժին-բաժնի-բաժնոյ, խորհուրդ-խորհրդի-խորհրդոյ |
| | եան-ո | ու >ը | խորհուրդ-խորհրդեան-խորհրդոյ, ծնունդ-ծննդեան-ծննդոյ |
| | եան-ի | ի>ը, ու >ը | հանգիստ-հանգստեան-հանգստի, ժողովուրդ-ժողովրդեան-ժողովրդի |
| | ա-ի | եա >ե, ի>Ք, | Հմայեակ-Հմայեկայ-Հմայեկի, Դաւիթ-Դաւթայ-Դաւթի |
| | ի-ո | ոյ >ու | գոյժ-գուժի-գուժոյ |
| Հոգնակի | ից-աց | ի>ը, ու >ը | վիշտ-վշտից-վշտաց, գունդ-գնդից-գնդաց, |

Հնչյունական փոփոխություն կարող է լինել միայն զուգաձևության մի եզրում, ինչպես՝ Արծխայ-Արծախայ, Բարսդի-Բարսեդի, ջրոց-ջուրց, Դատաբենայ-Դատաբայ, Ջաւենայ-Ջաւինայ, Հրեւշղումայ-Հրեւշղոմայ, Վահրիճի-Վահրճայ, Շապուհոյ-Շապհու և այլն:

Ներքին թեքման հոլովատիպերի դեպքում հիմքի հնչյունական փոփոխությունները ձևաբանական արժեք ունեն, և ուղիղ ու թեք (ուղղ. – սեռ.-տր.) հոլովաձևերի միջև գծային հաջորդականություն չկա՝ ի տարբերություն արտաքին թեքման հոլովաձևերի որտեղ առկա է հիմքի և վերջավորության գծային հաջորդականություն: Ներքին թեքման հարացույցներում հնչյունական հերթագայությունների հետ միասին կարող են հանդես գալ նաև հոլովական վերջավորություններ, որով առջանում է գծային հակադրություն քերականորեն ձևավորված հիմքի և հոլովական վերջավորությունների միջև:

Ձևաբանական արժեք ունեցող փոխափոխություններով արտահայտված հիմք ունեցող զուգաձևություններ գրեթե չեն հանդիպել նշված համաբարբառներում. միայն երկու օրինակ՝ *աւր>աւուր-աւրի, հայր>հարց-հարանց*: Հանդիպած երկու դեպքերից մեկում (*աւր*), ինչպես տեսնում ենք, նշված հիմքը արտահայտված է ոչ թե զուգաձևության երկու, այլ միայն մեկ եզրում:

Ստորև աղյուսակների տեսքով ըստ առանձին հեղինակների ներկայացնում ենք հոլովական զուգաձևությունների պատկերը հանդիպումների քանակով, որտեղ երևում է, թե զուգաձևություններից յուրաքանչյուրը որ հոլովատիպին է պատկանում.

| Կորյուն | գիշերոյ-գիշերի (2,1), Դաւթայ-Դաւթի (1,1), մանկտոյ-մանկտոյ (1,1) |
|-----------------|--|
| Եղիշե | Աղանդի-աղանդոյ (1,1), աւերածոյ-աւերածի (1,1), համարոյ-համարու (3,1), մահու-մահուան (30,5), Յովսեփայ- Յովսեփու (1,1), բերդից-բերդաց (3,1), հարց-հարանց (3,2), մոզաց-մոզուց (18,5), վշտից-վշտաց (1,1): |
| Փավստոս Բուզանդ | Աթանագենի-Աթանագինի (2,1), աղանդոյ-աղանդի (4,1), առաւօտի-առաւօտու (1,1), արծրունոյ- արծրունու (4,3), Արծխայ-Արծախայ (1,2), |

| | |
|-----------------|--|
| | Բարսղի-Բարսեղի (1,1), գանձի-գանձու (1,1), Գնելայ-Գնելոյ (1,13), զուժի-զուժոյ (2,1), Գրիգորի-Գրիգորոյ (36,1), Դատաբենայ-Դատաբայ (2,1), երիցոյ-երիցու (1,2), Եփրատայ-Եփրատու (2,1), Զաւենայ-Զաւինայ (1,7), Զորթուազայ-Զորթուազու (1,1), ընգերոյ-ընգերի (1,1), թշնամոյ-թշնամոյ (1,2), Թորգոմայ-Թորգոմեայ (3,2), Խոսրովու-Խոսրովայ (20,1), Խորիրոյի-Խորիրոյոյ (1,1), Հրելշղումայ-Հրելշղոմայ (1,1), մահու-մահուան (43,15), Մուշեղայ-Մուշեղի (4,23), Ներսէսի-Ներսիսի (23,24), շաբաթի-շաբաթու (1,1), Շապուիոյ-Շապիու (47,1), չափոյ-չափու (2,7), պատասխանոյ-պատասխանոյ (1,1), պատուի-պատուոյ (5,2), Սամուէլի-Սամուէլայ (1,1), սանի-սանու (1,1), Վահրիճի-Վահրճայ (1,1), Վսեմականայ-Վսեմականի (3,1), Տարօնոյ-Տարօնու (11,1), տեղոյ-տեղին (2,1), ախոյենաց-ախոյենից (1,2), արշակունեաց-արշակունց (20,3), արուեստից-արուեստաց (1,1), գնդից-գնդաց (1,4), երկաթեաց-երկաթոց (1,1), զօրաց-զօրուց (95,1), կանոնաց- կանոնից (1,2), հարց- հարանց (16,1), որդոց-որդոց (17,1), պաղեստինացոց- պաղեստինացոց (1,1), վաներայոց-վաներայից (1,2), տոհմաց-տոհմից (4,1): |
| Ազաբանգեղոս | Աւուր-օրի (2,1), դարու-դարի (3,1), Դաւթի-Դաւթայ (1,1), ժողովրդեան-ժողովրդի (5,1), խոզաց-խոզից (2,1), ծննդեան-ծննդոյ (6,1), հանգստեան-հանգստի (4,2): |
| Ղազար Փարպեցի | Աբրահամայ-Աբրահամու (2,1), Այրարատոյ-Այրարատու (4,2), Արտաշեսի-Արտաշեսի (4,1), բաժնի-բաժնոյ (1,1), գեհենի-գեհենոյ (6,1), լեզուի-լեզուոյ (1,1), Խոսրովայ- Խոսրովու (1,6), Խորիրոյեան-Խորիրոյոյ (3,14), հանգստեան-հանգստի (1,1), Հմայեկայ-Հմայեկի (3,1), մահու-մահուան (31,5), Յոհանայ-Յոհանու (4,4), Նիխորայ- Նիխորոյ (1,28), պատուի-պատուոյ (2,14), Վանադայ-վանադեայ (2,2), աղբերաց-աղբերց (3,2), Անձնացեաց-Անձնացոց (8,1), աստուծոց-աստուծոց (1,15), զօրաց-զօրուց (43,1), հարց- հարանց (10,1), վնասից-վնասուց (1,1): |
| Մովսէս Խորենացի | Աղբիանու-Աղբիանոսի (1,1), Աղիովտի-Աղիովտայ (3,1), ամբոխի-ամբոխոյ (4,1), Անտիոքայ-Անտիոքու (6,1), Անտոնեայ-Անտոնիոսի (1,2), Առբերանոյ-Առբերանոյ (2,1), բաժնի-բաժնոյ (4,1), Բասենո-Բասենայ (3,1), Գնելայ-Գնելոյ (2,13), Եփրատայ-Եփրատու (2,3), թուոյ-թուի (1,1), ժողովոյ-ժողովի (6,1), Խոսրովայ-Խոսրովու (29,16), Կաւկասու-Կաւկասոյ-Կաւկասայ (4,1,1), Կրիսեայ- Կրիստսի (3,2), աղբերց-աղբերաց (1,1), Առաւելինաց-Առաւելինից (1,1), համբաւոյ-համբաւու (1,1), Հայկայ-Հայկի (15,2), հաւատի-հաւատոյ (1,2), Հերակլի-Հերակլեայ (2,3), մահու- մահուան (10,55), Յուլիանոսի-Յուլիանու (4,3), Նախճաւանու-Նախճաւանի (2,1), Նունեայ-Նունէի (2,4), Պահլաի-Պահլաւոյ (6,1), ջուրց-ջրոց (8,1), սակերբ-սակերով (1,1), Վրթանիսի-Վրթանայ (1,1), տեղոց-տեղեաց (3,1), ցաւոց-ցաւոց (1,1): |

Liana Hovsepyan, Shushan Asilbekyan (Armenia)

DECLENSION DOUBLETS IN THE V CENTURY ARMENIAN HISTORIOGRAPHY

The declension system of Old Armenian has not only multiform declension types, but also great variety of declension doublets. The declension doublets with their stem structure and parallel endings are presented in this report. The material is taken from the concordances of the V century Armenian historiography (Koriun, Eghishe, Agatangeghos, Pavstos Buzand, Ghazar Parpetsy, Movses Khorenatsy). It is also presented statistic data of all doublets which gives an opportunity to categorize the doublets in accordance with declension types and frequency in future.

Հայկանուշ Մեսրոպյան (Հայաստան)

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Հիսուս Քրիստոսի վարդապետության հետևորդները կոչվում են *քրիստոնյա* և դավանում են նրան որպես գերագույն և միակ աստծու: Բարբառախոս հայերի մեծամասնությունը Քրիստոսի վարդապետության հետևորդ է և ունի տվյալ դավանանքով պայմանավորված կրոնական բառաշերտ: Քրիստոնեական դավանանքի հիմքում ընկած են որոշակի համոզմունքներով ու նյութական պարագաներով պայմանավորված մի շարք իրույթներ:

Չանց առնելով դարերի ընթացքում բազմազան հարանուրությունների կողմից հաստատված ծիսադավանական մի շարք տարբերություններ¹, կարելի է ասել, որ աշխարհի բոլոր քրիստոնյաների համար հիմնական և ելակետային է խաչի պաշտամունքը: Չնայած Հռոմեական կայսրությունում այն պատժամիջոց էր, սակայն Քրիստոսի խաչելությունից հետո վերածվում է փրկության և հավիտենական կյանքի խորհրդանիշի:

Աստվածաշնչական հիմք ունեցող խաչի պաշտամունքով և քարոզչությամբ են պայմանավորված ոչ միայն քրիստոնյա հայերի համոզմունքները, այլև ըստ այդմ բարբառային բառապաշար ներթափանցած կրոնական բազմաթիվ բառերն ու բառակապակցությունները, դարձվածքներն ու նկարագրական արտահայտությունները:

Խաչ բնիկ հայերեն բառը՝ բազմաթիվ բառաբարդումներով, բարբառային հնչափոփոխակներով ու զուգադրություններով բավականին ընդարձակ տեղ է գրավում Հր. Աճառյանի Արմատական բառարանում. «մահապարտներին վրան կախելու փայտ, որ եղաւ յետոյ նշան Քրիստոնէութեան, փխբ. վիշտ, չարչարանք»²:

Բարբառային տարածագործառական լայն ընդգրկում ունի գրական հայերենին բնորոշ *խաչ* անհնչյունափոխ ձևախմբատային միավորը:

Բարբառախոս մի շարք վայրերում արձանագրված են հնչյունական զուգաբանություններ, որոնք արտահայտված են հիմնականում *ա* ձայնավորի և բառավերջին *չ* շնչեղ խուլի տարբերակայնությամբ: Նկատելի է, որ բառասկզբի *խ* խուլ կոկորդայինը բարբառներում հիմնականում հանդես է բերում կայունություն: Միայն թրքախոս հայերը *խ* – ի դիմաց ունեն *հ* հազագ, որը բացատրվում է թուրքերենում *խ* բաղաձայնի բացակայությամբ: Բառը հաջ (հաչ) ձևով գործառական է ժամանակակից թուրքերենում:

Ա > ա // *ա* // *ա* // *ե* // *այ* // *օ* ձայնավորական, *չ > շ* // *ճ* // *ճ*՝ բաղաձայնական հնչյունափոփոխակներով, *կ* խուլ բաղաձայնի, նաև *մ* ձայնորդի հավելումով հնչազուգաբանություններ են արձանագրված բարբառախոս մի շարք վայրերում: Սվեդիայի Խտրբեկ գյուղի խոսվածքի *խաչկ* և Քեսաբի բարբառի *խաշկ*՝ հնչազուգաբանությունների բառավերջում ավելացող *կ* խուլը կարելի է բացատրել շնչեղ խուլ *ք* հոգնակերտի խլացմամբ. Մեքսատիայի բարբառի *խանճ*՝ հնչատարբերակում *մ* ձայնորդը աճական է (ինչպես՝ *կանանչ*, *ճանանչ*):

Մյուս տարածքներում ունենք՝ *խա՜չ* (Շատախ), *խաշ* (Ասլանբեկ), *խաճ* (Մուշ, Համշեն, Սասուն), *խէշ* // *աս խաշ* (Քաբուսիե): *Ա* ձայնավորի քմայնացման ենթ հանդիպում (*խա՜շ*) Առտիալում, Տիգրանակերտում, Քեսաբում, Բեյլանում, Ջեթրունում, Պարսկահայքում: Կեսաբիայի բարբառի *խա՜շ* քմայինով հնչատարբերակը թրքախոս հայերից անցել է նաև թուրքերին և թրքախոս հույներին: Այնթապում և Բեյլանում *խէշ* հնչատարբերակը բազմիմաստ է և *խաչ* մատնանշելուց բացի, ունի «մոտ «իմաստը՝ *իզօ խէշիս*, այսինքն՝ «մոտս արի»»: Արամոյում *խէշ* հնչատարբերակը «իմ մոտ» նշանակելիս դառնում է *խա՜շ իս*, իսկ «նրա մոտ եմ գնում» (հերթում ի խաչա) նախադասության մեջ՝ *խաչա: Խէշ* հնչազուգաբանությունն է գրանցված նաև Լոռու Հաղբատ բնակավայրում, իսկ Թիֆլիսի բարբառում այն դարձյալ հանդես է գալիս բազմիմաստությամբ՝ նշանակելով նաև «սրբապատկեր»: Ինչպես նկատելի է, *խաչ* բառի բազմիմաստության առաջացման պատճառը *խաչ* և *սրբապատկեր* հասկացությունների քրիստոնեական ընդհանուր բովանդակությունն է:

Խօշ հնչատարբերակը մենիմաստ է Համշենում, Համշենից, Սամսունից արտագաղթածներով բնակեցված Աբխազիայի Ալախաձեում, սակայն և բազմիմաստություն է հանդես բերում որոշ բարբառատարածքներում: Այսպես, Ագուլիսում այն՝ միաժամանակ նշանակում է և՛ «խաչ», և՛ «եկեղեցի», Ջեթրունում և Ակնում այն երկնային մարմիններից մեկի անունն է, իսկ Ախալցխայում և Երևանում

¹ Օրինակ, նվիրապետական կարգ չունեցող բողոքականությունը, որը սուրբ հոգու առաջնորդությամբ է մեկնում Ավետարանը, խաչը չի ընդունում և չի խաչակնքվում՝ դա համարելով հեթանոսական սովորույթ:

² Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, Խ. Բ, ԵՊՀ, Երևան, 1971-1979, Ե-Կ – 687 էջ, էջ 333-335:

մատնանշում է խաչի նշանով խաղաթուղթը, որին վանեցիներն անվանում են *սպարի* (կարծում ենք՝ *q + սպարտիա*): Վանում *խօշ* են անվանում խաղողի տեսակներից մեկը: Կարելի է ենթադրել, որ հաղորդության գինին այս խաղողից են պատրաստել:

Ղարաբաղի և Վանի բարբառներում գործառական են *-իկ*, մաս *լ* աճականով՝ *-լուկ* փոքրացուցիչներով կազմությունները, համապատասխանաբար՝ *խաչիկ* և *խաչլուկ*՝ «խաչ» իմաստով:

Վանեցիներն ու նորբայազետցիները *խաչ* բառին հավելում են *ցասման* և օթյաց որոշիչները՝ կազմելով *Ցասման խաչ* և *Օթյաց խաչ* բառակապակցությունները, որոնց վերագրում են առանձնահատուկ գործություն: Օթյաց խաչը Թաղևոս ու Բարդուղիմեոս առաքյալների հանդիպման վայրն է: *Ցասման խաչ* են կոչվում բնակավայրերից հեռու վանքերին կամ արտերին հարակից բլուրների վրա գտնվող խաչքարերը, որոնց շուրջ հյուսված են ժողովրդական հավատալիքներ: «Գրոց բրոցը» այդ մասին գրում է. «Թէ ինչո՞ւ համար ըստած է ցասման խաչ. վասն զի երբ տարածամ ձիւն կամ կարկուտ տեղայ..., այն մարդոց ըրածը չէ, Աստուծոյ ցասումն կը համարին. և այդ ցասման դէմն առնելու համար Բրիստոսի խաչին պատկերը կը բարձրացնեն... երկնից առջև»³:

Քրիստոնեական ելակետային կամ հիմնական *խաչ* նյութական և առարկայական խորհրդանիշի մեծարման և արժևորման հիմքով է առաջացել հայերի մեջ լայնորեն տարածում ստացած *Խաչատուր* անձնանունը, որից ագլուխցիները կերտել են *Խաչի* և *Խաչատրը*, Արարատյան բարբառախոսները՝ *Խաչիկ*, *Խաչօ*, *Խրչօ* հատկանունները: Համշենին հարակից Գյումուշխանեի հայերի խոսվածքում *խաչատուր* –ը հասարակ գոյական է՝ «աշնանային քաղցրահամ տանձ» իմաստով: Հավանաբար տանձի այս տեսակը հասունանում է Խաչվերացի օրերին:

Տիգրանակերտում և Շամախիում առկա է *ա՛* ձայնավորի երկարացումով *խա՛չ* տարբերակը: Նույնահունչ տարբերակը Մուշի և Կարնո բարբառներում այլ բովանդակություն ունի և գործածվում է որպես ասելիքը հաստատելու երդման ձև: Խաչը վկայաբերելու երդման ձևերի հանդիպում ենք մաս բարբառախոս այլ վայրերում: Նոր Նախիջևանում առկա է *խաչը // ախաչը*՝ «խաչը վկա» (=այն *խաչը վկա*): Մշեցիները երդվելիս պարզապես ասում են *խաչ*, Սթանոգի հայերը՝ *խաչն-որ*, Կեսարիայի, Պոլսի հայությունը՝ *խաչ-որ*: Պոլսեցու ասածը հաստատվում էր մաս *խաչվոր մասվոր* հարադրությամբ: Ինչպես նկատելի է, տվյալ դեպքում վկայաբերվում էր ոչ միայն խաչը, այլև հաղորդության մասը, այսինքն՝ Քրիստոսի մարմնի խորհրդանիշը, որը ևս, որպես քրիստոնեական խորհրդանշան, առարկայական-նյութական է: Հավարիկում հանդիպում է *խա՛չը* որոշյալ և շեշտակիր բառը, այսինքն՝ «խաչը վկա թող լինի» (օրինակ՝ «Խա՛չը, Շամա՛ն, ախրի (=վերջում) քու քար սըրտը տանիլա յի ինձ կիրեզման»): Երզնկացին երդման համար մի քանի տարբերակ ունի՝ *խաչ-որ* հարադրությամբ, *խաչօր* կցականով և *խաչօ* արտակարգ հնչյունափոխության ենթարկված տարբերակով: Վանեցիները խոսակցին երդվել են տալիս *իրեստ խաչ խան* մախադասությամբ, պոլսեցիները՝ *երեսդ խաչ հանե* հորդորահրամայականով, մանավանդ երբ հնչածը համարում են անհեթեթություն: Խաչ բառով է կազմված Մուրբ խաչին նվիրված տաղավար տոնը՝ Խաչվերացը: Մուրբ խաչ որոշիչ-որոշյալ բառակապակցությունը խոսակցական հայերենում ձայնավորական և բաղաձայնական հնչյունափոխությունների, *ր* ձայնորդի կորստի արդյունքում դարձել է *սրխտ* // *սպխտ* // *սպխտ* // *սփխտ* (> սըբ + խտ): Կեսարիայի, Այնթապի հայ և հույն թրքախոսների, մաս թուրքերի շրջանում տարածված է Geldi Supxeg, yorğani al, izeri geջ (Եկավ Սփխտչը, վերմակը վերցրու, ներս գնա) ասացվածքը⁴, այսինքն՝ ցրտերն ընկել են և ավարտվել են բացօթյա գիշերելու օրերը. պետք է ներս գնալ: Մուրբ խաչին հաջորդող Վարագա խաչի տոնը մարաշցիների շրջանում ունի *Խաչին թևը* անունը:

Խաչ բառով են կազմված մաս *անխաչ* (Ախալցխա, Վան)՝ 1) «առավոտյան չխաչակնքված», 2) «չխաչակնքված խմոր», *խաչաթոռ* (Արարատյան, Ղարաբաղ)՝ «խաչի քարե կամ փայտե խնձորաձև պատվանդան», *Հազախաչ* (Ղարաբաղ), 1) «հազը բժշկող խաչքար», 2) «սրբատեղիի անուն», *խաչմայր* (Մարաշ)՝ «աստվածահայտնության տաղավար տոնի խաչավալի ջուրը», *խաչփաթաթուկ* (Լոռի)՝ «խաչից պատժված անդամալույծ», *խաչքավոր* (Բուլանուխ)՝ «փոխադարձ կնքահայեր»։ Վերջին բարդության որոշահատկացուցչային բառակապակցական *խաչի քավոր* փոփոխակը Արարատյան, Ղարաբաղի, Մուշի և այլ բարբառներում, Շիրակի խոսվածքում այլ իմաստ ունի և նշում է այն անձը, որը Զորիներին բռնում է օրհնված ջրից հանված խաչը՝ ի տրիստուր եկեղեցու զանձանակին նվիրված գումարի, որը Գորիսում անվանում են *խըչհանեք*:

Մուշի բարբառի Ալաշկերտի խոսվածքում *խաչօրհնեք* բաղադրյալ բառը, որը ժամանակակից հայերենում ունի «նորակառույց եկեղեցու խաչերի օրհնություն» իմաստը, բառիմաստի նեղացման և մասնավորեցման արդյունքում հատկանշում է մի ծիսակարգ, որի ընթացքում օրհնվում է հանգուցյալի գերեզմանի խաչքարը, ապա և հոգեհաց է տրվում: Բարբառագետ Ա. Հանեյանը նշում է, որ Դիարբեքի քաղաքի թաղամասերից մեկը տիգրանակերտցի հայերն անվանել են *Խնչփիգ*, ապա և տարակուսում է տեղանվան բացատրության շուրջ՝ ենթադրելով, որ այն հավանաբար *խաչաբակ* բառն

³ Գրոց բրոց, 117-118:

⁴ Ըստ իրանագետ ք. գ. ք. Վ. Ոսկանյանի:

է, այսինքն՝ եկեղեցու բակ: Դիարբեքիրցիների շրջանում հարցումներ կատարելիս ճշտեցինք այս ենթադրությունը: Այո՛, նախկին Խ՛նչ՛փ՛գ, ըստ ներկայիս դիարբեքիրցիների՝ Հանչեփեկ թաղամասն այսօր կոչվում է Գյավուր մահալլեսի, որտեղ ապրում են սակավ թվով հայեր⁵: Այդ տարածքում է գտնվում վերաբացված Սբ. Աստվածածին եկեղեցին: Ալմիայտ է, որ մասնավոր իմաստից ընդհանուրին անցնելու համաբանությամբ էլ թաղամասն ստացել է այդպիսի անվանում⁶:

Խաչվառ գրական փոխառությունը Դողկուզի և Ռշտունիքի խոսվածքներում մնում է անփոփոխ, իսկ Արարատյան, Ուտիք, Կոթի տարածքներում դառնում է *խաչփառ*, Ագուլիսում՝ *խաչվոռ*: Ինչպես հայտնի է, խաչվառը եկեղեցական կամ աշխարհիկ թափոթի առջևից տարվող խաչաձև ձողով քառանկյուն խաչադրոշ է՝ վրան տերունական արծաթյա պատկեր, որը կիրառում են եկեղեցական հանդիսությունների ժամանակ: Բարբառախոսներն այն կոչում են *խաչալամ* (Խոյ, Սալմաստ, Քյոռփալու), *խաչալեմ* (Գյումուշխանե, Պոլիս), *խաչա՛լա՛մ* (Կեսարիա): *Խաչա՛լա՛մ* ա ձայնավորի քմայնացումով տարբերակը Կեսարիայի թրքախոս հայերից անցել է նաև թուրքերին և թրքախոս հույներին:

Խաչկալ կցականը Արարատյան, Ղազախ, Լոռի, Կոթի, Շիրակ, Խոյ, Վան բարբառառածքներում ունի «եկեղեցու վեմ քարի վրա շինված կառույց», Պոլսի բարբառում՝ «եկեղեցու խորան» իմաստները, իսկ ահա Ղարաբաղի բարբառում *խաչկալ* և *խաչամեկիք*⁷ բառերը գործածվում են աշխարհիկ՝ «դռան վրայի խաչաձև փայտ» իմաստով: Պետք է հավելել, որ Ղարաբաղի բարբառում *խաչամեկիք* բառը բազմիմաստ է և միաժամանակ նշանակում է «Քրիստոսի խաչելության փայտ», ինչպես նաև «խաչաձև, խաչահանգի»: Այս նույն իմաստն է արտահայտում նաև Սթանոզի *խաչափայտ* բազմիմաստ բառը, որը նախ՝ նշանակում է «նոստայնակի սանրը շարժող տախտակ», ապա և՛ «դռան վրայի խաչաձև փայտ»: Պետք է նշել, որ բարբառային բառարանները նման բացատրություն տալիս չեն հստակեցնում՝ դա փայտյա դռան վրա ամրացված խաչ է, թե փականն է հանդիպակաց փայտի կտորի հետ խաչ կազմում: Առաջինի դեպքում, իհարկե, կունենայինք ծիսականությունների խորը բովանդակություն, որը կարելի է պայմանավորել հինկտակարանյան իրողությամբ: Հայտնի է, որ Եգիպտոսից դուրս գալու նախորդ երեկոյան, երբ երբայեցիները մորթում են զոհաբերվելիք կենդանին, աստված պատվիրում է. «Վերցրե՛ք մի խուրձ ծոթրին. այն թաթախե՛ք դռան մօտ եղած արեան մեջ եւ դրանով նշան արե՛ք դռան սեմին երկու տեղ եւ դռան շրջանակի վերելը»⁸: Ելից գրքից նաև իմանում ենք, որ դռների վրա նշան չունեցող եգիպտացիների տները պատուհասվում են աստծու կողմից: Կարելի է ենթադրել, որ *խաչկալը* կամ *խաչափայտը* դռների վրա դրվել է աստվածային հաճությանը արժանանալու հավատալիքի հիման վրա և ունի կրոնակեղեցական բովանդակություն: «Բիւրակն» հանդեսը այս կազմություններին ավելացնում է Համշենի *խաչնիշ*՝ «նիզ», Սվեդիայի *խաչնել*՝ «խաչանիշ նշանով առանձնացնել» (*դուռը խաչնեցի՞ր*) և Համշենի, Տրապիզոնի բարբառների *խաչինել* բայերը՝ հետևյալ բացատրությամբ. «Դուռը փակել՝ նիզը դնելով (գիւղական դռների նիզերը փայտեայ են և երբ հորիզոնական կերպով նիզուի, ուղղահայեաց դուրսած փայտի մեջից անցնելով խաչ է գոյացնում, որից էլ ծագում է այս բառը»⁹:

Մի շարք կազմություններում *խաչ* բառն ի հայտ է գալիս իր նախնական՝ աշխարհիկ բովանդակությամբ: Ղրիմի, Նոր Նախիջևանի հայերը սովորույթ են ունեցել *խաչը* աշխարհիկ հանգամանքներում չգործածել: Օրինակ, «խաչաձև, խաչահանգի» բառին որպես հոմանիշ գործածում էին *խաչմերերկինք*, այսինքն՝ «խաչ մեր երկինք» արտահայտությունը: «Մասսեաց աղանին» այդ մասին գրում է, որ դա անում էին «բարեպաշտական երկիրաժողովրդամբ»՝ չուզելով խաչին անունը հասարակ բաներու վրայ գործածել, միանգամայն և նշանակությունը պահել¹⁰:

Հետաքրքիր բացատրություն ունի Երևանի և Աշտարակի խոսվածքներին բնորոշ *խաչափունջ*՝ «փնջած հասկ» բառը, որի աշխարհիկ իմաստով է պայմանավորված *խաչփունջ* բառի կրոնական իմաստը: Պ. Պողոսյանի «Սոս և Վարդիթերի» ծանոթագրություններից մեկում գրված է. «Երբ արտը քաղում են, վերջացնում, ցորենը խաչաձև կապում են և բերում տիրոջը նվիրում, նրանից միրգ առնում որպես ընծա, այս սովորությունը մտել է և այգիների աշխատանքների ժամանակը. երբ մի այգին մշակելուց ավարտում են, այն երեկոյին միրգ են բերում և ուրախություն անում. այս ուրախության անունն էլ մնացել է խաչփունջ»¹¹: Փաստորեն *խաչփունջն* ինչ-որ առումով պարունակում է և՛ ազգային, և՛ ժա-

⁵ Ներկայիս դիարբեքիրցիները հիշում են, որ Խաչաբակը եղել է հայ արհեստավորների, հատկապես ոսկերիչների հարուստ թաղամաս: Այսօր նրանք ճանաչում են շատ քիչ թվով հայերի: Դիարբեքիրի հայերը գիտեն պարսկերեն, արաբերեն, թուրքերեն, մասամբ քրդերեն: Միմյանց հետ հաղորդակցվում են հայերենով, հասարակական վայրերում՝ թուրքերենով: Քիչ չէ նաև ծպտյալ հայերի թիվը: Իրենց ազգային ինքնությունը բացահայտում են հիմնականում տարեց հայերը:

⁶ Տե՛ս նաև <http://www.suryaniler.com/suryani-tarihi.asp?id=406> (Հանչեփեկ) <http://www.arasyayincilik.com/tr/kitaplar/gavur-mahalles/85> (Գյավուր մահալլեսի) <http://hurarsiv.hurriyet.com.tr/goster/printnews.aspx> (Մկրտիչ Մարկոսյան):

⁷ Ղարաբաղում նշանակում է նաև «խաչաձև, խաչահանգի»:

⁸ Ելից, 12, 22:

⁹ Տե՛ս «Բիւրակն», 1899, էջ 655:

¹⁰ Տե՛ս «Մասսեաց աղանին», 1863, էջ 202:

¹¹ Պ. Պողոսյան, Սոս և Վարդիթեր, 1887, էջ 83:

մոցի կրոնական իմաստ: *Խաչափունջ* բառին հոմանիշ կարելի է համարել Բուլանուխի խոսվածքի *խաչքուս* («ցորենի ծղոններից խաչաձև հյուսվածք») կցականը:

Ինչպես նշեցինք, բարբառային բառապաշարը հարուստ է *խաչ* բառով կազմված դարձվածքներով, նկարագրական բառակապակցություններով, համեմատություններով ու փոխաբերություններով և այլ կազմություններով:

Կարևոր բարբառի Շիրակի խոսվածքում *խաչը կոթով կուլ կու տա* փոխաբերությանը հոմանիշ է Պոլսի բարբառի *խաչը ծոցեն // գրպանեն կը հանէ* դարձվածքը՝ «առաքինի և բարեպաշտ է ձևանում, սակայն վարպետորդի է» իմաստով: Գրական հայերենի *իր խաչը կրել* դարձվածքին հոմանիշ է *խաչը քաշել* հարադրությունը՝ «փր տառապանքը կրել» իմաստով, որը լայն տարածագործառնականություն է հանդես բերում ոչ միայն բարբառներում, այլև ժողովրդախոսակցական լեզվում: *Խաչով խաչվել* –ն ունի «մի բան մեկի ձեռքով անհայտանալու» իմաստ: Թիֆլիսի բարբառում հոգեկան հավասարակշռությունը կորցնելուն ասում են *խաչեն բռնվիլ*, այսինքն՝ «դիվահարվել», Ղարաբաղի բարբառի *մի խաչով թաղվիլ* արտահայտությունը միևնույն իրավիճակի մեջ գտնվելու նշանակ է: «Ո՞ր խաչիցն է», – հարցնում են երևանցիներն ու դարաբաղցիները՝ ի զարմանս անապատելի արարքի:

Haykanush Mesropyan (Armenia)

LEXICAL EXPRESSIONS OF CHRISTIAN SYMBOL IN ARMENIAN DIALECTS

The article makes observations on the dialect expressions of the main symbols referring to the Christianity such as Jesus, Christian, believer, cross, as well as the linguistic units relating to the religious concepts and their equivalents.

Ժաննա Միքայելյան (Հայաստան)

ԲԱՅԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԽՍԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Հայերեն բարբառների երկրորդական նկարագրական ժամանակները երբևէ հատուկ չեն հետազոտվել բարբառագետների կողմից: Չի կատարվել նաև դրանց տարածքային քննությունը: Լավագույն դեպքում աշխատությունների հեղինակները բավարարվել են՝ տալով այդ ժամանակաձևերի ընդհանուր պատկերը: Մինչդեռ առանց այս կառույցների լուրջ ուսումնասիրության թերի կլինեին հայերեն բարբառների բայական համակարգերի ամբողջական պատկերը:

Մենք ուսումնասիրել ենք, ըստ Գ. Զահուկյանի դասակարգման¹, Արևելյան խմբակցության Ղարաբաղի, Արարատյան, Մեղրու, Խոյ-Մարաղայի, Ագուլիսի, Ջուղայի, Կոզենի, Շամախիի, Բուրդուրի, Արդվին-Թբիլիսիի, Հավարիկի բարբառների բայի հիշյալ ժամանակները: Հետազոտման համար նյութեր ենք քաղել ինչպես բարբառագիտական համապատասխան աշխատություններից, այնպես էլ բարբառով գրված բանահյուսական նյութերից: Եվ քանի որ գրական արևելահայերենը ձևավորվել է Արարատյան բարբառի հիման վրա, օգտվել ենք նաև 19-20-րդ դդ. հեղինակների գեղարվեստական երկերից, որոնցում դեռևս, մանավանդ ուրիշի ուղղակի խոսքում, պահպանված են հիշյալ վերլուծական ժամանակաձևերը:

Մույն հոդվածում կաշխատենք ներկայացնել թվարկված բարբառներում նկարագրական երկրորդական ժամանակների տարածքային քննությամբ:

Ըստ բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի կազմության՝ մեր ուսումնասիրած բարբառային միավորները պատկանում են ՈԻՄ և ԼԻՄ ճյուղերին: Իսկ Արդվին-Թբիլիսիի բարբառի խոսվածքներում բայն ունի և՛ ՈԻՄ, և՛ ԿԸ ճյուղի խոնարհումներ: Դա պատահական չէ, քանի որ հիշյալ տարածք ժամանակին ներգաղթյալներ են եկել Արևմտյան Հայաստանից:

Ընդունված է երկրորդական համարել բայական վերլուծական եղանակաժամանակային այն ձևերը, որոնցում որպես օժանդակ բայ են ծառայում հիմնականում *լինել*-ը, որոշ դեպքերում էլ *կամ*-ը, *սլիտեն*-ը և *ունեն*-ը: Խնդրո առարկա եղանակաժամանակային այս ձևերը, իհարկե, առաջացել են պատմական որոշակի ժամանակահատվածում, իսկ նրանց գործառնական ակտիվությունն այսօր կախված է տվյալ բարբառային միավորի կենսունակության չափից: Այս վերջին գործոնը դեր է խաղում այդպիսի ձևերի՝ գրական խոսակցական լեզու անցնելուն, ինչպես օրինակ՝ Արարատյան և Ղարաբաղի բարբառներից են դրանք թափանցել:

¹ Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, ԳԱ հրատ., 1972, էջ135-136:

Բայի բաղադրյալ երկրորդական կառույցները սովորաբար կազմվում են բոլոր եղանակներով, հազվադեպ՝ հրամայականով: Վերջինով միայն 1-2 դեպք է արձանագրված հետազոտողների՝ մեր կողմից ուսումնասիրված բարբառագիտական աշխատություններում:

Նկարագրական այս բայաձևերում մեծ հաճախականությամբ խոսքի շղթայում գործառնում են հիմնական բայի **հարակատար** և **ապառնի** դերբայները: Այսպես՝ հարակատար դերբայ՝ *գրած* (Արարատ.), *կիրսծ* (Գրք.), *նիզած* (Խոյ-Մոլ.), *ըսիս* (Կարճևանի խավ.՝ Մեղրի), *թակօծ* (Ֆինայի խավ.՝ Ագուլիս) և այլն, ապառնի դերբայի օրինակներ՝ *գրելու, կիրելու, կրթքընկան, թրկելաց* և այլն:

Մյուս դերբայներից գործածական են **անկատարը** (*գրում, կիրում, կիրիս, տալում*) և **համակատարը** (*գրելիս, կիրելիս, խօսալիս*): Օրինակ՝ *կիրում ըմ (ի)լնլ, կիրիս ա ըլէ, տալում ա էլէ*: Իսկ ՌԽՄ ճյուղի խոսվածքներն ունեն մաս համակատար դերբայով երկրորդական բաղադրյալ կազմություն՝ *կիրելիս ըմ լնլ*: Հարկ է նշել, որ հաճախ բարբառագետները համակատարը (նույն է՝ գուգընթացականը) առանձին դերբայ չեն համարում, այլ այն նույնացնում են անկատարին:

Արարատյան բարբառի միավորներում և Թբիլիսիի խոսվածքում հաճախ են գործառնում **անկատար** և **համակատար** դերբայներով երկրորդական բայական կառույցներ: Այսպես. *Թրքավորը ուզենալիս ա ըլում* (սահմ. ներկա) *պառավի գրուխը տա: Օվ թասով ա տալիս ըլում*, *սրանք խանով էն տալիս, օվ խանով ա ըլում տալիս* (սահմ. ներկա), *սրանք ջրվալով էն տալիս*²: Հացըն ու ջուրն էլ վօր փօղօվ ըլին ծախում ու առնում (ըղծ. ապառ. անկատ.), *էլ ու՞մ դուռը գրնաս, ու՞մ ձեռքը դէմ անէս*³: Վօջ մէկ բուռը հօդի արժանանամ, թէ սուտ ըլին ասում (ըղծ. ապառ. անկատ.)⁴: *Էս չախիս ի՞նչ կուլիս շինում* (սահմ. ներկա) *դու էստի*⁵: *Կրնիկըս մընում կուլի* (սահմ. ներկա), *ամա մէ քիչ պրավաժատ կօնիմ*⁶:

Արդվին-Թբիլիսիի բարբառի Թբիլիսիի խոսվածքում, ի թիվս մյուս՝ հարակատար, ապառնի դերբայների, գործառնում է նաև հիմնական բայի **վաղակատար** դերբայը, որը մեկ այլ արևելյան բարբառի՝ մման կառույցներում չի հանդիպում: Այս դեպքում այն համարժեք է դառնում հարակատար դերբային: Օրինակ՝ *Հաքիլ ըլիս զար-զարբարընիսս ալօլ*⁷: Նույնն է՝ *հաքած ըլիս: Զու արիվը, իմացիլ կուլի վուր փուղ շատ ունիմ...*⁸: ... *վուր ջէր օջօլու էլ չըլին տըվի*⁹: ... *նա մըտէն ըլի գըղի գրուխը*¹⁰: Նկատենք, որ այս խոսվածքում վաղակատար ու անորոշ դերբայներն ունեն նույն՝ *իլ* վերջավորությունը, և երբ վաղակատարը օժանդակ բայից հետո է դրվում, նրա վերջին *իլ* հնչյունն ընկնում է¹¹:

Վերոբերյալ դերբայների հետ որպես օժանդակ բայ հանդես եկող *լինել*-ը Արևելյան խմբակցության բարբառային միավորների՝ խնդրո առարկա բայական կառույցներում խոնարհվում է սահմանականի ներկա, անցյալ անկատար, անցյալ կատարյալ, ապառնի և անցյալի ապառնի, վաղակատար և անցյալի վաղակատար, պայմանականի ներկա և անցյալ, ըղծականի ներկա և անցյալ եղանակաժամանակային ձևերով: Մի քանի օրինակ. *ըլէլի յէմ, ըլէլի յէմ էր, ըլամ* և այլն (Խոյ-Մարաղա), *իլնլ ըմ, իալ ի, ինէմ* և այլն (Գարաբաղ), *ըլնում էմ, ըլնում էս, ըլնէմ* և այլն (Արարատյան), *ինիս ըմ, ինիս էի, ինիմ* (Կոզեն) և այլն: Եզակի դեպքերում այն խոնարհվում է նաև հրամայական եղանակով (դրան կանդադառնանք ստորև):

Ուշագրավ մեկ դիտարկում. Մեղրու բարբառում և Գարաբաղի որոշ խոսվածքներում *եմ* օժանդակ բայը անցյալի պարզ ձևեր՝ *էի, էիր, էր* և այլն, չունի, դրանց փոխարինում է *լինել*-ի (Մեղրու բրբռ.-ում՝ *նիլ*) սահմանականի վաղակատար ժամանակը, որը կազմվում է *եմ* օժանդակ բայի ներկայով և հիշյալ բայի վաղակատար դերբայով: Այսպես. Մեղրու բրբռ.-ում *լէ*-ն է վաղակատարը (*ը/իմ, ը/իս, ա* և այլն) *լէ*, Գարաբաղում՝ *իլնլ. իլնլ (ըմ, ըս, ա, և այլն)*: Բարբառային մմանատիպ միավորներում երկրորդական ժամանակների անցյալի ձևերը բավական բարդ կազմություն ունեն: Օրինակ՝ Մեղրու բարբառի Կարճևանի խավ. *ըսիս իմ լէ միս* «ասելիս էի լինում» (*միս*-ը «լինել» բայի անկատար դերբայն է), *ըսիս իմ լէժ* «ասելիս եմ եղել»: Այստեղ էլ *լէժ*-ը նույն բայի հարակատար դերբայն է՝ *իլնլ > լնլ > լէժ* անցումով: Իսկ սահմ. եղ.-ի անցյալի վաղակատարն է՝ *ըսիս իմ լէ լէժ* «ասելիս եմ եղել»: Հարկադրական եղանակի ներկան՝ *մատիլ ըսըլացուկ նիմ*, անցյալը՝ *մատիլ ըսըլացուկ նիմ լէ* «պետք է ասելու լինեի»¹² (*մատիլ*-ը

² Հայ ժողովրդական հեքիաթներ, Երևան, ԳԱ հրատ. 1959, հ. 1, էջ 15, 22:

³ Խ.Աբովյան, Վերք Հայաստանի, Երևան, 1981, էջ 70:

⁴ Նույն տեղում:

⁵ Գ. Մունդուկյան, Երկեր, Երևան, 1984, էջ 68:

⁶ Նույնը, էջ 64:

⁷ Մայրա-Նովա, Խաղերի ժողովածու, Երևան, Սով. գրող. հրատ., 1987, էջ 22:

⁸ Գ. Մունդուկյան, Երկեր, Երևան, 1984, էջ 78:

⁹ Նույնը, էջ 63:

¹⁰ Ա. Քոչոյան, Թբիլիսիի բարբառի կառուցվածքային առանձնահատկությունների արտացոլումը Գ. Մունդուկյանի երկերում, Թեկնածուականատեսություն, Երևան, 1958, էջ 122:

¹¹ Նույնը, էջ 63:

¹² Հ. Մուրադյան, Կարճևանի բարբառը, Երևան, 1960, էջ 159:

եղանակավորող բառ է): Որպես եզակի դեպք փաստենք, որ «լինել» օժանդակ բայը բերված բարբառային միավորներում եղանակաժամանակային նույն կառույցում կարող է նաև երկու դերբայական ձևով հանդես գալ՝ *լէ նիս* (վաղակատար + անկատար), *լէ լէծ* (վաղակատար+ հարակատար): Սա բարբառներում եզակի հանդիպող երևույթ է:

Նկարագրական երկրորդական ժամանակաձևերում գործառող հաջորդ օժանդակ բայը *կամ*-ն է: Այն կենսունակ է հատկապես Արարատյան, Ղարաբաղի, Շամախիի բարբառներում: Սրա՝ որպես պակասավոր բայի, խոնարհման ժամանակները սահմանափակ են: Հիմնական բայի հետ գործառում են *կամ*-ի միայն սահմանականի ներկա և անցյալ անկատար ժամանակները: Օրինակ. *Սաքոյէնց տուն գնացած կա՞ն/կայի՞ր* (Արարտյան). *Խօխէքքը ընդրանց հանդումը տեսած կան/կային* (Ղարաբ.). *Կիրած կանք* (Շամախի) և այլն:

Ղարաբաղի բարբառում բայի նման հարադրական կառույցներում որպես օժանդակ բայ է ծառայում նաև *պիտէմ*-ը՝ կազմելով հարկադրական եղանակի անցյալ ժամանակը: Այն հիմնական բայի հարակատար դերբայի կողքին խոնարհվում է սահմանականի անցյալ անկատար ժամանակով: Այսպես. *Ընդրան յէս տեսած պիտի (պիտիր, պիտէր, պիտինք, պիտիք, պիտին)*: Սրան համարժեք կարելի է կազմել նաև բայի երկրորդական ժամանակաձև *պէտմա* եղանակավորող բառի և *ինիլ* խոնարհված օժանդակ բայի օգնությամբ. *Յէս ընդրան պէտմա տեսած ինի*:

Շամախիի բարբառում Ռ. Բաղրամյանը «Երկրորդական բաղադրյալ ձևեր» վերտառությամբ բաժնում ներկայացնում է բայի հարկադրական եղանակի անցյալ ժամանակով կազմված երկու օրինակ. *Յէս էլ բրդէր կարդացած չիլի, տո՛ւ էլ բրդէր կարդացած չիլիր* (Սադյանի խավ.):

Այստեղ *բրդէր*-ը քարացած բառաձև է: Կարծում ենք՝ *պիտի>բրդի* եղանակավորող բառի առաջին վանկին՝ *բրդ*-, ավելացել է *լինէր>ինէր* դերբայի վերջին *-եր* վանկը: Հեղինակը գուցահեռաբար նաև տալիս է *յէս ալ քիդի կարդացած չիլի* հարադիր կազմությամբ օրինակը, որը նույն բարբառի Մադրասա գյուղի խոսվածքից է¹³: Բարբառային այլ միավորներում հարկադրական եղանակի գլխավոր, թե երկրորդական ժամանակները հիմնականում կազմվում են *պիտի* բառի, քիչ դեպքերում՝ *մէտիլ, մատիլ* եղանակավորող բառերի օգնությամբ: Իսկ Ջուղայի բարբառի Նոր Ջուղայի խոսվածքում Հ. Աճառյանի վկայությամբ գործառում է հարկադրական եղանակի *պըլա* բառաձևը, որը, ըստ հեղինակի, բարդ կառույց է, և այն «պիտի լինի» բառակապակցության հապավումն է: Սա թարգմանվում է՝ «կարող է լինել, որ...», օրինակ՝ *պըլա բէրէմ*¹⁴:

Թբիլիսիի խոսվածքում նկարագրական երկրորդական ժամանակներում հանդիպում է *ունէմ*-ը՝ որպես օժանդակ բայ, որը, ինչպես վերը նշեցինք, հատուկ է Արևմտյան խմբակցության բարբառներին: Մեկ օրինակ՝ Սայաթ-Նովայի խաղերից. *Արտասունքս արուն շինեցիր, խիլքս գրիխէս ունիմ տարած*¹⁵ (սահմ. հարակատար):

Կոզենի բարբառը իր մեկ՝ Կոզենի խոսվածքով, ըստ սահմանականի ներկա ժամանակի կազմության, պատկանում է ԼԻՍ ճյուղին: Որպես բարբառի խոնարհման համակարգի առանձնահատկություն նշենք, որ, ինչպես գլխավոր, այնպես էլ երկրորդական բաղադրյալ ժամանակների կառույցներում եմ օժանդակ բայը խոսքի շղթայում հիմնականում բացակայում է: Այսպես. *կընաս ինի, սանէլի մի շէն* («Գնալիս (ե) լինում, տեսնում մի գյուղ»): *Էտ կընիկը թաքավերի յէդը կընիկը լւնծ, տըղին մօրթած, գըլժիսը քնրվանի բաղանէլընը դըրած լւնծ*¹⁶: *Էական* (եմ)-ը գործառում է հատկապես հարադիր բայերի հետ, օր.՝ *տո՛ւս ըմ յէկած*, կամ էլ բայի ժխտական խոնարհման ժամանակ, երբ այն հիմնական բայից հետո է դրվում.. օրինակ՝ *յերթած չըմ լւնծ. կընաս չի ինի. դըրած չի լւնծ*:

Վերը նշեցինք, որ հրամայական եղանակը հազվադեպ է ներկայանում երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերով: Հ. Աճառյանը նման փաստ է նկատել Մարաղայի խոսվածքում: Այսպես՝ *նիզած յիլ* «ուզած եղի՛ր» և *նիզէլու յիլ*¹⁷:

Հրամայական եղանակի խնդրո առարկա ժամանակաձևի օրինակ ենք առանձնացրել նաև Արդվին-Թբիլիսիի բարբառի Արդվինի խոսվածքում՝ միայն եզակի թվով՝ *խօսած էղի՛ր*:

Արդյո՞ք բոլոր բարբառներում են գործառել կամ՝ գործառում բայի նկարագրական երկրորդական ժամանակները: Մեղրու խոսվածքին (ԼԻՍ ճյուղին պատկանող) նվիրված իր աշխատությունում Է. Աղայանը չի առանձնացնում երկրորդական բաղադրյալ ժամանակներ, այսինքն՝ դրանք այդտեղ իրականում չկան: Հեղինակը գրում է, որ բայական համակարգում՝ հատկապես անցյալ ժամանակաձևերում, գերակշռում են վերլուծական, հաճախ երկուսից ավելի բաղադրիչներով, այնպիսի կառույցներ, որոնք իրականում Մեղրու խոսվածքի հենց գլխավոր ժամանակներն են: Օրինակ՝ *մընաս իմ*

¹³ Ռ. Բաղրամյան, Շամախիի բարբառը, Երևան, ԳԱ հրատ., 1964, էջ 170:

¹⁴ Աճառյան Հ., Քննություն Նոր Ջուղայի բարբառի, Երևան, ԳԱ հրատ., 1940, էջ 262:

¹⁵ Սայաթ-Նովա, Խաղերի ժողովածու, Երևան, Սով. գրող. հրատ., 1987, էջ 34:

¹⁶ Ռ. Բաղրամյան, Կոզենի բարբառը, Երևան, ԳԱ հրատ., 1961, էջ 247:

¹⁷ Հ.Աճառյան, Քննություն Մարաղայի բարբառի, Երևան, 1926, էջ 278:

լւմ (սահմ. անց. անկատար), մընալ իմ լւմ (սահմ. անց. ապառնի), մէտիլ մընամ լւմ¹⁸ (հարկ. անց. ապառնի) և այլն:

Ի՞նչ պատճառով են առաջանում բայի նման կառույցները: Այսպիսի դեպքերում երկու ենթադրություն կարելի է անել. գուցե սրանցով կազմված ժամանակաձևերը նախ որպես երկրորդական են գործառվել, ապա, աստիճանաբար լայն կիրառություն ստանալով, դուրս են մղել հիմնականներին: Հնարավոր է նաև, որ վերլուծական այս ժամանակները սկզբից եթե գլխավորների դեր են ստանձնել: Ինչևէ: Մեղրու խոսվածքը, ինչպես Է. Աղայանն է փաստում, ունենալով բավականին բարդ քերականական կառուցվածք, հատկապես խրթին բայական համակարգ, աստիճանաբար դադարել է խոսակցական լեզու լինելուց դեռևս 20-րդ դ. սկզբներին:

Մեղրու բարբառի Վարհավարի, Գուդեմնիսի խոսվածքները խնդրո առարկա ժամանակաձևերի կառուցվածքով նման են Ղարաբաղի բարբառին:

Հարկ է նշել, որ հաճախ ինչ-ինչ պատճառներով բարբառագիտական աշխատությունների հավելված տեքստերում, նաև բանահյուսական նյութերում բացակայում են երկրորդական վերլուծական ժամանակաձևերը: Կամ բարբառի կրողներն են իրենց խոսքը պարզեցրած ներկայացնում, կամ բարբառը լրացնողներն են անտեսում նման ժամանակների առկայությունը:

Հարց է ծագում. ինչու՞ են առաջանում և ի՞նչ են արտահայտում նկարագրական երկրորդական ժամանակները: Ասենք, որ դրանք հարիր են հատկապես պատմողական ոճին: Ն. Պառնասյանը ժամանակակից գրական խոսակցական հայերենի օրինակով սահմանում է, որ այդ ժամանակները նրանք են, «...որոնք ցույց են տալիս բայի գլխավոր ժամանակներով արտահայտված գործողությունների հարաբերությամբ կատարված, կատարվող կամ կատարվելիք գործողություններ, այսինքն՝ համաժամանակություն, նախաժամանակություն և ետժամանակություն»¹⁹:

Ինչպես նկատում ենք, երկրորդական վերլուծական բայաձևերին ժամանակակերպայնության նոր երանգ են հաղորդում օժանդակ բայի դեր կատարող *լինել*, *կամ*, *սլիտեմ*, *ունեմ* բառերը: Դրանցով պատմողական խոսքը դառնում է ավելի կենդանի, ավելի պատկերավոր ու հասկանալի:

Janna Mikayelyan (Armenia)

DESCRIPTIVE TENSES OF VERB IN THE GROUP OF EASTERN ARMENIAN DIALECTS

The subsidiary compound usage of tenses is specific to the Armenian dialects. These dialectal phenomena were formed during the historical late period. In particular they are specific to the narrative style and impart to the speech tense and aspect liveliness. Unfortunately, dialectologists have not studied these tenses in their works yet, at best they just note their existence. Meanwhile, these descriptive tenses are on the verge of disappearance in the dialects, therefore, they need a serious investigation.

We have studied the usage of subsidiary compound tenses characteristics in the dialects and extracted their similarities and differences of manifestation. As a rule, we notice that in all dialect groups these tenses are formed by the future, present, and especially effective participles and as an auxiliary verb is usually used the verb *լինել* (*to be*) and declined forms of other verbs. But it happens when in this or that dialect group *կամ* (*I am*) and *ունեմ* (*I have*) *սլիտեմ* is used as an auxiliary verb. It must be mentioned that almost in all verb moods these tenses are used.

¹⁸ Է. Աղայան, *Մեղրու բարբառը*, Երևան, ԳԱ հրատ., 1954, էջ 192:

¹⁹ Ն. Պառնասյան, *Ժամանակակից հայոց լեզու*, հ. 2, Երևան, ԳԱ հրատ., 1974, էջ 354:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

Ս.Գրքում հիշատակված երաժշտական տերմիններն ու տերմինային անվանումները արտաքին, թվում է, միատարր են ու այնքան էլ շատ չեն, բայց երբ հարցին մոտենում ենք այլ դիտանկյունից՝ փորձելով համեմատել ու համադրել տարբեր լեզուներով Աստվածաշունչները եբրայերեն բնագրի հետ, ապա պատկերը միանգամայն այլ է ստացվում։ Դրանք բավական բազմազան են ու բազմաբնույթ ինչպես տիպաբանորեն, այնպես էլ քանակական առումով, և ոչ միայն որոշակի պատկերացում են տալիս հեռավորարևելյան երաժշտարվեստի մասին, այլև նպաստում են օտար բառերի որակական դերի, իրական այն հարաբերությունների բացահայտմանը, որոնք առկա են օտար և մայրենի բառապաշարի միջև։

Վերհանելով հայկական երաժշտական և մերձավորարևելյան հին ժողովուրդների մշակութային ընդհանրություններ՝ փաստենք, որ հայկական հին և մերձավորարևելյան երգ ու նվագը արևելյան քրիստոնեական երգարվեստի և, անշուշտ, համաշխարհային երաժշտական մշակույթի մեծ պատմության արժեքավոր, ինքնատիպ ու անկրկնելի էջերից է¹։

Աստվածաշնչում հնագույն երաժշտության վերաբերյալ թեպետ բավականին հետաքրքիր տեղեկություններ են տրվում, այնուհանդերձ, նվագարանների անվանումներին, երաժշտական հասկացություններին, տիպաբանությանն ու ծագումնաբանությանն առնչվող բազմաթիվ հարցեր դեռևս մնում են չբացահայտված։ Երբեմն դժվար է լինում որոշել նվագարանների՝ այս կամ այն ենթախմբում դասակարգելու սկզբունքները։ Երաժշտական հասկացությունների գործառական սահմանափակությունը հաճախ բնորոշվում է բառիմաստների արհեստականությամբ, նեղ իրադրական կիրառությամբ, մասնակա՝ նվագ հաճախականությամբ։ Երաժշտական հասկացությունները հիշատակվում են Հին Կտակարանի 25 գրքերում, գործածվում են մաս երկրորդականում գրքերում, մասամբ մաս Նոր Կտակարանում։ Դրանք հիմնականում հնագույն նվագարանների, մասն ձայնեղանակների անվանումներ են։ Զիչ չեն մաս անորոշ տերմինային անվանումները։

Եբրայերեն բառերի դիմաց հայերեն նոր բառերի և իմաստների կիրառությունները ինքնին տալիս են ներլեզվական շատ հարցերի պատասխաններ՝ բացահայտելով երաժշտական բառապաշարի զարգացման ակունքներն ու միտումները։

Աստվածաշնչում հիշատակված նվագարանի անվանում է **շալիշիմ**-ը (եբր. Šālīšim -שָׁלִישִׁים)։ Ս. Գրքում այն հիշատակվում է ընդամենը մեկ անգամ (Ա Թագ., 18- ԺԸ, 6)։ «... ելին պարապել ընդ առաջ Դաւթի յամենայն քաղաքացն Իսրայելի երգել, պար առնուլ ընդ առաջ Սաուդայ արքայի թմբկօր եւ ուրախութեամբ եւ ծնծղայիւր»։

Աստվածաշնչի տարբեր թարգմանություններում այս նվագարանի անվանումները տարբեր են, երբեմն էլ այնքան իրարամերձ, որ հստակ չէ, թե հատկապես ո՞ր ենթախմբում այն կարելի է դասակարգել։ Տերմինը ծագում է եբրայերեն šalōš – שָׁלוֹש «երեք» թվականի անվանումից։ Յոթանասնիցը թարգմանում է **կիմբալա** (κύμβαλα), Վուլգատան՝ **սիստրում** (sistrum), հայերենը հունարենից, բնականաբար, թարգմանում է **ծնծղանք**։ Հատկանշական է, որ Աստվածաշնչի ռուսերեն սինոդալ թարգմանության մեջ այն մեկնվում է որպես լարային նվագարան гусли, անգլերեն Աստվածաշնչում՝ **տավիղ** (harps), մասն **քնար** (lyres)²։

Մեզ առավել հետաքրքրեց Թանախի եբրայերեն-ռուսերեն զուգահեռ թարգմանությունը, որտեղ **շալիշ**-ի դիմաց տրվում է **трехструнный**, այսինքն՝ «եռալար» կամ «երեքալի» անվանումը³։ Հետաքրքիր է, որ ուսումնասիրողների մեծ մասը հակված է **շալիշիմ**-ը համարելու քնարատիպ փայտյա եռալար նվագարան⁴։

Մենք հակված ենք կարծելու, որ Աստվածաշնչյան **շալիշիմ**-ը աղերսներ ունի հայկական վաղմիջնադարյան **բամբիռ** կամ **փանդիռ** կոչվող նվագարանի հետ։ **Բամբիռ-բանդիռ-փանդիռ-փանտիռ** տարբերակներով է հիշատակվում նվագարանը և տարբեր մեկնությունների ու տարակարծությունների տեղիք տալիս։ Նոր հայկազյան բառարանում **բամբիռ**-ը բացատրվում է որպես «ծնծղա» կամ «քամպուռ», կամ էլ «սանդուռ», իսկ **բանդիռ**-ը կամ **բանդեռ**-ը նույնացվում է **փանդիռ**-

¹ Grov's Dictionary of Music and Musicians, 5th ed., London, 1954, Armenian Folk Music (vol.III – Folk Music), Armenian Church Music (vol. II – Eastern Church Music).

² The Learning Bible.Contemporary English Version. New York, 2000; The Holy Bible. Today's English Version (Good News Bible) /Translated by the United Bible Societies, London, 1994.

³ Издание Танах с параллельным переводом на русский язык. Изд.: Тора (Пятикнижие Моисеево), Иерусалим-Москва, 1993.

⁴ O.Glaser, Die ältesten Psalmenmelodien. ZS, 1935, Bd. VIII, p. 194; Stradling D.G.,Kitchen K.A., Musical Instruments. NBD, Leicester, 1982, pp. 801-802.

ին՝ բառահոդվածում տալով «տե՛ս փանդին » հղումը⁵: Ընդ որում **փանդին** էլ ներկայացվում է որպես լարային նվագարան՝ «քնար երեքադեան»: «Ծնծղաիք եւ փանդամբք եւ այլովք երգեցողական գործարանօք սաղմոսել հրամայեաց», - կարդում ենք Ղևտացվոց գրքի մեկնության մեջ⁶: Նշենք, որ **քամբիք**-ը ծնծղա է համարում նաև Մանվել Քաջունին (Cimbal, լատ. cymbalum, ծնծղա, տնկ. չալփարա): «Ընտիր և քաղցրահնչին ծնծղայք գան յԱրևելից: Չայն ծնծղայի ասի Ղօղանջ, դօղանջել: Այս է ի մեզ քամբիքն», - գրում է Քաջունին⁷: Մեկ այլ բառահոդվածում՝ Luth – վին, աագավին է համարում **փանդին** **չորեքադի**, որ անվանում է նաև mandore, իսկ **փոքրագոյն փանդին** կամ **փոքրիկ վինը**՝ mandolin: Այնուհետև հավելում է. «Հնագոյնն էր երեքադի, յորոց վերայ յաւելան հետզհետե մինչև ութ և տասն ադի»⁸: Նորայր Բուզանդացին **քամբիք** ձևին գուգահեռ հիշատակում է նաև **քամպիք**-ը և որպես օրինակ նշում Սիմեոն Ապարանցու «Ռոքանք ի վերայ թախթին Տրդատայ» երկի 14-րդ տողը. «Հաւաքեցէք զեղերամարս՝ ճշել քամբռամբ ի յուր բազմաց»⁹:

Անդրադառնալով հայ միջնադարյան մատենագրության մեջ պահպանված հայկական ավանդական ձայնեղանակների մեկնությանը՝ երաժշտագետ Ա. Արևշատյանը առանձնացնում է 13-րդ դարի հեղինակ Հովհ. Վանականի «Հարցմունք եւ պատասխանիք» ուսուցողական երկից ուշագրավ մի հատված՝ նվիրված քանոնի և փանդինի նկարագրությանը: «Փանդիքը, գրում է հեղինակը, - որը մեր երաժշտական միջնադարագիտության մեջ ընդունված է ներկայացնել որպես ուղի մի տարատեսակ, պարկապուկ է նկարագրված, այսպես. «Պարկ է ուլենի և փող է դրած ի ներս: Յանթն դնեն ի ցից ի վեր և ձայն տան ածել ձեռալքն»¹⁰: Հետաքրքիր է, որ **շալիշին**-ը փող է թարգմանված 1956թ. Լոնդոնում վերահրատարակված անգլերեն Աստվածաշնչում (trumpet, cornet): Նույնացնելով **փանդիքը** և **քամբիքը** Մ.Էմինը գրում է. «Հնոց չէր ծնծղայ կամ փող, այլ նուագարան լարիք և դեօք հանդերձ»¹¹:

Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ հիշատակվում է, որ ցցոց և պարուց երգերը կատարվում էին «ի նուագս փանդան»: Ըստ Հ.Աճառյանի՝ **փանդիքը** հին հայ վիպասանների նշանավոր երաժշտական գործիքն է եղել, որ կոչվել է նաև **քանդին** կամ **քամբին**¹²: Գ.Ջահուկյանը հնարավոր է համարում **փադիք**-ի փոքրասիական, հատկապես լիդիական ծագումը, թեև կան նաև այլ վարկածներ. հմմտ. վրաց. panduri, օսեթ. fandur: Անդրադառնալով միջնադարյան բառարաններում տեղ գտած նորահայտ բառերի ստուգաբանությանը՝ Գ.Ջահուկյանը հիշատակում է **քանջար** անվանումով գործիք երգոց և նշում, որ ամենայն հավանականությամբ նույն հայկական **քանդին** կամ **փանդին** նվագարանն է: «Բառը ծագում է փոքրասիական աղբյուրից և հատկապես հունարենի միջնորդությամբ *πανδύρα, πανδύρον* «երեքադեան քնար» տարածվել է նաև այլ երկրներում: Սրանցից մեկն էլ կարող է քանջար ձևի աղբյուրը լինել»¹³: Ընդ որում «Լատիներեն ստուգաբանական բառարանում» արձանագրված է pandurizo երկինաստ տերմինը, որը նշանակում է «փանդներգություն», նաև՝ «երեքադեայ նուագարան»: Տերմինը վկայված է նաև այլ լեզուներում՝ ուշ լատ. Pandura, իսպ. bandola/bandurria, լեհ.pandoura, իտ. Mandolin/pandura, ուկրաիներեն бандура, ֆրանս.mandore/mandolin¹⁴: Նշենք նաև, որ տարբեր երկրներում գործածվում են **փանդներգություն**, **փանդներգակ**, **փանդեռնահար**, **փանդեռնահարություն** հասկացությունները¹⁵: 12-րդ դարում Գրիգոր Տղայի երկերից մեկում հիշատակվում է **քամբռասաց** բառը. «Ու՞ր քամբռասացքըն գովեստին, Կատակերգուքն ի ժողովին...»¹⁶:

Հինգերորդ դարի մատենագրության մեջ հիշատակված այդ նվագարանը, անշուշտ, չէր կարող հենց նույն ժամանակաշրջանում ստեղծվել ու կիրառվել: Այն պետք է ունենար զարգացման որոշակի նախապատմություն: Ուստի հակված ենք հայ իրականության մեջ կիրառված **քամբիք** կամ **փանդին** նվագարանին վերագրել շատ ավելի վաղ ժամանակաշրջանի գործածություն: Չենք բացառում նաև նվագարանի հեռավոր առնչությունը աստվածաշնչյան **շալիշին**-ի կամ **երեքադեայ քնար**-ի հետ:

«Աշուղական արվեստը» ուսումնասիրության մեջ Գ.Լևոնյանը գրում է, որ «փանդիքը յիշում է Ս.Գրքի և օտար մատենագիրների մեջ»¹⁷: Ն. Թահմիզյանը ևս իր ուսումնասիրություններում հանգել է այն եզրակացության, որ 5-րդ դարում հիշատակված փանդիքը եռալար նվագարան է՝ համապա-

⁵ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ.Ա, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 1836, էջ 430, 436:

⁶ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ.Բ, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 1836, էջ 932:

⁷ Մ.Քաջունի, *Բառգիրք արուեստից եւ գիտութանց եւ զեղեցիկ դպրութեանց*, հատ.Ա, Վենետիկ, Ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1891, էջ 618:

⁸ Մ.Քաջունի, նշվ. աշխ., էջ 1183, 1188:

⁹ Ն.Բիզանդացի, *Բառգիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց*, Ժնև, 2000, էջ 99:

¹⁰ Ա.Արևշատյան, *Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ*, Երևան, «Կոմիտաս» հրատ., 2003, էջ 61:

¹¹ Մ.Էմին, *Վեպք հնոյն Հայաստանի*, Մոսկվա, Ի տպարանի Վլադիմիրայ Գոուի, 1850, էջ 98:

¹² Հ.Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, I մաս, Երևան, Պետհամալսարանի հրատ., 1940, էջ 142:

¹³ Գ.Ջահուկյան, *Ստուգաբանություններ, Լրաբեր հասարակական գիտությունների*, 1976, N12, էջ 42:

¹⁴ J.Valpy, *An Etymological Dictionary of the Latin Language*, London, 1828, p.316.

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Ն.Թահմիզյան, *Գր.Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դարերում*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1985, էջ 33:

¹⁷ Գ.Լևոնյան, Աշուղական արուեստը, «Ազգագրական հանդես», 1906, N 5, էջ 94:

տասխան լարվածքով¹⁸: Պատահական չէ, որ 10-րդ դարում Նարեկացին, երաժշտությունը համարելով «բարացուցական», իբրև օրինակ նշում է «բամբռան բառացի բարառնութիւն»-ները, այսինքն՝ բամբիռի արտահայտիչ նվագը, մասնա նվագակցությամբ կատարվող երգերը. «Սկզբնապար նախընթացութեան աղէյարմար ջութակաց բարետաւիղ ողբերգարկութեանց՝ բարացուցական բամբռան բառացի բարառնութեանց...»¹⁹: Ոչ միայն իր Մատյանում, այլև Տաղերում Նարեկացին անդրադառնում է տարբեր նվագարանների, որոնցից ուզում ենք առանձնացնել հատկապես **եռաստոռիչ տաւիղը**. «Տաւիղ եռաստոռիչ, բամբերգայնոց տաւիղ, Տաւիղապճիռ՝ երգ Գալիլեա գուարճից...»²⁰: **Եռաստոռիչ** բառը ՆՀԲ-ում վկայված չէ, սակայն Առձեռն բառարանում այն տրված է **եռաստիչ, եռաստոռիչ** տարբերակներով իբրև «երեք ս(շ)ռիչ»՝ ձայն հանող նվագարան²¹: Ստ.Մալխասյանը բառը տալիս է ածականական նշումով՝ բացատրելով որպես երեք լար ունեցող(նվագարան)²²: Նարեկացու հիշատակած **եռաստոռիչ տաւիղ**-ը արդյո՞ք Ս.Գրքի երեքաղյա նվագարանը չէ, մանվանդ, որ տաղը գրված է Աստվածաշնչային թեմայով՝ նվիրված Ղազարի հարությանը (Տաղ Գրիգորի Նարեկացույ Ի Յարութիւն Ղազարու): Նշենք, որ **տաւիղապճիռ** բառը գործածել է Եփրեմ Ասորին իր «Ի գալուստն Փրկչին յերուսաղէմ եւ ի սուրբ Տօնն բարեբանութեան» աշխատանքում: Անվանումը նշանակում է «տավիղի թելերը զարնող», այսինքն՝ տավիղահար²³: «Հին աշխարհ» էլեկտրոնային հանրագիտական բառարանի «Հին Եգիպտոս» բաժնում արձանագրված է strich բառը՝ հնացած (արիսակի) նշումով: Տրված է բառի չորս իմաստ՝ 1. *գիծ*, 2. *հատկանիշ*, 3. *լար*, 4. *լարային նվագարան* (Strichinstrument – струнный инструмент), այնուհետև նշվում է, որ հավանական է՝ հինեգիպտական strich-ը լինի լատիներեն strix բառի ձևափոխված տարբերակը (скрипучая устаревшая модификация strich, x-ch): Գերմ. strich, անգլ. stretch բայերն ունեն մասնա «ձգվել», «պրկվել», «լարվել» նշանակությունները²⁴: Հանճարեղ բանաստեղծը, փիլիսոփան, որի ստեղծագործությամբ նոր դարաշրջան է բացվում հայ գրականության մեջ, չէր կարող ծանոթ չլինել հին քաղաքակրթություններին ու հին լեզուներին: Լատիներեն ստուգաբանական բառարանում արձանագրված է իգ. սեռի strix գոյականը (եգ, ուղղ. strix, հոգն. ուղղ. striges, եգ. սեռ. strigis, հոգն. սեռ. strigum), որը նշանակում է՝ «թռչունի ձայն (չարագույժ)» և «չար ոգի»: Ուշադրություն դարձնենք, որ Նարեկացին նշում է **եռաստոռիչ տաւիղ, բամբերգայնոց տաւիղ**, իսկ **բամբ** նշանակում է «խոշորածայն, որ է բնութեամբ ջրոյ եւ մաղասոյ՝ ցուրտ եւ գէջ»²⁵: Բնական է, որ Ղազարի մահվան առիթով եռաստոռիչ տաւիղը պետք է հնչեր չարագույժ, իբրև չար ոգի: Բառահողվածում հղում կա striga բառաձևին, որ նշանակում է «գիծ», «լար», բերվում են գերմ. Strich, անգլ. stretch, հին անգլ. strice, միդելտանդ. Streek բառերը²⁶: Ակնհայտ է strich, stretch բառերի հնագույն ծագումը և այն, որ երկուսի բառիմաստում էլ կա «լար» նշանակությունը: Նարեկացին, որ հայտնի է բառակերտման, նոր բառերի ստեղծման մեծ վարպետությամբ և ինքնատիպությամբ (հիշենք *Ատիճաղ-պատիճաղ ստղի-հտղի հուռն, ատիճաղ-պատիճաղ ստղի-խտղի երգով, ...տաւիղապճիռ երգ Գալիլեա գուարճից....*), հնարավոր է՝ օգտագործել է մասնա հնագույն լեզուների բառամթերքը:

Աստվածաշնչում **ծնծղան**՝ իբրև ծիսական նվագարան, հիշատակվում է **ցելցելիմ, ցիլցելիմ, սելիմ** անվանումներով եբր. (šelšelim – שֶׁלְשֵׁלִים): Այդ հինհրեական հարվածային նվագարանը մնաց է ձեռքին կամ մատներին հագնող ափսեների: Տարածված է եղել մերձավորարևելյան ողջ տարածաշրջանում. արաբ. salāsīl, ուգարիտ. mšlt, պահլավ. sil, թուրք. zil: Հին Կտակարանում **ցելցելիմ**-ը հիշատակվում է 16 անգամ: Այն նվագում էին միայն հմուտ կամ գլխավոր երաժիշտները, ինչպես Ասափը, Իդիթունը: Ս.Գրքի թարգմանություններում անվանումները, թվում է, միմյանց առավել մոտ են տերմինի հնչյունական կազմության տեսանկյունից: Օր.՝ Յոթանասնիցն ու Վուլգատան գործածում են κύμβαια և cymbales անվանումները: Անգլերեն Աստվածաշնչում ամրագրվել է cymbals տերմինը, գերմաներենում՝ zimmeln, zymbaln, ֆրանսերենում՝ cymbales, ռուսերենում՝ **кимбалы / кимвалы, цимбалы / цымвалы**, մասնա **цевница**: Հայերեն Աստվածաշնչում **ծնծղաներ** բառին զուգահեռ գործածվում են «բան քաղցր», «բարբառ լսելի», արտահայտությունները: Հայերեն բարբառներում կիրառվող **ցըմցըմ**-ը կամ **ցընցըն**-ը ակնհայտորեն մանաձայնության բնույթի է և աղերսներ ունի շումեր. za(am)za(am), ակկադ. samsam անվանումների հետ: **Ծնծղա**-ն արձանագրվում է մասնա քարթվեական լեզուների՝ հայերենից կատարված փոխառությունների շարքում²⁷:

¹⁸ **Ն.Թահմիզյան**, Ներդաշնակության հենքի մասին ուսմունքը միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.), *Պատմաբանասիրական հանդես*, 1966, N 1, էջ 84:

¹⁹ Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնը, Վենետիկ, 1840, էջ 243:

²⁰ **Գր. Նարեկացի**, *Տաղեր և զանձեր*, Աշխատասիրությամբ Ա. Բյոշկերյանի, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 85:

²¹ Առձեռն բառարան Հայկազնեան լեզուի, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1865, էջ 264:

²² **Ստ. Մալխասյան**, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 1, Երևան, Հայկական ՍՍՀ պետական հրատ., 1944, էջ 567:

²³ Ս. Եփրեմի մատենագրութիւնը, Վենետիկ, 1836, հ. Գ, էջ 60:

²⁴ www.dic.academic.ru/AncientEgipt/

²⁵ Նոր բառգիրք հայկազնեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 430:

²⁶ **J. Valpy**, *An Etymological Dictionary of the Latin Language*, London, 1828, p. 448-449.

²⁷ **Գ. Զահուկյան**, նշվ. աշխ., էջ 591:

Այսպիսով, Աստվածաշնչի հայերեն թարգմանության հեղինակները բնօրինակում հանդիպող տարբեր նվագարանների անվանումների դիմաց կիրառել են իրենց և շրջապատին լավ ծանոթ հայերեն անուններ: Վաղմիջնադարյան Հայաստանում այդ նվագարանների մեծ մասը հիմնականում գործածել են գուսանները, թեպետ դրանք տարածված են եղել նաև այլ խավերի շրջանակներում: Այդ են վկայում լարային նվագարանների պատկերազարդ նկարները Երևանի Մատենադարանի տարբեր ձեռագրերում²⁸:

Հայ հեղինակները Ս.Գիրքը թարգմանելիս, հնարավոր է, նկատի են ունեցել երաժշտական անվանումների գործածության հաճախականությունը, դրանց իմաստային առանձնահատկությունները, հոմանիշներ ունենալը կամ չունենալը և ունենալու դեպքում՝ հոմանիշների տարածվածությունը: Հաճախ օտար լեզուներում և հայերենում հասկացության բովանդակության շրջանակները չեն համընկնում և երբեմն որոշ անվանումների իմաստների վերաբերյալ տրվում են տարբեր, երբեմն իրար լրացնող, երբեմն էլ իրարամերժ բացատրություններ: Դա թերևս հնարավոր է բացատրել կա՛մ տարբեր ժամանակաշրջաններում նույնանուն, բայց այլ տեսակ նվագարանների գոյությամբ, կա՛մ էլ նախորդի հիման վրա առաջացած նվագարանների բազմազանությամբ:

Gayane Mkhitryan (Armenia)

MUSICAL TERMS IN BIBLE

From all known ancient literary and historical monuments the Bible contains the full data about existing musical instruments and music of that time. The Bible can be called without exaggeration by the first encyclopedia of musical culture of the Ancient East. However despite of the big information field, with rare exception, it doesn't give any explanations and comments of rather musical instruments and used terms. Therefore studying of these questions is interfaced to numerous difficulties and gives rise to problems. Attraction is required a number of sciences, first of all to archeology, source studies, comparative linguistics and etymology. Only the complex analysis of Bible musical terminology with use of the principles developed in them and methods of research helps to shed light and leads to desirable positive result.

Գարիկ Սկրոչյան (Հայաստան)

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՐԲԵՐԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Միջին հայերենի տարբերակման հարցին հայագիտության մեջ անդրադարձել են մեր գրեթե բոլոր նշանավոր հայագետները, ինչպիսիք են Ա. Այտընյանը, Գ. Հովնանյանը, Հր. Աճառյանը, Ժ. Կարստը, Ս. Լազարյանը, Գ. Ջահուկյանը, Մ. Մուրադյանը և այլք:

Դիտարկվող խնդրին առաջինն անդրադարձած հայագետը Արսեն Այտընյանն է: Հիմնվելով հայ մատենագրության մեջ վկայված լեզվական փաստերի վրա՝ Ա. Այտընյանը «Քննական քերականությամբ աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի» (1866, Վիեննա) աշխատության մեջ սահմանում է, որ դասական գրաբարով ավանդվող գրական լեզվին զուգընթաց զարգացող բանավոր խոսակցական լեզուն 11-րդ դարում աստիճանաբար համատարած գործածություն է ստանում. «Որչափ որ գրաբարին՝ իր երազ անկմանը մեջ բարձր էր յարգը, նոյնչափ ալ աշխարհաբարին հարգը նուազ էր իր օրըստօրական զարգացմանը մեջ»¹:

Աշխատության ընթացիկ շարադրանքում Այտընյանը ընդգծում է ձևավորված նոր լեզվի ոչ մշակված լինելը, անմիօրինակությունների առատությունը և, ըստ էության, փոխառություն ընկալվող «օտարութեանց» հաճախադեպ գործածությունը: Ա. Այտընյանը 11-16-րդ դարերի հայերենը բնորոշում է այսպես. «գաղթականութեանց սկզբներեն հառաջ Հայաստանի /և Կիլիկիայի/ աշխարհիկ լեզուն քանի մը տեսակ էր»²: Այտընյանը միջնադարի բանավոր խոսակցական լեզվում զարգացման միասնական ընթացք չի կանխատեսել՝ աշխարհիկ լեզվի զարգացումը դիտելով որպես առանձին բարբառների գոյացում, որոնք «իրենց զարգացման բնական ընթացքով հասան ժամանակակից բարբառներին և նրանց տարբեր հիմքերի վրա բարձրացող գրական լեզուներին»³:

Միջին հայերենի տարբերակվածության խնդրին որոշակի լուծումներ է տվել նաև Գ. Հովնանյանը: «Հետազոտութիւնք նախնեաց ռամկորենի վրա» (Վիեննա, 1897) աշխատության մեջ վերջինս զարգացնում է այն մտայնությունը, որ միջնադարյան հուշարձանների լեզուն լեզվական տարրերի

²⁸ Մատենադարան, ձեռ. N 7079, էջ 4բ, ձեռ. N 6230, էջ 258 բ, ձեռ. N 346, էջ 280 ա, ձեռ. N 6325, էջ 8 բ :

¹ Ա. Այտընյան, *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի*, Երևան, ԵՊՀ հրատ, 1987, էջ 146:

² Նույն տեղում, էջ 165:

³ *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, Ա մաս, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ, 1972, էջ 11:

ընդգրկմամբ նույն ժամանակաշրջանում միատարր չէ: Նա միջնադարի ողջ գրականությունը, ըստ լեզվական նյութի ընդգրկման, ներկայացնում է չորս հիմնական խմբերում՝ ա/ բացառապես գրաբարով գրված գրաբար աշխատություններ, բ/ ժողովրդական լեզվի տարրերով և գրաբարի գերակշռությամբ ներկայանալի ռամկախառն գրականություն, գ/ գրաբարի որոշ տարրերով և ժողովրդական լեզվի գերիշխմամբ գրաբարախառն գրականություն, դ/ ռամկական գրականություն, որի հիմնական լեզուն ժողովրդական խոսքն է: Հովնանյանի այս ստորաբաժանումն իր արդիականությունը մինչ օրս պահպանում է, և միջնադարյան հուշարձանների այսօրինակ սահմանաբաժանումը կհեշտացնի խնդրի լուծման շահեկանությունն ապագայի հեռանկարում, առավել ևս, որ Հովնանյանն անձամբ որոշակիորեն մատնանշում է ժողովրդական լեզվով ավանդված գրավոր հուշարձանները⁴:

Միջինհայերենագիտության զարգացման հեռանկարում մինչ այժմ եղած գնահատականներում առանցքային են Յոզեֆ Կարստի ուսումնասիրությունները, ի մասնավորի՝ նրա Historische Grammatik des Kilikisch-Armenischen (Strassburg, 1901) աշխատությունը: Միջին հայերենին՝ որպես հին և նոր հայերենների միջև ընկած անցման ժամանակաշրջանի, հատկացնելով 10-15-րդ դարերը՝ Կարստը մեծ կարևորություն է տալիս 11-րդ դարում Կիլիկիայում ստեղծված հայկական պետության գոյությանը, որով պայմանավորված՝ հայ ժողովրդի հասարակական, քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքը բուն երկրից տեղափոխվում է այնտեղ: Միջին հայերենը չի ներկայանում որպես մի միասնական ու միատարր լեզու. նրանում որոշակիորեն առկա են բարբառային աչքի զարնող դրսևորումներ, որոնք փաստում են բարբառային տարբերությունների գոյության հանգամանքը:

Միջին դարերում եղել է ոչ թե մի գրական լեզու, այլ մեկից ավելին, ասենք, երեքը՝ պահպանվող գրաբարը, Կիլիկիայում գործառած գրախոսակցական լեզուն և բուն Հայաստանում գրականությամբ ավանդված գրական լեզուն՝ ժամանակի խոսակցական, բարբառային տարրերով համեմված: Այս գնահատականը ժամանակի ընթացքում համապատասխան նյութերի հանրագումարային ուսումնասիրությամբ և դատաստմամբ կհիմնավորվի: Հիշատակման արժանի է Յ. Կարստի հետևյալ միտքը. «Եթե Կիլիկյան հայերենը միջին հայերենի միակ բարբառը չէ, ապա գոնե ամենից լավ հայտնի և ամենակարևոր բարբառն է»⁵, հետևաբար միջինհայերենյան շրջանում մեկից ավելի գրական լեզուների ընդունումը չի կարելի բացառել՝ պայմանավորված բարբառային տարբեր հիմքեր ունենալու հանգամանքներով: Առավել ևս, որ անգամ բուն Կիլիկյան շրջանից ավանդված մատենագրության մեջ, ըստ Կարստի, լեզվական առանձնահատկությունները մի միասնություն չեն կազմում՝ ունենալով որոշակի տարբերություններ հայախոս այլ տարածքներից ավանդված լեզվական հուշարձանների լեզվից:

Մանուկ Աբեղյանն անդրադարձել է միջին հայերենի տարբերակվածության խնդրին «Գուսանական ժողովրդական տաղեր» աշխատության մեջ և զարգացրել այն տեսությունը, որ միջնադարյան հայերենների լեզուն միակերպ չէ, նրանց մեջ կան լեզվական շերտավորումներ՝ եզրակացնելով. «Հնա-յամ այս բոլոր լեզվական շերտավորումներին, հայերենի մեջ իշխող լեզուն միջին հայերենն է, որ պատկանում է մեր արևմտյան բարբառներին»⁶: Աբեղյանի այս դիտողությունները վերաբերում են 16-րդ դարի հայերենին և նրան հաջորդող ժամանակների լեզվի տարբերակվածությանը: Սա լրացուցիչ հավաստիք է, որ այդօրինակ լեզվական անմիօրինականությունները կարող էին լինել նաև 16-րդ դարից առաջ ևս:

Միջին հայերենի հիմնախնդիրներով հիմնովին զբաղվել է Հր. Աճառյանը: Միջին հայերենի տեսության քննությամբ Հր. Աճառյանն իր գնահատականները հիմնականում ամփոփել է «Հայոց լեզվի պատմության» երկրորդ հատորում: Աճառյանը լեզվական փաստերի վկայակոչմամբ հիմնավորում է, որ արդեն 11-րդ դարում նախորդ դարերի հայերենն անհասկանալի էր ժողովրդական լայն զանգվածներին և ստանձնել էր լոկ գրական լեզվի գործառույթ կատարելը՝ կոչվելով «գրաբար», որին ի հակադրություն՝ լայն շրջանառության մեջ էր մտել խոսակցական, ժողովրդական բանավոր լեզուն, Աճառյանի տերմինավորմամբ լինելով «գռեհիկ, մթին լեզու, գեղջուկ բան, ռամկորեն, սովորական խոսք, աշխարհական խոսք, աշխարհաբար»⁷: Եվ այդ անհասկանալիությունը հիմք է դառնում, որ ժամանակի խոսակցականը դառնա գրականության լեզու՝ աստիճանաբար վերածվելով գրական լեզվի: Հ. Աճառյանն ամենևին միջին հայերենի սկզբնավորումը չի պայմանավորում միջին հայերենով ավանդված գրականության սկզբնավորման հետ՝ փաստելով, որ «երբ խոսում ենք միջին հայերեն գրականության սկզբնավորության մասին..., պետք չէ բնավ հասկանալ միջին հայերեն բանավոր լեզուն, որի ծագումը շատ ավելի հին էր, քան գրավորը»⁸:

Միջին հայերենի բարբառային հիմքի և տարբերակվածության հարցում Հ. Աճառյանն ունի ինքնատիպ դիրքորոշում՝ հայ բարբառների առաջացումը տեսնելով բացառապես 11-12-րդ դարերում:

⁴ Ղ. Հովնանյան, *Հետազոտությունը նախնեաց ռամկորենի վրայ*, Վիեննա, 1897:

⁵ Յ. Կարստ, *Կիլիկյան հայերենի պատմական քերականություն*, Երևան, ԵՊՀ հրատ, 2002, էջ 14:

⁶ Մ. Աբեղյան, *Գուսանական ժողովրդական տաղեր*, Երևան, Արմֆան, 1940, էջ 19-20:

⁷ Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, երկրորդ մաս, Երևան, Հայպետհրատ, 1951, էջ 231:

⁸ Նույն տեղում, էջ 234:

Աճառյանը գրում է. «Այս ժամանակ արդեն կազմված էին Հայաստանում և Հայաստանից դուրս գաղթավայրերում զանազան բարբառներ, իրարից ավելի կամ պակաս մեծ տարբերությամբ: Միջին հայերենն էլ ուրեմն մի բարբառ չէր, այլ ուներ իր զանազան ձևերը, ինչպես հին բարձր գերմաներենը: Այս զանազան ձևերը ընդհանրապես մեզ հայտնի չեն. կա նրանցից միայն մեկը (այն է կիլիկյան բարբառը), որ թեև գաղթավայրի մի բարբառ, բայց պետականության շնորհիվ ստացավ ավելի պատվավոր դիրք և անցավ գրականության: Այս բարբառը կամ լեզուն է՝ որ պիտի կոչենք այսուհետև կիլիկյան հայերեն և որ միջին հայերենի ճյուղերից մեկն է միայն»⁹: Նույն խնդրի մասին հավելում է. «Միջին հայերենը մի ընդհանուր լեզու չէր, այլ թե կային Հայաստանում և Հայաստանից դուրս բազմաթիվ միջին հայերեն բարբառներ, որոնցից մեկն էլ կիլիկյան հայերենն էր, որ պետականության շնորհիվ բարձրացավ գրականության: Ուրիշ բարբառների հետքեր երևան են գալիս տարբեր վայրերում գրված գրքերի և արձանագրությունների մեջ»¹⁰: Հ. Աճառյանը, ընդունելով տարբեր բարբառների առկայությունը միջին հայերենում, օրախնդիր է համարում այս շրջանի հայերեն բարբառների վերաբերմամբ մի «կանոնավոր հետազոտության» անհրաժեշտությունը արձանագրությունների և հիշատակարանների ճշգրիտ հաշվառմամբ:

Ականավոր լեզվաբան Ս. Ղազարյանը քննարկվող խնդրին անդրադարձել է իր երկու կարևորագույն՝ «Հայոց լեզվի համառոտ պատմություն» և «Միջին հայերեն» աշխատություններում: Դեռևս առաջին աշխատության մեջ հեղինակը գրել է. «Միջին հայերեն ասելով մենք հասկանում ենք 10-12-րդ դարերի հայ գրականությամբ ավանդված լեզվական այն բազմազան տարբերի ամբողջությունը, որը հասկանալի էր տարբեր բարբառներով խոսող հայ ժողովրդի տարբեր հատվածներին»¹¹: Ս. Ղազարյանն օբյեկտիվորեն փաստում է միջին հայերենի՝ ոչ միատարր լեզու լինելը, նրանում տարբերակում նոր և հին շերտեր՝ լեզվական նոր տարբերի ավելի մեծ կիրառությունը տեսնելով գեղարվեստական, մասամբ՝ գիտական գրականության մեջ:

Երբեք չժխտելով այն հանգամանքը, որ միջին գրական հայերենը խառնված է մեկից ավելի բարբառների վրա՝ Ս. Ղազարյանը «Միջին հայերեն» աշխատության մեջ օբյեկտիվորեն հակադրվում է Հր. Աճառյանի՝ կիլիկյան բարբառին նախապատվություն տալուն՝ նկատելով. «Մեր կարծիքով միջին հայերենը կիլիկյան հայկական թագավորությունից առաջ իր հիմնական արտահայտություններով ուրվագծված էր, հետևաբար կիլիկյան բարբառը չէր, որ գրական լեզվի աստիճանի բարձրացավ, թեև նա իր որոշ իրողություններով ներթափանցեց գրական լեզվի սահմանները»¹²: Ս. Ղազարյանն իր այս տեսակետը հիմնավորում է պատմական փաստերով՝ ընդգծելով, որ Կիլիկյան թագավորության ստեղծման ժամանակահատվածում կիլիկյան բարբառը միասնական չէր Կիլիկիայի բնակչության ոչ միատարր լինելու պատճառով. այնտեղ հանգրվանել էին Անիի, Վասպուրականի, Վանանդի, Գանձակի և այլ վայրերից գաղթած հայ բնակիչները, որոնք, բնականաբար, տարբեր բարբառների կրողներ էին: «Պատմական այդ հանգամանքը նկատի ունենալով՝ մենք կարծում ենք, որ միջին հայերենը Կիլիկիայի բարբառը չէր, և Կարստի ուսումնասիրությունը ոչ թե Կիլիկիայի բարբառի, այլ միջին հայերենի զարգացման մի փուլի ուսումնասիրություն է»¹³-եզրակացրել է լեզվաբանը: Սա տեղին դիտարկում է, քանի որ Կարստը, թեև իր աշխատությունը վերնագրել է որպես «Կիլիկյան հայերենի պատմական քերականություն» և տվել է միայն կիլիկյան հայերենի բնութագիրը՝ հավանաբար այլ տարածքներին վերաբերող համապատասխան նյութերի բացակայության պատճառով, ընդամենը մի տարածք է ուսումնասիրել, որն էլ սխալմամբ հայագիտության մեջ վերագրվում է հայերենի զարգացման մի ողջ շրջանի: Իրականում, կիլիկյան հայերենը միջնադարի բարբառներից մեկն էր ընդամենը:

Ականավոր լեզվաբան Գ. Ջահուկյանը խնդրին անդրադարձել է «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» և «Հայոց լեզվի զարգացման փուլերը» աշխատություններում: Ջահուկյանը հայերենի միջին շրջանի համար տարբերակում է միջին հայերեն, միջին գրական հայերեն, կիլիկյան հայերեն, կիլիկյան գրական հայերեն եզրույթները: Ջահուկյանը պատահաբար չի կատարել այսպիսի տարանջատումները՝ հստակ գնահատելով միջին հայերենյան շրջանում լեզվական առումով առկա խառնակ իրավիճակը: Ըստ նրա, կիլիկյան հայերենը բանավոր-խոսակցական լեզվի՝ կիլիկյան պետականության շրջանակներում խոսվող ամբողջությունն է, որը հիմնական գծերով արտահայտված է նաև կիլիկյան գրական հայերենում և ընկալվում է որպես նրա գրական արտահայտությունը՝ իր մեջ բացի կիլիկյան հայերենի բարբառային խոսակցական լեզվի հիմնական հատկանիշներից ներառելով նաև այլ բարբառների առանձնահատկություններ: Միջին գրական հայերենը, ըստ Ջահուկյանի, կիլիկյան գրական հայերենի համեմատությամբ ավելի լայն հասկացություն է՝ ընդգրկելով ինչպես կիլիկյան գրական հայերենը, այնպես էլ Կիլիկիայից դուրս գրի առնված կամ գրավոր արտահայտություն ստացած միջին հայերենի դրսևորումները: Իսկ միջին հա-

⁹ Նույն տեղում, էջ 238:

¹⁰ Նույն տեղում, էջ 253:

¹¹ Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1981, էջ 231:

¹² Ս. Ղազարյան, *Միջին հայերեն*, Երևան, Հայկական ՍՍԴ ԳԱ հրատ, 1960, էջ 92:

¹³ Նույն տեղում, էջ 92:

յերենը վերաբերում է միջնադարյան հայերենների ինչպես գրավոր, այնպես և բանավոր դրսևորման բոլոր արտահայտություններին: Ջահուկյանը հստակ է գնահատում միջին հայերենի տարբերակվածությունը. «Կիլիկյան միջին հայերենը դառնում է Կիլիկիայի հայկական պետականության պաշտոնական լեզուն, բայց պատմական որոշ հանգամանքներում չի կարողանում հասնել ընդհանուր գրական լեզվի աստիճանին. շարունակում է իբրև գրական լեզու գործել մաս գրաբարը, միաժամանակ Կիլիկիայի սահմաններից դուրս գրավոր արտահայտություն են ստանում և միջին հայերենի բարբառային այլ տարբերակներ»¹⁴:

Բացարձակ ճշմարտություն է այն, որ միջնադարում գոյություն ունեին հայերենի բանավոր-խոսակցական լեզվի բազմաթիվ տարբերակներ, հետևաբար կիլիկյան հայերենի գրական լեզու լինելու հանգամանքը պետք է ընդունել որոշ վերապահումներով՝ այդ փաստը բացառապես պայմանավորելով Կիլիկիայում պետականություն ունենալու հանգամանքով: Կիլիկյան հայերենի ոչ գրական լեզու լինելու մասին է խոսում մաս ալն փաստը, որ այն իր գոյության ողջ ընթացքում միօրինակ չէր, համակարգված չէր, իսկ նշված հանգամանքները գրական լեզվի կարևորագույն հանգամանքներից են: Մինչդեռ կիլիկյան հայերենի հիմքում ընկած բանավոր-խոսակցական հայերենը ներկայանում է տարբեր բարբառների լեզվատաղձի հանրագումարով՝ բնակչության տարասեռ լինելու հիմունքով: Կիլիկիան, ըստ ամենայնի, մի մեծ գաղթավայր էր, ուր մեկտեղվել էին բուն Հայաստանից արտագաղթած տարբեր բարբառների՝ հատկապես արևմտահայ բարբառների կրողների գերակշռությամբ: Հետևաբար, կիլիկյան հայերենը գրական լեզու ընդունելիս պետք է այն ներկայացնել գրական լեզու՝ իր բարբառային, խոսակցական տարբերակների առատության ընդգծմամբ, կամ էլ՝ պետք է ընդունել ոչ համակարգված, ոչ միօրինակացված գրական լեզվի գոյությունը:

Միջնադարում ստեղծված գրականության մեջ բանավոր լեզվին անցնելու սկզբունքը ինքնըստինքյան կատարվող փաստ էր, որը դրսևորվում էր տեղային լեզվական առանձին դրսևորումներով ու պատկանելությամբ: Ամեն մի հեղինակ մղվում էր դեպի իր միջավայրի խոսակցական հայերենը, որոնք, բնականաբար, հանդես էին բերում հնչյունական, բառապաշարային, իմաստային, քերականական որոշակի տարբերություններ միմյանց նկատմամբ: Ինչպես գնահատել է Մարո Մուրադյանը, առկա տարբերությունները պատճառ էին միջին հայերենի՝ գրավոր արտահայտություն ստացող տերիտորիալ տարբերակների գոյացման¹⁵: Միջնադարի լեզվի քննությունը ենթադրում է նրանում գոյացած գրական լեզվի և նրա բարբառների ուսումնասիրություն, որը հնարավորություն կընձեռի միջնադարի գրական լեզուն ու բարբառները մեկը մյուսից տարանջատել, որոշել նրանց մերձավորությունը և հեռավորությունը, սերտության աստիճանը, գրական լեզվի միասնական կամ ոչ միասնական լինելու իրական հիմքերը:

Garik Mkrtchyan (Armenia)

THE QUESTION OF DISTINCTION OF THE MIDDLE ARMENIAN LANGUAGE IN ARMENIAN STUDIES.

In this article the question of dialect distinction of the middle Armenian language has been discussed in Armenian linguistics. Not only the whole published theories but also the ones regarding the issue have been pointed out, as well as all the possible versions have been mentioned to determine the classification and the time-extensive exact calculation of the linguistic facts in the middle Armenian language on showing the exact time when used and where they were common. The author came to the conclusion that during the period of the middle Armenian language under the reign of Armenian kingdom of Cilicia for some period of time the Cilician Armenian language changed to an official one because of some historical circumstances not being able to be a common literary language. Various dialect distinctions and usages in middle Armenian have obtained written expressions, thus not being involved in the Cilician Armenian language. Therefore, the author didn't exclude the existence of more than one literary languages during the usage period of the middle Armenian language under the existence of some dialects, which, however hasn't been proved yet.

¹⁴ Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի զարգացման փուլերը*, Երևան, ԵՊՀ հրատ, 1964, էջ 43:

¹⁵ Մ. Մուրադյան, *Գրական միջին հայերենի տերիտորիալ տարբերակների հարցի շուրջ (12-14 դարեր)*, Լեզվի և ոճի հարցեր, 3-րդ, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ, 1975, էջ 212:

Անահիտ Մուրադյան, Օֆելյա Խաչատրյան (Հայաստան)

ՎԱՐՂԱՆ ՊԱՏՄԻՉԻ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԹԱԹԱՐԱԳ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հին հայերենով գրված մշակութային հուշարձանների լեզվական աղերսները քննելիս բանասիրությունը ցարդ հատուկ ուսումնասիրության նյութ չի դարձրել Վարդան պատմիչի «Պատմութիւն թաթարաց» աշխատությունը: Սակայն կազմվել է այդ երկի բնագրային համաբարբառը¹, որի լեզվական նյութի հիման վրա էլ կատարել ենք աշխատության բառապաշարի բառակազմական առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

Ինչպես նշվում է «Պատմութիւն թաթարաց» գրքի առաջաբանում, երկը գրվել է 1247 թ. վանական վարդապետի աշակերտ Վարդան պատմիչի (ծն. և մահն անհայտ) ձեռքով: 1272 թ. Կիլիկիայում ընդօրինակվել է Ականց անապատի երեց Գրիգորի ձեռագրով, իսկ 1870 թ. հրատարակվել Երուսաղեմի սրբ. Յակոբեանց տպարանում²:

«Պատմութիւն թաթարաց» աշխատության լեզուն աչքի է ընկնում բառապաշարի հարստությամբ, ինքնատիպությամբ ու բազմազանությամբ, բառակազմական միջոցների գործածականության հաճախականությամբ՝ պայմանավորված տվյալ ժամանակաշրջանին բնորոշ լեզվական օրինաչափություններով: Վարդանի աշխատության միջոցով հինհայերենյան բառապաշարի մեջ են թափանցում մի շարք բառային փոխառություններ, հեղինակային անհատական նորակազմություններ, որոնք ստեղծվում են բառաբարդման ու ածանցման կաղապարներով, ունեն պատմաքաղաքական բովանդակություն՝ շաղախված կրոնական եղանակով, իմաստասիրական տարրերով:

Ներկա հոդվածի շրջանակներում փորձում ենք ներկայացնել Վարդան պատմիչի երկի բառապաշարի միավորների բառակազմական կաղապարներն ու ենթակաղապարները, վերջիններիս կառուցվածքային առանձնահատկությունները՝ ցույց տալով, թե որքանով է հեղինակն օգտվել գրաբարյան բառապաշարի հարստությունից ու բառակազմական լայն հնարավորություններից:

Հինհայերենյան բառապաշարի կողքին Վարդանի երկի բառապաշարի ինքնատիպությունը և նրա հեղինակային անհատականությունը պարզելու, ինչպես նաև բառարաններում չվկայված բառային միավորներն առանձնացնելու համար վերջինիս համաբարբառի բոլոր բառամիավորները համամատել ենք ՆՀԲ-ի³, ԱԲ-ի⁴, ԳԲ-ի⁵, ինչպես նաև ՄՀԲ-ի⁶, ԳԲ-ի⁷ գլխաբառերի հետ՝ ճշտելու, թե որքանով է երկի բառապաշարն արտացոլված այդ բառարաններում, որոնք են գրաբարի բառապաշարային հարստությունից օգտվելու հեղինակի նախասիրությունները, ապա ներկայացնելու այն նորամուծությունները, որ նա կատարել է գրաբարի բառակազմության մեջ թե՛ կաղապարների, թե՛ անհատական բառակերտումների առումով:

Ամենից առաջ պետք է արձանագրել, որ Վարդանի կազմած և գործածած բառերի մի մասը (նրա անհատական բառակերտումներից) չեն արձանագրվել նշված բառարաններից ոչ մեկում: Այդ նորակազմություններն (շուրջ 90) արդյունք են հեղինակային բառաստեղծման և ինքնուրույն կիրառության, օր.՝ **աղեկասիրտ**, **աներկեղ**⁸, **աներկեղաբար**, **աւերտեղի**, **գեղեցկաերանգ**, **գեղեցկապատկեր**, **գլխաթիւ**, **գլխահամար**⁹, **դումանագլուխ**¹⁰, **հեսար**¹¹, **ծիաթող**, **նենգաբարու**¹², **ներող**, **սոնքացած**¹³, **վերանալի**, **քրիստոնէաժողով**, **քարհերձ**, **գրպակ** և այլն: Ի դեպ, դրանց մի մասը չի կորցրել իր բառիմաստային կենսունակությունը և ժամանակակից հայերենում ունի կիրառական ակտիվություն:

Զննությունը ցույց է տալիս, որ գործածած բառերում առկա են ժամանակի բառակազմական գրեթե բոլոր կաղապարները (համադրական և վերլուծական՝ **աղեկասիրտ**, **ի խորհուրդ մտեալ**):

¹ Հայկական համաբարբառ, 15, Վարդան պատմիչ, «Պատմութիւն թաթարաց», Ե., 1981:

² Վարդան պատմիչ, «Պատմութիւն թաթարաց», Երուսաղեմ, 1870:

³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, ԵՊՀ հրատ., հ. 1, Ե., 1979, հ. 2, Ե., 1981 (այսուհետև ՆՀԲ):

⁴ Մ. Ազեբեան, Առձեռն բառարան հայկազեան լեզուի, ի Վենետիկ ի տպարանի սրբոյն Զաղարու 1988 (այսուհետև ԱԲ):

⁵ Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան, Անթիլիաս-Լիբանան, 2004 (այսուհետև ԳԲ):

⁶ Ռ. Ղազարյան, Հ.Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Ե., 2009 (այսուհետև ՄՀԲ):

⁷ Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան, Ե., 2010:

⁸ ԱԲ-ում վկայված է աներկիւղ, իսկ ՄՀԲ-ում՝ աներկիղ, աներկուղ, էջ 5:

⁹ ՄՀԲ-ում հանդիպում է **գլխահամարք** («գրքի գլուխների համարները»), էջ 149:

¹⁰ ՄՀԲ-ում վկայված է **դուման**, 1. տե՛ս, **թուման**, 2. գ. «30 000 հեծյալ զորք», 3. թուրք. գ. «ղեկ», էջ 181:

¹¹ ՄՀԲ-ում արձանագրված է **հեսարել** բայ-ը, տե՛ս, **խսարել** («պաշարել»), հ. 2, էջ 37:

¹² ՄՀԲ-ում նենգաբար, նենգաբարոյ:

¹³ ԱԲ-ում վկայված է **սոնքանամ** («գիրանալ, հարստանալ»), էջ 332:

անգերծանելի

2. Ձուգաձևություններ այլ ածանցներով, որոնք սակավադեպ են՝

անհնար - անհնար +իմ

անպատմելի

անտեր - անտեր + ունչ

ամբարտառ ան- ամբարտառան + եսլ **նախանձ - նախանձ + ոտ**

3. Ձուգաձևություններ՝ տարբեր ածանցներով կամ պարզ արմատով և ածանցով՝

աւեր + ած - աւեր +եալ **սակաւ- սակաւ+իկ**

երկն+ային- երկն+աւոր

ընդդէմ-ընդդիմ+ան+ալի

նենգ+աւ որ - նենգ+աբար +ու

պատու+ական- պատու+աւոր

4. Ձուգաձևություններ՝ հիմքերի տարբեր հնչյունական, բառակազմական կամ քերականական ձևավորումով, որոնք հատուկ են ոչ միայն Վարդան պատմիչին.

գլուխ- գլխ` գլխաթիւ, գլխահամար, դումանագլուխ

տէր-տիր` տէր+ունական, տիր+ական, տիր+ա+սպան

սէր-սիր` մարդասէր, մարդասիրապէս, մարդասիրութիւն

5. Հանդիպում են նաև այլ զուգաձևություններ՝

ա. հնչյունների սղման հետևանքով՝ բառակազմության, հոլովակազմության, խոնարհման շրջանակներում, որոնք կա մ հեղինակի բառագործածության անհետևողականության, կա մ ժողովրդա-խոսակցական լեզվատարրերի ներթափանցման արդյունք են, օր.՝ **իրեար-իրար** (փոխ. դերանվան **ե** ձայնավորի անկում),

երկպառակութիւն - երպառակութիւն, մարդկութիւն - մարդութիւն (բաղաձայնի անկում), **արիւնահեղ - արիւնհեղութիւն** (խսկական բարդություններում ա հոդակապի բացթողում) :

բ. բաղաձայնների և ձայնավորների փոփոխությամբ՝ խոսակցական կամ բարբառային արտասանության հետևանքով՝

անդի- անտի, գերթ-գերդ

պատուական-պատական

խալիփայ-խալիփատ

խորամանկ- խորամանգ

փնտուխտար- փնդուխտար

տէրունական-տերունական

Սմբատ-Սմպատ

Կոստանդին-Կոստընդին

գ. հիմքերի տարբերակային բազմազանությամբ՝

դղեակ-դղեկ

եօթն-եթն

դռնապան-դրազարկ

գեղ -գեղ - գիւղ

դ. բնիկ և փոխառյալ բառերի հոմանիշային տարբերակներով, որոնք հաղորդակցական շրջալուծ հանդես են գալիս ըստ կոնկրետ գործառնությունների և շարադրանքն օժտում հոմանշային-ոճական բազմազանությամբ, օր.՝

ամիրա - անասախ (թուրք . yasag) դատաւոր-ար դուչի (թթր.arkhuchi)

դեսպան - ելչի (թուրք. elci)

հրամանագիր - խառլախ (պրսկ. yarlig) ամիրապետ -խալիփատ

(արք.xalifa.) բժիշկ-հէքմ (արք.hakim, hekim)

Թեև բառակազմական առանձնահատկությունները հիմնականում հարազատ են դասական գրաբարի օրենքներին, սակայն նկատելի է հունաբան հայերենի ազդեցությունը, որը դրսևորվում է հատկապես նախաձանցների գործածության մեջ, օր.՝- **գեր, -շար** նախաձանցները՝ **գերահռչակ, շարագոյր**, ինչպես նաև **-ութիւն** վերջածանցի՝ վերացականը թանձրացականի փոխարեն գործածելու ոճական հմարքում, որ կիրառվում է երկի բառերի գրեթե մեկ երրորդում, օր.՝ **խոնարհութիւն, հաճութիւն, հեշտութիւն, կամակցութիւն, ճշմարտութիւն, պակասութիւն** և այլն:

Հեղինակի անհատական բառաստեղծական հմարքը դրսևորվում է նաև բայակազմության մեջ: Երկի լեզվում հանդիպում ենք **-ած** մասնիկով հարակատար դերբայի կիրառությունների, օր.՝ **գիրացած, սոնքացած**: Դրանք դասական գրաբարի համեմատությամբ նորակազմություններ և զուգահեռ ձևեր են՝ պայմանավորված հեղինակի խոսքի առանձնահատկություններով: **Օր. աւերած-աւերեալ, կոտորած-կոտորեալ, զարդարած- զարդարեալ**:

Բավական մեծ թիվ են կազմում **-աւոր** վերջածանցնով սերող հիմքերից կազմված բայերը, օր.՝ **լուսաւորեմ, փառաւորեալ, փառաւորեմ** և այլն:

Ինչ վերաբերում է վերլուծական կազմություններին, ապա դրանք գերակշիռ թիվ չեն կազմում համադրականների համեմատությամբ: Դրանցում ավելի հաճախական են բայական հարադրությունները, որոնք վկայում են աշխատության յուրօրինակ բառակերտումների առատության մասին:

Ըստ մեր հաշվարկների՝ երկում գործածվել են ավելի քան 40 հարադիր բայեր՝ երկանդամ կամ եռանդամ, որոնք կա մ **բուն հարադրավոր բայեր** են, կա մ **դարձվածային հարադրավոր** բայեր, ունեն պատմագրության գործառական ոճի յուրահատկություններ՝ պայմանավորված տվյալ ժամանակաշրջանին բնորոշ լեզվական օրինաչափություններով: Այդ հարադրություններից ութը՝ **ընդ միտ ածեալ**,

ընդ միտ ակեալ, ի վեր գալ, համար առնեն, յետ ձգել, ոտիք տալ, ջան ի վերայ եղեալ, նույնպէս հեղինակի բառաստեղծական անհատականության դրոշմն ունեն:

Որպէս բայական հարադիր առավելապէս գործածվում են **առնել, լինել** վերացական իմաստի բայերը, օրինակ՝ **արժանի առնեն, արժանի լինիմ, ծաղր առնեն, յարձակմունս առնեն, յաւարի առեալ, անձնատուր լինիմ, անյոյս լինել** և այլն:

Քննությունը ցույց է տալիս, որ կիրառված բայական հարադրություններում առկա են ժամանակի բառակազմական գրեթե բոլոր կաղապարները՝ անվանական հարադրի տարբեր խոսքի մասերով և համապատասխան քերականական ձևավորումով: Օրինակ՝ **գոյական՝ հրաման առեալ, ածական՝ անձնատուր լինիմ, մակբայ՝ յետ ձգել** և այլն:

Նկատելի է, որ **անվանական վերլուծական** կազմությունները գրեթե կիսով չափ պակաս են բայականներից. այստեղ ավելի քիչ է զգացվում պատմիչի անհատական բառաստեղծումը, որովհետև վերջինիս կիրառած անվանական հարադրությունները հիմնականում գրաբարում տարածված սովորական կազմություններ են՝ **աղի և ողորմ, սակալ՝ սակալ, չորք-չորս, տեղ-տեղի** և այլն: Այնուամենայնիվ, դրանց մեջ նկատվում է հեղինակի անհատական կիրառության չորս օրինակ՝ **այլ ոք, դառն և ողորմ, խուժ և դուժ, հարց և փորձ**¹⁷:

Այսպիսով ընդհանուր առմամբ Վարդանի երկի լեզուն ամենից առաջ աչքի է ընկնում ինչպէս գրաբարի գործուն բառակազմական կաղապարներով, այնպէս էլ իրեն հատուկ բառակազմական առանձնահատկություններով: Մի կողմից առատորեն գործածելով գրական լեզվի բազմազան ձևեր, մյուս կողմից ժողովրդական խոսքից եկած բազմաթիվ բառեր և փոխառություններ՝ պատմիչը ըստ հնարավորինս կարողանում է հասնել ռճական որոշակի անհատականացման:

Anahit Muradyan, Ofelia Khachatryan (Armenia)

ANALYSES OF WORD-FORMATIVE LEXIS OF VARDAN'S WORK "HISTORY OF TATARS"

In general, the language of Vardan is primarily distinguished by practical designs of word-formation of Grabar and word-formation peculiarities specific to the author.

Միլվա Պապիկյան (Հայաստան)

ՆԵՌ-Ն/ ԲԱՌԻ ՄԱՍԻՆ

ՆՀԲ-ի հեղինակները, նրանց հետևողությամբ Հ.Աճառյանը և Գ. Ջահուկյանը *Նեռ(ն)* բառի ծագումը կապում են Ներոն կայսեր անվանը (Ներոն – լատիներեն Nero՝ հ.-ե. *ner -«այր, տղամարդ») (ՀԱԲ¹, 4, 441, ՀՄԲ², 565): Անդրադառնալով բառի ծագմանը՝ Հ.Հյուբշմանը գտնում է, որ հնչյունական օրենքներով կարելի էր բացատրել Ներոն-Նեռ անցումը, սակայն «հնչյունական օրենքների ժամանակագրական հաջորդականությունը խանգարում է դրան»³:

Գրաբարի բառարաններում բացատրվում է «սուտ Քրիստոս, անտիքրիստոս, չարագործ, չար ոգի»: Բարբառներում, ինչպես նաև ժամանակակից հայերենի ժողովրդախոսակցական տարբերակում ունի «դաժան, դիակալ, խստասիրտ» իմաստները: Ս.Մալխասյանցի բառարանում բառն իր առաջնային (դոմինանտ) իմաստից բացի՝ ունի նաև ածականական իմաստ. «Չար, դաժան, դիակալ (նեռ մարդ, նեռ օձ. ՀԲԲ⁴, 3, 451): Է.Աղայանի բառարանում՝ «1. Սուտ Քրիստոս: 2. փխբ. Չար՝ նենգ մարդ: 3. փխբ. Արյունարբու մարդ, գազան»⁵:

Ներոն և *Նեռ* բառերի առնչակցության հիմքը հավանաբար Հովհան Ոսկեբերանի Թեսաղոնիկեցիների Երկրորդ թղթի մեկնության այս մախադասությունից է. «...զի խորհուրդն անօրէնութեան արդէն իսկ զօրանայ. զայս զՆերոնէ ասէ, որպէս թէ օրինակ էր նա Նեռին»⁶, ՆՀԲ-ի հեղինակ-

¹⁷ Վերջին երկուսը ԱԲ-ում հանդիպում են միայն որպէս համադրական բարդություններ:

¹ Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1-4, Ե., 1971-1979 (այսուհետև՝ ՀԱԲ):

² Գ.Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010 (այսուհետև՝ ՀՄԲ):

³ «Բանի որ այն հնչյունական օրենքը, համաձայն որի վերջնականի ձայնավորը սղվում է, արդեն իսկ հին հայերենում գործել է, և, ընդհակառակը, քրիստոնեության և անգամ մախաբիստոնեական պարթևական ժամանակաշրջանում վաղուց ի վեր դադարել է գործելուց»: Տե՛ս Հայնրիխ Հյուբշման, *Հայագիտական ուսումնասիրություններ*, Ե., 2004, էջ 469:

⁴ Ս.Մալխասեան, *Հայերեն բացատրական բառարան* (այսուհետև՝ ՀԲԲ):

⁵ Է.Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 1061:

⁶ Յոհաննու Ոսկեբերանի «Մեկնութիւն թղթոցն Պաղոսի», հ. 2, Վենետիկ, 1862, էջ 463:

ներից Գաբրիել Ավետիքյանը այդ մասին գրում է. «...վասն զի Ներոն իւրով ամբարշտութեամբ, անգթութեամբ եւ անհաշտ թշնամութեամբ առ քրիստոնէայս՝ եղև անդրանիկ խորհրդական Նեռին, եւ պատկեր համատիպ. մինչ զի ոչինչ պակաս քան զՆեռն երեւեալ ի չարութեան, կարծիք եղեն առ բարեմիտս՝ թէ նա ինքն իցէ Նեռն»⁷: Ինչպես երևում է Գ. Ավետիքյանի մեկնությունից, Նեռի մասին «բարեմիտները» արդեն գիտեին և նրան համեմատում էին Ներոնի հետ՝ պատմության մեջ հայտնի որպես քրիստոնյաների դիսերիմ հակառակորդ և հալածող:

Վարդան Այգեկցին գրում է. «...սուրբերն Աստուծոյ Հոգով աւելի վաղ տեսան ու պատմեցին Նեռի չարութիւնների ու դառը ժամանակի նեղութիւնների մասին» կամ «...որովհետեւ ամէն ոք, ով չի հաւատայ Յիսուս Քրիստոսին, ստուգապէս Նեռ կկոչուի: Նաեւ ով մարդկանց չարաչար նեղութիւններ հասցնի, ճշմարտաբար Նեռ կկոչուի»⁸: Ինչպես երևում է օրինակներից, Նեռը Քրիստոսին հակառակորդ ու չարիքներ գործողն է: Համաձայն Գ. Տաթևացու մեկնաբանության՝ Նեռը ոչ թե սատանա է, այլ, լինելով մարդ (Բ Թեսալ. 2.3)՝ սատանայի արքանյակն է, որին խորթ են ինչպես բնական, այնպես էլ ավետարանական օրենքները⁹:

Նեռ (ն) բառը Աստվածաշունչ մատյանում գործածված է հինգ անգամ¹⁰, Հովհաննէս առաքյալի ընդհանրական թղթերում՝ Ա Յհ. 2.18, Ա Յհ. 2.18, Ա Յհ. 2.22, Ա Յհ. 4.3, Բ Յհ. 1.7 (համապատասխան տեղերում՝ հունարեն, լատիներեն, ասորերեն, վրացերեն բնագրերում, Անտիքրիստոս բառն է գործածված) և դրանց մեկնություններում՝ Հովան Ոսկեբերանի «Մեկնութիւն Աւետարանին Յոհաննոս», Եփրեմ Ասորու «Մեկնութիւն թղթոցն Պողոսի առ Հռովմայեցիս» և այլն:

Գ. Տաթևացին «Գիրք հարցմանց»-ում¹¹ նեռ բառը գործածել է 38 անգամ. ընդ որում, բառի իմաստը դարձյալ առնչվում է չարի գաղափարին. հմմտ. «Եւ սատակեալ վիշապին տուտն է նեռն, որ ի վերջին ժամանակս քարշէ գերբորդ մասն աստեղաց» (Գիրք հարցմանց, էջ 706):

Ղ. Ալիշանը, խոսելով տարբեր չար ոգիների մասին, անդրադառնում է նաև Նեռին: Նա այնքան էլ չի հավատում Ներոն-Նեռ գուգադրությանը: Ալիշանի կարծիքով՝ «հին ժամանակներում հայերիս մեջ ճանաչված պիտի լինի այդ անունը կրող մի չար ոգի, և մեր թարգմանիչները այդ անունով կոչել են դերաքրիստոսին»¹²: Ալիշանի այս միտքը զարգացնում է Թ. Ավդալբեգյանը «Միհրը հայոց մէջ» հոդվածում («Հանդէս ամսօրեայ», 1928, էջ 418-428): Նա հավանական է համարում Նեռ (ն) բառի ծագումը Միհր աստծու անունից. բերում է Միհր – Մեհր- Մեր- Ներ-Նեռ-Նեռ (ն) փոփոխականները:

Հեղինակի կարծիքով՝ Ներոնի ժամանակ հայերը հռոմեացիների հետ շատ լավ հարաբերությունների մեջ էին, և հեթանոս հայերը առիթ չունեին անեծքով հիշելու Ներոնին. ընդհակառակը, հայտնի է, որ հայոց Տրդատ Առաջին արքան մեծ պատիվներով հյուրընկալվել է Հռոմում, իսկ Հռոմից վերադառնալուց հետո Ներոնի տված գումարով վերանորոգել է Արտաշատը և ի պատիվ կայսեր՝ անվանել «Ներոնիա»:

Միհրը լույսի, արևի, կրակի աստվածն էր միհրապաշտների մոտ: «Սակայն այդպէս չէր կարող լինել ոչ-միհրապաշտների շրջանում: Ինչպէս որ քաջ Արտաւազդը դառնում է դէւ Արտաւազդ, այնպէս էլ լուսաւոր, բարի Միհրը միհրատեացների միջավայրում դառնում է «վատ Միհր» (ն. տ., 498): Այսինքն՝ գաղափարախոսության փոփոխության հետևանքով հին աստվածները նսեմանում են, և Միհրը նեռնանում է: «Միհր անվան Նեռն բառ դառնալը և Միհր աստծու դիւացումը մենք ժամանակով անջատ ենք պատկերացնում. կարող է Միհր անունը հասած լինել Նեռն փոփոխակին՝ նախքան Միհրի դիւանալը: Ըստ այսմ, քրիստոնէութեան մուտքից առաջ էլ կարող են Միհրին ասած լինել Նեռն: Այս դեպքում դեռ Նեռ-ը կրակի բարի աստուածն է: Հետագայում է, որ Նեռն ստանում է վատ իմաստ և նշանակում է «Դերաքրիստոս»՝ նույնանիշը դառնալով «վատմիհր» գաղափարին» (ն. տ., 503):

Կարծում ենք՝ Ղ. Ալիշանի, Թ. Ավդալբեգյանի փաստարկները համոզիչ են, և կարելի է ենթադրել, որ հայերենում Նեռ(ն) անունով եղել է ինչ-որ չար ոգի, չարի կրող, և մեր թարգմանիչները Աստվածաշունչը թարգմանելիս Դերաքրիստոս բառի փոխարեն գործածել են հենց այդ բառը:

Եթե բառը ստացվածքային բառաշերտի հետ առնչություններ չունի, ապա դա թույլ է տալիս բառիմաստի ծագման այլ վարկածներ որոնել: Կարելի է առնչություններ որոնել նեռ (ն) և ների՝ «արու այծ» բառերի միջև:

Ների բառը վկայված չէ ՀԱԲ-ում, մեզ հայտնի գրաբարի բառարաններում, ՄՀԲ-ում¹³. արձանագրված է ԱՀԲԲ-ում (էջ 1055), ԺՀԼԲԲ-ում¹⁴ և ՀԼԲԲ-ում¹⁵. «արու այծ» նշանակությամբ: Ների-ն

⁷ Մեկնութիւն ԺԴ թղթոց երանելոյն Պողոսի առաքելոյ, հ. Բ, Վենետիկ, 1811, էջ 885:

⁸ Վարդան Այգեկցի, *Խրատներ*, «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, Ե., 2008, էջ 146:

⁹ Տե՛ս <http://hy.wikipedia.org/wiki>

¹⁰ Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, Հայաստանի Աստվածաշնչական ընկերություն, Ս.Էջմիածին, 2012, էջ 1348:

¹¹ Գ.Տաթևացի, *Գիրք հարցմանց*, Կոստանդնուպոլիս, 1729:

¹² Ղ.Ալիշան, *Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը*, Ե., 2002, էջ 121:

¹³ Ռ.Ղազարյան, Հ.Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, հ.1-2, Ե., 1987-1992:

¹⁴ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, Ե., 1969, էջ 28:

¹⁵ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ.Գ, Ե., 2007, էջ152:

արու այծն է: Իրանական լեզուներից փոխառյալ *նոխագ* բառը նույնպես «արու այծ» է նշանակում, որի ծագումը Հ. Հյուբշմանի հետևողությամբ Աճառյանը, ապա Գ. Ջահուկյանը կապում են միջին պարսկերեն գավառական մի ձևի՝ *nūhāz*՝ «արու այծ» (ՀԱԲ, 3, 463, ՀՄԲ¹⁶, 570):

Միջին պարսկերենի շրջանը մ.թ.ա. 4-3-րդ դդ. մինչև մ.թ. 10-րդ դարն է: Մի՞թե մինչ այդ հայերը չունեին «արու այծ» հասկացությունը անվանող բառ: Կենդանիների սեռային տարբերակումը կարևոր է եղել անասնապահությամբ զբաղվող հնդեվրոպական ժողովուրդների համար:

Կարծում ենք՝ «արու այծ» հասկացությունն անվանվել է *ների* բառով, որին փոխարինել է իրանական ծագումով *նոխագ*-ը:

Հիշենք հայերենի գունանունները, որոնցից միայն *դեղին*-ը և *դեղձան*-ը հնդեվրոպական ծագում ունեն. մյուս գունանունները՝ *կարմիր*, *կապույտ*, *սև*, *սպիտակ*, իրանական փոխառություններ են, մի մասի ծագումն անհայտ է: Հնարավոր չէ, որ հիշյալ գունանունները ծանոթ չլինեին հայերին: Հավանաբար, դրանք օտար բառերի ազդեցությամբ դուրս են եկել հայերենից: Կարծում ենք՝ նույն գործընթացն է տեղի ունեցել *ների* բառի հետ:

Այժը ինչպես առաջավորասիական տարածքի, այնպես էլ հնդեվրոպական ցեղերի պաշտամունքային կենդանիներից է եղել:

Այծի պաշտամունքը տարածված է եղել հեթանոսական Հայաստանում, որի մասին վկայում են Հայկական լեռնաշխարհում սփռված այծապատկերները (իծագրեր): Ժայռապատկերներում այծերը հաճախ պատկերված են արևանշանների ուղեկցությամբ¹⁷:

Այծի պաշտամունքի մասին հիշատակվում է «Սասունցի Դավիթ» էպոսում՝ «Բաղդասար քնուկ էր, մեկ գիշեր. Մեկ էլ տեսնի, ի՞նչ տեսնի լավ: Ջոջ կուռք էղավ իծու օրինակ, Մինչի լուս չթողեց, որ էն քներ, սթեր»¹⁸:

Այժը հայ ժողովրդական հեքիաթների գլխավոր «հերոսներից» է: Երբեմն նա բարի է, կրծքով կերակրում է անպաշտպան երեխային Այծատուր, Այծամանուկ), երբեմն էլ հակառակվում է, սկսում է պարել կամրջի վրա

այստեղից՝ («Էծի պարը կամրջին կբռնի» դարձվածքը):

Այծի պաշտամունքի լուռ վկայություններն են *այծ* արմատով կազմված տեղանունները՝ *Այծաբերդ*, *Այծապար*, *Այծամանց երկիր*, *Այծասար*, *Այծից քերդ* (*Այծաց քերդ*), *Այծալուկունք*, *Այծու պտկունք*:

Այժը Հայկական լեռնաշխարհի ցեղերից շատերի տոտեմական կենդանին է:

Այծին առնչվող հայերեն շատ դարձվածքներ կան, օր.՝ *այծ-այծ լինել*, *այծերը գալ*, *այծերը գնալ*, *այծերը քշել*, *այծերով (էծերով) մարդ*, *այծերը ոչխարներից ջոկել*: Հայերենի բարբառներում հանդիպում են՝ «*Էծն իր ոտովը կկախեն, ոչխարը՝ իր*» (Կարին, Շիրակ)՝ այսինքն՝ ամեն մարդ իր հանցանքին համապատասխան պիտի պատժվի: «*Էծին որ գելը չտանի, Երուսաղեմ կերթա*» (Կարին, Շիրակ), այսինքն՝ անարժանին որ հնարավորություն տաս՝ ինչ ասես՝ կանի¹⁹: Ինչպես հուշում են դարձվածքները, այժը հակառակվելու, ընդդիմանալու հատկանիշ ունի. ինչպես ժողովուրդն է ասում՝ «պոզերով է»: Այդպես են անվանում նաև կամակոր, ինքնասածի մարդուն (հմտ. նաև ֆր. *caprice*²⁰ «քմահաճույք, ինքնահաճություն» < լատիներեն *capra*²¹ «այծ»): Ըստ բանահյուսական տվյալների՝ հեթանոսական Հայաստանում *նոխագը* (*ներին*) զոհաբերվել է Սպանդարամետին (Սանդարամետին), որ անդունդների աստվածուհին էր: Հավանաբար անդրաշխարհի հետ կապված լինելու հանգամանքով է պայմանավորված մինչև վերջերս Հայաստանի տարբեր շրջաններում տարածված առաջին տարվա ննջեցյալին Սուրբ խաչին ուլ զոհաբերելու սովորությունը, որ ժողովուրդն անվանում է *ուլոց* կամ *ուլոց*²²:

Փորձենք աղերսներ գտնել *Նեռ* և *ների* «արու այծ» բառերի միջև:

Նեռ-ը, ինչպես երևում է մատենագրական տվյալներից, հակառակորդ է, բարուն հակառակ, անօրեն: Այժը նույնպես կամակոր ու հակառակվող է և, ինչպես բանահյուսական տվյալներն են հաստատում, առնչվում է անդրաշխարհին: Նեռը նույնպես առնչվում է անդրաշխարհին: Հ.Աճառյանը գրում է. «Հայերեն *ներ* ձևից փոխառեալ են համարում կապաղավկ. յն. νηροα, որ ըստ Karolides 200,

¹⁶ Գ.Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան* (այսուհետև՝ ՀՄԲ), Ե., 2010:

¹⁷ Հ.Մարտիրոսյան, Հ.Բաբայեյան, *Գեղամա լեռների ժայռապատկերները*, «Հայաստանի հնագիտական հուշարձաններ», 6, Ե., 1971, աղյուսակ 302:

¹⁸ Սասունցի Դավիթ, *Հայ ժողովրդական հերոսավեպ*, Ե., 1981, էջ 42:

¹⁹ Տե՛ս Մուրիսյան Ա., Գալստյան Ս., *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*, Ե., 1975, էջ 225:

²⁰ К.Ганшина, *Француско-русский словарь*, М., 1977, էջ 131:

²¹ И.Дворецкий, *Латинско-русский словарь*, М., 1986, էջ 120:

²² «Հայկական պարերի նշանավոր հետազոտող Սրբուհի Լիսիցյանն այդ իմաստները կապում է Սպանդարամետի զոհասեղանի մոտ գոհվող այծի շուրջը կատարվող ծիսական երգ ու պարերի հետ»: Այս մասին տե՛ս Վ.Հ.Բոդյան, *Հայ ազգագրություն. համառոտ ուրվագիծ*, Ե., 1974, էջ 177: *Այծախաղ* բառը հայերենում «ժողովրդական տոնախմբությունների ժամանակ զոհաբերվող նոխագը զոհելուց առաջ տեղի ունեցող արարողություն և դրանց զուգակցվող խաղեր» իմաստն ունի (ԱՀԲԲ, 41):

գործածական է ժողովրդական երգերի մէջ իբրև «Քարոն կամ մահ»։ Կանայք հասկանում են իբրև «միւս աշխարհը» (ՀԱԲ, 4, 442)։ Ընդ որում, Կարոյիդեսը բառը կցում է սանսկրիտի *narakas* «ստոր-երկրյա աշխարհ» բառին, որը բուդդայականության մեջ Բհումի՝ Երկրի աստծու որդին է, որն իրեն համարում էր ոչ միայն Անդրաշխարհի, այլև Երկնքի տիրակալը²³։

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ կարող ենք ենթադրել, որ Նեռ/ն/ անվանումով չարի կրողը թերևս կապ ունի *ների*՝ արու այծի հետ։ Հ.Աճառյանի նշած Կապադովկիայի հունարեն բարբառում հանդիպող *νηρια* (ներիա) բառը կարծես հաստատում է մեր ասածը։ Հավանաբար, Կապադովկիայի հունարեն բարբառում այդ բառը հայերենից անցած ժողովրդական փոխառություն է, որում առաջնայինը համարվել է *ների* (այծ) բառի կապը անդրաշխարհի հետ։

Արու այծին՝ *նոխազին*, այն է՝ *ներիին*, առաջավորասիական տարածքում մարդիկ զոհաբերում էին՝ նրան բարձր տեղից զգելով՝ նախապես նրան բեռնելով իրենց մեղքերով²⁴, գործած մեղքերից ազատվելու համար։

Հին հնդեվրոպական ցեղերն էլ այծի զոհաբերության ծիսակարգ ունեին։ Վեդայական արխաիկ ծիսակարգում ձիու ոտքերի առաջ այծ էին զոհաբերում, որը աստվածներին պետք է տեղեկացներ զոհաբերությունների սկզբի մասին²⁵։

Կարծում ենք՝ ինչպես առաջավորասիական տարածքում, այնպես էլ հին Հայաստանում այծը առնչվել է մեղքի քավության գաղափարին, և *ների*-ն՝ արու այծը, ժողովրդի հիշողության մեջ պահպանվել է որպես չարի խորհրդանիշ՝ կապվելով անդրաշխարհի և չարը իր վրա կրելու գաղափարների հետ։

Ների բառը փոխվել է և՛ իմաստով, և՛ ձևով։ Կարծում ենք՝ *ների* բառի վերջնականի *ի*-ի անկումով և *ր>ռ* անցումով առաջացել է *Նեռ* բառը։ Վերջնահանգի *ն*-ն, որ հաղիպում է միայն հին հայերենում, թերևս առաջացել է համաբանությամբ²⁶։ Իմաստային տեսակետից տեղի է ունեցել իմաստափոխություն կցորդային հիմունքով։

Ենթադրելի է, որ Աստվածաշունչ մատյանի հայ թարգմանիչները Դերաքրիստոս բառի փոխարեն գործածել են հենց ժողովրդին հասկանալի և քաջածանոթ *Նեռ* (*ն*) բառը, որն ըմբռնվում էր որպես հակառակորդ և չարի կրող։

Silva Papikyan (Armenia)

ABOUT THE WORD NER/N/

Some investigators consider the word Ner/n/ is borrowed from the name of the Emperor Nero. Others think the similarity of these two words is casual. The word has the meanings of “cruel, spiteful and obdurate”. If the word has no relationship to the substrate lexical layer, we can look for the relationship between the words “ner/n/” and “neri(meaning billy goat)”.

Լիլիթ Պետրոսյան (Հայաստան)

«ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹԻՒՆ ԵՒԳԼԻՏԻՆ» ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԵՐԿԻ ԳԻՏԱԲԱՌԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ

Մ.թ.ա. 3-րդ դարի հույն մաթեմատիկոս Եվկլիդեսի «Տարերք երկրաչափութեան» երկը 11-րդ դարում առաջին անգամ հայերեն է թարգմանել Գրիգոր Մագիստրոսը. «...ոչ ենք երբեք դադարեալ ի թարգմանությունեմ, և գերկրաչափականն գեղիլիդեսին սկսայ թարգմանել»¹։ 2-րդ անգամ, ըստ Ա. Աբրահամյանի, «Երկրաչափութիւն Եւգլիտին» երկը 16-րդ դարում թարգմանել է Գ. Կեսարացին²։

Ուսումնասիրելով «Երկրաչափութիւն Եւգլիտին» թարգմանական երկի բառապաշարը և այն համեմատելով ժամանակակից գիտական գրականության բառապաշարի հետ՝ պարզում ենք հայ գիտական մտքի պատմական զարգացման ևս մեկ կարևոր օղակ։

«Երկրաչափութիւն Եւգլիտին» երկի՝ կազմությամբ պարզ գիտաբառերը, ըստ ծագման, դասակարգվում են բնիկ հայերեն բառեր և օտարաբանություններ խմբերով։ Բնիկ հայերեն պարզ գիտաբա-

²³ Տե՛ս en. Wikipedia. Opg /Narakasura.

²⁴ «Նոխազ, զի մեղս մեր երարձ»։ տե՛ս Գ.Տաթևազի, *Գիրք հարցմանց*, Կոստանդնուպոլիս, 1729, էջ 361։

²⁵ Т. Гамкрелидзе, Вяч. Иванов, *Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры*, Тбилиси, 1984, էջ 587.

²⁶ Հ.Հյուբշման, *Հայագիտական հետազոտություններ*, Ե., 2004, էջ 469։

¹ Կ. Կոստանյանց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեք-պոլ, 1910, էջ 66։

² Երկրաչափութիւն Եւգլիտին, Գ. Պետրոսյան, Ա. Աբրահամյան, Առաջաբան, Երևան, 1962, էջ Թ-Ժ։

ները՝ **բոլոր, գիծ, ծայր, կետ**, բառաֆոնդի կազմի մեջ մտնող միավորներ են, որոնք օժտված են բազմ-
 իմաստությամբ: **Բոլոր** բառը հայ հին մատենագրության մեջ, իբրև գիտաբառ, գործածվել է դեռևս 5-րդ
 դարի թարգմանական երկերում, ինչպես՝ Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» երկում: **Մասունքն շարագրեալք՝ հաւասարք գոն բոլորին**: Սովսես Բերթողի «Գիրք Պիտոյից» երկում՝ **Ոչ**
մասունք առանց բոլորի բաղկանան, և ոչ բոլոր առանց մասանց: Այսպիսով հին հայերենում **բոլոր** բառը
 գործածվում էր և իբրև ածական, և իբրև գոյական՝ «1. Որ ինչ պարագրե ամենայն սարօք, բովանդակ,
 համայն, ամբողջ: 2. Բոլոր իրն: 3. Բոլորակ, գունտ և գնտածն» իմաստներով: Նոր բառգրքի հեղի-
 նակները, իբրև գիտական եզրույթի բացատրություն, ներկայացրել են Եվկլիդեսի սահմանումը՝ **Բոլորն**
մեծ է քան զմասն³: Ժամանակակից հայերենում **բոլոր** բառը գործածվում է իբրև դերանուն՝ նշանա-
 կելով «Առարկաների, երևույթների ամբողջությունն առանց բացառության», ինչպես՝ **Բոլոր ուժերս**
հավաքելով լեզվիս կապը խզեցի (ՀԹ): **Ինչքան որ հուր կա իմ սրտում՝ բոլորը քեզ** (ԵԶ)⁴:

Գիծ բառը բնութագրվում է իբրև **Գիծն է երկայնութիւն առանց լայնութեան և առանց**
խորութեան նշանակությամբ գիտաբառ. այն հաճախադեպ գործածվող բառաբաղադրիչ է «Երկրա-
 չափութիւն Եւգլիտին» երկում, ինչպես՝ **ուղղագիծ, ծռագիծ, խառնագիծ, կախագիծ** և այլն:

«Երկրաչափութիւն Եւգլիտին» երկի՝ կազմությամբ պարզ օտարաբանությունները հիմնակա-
 նում փոխառություններ են արաբերենից, ինչպես՝ **եթրաֆ** – **պարագիծ, մեքեզ** – **կենտրոն, միակեր** –
առանցք, հունարենից, ինչպես՝ **դրաքեզ** – **սեղան, պիրամիդ** – **բուրգ, ռոմպոս** – **շեղ, կլիլինդրոս** – **զլան** և
 այլն: Վերջիններս գործածվում են և՛ որպես առանձին բառեր, և՛ որպես բառաբաղադրիչներ, ինչպես՝
դրաքեզաման, ռոմպոսաման, այսպիսով թարգմանիչ-հեղինակը նախընտրում է միջազգային
 տերմինի հայերեն կիրառությունն իր խոսքում և կերտում է նորաբանություններ, որոնք, սակայն,
 ժամանակակից հայերենում չեն գործածվում, քանի որ փոխարինվել են գրական հայերեն համար-
 ժեքներով. **սեղանածև, շեղանկյուն**:

«Երկրաչափութիւն Եւգլիտին» երկում հատկապես պարսկերեն և թուրքերեն օտարաբանու-
 թյուններով են ներկայացված երկրաչափական գործիքների անվանումները. **փերկել** (պարսկ.) – **կար-**
կին, տիրպլին (պարսկ.) – **հեռադիտակ, սհադ** (թուրք.) – **ժամացույց, չուան** – **պարան**:

«Երկրաչափութիւն Եւգլիտին» երկի՝ կազմությամբ բաղադրյալ գիտաբառերը, ըստ պատ-
 մական զարգացման, դասակարգվում են ժամանակակից հայերենում պահպանված և ժամանակակից
 հայերենում չպահպանված խմբերով: Ինչպես՝ **անուանիչ, թուիչ, կախագիծ, հանգէտ, հաւկաշորջա-**
նակ, յայտնաբանել բառերը այլևս գործածական չեն. դրանք համապատասխանաբար գործածվում են
 հոմանիշ բառատարբերակներով, ինչպես՝ **հայտարար, համարիչ, ուղղահայաց, զուգահեռ, ձվածև**
շրջանակ, եզրակացնել:

«Երկրաչափութիւն Եւգլիտին» երկի գրաբար թարգմանության մեջ **անկիւն** դասային հաս-
 կացությունը ներկայացված է **անուղիղ** և **ուղիղ** ենթադասային դասակարգումներով, որոնցից առաջինը
 համապատասխանաբար ունի **բութ, շեղ, ծուռ** տեսակները: Ժամանակակից գիտական ոճում այս
 համակարգային բաշխումը պահպանված չէ, և **ուղիղ անկյուն** դասային հասկացությանը միանգամից
 հակադրվում են տեսակային անվանումները՝ **բութ անկյուն, սուր անկյուն**:

«Երկրաչափութիւն Եւգլիտին» երկի՝ ժամանակակից հայերենում պահպանված կազմությամբ
 բաղադրյալ գիտաբառերը ենթադասակարգվում են իմաստային փոփոխությունների ենթարկված և
 իմաստային փոփոխությունների չենթարկված խմբերով:

1. Իմաստային փոփոխությունների են ենթրկվել **անկարգ, անհաւասար, կարգաւոր,**
նշանագրել, տրամաչափ և այլ բառեր: **Անկարգ** ածականով թարգմանիչ-երկրաչափ բնութագրել է **ձև**
 գոյականը՝ **Օտար ի կարգէ** իմաստով: Ժամանակակից հայերենում **անկարգ** ածականով գեղարվես-
 տական հիշարժան օրինակներ կան Հ. Թումանյանի երկերում՝ «1. Կանոնավոր դասավորություն չու-
 նեցող, ցրիվ, խառնիխուռն: 2. Անպատշաճ, անվայել» իմաստներով. **Ու մագերն անկարգ տված քի-**
կունքով Ու ցրված շիկնած այտերի վրան, Դուրս եկավ թեթև ամպերի տակից Անուշը՝ փախած եղնիկի
մման: Էլ անպատիվ, անկարգ խոսքեր, էլ հին ու նոր, էլ հեր ու մեր....

Անհավասար ածականով թարգմանիչ-երկրաչափ բնութագրել է **եռանկյունի, մեծութիւն, գիծ**
 գոյականները հետևյալ բացատրությամբ՝ **Թէ յաւելու ի վերայ անհաւասարին հաւասար, լինին**
ամենեքեան անհաւասար. և եթէ պակասէ յանհաւասարէն հաւասար, որ մնայն՝ անհաւասար է:
 Ժամանակակից հայերենում **անհաւասար** բառը գործածվում է և՛ գոյականական, և՛ բայական բա-
 ռակապակցություններում՝ «1. Չափով քանակով ոչ հաւասար: 2. Անհարթ» իմաստներով, ինչպես՝
 Բաֆֆու ստեղծագործություններից մեջքերված **Քայց ինչու եք այդպես անհավասար կերպով բաժանել,**
երեքը բերել եք մեզ համար, մեկը միայն թողել եք ձեր երկուսի համար: Կողու անհավասար
մակերևույթի վրա ամեն բոյս աճել, ամեն բոյս բազմացել էր նախադասություններում:

³ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, հ. 1, 1836, հ. 2, 1837:

⁴ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, հ. 1, 1969, հ. 2, 1972, հ. 3, 1974, հ. 4, 1980:

Վերոհիշյալ ածականներին հականիշ՝ *կարգաւոր* բառը «Երկրաչափութիւն Եւգլիտին» երկում *Ուր գոյ կարգ, կարգաւորեալ, բարեկարգ* իմաստներով բնութագրում է նույնպէս *ձև* գոյականը: Հայ հին մատենագրության մեջ *կարգաւոր* ածականով բնութագրվում էին *բան, օրենք, ճանապարհ, մահ, քննութիւն, շարագրութիւն* գոյականները: Ժամանակակից հայերենում *կարգաւոր* բառը գործածվում է իբրև եկեղեցական տերմին՝ «Կրօնական աստիճան ունեցող հոգևորական» իմաստով. *Չարամանկ կատուն ձգեց իր վրան փիլոն մի անգամ՝ դարձալ կարգաւոր* (Ա.Ի.): *Ու կարգաւոր մի վարդապետ բեղմորութով վանք է եկել* (Պ.Ս.):

Նշանագրեմ բայը հայ հին գրականության մեջ առաջին անգամ հանդիպում է Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմի» երկում՝ *Գրեւ, շարադրել* իմաստներով. *Սիւս նշանագրեցի յայսմ յեօթն յեղանակի*: «Երկրաչափութիւն Եւգլիտին» երկում թարգմանիչ-հեղինակը *նշանագրեմ* բայը կիրառում է «Նշանագրովք դրոշմել» իմաստով. *Եթէ կամիս գտուեալ գիծն ա ք բաժանել զհինգ հաւասար մասունս, նշանագրեա ըստ հաճոյից քոց ի վերայ անասինան գծին գ դ զհինգ հաւասար մասունս...* Ժամանակակից հայերենում *նշանագրել* բայը գործածվում է «Նշաններով գրել, նշանագրերով արտահայտել» իմաստներով. *Հասալ ամենակատարյալ ձևին. այն է՝ յուրաքանչյուր տառով մի լեզվի մեջ գոյություն ունեցող ձայները նշանագրելուն* (Լեո):

Տրամաչափ գոյականը, ինչպէս վկայում են Նոր բառգրքի հեղինակները, հունարենից կատարված բառապատճենում է՝ «Որ ինչ չափէ զմիջոց իբր գտրամագիծ. յար և նման ինչ» իմաստներով: «Երկրաչափութիւն Եւգլիտին» երկի թարգմանիչ-հեղինակը սահմանում է *տրամաչափ* գոյականը. *Տրամաչափն շրջանակին ուղիղ գիծն մի է, որ անցանի ընդ մերթզն շրջանակին և վերջանայ յերկաքանչիւր կողմանէ ի պարբերութիւնն, որպիսի է ա գ*: Ժամանակակից հայերենում *տրամաչափ* գոյականը ենթարկվել է բառիմաստի նեղացման՝ նշանակելով «1. Հրագենի փողի տրամագիծը՝ տրամագծի չափը և համապատասխանաբար լիցքի՝ փամփուշտի, արկի մեծությունը», ինչպէս՝ Ավելի հեռվում հոխորտում էր մեծ տրամաչափի մի գնդացի (ԲՀ):

2. Իմաստային փոփոխությունների չեն ենթարկվել *մակերևոյթ, եռանկիւն, բազմանկիւն, ուղղանկիւն քառանկիւն, ուղղագիծ, քառակուսի* և այլ բառեր, որոնք շարունակում են գործածվել գիտական գրականության մեջ եվկլիդեսյան պարզ, բայց ճշմարիտ սահմանումներով: *Մակերևոյթն է մեծութիւն մի երկայն և լայն առանց խորութեան: Եռանկիւնի ձևն է սահմանեալ երեք ուղիղ գծիւք: Քառանկիւնի ձևն է տափակ ձև մի՝ սահմանեալ չորս ուղիղ գծիւք: Բազմանկիւնի ձևն է տափակ ձև մի՝ սահմանեալ առաւել քան զչորս ուղիղ գծիւք: Ուղղագիծ անկիւնն այն է, որոյ երկու գիծքն ուղիղ գիծք են: Այն ձևն անուանի ուղղանկիւնին եռանկիւնի, որ զուղիղ անկիւն մի ունի: Երկար քառակուսին կամ ուղղանկիւնին է ձև մի քառակողմանի, որ զամենայն անկիւնս ուղիղ ունի, բայց ոչ ունի զամենայն կողմունս հաւասար:*

Գիտական գրականության լեզվի պատմական ուսումնասիրությունը նպատակ ունի կատարելագործելու լեզվաբանության և բնական գիտությունների միջառարկայական ուսումնասիրությունները և դրսևորելու խոր գիտելիքներ մասնագիտական ոլորտում, որն այսօրվա կրթական համակարգի կառուր դրույթներից է:

Lilit Petrosyan (Armenia)

SCIENTIFIC TERMS AND THEIR HISTORICAL DEVELOPMENT IN “EUCLID’S GEOMETRY”

The present article studies the scientific terms of “Euclid’s Geometry”. According to the structure the scientific terms of “Euclid’s Geometry” are classified into simple, derivative and compound. The scientific terms of “Euclid’s Geometry” underwent different semantic changes. Most of them have become obsolete in modern scientific literature. Their study aims at revealing the development and changes of Armenian scientific thinking. The first investigation of the translation of “Euclid’s Geometry” by Grigor Kesaratsi was made by A. Abrahamyan.

Նորայր Պողոսյան (Հայաստան)

16-17-ԲԴ ԴԱՐԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

16-17-րդ դարերը նոր փուլ են հայոց լեզվի պատմության և ընդհանրապես գրավոր մշակույթի համար: Նախորդ մեկ-երկու դարերի համեմատական անդորրից հետո այս շրջանում ստեղծվում են հնարավոր գրեթե բոլոր ժանրերի բազմաթիվ ինքնուրույն և թարգմանական ստեղծագործություններ:

Ժանրային առումով դրանք խիստ լայն ընդգրկում ունեն` պատմագրություն, ուղեգրություն, գեղարվեստական գրականություն, իմաստասիրական և քերականական երկեր, հիշատակարաններ, կոնդակներ, մամակներ, վանական գրանցամատյաններ («քյոթուկներ»), քաղաքային ու դատական գրագրություններ և այլն: Պահպանվել է նաև դիվանական հարուստ ժառանգություն` կաթողիկոսական, պատրիարքական գրագրություններ (Էջմիածին, Կ.Պոլիս, Նոր Զուղա, Երուսաղեմ, Վենետիկ և այլն), որոնց մի մասն այսօր տպագրված է:

Լեզվական առումով ուշ միջնադարում ստեղծված այս երկերը բնութագրվում են անմիօրինակությամբ. իրար կողք-կողքի գոյակցում են գրաբարով, նոր ձևավորվող աշխարհաբարով ու ժամանակի բարբառներով գրված երկեր: Ըստ լեզվական որակի դրանք կարելի է մի քանի հիմնական խմբերի բաժանել:

1. Գրաբար բնագրեր: Ուշ միջնադարում գրաբարը պահպանում է եկեղեցու, դավանանքի, գիտության լեզու լինելու իր գործառնությունը, և բնականաբար շարունակում են ստեղծվել գրաբարով երկեր: Այս շրջանի գրաբարը որոշակիորեն տարբերվում է դասական շրջանից:

Հիմնականում գրաբարով են գրված դիվանական փաստաթղթերը` «Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ ի Ս.Ղազար», «Դիւան Սուրբ Յակոբայ», պատմագրական երկերը (Ա.Դարիժեցի, Ստ. Լօքշա և այլն), մամակներն ու պաշտոնական գրությունները, կոնդակները:

Նոր որակի գրաբար է լատինաբան հայերենը:

2. Գրաբար-աշխարհաբար միախառն բնագրեր: Այս խմբում տարբերակվում են երկու ենթախմբեր: ա) Աշխարհաբար («ռամկախառն») տարրերով հարուստ գրաբար, ուր քերականական հիմքը գրաբարն է, օրինակ` Յովհաննէս Կամենացի «Պատմութիւն պատերազմին Խոթինո», Զաքարեայ Սարկաւազ «Պատմագրութիւն», Յակոբ Կարնեցի «Տեղագիր Վերին Հայոց» և այլն: բ) Գրաբարախառն աշխարհաբար, ուր հենքը չնորմավորված աշխարհաբարն է, բայց հեղինակները գործածում են նաև գրաբարյան ձևեր, ինչպես` Յովհաննէս Թութունջի «Ուղեգրութիւն», Օգոստինոս Բաջեցի «Ժամանակագրութիւն», Ավետիք Տիգրանակերտցի «Տէֆթեր գիրք» և այլն:

Լինելով միջին հայերենից աշխարհաբարի անցման փուլում ստեղծված երկեր` 16-18-րդ դարերի հայերեն բնագրերն աչքի են ընկնում այս շրջանի` վաղ աշխարհաբարի բազմաձևությամբ: Հաճախ միևնույն երկում, անգամ` միևնույն էջին կամ նախադասության մեջ կարելի է հանդիպել գրաբարը, միջին հայերենը, այս կամ այն բարբառը ներկայացնող լեզվական իրողություններ: Օրինակ.

Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի 1670 թ. մի կտակից. «Որքան վերայ հայիմք, տարի քան զտարի ըստ հաճոյիցն Աստուծոյ գործ նուագում է»:

Ս.Հակոբի դիվանական գրություններից մի հատված, ուր մեկ նախադասության մեջ հանդիպում են գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար տարրեր. «Տէր կամեսցի, և մինչ ի Ղաթեա գամ, թէ տեսնում, թէ դապիլ է, միայնակ թիկնով կու ժամանեմ»:

Հակոբ Կարնեցու «Ժամանակագրութեան» մեջ հետևյալ հատվածը գրական լեզվի սաղմնավորման մի նմուշ կարելի է համարել. «Ի թվականութեանս մերում ՌԾԵ (1606) սով սաստիկ է եղեար, որ մարդ գմարդ, շուն և կատու կերեալ են»: Հետագա էջերին հեղինակը միախառն գործածում է այդ ձևերը, օրինակ` «Տէր Գեորգն և Տէր Անանիան քահանայ են եղեալե: «Զմիմեանց երկիրն ասպատակեն և թալանեն և գողանան եղեր հանապազ»:

Մեկ այլ օրինակ. «Աւագ եկեղեցին խիստ զարմանալի շէնք այ և մեծ, ԳՃՌ հոգի աւելի կու տանի»,` այս հատվածի մասին պետք է ասել, որ հեղինակը` Օգոստինոս Բաջեցին իր երկի սկզբում առավել շատ օգտագործում է *աւ*-ով բայաձևեր (շէնք այ), հետո անցնում է *կու*-ով ձևերին, որն անշուշտ առավել հոգեհարազատ էր իր ծննդավայրին, և այդպիսով միևնույն ստեղծագործության մեջ գուցա հեռաբար գործածվել են երկու ձևերն էլ:

3. Բարբառային բնագրեր: Դրանք որոշ առումով կարելի է դիտարկել որպես այս կամ այն բարբառի նախնական արտահայտություններ, ինչպես` Զաքարիա Ագուլեցու «Օրագրութիւն», «Յիշատակարան Սանահնոյ վանից», «Ակոռու Ս.Հակոբ վանքի քյոթուկը» և այլն: Այս դեպքում խոսքը ոչ թե բարբառային տարրեր պարունակող բնագրերի մասին է, այլ այնպիսի տեքստերի, որոնք գրվել են

ուղղակի իր ժամանակի բարբառով և հնարավոր է տեղայնացնել՝ մատնացույց անել կոնկրետ բարբառի հնչյունական, ձևաբանական կամ այլ հատկանիշի առկայությունը: Այդ իմաստով 16-17-րդ դարերը հատկանշական են, քանի որ զուտ բարբառային առաջին տեքստերը պահպանվել և մեզ են հասել այս շրջանից, դրանից առաջ բարբառային տեքստ այսօրվա պատկերացմամբ չենք հանդիպում: Այդպիսին է Ամստերդամի հայերի խնդրագիրը՝ ուղղված իր ժամանակվա իշխանությանը. «Կու խնդրիմ, որ էտոնց բաներին վերահասու լինես, որ ետ խեղջ տղին ջապր ու սեվնամ առին... չուն էտ բաներն տեղտայ ա անում»: Նման բարբառային բնագրեր են նաև՝ Տրանսիլվանիայի հայերի գրագրությունները (հրատ. Գովրիկյան), Ջուրաքահանայի ուղեգրությունը, Եդիա Կարնեցու նամականին և այլն:

Այս շրջանի երկերը հավասարապես կարևոր են հայագիտության և գիտության պատմության բոլոր ճյուղերի համար: Մեկ օրինակով փաստենք ասվածը:

17-րդ դարում մեծ վերելք ապրած հայ առևտրական կապիտալի պատմության ուսումնասիրության համար կարևորագույն նշանակություն ունեն այս շրջանում ստեղծված՝ մասնագիտական բնույթի բազմաթիվ աղբյուրներ: Դրանց արտացոլումն են՝ Դուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թոյ եւ դրամից բոլոր աշխարհի» (Ամստերդամ, 1699) գիրքը, հայ վաճառականների նոտարական և վաճառականական ակտերը (մոտ 1000 փաստաթուղթ), 350 կտակները Վենետիկի, Ջենովայի, Լիվոռնոյի, Ֆլորենցիայի պետական արխիվներից (անտիպ) և այլն:

* * *

16-17-րդ դարերում ստեղծված երկերի մի մասը դեռևս մնում են ձեռագիր վիճակում, օրինակ՝ Կոստանդ Ջուդայեցու «Վասն նորահաս մանկանց եւ երիտասարդաց վաճառականաց խրատ», Գասպար Շեքիրմանեանի «Հաշվեմատեան», հայերեն պարտամուրիականներ, կտակներ և այլ գրություններ:

Անտիպ են մնում հատկապես դիվանական բազմաթիվ փաստաթղթեր, այդ թվում՝ Նոր Ջուդայի, Երուսաղեմի, Լվովի, Ամստերդամի պետական արխիվներում:

Առանձին և տարողունակ թեմա է հայ հնատիպ գրքի լեզվի քննությունը: 1512-ից մինչև 1700 թթ. տպագրվել են 184 անուն գրքեր, որոնք բովանդակում են վերը թվարկված բոլոր ժանրերը, լեզվական բոլոր շերտերը, այդ թվում՝ երեք զուտ աշխարհաբարյան գրքեր («Արիեստ համարողութեան», «Պարզաբանութիւն Սաղմոսացն Դաթի», «Գանձ չափոյ, կշռոյ, թոյոց եւ դրամից բոլոր աշխարհի»): Սրանց մեջ քիչ չեն նաև լատինաբան հայերենը ներկայացնող երկերն ու թարգմանությունները, որոնցից հիշատակելի է Հովհաննես Պոնայի «Ձեռքածութիւն յերկինս» թարգմանական երկը, որին կցված է Վարդան Հունանյանի՝ ամբողջությամբ լատինաբան հայերենը ներկայացնող բառարանը:

Մեր կողմից հավաքվել և 2012 թ. առանձին աշխատության մեջ հրատարակվել է հնատիպ գրքերից ևս մեկ արգասիք՝ գրքերի էջերին արված ձեռագիր հիշատակագրությունները, նշումները, լուսանցագրերը¹: Դրանք ժանրային առումով և լեզվական կաղապարով հիմնականում նման են ձեռագիր հիշատակարաններին: Պարունակում են նաև թե՛ վաղ աշխարհաբարը ուսումնասիրելու, թե՛ պատմական ու ազգագրական ինչ-ինչ փաստեր:

Օրինակ, Երեմիա Մեդրեցու «Բառգիրք հայոց»-ի (1698 թ.) ԳԱԱ օրինակի հետևյալ հիշատակագրությունը շատ բանով հիշեցնում է ավելի ուշ շրջանի գրական լեզուն. «Սուրբ Էջմիածնայ գիտի անունն Վարդգես է, Վաղարշ Արշակունին մեծացրել է և իւր անունն դրել»: Այս փոքր հատվածն իսկ ցույց է տալիս, որ 19-րդ դարի կեսերից մեզ հայտնի՝ Արարատյան բարբառի հիմքի վրա նոր ձևավորվող գրական արևելախայերենի նախնական տարբերակն իրականում գործածվել ու նաև գրվել է շատ ավելի վաղ՝ առնվազն 17-րդ դարի վերջերից:

* * *

Կան նաև մեծ թվով բնագրեր, որոնք մինչ օրս հայտնի չեն կամ կորած են: Հայագիտությունը կարևոր այս թեման դեռևս ավարտին չի հասցրել: Ծանոթ ամենամանրամասն աշխատությունը պատկանում է Նորայր Պողարյանին, որ ի մի է հավաքել միջնադարի մի շարք բնագրեր, որոնք ներկայումս համարվում են կորած: Մեր քարտարանում հավաքվել է վաղ միջնադարից մինչև 18-րդ դարը ստեղծված 60-ից ավելի ստեղծագործություններ՝ գիտական, գեղարվեստական, պատմագրական, թարգմանական և այլն: Միայն մեզ հետաքրքրող՝ 16-17-րդ դարերից թվարկենք մի քանիսը միայն:

- Հաղպատի վանքն ունեցել է իր ժամանակագրության ավանդական մատյանը՝ «Զորուկը», որը չի պահպանվել (հմմտ. «Սանահինի քեթուկը», Ս.Էջմիածին, 2008):

- Հաննա վարդապետ Երուսաղեմացին Դուկաս վրդ. Խարբերդցու թարգմանությունների շարքում իններորդը նշում է «Գիրք իմն քարոզութեան ի վերայ ամենայն կիրակեից բոլոր տարւոյն» անունով հատորը, «որմէ որեւէ ձեռագիր յայտնի չէ»:

¹ Նորայր Պողոսյան, *Հայ հնատիպ գրքի ձեռագիր հիշատակագրություններ*, Երևան, ԵՊՀ հրատ., 2012:

- Ֆրանսիական աղբյուրներում պահպանվել է Հովհաննես Կոլոտ պատրիարքի 28 աշխատությունների ցանկը, դրանց մեջ՝ հայերեն և թուրքերեն տաղերի և մանրավեպերի մի հավաքածու, որը տակավին անձանոթ է:

- Գրիգոր Կեսարացի, «Թուականք եւ պատմութիւն յԱդամայ մինչեւ ի մեր ՌՁԵ (1636) թուին»:

- Հովհաննես Այնթապցի Սիսի կաթողիկոսը (1602-1627 թթ.), գրել է Կիլիկիո կաթողիկոսների պատմությունը, ինչպես վկայում է Կիլիկիայի Եփրեմ Աջապահյան կաթողիկոսը (1771-1785), սակայն գվածքն այժմ անհայտ է:

- Երեմիա Քյոմուրճյան, «Աշխարհագրություն», չի պահպանվել:

- Հակոբ քահանա Ամասիացի, 1635 թ. հորինել է Երուսաղեմի պատմություն, որը անձանոթ է ցայժմ:

- Եղիա Կարնեցուց (17-րդ դարի հեղինակ) մի շարք աշխատություններ մեզ չեն հասել. ա) «Ազգաբանութիւն», բ) «Պատմագիրք», գ) «Փոքրիկ պատմութիւն»՝ Հնդկաստանի առևտրի մասին, դ) «Ընդհանուր պատմութիւն»:

- Հ. Անտոն Նազարյան (17-րդ դարի Միաբանող հայերի առաջնորդներից), գրել է Իրանից Եվրոպա կատարած իր դեսպանության պատմությունը հայերեն, որ մաս թարգմանվել է լատիներեն, հայտնի չէ՝ ուր է հայերեն այդ բնագիրը (ըստ Ղ.Ալիշանի):

Այս շարքը կարելի է շարունակել: Կարծում ենք հայագիտության համար արդիական խնդիր է այդ բնագրերի հայտնագործումն ու հրապարակումը:

ՌԻՀ միջնադարի հայտնի հոգևոր գործիչներին, վարդապետներին է թվարկում Առաքել Դավրիժեցին իր պատմության մի դրվագի մեջ: Նրանցից յուրաքանչյուրը գրական, դիվանական եթե գոնե մեկ երկ թողած լիներ, ապա կստացվեր պատկառելի մի ցանկ. Յովհաննես Համշենցի, Գրիգոր Տարօնացի, Յովհաննես Շիրակ, Դուկաս Կեղեցի, Սրապիոն Ուռհայեցի, Գրիգոր Կեսարացի, Մովսես Սիւնեցի, Վարդան Մակունցի և այլն:

* * *

Իբրև ամփոփում պետք է ասել, որ խիստ ակնառու է 16-17-րդ դարերում գրավոր, մտավոր ու մասնատեսական վերելքը հայ իրականության մեջ՝ թե՛ բուն Հայաստանում, թե՛ գաղթավայրերում (հատկապես՝ Լեհաստան, Դրիմ, Նոր Ջուղա, Տրանսիլվանիա, Հոլանդիա, Իտալիա) և վստահաբար հայ գրավոր մշակույթի այս շրջանը պետք է անվանել հայկական «երկրորդ վերածնունդ»: Այդպիսի մտքեր գիտական գրականության մեջ հնչել են, օրինակ՝ Հրաչիկ Միրզոյանի կողմից: Եվ կարծում ենք այս շրջանի ուսումնասիրությունները պետք է շարունակել հատկապես այդ հայեցակարգով՝ 16-17-րդ դարերը որպես հայկական երկրորդ վերածնունդ:

Վերջում կցանկանանք հավելել, որ այս շրջանի հայերեն աղբյուրները փորձում ենք քննել բապառաշարային տեսանկյունից: Միայն նորակազմ, իմաստափոխված, նոր փոխառյալ բառերը, որոնք քաղել ենք մոտ յոթանասուն երկերից, հասնում են չորս հազարի: Դրանց հիման վրա հրատարակության է պատրաստվել «Վաղ աշխարհաբարի նորահայտ բառերի բառարան» պայմանական անունը կրող աշխատությունը:

Norayr Poghosyan (Armenia)

THE CHARACTERISTICS OF THE 16-17TH CENTURIES ARMENIAN WRITTEN SOURCES

During the 16-17th centuries a large number of Armenian written works were being created. These works include nearly all the genres that might be created then, such as: historiography, grammar, travel memories, notes, records, encyclicals, letters, judicial correspondences, literary works, etc. In linguistic terms, these works are described as unique ones. Works written in Old Armenian, in the Old Armenian language of peasants' dialects, in newly formed New Armenian and in all other dialects of the time, existed side by side. There are especially a large number of sources rich in the elements of both Old Armenian and New Armenian that display New Armenian formation process.

A part of the works created during the 16-17th centuries are published now, whereas the rest is still unpublished. This publication includes the names of more than several decades of lost sources. The discovery of theirs is of great scientific value.

ՂԱՐԱՔԱՂԻ ԲԱՐՔԱՌԸ 19-20-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԼԵՁՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ղարաքաղի բարբառի մասին առաջին վկայությունը թողել է 8-րդ դարի քերական Ստեփանոս Սյունեցին¹, սակայն բարբառի բուն ուսումնասիրությունը սկիզբ է առնում 19-րդ դարի վերջից, երբ Բ. Պատկանյանը իր 1869թ. հրատարակած «Исследование о диалектах армянского языка» աշխատության մեջ հայ բարբառների դասակարգմանը և որոշ բարբառների նկարագրությանը զուգընթաց 18 էջի սահմաններում ներկայացրեց Ղարաքաղի բարբառի հակիրճ ուսումնասիրությունը²: Հեղինակը հիմնվել է երկու զաքաթալեցու տրամադրած մի քանի էջ գրավոր նմուշների վրա, որոնք, գրված լինելով կիսադարաբաղյան բարբառով, հնչյունաբանական և ձևաբանական որոշ սխալ ընդհանրացումների տեղիք են տվել: Միաժամանակ, խոսելով Խոյի բարբառի մասին, նա հավաստում է, որ այդ բարբառը խոսվում է Խոյում, Սալմատում, ինչպես նաև Ղարաքաղի մի քանի տեղերում՝ Շուշվա շրջակայքում՝ Ավետարանոցում և այլուր, և որ այն շատ կողմերով թեև նման է Ղարաքաղի բարբառին, սակայն ունի մի շարք տարբերություններ՝ ի-ն է դարձնելու հակում, բայական ներգոյականի ս-ով կազմություն, ու-ի փոխարեն ական-ով ապառնի դերբայի կազմություն և այլն: Բարբառի վերաբերյալ առաջին լուրջ ուսումնասիրությունը կատարել է Հր. Աճառյանը: Դեռևս Փարիզում ուսանելու ժամանակ փորձառական հնչյունաբանության հիմնադիր Ռուսոյի լաբորատորիայում փորձառական մեթոդով նա մի քանի բարբառախոսների և իր անձի վրա ուսումնասիրության էր ենթարկել համապատասխան բարբառների հնչյունաբանությունը, այդ թվում՝ նաև Շուշվի խոսվածքը: 1899-1901 թթ. «Արարատ» ամսագրում տպագրվում է «Զննութիւն Ղարաքաղի բարբառին» ուսումնասիրությունը, որը 1901 թ. հրատարակվում է առանձին գրքով³: Ի տարբերություն բարբառագիտական նախորդ երկու՝ Ասլանբեկի և Սուշավայի բարբառներին նվիրված մենագրությունների, որոնք հրատարակվել են գրական արևմտահայերենի տառադարձությամբ, Աճառյանը այս աշխատությունը գրել է իր մշակած բարբառագիտական տառադարձությամբ: Չիմանալով Ղարաքաղի բարբառը՝ հեղինակը ուսումնասիրությունները հիմնականում կատարել է բարբառով տպագրված նյութերի հիման վրա՝ օգնական ունենալով Ավետիս Տեր-Հարությունյանին (ծննդով Հաղուրթի շրջանի Թաղոտ գյուղից):

Թերևս դրա, ինչպես նաև բարբառագիտական փորձի պակասի պատճառով «Զննութիւն Ղարաքաղի բարբառին» աշխատությունը իր մակարդակով ու լիարժեքությամբ զիջում է հաջորդ մենագրություններին: Սակայն որպես բարբառի ամբողջական ուսումնասիրություն՝ այն լուրջ աշխատություն է և մեծ նշանակություն ունեցավ ինչպես հեղինակի բարբառագիտական աշխատանքների, այնպես էլ այլոց կողմից Ղարաքաղի բարբառի ուսումնասիրման համար: Այստեղ առանձին ենթաբաժիններով ներկայացվում են բարբառի հնչյունախոսությունը, ձայնավորների, բաղաձայնների և երկհնչյունների հնչյունափոխությունը և քերականական որոշ առանձնահատկություններ: Ընդհանուր առմամբ հեղինակը համեմատության ելակետ է ընդունում գրաբարը, սակայն հաճախ՝ այս կամ այն լեզվական օրինաչափությունը ներկայացնելիս, համեմատության եզրեր է անցկացնում այլ բարբառներում առկա համապատասխան երևույթների հետ, մի հանգամանք, որ հատուկ է նրա բոլոր աշխատություններին: Աշխատության մեջ Աճառյանը միաժամանակ արտահայտում է ընդհանուր բնույթի ուշագրավ կարծիքներ: Այսպես, խոսելով բարբառի շեշտադրության մասին, նա հանգում է այն եզրակացության, որ արևելյան մի շարք բարբառների վերջընթեր շեշտը «գուտ հետևություն և շարունակություն է իրենց կորսնցուցած նախկին բնիկ լեզվի շեշտադրության»: Ուսումնասիրության արդյունքները ամփոփվել են 1909 թ. Փարիզում ֆրանսերեն լեզվով տպագրված «Հայ բարբառների դասակարգումը» աշխատության⁴ մեջ, որը լրացված և վերամշակված վերահրատարակվեց հայերեն 1911 թ., ինչպես նաև «Հայոց լեզվի պատմության» երկրորդ մասում (Երևան, 1951)՝ «Հայերենի բարբառները» գլխում: Այս աշխատություններում հեղինակը Ղարաքաղի բարբառը համարում է բոլոր հայ բարբառներից ամենամեծն ու ամենատարածվածը՝ այն դասելով «ուժ» ճյուղի բարբառների շարքին և համառոտ ներկայացնելով հնչյունաքերականական բնորոշ հատկանիշներ:

«Զննութիւն Ղարաքաղի բարբառին» ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն առաջացրեց: Պատահական չէ, որ մեծ հայագետ Ա. Մեյեն հանդես եկավ ընդարձակ գրախոսականով⁵, ըստ արժան-

¹ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1925, ст. 187.

² К. Патканов, Исследование о диалектах армянского языка, Санкт-Петербург, 1969, ст. 55-73.

³ Հր. Աճառյան, Ուսումնասիրություններ հայկական բարբառախոսության, Գ., Զննութիւն Ղարաքաղի բարբառին, Վաղարշապատ, 1901:

⁴ Հր. Աճառյան, Հայ բարբառագիտութիւն, Մոսկուա-Նոր Նախիջեւան, 1911:

⁵ Մեյեն Ա., Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1978, էջ 433:

վույն գնահատելով այն, միաժամանակ նշելով որոշ թերություններ, ինչպես նաև Ղարաբաղի բարբառի հնչյունական որոշ օրինաչափությունների վերաբերյալ կատարելով կարևոր դիտողություններ:

Հետևելով բարբառների դասակարգման ձևաբանական սկզբունքին՝ Ա. Ղարիբյանն իր «Համատնություն հայ բարբառագիտության» (1941) և «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ» (1939) աշխատությունների մեջ «ել» ճյուղից առանձնացրեց «ս» ճյուղը՝ «ու» ճյուղի մեջ ընդգրկելով բուն Ղարաբաղի բարբառը, իսկ Հաղրուքի և Շաղախի խոսվածքներն առանձնացնելով որպես «ս» ճյուղի առանձին բարբառներ: Հետագայում, տալով հայ բարբառների հնչյունական դասակարգումը, հեղինակը Ղարաբաղի, Հաղրուքի և Շաղախի բարբառները համարեց առաջին տեղաշարժի ենթարկված բարբառներ՝ ելնելով գրաբարյան ձայնեղ պայթականների և կիսաշփականների՝ նրանցում խուլերի վերածվելու հանգամանքից: Նշված բարբառների հակիրճ նկարագրությունն է տրված նաև Ա. Գրիգորյանի «Հայ բարբառագիտության դասընթաց» (1957) աշխատության մեջ:

Անգնահատելի է Կ. Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» մենագրությունը (1966): Ի տարբերություն իր նախորդների՝ հեղինակը ընտրել է ուսումնասիրության ուրույն մեթոդ՝ ելնելով լեզվաբանական աշխարհագրության արդիական պահանջներից: Աշխատությունը բաղկացած է ներածությունից և հինգ բաժիններից: Ներածական մասում ներկայացվում են աշխատության ստեղծման նախադրյալները, նպատակը, կառուցվածքը: Միաժամանակ տրվում է Ղարաբաղի տարածքի բարբառների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների և բարբառով զրկված աշխատանքների ցանկը, անհրաժեշտության դեպքում արվում որոշակի դիտողություններ: «Բնական վայրերի անունները» ենթաբաժնում համարակալված են Լեռնային Ղարաբաղի բոլոր 221 գյուղերը, որից 7-ը (N 105-111)՝ աղբբեջանական գյուղեր: Հետագայում տեղի խնայողության և գործը համեմատաբար հեշտացնելու նպատակով լեզվական յուրաքանչյուր երևույթ քննելիս հղումները կատարվում են այդ համարներին, ինչը հնարավորություն է տալիս վերլուծության ենթարկել բոլոր գյուղերի խոսվածքները՝ վեր հանելով դրանց առանձնահատկություններն ու ընդհանրությունները:

«Հնչյունաբանություն» բաժինը բաղկացած է երկու հիմնական ենթաբաժնից՝ «Հնչյունախոսություն» և «Հնչյունափոխություն»: «Հնչյունախոսության» մեջ Կ. Դավթյանը, հիմք ընդունելով Հր. Աճառյանի, Ա. Ղարիբյանի և Է. Աղայանի գործածած տառադարձությունները, ներկայացնում է Ղարաբաղի տարածքի բոլոր խոսվածքներում եղած ձայնավոր և բաղաձայն հնչյունները, որոնք բացակայում են գրական հայերենում: Առանձին սյունակներով տրվում են այդ հնչյունների տառադարձությունը, իբրև ինչ արտասանվելը, տվյալ հնչյունը ընդգրկող բառերի օրինակներ և արտասանության վայրը: Ընդհանուր առմամբ նա տարածքի բարբառներին հատուկ է համարում 13 ձայնավոր, 39 բաղաձայն և երկու կիսաձայն հնչյուններ, ինչպես նաև 7 երկբարբառ և 15 երկհնչյուն՝ առանձին աղյուսակում ամփոփելով դրանք ըստ բարբառների: Առավել մանրամասնությամբ է ներկայացվում «Հնչյունափոխություն» ենթաբաժինը, որտեղ հետազոտվում են հայերեն հնչյունների փոփոխությունները Ղարաբաղի բոլոր գյուղերի խոսվածքներում: Յուրաքանչյուր հնչյունի փոփոխությունները վերլուծվում են առանձին, ընդ որում՝ տարբերակվում են տվյալ հնչյունի հնարավոր ընդհանրական և միևնույն բառերում եղած փոփոխություններն ըստ գյուղերի: Միաժամանակ քննության են առնվում հնչյունափոխական այնպիսի երևույթներ, ինչպիսիք են հնչյունների անկումը և հավելումը, կրկնությունը, բառմասերի կրճատումը, դրափոխությունը, ձայնավորների ներդաշնակությունը, ինչպես նաև շեշտի դրսևորման յուրահատկությունները:

Հարուստ փաստական նյութով և գիտական խոր վերլուծություններով է կազմված «Ձևաբանություն» բաժինը: Հեղինակը մեկ առ մեկ քննել է բոլոր խոսքի մասերը՝ իրենց քերականական կարգերով, երևան հանել յուրաքանչյուր գյուղի խոսվածքում դրանց դրսևորման առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում կատարել համեմատություններ այլ բարբառների և գրաբարի հետ, բերել առատ և սպառիչ օրինակներ: Առանձնակի խորությամբ են ուսումնասիրված գոյականի հոգնակիի կազմությունը և հոլովումը, դերանունների տեսակները, դերբայները, բայի եղանակները և ժամանակային ձևերը, անկանոն և պակասավոր բայերը, երկրորդական բաղադրյալ ժամանակները: Բաժնի վերջում հեղինակը առանձին ենթաբաժիններով ներկայացրել է խնդրո առարկա խոսվածքների ածանցման, բառաբարդման և շարահյուսական մի շարք առանձնահատկություններ: «Բարբառային ազդեցությունների մասին» բաժնում Կ. Դավթյանը ուշադրություն է դարձնում այլ բարբառային միջավայրերից եկած և Լեռնային Ղարաբաղում ամբողջական գյուղերով, ինչպես նաև տեղական գյուղերում վերաբնակվածների վրա բարբառային նոր միջավայրերի ազդեցության, տեղական «ու» և «ս» ճյուղերի բարբառների փոխազդեցությունների հարցերին՝ իրավամբ բացահայտելով, որ տեղական խոսվածքների ազդեցությունը չափազանց մեծ է եկվորների վրա, որի արդյունքում վերջիններս իրենց բարբառային ձևերով տեղի են տվել տեղականներին՝ աստիճանաբար յուրացնելով նրանց հնչյունական և քերականական օրինաչափությունները: Նմանապես «ս» ճյուղի Հաղրուքի բարբառային միջավայրի բարբառախոսները, հատկապես երիտասարդները, ենթարկվել են «ու» ճյուղի Ղարաբաղի բարբառի ազդեցությանը: Աշխատության չորրորդ բաժնի՝ «Բարբառային խմբավորումներ և նմուշներ», առաջին ենթաբաժնում Կ. Դավթյանը, իբրև իր ուսումնասիրությունների

ամփոփում, խմբավորում է Լեռնային Ղարաբաղում գոյություն ունեցող բարբառային ձևերը ըստ բարբառաճյուղերի, բարբառների, ենթաբարբառների, խոսվածքների՝ հիմնականում հիմք ընդունելով մեծահասակ բնակչության խոսակցությունը: Աշխատության մեջ առանձնացվում են տարածքում առկա վեց բարբառներ, որոնցից երկուսը՝ Ղարաբաղի և Սեհտիշենի, «ու» ճյուղի, երեքը՝ Հաղրուքի, Շաղախ-Խծաբերդի և Չայլի կամ Ուրմիայի, «ս» ճյուղի, մեկը՝ Մարաղայի, «զ» ճյուղի: Ղարաբաղի բարբառը հեղինակը բաժանում է երկու խմբի՝ Ղարաբաղի բուն բարբառ /128խոսվածք/ և Ղարաբաղի բարբառի ենթաբարբառային խոսվածքներ /9 ենթաբարբառ՝ 20 խոսվածքով/, Հաղրուքի բարբառը բաժանում է երեք ենթախմբի՝ բուն բարբառ /34 խոսվածք/, Տումու խոսվածք և Շուշիքենդի ու Քարին տակի խոսվածքներ, Շաղախ-Խծաբերդի բարբառում ընդգրկում է 8 խոսվածք և Ջանյաթաղի առանձին խոսվածքը, Չայլի կամ Ուրմիայի բարբառում՝ Ներքին և Վերին Չայլուների խոսվածքները, իսկ Սեհտիշենի և Մարաղայի խոսվածքները առանձնացնում՝ որպես առանձին բարբառներ: Բարբառների, ենթաբարբառների և խոսվածքների դիմաց առանձին սյունակներում տրվում են նրանց հիմնական հատկանիշները և առանձնահատկությունները, Լեռնային Ղարաբաղից դուրս այլ խոսվածքների հետ նմանությունները, անհրաժեշտության դեպքում նաև որոշ ծանոթություններ: Բաժնի երկրորդ՝ «Նմուշներ», ենթաբաժնում բերվում են Ղարաբաղի տարածքի 40 գյուղերի խոսվածքներով գրված նմուշներ: Դրանց կողքին հեղինակը նմուշներ է զետեղել Գորիսի շրջանի Տեղ, Եվլախի շրջանի Նամեթաբաղ և Սիր Բաշիի շրջանի Բեգում Սարով գյուղերի խոսվածքներով: Բարեխիղճ և տքնաջան աշխատանքի արդյունք է նաև աշխատության վերջին՝ «Համադրական բառարան» բաժինը, որտեղ գրաբարի համեմատությամբ տրվում են տարածքի բոլոր վեց բարբառների համապատասխան բառային համարժեքները: Ընդհանուր առմամբ բառարանը ընդգրկում է շուրջ 3000 բառ և բառաձև, այդ թվում որոշ՝ գրաբարում բացակայող, բայց գրաբարյան ձևերից կազմված բառեր: Հայերեն ձևերի բացակայության դեպքում կամ դրանց զուգընթաց տրվում են բարբառներում գործածական բարբառային կամ փոխառյալ տարբերակները: Բառարանի արժանիքներից կարելի է համարել նաև այն, որ բոլոր բառերը հանդես են բերվում բարբառներում առկա շեշտադրության ցուցադրումով:

Մենագրությանը կցված են բարբառագիտական քարտեզներ, որոնց թիվը դժբախտաբար տեխնիկական-տպագրական որոշ պատճառներով խիստ կրճատվել է: Սակայն հեղինակը ըստ առանձին բնակավայրերի, շրջանների, գյուղախմբերի այնքան մանրագին է վերլուծել լեզվական երևույթները, որ դրանցից յուրաքանչյուրը փաստորեն ունի բարբառագիտական քարտեզի արժեք:

Յավով պետք է նշել, որ հրատարակչության մեղքով ուսումնասիրության մեջ սպրդել են մի շարք քերականական և տեխնիկական սխալներ, որոնց մասին հեղինակը հանդես է եկել առանձին հոդվածով⁶:

Ուշագրավ մենագրություն է Ա. Պողոսյանի «Հաղրուքի բարբառը» (Երևան, 1965) աշխատությունը: Այստեղ հանգամանորեն լուսարանվում են բարբառի խոսվածքների հնչյունական և ձևաբանական, մասամբ բառագիտական և շարահյուսական օրինաչափությունները: Ա. Պողոսյանը Ղարաբաղի բարբառի հակիրճ նկարագրությունն է ներկայացրել նաև «Հայ բարբառագիտություն» դասագրքում (1996):

1972 թ. հրատարակվում է Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» մեծարժեք ուսումնասիրությունը, որի առաջին մասում տալով հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը՝ մեծ լեզվաբանը 120 բարբառախոս վայրերից մեկ տասնյակից ավելին ընտրել է Լեռնային Ղարաբաղի տարածքից: Որոշ խոսվածքներ ուսումնասիրության առարկա են դարձել նաև աշխատության երկրորդ մասում, որտեղ դրվում և լուծվում են բարբառագիտության մի շարք հարցեր: Ըստ հեղինակի բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման՝ Ղարաբաղի բարբառը ընդգրկվում է հայերենի բարբառների արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիսարևելյան միջբարբառախմբի մեջ, իսկ Շաղախի, Հաղրուքի և Գորիսի խոսվածքները բարբառի կենտրոնից բարբառային սահմաններ գծող տարբերություններ չեն ներկայացնում:

1975 թ. Ալ. Մարգարյանը հրատարակում է «Գորիսի բարբառը» մենագրությունը՝ հանգամանորեն ներկայացնելով ՀՀ Գորիսի և հարևան՝ Ղափանի ու Սիսիանի շրջանների խոսվածքների հնչյունական, ձևաբանական և բառագիտական օրինաչափությունները՝ փորձելով հիմնավորել այդ խոսվածքների ամբողջության՝ Ղարաբաղի բարբառից անկախ բարբառ լինելու հանգամանքը: Աշխատության վերջում հեղինակը տվել է նմուշներ տարբեր խոսվածքներով, ինչպես նաև գրաբարից ավանդված, բարբառային, արևելյան լեզուներից և ռուսերենից փոխառյալ բառերի բառարան, որը առանձին բարբառների՝ մինչ այդ հրատարակված բառարաններից ամենահարուստն է և ընդգրկում է շուրջ 10 000 բառ:

Բարբառի դարձվածների բազմակողմանի քննությունն է ներկայացնում Շ. Մինասյանի «Ղարաբաղի բարբառի դարձվածները» թեկնածուական ատենախոսությունը⁷ (1999 թ.), իսկ Ա. Սարգսյանի

⁶ Կ. Դավթյան, Նամակ խմբագրությանը, «Լրաբեր հասարակական գիտությունների», N4, 1967:

⁷ Շ. Մինասյան, Ղարաբաղի բարբառի դարձվածները, Ստեփանակերտ, 2007:

«Շաղախի ենթաբարբառը Հաղրուքի ենթաբարբառի միջավայրում» թեկնածուական ատենախոսությունը⁸ (1998 թ.) նվիրված է երկու ենթաբարբառների համեմատական ուսումնասիրությանը:

Ղարաբաղի բարբառի տարբեր խոսվածքների և իրողությունների վերաբերյալ ուշագրավ հոդվածներ են տպագրել Գ. Ջահուկյանը, Հ. Պետրոսյանը, Ա. Մարգարյանը, Լ. Հովհաննիսյանը, Ա. Սարգսյանը, Շ. Սինասյանը և ուրիշներ⁹:

Հարուստ նյութ են պարունակում նաև 19-20-րդ դարերում հրատարակված բոլոր այն բառարանները, որտեղ այլ բարբառներին զուգընթաց ներկայացվում է Ղարաբաղի բարբառի բառապաշարը: Դրանցից առանձնապես հիշատակության արժանի են Հր. Աճառյանի «Թուրքերեն փախառնալ բառեր հայերենի մեջ» (1902), «Հայերեն գավառական բառարան» (1913), «Հայերեն արմատական բառարան» (1971-1979), Ս. Ամատունու «Հայոց բառ ու բան» (1912) աշխատությունները: Բացի դրանից, բարբառով հրատարակվել են գեղարվեստական ստեղծագործություններ և բանասիրական ժողովածուներ, որոնց մի մասին կցված են բառարաններ:

Հիշատակության արժանի են նաև առ այսօր անտիպ մի շարք ուսումնասիրություններ և բառարաններ, ինչպիսիք են՝ Ա. Բաբայանի «Ղարաբաղի Վարանդայի բարբառը», Մ. Գրիգորյանի «Ղարաբաղի բարբառը և Շուշվա ենթաբարբառը», Ա. Բահաթրյանի «Ղարաբաղու գավառական բառագիրքը», Տ. Տեր-Հովհաննիսյանի «Գավառագիտական բառարանը» և այլն:

Armen Sarkisyan (NKR)

KARABAKH DIALECT IN 19-20th CENTURIES LINGUISTIC RESEARCH.

Research of Karabakh dialect started in the middle of th 19th century. In 19-20 th centuries the dialect was investigated by Hr. Acharyan, A. Gharibyan, G. Jahukyan, A. Poghosyan, A. Grigoryan and others. A range of monographs and articles on the dialect were printed.

Նեկտար Սիմոնյան (Հայաստան)

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՁԱՅՆԴԱՐՁԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱՐՄԱՏՆԵՐՈՒՄ

Ձայնդարձը՝ ձայնավորների հերթագայությունը, հատուկ է եղել հ.-ե. նախալեզվին և իր արտահայտություններն է ունեցել հ.-ե. լեզուներում: Ձայնավորների հերթագայությանը և նրա գործառնություններին անդրադարձել են Կ. Բրուգմանը, Ա. Մեյեն, Օ. Մեմերենյին, Է. Բենվենիստը, Յ. Կուրիլովիչը, Ա. Դեանիցկայան և ուրիշներ, իսկ հայ լեզվաբաններից՝ Հ. Աճառյանը, Գ. Ջահուկյանը և այլք:

Հերթագայվել կարող էին ինչպես առանձին ձայնավորները, այնպես էլ երկբարբառների կազմում եղած ձայնավորները: Հնդեվրոպական հերթագայության հիմնական տեսակը ձայնավորների հերթագայությունն է, որը հանդես է գալիս երեք տեսակներով՝ *e(*ē), *o(*ō), -գրո: Ձայնավորների հերթագայության տեսակները պայմանականորեն անվանվել են վերին (*e(*ē), միջին (*o(*ō) և գրո կամ ստորին աստիճաններ: Երկբարբառների հերթագայության ժամանակ էլ դարձյալ փոփոխվում են ձայնավորները՝ *ei *oi *i, *eu *ou *u, *er *or *r, *el *ol *l, *em *om *m, *en *on *n: Ձայնավորների այս փոփոխությունները ինքնանպատակ չեն եղել. ձայնդարձը ունեցել է ինչպես ձևաբանական գործառնություն՝ արտահայտելով քերականական տարբեր իմաստներ, այնպես էլ բառակազմական գործառնություն՝ կազմելով արմատի՝ իմաստային տարբերություններով ուղեկցվող տարբերակային ձևեր:

Ձայնդարձի ձևաբանական դրսևորումների հանգամանակից քննություն է կատարել Գ. Ջահուկյանը «Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը» աշխատության մեջ¹:

Ձայնավորների հերթագայությանը անդրադարձել է նաև Հ. Աճառյանը «Լիակատար քերականություն հայոց լեզվի. համեմատությամբ 562 լեզուների» աշխատության երրորդ հատորում: Նա հանգամանորեն ներկայացնում է հ.-ե. ձայնդարձը, դրա արտահայտությունը հ.-ե. «...դուստր լեզուների մեջ», բերում է հայերենի այն արմատներն ու բառերը, որոնցում առկա է ձայնավորների հերթագայություն, առանձնացնում է այն արմատները, որոնցում դրսևորվում են ձայնդարձի տարբեր աստի-

⁸ Ա. Մարգարյան, *Շաղախի ենթաբարբառը Հաղրուքի ենթաբարբառի միջավայրում*, Ստեփանակերտ, 2009:

⁹ Ա. Մարգարյան, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Երևան, 2013 («Օգտագործված գրականություն բաժինը»):

¹ Գ. Ջահուկյան, *Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը*, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1959, էջ 160-164:

ճանները՝ նպատակ չունենալով, սակայն, տարբերակել ձայնդարձի ձևաբանական և բառակազմական գործառնությունները, ինչպես նաև անվանական և բայական արմատներում հանդես եկող հերթագայությունները²:

Հայերենում կա ձայնդարձի տարբեր աստիճան ունեցող բայեր (ողողանալ-ուլուլալ, թառամել-թռռմել (թարշամել-թորշոմել), հեղուլ-ողողել-հալել, լեսուլ-լոսել, հինուլ-հենել-հանուլ, խայթել-խեթել-խոթել, փաղփաղիլ-փողփողել, քերել-քորել), բայարմատներից կազմված անվանական արմատներ, որոնցում են ձայնդարձի այլ աստիճաններ (մեռանիլ-մարդ, խարել-խորով, գելուլ-գալար, բառնալ-բարձր-բերձ, ատանիմ-զգեստ, գաղել-գող, հևալ-հով, բորբ-բորբոքել-բերփել և այլն):

Մեր նպատակն է քննության առնել հին հայերենի ձայնավորի հերթագայությամբ կազմված բայարմատ և անվանական արմատ տարբերակները, համեմատել հայերենի արմատները հ.-ե. մյուս լեզուներում պահպանված ձևերի հետ: Փորձել ենք պարզել հ.-ե. շրջանից եկող ընդհանրությունները և հետագա ինքնուրույն զարգացման արդյունք հանդիսացող ձևերը: Քննության ընթացքում անդրադառնում ենք նաև հայերենի բարբառներում առկա այն բառերին, որոնցում կան ձայնդարձի՝ գրաբարյան ձևերից տարբերվող աստիճաններ: Այստեղ քննության կառնենք ձայնդարձի տարբեր աստիճաններով դրսևորվող հայերեն բայերը:

Հ. Աճառյանը արմատական բառարանում բերում է *գելուլ* բայը՝ *գել* «ոլորած, պիրկ» պարզական ձևից, որն ունի «ոլորել, ճմլել, ճնշել, ճզմել» իմաստները: Նա նշում է նաև հայերեն բարբառներում հանդիպող *գալ* «չորացնելու համար ոլորած, հյուսած բանջարեղեն», ինչպես նաև *գիլ* «գլորուիլ» արմատը, որից՝ *գլել*, *գլան*, *գլորել*³: Նույն արմատից է նաև հայերեն *գալ-ար* «ոլորք» բառը: *Գել* արմատը հանգում է հ.-ե. *yel-, *yela-, *yēl- նախաձևին, որի *yelu- ձևից է հայ. *գելում*, *yēla- ձևից՝ հայ. *գիլ*, *yēle- ձևից՝ հայ. *գլել*, *yēl- ձևից՝ հայ. *գալար*⁴: Հ.-ե. *yel- արմատը «գլորել, պտտել, փաթաթել» իմաստներով արտացոլված է հին հնդկերենում՝ valati «պտտվել», հունարենում՝ εἰλεω «պտտվել, պտտեցնել», հին իսլանդերենում՝ vil «աղիներ», լատիներեն՝ volvo «գլորել, գլորվել, ոլորել»: Հետաքրքիր են այս արմատի՝ սանսկրիտում պահպանված բառերը. val արմատից է vālate (չեզոք սեռի բայի ներկա ժամ.), անցյալը կազմվում է կրկնությամբ՝ vavalāte, valana գոյականը՝ «ոլորան, պտույտ», valaya «շրջան, ապարանջան» իմաստներով, valimant «ոլորած», vali «կնճիռ, ծալք», vali-mukha «կապիկ» (բառացի՝ կնճռոտված, ճմռված դեմքով)⁶, vallari (բւր.) «բեղիկ, պատատուկ, լիանա»⁷: Ինչպես ակնհայտ է դառնում բերված ձևերից, այդ արմատի՝ սանսկրիտում պահպանված իմաստները շատ մոտ են հայերենում արտացոլված իմաստներին: Հ.-ե. այս արմատը արտացոլված է և սլավոնական լեզուներում. *valъ նախաձևից են եկեղեցապալոներենի valъ «ալիք», ռուս. val «ալիք, գլան», հին եկեղեցապալոներեն valiti, ռուս. valits «գլորել, պտտել»⁸:

Մ. Ֆասմերի բառարանում բերվում են val «ալիք, գլան», ռուս. валъ, валити, սլովեն. valiti ձևերը, արևելյան լիտվ. voliōti «գլորել», լատիշ. solīt «գլորել, պտտեցնել» արմատները: Չայնավորման այլ աստիճանով են լիտվ. veliū, vélti, լատիշ. velt արմատները՝ նույն «գլորել, պտտել» իմաստներով⁹: Ռուսերենում կա валун «կլոր քար»¹⁰, որը իմաստով համընկնում է հայ. *գիլ* բառին: Հայերենում պահպանվել են հ.-ե. արմատի երեք ձայնավորումներով ձևերը՝ *գելուլ*, *գալ* «ոլորած, հյուսած» (ավելուկի համար), *գալ-ար* (-ար ածանցով) և *գիլ*. վերջինս Հ. Աճառյանը բացատրում է «քար»¹¹: Նոր հայկազյան բառարանում *գիլ* բառը բացատրվում է «քար (որպես թե՛ գլելի, ձգելի)»¹²: Մ. Մախասայանի «Հայերեն բացատրական բառարանում» և Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» *գիլ* բառը բացատրվում է «գլորելու քար», այսինքն՝ «կլոր քար», որը այս իմաստով համահունչ է սլավոնական լեզուներում պահպանված валун «կլոր քար» իմաստով բառին:

² Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., հ.3-րդ, 1957, էջ 25-57:

³ Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, Երևան, Երևանի համալսարանի հրատ., հ.1,1971, էջ 530-531 (այսուհետև՝ ՀԱԲ):

⁴ Գ.Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն*: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ155 (այսուհետև՝ ՀԼԳ):

⁶ В.А.Кочергина, *Санскритско-русский словарь*, Москва, Изд-во “Русский язык”, 1978, стр.569.

⁷ Նույն տեղում, էջ 570:

⁸ J.Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch*, Bern und München, 1959, p.1143.

⁹ М.Фасмер, *Этимологический словарь русского языка*, Москва, “Прогресс”, т.1, 1986, стр. 268.

¹⁰ Նույն տեղում, էջ 270:

¹¹ Հ.Աճառյան, ՀԱԲ, հ.1, էջ555:

¹² Նոր բառգիրք հայկազնի լեզուի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., հ.1, 1979, էջ 551 (այսուհետև՝ ՆՀԲ):

Բառնալ բայը ունի 1. «բարձրացնել, 2. վերցնել տանել, 3. վրան առնել, բեռնաւորուիլ, 4. ջնջել, մեջտեղից» վերացնել իմաստները¹³: Բայի կատարյալի ձևն է *բարձ* (առանձին անգործածական), բարդությունների մեջ հանդիպում է նաև *բերձ* (դարձյալ առանձին անգործածական): Արմատի համար կանխադրվում է հ.-ե. *bheregʻh նախաձևը¹⁴. հայերենի համար կանխադրվում է *bhegʻh- ձևը, այսինքն՝ հ.-ե. վերը նշված նախաձևի ստորին (բ) ձայնդարձով ձևը. հայերենի *բերձ*-ը արմատի վերին ձայնդարձի արտացոլումն է, այսինքն՝ հայերենն ունի հ.-ե. այդ արմատի վերին և ձայնդարձով ձևերը¹⁵: Ավեստայում կա *barəzan* «բարձրություն» (ստորին ձայնդարձ): Ստորին ձայնդարձով է նաև խեթ. *parkus* (*par-kus*)¹⁶ «բարձր» արմատը: Գերմանական լեզուներն ունեն *berg* «լեռ»՝ ձայնդարձի վերին աստիճանով, և *burg* «քաղաք» բառերը: Սլավոնական լեզուներում նախապատկերների **bergats* ձևից սլովեններենն ունի *bregat* (ստորին ձայնդարձ) «լեռնոտ, гористый», չեխերենում կա *brehatý* «ափեր ունեցող» (ստորին ձայնդարձ) բառը: *bergovitsjē* ձևից է բուլղարերեն *бъреговит* բառը՝ «բլրոտ, բլրաշար, բարձր, լեռնոտ» իմաստներով¹⁷, իսկ բուլղարական Բուրգաս քաղաքի անունը հավանաբար փոխառություն է գերմաներենից: Կ. Բաքի բառարանում բերվում են նաև իռլ. *bre* «բլուր», ուելս. *bryn* «բլուր», սերբախորվաթերեն *brdo* «բարձունք»¹⁸ ձևերը:

Տեղ «առատ անձրև», որից՝ *տեղալ* «անձրևը թափուիլ» բառերը Հ. Աճառյանը համարում է փոխառություն ասորերենից, բայց բերում է նաև Պետերսոնի կարծիքը, որը *տեղ*, *տեղալ* բառերը *տիղմ* բառի հետ կցում է բրեւ. *del*, *qalt*. *ðealt* «խոնավ, խոնավություն» բառերին՝ իբր բնիկ հայ բառ¹⁹:

Գ. Ջահուկյանը *տեղմ*, *տիղմ* և բարբառային *տիլ* բառերը հուն. *τέλμα*, անգլ. *stale* ձևերի հետ ծագած է համարում հ.-ե. *(s)tel- նախաձևից: Ծանոթագրության մեջ գրում է, որ Պետերսոնը և նրան հետևելով Պոկոռնին հայերենի այդ արմատները համարում են փոխառություն հունարենից, և հերքում է այդ կարծիքը հետևյալ երեք փաստարկումներով՝ բառի տարածվածությունը, բարբառային ձևերի գոյությունը և *տող* բառի առկայությունը²⁰: Պետք է նշել, որ Ջահուկյանը ՀԼՊ-ում *տեղ*, *տեղալ* բառերի համար կանխադրում է հ.-ե. *del-, *del-mo- նախաձևերը²¹: Պոկոռնու բառարանում «հոսել» նախաձևից ծագած ձևերի շարքում նշվում են հուն. *τέλμα* «հոսել, ճահիճ, ջրափոս», անգլ. *stale* և հայ. *տեղմ*, *տիղմ* ձևերը, որոնք ոչ թե հաստատապես, այլ հարցականով համարվում են փոխառություն հունարենից²²: Նույն բառարանի 186 էջում *del- «կաթել, միզել» արմատի՝ հ.-ե. մյուս լեզուների ձևերից առաջինը նշում է հայ. *tel* «ուժեղ՝ հորդ անձրև» (*Starker Regen*), *տեղամ*, *տիղմ* բառերը, ինչպես նաև միջին իռլանդերեն *delt* «ցող», բրետոներեն *delt* «խոնավանալ, տամկանալ»: Ավելի հավանական է այս արմատի համար կանխադրել *del- նախաձևը, որը բերում է նաև Գ. Ջահուկյանը ՀԼՊ-ում: Անկախ բառի ծագման վերաբերյալ կարծիքներից՝ *(s)tel- թե *del-, *dol-, հայերենում առկա են տարբեր ձայնավորումներով *տեղամ* (*տիղմ*), *տիլ* և *տող* արմատները. վերջինս նշանակում է «մարմնի մեջ արտադրված հեղուկ, թուք», որն առկա է նաև հայերենի բարբառներում: Չարմանալի է, որ Հ. Աճառյանը *տող* բառը՝ «մարմնի մեջ արտադրված հեղուկները, ...որից *տողի* «թուք», *տողուկ* «թուք, լորձուք» բառերը համարում է բնիկ հայ բառ՝ հնիս. *stol- արմատից, որի *stel- ձևից են *տիլ*, *տիղմ*²³, իսկ *տեղ* «առատ անձրև, տեղալ» բառերը համարում է ասորական փոխառություն:

Հայերեն *բորբ* «վառել, այրել», *բորբոքել* 1. «վառել, բռնկիլ, հրահրիլ, 2. այրիլ, 3. սաստկանալ»²⁴ բառերի համար վերականգնում են հնիս. *bhero-bro- ձևը, որ կրկնականն է *bher, bhere, bherey, bhrey, bherey «եռալ, եփել, ծխալ, փայլել» պարզական արմատի, որից լատ. *ferveo* (ձայնդարձի վերին աստիճան), կիմր. *berwi*, հրգ. *brinnan*, գերմ. *Brennen* «այրել, վառել»: Հայերեն *բորբոքել*-ն ունի օ միջին ձայնդարձը, իսկ *բ* ձայնդարձը առկա է «գերփել»²⁵ բառում: Կ. Բաքի բառարանում «այրել» իմաստի համար բերվում են իտալ. *bruciare*, ֆր. *brûler*, հին հյուսիս. *brinna*, դան. *bronda*, շվեդ. *branna*, հանգլ.

¹³ Հ.Աճառյան, ՀԱԲ, 1h., էջ 413:

¹⁴ Տե՛ս Պոկոռնի, նշվ. աշխ., էջ 140-141:

¹⁵ Տե՛ս Հ.Աճառյան, *Լիակատար քերականություն*, հ.3-րդ, էջ 50:

¹⁶ Պոկոռնի, նշվ. աշխ., էջ 141:

¹⁷ *Этимологический словарь славянских языков. праславянский лексический фонд*, под редакцией О. Трубачева, М., т.1, 1974, стр.189.

¹⁸ C.D.Buck, *A Dictionary of selected Synonyms in the principal Indo-European Languages*, Chicago.Illinois, The University of Chicago Press, 1949, p. 23-26.

¹⁹ Հ.Աճառյան, ՀԱԲ, հ. 4, 1979, էջ 39:

²⁰ Գ. Ժապյան, *Очерки дописменного периода армянского языка*, Ереван, Изд-во АН ССР, стр. 134.

²¹ Գ.Ջահուկյան, ՀԼՊ, էջ 118:

²² Պոկոռնի, նշվ. աշխ., էջ 1018:

²³ Հ.Աճառյան, ՀԱԲ, հ. 4, 1979, էջ 418-419:

²⁴ Հ.Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 475-476:

²⁵ Նույն տեղում, էջ 476:

beornan, նոր անգլ. burn, գերմ. branden, հվգ. brinnan, մվգերմ. brinnen՝ բոլորն էլ «այրել, փայլուն» իմաստներով²⁶:

Հայերենի *բորբ* բառը *բորբոքել* «վառել, այրել» բառի արմատն է և ունի նաև ածականական և գոյականական կիրառություն: Նոր հայկազյան բառարանում *բորբ* բառի համար բերվում է հետևյալ բացատրությունը. «Թուի արմատ բորբոք բառին, և անխտիր երևի նշանակել գյողորթին հրոյ և ծխոյ»²⁷: Եթե ընդունենք նաև Գ. Ջահուկյանի կարծիքը, որը *բորբ* բառի տարբերակների մեջ նշում է նաև հայ. *բարկ* արմատը՝ «ամուր, ուժեղ, տաք» իմաստներով²⁸, ապա կարելի է եզրակացնել, որ հայերենում պահպանված են այդ արմատի երեք ձայնավորումներով (ձայնդարձի վերին, միջին և ստորին աստիճաններ) ձևերը:

Այս արմատին են հանգում նաև սլավոնական լեզուների броне́ть, брони́й «ափստակ», бруне́ть «փայլել, լուսավորվել» արմատները: Հայերենի *բորբոքել*, *բերփել* բայերն էլ իմաստային առումով կարելի է կապել սլավոնական և գերմանական լեզուների նշված արմատների հետ. *բերփել*, *բերբել* նշանակում է «կրակը բորբոքել փչելով», այսինքն՝ փչելով, ծուխը հեռացնելով փայլեցնել:

Nektar Simonyan (Armenia)

REFLECTION OF INDO-EUROPEAN ABLAUT IN VERBAL ROOTS OF OLD ARMENIAN LANGUAGE

Ablaut / vowel gradation / was characteristic to Indo-European proto-language and has its consequences in the related languages of IE family. Many scholars of Indo-European languages / K. Brugmann, A. Meillet, O. Szemerényi, J. Kurylowicz /, and also armenologists H. Acharyan, G. Dzahukyan and others have paid attention to ablaut and its functions. Ablaut has had morphological and word-formation functions. In this article a divergent forms of Armenian verbs with various grades of Indo-European Ablaut are studied such as ողողանալ-ուլուլալ, թառամիլ-թռռմիլ, հեղուլ-ողողել-հալել. New verbal and nominal roots by vowel changes from Indo-European proto-forms as մեռանիլ - մարդ, խարել - խորով, գելուլ - գալար and others were formed. The investigated roots of the Armenian language are compared with consequent roots of related languages. The material of Armenian dialects is also included. In the lexical units of some dialects different ablaut grades from Old Armenian language are reserved.

Հենրիետա Սուքիասյան (Հայաստան)

ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՈՒ

Յուրաքանչյուր լեզու իր ժողովրդի պատմությունն է, մտածողությունը, հոգին ու հոգեբանությունը, մշակույթը, ներքին ու արտաքին հարաբերությունների զարգացման արտացոլումը: Հայոց լեզուն իր օրինաչափություններով, քերականական ու բառակազմական ճկուն հնարավորություններով, գրի և արտահայտչաձևերի ինքնատիպությամբ հայ ժողովրդի կյանքի ու պատմության, անցյալի ու ներկայի յուրօրինակ չափանիշ է: Լեզվի հնչյունական համակարգը, ձևաբանական և շարահյուսական կառուցվածքը փոփոխվում են աննկատելիորեն և երկար ժամանակահատվածում, մինչդեռ բառապաշարի, այդ թվում նաև տերմինների փոփոխությունները կատարվում են բավականաչափ արագ: Այս երևույթը բացատրվում է նրանով, որ գիտաճյուղերի զարգացումը պայմանավորված է գիտության և տեխնիկայի բոլոր բնագավառների առաջընթացով: Ըստ հայտնի տվյալների՝ բժշկության բնագավառում տարեկան մոտ 1000 նորարարություն է գրանցվում, հետևաբար ստեղծվում են բժշկական նոր տերմիններ, քանի որ եթե կա առարկա կամ երևույթ, ուրեմն ստեղծվում է նաև այն անվանող բառը:

5-րդ դարը ճակատագրական եղավ հայ ժողովրդի ու հայոց լեզվի համար: 5-6-րդ դարերում հայերենն արդեն գիտության ու թարգմանության լեզու էր: Սակայն գրական լեզվի նորմավորումը դյուրին գործընթաց չէր, և միայն մեր հանճարեղ ու խորագետ մախնիների համառ, տևական ու համբերատար աշխատանքով հաղթահարվեցին լեզվական բազմաթիվ խոչընդոտներ: Թարգմանական բուռն գործունեության ընթացքում հունաբան հայագետներն այնպիսի հմտությամբ հայացրին բառերն ու հասկացությունները, որ հարազատ ու հասկանալի լինի յուրաքանչյուր հայի համար: Նրանց կողմից կերտված բառերը, հասկացություններն ու նույնիսկ եզրաբառերն այսօր էլ գործածական են ու չեն

²⁶ ՆՀԲ, հ.1, էջ 507:

²⁷ Կ. Բաք, նշվ. աշխ., էջ 74:

²⁸ Գ. Джаукян, Очерки..., стр. 126.

կորցրել արդիականությունը: Այդպիսիք են՝ ապացույց, արտադրություն, բացասել, բացարձակ, գերազանց, ենթակա, համագումար, համաչափություն, հարացույց, մակբայ, ներածություն, ներգործել, ներկա, ստորագրություն, ստորադրյալ, տարածական, տրամաբանություն, փոխադարձ, փոխանցում և այլն: Հունաբան դպրոցը խթանեց հայ քերականական, փիլիսոփայական, պատմական, իրավաբանական, բժշկական և ընդհանրապես գիտական մտքի ձևավորումն ու զարգացումը: Այն հող նախապատրաստեց միջին հայերենի զարգացման համար: Կիլիկյան Հայաստանում բժշկագիտությունը հասավ զարգացման բարձր մակարդակի, հետևաբար զարգացան նաև գիտալեզուները, այդ թվում նաև բժշկագիտական լեզուն ու տերմինաբանությունը:

Հայ բժշկապետեր Մխիթար Հերացին /12-րդ դար/, Գրիգոր Մագիստրոսը /13-րդ դար/, Գրիգորիսը /13-րդ դար/, Ամիրդովլաթ Ամասիացին /15-րդ դար/, նրանց աշակերտները գրել են բժշկագիտական աշխատություններ, կազմել են բառարաններ, զարգացրել են բժշկագիտական տերմինաշինության գործընթացը՝ տերմինաբանությունը հարստացնելով նորանոր տերմիններով:

Պատմության հոլովությունում այլ լեզուների՝ պարսկերենի, արաբերենի, թուրքերենի ազդեցությամբ օտարաբանություններով հեղեղվեց մեր բանավոր լեզուն: Սակայն հենց այդ պայմաններում հայ բժշկապետերը առաջնորդվեցին բնիկ հայերեն բառարմատներից նոր բառեր կերտելու սկզբունքով:

Հայոց լեզվի ներքին միջոցները, սեփական բառապաշարը, բարբառները, ածանցումը, փոխառությունները բժշկական մասնագիտական բառապաշարի ձևավորման ու զարգացման հիմքն են:

Փաստ է, որ աշխարհի բոլոր լեզուներն այլ լեզուներից վերցրած փոխառություններով են հարստացնում իրենց լեզվի բառապաշարը: Այս գործընթացը պայմանավորված է պատմական, քաղաքական, սոցիալ-տնտեսական մի շարք խորքային պատճառներով: Հայ ժողովուրդը դարեր շարունակ շփվել է այլ ժողովուրդների հետ, և քաղաքական, տնտեսական, մշակութային կապերը մեծապես նպաստել են այդ ժողովուրդներից բառեր փոխառելուն: Փոխառությունները մեր լեզվում ամրագրվել են հայերենի բառապաշարի բառային կազմում, սակայն գրական լեզվի բառապաշարի հարստացման հաստատուն ուղին եղել և մնում են բառակազմական սեփական միջոցները:

Միջազգային բառապաշարը կամ միջազգային տերմինների շերտը առանձնահատուկ տեղ ունեն բժշկական տերմինաբանության մեջ: Այս փոխառությունների բառարմատները ծագումով հիմնականում լատիներեն և հունարեն են, որոնք հետագայում փոխառվել են ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի և այլ լեզուների միջոցով: Այդ տերմինները հայերենում ենթարկվել են հնչյունական փոփոխությունների՝ ըստ մեր բառակազմական օրինաչափությունների:

19-րդ դարի կեսերից հայերենը հարստացավ նոր փոխառություն-օտարաբանություններով: Վերջին հարյուրամյակում հատկապես էական է ռուսերենի ազդեցությունը: Եթե օտար բառը դեռևս չունի հայերեն համարժեքը, ապա այն գործածվում է որպես փոխառություն: Սակայն ներկայումս հայերենի բառապաշարում բազմաթիվ են այն փոխառությունները, որոնց համարժեքները կազմված են հայերենի բառակազմական օրինաչափություններին համապատասխան, ամբողջությամբ արտահայտում են տվյալ բառի իմաստը և երկար ժամանակ ամրագրված են գրական լեզվի բառապաշարում: Եթե հայերենն ունի ջեռակ, վիրահատություն, համակարգիչ, կանխարգելում բառերը, ապա միանգամայն ավելորդ և անթույլատրելի են գրելիս, օպերացիա, կոմպյուտեր /խոսակցական արտասանությամբ՝ կամպյուտեր/, պրոֆիլակտիկա օտար բառերը: Հայերենում շատ օտարաբանություններ առաջանում են հատկապես թարգմանության ընթացքում, որոնց կիրառումը պարզապես լեզվի սահմանափակ իմացության, քերականական կանոններին չտիրապետելու, իսկ երբեմն էլ անհատական քմահաճության հետևանք է: Արդյունքում կազմվում են հայատառ նախադասություններ, որոնք խորթ և օտար են հայ լեզվամտածողությանը, արտահայտում են իմաստային խառնաշփոթ, իսկ երբեմն էլ անհեթեթություն:

Ուսումնասիրելով լեզվավիճակը բժշկագիտության բնագավառում՝ կատարել ենք հետևյալ եզրահանգումները.

1. Փոխառյալ բառերի հայերեն համարժեքներից շատերն արդեն ամրագրվել են մեր լեզվում, այսպես՝ անտիտոքսին – հակաթույն, միոկարդ – սրտամկան, պարալիչ – կաթված, պարագիտ – մակաբույծ, սեպսիս – արյունավարակում, գանգրենա – փտախտ, էպիդեմիա – համաճարակ, հիպերտոնիա – գերճնշում և այլն:

2. Հայոց լեզվում ռուսերենի միջոցով փոխառված բառերի միջազգային եզրը գրեթե չի հանդիպում, ինչպես՝ դոզա – դեղաչափ, մառլա – թանգիլ, պրոբլեմ – խնդիր, ինդիկատոր – ցուցիչ, ներվ – նյարդ, սիստեմ – համակարգ, տաբլետկա – դեղահատ, տամպոն – վիրախծուծ, խծուծ, ֆակտոր – գործոն և այլն:

Ինչո՞ւ «գելի» փոխարեն չգործածել «դոնդոլ» բառը, կամ ինչո՞ւ «անտենան» դարձավ «ալեհավաք», «էլեմենտը»՝ 1. «մարտկոց», 2. «տարր», «պատասխան»՝ «մաժուկ»՝ «մագոլը»՝ «կոշտուկ» և այլն, իսկ «պուրրան» չդառնա «նրբափոշի», «սպազմը»՝ «կծկանք», «էպիլյացիան»՝ «մազահանում»,

«բլեֆարիտը»՝ «կոպաբորբ», «միկոզը»՝ «սնկախտ», «օստեոման»՝ «ոսկրոռուցք», «տյուբիկը»՝ «պարկուճ» և այլն:

Ինչ խոսք, մենք դեմ չենք փոխառություններին, որոնք բնականոն երևոյթ են լեզուներում, բայց դրանք չպետք է խախտեն մայրենի լեզվի տերմինաստեղծման դարավոր ավանդույթը:

Փոխառությունները լեզվի բառապաշարի զարգացման կարևոր միջոցներից են, որոնք ոչ միայն ապահովում են բառապաշարի ընդլայնումը, այլև հնարավորություն են տալիս գործադրելու լեզվի սեփական ներքին հնարավորությունները, բառակազմական միջոցները և ստեղծելու դրանց համարժեքները: Այս ճանապարհով հաստատվում է նաև լեզվի կենսունակությունը, խորքային մակարդակով վեր են հանվում լեզվի քերականական ու բառակազմական ճկուն, անսպառ հնարավորությունները: Իսկ օտարաբանությունները, ինչպիսի դրսևորումներ էլ ունենան, միևնույն է, լեզվի խոցելի տեղն են, նրա աքիլիսյան գարշապարը:

3. Արդի հայերենում անհրաժեշտ է ամրագրել առավել մատչելի ու նպատակամետ հայերեն տերմիններ, որոնց գործածությունն օգտակար է ոչ միայն բժշկի, դեղագետի, այլև հիվանդի համար: Իսկ եթե հայերենը դեռևս չի ստեղծել այնպիսի տերմինների համարժեքներ, ինչպիսիք են ինսուլին, ինֆիլտրատ, քրոմ, քրոմոսոմ, վագելին, դրաժե և այլն, ապա անկախ այս բառերի՝ հայերենին հարազատ ու հասկանալի լինելու կամ չլինելու հանգամանքից՝ դրանք լեզվից դուրս մնալ չեն կարող և պետք է օգտագործվեն այնքան ժամանակ, մինչև ստեղծվեն դրանց հայերեն համարժեքները:

Բժշկագիտական գրականության լեզվատոմսական հարցերի նպատակային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքը հեղեղված է ռուսերենից պատճենված բառերով ու բառակապակցություններով, հայերենին անհարիր լեզվամտածողությամբ, քերականական կառույցներով ու շարադասությամբ:

Օտարաբանությունը՝ որպես լեզվական անբույլատրելի և մերժելի իրողություն, հայերենում աղետալի չափերի է հասել: Պետք է զգուշանալ օտարամոլությունից, համատեղ ջանքերով գտնել հայերենը դրանցից ձերբազատելու ուղիները՝ իհարկե, խուսափելով մյուս ծայրահեղությունից՝ մաքրամոլությունից:

Ըստ հայոց լեզվի տեսության պաշտոնական հրահանգի՝ ոչ միայն գործավարությունը պետք է կատարել հայերենով, այլև պետք է օգտագործել մայրենի լեզվի մասնագիտական տերմինները:

Կարծում ենք, ժամանակն է՝ մշակելու մասնագիտական խոսքի կանոնարկման ընդհանուր սկզբունքներ, որոնք հնարավորություն կտան բացահայտելու տվյալ բնագավառի լեզվին բնորոշ տիպական սխալները՝ մատնանշելով դրանց հաղթահարման ուղիները:

Henrietta Sukiasyan (Armenia)

MEDICAL TERMINOLOGY AND LANGUAGE

Attempts to work out and regulate the Armenian language of public health have been done in different periods of time since the middle ages. They were done under the conditions of different lingual- cultural influence and they disclaim each other resulting in particoloured characher.

Great work has been done in this direction during the last two decades. But it is still far from being perfect. Professional terminology is a special matter of some difficulty. To overcome it we should consecutively use the principles of terminological regulations which are consolidated by the resolutions of the terminological committee and used in other spheres too.

Նարինե Վարդանյան (Հայաստան)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԳՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

(ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Սոցիալական ցանցերը համացանցային յուրօրինակ հարթակ են, ծառայություն կամ կայք, որոնք նախատեսված են սոցիալական հարաբերությունների կառուցման համար: Օգտագործողների քանակով այսօր առաջատար են համարվում Facebook-Ն, Twitter-Ն, VK-ը, Одноклассники-ն և այլն: Դժվար է նույնիսկ դրանց օգտատերերի թվաքանակը նշել, քանի որ այդ թվերը փոփոխվում են ոչ թե ըստ օրերի, այլ ըստ րոպեների:

Իսկ ի՞նչ լեզվով են մեր հայրենակիցները շփվում, նյութեր, տեղեկություններ, տեսանյութեր տարածում սոցիալական ցանցերում:

Գաղտնիք չէ, որ բանավոր խոսքում միշտ չէ, որ խոսողը պահպանում է հայերենի գրական բոլոր նորմերը: Սակայն գրավոր հանրային խոսքը հիմնականում կառուցվել է լեզվական նորմերի պահպանմամբ, մեծամասամբ ենթարկվել է գրաքննության, խմբագրման: Ցավոք, մույնը չենք կարող ասել մեր օրերի մասին: Այսօր լեզվի հիմնական կրիչը ոչ թե թուղթն է, այլ թվային տեխնոլոգիան: Ու այն, թե ինչ լեզվով ենք գրում հեռախոսով, i-Pad-ով, համակարգչով, խոսում է նաև մեր լեզվամտածողության մասին: Վաղուց ժամանակն է՝ մտածելու համացանցային գրագրության լեզվի մասին, քանի դեռ համացանցը չի որոշել, թե որ լեզվով մենք «մտածենք»: Հայկական միջավայրում համացանցի բավականին արագ տարածմանը համընթաց, օրեցօր ավելի շատ օգտատերեր են գրանցվում սոցիալական ցանցերում: Նրանք հիմնականում երիտասարդներ են, ովքեր անգիտակցաբար կլանում են սոցիալական ցանցերում եղած լեզվական սխալները՝ շատ անգամ սխալն ու ճիշտը միմյանցից չտարբերակելով: Հաճախ նրանք անգամ չեն էլ մտածում որևէ բառի կամ արտահայտության ճիշտ կամ սխալ լինելու մասին, քանի որ համացանցում առաջնային է դառնում պարզապես միտք փոխանցելը: Այսօր մենք լայնորեն օգտվում ենք սոցիալական ցանցերից: Եվ, ցավոք, ակնհայտ է դրանց բացասական ազդեցությունը մշակույթի և առաջին հերթին մայրենի լեզվի վրա: Հետևելով համացանցային անցուղարձին՝ ամենուրեք կարող ենք արձանագրել հայերենի գրական նորմերի աղավաղման կոպիտ դեպքեր, առօրյա-խոսակցական բանավոր ոճը համառոտ են տարածվում է գրավոր տեքստերում և տարածվում: Ի տարբերություն հեռուստահաղորդումների, գովազդի և արտաքին վահանակների՝ համացանցը ոչ մի պետական կառույցի կողմից չի վերահսկվում:

Ուսումնասիրելով սոցիալական ցանցերը և այն լեզուն, որով շփվում են վերջինիս օգտատերերը, գալիս ենք այն եզրակացության, որ սոցիալական ցանցերի լեզուն լի է լեզվաճական կոպիտ սխալներով, անհարկի օտարաբանություններով, գռեղկաբանություններով, ժարգոնային բառերով: Այստեղ լեզուն ծայրաստիճան պարզեցված է, հասցված պարզունակության մակարդակի: Սոցիալական ցանցերում լեզվական նորմերից դիտարկվող շեղումները, մեր համոզմամբ, կարելի է բաժանել 3 մեծ խմբի. **ա/ պատահական, բ/ դիտավորյալ գ/ բուն կամ իսկական**

ա/ Պատահական անվանել ենք համացանցում հանդիպող այն սխալները, որոնք հետևանք են արագ գրագրության, որի ընթացքում կորչում են որոշ հնչյուններ կամ բառեր: Այս կարգի սխալները մեր քննության ծիրից դուրս են, քանի որ սովորաբար մեկանգամյա կիրակություն են ունենում, հիմնականում արագ գրելու և պատահականության հետևանք են:

Մեր կարծիքով՝ առավել տարածված և վտանգավոր են դիտավորյալ, այսինքն՝ գիտակցաբար արված և բուն կամ իսկական սխալները:

բ/ Դիտավորյալ կոչել ենք այն սխալները, երբ օգտատերերը կարող են անսխալ կամ հայատառ գրել, սակայն ինչ-ինչ պատճառներով՝ սխալ կամ լատինատառ են գրում/հաղորդակցվում:

Ակնհայտ է, որ հայ հասարակության մեծամասնությունը համացանցում գրում է ոչ թե հայատառ, այլ լատինատառ: Օգտատերերը այս խնդրի վերաբերյալ ունեն հակադիր տեսակետներ. ոմանք անբույլատրելի են համարում օտար գիր օգտագործելը, ոմանք էլ ուղղակի առաջնորդվում են հարմարության սկզբունքով: Իսկ լատինատառ գրությունն ակնհայտորեն ավելի հարմար է: Ժամանակակից տեխնիկական միջոցների զգալի մասը, այդ թվում՝ որոշ հեռախոսներ, չունեն հայերեն համապատասխան ծրագրային ապահովում, ուստի այս կարգի օգտատերերը, կարծեք թե, «ստիպված» ընտրում են լատինատառ գրությամբ հաղորդակցվելու տարբերակը: Որոշ փորձագետներ կարծում են, որ լատինատառ գրելու միտումը շատ վտանգավոր է և կարող է ժամանակի ընթացքում հանգեցնել հայոց լեզվի ուղղագրության խեղաթուրմանը: Եվ եթե լատինատառ գրության կողմ օգտատերերը լայնորեն կիրառում են այն ամեն օր, ապա հայատառ գրագրությունը համացանցում այս տեսակետից «խեղճանում» է: Թեև անժխտելի է նաև այն փաստը, որ մույն սոցիալական ցանցերում կան օգտատերեր, որոնք գրում են բացառապես գրագետ և բացառապես հայատառ, սակայն նրանց թիվը շատ քիչ է: Նշենք նաև, որ այսօր արդեն մի խումբ երիտասարդների կողմից նկատելի է որշակի անհանդուրժողականություն լատինատառ գրի հանդեպ: Նրանք գրում են միայն հայատառ ու մշտապես կոչ են անում այլոց ևս հաղորդակցվել հայատառ: Իսկ լատինատառ գրող օգտատերերը հիմնականում դպրոցականներ են, պատանիներ կամ երիտասարդներ, որոնք կա՛մ առաջնորդվում են հարմարավետության սկզբունքով, կա՛մ սեփական չիմացությունը կոծկելու միտում ունեն: Ամենավատն այն է, որ այսօրինակ օգտատերերի շարքում շատ են, այսպես կոչված, հանրային դեմքերը՝ հաղորդավարներ, լրագրողներ, դերասաններ, երգիչ-երգչուհիներ և այլն: Օրինակներ՝

- erevan@ ankextsh sired@ 4grvatsh orenq e tond shnorhavoov im sireli EREVAAAAN.

- Apsos sa ajsor aravotyan achkovs ch@nkav! Hima, erb bnakaran@ maqur e, sa arden actual chi. Ovqer der 4en maqrel, ogtagorceq, Dzer sury kga, uxaki hrashk -:))))))
- Sex ev dzmeruk shat kereq amran@.

Օրինակները բազմաթիվ են, լեզվական նորմերից դիտարկվող շեղումները՝ բազմաթիվ և բազմաբնույթ: Մեր համոզմամբ՝ համացանցում լատինատառ գրությունը մարդկանց ազատում է հայերենի տարրական ուղղագրական, կետադրական, բառային, ձևաբանական և շարահյուսական կանոնների իմացությունից, հայերեն հաղորդակցման տարրական իմացությունից, ուստիև նրանք դիտավորյալ, միտումնավոր իրենց ասելիքը հանրության դատին են հանձնում լատինատառ, ինչը հեշտացնում է օգտատերերի գործը և անգրագիտության մղում այդ օգտատերերին կուռք դարձրած հայ երիտասարդությանը: Սոցիալական ցանցերում այս օգտատերերի գրառումներին անգամ թռուցիկ հայացք ձգելիս էլ՝ ակնհայտ է, որ շատերը պարզապես հայերեն գրելը մոռանում են: Իրենց առօրյա կյանքում էլ երիտասարդները շատ հաճախ ինչ-որ բան գրելիս օգտագործում են լատիններեն տառատեսակներ: Շատերը խոստովանում են, որ համացանցում այնքան են գրել **դգեգ, դգեր, օլքեր, ապսոս, աչկովս, անումեն, ուղակի**, որ **ձեգ, ձեր, ուլքեր, ափսոս, աչքովս, անում են, ուղղակի** գրելիս հաճախ մեխանիկորեն **դգեգ, դգեր, օլքեր, ապսոս, աչկովս, անումեն, ուղակի** են գրում: Այս միտումը վերաբերում է ոչ միայն վերոբերյալ օրինակներին:

զ/ Համացանցում լեզվական նորմերից դիտարկվող սխալների երրորդ խումբը մենք անվանել ենք բուն կամ իսկական սխալներ: Սրանք, մեր համոզմամբ, չիմացության հետևանք են: **Իսկական** սխալները բազմաթիվ են, մասնավորապես տեսանելի են.

1. *Հնչյունաբանական /ուղղախոսական, ուղղագրական/ և կետադրական նորմերի խախտումներ.*

Ուղղախոսական նորմերի խախտումները նկատելի են տեսահոլովակներում և էլեկտրոնային տեսանյութերում, որոնց հեղինակները հիմնականում երիտասարդներն են, որոշ դեպքերում՝ լրագրողները կամ լրատվական կայքերը: Այսօրինակ նյութերի հիմնական թերությունը բառերի սխալ շեշտադրությունն է ու ոչ հայերեն առագանությամբ տեքստերի ընթերցումը:

Ուղղագրական սխալները ևս բազմաթիվ են: Սոցիալական ցանցերում շատ քիչ են այն օգտատերերը, որոնք գրում են բացառապես հայերեն և բացառապես գրագետ: Սովորաբար այստեղ առկա են բազմաթիվ և բազմատեսակ ուղղագրական ամենատարբեր վրիպումներ, օրինակներ՝ **դգեգ, կվորոշենք, վոր, կենած, երտեվեկել, վչարում ենք 100 դրամ, Յեվրոպական միություն, օրեկան, ամսեկան** և այլն: Մի մասի դեպքում իր դերն ունի լատինատառ գրությունը, որին վարժված մարդը դժվարությամբ է ստեղծաշարով հայատառ տեքստ հավաքում, մյուս դեպքերում՝ ուղղագրական նորմերի խախտումը սխալ ձևերի տարածվածության և ճիշտ տարբերակների չիմացության հետևանք է:

Կետադրական սխալների օրինակներ՝ Հիմա “3+2” ֆիլմն ա,,,,, ու հին հուշեր, Շատ սիրուն է! և այլն:

2. *Բառագիտական նորմերից կատարվող շեղումներ /բառաձևի կազմության սխալներ, օտարաբանություններ, ժարգոնային բառեր և այլն:* Օրինակներ՝

| | |
|--|--|
| Առաջի անգամ եմ այս խաղը խաղում: Վերջի անգամ եմ կրկնում Friend - ֆեյսբուքյան ընկեր Add անել - ավելացնել Delete անել - ջնջել Լայքել – հավանել Status - կարգավիճակ Update անել - թարմացնել Tag անել - նշել | Post անել - հրապարակել Share անել – հրապարակել, կիսվել Event - միջոցառում Comment անել կամ comment-ել - մեկնաբանել Look - արտաքին տեսք Contact - հետադարձ կապ Message անել – մամակ գրել Attach անել - կցել |
|--|--|

3. *Քերականական նորմերի խախտումներ /ձևաբանական սխալներ, շարահյուսական սխալներ, շարահարական սխալներ:* Օրինակներ՝

- **Լսի՛** – լսի՛ր
- **Ընտրողների մոտ** վախի զգացում կա:
- Դեռ չենք ծանոթացել **ընտրացուցակների հետ:**
- **Ժողովուրդը պահանջում են** արդար ընտրություններ:
- **Ինքն** աշխարհի **ամենապույտը**, ամենասիրուն հեռախոսն **ա:**

4. Ոճական նորմերի խախտումներ /ոճական հավելադրություններ, բառային և քերականական օտարաբանություններ, քարմատար, ոճի անհամապատասխանություն և այլն/: Օրինակներ՝

- **Կրկին անգամ** հիշեցնեմ, որ ես քեզ **լիքը** սիրում եմ:
- **Մեր խնդիրը կայանում է նրանում**, որ այս ծրագրում հնարավորինս շատ երիտասարդներ ներգրավվեն:
- Էսօր ֆուտբոլի հաղթանակը **դա** մեր ազգի պանծանքն ա:
- **Դա** /խոսքը քաղաքապետի մասին է/ մեզ համոզեց:
- **Մի հաս** կասես, ժամը քանիսի ^ն գամ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով սոցիալական ցանցերում հայ օգտատերերի գրելու մշակույթը, հանգեցինք հետևյալ եզրակացությունների. 1. Սոցիալական ցանցերում ամենակոպիտ կերպով խախտված են հայերենի լեզվական տարրական կանոնները: 2. Սոցիալական ցանցերում գերակշռող լեզուն շատ է տարբերվում անգամ առօրյա-խոսակցական խոսքից: 3. Սոցիալական ցանցերում առավել տարածված են մեր կողմից բուն կամ իսկական անվանված սխալները: 4. Սոցիալական ցանցերի լեզուն լի է լեզվաոճական կոպիտ սխալներով, անհարկի օտարաբանություններով, գոեհկաբանություններով, ժարգոնային բառերով: 5. Սոցիալական ցանցերի լեզուն ծայրաստիճան պարզեցված է՝ հասցված պարզունակության մակարդակի: 6. Հայերի մեծ մասը համացանցում գրում է ոչ թե հայատառ, այլ լատինատառ: 7. Լատինատառ գրելու միտումը շատ վտանգավոր է և կարող է հանգեցնել հայոց լեզվի ուղղագրության ձևախեղմանը: 8. Երիտասարդներն անգիտակցաբար կլանում են սոցիալական ցանցերում եղած լեզվական սխալները՝ շատ անգամ սխալն ու ճիշտը միմյանցից չտարբերելով: 9. Համացանցի ամենօրյա պահանջարկը երիտասարդների շրջանում հանգեցնում է նրան, որ մեր խոսակցական լեզվում մուտք են գործում օտարաբանություններ, որոնց համարժեքները կա՛մ հայերենում չկան, կա՛մ՝ տարածված չեն: 10. Համացանցի լեզուն չի վերահսկվում պետական որևէ կառույցի կողմից:

Narine Vardanyan (Armenia)

DISTORTION OF THE MODERN ARMENIAN LITERARY NORMS ON THE INTERNET (SOCIAL NETWORKS)

The study of the article is the social network and the language used by users.

The observed deviations from the linguistic norms in the social network, in our opinion, can be divided into 3 major groups.

- Intentional-when users do master the correct versions, but for some reasons write/communicate Latin alphabet or wrong.
- Accidental - when during a quick correspondence some sounds or words are omitted.
- Real - which, in our opinion, are the results of lack of knowledge.

There are a lot of real mistakes, which are particularly displayed in Phonetics, Lexicology, Grammar and Stylistics.

Anaïd Donabédian-Demopoulos (France/Lebanon)

ARMENIAN DIALECTS DATABASE AND ITS RELEVANCE FOR AREAL LINGUISTICS: CONTACT LINGUISTICS AND GEOLINGUISTICS

The research project presented here, *Language contact and linguistic variation in the Caucasus/Iran/ Anatolia/Near East continuum*¹ concerns two subfields of linguistics:

- Contact linguistics, a scientific field centered on the study of linguistic variation across variants of a language or across different languages, in order to identify which linguistic phenomena (features or variation observed among them) may be considered as induced by language contact in multilingual areas.

¹ Project launched in Paris by A. Donabedian and P. Samvelian, and supported by a public grant overseen by the French National Research Agency (ANR) as part of the “Investissements d’Avenir” program (reference: ANR-10-LABX-0083)” (Labex EFL).

- Geolinguistics, a methodology used to represent linguistic variation on maps, and which become more affordable with the generalization of open software and platforms for geo-referencing.

The aim of the project is to take maximal benefit from the possibilities opened by the conjunction of this two fields, by building a complex geo-referenced database of linguistic features in order to reach knowledge that could not be obtained by traditional methods (describe and understand phenomena concerning this area, but also test some theoretical notions like *spread zones* or dispute hypothesis like the *Caucasian Sprachbund*). We will show below in what this project is innovative for both descriptive and theoretical linguistics, and how it can benefit to and take benefit from the work done by the Institute of Linguistics of the NASRA for the Atlas of Armenian Dialects.

The project focuses on syntactic features, usually less studied in contact issues, but allowing a more complex modelization due to the multiple parameters involved for each category, as exemplified below (3.), and thus, a deeper understanding of the contact processes in the concerned area.

The area chosen for the project, also named West Asia, is remarkable for his exceptional linguistic density and variety, represented by a large set of languages and dialects with different genetic, typological and sociolinguistic characteristics.

At last, the methodology is oriented toward the realization of an open access database and of online tools allowing visualizing the results on maps and statistical graphs, what is made more affordable by the recent development of new platforms and software designed for non-specialists of map modeling and graph building.

1. Geolinguistics and contact linguistics

The theoretical background of the project is that beside the genetic factor of language diversity, linguists identify areal phenomena determining **differentiation between dialects of a single language** or **spreading of features across languages** (in the conventional meaning of these concepts that could all be discussed). This idea has been illustrated in different theories through operational concepts like isoglosses or linguistic waves.

Geolinguistics take his roots in the beginning of the 20th century. Linguistic maps were first developed by dialectologists, following French school founded by Gillieron (late 19th - early 20th century), and the concept of *Sprachbund*, first applied to the Balkan area, emerged in 1923, being then applied to India, to South-East Asian region, etc.

Progressively, during the 20th century, the development of Linguistic Typology gave a framework for whole world maps of linguistic features, culminating with the WALS (first published in 2005 with a CD-ROM, and first online version in April 2008², see Dryer & Haspelmath 2013). Other projects exist, with less wide diffusion for now, like the one of the Moscow team of Academy of Sciences ‘Languages of the world’, with a more detailed features coverage (3000 features instead of 144 in WALS).

Dialectologists also work on extensive databases, as shown by some important projects concerning languages of our area exhibiting a strong dialectal ramification (not all of them are consultable online), like the Kurdish project (Bamberg University, Prof. G. Haig), the Romani Project (University of Manchester, Prof. Y. Matras), the Neo-Aramaic project (Cambridge University, prof. G. Khan), and the Atlas of Armenian dialects (National Academy of Sciences of Armenia). There are also projects in other areas, to speak about French projects for example, Berber dialectology maps at Inalco, Meso-American dialectological maps³, or more specialized project as REFLEX (typological database on African Languages taking into account the needs for genetic reconstruction in this area <http://www.reflex.cnrs.fr/>).

² Dryer, Matthew S. & Haspelmath, Martin (eds.) 2013. *The World Atlas of Language Structures Online*. Leipzig: Max Planck Institute for Evolutionary Anthropology. (Available online at <http://wals.info>, Accessed on 2014-02-02.)

³ Leonard, J.-L., 2014 (to appear), *Le Sprachbund mésoaméricain : approche critique d'un concept, de la grammaire au lexique, Faits de Langues* 43/2014.

But there is no project combining dialect variation and contact induced spreading of features, and in this regard our approach is innovating. In WALS, not all features concern all the languages: most of the features are described for 500 to 600 languages, the maximum being around 1500, and some features being for 40 to 100 languages. WALS is a very valuable project because of his extension and his online diffusion (even the databases are downloadable from the web), but it is not designed to understand more refined phenomena in a given area or language. By this purpose and by his areal extension, Don Stilo's Atlas of the Araxes-Iran Area⁴ (ongoing project) is closer to our project. It covers 65-70 languages and dialects of the South Caucasus, Eastern Turkey, Northern Iraq and Northern Iran, trying to show the shared features among these languages from 5 families (Kartvelian, Turkic, Semitic, North-Est Caucasian languages and Indo-European with two subfamilies, Armenian and Iranian). The results of the project are still unpublished, but some of them have been presented at several conferences. Each map shows the distribution of shared phonological, grammatical and lexical features. Among concerned features, we can mention for example the opposition *č/c*, the binary vs ternary system of stops (with glottalized or not), singular vs plural after numbers higher than 1, periphrastic present/progressive formed with copula, Differential Object Marking, lexical repartition of simple verbs vs light verb constructions, specific lexemes distinguishing *girl* from *daughter* and *boy* from *son*. The results of this study will be very valuable for all linguists working on this area. However, his limits are due to the fact that it is driven on an individual basis. Despite the good knowledge the author has reached for all languages and dialects involved in the project, what is very valuable in itself, the corpus for each of them may be subject to discussion by specialists, as well as the theoretical background for each described feature.

2. The Caucasus/Iran/ Anatolia/Near East area

The choice of this geographic area does not mean that we consider it as a linguistic area or a *Sprachbund*, as D. Stilo argues for what he calls the *Araxe's area*. This could be one of the results of the study, but we don't expect a clear and unambiguous answer to this issue. This area was chosen because it is coherent, though complex area. It combines different kinds of borders or boundaries, between genetic families (Turkic, Semitic, Indo-European, North-Caucasian, etc.), between States (and even, in a diachronic perspective, Empires with various dominant culture languages – Arabic, Aramaic, Persian, Greek, Turkish and Russian), and languages of different sociolinguistic statuses (dialects, school languages, mixed language practices; even pathological data, etc.). For most of the languages of the area, the whole area present widely spread dialectal variants (Armenian dialects are vernacular in the whole area, and no compact Armenian-speaking place remains outside his boundaries; the same can be said about Modern Aramaic and his dialects, about Kurdish; only the Domari and Lomavren are isolated from their western parent, the Rromani). Also, among the languages that will be included in the study with no total coverage of the area where they are spoken in the Modern time, Greek, Arabic, Russian, and Persian will be considered as dominant languages in some places of the area with regard to the languages which variation will be described more comprehensively. There is, variation of Greek, of Russian, of Persian and of Arabic will not be described in their whole geographical extent (for example Modern Greece, Northern Russia, Egypt and Maghreb, Afghanistan remain out of the covered area).

Despite the apparent spatial and historical coherence of this area, his modelization for the study language contact and variation is a real challenge : many population displacements are historically attested, and some dialects have more than one geographical reference, for example, concerning Armenian, dialects from Karadagh (Iran) spoken in Armenia and in Nagorno-Karabagh, dialect from Hemshin (Turkey) spoken in Crimea, Western Armenian dialects (Tigranakert, Cilicia, Musa Dagh, among others) spoken in Syria and Lebanon, etc. For all of them the understanding of contact phenomena requires to take into account their actual

⁴ Stilo, Don. 2008. An introduction to the Araxes-Iran linguistic area.

<http://www.soas.ac.uk/linguistics/events/deptseminars/02dec2008-an-introduction-to-the-araxes-iran-linguistic-area.html>

coordinates as well as their historical position, as far as it seems relevant to account for his synchronically observable features.

3. Syntax: a less-studied domain in dialectology and in language variation issues

Except some remarkable projects⁵, syntax is much less studied in dialectology than phonetics/phonology, morphology and lexicon. It is yet a part of the language system that is highly sensitive to contact. What seem particularly interesting to us is the observation of syntactic micro-variation across dialects of a single language as well as across dialects of different languages spoken on the same territory. To this end, we selected a small range of features to be described in detail for each variant, like relativization, pronominal clitics, verbal tenses (use, variation of paradigms structuration, analytic and synthetic forms), the expression of *be* and *have*. For each of them a questionnaire based on existing works in language typology and on descriptions of different variants of the area, will be built and cross-validated internally⁶ (participants of the project) and externally (during international workshops or conferences allowing to test them). The work already done on relativization allow us to expect a questionnaire of about 100 hierarchized parameters, following from above typological features:

- Type of relative clauses (a. prenominal, b. postnominal, c. embedded, d. detached, e. others)
- Form of the predicate in the relative clause (a. finite, b. nonfinite, c. intermediate, d. other)
- Type and morphosyntax of the junction marker (if exists: a. invariable, b. agreement in - gender, - number, - case, c. agreement with - the domain noun or - related to the function in the relative clause)
- Origin of the junction marker (a. interrogative, b. demonstrative, c. grammaticalization of a generic junction marker + resumptive pronoun, d. apposition or reanalyzed case marker, e. other)
- Place of the relativizer (a. left margin independent, b. right margin independent, c. attached to the relative clause verb)
- Syntactic functions accessibility : Grammatical functions (a. nuclear arguments, b. secondary arguments, c. satellite arguments or circumstantials, d. expansion of arguments, e. for each language : is the syntactic level determined by a. semantic roles, b. case markers); Facilitating factors (semantics, referentials, morphological, same function in main clause and in the relative clause, etc.

4. Building an open access database allowing statistical analysis and visualization

The methodology of the project rest on an open access database, allowing online feeding while improved by the research team, in order to grant a better coverage of the area. Already existing collaborations with Russian Caucasologists and with the dialectologists of the Linguistic Institute of the NASRA will be very valuable for each part.

The online tool that will be provided will allow the collaborators to input their data, and to have an access to geographic visualization, as well as to several statistical tools and graph generators in order to draw hypothesis about the parameters favoring language variation in contact. The methodology will allow the database to be cumulative, and thus, more and more exhaustive, although at the initial stage the priority is the validation of the theoretical and methodological groundings of the project rather than the exhaustive coverage of the area and features.

By this methodology, the projects aims to improve the knowledge of concerned languages, of language contact mechanisms and constraints, and also of the linguistic categories that will be enlighten.

⁵ Barbiers, S., L. Cornips & S. van der Kleij (eds). (2002). *Syntactic Microvariation*. Electronische publicatie van Meertens Instituut en NIWI. URL: <http://www.meertens.knaw.nl/books/synmic>

⁶ The Paris team of the project includes specialists of Arabic, Neo Arameic, Eastern and Western Armenian, Azerbaijani, Budugh, Domari, Kashkai, Kirmanji, Kryz, Tabasaran, Persian and Turkish

In this project, technology allow to make the project more powerful, as online database will allow to spread information across project members and the whole scientific community, to make possible distance collaborative work (online feeding of the database, etc.), and to make the project cumulative and long-term evolving (to become more exhaustive).

Map visualization has first of all a heuristic value : revealing unexpected hypotheses about boundaries for different types of parameters, and so, able to change the idea we have on “natural boundaries” between documented variants; and on the hierarchy of parameters in the structuration of a given syntactic phenomenon.

Besides the linguistic parameters, the database will include a large set of metadata on the language or dialect described (namely sociolinguistic information about the number of speakers, the degree of standardization, etc.), on the speaker’s linguistic profile for each of the recorded data, on the corpus characterization (spoken/written, spontaneous or elicited, date and place where corpus were collected, information about the speaker).

Data on a given syntactic phenomenon are to be correlated with

- Typological properties known for the documented languages (when available, from WALS or Moscow database, elsewhere to fulfill)
- Sociolinguistic properties and corpus characterization according to the metadata of the documented variant (for example, when data are collected in a place where the language/dialect is not typical for, ‘number of speakers in the given place’ in order to estimate the exposure of the informant to the language/dialect). So the fields concerning the language and the corpus include estimation on in what extend data are representative of a language or a dialect, in order to allow to include them or not to include them when applying statistical engines.

Fields chosen for the database are assumed to match with parameters identified as relevant for further analyses (descriptive parameters as well as reliability of data, sociolinguistic variables able to act as a bias for the analysis, etc.). On the basis of these fields, interdisciplinary work has to be done with statisticians in order to develop 1) advanced search engine in order to browse the database (protocol is elaborated by the linguist according to his interests), and 2) a heuristic engine able to detect irregularities and salient correlations by crossing all parameters, even those not considered a priori as relevant by linguists.

The project is currently at the stage of his linguistic methodological elaboration (field’s selection and hierarchization) and the work on mining tools will start when a stabilized version of the database will be available (mid-2014).

As shown above, this project is very valuable for research on Armenian Dialects. It provides a technological environment allowing processing Armenian Dialect data’s (database building, mapping, visualization, correlations detection, etc.) for syntax but also for other domains (phonetics, morphology, lexicon), and to have access to features of neighboring languages in order to draw hypothesis explaining inter-dialect variation. It opens new perspectives for common issues in Armenian dialectology and linguistic typology or general linguistics. Thus, it should be a stimulating project for all researchers, and an attractive one for young researchers, within an international collaboration network (Russia, Germany, France, Lebanon).

Անահիտ Տոնապետեան (Ֆրանսիա/Լիբանան)

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐՔԱՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵԱԼԱՅԻՆ ԵՎ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՍԱՐ

Այստեղ ներկայացվում է Լեզվալիք կոնտակտ և լեզվաբանական փոփոխականություն Կովկաս/Իրան/Անատոլիա/Մերձավոր Արևելք կոնտինուումում հետազոտական ծրագիրը, որը համադրում է լեզվաբանության երկու ասպարեզներ՝ կոնտակտալիք լեզվա-

բանությունը և գեո-լեզվաբանությունը: Ծրագրի նպատակն է՝ այս բարդ և հարուստ շրջանի լեզուների և բարբառների շարահյուսական որոշ հատկություններ նրբորեն նկարագրել և հավաքել բարդ համակարգային մի շտեմարանում, որ կունենա նաև քարտեզային հղումներ: Այս բոլորովին նոր տիպի ատլասը, որը խիստ տարբերվում է արդեն իսկ գոյություն ունեցող ատլասներից, կարող է մեծ արժեք ունենալ հայերենի բարբառագիտության համար, տրամադրելով նոր գործիքներ քարտագրության և վիճակագրային ուսումնասիրության համար, և նպաստելով որ հայերենի բարբառագիտությունը մուտք գործե դեպի ընդհանուր և արեալային լեզվաբանություն:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անլիտա Դոլուխանյան (Հայաստան)

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅԱԳԵՏ ՍԵՆ-ՄԱՐՏԵՆԻ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժան Անտուան Սեն-Մարտենը (1791-1832) ֆրանսիական հայագիտության հիմնադիրն է: Նրա կապիտալ աշխատությունը „Mémoires historiques et géographiques sur l'Arménie” երկհատոր հետազոտությունն է, որը լույս է տեսել Փարիզում 1818 և 1819 թվականներին: Իր այդ աշխատությամբ Սեն-Մարտենը Եվրոպայում նպաստեց հայագիտության զարգացմանը: Առաջին հատորի «Ձեկույցի» մեջ հայագետը գրում է. «Սա Եվրոպայում առաջին աշխատությունն է Հայաստանի մասին. մենք թույլ ենք տալիս մտածել, որ այն կներկայացնի աշխարհագրական և պատմական ճշգրիտ տեղեկություններ: Տարբեր հիշատակումներն ու թարգմանությունները, որ այն պարունակում է, ավարտվում են 1812 թվականով»¹:

Սեն-Մարտենը եղել է նշանավոր արևելագետ Սիլվեստր դը Սասիի աշակերտը և իր գլխավոր երկի սկզբում երևելի ուսուցչին ուղղված ընծայականում նկատում է, թե իր այդ հետազոտությունը «կնպաստի ճշգրիտ գաղափար տալու մի երկրի և մի ժողովրդի մասին, որը մինչև մեր օրերը գրեթե մնացել է անհայտ»²:

Սեն-Մարտենի այս աշխատությունը իրականացրել է հեղինակի սպասումները: Հայագետները Եվրոպայում ու Ռուսաստանում հենվել են նրա հաղորդած փաստերի վրա: Բավական է հիշել, որ բազում տասնամյակներ անց Բրոկհաուզ-Էֆրոնի հանրագիտարանի երկրորդ հատորում գետնադրված «Հայաստան» ծավալուն հոդվածի հիմքում ընկած է Սեն-Մարտենի վերոհիշյալ աշխատությունը³:

Ֆրանսիական հայագիտության հիմնադիրը բացատրում է, թե ինչ օգուտ կարող է ստանալ եվրոպական գիտությունը հայոց լեզվի ուսումնասիրությունից և հայ մատենագիրների երկերի թարգմանություններից: Նա Հայաստանի՝ նրա մշակույթի, գրականության նկատմամբ եվրոպացիների անտարբերությունը բացատրում է երկրի պետականություն չունենալով: Արևելագետները եռանդուն ձևով Եվրոպայում հետազոտում են արաբները, պարսկերենը, հնդկների լեզուն, թուրքերենն ու չինարենը, որովհետև դրանք պետություն ունեցող ժողովուրդների լեզուներ են, մինչդեռ հայերը մի քանի անգամ կորցրել են իրենց պետականությունը և XIX դարասկզբին գտնվում են երեք մեծ պետությունների լծի տակ: Դրանք են՝ Ռուսաստան, Պարսկաստան և Թուրքիա: Հայերն աշխարհասփյուռ ժողովուրդ են և չնայած իրենց պետականության կորստին, մահմեդականների հալածանքներին, պահպանել են ազգային լեզուն, կրոնը, սովորությունները և ամենակարևորը՝ կիրթ ու զարգացած բազմաճյուղ գրականությունն ու մշակույթը: Հայագետն այս երևույթը համարում է արտասովոր՝ կապելով հայ ժողովրդի մտավոր հարստության ու կարողությունների հետ: Նա հիացմունքով է խոսում V դարի Հայաստանի հոգևոր ծաղկման մասին, թվարկում է այն աշխատությունները, որոնք հայերը թարգմանել են հունարենից, ասորերենից, պարսկերենից. դրանց մի մասը ստացել են սկզբնաղբյուրի արժեք, որովհետև կորած են նրանց բնագրային օրինակները: Շատ բարձր է գնահատում հայ պատմիչներին, որոնց աշխատությունները երբեմն ծավալուն չեն, սակայն պարունակում են պատմական տարեգրությունների համար էականը և հնարավորինս ճշմարտապատում են, առանց Արևելքի պատմագրությանը հատուկ երևակայական շեղումների:

Հայ պատմիչների երկերը միջազգային պատմագրության արժեքավոր դրսևորումներից են, նրանց շնորհիվ արևելագետները հայթայթում ու լուսաբանում են Կոստանդնուպոլսի հույների, Պարսկաստանի Սասանյան դինաստիայի արքաների, մահմեդական արաբների, թուրք-սելջուկների, խաչակիրների, մոնղոլների և ընդհանրապես ողջ Արևելքի մասին այնպիսի փաստեր, որոնք չկան այլ մատենագիրների մոտ: Դրանք վերաբերում են IV դարից մինչև XIX դարի սկիզբն ընկած ժամանակահատվածին:

Սեն-Մարտենը հիացմունքով է խոսում բազմաթիվ տպարանների մասին, որոնք XVI դարասկզբից հայերը բացեցին աշխարհի ամենատարբեր երկրներում՝ Իտալիայից մինչև Հնդկաստան: Դրանք բացվեցին Վենետիկում, Ամստերդամում, Լայպցիգում, Լիվոռնոյում, Լեհաստանում, Կոս-

¹ J. A. Saint-Martin, *Mémoires historique et géographique sur l'Arménie*, t. I, Paris, 1818, p. IX.

² Նույն տեղում, p. VII-VIII.

³ Ф. А. Брокгауз, И. А. Ефрон, *Энциклопедический словарь*, т. II, С.Петербург, 1890, с. 124.

տանդնուպոլսում, Ջմյուռնիայում, Ռուսաստանի տարբեր քաղաքներում, Էջմիածնում, Մաղրասում, Նոր Ջուղայում, Մարսելում:

Մեն-Մարտենը Հայաստանի մասին հաղորդում է այնպիսի փաստեր, որոնք չկան հայ պատմիչների երկերում և նրա վերոհիշյալ աշխատության շնորհիվ դրվում են գիտական շրջանառության մեջ:

Այսօր Մեն-Մարտենի գլուխգործոցի մեջ կարելի է գտնել որոշ անճշտություններ, սակայն դրանք բոլորովին չեն ստվերում հայագիտությանը նրա մատուցած եզակի ծառայությունը, առավել ևս արդիական արժեքը:

Այսօր թուրքական, ինչպես նաև ադրբեջանական առանձին գիտնականներ ջանքեր չեն խնայում ապացուցելու, թե Արցախը միշտ եղել է ադրբեջանական տարածք: Այդօրինակ հակագիտական հայտարարությունների փաստացի հերքումը կարելի է գտնել դեռևս 1818-ին լույս տեսած Մեն-Մարտենի գլուխգործոցում:

Մեն-Մարտենը Հայաստանի աշխարհագրական տարածքների մասին խոսելիս օգտվում է ոչ միայն հայ միջնադարի պատմիչների ու մատենագիրների հաղորդածից, այլև նույն փաստի հաստատումները մատնացույց է անում հին հունական, հռոմեական, ասորական, պարսկական ու արաբական աղբյուրներում:

Նա գրում է. «Les géographes Arméniens, aussi bien que les géographes Grecs et Latin, partagent ordinairement l'Arménie en deux grandes divisions. La grande Arménie, Մեծ Հայք, qui s'étend depuis l'Euphrate jusqu'à la mer Caspienne, et la petite, Փոքր Հայք...»⁴: Մեն-Մարտենը մանրամասն խոսում է Կիլիկյան Հայաստանի, ինչպես նաև առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ Հայքերի մասին՝ նշելով նրանց աշխարհագրական սահմանները:

Նա Հայաստանի պատմությունը առաջ է տանում քալլ առ քալլ, դարից դար՝ ամեն ժամանակահատվածի համար նշելով, թե որ ժողովուրդներն էին մեծ տարածքներ զբաղեցնող Հայաստանի հարևանները: Մեն-Մարտենը հաճախ է դիմում այնպիսի անվանի պատմիչների, ինչպիսիք էին Ստրաբոնը, Հովսեպոս Փլավիոսը, հույն աշխարհագիր Պտղոմեոսը, Ստեփանոս Բյուզանդացին:

Խոսելով Հայաստանի թագավորությունների մասին՝ Հայկազյաններ, Արշակունիներ, Բագրատունիներ, Կիլիկիայի Ռուբինյաններ, վերջին Լուսինյան թագավոր, Մեն-Մարտենը չի մոռանում նշել, թե լեռնային Արցախում, Գանձակից և Բարդախից հարավ դեռ XIX դարի սկզբին կան փոքրիկ ինքնուրույն իշխանություններ, որոնց հայ տերերը իրենց կոչում են մելիքներ. **„Melikh, nom dérivé de l'arabe, Melik, qui signifie roi”**⁵:

Իր հետազոտության առաջին հատորում ֆրանսիացի հայագետն ունի „Description de la Grand Arménie” («Մեծ Հայքի նկարագիրը») հատվածը, որում ամենայն մանրամասնությամբ նկարագրված են Մեծ Հայքի լեռներն ու գետերը, լճերը, և ապա տասնհինգ նահանգներն իրենց գավառներով:

Հայաստանի ամենամեծ լճերը նա համարում է երեքը՝ Վան, Ուրմիա, Սևան: Ներկայացնում է ամեն մի լճի նկարագիրը՝ աշխարհագրական դիրքը, ջրի որակը, տարբեր անվանումները: Վանա լիճը ներկայացնում է հետևյալ անվանումներով՝ Աղի ծով, Վանա ծով, Աղթամարի ծով, Բզնունյաց ծով, Ռշտունյաց ծով, Վասպուրականի ծով, Տոսայի ծով⁶:

Հայաստանի տասնհինգ նահանգները գրքում հետևյալներն են՝ 1)Բարձր Հայք, 2)Տայք, 3)Գուգարք, 4)Ուտիք, 5)Չորրորդ Հայք, 6)Տուրուբերան, 7)Այրարատ, 8)Վասպուրական, 9)Սյունիք, 10)Արցախ, 11)Փայտակարան, 12)Աղձնիք, 13)Մոկք, 14)Կորճայք, 15)Պարսկահայք:

Տասներորդ՝ Արցախ նահանգի մասին խոսելիս նա ասում է, որ իր օրերում՝ այսինքն 1818-ին, Արցախի „en grande partie soumis à l'empire Russe” («մեծ հատվածը ենթարկվում է Ռուսաստանի տերությանը»):

Նա հիշեցնում է, որ XIII դարից սկսած Արցախն ունեցել է նաև Խաչեն անունը⁷: Ըստ որում երբեմն Արցախը կոչել են Փոքր Սյունիք⁸:

Մեն-Մարտենը փոքրիկ ակնարկով ծանոթացնում է, թե որոնք են եղել Արցախի քաղաքները: Դրանք են՝ Գանձակ, Գանձասար, Տավուշ, Խաչեն, Ճարաբերդ, Ամարաս, Վարանդ, Դիզակ:

Հայագետը մեզ է ավանդում Գանձակ քաղաքի անվան բացատրությունը: Նրա կարծիքով Գանձակ տեղանունն առաջացել է հայերեն **գանձ** բառից, որովհետև անկասկած աղյուս է կոչվել հայոց հին թագավորների գանձերն այդ քաղաքում պահվելու պատճառով⁹: Իսկ Ամարասը հայերի համար եղել է գերագույն սրբատեղի, որովհետև այնտեղ պահվել է նահատակ սուրբ Գրիգորի մա-

⁴ J. A. Saint-Martin, *Mémoires historique et géographique sur l'Arménie*, t. I, p. 17 («Հայ աշխարհագիրները, ինչպես նաև հույն ու լատինացի, սովորաբար Հայաստանը բաժանում են երկու մեծ մասերի: Մեծ Հայաստան՝ Մեծ Հայք, որը տարածվում է Եփրատից մինչև Կասպից ծով, և փոքր՝ Փոքր Հայք»):

⁵ Նույն տեղում, էջ. 34 («Մելիք արաբերենից ծագած բառ, որ նշանակում է թագավոր»):

⁶ Նույն տեղում, էջ. 55.

⁷ Նույն տեղում, էջ. 149:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում, էջ. 150:

սունքները. „His deacons took him away, brought him to Lesser Siunik, and buried him in the town of Amaras”¹⁰.

Բնականաբար հայագետը ստուգաբանում է Հայաստան և Արմենիա անվանումները: Բացատրում է, թե ինչու հայերը կոչվում են Ասքանազյան կամ Թորգոմատուն և բերում է հայերի մասին վկայություններ Աստվածաշնչից:

Նա բացատրում է նաև արմեն ու Արմենիա անվանումները՝ հավատարիմ մնալով Մովսես Խորենացու հաղորդածին:

Սեն-Մարտենը Հայաստանի բոլոր մահանգների մեջ առանձնացնում է Արարատյանը, որը Արշակունիների գահակալության ժամանակ եղել է տասնհինգ մահանգներից մեկը և ամենագլխավորը, որովհետև մշտապես հայ թագավորների հիմնական նստավայրը այդ մահանգում էր, ու երկիրը կառավարվում էր այդ մահանգից:

Սեն-Մարտենի կարծիքով իրավացի են հայ պատմիչներն ու այն օտար մատենագիրները, որոնք Արարատ լեռան հետ են կապում Նոյի տապանի կանգառը և մարդկության բնօրրանը: Նա բացատրում է Արարատի ստորոտին եղած երբեմնի Ակոռի գյուղի անվան առաջացումը՝ «Արկ ուռի, il sema la vigne, et il lui fut donné, parce que Noé, en descendant du mont Ararat y planta un pied de vigne»¹¹.

Նույն ձևով Նախիջևան բառը համարում է այն տեղը, ուր առաջին անգամ իջևանել է Նոյը:

Գրքի որոշակի հատվածում Սեն-Մարտենը խոսում է գրադաշտական կրոնի սրբազան գրքի՝ Ավետարանի զանազան հատվածների մասին, ըստ Անկետիլ Դյուպերոնի հրատարակության, և հայերենի ու պահլավերենի մեջ տեսնում է բառային մեծ նույնություններ: Նա տալիս է **արի** բառի բացատրությունը **քաջ** նշանակությամբ: Նկատենք, որ ժամանակակից Իրանի ավետագետները **Ավետա** բառը, որը գրադաշտական կրոնի սրբազան մատյանի անվանումն է, բացատրում են հետևյալ ձևով. „In the Pahlavi renderings of the Avesta, this word was used as Apastan, and the Armenian language borrowed it as Apastan, meaning confidence or reliance”¹².

«Հիշատակարանների» առաջին հատորի երկրորդ մեծ հատվածը կոչվում է „Précis de l'Histoire d'Arménie” («Հայաստանի ճշգրիտ պատմություն»):

Այս հատվածում հայագետը ևս լայնորեն օգտագործում է Դիոդորոս Սիկիլացու, Ստրաբոնի, Տակիտոսի, Քսենոփոնի, Պոլիբիոսի, Հովսեպոսի, Աբուլֆարաջի և օտարազգի այլ պատմիչների հաղորդածը Հայաստանի պատմության մասին, նաև քաջատեղյակ է հայ մատենագիրների՝ Կորյունի, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Գազար Փարպեցու, Հովհաննես Դրասխանակերտցու, Հովհան Մամիկոնյանի, Մամվել Անեցու, Մատթեոս Եղեռացու, Ստեփանոս Օրբելյանի, Հեթում պատմիչի, Սիքայել Չամչյանի և այլ հեղինակների գործերին: Ամենից շատ վկայակոչվում են Մովսես Խորենացին, Փավստոս Բուզանդը, Եղիշեն, Մատթեոս Եղեռացին: Չորրորդ դարի Հայաստանի պատմության համար անփոխարինելի աղբյուր է համարում Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը», որը միջնադարի հայ պատմագրության մեջ հանիրավի անտեսված է հետևյալ պատճառով. „dont la diction et barbare”¹³: Այդ դարի մասին հաղորդածի համար Սեն-Մարտենը Փավստոս Բուզանդին նախապատվություն է տալիս Խորենացուց, որն այդ դարի մասին առավել կարճառոտ է գրել:

Մեծ հայագետը երազում էր ֆրանսերենի թարգմանել հայ պատմիչներին, սակայն կարողացավ իրականացնել միայն Ստեփանոս Օրբելյանի ու Հովհաննես Դրասխանակերտցու երկերի թարգմանությունները:

Ստեփանոս Օրբելյանի Սյունիքի պատմության թարգմանությունն էլ համապատասխան առաջաբանով ու ծանոթագրություններով „Mémoires historique et géographique sur l'Arménie” գրքի երկրորդ հատորի հիմնական նյութն է, որի հետ գետեղված են նաև „Géographies attribuées à Moïse de Khoren et au docteur Vartan, avec plusieurs autres pièces relatives à l'histoire d'Arménie”¹⁴.

Սեն-Մարտենն իրավացիորեն շեշտում է Սյունիքի մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի համահայկական գործիչ լինելու իրողությունը. նա հայտնի կրոնական ու մշակութային դեմք էր ոչ միայն Մեծ Հայքում, այլև Կիլիկյան Հայաստանում: Լինելով մեծ հայրենասեր՝ համառ պայքար է մղել միաբարական շարժման դեմ՝ պահպանելով հայ եկեղեցու ազգային դեմքը:

¹⁰ **Moses Khorenatsi**, *History of the Armenians*, Translation and Commentary on the Literary Sources by Robert W. Thomson, Caravan Books, Ann Arbor, 206, p. 253 («Ձոր քարձեալ սարկաւազաց նորին, բերելով ի փոքր Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւանի»):

¹¹ **J. A. Saint-Martin**, *Mémoires...*, t. I, p. 266-267 («Արկ ուռի, նա տնկեց խաղողի որթ և այդ անունն է տրվել, որովհետև Նոյը Արարատ լեռից իջնելիս, ստորոտում տնկեց խաղողի որթը»):

¹² **Holy Gathas, Zarathushtra**, *The Prophed of Ancient Iran by Ebrahim Pour Davoud*, Dresden, 1927, p. 28 («Ավետարանից՝ թարգմանված պահլավերենից, այս բառն օգտագործվել է որպես Ապաստան, որ նշանակում է վստահություն կամ ապավեն»):

¹³ **J. A. Saint-Martin**, *Mémoires...*, t. I, p. 314 («որի խոսքը կարծր է և խժաբան (լեզվի կանոններին դեմ»):

¹⁴ **J. A. Saint-Martin**, *Mémoires...*, t. II, Paris, 1819, p. 301-405 («Մովսես Խորենացուն և Վարդան Վարդապետին վերագրվող Աշխարհացոյց՝ Հայաստանի պատմությանը վերաբերող բազմաթիվ հատվածներով»):

Հայագետն անդրադարձել է Ստեփանոս Օրբելյանի բանաստեղծական ժառանգությանը և Մ.Չամչյանի «Հայոց պատմության» երկրորդ հատորից (էջ 1043) մեջբերում է մի հատված «Ողբ ի դիմաց Ս. Կաթողիկէին» ծավալուն երկից, որը գրել է XIII-XIV դարերի նշանավոր բանաստեղծ Խաչատուր Կեչառեցու պատվերով¹⁵:

Մովսես Խորենացուն վերագրվող «Աշխարհացույցի» քարգնանության առաջաբանում հայագետը նախ ներկայացնում է Հայաստանի պատմահոր կենսագրությունը: Մովսես Խորենացու անձին ու գործին հեղինակը անդրադարձ ունի առանձին հոդվածում, որը կոչվում է „Notice sur la vie et les écrits de Moyse de Khoren, Historien arménien”¹⁶ («Համառոտ տեղեկություն հայ պատմիչ Մովսես Խորենացու կյանքի և գրվածքների վերաբերյալ»):

Հայագետի կարծիքով Մովսես Խորենացու անունով հասած «Աշխարհացույցը» հաստատուն ձևով չի կարելի ասել, թե պատկանում է նրան. այդ գործի սկզբում կա հինգերորդ դարի մաթեմատիկոս Պապ Ալեքսանդրացու գրվածքը, որը և կազմում է այդ երկի հիմնական մասը¹⁷: Սակայն բնագրում կան հետաքրքիր հատվածներ, որոնք կարող էր գրել միայն հայ գիտնականը: Այդ հատվածները վերաբերում են Պարսկաստանին, Հայաստանին և Կովկասի երկրներին:

Իր «Հիշատակարանների» երկու սովոր հատորներով ու հայագիտական տարալեզու աղբյուրների քննական նյութերով Սեն-Մարտենը հիմնավորեց ֆրանսիական հայագիտության անհրաժեշտությունը, և նրա գիտական նվիրվածության օրինակին հետևեցին XIX դարի ֆրանսիացի և բելգիացի նշանավոր հայագետներ, ինչպիսիք են Մարի Բրոսսեն, Վիկտոր Լանգուան, Ֆելիքս Ներ, Էդուարդ Դյուլոթին, որոնք սիրեցին աշխարհի հին քաղաքակրթությունը ներկայացնող երկրներից մեկը՝ Հայաստանը ու նրա ստեղծագործ ժողովրդին:

Aelita Dolukhanyan (Armenia)

THE CONTEMPORARY VALIDITY OF FRENCH ARMENOLOGIST SAINT-MARTIN'S MASTERPIECE

Jean Antoine Saint-Martin (1791-1832) is the founder of Armenian studies in France. His capital work *Mémoires historiques et géographiques sur l'Arménie* is a study in two volumes which were published in Paris in 1818 and 1819. With this work Saint-Martin contributed to the development of Armenian studies in Europe. In his *Report* at the beginning of the first volume he writes: “This is the first work devoted to Armenia in Europe; we allow us thinking that it will communicate true geographical and historical information. Diverse mentions and translations it contains go up to 1812”.

With the two voluminous tomes of his *Mémoires...* and critical texts of armenological sources in various languages Saint-Martin confirmed the necessity of Armenian studies in France. His example was followed by French and Belgian prominent armenologists of the 19th century, as Marie Brosset, Victor Langlois, Félix Nève and Edouard Dulaurier who loved Armenia and its creative people, representing one of the most ancient civilizations all over the world.

Վանո Եղիազարյան (Հայաստան)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ՀԱՅ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ (ՄԿՁԲՆԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆ)

Հայագիտության մեջ խոսք է եղել պատմական արձակի ժանրակազմ առանձնահատկությունների քննության մասին: Մեր խնդրո առարկայի տեսանկյունից հիշարժան են Գևորգ Ալիշանի «Պատմիչք և պատմությունք հայոց» աշխատությունը, Մայիս Ավդալբեգյանի «Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը» գիրքը և «Հայ պատմագրության ժանրային մի քանի առանձնահատկություններ» հոդվածը, ինչպես նաև տողերիս հեղինակի «Ակնարկներ նախամաշտոցյան հայոց գրականության» գիրքը, որում առանձին անդրադարձել ենք պատմական արձակի ժանրակազմ առանձնահատկություններին: Մի հոդված ենք գրել «Հեղինակի և պատվիրատուի գրույցը Խորենացու պատմության մեջ» վերնագրով, իսկ մեր ասպիրանտ, բանասիրական գիտությունների թեկնածու Լիլիթ Փարենուկյանի համահեղինակությամբ տպագրված «Սեբեոսի պատմության հավանական պատվի-

¹⁵ Ստեփանոս Օրբելյանի «Ողբի» քննական բնագիրը կազմել ենք մենք ըստ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի 7 ձեռագրերի (տե՛ս Խաչատուր Կեչառեցի, Տաղեր, Աշխատասիրությամբ Ա. Դյուլոսանյանի, Երևան, 1988, էջ 82-105):

¹⁶ Տե՛ս „Journal Asiatique”, 1823, Juin, p. 321-324:

¹⁷ J. A. Saint-Martin, *Mémoires...*, t. II, p. 305.

րատուն» հողվածում բացահայտել ենք, որ Սեբեոսի պատմության հավանական պատվիրատուն ոչ թե Բագրատունիներն են, ինչպես մինչ այդ կարծում էին հայագետները, այլ Համազասպ Մամիկոնյանն է, ով Բագրատունիների փեսան էր:

Պատմական արձակի ժանրակազմ առանձնահատկություններից չափազանց կարևոր է մեկը՝ պատվիրատու կամ մեկեմաս ունենալը, որը կայուն և կրկնելի է հենց ժանրի սկզբնավորման շրջանում, թեև այն հետագայում Արիստակես Լաստիվերտցուց սկսած երբեմն այլ ընթացք է ստացել: Բանն այն է, որ մեկեմաս ունենալը պայմանավորված է ձեռագրական արվեստի բնույթով: Բնականաբար, ունևոր և ազդեցիկ մեկը պետք էր, ով պատմական արձակի ժանրի սկզբնավորման շրջանում ավատական Հայաստանի որևէ իշխանական տան ժառանգ կարող էր լինել, որ հովանավորեր ձեռագրի վրա կատարվող գրչագրական ծախսերը, ապահովեր մագաղաթը, թանաքը և այլ անհրաժեշտ նյութեր: Այս պարագայում պատմության հեղինակն ուղղակիորեն կախված է իր մեկեմասից, այլ կերպ՝ պատմիչը հայտնվում է կրավորական կեցվածքում, քանի որ նա հաշվետու է իր պատվիրատուին, ուրեմն՝ հեղինակն այնպես պիտի աներ, որ նախ՝ իր պատվիրատուի կամքը կատարեր, ապա նաև հավաստի պատմություն ներկայացներ: Այդ տեսանկյունից էլ պատմագրության ժանրն ունի սուբյեկտիվիզմի որոշ տարրեր, ավելին՝ հեղինակն ինքն էլ ունի իր համակրանքներն ու հակակրանքները, որը ևս նպաստում է սուբյեկտիվիզմի դրսևորմանը:

Հայոց պատմագրության սկզբնավորման շրջանում բոլոր պատմագիրների երկերում հստակ արտահայտվել է պատվիրատուի անունը, բացառություն է միայն Փավստոսը, ում պատմությունը կիսատ է հասել մեզ. այսպես՝ Ագաթանգեղոսի պատմության պատվիրատուն Արշակունի Տրդատ Գ Մեծ թագավորն է, Փավստոսինը հայտնի չէ, սակայն ենթադրաբար հնարավոր է ասել, որ Գրիգոր Լուսավորչի տան ներկայացուցիչ կաթողիկոս Ներսես Մեծն է, Կորյունինը՝ Հովսեփ Վայոցձորեցի կաթողիկոսը, Եղիշեինը՝ Մամիկոնյան Դավիթ երեցը, Մովսես Խորենացունը՝ Սմբատ Բագրատունի ասպետը, Ղազար Փարպեցունը՝ Վահան Մամիկոնյան իշխանը:

Արդ՝ չափազանց կարևոր է, որ պատմագրական երկի քննությունը կատարելիս հաշվի առնվի, թե ով է այդ պատմության պատվիրատուն, որն էլ կօգնի պատմության առավել ամբողջական և օբյեկտիվ ընկալմանը:

Հետաքրքիր է, որ գրեթե բոլոր պատմությունների մեջ պատվիրատուին ուղղված խոսք կա:

Դա պարզորոշ արտահայտվել է նաև Ագաթանգեղոսի պատմության մեջ, ով առաջաբանում գրում է. «Նույն այս ձևով տեսնում ենք, որ նման մի հարկադրանք մեզ էլ հասնելով ստիպում է նավարկել իմաստության ծովի վրա, քանզի մարդկանցից ոչ ոք չի կարող ամենևին հանձն առնել նման քրտնաջան աշխատանք, եթե հասած իշխանական հրամանը՝ ստիպելով այս բանը շուտափույթ անել չտա» (Ագ., 6):

Քիչ անց առաջաբանում ավելի որոշակի գրում է, որ ինքը գրում է հրամանով. «Արդ՝ հրաման է հասել ինձ՝ Ագաթանգեղոսիս, որ մեծ Հռոմ քաղաքից եմ, կրթված հայրենի գիտությամբ, սովորել եմ լատիներեն (հռոմայերեն) ու հունարենը, ուսանել եմ դպրությունը և ոչ խիստ անտեղյակ (մնացել) նշանագրերի արվեստին» (Ագ., 12):

Պատմության վերջում Ագաթանգեղոսն ավելի կոնկրետ կրկին հաստատում է, որ պատվիրատուն Տրդատ Մեծն է, և հեղինակը հաշվետու է պատվիրատուի առաջ. «Իսկ մենք, երբ ստացանք քո թագավորական հրամանները, ով այրերի մեջ քաջ Տրդատ, այս ամենը գրելու, ըստ այնմ մատյանների ժամանակագրին վայել ձևով դրոշմեցինք, ամեն ինչ շարադրելով հունական ճարտասանության օրինակով» (Ագ., 892):

Հեղինակը նաև հավաստում է, որ իր մատյանը պիտի կարդան թագավորի առաջ, որ թագավորին հայտնի դառնա իր պատվիրածի ճշմարտությունը. «Ով թագավոր, այլև երբ քո առջև կարդան այս մատյանը, հայտնի կդառնա ճշմարտությունը» (Ագ., 897):

Այլ է խնդիրը Փավստոսի դեպքում, ում պատմությունն ամբողջական չի հասել մեզ, սակայն ակնհայտ է, որ այն ևս գրվել է որևէ նախարարական տան պատվերով, տվյալ դեպքում՝ կա՛մ Արշակունիների, կա՛մ Լուսավորչի տան, կա՛մ Մամիկոնյանների:

Փավստոսի պատմության խորամուխ քննությամբ պարզվում է, որ Մամիկոնյաններին Փավստոսը ներկայացնում է հիմնականում դրական հատկանիշներով. Նրանք տիրասեր են, քաջ, համարձակ, ռազմական գործի մեջ հմուտ սպարապետներ, սակայն երկու դեպքում Մամիկոնյանները ներկայացվում են խոցելի կողմերով. Վասակը Արշակին դրոշմ է սպանել եղբորը՝ Վարդանին, իսկ Վահան Մամիկոնյանը դավաճան է:

Իսկ Արշակունի բոլոր թագավորներին հեղինակը ներկայացնում է վատ բնութագրով. այսպես՝ Տիրանը պատժվում է կուրացվելով, քանի որ նա սպանել էր Հուսիկ հայրապետին, Արշակը, ով հանդիմանվում է Ներսես Մեծից, եղբայրասպան է և պատժվում է ինքնասպանությամբ, Պապը, ով սպանում է Ներսես Մեծին, անբարո վարքի տեր է, Վարազդատը մանկամիտ է: Պարզ է, որ Արշակունիներից պատվեր ստացած պատմիչը այսպես չէր խոսի նրանց մասին: Ընդհակառակը՝ պատմության պատվիրատուին պետք է որոնել Արշակունիների դեմ կանգնած նախարարական տան դիրքերում:

Տրամաբանորեն պարզ է, որ դա Լուսավորչի տան շառավիղներից է, ենթադրաբար Ներսես Մեծը, ում կերպարը Փավստոսը ներկայացնում է սրբի լուսապսակով:

Եթե Փավստոսի դեպքում ենթադրաբար ենք ճշտում պատվիրատուին, ապա մնացած դեպքերում հստակ է մեկենասների ինքնությունը:

Խորենացին նույնիսկ մի ամբողջ գլուխ է նվիրել իր մեկենասին՝ Սահակ Բագրատունի ասպետին, ուր գրում է. «Մովսես Խորենացին մեր ազգի պատմության այս սկզբում ողջունում է Սահակ Բագրատունուն»: Նրա պատմության առաջին գլուխն ամբողջությամբ մեկենասի, նրա պատվերի և հեղինակի ճաշակին ախորժելի լինելու մասին է. «Քո մեջ եղած աստվածային շնորհքների անսպառ գործունեությունը և հոգու անդադար շարժումները քո մտածողության վրա՝ ես ճանաչեցի այս գեղեցիկ խնդրի միջոցով, մարմնիցդ առաջ հոգուդ հետ ծանոթանալով. սա իմ ճաշակին ևս ախորժելի է, և մանավանդ իմ սովորություններին: Ուստի ոչ միայն պետք է քեզ գովել, այլև քեզ համար աղոթել, որ միշտ այսպես մնաս» /Ա, ա/:

Ծեր և հիվանդ, թարգմանություններից անպարապ հեղինակն աճապարել է ի կատար ածել երիտասարդ մեկենասի պատվերը, պատմության ողջ շարադրանքի ընթացքում հաճախ խոսելով պատվիրատուի հետ իրենց առաջիկա գրական ծրագրերի մասին:

Բնականաբար, բոլոր պատմիչները հնազանդ կատարել են արքայատուր կամ իշխանատուր հրամանները, միակը Խորենացին է, ով ընդամենը մի տեղ փորձել է ընդդիմանալ իր մեկենասին, իսկ դա բացատրվում է Խորենացու աշխարհայացքով: Պատմության առաջին գրքի վերջին գլխում Խորենացին՝ որպես հունասեր հոգևորական, ընդգծված հակակրանքով է խոսում պարսից առասպելների մասին՝ Բյուրասայի Աժդահակի առասպելի օրինակով. «Ի՞նչ կարոտություն ունես այս սուտ առասպելների կամ ի՞նչ կարիք այսպիսի շինծու անմիտ և անհանճար գրույցների: Մի՞թե սրանք հույների պերճ ու ողորկ, պատճառավոր առասպելներն են, որոնց տակ թաքնված են ճշմարիտ իրողություններ: Բայց դու մեզ ասում ես, որ իմաստ տանք նրանց անիմաստությանը և անզարդ զարդարենք: Ես նույնը կրկնում եմ քեզ. ի՞նչ կարոտություն ունես սրանց, և ի՞նչ փափագ է՝ անբաղձալի բաներին բաղձալը և մեզ նոր նեղություն պատճառելը: Մենք այս վերագրում ենք քո մանկական հասակին և համարում ենք քո տհաս խակության ցանկություն: Ուստի այստեղ էլ թող կատարած լինենք քո կամքը և փափագդ լրացնենք» /Ա, լբ/:

Ի դեպ, վերջին նախադասությունը Ստ. Մալխասյանցը թարգմանել է որոշ շեղումով, իսկ մեր կարծիքով այն պետք է թարգմանվի այլ կերպ, որով մեղմվում է մեկենասին ուղղված խոսքի հանդիմանական ոճը:

Մանուկ բառը գրաբարում բազմիմաստ է և այս դեպքում օգտագործվել է *երիտասարդ* իմաստով ՆԲՀԼ, հ. 2, էջ 206/, իսկ *անհասությունն* այստեղ *տհաս չէ* նշանակում, այլ՝ *ոչ հասանելի, անհաս* /տե՛ս ՆԲՀԼ, հ.1, էջ 181/: Արդ հատվածը պետք է թարգմանել «Այս վերագրում ենք քո երիտասարդ տարիքին և համարում ենք քո մտքի անհաս ցանկությունը» ձևով:

Թեև Խորենացին պարսից առասպելների մասին պահանջը բացատրում է Սահակ Բագրատունի իշխանի երիտասարդ, ոչ հասուն տարիքով, սակայն այսուհանդերձ մասամբ կատարել է նրա պահանջը՝ բերելով Բյուրասայի Աժդահակի մասին առասպելը:

Մի խոսքով, պատմության սկզբից մինչև վերջ Խորենացին մի ներքին ծրագրային գրույց է վարում Սահակ Բագրատունի ասպետի հետ՝ երբեմն հակադրվելով, իսկ հիմնականում հստակեցնելով իր պատմագրելու ծրագիրը, ճշտելով իր պատմության ձևաչափը և սահմանները: Պատմության առաջին գրքում գրույցն առավել հաճախադեպ է, քան երկրորդ և երրորդ գրքերում: Բանն այն է, որ հեղինակը սկզբում փորձում է հստակեցնել մեկենասի պահանջներն ու ծրագիրը:

Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի պատվիրատուն Հովսեփ Վայոցձորեցի կաթողիկոսն է, ում չպետք է շփոթել Հովսեփ Պաղնացու հետ, ով Ծովսեպ նահանգի Պաղին գյուղից է, իսկ Հովսեփ Վայոցձորեցին Սյունյաց նահանգի Վայոց ձոր գավառի Հողոցիմ կամ Խողոցիմ գյուղից, ով առաջին կաթողիկոսն էր, որ Լուսավորչի զարմից չէր և բազմեց հայրապետական աթոռին Սահակի և Մաշտոցի կամքով, սակայն պաշտոնապես կաթողիկոս ճանաչվեց 444 թվին և հրավիրեց Շահապիվանի ժողովը, որի կանոններով նպաստեց հայ եկեղեցու ամրապնդման գործին: Հովսեփ կաթողիկոսը գլխավորել է 450 թ. տեղի ունեցած Արտաշատի ժողովը, որին ներկա են եղել 17 բարձրաստիճան հոգևորականներ և նախարարներ: Ավարայրից հետո՝ 451թ. Հովսեփն աքսորվել է Վրկանի բանտ, և ապա Դենշապուիը 452թ. գլխատել է նրան և Գևորգ Երեցին, ով Վանանդ գավառի Իջավանք գյուղից էր:

Վասակ Սյունի իշխանը Կորյունի երկում հիշվում է հետևյալ կերպ. «Քաջ Սիսական Վասակը, խելացի ու հանճարեղ և կանխագես աստվածային իմաստության շնորհքով օժտված մի մարդ» /«*Քաջն Սիսականն Վասակ. այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստությանքն աստուծոյ*», ով մեծապես օգնել է Մաշտոցին Սյունիքում ավետարանը քարոզելու գործին:

Եղիշեն և Փարպեցին գրում են Մամիկոնյան իշխանական տան պատվերով, Եղիշեն՝ Մամիկոնյան Դավիթ երեցի, իսկ Փարպեցին՝ Վահան Մամիկոնյան իշխանի: Եղիշեն և Փարպեցին, բնականաբար, փառաբանում են Մամիկոնյան նախարարներին և նրանց համախոհներին, իսկ հակառա-

կողմերի մասին լուր էն /Բագրատունիների մասին/ կամ վատ արտահայտվում /Սյունեցիների մասին/:

Այդ շրջանում իր պատմությունն է գրել Մովսես Խորենացին Սահակ Բագրատունու պատվերով, ով Բագրատունիների նախարարական տան շահերի դիրքերից թերագնահատել է Մամիկոնյաններին՝ իր պատմության երրորդ գրքում հպանցիկ խոսելով նրանց մասին:

Արդ՝ պատմագրական արձակի քննություն կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել նշված հանգամանքները:

Այսպես՝ Փավստոսն անվանարկում է Պապ թագավորին, քանի որ նա սպանել է Ներսես Մեծին, իսկ Փավստոսի համակրանքը Լուսավորչի նախարարական տան և նրա ներկայացուցչի՝ Ներսեսի Մեծի կողմն է: Կորյունը գովեստի խոսքեր է ասում Վասակ Սյունու մասին, քանի որ Կորյունի պատվիրատու Հովսեփ Վալոգճորեցին Սյունյաց կողմերից էր և բարեհաճ էր Վասակ Սյունու նկատմամբ, մինչդեռ Եղիշեի պատմության պատվիրատուն Մամիկոնյան նախարարական տան ներկայացուցիչ էր, իսկ Մամիկոնյանները այս շրջանում մրցակից էին նաև Սյունեցիների հետ: Ավելին՝ Խորենացին կանխակալ վերաբերմունք ունի Մամիկոնյանների նկատմամբ, քանի որ նրա պատմության պատվիրատուն Բագրատունի նախարարական տան ժառանգն է, իսկ այդ շրջանում Բագրատունիները և Մամիկոնյանները իշխանության համար մրցակիցներ էին:

Եզրակացությունն այն է, որ պատմական արձակի բովանդակությունը մեծապես պայմանավորված է պատվիրատուի քաղաքական և գաղափարախոսական շահերով, ըստ որի պատմության հեղինակը ներկայացնում է պատմական դեպքերն ու դեմքերը, երբեմն էլ իր անձնական համակրանքներն ու հակակրանքները միահյուսելով պատմությանը: Պատմության հեղինակն ուղղակիորեն կախված է իր մեկենասից, այլ կերպ՝ հեղինակը կրավորական կեցվածք ունի և իր պատվիրատուի կամքը պիտի կատարի, որով պատմական արձակի ժանրը ստանում է սուբյեկտիվ լիզմի որոշ տարրեր, թեև հեղինակը փորձում է ներկայանալ որպես ստուգապատում պատմիչ:

VanoYeghiazaryan

CUSTOMERS IN THE ARMENIAN HISTORICAL PROSE (THE ORIGINATION PERIOD)

One of the genre-making peculiarities of the historical prose is having a customer or a patron of arts, which is obligatory depending on the nature of handwritten art. From this perspective the genre of historiography has some elements of subjectivity, which mustn't be neglected while analyzing.

Мака Элбакидзе, Ирма Ратиани (Грузия)

ОБРАЗ СВЯТОЙ НИНО В ГРУЗИНСКИХ И АРМЯНСКИХ ИСТОЧНИКАХ

Принятие Христианства и объявление его государственной религией в начале IV века - самое значительное явление в истории Грузии. Это стало возможным усилиями Святого царя Мириана и Святой царицы Наны. В полном соответствии с типичной моделью, смена язычества теистической религией означала утверждение новой, прогрессивной идеологии, переход на абсолютно иной - новый культурный этап.

С самого начала существования два сказания о христианизации Грузии: одно греческое – Геласия Кесарийского, переведенное позже Руфином¹ (по этому преданию грузин просветила некая пленница)², второе – армянское. Согласно «Истории Армении», в сказании армянского историка Мовсеса Хоренаци, восемьдесят шестая глава которой («О блаженной Нунэ и о том, как она стала причиной спасения иверов») посвящена Святой Нино и ее проповеднической деятельности, миссионерство Святой Нино (Нунэ) связано с именем Святого Григория Просветителя. Автор отмечает, что в

¹ Со своей стороны, Руфин отмечал, что историю обращения грузин, соответственно, о миссионерской деятельности «пленной девы христианки» он слышал в Иерусалиме от картлийского царя Бакури. История обращения Картли сохранилась в трудах Геласия Кесарийского, Руфина, Сократа Схоластика, Эрмия Созомена.

² Нужно отметить, что слово «пленник»/ «пленница» упомянутое в ранних христианских текстах, нельзя понимать в прямом значении, если оно обращено к миссионерам. В данном конкретном случае это слово означает «божий пленник», обязанностью которого являлась проповедовать учение Христа, соответственно, слово «пленница» - это символ, означающий христианские идеалы (См.: Сирадзе, Р. *Грузинская агиография*. Тбилиси, 1987. Стр. 98-100).

своим труде он использует сведения, полученные от Агафангела. В то же время, это первый в армянской историографии автор, который упоминает грузинскую просветительницу как апостола³. Выделим несколько узловых моментов из работы Хоренаци:

1) Нунэ (та же Нино) была подругой преследуемых рипсимеевых сподвижниц; 2) поселившись в городе Мцхета Нунэ, усердно изучает искусство врачевания и исцеляет многочисленных больных, в том числе и супругу царя Михрана (Мириана); 3) на вопрос Михрана, как ей удаются подобные чудеса, Нунэ отвечает: проповедью Евангелия Христова. Михран увлеченно слушает ее, а позже передаст рассказы Нунэ своим нахарарам и не пожалеет похвальных слов в адрес целительницы; кроме того, Михран поведал о том чуде, которое произошло в Армении с царем и нахарарами и о подругах блаженной Нунэ; 4) во время охоты Михран заблудился на трудных горных тропах. Как отмечает Мовсес Хоренаци, «он заблудился... из-за мглы, охватившей воздух, но не его зрение, подобно тому как сказано: «голосом призывает мрак» и еще: «день в ночь помрачает». Михран был охвачен таким именно мраком, который стал для него причиной вечного света»⁴. Оказавшийся в темноте Михран вспомнил услышанную им историю о царе Трдате и, обуянный великим страхом, стал истово молиться о том, чтобы туман рассеялся, и он смог спокойно вернуться домой. Он поклялся, что если он спасется, он станет поклоняться богу Нунэ; 5) Святая Нунэ послала надежных людей к Святому Григорию за советом, как ей вести себя дальше⁵. Ей повелели уничтожить идолов, как это сделал сам Григорий, и воздвигнуть Благодородный Крест, пока Господь даст им пастыря в предводители. И Нунэ, согласно повелению, незамедлительно сокрушила изображение громовержца Арамазда⁶; 6) нахарары города выступили против Нунэ, потому что уже не знали, кому поклоняться взамен своих идолов. Нунэ указала им на изображение Святого Креста. Тогда на холме, расположенном в восточной части города, воздвигли деревянный крест; 7) большая часть населения города отнеслась равнодушно к тесаному дереву (ведь все окрестные леса были полны такими деревьями); 8) но Бог в своей благодати воззрел на их соблазн и послал с небес облачный столп, и гора наполнилась благоуханием, и сладостно зазвучал голос сонма псалмопевцев и возник свет в виде креста, сходного по форме и величине с деревянным и стал над ним вместе с двенадцатью звездами. После этого все поклонились Святому Кресту, который чудодейственным образом исцелял людей; 9) после этого Святая Нунэ отправилась проповедовать в другие области Иверии. Она проповедовала Евангелие от Кларджка вдоль Аланских и Каспийских ворот и вплоть до пределов мазкутов⁷.

В «Истории» Мовсеса Хоренаци приводятся несколько фактов, отличающихся от представленных в грузинских источниках. Однако прежде чем перейти к их сопоставлению, хотелось бы упомянуть и те грузинские произведения, в которых речь идет о Святой Нино и ее деяниях. Древнейшие грузинские сведения о жизни и деятельности Святой Нино сохранились в синайской (X в.), шатбердской (X в.) и челишской (XIV в.) редакциях «Обращения Грузии». Вторая редакция принадлежит Леонтию Мровели (XI в.), в исторической летописи которого «Жизнь картлийских царей» в связи с деятельностью царя Мириана передана и история Просветительницы Нино. Это своеобразная обработка шатбердско-челишской редакции. Третья, метафрастическая редакция, принадлежит деятелю начала XII века старцу Арсению, который учел недостатки предыдущих редакций и создал значительную историко-литературную летопись, содержащую интересные, а порой и уникальные сведения об обращении Картли и ее просветителях. IV редакция является сокращенным и упрощенным вариантом труда Арсения, который принадлежит неизвестному редактору-переписчику, вероятно, XIII века. Одной из редакций «Жития Нино» считается оригинальная летопись Николая Гулаберидзе «Книга о Свети Цховели», поскольку в ней также описывается просветительская деятельность Святой Нино.

³ Хоренаци. История Армении. <http://www.vehi.net/istoriya/armenia/khorenaci/index.html>.

И то же самое повторяет армянский историк X века Ухтанес, который сравнивал Святую Нино со Святой Шушаник: «Нунэ стала равноапостольной, когда стала проповедовать христианство по всей грузинской земле» (Ухтанес. *История отделения грузин от армян*. армянский текст с грузинским переводом и исследованием издал Алексидзе З.Н., Тбилиси, 1975, стр. 201).

⁴ Хоренаци. *История Армении*. <http://www.vehi.net/istoriya/armenia/khorenaci/index.html>

⁵ По этому вопросу версия Мовсеса Хоренаци отличается от сведений, имеющихся в арабской (Sina ar 460) и греческой редакциях «Жития просветителя Святого Григория», по которым в Армению приехала не царская делегация, а сама царь Картли.

⁶ Агафангел говорит о том, что Святой Григорий повелел грузинам уничтожить языческих идолов и возвести Святые Кресты (подобные сведения имеются также в арабско-греческих источниках), а Мовсес Хоренаци говорит не об сокрушении *всех*, а конкретно трех идолов – Армаза (Арамазда), Гация и Га (Хоренаци. <http://www.vehi.net/istoriya/armenia/khorenaci/index.html>). Существует мнение, что, возможно, Хоренаци прочел то место в грузинском «Житии Святой Нино», в котором шла речь о разрушении конкретных трех идолов и также о возведении церкви и Святого Креста.

⁷ Там же.

Наличие 5 редакций одного памятника (да еще созданных в разные эпохи) бесспорно свидетельствует об огромном интересе грузинского народа к вопросу обращения Картли в христианство.

В грузинских источниках о жизни и подвижничестве Святой Нино встречаются некоторые данные, которых или вообще нет в Истории Хоренаци, или они переданы очень коротко: 1) в грузинских источниках уточнено происхождение Святой Нино – она была дочерью кападокийского военачальника Завулону и родной сестры Иерусалимского Патриарха Ювеналия, Сусанны; 2) в течение двух лет Нино была в услужении у Миафоры, благочестивой армянки из города Двини. Именно от нее узнала Нино о том, что Хитон Спасителя находится в Картли, точнее в окрестностях города Мцхета, и о том, где находится эта страна; 3) Нино было четырнадцать лет, когда в Иерусалим из Эфеса прибыла одна знатная женщина, чтобы поклониться св. Храму Воскресения. В ее доме встретила Нино знатную госпожу Рипсима, желающую принять Святое Крещение. Нино крестила Рипсима и сорок ее домочадцев; 4). Святая Нино вместе с Рипсиме, ее кормилицей Гаяне и еще с пятидесятью женщинами оставила «Грецию», то есть Римскую империю, и направилась в Армению. Нино со своими единоверцами вошла в сад царя Трдата, в котором впоследствии Трдат замучил рипсимянок. Из всех христианских дев спаслась лишь Нино, спрятавшаяся в кустах розы.

Особого внимания, по нашему мнению, заслуживает 4-ый эпизод, так как в армянских и грузинских источниках он описан с существенной разницей. По Мовсесу Хоренаци, Нино (Нунэ) **рассталась с рипсимлянками на границе Армении**, а в эпизоде мучений рипсимянок в «Житие Святой Нино» читаем: «Я, царица Рипсима, кормилица ее Гаяне и пятьдесят душ отправились пятнадцатого числа первого месяца **и вступили мы в пределы Армении в сад царя Трдата**. Они были замучены там тридцатого числа первого месяца в день пятницы. А я осталась в розовых кустах, ибо роза и миндаль цвели тогда («Житие святой Нино»). Грузинский исследователь Гоча Кучухидзе особое внимание уделяет этому эпизоду, в частности, произнесенной Святой Нино фразе: «Господи, господи, почему оставил меня среди аспидов и ехидн»? и услышанном ею ответе: «Таковым будет и твое взятие. Как только это терние, которое тебя окружает, превратится все в красные благоухающие розы, ты встань, и отправляйся на восток, где жатвы много, а делателей совсем нет». Исследователь задается вопросом: Как Нино сможет превратить шипы в розы? И пытается ответить на этот вопрос путем декодировки символических значений художественных образов, представленных в данном эпизоде. Под шипами подразумеваются язычники, а цветение дикой розы – обращение в веру Христа. Из этого эпизода можно сделать еще один значительный вывод: Святая Нино прячется среди язычников. И ее должны прятать язычники, обладающие внутренней добродетелью, но в которых еще не расцвела та добродетель, которая возникнет в результате общения со Святой Нино⁸.

Если опираться на грузинские источники, можно сделать совершенно четкий вывод: Святая Нино **вошла** в сад царя Трдата. Армянский источник абсолютно противоречит этому факту. Грузино-армянские сведения совпадут только в случае, если присвоить и этому эпизоду символическую нагрузку: правда, в грузинском тексте сказано, что спрятавшаяся в розовом кусте Нино видела гибель Рипсимэ, Гаянэ и остальных девушек. Однако можно предположить, что здесь речь идет о духовном, а не реальном видении (Святая Нино говорит о том, как она видела души дев, возносившиеся к небесам и защищенные божественным лучом и благовонным туманом). Эта точка зрения бесспорно приемлема, если учесть тот факт, что «в агиографическом повествовании сон, явь, духовное видение, физическое явление – все представляется единой реальностью, и это обстоятельство необходимо учитывать, если мы пытаемся извлечь из агиографических источников исторические факты»⁹. Исходя из этого, мы считаем, что сведениям Хоренаци следует дать преимущество и сделать вывод о том, что Нино не входила на территорию Армении.

5) Убежавшая из Армении Нино с трудом перезимовала в Улопорет и в июне отправилась в сторону Джавахети, чтобы узнать, где находится Мцхета. В горах Джавахети она оказалась у большого озера Параван. Именно отсюда взглянула она на «Север» - горы Картли, которые, несмотря на лето, были сплошь покрыты снегом и льдом. Святая Нино перенесла много испытаний, но наконец дошла до города Урбниси, а спустя месяц она направилась во Мцхету вместе людьми, которые шли поклониться языческому идолу Армаза. Глядя на язычников, святая Нино молилась и просила Бога явить чудо и просветить их. Внезапно начался ветер, раздался устрашающий раскат грома и пошел град только в том месте, где возвышались идолы. Идолы были разбиты вдребезги, а их осколки ветер бросил в расщелину горы; 6) через три дня Святая Нино пришла во Мцхету и направилась к царскому саду. Только через четыре года после прибытия во Мцхету Святая Нино начала открыто проповедовать христианство и исцелять больных, а на шестой год, молясь под ветвями чудодейственного дерева,

⁸ Кучухидзе, Г. *Святая Нино и обращение Грузии*. В кн. *Житие Святой Нино и обращение Грузии*. Тбилиси, 2009. Стр. 100.

⁹ Кучухидзе, Г. *Святая Нино и обращение Грузии*. Стр.101.

излечила от тяжелой болезни царицу Нану; 7) после этого представлен рассказ об охоте Мириана на горе Тхоти и затмении солнца, когда царю не помогли его языческие идола, и только бог Святой Нино рассеял тьму. Царь, вернувшись в город Мцхета, сразу же направил послов в «Грецию» (Римскую империю) с просьбой прислать в Картли священников и попросил Нино указать место, где должна быть построена церковь; строительство церкви началось в царском саду. Срубили ливанский кедр, сделали из него столп, а в корнях кедра возвели основание церкви. Несмотря на многочисленные попытки плотников восстановить столп, его не смогли сдвинуть с места. На рассвете Нино увидела чудо: перед ней предстал юноша, облеченный лучезарным светом, завернутый в огненный плащ, и сказал Нино три слова, затем схватил рукою тот столп, взял за конец, поднял и унес в высь небесную. Нино увидела, как этот столп опустился вниз, приблизился к своему прежнему основанию и опустился на основание; 8) вскоре из Римской империи приехали посланцы, священники и архидиакон бранджский и стали крестить народ. Епископ привез письма, адресованные Святой Нино, царю Мириану и всей картлийской знати. После того, как был воздвигнут Крест Господень, Святая Нино оставила город Мцхета и отправилась к горцам, дабы нести им Слово Божье и уничтожить языческих идолов; 9) в Кахетии после христианской проповеди Святая Нино заболела и отправилась в город Мцхета. Когда она достигла села Боди, она совсем ослабела и не могла продолжать путь. За Святой ухаживали сын царя Мириана, Рев и его жена Саломе. Архиепископ Иоанн, посланный к Нино царем Мирианом, передал ей письмо царицы Елены, в котором царица называла ее Святой Равноапостольной Девой и Благовестницей; 10) Святая Нино скончалась в кахетинском селе Боди на пятнадцатый год со дня ее прихода в Картли (то есть в 332 году), в возрасте приблизительно 31 года.

Чтобы полностью оценить просветительскую деятельность святой Нино и значение этого факта для Грузии, достаточно привести один из доводов деятеля литературной школы Гелати (второй половины XII в.) Николоза Гулаберидзе, который в своем труде «Чтение о Животворящем Столпе Мцхетском» особо подчеркивает тот факт, что Хитон Христовый, с которым связаны творимые Святой чудеса, был принесен в город Мцхета **задолго до ее появления**. Однако сила Хитона, благость и чудесные свойства полностью проявились **лишь после прихода Святой Нино в Картли** и ее поселения в зарослях ежевики¹⁰. Об этом, также как и о других значительных фактах, умалчивают армянские историки. Однако мы уверены, что только тщательным и критическим изучением грузинских, армянских и греко-латинских источников можно найти соответствия между приведенными в этих источниках фактами и путем их синтеза сформировать полную картину христианизации двух кавказских стран – Грузии и Армении.

Maka Elbakidze, Irma Ratiani (Georgia)

IMAGE OF ST. NINO IN GEORGIAN AND ARMENIAN SOURCES

There were two legends about the conversion of Georgia to Christianity: 1. Greek of Gelasius of Caesarea, which was later translated by Rufinus and 2. Armenian, belonged to Agathangelos. The mixture of these two legends we find in Movses Khorenatsy's "History of Armenia" according to which Georgians were converted to Christianity by Nune, the woman who was a friend of Ripsime and who acted under the directions of Gregory the Enlightener. The Oldest Georgian sources about St. Nino's life and missionary activities are compiled in the Sinaian (X c), Shatberdian (X c) and Chelishian (XIV c) reductions of "Conversion Kartli". The second redaction belongs to Leonti Mroveli (XI c), third to Monk Arsen (XII c) and the fourth to the XIII century unknown editor-copyist. This article presents the coincidences/similarities and differences about St. Nino's Life and missionary activities in Georgian and Armenian sources and also the genesis of the legends, given by different authors.

¹⁰ Чикваидзе, Е. «Чтение о Животворящем Столпе Мцхетском» Николоза Гулаберидзе и Житие Святой Нино. В кн. Житие Святой Нино и обращение Грузии. Тбилиси, 2009, стр. 241-242.

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ (Հայաստան)

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Ո՛վ հայ ժողովուրդ, ո՛վ դու դարավոր
Ազատամարտի վսեմ արյան մեջ մկրտված զինվոր –
Ինչո՞ւ ես ճնշում գալույթը անշեջ,
Որ մրրկում է հոշոտված հոգիդ...

Ավ. Իսահակյան

Հայկական հարցին առաջին անգամ Իսահակյանն արձագանքեց Սասունի և Ջեյթունի կոտորածների անմիջական ազդեցությամբ: Եվ եթե մինչ այդ արյունահեղ իրադարձությունները Իսահակյանի քնարերգության մեջ տիրապետողը սիրո, բնության, հայրենի եզերքի գեղեցկության, մայրական սիրո թեմաներն էին, ապա վերոհիշյալ պատմական դեպքերի ազդեցության տակ Իսահակյանի պոեզիա ներխուժեցին հայրենասիրական, ազգային-ազատագրական պայքարի մոտիվները: Իսկ երբ Արևմտյան Հայաստանում, և պատասխան թուրքական բռնությունների, սկսեց ընդլուծվել տալ դիմադրողական շարժումը, և սկսեցին ձևավորվել առաջին հայդուկային խմբերը՝ Աղբյուր Մերոքի, Արաբոյի, Գևորգ Չավուշի, Մեծն Չելլոյի, Կուկունյանի, Անդրանիկի, Մեքաստացի Մուրադի ղեկավարությամբ, Իսահակյանը դարձավ ֆիդայական պոեզիայի առաջին երգիչը հայ իրականության մեջ: Ծնորհիվ նրա «Հայդուկի երգեր» հայրենասիրական շարքի՝ հայ ազատագրական պայքարը մտավ դասական պոեզիա և գրավեց իր արժանի տեղը: Նա մեր բանաստեղծներից առաջինն էր, որ պատկերեց ֆիդայական պայքարը.

Մի անգամ մեռիր, քան հազար անգամ,
Կամ եղիր ազատ, հզոր ինքնիշխան,
Կամ ընկիր հպարտ, ձեռքովդ ավերակ
Բռնապետության բեկորների տակ...

«Հայդուկի երգերը» Իսահակյանը ստորագրում էր **Հայ գուսան** կեղծանվամբ: Այդ շարքի գործերը տպագրվում էին **ՀՅԳ-ի** «Դրոշակ» ամսագրում: Շարքի նշանակալից գործերից են «Ավետիք Մալոյանի անմահ հիշատակին», «Մերոքի հիշատակին», «Ինձ տեղ տվեք, Սիփան սարեր», «Մալնո ձորերում», «Կռվի ձորերում...», «Էյ, ջան - Հայրենիք, ինչքան սիրում ես...», «Որսկան ախպեր, սարեն կուգաս...», «Վեր կաց, ժողովուրդ», «Բաշերն ալեծուսի, բաշերն հողմակոծ...» բանաստեղծությունները:

19-րդ դարավերջին ազատագրական պայքարի զարթոնքին նոր զարկ տալու մղումով Իսահակյանը կերտում է հայ ազգային էպոսի ոճով ու ոգով պարուրված, սակայն ժամանակի պատմական իրադարձություններն իմաստավորող «Մասրեսա Մանուկը» էպոսատիպ ապրը:

Այս երկը ողողված է հայ ազատամարտի գաղափարներով: Վիպասքի «Գողթան քնարը, որ ազատության...» հատվածը բանաստեղծի կենդանության օրոք մեկ անգամ հրատարակվել է («Դրոշակ», 1901, հ. 1) հետևյալ խորհրդանշական բնաբանով՝

Սազը չի թողնում, որ կտրիճ դառնամ,
Թուրը չի թողնում, որ գուսան դառնամ...

Այնուամենայնիվ, Իսահակյանը կարողացավ համադրել այս երկու սկզբունքները: Հայ ազատագրական շարժմանը գործուն մասնակցություն բերելու համար 1898 թ. Իսահակյանը ձերբակալվում է և մեկ տարի անցկացնում Երևանի մահանգային բանտում, ապա արքայով Օդեսա: Հանձին Իսահակյանի հայ ազատագրական պայքարը ձեռք է բերում թե՛ իր խանդավառ երգչին, թե՛ նվիրյալ քաղաքական գործչին, որը պատանի հասակից իր գործունեությունը կապել էր Հայկական հարցի հետ: Իսահակյանն ակտիվ մասնակցություն է ունենում Արևմտյան Հայաստանի ազատագրական պայքարին: Որպես ՀՅԳ-ի ալեքսանդրապոլյան «Քարի» մասնաճյուղի ստեղծողներից մեկը, նա ձևավորում է Երկիր գնացող կամավորական խմբեր, օգնում է հայթայթել դրամական միջոցներ և զենքեր: Իսահակյանը եռանդուն գործունեություն է ծավալում Հայաստանում և Կովկասի հայկական մարզերում՝ ի հակակշիռ ցարական իշխանությունների տարածած հայախալած քաղաքականության: Իսկ երբ փակվեցին հայկական դպրոցները, բռնագրավվեցին հայ եկեղեցու կալվածքները, արգելվեցին ազգային մի շարք թերթեր, կրթական կենտրոններ, Իսահակյանը, որպես ազգային շարժման ջատագով, օրնիբուն հայրենասիրական պրոպագանդիստական աշխատանք է տանում: Բանաստեղծը հաճախ է լինում Ռուսաստանի, Արևմտյան Եվրոպայի հայաշատ կենտրոններում: Որպես գաղափարական գործիչ՝ նա իր մասնակցությունն է բերում ՀՅԳ Երրորդ և Չորրորդ ընդհանուր ժողովներին: Բանաստեղծի հայրենասիրական գործունեության մասին լավ գիտեր Թիֆլիսի մահանգային ոստիկանությունը, որը կրնկակոխ հետևում էր Իսահակյանի յուրաքանչյուր քայլին: Իսահակյանը Պահանջողական բաժնի զեկուցագրերում հիշատակվում է «Մոլոտ» (Մուրճ)

կեղծանվամբ: Բանաստեղծը 1908 թ. վերջերին Թիֆլիսում, ի թիվս 160 հայ մտավորականների «Ղաշնակցության գործով» ձերբակալվում է և մեկուսացվում Մետեխի ամրոցում: Վեց ամիս անց Իսահակյանը խոշոր գրավականի դիմաց ազատ է արձակվում բանտից, սակայն քննչական աշխատանքը Իսահակյանի դեմ շարունակվում է՝ սպառնալով նրան դատական պրոցեսի ավարտից հետո Սիբիրյան աքսոր՝ առնվազն տասը տարի ժամկետով:

Ստեղծված իրավիճակում աքսորից խուսափելու համար Իսահակյանն ստիպված հեռանում է հայրենիքից: Տարագրության առաջին տարին անց է կացնում Թուրքիայում: Այստեղ առաջին անգամ հրատարակվում է «Աբու Լալա Մահարի» պոեմը: Բնավ հույսեր չկապելով հայկական ինքնավարության վերաբերյալ երիտթուրքերի խոստումներին, «բարեփոխություններին», Իսահակյանը 1912 թ. հեռանում է Թուրքիայից՝ տազնապը սրտում: Ենթադրելով, որ ստեղծված իրավիճակում պանիսլամիստական վտանգը կարող է սաստել միայն Թուրքիայի մեծ դաշնակիցը՝ կայզերական Գերմանիան, Իսահակյանը, ի թիվս մի քանի ընկերների և հայ մշակույթի պատմության նվիրյալ մի շարք գերմանացի մտավորականների, 1914 թ. ձեռնամուխ եղավ ստեղծելու «Հայագերման ընկերությունը»: Սակայն վրա հասած Առաջին համաշխարհային պատերազմը տակնուվրա արեց բանաստեղծի ծրագրերն ու սպասումները: Այս աշխարհամարտը առանձնապես կործանարար եղավ Արևմտյան Հայաստանի համար: Գերմանիան հրահրում էր Թուրքիայի հայաջինջ ծրագրերը՝ համարելով հայերին Ռուսաստանի բնական դաշնակից և գերմանա-թուրքական ռազմական առաջընթացը խոչընդոտող ուժ:

Այս շրջանում Իսահակյանի ստեղծագործության հիմնական բովանդակությունն է դառնում հայ ժողովրդի ողբերգական ճակատագիրը և նրա հերոսական ազատամարտի արտացոլումը: Նա ձեռնամուխ է լինում ստեղծելու Հայոց ցեղասպանության մեղադրական «Սպիտակ գիրքը», որը պիտի հանդիսանար մեր ժողովրդի ապրած վշտերի և տառապանքների մի ժամանակակից «Մատյան ողբերգության»: Այդ գիրքը, համաձայն բանաստեղծի մտահղացման, պետք է Եղեռնի դաժան իրականության, դեպքերի ու ականատեսների պատմածի հիման վրա վերստեղծեր էջեր հայ հերոսապատմից, բերեր դրվագներ հայ ֆիդայիների պայքարից, նրանց սխրանքներից: «Սպիտակ գրքի» մի զգալի մասն արտացոլվեց Իսահակյանի մտորումների, ապրումների և ստեղծագործական մտահղացումների մի յուրօրինակ խոստովանագրքում՝ «Հիշատակարանում», և նրա բազմաթիվ ծոցատերերում: Դրանց թվում առանձնանում է Իսահակյանի «Հայկական հարց» վերնագիրը կրող ծոցատերը, որն ամբողջությամբ անտիպ է, և ներկա գրքում ներկայացվում է առաջին անգամ: «Հայկական հարց» օրագրությունը գրվել է Ժնևում 1916-1917 թթ.: Ժամանակի ահագնալից իրականության ներքո Իսահակյանի քնարը մի շարք տարիներ պարզապես լռել էր: Մեծ հայրենասերը իր վիշտը, ցասումը հայտնում է նամակներում, օրագրերում, հոդվածներում: 1915 թվի ջարդերից հետո, ինչպես վկայում են Իսահակյանի գրությունները, նա անդառնալիորեն երես է շուռ տվել Եվրոպայի պետություններից: Նա նաև որևէ էական նշանակություն չի տալիս Սևրի դաշնագրի ստորագրման փաստին: Միևնույն ժամանակ Իսահակյանի ողջ ստեղծագործությունը, քաղաքական գործունեությունը ցույց են տալիս, որ նա հիրավի եղել է հայ գրողներից ամենաթրքատյացը և իրատեսը, որը դեռևս 19-րդ դարավերջից Հայաստանի ապագայի վերաբերյալ հույսերը կապել էր Ռուսաստանի հետ: Սակայն Առաջին համաշխարհային տարիներին Ռուսաստանի վարած քաղաքականությունը խորապես վշտացնում է Իսահակյանին: Նիկոլայ Երկրորդի կարգադրությամբ ռուսական զորքերը ետ կանչվեցին ռազմաճակատային գծից, թողնելով հայ բնակչությանը թուրքական արյունալի հաշվեհարդարին, իսկ մյուս կողմից Ռուսաստանը խոչընդոտում էր Հայաստանում կամավորական խմբերի ստեղծմանը և արգելափակում հայ ջոկատների սահմանն անցնելը: Կայսերական Ռուսաստանը դեմ էր հայ ազգային-ազատագրական շարժմանը, իսկ նրան հաջորդած բոլշևիկյան Ռուսաստանը դարձավ երդվյալ թշնամին հայ ազատամարտի, հայ անկախության: Լենինը պատմության մեջ հատնի է որպես երիտթուրքերի իրավահաջորդի՝ Մուսթաֆա Էնմալի հովանավորն ու փրկիչը, որի հանցագործ օգնությամբ կործանված Թուրքիան նորից ոտքի կանգնեց: Եվ այս ալյանսը մահացու հարված հասցրեց Հայկական հարցին՝ նվիրաբերելով թուրքին Արևմտյան Հայաստանի ողջ տարածքը: Մուսուլմանական օվկիանոսի մեջ ընկած մեր քրիստոնեական կղզու միակ ապավենը հայերս միշտ համարել ենք Ռուսաստանը, սակայն 1918-21 թթ. նա էլ «Հայակործան ծրագրի» ճարտարապետներից մեկը եղավ: Ժամանակի հետ ինչպես «Հայկական հարցը», այնպես և Իսահակյանի կողմնորոշումը այդ հարցի վերաբերյալ ունեցան բնաշրջական զարգացում, անցան բարդ ու երկարատև ճանապարհ: Սակայն այն իր արդիականությունը երբեք չկորցրեց, այլ դարձավ բանաստեղծի մտորումների հիմնական առանցքը, նրա բազում երկերի հիմնական ասելիքը: Այս հարցը իր խոր արձագանքն է գտել 1916-1917 թթ. գրած Իսահակյանի վերոհիշյալ ժնևյան օրագրում: Այդ այն ժամանակն էր, երբ սպանող Արևմտյան Հայաստանում շարունակվում էր: Եղեռնը ոչ թե անցյալ էր, այլ՝ ներկա: Ողջ արևմտահայությունը տեղահան էր արված, անթաղ էին մեր նահատակները,

դեռ շառաչում էր յաթաղանը, դեռ անվերջ էր Դեր Ջորի ճամփան: Դեռ գոյացած չէր Սփյուռքը: Արևելյան Հայաստանում շարունակվում էր պատերազմը, կրակի գծի մեջ էին Էրզրումը, Ղարսը, Գյումրին, Իգդիրը, Վանը... Հայոց «արևոտ դաշտերում ծղրիղն է ծղրում»... Ռուսաստանն անկայուն էր երկփեղկված ներքին սոցիալական ակեղծումների տակ, և այդ ազգադավ ավիքները տարածվում էին Պետերբուրգից մինչև Էրզրում՝ ռազմաճակատային գիծ: Ներքին պառակտումը, դասակարգային պայքարի ցեցը քայքայում էր երբեմնի գորեղ իմպերիան և նրա բանակը: Ծայրաստիճան անկայուն, անորոշ էր նաև ողջ Արևելահայաստանի իրավիճակը: Հայոց Միջնաբերդը պաշարված էր դարավոր թշնամու կողմից: Կորսված էր և սպանդի տակ էր մեր հողերի հիմնական մասը: Մնացյալի կացությունն անհայտ էր: Դեռ ստեղծված չէր Հայաստանի Հանրապետությունը:

Պատմական այս իրավիճակում՝ 1916-1917 թթ., հայ բանաստեղծը Ժնևում մի փոքրիկ նոթերի գրքում մտորում է մեր հավերժական, կարևորագույն հարցի շուրջ, որն է «Ելքը Եգիպտոսից»:

Նոթերի տողերից աներկբայորեն ակնհայտ է մի ճշմարտություն, որ բոլոր պետությունները թե՛ քրիստոնյա, թե՛ բարեկամ, դավաճանեցին ու լքեցին հայերիս: Եվ անգնե ժողովրդին ամենաձանր պահին մեն-մենակ թողեցին ոսոխի առջև: Իսահակյանը զայրացած է, ըմբոստացած՝ բոլոր ազգերի դեմ, և նա իրավացի էր մեր ժողովրդի տեսանկյունից, ստեղծված պատմական իրադրության տեսանկյունից: Ուրեմն մեկընդմիջտ ձեռք բաշել մեծ ազգերի օգնությունից:

Նա պարզորոշ տեսնում է, որ պատերազմական իրադրությունում, երբ ամեն ինչ փլուզվում է ու քանդվում (առաջին հերթին ռուսական իմպերիան՝ ներքին ուժերի հարվածների տակ), հույսը պետք է դնել միմիայն սեփական ուժերի վրա: Ուրեմն քո զենքով, քո կյանքի գնով պահիր քո տունը:

Իսահակյանը հրաշալի տեսնում և զգում էր, որ թուրքը իրագործելով Եղեռնը՝ փոքրից մինչև մեծ, դույզն անգամ չզղջաց, չերերաց և ավելին՝ շարունակում է նույն ծրագրով սրի մատնել հայությանը: Եվ ոչ մի ազգ չմեղադրեց ու չդատապարտեց նրան: Եվ թուրքը մնաց անպատիժ: Եվ դեռ կատարած ոճրագործության դիմաց «բոլշևիկյան Ռուսաստանից» նվեր ստացավ Հայաստանի հայաթափ արած մարզերը: Բնականաբար, մման քաղաքականությունը պետք է առաջ բերեր Իսահակյանի զայրույթը: Ուրեմն միայն մի ճամփա կա՝ միավորվել, մեկ բռունցք դառնալ, դիմադրել ու մարտնչել սուրբ Վրեժի գիտակցությամբ: Ուրեմն կռվով ու զենքով լուծել հայության հարցը: Եվ վեհ կռվով միայն հատուցել մեր սուրբ Վրեժը: Մոտ երկու տարի ժամանակահատված է ընդգրկում Իսահակյանի գրվածքը՝ 1916-1917 թթ., բայց թվում է, թե նա մի ողջ դար է գրել իր Վրեժի, մեր ժողովրդի Վրեժի այս սեղմ ու խստաշունչ Մատյանը:

Իսահակյանի արյունոտ օրերի քրոնիկոնը, հետզհետե ծավալվելով, դառնալով «Սպիտակ գրքի» մի մասը, շարունակվում է նաև Առաջին համաշխարհային պատերազմի շրջանում՝ հանձին «Ռուստա Կարո» անտիպ վեպի: Այս ստեղծագործության առիթով Իսահակյանը գրել է. «Ռուստա Կարո» վեպը կավարտվի այն օրը, երբ որ լուծվի Հայկական հարցը»:

Իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, Թուրքիայի դաշնակից ֆաշիստական Գերմանիայի ջախջախումից հետո, Իսահակյանը հույս ուներ, թե կարող է դրականորեն լուծվի հայոց պատմական հողերի հարցը: 1945 թվի ամռանը նա ժամ առ ժամ սպասում էր, որ պատերազմը հաղթանակած Կարմիր բանակը կանցնի Արաքսի մյուս ափը և կազատագրի մեր ժողովրդից բռնի խլված պատմական տարածքները, որ վերջապես կհաղթանակի արդարությունը: Սակայն այդպես չեղավ: Թուրքիային մեկ անգամ ևս հաջողվեց անպատիժ ելնել պատմական թոհուրոհից ու իր ձեռքում պահել այն, որ իրեն չի պատկանում: Բայց այս «իրողության» հետ Իսահակյանը երբեք չհաշտվեց: Հայկական հարցի բնական մասը համարելով Ղարաբաղյան հարցը՝ Իսահակյանը 1948 թվին միայնակ այցի գնաց հայրենի երկրի այդ անկոտրում տարածքը: Եվ իր էությանը, իր իմաստուն խոսքով հույս ու հավատ ներշնչեց Ղարաբաղի հերոսական ժողովրդին, չթողեց, որ մարի կանթեղը լույսի: Նույն վերաբերմունքն ուներ նա հայոց Ջավախքի հանդեպ, որի հյուրն էր եղել մի շարք անգամներ:

Իսահակյանը լավ գիտեր, թե ինչ է գրում: Նրա պատգամները յուրատեսակ «թաց դինամիտ» են... Նա համոզված էր, որ յուրաքանչյուր գաղափար, գործողություն, պատմական ծրագիր սկիզբ է առնում, կյանք է մտնում գրավոր խոսքի ձևով:

Խոսքը, մանավանդ հանճարեղ բանաստեղծի խոսքը անմահ է: Ի վերջո ի՞նչ էր Հայկական հարցը, եթե ոչ պատասխան մեր գլխին բերած աշխարհի չարիքների՝ Սուրբ Վրեժի գիտակցում, հատուցում մեր կորուստների, զրկանքների և Ձգնության կոչ: Քանզի մեր դարավոր թշնամին, ի տարբերություն այլ ժողովուրդների համանման իրողությունների, այլ է. ասենք գերմանացին զղջաց հրեաների հանդեպ իր արածի համար, ներողություն խնդրեց և օգնության ձեռք մեկնեց, այնինչ թուրքը եթե, աստված ոչ արասցե, կրկին մման եղերագործության հնարավորություն ունենա, ապա առանց վա-

րանելու մի նոր Եղեռն էլ կիրագործի: Մենք սա պիտի իմանանք և մեր սուրը երբեք պատյան չդնենք: Սա ևս Հայկական հարցի պահանջն է:

Իսահակյանի կյանքի մայրամուտը հարազատ ժողովրդի կողքին էր: Հայ նոր սերնդի համար նա եղել է ճշմարտության փարոս, հայրենասիրական վեհ գաղափարների պահապան ու ջատագով: Հայության բոլոր վշտերն ու երազանքները խտացված էին նրա մեջ: Եվ նա երբեք չհաշտվեց Հայկական հարցի օրակարգային վիճակի հետ, ըստ որի՝ Հայկական հարցն «սպառնել էր» իրեն ու «ավարտվել»: Եվ ժամանակը ցույց տվեց, որ իրավացի էր բանաստեղծը, որի վերջին ցանկությունը եղավ. «Ապրե՛ի՝ Անին տեսնե՛ի, մեռնե՛ի՝ Սևանը չորացած չտեսնե՛ի»:

Avetik Isahakyan

AVETIK ISAHAKYAN AND THE ARMENIAN ISSUE

During all his life starting from the rebels in Zeitoun and Sassoun in Western Armenia Avetik Isahakyan was associated with the Armenian issue. For his vigorous activity in the organization of national liberation struggle Isahakyan was prosecuted twice and banished into exile. From 1911 to 1926 he was forced to become a political refugee and he resided in the countries of Western Europe till 1936. There he continued his patriotic activity and has played an important role in the detection of Taleat - a fugitive from justice, one of the executioners of the Armenian people. Having a mandate of the representative of the Armenian community in the USA, Isahakyan represented Armenia and enunciated principles of Armenian problem.

Կարեն Խանյան (Հայաստան)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԱՋԱՆՅԱՆԻ «ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐ» ԳՐՔԻ ՄՈՏԻՎՆԵՐԸ

«Վերջին դարը» դրաման կառուցված է գեղարվեստական կերպարների ընդհանրացման, նրանց մտայնությունների խորհրդանշական մի սկզբունքով, ըստ որի՝ մարդ-բնություն ներդաշնակության խախտումը հանգեցնելու է համամոլորակային կորստի: Դրաման ահագանգ է հնչեցնում սպասվող էկոլոգիական և հնարավոր միջուկային աղետների մասին և մարդկությանը ուղղված սթափության կոչ է անում: Դրամայի առաջին արարի հենց սկզբից հերոսների վարքագծում ընդգծված է վտանգի կանխագագացումը: Ահագանգը հնչում է հերոսներին զուգահեռ, որպես գործող ծխե և հրե սյուներ՝ սիմվոլիկ կերպարների միջոցով:

Մարդու և բնության միջև երբևէ եղած ներդաշնակությունը խորհրդանշական է դառնում տատի կերպարում և մյուս հերոսների մանկության հուշերում: Խորհրդանշական է նաև ծառը գերանի վերածվելու դրվագը: Ամբողջանում է աղետը, հրե ու ծխե սյուների միջոցով արվում է վերջին նախագգուշացումը՝ «Մի թե աշխարհի վերջնավարտին մարդկանց վիճակված է հրաժեշտ տալ հիմա ծափերով»...

«Ողջերն ու մեռածները» դրաման այլաբանորեն ներկայացնում է թուրքական ցեղերի աստիճանական ներխուժումը Հայկական լեռնաշխարհ՝ յաթաղանի միջոցով, ինչպես նաև սեփական հանցավոր արարքների կեղծ արդարացումներով:

Դրաման սկսվում է հայ և թուրք հովիվների երկխոսությամբ և հետագայում վերածվում է հայ և թուրք մտավորականների, մեռած հայի և երևակայական թուրքի ուրվականների զրույցի: Երկխոսության ենթատեքստում կարծես թե հայ ու թուրք հանրություններն են բանավիճում: Այս բոլոր բանավեճերի ենթատեքստում ընդգծված երևում է հայի արդարացի լինելը, հայ ոգու գերակայությունը թուրքականի նկատմամբ:

Դրամայում հանդես եկող կերպարները վերժամանակային են: Նրանք քսաներորդ դարի ծնունդ չեն, այլ հառնում են նախորդ հարյուրամյակներից: Նրանց շարունակ տանջում է անցյալի հիշողությունը, որն ավելի է ուժգնանում այդ հիշողությունները մարմնավորող ուրվականի կերպարով:

Դրաման, հյուսված լինելով ցեղասպանությունից վերցրած մի քանի իրական բարբարոսական փաստերի հենքի վրա, դառնում է խոսում մեղադրանք: Արևմտյան և Արևելյան Հայաստանները դիտվում են որպես ցեղասպանության ընդհանուր տարածք: Որքան էլ զարմանալի թվա, դրամայում կարևորություն է ստանում նաև «էկոլոգիական շրջանների» անձեռնմխելիության խնդիրը, այսինքն՝

թուրքի յաթաղանով նվաճված տարածքները ենթակա են դառնալու էկոլոգիական շրջաններ՝ այստեղից բխող հետևանքներով:

Գործողությունների ընտրված վայրը՝ վանքը, դառնում է պատմության, տարածության ու ժամանակի խտացում:

Դրամայում գեղարվեստի լեզվով արված մի քանի քաղաքական հարցադրումներ կան: Ադրբեջան կոչվող ներկայիս երկրի բազմազգ զինվորները՝ թալիշները, լեզգիները, ավարները, ուղիները, քրդերը, իրենց կամքին ու խղճին հակառակ ակամա գործողությունների դիմելով, միաժամանակ ծաղրում են այս երկրում ընդունված բարքերն ու գաղափարները:

Դրաման ավարտվում է մի քանի հայերի խաչ հանելով և կռվի դաշտում հայտնված հայ հրամանատարի կարճ խոսքով՝ «...Մեր ողբը Մեծ Արթնացման նախանշանն է: Այստեղով թուրքն է անցել»...

Հովհաննես Աղաջանյանի «Վասակ և Վարդան» դրամայում պատմության նորովի հայացքով իմաստավորվում ու գեղարվեստորեն վերարտադրվում են 5-րդ դարի պատմական իրադարձությունները: Եվ այս համապատկերի վրա քրիստոնեության ու դիվանագիտության շուրջ բանավեճով հյուսվում ու բացահայտվում են Վասակի և Վարդանի հակասական կերպարները: Այս թեմայով գրված դասական ստեղծագործությունների կողքին հեղինակին հաջողվել է գործողությունների սրնթաց զարգացմամբ Արևելքի լայն կտավի վրա ստեղծել մի այնպիսի գործ, որը համայն աշխարհի մասշտաբով անցյալ-ներկա-ապագա պատմական ընթացքով կարելի է համարել ընդհանրական ու առանցքային: Հեղինակն իրավամբ հարազատ է մնացել պատմական անցքերին ու փաստերին:

Վասակի և Վարդանի կերպարները ներկայացվում են մարդու հոգեբանությանը հատուկ երկու ընդհանրական գծերով: Վարդանը կերպար է, ով պատրաստ է առանց ձգձգելու ըմբոստությունը վերածել գործողությունների: Վասակն իր բացասական վարքագիծը բացահայտ չի դրսևորում, այլ համբերությամբ սպասում է հարմար առիթի: Վարդանի ըմբոստությունը կարող է արտահայտվել պահի թելադրանքով, իսկ Վասակը գերծ է անպատեհ առիթով բացահայտվելու գայթակղությունից: Վերջինս, ժամանակի հետ համընթաց քայլելով, խնդրին մոտենում է դիվանագիտորեն: Ոչ միայն պատմական հզոր անհատներ Վասակը և Վարդանը, այլ նաև սովորական մարդիկ իրենց առօրեական գործերով կամ տուրք են տալիս ըմբոստությանը, կամ պայքարի խորամանկ, դիվանագիտական ձևին:

Վառ կերպարների շարքերում իր ուրույն տեղն ունի թախիծով օծված ծաղրածուի գունագեղ կերպարը:

Մարդկային պատմության մեջ անցյալն ու ներկան մմանություններ և ընդհանրություններ ունեն: Նմանություններ և ընդհանրություններ կարելի է տեսնել պետությունների քաղաքականության մեջ անցյալում և մերօրյա ժամանակներում: Հայոց պատմության դասերը արդիական կարող են լինել և հավանաբար նոր որակով ի հայտ կգան նաև գալիք դարերում: Հազկերտը մի ժամանակ իր քայլերն ու արարքները արդարացնում էր, որովհետև ըստ նրա դրանք արվում էին հանուն բարու և ճշմարտության: Մեր ժամանակներում նույնպես տարփողվում են զանազան արդարամիտ համարվող գաղափարախոսություններ: Անցյալի ու ներկայի գաղափարախոսությունների համար արդյոք հատկանշական չէ՞ նույնը: 5-րդ դարի Հայոց պատմության իրադարձությունների և մեր ժամանակների պետությունների վարած քաղաքականության միջև, իհարկե, շատ մմանություններ կան:

«Հեղափոխական դար» վեպը այժմեական հասարակական - քաղաքական հարաբերությունների տրամաբանությունը և այդ ամենի հետ կապված մարդու հոգեկերտվածքի որպիսությունն է լուսաբանում: 20-րդ դարը տեսավ թե՛ հեղափոխություն, և թե՛ հեղափոխությանը հակառակ հակահեղափոխություն: Մարդն այս վեպում արտացոլված է տարբեր հասարակական հարաբերությունների ու բազմաբնույթ իրողությունների մեջ թե՛ արդի ժամանակների, և թե՛ անցյալի առումներով: Անցյալից արված հետևությունները հավաստի են դառնում ներկա իրողություններով և ուղեցույց են դառնում նաև ապագայի համար:

Վեպի հերոսի՝ Ջանանի խորհրդածությունների նյութը թե սովետական, թե ներկայիս ժամանակներն են և ըստ այդմ՝ համայնավարական և սեփականատիրական հասարակարգերը: Նա խորհրդածում է անցյալ և ներկա ժամանակների մարդու հոգեբանության շուրջ: Այս ամենը հերոսի համար դառնում են ամեօրյա խորհրդածությունների առարկա, ներծծվում են նրա ներքին աշխարհի մեջ: Սովետական կացութաձևից սեփականատիրական կացութաձևի անցումային ժամանակների ողջ դժվարությունները, կյանքի դաժան պահերը անցկացնելով մոր հետ միասին, հետագայում շարունակ վերապրում է մոր հետմահու չխամրող հիշողությունները: Նրա լավ չկշռադատված մի սխալ քայլը հանգեցնում է տխուր վերջաբանի: Մոր մահվան ողբերգության մեջ ոչ միայն ժամանակների մատն է խառը, այլ նաև պահով թելադրված նրա սխալ վարքագիծը:

Վեպի հետագա ընթացքի մեջ հերոսը անդրադառնում է կյանքի այլևայլ խնդիրների: Գիշերային ժամին անծանոթ գյուղում հայտնվելով օթևան ունենալու և քաղցը հագեցնելու անհրաժեշտության առաջ՝ հանդիպում է ժլատ և հյուրասեր գյուղացիների: Նրանց վերաբերմունքից հերոսն անում է

իր հետևությունը. «Ոչ թե միայն կեցությունն է որոշում գիտակցությունը, այլ նաև մարդու տեսակի շնորհիվ է որոշվում գիտակցությունը»:

Հերոսների հարցադրումների կիզակետում սեփականատիրական և համայնավարական կացութաձևերի առավելություններն ու թերություններն են և ըստ այդմ՝ «աջերի» ու «ձախերի» գաղափարական պայքարը: Նա հանգում է մի այսպիսի կարևորագույն հետևության, ըստ որի՝ «աջերի» ու «ձախերի» կուսակցական գաղափարական դոգմաները տեղին չեն, որ կա պրոբլեմի՝ միայն տվյալ ժամանակի ու տեղի համար հավուր պատշաճի լուծում: Ամեն մի մասնավոր խնդիր առանձնակի լուծում է պահանջում: Եթե մի դեպքում կարող է ճիշտ ու նպատակահարմար լինել աջ ուղղվածության աշխարհայացքը, մեկ այլ դեպքում՝ ճիշտ ու նպատակահարմար կարող է լինել ձախ ուղղվածության աշխարհայացքը: Երրորդ դեպքում՝ այդ երկուսի ինչ-որ մի միջինացված տեսակը: Դիշտ չի կարող լինել այն գաղափարական աշխարհայացքը, որը հավակնում է ոչ թե մեկ մասնավոր, այլ կյանքի բոլոր խնդիրների համար ընդհուպ լինել:

Հերոսի հետաքրքրությունները կենտրոնացնում են նաև իշխանության մեջ անհատի դերին: Եվ եթե կա մարդու տեսակի խնդիրը, արդյոք կարելի է մարդուն օժտել մեծ իշխանությամբ...

Վերջը գրված է հղկված հայերենով, լեզվաոճական բարձր կուլտուրայով: Կան բնության տեսարանների ինքնատիպ նկարագրություններ, որոնց շնորհիվ այն կարդացվում է հետաքրքրությամբ:

Karen Khanyan (Armenia)

LITERARY MOTIFS OF "REVOLUTIONARY AGE" BY HOVHANNES AGHAJANYAN

The book mentioned includes the following works: "Last century", "The Alive and the Dead", "Vasak and Vardan", "Revolutionary century".

The Drama "Last Century" is structured upon the generalization of fictional characters. The work is an alarm about a possible ecological and nuclear catastrophes and calls for an adequate reaction from Humanity.

"The Alive and the dead" drama is an allegorical representation of the gradual invasion of the Armenian Highland by Turks. Being based on a number of real barbaric episodes from the history of the Armenian Genocide, the drama itself becomes a vivid accusation addressed.

The drama "Vasak and Vardan" is a new vision of the Armenian History and an artistic reproduction of certain historical events of the 5th century.

The novel "The Revolutionary Age" maintains its actual value from the standpoint of the contemporary logic of social and political relations, thus, altogether elucidating the essence of the human spiritual domain.

The Human Being appears in this novel within the context of different and diverse realities of public relations, both in the past and in the modern era. Consequently, the conclusions drawn for the past become a sort of reliable guide to the present and future realities as well..

Սոկրատ Խանյան (ԼՂՀ)

ԱՐԴԻ ԱՐՁԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ԱՐՑԱՆՈՒՄ

Արցախի գրական ընտանիքում այսօր ստեղծագործում են մեկ տասնյակից ավելի արձակագիրներ: Գրական ընթացքի հիմնական լուծը ավագ և միջին սերնդի ուսերին է: Ավագ սերնդի առաջին ներկայացուցիչը ՄԱԶՍԻՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՆ է, որի բարձրարժեք երկերը իրավունք են տալիս նրան համարել հայտնություն: Հովհաննիսյանը գեղարվեստական իր խոսքը հյուսում է սեփական թույլով ու բույրով, անհատականության իր կնիքով: Նա արձակի հոգեբանական ուղղության ինքնատիպ ներկայացուցիչներից է, ճամփան հաստատուն և հեռագնա:

Անվանի գրողի գեղարվեստական ըմբռնումներին ծանոթանալու համար հաջող բանալի է «Արցախ իմ, ցավ իմ» ժողովածուն:

Մ. Հովհաննիսյանի տաղանդը ժամանակին նկատել է մեծանուն Հրանտ Մաթևոսյանը, գրելով. «Հիանալի է, որ մեր խոսքի ավելորդության, մեր ժամանակի անցածության, ուրվագծվող նոր ժամանակներից մեր էպոխայի հեռանալու այս բոլոր օրերում Մաթևոսիմ Հովհաննիսյանը չի լքել խոսքի

ապաստանը, չի լքել հավատը՝ թե մենք և մեր խոսքը ավելորդ չենք և թե ուրվագծվող նոր աշխարհը պատկերի է գալիս ըստ մեր խոսքի»¹:

«Արցախ իմ, ցավ իմ» գրքի պատմվածքները մի ամբողջություն են կազմում, որնցում կերպարները լրացնում են մեկը մյուսին՝ իրենց հատուկ բնավորություններով: Կերպարների մի ամբողջական պատկերասրահ է գիրքը: Այստեղ ծանոթանում են դեպուտատ արցախուհուն, որ գյուղից մեծ դժվարություններ հաղթահարելով, ոտքով հասնում է Ստեփանակերտ՝ մասնակցելու 1988-ի փետրվարի 20-ին տեղի ունեցած մարզային խորհրդի պատմական նիստին («Հատուկ դրություն»), լսում են մաճկալաշենցի հրամանատար Արմեն Մելքունյանին և 14-ամյա Լորենցին ու հայրենասիրության դասեր առնում («Իսկ Լորենցը 14 տարեկան էր»), մաճկալաշենցի մոր հետ սգում են երկու նահատակ որդիների՝ Կոմիտասի և Արսենի համար, միաժամանակ հպարտանում արցախուհու՝ անձնական ցավն իմաստությամբ տանելու, ժողովրդի փրկությամբ ապրելու կարողությամբ («Մատաղ»), քաջալերվում են տարիքն առած Պուտունց Արամի անձնուրացությամբ, որ չի թողնում գյուղը, չի հեռանում հեռացողների հետ, այլ գնում է դիրքերը՝ ջահելների հետ միասին պաշտպանելու գյուղը և հոր ու մոր գերեզմանները («Պուտունց Արամ»): Մ. Հովհաննիսյանի ստեղծած գրական կերպարների մեջ ուրույն մի աշխարհ է մաճկալաշենցի Չորի Սիրուն: Դա Գրիգորն է, որի միմուճար որդին՝ Խաչիկը, գլուխը դնում է ժողովրդի ազատության գոհասեղանին, իսկ Հավատարիմ անունով կինն էլ գոհվում է արկի պայթյունից:

Մ. Հովհաննիսյանի ստեղծագործության մեջ ռեալիստական երանգներով է ներկայացվում իրականությունը: Իր թախծոտ, տխուր, նույնիսկ արցունքոտ պահերի միջից ժպտում է կյանքը: Ապրեցնող են գրողի պատումները, դա թումանյանական և բակունցյան սկզբունքի առհավատչյան է, որ արժանի է դրվատանքի: «Մենք»-ին «մուք» ասող դարաբաղցիների հայկական բնավորությունն ու արմատներն ի տես բերելով՝ Մ. Հովհաննիսյանը հետազոտության հարթակի վրա դրեց արցախցու նկարագիրը, որի անունից գրողն ընդգծում է մեր հպարտանալու պատմական շնորհները և իրավունքը:

Արցախյան գրական ընտանիքի բոլոր անդամների հուզաշխարհում հայրենի եզերքի ճակատագիրն է: Ինչի մասին խորհում ու գրում են՝ արդյունքում ստացվում է Արցախ:

Արցախցի գրողն իր հայկական ոգու երանգներով է գնում դեպի նախ՝ ազգային, ապա՝ համաարդկային ասպարեզ: Արվեստի նպատակն ու գեղեցկությունը հենց կայանում է դրանում: Այս նկատառումով հատկանշական է նաև ԿՈՍԻՏԱՍ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ արձակը: Կ. Դանիելյանի «Անկնիք մամակներ», «Երաշտ տարի», «Դեմ հանդիման» ժողովածուները, «Արցախը չսանձած նժույգ» փաստագրական վեպը լայն ճանաչում բերեցին նրան: Ուստի, անակնկալ չէր նրա «Ճիչ» ժողովածուն: Անհատի հոգու խորքերը թափանցելու, անձնականը անանձնական ապրումների շաղախով ընթերցողին ներկայացնելու մի-մի ինքնատիպ հյուսվածքներ են գրքում գետեղված «Գյուղական նովել», «Այն հեռավոր ամռանը», «Ճիչ» և այլ պատմվածքներ: Ինչ վերաբերում է «Եկել եմ, որ ասեմ գալու եմ» պատմվածքին, կարող ենք արվեստի առջև պատասխանատվության զգացումով հավաստել, որ Արցախյան ազգային-ազատագրական շարժման և պատերազմի հետևանքով հայ մարդու և նրա զինվոր որդու սխրանքների ու կրած տառապանքի մասին ստեղծված երկերի մեջ այն եզակի գործերից է:

Եթե ինչ-որ տեղ կարող են Արցախի գրական ընտանիքի անդամների կատարած հունձքը քննադատել թեմաների սահմանափակության պատճառով, ապա մեր կյանքին հասու և մեր ժողովրդի աստվածատուր ճակատագրին քաջաժանոթ արվեստագետները կարող են ընդգծել հենց դրա առավելությունը՝ նկատի առնելով 1988-ից սկսած այն գոյամարտը, որ հայ ժողովրդի դարավոր մաքառումի շարունակությունն է՝ պսակված հաղթանակով: Շահած հաղթանակը պահպանելու ամենահզոր գործոններից մեկը գեղարվեստական գրականությունն է, որը ոգեկոչումի, ոգու արիության, հավատի ու սեփական ուժին ապավինելու պատգամ ու կտակարան է: Այստեղ կրկին հիշենք գրականության ռահվիրա Մանուկ Աբեղյանին, որ մեր դարավոր գրականությունը բնութագրել է որպես եկեղեցական-քաղաքական մաքառման գրականություն²: Ինչպես դարերի ընթացքում, այնպես էլ այսօր հայ գրականության գլխավոր թեման հանդիսանում է ազգային մաքառման, կամքի ուժի, հարատևելու վճռականության փառաբանումը: Այսօրվա մեր արձակի մեջ էլ հնչեցվում են պատմության դասերը՝ մեր նորօրյա Ավարայրի և Սարդարապատի՝ Արցախյան պատերազմի գնահատմամբ: Այս առիթով կարող ենք ընդգծել նաև ճանաչված արձակագիրներ ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ «Ինքնաթիռներ՝ աղավնու թևերով» ժողովածուն, Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ «Սիջօրե» պատմվածքների շարքը, ԱՐՏԱՇԵՍ ՂԱՀՐԻՅԱՆԻ «Լեռան հուշ» գիրքը: Ա. Ղահրիյանի ստեղծագործական աշխարհի և ինքնատիպ ոճի ընդհանրացված դրսևորում է այդ ժողովածուն: Միայն «Գյուղամեջ» պատմվածքը բավական է նրա պատկերների երանգները վկայակոչելու համար:

Արտաշես Ղահրիյանի ակնառու «պատկերասրահը» թելադրում է, որ արդի հայ գրականությունը գործ ունի չափազանց լուրջ արձակագրի հետ, որից դեռևս նոր, հոգեպարար էջեր է սպասում:

¹ Մ. Հովհաննիսյան, Երկեր 4 հատորով, հ. 1, Ստեփանակերտ, «Սոնա» հրատ., 2005, էջ 109:

² Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր 8 հատորով, հ. Գ, էջ 84-85:

Վերջին տարիների ընթացքում Արցախում լույս աշխարհ են եկել առանձին ժողովածուներ և երկեր, որ կարող են հիմք հանդիսանալ տեսական ընդհանրացումների ոչ միայն պոեզիայի, այլև արձակի առումներով: Որպես ասվածի ապացույց՝ կարող ենք մատնացույց անել ՍԱՐՏԻՐՈՍ ՈԲՆԻ «Դժոխքից եկածին հարցեր չեն տալիս» վեպը:

Հայ գրականությանը խորք չեն դժոխային իրականության արտացոլման կոմպոզիցիոն և սյուժետային բազմազան ձևերը: Վերհիշենք Ե. Չարենցի «Դանթեական առասպելն» ու «Մահվան տեսիլը», Հ. Շիրազի «Հայոց դանթեականը», Վ. Դավթյանի «Ռեքվիեմը»՝ Հայոց մեծ եղեռնի թեմատիկայով, Վ. Հակոբյանի «Գողգոթան», Ռ. Դավոյանի, Ն. Ավագյանի «Ռեքվիեմ»-ները, Ռ. Եսայանի «Խռովքը»: Մարտիրոս Ռբնի վեպը գալիս է լրացնելու թվարկված շարքը:

Ակադեմիկոս Ս. Սարինյանը ժամանակակից վեպի վերաբերյալ իր տեսական հոդվածում ընդհանրացրել է. «Ժանրի զարգացումը կարծես հակում ունի դեպի ինտելեկտուալ-հոգեբանական վեպը, որը նման է մենախոսության և եսակենտրոն հերոսի ինքնավերլուծության»³: Մարտիրոս Ռբնի վեպը գալիս է հաստատելու անվանի գրականագետի դիտարկումը:

Արցախյան ազգային-ազատագրական պատերազմի ընթացքում հայ ժողովրդի մարտական ոգու, նրա կրած տառապանքի ու այդ անլուր տառապանքից ծնված արևային ոգու մասին գրած իր երկերով արժանի տեղ գրավեց ՆՎԱՐԴ ՍՈՂՈՍՈՆՅԱՆԸ՝ «1991. «Կոլցո», «Հիշողության դատը», «Դարաբաղ. Մահվան գծից անդին», «Կարկառներ» (2010 թ.) վեպերով, ուր ներկայացված են Արցախում 1988-1994 թթ. տեղի ունեցած ճակատագրական իրադարձությունները:

Արցախյան ազգային-ազատագրական պայքարին նվիրված երկերի շարքը լրացվեց նաև ՎԱՐԴ-ԳԵՍԲԱՆԻ ԲԱՂՆԱՆԻ «Տեսադաշտ. 1988-1994» վավերագրական գրքով: Արցախյան պատերազմի տարիներին տեղի ունեցած հասարակական-քաղաքական-ռազմական իրադարձությունները նկարագրող այս գիրքը աչքի է ընկնում ոչ միայն իրադարձությունների ընդգծվածությամբ, այլև հեղինակի ակտիվ վերաբերմունքով ու խորհրդածություններով:

Օսմանյան Թուրքիայում կազմակերպված Հայոց ցեղասպանությունը, 19-րդ դարի վերջից սկսած, որպես թեմա մտավ մեր գրականության մեջ:

Սակայն հայտնի պատճառներով մոռացվել է 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներում Բաքվում, Գանձակում, Շամախիում, Շաքիում, Շուշիում և Արցախի տասնյակ գյուղերում ազերի թուրքերի կողմից իրականացված ցեղասպանությունը:

Սեր սրտերը խոցող համաժամանակյա այս ցավն է հուշել տաղանդավոր բանաստեղծ Վ. Հակոբյանին՝ գրելու «Չատիկը ջրավազանի հատակին» վեպը (2010):

Վ. Հակոբյանը որպես վեպի նյութ ընտրել է թուրքերի կողմից ավերված Արցախյան գյուղերից մեկի՝ Հարարի, ողբերգական ճակատագիրը: Սակայն նա այդ կոնկրետության միջոցով ի ցույց է դրել հայոց Արցախի ճակատագիրը և՛ անցյալում, և՛ խորհրդային տարիներին՝ ընդգծելով, որ հայրենական ոստանից տեղահանված հարարցիներին ու վերստին Հարար հասնելու համար անցավ սիբիրյան աքսորների, հալածանքների ու տանջանքների, հազար ու մի արհավիրքների միջով, մինչև որ, Արցախի համազգային գոյամարտը նրա առաջ դուռ բացեց:

Վ. Հակոբյանի «Չատիկը ջրավազանի հատակին» վեպն արդի հայ արձակի մեջ պատմական ներդրումներից է, այնպիսի երկ, որի արժեքը գնալով բազմապատկվում է՝ արժանանալով սերունդների ուշադրությանը:

Արցախի գրական օջախի ստեղծագործական շնչառությունը առողջ է, այն այսօր իրավունք ունի իրեն համարելու հայոց արդի գրականությունը հարստացնող կենարար ջոկատներից մեկը:

Sokrat Khanian (NKR)

TRENDS IN THE DEVELOPMENT OF MODERN PROSE IN ARTSAKH

This article examines trends in modern prose, established in Artsakh. Concerning the discussions and evaluations of new collections of writers: M.Oganesyan, K.Danielyan, K.Gabrielyan, A.Garibyan, M.Vobna, N.Sogomonyan, V.Bagiryan, V.Akopyan, the author emphasizes ideological saturation and necessary artistic level of prose, created in a free and independent Artsakh.

Against the backdrop of modern Armenian literature, highlights the artistic reflection of the Artsakh national liberation struggle, which is considered an important contribution to the rich history of Armenian literature.

³ Գրական թերթ, 2005, թիվ 1:

Վլադիմիր Կիրակոսյան (Հայաստան)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ (ուսումնասիրության մեթոդաբանության հարցեր)

Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը հայ գրականագիտության ամենաշատ ուսումնասիրված բնագավառներից է, այնքան շատ, որ թվում է, թե արդեն սպառված է: Այլ կերպ ինչո՞վ բացատրել, որ բանաստեղծի մասին վերջին ուսումնասիրությունները արդեն տասնամյակների վաղեմություն ունեն, իսկ երիտասարդ գրականագետների այսօրվա սերունդը գրեթե չի զբաղվում այդ թեմայով: Մինչդեռ Թումանյանի գեղարվեստական, քննադատական, հրապարակախոսական ժառանգությունն այն երևույթներից է, որոնք, իբրև ուսումնասիրության առարկա, երբեք չեն կարող սպառվել, և դա միշտ ընդգծել են բոլոր թումանյանագետները: Ու չնայած դրան՝ իսկական Թումանյանը՝ իրական լայնքով ու խորքով, իմ կարծիքով, դեռ լիովին բացահայտված չէ: Ինչ տեսանկյունից ասես դիտվել ու բացատրվել է բանաստեղծի ոչ միայն գեղարվեստական, այլև քննադատական ու հրապարակախոսական վաստակը. մերթ և հայրենի եզերքի քնարերգուն է, մերթ հայ գյուղաշխարհի անգուգական գեղանկարիչ, մերթ «լեռան երգիչ», մերթ սոցիալական իրականության քննադատ, մերթ համագալին կյանքի հանրագիտարան, մերթ հայրենական ցավի վշտակիր բանաստեղծ, մերթ բարոյագետ ու փիլիսոփա բնապաշտ, կյանքի ու մահի խորհուրդների քննաբան և այլն, և այլն: Այս բոլոր բնութագրումների և դրանց նման ուրիշ շատերի համար Թումանյանի ստեղծագործությունն այս կամ այն չափով, այս կամ այն կերպ, իրոք, հիմք տալիս է: Բայց բանաստեղծի գեղարվեստական աշխարհի բուն էությանը կարելի է մոտենալ միայն այս ամենի համալիր միասնության ճանապարհով: Այսինքն՝ Թումանյանի բազմաբնույթ ու բազմաժանր ստեղծագործությունը պետք է դիտել որպես անտրոհելի համակարգ և փորձել գտնել այն գլխավոր հիմնախարիսխները, որոնց վրա բարձրանում է այդ անկրկնելի բանաստեղծական աշխարհը:

Թումանյանական համակարգի հիմնային հանգույցը մարդն է: Ոչ այն իմաստով, իհարկե, որ բոլոր գեղարվեստական համակարգերում էլ առաջնայինը վերջիվերջո մարդու խնդիրն է: Թումանյանական գեղագիտության մեջ Մարդու որոնումը աշխարհայացք ու մեթոդ ձևավորող սկիզբ է: Մարդը այդ գեղագիտության դիտակետից բացարձակ արժեք է: Առարկայական աշխարհում իրական մարդու՝ իբրև կնսաբանական ու հասարակական երևույթի, գործունեության բոլոր դրսևորումները այդ արժեքային բացարձակի թերի մասնավորություններն են: Թումանյանի բանաստեղծական կենսահայեցողությունն անդադար անցումների մեջ է՝ բացարձակից դեպի մասնավորությունները, մասնավորություններից դեպի բացարձակը: Այստեղից է ծագում նրա ստեղծագործական դրաման, որ հաճախ պատճառաբանում ենք միայն ազգային կամ անձնական կյանքի ողբերգական հանգամանքներով, բայց իրականում համարդկային, համատիեզերական ծավալումներ ունի:

Թումանյանի ստեղծագործական հոգեբանության այդ դրամատիկ երկատվածությունը ամենատարբեր դրսևորումներով երևան է գալիս նրա բազմաժանր ստեղծագործության յուրաքանչյուր էջում՝ անկախ թեմայից, նյութից, կենսական շահագրգռություններից: Բանաստեղծի գեղարվեստական աշխարհը՝ իբրև բացառիկ միասնական համակարգ ու կառույց, ունի իր հաստատուն խարսխակետերը՝ իրենց գործող խորհրդանշաններով՝ խավար ու լույս, սև ու սպիտակ, վերև ու ներքև, բարձր ու ցածր, անանց ու անցավոր, պահ ու հավերժություն և այլն: Յանկացած սյուժե կամ քնարական տրամադրություն Թումանյանի գեղարվեստական գիտակցության մեջ սկիզբ է առնում այդ հակադրամիասնություններից ու վերջիվերջո հանգում է դրանց: Կյանքից, սոցիալական ու ազգային իրականությունից, մարդկային հարաբերությունների ամենատարբեր ոլորտներից քաղված սյուժեներն ու դրվագները, չկտրվելով կենսական հողից, գեղարվեստական մեկնաբանությամբ իրենց առարկայական կոնկրետությունը իմաստավորվում են բարոյական արժեքների վերին բացարձակության մեջ, որ նույնանում է արարչական մաքուր սկզբի հետ:

Բացարձակը, որի ներսում է գոյավորվում նաև Մարդու թումանյանական իդեալը, անբաժան է արարչական նախասկզբի, այսինքն՝ աստվածության գաղափարից: Թումանյանական պանթեիզմը աստծու էությունը չի լուծում բնության մեջ. աստված ամենուրեք է, ամեն ինչի մեջ, բայց և եզակի է, վեր է ամեն ինչից, անփոխարինելի, անհաս ու անմեկնելի արարչության սկիզբն է, անվախճանի խորհուրդը, որին բանաստեղծը դիմում է տարբեր անուններով՝ Աստված, Ստեղծող, անճառ Մին, ո՞վ Շռայլ, Տեր, Նա և այլն: Մարդն արարչության ծնունդն է, բայց ինքն էլ արարիչ է, որ հեռացել է իր նախաստեղծ էությունից: Այդ սկզբին վերադարձի ճանապարհը դժվարին է, գաղափար, որ խտացել է հայտնի քառյակի վերջին տողում՝ «Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան»: Բայց վերադարձը անհնարին չէ, ինչպես ուզում է հավատալ բանաստեղծը մի ուրիշ քառյակում՝ «Երբեմն, ասես, զգում եմ ես, թե կըհասնեմ Նըրա մոտ»: Իր բանաստեղծական աշխարհի այս եզրով Թումանյանը մերժեմում է Գր.

Նարեկացուն, փաստ, որ ցույց է տալիս, թե արվեստի ամեն մի իսկական ստեղծագործություն, իր ժամանակի ծնունդը լինելով, նաև վերժամանակային է:

Թումանյանի գեղարվեստական համակարգում բացարձակի հիմնային գաղափարի տիրույթում են գործառու մաս ժամանակն ու տարածությունը: Տեքստային իրականության մեջ գործում են իրական ժամանակն ու տարածությունը: Գործողություններն ունեն իրենց որոշակի տեղը, կատարվում են որոշակի ժամանակամիջոցում, հոգեվիճակները, քնարական ապրումները ևս անցյալ կամ ներկա պահերի հետ են կապվում, տեղի են ունենում ինչ-որ հայտնի, առարկայական իրադրության մեջ: Բայց դրանք մեծ ժամանակի ու մեծ տարածության մասնավորություններն են, որ ենթատեքստում միավորվում են բացարձակ ժամանակի, այսինքն՝ հավերժության, և բացարձակ տարածության, այսինքն՝ անսահմանի, անսկզբի ու անվախճանի մեջ: Թումանյանը գրեթե միշտ աշխարհի իրերն ու երևույթները դիտում է տարածական բարձրից, հավերժության հեռվից, որպեսզի մասնավորությունները չքողարկեն բացարձակ էությունները: Սա Թումանյանի ստեղծագործական նկարագրի, նրա գեղարվեստական կենսափիլիսոփայության գլխավոր սկզբունքներից է, որ կարելի է ցույց տալ նրա ստեղծագործության ամեն մի էջում:

Այդ սկզբունքի հետ է կապվում նաև բանաստեղծի անթաքույց հակումը դեպի հեքիաթային սյուժեներն ու ժողովարդական ավանդությունները, որտեղ ո՛չ որոշակի ժամանակ կա, ո՛չ որոշակի տարածություն: Հեքիաթներն ու ավանդությունները հավերժական ճշմարտություններ են հաստատում, որ վեր են որոշակի տարածությունից ու ժամանակից: Բայց այդ ճշմարտություններն են, որ պիտի կառավարեն ու կատարելության տանեն մարդկային աշխարհը...

Իմ այս ենթադրությունները ես կարող էի հիմնավորել բանաստեղծի ստեղծագործությունից քաղված բազմաթիվ ու բազմաբնույթ էջերի վերլուծությամբ: Բայց այս համառոտ հաղորդումը դրա հնարավորությունը չի տալիս: Ասեմ միայն, որ Թումանյանի ստեղծագործության ուսումնասիրությունը պահանջում է մեթոդաբանական յուրահատուկ մոտեցում: Թումանյանական աշխարհին չի կարելի մոտենալ դասական ռեալիզմի չափանիշներով ու մեթոդներով, ինչպես մինչև այժմ գլխավորապես վարվել է թումանյանագիտությունը:

Այդպիսի մոտեցման գլխավոր փաստարկն այն է, թե Թումանյանի ստեղծագործության մեջ ամենյան ճշմարտացիությամբ արտացոլվել է ժամանակի հայ իրականությունը, հայ կյանքը՝ իր բոլոր կողմերով: Փորձելով թումանյանական այս «ռեալիզմը», այնուամենայնիվ, ինչ-որ կերպ ձեռքազատել այդ ուղղության ծանոթ կաղապարներից՝ ուսումնասիրողները հաճախ վկայակոչում են բանաստեղծի հայտնի միտքը. «Ես շատ էլ համաձայն չեմ, թե գրականությունը կյանքի հայելին է միայն... Այո՛, գրականությունը հայելի չէ լոկ, և եթե հայելի էլ է, ապա շատ տարօրինակ ու կախարդական մի հայելի է նա»: Բայց մեկնաբանության մեջ մնում են կես ճանապարհին: Եվ իրոք, ինչպե՞ս պիտի հասկանալ մտքի շարունակությունը, թե՛ «Նա ոչ միայն արտացոլում է ժամանակը և իր դեպքերն ու դեմքերը, այլև տալիս է իր լույսն ու ջերմությունը կյանքին, և ձգտում է կյանքում ստեղծել մարդու էն վեհ ու վսեմ, էն մաքուր ու անաղարտ պատկերը, որ տվել է նրան աստված, կազմված ու հյուսված բնության ամենամաքուր տարրերից»¹: Խոսքն այստեղ արդյոք ռոմանտիկական հայտնի իդեալի մասի՞ն է, գրականության գաղափարայնության ծանոթ կարգախոսի՞, թե բանաստեղծի միտքը այլ տարածություններ է չափում... Բացատրության բանալին ուրիշ առիթներով տալիս է ինքը՝ բանաստեղծը՝ նկատելով, որ կյանք ասածը բազմաշերտ ու բազմիմաստ իրողություն է. կա մարդկային կյանք, բնության կյանք, կենդանիների կյանք, բույսերի կյանք և այլն: Բայց կա նաև տիեզերական կյանք, որ չափ ու չափանիշ է կյանքի մնացած բոլոր դրսևորումների համար: Թումանյանի բանաստեղծական հայացքը այդ բարձրությունից է դիտում և իմաստավորում իրականության բոլոր երևույթները, նաև մարդուն ու նրա արարքները:

Ահա բազմաթիվ օրինակներից միայն մեկը: 1910 թ. իր «Բողոքի դեմ» հոդվածում Թումանյանը անտեղի ու վնասակար է համարում Պոլսի ս. Երրորդության եկեղեցու կազմակերպած բողոքի ցույցը ցարական իշխանությունների դեմ, որ կազմակերպվել էր թուրքերի հրահրմամբ: Ընդդիմախոսները այնպես են ներկայացնում բանը, թե նա արևմտահայությանը ապաստամբության է մղում թուրքական պետության դեմ: Թումանյանն, իհարկե, հիմնավոր բացատրություններով ցույց է տալիս, որ քննադատները իր հոդվածի նպատակը ճիշտ չեն հասկացել: Բայց ավելի էականը այս իրադրության մեջ հարևանի թվացող այն խոստովանությունն է, որ անում է բանաստեղծը՝ դիմելով իր ընդդիմախոսին. «Բայց որքան էլ տխուր լինի էս փաստը ձեզ համար, ես իմ ողջ էությանը ապրում եմ մարդկային կյանքից ավելի մեծ կյանքով, հենց էնպես, ինձ համար, և անընդունակ եմ մի որևէ վանդակի մեջ փակվելու ու էն տեսակ երգեր երգելու, որ ձեզ դուր գամ: Սակայն եթե խոսքը կմասնավորեք կոնկրետ խնդրի վրա, կարողություն կունենամ իմ դիրքը որոշելու»²: Այսինքն՝ մասնավոր փաստը դիտվում է ավելի ծավալուն մի հարթության՝ ժողովրդի ճակատագրի, նրա պատմության՝ «էն սոսկալի դրամայի»

¹ Հովհ. Թումանյան, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, հ. 7, Երևան, 1995, էջ 32:*

² *Նույն տեղում, հ. 6, 1994, էջ 190:*

«արյունոտ» բեմի վրա, իսկ այս վերջինն էլ՝ ավելի համապարփակ մի տարածության մեջ, որ վեր է «մարդկային կյանքից», բայց որը այդ նույն «մարդկային կյանքի» քննության թումանյանական չափանիշն է: Չոր չէ բանաստեղծի կոչը բոլոր նրանց, ովքեր ձգտում են ճանաչել և իմաստավորել մարդուն ու նրա կյանքը, աշխարհը. «Դեպի լույսը, դեպի լույսը, դեպի մեծը, դեպի ընդհանուրը...»: Թումանյանի բանաստեղծական աշխարհատեսության միջուկն է սա, որ հազիվ թե հնարավոր է տեղավորել դասական ռեալիզմի կամ առհասարակ որևէ հայտնի գեղարվեստական մեթոդի պարփակ շրջանակներում:

Իհարկե, Թումանյանի ստեղծագործության մեջ ցանկության դեպքում կարելի է նկատել իրողություններ, որոնց երևութապես հնարավոր է մոտենալ այս կամ այն մեթոդի չափանիշներով՝ սկսած կլասիցիզմից, վերջացրած սիմվոլիզմով ու ռեալիզմով: Բայց թումանյանական աշխարհի անտրոհելի միասնությունը բացատրելի է միայն մի սինթետիկ մեթոդով, որ յուրովի ընդհանրացնում, է ժամանակի գեղարվեստական զարգացման փորձը՝ չըրջանցելով նաև բանահյուսական մտածողության ավանդույթները:

Դեռ ժամանակակիցներն են նկատել, որ Թումանյանը մեր նոր գրականության մեջ եզակի է, անկրկնելի, այսինքն ամփոփում է զարգացման մի ամբողջ պատմաշրջան և նորը չի սկզբնավորում: Դա չի նշանակում, իհարկե, թե թումանյանական ավանդույթները ընդհանրապես դադարեցին գործելուց. ավելին՝ Թումանյանից հետո, ճիշտ է, նրա մեծ գրելը դարձավ անհնար, բայց և առանց նրա գրելն էլ արդեն հնարավոր չէր... Սի բան միայն ակնհայտ է. ինչպես անկրկնելի, ունիկալ երևույթ է Թումանյանի ստեղծագործությունը, այնպես էլ ինքնահատուկ պետք է լինեն այդ ստեղծագործության ուսումնասիրության մեթոդն ու եղանակները:

Vladimir Kirakosyan (Armenia)

HOVHANESS TUMANYAN'S CREATIVE WORKS (the methodological issues of the study)

Tumanyan's works are unique and the research of his works need a special methodological approach. The background of Tumanyan's creative system is the search of a human as an absolute essentiality. In the world based on subjectivity all the forms of human activity are the relative sides of above mentioned absoluteness. The spirit of the poet is always in movement between the absoluteness and individuality. And Tumanyan's drama raises from this movement.

The dramatic division appears in all the works of the poet by symbolic expressions: darkness and light, up and down, instant and perpetuity.

In Tumanyan's creative system time and space are also in the sphere of absoluteness. All real phenomenons which take part in particular place and time, in aesthetic implication are united in huge space, that means they are united in immortality. This is the reason why Tumanyan during his creative activity has been so much attracted by fairytale plots and folk traditions, which are out of time and space.

Tumanyan's works should not be observed within the borders of classical realism.

Եվա Մնացականյան (Հայաստան)

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ «ՄՇԱԿԻ» ԷՋԵՐՈՒՄ

1872 թվականից տպագրվող «Մշակ» օրաթերթը, շուրջը համախմբելով առաջադեմ հասարակական գործիչներին, գրողներին, սկզբնապես հանդես է եկել իբրև ազատամիտ մտավորականության գաղափարական օրգան՝ անդրադառնալով ժամանակի հասարակական, քաղաքական, գրական մի շարք խնդիրների: Սակայն 80-ական թթ. II կեսից «Մշակը» շեղվում է իր որդեգրած ուղուց. սկսում է ոչ բարյացակամ վերաբերմունք և անհանդուրժողականություն դրսևորել բոլոր այն արվեստագետների ու բանաստեղծների նկատմամբ, որոնք հանդես են բերում ազատ և անկախ գործելու հաստատամտություն: Այդ մարդկանց թվին էր պատկանում Հ. Թումանյանը: «Մշակ»-Թումանյան աղերսներն ուսումնասիրելիս նկատում ենք ակնհայտ մի օրինաչափություն. թերթը կանխակալ վերաբերմունք ունի այն ամենի նկատմամբ, ինչ ուղղակիորեն կապվում է Թումանյանի անձի, ստեղծագործական աշխարհի, քաղաքական, հասարակական գործունեության հետ: Հայտնի օրինակ է թերթի թշնամական

վերաբերմունքը Թումանյանի մախազահաժ Հայ գրողների կովկասյան ընկերության¹ նկատմամբ՝ սկսած ընկերության հիմնադրման առաջին իսկ օրերից (1912): Հատկապես 1914 թ. խմբագիր Հ. Առաքելյանի² ղեկավարությամբ թերթի էջերում ընկերության դեմ սկսվում է մի «արշավանք»: Առիթը Հ. Առաքելյանի «Դուք անբարոյականացնում եք մատաղ սերունդը» առաջնորդող հոդվածն էր. Թումանյանը մեղադրվում էր Հայ գրողների ընկերության կազմակերպած գրական միջոցառումներին աշակերտներին մասնակից դարձնելու մեջ: Անհիմն մեղադրանքներ հնչեցնելով ու սուր բանավեճեր ծավալելով՝ «Մշակը» չէր առաջադրում գեղագիտական խնդիրներ և կառուցողական ծրագրեր:

Մեր հետազոտության խնդրո առարկան ենթադրում է անդրադարձ «Մշակի» այն հոդվածներին, որոնք բացահայտում են թերթի ընդհանուր դիրքորոշումն ու վերաբերմունքը բանաստեղծի երկերի նկատմամբ: Ուստի ուշադրության կենտրոնում են մի քանի այնպիսի նյութեր, որոնք փոքրիշատե լուսաբանում են առաջադիր խնդիրը:

Այսպես, Թումանյանի գրական մուտքը (1890) «Մշակը» ընդունում է բացասաբար: «Բանաստեղծություններ» անդրանիկ ժողովածուն հենց սկզբից անուղղակիորեն դառնում է քննադատության քիթախ: 1890 թ. «Մշակի» N138-ում Խ. Մալումյանը հեզմախառն ոճով, ի թիվս այլ բանաստեղծների, Թումանյանին ևս դասում է «սունկի պես բուսնող» բանաստեղծների շարքին: Հոդվածագիրը ոչ մի արժեքավոր միտք կամ դիտարկում չի կատարում, պարզապես շարունակում է «Մշակի» քաղաքականությունը՝ ներկայացնելով հերթական մերժողական դիրքորոշումը նորահայտ բանաստեղծների նկատմամբ: Մալումյանը, չըմբռնելով հայ գրականության զարգացման նոր շրջափուլը, ակնկալում է նոր Պատկանյաններ ու Պեշկեբաշյաններ: Ծարունակելով նույն գործելակերպը՝ 1891 թ. N 90-ում խմբագիր Գր. Արծրունին տպագրում է ֆելիետոն, որում արհամարհանքով և ծաղրալից անլրջությամբ ներկայացնում է Թումանյանի «Կուրծքս երբ եռ է գալիս և հուզվում» բանաստեղծությունը: «Մշակի» երբեմնի փառքը վերականգնելու մոլուցքով տարված՝ Արծրունին մրոտում է «Մուրճում» և «Աղբյուրում» տպագրվող բոլոր հեղինակներին, այս դեպքում Թումանյանին՝ անտեսելով նրա տաղանդը: Արծրունու մահից հետո «Մշակի» վերաբերմունքը առավել թշնամական է դառնում: Լեոյի վկայությամբ՝ թերթի հաջորդ իրավատերերը՝ Խ. Մալումյանը և Հ. Տեր-Մարկոսյանը, չեն ընդունում Թումանյանին՝ իբրև բանաստեղծի և բացահայտ անտարբերության են մատնում 1892 թ. տպագրված «Բանաստեղծությունների» 2-րդ ժողովածուն՝ դրանով իսկ արտահայտելով իրենց մերժողական դիրքորոշումը Թումանյանի արվեստի նկատմամբ, որը պայմանավորված չէր բանաստեղծի՝ «Մշակի» համար անընդունելի գեղագիտական հայացքներով. պարզապես 1892 թ. Թումանյանը մասնակցում էր Արծրունուց և «Մշակից» դժգոհ գործիչների ժողովներին, ուստի համարվում էր «Մշակի» հակառակորդ:

1896 թ. մայիսի 29-ին, ինչպես նշում է Թումանյանը, «Մշակը» հաճում է արձագանքել բանաստեղծի գործերին, մասնավորապես «Լռեցի Սաքուն» պոեմին: Գրախոսը՝ Լեոն³, չժխտելով Թումանյանի բանաստեղծական շնորհքը հատկապես բնության և միջավայրի նկարագրությունները պատկերելիս⁴, պոեմը համարում է նկարագրական բնույթի՝ գուրկ բովանդակությունից, իսկ Սաքոյի կերպարը՝ «մի աղոտ ստվերագիծ»: Ըստ Լեոյի՝ կերպարի հոգեբանական զարգացումը թերի է, Սաքոյի նման ածղահայի այդօրինակ վախկոտությունն ու խելագարությունը՝ անհամոզիչ⁵: Այդուամենայնիվ, գրախոսը հույս է հայտնում, որ եթե Թումանյանը «աշխատե և բովանդակության, հոգու և մտքի մասին, կարող է տալ մեզ գեղեցիկ, կոկ և ախորժելի պատմություններ ոտանավորով»⁶: Ուշագրավ է, որ այս հոդվածում արված դիտարկումները ներառում էին գեղագիտական որոշակի սկզբունքներ: Բոլորովին այլ միտում էր հետապնդում Թումանյանի 1903 թ. տպագրված «Բանաստեղծություններ» ժողովածուին վերաբերող գրախոսականը:

1904 թ. հունվարի 16-ին «Մշակի» N 2-ում տպագրվում է Լեոյի հոդվածը ժողովածուի մասին: Ըստ նրա՝ Թումանյանին՝ իբրև գյուղի մարդու, սկզբնապես հաջողվել է վառ գույներով, բնությունից ստացած տպավորություններով հյուսել երգեր, պոեմներ, որոնցում գեղեցիկ նկարագրական էջեր կան: «Նրան հաջողվում է պատկերներ և տեսարաններ նկարել.՝ դրանք արտաքին զարդարանքներ են, բայց

¹ Տե՛ս **Ս. Հովհաննիսյանի** «Թումանյանը և Հայ գրողների կովկասյան ընկերությունը» ուսումնասիրությունը (Երևան, 2007):

² Հ. Առաքելյան-Հ. Թումանյան հակասությունը սկսվել էր դեռևս 1910-11 թթ.՝ կապված կաթողիկոսական ընտրությունների հետ (տե՛ս **Լ. Կարապետյանի** «Իրվագներ Թումանյանի հասարակական գործունեությունից» հոդվածը, ՌԻՀ 4, 69-128):

³ Այդ ժամանակ Լեոն ղեկավարում էր «Մշակի» գրախոսական բաժինը:

⁴ Լեոն հուշերում գրում է, որ այդ առավելությունները նկատելու պատճառով ընդհարում է եղել իր և «Մշակի» գլխավոր աշխատակիցների միջև:

⁵ Նշենք՝ Գ. Աղայանը ևս 1890թ. պոեմի առաջին տարբերակին ծանոթանալիս անհամոզիչ է համարել Սաքոյի խելագարությունը: Թումանյանը քննադատությունը չի ընդունել, սակայն ավելի ուշ՝ պոեմը վերամշակելիս, գրել է. «...Այդ սխալը ես այժմ եմ գլխի ընկել և ուղղել. այդ պոեմն ավելի կլավանա»: 1903 թ. ժողովածուի մեջ տպագրված պոեմում Սաքոյի հոգեբանությունն արդեն հիմնավորված էր:

⁶ «Մշակ», N 57, Թիֆլիս, 1896:

բովանդակության գործողության մեջ լեռներ երգող բանաստեղծը մնում է միակողմանի, միամիտ»⁷, գրում է Լեոն և եզրակացնում, որ 17 տարվա ընթացքում Թումանյանը այդպես էլ չի զարգացել ու «հասունացել», ավելին, «Պոետն ու մուսան» պոեմը ապացույցն է այն բանի, որ նա սովորել է հանգեր կազմել և «իզուր բռնաբարում է իր միտքը՝ մի նոր բան տված լինելու համար»⁸: Ըստ գրախոսի՝ Թումանյանը կորցրել է նույնիսկ ժողովրդական նյութից «մի բան ստեղծելու վաղեմի ընդունակությունը» (իբրև ապացույց նշում է «Մասունցի Դավիթը») և «այժմ չունի կամ շատ քիչ ունի» շնորհք, որի միակ դրսևորումը համարում է «Դեպի անհունը» պոեմը: Լեոյի կարծիքով՝ այստեղ «չկա գործողություն, բայց կա խոր զգացմունք, կան մտքի թռիչքներ»⁹: Հոդվածի ուշադիր ընթերցումից նկատելի է դառնում, որ գրախոսը երբեմն հակասում է ինքն իրեն. թվում է՝ երկու տարբեր մարդիկ են գնահատում Թումանյանին. մեկը՝ գրականության խոր տեսաբանը, մյուսը՝ «Մշակի» «թայֆայական» հոգեբանությամբ առաջնորդվող քննադատը, որ երբեմն-երբեմն միակողմանի և մերկապարանոց հայտարարություններ է անում: Մշակական ազդեցությունից ազատվելուց հետո Լեոն վերաբերվում է իր կարծիքը:

1909թ. «Մշակի» N 162-ում, ապա N N 187, 189, 193-ում տպագրվում է Ռ. Դրամբյանի «Գրական մեծությունները բանագող», «Իմ վերջին խոսքը Հ. Թումանյանին» հոդվածները, որոնցում «քննադատը» Թումանյանին անվանում է բանագող՝ մեղադրելով նրան ժողովրդական նյութերը յուրացնելու և սեփական անունը դրանց միջոցով փառքի դափնեպսակով զարդարելու մեջ: Դրամբյանը «Լուսաբերում» տպագրված «Պոչատ աղվեսը», «Ծիտը», «Վեճը», «Աղվեսը-բաժանարար» հեքիաթները համարում է «նույնությամբ գողացված» Հայկունու գրքից, ավելին, բացահայտ ակնարկում է, որ «Հասկերն» ու «Լուսաբերը» դարձել են գրական այն շրջանակը, ուր բանագողերը՝ «հեղինակություն ու դիրք ձեռք բերելու տենչով տարված գրագետները», «մեծանում են», փառքի են հասնում ու գումարներ վաստակում Ս. Հայկունու հաշվին: Թումանյանը հրապարակախոս-քննադատի իր տաղանդով արժանի պատասխան է տալիս Ռ. Դրամբյանին, սակայն առավել զավեշտականը «Մշակի» N 179-ում տպագրված «Գրական էթիկան գրական մեծությունների ձեռքում» հոդվածն էր, որի հեղինակ Մուշ. Բագրատունին, հետևելով ծավալված բանավեճին, քաղաքավարության և էթիկայի դասեր է տալիս հատկապես Թումանյանին:

1913 թ. մայիսի 2-ին N 93-ում «Մամուլ» խորագրի ներքո «Մշակը» տեղեկացնում է, որ «Հովիտ» շաբաթաթերթի N 16-ում Ս. Հ-ն «առաջ է բերում մի իրողություն, որ ցույց է տալիս, թե իբր բանագողությունը ընդհանուր երևույթ է դարձել մեր գրողների մեջ» և համապատասխան օրինակներով բացահայտում, որ Հ. Թումանյանի «Գառնիկ ախպերը» մասամբ փոխադրություն և մասամբ էլ բառացի թարգմանություն է ռուսական «Сестрица Аленушка и братец Иванушка» հեքիաթից: «Մշակի» հաջորդ համարում (94) տպագրվում է Շիրվանզադեի «Նամակ խմբագրության» հոդվածը, որտեղ գրողը տարակուսանք է հայտնում Թումանյանի մասին արված հայտարարության վերաբերյալ, ապա բողոքում գրողներին բանագողության մեջ մեղադրելու համար: Խմբագրությունը, ի պատասխան Շիրվանզադեի բողոքի, նույն համարում գրում է. «...Պարտ ենք համարում հայտնել, թե մեր նպատակը չի եղել ասել, թե բանագողությունը մեր բոլոր գրողների մեջ ընդհանուր երևույթ է... Մենք նկատի ենք ունեցել մի բանի գրողների, որոնց վերաբերմամբ վերջին տարիները մամուլի մեջ մերկացումներ եղան»¹⁰: Սա նոր հարված էր Թումանյանին և նրա արվեստին: Իսկապես, «Մշակը», հավատարիմ իր էությանը, չի ուշացնում հեթական «արշավանքը»: 1913 թ. N N 175, 176-ում նույն Ռ. Դրամբյանը «Հովի. Թումանյան և ժողովրդական նյութերը» հոդվածում դարձյալ բանագողության մեջ է մեղադրում բանաստեղծին՝ ճիգեր գործադրելով ապացուցելու իր ասածի ճշմարտացիությունը: Դրամբյանին հատկապես զայրացնում է բանաստեղծի՝ Պուշկինի հետ իրեն համեմատելու «հանդգնությունը»: Թումանյանի պատասխան հոդվածները կոտ տրամաբանությամբ և հստակ փաստարկումներով ուղղակի ոչնչացնում են չարախոս, տգետ ու նենգ, սահմանափակ ու թունոտ քննադատ կոչվածին:

1913 թ. հոկտեմբերի մեկին «Մշակի» N 216-ում տպագրվում է ուսուցիչ Շահան-Սիմոնի «Բաց նամակը»՝ ուղղված հայոց լեզվի դասագիրք կազմողներին: Նամակագիրք թերագնահատում է հատկապես «Լուսաբերը»: Թումանյանի՝ փաստարկումներով լի արձագանքը՝ «Իսասագրերի բարեփոխության խնդիրը» հոդվածը, հիմնավորում է դասագրքերը պարբերաբար բարեփոխելու անհրաժեշտությունը: Սակայն հոկտեմբերի 16-ին «Մշակում» տպագրված «Քողարկված անբարեխղճություն» պատասխան-հոդվածում Շահան-Սիմոնը գրում է. «Պարոն Հ. Թումանյան, ձեր արածը «Լուսաբերի» վերաբերմամբ բարեփոխություն չէ, այլ խառնաշփոթություն... Ձեր կազմած դասագրքերի փոփոխությունից ես վրդովվել եմ և հրապարակավ բողոքել՝ պաշտպանելով խեղճ հայ աշակերտների շահերը ընդդեմ գրական վաշխառուների...»¹¹: Նման շնչով և բովանդակությամբ հոդվածները Թումանյանի համար, ինչպես գիտենք, նորություն չէին: «Մշակը» լայնորեն հրապարակ էր

⁷ «Մշակ», N 2, Թիֆլիս, 1904:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում:

¹⁰ «Մշակ», N 94, Թիֆլիս, 1913:

¹¹ «Մշակ», N 229, Թիֆլիս, 1913:

տրամադրում բոլոր նրանց, ովքեր փորձում էին անվանարկել բանաստեղծին կամ սովեր գցել նրա կատարած գործին: Քննադատության քիթախ է դառնում նաև 1909թ. «Հայ գրողներ» քրեստոմատիան: Կալիսա ծածկանունով գրախոսը հեգնախառն նշում է, որ գիրքը կազմողները՝ Գ. Աղայան, Հ. Թումանյան, Ավ. Մխարոնյան, Վ. Փափագյան, մանկավարժական փորձառությունից և հմտությունից զուրկ գրողներ են, որ միակողմանիորեն և «նեղահայաց» ոգով նախ կատարել են ընտրություն գրողների և ապա «հավաքել» նրանց երկերից կտորներ, իհարկե, չմոռանալով ամենահարմարագույն կերպով դեռ իրանցը տեղավորել...»¹²:

Անարդար չլինելու համար նշենք, որ «Մշակը» հազվադեպ, բայց տպագրում էր նաև բանաստեղծի արվեստը արժևորող նյութեր և հայտարարություններ: Այսպես, նույն «Լուսաբեր» դասագրքի մասին 1908 թ. «Մշակը» N 187-ում տպագրում է Ա. Նազարեթյանի գրախոսականը, որտեղ հոդվածի հեղինակը ողջունում է դասագրքի ծնունդը. «Շատ ուրախալի է, որ մեր մանկավարժական գրականության այդ զգալի բացը մասամբ, և այն էլ շատ հաջող կերպով, լրացրել է Լիսիցյանի, Թումանյանի և Շանթի կազմած մայրենի լեզվի դասագիրքը»¹³: Կամ 1908թ. դեկտեմբերի 31-ին «Մշակը» տպագրում է հայտարարություն, ըստ որի՝ լույս են տեսել Թումանյանի մանկական գրականության մատենաշարի առաջին գրքույկները և խորհուրդ տալիս իբրև Ամանորի նվեր «այլ և այլ անմիտ խաղալիքների և ընծաների տեղ պարզևատրել մանուկներին այդպիսի շքեղ ու ընտիր մանկական գրքույկներով»¹⁴:

Ուշագրավ է նաև 1916 թ. «Մշակում» տպագրված Պ. Մակինցյանի «Գրական մանրութներ» խորագրով հոդվածների շարքը, որտեղ հոդվածագիրը անդրադառնում է Թումանյանի դիտարկումներին՝ կապված Սայաթ-Նովայի և Նահապետ Քուչակի երգերի թարգմանությունների հետ, ապա քննության ենթարկում «Հայրենիքիս հետ» գրքույկը: Կարևորելով քաղաքական թոհուրոհի մեջ գրքի տպագրությունը և արժևորելով Թումանյանի մի քանի գործեր՝ Մակինցյանը առավելապես կանգ է անում «Հին կոիվը» պոեմի հատվածներին և ցանկություն հայտնում տեսնելու պոեմն ամբողջությամբ. «Ե՞րբ պիտի պոետը տա մեզ այդ պոեմը լրիվ... դա ոչ միայն շատ հետաքրքրական է, այլև կարևոր մեր գրականության համար, որովհետև նրա մեջ առաջին անգամ պոեմի նյութ է դառնում մեր մոտիկ անցյալի մի խոշոր հասարակական հոսանքը»¹⁵: Այնուամենայնիվ, հոդվածագիրը նախընտրում է գրքույկում տեսնել բանաստեղծի նոր գործերը:

Ժամանակն ամենամեծ քննադատն է: «Մշակի» կանխակալ վերաբերմունքը աստիճանաբար փոխվում է: Դրա ամենախոսուն վկայությունը 1919 թ. Թումանյանի ծննդյան 50-րդ տարեդարձին նվիրված N 40-ում տպագրված 9 հոդվածներն¹⁶ էին, որոնք հագեցած էին սիրո և մեծարման շնչով: Բանաստեղծին նվիրված համարը համակողմանիորեն բացահայտում էր մարդ, գրող-բանաստեղծ, հասարակական գործիչ, հայ, մանկագիր և վերջապես ուղղակի ընկեր Հ. Թումանյանին: Հատկանշական է, որ «Մշակի» հոբելյանական համարում Ստ. Զորյանը Թումանյանին անվանում է «հայոց Պուշկին»:

Այսպիսով, որքան էլ «Մշակը» հաճախակի է հանդես գալիս ոչ օբյեկտիվ գնահատումով, այնուամենայնիվ Թումանյան-«Մշակ» երկկողմանի ծավալված սուր բանավեճերի առիթով է առավելապես դրսևորվել Թումանյանի հրապարակախոսական տաղանդը, քաղաքական, հասարակական, մշակութային, տնտեսական տարաբնույթ հարցերի շուրջ բանաստեղծի հայացքները, դատողություններն ու վերլուծելու զարմանահրաշ կարողությունը:

Eva Mnatsakanyan

ASSESSMENT OF TOUMANYAN'S WORKS IN THE PAGES OF "MSHAK"

Studying various materials published in "Mshak" it becomes obvious that since 1890, the paper had displayed hostile attitude towards everything which was directly connected with Toumanyan's figure, works, and socio-political activities. The denying approach of the paper was due to Toumanyan's independent attitude towards the press and not the poet's aesthetic views.

This paper mostly discusses the materials which unveil "Mshak"'s general attitude and approach towards Toumanyan's works. For a long time, the hostile attitude prevailed in different articles in the paper.

However, this attitude of "Mshak" gradually changed. The proof of this were variety of articles honoring the poet in the 40th issue of "Mshak", devoted to Toumanyan's 50th birthday anniversary in 1919.

¹² «Մշակ», N 141, Թիֆլիս, 1909:

¹³ «Մշակ», N. 187, Թիֆլիս, 1908:

¹⁴ «Մշակ», N 290, Թիֆլիս, 1908:

¹⁵ «Մշակ», N 117, Թիֆլիս, 1916:

¹⁶ Գ. Անանուն՝ «Հարգանքի խոսք Հովհ. Թումանյանին», Սուրխաբյան՝ «Հովհաննես Թումանյանի տեղը մեր գրականության մեջ», Գ. Լևոնյան՝ «Բանաստեղծը», Սալ-Ման՝ «Օհանես Թումանյան», Ստ. Զորյան՝ «Ո՞վ է Հովհ. Թումանյանը», Մ. Դարբինյան՝ «Հովհաննես Թումանյան», Սմբատ Տեր-Ավետիսյան՝ «Հովհաննես Թումանյանի տոհմը», Պահարեն՝ «Սրինգ», Ալ. Պապովյան՝ «Հավերժի տենչը»:

Ирина Модебадзе (Грузия)

КАВКАЗСКИЕ РЕАЛИИ В СОВРЕМЕННОЙ ГРУЗИНСКОЙ ПРОЗЕ (АКА МОРЧИЛАДЗЕ)

Вступление. В 1992 г. состоялся дебют одного из самых популярных современных грузинских писателей: Ака Морчиладзе (Гиорги Ахвледиани) опубликовал роман «Путешествие в Карабах» (перездан в 2004 и 2013 гг.). А в 2005 г. Леван Тутберидзе снимает свою киноинтерпретацию романа – «Прогулка в Карабах». Начиная с этого момента, в читательском сознании происходит определенная коррекция восприятия – на рецепцию литературного текста накладываются свой отпечаток талантливая режиссура и колоритная актерская игра¹. Прозаический текст и его киноверсия не идентичны: перевод текста с языка одного искусства на язык другого (один из видов межсемиотического перевода) – это «искусство *перевыражения*. <...> Переводчик не репродуцирует подобно копиисту уже существующее речевое произведение. <...> искусство его не в том, чтобы повторить нечто уже созданное. Его искусство в том, чтобы создать новое произведение»². Огромное значение при этом обретает герменевтический процесс раскрытия смыслов литературного текста, его *интерпретация*, призванная «преодолеть дистанцию <...> и таким образом включить смысл <...> текста в нынешнее понимание, каким обладает читатель»³.

Первую публикацию романа и создание фильма разделяют 13 лет. За эти годы завершился процесс становления творческой индивидуальности писателя, определилась специфика его художественного стиля, который, несмотря на ряд характерных отличий, в целом, относится к постмодернистскому типу художественного мышления. И фильм Левана Тутберидзе, в котором писатель выступил уже в роли сценариста, отразил этот процесс. Полагаем, что для интерпретации глубинных смыслов романа необходимо рассматривать его в диахроническом срезе, т.е. динамике развития литературного текста в общем семиотическом поле грузинской культуры. *Путешествие/Прогулка в Карабах* представляется неким культурным феноменом, поэтому мы попытались проанализировать литературный текст в его развитии: роман → кинотрилогия.

I. Заглавие произведения – «доминанта смысла» (Л.С.Выготский), «авторский концепт» всего произведения (В.А.Кухаренко). «Представление о том, что заглавие конденсирует смысл текста можно рассматривать как аксиому, выдвигая которую исследователи предлагают множество терминов, <...> “ключевое слово”, “сильная позиция текста”, “однофразовый текст”⁴. Однако роман А.Морчиладзе сложно было бы причислить к жанру «путешествий» в современном наполнении этого термина. Он не является травелогом. Это несоответствие было тонко подмечено создателями фильма, и, в отличие от романа, фильм вышел уже под названием не «Путешествие», но «Прогулка в Карабах». Подмена реально возможного /путешествие/ абсурдным /прогулка в охваченный войной Карабах/, задает тон, маркирует направленность интерпретации, наглядно указывая на смещение кино-текста от реалистического к постмодернистскому художественному дискурсу. Следует особо оговорить, что в первом романе признанного мастера постмодернистской текстовой игры, грань между реалистической повествовательностью и постмодернистской иронией настолько тонка, что становится явной лишь по прошествии многих лет, когда мы можем судить о произведении в общем контексте творчества писателя. Благодаря акцентированию ряда подтекстов, в фильме более явно проступает то, что лишь намечено в романе. Впрочем, к постмодернистским произведениям, как роман, так и фильм, причислить было бы сложно: и в книге, и на экране можно выделить как реалистические, так и постмодернистские художественные приемы, которые в каждом конкретном случае требуют оценки с учетом этого обстоятельства.

¹ За первым фильмом последовали два других: «Карабах-2: Зона конфликта», 2009 (реж. Вано Бурдули) и «Карабах-3: Последняя прогулка», 2012 (реж. Заза Урушадзе). Фильмы составили кино-трилогию, но только первый из них интерпретирует роман Аки Морчиладзе.

² Гарбовский Н.К. *Теория перевода*. М.: изд-во Моск Ун-та, 2007, стр. 357.

³ Рикер П. *Конфликт интерпретаций. Очерки о герменевтике*, пер. с фр. И.С.Вдовина, Москва: Канон-Пресс-Ц: Кучково поле, 1995, стр. 4. Подробнее о значимости и художественной функции интерпретации см.: И.Модебадзе. *Свобода и Необходимость: понимание и интерпретация в переводе* – Литературные разыскания, XXXIII. Тбилиси: изд-во Института грузинской литературы, 2012, с.153-170.

⁴ Веселова Н.Ю., Овчаренко О.А. Заглавие. – *Теория литературы, т. II. Произведение*. М.: ИМЛИ РАН, 2011, стр.205.

II Анализ архитектурной сюжета позволяет интерпретировать «Путешествие в Карабах» как современный инвариант романа-странствия. Это - повесть о сложном процессе взросления и становления личности, которая по своей жанровой структуре во многом следует модели Bildungsroman, точнее одной из его разновидностей – романа становления. Разгар гражданской войны в Тбилиси (блок-посты, пикеты, комендантский час); вовлеченные в борьбу за будущее страны «отцы» и выросшие в тепличной атмосфере «советского детства» сыновья - не осознающие серьезности происходящего, замкнувшиеся в мире личных переживаний, потрясаемом классическими для их возраста проблемами.

В характере главного персонажа (Гио) сконцентрированы оба основополагающих принципа постмодернистской поэтики – Пустота и принцип Недеяния. Он инертен, пассивен и агрессивен одновременно. Гио присущи юношеский максимализм, агрессия против «взрослого мира», но, полностью завися от своей семьи, он не способен к активному бунту, и в этом смысле пассивен. Он чувствует себя одиноким во враждебном «мире отцов» и ищет опору в возвышенных идеалах Дружбы и Любви. Вот как оценивал своего героя писатель: «Агрессия исходит от пустоты, невежества и гордыни. <...> Этот герой как будто догадывается, что должен быть свободным человеком, но не знает, как этого добиться»⁵.

Согласно традициям жанра, для становления личности герой должен покинуть привычное окружение и отправиться в странствие, и хотя Тбилиси в баррикадах сложно назвать «привычным», писатель отправляет его ... в Карабах. Поддавшись на уговоры друга, Гио везет его за наркотиком в Азербайджан, но сбивается с дороги, и друзья случайно попадают в зону военных действий, где их задерживает военный патруль. С этого момента пути молодых людей расходятся: Гоглико остается пленником у азербайджанцев, а Гио переходит на сторону армян. Это узловое событие развития сюжета: герой, которому предстоит пережить вымышленно-реальное и духовное странствие, оказывается в непривычной обстановке, среди незнакомых людей и в одиночестве.

III. Художественно-исторический хронотоп симулятивного пространства⁶ Карабаха проникает в субъективную реальность Гио: живя на территории армянской военной части, он общается с ополченцами⁷, узнает об их судьбах. Оставляя ощущение шизофренического дискурса, реалии военной жизни подавляюще действуют на психику юноши: он чувствует себя пленником (истории, стечения обстоятельств, собственной беспомощности), «но он не пленник: ни партизан, ни собственного города, который замучил его своими правилами и ложью. Просто он не знает, что мир очень большой» (5). Постепенно Гио осознает пустоту своей прежней жизни: «Я знаю, что ничего не знаю, ничего не понимаю в этом мире. Я знаю, что живу тем, что ничего не значит»⁸, чувствует, что «хорошо быть одному. Необходимо. Можно подумать спокойно» (63), заглянуть себе в душу и понять самого себя. Герой осознает потребность в независимости: «Я не муравей, я – человек!» (81), пассивность уступает место потребности действовать, однако он не видит иного пути, чем агрессия⁹. Позднее (непосредственно перед созданием фильма - в 2004 г.), Ака Морчиладзе напишет: «Там, где Христианство, там нет поколений и “борьбы отцов и детей”» (6). На экране эту мысль высказывает Варган (акт. Гагик Мелкумов). Тот факт, что почти половина действия происходит на армянской территории, должен был привести к сопоставлению *своего* и *чужого*. Но ничего подобного ни в романе, ни на экране не происходит. Дистанцированность возникает не между персонажами, но между имago Мирной жизни (любовная сюжетная линия) и Войной. Но хотя персонажи-армяне *свои* (кавказцы), Гио, пытаясь оградить рушащуюся под напором внешних факторов личностную вселенную, не старается интегрироваться в их сообщество: так он понимает свое право на самоутверждение. Внутренний дискомфорт подчеркивает внешний камуфляж - Гио преобразуется: «гость», он одевает армянскую военную форму

⁵ Ака Морчиладзе. Предисловие ко второму изданию - Ака Морчиладзе. Путешествие в Карабах. Тбилиси, Изд-во Бакур Сулакаури, 2004, с. 5-6 (на груз. яз.), здесь и в дальнейшем цитируем по этому изданию с указанием страниц в скобках, перевод с груз. наш – И.М..

⁶ Включение в нарратив условных исторических реалий придает повествованию необходимую меру художественной реалистичности, на экране этому способствует многонациональный состав актеров: звучит грузинская, русская, армянская и азербайджанская речь. Впрочем, в правдоподобии некоторых моментов сомневался и сам писатель: «Сомнительно, что так могло бы произойти в жизни» (6).

⁷ В фильме их образы создают приглашенные армянские актеры. Это Рафик (акт. Артаваз Палоян), Армен (акт. Левон Чидилян), Дядя Сурен (акт. Аветик Саносян) и др.

⁸ Ака Морчиладзе. Путешествие в Карабах. Тбилиси, Изд-во Бакур Сулакаури, 2004, с. 63 (на груз. яз.) В дальнейшем, цитируем это издание с указанием страниц в скобках.

⁹ По словам автора, когда человеком движет «агрессия, все мутнеет, и все видишь в одном цвете. В то же время все не может быть одинаковым. Как говорили в одном из старых фильмов, всегда есть выбор. Все дело в том, что не осмеливаешься, а потом срываешь зло на других. Думаю, эта книга об этом» (7). «Это история агрессии, которая когда-нибудь закончится. Я полагаю, что закончится, а как вы думаете, пусть так и будет» - обращается к читателям писатель (6).

и как бы примеряет образ голливудского супер-солдата. В романе, бравирюя перед журналисткой, на вопрос «Кто ты?» юноша отвечает «Голубой солдат». Читателю он поясняет: «фильм есть такой, американский, про индейцев» (86). За годы, прошедшие с момента написания книги, фильм уже забыт, и экранный Гио отвечает - «Джеймс Бонд» (подчеркивается игровой момент: грим подгоняется не «под Бонда», но под облик Рембо, и дальнейшие действия Гио также могут быть интерпретированы, как подражание персонажу Сильвестра Сталлоне). Гио не боец, он лишь «играет в бойца». Гораздо важнее то, что для него Карабах и охваченный войной Тбилиси представляются явлениями одного ряда. В отличие от романа, где это лишь намечено, на экране четко виден разрыв пространственно-временных границ - то, что позднее станет ведущей характеристикой хронотопа второго фильма трилогии («Карабах-2: зона конфликта»), где, оставаясь уже за текстом, Карабах все время напоминает: «горячая точка не только Абхазия, зона конфликта – весь Кавказ». Таким образом, армянский контекст несет важную смыслополагающую функцию.

IV. Валера. Роль *воспитателя* (ролевой маркер Bildungsroman) также отводится армянину – художнику Валере. В романе Гио воспринимает его как «*пьяницу и дебошира, старого и молодого, свободного от всего, спокойного и печального*» одновременно. Его притягивает присущая Валере «*внутренняя свобода*» и какая-то особая «*мудрость*» - «*знание/предчувствие будущего*» (104).

В киносценарии значимость этого персонажа намного выше: подчеркивается неординарность его натуры и философский склад ума, которые становятся связующим звеном между Гио и художественной реальностью. Символичным представляется, что это единственный персонаж-армянин, образ которого создан грузинским актером (Георгием Гургулиа). Грузин в роли армянина, русский язык диалогов Валера/Гио – все это подчеркивает: национальные границы стираются, когда речь идет о Любви, Смерти и общечеловеческих ценностях.

Хотелось бы обратить внимание на один эпизод. В свободное время Валера разрисовывает боевые лимонки. На первый взгляд это аномальное поведение. Но эпизод имеет огромную символическую нагрузку. Ака Морчиладзе виртуозно владеет приемами интертекстуальных практик, поэтому неудивительно, что странное увлечение Валеры порождает ассоциацию не только с надписями на фюзеляжах военных самолетов и бомбах времен Второй мировой войны, но и с иллюстрацией к альбому Битлз: а) расписанная граната → боевые снаряды «Смерть фашистам!»; б) расписанная граната → танк, в дуло которого вставлена гвоздика. Гамма чувств, рожденных этим символом столь же противоречива. Понять ее можно только в контексте всей кинотрилогии. В первом фильме оправдана первая ассоциация - *бой во имя мира*. Однако в заключительном фильме («Последняя прогулка»), когда почти через двадцать лет Гоглико пытается взорвать разрисованной лимонкой тех, кто не хочет рвать с криминальным прошлым, граната не взрывается - она выполняет вторую символическую функцию: главное уже не устаревшие боевые качества (символ *Мести* и *Смерти*), но нарисованный на ней цветок – символ *мирной Жизни*, цвести которому суждено на могилах погибших во имя счастливого будущего.

V. Финал. Гио, не желая возвращаться к прежней жизни, впадает в депрессию. На пороге смерти он обретает заботу и любовь отца. Круг, в соответствии с мифологической схемой¹⁰, замыкается. Казалось бы, герой добился желаемого, однако это не так: не желая интегрироваться в мир, воспринимаемый сквозь призму царящей в нем агрессии, Гио удаляется в зону затуманенного сознания, диссимилирующую смыслополагающую основу симулятивного пространства романа. Перерождения /«возвращения блудного сына»/ не происходит, путь становления еще не завершен. В фильме этот эпизод заменен другим: Гоглико (вместе уже с другим другом) вновь направляется в Карабах, везя на крыше автомобиля подарок – живого павлина. (Пока Гио находится в дисперсионном поле своих видений, жизнь продолжается.) Финал фильма открыт: неизвестно, куда теперь попадут молодые люди, и какие испытания ждут их на этот раз. С одной стороны эпизод, бесспорно, удачен своей многозначностью и символической насыщенностью (см. *Примечание*), но, с другой, он кардинально меняет первоначальный смысл финала литературного произведения. О том, насколько это оправданно, безусловно, можно спорить, как, впрочем, обо всем, что связано с интерпретацией.

V. Заключение. Таким образом, давая возможность различных интерпретаций, подчеркнутые талантливым режиссурой приемы постмодернистской игровой стратегии, декодируют множественность смыслов и вычленяют смысловую глубину романа.

Анализ органического единства двух составляющих идейной основы романа - армянского и грузинского контекстов - позволяют заключить, что на фоне реалий противостояния историческим

¹⁰ Позднее писатель вспомнит, что, начиная свой роман, он хотел написать «скорее сказку о приключениях двух тбилисских парней <...> добрую <...> но был совершенно неопытен в написании книг, и не смог выбрать тон» (7).

вызовам современности, лишь обозначенная в романе Аки Морчиладзе идея глубинного родства кавказских народов в киноинтерпретации находит новое художественное осмысление.



Примечание: Павлин – один из древнейших символов, непосредственно связанных с астральной и солярной символикой. Раскрытый хвост павлина – символ универсума, красоты/многообразия созданной Творцом вселенной во всех мировых религиях. Символика павлина сопрягается с Мировым деревом. Мотив изображения двух павлинов по обеим сторонам космического дерева пришел из Древней Персии, он встречается и в мусульманстве, и в христианстве. В раннем христианстве изображение павлина воспринималось как символ бессмертия, красоты нетленной души и Воскресения. Как элемент декора, он часто встречается в архитектуре христианских храмов. В Армении изображения павлина можно увидеть и на древних хачкарах, и в современном декоративном искусстве, нередко в сочетании с *гранатом* – символом жизни, божественной Благодати, религиозного и идеологического единства.

Irine Modebadze (Georgia)

CAUCASIAN REALIA IN CONTEMPORARY GEORGIAN PROSE (AKA MORCHILADZE)

The paper discusses Armenian context of the novel “A Trip to Karabakh” by Aka Morchiladze, a contemporary Georgian writer. It is asserted that according to its genre, a novel could be attributed to Bildungsroman, not to Travelogues. A special attention is paid to the artistic function of Armenian characters of the novel. As the result, conclusion is drawn that Georgian and Armenian contexts construct organic wholeness of the novel and express the author’s idea of Caucasian unity.

Հերիքնազ Որսկանյան (Հայաստան)

ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ՍԱՐԴՈՒ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԸՆԿԱԼՈՒՄԸ

Ներսես Շնորհալին ապրել և ստեղծագործել է XII դարում Կիլիկյան Հայաստանում: 1166 թվականից մինչև 1173 թվականը՝ մինչև իր կյանքի վերջը, եղել է կաթողիկոս: Աշխարհի և մարդու փոխհարաբերության շնորհալիական ընկալումը հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել թե՛ նրա մարդկային նկարագիրը, թե՛ եկեղեցական-քաղաքական գործունեությունը, թե՛ ողջ ստեղծագործությունը, որովհետև դրանք լրացնում են մեկը մյուսին, և չկա հակադրություն բանաստեղծ Շնորհալու աշխարհայացքի և գեղագիտական սկզբունքների և մարդ Շնորհալու, մանկավարժ Շնորհալու, հոգևորական Շնորհալու հայացքների ու ապրելակերպի միջև:

Շնորհալու աշխարհայեցողությունը հենվում է քրիստոնեական կրոնի գաղափարախոսության վրա, բայց միևնույն ժամանակ բերում է աշխարհի և մարդու փոխհարաբերության ընկալման նոր մակարդակ, որն ընդհանուր առմամբ արդիական է:

Ըստ Շնորհալու՝ անիմանալի, անքննելի Աստված է ստեղծել տեսանելի աշխարհը: Նա է բաշխել ժամանակը, նա է ստեղծել բոլոր շնչավորներին, մարդուն՝ իր կերպարանքով:

Աստվածաբանական այս դատողությունների հետ Շնորհալին իր վարպետ գրչով աշխարհի, տիեզերքի գեղեցկության արտաքին և ծածուկ շերտերը տեսանելի է դարձնում մասնաշաղկապ ընթերցողի համար. մեկ աստվածային լույսի առաջ իբրև մագաղաթ գալարվող երկինքն է խոսում իր ներքին հզորության ու հարստության մասին («Յաղագս երկնից եւ զարդուց նորա»), մեկ անձնավորված քաղաքում լավում է ծովի ծիծաղի ձայնը, տեսանելի են դառնում սաղարթաբեր ծառերի հեզիկ շարժումները, վաղորդյան ցողի ոսկեճաճանչ փայլը, սփռվում է ծաղիկների բույրը («Ողբ Եղեսիոյ»)։

Նկարագրություններում ընկալելի է կյանքի հանդեպ բանաստեղծի անհուն սերը, աշխարհիկ գեղեցկության նուրբ զգացողությունը։

Շնորհալին համոզված է, որ մարդու բանականությունն ընդունակ է թափանցելու երևույթների խորքը։ Աստվածային շնորհից բացի մա կարևորում է հիմնավոր կրթության, խորը գիտելիքների դերը։ Նա ինքը եղել է ջերմեռանդ ուսումնասեր։ Նրա վարքագիծը գրում է. «Նա անպարապ, միշտ գիրքը ձեռքին կարդում էր, անդադար որոնում ու քննում»¹։

Ընդունելով, որ աստվածաստեղծ մարդն սկսել է մեղք գործել, և այդ պատճառով սերունդները մվազ շնորհների են արժանանում՝ Ներսես Շնորհալին անդրադառնում է մարդու ճակատագրի առեղծվածին՝ հետամտելով այս կյանքում մարդու բարոյական վերափոխման նպատակ։

Շնորհալու ստեղծագործությունները, թղթերն արժարժում են մարդու հոգևոր մաքրագործման խնդիրը։ Մարդու էությունը դարեր շարունակ չի փոխվել։ Նա հակված է դեպի չարը, երկրային բարիքները։ Մարդկանց գլխին իջած աղետները Շնորհալին մեկնաբանում է իբրև աստվածային պատիժ՝ գործած մեղքերի, ապերախտության պատճառով։ Ի վերջո, Հ. Օշականի դիպուկ բնորոշմամբ, Շնորհալին «հորովայնե ընտրյալ եկեղեցական էր»², կրթված ու դաստիարակված քրիստոնեական ոգով։ Սակայն այստեղ էական է այն, որ մարդկային կյանքի ողբերգության զգացողությունը նրան ստիպում է հայացքն ուղղել դեպի ես-ի խորքը, քննել իր էությունը, բացահայտել մարդկային հոգու խորունկ ծալքերը։

Մարդու աղարտված նկարագրին հակադրելով սրբերի ու մահատակների կամքն ու տոկունությունը, Հիսուսի կերպարը՝ իբրև բարոյական կատարելություն՝ Շնորհալին մատնանշում է այն ուղին, որը տանում է դեպի Աստված՝ աղոթքը և սերը։

Արատները ծնվում են մարդու հոգում սիրո բացակայությունից («Ոչ սիրեցի ըզբըշնամին/ Եւ ոչ ցուցի գութ ատողին»³), սեփական թերությունների անտեսումից («Ոչ նրկատեմ յիս գերանին/ Մրատես լինիմ յայլում շիտին»⁴)։

Շնորհալին կարևորում է մասնատր գրքերի դերն ու նշանակությունը մարդու կյանքում։ Աստվածաշունչը պետք է դառնա մարդու ուղեկիցը ողջ կյանքում, որովհետև այն հոգու իմաստություն է, հոգու դարման։

Շնորհալին հավատում է մարդու բարոյական վերածնությանը։ Մարդուն համարելով Աստծու արարչագործության ամենակատարյալ արտահայտությունը՝ մարդը պետք է ապրի այնպես, որ շարունակ բարձրանա դեպի Աստված և ոչ թե սոսկումով խոստովանի, թե՝

Ի յիշատակ թողում յետին

Ձիամբաւ չարեաց զպարսաւ անձին⁵։

Աստծու պատվիրաններին անսալով՝ կարելի է ուրախ և երջանիկ ապրել մասնաշաղկապ կյանքում։

Շնորհալուն հուզում է ոչ միայն մարդու, այլև քրիստոնյա ժողովուրդների և առանձնապես հայ ժողովրդի ճակատագիրը։ Ժողովուրդը, որ Իսրայելի ցեղից սերված թագավորներ է ունեցել, թափառում է անհովիվ հոտի մեջ, պանդխտում է և օտար տերությունների մեջ ցրված՝ կորցնում ազգային դիմագիծը, դավանանքը, լեզուն։

Այս գիտակցությունից ծնված ցավն էլ հենց մղում է Շնորհալուն՝ ուղիներ փնտրելու հայ ժողովրդի ազգային դիմագծի, հոգեբանության, դավանանքի, պետական անկախության և մշակույթի ինքնության պահպանման համար։ Սա հայրենասիրության այն որակն է, որ աննկատելի է ու անորսալի, բայց հզոր է, զորեղ, որովհետև շաղախված է մվիրվածությամբ ու ազգի արժանապատվության զգացումով։

Լծակները, որոնք Շնորհալին դիտում է իբրև ազգապահպանման կարևոր գործոններ, շարժիչ ուժ են մասնաշաղկապ, որովհետև Շնորհալու օրերին կենսական շատ խնդիրներ, ցավոք, չեն մարել ու դարձել են մասնաշաղկապ հրատապ հիմնահարցերը։

Այդ լծակներն են՝

ա) ուղղափառ քրիստոնյայի դավանության ամուր հավատը.

բ) քրիստոնյա ազգերի միասնության խնդիրը.

¹ Տե՛ս «Հայկական վարքեր վկայաբանություններ, V-XV դդ.», Երևան, 1998, էջ 79։

² Հակոբ Օշական, *Երկեր*, Երևան, 1979, էջ 399։

³ Ներսես Շնորհալի, *Հիսուս որդի*, Երևան, 1991, էջ 96։

⁴ Նույն տեղում, էջ 100։

⁵ Նույն տեղում, էջ 60։

գ) ազգի ֆիզիկական, ռազմական պատրաստվածությունը.

դ) ազգի ինքնագիտակցության խնդիրը, ազգային արմատների գիտակցության հպարտությունը:

Հավատը զորացնելու մտահոգությունը Շնորհալու համար զուտ կրոնադավան հարց չէր, այլ մասն ազգային գոյատևման քաղաքական խնդիր:

Ի սկզբանե քրիստոնեությունը հայ ժողովրդի համար եղել է ազգային ինքնությունության պահպանման միջոց: Տրդատ Երրորդը, ի դեմս քրիստոնեության, տեսել է Հայաստանը պարսկական ազդեցությունից զերծ պահելու հզոր միջոց և միապետական իշխանությունն ամրապնդելու քաղաքական հիմք⁶:

Եղիշեն ընդգծել է քրիստոնեական հավատի վճռական նշանակությունը Հայաստանի և հայ ժողովրդի ինքնությունությունը ապահովելու խնդրում:

Շնորհալին եղեսացիների կռիվը դիտում է իբրև քրիստոնեական հավատի, ուրեմն մասն հայրենի հողի համար մղվող կռիվ: Նրա աշխարհընկալմամբ՝ հայրենիքն ու եկեղեցին միավորվում են. Շնորհալու համար հայ եկեղեցին ամենից առաջ ազգային նկարագիր ունեցող հաստատություն էր: Այդ պատճառով էլ քննելով հույների կողմից առաջադրված Եկեղեցիների միության խնդիրները՝ նա սթափ մոտեցում է ցուցաբերում և մերժում պահանջները:

Իսկ քրիստոնյա ժողովուրդների համար վտանգը մեծանում էր:

Խորաթափանց մտածողը քրիստոնեության զորացումը դիտում էր իբրև այլադավանների դեմ մղվող պայքարի կարևոր միջոց, առաջադրում էր քրիստոնյա աշխարհի, այդ թվում՝ հայերի փրկության ծրագիր՝ բարձրացնելով քրիստոնյա երկրների միասնության խնդիրը. փոքր, չնչին հարցերը եկեղեցիների միջև չպետք է դառնան տարակարծությունների, թշնամության պատճառ:

Թշնամուն դիմագրավելու նախապայմաններից մեկն էլ ազգի ֆիզիկական, ռազմական պատրաստվածությունն է: Շնորհալին իր քերթվածներում ոգևորությամբ գծագրում է զինվորական արհեստի մեջ ներհմուտ եղբորորդու՝ Ապիրատի կերպարը, նկարագրում ռազմական գործողություններ, դրվատում կռիվը մարտիկներին, որոնց թվում են մասն հոգևորականներ, փառաբանում է Հայկազանց տոհմի նշանավոր մարդկանց ռազմական քաջագործությունները: Խորենացու նման՝ Շնորհալին էլ զովերգում է այն թագավորներին, որոնք գերադասել են մեռնել հայրենիքի համար, քան տեսնել, թե ինչպես են օտարածին ցեղերը ոտնակոխ անում հայրենիքի սահմանները:

Իսկ հայրենասիրությունը հենց այնպես չի ծնվում. ազգը պետք է հասնի ինքնագիտակցության, ճանաչի ինքն իրեն և որոշի իր տեղը ազգերի շարքում:

Շնորհալու «Վիպասանությունը» գաղափարական-գեղարվեստական խոր նպատակադրում ունի, խտացնում է անանց գաղափար. եթե անհատն ունի ազգի մի մասնիկը լինելու գիտակցությունը, ազգային արմատների գիտակցության հպարտությունը և տոգորված է ճշմարիտ սիրով առ Աստված, հոգեպես զորեղ է, ֆիզիկապես կոփված, նա կպայքարի ազգի անկախության, հայոց ինքնություն պետականության պահպանման համար:

Դավաբանական խնդիրներին անդրադառնալով՝ Շնորհալին մասն տեսական-գաղափարական պայքար էր մղում ժամանակի աղանդների դեմ: Ոչ միայն խրատական մամակներ էր գրում, այլև զրույցներ էր վարում աղանդավորների գլխավորների հետ: Մատնանշելով սուրբ Գրիգորի օրինակը, թե ինչպես էր քրմերի որդիներին սովորեցնում և ձեռնադրում քահանա ու եպիսկոպոս՝ հոգևորականներից պահանջում էր զբաղվել աղանդավորների որդիների ուսման հարցերով: Զգուշացնում էր, որ դարձի եկած նախկին աղանդավորներին չպետք է նեղել զանազան հարկերով ու տուրքերով, պետք է նրանց տալ որոշ արտոնություններ: Շնորհալին շատ լավ հասկանում էր, որ աղանդավորության աճը կապված է մասն մարդկանց նյութական վիճակի հետ:

Ցավոք, հայոց եկեղեցու այսօրվա հրատապ խնդիրներից մեկն էլ աղանդավորության զորացումը կանխելու մտահոգությունն է:

Հասարակական-քաղաքական, բարոյական, եկեղեցական խնդիրները մեկ անգամ ևս ամբողջանում են «Թուրք ընդհանրականում», որ ուղերձ էր՝ ուղղված ժողովրդին: Շնորհալին պատկերում է հասարակության բոլոր դասերի ճշմարտացի դիմանկարը՝ իր խորհուրդներն ու խրատները խարսխելով քրիստոնեական պատվիրանների վրա: Իհարկե, նա ինքը դաստիարակված է այդ ոգով: Բայց կարևոր է մոտեցման և մեկնաբանման եղանակը. հոգևորականները աշխարհի սյուներն են, երկրի լուսատու աստղերը, աչքի բիբերը, ուրեմն իրավունք չունեն համակվելու նյութական ցանկությամբ ու մոլորվելու: Հարուստները հարստանում են վաստակավորների վաստակով, ուրեմն չպետք է զրկեն աղքատին ու տնանկին: Կանայք գեղեցկանում են ոչ թե ոսկով ու արծաթով, այլ ներքին ամոթխածությամբ ու պատկառանքով, զինվորականները վեհ են իրենց հավատարմությամբ:

Այսպես Շնորհալին խրատում է հասարակության բոլոր խավերին, ու նրա պատվիրանները կենսունակ են մասն այսօր:

⁶ Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 12, Երևան. 1986, էջ 94:

Մանուկների ու երիտասարդների մեջ տեսնելով երկրի ապագա քաղաքացուն՝ Շնորհալին խիստ կարևորում է նրանց կրթության հարցը: Իր խրատատուտեցական քերթվածներում նա ուսման և գիտության խնդիրներին շաղկապում է երեխաների դաստիարակության խնդիրները: Հետամուտ լինելով մարդկանց լուսավորությանը՝ Շնորհալին իր մտքերը ձևակերպում է հստակ, պարզ լեզվով, գեղեցիկ պատկերներով:

Մարդ-մարդ փոխհարաբերություններում Շնորհալին բացառում է շահադիտական ձգտումները՝ կարևորելով անկեղծությունը, ընկերասիրությունը, բարյացակամությունը, կարեկցանքը միմյանց և անգամ զանազան հիվանդություններով տառապողների հանդեպ: Նա նախատում էր հիվանդության ախտերով տառապող մարդկանց անարգողներին, կարեկից լինում և հոգու արիության մղում միմուճար որդուն կորցրած անծանոթին, նյութապես օգնում տմանկներին ու հետին աղքատության հասածներին:

Ներսես Շնորհալու ստեղծագործության կրոնաաստվածաբանական միտվածը չի խանգարում այսօրվա մարդու հոգեբանությամբ ու մտածողությամբ գնահատելու նրա հայացքները, որովհետև նրա աշխարհընկալման հիմքում սերն է, սեր Աստծու, ազգի, հայրենիքի, մարդու հանդեպ:

Heriknaz Vorskanyan

SHNORHALI'S PERCEPTION OF THE INTERRELATION BETWEEN THE WORLD AND A HUMAN BEING

Nerses Shnorhali's views are based on the ideology of Christian religion but bring a new level of perception of interrelation between the world and a human being, which is, in general, actual nowadays.

Shnorhali focuses on the mystery of human's destiny and on interrelations between a human being and a human being and as well as a human being and the God. He accepts that due to sound education and God-given talent human's mind can penetrate into the depths of the nature.

He mentions ways for maintaining the fatherland, statehood, national features and belief, tries to prevent the moral decline of the society.

He puts forward the problems of education and spiritual and physical development either of children and adolescents. The basis of Nerses Shnorhali's world outlook is the love: love towards the God, motherland, nation and a human being.

Ռուզան Պողոսյան (Հայաստան)

ՀԻՆ ԱՐԵՒԵԼՅԱՆ ԽՐԱՏՆԵՐԸ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ԽՐԱՏԵ ՈԳԵՇԱՀԵ»-ՈՒՄ

Հայ մատենագրության մեջ Մխիթար Գոշի բողաժ մեծարժեք ժառանգության մեջ կան գործեր, որոնք սակավ ուշադրության են արժանացել նրան անսահման հռչակ բերած «Դատաստանագրքի» և «Առակների» կողքին: Դրանցից է «Խրատք ոգեշահքը», որից մեզ հասած ԺԲ դարի միակ ձեռագիր օրինակը գտնվում է Մխիթարյան Մատենադարանում: Այն առաջին անգամ հրատարակվել է 1933 թվականին, «Սոփերք հայկականքի» ԻԳ հատորում՝ Հայր Գրիգոր Սարգսյանի կազմմամբ: Բաղկացած է երեք ճառից՝ «Վասն ճշմարիտ եւ հաճոյ սպասաւորել մարմնոյ եւ արեանն Տեառն», «Մխիթարայ վարդապետի խրատ ոգեշահ մանկանց եկեղեցոյ» և «Նորին դարձեալ բան խրատու վասն զգուշութեամբ եւ սպասաւորել մարմնոյ և արեան Տեառն», որոնցից վերջին երկուսը նույն թվականին Հայր Գրիգորը հրատարակել է նաև «Բազմավեպում»: Գոշի այս գործը մեծապես արժևորելով, «Բազմավեպում» նա առաջին հերթին գետեղել է «Մխիթարայ վարդապետի խրատ ոգեշահ մանկանց եկեղեցոյ» ճառը, համոզված լինելով, որ քահանաներին կատարյալ վարքագիծ ուսուցանելու համար նախատեսված «ոսկեհատիկ խրատներն» օգտակար կլինեն նաև հասարակության մյուս շերտերին ու լուսավորչական մեծ նշանակություն կունենան:

Ամսագրի հաջորդ համարում «Հայկական ճեմարան» խորագրի ներքո նա հանդես է եկել «Մխիթարայ Գոշի Խրատք ոգեշահք» հոդվածով¹, որտեղ մատենագրական տեղեկություններ հաղորդելուց առաջ հարկ է համարել խոսել այն հրատարակելու իր մղումների մասին. «Դիտելով Ազգիս մեջ կրօնքի պաշտպանութեան անբաւականութիւնը խրախուսուեցայ Մխ. Գոշի տյն գրութիւնն ի լոյս ընծայել, իբր նմոյշ մը Հայաստանեայց եկեղեցոյ եւ մեր Ս. Հարց ուղղափառ եւ անսոգիւտ վարդապետութեան: Եկեղեցական անձանց խնդրանօք գրած է զասոնք հեղինակը, սակայն իրենց սփռած

¹ «Բազմավեպ», քիվ 11 -12, 1933, էջ 481 - 490:

լոյսը հասարակաց է: Թող կարդայ զատոնք Հայ եկեղեցականը, Հայ գիտունն ու ռամիկը, կարդայ մանաւանդ Հայ զգոնամիտ պատանին, եւ իւրաքանչիւր որ իր վիճակին համեմատ՝ օգտուի լուսաւորութիւն ատոնցմով: Մէկ մէկ գոհար, չքնաղ մարգարիտներ են ատոնք, զորս սիրով կը նուիրեն ի վայելումն Ազգիս»²:

Նշյալ հոդվածում Հ.Գ.Սարգսյանն անդրադարձել է նաև «Խրատքի» գրքի ժամանակաշրջանին, լեզվին, ոճին, իր կատարած սրբագրումներին, միաժամանակ գովաբանել է ճառերի «հոգեշունչ կատարելությունը»՝ քննելով ու մեկնաբանելով հաղորդությանը, քահանայությանը, խոստովանությանը, քավարանին ու հավատքին նվիրված տողերը: Ամփոփելով իր շարադրանքը, նա գրում է. «Ձանացի Մխիթար Գոշի գրութենէն դուրս ցոլացնել մեր կրօնքի գլխաւոր կէտերը: Նպատակս է ցուցնել Հայութեան՝ թէ այս է մեր կրօնքը, ուստի պէտք է հեռանալ նորաձայն վարդապետութիւններէ»: Սա պարզորոշ ցույց է տալիս, որ նրա ուշադրությունը հիմնականում բեւեռված է եղել կրոնական հարցերի վրա, ուստիս խրատներն առանձին ուսումնասիրության նյութ չեն դարձել: Հարկ է նշել, որ «Սուփերք հայկական»-ում 1933-ին տպագրվելուց առաջ Գոշի խրատները բոլորովին անծանոթ են եղել հանրությանը: Դրանց գոյության մասին Հայր Գ. Սարգսյանը որոշ տեղեկություն է քաղել միայն Կիրակոս Գանձակեցուց: Գոշի գրչին պատկանելու վերաբերյալ նա որևէ կասկած չի հայտնում, թեպետ վերջին ճառի մեջ որոշ բառերի գործածության ձևերը բնորոշ չի համարում նրան, սակայն դրանք վերագրում է ընդօրինակողին, այլ ոչ՝ օտար հեղինակին:

Եվ այսպես, «Մխիթարայ վարդապետի խրատ ոգեշահ մանկանց եկեղեցւոյ» ճառը, ի տարբերություն մյուս երկուսի, պարունակում է մեծ թվով խրատներ, որոնք, անշուշտ, վերագրվում են Մխիթար Գոշին, քանի որ նա որևէ իմաստունի անուն չի հիշատակում: Խնդիրն այն է, որ այդ խրատների մանրագին ուսումնասիրությունը հստակորեն ցույց է տալիս, որ Գոշն առատորեն գործածել է արամացի Խիկար իմաստունի խրատները, որոնք, ինչպես հայտնի է, մեծ տեղ են գրավում սուրբգրային իմաստության գրականության մեջ՝ հատկապես Սիրաքի գրքում: Բերենք օրինակներ.

| Խիկար | Սիրաք |
|---|---|
| Տրտմության մի տար զանձն քո եւ ի խորհուրդս մի նեղեր գրեզ: Կեանք մարդոյ ուրախութիւն սրտին է: | Տրտմութեան մի տար զանձն քո եւ ի խորհուրդս մի նեղեր գրեզ: Կեանք մարդոյ ուրախութիւն սրտի: |
| Որդեակ, ընդ առն լեզուանոյ մի կռուի, զի այնպէս է, որպէս թէ ի վերայ հոյ փայտ դիգես: | Ընդ առն լեզուանոյ մի կռուի, զի ի վերայ հոյ փայտ դիգես: |
| Որդեակ, մի գնար մէն ընդ առն բարկացողի եւ մի կարգիր ընդ նմայ, զի յաչս նորա թեթեւ թվի արիւն քո: | Մի գնար մէն ընդ առն բարկացողի եւ մի կարգիր ընդ նմայ, զի յաչս նորա թեթեւ թուի արիւն: |
| Որդեակ, այր որ խիստ է քան գրեզ, մի՛ հակառակիր ընդ նմա: | Մի՛ հակառակիր ընդ առն հզարի, գուցէ անկցիս ի ձեռս նորա: |

Սիրաքի ազդեցությունը նկատելի է առաջին իսկ տողերում, ինչպես օրինակ, Սիրաք՝ «Սկիզբն զգաւմութեան երկնչել ի Տեառնէ», Գոշ՝ «Սկիզբն զգոնութեան՝ երկիւղ Տեառն», սակայն նմանություններն ակնառու են հատկապես ճառի վերջին հատվածում, որտեղ, ի տարբերություն սկզբնամասի, Գոշի մեկնողական խոսքն ասես ուղղված է ոչ միայն քահանաներին, այլև ամբողջ հանրությանը: Եթե ճառի սկզբում նա խոսում է աստվածասիրության, մաքրակենցաղության, աղոթքի, պատվիրանների, խոստովանությանը ինքնամաքրվելու և բազում այլ հարցերի մասին՝ գործածելով քահանայի կենցաղավարության հետ կապված խրատներ, ինչպես՝ «Միս մի ուտիցես՝ բայց եթէ հիւանդանայցես կամ ծերանայցես. սակայն զնպատակն մինչեւ ի մահ պահիցես», կամ «Գինի՛ մի բնավին, բայց եթէ ճաշակիցես եւ զԱրարիչն օրհնիցես, եւ կամ՝ ի բժշկութիւն վարիցես. սակաւ՝ հանդերձ երկիւղի» և այլն, ապա ճառի վերջում նրա խրատները դառնում են ավելի աշխարհիկ և առօրեական, ինչպես՝ «Ի բանս՝ հակառակասէր մի լինիր գքոյն հաստատելով», կամ՝ «Մի խոստանար տալ ընկերի քո զոր ոչ կարես, այլ տուր զոր կարես: Եւ մի խոստանար՝ զի մի պատճառ ատելութեան լիցի» և այլն: Այսօրինակ խրատները քիչ չեն ճառի մեջ, իսկ դրանց նախատիպերը գտնում ենք նախ Խիկարի և ապա Սիրաքի իմաստության մեջ: Ահա համեմատության պատկերը.

| Խիկար | Սիրաք | Գոշ |
|--|--|---|
| Որդեակ, եթէ տեսանիցես զծերն, յոտն կաց առաջի նորա, զի թէ նա ոչ հատուցանէ, Աստուած հատուցանէ: | Որդեակ եթէ կամիս խորագէտ լինել՝ ի մէջ ծերոց կացցես, եւ որ իմաստունն է՝ ի նա մերձեսցիս: | «Մերձաւոր լեր դու ծերոց եւ երկիւղածից Աստուծոյ, եւ սպասատրեա նոցա, զի շահիցիս ի նոցանէ խրատու»: |
| Որդեակ, ամբարտաւանութիւն մարդոյ անարգէ զընկեր իւր եւ խոնարհութիւն բազում անգամ ողջոյն ի վերայ ընկերաց իւրոց: | Որչափ մեծ իցես՝ խոնարհ կաջիր զանձն քո, զի առաջի Տեառն գտցես շնորհս: | Եթէ կամիս մեծ լինել՝ խոնարհ լեր: |

² Տե՛ս անդ, էջ 481:

| | | |
|--|--|---|
| Որդեակ, մարդ որ խիստ է, քան զքեզ, մի հակառակիր ընդ մնա... | Մի հակառակիր ընդ առն հզարի, գուցե անկցիս ի ձեռս մորա: | «Ի բանս՝ հակառակասէր մի լինիր զքոյն հաստատելով: |
| Որդեակ, եթէ խոստանայցես ինչ ստանալ ընկերի քում, խորհեաջիր յառաջագոյն, զի եղիցին հաստատուն բանք քո, քան գտուրս: | Հաւատարիմ լիջիր դու յաղքատութեան ընկերին՝ զի ի բարիս մորա ուրախ լինիցիս: | Մի խոստանար տալ ընկերի քո զոր ոչ կարես, այլ տուր զոր կարես: Եւ մի խոստանար՝ զի մի պատճառ ատելութեան լիցի: |
| Որդեակ, սիրէ զճշմարտութիւն եւ զստութիւն ատեայ որպէս զմահ, զի չվայելէ մարդոյ իմաստնոյ: | Թար բիծ ի մարդ ստութիւն: | Մի խօսիր սուտ ընկերի քո, եւ մի դաւաճաներ զմա, զի մի եւ դու անկցիս ի գուր: |
| Որդեակ, ի գիշերի առանց զինու ի ճանապարհ մի ելանիցես, զի ոչ գիտես թէ ի բշմամեաց քոց ո՞ր ելանիցէ ընդ առաջ քո: | | Մի օրիցես յաշխարհ գիշերի, մանաւանդ միայն, բայց եթէ հարկ իցէ՝ ընդ այլ եղբարս, եւ կամ առ քահանայի: |
| Որդեակ, զամենայն զոր լուիցես, մի պատմեսցես, եւ զամենայն զոր տեսանիցես մի յայտնեսցես: | Սիրելոյ քո եւ բարեկամի զամենայն զանձս խորհրդոց քոց մի բացցես: Լուար ինչ բան՝ մեռցի ի սրտի քում, պիմո՞ղ կաց՝ ոչ հերձու եւ ելանէ արտաքս: | Զխորհուրդ ուրուք քեզ յայտնեալ՝ այլ ումք մի ասեր, զի մի անհաւատարիմ լիցիս: |

Ինչպես տեսնում ենք, Գոշի օգտագործած խրատներից մեկը՝ «Մի օրիցես յաշխարհ գիշերի...», բացակայում է Սիրաքի մոտ: Այստեղ կարևոր է նշել, որ այս խրատը Խիկարին է փոխանցվել շումերական «Ճամփա մի ընկիր գիշերը, այն կարող է թաքցնել թե՛ բարին, թե՛ չարը» խրատից, որը սուրբգրային իմաստության գրականության մեջ որևէ ձևով չի հանդիպում, ինչը և մեզ հիմք է տալիս մտածելու, որ Գոշի օգտագործած աղբյուրը եղել է հին արևելյան խրատների մի ժողովածու, որում ընդգրկված են եղել Խիկար իմաստունի խրատները՝ առանց նրա անվան հիշատակման:

Եթե Գոշն օգտված լիներ միայն սուրբգրային իմաստության գրականությունից, ապա անպայմանորեն կնշեր աղբյուրը, ինչպես դա ընդունված է հայ միջնադարյան խրատական գրականության մեջ: Թեպետ պետք է նկատել, որ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» վերջում գետեղված «Խրատք»-ում կան մի շարք խրատներ, որոնք գրեթե չեն տարբերվում Խիկարի խրատներից, սակայն Կողբացին ևս որևէ իմաստունի անուն չի նշում: Համոզվելու համար բերենք օրինակներ.

| Խիկար | Եզնիկ Կողբացի |
|--|--|
| Որդեակ, մի տրտմեցուցաներ զոր, եւ ոչ տրտմիս յումեքէ: Որդեակ, քիչ ուտելն մարմնոյն շահ է,.,, Որդեակ, ի գինարբունս մի քաջանար, զի զբազումս կորոյս գինին կա: Որդեակ, որ զուարթ է մտօք, արեգակն է լուսաւոր... Որդեակ, մի ընդ վայր ծիծաղիր, զի ի ծաղրուէ ելանէ բան բարկութեան եւ ի բանէն՝ կռիւ, եւ ի կռուոյն արիւն ելանիցէ, եւ բազում անգամ սպանութիւն գործի: | Մի տրտմեցուցաներ զոր, եւ մի տրտմիր յումեքէ: Մի սիրեր զյագուրդ կերակրոց կամ ըմպելեաց,.. Գինի զբազմութիւն ախտից զարթուցանէ, եւ զերկիւղն Աստուծոյ հալածէ: Որ լաւն է՝ եւ զուարթ երեւի: Մի լինիր ծաղրածու եւ կատակերգակ, զի մի ժառանգեսցես զանվախճան զլացն: |

Այս երևույթը վրիպել է խիկարյան խրատներն ուսումնասիրողների ուշադրությունից, մինչդեռ այն մեզ հիմք է տալիս պնդելու, որ հին արևելյան խրատների հնագույն ժողովածուները դրված են եղել հայ միջնադարյան հոգևոր կրթության հիմքում: Կասկածից վեր է, որ իր ինքնատիպ կառուցվածքով «Խրատք ոգեշահքն» ուղղակիորեն կապված է Մխիթար Գոշի ստացած փայլուն կրթության հետ: Նրա մասին կենսագրական տեղեկություններ հաղորդող Կիրակոս Գանձակեցին նշում է, որ կուսակրոն ձեռնադրվելուց տարիներ անց, ցանկանալով ավելի «հմուտ լինել Գրոց սրբոց եւ առակաց խորոց՝ որ ի նոսա» նա աշակերտել է Հովհաննեսին Տավուշեցի վարդապետին, որն իր գիտությամբ երեւելի է եղել այն ժամանակ: Գոշը ստացել է վարդապետական աստիճան, բայց իր ստացած ուսումը բավարար չհամարելով գնացել է արևմտյան կողմը՝ Սև լեռը, ուր և թաքցնելով իր վարդապետական աստիճանը, ուսանել է տեղի վարդապետների մոտ ու մեծապես օգտվել է նրանցից: Գոշի հաճախած վարդապետարանը, ըստ Արշակ Ալայոյաճյանի, Սև լեռան Կարմիր վանքի դպրոցն է եղել: «Սեւ լեռներուն հաստատված հայ վանքերը երկար ատեն անվթար պահեցին ուսումնական եւ կրթական կեանքը, մեղուի փեթակներուն պէս աշխոյժ գործունէութեան մը աշխատանոցները հանդիսանալով հայ գրականութեան արծաթի դարը ստեղծեցին»³: Այդ ժամանակաշրջանում, ըստ Ալայոյաճյանի, հայերը չէին դադարել Հայաստանում, ինչպես նաև Կիլիկիայում ունենալ առավել ու նվազ փայլով հասարակական և առտնին դպրոցներ՝ վաղեմի հայ դպրոցների օրինակով և շարունակել են ժողովրդի մեջ

³ Արշակ Ալայոյաճյան, Պատմութիւն հայ դպրոցի, Գահիրէ, 1946, Ա.հատոր, էջ 193:

ուսում տարածելու աշխատանքը շատ սեղմ ու սահմանափակ միջոցներով: Իսկ թե ինչպիսի՞ն էին վաղեմի հայ դպրոցները, դարձյալ տեղեկանում ենք նրանից. «Կրմանը վստահությամբ ըսել, թե Սահակ եւ թե Մաշտոց կատարելապէս ծանօթ էին այն ծրագիրին, որ հելլէն դպրութեան ուստաններուն մէջ կը կիրարկուէր թէ աշխարհիկ եւ թէ կղերական կրթութեան համար: Արդ նշանակելի է, որ հելլենական ուսմանց ծրագիրը շատ որոշ եւ հաստատուն ձեւ մը առած էր Դ դարուն, մանավանդ Անտիոքի մէջ: Շատ հաւանական է, որ Մաշտոց հետեւած ըլլայ աւելի մերձաւոր կեդրոններու, Ամիդի, Եդեսիոյ, Կեսարիոյ եւ Անտիոքի դպրոցներու դրութեան, որոնց հետ ինքը կապ ունեցած էր եւ որոնք աւելի մօտ ու դրացի էին Հայաստանի»⁴:

Ուշագրավ է հատկապէս այն, որ Ալպոյաճյանը խստորեն քննադատում է հեթանոս գրականության հանդեպ հայ դպրոցի խիստ զգուշավոր վերաբերմունքը, որ տիրապետող է եղել երկար դարեր: «Գիրք պիտոյից»-ի թարգմանութեան ատեն, թարգմանիչը դուրս ձգած է բոլոր այն ականարկութիւնները, որոնք հեթանոս դիցաբանութեան կը հային եւ անոնց տեղ՝ Ս.Գիրքէն առնուած օրինակներ դրած է»⁵, գրում է նա: «Գիրք պիտոյիցը», ինչպէս գիտենք, եղել է բյուզանդական դպրոցի հիմնական ճարտասանական ձեռնարկը, բաղկացած է Ժ մասից, որոնցից մեկը կոչվում է «Յաղագս խրատո», որտեղ զետեղված յոթ խրատները վերագրված են հույն իմաստուններին ու գրողներին: Այսպէս օրինակ, «Յիմար է, որ ընդ վեհ քան զինքն հակառակէ» խրատը, ինչպէս գրում է հեղինակը, քաղված է Հեսիոդոսից (Ք.ծ.ա Ը-Է դդ.): Վերոնշյալ համեմատության մեջ տեսանք, որ այն հանդիպում է նաև Խիկարի մոտ, սակայն ուսումնասիրության շրջագիծը մեծացնելու պարագայում պարզ է դառնում, որ այս խրատն ունի ավելի հին շերտ՝ շումերական Շուրուպակ արքայի խրատներից է՝ «Մի ընդդիմացիր քեզանից հզոր մարդուն», որը փոխանցվել է եգիպտական «Ամենեմոպե» խրատների ժողովածուին, Խիկարին, Սիրաքին և այլ իմաստուններին:

Այսպիսով, եթե փորձենք ուրվագծել հայ մատենագրության մեջ հին արեւելյան խրատների ներթափանցման ուղիները, ապա դրանց սկիզբն, անշուշտ, պիտի գտնենք Հայոց միջագետքում՝ հատկապէս մշակութային կենտրոն Եդեսիայում, իսկ շարունակությունը՝ Նարեկավանքում, Սև լեռան, Նոր Գետիկի և մյուս վանքերում:

Վերոնշյալ նյութի քննությունը մեզ թույլ է տալիս եզրահանգել, որ Գոշի «Խրատք ոգեշահք»-ում ընդգրկված հին արեւելյան խրատներն ընկած են եղել վաղեմի հայ դպրոցի կրթական համակարգի հիմքում՝ եկեղեցու սաներին բարեկիրք վարքագիծ ուսուցանելու համար: Կիլիկիայի Սև լեռան Կարմիր վանքում ուսանելու տարիներին Գոշն այնպէս է սերտել դրանք, որ հետագայում յուրովի մեկնաբանությամբ մատուցել է իր սաներին կրթելու, իսկ նրանց միջոցով նաև հասարակ ժողովրդին լուսավորելու համար:

Ruzan Poghosian

THE OLD EASTERN INSTRUCTIONS IN THE “USEFUL INSTRUCTIONS” OF MCHITAR GOSH

In the report are discussed the main characters of the text and presented the impact of instructions of Ahikar on it as well. And, more importantly, clearly shows the influence of the wisdom literature on Armenian medieval moral education.

The “Useful instructions” by Mchitar Gosh consists of 3 discourses. In the second one Gosh used a lot of instructions without mentioning the names of sages. However the comparisons prove the big influence of Ahikar and Ben Sira on them. The point is that some instructions are not found in the Biblical wisdom literature and barely come from Sumerian literature. That means that Gosh had an old collection of old eastern instructions which had a huge role in the moral education in that times. That is why we found them in the Armenian medieval literature starting from the 5th century.

It is known that Gosh was well educated in Cilicia, where according to Armenian medieval educational demands he learned the idioms and sayings of sages almost by heart. So in his turn he included them in his “Useful instructions” in order to teach his students and at the same time to educate the ordinary people.

⁴ Տե՛ս ամդ. էջ 60:

⁵ Տե՛ս ամդ. էջ 67:

Մերգեյ Սարինյան (Հայաստան)

ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գրականագիտությունը նոր գիտություն է, որոշ իմաստով 20-րդ դարի գիտություն: Այն իրողությունը, որ 20-րդ դարի 20-30-ական թվականներին «նոր քննադատության» տեսաբանները հայտարարում էին, թե «գրականագիտությունը պետք է գիտականանա», նշանակում է, տակավին լուծման կարիք ունի գրականագիտության մեթոդի ինքնորոշման հարցը: Նույն այդ հարցը առաջադրվել էր նաև 19-րդ դարասկզբին, հումանիտար գիտությունների մեթոդաբանական կազմավորման շրջանում: Հայտնի բան է, որ բոլոր գիտություններն ունեն իրենց նախապատմությունը, բայց, ակադեմիական հասկացությամբ, գիտությունները մեթոդ են կազմավորել ավելի ուշ փորձնական գիտությունների զարգացման առաջացման և պատմականության, որպես իմացական կատեգորիայի ձևավորման շրջանում: Այդպես էլ գրականագիտության նախապատմություն կարող են կոչվել էրգեթետիկան ու քերականությունը հին և միջին դարերում: Բայց դրանք վերլուծական մեթոդներ չէին, այլ Արիստոտելի, Հորացիոսի և Դիոնիսոս Թրակացու էսթետիկական դրույթների զուտ տեսական մեկնություններ: Չկար գեղարվեստական բնագրի ձևաբովանդակային հատկանիշների վերլուծական քննությունը:

Մեթոդաբանական ինքնորոշման տեսակետից նախ անհրաժեշտ է գրականագիտությունն անջատել բանասիրության ընդհանուր համակարգից՝ բնագրագիտություն, հնէաբանություն, վիճակագրություն, մատենագիտություն, ժամանակագրություն, էվրիստիկա և այլն: Գրականագիտությունը մեթոդաբանորեն ինքնորոշված չէր և հանդես էր գալիս այլ գիտությունների, հատկապես պատմագիտության համաբնագրում: «Ինչպես ժողովրդի պատմությունն է, այդպես է և նրա գրականությունը»: Այսպիսին էր ժամանակի գեղագիտական ըմբռնումը:

Այս իմաստով գրականագիտության առաջին մեթոդ է ճանաչվում Սենտ Բյովի «Կենսագրական մեթոդը» «Դիմանկարներ» աշխատությամբ: Բայց կենսագրական մեթոդը ի վիճակի չէ ընդգրկելու գրականության ձևաբովանդակային կազմույթի ամբողջական վերլուծությունը:

Շելլինգը անջատեց էսթետիկան (գրականագիտությունը) փիլիսոփայությունից, այն համարելով էմպիրիկ: Նրա համոզմամբ փիլիսոփաներն ավելի են օժտված բացահայտելու գրականության գեղագիտական համարժեքը:

«Գեղարվեստի փիլիսոփայությունը» (1865) աշխատությամբ Հիպոլիտ Թենը հեղափոխիչ դեր կատարեց գրականագիտության ինքնորոշման ուղղությամբ: Գրականագիտությունն անջատելով փիլիսոփայությունից, նա հիմք դրեց «կուլտուր-պատմական» մեթոդին՝ երեք սուբստանց կատեգորիաների միասնությամբ՝ Ռասս, Միջավայր, Հանգամանք, որոնք բնորոշում են գրականության ազգային, հասարակական և անհատական հատկանիշների միասնությունը:

20-րդ դարասկիզբը նշանավորվեց, այսպես կոչված, «մեթոդների հեղափոխությամբ»: Ձևավորվում են հետազոտության բազմաթիվ մեթոդներ՝ սոցիոլոգիական, հոգեբանական, ֆորմալիստական, լեզվաբանական, մարքսիստական և այլն:

Փիլիսոփաների և «նոր քննադատության» տեսաբանների կարծիքով մեթոդների այս բազմազանությունը գիտականության ցուցանիշ չէ, այլ՝ ճիշտ հակառակը, քանզի գիտությունը պետք է ունենա միասնական մեթոդ: Այստեղ է «գրականագիտությունը պետք է գիտականանա» նախադրյալի իմաստը: Նրանց կարծիքով հումանիտար գիտությունը ճգնաժամի մեջ է և հիստորիցիզմի տեսակետից գրեթե ոչինչ է, հետևաբար անհրաժեշտ է այն նորոգել բնական-մաթեմատիկական գիտությունների մեթոդների կիրառությամբ:

Մեթոդի ընտրության հարցում էական նշանակություն ունեցավ մատերիայի չբացման վերաբերյալ ֆիզիկայի հայտնությունը: Եթե մատերիան չքանում է, ուրեմն փոշիանում է տիեզերքի նյութական կառուցվածքի առասպելը: Աշխարհը սուզվում է իռացիոնալ պատկերացումների մեջ, Շպինգլերի խոսքերով ասած, ամբողջ տիեզերքը փոխակերպվում է ոգու խորհրդանիշի և մետաֆիզիկական բոլոր հասկացությունները՝ կյանքը, իրականությունը, բնությունը, պատմությունը, օրենքը, իրավունքը, զգացմունքը, ճակատագիրը, Աստված ստանում են սիմվոլիկ նշանակություն¹:

Այստեղ է գրականագիտության գիտականացման վերաբերյալ «նոր քննադատության» կամ ստրուկտուրալիզմի իմացաբանական հիմքը: Ըստ գիտականացման այդ սկզբունքի, գրականությունը լեզու է, ուստի գրական երկը պետք է զտել բովանդակային բոլոր շերտերից՝ սոցիալական, հոգեբանական, կենցաղային, գաղափարական և այլն՝ դրանց մեկնությունը հատկացնել համապատասխան գիտությունների և գրական երկը վերլուծել որպես նշանագրերով խորհրդանշված սեմանտիկա: Էա-

¹ Տե՛ս **Освальд Шпенглер, Закат Европы**, т. 1, М., 2003, с. 206.

կանը ոչ թե բովանդակությունն է, այլ՝ սիմվոլը, խորհրդանիշը, ուր թաքնված են միֆը, արքետիպը, ենթաբնագրային անհայտը:

Ստրուկտուրալիզմի էական դրույթներից մեկը գրական երկի օտարումն է հեղինակից: Խզվում է գրողի ստեղծագործական միջնորդվածությունը գրական երկի հետ, գրողը և գրական երկը դիտվում են որպես հետերոգեն առարկայություններ, «գրական երկի գոյաբանությունը և ստեղծագործական ընթացքի հոգեբանությունը և՛ անհնարին է, և՛ պարսավելի»²:

Այսպես, ստրուկտուրալիզմը տիրապետող ուղղություն է դառնում գրականագիտության մեջ՝ էքզիստենցիալիզմի փիլիսոփայական իմացաբանությամբ:

Ասեմ, որ սկսած անցյալ դարի 70-ական թվականներից, գրականագիտության մեթոդաբանության վերաբերյալ իմ հոդվածներում, ես վերապահությամբ եմ ընդունել ստրուկտուրալիզմի մենաշնորհը և համարելով այն գրականության հետազոտական ուղղություններից մեկը, պնդել եմ, որ գրականագիտության գիտականացումը կարող է իրականանալ միայն հումանիտար գիտությունների հիմքի վրա: Համամիտ եմ գրականագիտության ամերիկյան տեսաբանների կարծիքին, թե «Պետք է ճշմարտության չափազանց նեղ հասկացողություն ունենալ հումանիտար նվաճումները իմացական բնագավառից դուրս հանելու համար», և գրականագիտությունն ունի սեփական արդյունավետ մեթոդներ, որոնք նույնպես մտահայեցողական մեթոդներ են³:

Այսպես, տեսությունների հանգույցում հայտնվում է էսթետիկականի ու էթիկականի հարաբերակցությունը գրականության մեջ: Ընդունված է ասել, որ 19-20-րդ դարի պատկերացումներում մարդը ներկայանում է որպես էսթետիկական միավոր: Homo Sapiens-ը հավատ էր ներշնչում, թե «գեղեցիկը կփրկի աշխարհը»:

20-21-րդ դարերի հանգույցում այդ ուտոպիայի պատրանքն անգամ չի մնացել: Գերսոնիալականացված ու գերքաղաքականացված հասարակության անհատն արդեն ոչ թե էսթետիկական, այլ էթիկական միավոր է, սոցիալ-հոգեբանական փոխակերպությամբ: Էթիկան բացահայտում է հասարակության սոցիալ-բարոյական կառուցվածքը, և, ինչպես ասում է իտալացի մշակութաբան Ումբերտո Էկոն, օգնում է հասկանալու «սեմանտիկական ունիվերսալիաների» գոյաբանությունը⁴:

Էթիկական հայացքը գրական երկի բնագրում վերընթերցում է բովանդակային այն շերտերը, որ օտարվել էին ստրուկտուրալիզմի պոետիկայում, բացահայտում է արդի հասարակության ախտավոր կերպարանափոխությունները, իդեալների կորուստը, ազգ, հայրենիք, պետության գոյականների արժեզրկումը, սիրո ժոմանտիկ սարսուռների փոշիացումը համասեռականության կուլտիվացիայով: Այս փոխակերպությունների գեղարվեստական արտահայտությամբ կազմավորվեց պոստմոդեռնիզմը: Գրականագիտությունը որոշ իմաստով ազատագրվում է ստրուկտուրալիզմի կաղապարներից, նկատելի են դառնում գրականագիտության սոցիալականացման միտումները, ավելի ստույգ, ֆորմալիզմի սոցիոլոգիականացումը: Այս տեսակետից ուշագրավ է իտալացի գրականագետ Ֆրանկո Մորետի «Սոցիոլոգիական ֆորմալիզմի» տեսությունը: Դիտելով, որ մինչև այժմ գիտեինք, թե «ինչպես պետք է ընթերցել տեքստը», այժմ պետք է սովորել, «թե ինչպես չընթերցել այն», Մորետին գտնում է, որ «ֆորմալները սոցիալական հարաբերությունների վերացարկումներ են» և առաջադրում է «սոցիոլոգիական ֆորմալիզմի տեսությունը»⁵:

Այսպես, կարելի է ասել, որ տեղի է ունենում վերադարձ դեպի գրականագիտության սոցիոլոգիականացումը: Բայց դա մեխանիկական վերադարձ չէ, առավել ևս սոցիոլոգիական մեթոդի կրկնությունը: Դա վերլուծական եղանակների մի նոր համադրություն է, ուր քննաբանվում են գրականության ձևաբովանդակային բոլոր համարժեքները, հղում ունենալով դեպի փիլիսոփայական ընդհանրացումը: Իմ կարծիքով համադրական այդ մեթոդի ձևավորման գործում բավարար հիմունք կարող է լինել կուլտուր-պատմական մեթոդը, որի փորձառությունը տևական ներդրում ունի գրականության պատմագրության և գրականության պոետիկայի ուսումնասիրության ասպարեզում:

Իմ պատկերացմամբ այսպիսին են մեթոդաբանական նորոգության միտումները արդի գրականագիտության մեջ: Վերջում մնում է հիշեցնել, որ իբրև քրիստոնեական մշակույթ հայ գրականությունն ու գրականագիտությունը մշտապես կողմնորոշված են եղել դեպի եվրոպական ավանդույթը:

² Л.М. Вайда, *Феноменология и литературоведение*, М., 1975, с. 44.

³ Լ.Ուելլեթ, Օ.Ուորրեն, *Գրականության տեսություն*, Ե., 2008, էջ 13-14:

⁴ Умберто Эко, *Пять эссе на темы этики*, С. Петербург, 2007.

⁵ «Վեն», 2012, № 4, էջ XXV, XXVII («Վարկածներ համաշխարհային գրականության մասին»)

THE NEWEST METHODOLOGICAL TRENDS IN THE MODERN LITERARY CRITICISM

To define the literary method it is necessary to separate it from the whole philological system (textology, etymology, statistics, evristics and so on).

In this sense the first method of literary studies the biographical method of Sent Bueve is taken. Hippolite Tan founded the culture-historical school.

At the beginning of the XX century "a revolution of methods" took place and structuralism became privileged in literature. In the modern literary studies a crisis of structuralism is noticed and in the methodology of literary studies some tendencies of sociologization are noticed.

Լիլիթ Սաֆրաստյան (Հայաստան)

ՀԱՅԻ ԿԵՐՊԱՐԸ ԱՐԴԻ ԻՐԱՆԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ ՇԱՀՐՆՈՒՇ ՓԱՐՍԻՓՈՒՐ. «ԱՍԻՅԵՆ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ ՄԻՋԵՎ»

Դարերի պատմություն ունեցող հայ-իրանական գրական հարաբերությունները պարունակում են փոխադարձ ճանաչողության և գնահատման, քարգմանությունների և ազդեցության անհամար իրողություններ, որոնք մեծ խթան են ոչ միայն երկու ժողովուրդների հոգևոր մերձեցման, այլ նաև գեղարվեստական նոր մտածողության զարգացման համար:

Հայ ժողովրդի ստեղծած դարավոր մշակութային բարձր արժեքների, հազարամյակներով կուտակված իմաստության հանդեպ տածած խոր ակնածանքն արտահայտություն է գտել Իրանի բազմադարյան գրականության մեջ:

Հայկական քեման և հայի կերպարն ինքնատիպ դրսևորում են գտել XX դարասկզբի պերսիանիստական (ազգայնական) գրական շարժման մեծանուն ներկայացուցիչների՝ Մ. Ալի Ջամալզադեի, Ս. Հեդայաթի, Բ. Ալավիի ստեղծագործություններում:

Առանձնակի ուշադրություն պետք է սևեռել հայ կնոջ կերպարին, որն իր ինքնատիպ դրսևորումն է գտել Մ. Ռավանիփուրի, Ռ. Ջուլայիի, Ֆ. Աղայի, Գ. Թարաղիի վեպերում և պատմվածքներում: Հայ ընտանիքի ավանդական, բարոյական արժեքներին մշտապես անդամաճան իրանահայ կինը եղել է ու կմնա հայկական համայնքի ազգային, կրոնական ինքնությունը պահպանող կանացիության խորհրդանիշ:

Հայ մոր կերպարը, ինչպես նաև իրանահայ գաղութի կոլորիտային կտավներն են ներկայացված հայկական արմատներ ունեցող ճանաչված արձակագիր Ջ. Փիրզադի ստեղծագործություններում: Ի դեպ, արդի իրանական պոեզիայի նոր բանաստեղծության գլուխգործոցներից մեկը՝ հռչակավոր բանաստեղծ Ա. Շամլուի «Աիդան հայելու առաջ» պոեմը, նվիրված է նրա պաշտելի կնոջը՝ հայուհի Աիդա Սարգսյանին:

Արդի իրանական արձակում հայի կերպարն ուսումնասիրելիս անփճելի հետաքրքրություն է ներկայացնում նորարարական վիպագրության մեծանուն ներկայացուցիչ Շ. Փարսիփուրի 2008-ին լույս ընծայված «Ասիյեն երկու աշխարհների միջև» վեպը: Փարսիփուրի բազմաժանր ստեղծագործությունը վեպի, նորավեպի, քատերագրության, հրապարակախոսության, հուշագրության ձևերով հետհեղափոխական իրանական գրականության առանձնահատուկ տարեգրությունն է: Արձակագիրը համաշխարհային գրական շրջանակներում հայտնի է 1990-ականներին հրատարակված «Թուբան և գիշերվա խորհուրդը» և «Կանայք առանց տղամարդկանց» վեպերով, որոնք դարձան ստեղծագործողի գրական այցեքարտը:

1979 թվականի Իրանի իսլամական հեղափոխությունից հետո Իրանի քաղաքական ու գաղափարական կյանքում գոյավորված լարվածության մթնոլորտը, անհերքելի գրաքննությունը և բանտում անցկացրած հոգեցունց տարիների սարսափը Փարսիփուրին և իր գրչակից համախոհներին ստիպեցին լքել հայրենիքը:

Ավելի քան մեկ տասնամյակ վտարանդիության մեջ ստեղծագործող հեղինակը վերջին տարիներին հրատարակված հուշապատումների և բանտային հուշագրությունների կողքին ներկայացրեց «Ասիյեն երկու աշխարհների միջև» վեպը, որը ժամանակային առումով լայն ընդգրկում ունի Փեհլևիների կառավարման տարիներից մինչև իսլամական հեղափոխություն(1926-79թթ.): Ինքնակենսագրական նյութի վրա ստեղծված այս վեպում Իրանի շուրջ մեկդարյա պատմության արհավիրքների և մարդկային ողբերգությունների հետ մեկտեղված կնոջ ճակատագիրն է: Մշտապես խորթ ու անհաղորդ հա-

կասական աշխարհների՝ հնի և նորի, ավանդականի և արդիականի կենտրոնում կանգնած Ասիյեին երբևէ չի հաջողվում գտնել իր փափագած ընտանեկան անդորրն ու անկյունը:

Աշխարհի հոգան ու ծանրությունը փխրում ուսերի վրա տանող միայնակ ու խոնարհ կինը ինքնասպառնաման, ինքնամերժման չարչարանքների գնով փորձում է պաշտպանել իր և զավակների երջանիկ ապրելու մարդկային տարրական իրավունքը: Ասիյեն սիդե¹ էր՝ ժամանակավոր կին, ով մանուկ հասակից, հարկադրված պահպանելու սեփական գոյությունը, աղախին էր աշխատում մեծահարուստների տներում:

Մեծ աշխարհում փոքրիկ անկյուն ունենալու երազանքը կնոջը մղում է բազում դժվարին փորձությունների: Վեպի ավարտին նորից Ասիյեն է, ծեր ու անօգնական, մերժված սեփական զավակների կողմից, իր ապրած ու չապրած կյանքի հարահուսի ծայրակետին: Հավատքի, տառապանքի հոգևոր ճանապարհը գլխավոր հերոսուհու մեջ ուրվագծում է Դուրանում պատվելի չորս կանանցից մեկի՝ Ասիյեի լուսավոր տեսլականը²:

Փոխվել է Ասիյեի աշխարհը, հեռացել էին նրան երբևէ հարազատ դարձած անձանոթ մարդիկ: Հեռավոր Ամերիկա, իրանական վտարանդիություն անընդհատ հողովմող արտահայտությունները տառապանքի նոր շղարշ էին բերել նրա աչքերին: Ասիյեին այլևս անհաղորդ էր նորօրյա Իրանի խրթին իրականությունը:

Վեպի կարևոր դիպաշարային հանգուցալուծումներից է Իրանի հեռավոր Մարանդ քաղաքում հայազգի Արտաշեսի և Ասիյեի հանդիպումը: Աշխարհի բութ անտարբերությունից դառնացած, բոլորի կողմից անտեսված ու լքված այս կնոջը և նրա նորածին զավակին միայն օգնության ձեռք է մեկնում հայազգի տղամարդը, ով ապաստան է տալիս իր իջևանատանը և հային վայել բարությանը, պատվախնդրությանը և առաքինությանը հոգ է տանում վերջիններիս մասին:

Պատերազմից հետո կորցնելով երիտասարդ կնոջը, Արտաշեսը Ռեշտից տեղափոխվում է Մարանդ: Իր շատ հարազատների նման մեծ փափագ ուներ վերադառնալու Հայաստան: Ասիյեի և մանկան մերկայությունը խիմքով են լցնում հայորդու հուսալքված հոգին: Աշխարհից անտեղյակ, թերուս պարսկուհուն նա գործվանքով է պատմում Հայաստանի, հայկական ավանդույթների ու բարքերի մասին:

Տարիներ անց, Արտաշեսի վաղաժամ մահվան բոթը կցնցեր Ասիյեին և կստիպեր նորից ուղևորվելու հեռավոր հյուսիս, որտեղ ի նշան խոր երախտիքի և լուսավոր վերհուշի՝ խաչ կտեղադրեր հայ քրիստոնյայի լքված շիրիմին:

Արտաշեսը հյուսիսային Իրանի օրըստօրե խաբլվող հայկական համայնքի վերջին մոհիկաններից էր, որի բնավորության, վարքագծի մեջ տեսնում ենք ընդօրինակման արժանի մարդկային վեհ հատկանիշներ: Վեպում նրա հույզերի, արարքների, ձգտումների բնական ամբողջության մեջ է հյուսվում հայի ազգային հավաքական դիմագիծը:

Թափանցելով հայի կենսահաստատ աշխարհընկալումի ակունքները, Փարսիփուրը կերտում է խիստ գունեղ ու իմաստուն կերպար, ով հավատարիմ է ազգային բնութագրին, կենսասիրությանը և աշխարհասիրությանը, ով փորձում է իր անսպառ լավատեսությամբ վարակել, տոկոնության և մաքառումի դասեր տալ անկումային տրամադրություններով համակված պարսկուհուն:

Արդի իրանական արձակում հայի կերպարը կամ հայկական թեման քննելիս կարելի է առանձնացնել մի քանի բնութագրական շեշտադրումներ. առաջինը՝ հայ քրիստոնյայի՝ *մասիհի* վարքագիծն է, որի աշխարհագրագոյության հիմքում դրված է հանդուրժողականության և ներման աստվածային շնորհը: Փարսիփուրի ստեղծագործության մեջ մոլորված կնոջը օգնության ձեռք մեկնելու և կարեկցելու քրիստոնյային հատուկ արարքը հակադրումն է իսլամական հասարակության մեջ բարոյական և հոգեբանական խարան հանդիսացող սիդեի դատապարտման ու նվաստացման իրողությանը:

Հայի կերպարին բնութագրական հաջորդ կարևոր շեշտադրումը հայ տղամարդու ընտանեկան օջախի, տան ըմբռնումն է: Դարեր շարունակ իրանահայ ընտանիքը, պարսպված լինելով իսլամական միջավայրից, ձգտել է մաքուր և անսասան պահել իր ազգային գենետիկ հիմքը՝ փոխանցելով այն ապագա սերունդներին: «Ասիյեն երկու աշխարհների միջև» վեպում հեղինակը նրբանկատ խնամքով վեր է հանում հակասական այս թեման, հավաստելու մուսուլման կնոջ և հայ քրիստոնյայի միջև ամուսնական անընդունելի կապը, որը նույնիսկ հարազատներին թշնամիների կվերածեր:

«Դեռ մանուկ հասակից գիտեմ, որ մուսուլմանը պետք է մուսուլման կին ունենա: Դու հայ ես և երբ մուսուլման կնոջ հետ ամուսնանաս, քո շրջապատում բոլորը թշնամիդ կդառնան» -, գրույցներից մեկում խորհում է Ասիյեն³:

¹ Sh. Haeri, *The Institution of Mut'a Marriage in Iran: A formal and historical perspectives*.-B. S Turner, A. Ahmed: *Islam Critical Concepts in Sociology*, Volume III, Routledge Publishing, London, 2003, pp. 154-155.

² Դուրան՝ 66:11:

³ Շ.Փարսիփուր, *Ասիյե դար միանե դո դոնյա*, Կալիֆոռնիա, Սայեհ, 2008, էջ, 135-36.

Հայարտությամբ պետք է ընդգծել այն փաստը, որ արդի իրանական արձակույթի արմատներին, կրոնական, մշակութային ինքնությանը մշտապես հավատարիմ հայը երբևէ չի ներկայացվել որպես մտացածին կամ հորինված կերպար, ավելին՝ այն քաղվել է կյանքի փաստացի նյութից, ստեղծագործողի կենսագրական պատումներից:

Հետհեղափոխական շրջանում գրված «Ասիյեն երկու աշխարհների միջև» վեպը, ինչպես նաև Է. Ֆասիհի «Վերջին մենություն», Մ. Ռավանփուրի «Հարոս» և Ի. Հասանբեյգի «Մասիհի առեղծվածը» պատմվածքները խոր համակրանքի արտահայտություն են հայ ժողովրդի հանդեպ: Արտաշեսի, Նյու Յորքի պանդոկներից մեկի ծեր, իմաստուն դռնապահ Արմենակի, Իրան-իրաքյան պատերազմի խիզախ հերոս Ալբերտ Մինասյանի, վեհանձն հայուհի Հասմիկի (ով հարազատ մոր մման սգում էր պատերազմում նահատակված իր որդիների մանկության ընկերոջ՝ Ալիի անդառնալի կորուստը) կերպարները իրենց հավաքական ազգային դիմագծով բացահայտում են իրական հասցեատիրոջ՝ Հայաստանին և հայ ժողովրդին:

Lilit Safrastyan (Armenia)

IMAGE OF ARMENIAN IN MODERN IRANIAN FICTION. SHAHRNUSH PARSIPUR “ASIEH BETWEEN TWO WORLDS”

Armenians are known to the world as a nation of rich culture and have left unique and culture legacy in every corner in the world.

Armenians are the largest Christian minority and probably the largest non Muslim community in Iran. Armenian Diaspora played a major intellectual, political, economical, cultural role in Iranian history. Portrayal of Armenian in modern Iranian literature, specifically in postrevolutionary Iranian fiction is masterly highlighted in the novel “Asieh Between Two Worlds” of prominent writer Shahrnush Parsipur.

Armenian sensibilities in Parsipur’s novel involve looks certain thematic concerns with family structures, history, religiosity and ethnicity. In “Asieh Between Two Worlds” many aspects revealed the depth of the Armenian character with the special emphasize of Armenians as peaceful people gifted with talent, thought, hospitality and good natured.

Ժենյա Քալանթարյան (Հայաստան)

ԱՐԴԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Շատերին կարող է թվալ, թե գրականության ճանաչողական գործառույթի վերաբերյալ հարցադրումը մեզ կարող է վերադարձնել դեպի խորհրդային գաղափարախոսություն: Սակայն այս հարցն ավելի ընդհանրացված, այսինքն՝ ոչ միայն գրականության, այլև արվեստի առումով քննվել է փիլիսոփայության մեջ՝ Պլատոնից մինչև Հեգել, մինչև մարքսիստներ: Այսօր նման հարցադրումը պայմանավորված է գիտաժողովի ուղղվածությամբ, այսինքն՝ գրականության մեջ կամ նրա միջոցով ժամանակաշրջանի մարտահրավերները ճանաչելու ցանկությամբ: Սակայն ճանաչողությունն ամենևին էլ պարզ գործընթաց չէ: Հարցի բարդությունը պայմանավորված է ժամանակակից գրականության մի քանի առանձնահատկություններով:

Նախ՝ Առաջին համաշխարհային պատերազմից հետո, վերջին հարյուրամյակում հայ գրականությունը չի ունեցել, թեկուզ որոնողական, թեկուզ փորձարարական մակարդակով այնպիսի բազմազանություն, ինչպես հիմա: Այդ բազմազանությունը կարելի է ասել, բնորոշ է ամբողջ հետխորհրդային երկրների գրականությունների համար: Այն տպավորությունն է, որ կարծես գրողները փորձում են ետ բերել կորցրած ժամանակի բացթողումները: «Չի կարելի այսօրվա գրական պրոցեսը դիտել միագլիժ ու միահավասար: Գրական ոճերն ու ժանրերը պարզորեն չեն հաջորդում մեկը մյուսին, այլ գոյություն ունեն միաժամանակ: ... Բոլորը գոյություն ունեն միանգամից և զարգանում են տարբեր ուղղություններով»¹, - նկատում է ռուս գրականագետը մայրենի գրականության վերաբերյալ: Հասկանալի է, որ սա ենթադրում է յուրահատուկ մոտեցում յուրաքանչյուր շերտի նկատմամբ:

Երկրորդ՝ 20-րդ դարի արվեստի և գրականության տեսաբանները առաջադրում են այնպիսի չափանիշներ, որոնց մեջ կյանքի ճանաչողությունն անմշան տեղ է գրավում: Օրինակ՝ ամերիկյան

¹ Современная русская литература / 1990 –егг, начало XXI-ого в. / Москва – С. Петербург, 2013 , с. 336

տեսաբաններ Ռ. Ուելլեքն ու Օ. Ուորենը գտնում են, որ գրական նյութը արտաքին ազդակներով՝ ժամանակով և միջավայրով բացատրելը, որով զբաղված են գրականության պատմաբանները, էական չէ, էականը գրականության՝ իբրև մտածողության ինքնուրույն բնագավառի և գրողի տաղանդի առանձնահատկությունների ընդգծումն է: Իսկ առանց նշված արտաքին գործոնների հնարավոր չէ ճշտել գրականության ճանաչողական դերը: Բրիտանական արվեստաբան Ջ. Քոլլինգվուդն առիասարակ ժխտում էր արվեստի նպատակայնությունը, գրեթե նման տեսակետ է հայտնում ամերիկացի տեսաբան Ջոնաթան Քուլլերը, իսկ ֆրանսիացի Ռ-ոլան Բարտը տվյալ տեքստից դուրս արտաքին գործոններով գրականության մեկնաբանությունը համարում էր բուհական քննադատության խնդիրը, որին էլ հակադրում էր ինտերպրետացիոն քննադատությունը: Երրորդ՝ ժամանակակից գրականությունը, բացառությունները չհաշված, ավելի ու ավելի է ազատվում հրապարակախոսական շերտերից, իսկ գրականագիտությունն առաջադրում է այնպիսի մեթոդներ, ըստ որոնց կարևորը ստեղծագործելու ընթացքն է, ոչ թե արդյունքը, որը յուրաքանչյուր ընթերցող կարող է ընկալել յուրովի:

Չորրորդ՝ արդի գրականության հարուստ բանարվեստը ճանաչողությունը վերածում է խորքային գործընթացի: Օրինակ՝ հեզմանքը Հովի. Գրիգորյանի և Էդ. Միլիտոնյանի պոեզիայում, Վ. Գրիգորյանի արձակում, գրոտեսկն ու պայմանականությունը Ն. Ադալյանի արձակում ու դրամատուրգիայում, աբսուրդին հարող իրավիճակները Կ. Խողիկյանի ու Գ. Խանջյանի դրամատուրգիայում խորքում ներկայացնում են ժամանակակից կյանքի հրամայականների դեմ հանդիման հայտնված մարդուն ու նրա խնդիրները:

Եվ, վերջապես, հետմոդեռնիստական քաղաքակրթական ու մշակութաբանական մեր դարաշրջանում «հետմոդեռնիստական կողմնորոշում ունեցող» շատ գրողներ հայտարարում են «նոր պայմաններում»՝ հին ձևով, այսինքն՝ ավանդական ռեալիստական ձևերով գրելու իրենց անկարողության մասին»²: Այսուհանդերձ, ժամանակակից հայ գրականության մեջ որոշակի մի շերտ հավատարիմ է դասական ռեալիզմի սկզբունքներին՝ փորձում է երևույթներն ընկալել իրենց պատճառահետևանքային կապերի մեջ, որն էլ ավելի տեսանելի ձևով է նպաստում կյանքի ճանաչողությանը: Ահա այդ պատճառահետևանքային կապերի ճանաչման կարևորությունն է ընդգծում արձակագիր Վրեժ Իսրայելյանը: Երևանում հայրը սպանել է որդուն, Գորիսում՝ որդին հորը, իսկ շուկայում թանկացել է լոլիկը, և ահա գրողը ճգնում է գտնել, թե ի՞նչ կապ կա դրանց միջև, և գրողի ջանքերին զուգահեռ ընթերցողը կյանքի ճանաչողություն է ձեռք բերում և գրողի հետ միասին որոնում պատճառները: «Ուզում են հասկանալ, թե ինչու է քաղաքակրթությունը սողեսող մոտենում իմ երկրին և ինչու չի ֆշշացնում խայթելուց առաջ: Ուզում են հասկանալ այն երգը, որը հնչելու է տարագիր հայի շուրթերից, քանզի չկա մի մարդ արար աշխարհում, որ «դրախտավայր» կոչի այն երկիրը, ուր ինքն ապրում է: Սովորաբար «դրախտավայր» տիտղոսին արժանանում են լքված ու կորսված հայրենիքները»³, - գրում է Իսրայելյանը: Իսկ այդ «դրախտավայր» երկրի, ինչպես նաև այն լքելու սոցիալական ու հասարակական պատճառների մասին են գրում Ռ. Հովսեփյանը, Հրաչյա Մաթևոսյանը, Հովհ. Երանյանը, Սուսաննա Հարությունյանը, Սիեր Բելլերյանը և շատ ուրիշներ:

Անհրաժեշտ է մի վերապահում-ճշգրտում: Անկախ գրողների տարբեր դիրքո-րոշումներից, նրանց նպատակադրումից կամ դրա բացակայությունից, գրականությունն իր բազմազան ձևերի միջոցով, յուրաքանչյուր դեպքում յուրովի, օբյեկտիվորեն նպաստում է կյանքի ճանաչողությանը: Սա ինքնին:

Գրականության այն շերտը, որն ունի որոշակի հրապարակախոսական շեշտվածություն, և դա առաջին հերթին քաղաքական ու քաղաքացիական պոեզիան է, ճանաչողության առումով ավելի շահեկան դիրքերում է: Պոեզիայի այս շերտի ցայտուն ներկայացուցիչները՝ Ա. Հարությունյանն ու Գ. Հովհաննեսը, իրենց բանաստեղծություններում հաճախ վավերական ստուգությամբ անդրադարձնում են ազգային ու հասարակական իրադարձությունները: Նման բանաստեղծությունները խորթ չեն նաև Հովհ. Գրիգորյանին, Է. Միլիտոնյանին և ուրիշների, բայց ինչպես վերջիններիս, այնպես էլ բանաստեղծներից շատերի նախասիրությունները չեն սահմանափակվում վերոհիշյալով:

Բանաստեղծների մի ուրիշ շերտ /Հ. Էդոյան, Հ. Մովսես, Հր. Թամրազյան և այլք, բաժանումն, անշուշտ, պայմանական է/, ասելիքն արտահայտում է խորհրդանիշներով ու փոխաբերություններով: Այս պոեզիան դժվար ընկալելի է, և նրա ճանաչողական նշանակությունը ընթերցողին հասցնելու համար անհրաժեշտ է քննադատի ուղղորդող մեկնաբանությունը: Սակայն ամբողջ խնդիրն այն է, որ նշված հատկանիշները այսպես միանշանակ տարանջատված չեն ո՛չ պոեզիայում և ո՛չ էլ արձակում, և ընդհանրապես ամբողջության մեջ ժամանակակից պոեզիան հարուստ է մշակութաբանական շերտերով, ինչը միանշանակ չի դարձնում նրա ընթերցումը:

² Западное литературоведение XX века. Энциклопедия. Москва, 2004, с. 326.

³ «Կայարան» գրական հանդես, տարեգիրք, 2012, էջ 61 / «Գլխիկտորուկ»/

Կան թեմաներ, որոնք անկախ իրենց դրսևորման սեռից ու ժանրից, համազգային հետաքրքրություն են առաջացնում, պարունակում են մեծ տեղեկատվություն և ունեն ճանաչողական անժխտելի արժեք: Դրանք ցեղասպանության և Արցախյան պատերազմի թեմաներն են: Ցեղասպանության վերաբերյալ թե մեզ մոտ, թե Սփյուռքում ստեղծվել է մեծաքանակ գրականություն, ինչն առանձին ուսումնասիրության նյութ է: Ինչ վերաբերում է Արցախյան պատերազմին, ապա այս բնագավառում ստեղծված բազում արժեքավոր գործերի մեջ առանձնանում են Լ. Խեչոյանի «Սև գիրք, ծանր բզեզ» վեպը և մի շարք պատմվածքներ:

«Սակայն գրականության արժեքավորման բովանդակային համընդհանուր /ունիվերսալ/ չափանիշների բացակայությունը կարծես անիմաստ է դարձնում նաև ճանաչողության կարևորությունը: Ռուս գրականագետ Ե. Ա. Յուրզանովան նկատում է, որ չափանիշների փոփոխության ու նորացման խանդավառությունը գրականության մեջ հանգեցրեց բուն իրականության վերացմանը, որի հետևանքով անհետացավ մարդկության փորձի ընդհանուր սուբստրատը»⁴: Մեր կարծիքով, այդ շրջանակում պետք է դիտարկել նաև գրականության մեջ ընդհանուր առմամբ դրական իդեալի վերացումը, որը վերածվում է չարի և բարու սահմանի վերացման: Եվ եթե մի դիտանկյունից դա կարելի է դիտարկել իբրև հրաժարում կյանքի անհիմն իդեալականացումից, մյուս կողմից կարելի է գնահատել իբրև բարու և արդարության նկատմամբ հավատի կորուստ: Որոշակի տարածում գտած այս մտայնությունը բնորոշ է Գ. Խանջյանի արձակին, որտեղ չարն ու բարին ապրում են ոչ այնքան կողք կողքի, որքան ներթափանցված, մույն մարդու մեջ: Գուցե այս տեսակետից ոչ ամենաբնորոշ, բայց վերջին օրինակը նրա «Ենոքի աչքը» վեպն է, որտեղ գրողը փորձում է համոզել, որ չկա մաքուր դրական և ամբողջովին բացասական մարդ, որ հրեշն ու հրեշտակը միասին են ապրում մույն անձի մեջ: Սա հենց հետմոդեռնիզմի գեղագիտության հատկանիշներից մեկն է, որ մարդուն ներկայացնում է միջինի կարգավիճակով, դրական ու բացասական բևեռների ոչ թե հակադրությամբ, այլ մերձեցմամբ: «Ենոքի աչքը» վեպում երկու խորթ եղբայրները բավականաչափ տարբեր են իրենց կենսափոխափայության մեջ ու վարքագծով, բայց աստիճանաբար նրանք իրենց միասնական գործերով կարծես մույնանում են, և վեպի վերջում երկու եղբայրն էլ իրար են նայում մույն՝ Ենոքի ապակյա աչքերով: Այսինքն՝ մի երրորդ հարթության վրա չարն ու բարին միաձուլվում են, գոյություն ունեն միասնաբար: Սա թերևս երևութական տպավորություն է, որովհետև, այնուամենայնիվ, Գոռն ունի պատասխանատվության զգացում և եղբոր նման չի լքում երկիրը հետևյալ պատճառաբանությամբ. «Ինքդ էլ գիտես, որ չլինող բան է, Գրոֆո, էսքան խնդիր կա, ո՞վ է լուծելու», ապա՝ «էդքան անտարբեր լինել չեմ կարող»⁵: Այստեղ կարելի էր վերջակետ դնել՝ գրողի կողմնորոշումը համարելով հստակեցված, եթե... գրքի շապիկի վրա իբրև հատուկ շեշտադրում չլինեին Գրոֆոյի՝ էքզիստենցիալիստական տիրադ հիշեցնող խոսքերը, որոնք փաստում են կյանքի ունայնությունը և ի չիք դարձնում գրողի լավատեսությունը. «Նա /մարդը –Ժ.Բ./ մույնիսկ նկարում է, գրում, երգում, աստվածներ մոգոնում, կազմակերպում, ինչ-որ համակարգեր կառուցում... ուզում է մի կերպ իմաստավորել կյանքը, բայց իմաստը չկա, ունայն է, չկա ու չկա, գուցե կա, սակայն ոչ մարդու համար, այլ Ուրիշների»⁶: Այսուհանդերձ, գրողը ստիպում է մտածել հասարակության տարբեր շերտերում գոյություն ունեցող ընկճախտի մասին, որը նրանց մեջ սպանում է ակտիվ գործունեության եռանդը:

Կարծում ենք, որ այս հայացքի շարունակությունը կամ տարբերակը պետք է տեսնել ժամանակակից երիտասարդական գրականության մեջ: Մարդկային բնագոյների ու կրթերի ժարգոնային լեզվով պատկերները, միտումնավոր գեեհկությունը մեր կարծիքով ուղղված են կյանքի գեղեցկացման և իդեալականացման դեմ և ոչ այնքան անհատական ճաշակի, որքան սերնդային ընդվզման արդյունք են: Այս երևույթը առիթ է տալիս վերաիմաստավորելու գրականության տեղի ու դերի հարցը: Որտե՞ղ է գրականության տեղը. գուցե իդեալականացման ու գեեհկացման մեջտեղում:

Ի լրումն ասվածի՝ պետք է ավելացնել, որ հետմոդեռնիստ գրողները կյանքի ուղղակի վերարտադրման խնդիր չեն դնում իրենց առջև, որի դեպքում գրականության ճանաչողական գործառույթը ավելի ակներև կլիներ: Ժամանակակից գրողը որևէ որոշակի ուղղության չի հարում, նա համադրում է տարբեր մեթոդները և հաճախ ինքն է իր քննադատը իր իսկ ստեղծագործության մեջ: Գրականության ճանաչողական դերը ինչ-որ չափով նվազում է, երբ ռեալիզմը գուգակցվում է միստիկայի, ֆանտաստիկայի, միֆակիրառության և ընդհանրապես իռացիոնալ աշխարհի պատկերների հետ: Որպես օրինակ կարելի է հիշել Հ. Վարդումյանի «Կանթեղ» վեպը, որտեղ Ղարաբաղյան պատերազմի դաժան դրվագների, օրագրային գրառումների և այլ հավաստի պատկերների կողքին մերթ ընդ մերթ հայտնվում է առարկայացած Ուսուցիչը /իմա՝ Զրիստոսը/ և հուշում, թելադրում, որ Արցախի ազատագրումը նախախնամության շնորհին էր: Որտե՞ղ է ճշմարտությունը: Գուցե իսկապես նրա մի մասը

⁴ Տե՛ս, Западное литературоведение, էջ 19:

⁵ Գուրգեն Խանջյան, Ենոքի աչքը, Երևան, 2012, էջ 278

⁶ Մույն տեղում, էջ 133

թաքնված է առեղծվածների և մեր՝ դեռևս լիովին չվերծանված գիտակցության խոր շերտերում: Նման միատիկական, ֆանտաստիկական, իռացիոնալ պատկերների կարելի է հանդիպել Լ. Խեչոյանի, Ռ. Նահապետյանի, Ն. Շահնազարյանի, Ա. Թովչյանի և այլոց գործերում:

Այս մի քանի թեև ոչ պատահական, բայց թռուցիկ օրինակները ցույց են տալիս, որ եթե գրականությունը ձեռք է բերել որակական նոր հատկանիշներ, ապա քննադատությունը պետք է մշակի նոր մեթոդաբանություն ու նոր չափանիշներ՝ հայտնաբերելու համար կյանքի և գրականության կապը, որը վերջին հաշվով երևում է միայն մեկնաբանության մեջ: Քննադատության դերը կարևոր է հատկապես, այսպես կոչված, վիրտուալ գրականության մեկնաբանության հարցում: Այդ գրականությունն այսօր զգալի տեղ է զբաղեցնում համացանցում և տպագիր մամուլում: Երկու դեպքում էլ կարելի է հանդիպել մտացածին ու հավելյալ աշխարհի պատկերների, ինչպես նաև ֆանտասմագորիկ, անհեթեթ ու զանազան իրադրությունների, որտեղ գերակշռում են ոչ բանական ու իրականը, այլ իռացիոնալը: Թերևս այս առումով անհրաժեշտ է հիշեցնել բանաստեղծի այն միտքը, թե խոսքը պետք է գենքի նման զգույշ օգտագործել: Պետք է, որպեսզի զանազանքը չդառնա իրականություն: Չէ որ դեռևս Աստվածաշունչն էր վկայում, թե ինչ լինում է իրականության մեջ, նախ լինում է խոսքի մեջ:

Անշուշտ, բերված սակավաթիվ և գրականության ամբողջ շերտավորումը չընդգրկող օրինակները բավարար չեն ժամանակակից հայ գրականության ճանաչողական նշանակությունը բացահայտելու համար: Սակայն մի բան աներկբա է. գրականությունն այսօր իր լավագույն դրսևորումների մեջ փաստում է մտածողության և բանարվեստի նոր որակ, նոր հայացք մարդու նկատմամբ և բազմակարծություն, որը թելադրված է հետմոդեռնիզմի գեղագիտությամբ:

Jenya Kalantaryan (Armenia)

THE COGNITIVE SIGNIFICANCE OF CONTEMPORARY ARMENIAN LITERATURE

Contemporary Armenian literature can be generally considered to be in the post-modern stage and its cognitive significance is, to a large extent, conditioned by the perception of the new poetics of literature. The novelty is expressed, among other things, through a juxtaposition of different methods of literature, by extinction of the borderline between the good and the evil, and by the absence of ideals and perspectives. This is a multi-layer literature targeting both mass readers at the one end and the intellectual reader at the other.

ԱՐՎԵՍԵ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Արարատ Աղասյան (Հայաստան)

ՄՈՌԱՅՎԱԾ ԱՆՈՒՆ. ՆԿԱՐԻՉ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՔՐԻՍՏԱՓՈՐ (ԽԱՉԱՏՈՒՐ) ՀՈՒՍԻԿՅԱՆՑ (1840-1910)

Վերջերս Դոնի Ռոստովում լույս տեսավ Վալերի Ռյազանովի «От первого приюта до наших дней. Из истории изобразительного искусства Нахичевани-на-Дону» (Ростов-на-Дону: Изд-во ООО «Ковчег», 2011) վերտառությամբ արժեքավոր աշխատությունը, որը հեղինակի երկարամյա պրպտումների արդյունքն է: Գրքում ներկայացված են Նոր Նախիջևանում և Դոնի Ռոստովում երբևէ ապրած հայ նկարիչների ու քանդակագործների ստեղծագործական դիմանկարները: Մեզ հատկապես հետաքրքրեց նկարիչ-ճարտարապետ Քրիստափոր Հուսիկյանցի կենսագրությունը, քանզի ժամանակին՝ աշխատելով Հայաստանի և Ռուսաստանի արխիվներում ու գրադարաններում, մենք ուշագրավ փաստեր ենք գտել այսօր մոռացված այդ արվեստագետի մասին¹:

Վալերի Ռյազանովի ուսումնասիրության շնորհիվ պարզվել է, որ Նոր Նախիջևանում 1841-ին (մեր տվյալներով՝ 1840-ին – Ա. Ա.) ծնված Քրիստափոր Հուսիկյանցը՝ ավարտելով Մոսկվայի արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտի վարժարանը, ընդունվել է Պետերբուրգի գեղարվեստի կայսերական ակադեմիա, որտեղ սովորել է ավելի քան 20 (մեր տվյալներով՝ շուրջ 30 – Ա. Ա.) տարի՝ ընդմիջումներով:

Ակադեմիայում նա մտերմացել է Իլյա Ռեպինի հետ: 1867-ին վերջինս ստեղծել է Հուսիկյանցի գրաֆիկական դիմանկարը: Ութսուն տարի անց՝ 1947-ին, երբ այդ գծանկարը դեռ գտնվում էր արտասահմանյան մասնավոր հավաքածուներից մեկում, արվեստաբան Ա. Ջամոշկինը գրել է, որ «Հուսիկյանցի արտաքինը հետագայում Ռեպինի համար նյութ ծառայեց «Պրոպագանդիստի ձերբակալումը» (1892) կտավում հեղափոխականի կերպարն ստեղծելու համար»²: 1980-ականներին Հուսիկյանցի այդ դիմանկարը գնել է Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահը: Ավելացնենք, որ Ռեպինի գծանկարից շուրջ չորս տասնամյակ անց՝ 1908-ին, Քրիստափոր Հուսիկյանցի կերպարին է դիմել նաև հայ տաղանդավոր գեղանկարիչ Ստեփան Աղաջանյանը:

Անդրադառնալով Հուսիկյանցի ստեղծագործական ժառանգությանը՝ Վ. Ռյազանովը կանգ է առնում Լև Տոլստոյի ձեռագրերից մեկի ստվերագծման եղանակով կատարված՝ ռուս հանճարեղ գրողի դիմանկարի վրա, որը վերջինս իր ծննդյան 80-ամյակի առիթով նվեր է ստացել Հուսիկյանցից: Ռյազանովը հիշատակում է նաև Դոնի Ռոստովի երկրամասային թանգարանում գտնվող՝ Ռաֆայել Պատկանյանի դիմանկարը (1906), որը նույնպես լուծված է վերջինիս ձեռագիր էջերից մեկը գրիչով շեշտելու և այդպիսով գրողի կերպարը տողերի տակից «երևակելու» ինքնատիպ հնարքով: Խոսելով հայ արվեստագետի ճարտարապետական աշխատանքների մասին՝ Ռյազանովը գրում է. «Պահպանվել է նաև հյուրանոցային նրա նախագիծը՝ համարներով, խանութներով և սրճարաններով – եռահարկ մի շինություն արտաքին մասերի ղեկորատիվ ներդաշնակ ձևերով, որտեղ կիսաշրջան պատուհանների լուծումների մեջ նկատելի են հայկական ճարտարապետության ավանդական տարրերը»³:

Ինչպես տեսնում ենք, Վ. Ռյազանովը հայ մոռացված արվեստագետի ստեղծագործական կյանքը լուսաբանող կարևոր փաստեր ու տեղեկություններ է գտել, որոնք գալիս են լրացնելու ոչ միայն Նոր Նախիջևանի՝ հայ գաղթօջախի, այլև նոր շրջանի ազգային կերպարվեստի պատմության մեջ եղած բացերից մեկը:

Սակայն Ռյազանովի գրքում Քրիստափոր Հուսիկյանցի մասին կենսագրական ակնարկը փաստական ճշտումների և լրացումների կարիք ունի: Արվեստաբանի ուշադրությունից, մասնավորաբար, վրիպել են հայկական և ռուսական հին ու նոր մամուլի էջերում, առանձին գրքերում ու ժողովածուներում զետեղված հրապարակումներից մի քանիսը, իսկ գլխավորը՝ Հայաստանի և Ռուսաստանի

¹ Տե՛ս Ա. Աղասյան, *Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում*, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 2009, էջ 255:

² Տե՛ս В. Рязанов, *От первого приюта до наших дней. Из истории изобразительного искусства Нахичевани-на-Дону*, Ростов-на-Дону, Изд-во ООО «Ковчег», 2011, с. 19:

³ Նույն տեղում, էջ 20:

արխիվներում, քանգարաններում ու մասնավոր հավաքածուներում գտնվող՝ Հուսիկյանցի գծանկարները, վիմագիր և ջրաներկ աշխատանքները:

Մեր հայտնաբերած այդ նոր փաստերի, տեղեկությունների ու ստեղծագործությունների մասին շարադրանքն սկսենք արվեստագետի ուսանողական տարիներից: Վկայված է, որ 1874-ին նա Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի խորհրդի որոշմամբ արժանացել է արծաթե մեդալի՝ Վոլգայի գետափնյա Ռիբինսկ քաղաքի թատրոնի շենքը նախագծելու համար⁴:

Ռյազանովի գրքում հիշատակված՝ Ֆեոդոր Դոստոևսկու և Տարաս Շևչենկոյի դիմանկարների վերաբերյալ հավելենք հետևյալը: Դոստոևսկու հետմահու դիմանկարը ստեղծվել է 1883-ի հոկտեմբերի 30-ին՝ գրողի հանրահայտ լուսանկարներից մեկի հիման վրա: Այս աշխատանքը հայ նկարիչը նվիրել է Դոստոևսկու այրուն՝ Ա. Գ. Դոստոևսկայա-Սնիտկինային՝ վերջինիս ջանքերով այդ տարիներին ստեղծվող, Ֆեոդոր Դոստոևսկու հիշատակը հավերժացնող թանգարանի համար⁵: Տարաս Շևչենկոյի կենդանագիրն ստեղծվել է 1884-ին՝ նրա մահից 23 տարի անց: Այստեղ Հուսիկյանցն օգտվել է Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ, շվեյցարացի լուսանկարիչ Հայնրիխ Դենյերի՝ 1859-ին կատարված լուսանկարից:

Հայաստանի ազգային պատկերասրահի հայկական գրաֆիկայի բաժնում է պահվում Հուսիկյանցի ուսանողական շրջանի ցայտօր հայտնի ամենավաղ, այն էլ բնօրինակ ստեղծագործություններից մեկը՝ «Ավերակ վանք» ջրանկարը, որն արվեստագետի միակ աշխատանքն է պատկերասրահում: Ճարտարապետական այս բնանկարի աջ կողմում, ստեղծման տարեթվից բացի, նկարչի ձեռքով ևս մի կրճատ մակագրություն կա՝ «Քրիստ. Թուրք.», որը պատկերված հուշարձանի ազգային շենքված ձևերի հետ մեկտեղ ենթադրել է տալիս, որ ներկայացված ավերակ վանքը Արևմտյան Հայաստանի մեր միջնադարյան շինություններից է: Բայց մասնագետների հետ խորհրդակցելուց հետո էլ մեզ չհաջողվեց պարզել, թե կոնկրետ որ վանքն է վերարտադրված Հուսիկյանցի նկարում: Եվ եթե մեր ենթադրությունը հաստատվի, ապա կարող ենք համոզված ասել, որ վերջինս այդ տարիներին եղել է Արևմտյան Հայաստանում, քանզի ակնհայտ է, որ էտյուդային թարմ տպավորություն թողնող այս պատկերը կատարված է ոչ թե լուսանկարից, այլ տեղում, բացօթյա միջավայրում, այլապես հեղինակը չէր նշի կատարման ոչ միայն տարին, ամիսը և օրը (13 հոկտեմբեր, 1868), այլև ստույգ ժամը, ինչն առկա է Հուսիկյանցի ջրանկարում: Մեր ենթադրությունն է՝ ավելի լուրջ հիմքեր է ստանում այն պատճառով, որ Հայաստանի ազգային պատկերասրահի հայկական գրաֆիկայի բաժնում առիթ ունեցանք ծանոթանալու Հուսիկյանցի՝ նույն թվականին ստեղծված ևս 8 ջրաներկ աշխատանքների սև-սպիտակ փոքրաչափ լուսանկարների հետ: Պարզվեց, որ Արշակ Ֆեթվաճյանի՝ Անիի ճարտարապետական հուշարձանները վերարտադրող ջրանկարներից շուրջ չորս տասնամյակ առաջ Հուսիկյանցը նմանատիպ մի շարք տեսարաններ է վրձնել. «Էջմիածնի վանքը», «Էջմիածնի լիճը և վանքը», «Գեղարդի վանքը», «Օշականի եկեղեցին», «Ս. Հռիփսիմե եկեղեցին», «Աշտարակի Կարմրավոր եկեղեցին», «Մուղնու Ս. Գևորգ եկեղեցին», «Խոր Վիրապի վանքը»: Հուսիկյանցի այդ ջրանկարները Հայաստանի պետական պատկերասրահ են բերվել 1969-ին Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանից, իսկ հետագայում՝ 1980-ական թվականներին, տեղափոխվել Սարդարապատի ազգագրության թանգարան⁶:

Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում է պահվում հայ մեծ դերասան Պետրոս Ադամյանի՝ լուսանկարից արված վիմագիր պատկերը, որի ստեղծման տարեթվից ու վայրից, ինչպես նաև սեփական ստորագրությունից բացի, Հուսիկյանցը հետևյալ մակագրությունն է թողել. «Доброму другу Адамяну»: Նկարն ստեղծվել է 1884-ի փետրվարի 24-ին Պետերբուրգում, ուր դերասանը հյուրախաղերի էր եկել Մոսկվայից: Ակադեմիկոս Ռուբեն Չարյանն իր «Ադամյան. կյանքը» աշխատության մեջ գրում է. «Պետերբուրգ հասած Ադամյանին անմիջապես շրջապատում են Կուսիկյանը, նախնականցի բժիշկ Աստվածատրյանը, փաստաբան Սիմոնյանը...»⁷: Չարյանը չի տալիս Կուսիկյանի անունը և չի նշում նրա ով լինելը, սակայն հաշվի առնելով, որ այդ ժամանակ մեզ հայտնի Կուսիկյաններից առաջինը՝ Կարապետ Կուսիկյանը, ընդամենը քսան տարեկան էր և սովորում էր Մոսկվայի պետական համալսարանում, իսկ նրա որդին՝ Հովսեփ Կուսիկյանը դեռ չէր էլ ծնվել, կարելի է ենթադրել, որ տվյալ դեպքում խոսքը հենց Պետրոս Ադամյանի վերոհիշյալ դիմանկարի հեղինակ

⁴ Стів Художники народов СССР. Биобиблиографический словарь. Том третий (Георгиев-Елагин), Москва, «Искусство», 1976, с. 251:

⁵ Стів А. Г. Достоевская, Библиографический указатель сочинений и произведений искусства, относящихся к жизни и деятельности Ф. М. Достоевского: 1846-1903, Санкт-Петербург, Тип. П. Ф. Пантелеева, 1906, с. 249; А. Г. Достоевская, Каталог Музея Ф. М. Достоевского в Москве, Российская государственная библиотека (Москва), Ф. 93, раздел II, картотека 3, единица хранения 3, отдел VIII, лист 54, № 73:

⁶ Հուսիկյանցի «Ավերակ վանք» ջրանկարի և ճարտարապետական մյուս տեսարանների հետ ծանոթանալու, դրանք լուսանկարելու թույլտվության, ինչպես նաև դրանց մասին կարևոր տեղեկություններ ստանալու համար շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանին, պատկերասրահի հայկական գրաֆիկայի բաժնի վարիչ Մարինա Հակոբյանին և նույն բաժնի ֆոնդապահ Սեդա Խանջյանին:

⁷ Ռ. Չարյան, Ադամյան. կյանքը, Երևան, Հայպետհրատ, 1961, էջ 230:

Քրիստափոր Հուսիկյանցի (կամ Հուսիկյանի) մասին է, թեև Ջարյանի գրքում այդ դիմանկարը չի հիշատակվում:

Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում հայտնաբերվեցին Հուսիկյանցի ևս մի քանի դիմանկարներ: Դրանք են կաթողիկոս Սկրտիչ Խրիմյանի (1893, վիմագրություն), Բաֆֆու (1906, թուղթ, տուշ) և Միքայել Նալբանդյանի (1904, ստվարաթուղթ, ջրաներկ) փոքրաչափ կենդանագրերը⁸: Միքայել Նալբանդյանի օվալաձև, դափնե պսակով եզերված դիմանկարի ներքևում, բանաստեղծի ստորագրությունից զատ, կարդում ենք նրա «Ազատություն» բանաստեղծության առաջին ութնյակը⁹:

Հետաքրքիր նոր մանրամասներ իմացանք Ռ-յազանովի մենագրության մեջ ակնարկված՝ Լև Տոլստոյի դիմանկարի առնչությամբ: Դիմելով Հուսիկյանցի՝ «գեղագրական եղանակով» կատարված այդ աշխատանքին, արվեստաբան Ա. Կուզմինը գրում է. «Ուժգնացնելով և թուլացնելով գրչի սեղմումը՝ նկարիչն այն տպավորությանն է հասել, կարծես ձեռագրի բարակ ցանցի տակից երևում է գրողի դիմանկարը... Ներքևի ձախ անկյունում մի փոքրիկ գծանկար կա՝ Լև Տոլստոյը ճերմակ կարտուզը գլխին և մուգ զգեստով քայլում է արորի ետևից, որին մի սպիտակ փոքրիկ ձիուկ է լծված...»¹⁰: Դատելով բերված տողերից՝ Տոլստոյի դիմանկարի մեջ «ընդելուզված» այս գծանկարում Հուսիկյանցը պարզապես ընդօրինակել է Իլյա Ռեպինի «Հողագործը: Լև Տոլստոյը Յասնայա Պոլյանայի արտերում» (1887) հայտնի կտավը:

Գրականագետ Բ. Ռեիզովի հոդվածից տեղեկանում ենք, որ Տոլստոյի այդ վիմատիպ դիմանկարից բացի, Հուսիկյանցը միաժամանակ ստեղծել և Տոլստոյի կնոջը՝ կոմսուհի Սոֆյա Անդրեևնային է ուղարկել գրողի մեկ այլ՝ մանրադիր տափակ գետնաքարի վրա կատարված, մուժիկի տրեխ և դափնու տերև հիշեցնող ոսկե շրջանակով ու փետրավոր ճարմանդով մետաղազարդ դիմանկար, որն ստանալուն պես կոմսուհին հետևյալ նամակն է հղել Հուսիկյանցին. «Ողորմած տեր Խաչատուր Կյուրեղի, անչափ շնորհակալ եմ Ձեզ գեղեցիկ նկերի համար, որն ամաչում եմ ընդունել, քանի որ ոչնչով դրան չեմ արժանացել: Լև Նիկոլաևիչը և ես, եկուսս էլ շատ ենք զարմանում դիմանկարի նուրբ աշխատանքով... Ձեր մետաղազարդը կրելու եմ շնորհակալությամբ և հիշելու եմ ձեզ: Ընդունեցեք իմ հարգանքի և լավագույն մադրանքների հավաստիքը»¹¹:

Քրիստափոր Հուսիկյանցը Հովհաննես Այվազովսկու մտերիմներից էր: 1888-ի մայիսին Պետերբուրգում հրատարակվող «Արաքս» հանդեսը ծավալուն հոդված է նվիրել աշխարհահռչակ ծովանկարչին, ուր հանգամանորեն նկարագրել է 1887-ի սեպտեմբերի 26-ին վերջինիս ծննդյան 70-ամյա և ստեղծագործության 50-ամյա հոբելյանների առիթով Գեղարվեստի կայսերական ակադեմիայի նիստերի դահլիճում կայացած հանդիսությունը: Թվարկելով Պետերբուրգի հայ ծխականներին ներկայացնող պատվիրակներին, թղթակիցը տալիս է նաև «նկարիչ Հուսիկյանցի» անունը¹²: 1890-ի դեկտեմբերին Հուսիկյանցը Գեղարվեստի ակադեմիայի սրահներում Այվազովսկու ցուցահանդեսի բացման կապակցությամբ ստեղծում է վերջինիս վիմատիպ դիմանկարը, օգտվելով ծովանկարչի 1888 թվականի լուսանկարից: Հուսիկյանցի այդ վիմագրությունը շուտով արտատպում է Թիֆլիսի «Արձագանք» շաբաթաթերթը¹³, որի առաջին էջում տեսնում ենք նաև Հուսիկյանցի՝ Հովսեփ Շիշմանյանին (Շերեմեյ) պատկերող վիմագրությունը: Այն ևս կատարվել է լուսանկարից՝ հայ վիպասանի մահվան երրորդ տարեկիցի առթիվ:

Պատմելով Վիշնի Վոլոչյոկ քաղաքից ոչ հեռու, Մստա գետի ափին 1884-ին Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի ուսանողության համար կառուցված ամառանոցի, դրա բնակիչների և այցելուների մասին, արվեստաբան Յուրի Եպատկոն տալիս է նաև «սակավաճանաչ նկարիչ Քրիստափոր (Խաչադուր) Գուսիկովի» անունն ու նշում, որ 1884-ի և 1885-ի ամռան ամիսները վերջինս անց է կացրել ուսանողական այդ հանգստավայրում¹⁴: Հենց այնտեղ էլ նա ստեղծել է ցարական պալատի

⁸ Պետրոս Ադամյանի և Հուսիկյանցի վերոհիշյալ դիմանկարներին տեղում ծանոթանալու, դրանք լուսանկարելու հնարավորության համար շնորհակալություն ենք հայտնում Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն Կարո Վարդանյանին և նույն թանգարանի հուշային բաժնի ֆոնդապահ Կարինե Գրիգորյանին:

⁹ Գրականագետ և թատերագետ Գառնիկ Ստեփանյանն իր հոդվածներից մեկում, անդրադառնալով Հուսիկյանցի այս աշխատանքին, ավելացնում է, որ դրանից երկու տարի առաջ՝ 1902-ին, վերջինս «հրատարակել է Նալբանդյանի կենսագրությունը՝ ձեռքով այնպես գրված, որ նայողը տեքստի ֆոնի վրա նկատում է Նալբանդյանի նկարի սիլուետը» (Գ. Ստեփանյան, Միքայել Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծության հարյուրամյա կյանքը: Հայկական ՍՍՌ-ի գիտությունների ակադեմիայի տեղեկագիր: Հասարակական գիտություններ, Երևան, 1954, № 11, էջ 64):

¹⁰ А. И. Кузьмин, *Лев Толстой и русские художники*. – Литература и живопись. Сборник статей, Ленинград, Изд-во «Наука», 1982, с. 178.

¹¹ Տե՛ս Բ. Рензов, *Об одном юбилейном подарке Л. Н. Толстому*. – Русская литература, Ленинград, 1964, № 2, с. 172:

¹² Տե՛ս Մ. Զ., *Համբավվոր հայագի նկարիչ Հովհաննես Այվազովսկի*: Արաքս, Սանկտ Պետերբուրգ, 1888, գիրք Բ, մայիս, էջ 98-105:

¹³ Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 10 մարտի 1891, №1, էջ 9:

¹⁴ Տե՛ս Ю. Епатко, *Художники на Академической даче и в имени Волковых-Манзей в Березках*. – Вышневолоцкий историко-краеведческий альманах («ВИКА»), Вышний Волочек, 1999, № 3, с. 3-13:

որսապետ Միխայիլ Վոլոկովի և գնդապետ Նիկոլայ Մանգեյի մեծադիր դիմանկարները, որոնցից առաջինը կատարված է իտալական մատիտով և պահվում է Վիշնի Վոլոչյոկի երկրամասային թանգարանում, իսկ յուրաներկ երկրորդ կտավը Յու. Եպատկոյի սեփականությունն է և գտնվում է Պետերբուրգում:

Հուսիկյանցի գծանկարներից հայտնի են մաս իշխան Վլադիմիր Բարյատինսկու անթվակիր դիմանկարը և ֆրանսիացի դերասան ու թատրոնի տեսաբան Բենուա-Կոնստան Կոկլենի՝ Կոկլեն-ավագի կենդանագիրը (1889):

Ժամանակին Հուսիկյանցը Ռուսաստանի պետական կանոնավոր փոստի նշանավոր գործիչների դիմանկարների մի ամբողջ շարք է ստեղծել: Մեզ հաջողվեց գտնել այդ աշխատանքներից երկուսի լուսանկարները, որոնցում պատկերված է Ռուսաստանի պետական կանոնավոր փոստի կազմակերպիչ Աֆանասի Օրդին-Նաշչոկինը (1605-1680):

Վկայություններ կան Նոր Նախիջևանում 1893-ին քաղաքի գլխավոր ճարտարապետ՝ հայազգի Նիկոլայ Դուբրախի (Դուբրախյան) նախագծով կառուցված Եկատերինյան օրիորդաց դպրոցի վերակառուցման մրցույթում Հուսիկյանցի ակտիվ մասնակցության մասին: Արկադի Հայրումյանի և Լյուբով Վոլոշինովայի՝ Ն. Դուբրախին նվիրված հոդվածից տեղեկանում ենք, որ անցած դարասկզբին Նոր Նախիջևանի քաղաքային դումայի հայտարարած մրցույթն ընդամենը երկու մասնակից ունեցավ, որոնցից մեկն ինքը՝ Դուբրախն էր, իսկ մյուսը՝ այդ դպրոցի նկարչության դասատու Քրիստափոր Հուսիկյանցը¹⁵: Դուման առաջնությունը տվեց վերջինիս նախագծին, իսկ Դուբրախը վերահսկեց շինարարական աշխատանքները, որոնք ավարտվեցին 1910-ին՝ նույն թվականին, երբ Հուսիկյանցը հեռացավ կյանքից:

Ararat Aghasyan (Armenia)

FORGOTTEN NAME: ARTIST AND ARCHITECT CHRISTOPHER (KHACHATUR) HUSIKYANTS (1840-1910)

Not long ago, a Valery Ryazanov book “From the First Asylum to These Days. From the History of Visual Arts of Nakhijevan-on-Don” came out in Rostov-on-Don (Rostov-on-Don: “Kovcheg” Publishers, Ltd, 2011, 156 p.), where the life and career of the presently forgotten artist and architect Christopher (Khachatur) Husikyants is also sketched out. Little known facts and figures of his creative activity are quoted. Unfortunately, some essential details of the Armenian master's life and quite a number of his works from state museums and private collections have been overlooked by V. Ryazanov. This presentation is to make up for that gap.

Աննա Ասատրյան (Հայաստան)

ԴԱՆԻԵԼ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

2013-ին լրացավ ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1945), վաստակավոր ուսուցիչ (1944), կոմպոզիտոր, խմբավար, երգիչ, մանկավարժ, Բաթումի (1922) և Լենինականի (1924) երաժշտական ստուդիաների հիմնադիր, իր ստեղծագործությամբ և ակտիվ գործունեությամբ հայ պրոֆեսիոնալ երաժշտության և խմբերգային արվեստի զարգացմանը զգալի ավանդ մատուցած Դանիել Ղազարյանի (1883-1958) ծննդյան 130-ամյա հոբելյանը:

Դ. Ղազարյանի երաժշտական ժառանգությունն իր ամբողջության մեջ դեռևս մնում է մինչև վերջ չուսումնասիրված ու չարժեքավորված, և հայ երաժշտագիտությունը տակավին չհատուցած պարտք ունի նրա հիշատակի առջև: 1973-ին Հայաստանի կոմպոզիտորների միությունը լույս է ընծայել Դանիել Ղազարյանի «Ընտիր երկեր» ժողովածուն¹, որը կազմել էր արվեստագիտության թեկնածու Մարգարիտ Բրուտյանը: Նա էլ հեղինակել էր առաջաբանը: 1977-ին Հայաստանի երգչախմբային ընկերության ջանքերով լույս է տեսել Արտակ Տոնիկյանի «Դանիել Ղազարյան» գրքույկը²: Արցախցի երաժիշտներին նվիրված իր մենագրության ակնարկներից մեկը Յիցիլիա Բրուտյանը հատկացրել է

¹⁵ Տե՛ս **А. Айрумян, Л. Волошинова**, *Городской архитектор Нахичевани-на-Дону Николай Никитич Дурбах*. – Донской современник, Ростов-на-Дону, 1999. Электронная версия (http://www.donvrem.dspl.ru/Files/article/m19/2/art.aspx?art_id=368):

¹ Տե՛ս **Դ. Ղազարյան**, *Ընտիր երգեր*, Երևան, «Հայաստան» հրատ., 1973:

² Տե՛ս **Ա. Տոնիկյան**, *Դանիել Ղազարյան*, Երևան, 1977, 70 էջ:

Դանիել Ղազարյանին (2000)³: Հիշատակության է արժանի կոմպոզիտորի ծննդյան 80-ամյակի կապակցությամբ Սամսոն Գասպարյանի հոդվածը՝ Դ. Ղազարյանի երգերի մասին, որը հրատարակվեց 1963-ին, «Սովետական արվեստ» հանդեսում⁴: Հետագայում Արկադի Շեկունցն է անդրադարձել Դ. Ղազարյանին՝ «Հայ խմբավար կոմպոզիտորները» գրքում⁵ (1986) և «Կրթությունը և գիտությունը Արցախում» հանդեսում տեղ գտած «Լարաբադի անվանի հայ երաժիշտները» հոդվածում⁶ (2005): Կոմպոզիտորի գործունեության Շուշվա և Լենինականի շրջաններին ենք անդրադարձել մեր հոդվածներում⁷:

Դանիել Ղազարյանը ծնվել է 1883 թ. մայիսի 17-ին⁸, Շուշիում, ուսուցիչ, դուբեկան ձայնով և նուրբ լսողությամբ օժտված, երգ-երաժշտության մեծ սիրահար, Շուշվա թեմական դպրոցի երգ-երաժշտության ուսուցիչ Տեր-Գարեգին քահանա Հովհաննիսյանից հայկական ձայնագրությունը սովորած Ավագի ընտանիքում, որի տոհմը՝ «Ասլը», սերում էր Լեռնային Լարաբադի Նիմգի գյուղից: Իր լավ ձայնի և հայկական ձայնագրության իմացության շնորհիվ Ավագը հաճախակի հանդես է եկել որպես դայիր: Մայրը՝ Մանուշակը, նույնպես լավ ձայն ուներ և հարմոն էր նվագում: Երեխան ժառանգում է իր ծնողների երաժշտական ընդունակությունները: Յոթ տարեկանում Դանիելն արդեն վարժ սրինգ էր նվագում, իսկ մի քանի տարի անց՝ ջութակ, նաև՝ թառ: Ուշագրավ է այն փաստը, որ Դանիելն ևս բազմանգամ ընտանիքում երգում էին բոլորը. բոլորն էլ ունեին լավ ձայն, նաև՝ նվագում էին: Եվ պատահական չէ, որ Դանիելի քույրը՝ Անահիտ Ղազարյանը, դարձավ երգչուհի և երաժշտություն էր դասավանդում Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում:

Շուտով երաժշտության սիրահար Ավագը, տեսնելով որդու հրաշալի ձայնն ու երաժշտական ձիրքը, որոշում է, որ որդին պիտի քահանա դառնա (հետաքրքիր գուգադիսությամբ ժամանակին ճիշտ այդպես էր որոշել նաև Քրիստափոր Կարա-Մուրզայի հայրը): Սակայն մայրն առարկում է, որ իր զավակը հոգևորական դառնա: Հայրը որոշում է երաժշտական բացառիկ ընդունակություններով օժտված զավակին տալ Շուշվա թեմական դպրոցը, որտեղ երգ-երաժշտության դասավանդումը գտնվում էր բարձր մակարդակի վրա, իսկ դպրոցի երգեցիկ խումբը հաճախ էր համերգներով հանդես գալիս՝ կատարելով ժողովրդական և հայրենասիրական երգեր:

1892-ին Շուշվա Մարիամյան և թեմական դպրոցներում որպես երաժշտության դասատու աշխատանքի է հրավիրվում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շրջանավարտ, քսանամյա Ստեփան Դեմուրյանը (1872-1934): Կարճ ժամանակ անց նա դառնում է Շուշվա աշակերտության ամենասիրելի ուսուցիչը: «Շատերը սիրեցին նրան ու նրա առարկան, - հետագայում իր ուսուցչի մասին կգրի նրա երախտապարտ ու արժանավոր սանը՝ Դանիել Ղազարյանը: - Եվ եթե թեմական դպրոցը տվեց բազմաթիվ գրագետ երաժշտասերներ, որոնք շնորհակալ գործունեություն ծավալեցին Լարաբադում և այլուր, ապա դրա համար նախ և առաջ պարտական ենք Ստեփան Դեմուրյանին»⁹: Բախտորոշ էր նրանց հանդիպումը Դանիելի համար: Ահա այստեղ էլ վճռվում է երաժիշտ դառնալու նրա ճակատագիրը: Տարիներ անց, իր օրս 22 «Հօռովելը»՝ գրված վեցձայն խառը երգչախմբի համար, Դ. Ղազարյանը պիտի ընծայագրեր այսպես. «Նվիրում եմ առաջին ուսուցչիս՝ Ստեփան Դեմուրեանին»: Եվ պատահական չէ, որ հետագայում նա, հետևելով իր ուսուցչի՝ Դեմուրյանի օրինակին, պիտի երգեցիկ խմբեր կազմեր ու համերգներով հանդես գար տարբեր հայաշատ քաղաքներում:

Դպրոցական տարիներին ի հայտ են գալիս Դանիելի երաժշտական բացառիկ ընդունակությունները. նա ակտիվորեն մասնակցում է Ստեփան Դեմուրյանի կազմակերպած քառաձայն երգեցիկ խմբին, որը տոն օրերին երգում էր ճարտարապետական նշանավոր կոթողի՝ Շուշիի Ղազանյեցոց Ս. Ամենափրկչի եկեղեցում, իսկ սովորական կիրակիների պատարագներին Դանիելն իր հրաշալի ձայնով կատարում էր մեներգերը և հաճախակի ելույթ ունենում դպրոցական տարբեր հանդեսներում:

Շուտով Ղազարյանը հարկադրված ընդհատում է ուսումնառությունը և բազմանգամ ընտանիքի հոգսերը հոգալու նպատակով զբաղվում կոշկակարությամբ՝ օգնելով հորն ու ավագ եղբորը: Շուրջ վեց տարի տևած արհեստավորի գործունեության ընթացքում անգամ շնորհաշատ պատանին շարունակում էր համագործակցել Ստեփան Դեմուրյանի հետ, երգում էր նրա ղեկավարած երգեցիկ խմբում,

³ Տե՛ս **Յ. Բրուսյան**, *Երգը, Շուշիից հորդող երգը. Դանիել Ղազարյան*: Արցախյան ոգին երաժշտության ծիրի մեջ, Երևան, 2000, էջ 117-122:

⁴ Տե՛ս **Ս. Գասպարյան**, *Նրա երգերը (Դանիել Ղազարյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)*: «Սովետական արվեստ», 1963, N 7, էջ 56:

⁵ Տե՛ս **Ա. Շեկունց**, *Դանիել Ղազարյան*: - Հայ խմբավար կոմպոզիտորները, Երևան, 1986, էջ 60-63:

⁶ Տե՛ս **Ա. Շեկունց**, *Լարաբադի անվանի հայ երաժիշտները*: Կրթությունը և գիտությունը Արցախում, 2005, 3-4, էջ 109:

⁷ Տե՛ս **Ա. Ասատրյան**, *Դանիել Ղազարյանի կյանքն ու գործունեությունը Շուշիում*: Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2007, էջ 233-243: **Ա. Ասատրյան**, *Դանիել Ղազարյանը և Լենինականը*: Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, էջ 227-231:

⁸ Դ. Ղազարյանի մասին առկա գրականության մեջ շրջանառվում է նաև մայիսի 5-ը (տե՛ս Ա. Տոնիկյանի աշխատությունը և Ա. Շեկունցի հոդվածները):

⁹ Տե՛ս **Ա. Տոնիկյան**, նշվ. աշխ., էջ 9:

մեներգում հանդեսներին ու համերգներին: Վեցամյա ընդհատված կրթությունից հետո Ստեփան Դեմուրյանի, Գրիգոր Սյունիի և այլոց խորհրդով Դ. Ղազարյանը 1907-ին հեռանում է Շուշիից և երաժշտական կրթություն ստանալու նպատակով մեկնում Բաքու: Նա ընդունվում է Բաքվի երաժշտական ուսումնարանի վոկալ բաժինը, զուգահեռաբար հաճախում Բաքվի բանվորական գիշերային ինստիտուտի ռուսական և օտար լեզուների ֆակուլտետները՝ ցուցաբերելով բարձր առաջադիմություն: Ղազարյանն այստեղ կազմակերպում է իր անդրանիկ երգեցիկ խումբը՝ բաղկացած բանվորներից և ելույթներ կազմակերպում Բաքվում, Բալախանում և այլուր: Ուսումնական տարին ավարտելուն պես Ղազարյանը վերադառնում է հայրենի Շուշի և իր ընկերների հետ մասնակցում այստեղ կազմակերպվող երաժշտական միջոցառումներին: 1908-ի աշնանը նա մեկնում է Թիֆլիս, որտեղ էլ սկիզբ է առնում նրա երաժշտական բեղուն գործունեությունը: Այստեղ նա ստանում է իր երաժշտական բարձրագույն մասնագիտական կրթությունը՝ ուսանելով կոմսերվատորիայի վոկալ բաժնում՝ զուգահեռաբար աշակերտելով Ջ. Պալիաշվիլուն և Ա. Տեր-Ղևոնդյանին¹⁰, ակտիվ համագործակցում Ռոմանոս Մելիքյանի և Ազատ Մանուկյանի հետ՝ «Երաժշտական լիգայի» կայացման գործում:

Կոմպոզիտոր Դ. Ղազարյանը երգերի ու ռոմանսների, խմբերգերի, դրամաների համար գրված երաժշտության («Մոս և Վարդիթեր», «Գիքոր»), նվագախմբային (այդ թվում՝ «Սովետական Հայաստան» և «Հոկտեմբեր» քայլերգերը փողային նվագախմբի համար) ու դաշնամուրային ստեղծագործությունների հեղինակ է: Նրա ստեղծագործության հիմնական բնագավառը, բնականաբար, երգն է. իր երգերի համար նա ընտրել է Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ալ. Ծատուրյանի, Հ. Հովհաննիսյանի, Շ. Կուրդինյանի, Վ. Միրաքյանի, Գ. Սարյանի, Սարմենի. Հ. Հայրապետյանի, Մ. Կորյունի, Վ. Աղասյանի, Հ. Աղաբաբի, Մետաքսեի և այլոց բանաստեղծությունները: Ստեղծման օրից մեծ ժողովրդականություն են վայելում «Ռուին», «Լանջեր մարջան», «Սար դարդեր», «Աշնան գիշեր», «Անուշ գարուն», «Քույր իմ նագելի» մեներգերն ու ռոմանսները:

Վարսենիկ Աղասյանի խոսքերով գրված «Լանջեր մարջանը» Դ. Ղազարյանը նվիրում է Շարա Տալյանին: «Երբ առաջին անգամ կատարեցի, - հետագայում կհիշի երգիչը, - դաշի՛նը հոնդաց, հանդիսականները ստիպեցին կրկնել: Հետևյալ օրը, կեսօրին, նոր էի փողոց դուրս եկել, երբ ականջիս հասավ «Լանջեր մարջանը»: Երիտասարդների մի խումբ, ճիշտ է, աղավաղված տեքստով, սակայն երգի տիրապետման ամենայն ճշտությամբ, երգում էին «Լանջեր մարջանը»: Այո, մեր սիրելի Դանիելի երգերը գողտրիկ էին, գերող ու թևավոր»¹¹:

Դ. Ղազարյանի երգարվեստի գողտրիկ էջն են կազմում երաժշտական իսահակյանապատումը հարստացրած երգ-ռոմանսները, որոնք դարձան կոմպոզիտորի այցեքարտերը: Խոսքը մեծ ժողովրդականություն վայելող «Ռուին» և «Քույր իմ նագելի»¹² մեներգերի, ինչպես նաև «Գիշերն եկավ, աստղերն ելան» զուգերգի մասին է¹³: 1916-ին ստեղծված «Գետակի վրա...» բանաստեղծության տեքստով Դ. Ղազարյանի մեներգը, որը հեղինակը նվիրել է երգչուհի Վարդանուշ Փարվանյանին, առաջին անգամ հրատարակվել է Մոսկվայում, 1929-ին¹⁴:

Կոմպոզիտորի ստեղծագործական հետաքրքրությունների կենտրոնում էր մանուկների համար երաժշտությունը: Նա մանուկների համար գրել է շուրջ 300 երգեր՝ ըստ Ա. Խնկոյանի («Դաշտի շողիկ շաղիկներ», «Կաշաղակը», «Անուշ հովեր», «Միշտ եղիր պատրաստ», «Սարի լանջին», «Ձմեռ» և այլն), Հ. Աղաբաբի («Ծիտիկի սերը», «Կանչում է զանգը», «Էծիկ», «Օրոր», «Ծուրրուղու-ղու», «Պատիկ ծիտ եմ», «Շնիկ», «Ծիտիկները հյուր են եկել» և այլն), Ղ. Աղայանի («Ծուտիկներ», «Մագիկ մագիկ», «Նոր տարի», «Չորս եղանակ», «Սարի լանջը» և այլն), Մ. Կորյունի («Արի, արի ջան աշուն», «Աշունն եկավ», «Սովետական դպրոցում», «Կուռ բանակ ունենք» և այլն), Ա. Գրաշու («Գարնան գետեր» և այլն), Հովհ. Թումանյանի («Ծուրրուղու», «Մեր թոփլանը» և այլն) և խմբերգեր՝ այդ թվում՝ երկձայն «Ձատիկ» ըստ Հ. Աղաբաբի և «Ծիծեռնակին» ըստ Ա. Խնկոյանի:

Մանուկների և դպրոցականների համար Դ. Ղազարյանը գրել է նաև երաժշտական պատկերներ դաշնամուրի նվագակցությամբ՝ «Պապն ու շաղգամը» (խոսք՝ Խնկո-Ապր) և հանրահայտ «Փիսիկի գանգատը»՝ ըստ Հովհ. Թումանյանի, ինչպես նաև մանկական հինգ օպերաներ, այդ թվում՝ «Հաղթված բագեն» մանկական օպերան 3 գործողությամբ, Հակոբ Աղաբաբի լիբրետոյի հիման վրա, «Դալլը» մանկական օպերան 4 գործողությամբ, ըստ Հովհաննես Թումանյանի (լիբրետոն կազմել է Պ. Մոճոռյանը), «Անգործ մանուկ», «Տիկնիկի պսակը» և «Փոքրիկ կառուցողները», որոնք ժամանակին բեմադրվել են հենց մանուկների ուժերով: Այս մանկական ստեղծագործությունները կարևոր նշանակություն ունեցան նաև հայկական սփյուռքի մանուկների գեղագիտական դաստիարակության գործում: «Մուրճ-մանգաղը» իր 1928 թ. մայիսի 17-ի համարում գրում է. «Մոտ օրերս Կրասնոդար ժամանեց երաժշտագետ Դ. Ղազարյանը: Ապրիլի 29-ին աշակերտական ուժերով տվեց համերգ և «Հաղթված

¹⁰ Տե՛ս Մեր երաժիշտները. կոմպոզիտոր Դանիել Ղազարյան: «Ճորհիրդային արվեստ», 1934, N 8:

¹¹ Ծ. Տալյան, Դեպքեր, դեմքեր, մոքեր..., Երևան, «Հայաստան» հրատ., 1973, էջ 252:

¹² «Քույր իմ նագելի, նայիր քո դիմաց...» ռոմանսը հրատարակվել է 1971-ին, 1973-ին, 1993-ին:

¹³ Տե՛ս Ավետիք Իսահակյանը երաժշտության մեջ, տեղեկատու, Երևան, 2006, էջ 32-35, 97:

¹⁴ Այն լույս է տեսել նաև 1947-ին, 1955-ին, 1960-ին, 1963-ին, 1971-ին, 1973-ին, 1975-ին, 1993-ին:

բազե» մանկական օպերան: Մեծաթիվ հասարակություն կար: Կրասնոդարում հայ մանկությունը զուրկ էր հայկական նոր երգերից, իսկ այժմ Դ. Ղազարյանի ձայնագրած երգերից օգտվում են բոլոր աշակերտները և պիոներները: Նա իր ձայնագրած երգարաններից մվիրեց պիոներական կոլեկտիվին, որոնցով պիոներներն արդեն սկսել են պարապել»¹⁵:

Կոմպոզիտորի մանկական երաժշտության մասն է գործիքային երաժշտությունը՝ դաշնամուրային պիեսները («Սիրունիկ» պարը) և «Գարունն եկավ» քայլերգը պիոներական փողային նվագախմբի համար:

Դ. Ղազարյանի գործունեության կարևոր ուղղություններից էր խմբավարական գործունեությունը: Խմբավար Դ. Ղազարյանը, հետևելով իր ուսուցչի՝ Ստեփան Դեմուրյանի օրինակին, հրնթացս իր գործունեության 50 տարիների տարբեր քաղաքներում, այդ թվում՝ Երևանում, Լենինականում, Կիրովականում, Նոր Բայազետում, Էջմիածնում, Հոկտեմբերյանում, Դիլիջանում, Ղարսում, Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Բաքվում, Խարկովում, Ռոստովում, Նոր Նախիջևանում, Արմավիրում, Կրասնոդարում, Վլադիկավկազում, Նովոռոսիյսկում, Բաթումում, Սուխումում, Բորժոմում, Սոչիում, Ախալցխայում, Ախալքալաքում, Աշխաբադում, Գանձակում, Շուշիում, Ստեփանակերտում, Կադգվանում, Նուխիում և այլուր կազմել է շուրջ 250 երգեցիկ խումբ և տվել ավելի քան 1000 համերգ:

Մասշտաբային գործունեություն է ծավալել նա գեղարվեստական ինքնագործունեության բնագավառում. կազմակերպել է երգչախմբեր Երևանի Ուսուցչի տանը, Հաղթանակի այգում, Կարմիր բանակի տանը: Հաճախակի ելույթներ է ունեցել նրա կազմակերպած կույրերի քառաձայն երգեցիկ խումբը:

Մանկավարժ Դ. Ղազարյանն ավելի քան 50 տարի աշխատել է հանրակրթական դպրոցներում՝ որպես երգ-երաժշտության ուսուցիչ, պատրաստել երգեցողության դասատուների բազմաթիվ որակյալ կադրեր, իբրև մանկավարժական կարիքների փորձառու մեթոդիստ՝ դասատուների համար կազմել ծրագրեր, դպրոցական երգարաններ և այլն:

Երաժշտական-հասարակական գործիչ Դ. Ղազարյանը 1923-ին կազմակերպել է Բաթումի ժողովրդական երաժշտական ստուդիան, որը մեկ տարի անց վերածվեց ժողովրդական կոնսերվատորիայի, իսկ 1924-ին՝ Լենինականի երաժշտական ստուդիան, որը հետագայում վերածվեց երաժշտական դպրոցի: 1937-ին Դ. Ղազարյանը երաժշտական ստուդիա է կազմակերպել նաև Երևանի Կարմիր բանակի տանը: 1933-ին Պիոներների պալատում նրա ջանքերով իր գործունեությունն է վերսկսում Երևանի մանկական օպերան, որտեղ մինչև 1939 թվականը բեմադրվում են Դ. Ղազարյանի «Հաղթված բազեն», «Գայլը», Ս. Մուրադյանի «Շունն ու կատուն», Վ. Ումր-Շատի «Ուլիկները», Ա. Մայիլյանի «Տիկնիկ-գիգիկը», Ա. Մանուկյանի «Չարի վերջը» և մանկական այլ օպերաներ:

1997-ին, շուրջ չորս տարի տևած նախապատրաստական աշխատանքներից հետո Շուշիում դպրոցականների առջև իր դռները բացած՝ ԼՂՀ-ում առայժմ միակ երաժշտական միջնակարգ մասնագիտական գիշերօթիկ դպրոցը, որտեղ ուսանում են շնորհալի պատանիներ ու աղջիկներ, որտեղ հաջողությամբ գործում են փողային նվագախումբն ու երգչախումբը, իր հիմնադրման օրվանից կրում է Դանիել Ղազարյանի անունը: Այսօր Դ. Ղազարյանի անունն է կրում նաև Արթիկի երաժշտական դպրոցը:

Դ. Ղազարյանի ակտիվ համերգային ու հասարակական գործունեությանն է անդրադարձել ժամանակի պարբերական մամուլը՝ ընդգրկում աշխարհագրությամբ. «Հորիզոն», «Մշակ», «Սուրհանդակ», «Ընկեր», «Աղբյուր», «Տարազ», «Գեղարվեստ», «Խորհրդային Հայաստան», «Խորհրդային արվեստ», «Սովետական Հայաստան», «Կոմունիստ», «Շիրակի ռանչպար», «Մարտակոչ», «Բանվոր», «Արվեստ», «Մուրճ-մանգաղ», «Պրոլետար», «Պիոներ կանչ», «Կուլտուրական ֆրոնտ», «Ավանգարդ», «Կարմիր զինվոր», «Բայազետի կոլխոզնիկ», «Սովետական դպրոց», «Երևան», «Երեկոյան Երևան», «Գրական թերթ», «Էջմիածին», «Բաքվի կոմունիստ», «Արխագիա», «Правда», «Известия», «Вечерняя Москва», «Труд», «Сталинец», «Коммунист», «Учительская газета», «Советский Карабах», «Трудовой Батум», «Жизнь искусства», «Красное знамя», «Красная газета», «Красный луч», «Новороссийск», «Советская Абхазия», «Голос трудовой Абхазии», «Пролетарий Черноморья» և այլն:

Anna Asatryan (Armenia)

THE CREATIVE LEGACY OF DANIEL GHAZARYAN

The purpose of the report is: to present the legacy of Honored Art Worker of the Armenian Soviet Socialist Republic (1945), Honored Teacher (1944), composer, choirmaster, singer, pedagogue, founder of the musical studios in Batumi (1922) and Leninakan (1924), Daniel Ghazaryan (1883-1958), whose creative career and ardent activity were a great asset to the development of Armenia's professional music and choir art.

¹⁵ Արախանյան, Երաժշտագետ Դ. Ղազարյանի համերգը: «Մուրճ-մանգաղ», 17 մայիսի, 1928:

ԳՐԻԳՈՐ ԳԱՊԱՍԱՔԱԼՅԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Գրիգոր Գապասաքալյանը XVIII-XIX դարերում Կ.Պոլսում գործած այն մտավորականներից է, ում վաստակը ըստ արժանվույն դեռևս չի գնահատվել, իսկ գիտական ժառանգությունը քիչ է ուսումնասիրված: Այնինչ, իբրև Վերանորոգության շրջանն ամփոփող երաժիշտ-տեսաբան, Գր. Գապասաքալյանը թողել է մի շարք աշխատություններ, որոնք ուշագրավ են և՛ որպես ազգային երաժշտական մշակույթում ծառացած խնդիրների, և՛ արևելաքրիստոնեական ժողովուրդների համընդհանուր մամանտիպ հարցերի ծիրի մեջ գտնվող մտահոգությունների արտահայտություն: Իր գրչի արգասիքն են՝ «Գրքոյկ որ կոչի նուագարան» (1794), «Գրքոյկս կոչեցեալ երգարան», «Գիրք երաժշտական, յորում պարունակին Հայերէն, Յունարէն և Պարսկերէն հարցմունք և պատասխանատուութիւնք համառօտաբար» (1803), ինչպես նաև՝ «Համառօտութիւն երաժշտականի գիտութեան» Ն. Թահմիզյանի հրատարակած և «Գիրք ութից ձայնից» (1805) անտիպ աշխատությունները, որոնք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հայ երաժշտական տեսագեղագիտական մտքի պատմության ուսումնասիրության համար:

Հանդիսանալով միջնադարյան երգարվեստի ավանդույթների վերջին կրողներից մեկը (եթե չասենք վերջին կրողը), Գապասաքալյանը քաջ գիտակցել է ազգային մասնագիտացված երաժշտարվեստին սպառնացող վտանգները, անցյալի ժառանգության՝ տեսական և գործնական փորձի պահպանման և փոխանցման կարևորությունը, ինչը ձգտել է վավերացնել և յուրովի իմաստավորել իր աշխատություններում: Այդ նպատակին է ծառայել նաև երաժշտական նշանագրության իր առաջարկած համակարգը, որը թեև չարմատավորվեց, սակայն խթան հանդիսացավ Համբարձում Լիմոնջյանի հայկական նոր նոտագրության ստեղծման համար:

Գապասաքալյանին վերաբերող գրականությունը, կարելի է ասել, սակավաթիվ է: Նրա անձին և աշխատություններին անդրադարձել են Արիստակես Հիսարլյանը, Կոմիտասը, Սյուրիդոն Մելիքյանը, մեկական առանձին հոդվածներով՝ Ռոբերտ Աթայանը և Նիկողոս Թահմիզյանը:

Երաժշտագետի ժառանգության գնահատականը միշտ չէ, որ եղել է միանշանակ և համարժեք: Նրա ժառանգության ոչ արդարացի, ոչ օբյեկտիվ գնահատականը, մեր կարծիքով, մեծ մասամբ պայմանավորված է եղել աստվածաբանական տարրի զգալի ներկայությամբ, ինչն ընկալվել է որպես հետադիմական, հավանաբար, XVIII դ. եվրոպական գեղագիտության և երաժշտագիտության միտումների համեմատությամբ իր դարն ապրած չոր սխոլաստիկայի դրսևորում: Մյուս պատճառներից, հավանաբար, կարելի է նշել իր լեզուն, երբեմն բավական խճողված, վերամբարձ և պաճուճազարդ գրաբարը, որը ևս ընկալման և թարգմանության համար դժվարություններ է հարուցում: Եվ, վերջապես, իր հունասիրությունը, որ միշտ չէ, որ բոլորին է գոհացրել:

Ներկայումս Գր. Գապասաքալյանի ժառանգությանը պետք է տրվի համարժեք, իր ժամանակի և միջավայրի պատմական համատեքստից բխող գնահատական, երբեք չմոռանալով, թե ի՞նչ էր իրենից ներկայացնում XVIII դ. երկրորդ կեսի, XIX դ. սկզբի Կոստանդնուպոլիսը եկեղեցական երաժշտության առումով, թե ի՞նչ խնդիրներ էին ծառացած այն ժամանակի եկեղեցական երաժիշտների առջև:

Ամեն ինչից երևում է, որ Գապասաքալյանն առաջին հերթին հիմնավոր աստվածաբանական և փիլիսոփայական կրթություն է ստացել: Նրա գիտապաշարը, հղած հեղինակների շրջանակը երբեմն զարմացնում են: Եթե հայ միջնադարյան մտածողներից առավել հաճախակի հիշատակվող հեղինակներից են Դավիթ Անհաղթը, Հովհաննես Երզնկացի Պլուզը, Հովհաննես Որոտնեցին ու Գրիգոր Տաթևացին, ապա համաքրիստոնեական նշանակության հեղինակներից կարելի է մատնանշել Պորփյուրին, Պրոկղին, Բարսեղ Կեսարացուն, Գրիգոր Նյուսացուն, Օգոստինոսին և Իրենեոսին, որոնց երկերում նա առանձնացրել է երաժշտության տեսությանն ու գեղագիտությանը վերաբերող հատվածները, ինչը վկայում է Գր. Գապասաքալյանի՝ այդ ժառանգությանը հավասարապես տիրապետելու մասին: Այնուհետև դա երաժշտական տեսական և գործնական լուրջ պատրաստվածությունն է (այն ժամանակվա չափանիշներով), որն ընդգրկել է հայկական, հունական (ուշրյուզանդական) և պարսկաարաբական ավանդական տեսությունը, ինչպես նաև այդ մշակույթների մոնողիկ մասնագիտացված երգարվեստի բազմաթիվ նմուշների լայն երգացանկը:

Հայ երաժշտական մշակույթի պատմության մեջ Գրիգոր Գապասաքալյանը հայտնի է որպես միջնադարյան խազագրությունը նորոգելու նախաձեռնողներից առաջինը: Օսմանյան դարավոր տիրապետության և իսլամական շրջապատում գոյատևող քրիստոնյա ազգերի համար գնալով ավելի դժվար էր դառնում անադարտ պահել սեփական ազգային մշակութային, մասնավորապես, երաժշտական ժառանգությունը:

Գրիգոր Գապասաքալյանի առաջին հրատարակված աշխատությունը, որը լույս է տեսել Կ.Պոլսում 1794 թվականին, կոչվում է «Գրքոյկ որ կոչի նուագարան»։ Այն բացվում է տաղարանով, որն ընդգրկում է ինչպես հոգևոր, այնպես էլ՝ աշխարհիկ տաղեր։ Աշխատությունը բաղկացած է երկու մասից՝ տեսական և գործնական։ Տեսական մասը լուսաբանում է հոգևոր երգարվեստի զանազան բաժինները, սկսած երաժշտության ծագումից և տեսակների դասակարգումից մինչև խազաբանություն։ Երաժշտության ծագումնաբանությանը նվիրված բաժնում գտնում ենք «Յաղագս ձայնից» հիմնավորյալ մեկնության վերապատմված տարբերակը։ Բնագիր, որին Գ. Գապասաքալյանն ավելի մանրամասն անդրադառնալու էր հետագայում և՛ «Գիրք երաժշտական»-ում, և՛ «Գիրք ուրից ձայնից»-ում։

Արդեն նախաբանում Գապասաքալյանը մի քանի անգամ շեշտում է այն հանգամանքը, որ տվյալ ձեռնարկի հիմնական և վերջնական նպատակը խազերի ուսուցանումն է։ Եվ իրոք, աշխատության երկրորդ մասում տեսնում ենք խազային նոտագրությամբ արված ձայնագրություններ, որոնց թվում ինչպես հանրահայտ՝ բանավոր ավանդույթով մեղեդիներով հանդերձ պահպանված տաղեր, այնպես էլ՝ Գանձարաններից հայտնի՝ խազագիր, բայց լոկ բանաստեղծական բնագրեր։

Գապասաքալյանի կիրառած նոտագրության վերաբերյալ սույն հեղինակի մասին գոյություն ունեցող գրականությունը (Հիսարյան, Աթայան, Թահմիզյան) ի վերջո հստակ պատկերացում չէր տալիս այն մասին, թե ի՞նչ նոտագրություն է գործածել նա։ Նշվում էր միայն, թե այն հայկական խազերի, բյուզանդական նևմերի և արևելյան ավանդական նշանագրությամբ շաղախված մի սխտեմ է¹։ Ուստի հարկ եղավ պարզելու, թե ի՞նչ է այն իրենից ներկայացնում իրականում։ Մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դա, ըստ էության, հայկական խազերով և բյուզանդական նևմերով իրագործվող մի զուգահեռ նշանագրություն է, որտեղ ակնհայտորեն երևում է Գապասաքալյանի ձգտումը համապատասխանեցնելու հայկական խազերը բյուզանդական նևմերի ինտերվալային նշանակությանը²։ Դրավառ ապացույցն են Գապասաքալյանի հենց առաջին՝ «Գրքոյկ որ կոչի նուագարան» աշխատության մեջ գետեղված ձայնագրությունները։ Կան մասն ձայնագրություններ, որոնց մեջ գերակշռում են հունական նևմերը կամ հակառակը։ Մեր դիտարկումներն ապացուցում են, որ Գապասաքալյանը կիրառել է ձայնագրության երկու տեսակ՝ զուգահեռ և համադրված, թեև գերակշռողը զուգահեռ ձայնագրությունն է։ Դա հաստատվում է «հանդերձ ձայնի և խազիք խառն ընդ յունաց» իր իսկ արտահայտությամբ³։ Ներմուծել է մասն մոր նշաններ, օրինակ, *սում* կոչվածը, որը հունական խոնին համարժեք նշան է։ Սակայն եթե հունական խոնը բյուզանդական երգարվեստում լայնորեն կիրառվող ձայնառությունն է, *սում* Գապասաքալյանն անվանում է անձայն խազ, ուստի մինչև վերջ հստակ չէ նրա նշանակությունը։

Սույն աշխատության մեջ Գապասաքալյանն անդրադարձել է մասն տարբեր ազգերի երաժշտական նվագարաններին՝ պալատերին, քնար, ջնար, քիթար, սանթուր, սրինգ, մայ, դարնայ և այլն, տալով դրանց նկարագրությունը, ինչին հաջորդում է երաժշտության ներագոյություն մասին հիշեցումը, որն ի վիճակի է նույնիսկ հեղաշրջել մարդուն։

Սակայն մնան գաղափարների կողքին, որոնք, անշուշտ, առնչվում են անտիկ երաժշտական գեղագիտության մեջ մշակված և ողջ միջնադարի ընթացքում հարատևած երաժշտական էթոսի ուսմունքին, բերվում են մասն այլ դատողություններ։ Վկայակոչելով քչերին հայտնի լատինալեզու փիլիսոփա Անտոն Կովդինին, Գապասաքալյանն արտահայտում է իր տեսակետն այն մասին, թե, բավարար չէ ծանոթ լինել ձայնեղանակներին և երգել, ինչպես լալկան կանայք, մրմունջներ կատարողները և անգամ եկեղեցու երգեցողները, այլ կատարյալ երաժիշտ է համարվում նա, ով «զանվրեպ ստուգութիւն իւրոց սկզբանց», իսկ երաժշտության սկզբունքները թվաբանության մեջ են։ Այս դատողության մեջ հստակ երևում է պյութագորականության ավանդույթների արձագանքը։

Մեկ այլ հատվածում Գապասաքալյանը ծանոթացնում է ընթերցողնորին երգչական մատյաններին և հոգևոր երգարվեստի տեսակներին, համադրելով դրանց հունական և հայկական անվանումները, որոնցից են *լիտուրգիա*, *կրատիմատարիոն*, *խերուվիկոն*, *կինոնիկոն* և այլն։

«Գրքոյկ որ կոչի նուագարան» աշխատության տեսական բաժնի ամենաընդարձակ բաժինը նվիրված է խազագիտությանը, ընդ որում սկզբից մանրամասնորեն տրված է հունական (բյուզանդական) նևմերի բացատրությունը, իսկ հետո՝ հայկական խազերի, երկու դեպքում էլ՝ սկսած պարզագույններից մինչև բարդագույնը, այսինքն՝ *մեզալի իսոստազիզ* կամ մեծամեծ խազեր կոչվածները, ինչպես մասն դրանց ածանցյալ խմբավորումներն ու տառ-խազերը, որոնք կիրառվել են հիմնականում մանրուսման երգերը ձայնագրելիս։ Հատվածն ավարտվում է մի շարք խազագրված տաղերի մեջբերումով, որոնք ձայնագրված են զուգահեռ՝ հայկական խազերով և հունական նևմերով։ Ուշագրավ է, որ վերոհիշյալ 10 նմուշներից 4-ը պահպանվել են մասն բանավոր ավանդույթով և գրառվել նոր հայկական նոտագրությամբ։

¹ Տե՛ս Ն. Թահմիզյան, նշվ. հոդվածը, էջ 294։

² Ի դեպ, այդ ճանապարհով է ընթացել մասն Կոմիտասը։ Այդ են ապացուցում նրա խազաբանական ուսումնասիրությունները, տե՛ս Ուսումնասիրություններ եւ յօդուածներ երկու գրքով, գիրք Բ, էջ 339-346, 392-398, 408-417։

³ Տե՛ս «Գրքոյկ որ կոչի նուագարան», էջ 218։

Ուշագրավ են Գապասաքայլանի աշխատություններում տեղ գտած մի քանի ձայնեղանակային սխեմաներ, որոնք կոչված էին երգեցողների հիշողության մեջ ամրապնդելու սկսվածքների ուսուցումը: Նրա գրքերում զետեղված անվաճն պատկերները, Բյուզանդիայում XIII-XIV դարերից եկեղեցական երգարվեստի պրակտիկայում լայնորեն կիրառվող այսպես կոչված Կուկուզեխի անիվի մամուռային են գաղափարված: Եվ իրոք, օրինակ, Գապասաքայլանի «Գրքոյկ որ կոչի նուագարան»-ում կողք կողքի բերված են հունական Օկտոհիտոսի և հայկական Ութձայնի սկսվածքները: Մեկ այլ տեղում տեսնում ենք շրջանագծի մեջ տեղադրված խաչաձև՝ հայկական բուն և կողմ ձայնեղանակների և արևելյան մականների հարաբերակցությունը չորս տարբերքների հետ պատկերող մի գծանկար, որն առնչվում է անտիկ կատարյալ ռեգիստրային լադային համակարգի հետ: Նմանատիպ պատկերի ենք հանդիպում նաև Գապասաքայլանի «Գիրք երաժշտական»-ում՝ և «Գիրք ութից ձայնից» աշխատության մեջ, որի մասին պատկերացում ունենք Տրդատ եպս. Պալյանի նկարագրությունից «Այս է ճախարակ որ շինե զձայնս» ստորագրությամբ:

Գրիգոր Գապասաքայլանի հաջորդ աշխատությունը «Գրքոյկս կոչեցեալ երգարան»-ն է, որտեղ առաջին բաժինը դարձյալ տաղարան է: Գրքի առաջին բաժնում, այսինքն, տաղարանում Գապասաքայլանն ընդգրկել է նաև մի շարք հայատառ հունարեն հանրահայտ, հաճախ կանոնական հոգևոր երգեր՝ իրենց հայերեն թարգմանություններով, որոնց հետևում են այդ երգասացությունների ձայնեղանակներին վերաբերող կաֆաներ:

Երկրորդ, տեսական բաժինը ի տարբերություն 1794 թ. հրատարակած «Գրքոյկ»-ի, շարադրված է կատեխիզիսի՝ հարց ու պատասխանի ձևով: Այստեղ Գապասաքայլանն անդրադարձել է երաժշտության տեսակներին, գատորոշելով դրանք երեք տեսակի՝ նվագական, եղանակական և սրնգական: Նվագականն իր հերթին բաժանվում է ևս երեք տեսակի՝ «ի ձայն, ի փշումն և ի բաղիումն»:

Գապասաքայլանը բաժանում է երաժշտությունը նաև ըստ բնույթի, հետևյալ կերպ՝ անհամեստ, համեստ և բարի: Նշելի է, որ նմանատիպ ստորաբաժանմամբ նա ընդհանուր առմամբ հավատարիմ է մնացել հայ միջնադարյան երաժշտական գեղագիտության ավանդույթներին՝ Դավիթ Անհաղթից մինչև Հակոբ Արիմեցի: Սրան հետևում է ձայնեղանակների ուսուցմանը նվիրված հատված, ուր հստակորեն դրսևորվում է այն մեթոդը, որով դարեր շարունակ առաջնորդվել են մեր եկեղեցական երաժիշտները, այն է՝ ութձայնի սկսվածքների յուրացումից աստիճանական անցումով պաշտոներգության տարբեր օրհներգությունների ուսուցմանը:

Այսպիսով, առաջին երկու գրքերում արդեն լիովին դրսևորվում է Գապասաքայլանի ստեղծագործական-գիտական հետաքրքրությունների շրջանակն ու ընդգրկումը, նրա մանկավարժական մեթոդը, որը հստակ պատկերացում է տալիս այն մասին, թե ի՞նչ ձևով և ի՞նչ է ուսուցանել XVIII դարի Կոստանդնուպոլսում հայ եկեղեցական երաժիշտների միջավայրում:

Հիրավի, 1803 թվականը Գապասաքայլանի կյանքում եղել է ամենաբեղմնավորը: Այդ թվականին նա լույս է ընծայել ոչ միայն «Գրքոյկս կոչեցեալ երգարան»-ը, «Նուագարան երաժշտական»-ը, այլ նաև ծավալուն «Գիրք երաժշտական»-ը, որն, ըստ էության, որոշակի իմաստով ի մի է բերում նրա երաժշտագիտական փորձը:

«Գիրք երաժշտական»-ը մեր երաժշտագիտության մեջ Գապասաքայլանի թերևս առավել հաճախ արժարժվող աշխատությունն է: Այն ևս բաղկացած է երկու մասից, որոնցից առաջինը տեսական է, իսկ երկրորդը կրում է «Նուագարան երաժշտական» վերնագիրը, Տաղարան ներկայացնելով: Արդեն գրքի լրիվ վերնագիրը պատկերացում է տալիս հեղինակի ուսումնասիրության հիմնական նպատակի մասին. «Գիրք երաժշտական յորում պարունակին Հայերեն, Յունարեն եւ Պարսկերեն հարցմունք և պատասխանատուութիւնք համառօտաբար»: Հայ իրականության մեջ անմախաղեպ մի ձեռնարկ, համեմատական երաժշտագիտության մի փորձ, որը վկայում է Գապասաքայլանի երաժշտատեսական լայն գիտելիքների մասին:

Պատահական չէ, որ Գապասաքայլանի աշխատություններով, մասնավորապես, «Գիրք ութից ձայնից»-ով, շատ է հետաքրքրվել Կոմիտասը: Բանն այն է, որ Կոմիտասի խազագիտական ձեռագրերից պարզ է դառնում, որ շատ հարցերում Գապասաքայլանը ուղեցույց է հանդիսացել Կոմիտասի համար: Գրիգոր Գապասաքայլանի երաժշտագիտական ժառանգությունը նշանակալի տեղ է գրավում հայ երաժշտատեսական մտքի պատմության մեջ, կարևոր օղակ հանդիսանալով միջնադարյան տեսագեղագիտական հայեցակարգերի և նոր ժամանակի երաժշտական մտածողության միջև: Ըստ էության, Գապասաքայլանը հայ նոր խազաբանության սկզբնավորողն է եղել, իսկ նրա աշխատությունները միջնադարյան երաժշտական գիտական և գործնական տեսության հիրավի մի հանրագիտարան են ներկայացնում: Հենց դրանով էլ հաստատվում է Գրիգոր Գապասաքայլանի՝ հայ իրականության մեջ առաջին մարդու, ով իրեն ամբողջությամբ նվիրել է երաժշտական արվեստի ուսումնասիրմանը, դերն ու նշանակությունը ազգային երաժշտական մշակույթի անդաստանում, ներկայացնելով նրան որպես իր ժամանակի և միջավայրի ինքնատիպ երևույթ, նշանակալի դեմք, ով փաստորեն հանդիսացել է հայ երաժշտագիտության սկզբնավորողը:

THE MUSICOLOGICAL HERITAGE OF GRIGOR GAPASAKALIAN

Grigor Gapasakalian (1740-1808) is a prominent musician from Constantinople and his contribution is neither sufficiently studied nor appreciated until now. The investigation of his works give evidence about the wideness of his scientific interests, his profound knowledge not only in the field of medieval theory of Armenian sacred music, but also in the theory of post-Byzantine ecclesiastical music, the Near East secular traditional professional music and represents him as a one of founders of Armenian musicology.

Լիլիթ Երնջակյան (Հայաստան)

ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱՐՎԵՍՏԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Հայ երաժշտության էթնոմշակութային ինքնությունը խեղաթյուրված է ներկայանում մի շարք օտարալեզու աշխատություններում: Ամերիկյան հայտնի համալսարաններում իրականացված որոշ հետազոտություններում և եվրոպական հանրագիտարանային բնույթի հրատարակություններում գետեղված նյութերի քննությունը թույլ է տալիս երևան գալ այն բևեռացված տեսակետներն ու թյուրմբեռնումները, որոնցով մեկնաբանվում և գնահատվում է հայ երաժշտարվեստը Մերձավոր Արևելքի մշակութային համատեքստում:

Հայ երաժշտության տարբեր ճյուղերին վերաբերող օտարազգի հեղինակների դատողությունների հիմնական ելակետը թուրքական երաժշտությունն է: Արևմուտքի երաժշտական արևելագիտության մեջ բազմակողմանիորեն լուսաբանվել են հզոր պետությունների՝ Իրանի և օսմանյան Թուրքիայի մշակութային ավանդույթներն ու դրանց ժառանգորդության կարգը: Այսպես կոչված փոքր ազգերի՝ հայերի, հրեաների, հույների երաժշտությունը հիշատակվում է առանձին երաժիշտ-երգահանների, հայտնի կատարող-տեսաբանների կապակցությամբ. որևէ ուսումնասիրության մեջ հայ ժողովրդապրոֆեսիոնալ արվեստին չեն տրվում «հզորներին» վայել գնահատականներ, չեն շոշափվում նույնիսկ փոխադրեցությունների խնդիրները, թեև հայկական, իրանական, թուրքական նյութերի համեմատական ուսումնասիրությունը հակառակն է ապացուցում: Այդ են վկայում նաև ռուս թուրքագետ Վ. Գորդլևսկու¹, ուկրաինացի երաժշտագետ Կ. Կվիտկայի² տեսակետները հայ երաժշտության վճռորոշ ազդեցության մասին հատկապես թուրքական քաղաքային երգաստեղծության և աշուղական արվեստի ձևավորման և զարգացման հարցում, ինչպես նաև որոշ ամերիկացի հեղինակների՝ Ֆելդմանի, Օլբրայթի աշխատանքներում տեղ գտած, գերազանցապես պոլսահայ երաժիշտների գործունեությանն առնչվող առանձին տեղեկություններ³: Այս անժխտելի իրողության մասին հնարավոր է պատկերացում կազմել նույնիսկ թուրք և ադրբեջանցի հեղինակների աշխատանքներում անորոշ ծանոթագրություններով և «միամտաբար» ընդգրկված փաստերից⁴:

Հայ-թուրքական առնչությունների իրական պատկերը հստակեցնում են նաև լեզվաբանական հետազոտությունների արդյունքները, որոնց համաձայն արդի թուրքերենում օգտագործվող շուրջ 250 բառերից 25-ը երաժշտական եզրեր են⁵:

Սակայն 1998 թ. Անկարայում հրատարակված Թուրքական ժողովրդական երաժշտության տերմինների բառարանում իսպառ բացակայում է հայկական տարրը: Բառարանում ընդգրկված ժանրերի, գործիքների, կրոնական, աղանդավորական ծեսն ուղեկցող մեղեդիների կապակցությամբ հիշվում են տարբեր ազգությունների ու ցեղերի անուններ:

Հայերենից փոխառված բազմաթիվ բառերին ու ժանրերին, սկսած պար բառից՝ Կարսի պար, Գյումրի պար, Գուբնապար, Նազպար, Հորովել, օլորակ և այլն, որոնք իրենց համապատասխան եղանակներով ներգրավվել են թուրքական երաժշտության մեջ, որևէ բացատրություն չի տրվում: Դրանք

¹ В. Гордлевский, *Избранные сочинения*, т. 3. М., 1963, с. 264-265.

² К. Квитка, *К вопросу о тюркском влиянии*, Избранные труды в 2-х томах (сост. и коммент. В. Гошовского), том 1, Москва, 1971, с. 336-348.

³ W. Feldman, *Cultural Authority and Authenticity in the Turkish Repertoire*, "Asian Music", 1990, vol. 22, #1, p. 101.

⁴ Y. Erdener, *The Song Contests of the Turkish Minstrels*, New York & London, 1995, p. 35.

⁵ Տե՛ս Խ. Ամիրջան, *Հայերենից փոխառեալ բառերը արդի թուրքերենում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ*, հատ. 12. Թուրքիա, Երևան, 1985, էջ 143-164:

համարվում են եզգի՝ թուրքերեն մեղեդի, նշվում են դրանց կենցաղավարման վայրերը՝ Կարս, Էրզրում, Իզմիր, Ադանա, Մարաշ...:

Տարբեր առիթներով անդրադառնալով հայ-թուրքական երաժշտական հարաբերությունների խնդրին, մենք ձգտել ենք նորահայտ փաստերով և երաժշտական նյութերով համալրել և լուսաբանել հայ երաժիշտների խոշոր ներդրումը թուրքական մշակույթի կազմավորման և զարգացման գործընթացում: Արևելքի ավանդական երաժշտության երկացանկում ընդգրկված թուրքիների, շարքիների, մանիների, գյոզալամանների ուսումնասիրությամբ բացահայտել ենք, որ դրանք հայկական միջնադարյան հոգևոր մեղեդիների ու ժողովրդական երգերի թուրքերեն թարգմանված տարբերակներն են⁶:

Օսմանյան կայսրության բազմատարր և բազմազգ մշակութային խճանկարը՝ «զոդված պարտադրված թուրքերենով», միատարր ազգային վերածելու ճանապարհին թուրքական երաժշտությունը ձեռքագատվել է այն «համահեղինակներից», որոնք չէին տեղավորվում թուրքական երաժշտության առասպելատեղծ ծագումնաբանության և զարգացման ուղու վիրտուալ հարացույցներում: Այդ հարացույցների ձևավորման գործում մեծ դեր են կատարել նաև Արևմուտքի ճանաչված երաժիշտ-գիտնականները, մասնավորապես Բ. Բարտոկը:

Ամվանի կոմպոզիտորի «Թուրքական ժողովրդական երգեր Փոքր Ասիայից» էթնոերաժշտագիտական աշխատությունը օտարալեզու գրականության մեջ ամենաբարձր հղման ցուցանիշ ունեցող հետազոտությունն է, որի մեջ ամփոփված թուրքամետ գաղափարներն ու փաստարկները դարձել են հայ ավանդական և կոմպոզիտորական արվեստին առնչվող ուսումնասիրությունների պատմատեսական ուղեցույց⁷: Թուրքական կառավարության պատվերով ստեղծված այս աշխատության վիճահարույց խնդիրներին անդրադարձել ենք մեր մի շարք հրապարակումներում: Ասենք միայն, որ Բարտոկը ձգտել էր հայտնաբերել թուրքական և միջինասիական ժողովրդական երաժշտության շարունակականությունը հունգարական ֆոլկլորի բազմաթիվ օրինակներում, հաստատելով թուրք գիտնականների ֆանտաստիկ թեզը, որի համաձայն արևմտյան և արևելյան քաղաքակրթությունների հիմքը թուրքական մշակույթն է: Ամերիկահայ կոմպոզիտոր Ալան Հովհաննեսի «հայկական շրջանի» քննական ենթատեքստը հայ-թուրքական երաժշտական դիսկուրսի ամենաբնութագրական արտացոլումներից է:

Հովհաննեսի ստեղծագործությանն անդրադարձած գրեթե բոլոր հետազոտողները նշում են կոմիտասյան ավանդույթների ազդեցությունը նրա երկերում: Փաստարկների հիմնավորումը սկսվում է հայ երաժշտության ու Կոմիտաս վարդապետի ներկայացումից, որը «մեծահարուստ ռուս բարերարի շնորհիվ» կրթվել է Բեռլինում և, որի համոզմունքն այն է, որ հայ երաժշտությունը, ինչպես և թուրքականն ու քրդականը, պատկանում են միևնույն ճյուղին, օգտագործում են միևնույն վոկալ տեխնիկան, ռիթմերը և միկրոտոնալ ձայնեղանակները⁸: Ասենք, որ հղված աղբյուրում, որի հեղինակը Ա. Փահլևանյանն է, խոսք անգամ չկա ոչ «մեծահարուստ ռուս պատրոնի»՝ Ալեքսանդր Մանթաշյանցի, ոչ էլ Կոմիտասի «համոզմունքների» մասին:

Հովհաննեսի «արևելյան» երկերի քննությունը հայ վոկալ և նվագարանային երաժշտության հետ ունեցած ընդհանրությունների դիտակետից Արևմուտքի հետազոտողներին էլ ավելի լայն ընդհանրացումների է հանգեցնում: Այսպես, «Աշուղները, Թուրքիայում և Ադրբեջանում հայտնի իբրև աշիկներ, տրուբադուրներ են, որոնք պատկանում են Ալիների հավատքին...: Այս լայնասփյուռ և կարևոր վոկալ արվեստն ընդունվել է Հայաստանում...: Աշիկներն իրենց նվագակցում են սազով, սակայն Հայաստանում աշուղական ձայնագրություններն արված են քամանչայի, քանոնի, թառի և դուդուկի անսամբլների կատարմամբ: Այս բոլոր նվագարանները պատկանում են թուրքական և պարսկական ավանդույթներին և Հայաստանը՝ իբրև քրիստոնյա երկիր, կից դրանց սահմաններին, եզակի է իր մշակույթում այդ ավանդույթներն օրգանապես ներծծելու ունակությամբ»⁹:

Իր դաշնամուրային և կամերային ստեղծագործություններում Հովհաննեսն իրոք կիրառել է Կոմիտասի դաշնամուրային պարերի մշակման սկզբունքները. օկտավային կրկնապատկումները, ձայնառությունները, եվրոպական նվագարանի հնչողության հարմարեցումն ու մմանակումը ժողովրդական գործիքներին՝ քանոն, ուղ, նեյ, թմբուկ, թառ, որի արդյունքում դաշնամուրն իր հզոր հնչողական հնարավորությունները զիջում է թափանցիկ, բայց հեռանկարում տեսանելի և իրական հնչողությամբ, Հովհաննեսի դաշնամուրային ստեղծագործությունների բնութագրական հատկանիշներն են:

⁶ Լ. Երնջակյան, *Աշուղական սիրավեպը մերձավորարևելյան փոխառնությունների համատեքստում*, Երևան, 2009, էջ 94-96:

⁷ B. Bartók, *Turkish Folk Music from Asia Minor*, Princeton, 1976. Ժողովածուի ընդհանուր բնութագրի և Առաջաբան հոդվածում տեղ գտած տարակուսելի դրույթների ու եզրակացությունների մասին տես Լ. Երնջակյան, *Նորահայտ էջեր հայ-թուրքական երաժշտական աղերսների պատմությունից*, Հայ արվեստի հարցեր - 2, Երևան, 2009, էջ 56-67:

⁸ Տես Winnard, D., *The Ethnomusicological influences on the performance and teaching of selected piano works of Alan Hovhanness*, 1997, pp. 31-32: Հղում է տրված՝ Alina Pahlevanian, cover notes for "The Voice of Komitas Vartapet", compact disc 4275, Traditional Crossroads, 1995, first recorded in Paris, 1942:

⁹ Տես Broughton S. and others, eds. *World Music: The Rough Guide*, London, 1994, p. 114.

Սակայն որոշ հետազոտողներ, հղելով Բարտոկի «Թուրքական ժողովրդական երաժշտություն» ժողովածուին, համամիտ են, որ Հովհաննեսի մեղեդիները սկսվում են տակտի հենց առաջին շեշտված մասից, բազմաթիվ դրվագներ սկսվում կամ վերջանում են սինկոպային ռիթմիկ պատկերներով, և դա թուրքերի և նրա արևելակրոպական հարևանների ժողովրդական երաժշտության առանձնահատուկ դիմագիծն է:

Մեկ այլ օրինակ է Հովհաննեսի «Մագերո մման ռեհանի» (1968) պիեսի վերլուծությունը:

Կոմպոզիտորը հրատարակել է այն հետևյալ նշումով. «Թաքսիմ (թափառող հանկարծաբան ոգի) դաշնամուրի համար՝ Քանունի, Թառի և Ուդի ընդօրինակմամբ»:

«Թաքսիմը» (արաբերեն՝ բաժանում), որ հանկարծաբանական բնույթի գործիքային մենանվագ է, ներգրավված է օսմանյան մշակույթում ձևավորված *խաշի* կոչվող շարքի մեջ, արաբական, պարսկական ու թուրքական անվանումներ կրող այլ սեռերի զուգադրությամբ: Հովհաննեսի երկի իմպրովիզացիոն բնույթն ընդգծող այս անվանումը, նվագարանների հիշատակումը, ինչպես նաև մծ. 2 պարունակող ձայնակարգը, հետազոտողներին թույլ են տվել այն առնչակցել բացառապես թուրքական երաժշտությանը, էքսկուրսներ կատարել Օսմանյան կայսրության երաժշտական մշակույթի և թուրք երաժիշտների վերաբերյալ, որոնք կայսրության փլուզումից հետո իրենց գործունեությունը շարունակել են հարևան երկրներում՝ նպաստելով թուրքական երաժշտության ժողովրդականացմանը՝ հույն, հայ, հրեա երաժիշտների և սուֆի-երգիչների միջոցով: Նշվում է նաև, որ Հովհաննեսը հավանաբար ներշնչված է եղել թուրքական երաժշտությամբ և նվագարաններով, որոնք օգտագործվում են նաև Ադրբեջանում, Թուրքիայում, Իրանում և Հայաստանում¹⁰:

Մեր նպատակը, բնականաբար, Հովհաննեսի երաժշտության քննադատներին սոսկ մեղադրելը չէ, ոչ էլ կոմպոզիտորի հայկական երկերի գեղարվեստական արժանիքների գերազնահատումը: Հովհաննեսի ստեղծագործությունն ինքնատիպ և ուշագրավ ձայն է ժամանակակից կոմպոզիտորական երաժշտարվեստում և Արևելքով ներշնչված կոմպոզիտորների շարքում, նրա երաժշտությունն անուրանալի ձեռքբերում է՝ Արևելքի հոգևոր արժեքներն ու խորհուրդը Արևմուտքին ներկայացնելու առումով: Տարակուսելի սկզբունքով Հովհաննեսի հնդկական, ճապոնական, կորեական երկերը դիտվում են որպես ներդրում թե՛ տվյալ մշակույթների, թե՛ Արևմուտքի երաժշտական մտահորիզոնի ընդլայնման ոլորտում, իսկ հայկական շրջանը շոշափվում է առանց որևէ ընդհանրացումների, լռության է մատնվում հայ երաժշտության մուտքը XX դարի արևմտյան երաժշտարվեստ: Հեղինակի ստեղծագործության առիթով արտահայտված մման պատկերացումներն ու մակերեսային դիտարկումները բացատրելի են թե՛ հայ երաժշտարվեստը ներկայացնող սակավաթիվ օտարալեզու գրականությամբ, թե՛ մատչելի աղբյուրների բացակայությունը և կողմնակալ մեկնաբանությամբ և թե՛ թուրք-ադրբեջանական երաժշտությանը նվիրված աշխատանքներում ամբարված ապակողմնորոշող տեղեկատվությամբ:

Մտահոգող խնդիրը տվյալ պարագայում Հովհաննեսի ստեղծագործությամբ միջնորդավորված, հայ երաժշտարվեստի բնութագիրն է, որն ըստ հետազոտողների օգտագործած աղբյուրների ուրվագծվում է իբրև զանազան արևելյան մշակույթների ազդեցության ոլորտում ձևավորված մի երևույթ՝ խաթարված ազգային նկարագրով: Իսկ Կոմիտասի լայնախոհ և իրավացի հարցադրումները մշակույթների փոխազդեցության և ընդհանուր երաժշտական հատկանիշների վերաբերյալ կանխակալ ու միակողմանի մեկնաբանությամբ մեջ են բերվում որպես թուրքական ազդեցությունը լուսաբանող գիտական փաստարկներ:

Հայ-թուրքական երաժշտական կապերի գորղյան հանգույցը հեռու է հանգուցալուծումից՝ հայ երաժշտական ավանդույթի պատմական դերի ճանաչումից և ներկայացումից Արևմուտքի ակադեմիական երաժշտագիտության մեջ: Այսուհանդերձ, նոր հազարամյակի մշակութային-քաղաքական հարաբերությունների գլոբալացման գործընթացներում ձևակերպվում են տարածաշրջանի ընկալման այլ չափանիշներ:

Անատոլիայի հարուստ մշակութային ավանդույթները, որ թուրքական երաժշտության մենաշնորհն էին համարվում, դրա ինքնությունն ու վաղնջական ծագումն ապացուցող փաստարկների հիմքը, սկսել են վերանայվել և գնահատվել նաև տվյալ տարածքում ապրող մյուս ազգերի երաժշտական ավանդույթների դիտակետից:

Թուրքական պետական արխիվներում պահպանվող պատմագիտական կարևոր արժեք ներկայացնող բանահյուսական նյութերի ուսումնասիրումն ու հրապարակումը, տրանսքենիկ ֆոլկլորային անսամբլների բազմալեզու երկացանկի բարձրորակ ձայնագրությունների թողարկման անընդմեջ հոսքը հետազոտական լայն ասպարեզներ են բացահայտել Արևմուտքի գիտնականների համար:

2011 թ. լույս տեսած Էլիոտ Բեյթսի «Երաժշտությունը Թուրքիայում» մենագրական աշխատությունը թուրքական մշակութային քաղաքականության նոր միտումներն արտացոլող հայտերից է¹¹: Առաջին անգամ էթնոերաժշտագիտական հետազոտություններում Անատոլիայի երաժշտական ավանդույթ հասկացությունը բնութագրվում է իբրև թուրքական հանրապետության սահմաններում ներառված

¹⁰ Տե՛ս D.Winnard, նշվ. աշխ., էջ 38–39, 65–68:

¹¹ E.Bates, *Music in Turkey*, New York, Oxford, 2011.

երկրամասում ապրող ավելի քան 40 էթնիկ միավորների և ազգությունների մշակութային կոնգլոմերատ՝ ստեղծված քրիստոնյա և մահմեդական ժողովուրդների երաժշտական ավանդույթների փոխներթափանցման արդյունքում: Իսկ կառավարական ծրագրերի ուշադրության կենտրոնում գտնվող **թուրքի** ժանրը մեկնաբանվում է իբրև թուրքերենով երգվող երգ կամ բալլադ, որը զերծ է կրոնական գործառույթից: Վերջապես, արիստիկային նյութերի ուսումնասիրությունից ստացված ամենակարևոր վկայությունը. բազմաթիվ երգեր, որոնք կատարվել են հայերեն, քրդերեն, լազերի ու զազաների լեզուներով, քարգմանվել են թուրքերենի, հետո միայն ձայնագրվել, տարածվել թուրքերենով, սակայն տվյալ ժողովրդի երաժշտական կենցաղում շարունակում են հնչել նաև իրենց մայրենի լեզվով:

Եվ այսպես, դարձյալ Արևմուտքի հեղինակների շնորհիվ, հնարավոր է դառնում խոսել թուրքական երաժշտական մշակույթի կազմավորման և ինքնության ևս մի նոր հարացույցի մասին, որտեղ էթնիկ, լեզվական, կրոնական և աղանդավորական միավորների շարքում հիշատակելի են դառնում նաև հայերը: Արևմուտքի երաժշտական թուրքագիտության մեջ հեղափոխական փուլ նշանավորող այս դրույթը, վաղուց գիտակցված և կարևորված հայ երաժշտագիտության մեջ, ուղիներ է հարթում ավելի քան 50 հազար թուրքիների և շարքիների՝ ժողովրդական և ժողովրդամասնագիտացված երգարվեստի խորհրդանշական ժանրերի հիմքերը պարզաբանելու և հայալեզու կամ այլալեզու բնօրինակների հետ համեմատելու համար:

Lilit Yernjakyan (Armenia)

INTERPRETATION OF ARMENIAN MUSICAL CULTURE IN FOREIGN SOURCES

Ethno-cultural origins of Armenian music in some western musicological studies are presented in a distorted and inaccurate way. The historical role of Armenian musical tradition in near eastern cultural heritage is completely ignored. The basis of tendentious interpretations of musical factual materials and historical evidence on Armenian culture can be traced in ideas and notions championed by Turkish and Azerbaijani authors with references to prominent western scholars and musicians. The deliberate ignorance of Armenian factor, having historical and political reasons, simulates antiscientific discourse and hinders the identity representation of Armenian music in the cultural context of Near East.

Андрей Иванов (Россия)

ГРАДОСТРОИТЕЛЬНОЕ НАСЛЕДИЕ ЕРЕВАНА: ВЕРНАКУЛЯР VS. МОДЕРНИЗМ

Определим градостроительное наследие, как совокупность признанных обществом или отдельными социальными группами, а также находящихся на пороге признания материальных (ландшафтных, планировочных, архитектурных) и нематериальных компонентов поселенческой среды, представляющих существенную культурную, символическую, мемориальную, эстетическую ценность на различных уровнях (от локальных сообществ до всего человечества).

В свое время мы рассмотрели гетерогенное градостроительное (урбанистическое) наследие Еревана как своего рода «слоеный пирог», состоящий из восьми слоев-коржей (урартский; средневековый армянский; тюркский/персидский; российско-позднеимперский; слой самоорганизационной, вернакулярной застройки разных времен; слой 1920-х – 50-х гг. – конструктивизм и армянская неоклассика; слой «советского модернизма» 1960-х – 80-х гг.; постсоветский слой)¹.

Однако в рамках данной статьи для лучшего понимания сути сегодняшних проблем мы сосредоточимся на двух из трех наиболее существенных слоев этого «пирога», составляющих, по нашему мнению, квинтэссенцию ереванского урбанистического наследия, и используем метафору триколора. Наша модель наследия городского ядра Еревана – территории т.н. Малого центра с несколькими прилегающими районами – выглядит следующим образом: основной, самый мощный классицистический слой («синий») как бы охватывается снизу и сверху двумя другими слоями – вернакулярным («охристым») и модернистским («красным»). Естественно, это не более, чем умозрительная схематичная конструкция, своего рода авторская формула градостроительного наследия Еревана. В реальной городской среде конкретные проявления слоев (элементы планировки, здания, детали, образы, тексты и

¹ Подробнее см.: Иванов А. *Ереван: место рассеянного гения* // SPEECH. 2012, № 9, с. 156-176.

т.д.) взаимопроникают, смешиваются, перекликаются, а в наиболее благоприятных (и очень редких в Ереване) случаях могут достигать состояния симбиоза. И все же полезным представляется четкое ментальное разделение этих слоев с определением их главных особенностей и возможных подходов к сохранению.

«Охристый» слой наследия – это историческая вернакулярная (от англ. vernacular – народный; свойственный данной местности; просторечный) застройка Еревана. Данный слой представлен, как правило, индивидуальными жилыми зданиями периода 1830-х – 1950-х гг., созданными без участия архитекторов в рамках устойчивых местных традиций (до 1920-х гг. – в условиях мультикультурного города, армяно-русско-тюрко-персидских взаимодействий) и общепринятых на момент постройки строительных технологий. При весьма внушительных утратах исторического наследия в Ереване вернакулярный слой сохранился пока в достаточно больших объемах. Он выражен в комплексе в исторически сложившихся вернакулярных районах² или урочищах (Конд, Старый Норк, Норагюх, Канакер, Старый Аван и др.), а также в более новых спланированных районах (Сари-Таш), фрагментарно в микро-анклавах в центре города (остатки кварталов между улицами Бюзанда и Арами, северная сторона начала ул. Пушкина и др.), отдельными чудом уцелевшими зданиями и архитектурными деталями.

«Синий» слой – квартальная среднеэтажная «фасадная» застройка площадей, проспектов и улиц центра по генеральному плану 1924 г. и его преемственным корректировкам в т.н. неоармянском стиле, изобретенном А. Таманяном и его последователями – не является предметом данной статьи. Отметим лишь, что, сохранив во многом сложившуюся планировочную структуру дореволюционной Эривани, к рядовой застройке города, бывшей в то время преимущественно вернакулярной, Таманян отнесся во вполне модернистском духе как к абсолютно не значимой пустоте – потенциально чистому месту для «правильной» новой архитектуры.

Наконец, «красный» слой – это наследие модернизма в широком понимании этого термина: конструктивизм конца 1920-х – начала 30-х гг., в ряде случаев практически ставший вернакуляром в ходе его обживания (пример – «шахматный дом» К. Алабяна и М. Мазмания), панельные жилые многоэтажки 1960-х – 80-х, жестко вставленные в «таманяновские» уличные фронты и дворы, обширные периферийные жилые массивы и отдельные яркие общественные здания, признанные мировым архитектурным сообществом шедеврами стиля т.н. «советского модернизма», но, тем не менее, находящиеся ныне под угрозой уничтожения. Здесь целесообразно различить следствие (материальную субстанцию городской среды) и причину ее появления – *модернистский подход* к городу, обернувшийся к нынешнему моменту почти полной утратой исторической среды дотаманяновского периода в пределах Малого центра. Этот подход, внятно оформленный методологически (от Афинской хартии до советского градостроительного СНиПа), с культурной точки зрения характерен игнорированием конкретных *мест* как «накопленных времен» (М. де Серто) с априори (до прихода архитектора-демиурга) присущими им ценностями, стремлением к волевому прерыванию исторического времени и кардинальному переформатированию городской идентичности.

Модернистский подход (равно как его периферийно-постмодернистская «реинкарнация» в застройке Еревана начала XXI в.) игнорирует именно те ценности ереванского вернакуляра, которые сегодня все более дефицитны и потому все больше востребованы современным человеком: аутентичность, осязаемость патины времени, рукодельность, сомасштабность человеку, тесную сращенность материальных и социальных компонентов среды, архитектурную выраженность процессов самоорганизации города как мира, устраиваемого «снизу вверх» и «по горизонтали» самими его обитателями. Вернакуляр отражает «горизонтальные» составляющие «ереванскости»: обжитость, срединность, «семейность», диалогичность. Ценности же модернизма, создаваемого, как правило, «сверху вниз»³, «вертикальны» – это «столичность», авторитарность, амбициозность, индивидуализм. Они потенциально уравнивают и дополняют ценности вернакуляра, но не могут заменить их.

К сожалению, ереванский вернакуляр, начиная с 1920-х гг., уничтожается быстрее, чем успевает самовоспроизводиться. Качества, присущие вернакулярной среде, все больше «выжимаются» из современного города и, одновременно, становятся все более востребованными современным человеком, вынужденно потребляющим все больше универсального и «чужого», теряющим собственные

² «В географии под термином “вернакулярный район” понимается территория, выделяемая, в первую очередь, самими горожанами, обладающая в сознании её обитателей общепризнанным образом, состоящим из набора когнитивных, аффективных и ценностных компонентов» (Пузанов К.А. *Внутригородская самоорганизация общества (США, Россия и страны Европейского Союза)*: Автореф. канд. дис. М.: МГУ, 2012, с. 3-4).

³ Показательна выдающаяся личная роль отдельных руководителей Советской Армении и Еревана при создании некоторых знаковых объектов 1960-х – 80-х гг. – монумента жертвам Геноцида, Дворца молодежи, Спортивно-культурного комплекса и т.д.

корни. Поэтому сохранившиеся в Ереване фрагменты вернакулярной среды являются бесценным средовым ресурсом города и заслуживают сохранения в интересах будущих поколений горожан.

Уничтожение вернакуляра выгодно девелоперам (быстрая прибыль при освоении «условно чистой» территории), чиновникам (нет среды со сложным клубком проблем – нет проблем), политикам (неукорененным населением легче управлять), многим практикующим архитекторам (новые заказы) и противоречит сегодня лишь интересам самих обитателей (точнее, тех из них, кто хотел бы продолжать в нем жить) и той небольшой части сообщества, которая видит его истинную ценность и потенциал.

Но в более долгой перспективе это не выгодно городу в целом – всем будущим поколениям его жителей, – поскольку приведет к:

снижению уровня социального, культурного, пространственного разнообразия, нивелированию различий, росту средовой энтропии;

размыванию городской идентичности, утрате уникальных, неповторимых мест и урочищ, отличающих Ереван от других городов мира;

разрыву веками формировавшихся, симбиотических связей обитателей и места, росту универсализации и анонимности городской среды;

лишению города важных стратегических перспектив: преемственного развития традиционной исторической среды с непрерывным повышением ее капитализации; разрыва порочного цикла «строить – ломать, строить – ломать»⁴ с переходом к цивилизованному градоустройству; возрождения навыка «сосуществования образов жизни» как основы гражданского общества.

Однако вернакулярное наследие продолжает разрушаться, причем не только квазиестественным образом (ввиду небрежения, отсутствия должного ухода из-за непроясненности имущественных прав жителей), но и целенаправленно (зачистка двух последних вернакулярных кварталов центра между улицами Бюзанда и Арами ради создания здесь псевдоисторического комплекса «Старый Ереван»). Редкие примеры успешного сохранения отдельных зданий (т.н. Villa Delenda – бывший дом братьев Мнацаканянов на ул. Кохбаци, приобретенный и любовно отреставрированный бизнесменом из Италии, несколько исторических зданий Старого Норка, поддерживаемых проживающими в них потомками первых владельцев, домик на ул. Арами, 30, спасенный от сноса градозащитниками в конце 2011 г.) не меняют общей тревожной картины.

Для системного спасения вернакуляра необходимо прежде всего *осознание* всеми субъектами городской среды его значимости, как существенного и неотъемлемого компонента наследия города. До такого осознания вернакулярного наследия Еревана как культурно-исторического феномена, по сути, не существует. Его еще *предстоит создать*, прежде всего, на ментальном уровне.

Несколько иная ситуация сложилась с модернистским наследием. Его наиболее яркие здания-представители, безусловно, признаны значимыми архитектурными памятниками, но это признание пришло как бы извне широкой социальной среды. Их ценность не укоренилась в общественном сознании, связывается многими с будто бы требующим преодоления «общесоветским» наследием и оказывается непрочным, недостаточным аргументом при решении судьбы этих зданий. Отношение власти и общества к лучшим образцам «советского модернизма» далеко от идеального. Уничтожен символ города – Дворец молодежи. Голый каркас остался от гостиницы «Двин». Кинотеатр «Россия» переделан в ТЦ, уникальные пространства фойе и залов недоступны и не используются. Под угрозой сноса находится «круглый» терминал аэропорта «Звартноц».

В этом контексте показателен случай Летнего зала кинотеатра «Москва» (архитекторы С. Кнтехцян и Т. Григорян, 1967 г.). Предельно рациональная, острая по форме, почти абстрактная объемно-пространственная композиция зала из монолитного бетона, без каких-либо деталей и облицовки, появилась рядом со старым зданием кинотеатра, построенным в 1930-х гг. на месте взорванной церкви Свв. Погоса и Петроса. Зал полюбился ереванцам, активно использовался и уже в 1983 г. был официально признан объектом наследия в качестве памятника архитектуры республиканского значения. Но после развала Союза его забросили. В середине 90-х С. Кнтехцяна убедили «разрешить» снос части комплекса, выходявшей на ул. Туманяна, и на этом месте возникла банальная «стекляшка». В феврале 2010 г. решением правительства Армении Летний зал вычеркнут из списка охраняемых памятников, и его территория предоставлена Армянской Апостольской церкви для строительства храма. Поднялась волна общественного возмущения. Благодаря активным протестам культурной общественности Еревана, армянских и российских архитекторов⁵ Летний зал снести не

⁴ См.: Исабекян Э. *Игдыр*. Пер. с арм. Г. Гарибян. Ер.: Лусакн, 2010, с. 39.

⁵ См., например, утверждение Е. Асса: «Летний зал – шедевр мирового класса. На постсоветском пространстве такого уровня произведений – считанные единицы. Это наше общее наследие, и мы должны сделать все возможное, чтобы защитить его» (Дарбинян В. *Сохраним «Москву» в Ереване* // Голос Армении, 24 июня 2010, № 68 (20001) // <http://www.golosarmenii.am/ru/20001/culture/4285/>).

решились. Однако статус здания до сих пор не ясен, и в список охраняемых памятников его так и не вернули. Соответственно, не реализуем в настоящее время и наиболее верный подход к сохранению этого шедевра: научная реставрация с воссозданием утраченных частей здания и нахождением правильного типа использования.

Նրա ստեղծագործական և նկարչական որոշակի մաներայի ձեռքբերումը տեղի ունեցավ 1960-ականների առաջին կեսին և արձանագրվեց 1969 թ. Հայաստանի ճարտարապետների միության ցուցասրահում: Մեզ մոտ նրա առաջին դասերը 1961 թ. հունիսին Էտյուդների գնալն էր, այսինքն՝ բացօթյա նկարելը բնության գրկում՝ Երևանի ծայրամասերում: Որպես կանոն իր հետ նա բերում էր մի մեծ թղթապանակ՝ մեջը իր 1950-ական թթ. ջրանկարները: Նա գրուցում էր կյանքից, մարդու և նկարչի վարքագծից, բացատրում էր այն ջրաներկային տեխնիկան, որ գործածում էր իր նկարներում: Այսինքն չէր սկսում ab ovo, կարծես թե վախենալով վիրավորել ուսանողների ինքնասիրությունը: Նրա գողտրիկ ջրանկարներում ոչ մի մարդ և կենդանի արարած չկար: Տասնամյակներ հետո Երևանի Գեղարվեստի ակադեմիայի ֆոնդերում ես տեսա նրա բնորդային մի քանի կատարյալ մատիտանկարներ, ինչպես այն ժամանակ էին ասում՝ «մոմած»։ դա 1950-ականների սկիզբն էր, որովհետև հիմա նման «մոմած» նկարներ չեն կարողանում անել:

Իսկ մեր կուրսում ուսանողների թե՛ տեսական, և թե՛ կատարողական մակարդակները շատ տարբեր էին: Կային Թերլեմեզյանի ուսումնարանում և Երևանի Պիոներների պալատում սովորած նկարիչ-քանդակագործներ և կային մարդիկ, որոնց նկարչական փորձը զրո էր կամ էլ պրիմիտիվ արտանկարների մակարդակի: Նույնը վերաբերում էր ուսանողների էրուդիցիային կամ ուսյալ լինելուն: Կային կարդացած և գիտակ ուսանողներ, որոնք հստակ տարբերում էին ինչպես դարաշրջանների, գեղարվեստական հոսանքների, այնպես էլ առանձին վարպետների ոճերը: Հունանյանը վերջիններիս նկատմամբ մեծ պատկառանք ուներ, որ պահպանվեց մինչև նրա կյանքի վերջը:

Ջրաներկով նկարելը դժվար է տեխնիկական մի քանի առանձնահատկությունների պատճառով: Եվ քիչ նկարիչներ են սիրում աշխատել այդ տեխնիկայով: Իսկ նա ջրաներկին սիրահարված էր

մինչև ուղնուծուծը: Նախընտրում էր վատմանի չեչոտ կամ ավելի հարթ թերթի վրա ջրաներկի թաց տեխնիկան, այսինքն նկարել ձգած ու խոնավացված «վատմանի» թերթի վրա և նկարելու ընթացքում հավասարապես պահպանել թղթի խոնավությունը: Խոնավ թղթի վրա նկարելու նրա տեխնիկան ընդօրինակեցին մաս մի քանի ուսանողներ և նույնիսկ դասախոսներ: Բայց նրանցից ոչ մեկը չհասավ Արտաշեսի վիրտուոզ վարպետությանը:

Ջրաներկով նկարելու մյուս տեխնիկան գույները բացից մուգը միմյանց վրա դնելն էր, ինչը նախընտրում էին Դելակրուան և Սեզանը: Իսկ թացով աշխատելու տեխնիկան նախընտրում էին անգլիացի վարպետները XVIII-XIX դարերում և հատկապես բանաստեղծական ռոմանտիկ ոգով օժտված վարպետները: Իսկ ներկերը չորանալու հետ միմյանց վրա և կողք կողքի դնող վարպետները օժտված էին ավելի ռեալիստական, ակադեմիական կամ կառուցողական տաղանդով: Թաց տեխնիկայի բարձրագույն վարպետներ ընդունված է համարել միջնադարյան և ոչ միայն միջնադարյան չիմացի վարպետներին, որոնք սիրում էին նկարել խոնավ եղանակը, լեռնային ու անտառային մշուշները, կիրճերը, գետերը, լքված հյուղեր և թռչուններ:

Արտաշեսի ջրանկարները ևս հիմնականում պատկերում էին Հայաստանի հյուսիսային շրջանների մշուշված լեռները, կղմինդրե կարմրավուն տանիքները, ամպերով ծածկված սարալանջերի անտառները, միմյանց մեջ մտնող ու ելնող ամպերը: Այդ ջրաներկերը մոգական տպավորություն էին գործում ոչ միայն ուսանողների, այլև ուզած դիտողի վրա իրենց թախծոտ բանաստեղծականությամբ, բնության մեղամաղձոտ փոփոխությունները վերարտադրելու բացառիկ ուժով:

Այդ ժամանակ ուսանողներից մի քանիսի մոտ շրջանառվում էին XX դարի արվեստի ազդեցությունները: Դրանք դուրս էին գալիս գուտ նկարչության սահմաններից: Իսկ ինքը՝ Արտաշեսը, ի ծնե ռոմանտիկ էր և երագող: Նա ուներ մաս մի այլ առանձնահատկություն - անկեղծ զարմանքը, ուշադիր լսելը ուրիշին և իրեն գրավող մտքերի վայրկենական յուրացումը: Նրա պսիխո-ֆիզիոլոգիական ապարատը զարմանալի ընկալունակ էր և որսում էր այն ամենը, ինչ կարող էր, իր կարծիքով, նկարելու կամ մտածելու համար օգտակար լինել: Իսկ ի՞նչ նախադրյալներ կային դրա համար: Եթե ես տեսած չլինեի նրա ուսանողական ակադեմիական գծանկարները և տուշով ու ջրաներկով մանրակրկիտ նկարված վաղ շրջանից պահպանված մի քանի գրաֆիկական գործեր, շատերի նման կկարծեի, թե նա տեխնիկական ինչ-որ ֆոկլոսներ է անում, ինչ հայտնի է անտիկ շրջանից (օրինակ, Իտալիայում նայում էին Ալվազովսկու կտավների ետևից, թե նա լուսավորող լամպ չի՞ դրել արդյոք՝ ապշեցնող մայրամուտի և արևագալի ալիքներին վետվետացող լույսերի բնականության վրա): Նման մի կախարդանք էլ կար Արտաշեսի վաղ և հասուն շրջանների ամենաբազմազան մաներաներով արված նկարներում:

Ա. Հունանյանի 1960-ական թթ. առաջին կեսի ուսանողները հայտնվեցին խրուշչովյան ձնհալքի շրջանում: Դա թարմ ու նոր տպավորությունների մի շրջան էր՝ իմպրեսիոնիզմից մինչև աբստրակցիոնիզմի տարբեր տեսակները: Ոմանք ձգտում էին իրենց կարողության սահմաններում ամեն ինչ հասկանալ ու յուրացնել - մաքուր գույների հարաբերություններ, նկարի պարզեցում՝ սխեմայացում, թարմ սյուժեներ ու մոտիվներ հին ստանդարտ աշխատաքային սյուժեների փոխարեն: Դա մասնաշրջանի ընդլվածում էր այն հին մեթոդների կամ հնոտու փոխարեն, ինչ մեզ մատուցում էին: Բացի առօրյայից մեր գրույցներն ընթանում էին ոչ միայն կերպարվեստի, այլև պոեզիայի, երաժշտության, ճարտարապետության և նույնիսկ ֆիզիկայի շուրջ, քանի որ մեր նկարիչ-մանկավարժ ուսանողները մեկուսացած չէին, նրանք շփվում էին երաժիշտ, պատմաբան, բանասեր, մաթեմատիկոս, ֆիզիկոս ուսանողների, գեղարվեստի ինստիտուտի և ուսումնարանի սաների հետ, որոնք որոշակի հետաքրքրություններ ունեին ոչ միայն դասական, այլև XX դարի նորությունների հեղեղի նկատմամբ, որոնց թափանցման ուղիները մեզ մոտ դեռ շատ նեղ էին: Մենք գտնում էինք մեզ համակրող երիտասարդ դասախոսների, որոնցից ամենաընկալունակը թերևս Արտաշեսն էր, որն առհասարակ փշրում էր դասախոս-ուսանող, ավագ-կրտսեր, ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների պատմեղները և զարմանալիորեն կլանում և վերափոխում ամեն մի նոր բան, որտեղից էլ այն հայտնվեր: Նրա շփումները հետագայում դուրս էին գալիս ուսանողական շրջանակներից դեպի նոր և պաշտոնականից տարբեր մտածող երաժիշտները, նկարիչները, պոետները, մտածողները. Վալերի Պոդոսյանը, Ադայան եղբայրները, հատկապես ավագը, Մարտին Պետրոսյանը, Հայրիկ և Մարո Մուրադյանները (Արտաշեսը հիանալի երգում էր Հայրիկի երգերը, ինչպես մասնա նրա որդին՝ Գևորգը), Լևոն Ներսիսյանը, Էդմոնդ Ավետյանը և շատ շատերը, այդ թվում մի քանի մոդեռնիստ բանաստեղծներ:

Ջանի որ բացի գեղանկարչի կրթությունից Արտաշեսը որևէ այլ սիստեմատիկ գիտելիքների չէր տիրապետում, ուստի ծաղափ էր ամեն գիտելիքի մինչև իր կյանքի վերջը: Դա էլ նրան հանգեցնում էր այնպիսի ֆանտազիաների, որոնք իրագործելի էին կամ ոչ իրագործելի իր իսկ պրակտիկայում: Կյանքի վերջին տասնամյակներում նրա միտքը հակված էր որոշ անհետևողական միստիկական և փիլիսոփայական ուսմունքների: Նա ինձ մի կազմած տեսք էր նվիրել բաղկացած իր խոհերից և «Պահպանակ» վիթխարի պոեմից: Դա 1980-ական թթ. վերջն էր՝ անմիջապես Գյումրիի և Սպիտակի երկրաշարժից առաջ: Սպիտակում, որտեղ արդեն երկար ժամանակ նկարչության ուսուցիչ էր, երկրա-

շարժի ժամանակ նա կոտրեց ձեռքը, հոգեկան խոր ցնցում ստացավ և այդ խոր ցնցումից էլ մահացավ ԱՄՆ-ում, որդու մոտ:

Քիչ քե շատ ընդունելի իր երազած տեխնիկական ու միատիկական վարկածների հետ (նկարել առանց վրձնի, նկարելիս օգտագործել զանազան միջոցներ՝ մատ, սպունգ, շորի կտոր, դանակ և այլն), որոնք բխում էին տարերային մոդեռնիզմից ու արստրակտ էքսպրեսիոնիզմից, նա ընտրում էր մի քանի բարձրագույն հոգևոր առաջնորդներ՝ Սոկրատ, Քրիստոս, Նարեկացի, Վիվեկանանդա, որի կյանքը նկարագրել է Ռոմեն Ռոլանը իբրև հնդկական բարոյագիտական ուսմունքներ պրոպագանդող Եվրոպայում և ԱՄՆ-ում:

Հատկապես Նարեկացու պաշտամունքը և Սպիտակում դպրոցականներին դասավանդելիս ունեցած ազատ ժամանակը Արտաշեսին թույլ էին տալիս ընթերցել Նարեկացու Մատյանը Սկրտիչ Խերանյանի թարգմանությամբ և Հայկազյան բառարանից դուրս գրել հազարավոր բարձր ոճի բառեր, որոնք նա օգտագործեց իր «Պահպանակ» մատյանում, որ նկարագրող էր մանրանկարչական պարզ զարդերի ոգով և ուղեկցել հայ հոգևոր երգերի նոտաներով. այդ մատյանը մի կողմից ներքող է մարդ արարածի, մյուս կողմից՝ նրա արատների դիսիդենտական խարազանում, ինչպես այսօր անում են բազմապիսի հեռուստականները ահաբեկելով թշվառ մարդկությանը մեր մոլորակին սպառնացող մոտարուտ աղետների գարշելի «գիտական» և կեղծ միատիկական տեսիլներով: Երևի Շիրազի «Բիբլիականից» ու «Դանթեականից» և Սևակի «Անլուելի զանգակատնից» հետո մեր պոեզիան այդպիսի ցասումնալի թոքային շնչառություն չէր ունեցել: Նրանում կան հիանալի բանաստեղծական տողեր. «Ծովերն անհատակ թող ուրախանան իրենց լիությամբ, ջրի կաթիլը՝ կատարյալ տեսքով», «Հրաշքով տեսա արև ու անձրև գրկախառնված իջան երկնքից...թյունով ներծծված մայքերի վրա և բլուրներին աղբանոցների» և այլն:

Հունանյանի գեղանկարչական և գրական ստեղծագործությունը անսովոր լեզվով մարդու ներքին երկվության, թշվառության ու ագրեսիվության ներքին հայելիներ են՝ արտացոլելով Արտաշես մարդու ներքին ողբերգությունը և հոգու պայծառությունը:

Vigen Ghazaryan (Armenia)

THE PAINTER ARTASHES HUNANIAN

Artashes Hunanian's art has a magic influence on the observer. The secret of such a magic seems was wholeness of the man and artist. The first personal exhibition of his paintings at 1969 in the gallery of Armenian Architects association had a great success. He preferred watercolour technique.

The artist's naturalistic watercolours represent the fog of the mountains and forests of northern Armenia. Afterwards his painting's technique mentions the fantastic and enigmatic works of surrealists and american abstract expressionists. He often painted without brushes and with knives, sponges and in other media. At the end of his life Hunanian wrote a great mystical poem in the manner of Narecatsi where he criticised the human week spots in the soviet period.

Յուրի Յուզբաշյան (Հայաստան)

ԿՈՍԻՏԱՍԻ ԵՐԱԺՇՏԱՍԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՀԱՄԱՍԱՐԴԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Երաժշտությունը համամարդկային արվեստ է, որի արժեքները ձևավորվում ու զարգանում են տարբեր ազգերի երաժշտական մշակույթների փոխհարաբերության ու փոխներգործության հիման վրա: Այս իմաստով, ազգային երաժշտությունը կարող է դառնալ համամարդկային, եթե ազգի ներկայացուցիչն իր մեջ ներառում է համամարդկային որակներ ու գեղարվեստական արժեքներ:

Հայ ժողովրդի համար այդպիսի ներկայացուցիչներից մեկը կոմպոզիտոր և մանկավարժ Կոմիտասն է: Նա գտնում է, որ «Ազգերու փոխադարձ ազդեցութիւնն անուրանալի եւ անհերքելի փաստ է, որովհետեւ, անազդեցիկ մնացած ազգ չիկայ, իւրաքանչիւր ազգ, ինչ որ չունի ունեցողէն, պէտք զգացած ժամանակ փոխ կ'առնէ եւ կ'ազգայնացնէ»: Այս իմաստով, ազգային երաժշտության իմացությունը դառնում է մի բանալի՝ համամարդկային երաժշտությունն ավելի լավ հասկանալու և ճիշտ արժևորելու համար:

Կոմիտասը 1914 թ. ելույթ ունենալով Փարիզի «Միջազգային երաժշտական ընկերության» համաժողովում, ցույց տվեց, որ «Հայ երաժշտությունը ամենէն մաքուր հայելին է ցեղին, ամենէն հարա-

¹ Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրություններ և յորդածներ, գիրք Բ, Երևան, «Սարգիս Խաչենց», 2007, էջ 86:

զատն ու կենդանին անոր բոլոր արտահայտութեանց մէջ, կենդանի՝ որքան կենդանի է այդ ցեղը, ուժեղ՝ որքան ուժեղ է իրեն ծնունդ տուող ժողովուրդը»²: Նման մեկնաբանությունը հնարավորություն է տալիս ասելու, որ դարերի պատմություն ունեցող հայ ժողովրդի երաժշտությունը լիիրավ իրավունք ունի լինելու համաշխարհային երաժշտական մշակույթի մեծ ընտանիքի անդամ:

Կոմիտասը գտնում է, որ ազգի գեղարվեստական դաստիարակության գործում երաժշտությունն ու պարը կարևոր դերակատարում ունեն, ուստի, պետք է, որ հայկական դպրոցներում ուսուցվող առարկաների կողքին արվեստի այդ երկու տեսակները ունենան իրենց որոշակի տեղը: Ըստ Կոմիտասի՝ երաժշտությունը և պարը ունեն նաև կրթադաստիարակչական մեծ ներուժ՝ Մարդ դաստիարակող և զարգացնող յուրահատկություններ, որոնք բխում են մանկավարժության ընդհանուր օրինաչափություններից:

Թեև Կոմիտասը մանկավարժական ուղվածությամբ որոշակի տեսական աշխատանքներ չի գրել, սակայն նա իր երաժշտամանկավարժական հայացքներն ամփոփել է հոդվածներում, դասախոսություններում և կիրառել գործնական աշխատանքում: Նրա մանկավարժական գործունեության մասին հետաքրքիր տեղեկություններ կան նրա աշակերտների, ժամանակակիցների հուշերում, ինչպես նաև նամակներում:

Կոմիտասի «Մանկիկ Վահագնին» խրատականը, որը գրել է 1911-ին Ալեքսանդրայում և «Պարն ու մանուկը» դասախոսությունը, որը կարդացել է 1912-ին Թուրքիայի Եսայան դպրոցում, նրա մանկավարժական հայացքների խոսուն վկաներն են:

Կարևորելով ազգային երաժշտության և պարի դերը հայ երեխաների մտավոր, ֆիզիկական, գեղագիտական, ինչո՞ւ չէ, նաև էկոլոգիական դաստիարակության բնագավառներում, Կոմիտասը իր մտքի և բնավորության պարզությամբ՝ դիմում է մանուկներին.

«Սիրուն մանկիկ, կայտառ մանկիկ, օր մը դուն այլ պիտի մեծնաս ու մարդ դառնաս: Քեզի մէկ պզտիկ խրատիկ մը տամ:

Սիտքդ մարզէ ազնիւ գիտութիւններով եւ մաքուր գեղարուեստով: Իմաստ ունի ծովածաւալ մտքէն որսա գիտութիւն եւ գեղարուեստագէտի սրտէն բարի բարի զգացումներ»: Շարունակելով միտքը Կոմիտասն ասում է. «Կարդա բնութեան գիրքը, որ կարելի չէ ոչ մէկ բանով գրել, ոչ մէկ ձայնով արձանագրել, ոչ մէկ գոյնով նկարել եւ ոչ մէկ գործիքով դրոշմել... Սիրուն մանկիկ, պայծառ մանկիկ, սիրէ բնութիւնը»³...

Կոմիտասը գտնում է, որ բնությունը կյանքի ճանաչողության դպրոց է, այն պետք է ուսումնասիրել և սովորել: «Սիրի՛ր բնությունը, սովորի՛ր նրանից ճանաչել կյանքը», - գրում է Կոմիտասը⁴:

Կոմիտասի կարծիքով, ժողովրդական երգերը և պարերը բնության երևույթներն ու պատկերները, ժողովրդի կյանքի բազմազան կողմերը արտահայտող գանձեր են: «Ժողովրդի երգեցողությունն ունի ինքնուրույն դպրոց, ուր դաս են առնում ամենքը ամեն ժամանակ, երբ կարիք են զգում: Գեղջուկի դպրոցը, ուսուցիչը եւ առարկան բնութիւնն է»⁵: Ահա թե ինչու, ժողովրդական երգը և պարը պետք է դառնան երեխաների երաժշտական դաստիարակության և պարային կարողությունների զարգացման հիմնաքարը: Արվեստի այդ երկու տեսակները հուզազգացմունքային լիցք են հաղորդում երեխաներին ու զարգացնում նրանց հոգևոր աշխարհը, ազգային զգացողությունը, կենսաբանական բնագոյը, մտածողությունը և ծանոթացնում հայ ժողովրդի պատմությանը, հոգևոր և կենցաղային արժեքներին:

«Երաժշտության նպատակը ի՞նչ է», - հարց է տալիս Կոմիտասը, միաժամանակ պատասխատւմ, - «Երաժշտութեան նպատակն է հոգին ու սիրտը կսպել, մտաւոր գործողութիւնը, կարողութիւնը սրտի զգացմանց հետ միացած արտահայտել, այնպէս որ մեր սիրտը մաքրուի, որ նմանուի արծաթին, այսինքն շատ մաքուր լինի»⁶:

«Պարն ու մանուկը» դասախոսության մեջ Կոմիտասը ասում է. «Երգը ներքին՝ հոգեկան զգացումին արտահայտութեան մէկ ձեւն է, ուրեմն շարժում մըն է, պարն ալ ինքնին շարժում մը ըլլալով, երգը կը զուգորդի պարին հետ»: Շարունակելով իր միտքը, նա նշում է, որ, «Մտաւոր զարգացումի աստիճանին վրայ կը գտնուի պարին շարժումն ալ: Ուրեմն ազգի մը քաղաքակրթութեանն է կապուած իր պարին շարժումներու զարգացումը»⁷: Մեջ բերելով «Առողջ միտք՝ առողջ մարմնի մեջ» արտահայտությունը, Կոմիտասը գրում է. «Երգեցողությունն ու պարը կառույցացնեն, կմարզեն մարմինը: Զգացումներն ի՞նչ ուղղութեամբ որ ընթանան, երգն ու պարն ալ նույն արտահայտութեամբ երեւան կուզան»⁸: Կոմիտասը կարևորելով հոգեբանամանկավարժական գիտելիքների իմացությունը, խորհուրդ է տալիս երգերի ուսուցման ընթացքում հաշվի առնել երեխաների տարիքային և անհատական

² Նույն տեղում, էջ 195:

³ Նույն տեղում, էջ 74:

⁴ **Յուլյան Ի.**, *Կոմիտաս*, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1969, էջ 94:

⁵ **Կոմիտաս Վարդապետ**, *Ուսումնասիրություններ և յօդածներ*, գիրք Ա, Երևան, «Սարգիս Խաչենց», 2005, էջ 375:

⁶ **Կոմիտաս Վարդապետ**, *Ուսումնասիրություններ և յօդածներ*, գիրք Բ, էջ 138:

⁷ Նույն տեղում, էջ 77:

⁸ Նույն տեղում:

առանձնահատկությունները, ընկալման և երգչային ձայնի հնարավորությունները, ուսուցման մատչելիության, հաջորդալնության, գիտականության սկզբունքները: Որպեսզի երգեցողությունը լինի հուզական, այն պետք է գիտակցված լինի և արտահայտիչ կատարվի, այլապես «դատարկ հնչում է դադարկ զգացում կառաջանալ: Զգացումները կանոնադրելու, ուղղելու, զարգացնելու համար հարկ է երգեցողութեան աւանդումին նպատակալարմար ուղղութիւն մը տալ»⁹, - գրում է Կոմիտասը: Հաշվի առնելով ժողովրդական երգերի հուզագրական ներգործության ուժը, Կոմիտասը խորհուրդ է տալիս «Երեխաներին տխուր երգ չտալ երբեք, այլ ամեն ինչ պետք է աշխույժ եռանդ ներմուծել անոնց հոգիներէն ներս»¹⁰:

Կոմիտասը անդրադառնում է նաև մարդկային կյանքի աչքի զարնող երևույթներից մեկին՝ պարին: «Իբրեւ շարժում՝ պարը շատ կարեւոր դեր ունի ապագայ դպրոցական կեանքի գեղարուեստական շարժումին մէջ»¹¹: Շարունակելով, նա գրում է, որ «Պարն արտայայտում է իւրաքանչիւր մի ազգի բնորոշ գծերը, մանաւանդ բարքն ու քաղաքակրթութեան աստիճանը, որովհետեւ, թէպէտ մարդ պարում է ազատ կամքով, բայց մարմնի տեսակ-տեսակ շարժումներն ակամայ մատնում են ներքինը»¹²: Ուրեմն, երգի պես, պարը նույնպես մարդու էության դրսևորման ձևերից մեկն է: Պատահական չէ, որ Կոմիտասը իր մշակած «Մանկապարտեզ» ծրագրում մեծ տեղ է տալիս երգին, պարին, քայլերգին և խաղին, որպես երեխաների երաժշտական գործունեությունը կազմակերպող և զարգացումը խթանող միջոցների:

Անդրադառնալով կրթության և դաստիարակության բովանդակային խնդիրներին, Կոմիտասը գտնում է, որ «Մանուկը բարոյական կեանքի փիլիսոփայութիւնը, կեանքի հասկացողութիւնը չունի: Պէտք է անոր հոգեկան զգացումներուն հաւասարակշիռ դաստիարակութիւն մը տալ: Մենք մանուկներու հոգեկան պահանջներուն յարմարեցում զասագրքեր չունինք»¹³: Կոմիտասի կարծիքով երաժշտության ուսուցիչը մասնագիտական լավ գիտելիքներ ու մեթոդական պատրաստություն ունենալուց բացի, պետք է լինի նաև նրբազգաց, հոգատար ու արդարամիտ մարդ: «Ուսուցիչը դա մշակ է, որ երիտասարդության մեջ տարածում է կրթությունը, գիտությունը, լուսավորությունը այնպես, ինչպես հողագործը սերմ է ցանում իր ընտանիքի և հասարակության համար»¹⁴:

Երեխաների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններից ելնելով, Կոմիտասը ասում է. «Եթե մանուկը չի հասկնար ձեր դասավանդութիւնը, յանցանքը ձերն է, որովհետև չեք կրցած հասկանալ անոր հոգին, պէտք է վար իջնել մինջև անոր հոգեկան աստիճանը, և զայն առնելով ձեզի հետ բարձրացնել»¹⁵: Կարևորելով ընտանիքի և դպրոցի համագործակցությունը Կոմիտասը գրում է. «Մանուկը բնախօսական պակաս չունի, եթե օժտուած է, ընտանիքը որքան զարգացած ըլլայ, մանուկն ալ այնքան մտքի առաւելութիւններով երեւան կու գայ: Պէտք է անոր կարողութիւնները չափաւորել, կոկել, կանոնաւոր զարգացում մը ապահովել»¹⁶:

Կոմիտասի կարևորագույն խնդիրներից մեկը երաժշտական կադրերի պատրաստումն էր: Նա մեծ ցանկություն ուներ ազգային երաժշտանոց ստեղծելու: Դա նրան հայրենիքում չհաջողվեց իրականացնել Էջմիածնի վանական հայրերի և հոգևոր ղեկավարների անբարիացական վերաբերմունքի պատճառով: Նա ստիպված մեկնում է Թուրքիա, Կոստանդնուպոլիս իր իղձերը իրագործելու համար: Սակայն Թուրքիայում Կոմիտասին մուկպես չի հաջողվում ստեղծել երաժշտական ուսումնական հաստատություն: Չհուսահատվելով անհաջողություններից Կոմիտասը հայ պատանիների և երիտասարդների համար կազմակերպում է երկարատև դասընթացներ, սեմինարներ, խորհրդատվություններ: Նրա մի խումբ աշակերտներ ապագայում դարձան իրենց ուսուցչի գործի շարունակողները (Բ. Կանաչյան, Վ. Սարգսյան, Վ. Սրվանձտյան, Մ. Թումաճյան, Հ. Մեմերջյան, Ա. Ապաճյան և այլք):

Կոմիտասը «Պարն ու մանուկը» դասախոսության ավարտին ասել է. «Երգեցողութիւնը սիրտին հետ կապ ունի, որ ուղղակի հոգիին կերթայ: Ուսուցիչ պարոններ ու քույրեր, զգուշութեամբ ու երկիւղածութեամբ մոտեցէք դաստիարակութեան գործին. խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը: Դաստիարակելու կոչված էք սերունդ մը, որ ապագայ ազգն է. սխալ ուղղութեամբ ազգ մը կը խորտակէք վերջը»¹⁷:

Կոմիտասին չհաջողվեց իր մանկավարժական հայացքները, մտահղացումները իրականություն դարձնել բոլորիս հայտնի պատճառով. 1915թ. Մեծ եղեռն, աքսոր, հոգեկան հավասարակշռության կորուստ և այլն: Եվրոպական տարբեր երկրներում և տարբեր ժամանակներում առանձին կոմպոզիտոր-մանկավարժներ ստեղծում են երեխաների երաժշտական դաստիարակության համակարգեր,

⁹ Նույն տեղում, էջ 78:

¹⁰ Նույն տեղում, էջ 79:

¹¹ Նույն տեղում, էջ 75:

¹² Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրութիւններ և յօդուածներ, գիրք Ա, էջ 284:

¹³ Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրութիւններ և յօդուածներ, գիրք Բ, էջ 78:

¹⁴ Յուլյան Ի., Կոմիտաս, էջ 74:

¹⁵ Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրութիւններ և յօդուածներ, գիրք Բ, էջ 78:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում, էջ 79:

որոնք բովանդակությամբ և սկզբունքներով համահունչ են Կոմիտասի երաժշտամանկավարժական հայացքներին: Այսպես, օրինակ, շվեյցարացի կոմպոզիտոր Էմիլ Ժակ-Դալկրոզը (1865-1950) երեխաների երաժշտական դաստիարակության իր համակարգի հիմքում դրել է երաժշտառնչական շարժումը և պարը, մարմնի և հոգու զարգացման սկզբունքները: Այն գործածության մեջ է դրվել 1910-ական թվականներից¹⁸: Կոմիտասի «Պարն ու մանուկը» դասախոսությունը նույն ժամանակաշրջանի ծնունդ է:

Մյուսը հունգարացի կոմպոզիտոր Զոլտան Կոդալի (1882-1967) ստեղծած համակարգն է, որի հիմքում դրված է հունգարական ժողովրդական երգը և պարը, ինչպես նաև նոտաներով երգեցողությունը՝ լադային տվիզացիան: Այն գործածության մեջ է դրվել 1930-ական թվականներից¹⁹:

Գերմանացի կոմպոզիտոր Կառլ Օրֆը (1895-1982) մեծ նշանակություն է տալիս երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացմանը և մանկական ռիթմական ու մեղեդային նվագարաններով նվագելուն²⁰: Կոմիտասը նույնպես խորհուրդ է տալիս ազգային նվագարանները՝ սրինգը, շվին, բլուրը կիրառել երեխաների երաժշտական դաստիարակության գործընթացում, քանի որ այդ նվագարանների «... հնչյուններն ամենեն մոտիկն են մարդկային սրտին, ամենեն հարազատ արտահայտիչը անոր բոլոր զգացումներուն»²¹: Ինչ վերաբերում է երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացմանը, ապա, Կոմիտասը գրում է. «Եթե մանուկը ինքնաբերաբար երգե չպետք է արգիլել»²²:

20-րդ դարի երկրորդ կեսին երեխաների երաժշտական դաստիարակության համակարգերից մեկը ռուս կոմպոզիտոր և մանկավարժ Դմիտրի Կաբալևսկու (1904-1987) համակարգն է, որի հիմքում դրված են երաժշտության երեք տեսակները՝ երգը, պարը, քայլերգը և երաժշտապես զրագետ ունկնդրի դաստիարակումը²³: Կոմիտասը նույնպես կարևորում է երգի, պարի և քայլերգի զարգացնող և դաստիարակող հնարավորությունները:

Այսպիսով, երբ ծանոթանում ենք երեխաների երաժշտական դաստիարակության ուղղությամբ աշխարհի «Մեծերի» կատարած աշխատանքներին, նկատում ենք, որ բոլորն էլ երաժշտությունը և պարը դիտել են որպես մարդու դաստիարակության միջոց:

Կոմիտասի հայացքներն ու պատգամներն այսօր էլ ունեն կիրառական նշանակություն: Դրավկայությունը Հայաստանում երեխաների երաժշտական դաստիարակության համար ստեղծված 1-ից 7-րդ դասարանների «Երաժշտություն» առարկայի ծրագրերը, դասագրքերը, ուսուցչի մեթոդական ձեռնարկները և տեսալսողական պարագաներն են:

Yuri Yuzbashyan (Armenia)

THE WORLD SIGNIFICANCE OF KOMITAS MUSICAL-PEDAGOGICAL VIEWS

Komitas's musical-pedagogical views have been formed while working as a music teacher and during the years of his researches. He doesn't have any theoretical works of pedagogical content. However, his articles, shorthand lectures, testimonies of his pupils and friends and letters speak about Komitas's musical-pedagogical views.

The great Genocide of 1915 didn't allow Komitas to realize his musical-pedagogical views and ideas. In the case when in different European countries a group of composer-pedagogues create musical-educational systems for children, which are in line with Komitas's musical-pedagogical views in their content and principles. They are as follows: Jacques-Dalcroze (1865-1950, Switzerland), Z. Kodaly (1882-1967, Hungary), K. Orff (1895-1982, Germany), Dm. Kabalevskiy (1904-1987, USSR).

¹⁸ Шторк К., Система Далькроза, Л.-М., "Петроград", 1924.

¹⁹ Мартынов М., Золтан Кодай, Москва, "Советский композитор", 1970.

²⁰ Элементарное музыкальное воспитание по системе Карла Орфа, Москва, "Советский композитор", 1978.

²¹ Կոմիտաս Վարդապետ, Ունկնախրություններ և յօդուածներ, գիրք Ա, էջ 195:

²² Կոմիտաս Վարդապետ, Ունկնախրություններ և յօդուածներ, գիրք Բ, էջ 207:

²³ Кабалевский Д., Педагогические размышления, Москва, "Педагогика", 1986.

Մեեր Նավոյան (Հայաստան)

ՇԱՐԱԿԱՆԻ ԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՄԻ ԶԱՆԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Շարականի կարգի (կանոնի) վերաբերյալ մեզանում շրջանառու տեսակետները, կարելի է ասել, գերազանցապես հենվում են ակադ. Մ. Աբեղյանի դեռևս XX դարասկզբին առաջադրած մոտեցումների վրա¹։ Դրանք կարգին առնչվող մի շարք հարցերի առումով ցայսօր, ըստ էության, փոփոխություն չեն կրել։ Հակառակ այն բանին, որ խնդրի վերաբերյալ արված ձևակերպումները կնճիռներ են հարուցում հայ հիմներգության պատմության, ժանրերի ձևավորման, ծիսական գործառույթի և այլնի տեսանկյունից, դրանք լիարժեք չեն բացատրում քննարկվող և հարակից իրողություններին առնչվող որոշ հարցեր։ Այնուհանդերձ, շարականի կարգի աբեղյանական հայեցակետը մեզանում տիրապետող է։

Շարականի կարգի ձևավորման խնդիրների առնչությամբ, մասնավորաբար, այլ տեսակետ արևմտյան հայագիտության մեջ առաջարկվել է դեռևս անցյալ դարի 80 – ականներին²։ Մենք ևս քանիցս խոսել ենք այդ մասին՝ հերքելով բյուզանդական իրականությունից կարգի «մեքենայորեն» ներմուծված լինելու աբեղյանական տեսակետն ու այդ առթիվ ցույց տվել մի շարք անհարթություններ³։

Շարականի կարգի հիմնական ժանրային բաղադրիչը՝ կցուրդը, ավելի սառույձ՝ կցուրդ – հավելվածը, ձևավորվել է սաղմոսերգական փոխերգեցողության զարգացած ձևերի ներսում, որոնց համարժեքները հին քրիստոնեական եկեղեցու ծիսական մշակույթում սկսեցին երևալ IV – V դարերում⁴։ Դրանք համահունչ են շարականագիրների միջնադարյան ցուցակների հաղորդած տեղեկություններին, համաձայն որոնց շարականների (կցուրդների) առաջին հեղինակները IV – V դարերի հայ հեղինակներն են։ Այսինքն, հիշյալ աղբյուրներին չվստահելը, շարականի կարգի մաս կազմող ժանրային բաղադրիչների՝ կցուրդների ձևավորումը երբեմն դրսևորվող տեսակետներով VII դարից հետո տանելը, հիմնավորված չէ կամ հնացած է⁵։

Կարգի ձևավորման վերաբերյալ շփոթություն առաջացնող մյուս դրույթը վերաբերում է կցուրդների կանոնացման խնդրին։ Հայ հիմներգության պատմության մեջ դրսևորված որոշ իրողություններ որպես հոգևոր երգի կանոնացման փաստ նկատելու հետևանքով հոգևոր երգի կանոնացման և կարգի ձևավորման ժամանակաշրջանը շուրջ երկու-երեք հարյուր տարով ետ է տարվել և զուգահեռաբար այդ նույն շրջանում՝ մինչ կանոնացումը հայ եկեղեցում հոգևոր երգի ազատ, ոչկանոնական, այսինքն պարականոն կիրառության վերաբերյալ դրույթ է մշակվել։

Հիշյալ պատմական վկայությունների շարքում, մասնավորաբար, առանձնացվում են Բարսեղ Շոնի անունով հիշատակվող ժողովածուի կազմումը VII դարի առաջին կեսին և Հարության Ավագ Օրհնությունների դասակարգումը VII – VIII դարերի սահմանագծին, Ստեփանոս Սյունեցու կողմից։

Մինչդեռ մեզանում ցայսօր չի հստակեցվել, թե ի՞նչ է հոգևոր երգի կանոնացումը, ի՞նչ հատկանիշներ ունի, ի՞նչ է ենթադրում դավանաբանական, ծիսական, երաժշտական և այլ առումներով։ Եթե խնդիրը մանրամասնենք, կատարվի, որ Բարսեղ Շոնին, իսկապես, արել է այն, ինչ հիշատակել է պատմիչը՝ կազմել է ժողովածու իր ընտրած երգերից։ Սակայն նույն պատմական աղբյուրը չի նշել, թե այդ երգերը և Բարսեղ Շոնի կողմից չընտրվածները ևս կանոնացված չէին։ Այս առիթով նաև այլ հակափաստարկներ ունենք, որ այստեղ չենք բերում⁶։

Շարականի կարգի հիմնական բնութագրերից մեկն այն է, որ այն ոչ միայն ընդմիջարկվում է տարբեր միավորներով, այլև իր տարբեր բաղադրիչներով ցրված է տարբեր ժամերգություններում։ Այսինքն՝ ծիսական իրացման գործընթացում շարականի կարգի տարբեր միավորներ, բացառություն կազմող մեկ – երկու ծիսական իրադրությունից զատ, դրսևորվում են որպես բացարձակապես առանձին

¹ Տե՛ս Մ. Աբեղյան, *ՈՒՐՈՒՍԱԳԺԵՐ ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՏՈՒՄՈՒՄԻՆԻՑ*, շարականների մասին, «Արարատ», 1912, հուլիս – օգոստոս, էջ 720 – 732, սեպտեմբեր, էջ 823 – 836, *ՈՒՐՈՒՍԱԳԺԵՐ ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՏՈՒՄՈՒՄԻՆԻՑ*, Մ. Գրքի եւ կանոնի ազդեցութիւնը շարականների վրայ, «Արարատ», հոկտեմբեր – նոյեմբեր, էջ 1002 – 1028։ Նույնի՝ *Հայոց հին գրականության պատմություն*, գիրք առաջին (սկզբից մինչև X դար), Երկեր, հատոր Գ, էջ 526 – 562։

² Տե՛ս G. Winkler, *The Armenian Night Office II: The Unit of Psalmody, Canticles, And Hymns With Particular Emphasis on the Origins And Early Evolution of Armenian's Hymnography*, REArm, 17, 1983, p. 528։

³ Մ. Նավոյան, *Բյուզանդական ազդեցության վարկածը՝ հայ հիմներգության կարգ (կանոն) ժանրի առնչությամբ*, «Մանրուսում» միջազգային երաժշտագիտական տարեգիրք, հատոր Գ., Երևան, «Լիմուշ» հրատ., 2009, էջ 39 – 116։

⁴ J. W. McKinnon, *Desert Monasticism and the Later Fourth – Century Psalmody Movement*, Music and Letters, 75 (1994), p. 505 – 519. R. F. Taft, S. J., *Christian Liturgical Psalmody : Development, Decomposition, Collapse* // Psalm in Community: Jewish and Christian Textual, Liturgical, and Artistic Traditions, Leiden, 2003, p. 17.

⁵ Հ. Վարդան Հացունի, *Պատմություն հայոց աղոթամատույցին*, Վենետիկ – Ս. Ղազար, 1965, էջ 512 – 515։

⁶ Տե՛ս Մ. Նավոյան, նշվ. աշխ., էջ 29։

և խիստ այլ կառուցվածք ունեցող ծիսական բազմամաս դրվագների բաղադրիչ: Ի դեպ՝ ծիսական այս բազմամաս դրվագները ևս, իրենց հերթին, կարող են կոչվել փոխ կամ կարգ այդ եզրերի մեկ այլ, մասնավոր կիրառությամբ:

Շարականի քննարկվող կարգի մման բազմամաս կառուցվածք ունեցող արտահայտություններում շարժական (փոփոխելի) և անշարժ բաղադրիչների առկայությունը եզակի երևույթ չէ: Սակայն այդ շարժական և անշարժ բաղադրիչների նկարագիրը շարականի կարգում իր առանձնահատուկ բնույթն ունի:

Հասկանալի է, որ երևույթը պայմանավորված է կարգի մաս կազմող երգային բաղադրիչների ծիսական գործառնությամբ: Կարգի ինը մասերից Օրհնությունը, Մեծացուցեն, Ճաշուն և Համբարձին հնում ամենօրյա կատարման համար չէին նախատեսված: Այս երգերի մի մասն այսօր էլ պահպանում է իր կատարման հնավանդ ձևը: Դրան հակառակ՝ Մանկունքը կիրակնօրյա կարգում ներկայացված է սոսկ սաղմոսով: Կարգի ներսում Հարցի սարքի մաս կազմող միավորները՝ Հարցը, Գործքը, Ողորմյան և Տեր հերկնիցը իրենց փոխերի բոլոր բաղադրիչների ամբողջությամբ և ձայնեղանակային միատարրությամբ մեկ միասնություն են կազմում: Օրհնությունն, իր հերթին, իր ենթամաս հանդիսացող պատկերների ամբողջությամբ օժտված է նկատելի ինքնուրույնությամբ և առանձին նկարագիր ունեցող երգաշար է, ըստ էության:

Պատմական զարգացման տեսանկյունից շարականի կարգի կառուցվածքի կազմավորման պատկերն հետևյալ կերպ է ներկայանում: Դեռևս Մ. արք. Օրմանյանը կարծիք հայտնեց, թե Հարցի շարականներն ավելի հին են: Ձևակերպումը կատարված էր Օրհնության շարականի համեմատ և, հավանաբար, այն պատճառով, որ շարականների հնագույն շերտերից մեկը ներկայացնող Մեծի պահոց կարգերը Օրհնություն չունեն: Եկեղեցական տարվա այդ շրջանի կիրակնօրյա կարգերի Օրհնությունները պահպանվել են Ս. Ներսես Շնորհալու անունով: Մյուս կողմից՝ Հարության Ավագ օրհնությունների՝ Ստեփանոս Սյունեցու անունով պահպանված հիշյալ դասակարգումը համարվեց որպես առհասարակ Օրհնության ժանրի (ենթաժանրի) նախատիպ: ՌԻստի և Օրհնության կիրառությունը սկսեցին դիտել իբրև VIII դարից հետո ձևավորված ավանդույթ: Այստեղից էլ Օրհնությունը միայն այդ շրջանից հետո ստեղծված կարգերի և հին կարգերին էլ հետագայում ավելացված միավոր համարվեց:

Այն, որ Ս. Մեսրոպ Մաշտոցի հեղինակությամբ հիշատակվող Մեծ պահքի կարգերում Օրհնություն չկա, օրինաչափ է, որովհետև, ինչպես նշեցինք, այն հասարակ օրերին չէր կատարվում: Սակայն ակնհայտ է, որ Ս. Ներսես Շնորհալին, ով իր ծիսական նորոգությունները կատարում էր հին ավանդույթի վրա հենվելով, նույն ծիսական փուլի Օրհնություն ունեցող կիրակնօրյա կարգերն էլ ստեղծել է մման ավանդության հիմքերի վրա կամ հնարավոր է նույնիսկ հին կարգերի նորոգումով:

Առնվազն կային Մարգարեական օրհնությունների այն կցուրդները, որոնցից, ըստ նույն ծիսագետի՝ Մ. արք. Օրմանյանի, Ստեփանոս Սյունեցին կազմեց Ավագ օրհնությունները: Այդ բաղադրիչ կցուրդները նույնպես Օրհնություն էին: Բացի այդ, ըստ միջնադարյան աղբյուրների, Մովսեսի երգի կամ Մարգարեական օրհնության (Ելք, ԺԵ, 1-19) կանոն – սաղմոսից առանձնացված կիրառությունը նույնպես կար, որը մինչև VIII դար օրինաչափ կերպով պետք է ծներ իր կցուրդները, այսինքն՝ Օրհնության շարականները:

ՌԻստի հնարավոր չէ պնդել, թե Հարցն ավելի հին է, քան Օրհնությունը: Շարականի կարգում ուշ մուծում է համարվել նաև Մանկունքը: Մ. Աբեղյանը դարձյալ ամեն բան մեկնաբանում է կանոնի ժանրի վերաբերյալ իր կողմից առաջ քաշված տեսանկյունից:

Նախ, Ապաշխարության կարգերում Մանկունքի սկսվածքին համապատասխան, ըստ Մ. Աբեղյանի, «արվեստավոր» շարականներ չկան, իսկ Տերունի տոներն, «բացի մի երկուսից», Մանկունք շարական չունեն, ուստի Մանկունքները երիտասարդ են և Սրբոց կանոնների համար ստեղծված: Մյուս փաստարկն էլ այն է, որ Ս. Հովհաննես Օձնեցու երկերում չի երևում այս միավորը, ուստի կանոնի ժանրի ձևավորումով առաջացած իրողություն է՝, որ, հետևապես, տեղի պիտի ունեցած լինեք ավելի ուշ, քան Ստեփանոս Սյունեցու դասակարգումն էր:

Այն, որ Ս. Հովհաննես Օձնեցու մեկնություններում Մանկունքը չի երևում, դեռ չի նշանակում, թե Մանկունքն այդ շրջանում չկար:

Այս վստահ պնդման համար հիմք ծառայող բազմաթիվ փաստարկներից այստեղ տեղին է բերել սոսկ մեկը: Բանն այն է, որ Մանկունքի կարգավորման վերաբերյալ ունենք պատմական վկայություն, ինչը կամ հայտնի չի եղել Մ. Աբեղյանին կամ էլ շրջանցվել է նրա կողմից՝ իր տեսակետին հարմար չլինելու պատճառով⁸: Վանական Վարդապետը այդ կարգավորությունը հիշատակում է Եզր

⁷ Մ. Աբեղյան, ՌԻստագիծ հայոց գրականության պատմությունից, Մ. Գրքի եւ կանոնի ազդեցությունը շարականների վրա, էջ 1022 – 1023:

⁸ Վերջերս այս փաստը շրջանառու դարձրեց Ա. Արևշատյանը: Հեղինակը համապատասխան ձևակերպումը մեջբերում է Մաշտոցի անվան Մատենադարանի 5611 ձեռագրի 76բ էջից: Տե՛ս Ա. Արևշատյան, Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, Երևան, 2013, էջ 131:

կաթողիկոսի անունով: Այս վկայության վերաբերյալ հանգամանալից դիտարկում ունենք: Այստեղ բավարար է միայն նշել, որ այդ վկայությունն էլ կարող է վերաբերել սոսկ որոշ ծիսական կարգերի, որոնցում Մանկունքի դրվագի և Արևագալի ժամերգության կարգավորությունները կարող են կապակցված դիտարկվել: Այլ դեպքերում Մանկունքի կիրառությունն առավել հին կարող է լինել: Այդուհանդերձ, Մանկունքի կարգավորությունն էլ, Արևագալի առանձնացումն էլ վերագրվում են հենց Եզր կաթողիկոսին: Ուստի, նշվածները VII դարի առաջին կեսի իրողություններով փոխադասված հանգամանք կարող են դիտվել, և Մանկունքին առնչվող ծիսական կարգավորությունների ժամանակագրական վերին շեմը այս փուլից վերև չէր կարող տարվել:

Շարականի կարգի կարևոր բնութագրերից մեկն էլ ձայնեղանակային կազմակերպման սկզբունքն է: Այս հարցն ամենաբարդ և իր շատ կողմերով մինչև վերջ դեռևս չլուծված խնդիրներից է: Խոսքն այն մասին է, որ կարգի տարբեր միավորներն ոչ միայն տարբեր ձայնային ցուցիչներ կարող են ունենալ, այլև այդ տարբերությունները կարող են դրսևորվել որպես սկզբունք: Բոլոր մանրամասների մեջ չմտնելով՝ նշենք, որ դրանք երկուսն են: Օրինակ՝ Օրհնություն շարականի ձայնը համաձայնեցվում է օրվա ձայնին: Մանկունքը և Համբարձին նույնպես երգվում են օրվա ձայնով⁹: Մյուս կողմից՝ Հարցի սարքի մաս կազմող չորս միավորներից մնացած երեքը ձայնային ցուցիչով համաձայնեցվում են Հարցի ձայնի հետ¹⁰: Այս երկու սկզբունքների փոխհարաբերությունն այսօր մեզ համար բացատրելի չէ: Դրանք միմյանցից տարբերվում են, և տարբերություններն, ամենայն հավանականությամբ, պայմանավորված են մի շարք գործոններով՝ տոմարական հաշվարկներ, եկեղեցական տոնացույցի կարգավորման և ժամակարգության ձայնային սկզբունքներ, ծիսական ժողովածուների խմբագրություններ և այլն: Ընդամենը, այս բոլոր գործոնների փոխառնչություններն ու դրանցում առաջացած անհամաձայնությունները պատմական երկարատև զարգացումների արդյունք կարող են հանդիսանալ: Ուստի, դրանց հետևանքով առաջացած ձայնեղանակային կազմակերպման սկզբունքների տարբերությունը շարականի կարգում՝ դեռ երկար ուսումնասիրությունների կարիք ունի:

Ի մի բերելով՝ նկատենք, որ շարականի կարգը մեկ միասնական ժանրային ամբողջություն չէ: Այն առավել Շարակնոց մատյանի կազմության սկզբունքն է, քան միասնական ամբողջությամբ կիրառվող բազմամաս հիմներգական արտահայտություն: Կարգի մաս կազմող միավորներն ունեն, հիմնականում, առանձին կամ, մասնակիորեն, խմբական կիրառություն: Կարգն ամբողջությամբ կիրառելի է սոսկ ծիսական սահմանումով վերապահվող, ոչ հաճախակի հանդիպող դեպքերում:

Միավորների մի մասն ամենօրյա կիրառության համար է նախատեսված, մյուս մասը՝ այս կամ այն ծիսական հանգամանքի համար: Ավելին, միավորներից Օրհնությունը ձևավորում է իր ենթամասերից բաղկացած երգաշար, իսկ Հարցը իրեն հաջորդող միավորների շարք: Կարգի թե՛ «միամաս», թե՛ «բազմամաս» միավորներն, իրենց հերթին, ծիսական կիրառության մեջ մաս են կազմում համապատասխան ծիսական դրվագի տրամաբանությամբ թելադրվող, երաժշտաբանաստեղծական տարբեր արտահայտություններից բաղկացած բազմաժանր շարքերի: Վերջապես, կարգի ներսում նկատելի է ձայնային կարգավորման իրարից տարբեր երկու սկզբունք:

Պատմականորեն շարականի կարգի միավորների ձևավորումը ոչ մի կերպ չի կարող կապակցվել բյուզանդական կանոնի ո՛չ ժանրային բնութագրերի, ո՛չ ձևավորման ժամանակափուլի, ո՛չ էլ հենց ձևավորման հետ: Առկա գույախեղները պայմանավորված են բոլորովին այլ տրամաբանությամբ և չեն կարող ազդեցությունների մասին դիտարկումների հիմք հանդիսանալ: Շարականի կարգի միավորներն առաջացել են հայ հիմներգության ձևավորման փուլում, որպես աստվածաշնչային երաժշտաբանաստեղծական հատվածների կցուրդ՝ հավելվածներ: Ուստի այդ կցուրդների առանձին մեկնաբանված կամ հիշատակված չլինելը մեկնողական գրականության մեջ, նախ, բացատրելի է, ապա՝ չի կարող վճռորոշ գործոն համարվել դրանց առաջացման փուլի հստակեցման կամ, ավելի ճիշտ, «հետաձգման» համար:

⁹ Ի դեպ, դառնալով Մանկունք շարականների վերաբերյալ աբեղյանական տեսակետին, տեղին է նշել, որ նկարագրվող ձայնեղանակային կարգավորությունն այս շարականներում շեղումներ է տալիս հենց սրբոց կարգերում: Դրան հակառակ, մյուս կարգերում «կանոնավոր» ձայնային ցուցիչով բազմաթիվ Մանկունքների առկայությունը, առնվազն, վկայում է այս միավորի ոչ միայն սրբոց կարգերի համար ստեղծված լինելը:

¹⁰ Տեղին է նկատել, որ ձայնային ցուցիչների համաձայնեցման հարցին անդրադառնալիս, նկատի ունենք հիմնական ձայնեղանակների ցուցիչները: Այսինքն, Շարակնոց ձայնեղանակային ցուցիչներով չի տարբերակում մայր և դարձվածք ձայնեղանակները, ուստի այստեղ ևս չենք տարբերակում դրանք: Թեև, արվ. գիտ. թեկնածու Ա. Բաղդասարյանի դիտարկմամբ և բանավոր վկայությամբ, Գործքը սովորաբար երգվում է ոչ թե Հարցի ձայնեղանակով, այլ համանուն դարձվածք ձայնեղանակով:

THE STRUCTURE OF THE CANON OF SHARAKAN CANON AND SOME OF ITS CHARACTERISTICS

The present views about formation, structure and general characteristics of the Armenian Canon of sharakan were formed in the beginning of the XX century. According to them the Armenian canon was shaped on the basis of the Byzantine canon. Thus the main features of its structure and components of it were adjusted to this statement.

Meanwhile the Canon of sharakan and the Byzantine canon have not only completely different structures, but also entirely different basic attributes, due to which the Canon of sharakan can be even not considered as a separate genre (there are some exceptions). The multipart genre expressions formed around sharakans have completely other descriptions. According to them the Canon of sharakan can be viewed as a structural unit of the codex “Sharaknots” or an expression of its structuring principle.

Տաթևիկ Շախկույան (Հայաստան)

ԿՈՍԽՏԱՍ ԵՎ ԲԱՐՏՈԿ. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ

Հայ կոմպոզիտոր Կոմիտասի և հունգարացի կոմպոզիտոր Բելա Բարտոկի գործունեության մի շարք ընդհանրություններին առիթ ունեցել ենք անդրադառնալու¹: Երկու ազգագրագետների ոչ միայն գաղափարական մտքերն ու գործունեության ոլորտներն են համեմատելի, այլև պատահականորեն համընկնող կենսագրական իրադարձությունները: Սույն հոդվածում նպատակ ունենք շարունակել զուգահեռները՝ հաշվի առնելով ստեղծագործական ոլորտի որոշ համընկնումներ ևս:

Կոմիտասը (Սողոմոն Սողոմոնյան, 1869-1935) ծնվել է Թուրքիայում, 11 տարեկանից տեղափոխվել է Էջմիածին, սովորել է Գևորգյան ճեմարանում, ապա՝ Բեռլինում՝ մասնավոր կոնսերվատորիայում և Հունբուրգի համալսարանի փոխտնօրինության բաժնում: Ապրել է Էջմիածնում, ապա՝ Կոստանդնուպոլսում: Ստեղծագործական կյանքն ընդհատվել է 1915 թ. Մեծ եղեռնի հետևանքով: Կյանքի վերջին տարիներն անց է կացրել Փարիզում՝ հոգեբուժարանում: Բելա Բարտոկը (1881-1945) ծնվել է Տրանսիլվանիայում՝ այժմյան Ռումինիայի տարածքում: Սովորել է Բուդապեշտի Երաժշտության արքայական ակադեմիայում: Ապրել է գլխավորապես Հունգարիայում, իսկ կյանքի վերջին տարիներին՝ ԱՄՆ-ում:

Երկու կոմպոզիտորներն էլ ծնվել են իրենց պատմական հայրենիքից դուրս, ապրել են հայրենիքում, երկուսն էլ ավելի ուշ, տարբեր պատճառներով, տեղափոխվել են այլ երկիր: Վախճանվել են իրենց հայրենիքից հեռու (Բարտոկը՝ Նյու Յորքում, Կոմիտասը՝ Փարիզում), և երկուսի աճյունն էլ հետամահու տեղափոխվել է հայրենիք:

Թե՛ Կոմիտասի, թե՛ Բարտոկի երաժշտական գործունեության կարևոր բնագավառներից է ֆոլկլորային երաժշտական նյութի հավաքումն ու ուսումնասիրումը: Երկուսն էլ նվիրվել են այդ աշխատանքին, ճանապարհորդել են դեպի տարբեր վայրեր՝ հավաքելով, գրի առնելով և հետազոտելով գեղջկական երաժշտություն: Երկուսն էլ իրենց ազգայինից բացի բարձր են գնահատել և սիրել են հարևան ազգերի երաժշտությունը: Երկուսին պարտական ենք ժողովրդական երաժշտության՝ մինչ այդ աննկատ և անձանոթ շերտերը դուրս հանելու, դրանք կորստից փրկելու համար:

Կոմիտասը գիտակցում էր, որ հայ ազգային երաժշտության առանձնահատկությունները ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նաև հարևան ազգերի երգերը՝ պարզելու համար հարևանությամբ կենցաղավարող երգերի փոխազդեցությունները: Նա հավաքել և ուսումնասիրել է քրդական, հունական, արաբական, թուրք-տաճկական, պարսկական, ասորական և այլ ազգերի ժողովրդական երգերն ու եղանակները: Տարբեր ազգերի երգերի առանձնահատկությունների մանրագնին ուսումնասիրության ճանապարհով Կոմիտասը փնտրում էր հայկական երգերի առանձնահատկությունները: Բարտոկը ևս Զոլտան Կոդալի հետ պարբերաբար ձեռնարկում էր այցելություններ հունգարացի և հարևանությամբ ապրող այլ ազգերի բնակավայրերը՝ երաժշտական նյութ հավաքելու նպատակով: Հունգարականից բացի, նա ուսումնասիրում էր ռումինական, սլովակյան, ուկրաինական,

¹ **Տ. Շախկույան.** *Որոշ զուգահեռներ Կոմիտասի և Բելա Բարտոկի միջև*, Հայկազեան հայագիտական հանդես, հատոր ԻԹ, Պէյրուք, հրատ. Հայկազեան համալսարանի հայագիտական ամբիոնի, 2009, էջ 359-365:

սերբական, խորվաթական, թուրքական և այլ ազգերի երգեր՝ նրանց փոխազդեցությունները պարզաբանելու համար:

Երկու գիտնականներն էլ ժողովրդական երգերում ազգայինից բացի ուշադրություն են դարձրել որոշակի տարածքներում ձևավորվող «բարբառային» հատկանիշներին՝ ըստ տեղանքների: Բանահավաքչական աշխատանքի առնչությամբ երկու հեղինակներն էլ բազմիցս նշել են, որ խուլ գյուղերն ամենահարմարն են երգեր հավաքելու համար, քանի որ այնտեղ արտաքին ազդեցություններ չկան կամ քիչ են: Երկուսն էլ նշում են գլխավոր դժվարությունը. գյուղացիները հրաժարվում են երգել առանց առիթի՝ տեղից ու ժամանակից դուրս: Կոմիտաս. «Շատ դժուարությամբ կամ ամենեին չեն երգում, նույնիսկ ծաղր են անում, եթե մի ոչ գիտացի խնդրէ, որ, օրինակ, մի շինական երգ ասեն, երբ գործի չեն, այն էլ՝ տանը: ... Ոչ մի գիտացի, տանը նստած, կալի երգ չի ասի. որովհետեւ կալերգն ստեղծելու եւ ասելու տեղն է կալը»²: Բարտոկ. «Կատարել երգեր-ասքեր, հարսանեկան երգեր կամ բերքահավաքի երգեր մեկ այլ առիթով, քան Ս. Ծնունդն է, հարսանիքը կամ հունձը միայն այն պատճառով, որ ինչ-որ մեկը պարզապես ուզեց երգել, անհնարին էր համարվում, անգամ անվայել»³:

Թե՛ Կոմիտասին, թե՛ Բարտոկին մտահոգել է այն իրողությունը, որ պաշտոնյաների ճաշակով աղավաղվել է ազգային երաժշտությունը: Ստորև բերվող Կոմիտասի խոսքը հոգևոր, ոչ թե գեղջկական երաժշտության մասին է, ինչը այս դեպքում էական չէ: Կոմիտաս. «Կ. Պոլսի տիրացուները ամիրաներին դուր գալու եւ նրանց զվարճացնելու համար, սկսել են եկեղեցական եղանակները շարքիների, թիւրքիների և մանիների ազդեցության տակ կլկացնել, զարդարել. այդպիսով շարականների, մանավանդ տօնականների վրայ պատուաստուել է օտար ոճը եւ պղտորել նրանց հարազատությունը»⁴: Բարտոկ. «Հիմքեր կան ենթադրելու, որ իշխող դասերը մեծ դեր են խաղացել օտար երաժշտական տարրերի մուտքագրման մեջ»⁵:

Երկու երաժիշտները գրել են ազգայինի անվան տակ մատուցվող օտար երաժշտության մասին: Այդ հարցին է նվիրված Կոմիտասի «Recueil de Chants Populaires Armeniens» հոդվածը⁶, որտեղ նա քննում է «Հաւաքածոյ Հայոց ժողովրդական երգերի» գրքույկի բովանդակած երգերը, որպես մի դեպքում այլ ազգերի նորագույն երգերի թարգմանություն, մյուս դեպքում՝ կոմպոզիտորական ստեղծագործություն: Բարտոկ. «Որ երգերն էին այդ երաժիշտներն այդ ժամանակ ընդունում որպես ժողովրդական: Դժվար թե որևէ այլ, քան նորագույն գերմանական և նրանց նման արևմտյան ժողովրդական երգեր... նաև իրենց երկրի կոմպոզիտորների երգերը»⁷:

Այսպիսով, Կոմիտասի և Բարտոկի արտահայտած մտքերն արտացոլում են նույն իրողությունները, նույն մտահոգությունները, նույն դիտողությունները:

Ժողովրդական երգի ուսումնասիրությունը թե՛ Կոմիտասի, թե՛ Բարտոկի ստեղծագործական ձեռագիրը ձևավորող գլխավոր գործոնն է հանդիսացել: Երկուսն էլ ստեղծել են երաժշտական ինքնատիպ մտածողություն համաշխարհային երաժշտության մասշտաբով: Երկու դեպքում էլ նորարարություն է առաջադրվել երաժշտական տարբեր բաղադրիչներում՝ այդ թվում հարմոնիայում, պոլիֆոնիայում, ռիթմում և մետրում, ֆակտուրայում:

Այսպես, Կոմիտասը հայ երաժշտության կառուցվածքի ուսումնասիրման արդյունքում եկավ այն գաղափարին, որ հայ ազգային երաժշտության ձայնակարգերը չեն ենթարկվում արևմտաեվրոպական երաժշտության հիմք հանդիսացող և համաշխարհային երաժշտության առաջատար մաժորամիկորային համակարգին: Ի տարբերություն վերջինների, հայ երաժշտության ձայնակարգերը կազմված են միմյանց կցվող, այլ ոչ թե հարևանությամբ գտնվող քառալարերից⁸: Հայ երաժշտության ձայնակարգերից Կոմիտասն ամանցեց դրանց բնորոշ ներդաշնակում և ֆակտուրային-ձայնակարգային նոր, մինչ այդ չլսված միջոցներ: Նմանապես, Բարտոկի հետազոտությունները բերեցին հունգարական երաժշտության՝ մաժորամիկորային համակարգի նկատմամբ ունեցած հակասության մասին եզրակացությանը: Սինչ Բարտոկի հետազոտությունները, հունգարական երաժշտության մասին հաստատվել էր կարծիք, ըստ որի դրանց ձայնակարգերն ունեն գնչուական երաժշտությանը բնորոշ երկու մեծացրած սեկունդաներով կառուցվածքը, որը ստացել է «հունգարական ձայնակարգ» անվանումը: Բարտոկը ցույց տվեց, որ խորքային, «հին հունգարական երգերի» հիմքում ընկած են պենտատոնային համակարգեր: Ժողովրդական երգերի հնչյունները ուղղահայաց դիրքով կազմակերպելու միջոցով Բարտոկն ստացավ նոր հարմոնիաներ:

² Կոմիտաս, *Հայ գեղջուկ երաժշտություն, Ուսումնասիրություններ և յօդածներ*, Գիրք Ա, Երևան, Սարգիս Խաչենց, 2005, էջ 377:

³ Бела Барток, *Зачем и как собирать народную музыку*, Москва, Гос. муз. изд., 1959, с. 26.

⁴ Կոմիտաս, *Հայ ժողովրդական եւ եկեղեցական երգերը, Ուսումնասիրություններ և յօդածներ*, էջ 329:

⁵ Бела Барток, *Народная музыка Венгрии и соседних народов*, Москва, 1966, с. 18.

⁶ Կոմիտաս, *Ուսումնասիրություններ և յօդածներ*, էջ 133:

⁷ Бела Барток, *О влиянии крестьянской музыки на музыку нашего времени*, Сборник статей, Москва, 1977, с. 247.

⁸ Կոմիտաս, *Երգեցողությունը Ս. Պատարագի, Ուսումնասիրություններ և յօդածներ*, էջ 90-119, նաև՝ «Հայ եկեղեցական երաժշտություն», նույն տեղում, էջ 120-131:

Կոմիտասի աշխատանքը հայտնի հանգամանքների բերումով ավելի վաղ է ընդհատվել, մինչև դեռ Բարտոկը շարունակել է աշխատել ֆոլկլորագիտության բնագավառում մինչև 1940-ականները: Հանգամանքների բերումով Կոմիտասի հավաքած նյութերից առայժմ հայտնի է մի մասը միայն, իսկ Բարտոկի աշխատանքային պայմաններն ավելի բարենպաստ են եղել, և նրա հավաքած նյութերը պահպանվում են աշխարհի տարբեր գրապահոցներում:

Երկու հեղինակները շատ են ճանապարհորդել եվրոպական տարբեր երկրներում՝ ներկայանալով թե՛ համերգներով, թե՛ դասախոսություններով: Թե՛ Կոմիտասի, թե՛ Բարտոկի կատարած աշխատանքն իրենց ժամանակում արդեն բարձր է արժևորվել մասնագետների կողմից: Կոմիտասն արևելյան երաժշտության ամենավստահելի և ամենահեղինակավոր ներկայացուցիչն էր, և եթե արևելյան երաժշտության մասին որևէ հարց էր առաջանում, ապա դիմում էին նրան: Ինչ վերաբերվում է Բարտոկին, ապա նա աշխարհի ամենամշակակալ ֆոլկլորագետն է:

Չարմանալի հարց է առաջանում, թե ինչպես այդքան նման հատկանիշներով օժտված և ընդհանուր գործով զբաղված երկու անհատներ երբևէ չեն հանդիպել և միմյանց մասին չեն արտահայտվել, կամ գոնե հայտնի չէ նրանց փոխառնչության որևէ փաստ: Կոմիտասին և Բարտոկին միավորում է ընդհանուր հետաքրքրությունը թուրքական երաժշտության նկատմամբ: 1936 թ.-ին Բարտոկը ճանապարհորդել է Թուրքիայում՝ երաժշտություն հավաքելու նպատակով: Թուրքիայում ևս Կոմիտասը բարձր էր գնահատվում: Անգամ Թուրքիայի կառավարությունն ուզում էր ստեղծել կոնսերվատորիա՝ Կոմիտասի ղեկավարությամբ: Ավելին, Եղեռնի ժամանակ Կոմիտասին աքսորից վերադարձնելու համար միջնորդել է թուրք թագաժառանգը:

Թե՛ Կոմիտասի, թե՛ Բարտոկի ստեղծագործական որոնումները հանգեցրել են կվարտակորդների, և սա հատկանշական է, որովհետև կվարտային կառուցվածք ունեցող ակորդները համարվում են 20-րդ դարի համաշխարհային երաժշտության հարմոնիայի զարգացման գլխավոր միտումների հիմքը: Կոմիտասյան կվարտային ակորդներին ուշադրություն են դարձրել Շ. Պերայերյանը⁹, Ռ. Աթայանը¹⁰, ապա այդ տեսանկյունը զարգացրել է Ռ. Ստեփանյանը¹¹, որը մի շարք ցայտուն օրինակների հիման վրա ցույց է տվել կվարտակորդների դրսևորումները:

Բարտոկի երաժշտության մեջ կվարտակորդը փոքրացրած օկտավայի է հանգեցնում, մի հանգամանք, որի տարածումը հայ կոմպոզիտորական երաժշտության մեջ երաժշտագետ Է. Փաշինյանը համարում էր հայ ավանդական երաժշտությունից ածանցված¹² և դրանք մեկնաբանում էր ըստ կցվող տետրաֆորդներով գոյացող ձայնակարգերի¹³:

Համաշխարհային երաժշտագիտությունը կվարտային ակորդների զարգացման հիմքը համարում է Ա. Սկրյաբինի հարմոնիան, որն էլ խարսխվում է Վազների տրիստանակորդի վրա¹⁴: Սակայն նկատենք, որ եթե համաշխարհային երաժշտության մեջ կվարտակորդների դրսևորումը երաժշտության բնականոն զարգացման մեջ որոշակի բեկում առաջադրելու անհրաժեշտ փուլ էր ներկայացնում, որը նորույթի փնտրտուքի ընթացքում դասական տերցիային ակորդներին հակադրվելու ճանապարհին էր գոյացել, ապա Կոմիտասի և Բարտոկի երաժշտության մեջ կվարտային կառուցվածքի ակորդները բխում են ժողովրդական երաժշտության ակունքներից: Ավելին, Կոմիտասը կվարտակորդներն ածանցել է հայ երաժշտության հնչյունաշարերի կառուցվածքային էությունից:

Մյուս հանգամանքը, որը հատկանշելի է Կոմիտաս - Բարտոկ ստեղծագործական զուգահեռների առիթով, պոլիֆոնիկ շարադրանքի գերակայությունն է: Կոմիտասն ստեղծել է պոլիֆոնիայի իր տեսակը, որը չունի համարժեքը համաշխարհային երաժշտության մասշտաբով՝ ձայնակարգային-տոնայնական հիմքի մեկնաբանության և ֆակտուրային կերպի իմաստով: Հայտնի պոլիֆոնիստ է նաև Բարտոկը, և ասվածի վառ դրսևորումներ կան տարբեր ստեղծագործություններում: Մասնավորապես, դաշնամուրի համար գրված «Սիկրոկոսմոսը», որի 153 պիեսները դասավորվել են 6 տետրերում, ներկայացնում է պոլիֆոնիան՝ ըստ բարդանալու աճի: Շարքն սկսվում է ունիսոնային շարադրանքով

⁹ Պերայերյան Շ., Կոմիտաս Վարդապետ, Անձր եւ գործը, իր ծննդեան հարիւրամեակի առիթով, հոդվ. ժող., Նյու Յորք, 1969, էջ 8-37:

¹⁰ Աթայան Ռ., Ժողովրդական երգի ներդաշնակության սկզբունքը Կոմիտասի մոտ, «Տեղեկագիր», Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1949/9, էջ 87-113:

¹¹ Ստեփանյան Ռ., Կվինտակորդներն ու կվարտակորդները Կոմիտասի ստեղծագործության մեջ, Կոմիտասական 1 (հատորի խմբագիր՝ Ռ. Աթայան), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 121-147:

¹² Փաշինյան Է., Հարմոնիա, գլոխ 13, Հայ երաժշտության լադերը և նրանց որոշ հարմոնիկ առանձնահատկությունները, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 485-503:

¹³ Կոմիտաս, Հայ յեկեղեցական երաժշտութիւն, Հոդվածներ և ուսումնասիրություններ, էջ 153-165: Կոմիտաս Վարդապետ, Die Armenische Kirchenmusik, Ուսումնասիրություններ եւ յօդածներ, գիրք Ա, էջ 107-119, թարգմանությունը՝ 120-132:

¹⁴ Տե՛ս Antokoletz E., Twentieth Century Music, USA, Prentice Hall, p. 100-104. Այսպես կոչված՝ ագրեգատային հարմոնիայի հիմնադիրներից մեկը նույնպես համարվում է Սկրյաբինը: Տե՛ս The Oxford history of Western Music, Richard Taruskin and Christopher H. Gibbs, New York, Oxford University Press, 2013, p. 875-876.

պիեսներից, ապա հաջորդում են իմիտացիոն, կանոնիկ պիեսներ՝ ինչպես ուղիղ, այնպես էլ հայելային, ապա ի հայտ են գալիս պոլիֆոնիայի բարդ միջոցներ՝ շերտային պոլիֆոնիա, ակորդային պոլիֆոնիա, բազմալադատոնայնական մտածողությամբ, տասներկուտոնային մտածողությամբ և այլն:

Կոմիտասը հեղինակ է «Պոլիֆոնիկ շարանվագ»-ի, որը բաղկացած է երեք պոլիֆոնիկ պիեսից: Առաջին և երրորդ պիեսները օկտավային կանոն են ներկայացնում, իսկ երկրորդը կվարտային կանոն է: Իհարկե, երկու կոմպոզիտորների պոլիֆոնիկ շարքերը տարբերվում են ծավալով, սակայն ընդհանուր է գաղափարը:

Ստեղծագործական զարմանալի և միաժամանակ հիմնավորելի նմանությունը կրկին հանգեցնում է նույն մտքին, թե ինչպես երկու խոշորագույն անհատներ՝ Կոմիտասը և Բարտոկը, ապրելով նույն ժամանակաշրջանում, ունենալով նույն հետաքրքրություններն ու համոզմունքները, ավելին, դրսևորելով ստեղծագործական մտածողության մի շարք ընդհանրություններ, միևնույն ժամանակ հանդիսանալով համարձակ նորարարներ և չկրկնելով իրենց նախորդներին, նաև ունենալով ընդհանուր միջավայր, երբևէ միմյանց չեն հանդիպել կամ առնվազն միմյանց մասին չեն արտահայտվել: Սա առայժմ առեղծված է:

Tatevik Shakhkulyan (Armenia)

KOMITAS AND BARTOK: PARALLELS IN RESEARCH AND CREATION

Գույնի պայմանականության սկզբունքը և նրա խորհրդանշական ասպեկտն առավել լիարժեք են արտացոլվել 1919թ. ստեղծված *Անիի ավերակները* բնանկարում: Այստեղ Կոջոյանը գրեթե ամբողջապես հեռացել է իրական գունային կերպարից, մեկնաբանելով պատկերը գերիշխող կապտա-երկնագույն թանձր տոնայնության գույներով, բնականաբար կապված այս միջնադարյան հայկական քաղաքի պատմական ճակատագրի հետ: Ընդհանուր գունային լուծման բնույթի մեջ Կոջոյանը ցուցադրում է բոլոր քրոմատիկ տարրերը միևնույն ներդաշնակ ամբողջության մեջ միավորելու իր փայլուն վարպետությունը և դրանց ընտրության մեջ իր անբասիր ճաշակը:

Գույնի պայմանականությունը հատկանշական է մասնավորապես պարսկական շաքի կտավներին: Այս արտասովոր նկարաշարում հիացմունք է հարուցում մի յուրօրինակ առանձնահատկություն՝ նույնիսկ գունային տարրերի ազատ ընտրության պարագայում, նկարիչը պահպանում է նրանց համոզիչ նմանությունն իրական կերպարին: Ընդ որում մեկնաբանման պայմանականությունն այս հորինվածքներում բնորոշ է նաև կերպարային մյուս բաղադրիչներին: Այսպես, ընդգծված են ֆիգուրների ժեստերը, մարդկանց ու կենդանիների շարժման բնույթը, դիմաշարժերի արտահայտչականությունը: Նշենք, որ ֆիգուրների ժեստերի ու շարժումների այս բոլոր պայմանականությունները դիտված են իրականության մեջ: Այսպիսով Կոջոյանին հաջողվում է ստեղծել ոճային միասնական ընդհանրություն գույնի և կերպարային տարրերի մեկնաբանման մեջ, հասնելով գեղարվեստական կառույցի ընդհանուր առմամբ միանգամայն յուրօրինակ արտահայտչականության:

Գունային մեկնաբանման պայմանականությունը բնորոշ է նաև վարպետի մեծածավալ՝ *Կոմունիստների գնդակահարությունը Տաթևում* հորինվածքին: Նրա կոլորիտը՝ կապտամոխրագույն երանգների գերիշխումով, կարծես գունագրկված լինի: Նրանց ծանրակշիռ անկենդանությունը առաջացնում է ողբերգական անելանելիության և անդիմադրելի լարվածության զգացում: Այստեղ թե՛ գունային լուծումը, թե՛ արտասովոր կառուցվածքային բնույթ կրող կոմպոզիցիոն հորինվածքը, միտված են արտահայտելու սյուժեի ողբերգական էությունը, որով և առաջին իսկ հայացքից համակվում է դիտորդը, մինչև նա կհասցներ պատկերն առավել կամ պակաս մանրագին դիտել:



Հ. Կոջոյան. Կոմունիստների գնդակահարությունը Տաթևում (1930)

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Կոջոյանի բնանկարչական աշխատանքները, որտեղ թվում է թե պետք է գուգորդումներ գտնվեն իմպրեսիոնիզմի վարպետների գեղարվեստական սկզբունքների, մասնավորապես, պլեների խնդիրների հետ: Բայց նրանցում բացակայում է արտահայտչականության այնպիսի պարագա, ինչպես լուսաօղային միջավայրի առանձնահատկությունների հաղորդումը, լուսավորության արտասովոր պահերը և այն ամենն, ինչը մտնում է պլեների հասկացողության մեջ, այդչափ վարպետորեն մարմնավորված ֆրանսիացի իմպրեսիոնիստների ստեղծագործություններում: Հակոբ Կոջոյանի բնանկարների մեջ գեղարվեստական արտահայտչականության նշված եղանակները ասես ներծծված են գունատոնի ընդհանուր պայմանական կոլորիտի մեջ: Միևնույն ժամանակ, բնօրինակային նախակերպարի հետ կապը՝ գեղանկարչական առանձնահատուկ եղանակի վերափոխված, պահպանվում է:

Կոջոյանն ընդգծում է արդեն իսկ մեր կողմից հիշատակված հատկությունները՝ կոմպոզիցիոն կառուցվածքների սրությունը և կերպարային ձևերի հստակ ճարտարակերտությունը: Հենց այս առանձնահատկություններն են առանձնացնում նրա բնանկարները մեր մյուս վարպետների՝ Թադևոսյանի, Սարյանի, Առաքելյանի և ուրիշների աշխատանքներից, նույնիսկ այն դեպքերում, երբ գոյություն ունի մոտիվների որոշակի նմանություն: Ընդ որում, վարպետն անտարբեր չէ նաև գունային լուծման արտահայտչականության հանդեպ: Կրկնենք, նա այն լուծում է կոլորիտի որոշակի պայմանականության սկզբունքի վրա հիմնվելով, միևնույն ժամանակ ելնելով իրական կերպարի բնույթից, հենվելով գունային ներդաշնակության իր անթերի ու նուրբ գունազգացողության վրա:

Եվ, այսպիսով, մեր վարպետի աշխատանքներին բնորոշ է տարբեր աստիճանի, առավել կան պակաս արտահայտված պայմանականություն: Առանձնակի նշենք հին Երևանի մոտիվներով կատարված երկու ոչ մեծ կտավ՝ *Աշունը Երևանում*, 1932թ. և *Ձմեռը Երևանի արվարձանում*, 1950թ.: Նրանք որոշ չափով կոմպոզիցիոն բնույթ են կրում և կատարված են արվեստանոցում, բայց բնօրինակային նյութի հիման վրա: Նրանց չի կարելի դասել «մաքուր» բնանկարին, քանի որ նրանք ակտիվորեն «բնակեցված» են ֆիգուրներով, այսպես կոչված կենցաղային ժանրի տեսարաններով, որոնք այստեղ կարևոր դեր են խաղում գեղարվեստական արտահայտչականության միջոցների համակարգում:

Առաջին կտավում զարմանալի նրբությամբ է լուծված կոլորիտային գունասանդղակը, գունատարրերի ընտրությամբ, որոնք ընդհանրացված հաղորդում են փոքր-ինչ խամրած աշնանային օրվա տրամադրությունը, արծաթամոխրագույն, կապտաերկնագույն, օքրասադափագույն երանգների գերիշխումով: Այս ներդաշնակ միասնական քրոմատիկ միջավայրի մեջ, չափի մեծ զգացումով ներմուծված են աշնանային տերևների ոսկեգունադեղին բծերը, որոնք աշխուժացնում են նկարի ընդհանուր սառը տոնը: Հարկ է նշել դիռարկվող կտավի գեղանկարչության ևս մի առանձնահատկություն՝ նկարի գուններանգային տարածության մեջ վարպետորեն ընդգրկված կանանց ֆիգուրները, ծառի տակ պառկած խոյր:

Ձմեռը Երևանի արվարձանում նկարը, նախորդին որոշ նմանությամբ հանդերձ, կրում է մեկ այլ էմոցիոնալ տրամադրություն: Այստեղ վառ գունային բծերը, մարդկանց ու կենդանիների ֆիգուրներով պայծառ ձմեռային օրվա բնանկարին հաղորդում են թարմության, առույգության զգացում և դինամիկ աշխուժություն: Հարկ է առանձնահատուկ նշել՝ գերիշխող գունային ծածկի նրբին գունային լուծումը, որը հարուստ նրբերանգված է թեթև երանգային անցումներով, որոնք հրաշալի ֆոն են ծառայում, ընդգծելով ֆիգուրների վառ գույների հնչեղությունը: Դիտարկված երկու աշխատանքներն էլ աչքի են ընկնում գեղարվեստական բարձր որակով: Չնայած նրանց որոշ «արյունակցական» նմանությանը բնանկարի մյուս հայ վարպետների ստեղծագործություններին, այնուամենայնիվ, նրանք առանձնանում են յուրօրինակությամբ, իրենց մեջ կրելով կերպարվեստային նոր որակներ:

Զննարկված ստեղծագործություններին կարելի է դասել նաև վարպետի մի շարք բովանդակային այլ իմաստ կրող, սակայն, ավելի խոշոր չափերի բնանկարներ: Նրանցում Կոջոյանը փորձել է արտահայտել հայ բնանկարին բնորոշ որոշակի էպիկական ոգի, ի տարբերություն մեզ արդեն հայտնի կամերային բանաստեղծական տեսակի:

Այդ աշխատանքների շարքում առանձնանում է *Միայնակ կաղնի. Կիրովական* 1925թ. կտավը իր արտասովոր «այտնետային» մոտիվով և հորինվածքային կառուցվածքի սրությամբ: Դիտորդի մոտ այն առաջացնում է կերպարային բարդ գուգորդումներ՝ որպես մի սրբավայր, նախնյաց պաշտամունքի ուխտատեղի: Նկարը լցված է հանդիսավոր արտահայտչականությամբ և առեղծվածային էությամբ: Այս կտավում նույնպես արտասովոր էմոցիոնալ արտահայտչականությունը հիմնված է առավելապես ձևակերպարային կառուցվածքի ու նվագագույնս՝ գույնի լեզվի վրա:

Գեղարվեստական միջոցների մասն եղանակը բնորոշ է նաև բնանկարային ժանրի այլ գործերի: Հարկ է առանձնահատուկ նշել տարբեր ժամանակահատվածներում ստեղծված ապարանյան շարքի նկարները: Նրանք հետաքրքիր են նաև առ այն, որ Կոջոյանին հաջողվել է գեղարվեստական բարձրագույն արտահայտչականությամբ հաղորդել այս լեռնային բնակավայրի յուրահատուկ բնույթն իր արտասովոր կացարան-շինություններով և բնակիչների ոչ դյուրին կյանքով:

Դիտարկենք՝ ըստ մեզ, ապարանյան նկարաշարի ամենահետաքրքիր աշխատանքը: Դա համեմատաբար խոշոր չափի, *Ապարան* կտավն է: Նրանում Կոջոյանը ստեղծել է Հայաստանի այդ լեռնային երկրամասի հավաքական կերպարը, որտեղ գյուղացիների ժամանակակից կացարանները ընդմիջվում են հնագույն պատմական շինությունների ավերակների հետ: Այս նկարը առանձնանում է արտասովոր հորինվածքային կառուցվածքով: Այստեղ հարևանակցում են պատկերի դժվարությամբ զուգակցվող տարրերը: Անցած պատմական ժամանակաշրջանի ֆոնի վրա, ճարտարապետական հին շինությունների մնացորդներով, Կոջոյանը պատկերում է Ապարանի գյուղացու ժամանակակից կյանքը, հնձված խոտի դեզի բուրգով, այծերի հոտով, ցլիկով, ավանակով, հսկա կարասի վրա նստած հավով, գյուղացիների ֆիգուրներով, աստիճանների վրա նստած հովիվով: Առաջանում է ընդհանուր առմամբ երկու դարաշրջանների՝ վաղուց անցած և կենդանի ներկայի տարօրինակ, գրեթե ֆանտաստիկ տեսարան: Հորինվածքային այս խորհրդավորությանը նպաստում է նաև գունային լուծումը:

Ապարան կտավին «հարակից» է վարպետի աշխատանքներից մեկ ուրիշ՝ *Գառնի* նկարը, որը ստեղծվել է նախորդից մեկ տարի առաջ (1957թ.): Այստեղ բնանկարային ֆոնի վրա, որն իրենից ներկայացնում է գյուղական մի կառույցի հատված, պատկերված է կենցաղային տեսարան, կանացի ֆիգուրով, որն իր ուսին կրում է ջրով կուժ, ինչպես և, կենդանիների ոչ մեծ խմբով: Ինչպես տեսնում ենք այստեղ մույնպես համադրված են երկու ժամանակային հասկացություններ, իրենց մեջ որոշակի գաղափարախմաստային բովանդակություն կրելով:

Լուսագունային լուծման արտահայտված պայմանականությունը, ինչպես հասկացանք, Կոջոյանի գեղանկարչության արտահայտչական լեզվի անկյունաքարային միջոցներից է: Նմանատիպ եղանակը վարպետին թույլ էր տալիս ավելի ազատ և անկախ մեկնաբանել գույնի ֆունկցիան, իր իրական բնույթից: Դա մասնավորապես ակնառու է բնանկարչական ժանրի գործերում, որոնցում դժվար էր անտեսել ֆրանսիացի վարպետների գեղարվեստական նվաճումները պլեներային գեղանկարչության բնագավառում: Բայց և այնպես, Կոջոյանին հաջողվեց մշակել բնանկարչության ասպարեզում իր անհատական արտահայտչալեզուն:

Եզրակացնելով, նշենք, որ վարպետի բնանկարչական ժառանգությունը աչքի է ընկնում թե՛ կերպարվեստային լուծումների և թե՛ սյուժետախմաստային բովանդակության անչափ բազմազանությամբ: Նրանց մեջ լավագույն մոտիվները առանձնանում են գեղանկարչական լեզվի ինքնատիպությամբ և բարձրագույն գեղարվեստական որակով: Եվ, այդպիսով, նրանք մեր արվեստի բնանկարչական ժանրում յուրատիպ և անկրկնելի ավանդ են:

Col. 25. Ինքնադիմանկար (1907)

Col. 26. Աշունը Երևանում (1932)

Col. 27. Ապարան (1958)

Garegin Kotanjian (Armenia)

HAKOB KOJOYAN PAINTING'S PICTORIAL PECULIARITIES

One of the classic artists of Armenian art, whose 130th anniversary should be mentioned in the present year, is not only the greatest graphic-artist along all the history of Armenian art, but also one of the prominent Armenian painters of the 20th century.

In the article there is revealed both the singularity of his artistic view and individual approach, as well as, quite difference from that of the other Armenian artists'. The artist's works analysis allowed to determine the main two lines along which his creative method developed: constructional-compositional while creating figural images, and symbolic-conventional in the treatment of color ones.

Thus Hakob Kojoyan worked out his own creative method of approach in the representation of the reality, which in some aspects is not characteristic to impressionistic one, in particular, in the handling of landscapes.

His works are distinguished by exceptional high artistic values and rare taste. His painting is an invaluable contribution richening national fine arts with artistic diversity.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Մարի Ռոզ Աբուսեֆյան (ԱՄՆ)

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՀԱԿՈՒ ՕՇԱԿԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒՄ

Շուտով ազգովին թեականոթելու ենք Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցը և բավական աշխատանք ունենք այդ արհավիրքը գրականության մեջ արտացոլող ստեղծագործությունները հավաքագրել-ամբողջացնելու, թարգմանելու, ներառյալ նաև թուրքերեն, հասարակության ուշադրությանը ներկայացնելու, քանի որ դրանցից շատերը սոսկ Ցեղասպանությունը ներկայացնող գործեր չեն, այլ ստեղծագործություններում շոշափված են հարցեր, որոնք մինչև այսօր դեռ լուծում չեն գտել մեր ազգային և քաղաքական կյանքում: Մենք ավելի շատ ուսումնասիրել ենք Ցեղասպանության թողած ազդեցությունը այդ արհավիրքը ապրած գրական սերունդի վրա, այդ ազդեցության վերադարձումը նրանց գործերում, միշտ սպասելով Ցեղասպանությունը իր ամբողջ տարողությամբ ներկայացնող ստեղծագործությունների:

Բայց չէ՛ որ Հայոց Ցեղասպանությունը միանգամից՝ 1915թ. չսկսվեց ու գործադրվեց: Այլ ծրագրված, աստիճանաբար իրագործվելով իր վերջնական գտավ այդ թվին, 1915-ին: Հիմնվելով քաղաքական այս փաստի, արևմտահայության ծրագրված աստիճանական ոչնչացման, դարերով նրանց ստեղծած բարքերի, կենցաղի, մշակույթի, պատմության կորուստ-ոչնչացման փաստերի վրա, պիտի նշել, որ Հայոց Ցեղասպանությունը իր ակունքից սկսած, արտացոլված է արևմտահայ գրականության մեջ հանձինս՝ Հակոբ Օշականի ստեղծագործությունների:

Ծնվելով նախաեղեռնյա՝ 1883թ. Բուքանիո շրջ. Պրուսա քաղաքում, եղեռնի սկզբնավորման և դրա աստիճանական գործադրման միջավայրում, ապրելով եղեռնյա՝ վերջնական ջարդերի և ետ եղեռնյա ժամանակաշրջաններում, նա ամբողջովին յուրացրել էր արևմտահայության դժոխային կյանքը թուրքական հային ոչնչացնող տիրապետության տակ և ավելի ուշ արդեն աշխարհի ճանապարհներում սփռված, որը և փոխադրեց գրականություն: Ինքն անձամբ ապրելով եղեռնի վերջնական տարասփազող իրավիճակը, ծրագրել էր այդ վերջնական հայության զանգվածային կոտորածներն ու տեղահանություն-աքսորը, դարձնել իր վեպերի գլուխ գործոց՝ «Մնացորդացը»-ի վերջաբանը «Դժոխք» վերնագրով: Ոչ միայն երևակայությունից, մարդկային ըմբռնումից վեր արհավիրք էր ապրել արևմտահայը, ոչ միայն բնաջնջվել, ոչնչացվել, արմատախիլ էր եղել, կտրվել իր ծիներին սնուցող ակունքներից, այլ այս ամենից հետո կենդանի մնացողները իրենց մեջ էին փնտրում այդ ոչնչացման պատճառները: Օշականը որպես մեծ մտածող, ազգանվեր ստեղծագործող, իր պարտքն էր համարում այդ ամենը գրականությամբ արտահայտելու:

Ճակատագիրը թույլ չտվեց Օշականին իրագործելու իր մեծ երազանքը, նա մահացավ ավելի վաղ քան կգրեր իր ծրագրած վեպը, սակայն մինչ այդ, նա արդեն հասցրել էր իր ուշ շրջանի պատմվածքներում և իր գլխավոր վեպերում, արտացոլել հայության դեմ գործված ցեղասպանությունը սկզբից, իր ակունքից և դրա գործադրման միջոցները:

Հիշեցնեն, որ Միջազգային իրավական օրենքով Ցեղասպանություն է համարվում 1. Մի ժողովրդի, մարդկային մի խմբի, ծրագրված սպանություն ոչնչացումը: 2. Մարմնական և հոգեկան վնաս հասցնելը: 3. Դիտավորյալ ծրագրումով նրանց տարածքների և ունեցվածքի բռնագրավումը: 4. Բռնի ուժով դավանափոխությունը . . . Եղեռնի վերջնականից առաջ, Թուրքիան արդեն իրագործում էր այս ամենը՝ հայերի ոչնչացումը, նրանց տարածքներին մեկընդմիջ տիրանալու համար, այսինքն եղեռնը արդեն սկսված էր նախքան 1915թ.: Օշականը իր գլխավոր վեպերում արտացոլում էր այդ ժամանակաշրջանը Եղեռնի սկիզբը և օգտագործված միջոցները:

Հիշենք նաև, որ Ադէտը, ցեղասպանությունն արդեն տեղի էր ունեցել, երբ Օշականը 1920թ. գրում էր իր պատմվածքները և 1928-1934թթ. վեպերը:

Բանտերից, աքսորից, անապատներից վերադարձել էին հրաշքով սակավ փրկվածները ու գրառել իրենց ապրած զարհուրանքը: Օշականը տեղյակ էր եղեռնի բոլոր մանրամասներին, ինքն էլ դեռ այդ սարսափի ազդեցության տակ էր՝ «Ադէտն վերջ տակալին քառորդ դար պուտ մը չեն աղոտած»¹, բնականաբար ինչ էլ գրեր, իր էության, իր մտքի, իր խոսքերով՝ «ինչպես սաղմին վրա», իր ենթագիտակցության մեջ արմատացած այդ անջնջելի աղետն էր ներկայացնելու: Չէ՞ որ ըստ

¹ «Համապատկեր», հ.10, էջ 86, 1982թ. Լիբանան:

հոգեբանների, մարդկային ենթագիտակցության մեջ դաշվում են նրանց ապրած զարհուրելի փորձությունները և անգիտակցորեն վերարտադրվում իրենց գործերում:

Պատահական չէ, որ նա ձեռնամուխ եղավ թուրքին հայ գրականության մեջ ներկայացնելուն: Դրանով հայի ուշադրությունը նա կենտրոնացրեց իր երկրին, իր հոգուն, իր մտածողությանը տիրացած ու իրեն բնաջնջած ցեղի, թուրք հասկացողության վրա, պարզաբանելով, թե **ինչո՞ւ գործադրվեց եղեռնը, ի՞նչն էր հային բնաջնջելու թուրքերի նպատակը և ինչպե՞ս իրագործվեց այն:**

Եղեռնի մասին առաջին անգամ հանդիպում ենք 1920թ. Պոլսո «Ճակատամարտ» օրաթերթում պարբերաբար հրատարակված իր պատմվածաշարում:

Ուշագրավ խորագրով պատմվածաշարը՝ «Կայսերական Հաղթերգություն», ընդգրկում է հինգ փոքրիկ պատմվածք, ուր պատկերվում է հայության ապրած մեծագույն ողբերգությունից՝ Եղեռնից, դրվագներ, այդ եղեռնագործության հոգեբանական հետևանքներն ու ազդեցությունը կենդանի մնացողների վրա:

Առաջին անգամ Օշականը մեր գրականության մեջ, այս պատմվածաշարում, խոսում է Յեղասպանության կազմակերպման մեջ գերմանիո մասնակցության մասին: Պատմվածաշարի առաջաբանում նա մեղադրում է Գերմանիային, մասնավորապես Վիլհելմ II կայսրին թուրքիո հետ մեր ցեղասպանությունը կազմակերպելու համար:

Կայսրից բացի նա դատապարտում է նաև գերման ժողովրդին, նրա ցուցաբերած անտարբեր լուրջության համար:

Եղեռնը ազդարարող, եղեռնը կազմակերպողներին աստիճանաբար բացահայտող և անուղղակիորեն Յեղասպանությունը արտացոլող խորը գործեր են՝ «Հարյուր մեկ տարվան եռագրության» վեպերը՝ «Հաճի Մուրատ», «Հաճի Ապտուլլահ», «Մուլեյման էֆենտի», ինչպես նաև իր գլուխգործոց՝ «Մնացորդացը»: Այս վեպերում ստեղծած իրավիճակների, անհատական կերպարների զարգացման, նրանց գործողության ու ճակատագրի մեջ Օշականը տեղադրել է այնպիսի մանրամասներ, որոնք ընթերցողին անմիջապես փոխադրում են եղեռնի միջավայրը:

«Հաճի Մուրատը» վեպում, Մուրատի վրա գործադրված տանջանքներում, բանտի տանջարանում, Պրուսայի դիվանապետի գործողություններում, ամենուրեք եղեռնի պատկերն է: Ի տարբերություն հասարակ ժողովրդի, լինելով ժամանակի առաջադեմ մտածող, հասկանալով եղեռնի կազմակերպման նպատակը, վեպում նա մինչև իսկ շոշափում է մեծ տերությունների քմահաճույքին հանձնված հայության ճակատագիրը և քննադատում, մեղադրում է այն պետություններին, մասնավորապես Եվրոպային, որոնք իրենց մասնակցությունն ունեցան և անտարբեր սառնությամբ հետևեցին կատարվող գազանություններին: **«Մեր աղետին ամենէն զարշ տրտմութիւնը բռնադատուեցաւ մեզի քրիստոսանուէր այդ մարդերէն»²:**

Մեր ջարդերում իրենց նշանակալից դերը ունեցած մոլլաներին է ներկայացնում «Հաճի Ապտուլլահ» վեպով, որոնք իրենց փաթեցների իշխող հեղինակությամբ բորբոքեցին թուրք հասարակ, տգետ ամբոխի կրոնամոլ ատելությունը, սովորական դրացիից նրանց փոխակերպելով վայրագ հայասպանների:

Հաջորդ՝ «Մուլեյման էֆենտի» վեպով Օշականն արդեն ամբողջացնում է ոչ միայն թուրքի հոգեբանությունն ու ցեղային ոճրագործ-բնածին հատկանիշները, այլ տալիս է այն սերնդի պատկերը, որոնք կազմակերպելու, գլխավորելու, իրագործելու էին մեր ջարդերը, որոնք Երիտթուրք անունն էին կրելու:

«Մնացորդացը» վեպը Յեղասպանությունը իր սկզբնավորումից, իր ակունքից արտացոլող մի մեծ համանվագ է, ուր տեսանելի է և՛ եղեռնի ողջ ծրագիրը, և՛ խելահեղ արագությամբ դրա իրագործումը: Տեսանելի է հայերի քաղաքական տհասությունը, կուրությունը, չտեսնելու մոտեցող արհավիրքը, մինչև իսկ, երբ թուրքերն արդեն բացահայտ էին գործում: Տեսանելի է հայերի ավանդույթների անկման համար թուրքերի տարած հետևողական աշխատանքը և այդ անկումը: Տեսանելի է հայ հոգեւորականության բարոյագրկմամբ համայնքն ամբողջովին քայքայող թուրքերի հաղթանակը: Տեսանելի է թուրքերի, իրենց մեծ ծրագրին՝ համախալամացման, հասնելու ակնդետ համառ աշխատանքը:

Վեպի վերնագիրն ինքնին մեզ կապում է Յեղասպանության հետ: Ինչ որ փրկվեց, կենդանի մնաց այդ արհավիրքից, ազգի Մնացորդացը: Վեպում օգտագործված մի շարք պատկերներ, բացահայտորեն վերցված են եղեռնից, ինչպիսին Մողոմի կախարդիչ երգն է բանտում: Դա անմիջականորեն Չանդըրըի բանտում Կոմիտասի վերջին պատարագի կրկնօրինակումն է, որն Օշականը լսել էր նույն բանտից փրկված Բիզանտ Պոզաճեանից, և այդ պամությունից տպավորված որոշել էր առանձին վեպ գրել այդ մասին, բայց մինչ այդ այն ներառել էր իր այս վեպում: Նախանտենց գերդաստանի կյանքով տեսանելի է հայի, որպես ազգ իր հողի վրա կյանքը շարունակողի, ոչնչացումը, մեր բարբերի և

² «Հաճի Մուրատ», էջ 406:

ավանդույթների փչացումը թուրքերի անմիջական աշխատանքով: Հայը միայն գլուխը իր ուսերին պահելու մտահոգությամբ տարված չի հոտառում մոտեցող մեծ արհավիրքը: Ահա թե ինչու եղեռնի հարվածը հանկարծակի ընդունելով մեղավորներ է փնտրում իր ազգի մեջ և բնականորեն առաջին թիրախը դառնում են թուրքին չինագանդողները՝ հեղափոխականները, համարձակ մտավորականները: Սա անշուշտ բնական երևույթ էր դարերով օտարին հպատակվողների, գերության, հոգու շղթաներ կրողների հոգեբանության համար: Օշականը մինչև իսկ այդ հարցին է անդրադառնում վեպում, որը եղեռնից հետո հայությանը պառակտող հարց էր դարձել: Այդ իսկ միտումով վեպում երկխոսություն է ստեղծում հեղափոխական Մաթիկ Մելիքխանյանցի և թուրք փաշայի միջև ուր թուրքի բերանով բացահայտում է հայերի տարածքը ամեն գնով իրենցը դարձնելու նրանց վճռականությունը:

Յեղասպանությունը միայն ազգին ֆիզիկապես ոչնչացնելը չէ, այլ ենթարկված տանջանքների՝ գազանային սպանության, բռնաբարության, նվաստացման, ճնշման հետևանքով ստացած հոգեկան և մտային վնասները, ազգային դիմագծի խեղաթյուրումն է տվյալ ժողովրդի մեջ: Օշականը վեպում նկարագրում է նաև հայության մեջ այդ երևույթները: Վիպասանը անդրադառնում է մեր ամենացավոտ, նույնիսկ ինքներս մեզնից մինչև օրս թաքցրած մեկ այլ երևույթին՝ հավատափոխությանը: Դարեր շարունակ համիլամությունը տարածելու ամենահեշտ միջոցը թուրքերի համար եղել է գոհին բռնի կամ մահվան ծուղակը ընկած, թրքացումը պարտադրելը, ինչպես վեպում Սողոմի թրքացումն է: Հայությունը իր հավատին ամուր կառչած, արհամարհել, մերժել է ընդունել ոչ միայն հավատափոխներին այլ նաև բռնաբարությունների հետևանքով, կամ թուրքերի մերձեցումից ծնվածներին, որի ներկայացուցիչը վեպում Գազել-Եղնիկն է, որոնց թուրքերը օգտագործել են հայի դեմ, ինչպես վեպում է, և որոնց մասին երբեք չենք խոսել, քննության հարց չենք դարձրել: Այսօր Օշականի այս գործերի շնորհիվ է, որ մեր գրականության մեջ, որպես բարձրագույն ստեղծագործություններ, ունենք մեր ժողովրդի ապրած ամենամեծ ողբերգության պատկերը և դրա թողած հոգեբանական ազդեցությունը մեր վրա: Ունենք այդ հարվածից ստացած մի շարք անլուծելի հարցեր, որոնք առաջին անգամ այս մեծ մտածողը բացահայտեց և մեր ուշադրությանը ներկայացրեց, բայց որը մինչև օրս անտարբերության ենք մատնել: Եղեռնը շուտով թևակոխելու է իր 100-ամյա տարելիցը, և մենք դեռ թերանում ենք ձեռք մեկնել հայության հավատափոխ եղած հատվածին, միչև իսկ այն դեպքում, երբ բռնի հավատափոխները իրենք են արթնացել, իրենց լուծությունը խզել ու մեր օգնությանն են սպասում: Երբեք քննության հարց չենք դարձնում բռնաբարությունների կամ թուրքերի մերձեցումից ծնվածների հարցը: Զե՞ որ այն գոյություն ունի և կարևոր է մեր ազգի թվի և մեր հետագա պահանջների համար: Դեռ նույնիսկ պետական օրինագիծ չենք դարձնում մեր պահանջատիրության հարցը: Սակայն յուրաքանչյուր այսպիսի գիտաժողովների միջոցով են զարգանում, մասսայականանում, ազգային, գիտության, երկրի առաջընթացի, մարդկության առաջընթացի հարցերը: Հուսանք, որ այս գիտաժողովը ճանապարհ կհարթի մեր առջև ծառացած և դեռ լուծման սպասող բազում հարցերին:

Marie Rose Abousefian (USA)

REFLECTION OF THE ARMENIAN GENOCIDE IN HAGOP OSHAGAN'S WORKS

Hagop Oshagan, the great novelist of the Western Armenian region, had a vision to portray the Armenian Genocide in its entirety, in his work, complete with the horrors of mass deportations, indiscriminate killing, and annihilation of the Armenian nation. Oshagan died prior to completing his vision. Still, in his series of short stories and his novels he reveals the sources and identity of the organizers of the genocide from the inception, prior to 1915, the motivation of the perpetrators of the crime, and the effect of the aftermath on the Armenian people and the nation as a whole. In presenting the period before 1915, which marks the commencement of the Genocide, in his novels, Oshagan documented genocide pre-planning policies that attacked the fabric of the Armenian communities involving killing the Armenians, confiscating their wealth, and lands in perpetuity. Through his literature he provides evidence of actions and behaviors that classify the crimes committed against Armenians as acts of genocide, consistent with court rulings and law.

From his series of short stories and his novels Oshagan reveals the psychology and the story of the great Armenian tragedy of genocide with vivid images.

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ 1919-1921 ԹԹ. ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Առաջին աշխարհամարտից հետո Օսմանյան կայսրության իշխանությունների՝ Հայոց ցեղասպանության պատասխանատուներին դատապարտելու նախաձեռնությունն առաջին հերթին պայմանավորված էր պատերազմում հաղթանակած պետությունների դիրքորոշումը մեղմելու ցանկությամբ, քանի որ կայսրությանը վերջնական կործանում էր սպառնում: Բացի այդ, Թուրքիայի նոր իշխանությունները մտադիր էին պատասխանատվության ենթարկել առանց հիմնավոր պատճառի երկիրը պատերազմի մեջ ներքաշած և աշխարհամարտի տարիներին բազմաթիվ տնտեսական չարաշահումներ կատարած երիտթուրքերին:

Երբ արևմտահայերի զանգվածային կոտորածների լուրը տարածվել էր աշխարհով մեկ, Անտանտի երկրները 1915 թ. մայիսի 24-ին նոտա էին հղել Բարձր Դռանը՝ հայտարարելով, որ Օսմանյան կայսրության այդ նոր ոճրագործություններն ուղղված են մարդկության դեմ, և դրանց համար պատասխանատու են կառավարության բոլոր անդամները և տեղական իշխանությունները: Թեև պատերազմից հետո դաշնակից պետությունները փորձեցին կոտորածների պատասխանատուների նկատմամբ կիրառել միջազգային իրավունքի սկզբունքները, սակայն այդ նախաձեռնությունը հաջորդ ամիսներին հետզհետե բուլացավ և, ի վերջո, զոհ գնաց քաղաքական խարդավանքներին:

Տեղի տալով համաշխարհային հանրության ճնշմանը, Օսմանյան կայսրության՝ միմյանց արագ հաջորդող կառավարությունների ներկայացուցիչները, որոնք հիմնականում կազմվում էին պատերազմի տարիներին երիտթուրքերի կողմից հալածված Ազատություն և համաձայնություն կուսակցության անդամներից, փութացին պատժել հայերի տեղահանության և կոտորածների հեղինակներին: Այդ շտապողականությունը պայմանավորված էր նաև Ցեղասպանության հանցագործներին օսմանյան դատարանում դատելու ցանկությամբ, քանի որ դրանց՝ որևէ միջազգային դատարանում քննվելու դեպքում կարող էին ի հայտ գալ այնպիսի փաստեր, որոնք թուրքերը կցանկանային կոծկել:

1919-1921 թթ. Ստամբուլի ռազմական արտակարգ ատյաններում հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով կայացան 63-ից ավելի դատական գործեր, այդ թվում՝ երիտթուրքական կուսակցության և կառավարության անդամների, պատասխանատու քարտուղարների և կայսրության տարբեր շրջանների կառավարիչների:

Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների¹ դատաքննությանն² անդրադառնալիս պետք է հաշվի առնել հետևյալ երկու հանգամանքները. նախ՝ դատավարության ժամանակ Օսմանյան կայսրության իշխանությունները, ի դեմս սուլթան Մեհմեթ 6-րդ Վահդեդդինի ու վարչապետ Դամաթ Ֆերիթ փաշայի կառավարության անդամների, ձգտել են հայերի զանգվածային կոտորածները կազմակերպելու մեջ մեղավոր ճանաչել միայն սահմանափակ զանգվածի՝ հանձինս Իթթիհաթ վեթե-րաքքի կուսակցության վերնախավի ու նրա ղեկավարած կառավարությանը, և երկրորդ. իրենք՝ երիտթուրքերը ու նրանց կողմնակիցները, ընդհակառակը, ամեն կերպ փորձել են չվարկաբեկել կուսակցության անունը՝ ձգտելով մեղքը բարդել ոչ թե կազմակերպության, այլ միայն առանձին անհատների վրա: Այսպես՝ 1919 թ. հունվարի 28-ին Ալի Քեմալը, ով շատ չանցած զբաղեցնելու էր հանրակրթության, ապա՝ ներքին գործերի նախարարի պաշտոնները, «Մաբահ» օրաթերթում գրում էր. «4 կամ 5 տարի առաջ կատարվեց պատմության մեջ նախադեպ չունեցող ոճիր, մի հանցագործություն, որը սարսափ հարուցեց համայն աշխարհում: Եթե ուզում ենք պատկերացում տալ այդ ոճրագործության մասշտաբի և պայմանների մասին, ապա պետք է խոսենք ոչ թե 5-ից 10, այլ՝ 100 հազարավոր հանցագործների մասին: Արդեն բացահայտվել է, որ իրականում էլ այդ ողբերգությունը ծրագրված է եղել Իթթիհադի կենտրոնական կոմիտեի ընդունած որոշումների հիման վրա»³:

Իսկ 1919 թ. մարտի 17-ին ներքին գործերի նախարար Ջեմալն «Ալեմդար» օրաթերթին տված հարցազրույցում փորձում էր առաջ քաշել թուրք հասարակ ժողովրդի և իր կառավարության անմեղու-

¹ Երիտթուրքական կուսակցության և կառավարության անդամները սկզբում դատաքննվել են միասին, սակայն դատավարության երկրորդ նիստում դատախազի պահանջով կառավարության անդամների գործի ուսումնասիրությունն առանձնացվել է: Այդպիսով՝ 1919 թ. ապրիլի 28-ից մայիսի 17-ը թվով 7 նիստում դատաքննվել են Միություն և առաջադիմություն կուսակցության առաջնորդներն ու Հատուկ կազմակերպության նախագահը, իսկ 1919 թ. հունիսի 3-ից 26-ը՝ դարձյալ 7 նիստում՝ կառավարության անդամները:

² Միություն և առաջադիմություն կուսակցության ու կառավարության անդամների դատավարությունները պատմագրության մեջ հայտնի են նաև Գլխավոր դատավարություններ (Ana Davalar) անունով: Գլխավոր դատավարությունների համար 1919 թ. հուլիսի 5-ին կայացվել է մեկ ընդհանուր դատավճի:

³ Günel G., İttihat Terakki'den Günlümüze Yek Tarz-ı Siyaset: Türkleştirme, Belge Yayınları, İstanbul, 2006, s. 127.

թյան վարկածը: Ներքին գործերի նախարարը խոսում էր նաև իր կառավարության⁴ կողմից իբթիհա-
դականներին պատժելու անհրաժեշտության մասին. «...կառավարությունը, նախ և առաջ, պարտավոր է
մաքրել այն կեղտաբիծը, որ թողել է Միություն և առաջադիմություն կուսակցությունը օսմանականու-
թյան վրա: Դրա համար էլ կառավարությունն անհրաժեշտ դատաքննություն է իրականացնելու տեղա-
հանության և կոտորածների ողբերգությունների հեղինակների նկատմամբ: Միություն և առաջադի-
մություն ասելով՝ չենք հասկանում օսմանյան ազգ: Իբթիհաք վե թերաքքի կուսակցությունը բոլորովին
այլ ավագակախմբից էր բաղկացած: Տեղահանության և կոտորածների պատճառով ոչ մի պատաս-
խանատվություն չի ընկնում օսմանյան կառավարության և ազգի ուսերին: Կառավարությունն ու ժո-
ղովուրդը պատասխանատու կդառնան միայն այն դեպքում, եթե չդատապարտվեն տեղահանության և
կոտորածների հեղինակները»⁵:

Հարկ է արձանագրել, որ ընդհանրապես հայերի տեղահանության ու կոտորածների մեղադ-
րանքով իրականացված դատաքննությունների արդյունքում Ռ-ազմական արտակարգ ատյանների
դատական կազմերը մահվան դատավճիռներ արձակելիս փոխաբերական իմաստով ավելի «շռայլ» են
գտնվել փախուստի մեջ գտնվող դատապարտյալների հանդեպ: Այսպես, հայերի տեղահանության և
կոտորածների մեղադրանքով հարուցված մոտ 63 դատական գործերի արդյունքում կայացվել է
ընդհանուր թվով 20 մահապատժի դատավճիռ: Հատկանշական է, որ այդ մահապատժներից միայն 3-
ն են ի կատար ածվել, իսկ մնացած 17-ն ընդունվել են հեռակա կարգով, քանի որ դատապարտյալները
գտնվել են փախուստի մեջ: Մահապատժի ենթարկված դատապարտյալները հետևյալ անձինք են՝ Բո-
ղազյանի գավառապետ Մեհմեթ Քեմալը (Յոզղատի դատավարություն), Երզնկայի ժամդարմերիայի
հրամանատար Հաֆիզ Աբդուլլահ Ավնին (Երզնկայի դատավարություն) և Բաբերդի կառավարիչ, հե-
տագայում՝ Ուրֆայի գավառապետ Բեհրամզադե Նուսրեթը (Բաբերդի դատավարություն): Ներկա
գտնվող ամբաստանյալների վերաբերյալ մահապատժի դատավճիռներ կայացնելուց խուսափելը պայ-
մանավորված էր դատավարությունների ձևական բնույթով, քանի որ սուլթանական կառավարությանը
հայերի տեղահանության ու կոտորածների պատասխանատուներին դատելուն է մղել առավելապես ոչ
թե արդարությունը վերականգնելու ցանկությունը, այլ պատերազմում հաղթանակած պետությունների
վրա նման տպավորություն գործելու ձգտումը: Դա է ապացուցում նաև Հայոց ցեղասպանության ոճրա-
գործներին մահապատժի ենթարկելու ժամանակացույցը: Այսպես՝ Յոզղատի դատաքննության ար-
դյունքում դատին ներկա գտնված մեղադրյալի վերաբերյալ մահապատժի որոշում է կայացվել, քանի
որ Յոզղատի դատավարությունն առաջինն էր հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով
հարուցված դատական գործերի շարքում, և անհրաժեշտ էր Եվրոպայի առաջ արդար դատավա-
րություններ կազմակերպելու տպավորություն թողնել: Ինչ վերաբերում է Հաֆիզ Աբդուլլահ Ավնի և
Բեհրամզադե Նուսրեթի մահապատժներին, ապա նրանց մահվան դատավճիռներն արձակվել են
Սևրի դաշնագրի կնքման նախօրեին և հաղթանակած տերությունների դիրքորոշումը մեղմելու նպա-
տակ են հետապնդել: Սուլթանական կառավարությունն այդպես էլ ոչ մի քայլ չի ձեռնարկել՝ հեռակա
կարգով մահվան դատապարտվածներին գտնելու և վերջիններիս մահապատժներն ի կատար ածելու
ուղղությամբ:

Կայսրության տարբեր շրջանների հայերի տեղահանության և կոտորածների դատական գոր-
ծերի առնչությամբ կարելի է արձանագրել նաև հետևյալ օրինաչափությունը. եթե առաջին դատավա-
րությունների դեպքում դատարանը համեմատաբար խիստ պատիժներ է սահմանել մեղադրյալների
նկատմամբ, ապա հետագա դատաքննությունների ժամանակ նկատելի է ամբաստանյալների ազատ
արձակման դեպքերի աճ: Այս առումով, բնականաբար, մշանակալի դեր են կատարել երկրում ազգայ-
նական շարժման ծավալումը և պարտվողական տրամադրությունների թոթափումը:

Պետք է նաև արձանագրել, որ թեև հայերի կոտորածների հետաքննությունը շրջան առ շրջան
իրականացնելը գործնական տեսանկյունից ավելի նպատակահարմար է եղել, սակայն, ըստ էության,
տեսականորեն այդ դատավարությունները կարող էին ամփոփվել նաև մեկ դատական գործի շրջա-
նակներում և ավարտվել մեկ ընդհանուր դատավճռով, քանի որ խնդրո առարկան միևնույն ոճրագոր-
ծությունն էր: Մինչդեռ դա Ռ-ազմական արտակարգ ատյանին ժամանակ շահելու և դատավարու-
թյունները դաշնակից պետությունների առաջ շահարկելու հնարավորություն էր տալիս:

Դատավարությունների ընթացքում երկրում փոխվել է նաև քաղաքական իրադրությունը: Արդեն
հիմնականում ազգայնականներով ներկայացված օսմանյան վերջին խորհրդարանի պատգամավոր-
ները 1920 թ. փետրվարի 20-ին հանդես են եկել վարչապետ Դամաթ Ֆերիթ փաշայի դեմ դատական
գործ հարուցելու առաջարկով, քանի որ վերջինս բավականին հետևողական էր հայերի կոտորածների
պատասխանատուներին բացահայտելու և պատժելու հարցում⁶: Քեմալականների ճնշումների պատ-

⁴ Խոսքը գնում է Hürriyet ve İtilâf (Ազատություն և համաձայնություն) կուսակցության անդամներից կազմված կառա-
վարության մասին:

⁵ Yalnız Taktik Değil, Tehcir de Dahil: Cemal Beyefendi'nin Beyanati, "Alemdar", 17 Mart 1919.

⁶ Akçam T., İnsan Hakları ve Ermeni Sorunu. İttihat ve Terakki'den Kurtuluş Savaşı'na, 2. Baskı, İmge Kitabevi, İstanbul, 2002, s. 585.

ճառով Գամաթ Ֆերիթը 1920 թ. հոկտեմբերի 17-ին հարկադրված է եղել հրաժարական տալ: Նրան փոխարինել է քեմալականների հանդեպ բարյացակամ տրամադրված Թևֆիկ փաշան: Վերջինիս պաշտոնավարման ընթացքում՝ 1920 թ. նոյեմբերի 8-ին, ձերբակալվել են Բաբերդի դատավճիռն արձակած դատավորները: Հարկ է նշել, որ մինչ այդ էլ Ռազմական արտակարգ ատյանի դատավորները, դատախազները և դատարանում որպես վկա հանդես եկած անձինք ահաբեկումների էին ենթարկվում երիտթուրքերի կողմից, որոնց մեծ մասը դեռ շարունակում էր պաշտոններ զբաղեցնել Ռազմական, ներքին և արդարադատության նախարարություններում, սակայն դատավորների ձերբակալման դեպքն աննախադեպ էր: Նրանց դեմ քրեական գործ է հարուցվել՝ Բեհրամզադե Նուսրեթին մահվան դատապարտելու կապակցությամբ: 1921 թ. փետրվարի 2-ին դատավոր Նեմրուք Մուստաֆա փաշան դատապարտվել է 7, դատարանի անդամներից Ռեջեփ փաշան և Ռեջեփ բեյը՝ 5-ական, իսկ Ֆեթթահ բեյը՝ 3 ամիս ազատազրկման: Իսկ հայերի բնաջնջման համար մահապատժի ենթարկված ընդամենը 3 ոճրագործներից 2-ը՝ Մեհմեթ Քեմալը և Բեհրամզադե Նուսրեթը, հերոսացվել են քեմալականների կողմից:

Երիտթուրքերի դատավարությունների արդյունքում արդարությունը լիովին չի վերականգնվել: Սույն դատական գործերի օրինակից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ ցեղասպանության հանցագործները չպետք է դատվեն իրենց երկրի դատարաններում: Յուրաքանչյուր ցեղասպանության հանցագործություն պետք է դատապարտվի միջազգային դատարանում: Թերևս միայն այդ դեպքում արդարությունը որոշ չափով կվերականգնվի:

Վերջում հիշեցնենք Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Ջեմալի արտահայտած այն նախադասությունը, թե «Կառավարությունն ու ժողովուրդը պատասխանատու կդառնան միայն այն դեպքում, եթե ղատապարտվեն տեղահանության և կոտորածների հեղինակները»: Քանի որ Հայոց ցեղասպանության պատասխանատուների մեծ մասն այդպես էլ մնաց անպատիժ, իսկ սահմանափակ թվով հանցագործների դատապարտումն էլ կրեց ձևական բնույթ, ապա կարելի է արձանագրել, որ սույն դատավարությունները կազմակերպած օսմանյան կառավարությունները ևս չեն ազատվել այդ պատասխանատվությունից:

Meline Anumyan (Armenia)

THE CONDEMNATION OF THE CRIMINALS OF THE GENOCIDE BY THE EXAMPLE OF THE YOUNG TURKS' TRIALS OF 1919-1921

After the World War I the initiative taken by the authorities of the Ottoman Empire to condemn the executors of the Armenian Genocide was conditioned first of all by the desire to ease the strained attitude of the States which had won, since the Empire was under the threat of final downfall. Moreover, the new authorities of Turkey intended to call to account the Young Turks who had drawn the state into war and had done numerous economic misuses during the war.

When the news about the mass killings of the Western Armenians had spread around the world, the Entente voiced a protest with the Ottoman Porte stating that those new crimes were against humanity and all the members of the Ottoman government and local authorities would bear responsibility for them. Although after the war the Allies tried to implement the principles of the international law to those responsible for the atrocities, in the following months that initiative gradually lessened and in the end fell a prey to political frauds.

Yielding to the international public pressure the representatives of the Ottoman government tried to castigate the authors of the Armenian massacres and deportations. That haste was conditioned by the desire to condemn the criminals of the Genocide at the national court since in case of the international court some unpleasant facts could have appeared, which the turns would like to conceal.

From 1919 to 1921 at the Istanbul Military Tribunals more than 63 judicial acts took place in accusation for the deportation and massacres of the Armenians; members of the Young Turks' party and the government, responsible secretaries and governors of different regions of the Empire were among the were among them.

Approximately 20 death sentences were passed, however only three of them were executed, since the majority of the condemned and in particular the main executors of the crimes had escaped. A number of criminals were convicted to imprisonment and penal servitude.

The justice during the proceedings of the Young Turks was dispensed incompletely. Based on these proceedings it may be inferred that the criminals of the Genocide must not be condemned at their national courts. Each genocide must be investigated and condemned at the international court. Only in that case the justice can completely be administrated.

ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵԶՐԿՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1914-1923 ԹԹ.

Հայտնի իրողություն է, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Օսմանյան կայսրության արտաքին և ներքին առևտրում, արդյունաբերական արտադրության մեջ և բանկային գործերում հայերն ազդեցիկ դիրք էին գրավում: Արևմտահայ առևտրական բուրժուազիան, դրամատերերն ու արդյունաբերողները, շնորհիվ իրենց տաղանդի ու ձեռներեցության, նույնիսկ օսմանյան բռնատիրության ու կամայականությունների պայմաններում, կարողացել էին տեղ դառնալ որոշակի հարստության և ստեղծել դրամական զգալի կուտակումներ¹:

Հայերի տնտեսական հզորացման մեջ մեծ վտանգ տեսնելով՝ երիտթուրքերն իրենց գաղտնի ժողովներում քննարկում էին հայերի վերացումով նրանց տնտեսական մրցակցությունից ազատվելու, երկրում թուրքերի տնտեսական իշխանությունը հաստատելուն առնչվող հարցեր և միևնույն ժամանակ միջոցառումներ մշակում՝ հայ ժողովրդի անհատական և հավաքական ունեցվածքի բռնագրավման վերաբերյալ²:

Գրիգոր Չոհրապը, 1913 թվականին արդեն կանխատեսելով երիտթուրքական իշխանությունների հետագա քայլերը՝ գրում էր, որ մահմեդականների նկատմամբ կառավարության ամեն կարգի աջակցությունն անգամ չի կարող բարձրացնել նրանց կյանքի մակարդակը, որին հասել են քրիստոնյաներն իրենց անդուլ աշխատանքով, ուստի իշխանությունները կդիմեն զանգվածային կոտորածների, կամ նույնիսկ կստիպեն քրիստոնյաներին լքել երկիրը, որպեսզի նրանց ինչքը մնա թուրքին³:

Հայ ժողովրդի անհատական և հավաքական ունեցվածքի յուրացումը պետության կողմից ծրագրավորված լինելու մասին վկայություններ կան թե՛ վերապրողների հուշերում, թե՛ Օսմանյան կայսրության տարածքում գործած օտար դիվանագետների գեկուցագրերում, և թե՛ թուրքական աղբյուրներում, որոնք հաստատում են, որ հայերի ունեցվածքը հայ ժողովրդի բնաջման ծրագրում եղել է կարևոր գործոն:

Մի ամբողջ ժողովուրդ կողոպտելու համար նախ և առաջ հարկ էր հայերի ունեցվածքը դարձնել տիրազուրկ⁴: Այդ նպատակով երիտթուրքական իշխանությունները 1915 թվականի հունիսի 1-ին հրապարակեցին «Տեղահանության օրենքը», որի գործադրմամբ 1.500.000 հայ բռնի տեղահանվեց և բնաջնջվեց⁵: 1915 թվականի հունիսի 10-ին հրապարակվեց հայերի թողած գույքերի հետ վարվելու վերաբերյալ «Լքյալ գույքերի մասին» 34 հոդվածից բաղկացած հրահանգները⁶: 1915 թվականի սեպտեմբերի 13-ին ընդունվեց «Լքյալ գույքերի մասին» ժամանակավոր օրենքը⁷, իսկ հոկտեմբերի 26-ին՝ այդ օրենքի գործադրման համար կանոնադրություն⁸: Այսպիսով, օրինականացվեց հայերի անշարժ և շարժական գույքերի, ամբողջ հարստության բացահայտ կողոպուտն ու յուրացումը, որն արդեն իրականացվում էր Օսմանյան կայսրության ողջ տարածքում:

«Լքյալ գույքերի մասին» այս իրավական ակտերը ստեղծված էին ոչ թե հայերի իրավունքները պաշտպանելու, այլ զանգվածային թալանը զսպելու և պետական գանձանակը լցնելու նպատակով⁹: Այս իրավական ակտերի վրա կազմվեցին Լքյալ գույքերի հանձնաժողովներ, որոնք և կազմակերպեցին հայերի ունեցվածքի կողոպուտն ու յուրացումը¹⁰:

Իրականում հայերի գույքերի բռնագրավումներն ու կողոպուտը սկիզբ էր առել ավելի վաղ՝ գորակոչի մասին 1914 թվականի հուլիսի 30-ի հայտարարության հետ միաժամանակ¹¹: Ռազմական

¹ Ռ. Մահալյան, *Ցեղասպանության պատմությունից*, Երևան, «Հայաստան» հրատ., 1990, էջ 367:

² Մ. Զ. Բիթատ, *Օսմանեան յեղափոխութիւնը եւ մութ ծալքերը*, Պէյրութ, 1938, տպ. Կ. Տօնիկեան, էջ 160, 165-166, 186-187, 191-196, 347:

³ Գ. Չոհրապ, *Հայկական հարցը փաստաթուղթերու լույսին տակ*, Երկերի ժողովածու, Գ. հտ., Երևան, ԳԱԹ-ի հրատ., 2002, էջ 531-532:

⁴ Յ. Բարսեղով, *Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը*, Երևան, հրատ. Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի, 1999, էջ 5:

⁵ Ռ. Ա. Մաֆրաստյան, *Հայոց ցեղասպանության պետական ծրագիրը: Թուրքական երեք փաստաթղթերի համեմատական վերլուծություն*, «Վէմ», 2009, 1, էջ 54-55:

⁶ S. Pelek, "Gasp Edilen Ermeni Mülkleri Cari ve Esas Defterlerde Duruyor", *bianet.org*, 30 Temmuz 2011:

⁷ N. Onaran, *EMVAL-İ METRUK OLAYI, Osmanlı'da ve Cumhuriyet'te Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi*, İstanbul, 2010, s. 48:

⁸ Ա. Փափազյան, *Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ-մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915թթ.)*, Երևան, հրատ. ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի, 2002, էջ 214-222:

⁹ Նույն տեղում, էջ 236:

¹⁰ N. Onaran, *EMVAL-İ METRUK OLAYI...*, s. 65:

¹¹ Հ. Ինճիկյան, *Օսմանյան կայսրության անկումը. Սոցիալ-տնտեսական ակնարկ*, Երևան, «Հայաստան» հրատ., 1984, էջ 296-297:

հարկերի անվան տակ կատարվեց հայերի ունեցվածքի բացահայտ կողոպուտը¹²:

Հարուստ կողոպուտի հեռանկարը համախոհների մեծ բանակ և լայն զանգվածներ համախմբեց երիտթուրքական իշխանությունների շուրջ¹³: Երիտթուրքերի վարչակազմը հայերի լքյալ գույքերը հանձնեց հայերի բնակավայրերի իշխանություններին, նախարարություններին տրամադրեց շենքեր և հողատարածքներ, իսկ փոխարենը գտավ համախոհների հսկա բանակ և նրանցից ստացավ աջակցություն՝ հայերի բնաջնջումն իրականացնելու համար¹⁴:

«Լքյալ գույքերի մասին» հրահանգների 6-րդ հոդվածն առնչվում էր հայկական եկեղեցական գույքերին¹⁵: Իր բնօրրանում հայ ժողովրդի բնաջնջման հետ միաժամանակ, կողպտվեցին և ոչնչացվեցին նաև հազարամյակների ընթացքում ստեղծած նրա քաղաքակրթության բազմաթիվ և բազմատեսակ արժեքներ և հուշարձաններ¹⁶:

Դաշնակից պետությունների ճնշման տակ, 1920 թվականի հունվարի 8-ին, թուրքական կառավարությունը չեղյալ հայտարարեց «Լքյալ գույքերի մասին» օրենքը և որոշում ընդունեց հայերի գույքերը վերադարձնել տերերին և փոխհատուցել նրանց կրած վնասները¹⁷: Սակայն քեմալական շարժման ողջ ընթացքում եղեռնը վերապրած հայությունը ենթարկվեց կողոպուտի, կոտորածի և բռնի տեղահանության: 1922-1923 թվականներին կողոպտվեցին տեղահանությունից զերծ մնացած Չմյուռնիայի և Կոստանդնուպոլսի հայկական հարուստ համայնքները: Երկիրը հայաթափելուց հետո, քեմալական իշխանությունները 1920¹⁸, 1923¹⁹, 1927²⁰ թվականներին ընդունեցին օրենքներ, որոնք հայերին զրկեցին քաղաքացիությունից և իրենց պապենական երկիրը վերադառնալու իրավունքից: Հայերի թողած ունեցվածքի յուրացման գործին «իրավական» հիմք տալու համար Անկարայի Ազգային մեծ ժողովը 1922 թվականից մինչև 1926 թվականը ընդունել է «Լքյալ գույքերի մասին» 9 օրենք²¹:

Թուրքիայի Հարևարպետության շրջանում իշխանությունները տարբեր օրենքներ և կանոնադրություններ հրապարակելով՝ նպատակաուղղված ոչ մահմեդականներին դուրս էին մղում տնտեսական կյանքից և զանազան միջոցներով նրանց դրամազուլիսը փոխանցում մահմեդականներին²²: 1942 թվականի նոյեմբերի 11-ին Անկարայի Ազգային մեծ ժողովն ընդունեց «Ունեցվածքի հարկի մասին» օրենքը, որի անվան տակ կողոպտվեցին պոլսահայերի վերջին լուծան²³:

Այսպիսով, հանրապետական իշխանությունները շարունակեցին և ավարտի հասցրին հայերի ունեզրման երիտթուրքերի ծրագրերը:

Հայերի լքյալ գույքերի մաս են կազմում հայերի՝ օտար ապահովագրական ընկերություններին ոսկերդարմով վճարված գումարները²⁴: ԱՄՆ-ի և եվրոպական երկրների 62 ապահովագրական ընկերություններ ունեցել են հայ հաճախորդներ²⁵: Այս ընկերությունների կողմից հայերի նկատմամբ ստանձնած ֆինանսական պարտականությունների կատարումը չի իրականացվել, և յուրացվել են նրանց գումարները²⁶: Հայերի գումարները յուրացրեցին նաև Օսմանյան կայսրության տարածքում գործած օտար երկրների դրամատները:

Հայոց մեծ եղեռնի հետևանքով հայերի կրած նյութական կորուստներն անչափելի են, սակայն գոյություն ունեն տարբեր հաշվարկներ և թվերի վերածված բազմաթիվ փաստեր, որոնց հանրագումարը հնարավորություն կտա հասնելու հայկական կորուստների մոտավոր սահմանին:

Ունեզրկելով մի ամբողջ ժողովրդի, տիրանալով նրա դարերի քրտինքով և տքնությամբ ստեղծված ունեցվածքին՝ թուրքական պետությունը հետագայում կարողացավ լուծել իր ազգային անվտանգ-

¹² Լ. Չորմիսեան, *Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան*, Գ. հտ, Պէյրութ, տպ. «Սեւան», 1975, էջ 205:

¹³ Ա. Ալպոյաճեան, *Պատմութիւն Կեսարիոյ Հայոց*, Բ. հտ, Գահիրէ, տպ. Յ. Փափագեան, 1937, էջ 1440:

¹⁴ Ս. Մ. Üngör and M. Polatel, *Confiscation and Distruction, Continuum International Publishing Group*, London, 2011, p. 167:

¹⁵ Տ. Եսարտըմեան, *Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն*, ք. տպգ., Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 2001, էջ 56:

¹⁶ Ա. Ռ. Հովհաննիսյան, *Հայասպանությունը՝ մշակութային ցեղասպանության համատեքստում*, «Վէմ», Երևան, 2010, էջ 103:

¹⁷ Տարագիրներու գույքերու մասին նոր որոշում, *Վերջին լուր*, 1919, 13 հունվարի:

¹⁸ Ա. Ռ. Հովհաննիսյան, *Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը*, «Վէմ», Երևան, 2011, 1, էջ 176-180:

¹⁹ Լ. Վարդան, *Ժամանակագրութիւն Հայկական տասնինգի 1915-1923*, Պէյրութ, տպ. «Ատլաս», 1975, էջ 247:

²⁰ Յ. Բաքսեղով, *Հայերի ցեղասպանության...*, էջ 15:

²¹ Ս. Մ. Üngör and M. Polatel, *Confiscation and Distruction...*, p. 50-56:

²² Խ. Ծ., *Փոքրամասնություններէն յափշտակուածներով դրամազուլիս կուտակուեցաւ*, <http://asbarez.com/arm/48122/>.

²³ Մ. Գ. Ճիզմեճեան, *Խարբերդ եւ իր զուակները*, Ֆրէզնոյ, 1955, էջ 570:

²⁴ *Զավէն արք.*, *Պատրիարքական յուշերս, վաերագրեր եւ վկայութիւններ*, Գահիրէ, տպ. «Նոր աստղ», 1947, էջ 319:

²⁵ Այս ապահովագրական ընկերություններին և դրամատների մասին տվյալները վերցված են Կ.Պոլսի և Չմյուռնիայի հայկական մամուլում («Մասիս», «Ամենուն տարեցույցը», «Շիրակ», «Բյուզանդիոն», «Ժամանակ», «Օրացույց Սուրբ Փրկիչ Ազգային հիվանդանոցի», «Ավետաբեր», «Սուրհանդակ», «Հանրագիտակ», «Շանթ», «Արևելեան մամուլ», «Ծաղիկ», «Ռահվիրա», «Աշխատանք» և այլն) տպագրված դրանց գովազդներին:

²⁶ Հ. Գ. Ղազարեան, *Ցեղասպան թուրքը*, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ, 1968, էջ 226:

գությանը սպառնացող բազմաթիվ հարցեր: Նախ՝ հայերի ինչքերի և կալվածքների կողոպուտի հաշվին երիտթուրքական իշխանությունները լցրեցին իրենց պետական դատարկ զանձանակը: 1914-1918 թվականներին պետական բյուջեն, հակառակ պատերազմական ծանր պայմանների, անմախաղեպ աճ է արձանագրել²⁷:

Առեւի ծախսեր պահանջող պատերազմը մասամբ մղվել է հայ ժողովրդի ունեցվածքի հափշտակման և դրա վաճառքից ստացած միջոցներով: Թուրքական պատմագիտական ընկերությունը երկու տարի կատարած ուսումնասիրությունների արդյունքում բացահայտել է և 2012 թվականին հայտարարեց, որ հայերից խլված 5.000.000 օսմանյան ոսկին, որն ի դեպ այսօրվա համարժեքով կազմում է 1.300.000.000 ֆունտ ստեռլինգ, երիտթուրքական իշխանությունները որպես ռազմատուգանք, հանձնել են Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած պետություններին²⁸:

Այսպիսով, բնաջնջելով և բռնի տեղահանելով Արևմտյան Հայաստանի և կայսրության այլ վայրերում ապրող հայերին, երիտթուրքական, հետագայում նաև քեմալական իշխանությունները տնտեսական ասպարեզից վերացրին իրենց հզոր մրցակցին, նրա ինչքերի, հարստության հաշվին ստեղծեցին ազգային կապիտալ և թրքացրին երկրի տնտեսությունը²⁹: Թուրք պատմաբան Ռուզյուր Ռմիտը գտնում է, որ ժամանակից Թուրքիայի տնտեսությունը գրեթե ամբողջապես հենված է հայերից բռնագրավված ունեցվածքի վրա³⁰: Մեկ այլ թուրք պատմաբան Սաիդ Չեքինօղլին հավաստում է, որ այսօր իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության անդամների մեջ կան հայերի ունեցվածքը բռնագրաված անձանց զավակներ և թոռներ, և որ այսօրվա Թուրքիայի Հանրապետության ազգային կապիտալի 35 տոկոսը կազմում է հայերից բռնագրավված հարստությունը³¹:

Ֆինասների մախարարությունում պահվող հայերից կողոպտված հարստությունը հանրապետության շրջանում պարբերաբար փրկել է Թուրքիային՝ պետությանը դուրս բերելով տնտեսական տագնապներից: Օրինակ՝ Թուրքիայի Հանրապետության կառավարությունը այդ գումարներից 1929 թվականի տնտեսական ճգնաժամի սրման ժամանակ պետական բյուջե է փոխանցել 300.000 լիրա: Նման փոխանցումներ կատարվել են հետագա տարիներին³²:

Ավելին, Մուստաֆա Քեմալի դեկլարած ազգային շարժումը, որի հաղթանակի արդյունքում 1923 թվականի հոկտեմբերի 29-ին ստեղծվեց Թուրքիայի Հանրապետությունը, կրկին հայկական ունեցվածքի հաշվին էր, քանզի այն ֆինանսավորվել է հայերի ունեցվածքի բռնագրավումով հարստացած թուրք և քուրդ կալվածատերերի, առևտրականների և զինվորականների կողմից³³:

Թուրքիայի Հանրապետությունը պետք է կրի նյութական պատասխանատվություն, քանի որ այն որպես պետություն կայացել է հայ ժողովրդի՝ հազարամյակների ընթացքում ստեղծած հարստության հաշվին:

Anahit Astoyan (Armenia)

ARMENIANS' EXPROPRIATION IN THE OTTOMAN EMPIRE BETWEEN 914-1923

During the Armenian Genocide the movable and immovable properties of Armenians were robbed. Abound testimonials about this planned plunder are left by the survivors, in reports of the diplomats who were operating on the territory of the Ottoman Empire, as well as in Turkish sources, which confirm that the expropriation of Armenian properties was a crucial motive for the extermination of the Armenian nation.

Firstly, with the help of Armenian assets the Turkish authorities filled their state treasury, covered the huge war costs, and paid off a significant part of their foreign debt. The Young Turks and later on the Republican authorities eliminated their mighty rival from the economic arena and created their national capital by appropriating Armenian private movable and immovable properties. Today's Turkish economy is based on the possessions expropriated from the Armenians.

²⁷ S. Cetinoglu, *İşSermayenin Türkleştirilmesi, Resmi Tarih Tartışmaları -2*, Ed. Fikret Başkaya, *özgür üniversite Kitaplığı*, 2006- Ankara, s.131.

²⁸ Թուրքական պատմագիտական ընկերությունն ընդունում է, որ Հայոց ցեղասպանության զոհերնրի գումարներով Թուրքիան ռազմատուգանք է վճարել դաշնակից պետություններին /akunq.net/am/?p=22581.

²⁹ Հ. Բ. Շեքինօղլու, Ազգային կապիտալը գոյացել է հայերի տեղահանությունից (Հարցազրույց Սևան Նշանյանի հետ), akunq.net/am/?p=16307.

³⁰ U. Ü. Üngör and M. Polatel, *Confiscation and Destruction...*, p. 168.

³¹ Լ. Աղալը, Թուրքիայում գտնվող հարստության աղբյուրը բռնագրավված հայկական ունեցվածքն է (հարցազրույց Սաիդ Չեքինօղլուի հետ), <http://akunq.net/am/?p=18338>.

³² Ն. Օզյուն, Թուրք ազգայնականության «արյուն» տնտեսական քաղաքականությունը, <http://akunq.net/hy/?p=3874>.

³³ U. Ü. Üngör and M. Polatel, *Confiscation and Destruction...*, p. 124.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ

20-րդ դարի առաջին ցեղասպանությունը՝ 1,5 միլիոն հայերի ոչնչացումը Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս հայաբնակ վայրերում, որը ծրագրավորված իրականացրել են երիտթուրքական կառավարողները 1915-22թթ., ուղղակի աշխարհով մեկ տարածեց մեր ժողովրդին՝ գոյացնելով հայ Սփյուռքը: Հայության այն պատառիկները, որոնց հաջողվել է փրկվել կոտորածներից և ապաստան գտնել օտար ափերում, իրենց հետ տարել են մեր ժողովրդի արժեհամակարգում ամենավերին նիշերն զբաղեցնող հավատքը, լեզուն, սովորույթները: Ջարմանալի չէ, որ գաղթելիս նախ ապաստանել են փոքրիշատե ապահով մի տեղ, այնուհետև ձգտել են վերաբնակություն հաստատել առավել հայաշատ գաղթօջախներում՝ չկորցնելու համար իրենց ինքնությունը: Հին գաղթօջախները պարբերաբար համալրվել են գաղթականության նորանոր խմբերով, խաչավորվել են հայերենի տարբեր բարբառներ:

Հայերենի բարբառների ուսումնասիրության արդի փուլում հրապարակի վրա են առանձին բարբառների նկարագրությանը նվիրված տասնյակ մենագրություններ: Ականավոր լեզվաբան Հ. Աճառյանի շնորհիվ հայ բարբառագիտությունը վերջնականապես առանձնացել է որպես ինքնուրույն գիտակարգ, իսկ հայերենի մի քանի տասնյակ բարբառներ ծավալուն մենագրությունների նյութ են դարձել: Բարեբախտաբար, բարբառների մասին բավական առատ նյութեր կարելի է քաղել նաև բանահյուսական գրառված նյութերից, երգերից, հեքիաթներից, առածներից ու ասացվածքներից:

Ինչպես ժամանակին Հ. Աճառյանի, այնպես էլ հայ բարբառագետների հետագա սերնդի նվիրական երազանքը եղել և մնում է բարբառագիտական ապագա ատլասի կազմումը, որի քարտեզներում պիտի արտահայտվի բարբառային այս կամ այն երևույթի արեալը՝ տարածույթը: Հայ բարբառների պարագայում դա չափազանց բարդ գործ է, եթե ոչ անհնարին՝ նկատի ունենալով տեսողահանություններն ու բռնագաղթերը: Հին գաղթօջախները պարբերաբար համալրվել են գաղթականության նորանոր խմբերով, նրանց մայրենի բարբառներից շատերն անդառնալիորեն կորել են՝ լավագույն դեպքում թողնելով միջբարբառային խոսվածքներ: Եթե մենք գործ ունենալինք այնպիսի լեզվի հետ, որը կրող բնակչությունը դարերի ընթացքում արմատական տեղաշարժերի չի ենթարկվել, և որի բարբառների տարբերության (հասկանալիության) աստիճանը գրեթե ուղիղ համեմատական է բնակավայրերի հեռավորության աստիճանին, շատ հեշտ կլինեք բարբառների դաստասման և քարտեզագրման նախապատրաստելու գործը: Ներկայումս ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում ընթանում են վերջին 40 տարիների հավաքչական աշխատանքների արդյունքում կուտակված խոսվածքային 500 միավորների ընձեռած նյութերի դաստասման աշխատանքներ: Ապագա ատլասը մեծ նպաստ կարող է բերել նաև մեր ժողովրդի էթնիկական կառուցվածքի, ծագումնաբանական հարցերի լուծման գործին: Այլ խոսքով՝ պատմագիտությունը մեծապես կարող է շահել, եթե իր եզրակացությունների ժամանակ օգտագործի նաև բարբառների լեզվական նյութը՝ իբրև աղբյուրագիտական արժեք ներկայացնող նյութեր:

Մինչև 20-րդ դարասկիզբը հայ բարբառների տարածման սահմանը եվրոպական երկրներից, Թուրքիայից, Իրանից, Հնդկաստանից հասնում էր մինչև հեռավոր Ավստրալիա, Կանադա, ԱՄՆ և այլն: Մեծ եղեռնից հետո էլ ավելի ընդարձակվեց հայ բարբառների աշխարհագրությունը: Կասկածից վեր է, որ պատմական ճակատագրի բերումով մեր ժողովրդին պատուհասած անթիվ-անհամար տեղաշարժերը անդառնալի կորուստներ են պատճառել հայ ազգագրությանը, բանահյուսությանը, բարբառներին, մեր նյութական և հոգևոր մշակույթին: Բարբառների՝ որպես հայ ժողովրդի ոչ նյութական մշակույթի հիմնալի նմուշների կորուստը ցեղասպանության գործոններից մեկն է: Ցեղասպանության կործանարար ազդեցությունը ոչ միայն ֆիզիկական բնաջնջմամբ է հատկանշվում, այլև բարբառի, մայրենի խոսվածքի տարագրությամբ և աստիճանական կորուստով: Այսինքն՝ բնօրրանից կտրվելով, այլ լեզվական միջավայր տեղափոխվելով (կարևոր չէ՝ օտարալեզու, թե հայախոս), բարբառակիր հանրությունը կարող է փրկվել ֆիզիկապես, որոշ ժամանակ հաղորդակցվել դրանով զոնե ներընտանեկան միջավայրում, սակայն հաջորդ սերունդների լեզուն արդեն մայրենի խոսվածքը չի կարող լինել:

Հայ ժողովրդի մեծ ու փոքր տեղահանություններն ու միգրացիաներն արտացոլող՝ «Հայ գաղթականության պատմություն» աշխատության էջերում Հ. Աճառյանը նկարագրում է հոծ գաղթականության պարագայում ներընտանեկան և համայնքային հաղորդակցության մեջ մայրենի բարբառի միավորող դերն ու նշանակությունը: Հեռավոր գաղթօջախներում մայրենի բարբառների արձագանքները փնտրելը Հ. Աճառյանը համարում է ոչ այնքան արդյունավետ աշխատանք: Նա իր «Հայոց լեզվի պատմություն» հիմնարար աշխատության մեջ, քննելով Հայաստանից դուրս գտնվող հայ գաղթօջախների բարբառները, ցավով նշում է. «Մենք չգիտենք, թե մեր ո՞ր գաղութը Հայաստանի ո՞ր գավառից

դուրս եկավ. միայն գիտենք, որ այսօրվա մեր ոչ մի արտաքին բարբառ ոչ մի ներքին բարբառի հետ ամբողջապես նույնը չէ»: Տեղահանություններն ու բռնագաղթերը փաստորեն պատճառ են դարձել մեր ինքնության գլխավոր նշանի՝ լեզվի կորստին:

Ներկայացնենք իրողություններ, որ հատկանշական ենք համարում բնօրրանից կտրված հայ գաղթօջախներում մայրենի բարբառների վիճակի համար: Ընտրողաբար ներկայացնենք հայերենի մի քանի բարբառներ, որոնք, հայրենի բնօրրանից տարագրվելով, ցաքուցրիվ են եղել աշխարհով մեկ և բարբառախոս միջավայրից զրկվելով՝ աստիճանաբար մահացել են:

Ամենաընդարձակ տարածքում մշտապես գործառած Վանի բարբառը, որը հաղորդակցման միջոց էր Վանա լճի արևելյան ափին գտնվող Վան քաղաքում և շրջակա գյուղերում, Մոկսում, Ուզում, Ոստանում, Խոշաբի, Բերկրիի, Արճեշի գավառներում: Հերոսամարտից հետո Վանի ցավալի անկումը ողբալի հետևանքներ ունեցավ: Կոտորածներից փրկվածները թեև շատ էին, սակայն գաղթի քարավանները տարածվեցին ամենատարբեր ուղղություններով: Համեմատաբար հարուստ շատ վանեցիներ գաղթեցին ու վերաբնակություն հաստատեցին եվրոպական երկրներից հատկապես Ֆրանսիայում, Իտալիայում, ինչպես նաև Իրաքում, Լիբանանում: Արևելան Հայաստան գաղթածների մի մասը Արարատյան դաշտի գյուղերում, նաև Երևանում ապաստան գտան (հատկապես Կոնդ քաղամասում), գերդաստաններ կային Աշտարակում և շրջակայքի գյուղերում, մի սովորական գանգված էլ գաղթեց Ռուսաստանի տարբեր քաղաքներ, և այդ ճանապարհին որոշ գերդաստաններ մնացին բնակվելու Թիֆլիսում: Տարածական այդպիսի ընդարձակությունն անհետևանք չմնաց, և անգամ Մայր հայրենիքում, ասենք, Երևանում վերաբնակվածները բարբառը պահպանելու հիմքերից զրկվեցին Երևանի բարբառի և գրական արևելահայերենի ազդեցությամբ: Բարեբախտաբար, Գևորգյան ճեմարանում դասավանդելու ընթացքում բարբառի քննությունը 20-րդ դարի սկզբին իրականացրել է մեր մեծ լեզվաբան Հ.Աճառյանը՝ որպես բարբառախոս ունենալով Վանից նոր գաղթած տասնյակ ուսանողներ: Գրքում առկա են բանահյուսական պատառիկներ՝ գրառված կենդանի բարբառախոսներից, ինչպես նաև մոտ 19-րդ դարի երկրորդ կեսին Պոլսում Գ. Սրվանձտյանի «Մանանա», «Համով-հոտով» ժողովածուներից, Թիֆլիսում Շերենցի հրատարակած «Վանա սագ» ժողովածուից և այլն: Աշխատանքն իրականացնելուց 46 տարի անց մեծ գիտնականը հնարավորություն ունեցավ ծնունդով վանեցի մի դասախոսի օգնությամբ մշակելու և 1952 թ. հրատարակելու իր այդ խիստ կարևոր ուսումնասիրությունը: Հետագայում, երբ ԳԱ լեզվի ինստիտուտում իրականացվեցին հայ բարբառների հավաքչական աշխատանքներ, մենք՝ բարբառագետներս, հատուկ մշակված հարցախնդիրների օգնությամբ գրառեցինք բազմաթիվ խոսվածքային միավորներ Վանի բարբառն իրենց ծնողների մայրենի բարբառը համարող բարբառախոսներից, այսինքն՝ վանեցիների 2-րդ, 3-րդ սերնդի ներկայացուցիչներից: Հիմա արդեն անհնար է գտնել բարբառին տիրապետողի, պետք է բավարարվենք բանահյուսական պատառիկների, զվարճախոսությունների, պարերգերի շտեմարանից քաղած նյութերով: Ահա այդ ճոխ ու հնամենի բարբառն արդեն մեռած կարելի է համարել: Այլ խոսքով, ոչ նյութական մշակույթը՝ լեզուն, բարբառը մեռնում է բնօրրանը կորցնելու հետևանքով:

Բնօրրանից դուրս համեմատաբար լավ պահպանված բարբառներից է Սասունի բարբառը: Հայտնի իրողություն է, որ Արաքսից այս կողմ հանգրվանած արևմտահայերը նոր բնակատեղի ընտրելիս հիմնականում ապրել են գերդաստաններով, կորցրած բնօրրանին մոտիկ գյուղերի բնակիչներով, ինչն էլ նպաստել է մայրենի խոսվածքներն իբրև հաղորդակցման միջոց գործածելուն ու պահպանելուն: Մեծ եղեռնի տարիներին Անդրանիկի զորքի ուղեկցությամբ Արևելահայաստանում իրենց փրկությունը գտած մշեցիների մի սովորական գանգված բնակություն հաստատեց Շիրակի դաշտի գյուղերում: Ակնառու փաստ է, որ Մշո բարբառը դաշտի գյուղերից գաղթածները ձգտել են հարթ, սևահողային տարածքներում վերաբնակվել, մինչդեռ Լեռնային Սասունից գաղթածները գերադասեցին Արագածոտնի քարքարոտ սարահարթը՝ հնարավորինս կորցրած բնօրրանի մնամատիկ տարածքում ապրելու համար: Ավելացնենք նաև, որ բնակություն են հաստատել սահմանին որքան հնարավոր է մոտիկ՝ առաջին իսկ հնարավորության դեպքում Էրզրի վերադառնալու հույսով:

Նկատելի է, որ եթե միևնույն գյուղից կամ հարևան գյուղերից գաղթած ընտանիքներով վերաբնակեցված գյուղերում լավ են պահպանվել այս կամ այն բարբառի խոսվածքները, ապա տարբեր բարբառներով խոսող վերաբնակիչները թեպետ առանձնացել են տարբեր թաղերում, այնուամենայնիվ տասնամյակների ընթացքում առաջացել են միջբարբառային խոսվածքներ, ինչպես, օրինակ, Շիրակի մարզի այժմյան Ոսկեհասկ, նախկինում՝ Մոլլա-Մուսա գյուղում (Գյումրիից 5 կմ հեռավորության վրա): Գյուղը հիմնադրվել է 1923 թվականին՝ վերաբնակեցվելով բացառապես գաղթականներով՝ Կարսի մարզից և Մշո դաշտից: Հետաքրքիր է, որ գաղթական անվանում էին միայն մշեցիներին, իսկ Կարսի մարզի տարբեր գյուղերից գաղթածներին մշեցիները համարում էին եռլական՝ տեղացիներ: Բնականաբար, միմյանցից բավական տարբեր բարբառներով խոսող վերաբնակիչների համար օտարոտի խոսվածքը անջրպետ էր առաջացնում շփվելիս, անգամ ամուսնությունները խիստ հազվադեպ էին: Սակայն մի քանի տասնամյակի ընթացքում բարբառային էական տարբերությունները նկատելիորեն հարթեցվել էին, ինչին մենք առնչվեցինք անցյալ դարի 80-ական թթ. այդ գյուղում Մշո գավառի

Սկրագոմ, Քրդագոմ, Բոստաքյանդ, Հացիկ, Կոպ գյուղերի խոսվածքները գրառելիս: Ողջ մնացած ծերունիներն անհամեմատ լավ էին տիրապետում մայրենի խոսվածքներին, իսկ նրանց զավակներն արդեն իսկ հաղորդակցվում էին միջբարբառային խոսվածքով:

Անդրանիկի զորքի հետևից Սյունիք ու Ղարաբաղ հասած մշեցիների ու սասունցիների մի քանի տասնյակ ընտանիքներ բնակություն հաստատեցին ու մնացին այդ տարածքի բնակավայրերում: 2002թ. Երևանում ինձ հանդիպած մարտակերտցի բժիշկը պահել էր միայն հուշը այն մասին, թե իր հայրական ընտանիքը սերում է Մշո դաշտի Հացիկ գյուղից: Իսկ ինքը տիրապետում էր միայն ռուսերենին և Ղարաբաղի բարբառին, ինչպես Խոյի, Մարաղայի բարբառները կրողներն էին ժամանակին աստիճանաբար ձուլվել՝ 19-րդ դարում Ղարաբաղ գաղթելով: Եվ եթե նրանց լեզվատարրերը, ասենք, ինքնատիպ մի բարբառում՝ Հաղրուքի բարբառում առանձնանում են, մշեցիների և սասունցիների բարբառներն անհետ կորել են Ղարաբաղի կենդանի բարբառի միջավայրում:

Պատկերն այլ է Թալինի տարածաշրջանի շատ գյուղերում: Ներկայիս Արագածոտնի մարզի Թալինի և Աշտարակի շատ գյուղեր բնակեցվել են բացառապես Սասունի տարբեր գյուղերից գաղթածների գերդաստաններով, ասենք, Լեռնարոտում բնակություն են հաստատել գելիեզուզանցիներ կամ գլեցիներ և հիթինքցիներ, Դաշտաղեմում՝ Սասունի Դաշտաղեմ գյուղից և Խուքի տարբեր գյուղերից գաղթածներ, Կաթնաղբյուրում՝ փեթարցիներ, իշխնձորցիներ և այլն: Չնայած այդ տարածաշրջանում մտավորականությունը զգալի թիվ է կազմում, բայց ներընտանեկան հաղորդակցման լեզուն, ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, Սասունի բարբառն է: Վերջին տարիներին իբրև զբոսարջիկ Թուրքիա այցելած մի խումբ մտավորականներ իրենց պապենական բնօրրանում՝ Սասունի Փեթար գյուղում, գտել էին քրդախոս սասունցիների, որոնք մասամբ պահպանել էին մայրենի խոսվածքը:

Հայտնի է, որ Մեծ եղեռնից հետո Սիրիայում հանգրվան գտան կոտորածներից և Դեր-Չորի տառապանքներից մազապուրծ հազարավոր հայեր, այդ թվում՝ նաև սասունցիներ: Սասունի բարբառը բավական անխաթար պահպանած ընտանիքներ կային Սիրիայի Հալեպ քաղաքում, ուր եղանք 2001թվին՝ այնտեղից Քեսաբ մեկնելու և տեղի խոսվածքը գրառելու նպատակով: Մեզ բախտ վիճակվեց Առաջնորդարանի և Քառասուն մանկանց եկեղեցու հարևանությամբ գործող «Տարոն-Սասուն» հայրենակցական միության անդամներից տեղեկություններ քաղել սիրիահայերի մայրենի խոսվածքների մասին: Գրական արևմտահայերենի ազդեցությունը, բնականաբար, շատ մեծ էր, սակայն ընտանեկան հարկի տակ սասունցիները հաղորդակցվում էին մայրենի խոսվածքով: Ինչ վերաբերում է Քեսաբ քաղաքում տեղի բարբառը գրանցելու մեր առաքելությանը, ապա այն հաջողությամբ իրականացրինք՝ շնորհիվ բարբառին կատարելապես տիրապետող քեսաբցիների, որոնք դարերով սերնդեսերունդ փոխանցել էին իրենց մայրենի խոսվածքը:

Մեր բողոքի ձայնը բարձրացնելով 20-րդ դարասկզբին հայ ժողովրդի հանդեպ թուրքական իշխանությունների կողմից հետևողականորեն իրականացված ցեղասպանության և մշակութային եղեռնի դեմ՝ գտնում ենք, որ հայ ժողովրդի արդարացի պահանջատիրության հիմքում դրվող գիտական անժխտելի փաստերի մեջ կայուն տեղ պետք է վերապահել նաև հայ բարբառներին: Այսինքն, եթե կան վաղնջական ժամանակներից եկող Մշո բարբառը, Վանա, Ակնա, Տիգրանակերտի, Սասունի, Կարնո և բազում այլ բարբառներ, ուրեմն մերն են եղել և՛ Մուշը, և՛ Վանը, և՛ Կարինը և՛ Արևմտահայաստանի մնացած բոլոր տարածքները:

Լինելով Հայ դատի պահանջատեր՝ անբեկանելի ենք համարում այն դրույթը, որ ցեղասպանությունը նաև լեզվասպանություն է:

Jemma Barnasyan (Armenia)

ARMENIAN GENOCIDE AND ARMENIAN DIALECTS

The first genocide of the 20th century - the extermination of 1,5 million Armenians in Western Armenia and in other Armenian populated places of Ottoman Empire, that was organized and in a planned way implemented by Young Turks' leaders in 1915-1922, straightforwardly spread our nation all over the world forming the Armenian Diaspora.

There is no doubt that from the force of historical fate the innumerable displacements of our people have caused irretrievable losses to the Armenian ethnography, folklore, dialects, as well as to our material and spiritual culture.

Մեղա Գասապարյան (Հայաստան)

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐԸ ԼԵԶՎԱԾԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՄԵԿՆԱԿԵՏԻՑ

Հայոց ցեղասպանությունը ճանաչվել է աշխարհի մի քանի տասնյակ երկրների և միջազգային կազմակերպությունների կողմից, որոնք բազմաթիվ որոշումներով ու օրենքներով հաստատում և ընդունում են այն, նաև դատապարտում իրականացնողներին և իրավունքի ուժով հետապնդում ժխտողներին: Սակայն կան երկրներ, քաղաքական առաջնորդներ և, ցավոք, «գիտության մշակներ» որոնք ժխտում են այն՝ նախընտրելով աշխարհաքաղաքական, տնտեսական ու հաճախ նաև անձնական շահերը արդարության ու բարոյականության հաշվին՝ երբեմն նաև վախճնալով Թուրքիայի սպառնալիքներից, որը և գեներացնում ու առաջնորդում է այդ ժխտողականությունը¹:

Սույն ուսումնասիրությունը, որն ըստ էության հենվում է Հայոց ցեղասպանության մեկնաբանությունների լեզվաճանաչողագիտական քննությանը² նվիրված մեր նախորդ հրապարարակումների վրա և գալիս է լրացնելու այդ շարքը³, նպատակամիտված է հաշվի առնելու ճանաչողական լեզվաբանության մեջ լայն տարածում ունեցող ճանաչողական կաղապարի (այսպես կոչված frame-ի) տեսության ընձեռնած հնարավորությունները և բացահայտել այդ ժխտողականության արհեստածին բնույթը:

Քարոզվող ժխտողականությունը, ամեն ինչից զատ, շրջանցում է շատ կարևոր մի հանգամանք ևս՝ այն, որ հայի, բայց և լայն առումով՝ մարդկության հիշողության պահեստարաններում կուտակված տեղեկատվություն կա, որն ամենևին էլ թուրքերի օգտին «չի խոսում», քանի որ դարասկզբին Արևմտյան Հայաստանի տարածքում կատարված իրադարձությունները և ընդհանրապես թուրքական վարքագիծը որոշակի ճանաչողական կաղապարներ (մոդելներ) են ձևավորել մարդկության ընկալման դաշտում և այնպիսի խոր հետք թողել նրա աշխարհաճանաչողության (առաջին հերթին աշխարհասփյուռ հայ ազգի աշխարհաճանաչողության ու մշակութային աշխարհայացքի) վրա, որ այս խնդրի անտեսումը, մեղմ ասած, անընդունելի է: Եվ, իրոք, կատարվածի ճիշտ ընկալման ու մեկնաբանման գործընթացում կարևոր հենքային նշանակություն ունի **հայ և թուրք** հասկացությունների համապատասխան արժևորումը, և այս հարցում է, որ օգնության է հասնում ճանաչողական կաղապարի տեսությունը⁴: Ճանաչողական կաղապարը կարելի է սահմանել որպես գիտելիքի ձևավորման մեխանիզմ, մարդու գիտակցության մեջ առկա գիտելիքի ու կենսափորձի ամբողջականությունը ընդգրկող կառույց, որը իրադրային մշակութային հենք ունի և, ներկայացնելով տարբեր հասկացությունների էական, բնորոշ և հնարավոր հատկանիշների փունջը, կարող է նպաստել տարբեր տիպային իրադրությունների ու երևույթների ճանաչմանը:

Այս դիտանկյունից **հայ** և **թուրք** հասկացությունների քննության առաջին փուլում պարզաբանվում է, որ **հայ**-ը և **թուրք**-ը ոճականորեն չեզոք միավորներ են, որոնք նախ և առաջ մատնացույց են

¹ Տե՛ս օրինակ, **R.Melson**, *A Theoretical Inquiry into the Armenian Massacres of 1894-1896* // Comparative Studies in Society and History, XXIV, 3 (July 1892), p. 481-509; **S.Shaw**, *History of the Ottoman Empire and Modern Turkey*, vol. 1, Cambridge University Press, 1976; **G. Lewy**, *The Armenian Massacres in Ottoman Turkey: A Disputed Genocide*, Salt Lake City: University of Utah Press, 2004; **R.Suny**, *Looking Toward Ararat: Armenia in Modern History*, Bloomington and Indianapolis, Indiana University Press, 1993; *A Question of Genocide. Armenians and Turks at the End of the Ottomann Empire* / ed. by R.Suny, F.Gocek, N.Naimark, Oxford University Press, 2011 և այլն:

² Ճանաչողագիտության և մասնավորապես ճանաչողական լեզվաբանության խնդիրներին նվիրված աշխատանքներում մարդակենտրոն մոտեցումն ու ուսումնասիրությունների ճանաչողական ուղղվածությունը թույլ են տալիս բացահայտել լեզվական երևույթների կապը մարդու՝ արտաքին աշխարհից ստացված և կյանքի ընթացքում անհատական փորձի միջոցով կուտակված գիտելիքի հետ, ինչպես նաև վեր հանել ճանաչողական գործընթացների հիմքում ընկած մեխանիզմները: Արդյունքում խոսքը դիտվում է որպես հասարակական վարքը արտացոլող գործընթաց, որը հենվելով մարդու ուղեղում ամրագրված ճանաչողական կառույցների վրա, արտածում է գիտակցության մեջ ձևակերպված «ներքին միտքը»: Տե՛ս **Е.С.Кубрякова**, *Парадигмы научного знания в лингвистике и ее современный статус* // Изв. РАН. Сер. Лит-ры и яз., т.53, 122, 1994, Ը.Հ.Պարոնյան, *Լեզվաճանաչողություն և դիսկուրս*, Եր., ԵՊՀ հրատ., 2011 և այլն:

³ **S.Gasparyan, G.Harutyunyan, L.Gasparyan**, *Interpretations of the Armenian Genocide: A Linguocognitive Study* // “Language, Literature & Art in Cross-Cultural Contexts” – AASE 3 International Conference: Programme and Abstracts. Yerevan, 2011; **Ս.Գաապարյան**, *Գլուխներ Լյուիի «Ճշմարտությունը» Հայոց ցեղասպանության մասին* // Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն, 139.2, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 3-17; **Ս.Գաապարյան**, *Հայոց ցեղասպանության պատճառները ըստ Ռ.Սյունիի* // Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն, 140.1, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 57-73 և այլն:

⁴ Ճանաչողական կաղապարները ձևավորում են մարդու աշխարհաճանաչողությունը և ուղղորդում նրա վարքագիծը: Այս մասին տե՛ս **Е.С.Кубрякова, В.З.Демьянков, Ю.Г.Панкрац, Л.Г. Лузина** *Краткий словарь когнитивных терминов*. М., МГУ, 1997; **М. Минский** *Фреймы для представления знаний*. М., Энергия, 1979; **Ч. Филмор** *Фреймы и семантика понимания* // Новое в зарубежной лингвистике. Когнитивные аспекты языка, вып. XXIII, М., Прогресс, 1988:

անում ազգային պատկանելություն⁵: Այսուհանդերձ, երկու ազգությունների անվանումները, ճակատագրի բերումով, փոխկապված են իրար: Հայ լեզվագիտակցության մեջ այս գույգի առաջին անդամը դրական է, իսկ երկրորդն իր մեջ խտացնում է ամենայն բացասականը: Այս հակադրությունն առկա է նաև թուրքական իրականության մեջ՝ անդամների հակառակ տեղաբաշխմամբ: Միայն թե առաջին դեպքում սա արյունալի «գենետիկ փորձառության» արդյունք է, որը համապատասխան հոգեվիճակ է ձևավորել հայի մեջ ու դարձել նրա ազգային ինքնության անբաժանելի մասնիկը, իսկ երկրորդում՝ ապակողմնորոշող քարոզչության, որը պայմանավորված է նախնիների իրականացրած ոճրագործության պատասխանատվությունը ստանձնելու հոգեբանական (և, իհարկե, ոչ միայն հոգեբանական) դժվարությամբ: Թերևս կարելի է ասել, որ *հայ*-ը և *թուրք*-ը տակ առանձին հասկացություններ չեն, այլ դրանց հակադրությունը բարդ հասկացության ոլորտ է ձևավորում ճանաչողության մակարդակում, ընդ որում եթե *թուրք* հասկացությամբ ներկայացվում է *թուրք* – *թշնամի*, *թուրք* – *բարբարոս*, *թուրք* – *մարդասպան/ազգասպան*, *թուրք* – *ուխտադրուժ* հասկացական կադապարների միջոցով, որոնք կարող են ընդհանրացվել *թուրք* – *սպառնալիք* կադապարով, ապա *հայ* հասկացությամբ հայ լեզվագիտակցության մեջ, և ընդհանրապես, ամբողջականում է *հայ* – *ստեղծագործ*, *հայ* – *քրիստոնեություն/քրիստոնյա*, *հայ* – *զոհ*, *հայ* – *վիշտ* կադապարներով, ընդ որում ժամանակ պահանջվեց, որպեսզի հայը որոշակիորեն հաղթահարի վերջին երկու բարդությունները: Հայի ազգային գիտակցության մեջ խորն են նաև *հայ* հասկացության ընկալման *հայ* – *զոյատևում*, *հայ* – *վերապրում* կադապարները: Եթե հենվենք հայ մարդու կերպարի՝ ըստ բյուզանդական աղբյուրների ներկայացվող բնութագրության վրա (հայտնի է, որ Բյուզանդիայում *հայ* և *քաջ* հասկացությունները համարվել են հոմանիշ)⁶, ապա հասկացական կադապարների նշված շարքը կրթացվի նաև *հայ* – *արիություն* կադապարով, որի առկայությունը հիմնավորվում է նաև ֆիդայական շարժումով և արցախյան գոյամարտով:

Թուրք բառի իմաստային կառուցվածքում առանձնացվում են “one who is cruel, hardhearted, or tyrannical”⁷ (մեկը, որ դաժան է, քարսիրտ, բռնապետ) կամ “applied to anyone having qualities attributed to the Turks: a cruel, savage, rigorous, or tyrannical man”⁸ (կիրառվում է ցանկացած մեկի վերաբերյալ, որն ունի *թուրքերին բնորոշ* հատկություններ (ընդգծումը՝ Ս.Գ.)՝ դաժանություն, վայրագություն, կարծրություն, բռնապետականություն) փոխաբերական իմաստները:

Հետաքրքրական է, որ քննական տարբեր ուսումնասիրություններում և գեղարվեստական անդրադարձներում մույնպես այս երկու միավորները մշտապես հակադրվում են իրար:

Դեռևս 1853թ. ամերիկյան “Daily Tribune” թերթում տպագրած հոդվածներից մեկում Կ. Մարքսը արտահայտում է այն միտքը, որ թուրքերի ներկայությունը Եվրոպայում լրջորեն խոչընդոտում է տարածաշրջանի զարգացումը (the presence of the Turks in Europe is a real obstacle to the development ...), իսկ կրոնական ֆանատիզմով համակված թուրքերի ամբոխն ընդունակ է տապալել ցանկացած հնարավոր առաջընթաց (the fanaticism of Islam, supported by the Turkish mob ... to overturn any progress...)⁹:

Թուրքի կերպարն ամբողջացնող հիշատակություն ենք գտնում նաև Վ. Հյուգոյի հայտնի “L’Enfant” բանաստեղծության “Les Turcs ont passe par la. Tout est ruine et deuil.” (Այստեղից թուրքերն են անցել: Ամբողջը ավեր է ու սուգ:) տողերում, որտեղ ոճական առումով չեզոք «թուրքերն են անցել» պատմողական ասության գուցադրումը բացասական երանգներով գերհագեցած «ամբողջը ավեր է ու սուգ» պատկերի հետ ընթերցողի երևակայության մեջ անուղղակիորեն, բայց և բավականին հստակ ուրվագծում է թուրքի կերպարը՝ այն աստիճան վայրագ, որ հույների ազատագրական պայքարը խեղդամահ անելու իր ճանապարհին կարող էր դաժանաբար ոտնակոխ անել մույնիսկ մանկական ամենեղությունը¹⁰:

⁵ Անգլերենի բացատրական հեղինակավոր բառարաններից շատերում նշված հասկացությունները մեկնաբանվում են հետևյալ կերպ. *հայ* – գլխավորապես արևմտյան Ասիայում գտնվող հինավուրց Հայաստան երկրում բնակվող ժողովրդի ներկայացուցիչ (սակայն նաև Մերձավոր Արևելքում սփռված և Նոր Աշխարհ արտագաղթած), *թուրք* – Աղբյուրներից մինչև Օխոտսկ ընկած տարածքում ապրող, բյուրքական լեզուներ խոսող ասիական բազմաթիվ ժողովուրդներից որևէ մեկի ներկայացուցիչ, ցեղային առումով խառնածին, ծագումը կապում են Ալթայյան լեռների և արևմտյան Սիբիրի հետ: Տե՛ս, օրինակ, Webster’s Third New International Dictionary. Massachusetts: Merriam-Webster Inc. Publishers, 1981, p.119, p.2465:

⁶ Տե՛ս Բյուզանդական աղբյուրներ, հ. Ե, Թեոփանեսի շարունակող, էջ 313, ծմբ. 56 (ըստ՝ **Ա.Այվազյան, Հայկական ինքնության հիմնաքարերը. բանակ, լեզու, պետություն**, Եր., 2007, էջ 28)

⁷ Webster’s Third New International Dictionary. Massachusetts: Merriam-Webster Inc. Publishers, 1981, p.119, p.2465:

⁸ The Shorter Oxford English Dictionary on Historical Principles: Vol.2, Oxford: Clarendon Press, 1978, p. 2382.

⁹ Տե՛ս <http://ziontruth.blogspot.com/2007/11/was-karl-marx-zionist-neocon-bat-yeor.html> Այս մասին տես նաև **Ս.Գապայան, Գ.Հարությունյան, Լ.Գապայան, Հայոց ցեղասպանության արժարժումների լեզվաճանաչողական յուրահատկությունները** // Լրաբեր հասարակական գիտությունների, 1(633), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, էջ 184-199;

¹⁰ **V.Hugo, Les Orientales.** / Ed. by Charles Gosselin, Paris, 1829. Տե՛ս նաև **A.Ekrem, L’image du Turc dans les Orientales de Victor Hugo.** // Francofoni 2003, N15, pp.91-100.

Կարևոր է նշել, որ *հայ* և *թուրք* հասկացությունները նման արտահայտություն են գտել ոչ միայն հայազգի, այլև բազմաթիվ այլազգի ականատեսների և հեղինակների վկայություններում ու ստեղծագործություններում¹¹, ինչպես նաև մեծաքանակ արխիվային և ժամանակակից փաստաթղթերում¹²:

Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն 1915թ. հուլիսի 16-ին իր երկրի պետքարտուղարին գաղտնաբար հղած հեռագրում հայտնում է.

*“Deportation of and excesses against peaceful Armenians are increasing and from harrowing reports of eye witnesses it appears that a campaign of race extermination is in progress under a pretext of reprisal against rebellion”*¹³.

Մորգենթաունի խոսքն այն մասին է, որ հայ ժողովուրդը **խաղաղ բնակչություն է՝** առանց որևէ ապակառուցողական նկրտումների (*peaceful Armenians*), այնինչ նրա նկատմամբ ծայրահեղ միջոցներ են կիրառվում, ընդ որում դրանց ծավալները գնալով ավելի ու ավելի են մեծանում (*excesses ... are increasing*): Ինչպես ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյան ինքն է բնորոշում, ականատեսների վկայությունները սրտաճնիկ, հոգին պատառոտելու աստիճան վշտալի են (*harrowing*), ու պարզ է, որ ցեղի՝ մի ողջ մարդկային տեսակի բնաջնջման արշավ է իրականացվում և թուրք կառավարության կողմից կեղծ ներկայացվում որպես ապստամբության ճնշում (*under a pretext of reprisal against rebellion*):

Թուրքիայում ԱՄՆ-ի հյուպատոս Լեալի Դեյվիսը 1915թ. Խարբերդից գրելով Կոստանդնուպոլսում գտնվող դեսպան Մորգենթաունին՝ հայերի արտաքսումը տարածաշրջանից որակում է որպես համընդհանուր սպանդ՝ նշելով, որ հատուկ ծրագրով նախատեսված է բնաջինջ անել հայերին որպես ցեղ, և այդ նպատակը այնպիսի սառնասրտությամբ ու **բարբարոսությամբ** էր իրագործվում, որ իրենք սկզբում գլխի էլ չէին ընկնում, թե ինչ էր կատարվում:

*“... it has been no secret that the plan was to destroy the Armenian race as a race, but the methods used have been more cold-blooded and barbarous, if not more effective, than I had at first supposed...”*¹⁴

“... it seems to be fully established now that practically all who have been sent away from here have been deliberately shot or otherwise killed within one or two days after their departure. This work has not all been done by bands of kurds but has for the most part been that of the gendarmes who accompanied the people from here or of companies of armed tchetehs (convicts) who have been released from prison for the purpose of murdering the Armenian exiles...”

*... I do not believe there has ever been a massacre in the history of the world so general and thorough as that which is now being perpetrated in this region or that a more fiendish, diabolical scheme has ever been conceived by the mind of an...”*¹⁵

ԱՄՆ-ի բարձրաստիճան դիվանագետը հստակ նշում է, որ կատարվածը պարզ արտահանում/արտաքսում (*expulsion*) չէ, այլ հայերի համատարած կոտորած (*wholesale massacre*), նրանց որպես ազգ վերացնելու (*to destroy the Armenian race as a race*) ծրագրի իրականացում, որի մեթոդները նա որակում է որպես շատ ավելի սառնարյուն ու բարբարոս (*more cold-blooded and barbarous*),

¹¹ Տե՛ս, օրինակ, **Գ.Գուարչ**, *Հայկական տոհմաժառը*, քարգմ. իսպաներենից Մ.Սուքիասյան, Եր., ՀԳՄ հրատ., 2005, **Գ.Գուարչ**, *Հայոց կտակ*, քարգմ. իսպաներենից Մ.Սուքիասյան, Եր., ԵՊՀ հրատ., 2011, **Ա.Աբալան**, *Արտոյտների ազարակը*, քարգմ. իտալերենից Ս.Հարությունյան, Եր., «Սահակ Պարթև» հրատ., 2007 և այլն:

¹² Փաստաթղթային արժեք ունեցող անգլերեն նյութը հղվածում բերվում է ըստ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի համացանցային կայքի՝ <http://genocide-museum.am/eng/>

¹³ «Խաղաղ հայերի տեղահանություններն ու նրանց դեմ իրականացվող ծայրահեղություններն ավելի մեծ չափերի են հասնում, և ականատեսների սրտաճնիկ գեկույցներից պարզ է դառնում, որ ազգի ոչնչացման արշավ է իրականացվում ապստամբության հաշվեհարդարի մեկնության ներքո»:

¹⁴ «...Այլևս գաղտնիք չէ՝ հատուկ ծրագրով նախատեսված է բնաջինջ անել հայերին որպես ցեղ, և այս նպատակն այնպիսի սառնասրտությամբ ու բարբարոսությամբ, ավելին՝ արդյունավետությամբ էր իրագործվում, որ սկզբում գլխի էլ չէինք ընկնում, թե ինչ էր կատարվում...»:

¹⁵ «...Լիովին հաստատվել է, որ մինչև այժմ այստեղից բռնագաղթածները քաղաքից դուրս գալուց ընդամենը մեկ-երկու օր անց սպանվել են կամ ոչնչացվել այլ ձևերով, ընդ որում դա արել են ոչ միայն ճանապարհին նրանց սպասող բուրդ հրոսակախմբերը, այլ հիմնականում քստրակականներին ուղեկցող ոստիկաններն ու չեթեները (կալանավորները), որոնց բանտերից ազատ են արձակել տարագրվող հայերին կոտորելու համար... ...Ես չեմ կարծում, որ համաշխարհային պատմության մեջ երբևէ իրագործվել է ավելի համատարած ու համընդհանուր նախաճիք, քան այն, ինչ այժմ տեղի է ունենում մեր տարածաշրջանում և ոչ էլ հավատում եմ, որ մարդկային ուղեղն ի գործ է հղանալ ավելի ահավոր ու սատանայական ծրագիր...»:

քան ինքը կարող էր երևակայել: **Deliberately** (միտումնավոր, կանխամտածված, նպատակադրված)¹⁶ միավորի գործածությամբ ԱՄՆ-ի հյուպատոսը էլ ավելի է ընդգծում իրականացվող ցեղասպանական ծրագրի հրեշավորությունը, որը ոչ այլ ինչ է, քան մարդկային չարամիտ ուղեղի արգասիք (...*I do not believe there has ever been a massacre in the history of the world so general and thorough ... or that a more fiendish, diabolical scheme has ever been conceived by the mind of man...*):

Հոդվածում ընդգրկված սակավաթիվ օրինակներն անգամ բավարար են թուրքական դատապարտելի վարքագծի արժեքները միանգամայն տեսանելի դարձնելու համար: Դրանք գալիս են հաստատելու վերն առանձնացված ճանաչողական կաղապարների առկայությունը և կեղծ ու շինծու հիմնավորվածությամբ ժխտողականություն քարոզելու ակնհայտ արհեստականությունն ու անհեռա-նկարայնությունը:

Seda Gasparyan (Armenia)

THE LINGUOCOGNITIVE PERSPECTIVE OF INTERPRETATIONS OF THE ARMENIAN GENOCIDE

The subject of the Armenian Genocide, the most dreadful event in human history, has been the focus of much political and scientific thought. The present paper carried out along linguocognitive lines aims at studying the role of cognitive models in declining the policy of rejecting the reality of the Armenian Genocide generated by the Turkish Government and propagated by local and foreign “scholars”, very often for various lucrative motives. The analysis of the concepts *Armenian* and *Turk* based on the theory of frame reveals the artificially invented ground of historicity and scholarliness on the part of the rejectionists to deny the undeniable.

Анушаван Закарян (Армения)

РУССКИЕ ЛИТЕРАТУРНЫЕ ДЕЯТЕЛИ ОБ АРМЯНСКОМ ВОПРОСЕ И О ГЕНОЦИДЕ АРМЯН (10-Е ГОДЫ XX ВЕКА)

Наша цель – представить менее известных широкой общественности русских литературных деятелей, которые, побывав в Западной Армении и в Закавказье, довольно глубоко, всесторонне и образно отразили бедственное положение армянского народа, выразили свою гражданскую позицию относительно Армянского вопроса и Геноцида.

В начале 1913 г. известный в свое время публицист Антуан Березовский - Ольгинский (псевдоним – Т. Ольгенин) побывал в шести вилайетах Западной Армении (Эрзрум, Ван, Битлис, Тигранакерт, Себастья, Харберд), где обстоятельно изучил социально-экономическое и политическое положение западных армян. Вскоре турецкие власти, всерьез обеспокоенные развернутой Ольгениным деятельностью, обвинили его в антитурецкой пропаганде и подняли вопрос о его высылке из страны. Возвратившись из Западной Армении, Ольгенин в Тифлисе, а затем в Баку прочитал лекции на тему "Исчезающая Армения". Он отмечал, что Армения играет чрезвычайно важную роль для России, по-сему "инициативу решения Армянского вопроса должна взять на себя Россия. Этого требуют как ее государственные интересы, так и моральный долг.

Россия должна исправить ошибки своего прошлого: если и сегодня Армянский вопрос не будет решен, Российскому государству в будущем будет грозить большая опасность... Промедление в этом вопросе будет смертельным ударом как для России, так и для армян"¹. Лекции нашли широкий отклик в обществе и были подробно освещены в печати. Поездка Т. Ольгенина в Западную Армению, его статьи и публичные выступления накануне Первой мировой войны вновь пробудили интерес русской общественности к Армении и Армянскому вопросу.

"Поэт-генерал" Александр Парфенович Кулебякин (1871 - ?) был одним из видных военачальников русской армии, участвовавших в боевых действиях на Кавказском фронте - в Западной Армении. 26 февраля 1919 года в Тифлисе Комиссия по исследованию насильственных действий над армянами за время всемирной войны допрашивала А. Кулебякина в качестве свидетеля, и он показал: 20 октября 1914 года я с русскими войсками перешел русско-турецкую границу и находился на театре

¹⁶ St´u Longman Dictionary of English Language and Culture, Addison Wesley Longman, 1998, p. 340, նրա նկ *deliberate* միավորը մեկնաբանվում է որպես (especially of smth. bad) done on purpose or as a result of careful planning, intentional:

¹ «Բաքվի ձայն», 15. VI. 1913:

военных действий вплоть по ноябрь месяц 1917 года, последовательно занимал должности от командира полка до начальника дивизии включительно, причем 5 месяцев, в 1917-м году, временно командовал четвертым Кавказским корпусом.

В Турецкой Армении лично посетил Ванский вилайет, был в Муше, Сурб-Карапете, Копе, Ахлате, Ардануше, Баязете, Каракилисе - Алашкертской, Эрзеруме и Пассинской долине.

Во многих местах лично видел следы разгрома и избиения армян. Насколько помню, зверства эти чинились, главным образом, курдами, а со стороны турок, конечно, было попустительство. Видел много трупов женщин и детей, избитых, как мне говорили жители-армяне, курдами. Так в селении Солук, за мостом через Евфрат, около города Муша, есть вместительная постройка, в которой при мне находилось до сотни человеческих костяков, по всем признакам останков женщин и детей. Как мне рассказывали казаки-лабинцы, сюда, при взятии нами Муша, укрылось много армян с детьми, и турецкие войска их здесь перебили. Снимки с этой картины воспроизведены были корпусным фотографом Четвертого корпуса Пароходовым. Кроме того много трупов армян при мне находилось, осенью 1915 года, в ущелье реки Бен-димаху, к югу от Бегри-Кала. Картину эту я описал в стихотворении "Бен-димаху", помещенном в сборнике "Отзвуки Вана". Как мне рассказывали не только местные жители-армяне, но и русские офицеры, сюда бежали из Вана армяне после июльского отступления русских войск в 1915 году и, будучи настигнуты здесь курдами, все были перебиты. Часть бежавших по этому пути армян перебита была курдами у селения Гюлли, между Ваном и Панзом, на берегу Ванского озера. Я посетил в 1915 и в 1916 годах Варацкий монастырь, все армянские церкви города Вана, Ахтамарский монастырь и Сурб-Карапет. Все эти церкви начисто разрушены и ограблены, особенно дикую картину самого варварского разгрома я нашел в монастыре Сурб-Карапете и Варацком монастыре. Здесь все было дочиста ограблено и сильно разрушено. Свои впечатления я изложил в стихотворениях "Старый Ван", "Оборона Вана", "Гибель Вана", "Аванц", "Ахтамар" и др., помещенных в сборнике "Отзвуки Вана". Вообще все армянские церкви, которые я посетил, носили следы разгрома и разрушения. Города Муш, Ван, Каракилиса, Ахлат, Коп, Мелязгерт я застал в состоянии полного разрушения. В Мелязгерте остались, в буквальном смысле, одни камни. Лично я, будучи занят боевыми задачами, никаких расследований о зверствах над армянами не производил и очевидцем зверств не был. У меня имеется четыре снимка с разрушений: два снимка монастыря Сурб-Карапет, и два снимка Ахтамарского монастыря, которые я храню для своего литературного труда об Армении. Снимки эти сняты фотографом Четвертого корпуса Пароходовым, у которого имеется много других снимков"².

После войны, живя в Тифлисе, А. Кулебякин в своих поэтических произведениях не раз обращался и к святыням Армении и армянского народа – Масису и Араксу, написал поэму "Крест Масиса. Две легенды" (1917) и стихотворение "Аракс" (1919). Поэт обращается к историческому прошлому армянского народа, свидетелем трагических страниц которого был Аракс:

И кажется порой, что камни вопиют
А волны кровь переливают.

В 1915 г. на Кавказском фронте - в Западной Армении - находилась также *Ариадна Тыркова* (псевдоним - *А. Вергежский*), литературный и общественный деятель, корреспондент центральных русских газет. Вернувшись с фронта, она, 5 ноября 1915 г., по инициативе Общественного клуба в зале Тифлисской музыкальной школы прочитала доклад на тему "Война и женщина". В 1916 г. А. Тыркова издала книгу "Старая Турция и младотурки. Год в Константинополе", где представлена турецкая действительность – политическая ситуация в стране и различные стороны турецкой жизни. Говоря о политике младотурок, она писала: "Беспримерное истребление армянского народа показало, что несмотря на заимствованные из Европы программы и лозунги, младотурки, в сущности, ничем не отличаются от старых турок"³. В отдельной главе она обрисовала портреты младотурок, в том числе "палача армянского народа" – Талаат-бея. Тыркова считала, что история истребления армян - "написанный кровавыми буквами приговор младотуркам". В книге армянам посвящена отдельная глава, в которой отражены любовь и уважение автора к армянскому народу. Особенно тепло говорится о деятельности партии Дашнакцутюн в Турции. О погромах автор пишет: "Описание армянских погромов напоминает страшные летописи древних истреблений, когда победители и убивали, и мучили, и насиловали, и грабили побежденных с той разнузданностью, на которую из всех зверей способен только человек. В 1896 г. в самом Константинополе было убито в течение трех дней около

² Центральный государственный исторический архив Республики Армения, ф. 200, оп. 1, д. 199, л. 151 и об. Отпуск. Машинопись. См. также: там же, ф. 221, оп. 1, д. 8, л. 4–5 и об. Подлинник. Рукопись.

³ А. Тыркова. Старая Турция и младотурки. Год в Константинополе. Пг., 1916, с. 7.

10.000 армян, не говоря о десятках тысяч убитых, раненых и разоренных в больших и малых провинциальных городах. После свержения Абдул-Гамида, тотчас после объявления конституции, произошел погром в Адане"⁴.

Писатель и драматург *Сергей Рафалович* в 1918–1920 гг. принимал активное участие в литературно-общественной жизни Закавказья (Баку, Тифлис). Он был очевидцем сентябрьских событий в Баку в 1918 г., когда было истреблено около 30 тыс. армян. В статье "Правда о бакинских событиях" Рафалович писал: "Свидетельство мое должно быть воспринято, как показание совершенно объективного очевидца побуждаемого исключительно возмущенным чувством справедливости и правды дать настоящее и беспристрастное освещение фактам, искаженным с недопустимым ... легкомыслием"⁵.

3 и 8 марта 1919 года в Тифлисе Комиссия по исследованию насильственных действий над армянами за время всемирной войны допрашивала С. Рафаловича в качестве свидетеля погрома армянского населения Баку.

Статья и протокол допроса С. Рафаловича еще раз подтверждают тот факт, что после падения Бакинской коммуны, захвата Баку турецкими войсками и создания мусаватистского правительства были осуществлены продуманный погром и резня армянского населения.

В статье "Свобода мертвым (Pro Armenia)" Рафалович выступил с разоблачением политики великих держав в отношении армянского народа, призывал их от слов перейти к делам и спасти нацию, находящуюся на краю гибели: "Европа несет тяжелый грех перед многими малыми народами, среди которых одно из важнейших мест по страданиям, выпавшим на его долю, занимает народ армянский. И если до сих пор сложные политические отношения и комбинации, пресловутое европейское равновесие мешали теперешним победителям от слов переходить к делам и заставляли их ограничиваться благими пожеланиями и увещаниями, то, наконец, наступило время искупить свои прегрешения и воспользоваться новой политической обстановкой прежде всего для того, чтобы исправить вековые несправедливости и спасти гибнущих"⁶.

В составе полка легендарного героя национально-освободительного движения Андраника участвовал в боевых операциях и *Петр Сибирцев* – русский литературный деятель. Летом 1918 г., после прекращения военных действий, Сибирцев возвращается в Тифлис. Здесь он выступал со статьями в защиту армянского народа, его справедливого дела и прав. Особенно интересна статья "Pro Armenia", где он, в частности, пишет: "По всем дорогам, шоссе, проселочным и горным, на скалах и у берегов рек я всюду встречал караваны беженцев и всюду наталкивался на одни и те же картины голода, холода и загрязнений. Так, на скалах и дорогах гибла и гибнет армянская нация, армянский народ, гибнут люди, неповинные в политической вражде, и их надо спасти. Это долг всего человечества"⁷.

П. Сибирцев записывал армянские народные сказки и притчи, писал стихи, посвященные армянскому народу, Армении. В одном из них - "Армения" - поэт с искренним состраданием и человеколюбием перечисляет испытания, выпавшие на долю армян, в его строках слышится голос протеста и вера в светлое будущее:

Я видел скорбный лик Армении убогой,
Я слышал робкий плач блуждающих детей...
Я шел по грудам тел случайною дорогой
И видел: кровь и дым, и зарево огней
Я шел сквозь море слез, сквозь камни павших зданий.
Я видел на полях обломки мирных сох...
О, скорбный край! Край смерти и скитаний,
Как жуток и велик твой безысходный вздох!...
...Я шел сквозь лужи слез, сквозь пепел древних зданий,
В душе моей звучал плач многих матерей...
Печальный край! Край вечных испытаний,
Не счесть тебе гробниц загубленных детей.
Не счесть тебе всех жертв столетних озлоблений,
Ты вправе крикнуть в мире: Довольно смутных дней!
Ты гордо пережил безумие гонений

⁴ Там же, с. 62 - 63.

⁵ "Кавказское слово", 3. XII. 1918.

⁶ "Закавказское слово", 8. II. 1919.

⁷ "Кавказское слово", 4. VII. 1918.

И хохот дерзостный издавших палачей!
 Сквозь дым твоих полей, сквозь кровь твоих селений
 Загрезился конец пожарам жутких битв...
 Армянский край! Край скорби и терпений,
 Твой близок час – час жизни и молитв!⁸

Обращаясь к судьбам армянского народа, выступая в его защиту, русские литературные деятели содействовали распространению правды об Армении: раскрывали перед общественностью России суть Армянского вопроса, подлинные причины Геноцида, гневом откликались на погромы армян, разоблачали подлые цели, преследуемые великими державами в Армянском вопросе, призывая их помочь народу, оказавшемуся на краю гибели.

Anushavan Zakaryan (Armenia)

RUSSIAN LITERARY FIGURES ABOUT THE ARMENIAN QUESTION AND THE ARMENIAN GENOCIDE

(The 10s of the 20th century)

There are several Russian literary figures that have also given considerable place to the Armenian Question and the Armenian Genocide in their literary-social activities, but little is known about them. T. Olgenin, V. Nemirovich-Danchenko, A. Kulebyakin, A. Tirkova, Ye. Alexeeva, S. Rafalovich, P. Sibirtsev are of such authors. Returning to the fate of the Armenians, speaking in favour of its defence, Russian literary figures promoted the spreading of the truth about Armenia: they revealed the essence of the Armenian Question before the Russian society, the real reasons of the Armenian Genocide, responded to those massacres wrathfully, exposed mean aims of the Great Powers concerning the Armenian Question, addressing the latter to help people having appeared at the edge of destruction.

Աշոտ Հայրունի (Հայաստան)

ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՎ ՄԵԾ ԵՂԵՆԻ

Կայսերական Գերմանիան Մեծ եղեռնի ողջ ժամանակամիջոցում օսմանյան կառավարության ցեղասպան քաղաքականության հանդեպ իր որդեգրած հանդուրժողականությունը փորձում էր «հիմնավորել» գերմանա-թուրքական դաշինքի խզման անթույլատրելիությամբ, ինչը, իբրև թե, Գերմանիայի կողմից ի նպաստ հայերի կոշտ միջամտության դեպքում անխուսափելի կլիներ: Երբ Յոհաննես Լեփսիուսը 1915 թ. սեպտեմբերին Կ. Պոլսից Բեռլին վերադառնալուց հետո արտգործնախարարությունից պահանջեց անհապաղ ճնշում գործադրել Թուրքիայի վրա՝ արևմտահայության բնաջնջումը կասեցնելու համար, պետքարտուղարի տեղակալ Յիմերմանից ստացավ հետևյալ պատասխանը. «Ի՞նչ կարող ենք մենք անել: Թուրքիայի հետ մեր միությունը պահպանվում է Թալեաթի, Էնվերի և Խալիլի վեց ձեռքերի մեջ: Եթե այդ երեքը խելքի չեն գալիս, մեզ մնում է միայն հրաժարվել դաշինքից: Իսկ այդ մենք չենք կարող անել»:

Թուրքական կառավարության ցեղասպան քաղաքականության հանդեպ Գերմանիայի հանդուրժողականությունն այդ նույն պատճառաբանությամբ էր փորձում արդարացնել նաև պետքարտուղար ֆոն Յագովը 1916 թ. սեպտեմբերի 29-ին ռալիստագի պատգամավորների առջև ունեցած իր ելույթում: «Ես կարող եմ միայն ասել, – հայտարարում էր նա, – որ մենք արել ենք ամեն բան, ինչ կարող էինք: Ամենաձայրահեղը, որ մեզ դեռ մնում էր, Թուրքիայի հետ դաշինքի խզումը կլիներ... Թուրքերը մեզ կարևոր ծառայություններ են մատուցում՝ պաշտպանելով մեր հարավարևելյան դիրքային թևը: Դուք ինձ հետ կհամաձայնեք, որ մենք չենք կարող այնքան հեռու գնալ, որ թուրքերի հետ, որոնց մենք Հայկական հարցին վերաբերող մեր տևական նախագրուշացումներով խիստ անտրամադիր ենք դարձրել, նաև մեր դաշինքը խզենք»²:

⁸ "Наше время", 16. IV. 1919.

¹ Lepsius J., *Der Todesgang des Armenischen Volkes*, Potsdam, 1919. S. XXII.

² St'u Lanne P., *Armenien: Der erste Völkermord des 20. Jahrhunderts*, München, 1977. S. 146: Հմմտ. *Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke*, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919. S. 294:

Նախ անդրադառնանք այն հարցին, թե Յագովն ինչ նկատի ուներ՝ ասելով, թե գերմանական կառավարությունն արել էր այն ամենը, ինչ կարող էր, և արդյո՞ք դա համապատասխանում էր իրականությանը:

Հայ ժողովրդի զանգվածային տեղահանության վերաբերյալ առաջին տեղեկությունը, որը Թուրքիայում Գերմանիայի դեսպան Վանգենհայմի կողմից Բեռլին ուղարկվեց 1915 թ. մայիսի 31-ին, ուներ հետևյալ բովանդակությունը. «Հայկական լուսնության դեմն առնելու և նոր հայկական զանգվածային ապստամբությունների կանխման նպատակով Էնվեր փաշան նպատակադրվել է, պատերազմական դրությունն օգտագործելով, հայկական դպրոցների մի զգալի մասը փակել, հայերի փոստային հաղորդակցությունն ընդհատել, հայկական թերթերը փակել և այժմ ապստամբած հայկական կենտրոններից բոլոր ոչ միանշանակ անմեղ ընտանիքներին վերաբնակեցնել Սիջազետում: Նա թախսանձագին խնդրում է, որ մենք այդ հարցում նրան չխանգարենք: Թուրքերի այդ միջոցառումներն, իհարկե, մեզ թշնամի ամբողջ աշխարհում դարձյալ մեծ հուզումների տեղիք կտան և մաս կշահարկվեն մեր դեմ: Սիջոցառումներն, անշուշտ, մեծ խստություն են ենթադրում մաս հայ ազգաբնակչության համար: Սակայն ես այն կարծիքին եմ, որ մենք իրավասու ենք մեղմացնել դրանց կիրառման ձևերը, բայց ոչ հիմնովին արգելել: Ռուսաստանից սնուցվող հայկական սադրանքները մեծ չափերի են հասել՝ սպառնալով Թուրքիայի գոյությանը...»³:

Այս փաստաթղթում խնդրո առարկա հարցի առումով կարևորվում են հետևյալ իրողությունները. նախ՝ այն հայերի տեղահանության թուրքական ծրագիրը ներկայացնում է խիստ մասնակի և խեղաթյուրված, ինչը պայմանավորված էր կամ Էնվերի և կամ հենց իր՝ դեսպանի ապատեղեկատվությամբ. երկրորդ՝ օսմանյան կառավարությունը նախապես լռորեն հաշվի էր առել այն հանգամանքը, որ Գերմանիան կարող էր այդ հարցում իրեն խանգարել, և երրորդ՝ դեսպանն անձամբ լիովին հանդուրժողական դիրքորոշում էր որդեգրել հայերի տեղահանության թուրքական ծրագրի հանդեպ, և այդ առնչությամբ նրան մտահոգում էր ոչ թե տեղահանվող մարդկանց ճակատագիրը, այլ հակառակորդ երկրների կողմից թուրքական կառավարության գործողությունները Գերմանիայի դեմ շահարկելու հնարավորությունը:

Այդ իսկ պատճառով էլ Վանգենհայմը հետագա շաբաթներին և ամիսներին, երբ հայերի կոտորածներն ու տեղահանությունները զանգվածային բնույթ էին ստացել, պարբերաբար հանդես էր գալիս Բարձր դռանն ուղղված ամուլ նախագուշացումներով, որոնք, ինչպես նա ևս հավաստում էր, գլխավորապես թելադրված էին վերոնշյալ շահարկումներին հակադրելու նպատակադրումով⁴: Նա միևնույն նկատառումով էր հիմնավորում նաև երիտթուրքերի ոճրագործություններին վերաբերվող նյութերի առաքումն արտգործնախարարությանը՝ դրանք համարելով հետագայում Գերմանիայի մեղսակցության վերաբերյալ ի հայտ եկող մեղադրանքները հերքելու փաստարկներ⁵:

Վանգենհայմի մոտեցումը սկզբից ևեթ որդեգրեց մաս նրա կառավարությունը, որը, մի կողմից, հիմք ընդունելով դեսպանի կողմից Բ. Դռանը ներկայացված վերոնշյալ ամուլ առարկությունները, հայտարարում էր, թե հայերի դրությունը բարելավելու համար անում էր հնարավոր ամեն բան, և, մյուս կողմից, բացառում էր Գերմանիայի կոշտ միջամտության հնարավորությունը՝ պնդելով, թե դա կհանգեցներ դաշինքի խզմանը: Ներկայումս հրապարակված փաստաթղթերը, սակայն, փաստում են, որ կոշտ միջամտության դեպքում գերմանա-թուրքական դաշինքի լուծարման՝ պաշտոնական Գերմանիայի վերոնշյալ պատճառաբանությունը միանգամայն սնանկ էր: Դա գործնականում լավագույնս ապացուցել է Թուրքիայում գերմանական ռազմական առաքելության ղեկավար գեներալ Լիման ֆոն Սանդերսը, որը 1916 թ. նոյեմբերին գեներալ գործադրման սպառնալիքով թուրքական իշխանություններին արգելեց արսորել Չմյուռնիայի հայ բնակչությանը՝ դա հիմնավորելով հենց նույն ռազմավարական նկատառումներով, որոնց քաղաքական շահարկմամբ երիտթուրքերն իրականացնում էին հայերի բնաջնջումն ու տեղահանությունը⁶:

³ *Deutschland und Armenien...*, S. 79:

⁴ Տե՛ս ինտերն. ցանցում՝ **Wolfgang Gust (Hg.)**, *Revidierte Lepsius-Edition*. 1915-07-07-DE-001-V փաստաթուղթը, <http://www.armenocide.de/armenocide/armgende.nsf/WebStart-De?OpenFramesetf> Նամակին կից հավելվածում տե՛ս մասնաշաղկի: Անդ:

⁵ Տե՛ս *Die Armenische Frage und der Genozid an den Armeniern. Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amtes, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardes Mikaeljan*, Jerewan 2004, S. 157:

⁶ «Նոյեմբերի 10-ի առավոտյան ես 5-րդ բանակի շտաբի պետին՝ գնդապետ Քյազիմ բեյին ուղարկեցի վալիի մոտ, – նշում էր այդ առթիվ գեներալը դեսպանությանն ուղղված իր տեղեկագրում, – և կարգադրեցի նրան ասել, որ այլևս չէի հանդուրժելու մման զանգվածային ձերբակալությունները և փոխադրումները, որոնք, կատարվելու էին թշնամու սպառնալիքի տակ, ռազմական տարածաշրջանում գտնվող մի քաղաքում, իսկ եթե, այնուամենայնիվ, ոստիկանությունն այդ միջոցառումները շարունակեր, ապա ես իմ ենթակայության տակ գտնվող զորամասերի միջոցով դրանք արգելելու էի: Ես վալիին մինչև կեսօր ժամանակ տվեցի վճիռ կայացնելու համար: Չմյուռնիայում հրամանատարող գեներալ, պրուսական գնդապետ Թրոմերին, որն արդեն իրագրել էր իրադրությանը, ես մայր Պրիդգեի միջոցով ծանուցեցի վերոնշյալի և անհրաժեշտության դեպքում ձեռնարկվելիք միջոցառումների մասին: Մոտավորապես կեսօրվա ժամը 1.30-ին մայր Քյազիմ բեյը վալիի մոտից (որը Բուռնաբադում էր) վերադարձավ և ինձ հայտնեց, որ ձերբակալություններն ու

Երկրորդ նմանօրինակ ապացույցը տվել է ֆելդմարշալ Կոլմար ֆոն դեր Գոլթցը, որը, եթե ոչ զենքի գործադրման ապառնալիքով, ապա իր հրաժարականի հեռանկարով 1916 թ. դեկտեմբերին կարողացավ արգելել Մոսուլի, ինչպես նաև այնտեղ գտնվող՝ Բաղդադի հայերի տեղահանությունը: Եթե միայն այդ երկու բարձրաստիճան զինվորականները սեփական նախաձեռնությամբ, նույնիսկ առանց Բեռլինից նախապես թույլտվություն հարցնելու, հաջողությամբ կարողացան արգելել նշված վայրերի հայ բնակչության տեղահանումը, ապա որքան նշանակալից կարող էր լինել գերմանական կառավարության ազդեցիկ ճնշումը⁷:

Չնայած Էնվեր փաշան Գոլթցի հարուցած վերոնշյալ արգելքի հետ համաձայնելիս նրան նաև գրում էր, թե նրա՝ իբրև գլխավոր հրամանատարի, լիազորությունները նրան իրավունք չէին ընձեռում միջամտել Թուրքական կայսրության ներքին գործերին, այնուհանդերձ այդ նախագաղափարը միանգամայն անհիմն էր, քանի որ, եթե նկատի առնենք, որ հայ ժողովրդի տեղահանության ծրագիրը թուրքական կառավարության կողմից պատճառաբանվում էր բացառապես ռազմաստրատեգիական պատրվակներով, ապա Թուրքիայում գտնվող գերմանական բարձրաստիճան զինվորականությունը, նույնիսկ Թուրքիայի ներքին գործերին չմիջամտելու՝ գերմանական կառավարության որդեգրած միանշանակ դիրքորոշման դեպքում, ռազմաստրատեգիական տեսանկյունից ամենևին չարդարացվող այդ ծրագիրը մեծ մասամբ կամ ամբողջովին արգելելու՝ բոլոր հնարավորություններն ուներ, և պատահական չէ, որ ինչպես ֆոն դեր Գոլթցը Մոսուլի, այնպես էլ ֆոն Սանդերսը Չմյուռնիայի հայերի տեղահանման՝ վերոհիշյալ արգելքները հիմնավորում էին հենց ռազմաստրատեգիական նկատառումներով:

Այն, որ պաշտոնական Գերմանիայի կողմից, որպես «արդարացում», դաշինքի խզման վկայակոչումը միանգամայն սնանկ էր, պարզորոշ վկայում էր նաև Վանգենհայմին հաջորդած նոր դեսպանը՝ կոմս Մետեռնիխը, որը, Կ. Պոլսում պաշտոնավարությունը սկսելով 1915 թ. նոյեմբերի 15-ից, ի տարբերություն իր նախորդի, փորձեց իր բոլոր հնարավորությունները գործադրել դեռ կենդանի արտոյալներին օգնելու և երիտթուրքերի հայասպան քաղաքականությունը կասեցնելու համար, չնայած այն արդեն թևակոխել էր իր վերջին փուլը: «...Նաև մեր մամուլը պետք է վրդովմունք արտահայտի հայերի հալածանքների հանդեպ և դադարի թուրքերին քծնել,– նշում էր նա 1915 թ. դեկտեմբերի 7-ին կանցլեր Բ. Հոլվեգին հղած իր զեկուցագրում: Այն, ինչ նրանք անում են (նկատի ունի Թուրքիայի ռազմական գործողությունները - Մ. Հ.) մեր գործն է, մեր սպաներն են, մեր հրանոթները, մեր դրամը: Առանց մեր օգնության այդ փքված գորտը կփռվի: Մենք ամենևին կարիք չունենք այդքան երկյուղած վերաբերվել թուրքերին: Նրանք հեշտությամբ չեն կարող անցնել մյուս կողմը և խաղաղություն կնքել: Անգլիական կառավարությունը այժմյան իշխանավորների հետ հեշտությամբ պայմանագիր չի կնքի: Անգլիական կառավարությունը տարիներ ի վեր փորձում է Էնվերին տապալել: Չափազանց անհավանական է, որ նա այժմյան իշխանավորների հետ սեպարատ հաշտության ձգտի: Առավել ևս անհավանական է, որ նա Էնվեր փաշային օգտագործի ընդհանուր խաղաղության հաստատման փորձերում: Դրա համար նա ունի հարյուրավոր այլ բաց ճանապարհներ: Հայկական հարցում հաջողություն ունենալու համար մենք պետք է թուրքական կառավարությանը երկյուղ ներշնչենք հետևանքների հանդեպ: Եթե մենք, ռազմական նկատառումներից ելնելով, չհամարձակվենք ավելի վճռականորեն հանդես գալ, ապա մեզ այլ բան չի մնա, քան հետագա անարդյունք բողոքների հետ մեկտեղ, որոնք ավելի չարացնում են, քան օգուտ տալիս, դիտել, թե ինչպես է մեր դաշնակիցը շարունակում սպանող»⁸:

Գերմանիայի վերոնշյալ պաշտոնական տեսակետի սնանկությունը փաստել են նաև գերմանացի մի շարք հյուպատոսներ և այլ դիվանագետներ, որոնք, հանգամանալից ներկայացնելով եղբրական իրադարձությունների բնույթը, ծրագրայնությունը, ընթացքն ու հրեշավոր ենթատեքստը և հերքելով հայ ժողովրդի տեղահանության ռազմավարական «հիմնավորումները», հաճախ նաև իրենց

փոխադրումները դադարեցվել էին և այլևս տեղի չէին ունենալու»: St'u *Deutschland und Armenien...*, թիվ 307 փաստաթուղթը:

⁷ Ի դեպ, վերոհիշյալ փորք-ինչ ավելի հանգամանալից ներկայացնելու համար հարկ է մանրամասնել, որ երբ 1915 թ. դեկտեմբերին որոշում կայացվեց Մոսուլում գտնվող հայերին դեպի Եփրատ ուղարկելու մասին, ֆոն դեր Գոլթցը «ռազմական տեսանկյունից այդ՝ ամենևին չարդարացված միջոցառման» հարցում ընդդիմացավ տեղական իշխանություններին: «Խնդիրը ձգվեց գրեթե մի ամբողջ ամիս,– նշում էր ժամանակակիցը,– և ֆելդմարշալը սկզբում կարողացավ հասնել միայն այն բանին, որ հայերը Մոսուլում առժամանակ այլ ցուցումի սպասեին: Երբ մինչև հունվարի կեսը Կ. Պոլսից ոչ մի ցուցում չստացվեց, ֆելդմարշալը, ելնելով իր՝ գլխավոր հրամանատարի իրավունքներից, Մոսուլի վայրից արգելեց հայերին տեղահանել: Վալին այդ մասին կրկին տեղեկություն ուղարկեց Կ. Պոլս: Մինչև հունվարի 27-ը պատասխան չստացվեց: Ապա մի տեղեկություն ստացվեց այն մասին, որ կառավարությունը շարունակում է պնդել տեղահանման անհրաժեշտությունը: Դրանից հետո ֆելդմարշալը հեռագրով անմիջապես հրաժարական ներկայացրեց: Միայն այդ ժամանակ Էնվեր փաշան մի գաղտնի հեռագրով պատասխանեց, որտեղ հավաստիացնում էր, որ Մոսուլի հայերը կմնան այնտեղ, և ի միջի այլոց, ֆելդմարշալին նաև հայտնում էր, որ նրա՝ իբրև գլխավոր հրամանատարի, լիազորությունները նրան իրավունք չեն ընձեռում միջամտել թուրքական կայսրության ներքին գործերին»: St'u *Deutschland und Armenien*, թիվ 224 փաստաթուղթը:

⁸ St'u *Revidierte Lepsius-Edition...*, 1915-12-07-DE-001-V փաստաթուղթը:

անթաքույց անհամաձայնությունն էին հայտնում ոճրագործությունների նկատմամբ Գերմանիայի ցուցաբերած անտարբերության և իրողությունները կոծկելու՝ գերմանական մամուլի որդեգրած քաղաքականության հանդեպ⁹:

Հարկ է միաժամանակ նշել, որ հայ ժողովրդի բնաջնջման հարցում պաշտոնական Գերմանիայի որդեգրած հանդուրժողական դիրքորոշումն, այնուամենայնիվ, ունեցել է իր, այսպես կոչված, «զարգացման փուլերը»: Սկզբնական շրջանում, առնվազն մինչև 1915 թ. հոկտեմբեր ամիսը, այն, թերևս, ծրագրային բնույթ չէր կրում և դեռ չէր ձևակերպվել՝ որպես քաղաքական հրամայական: Դա հնարավորություն ընձեռեց Յ. Լեփսիուսին 1915 թ. հուլիսին արտգործնախարարության աջակցությամբ ստանալ՝ Թուրքիա մեկնելու համար¹⁰, իսկ վերադարձից հետո նա կարողացավ նաև հոկտեմբերի 5-ին ռալիստագի շենքում զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հանդիպում ունենալ¹¹:

Այդ հանդիպման ընթացքում Լեփսիուսի կատարած պարզաբանումները, սակայն, կառավարությանն այնքան անհանգստացրեցին, որ հաջորդ օրը նույն շենքում կազմակերպվեց մամուլի ներկայացուցիչների մի մեծ համաժողով, որտեղ կառավարության խոսնակը Լեփսիուսի տեղեկությունները որակում էր իբրև «չափազանցված», թուրքական միջոցառումները բնութագրում՝ սոսկ որպես «Ամտանոթի խառնակիչ գործունեության արձագանք» և հավաստիացնելով, որ գերմանական կառավարությունը ձգտում էր հայերի համար դիվանագիտական ճանապարհով հնարավոր ամեն բան անել, կոչ էր անում Հայկական հարցի հովանավորչության գործիք չդառնալ¹²:

Կառավարության կողմից նույն օրը ևեթ լրատվամիջոցների ներկայացուցիչներին ուղղվեց նաև հետևյալ հրահանգը. «Հայկական կոտորածների մասին պետք է ասել հետևյալը. Թուրքիայի հետ մեր բարեկամական հարաբերությունները նրանց ներքին գործերի պատճառով ոչ միայն չպետք է վտանգվեն, այլև ներկա ծանր պահին նույնիսկ չպետք է քննարկվեն: Այդ իսկ պատճառով լռելն առժամանակ հարկ է պարտավորություն համարել: Հետագայում, եթե արտերկրի կողմից Գերմանիայի մեղսակցության պատճառով ուղղակի մեղադրանքներ ի հայտ կգան, անհրաժեշտ կլինի հարցը մեծ զգուշությամբ և վերապահությամբ դիտարկել և պնդել, որ թուրքերը հայերի կողմից ուժգին զրգովել էին»¹³:

Այս հրահանգով սկզբնավորվեց հայ ժողովրդի ողբերգությունների մասին բոլորին լռություն պարտադրելու՝ մի ծրագրված քաղաքականություն, ինչը հաջողությամբ կիրառվեց ընդհուպ մինչև պատերազմի ավարտը: Բացառություն կազմող միակ անձնավորությունը, որը բազում գրկանքների, վտանգների, ընդհուպ հայրենիքից տարագրվելու գնով չենթարկվեց այդ պահանջին, դր. Լեփսիուսն էր¹⁴:

Այսպիսով՝ այն հանգամանքը, որ Գերմանիան կարող էր, առանց դաշինքը վտանգելու, կասեցնել կամ նույնիսկ կանխել Հայոց Մեծ եղեռնը, չի կարող կասկածի ենթակա լինել, և դրանից էլ, անշուշտ, ածանցվում է Գերմանիայի համապատասխանատվության, բնականաբար՝ նաև մեղսակցության հանգամանքը, ինչն, ըստ հարկի, կարող է օգտագործվել Հայոց ցեղասպանությանը վերաբերող քաղաքական գործընթացներում:

Ashot Hayruni (Armenia)

GERMANY AND THE ARMENIAN GENOCIDE

The article studies the position of the imperial Germany towards the Armenian Genocide in the context of the military Pact with the Ottoman Turkey. It covers also the adopted approach of individual diplomatic and politico-military figures towards the issue. Based on a number of sources, it is argued that Germany could have prevented or halted the annihilation of Armenians without endangering the Pact with Turkey, and that the referred <justification> brought up by official Germany on breaking-off the Pact in case of roughly intervention in favor of Armenians, was not in line with the reality.

⁹ St'u Deutschland und Armenien..., S. 110-111:

¹⁰ Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., S. 135:

¹¹ St'u Lepsius J., Der Todesgang..., S. XXIV: Հմմտ. Feigel U., Das evangelische..., S. 214:

¹² Feigel U., Das evangelische..., S. 214-215:

¹³ Vierbücher H., Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat..., S. 78. Հմմտ. Feigel U., Das evangelische..., S. 214-215:

¹⁴ Այդ մասին մանրամասն իրազեկվելու համար տե՛ս Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002, էջ 212-322:

Արմենուի Ղամբարյան (Հայաստան)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՆ ԱՄՆ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ
ՊԱԼԱՏՈՒՄ 1918 Թ. ՄԿՁԲԻՆ

1918 թ. սկզբին Հայկական հարցի նկատմամբ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը, ինչպես և նախորդ շրջաններում, պայմանավորված էր սեփական շահերով: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից՝ չընդգրկվելով աշխարհամարտի մեջ և մնալով չեզոք պետություն, ԱՄՆ-ն ակամատես եղավ Թուրքիայում հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության գործողություններին: ԱՄՆ-ի բարյացկամ վերաբերմունքն արևմտահայերի ճակատագրի հանդեպ և բնական մարդկային վրդովմունքը հիմք չդարձան, որպեսզի Նախագետը պատերազմ հայտարարեր Օսմանյան կայսրությանը: Դա տեղի չունեցավ նաև այն ժամանակ, երբ Թուրքիան խզեց դիվանագիտական հարաբերություններն ԱՄՆ-ի հետ՝ ի պատասխան ԱՄՆ-ի կողմից դաշնակից Գերմանիային պատերազմ հայտարարելու: Անկախ այն հանգամանքից, որ Թուրքիային պատերազմ հայտարարելը չէր բխում ԱՄՆ-ի պետական շահերից, այն շահեկան էր արևմտահայության համար, քանի որ ԱՄՆ-ի կազմակերպած և ցուցաբերած օգնության շնորհիվ փրկվեցին բազում հայ կյանքեր:

Ինչևէ, դեռևս պատերազմի տարիներին ամերիկյան պետական այրերը, ընդհանուր քաղաքականությունից ելնելով, անդրադառնում էին հայությանը, մասնավորապես՝ արևմտյան հատվածին, իրենց քննարկումներում փորձելով զուգորդել մարդասիրությունն ու քաղաքականությունը: Հատկանշական է այն, որ դեռևս չավարտված պատերազմի պայմաններում Հայկական հարցի և հայության շուրջ քննարկումներում, ելույթներում, ներկայացվող տեղեկատվության մեջ առաջ էր քաշվում հայկական պետության ստեղծման գաղափարը:

Նման մտահաղացումներով լի էր ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատում 1918 թ. փետրվարի 7-ի՝ Կանգաս Նահանգի կողմից ընտրված ամերիկյան Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի կոնգրեսական, փոխգնդապետ Էդվարդ Լիթթլի (Edward C. Little) Հայկական հարցի վերաբերյալ հանգամանալից զեկույցը:

Հավանաբար Է. Լիթթլի մարդասիրական և հայերի նկատմամբ բարյացկամ վերաբերմունքից էր, որ վերջինս, հայերին օգնելու նպատակով, ամեն կերպ փորձում էր սեփական ելույթով կոնգրեսականներին ներկայացնել Հայաստան աշխարհը և հայերի ով լինելը: Հայերին բարեկիրթ, քաղաքակիրթ և արժանի ազգ ներկայացնելու նպատակով վերջինս անգամ պարզամիտ թվացող համեմատությունների (հայերի և ամերիկացիների մույնաման ճաշակի տեր լինելու, մույնաման մթերք սիրելու և օգտագործելու մասին) միջոցով, ձգտում էր շարժել ամերիկյան պետական այրերի գուրբ և հայերի՝ որպես համամարդկային արժեքներ կրող ժողովրդի փրկության հարցը նրանց միջնորդությանն էր ներկայացնում:

Լիթթլի էմոցիոնալ, հայ հեղինակների բանաստեղծություններից մեջբերումներով համեմված ելույթը փորձ էր ԱՄՆ-ի պետական այրերի ուշադրությունը կենտրոնացնել մի ժողովրդի հանդեպ, որը քաղաքակրթության մեջ ունեցած իր ներդրումով արժանի էր օգնության հենց այն պարզ պատճառով, որ հնարավորություն ունենար շարունակել իր ծառայությունը քաղաքակրթությանը:

Շրջանցելով Բուլղարիայի և այլ հարցերի վերաբերյալ կոնգրեսականի վերլուծությունները՝ նշենք, որ Լիթթլը համեմատական անցկացնելով, ընդգծեց, որ «Հայկական պետություն կազմավորելու համար տվյալ պահին ստեղծվել է ավելի լավ հնարավորություն, քան 40 տարի առաջ՝ Բուլղարիան պետություն դարձնելու»¹:

Ըստ Լիթթլի՝ Եվրոպայից դուրս Թուրքական կայսրության 530.000 քառակուսի մղոն լայնածավալ տարածքում բնակվող 18.000.000 բնակչության մեծամասնությունը՝ 3/5-ը մահմեդական էր, իսկ 2/5-ը՝ քրիստոնյա²: «Թուրքական կայսրության իրավական և վարչական իրավիճակը մշտապես եզակի մի երևույթ է եղել՝ դժվար ըմբռնելի պայմաններին անձանոթի համար: Իրական օրենքն այստեղ Դուրանն է: Համաձայն վերջինիս խորագույն վերձանման քրիստոնյաները գրեթե օրենքից դուրս էին՝ առանց որևէ իրավունքի: Դրանով էր մասամբ բացատրվում հույների, բուլղարների, սերբերի և հայերի կյանքերի նկատմամբ անցյալ տարիների անփույթ վերաբերմունքի դրսևորումը»³:

¹ Congressional Record, 65 – II session, Appendix to the Congressional Record, Armenia and Turkey, Speech of Hon. Edward C. Little (այսուհետ՝ Congress. Rec.), p. 177:

² Նշենք, որ շարադրանքում տեղ գտած վիճակագրական տվյալների, աշխարհագրական տեղայնացումների, Առաջին աշխարհամարտի տարիների ռազմական գործողությունների, զորքերի տեղաշարժերի վերաբերյալ տեղեկությունները սուկ Է. Լիթթլի զեկույցում ներկայացված տվյալներն են, և վերջինները մեր կողմից վերլուծության, ճշգրտումների և շտկումների չեն ենթարկվել:

³ Congress. Rec., p. 177:

Հայերը, ինչպես հայտնում էր Է. Լիթթը, ապրում էին իրենց **իրավական հայրենիքում** ավելի քան 3000 տարի: Ընդգծելով հայերի արիական ծագումը՝ Լիթթը ներկայացնում էր, որ տարբեր ժամանակներում հայերի տիրապետության տակ է եղել գրեթե 500.000 քառակուսի մղոն տարածք, որը տարածվում էր Կովկասից, Կասպից և Սև ծովերից մինչև Միջագետք և Եգիպտոս:

Իր ելույթի ընթացքում քարտեզ օգտագործելով՝ Է. Լիթթը ցույց էր տալիս Թուրքական կայսրությունը, մանրամասն ներկայացնում հայկական հատվածը՝ հստակ անվանելով այն **Հայաստան**: Զննարկվող պահին, ինչպես տեղեկացնում էր Լիթթը, Հայաստանն արևմուտքից սահմանակցում էր Անատոլիային, որը Լիթթը անվանում էր «Թուրքական կայսրության ծննդավայր» և հույս հայտնում, որ այն կայսրության վերջին հանգրվանն է: Մեծ կարևորություն էր ներկայացնում Լիթթի կողմից կոնգրեսին ներկայացրած արդարացի տեղեկատվությունն առ այն, որ **թուրքերը** հայկական հողերում և հենց իրենց կայսրության տարածքում **եկվորներ էին**:

Խոսելով թուրքերի եկվորության մասին՝ Է. Լիթթը նշեց. «Թուրքերն, ինչպես իհարկե գիտեք, եկել են Մոնղոլիայի վերին հատվածներից: Լինելով այնտեղ՝ նրանք կառավարություն վարելու առումով որևէ ընդունակություն ձեռք չէին բերել: Նրանք ուղղակի զինվորներ և զավթողներ էին և երբեք իրենցից ոչ մի այլ բան չեն ներկայացրել...»⁴: Լիթթի բնութագրմամբ՝ թուրքերի համար հարկահավաքն ուղղակի արկած էր և մարդուն երկու մասի մասնատելուց բացի՝ որևէ այլ կերպ կառավարել նրանք չէին կարող:

Մեծ կարևորություն էր ներկայացնում նաև Լիթթի այն տեղեկատվությունը, որ դարեր շարունակ թուրքերը հայերի երկրում սփռել, բնակեցրել էին **մեծ թվով քրդերի**, իսկ հայերին տեղահանել և բնակեցրել էին Հայաստանի շրջակա տարածքներում⁵:

Տվյալ պահին, 1918 թ. փետրվարին, Հին Հայաստանի մեծ մասը Ռուսաստանի տարածքն էր⁶: Ինչպես նշում է Լիթթը, հայերի և Կովկասի միջև ապրում են քրիստոնյա վրացիները, իսկ Հայաստանի մի փոքր հատված էլ կազմում էր հյուսիսարևմտյան Պարսկաստանը: Լիթթի տեղեկությունների համաձայն՝ Ռուսաստանում ապրում էր 2.000.000 հայ, Թուրքիայում այդ ժամանակ հնարավոր է լիներ 1.500.000 միլիոն հայ, իսկ Պարսկաստանում՝ 100.000:

Է. Լիթթը մանրամասնում էր, որ թուրքական Հայաստանի⁷ տարածքում 1,5 միլիոն հայ էր բնակվում երեք տարի առաջ, իսկ թե որքանն էր նրանցից սպանված տվյալ պահին, կարծիքները տարբեր էին: Ըստ Լիթթի՝ ամենաքիչը 500.000 հայ էր սպանվել թուրքերի և քրդերի կողմից Հայաստանում 1915 թ. ի վեր: Թուրքերի նպատակն էր կոտորել հայ ժողովրդին՝ վերջինիս հողերին տիրանալու, ինչպես նաև քրիստոնեությունն այդտեղից վերացնելու նպատակով⁸:

Ներկայացնելով Առաջին աշխարհամարտի տարիների Հայոց ցեղասպանությունը՝ Լիթթը նշեց, որ 1915 թ. իրավիճակը Հայաստանում այնպիսին էր, որ անգամ դժոխքը ոչինչ էր Հայաստանի համեմատ:

Մարդկային բոլոր իրավունքները հայերի համար նույնպես բնական համարելով՝ Լիթթը անդրադառնալով Ներկայացուցիչների պալատին, դիմում էր աշխարհի մեծագույն քրիստոնյա հանրապետությանը՝ օգնության ձեռք մեկնել առաջին քրիստոնյա ժողովրդին⁹: Լիթթը ներկայացրեց, որ տվյալ ժամանակահատվածում, չնայած ռուսական բանակի կազմալուծմանը, հայերը՝ զինվորներն ու կամավորականները, չեն թողնում զբաղեցրած տարածքներն ու շարունակում են կռվել: Լիթթը հայտարարեց՝ «Հայերը միշտ եղել են փայլուն զինվորներ»¹⁰: Սակայն նրանք մեծ տերությունների ֆինանսական աջակցության կարիքն ունեն: Կովկասից այս կողմ այդ ժողովուրդները թուրքերի բարոյալքված բանակի հետ կռվում մենակ են¹¹ թողնված:

Լիթթի ելույթը շարժեց Ներկայացուցիչների պալատի անդամների հետաքրքրությունն այն աստիճան, որ կոնգրեսականներից ոմանք անգամ զիջեցին Լիթթին իրենց հատկացված ժամանակից՝ վերջինիս լրացուցիչ հարցեր հղելով հայկական խնդրի վերաբերյալ¹²:

Պատասխանելով հարցերին՝ Լիթթը շարունակում էր՝ հայերը ձգտել են նորմալ պայմանների և հույս էին տալով, որ կարող էին ներկայացուցչական կառավարության իրավունք ստանալ թուրքական Հայաստանում՝ քրիստոնյա մեծ տերությունների հովանավորության (protectorate) ներքո, որը կտարածվեր Միջերկրականից՝ Մերսինից և Ալեքսանդրեից մինչև ռուսական սահմանը:

⁴ Congress. Rec., p. 179:

⁵ Congress. Rec., p. 178:

⁶ Լիթթը նկատի ունի Առաջին աշխարհամարտի տարիներին Ռուսաստանի կողմից գրաված Արևմտյան Հայաստանի տարածքները:

⁷ «Թուրքական», «ռուսական», «պարսկական» Հայաստան արտահայտությունները և աշխարհագրական այլ անվանումներն այստեղ և հետագայում օգտագործվել են ըստ բնագրի:

⁸ Congress. Rec., p. 179:

⁹ Congress. Rec., p. 180:

¹⁰ Congress. Rec., p. 179:

¹¹ Congress. Rec., p. 179:

¹² Congress. Rec., p. 180:

Լիթթը տրամաբանում էր, որ Ռուսաստանի հնարավոր փլուզումը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, որ ռուսական Հայաստանի վերաբերյալ Մեծ տերությունների կողմից որոշում կկայացվի վերջինս ընդգրկել նշված պրոտեկտորատի ներքո: Իրադարձությունների մասն զարգացումների պարագայում Հայաստանը կդառնար ժամանակակից աշխարհի մաս, ուր կապահովվեին կյանքի և սեփականության անվտանգությունը, կրթության հնարավորությունը, կրոնի ազատությունը: Կզարգանար տնտեսությունը, կբարգավաճեին գյուղերը, մեծ ու փոքր քաղաքները, կիրատարակվեին նոր թերթեր, կբացվեին նոր դպրոցներ և քոլեջներ՝ շարունակելով այն գործը, որն արդեն արվել էր ամերիկյան առաքելությունների կողմից: Աշխարհը չի կարող ավելի լավ ֆինանսական և բարոյական ներդրում անել, քան նպաստել Հայաստանի զարգացմանը¹³: Լիթթը տեղեկացնում է կոնգրեսականներին, որ տվյալ պահին հայ ազգի գլխավոր խոսնակ՝ Եզիպտոսի Մեծն Նուբարի որդի Պողոս Նուբարն, արդեն մշակել է պրոտեկտորատի վերաբերյալ հայկական ծրագրեր և ներկայացրել դրանք Մեծ տերություններին:

Հայերի լավագույն պաշտպանությունը կլինի թուրքերի հիմնովին ջախջախումը և նրանք չեն կարող ընդմիջել իրենց պայքարը, մինչև վերջինս չիրականացվի: «Կարեկցանքի յուրաքանչյուր նշույլ, բանականության յուրաքանչյուր թելադրանք, մեր սեփական շահերի յուրաքանչյուր պայման պահանջում է, որ դաշնակիցները համաձայնեն հայերի երազած ֆինանսական օգնությանը և աջակցեն նրանց՝ հասնելու իրենց ձգտումների իրականացմանը»¹⁴:

Եվրոպան ոչինչ չի արել ո՛չ Հայաստանի և ո՛չ էլ Թուրքիայի որևէ հատվածի համար: Փաստացի, քրիստոնյա պետություններն ավելի շատ խնդիրներ են առաջացրել, քան օգնել, քանի որ հայերին հուսադրելու համար նրանք մշակեցին Բեռլինի պայմանագիրը՝ մի դատարկ ծաղրանք, և հետո մի կողմ քաշվեցին՝ թույլ տալով թուրքին սպանել և պատվազրկել հայերին հազարներով և ոչինչ չարեցին նրանց համար¹⁵: Լիթթը կոչ էր անում ամերիկյան պետական այրերին խելամիտ դիվանագիտություն վարել և անդրադառնալով այն փաստին, որ Ամերիկյան միլիարդավոր դոլլարներ և միլիոնավոր կյանքեր է շահարկում՝ հանուն ընթացող պատերազմի արդյունքի, գտնում էր, որ ամերիկյան կառավարությունը 10.000.000\$ ծախսելու համար ավելի լավ տեղ չի գտնի, քան հայկական զորամասերին աջակցելը և Թիֆլիսում, Կարսում, Էրզերումում մի քանի նոր զորամասեր կազմավորելը:

Ըստ Լիթթի՝ մինչև թուրքերը չպարտվեին, Արևելքում չէր հաստատվի ո՛չ խաղաղություն, ո՛չ էլ ժողովրդավարություն և եթե Ամերիկյան պատերազմ չհայտարարի Թուրքիային և չգրոհի նրա վրա, վերջինս կգրավի Հայաստանը և Կովկասը, գերմանական դրոշմ էլ կծածանվի լեռնաշղթայի, Սև և Կասպից ծովերի վրա և կիշխի աշխարհում¹⁶:

Ներկայացնելով ամերիկյան շահերը Հայաստանում՝ Լիթթը կենտրոնացնում էր կոնգրեսականների ուշադրությունը Հայաստանում գործող ամերիկյան դպրոցների ուղղությամբ: Ամերիկյան միսիոներները կրթական օջախներ՝ քոլեջներ և ավելի ցածր կարգի դպրոցներ էին հիմնել ոչ միայն Բեյրութում, Ջմյուռնիայում, այլև Խարբերդում, Մարզվանում, Այնթափում, Մարաշում: Լիթթը այս կապակցությամբ դիմում է պալատին՝ հարցնելով՝ արդյո՞ք «ամերիկացի զինվորը պետք է վախենա զնալ այնտեղ, ուր ամերիկացի միսիոներն արդեն բարձրացրել է ամերիկյան դրոշմը»¹⁷:

Ավարտելով ելույթը՝ Էդուարդ Լիթթը հենց ինքն էլ պատասխանում է իր հարցադրմանը. «Ժամանակն արդեն եկել է, երբ ամերիկյան զինվորը կարող է ավարտել Արևելքում այն առաքելությունը, որը սկսել էին ամերիկյան միսիոներները»¹⁸:

Ամփոփելով՝ ասենք. որպես Լիթթի ելույթի ընդհանուր վերլուծություն՝ անհրաժեշտ է ընդգծել, որ ամերիկյան կոնգրեսականն արդարացիորեն ներկայացնելով հայ ժողովրդին, Հայաստանը, հայկական խնդիրները, ակամայից անդրադարձել է մեզ համար այսօր էլ բավական արդիական հարցերի: Հայկական տարածքն ուղղակի անվանելով «Հայաստան», Լիթթը ընդգծում էր, որ 1. հայերն արիական ծագում ունեն, 2. հայերը բնիկ են իրենց լեռնաշխարհում, ապրում են իրենց իրավական հայրենիքում և տերն են իրենց հողերի, 3. հայերը բարձր արժեքների, փայլուն մտավոր և հոգևոր կարողությունների տեր են, 4. թուրքերը եկվոր են հայկական հողերում, եկել են Մոնղոլիայից և գերծ են կառավարելու որևէ կարողությունից, 5. հայկական հողերում ի վնաս հայերի դեմոգրաֆիկ արհեստական փոփոխությունները թուրքերի կողմից կատարած վերաբնակեցումների արդյունք են, 6. հայերին կոտորելու հիմքում ընկած էր կրոնի գործոնը, սակայն այն միակ պատճառը չէր, 7. հայերի նպատակային կոտորածը թուրքերի կողմից սկսվել է XIX դ. վերջից, հենց 1878 թ.-ից՝ Հայկական հարցի ի հայտ գալուց հետո, 8. թուրքերի նպատակն էր հայերին իսլամ վերացնել «իրենց» («թուրքական» – իմը) տարածքից, 9. Աշխարհամարտի տարիներին հայերի կոտորածը ցեղասպանություն էր, 10. նշված

¹³ Congress. Rec., p. 182:

¹⁴ Congress. Rec., p. 182:

¹⁵ Congress. Rec., p. 182:

¹⁶ Congress. Rec., p. 182:

¹⁷ Congress. Rec., p. 181:

¹⁸ Congress. Rec., p. 182:

Ժամանակահատվածում՝ 1918 թ. սկզբին, անգամ կար հավանականություն, որ ռուսները կլքեն արևմտահայերին, և Արևմտյան Հայաստանը կթողնվի թուրքերին և քրդերին, 11. եվրոպական տերությունները ոչինչ չէին արել հայերի համար և մշտապես օգտագործել էին Հայկական հարցն իրենց շահերի համար, 12. անհրաժեշտ էր հայերին վերապահել ինքնակառավարման իրավունք՝ որևէ քրիստոնյա տերության ներքո:

Իհարկե, Լիթթլի խոսքում այս բոլոր պնդումների հետ մեկտեղ հնչում էր նաև շահադիտական այն միտքը, որ համաշխարհային գործընթացներից հեռու չմնալու և դրանք նպատակային օգտագործելու մղումից ելնելով՝ հայերին օգնելու միջոցով ԱՄՆ-ը հնարավորություն կստանա թույլ չտալ թե՛ Գերմանիային, թե՛ Մեծ Բրիտանիային և թե՛ բոլշևիկներին ամրապնդվել Թուրքիայում և Բաքվում: Այնուամենայնիվ, թվում է, թե XX դ. սկզբին տեղի ունեցած Լիթթլի ելույթն ուղղակի պատասխան էր մեր ծագման և ինքնության, մեր պատմության, մեր հայրենիքի, մեր արժեքների նկատմամբ այսօր կատարվող կեղծարարություններին և ոտնձգություններին:

Armenuhi Ghambaryan (Armenia)

THE ARMENIAN QUESTION IN THE HOUSE OF REPRESENTATIVES OF THE USA IN THE BEGINNING OF 1918

In the beginning of 1918 the USA attitude towards the Armenian question was dictated by her foreign policy interests. During the years of the I WW the American statesmen discussed the idea of formation of the Armenian statehood. One of the brilliant speeches on the Armenian question was sounded by Edward C. Little of Kansas in the American House of Representatives on February 7, 1918. The congressman introduced the Armenian question in details and called the American statesmen to help the ancient Christian people. E. Little's speech is actual even today as the incontrovertible facts of the history of the Armenian people, represented by him are nothing than the answer to the modern falsifications of the history of our people.

Արմեն Գամբարյան (Հայաստան)

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովուրդն արդեն մի քանի տասնամյակ պայքարում է 20-րդ դարասկզբին իր նկատմամբ իրագործված ցեղասպանության ճանաչման և դատապարտման համար: Այդ ժամանակամիջոցում ծավալված պայքարի արդյունքում տարբեր երկրների խորհրդարանների և միջազգային կազմակերպությունների կողմից ընդունվել են Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող բանաձևեր, որոնք չափազանց կարևոր են, քանզի դրանցով սկզբունքային գնահատական է տրվել հայերի նկատմամբ 20-րդ դարասկզբին կատարվածին, այն որակելով իբրև ցեղասպանություն և մատնանշվել է տվյալ հանցագործության կազմակերպիչ պետությունը: Սակայն, չնայած դրան, Թուրքիան պետական մակարդակով շարունակում է ժխտել հայերի նկատմամբ կատարված հանցագործությունը, ակնհայտ է սակայն, որ նման գործելակերպով անհնար է հասնել հարցի վերջնական հանգուցալուծմանը և վաղուց հասունացել է ժամանակը, որ Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման փոխարեն պայքարենք այդ հանցագործության հետևանքների հաղթահարման ու հատուցման համար:

Սակայն նախքան այդ ուղղությամբ որևէ քայլ ձեռնարկելը, Հայաստանի և Սփյուռքի համապատասխան կառույցներն ու մասնագետները նախ և առաջ՝ պետք է միասնաբար մշակեն «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար Թուրքիային ներկայացվելիք հիմնավոր պատմաիրավական պահանջների փաթեթի աստատաբանությունը»: Պահանջների փաթեթի Հայաստանի և Սփյուռքի կողմից միասնաբար մշակելու հանգամանքը կարևոր է այնքանով, որ ցեղասպանության հետևանքների և Թուրքիային ներկայացվելիք պահանջների հարցում կձևավորվի միասնական, համազգային մոտեցում, որից այլևս չի կարող լինել որևէ շեղում: Այդպիսով կբացառվեն Հայոց ցեղասպանության հետևանքների և ներկայացվելիք պահանջների հետ կապված տարաբնույթ մեկնաբանություններն ու շահարկումները՝ տարբեր կառույցների և առանձին անհատների կողմից: Հարկավոր է քաջ գիտակցել, որ այս հարցում ցանկացած ինքնագործունեություն կամ մոտեցումների տարբերություններ անպայման օգտագործվելու են մեր դեմ՝ նպատակ հետապնդելով տարածայնություններ մտցնել հայ ժողովրդի հատվածների միջև և շեղել ճիշտ ճանապարհից:

Այս հայեցակարգային փաստաթղթում առկա հիմնախնդիրը ճիշտ ձևակերպելուց զատ պետք է

հստակ պատասխաններ տրվեն այն հարցերին, թե ի՞նչ ենք կոնկրետ հասկանում Հայոց ցեղասպանության հետևանքներ ասելով և ինչպե՞ս կամ ի՞նչ չափով ենք պատկերացնում այդ հետևանքների հաղթահարումը կամ՝ մասնակի վերացումը, քանզի կան հետևանքներ, որոնք ուղղակիորեն անվերականգնելի են:

Հայոց ցեղասպանության իրականացման միջոցով հայ ժողովրդին հասցված վնասներն ու կորուստները բաժանվում են հետևյալ խմբերի՝ ա) հայրենագրկում, բ) մշակութային ժառանգության կորուստ, գ) մարդկային կորուստներ, դ) նյութական կորուստներ, ե) հոգեկան խեղումներ: Այս կորուստները չպետք է շփոթել կամ նույնականացնել այդ հանցագործության հետևանքների հետ, որոնք մեր ժողովուրդը շուրջ մեկ դար Հայաստանում ու Սփյուռքում շարունակում է կրել իր ուսերի վրա: Պատահական չէ, որ որոշ հետազոտողներ պնդում են, որ քանի դեռ Թուրքիան չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը, և չեն հաղթահարվել այդ հանցագործության հետևանքները, ապա գործ ունենք շարունակվող ցեղասպանության հետ:

Հայոց ցեղասպանության կորուստներից ու դրանց հաջորդած հետևանքներից յուրաքանչյուրը հստակեցնելուց հետո Պահանջների փաթեթում պետք է իրավական տեսակետից հիմնավորվեն ցեղասպանության հետևանքները հաղթահարելու առումով Թուրքիային ներկայացվելիք պահանջները:

Հայոց ցեղասպանության գլխավոր հետևանքի՝ հայրենագրկման հաղթահարման պահանջը, օրինակ, կարող է հիմնավորվել 1920 թ. նոյեմբերի 22-ի ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով, ինչն ընդունվել է ցեղասպանության իրականացման պահին գործող միջազգային իրավական նորմերի, մասնավորապես՝ 1907 թ. հոկտեմբերի 18-ին ստորագրված «Միջազգային բախումների խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիայի դրույթներին համապատասխան, որը կողմերի միջև վեճի կարգավորման եղանակ էր դիտարկում նաև միջազգային իրավարարությունը (արբիտրաժը): Վիլսոնի իրավարար վճիռը հիմնովի պետք է համարել հայերի նկատմամբ կատարված ցեղասպանության համար Թուրքիային քաղաքական պատասխանատվության ենթարկող կարևոր փաստաթուղթ:

Ազգային-մշակութային ցեղասպանության դրույթը ներկայացված է եղել ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի նախագծում, սակայն որոշ երկրների հակադեմոկրատիկ հետևանքով, այն դուրս է մղվել ուստի բացակայում է փաստաթղթի տեքստից: Նման դրույթի առկայության դեպքում կարելի կլիներ պատասխանատվության կանչել մշակութային արժեքները ոչնչացնող թուրքական պետությանը: Սակայն վերջինիս բացակայությունը չի նշանակում, որ նույն նպատակին չի կարելի հասնել այլ փաստաթղթերի միջոցով: Օրինակ՝ Հայոց ցեղասպանության արդյունքում մշակութային ժառանգության կորուստների վերականգնման պահանջը կարող է հիմնավորվել 1923 թ. հուլիսի 24-ի Լոզանի պայմանագրի՝ ոչ մահմեդականների իրավունքների պաշտպանությանը վերաբերող 37-44 հոդվածներով: Մասնավորապես պայմանագրի 42 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ թուրքական կառավարությունը պարտավորվել է լիակատար պահպանության տակ առնել եկեղեցիները, սինագոգները, գերեզմանները և փոքրամասնությունների այլ կրոնական հաստատությունները: Տվյալ հոդվածի պահանջից բխում է ոչ միայն եկեղեցիների չքանդելն ու չավերելը, այլև դրանց ամրացումն ու նորոգումը: Բացի դրանից, Թուրքիայում հայկական մշակութային ժառանգությունը կարող է պաշտպանվել նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանոնադրության դրույթներով, քանի որ թե՛ Հայաստանը և թե՛ Թուրքիան հանդիսանում են այդ կազմակերպության անդամ-երկրներ:

Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանության նյութական կորուստներին, ապա սեղմ ժամկետներում 1919 թ. Փարիզի Խաղաղության վեհաժողովին Ազգային պատվիրակության ներկայացրած մոտ 19.131 մլրդ ֆրանսիական ֆրանկի հաշվարկն, անշուշտ, խիստ մոտավոր է և ենթակա ճշգրտման: Հայոց ցեղասպանության նյութական կորուստների հատուցման համար, օրինակ, փայլուն նախադեպային հիմք կարող է հանդիսանալ 1952 թ. սեպտեմբերի 10-ի Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության և սիռնիստների Պահանջների կոնֆերանսի միջև կնքված Լյուքսեմբուրգյան համաձայնագիրը, որով Գերմանիան սկսեց հրեական Հոլոքոստի նյութական վնասների հատուցումը:

Միջազգային իրավունքն, անշուշտ, նախատեսում է պատասխանատվություն նաև՝ նյութական վնասները վերականգնելու իմաստով: Հատուցման համընդգրկուն ձևը, ինչպես հայտնի է, կոմպենսացիան է, սակայն կա նաև ռեստիտուցիայի ինստիտուտը, որը ենթադրում է նյութական արժեքների նախկին վիճակի վերականգնումը, այդ թվում՝ բնեղենով: Իսկ ռեստորացիան նախատեսում է, որ պետք է վերականգնվեն այն բոլոր իրավունքները, որով օժտված են եղել հանցագործության գոհ-խմբի անդամները՝ մինչև դրա կատարումը: Բացի այդ, միջազգային իրավունքի սկզբունքներով նախատեսում է ոչ միայն Հայոց ցեղասպանության հետևանքով հայերին հասցված նյութական վնասի հատուցում, այլև նրանց իրավունքների վերականգնում այն գույքի և ունեցվածքի նկատմամբ, որը հանիրավի բռնազավթվել է տվյալ հանցագործության հետևանքով:

Հայոց ցեղասպանության հոգեբանական հետևանքների վերականգնման տեսակետից

միջազգային իրավունքում կիրառելի է սատիսֆակցիան, որի առաջին դրսևորումը պետք է լինի Թուրքիայի Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությունից հրաժարումը, որից հետո հանցագործության փաստի ճանաչումը և պաշտոնական ներողության հայտնումը: Սատիսֆակցիայի այս գործողությունները ընդամենը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման առաջին անհրաժեշտ քայլերն են, որոնց հաջորդելու է Հայոց ցեղասպանության հատուցման գործընթացը:

Պահանջների փաթեթի ընդունումից հետո, կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը այդ փաստաթղթին պետք է տա օրենքի կարգավիճակ, որպեսզի քաղաքական կոնյուկտուրայի փոփոխությունից անկախ, երկրի արտաքին քաղաքականության մեջ այս ուղեծրից ոչ մի շեղում չկատարվի: Այս քայլի նպատակը պետք է լինի այն, որ օրենսդրորեն արգելվի որևէ քայլ, որը կհակասի ընդունված հայեցակարգային փաստաթղթին՝ «Պահանջների փաթեթին»:

Հայեցակարգային այս փաստաթղթի հիման վրա՝ Սփյուռքի ու Հայաստանի համապատասխան կառույցների ու մասնագետների համատեղ ջանքերով պետք է մշակվի նաև մարտավարական, կիրառական փաստաթուղթը՝ «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործողությունների ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագրում մատնանշվելու են այն մեթոդներն ու մեխանիզմները, որոնցով հնարավոր է լինելու հասնել վերը նշված հետևանքների հաղթահարմանը: Այս փաստաթուղթն ի տարբերություն առաջինի, լինելու է փակ, սահմանափակ օգտագործման համար նախատեսված՝ թույլ չտալու համար, որ հակառակորդը նախապես իմանալով՝ հնարավորություն ստանա կանխարգելիչ քայլերով չեզոքացնել իր համար անբարենպաստ հետևանքները:

Ծրագրի կարևորագույն հիմնախնդիրներից մեկը պետք է դառնա կատարվելիք աշխատանքների բաժանումը՝ Հայաստանի և Սփյուռքի միջև, ելնելով նրանց իրավասություններից, կարողություններից ու փորձառությունից: Ծրագրում նաև պետք է հստակեցվեն այն ուղղությունները, որոնցով պետք է տարվեն աշխատանքները: Մեր կարծիքով դրանք զուգահեռաբար պետք է ընթանան թե՛ իրավական, և թե՛ քաղաքական հարթությունների վրա:

Հայաստանն իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ, հիմնվելով թե՛ ՄԱԿ-ի կանոնադրության և թե՛ անմիջականորեն՝ Ցեղասպանության կոնվենցիայի դրույթների վրա ունի գործունեության լայն հնարավորություններ: Օրինակ, նա կարող է դիմել միջազգային դատական ​​ստյաններին՝ և՛ իր ու Թուրքիայի միջև առկա վեճը լուծելու, և՛ կոնկրետ հարցերի, օրինակ, կոնվենցիայի դրույթների մեկնաբանման ու կիրառման, կամ էլ՝ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի օրինականության և վավերականության հետ կապված խորհրդատվական եզրակացություն տալու խնդրանքով:

Գաղտնիք չէ, որ միջազգային իրավունքի և հատկապես նրա նորմերի կիրառման վրա լուրջ ազդեցություն ունեն աշխարհաքաղաքական զարգացումները, տարածաշրջանային գործընթացները, միջազգային հարաբերություններում ուժերի վերադասավորումները և այլն: Այդ իսկ պատճառով Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման միջազգային իրավական գործընթացը պետք է լրջորեն նախապատրաստված ու ապահովագրված լինի դրան նախորդող ու դրա հետ զուգահեռ տարվող՝ քաղաքական գործընթացով: Քաղաքական գործընթացն, անշուշտ, իր մեջ պետք է պարունակի նաև գիտական և քարոզչական բաղադրիչներ:

Ամփոփելով նշենք, որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարումը դա միայն համայն հայության իրավունքների վերականգնումն ու Հայաստանի անվտանգության ապահովումը չէ: Չպետք է մոռանանք, որ դա նաև՝ մեր սրբազան պարտքն է Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակի առաջ:

Armen Marukyan (Armenia)

THE NECESSITY OF ADOPTION OF THE NEW CONCEPTION OF OVERCOMING THE CONSEQUENCES OF ARMENIAN GENOCIDE

Before taking any steps in the regard of overcoming the consequences of Armenian Genocide, Armenia and Diaspora must create the first large conceptual document “The consequences of the Armenian Genocide and the historical-legal basis of the package of demands to be presented to Turkey”, where it will be clearly registered what the Armenian people understand by saying the consequences of the Armenian Genocide and which demands they preparing to present to Turkey. Based on the “Package of Demands” that will be developed including also the strategic application of the document “Action plan of overcoming the consequences of the Armenian Genocide”, where the methods and mechanisms will be outlined, which will make it possible to achieve the eradication of the abovementioned consequences. The “Action plan” should be closed, with limited utilization in order not to have previous knowledge of the contents to prevent any of the steps to be taken in this regard.

Barlow Der Mugrdechian (USA)

THE THEME OF GENOCIDE IN TWENTIETH CENTURY ARMENIAN-AMERICAN LITERATURE

The Armenian Genocide has been a major theme in Armenian-American literature, primarily in the works of second and third generation writers. The catastrophic consequences of the Genocide, which left their imprint in virtually all areas of Armenian life, also had an impact on literature, as a major means of expression.

The representation of the Genocide in Armenian-American literature lead to a shift in an understanding of Armenian identity for Armenian-Americans authors. The protagonist(s) in each of the novels of late twentieth century authors has undergone a pronounced shift in ethnic identity, assuming a symbolic Armenianness¹.

The protagonists themselves face a paradox of identity, being born in America, but having to live within a family unit that seeks to perpetuate an Armenian identity. Their struggle to resolve the paradox is achieved through a change in identity, during the process of development from childhood to adulthood. Learning about the Genocide or the reception of the Genocide narrative from family, precipitates the resulting self-examination that leads to the changes in identity.

Such an influential event as the Genocide has been inscribed in Armenian-American texts, both symbolically and also as historical event as a discourse in some literary works, appearing as early as 1952 in Richard Hagopian's *Faraway the Spring*² and later in Peter Najarian's *Voyages* (1971)³.

The first-generation writers

Although the Genocide was a common experience, it was rarely expressed in the works of first-generation Armenian-American authors. Some Armenians writers were unable to reconcile with their past, to come to terms with it, to be able to express it in a literary sense. The repression of expression, the inability to express fully the Genocide, was partially a symptom of the pain suffered by the Armenians. The pain was caused by the continued policy of denial of the Genocide by the Turkish government, especially after 1975. This is a major factor why the Genocide as a theme in literature continues to appear even nearly a hundred years after the event.

English language Armenian-American writers

The inner struggle was what motivated the second and third generation Armenian writers, whose major challenge was how to fit into American life. By writing in English, they had broadened their audience and brought Armenian literature into the larger realm of American literature. The authors formed a crucial bridge between generations, as they had to also interpret the role the Genocide played in their parent's lives.

Nona Balakian reviewed authors who had written in English in her brief and interesting booklet *The Armenian-American Writer*⁴: Saroyan⁵, Leon (Levon) Z. Surmelian⁶, Richard Hagopian⁷, Emmanuel Varandyan⁸, Peter Sourian⁹, and Marjorie Housepian¹⁰.

The Second Generation Armenian Writers

¹ The concept of "symbolic identity" is based on the work on Herbert Gans, and later Anny Bakalian. I will use the concept of "symbolic Armenianness" to reflect the shift in Armenian-American literature of the twentieth century.

² Richard Hagopian, *Faraway the Spring* (New York: Scribner, 1952).

³ Peter Najarian, *Voyages* (New York: Pantheon Books, Random House, 1971).

⁴ Nona Balakian, *The Armenian-American Writer: A New Accent in American Fiction* (New York: Armenian General Benevolent Union, 1958).

⁵ Saroyan was born in Fresno, California in 1908, and lived his entire life in the United States. His early works, addressed many universal concepts, among them relations between people and attitudes toward war. It was only later in his life, in plays such as "The Armenians," "Bitlis," and "Haratch," that he began to explore the Armenian response to exile, especially the permanent exile of living in the United States. He had constructed mental images of Bitlis, where his parents had come from, but which he had never seen. For an excellent biography and discussion of Saroyan, see David Calonne, *William Saroyan: My Real Work is Being* (Chapel Hill: University of North Carolina Press, 1983).

⁶ See Surmelian's *I Ask You, Ladies and Gentlemen* (New York: E. P. Dutton, 1945) and *98.6* (New York: E. P. Dutton, 1950).

⁷ Hagopian, author of *Faraway the Spring* and *The Dove Brings Peace* (New York: Farrar and Rinehart, Inc. 1944), was one of the first of his generation to discuss some of the major issues facing the Armenians, such as reconciliation with the past and the question of identity in America.

⁸ See Emmanuel Varandyan's *The Well of Ararat* (Garden City: N.Y.: Doubleday, Doran, 1938). Varnadyan's novel reflects on an earlier period in Armenian history, on traditional village life.

⁹ See Peter Sourian, *Miri* (New York: Pantheon Press, 1957).

¹⁰ See Marjorie Housepian, *A Houseful of Love* (New York: Random House, 1957).

New generations of Armenians, who did not experience the misfortune of Genocide first-hand, utilized themes from the larger literary world, but also returned to the Genocide. They struggled to come to grips with a past which was very far away in space and time, but which they encountered in their own families.

So much was lost in the Armenian Genocide—family, homes, businesses, cultural monuments—but it was perhaps the enormous loss of cultural transmission that has been the most difficult to recover and the first step in recovery has to be a return to history.

The many varied responses to the Genocide also constrain the various forms of construction of identity for the Armenians. Armenians reacted differently to the trauma that they had endured. Some chose not to speak of their experiences, to “protect” their children from reliving the events. Michael Arlen, Jr.’s *Passage to Ararat*¹¹, is such an example, where Arlen, Jr. must embark on a journey of self-discovery, to recover the past and to recover and understand the pain of his father, so that he makes sense of himself and can forge his own identity.

Every generation must interpret and reinterpret the past to make their contribution to society and literature is a way to come to terms with the trauma suffered by these earlier generations. Literature becomes one way to “make sense” of those events, and also to gain a new sense of identity.

The authors that I will discuss share a common search for ethnic identity. Their works provide a means to plumb the depths of their own identity, through the characters that they present. It is the dilemma of the immigrant, who must face the question of identity from two perspectives—from that of his home and that of his adopted home.

Examples from the literary works of the late twentieth century will indicate the large role that the Genocide has in Armenian-American literature.

Peter Balakian

Peter Balakian’s 1997 *Black Dog of Fate* is a novel about the author and his interactions with family and friends, from childhood to adulthood. Genocide is a central theme, and the effect that it had not only on the author’s family but also on the inner world of the author.

The locus for the Armenian identity is Balakian’s *Black Dog of Fate* is his maternal grandmother, Nafina Aroosian, who represents Armenia, in its real tangible meaning. The interrelationship between grandmother and grandson in the early sections of the novel are crucial in the young Balakian’s development of self-awareness as an Armenian. The grandmother is a bridge between two worlds, the old and the new, and she can understand not only her own world but the new one of the young man.

The Genocide is a “collective symbol”¹² which binds Armenians together. For Balakian, the knowledge gained of the Genocide brings with it a sense of empowerment and self-awareness, of his *place* in his community and in society at large.

The Genocide also plays an important role towards the end of the book, as Balakian learns details about it and how it had an immediate and enduring impact on his own family. However the Genocide is embedded in the text from beginning to end and even when it is not expressed explicitly, its impact is felt.

Peter Najarian

The Genocide is also a primary theme in Peter Najarian’s 1986 *Daughters of Memory*¹³, a vital voice in Armenian-American literature. Najarian’s novel represents a significant change in content, style, structure, and language from earlier works. For Peter Najarian the Genocide is living with him in the person of his mother, Zarouhe. She is open and direct about the history that she endured and he is constantly aware of the Genocide in her conversations, especially with her friends. The Genocide is expressed, as one of the two main characters, Melina, is a survivor and the mother of the other main character, Zeke. Zeke’s grandmother, who died in the Genocide, an unseen presence throughout the novel, is an ever-present locus of his search.

The Genocide is a locus for the discourse that takes place in the novels, and the core of Najarian’s works revolves around the concept of integrating second and third generation Armenians in America with their past. He is attempting to resolve the generational difference, to bridge the gap between the immigrant generation and those who followed, and have become acculturated.

¹¹ Michael J. Arlen, *Passage to Ararat*, (New York: Farrar, Straus & Giroux, 1975).

¹² Shirinian, *Armenian-North American Literature-A Critical Introduction Genocide, Diaspora, and Symbols* (Lewiston, NY and Queenston, Canada: The Edwin Mellen Press, 1990), pp. 91-118.

¹³ Peter Najarian, *Daughters of Memory*, (Berkeley: City Miner Books, 1986).

Micheline Aharonian Marcom

Micheline Aharonian Marcom's 2001 *Three Apples Fell From Heaven*¹⁴ revolves around a family living in historic Armenia and then follows them through the horror of the Genocide. The main protagonist is Anaguil, whose story concludes with her survival and later life in Beirut. Marcom's spare yet evocative prose draws the reader into a world of the real and the remembered. The novel captures the memories and life experiences of an Armenian family living in Kharpert, historical Armenia, during the late Ottoman Turkish period (early twentieth century), on the eve of the Genocide. She begins her novel in a web of memory and history, outlining the early beginnings of Armenian history, but also touching upon the Genocide. Marcom attempts to make sense out of that which is incomprehensible, an event, the Genocide, which has left a deep impression in the lives and psyches of the Armenians. It is an event that is still being examined and studied in order to understand its widespread impact on the Armenians.

The Genocide remains empty, without form and substance, a place where there are no longer any people. *Three Apples Fell From Heaven* often has the feeling that all of the people are gone and that there is no way to bring them back, to reclaim their humanity, except through memory. The Genocide was a rupture between the past and the present.

Three Apples Fell From Heaven is a deeply affective portrait, where readers develop an image of events long gone. *Three Apples Fell from Heaven* moves the reader with its depth of language and style, in its ability to find and to express the very essence of the emotions from this tragic period in Armenian history.

Nancy Kricorian

Nancy Kricorian 1998 *Zabelle*¹⁵ is a novel based on Genocide and family, one that covers three generations and their interactions. The Chahasbanian family struggles against societal forces and their eventual assimilation into the larger American society. The main protagonist is Zabelle, a Genocide survivor, who must deal with its impact in relations with her own children.

Kricorian is a third generation writer whose work can be placed in the group of authors whose works have been heavily influenced by the Armenian Genocide. Her work is not a history, nor is it a memoir, but is a way to recreate memory, both at the individual and collective levels. Kricorian must delve into her grandmother's world in order to be able to make sense of her own life and identity, and to make sense of the Genocide.

David Kherdian

David Kherdian's *Asking the River* is a novelette by one of the most prolific of Armenian authors writing in English in America.¹⁶ His work captures the Armenian experience in America and the difficult adjustments required to come to terms with life in America. Along with his other works, it explores the impact of the Genocide, and how that theme became extremely important for later writers.

Armenian-American authors have continued to incorporate themes of Genocide into their literature even as their own self-conception of identity is changing. The authors are still exploring their memories and how this has affected their identity. The Genocide is a recurrent theme inscribed especially in the genre of the novel and is reflected in the literary discourse that dominates English language writing.

Տէր Սկրտիչեան Պարլօ (ԱՄՆ)

ՅԵՂԱՍՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԵՍԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ՀԱՅ - ԱՍԵՐԻԿՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԷՋ

Յեղասպանութիւնը մեծ ազդեցութիւն թողած է հայ-ամերիկեան գրականութեան վրայ, մանաւանդ երկրորդ կամ երրորդ սերունդի գրողներուն՝ որոնք անգլերէնով կը գրեն:

Գրողները իրենց գործերուն մէջ անդրադարձած են ինքնութեան հետ կապուած հարցերուն շուրջ, առաջնորդելով անոնց դէպի հայկականութեան նոր հասկացողութիւն: Իրենց գործերուն մէջ արձանագրուած են ցեղասպանութեան, յիշողութեան եւ ինքնութեան թեմաները:

Գրողները որոնք պիտի ուսումնասիրուին՝ Բեթըր Պալաքեան, Բեթըր Նաճարեան, Նենսի Գրիգորեան եւ Դաիթ Խերտեան:

¹⁴ Micheline Aharonian Marcom, *Three Apples Fell From Heaven* (New York: Riverhead Books, 2001).

¹⁵ Nancy Kricorian, *Zabelle* (New York: Atlantic Monthly Press, 1998).

¹⁶ David Kherdian, *Asking the River* (New York: Orchard Books, 1993).

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐԲԱԿԱՆ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ (1945-1947 ԹԹ.)

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի վարած հակախորհրդային քաղաքականությունը պատերազմի ավարտից հետո հանգեցրում է խորհրդա-թուրքական հարաբերությունների վատթարացման: Արդյունքում ԽՍՀՄ-ը չեղյալ հայտարարեց 1925 թ. խորհրդա-թուրքական պայմանագիրը և Թուրքիայի առջև իր պայմաններն առաջ քաշեց. վերանայել ինչպես սևծովյան նեղուցների վերաբերյալ Մոնտրոյում սահմանված ռեժիմը, այնպես էլ ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև եղած սահմանը: Այսինքն, վերադարձնել Կարսը և Արդահանը: Հայկական տարածքների պահանջատիրության հարցը քննարկման թեմա է դառնում ինչպես թուրքական, այնպես էլ արևմտյան մամուլում:

Թուրքական մամուլը, որը պատերազմի տարիներին աջակից է եղել իր կառավարության հակախորհրդային քաղաքականությանը, 1945-1947 թթ. միահամուռ քիկունք է կանգնել կառավարության որդեգրած տարածքային ամբողջականության պահպանման քաղաքականությանը: Հուսեին Ջահիդ Յալչնը՝ «Թամին»-ում, Յունուս Նադիրը՝ «Ջումհյուրիեթ»-ում բացեիքաց արտահայտում էին հակախորհրդային և հակահայկական գաղափարներ:

Թուրքական մամուլը այս խնդրին առաջին անգամ անդրադարձել է 1945 թ. հունիսին: Ավելին՝ նկատենք, որ Անկարայում գտնվող խորհրդային դիվանագետների գնահատմամբ՝ 1945 թ. Թուրքիայում սկիզբ առած հակախորհրդային գործողությունների մեկնարկը տվել է հունիսի 22-ի Յալչինի հոդվածը¹: Դեսպանատան աշխատակիցները Ս. Քավթարաձեին տեղեկացրել են, որ ԽՍՀՄ-ի դեմ սկսված քարոզարշավը հրահանգվում էր Թուրքիայի ղեկավարության կողմից, նշելով, որ թուրք լրագրողներ Յալչինը և Սադակը Անկարա են հրավիրվել և առնձնագրույց ունեցել երկրի նախագահ Ի. Ինյունյուի հետ²:

Հունիսի 22-ի «Ֆաշիզմը, որ կարմիր գույն ունի» խորագրով հոդվածում Յալչնը գրում էր. «Մոսկվայի ձայնը այսօր ուղղված է ուղիղ մեզ և ասում է. «Եթե ուզում ես բարեկամս լինել, ապա պետք է ինձ հոգիդ տաս», այսինքն՝ Կարսը, Արդահանը, Արդվինը, նեղուցները, որոնք մեր պատիվը, անկախությունը և հոգին են»³: Հատկանշական է, որ թերթերում հրապարակված այս թեմայի շուրջ բոլոր հոդվածները ունեին նույն բովանդակությունը և, կարծես թե, «չափված ու ձևած էին նույն ձևով»:

1945 թ. դեկտեմբերին վրացի ակադեմիկոսների վրացիների տարածքային պահանջին վերաբերող նամակի հարապարակումից հետո խորհրդա-թուրքական հարաբերությունները էլ ավելի են լարվել: Դեկտեմբերի 21-22-ին «Թամին» թերթը հրատարակել է երկու հոդված՝ «Հայկական հարցը» ու «Այժմ էլ վրացիները...» վերնագրերով⁴: Առաջին հոդվածում թուրքական կողմը գրում էր, որ այսօր նման հարց գոյություն չունի, քանի որ այդ տարածքներում հայեր չեն ապրում, իսկ երկրորդում՝ վստահեցնում էր, որ վրացիների հետ երբեք հողային խնդիր չեն ունեցել⁵:

1945-1947 թթ. թուրքական թերթերը հետևողական լինելով իրենց կառավարությանը պնդում էին, որ Կարսն ու Արդահանը 1921 թ. Թուրքիային է անցել իրավականորեն, քանի որ մինչև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը այս տարածքները պատկանել են օսմանյան Թուրքիային, իսկ 1878 թ. դրանք տրվել են ցարական Ռուսաստանին: Խորհրդային Ռուսաստանը վերադարձնելով այդ տարածքները, ըստ իրենց՝ վերականգնել է արդարությունը: Իսկ ինչ վերաբերում է խորհրդա-թուրքական սահմանին, ապա թուրքական կողմը հիշեցնում էր, որ այն գծվել է համաձայն Մոսկվայի և Կարսի պայմանագրերի⁶: Բացի այդ, ներկայացնենք ֆրանսիական մամուլում տեղ գտած մի դիտարկում ևս. «Ֆրանս - Պրես» գործակալության լրագրողներից Անդրե Կլոն հետևելով 1945-1946 թթ. թուրքական մամուլին հանգել է այն եզրակացության, որ թուրք գործընկերների մոտ Կարսի և Արդահանի խնդրի հետ կապված ձևավորվել է երեք տեսակետ.

- Խորհրդային Միությունը նպատակադրվել է Թուրքիայից խլել 8 շրջաններ,
- ԽՍՀՄ-ը պահանջում է շատ տարածքներ՝ այդ կերպ ցանկանալով վերցնել դրա մի մասը,

¹ Հայաստանի Ազգային արխիվ, ֆ. 326, ց. 1, գ. 213 (Թուրքիայի ՍՄՀՄ դեսպանատան ռեֆերենտի տեղեկանքները «Խորհրդային Միության պահանջների հետ կապված թուրքական մամուլի արձագանքների մասին»), ք. 16:

² Նույն տեղում:

³ Ch. Vertanes, *The Armenian question today*, New York, «Armenian National Council of America», 1946, p. 21.

⁴ «Արևմուտք» (Փարիզ), 24. XII. 1945: «Լրաբեր» (Նյու Յորք), 26. XII. 1945:

⁵ Նույն տեղում:

⁶ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Обзор турецкой прессы, февраль-июнь, Об отношениях между Турцией и СССР, 1946, с. 1-2.

- ԽՍՀՄ-ը ներկայացնելով այս պահանջները հույս ունի այլ պահանջներում հաջողության հասնել, հիմնականում խոսքը գնում է նեղուցների մասին⁷:

Նկատենք, որ հակախորհրդային բովանդակությամբ հոդվածների թուրքական մամուլում կարելի է հանդիպել նաև հետագայում: Թերթերով հետպատերազմյան թուրքական թերթերը այն տպավորությունն է ստեղծվել, որ 1945-1947 թթ. վերջիններիս առաջնային խնդիրն էր վարկաբեկել ԽՍՀՄ-ին և երկու երկրների հարաբերություններում նկատվող լարվածությունը էլ ավելի սրել:

Բացի այդ, թուրքական մամուլի հետ համատեղ արևմտյան պարբերականները ևս մեծ տեղ են հատկացրել Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած տարածքային պահանջատիրության խնդրին: Թերթերով խնդրո առարկա հարցում արտասահմանյան մամուլը նկատում ենք, որ այստեղ գերակշռող էին Թուրքիայի շահերը պաշտպանող հոդվածները, ինչպես նաև դրանցում հիշատակվում էին Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ իրականացված ջարդերը:

Ամերիկյան մամուլը ժամանակ առ ժամանակ իր էջերում տպագրված նյութերում՝ անդրադառնալով ԽՍՀՄ-ի Թուրքիային ներկայացրած տարածքային պահանջներին, մի կողմից փորձում էր հիմնավորել, որ դրանք ընդամենը Մոսկվայի ծավալապաշտական ծրագրի մի մասն են կազմում, միաժամանակ մյուս կողմից էլ խոսում էր հայերի արդարացի պահանջի մասին: 1945 թ. օգոստոսի 7-ին «Նյու Յորք թայմս»-ում խնդրո առարկա թեմայի շուրջ հրատարակված հոդվածը դատապարտում էր ԽՍՀՄ-ի քաղաքականությունը, սակայն միաժամանակ գրում, թե Խորհրդային Միության կողմից Կարսի և Արդահանի պահանջը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ տարածքները հայկական են⁸: Մի քանի ամիս անց էլ՝ դեկտեմբերի 22-ին ամերիկացի ռադիովերլուծաբան Ռ. Ստիլլը իր հաղորդման ընթացքում ևս հայտարարել էր, որ ԽՍՀՄ-ի պահանջները պատմական, ազգագրական և քաղաքական տեսանկյունից արդարացի են, քանի որ դրանք հայկական են⁹: Ամերիկյան կողմը քննադատության էր ենթարկել 1946 թ. հունվարի 6-ին Թուրքիայի մեջլիսում վարչապետ Շ. Սարաջօղլուի ունեցած ելույթը, որում հայտարարել էր, թե «Կարսում և Արդահանում ոչ մի հայ չի ապրում և այդ պատճառով դրանք հայկական չեն կարող լինել»¹⁰: Դրան ի պատասխան, մեկ ամիս անց՝ փետրվարի 6-ին «Նյու Յորք թայմս»-ում հրապարակվել էր պրոֆ. Վ. Խվոստովի նամակը, որտեղ նա փորձում էր Սարաջօղլուից պարզել, թե արդյոք թույլատրելի է մեկ ազգ բնաջնջել, որպեսզի տիրեն նրա հողին¹¹: Մեկ ամիս անց՝ 1946 թ. մարտի 6-ին, ռադիովերլուծաբան Ռեկսա Միլերը խոսելով հայկական տարածքների մասին, նշել է. «Ես ինքս եմ ակնառես եղել հայերի տառապանքներին և մասնակցել եմ նրանց ազատագրման գործողություններին, – ասել է նա: Առաջին համաշխարհային պատերազմից հետո թուրքերը, օգտվելով ստեղծված իրավիճակից, Հայաստանի նկատմամբ ռազմական գործողություններ են ծավալել և իրենց են կցել անկախ Հայաստանի մի մասը: Դժբախտաբար, իրականություն է թուրքերի այն պնդումը, որ այդ տարածքներում ոչ մի հայ չի ապրում, սակայն իրականություն է նաև այն, որ տեղի հայ բնակչությունը կոտորվել է թուրքերի կողմից»¹²: Ըստ նրա՝ ամերիկյան կառավարությունը պետք է աջակցի Խորհրդային Միությանը հայկական հողերի վերադարձման հարցում:

Ինչ վերաբերում է բրիտանական մամուլում տեղ գտած հոդվածներին, ապա նկատենք, որ դրանք այնքան էլ չէին տարբերվում ամերիկյանից: Այդ նյութերում ևս նպատակապես կերպով փորձ էր արվում հիմնավորել, որ ԽՍՀՄ-ի պահանջներն ընդհամենը նրա ծավալապաշտական ծրագրի մի մասն են կազմում: 1945 թ. դեկտեմբերի 20-ին, բրիտանական «Էկոնոմիստ» թերթը «Կովկասի շախմատային տախտակը» վերնագրով հոդվածում, տարածաշրջանում ԽՍՀՄ-ի վարած քաղաքականությանը և Թուրքիային ներկայացրած տարածքային պահանջատիրությանը հետևյալ գնահատականն է տվել. «Խորհրդա-թուրքական սահմանը գծվել է Լենինի և Մուստաֆա Զեմալ փաշայի միջև ընթացած ազատ բանակցությունների արդյունքում»¹³: Միաժամանակ հոդվածագիրը կարևորել է հայկական գործոնը և նկատել, որ թուրքերին դժվար է դիմակայել արտերկրում ապրող հայերի՝ Մեծ Հայաստան ստեղծելու պահանջին: «Գործի ուժեղ կողմը տարածքները հայերի անունից պահանջելն է, քանի որ դրանք վերջիններիս պատմական հողերն են: Իսկ թույլ օղակն այն է, որ այս տարածքներում այլևս հայեր չեն ապրում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նրանց տեղահանել են իրենց բնակավայրերից, որն էլ ընթացել է հայերի կոտորածներով», – գրում էր «Էկոնոմիստ»-ը¹⁴: 1945 թ.

⁷ «Ժողովուրդ» (Փարիզ), 25. XII. 1946:

⁸ «New York Times» (New York), 7. VIII. 1945.

⁹ *Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг.* // Под редакцией А. Киракосяна, Ер., изд. «Тигран Мец», 2010, с. 164-165..

¹⁰ *Armenian Claims in the light of documents, Memorandum submitted to the United Nations organization meeting in London*, January 10, 1946, Alexandria, «Armenian National Council-Alexandria», 1946, p. 6.

¹¹ «New York Times», 6. II. 1946.

¹² *Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг.*, с. 169.

¹³ «The Economist» (London), 20. XII. 1945.

¹⁴ Նույն տեղում:

հուլիսի 24-ին «Թայմս» պարբերականը խնդրո առարկա հարցին հետևյալ կերպ է արձագանքել. «Այդ տարածքային պահանջ հանդիսանում է ԽՍՀՄ-ի ընդհանուր քաղաքականության մի մասը, որի նպատակն է կրկին Ռուսաստանին միավորել թույլ ժամանակ Թուրքիային զիջած տարածքները»¹⁵: Ըստ թերթի՝ այդ հոդերը ոչ մի նշանակություն չունեն ոչ Ռուսաստանի, ոչ էլ Թուրքիայի համար, դրանք մեծ կարևորություն ունեն միայն հայերի համար, որոնք Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքերի կողմից տեղահանվել ու կոտորվել են¹⁶: Նույն թվականի փետրվարին «Նեյշնլ Ռեվյու» պարբերականն էլ հրատարակել էր «Ռուսաստանը և Մենք» խորագրով հոդված, որում անդրադարձել է ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականությանը և խորհրդա-բրիտանական հարաբերություններին: Հոդվածագիրը փորձում էր պարզաբանել, «թե ինչու էլ պայմանավորված ԽՍՀՄ-ի կողմից հայկական տարածքների ձեռք բերելու ձգտումը»: Ըստ նրա՝ չնայած այս շրջաններն ունեն ռազմավարական կարևոր նշանակություն, սակայն Ռուսաստանի նպատակն այլ է. պաշտոնական Մոսկվան ձգտում է ցույց տալ իր առավելությունն Անկարայից¹⁷: Հետաքրքիր է, որ, չնայած մամուստիպ հայտարարություններին, բրիտանական պարբերականները չէին հերքում, որ խոսքը հայկական տարածքների մասին է:

Ֆրանսիական մամուլը, ի տարբերություն ամերիկյան և բրիտանական պարբերականների, խնդիրն այլ տեսանկյունից է դիտարկել: 1946 թ. մարտի 19-ին «Ֆիգարո» թերթը մի հոդված է տպագրել, որում ֆրանսիացի հայտնի դիվանագետ Անդրե Ֆրանսուա Պոնսեն պնդում էր, որ Խորհրդային Միությունը ձգտում է իր գերիշխանությունը հաստատել միջերկրական ավազանի տարածաշրջանում և դրան հասնելու ճանապարհներից մեկն էլ համարում է Կարսի և Արդահանի պահանջը¹⁸: Մեկ օր անց էլ «Հյուսնիտե» պարբերականը, ի պատասխան «Ֆիգարո»-ի հոդվածի, մի նյութ է հրապարակել, որում հայտարարել է, որ իրականում, «Կարսի և Արդահանի խնդիրը արդիական է: Դրանում ԽՍՀՄ-ը նվաճողական ոչ մի ծրագիր չի հետապնդում: Չէ՛ որ ոչ մի ֆրանսիացի իրեն թույլ չի տա Էլզասը և Լոթարինգյան հիշատակելով՝ օգտագործել «նվաճել» կամ «միացնել» արտահայտությունները, այլ, ընդհակառակը, կասի՝ վերադարձնել Մայր Հայրենիքին: Եվ այնպիսի նշանավոր դիվանագետ՝ ինչպիսին Անդրե Ֆրանսուա Պոնսեն է, պետք է իմանա, որ Կարսը և Արդահանը Հայաստանի անբաժանելի մասն են կազմում»¹⁹: Հոդվածում պատմական ակնարկով անդրադարձ կա նաև հայերի նկատմամբ թուրքերի իրականացրած կոտորածներին: Ազգային փոքրամասնությունների պաշտպանությամբ հանդես եկող պետությունները փորձում են այդ փաստերը մոռացության մատնել. ահա հոդվածագրի եզրակացությունը: «Մարսեյեզ» թերթում էլ «Հայերը և նրանց պահանջները» խորագրով հոդվածաշար է տպագրել Անրի Վերնեյը: Պատմական, աշխարհագրական և ազգագրական տվյալներով, նա հիմնավորել է, որ հայերի պահանջն արդարացի է: Ա. Վերնեյը գրել է. «Տարածքի 70 %-ից ավելին, որ իրավականորեն ճանաչվել է հայկական, մնացել է Թուրքիայի տիրապետության տակ, իսկ տեղի հայ բնակչության մեծ մասը Առաջին աշխարհամարտի տարիներին կոտորվել է թուրքերի կողմից ... կես միլիոն հայեր էլ այսօր ցրված են աշխարհով մեկ»²⁰: Ի դեպ, հոդվածների այս շարքը թարգմանվել է հայերեն և տպագրվել Փարիզում լույս տեսնող «Ժողովուրդ» թերթում:

1946 թ. դեկտեմբերի 27-ին ֆիննական «Հուլիոստատադսբլադետ» թերթն էլ անդրադառնալով խնդրո առարկա թեմային, գրում էր, որ հայերը լուրջ պատճառներ ունեն նման երազանքների համար, քանի որ դեռևս չի մոռացվել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին վերջիններիս նկատմամբ թուրքական կառավարության իրականացրած կոտորածները²¹: Նորվեգական «Արբեյդերբլադետ» պարբերականն իր հերթին գրում էր. «Թուրքերը պետք է շատ զգույշ լինեն իրենց պատճառաբանություններում: Հայերի նկատմամբ թուրքերի դաժան հետապնդումը հիմք հանդիսացավ նացիստների համար՝ իրենցիկ դեմ գազանություններ իրականացնելիս»²²:

Այսպիսով, արձանագրենք. դիտարկելով խնդրո առարկա ժամանակահատվածում թուրքական և արևմտյան առաջատար պարբերականներում հայկական տարածքների պահանջատիրությանը վերաբերող հոդվածները՝ հանգում ենք այն եզրակացության, որ դրանցում հիմնականում արտահայտվել է տվյալ երկրի պաշտոնական դիրքորոշումը: Եթե թուրքական մամուլը Հայկական հարցին վերաբերող հոդվածներով նախ և առաջ ձգտում էր երկրում ձևավորել հակախորհրդային և հակահայկական հասարակական կարծիք, ԽՍՀՄ-ին մեղադրելով իր երկրի սահմանները իրենց տարածքների հաշվին ընդարձակելու մեջ, ապա արևմտյան պարբերականները ոչ միայն մեղադրում էին մամուստիպ ծրագրեր իրականացնելու մեջ: Այլև դրա հետ մեկտեղ չէին հերքում այն փաստը, որ խոսքը գնում է հայկական հողերի մասին և շատ հաճախ թուրքական իշխանություններին հիշեցնում էին Օսմանյան

¹⁵ «The Times» (London), 24. VII. 1945.

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ *Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг.*, с. 168.

¹⁸ «Le Figaro» (Paris), 19. III. 1946.

¹⁹ «L'Humanité» (Paris), 20. III. 1946.

²⁰ «La Marseillaise» (Paris), 9. III. 1946.

²¹ *Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг.*, с. 168.

²² Նույն տեղում:

կայսրության տարածքում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի նկատմամբ իրականացված ոճրագործությունները: Յավալին, սակայն այն է, որ հայկական գործոնի հիշատակումը էական որևէ դեր չի խաղացել. հարցը, միշտ անտեսվել է՝ ի նպաստ Մեծ տերությունների շահերի:

Christine Melkonyan (Armenia)

TURKISH AND WESTERN PRESS ABOUT THE PROBLEM OF THE ARMENIAN TERRITORIAL CLAIMS

The Second World War yet has not ended, but the Soviet Union has already undertaken serious diplomatic steps in relation to Turkey. On 19 March 1945, the Soviet Union advised Turkey that the USSR was unilaterally withdrawing from the 1925 Soviet-Turkish Treaty of Friendship and Neutrality. When the Turkish government enquired on what conditions a new agreement could be concluded, it was informed by USSR that in addition to bases in the Straits, the Soviet Union claimed the Armenian territories of Kars and Ardahan that were Russian territories since 1878 and were to given Turkey in 1921. Soviet demands to join the Soviet Armenia Armenian lands are reflected in the pages of Turkish and western press. As expected, the Turkish press on this issue took anti-Soviet stance. The Western press is often very unfriendly to the Soviet Union in some way recognized the validity of the Armenian territorial claims and therefore justified the Soviet Union's policy towards Turkey.

Վերա Սահակյան, Վազգեն Պողոսյան (Հայաստան)

ԹՈՒՐԹԻԱՅԻ «ՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ» ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

18-րդ դարից սկսած համաշխարհային պատմության մեջ քրիստոնյա բնակչության նկատմամբ մեծ թափ առած հետաքրքրությունները պայմանավորված էին հզորացող պետությունների շահադիտական նկատառումներով: Օսմանյան կայսրությունը ստեղծվել էր հիմնականում հայերից և հույներից զավթված հողային տարածքների վրա: Իրենց պատմական հողերի վրա ապրող ոչ մուսուլման բնակչության իրավական վիճակի վերաբերյալ քննարկումներն ու միջամտությունները 18-րդ դարից սկսած ամրագրվեցին իրավական արժեք ունեցող միջազգային պայմանագրերով: Այսպիսով, առաջին միջազգային պայմանագիրը, որն անդրադառնում է հպատակ քրիստոնյա բնակչությանը՝ 1699թ. հունվարի 26-ին կնքված Կարլովֆյայի պայմանագիրն է¹ (Карловицкий мир) կնքված Ավստրիա, Լեհաստան, Վենետիկ և Օսմանյան կայսրության միջև: Ռուսաստանի հզորացմամբ պայմանավորված կայսրությունը երկրորդ անգամ՝ 1774թ., Բուխարեստի պայմանագրով² կնքում է հաշտության պայմանագիր, որը դարձյալ անդրադառնում է քրիստոնյաների իրավունքներին: Պայմանագրի յոթերորդ հոդվածի համաձայն՝ «Բարձր դուռը խոստանում էր ամուր պատվար լինել քրիստոնեական հավատքին և նրա եկեղեցիներին»: Սակայն այս և հետագա կնքված բազում պայմանագրեր իրականում չէին գործադրվում, իսկ քրիստոնյա բնակչության հպատակ լինելու հանգամանքը իրենց շահերի համար շարունակում էին օգտագործել հզորացող տերությունները:

Կնքված միջազգային պայմանագրերից զատ կայսրության գերիշխանության ներքո գտնվող քրիստոնյա կամ ոչ մուսուլման բնակչության իրավական, տնտեսական, սոցիալական, բարոյական և քաղաքական կարգավիճակների վերաբերյալ համապարփակ ուսումնասիրությունները աղբյուրների սակավաթիվ լինելու պատճառով խիստ դժվար են: Այս խնդիրների վերաբերյալ տեղեկությունները շատ հաճախ մեզ են հասել փոփոխված, կեղծված տարբերակներով: Գրեթե միշտ քրիստոնյաների, իսկ առավել ևս նրանց ազգային պատկանելիության վերաբերյալ բերված տեղեկությունները հեռու են ամբողջական և ճշգրիտ լինելու իրողությունից: Օրինակ Էլքը Հարթմանը իր «Հաւատարիմ ազգ ու անոր երեսփոխանները» հոդվածի մեջ, խոսելով հայ խորհրդարանում հայ երեսփոխանների թվաքանակի և նրանց անունների մասին, գրում է, որ խորհրդարանի անվանացանկին հետևելով առաջին նստաշրջանին մասնակցել են տասնմեկ հայեր, իսկ երկրորդ նստաշրջանին՝ ութ: Սակայն ցանկը հեղինակը կատարյալ չի համարում, հավելելով, որ Տեվերեոնը իր հերթին օգտագործելով զանազան հավելյալ աղբյուրներ մի նոր անվանացանկ է պատրաստել, որի մեջ մտած անունները չեն նշվել պաշտոնական

¹ <http://www.vostlit.info/Texts/Dokumenty/Austria/XVII/1680-1700/Rusdok1/framepred.htm>

² <http://www.hist.msu.ru/ER/Etext/FOREIGN/kuchuk.htm>, М., Русская книга, 1992., С. 82

ցանկի մեջ³: Նման օրինակները բազում են, իսկ ուսումնասիրողները, ովքեր փորձում են ամբողջացնել տարաբնույթ ցուցակներ կամ հավելյալ տեղեկություններ են հաղորդում քրիստոնյաների մասին հենվում են կողմնակի այլ աղբյուրների վրա. Օսմանյան կայսրությունում հյուպատոսական ծառայություն կատարած բարձրաստիճան դիվանագետների հուշագրություններ, այլ երկրներում պահվող արխիվային նյութեր, վականյուվիսների գրառումներ և այլն:

Քրիստոնյա բնակչության կենցաղավարության, ծիսակարգերի, ազգային, պատմական և այլ մանրամասների մասին հսկայական տեղեկություններ են պարունակում նաև ձեռագիր մատյանների հիշատակարանները, որոնք ուսումնասիրության առանձին և չափազանց կարևոր մաս են կազմում:

Չնայած Թուրքիայի Հանրապետությունը բազմիցս պաշտոնական հայտարարություններ է արել այն մասին, որ իրենց արխիվները բաց են, և ուսումնասիրողները կարող են կատարել իրենց հետազոտությունները, սակայն, իրական պատկերն այդպիսին չէ: Այս փաստաթղթերի ուսումնասիրությունը ազատ չէ: Այն մասնագետները, որոնք թույլտվություն են ստանում ուսումնասիրելու Թուրքիայում պահվող փաստաթղթերը, ունենում են մեծ դժվարություններ, իսկ ընձեռված հնարավորության դեպքում հետազոտողներին է տրամադրվում մի քանի անգամ արդեն թուրք մասնագետների կողմից գտված փաստաթղթեր: Ավելին, արխիվային փաստաթղթերի հիման վրա բացված սոցիալական կայքերը Հայաստանի և հայ ուսումնասիրողների համար բացարձակ փակ են: Մենք անձամբ հետևել ենք այս էջերի աշխատանքին և մերժում ստացել: Ընդ որում մերժումները վերաբերում են թե ձեռագրագիտական և թե պատմական փաստաթղթերին: Անդրադառնալով նաև այն կարևոր խնդրին, որ ցայսօր Թուրքիայում պաշտոնապես հայերին չի թույլատրվում օգտվելու իրենց սեփականության իրավունքներին վերաբերող փաստաթղթերից (Tapu Belgeler), ուստի, նման դեպքում արխիվների բաց լինելու մասին հայտարարությունները բոլորովին չեն համապատասխանում իրականությանը:

Չեռքի տակ ունենալով Թուրքիայի «Վարչապետության հանրապետական արխիվի» փաստաթղթերից մի քանի օրինակ, մենք ձեռնամուխ եղանք դրանց ուսումնասիրությանը: Այս մի քանի տասնյակի հասնող փաստաթղթերի մեջ առկա էին Մուսթաֆա Քեմալի կողմից ստորագրված լքյալ գույքերի պետականացման կամ թուրքական համայնքներին (türk ocakları) փոխանցելու մասին որոշումներ⁴, թուրքական հատուկ ծառայությունների կողմից կատարված կրոնական և այլ ազատություններ սահմանափակող հետախուզական աշխատանքների մասին գրություններ, հայկական պարբերականների փակման վերաբերյալ հրամանագրեր, չնայած Լոզանի դաշնագրի առկայության՝ երկրից բռնի տեղահանվածների ետ վերադարձն արգելող հրամանագրեր և որոշումներ և այլն: Հայերի սոցիալական և քաղաքական իրավիճակի բացարձակ ոտնահարում ենք նկատում կառավարական որոշումների ու հրամանագրերի մեջ, որոնցում մազապուրծ փրկված հայությունը գրկվում է հայրենիք վերադառնալու արդար իրավունքից. «Նախքան Լոզանի պայմանագիրը, այն անձինք որվեր լքել էին Թուրքիան, ոչ մի կերպ չէին կարող ետ ստանալ իրենց ունեցվածքը: Թուրքիան այս ճանապարհը փակել էր, քանի որ Լոզանի պայմանագիրը մեկնաբանել էր հետևյալ կերպ. եթե անձը գոյություն ունի, ուրեմն կարող է ետ ստանալ իր ունեցվածքը: Իսկ պայմանագրի ուժի մեջ մտնելուց առաջ և հետո, այն հայերը, ովքեր ցանկանում էին իրենց ունեցվածքին տեղ կանգնել և այդ նպատակով վերադառնում էին Թուրքիա, նրանց համար մուտքն արգելվելու էր: Նրանք, ովքեր փորձում էին մուտք գործել երկիր՝ ունեցվածքի նկատմամբ իրենց իրավունքները ներկայացնելու նպատակով, նրանց մուտքն առհասարակ արգելվում էր: Ովքեր կարողանում էին ինչ-ինչ ճանապարհով սողոսկել երկիր՝ նրանց հայտնաբերում էին և ետ վերադարձնում⁵:


Բացի այդ, Լոզանի դաշնագրի ստորագրումից մի քանի շաբաթ առաջ հրապարակված 1923 թվականի հուլիսի 28-ի 2559 թվակիր որոշմամբ⁶, արգելվում էր նաև երկրից դուրս գտնվող անձանց՝ լիազորագրի միջոցով, իրենց ունեցվածքի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրականացումը: Ինչպես Լոզանի գործընթացին հետևելու ընթացքում այնպես էլ դաշնագրի կնքումից հետո, Թուրքիան իրագործում էր երկրի ներսում եղող հայերին դուրս վռնելու նպատակով տարվող սխառեմատիկ մի գործընթաց: Եթե ցեղասպանության համար Թուրքիայի գտած արդարացումը մեկնաբանվում է համաշխարհային պատերազմի գործոնով, ապա այս ինչպես նաև 1929-30 թթ. պարտադիր արտագաղթի պարագայում Թուրքիան ոչ մի բացատրություն չունի:

³ **Էլքը Հաքքմանն**, Հաատարիմ ազգը ու անոր երեսփոխանները, Հայերը Օսմանեան առաջին խորհրդարանին մէջ, Տաքեի հայագիտական տարեգիրք, Հայեպ 2008թ., էջ 146:

⁴ BCA 272 12 53 124 34, BCA 030 18 01 01 09 26 16, BCA 030 18 01 01 012 73 17, BCA 010 0 18 01 01 12 73 17 002, BCA 030 18 01 01 012 72 20, 030 18 02 01 012 74 20, 030 18 01 01 012 74 20

⁵ **Sait Cetinoglu**, *Emval-i metruke Rejimi*, անտիպ, հոդվածը թարգմանվել է Արևմտահայոց Ազգային համագումարի համար թարգմանեց Վերա Սահակյանը:

⁶ 1922 թ. մարտի 12-ին ընդունված որոշումը, մեկ տարի անց, 1923թ. հունիսի 28-ին, թիվ 2559 հրամանագրով ներառում է երկրից դուրս գտնվող ոչ մուսուլման բնակչությանը: Այս հրամանագրով գույքի լիազորագրով ետ ստանալու գործընթացը արգելվում է:



Նկ. 1

Արխիվային փաստաթղթերից գատ խոսում վկայություններ են պարունակում դեսպանու-
 թյունների կամ հյուպատոսական ծառայությունների նշումները: Նման մեկ գրառում ևս ունենք ձեռքի
 տակ: Այս գրառման մեջ տեղեկություններ կան այն մասին, որ թուրքական պաշտոնական տեղեկա-
 տվությունը հերքում է դեպի Սիրիա հայերի բռնի տեղահանության փաստը և այն որակում իբրև ինք-
 նական երկրից հեռացում⁷ /zoraki degil, gönüllü/: Սակայն հայերի անձնագրի մեջ նշված «վերադարձն
 արգելված է» կնիքով 1929-30թթ. բռնի տեղահանությանը վերաբերող անձնագրերի պատճենները և
 բռնի տեղահանության մասին փաստաթղթերի օրինակները, պարբերականների անդրադարձը և հյու-
 պատոսությունների արձանագրությունները վկայում են, որ կամավոր արտագաղթի մասին խոսելն
 ուղղակիորեն Թուրքիայի հեթական պատմական կեղծիքն է:

«Վարչապետության Հանրապետական արխիվի» փաստաթղթերում մեծ տեղ են զբաղեցնում
 հայոց գույքային պահանջատիրության վերաբերյալ որոշումներն ու ծանուցումները: Մեզ մոտ եղած
 փոքրաթիվ փաստաթղթերից մենք սույն հոդվածի համար առանձնացրել ենք միայն մեկը: Կարևոր ենք
 համարում նաև ներքին գործոց նախարարության, վերաբնակեցման ընդհանուր տնօրինության, 26
 մայիսի, 1927, Ադանայի վիլայեթի բարձրագույն ատյանին ուղարկված գրությունը⁸, Օդեսիչ գյուղի և

⁷ Նկար 1, 2:

⁸ BCA 272 12 53 124 34

Տարսուսի լքյալ գույքերը թուրքական համայնքներին (turk ocaklari) փոխանցելու վերաբերյալ հրամանագիրը⁹, Գրանցված երեք բաժին Լքյալ անշարժ գույքը Էլազիգ, Աֆյոն Քարահիսար, և Մերսինի թուրքական համայնքին հատկացնելու պահանջի մասին որոշումը¹⁰, ինչպես նաև Ճանապարհորդություն իրականացնողների գույքերի վերաբերյալ ընդունված հրամանագրերի՝ երեք էջից բաղկացած բնօրինակների պատճենները¹¹, որոնք բոլորն էլ ստորագրվել են հանրապետության նախագահ Գազի Մուսթաֆա Քեմալի կողմից: Շեշտենք, սակայն, որ իրականում ճանապարհորդություն կատարելու մասին այս գրությունները վերաբերում են ոչ թե զբոսաշրջությանը կամ երկրից բացակայությանը այլ բռնի արտագաղթի ենթարկված, բռնի տեղահանված և Թուրքիա մուտքի իրավունք չստացող Օսմանյան կայսրության հայ քաղաքացիներին:

Passeport d'Agop Handjian portant la mention "Retour interdit", délivré par la nouvelle République turque, le 19 juillet 1924, Centre du Patrimoine Arménien, Ville de Valence



Նկ. 2


Ներքոհիշյալ փաստաթուղթը Հանրապետական Թուրքիայում հայ բնակչության գույքային սեփականության իրավունքի խախտման յուրօրինակ ապացույց է, երբ մի պետության հետ ռազմական գործողությունների արդյունքում կնքվող զինադադարի պայմանագիրը ներառում է նաև տարածաշրջանի մեկ այլ բնիկ՝ հայ բնակչության գույքը բռնագրավելու վերաբերյալ դրույթ: Թուրք-հունական պատերազմից հետո կնքված պայմանագրի մեջ կարդում ենք. «Կնքվելիք հաշտության պայ-

⁹ BCA 030 18 01 01 09 26 16

¹⁰ BCA 030 18 01 01 012 73 17, BCA 010 0 18 01 01 12 73 17 002

¹¹ BCA 030 18 01 01 012 72 20, 030 18 02 01 012 74 20, 030 18 01 01 012 74 20

մանագրով¹², ավերածությունները վերականգնելու նպատակով Հունաստանից որպես ռազմական փոխհատուցում կարևոր գումարը ենթակա է գանձումի»¹³: «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հունական կողմը ի վիճակի չէ կանխիկ միջոցներով ռազմական փոխհատուցում վճարելու¹⁴, սակայն մեր երկրի սահմաններում ունի լքյալ թողնված անշարժ և շարժական գույք, առկա պայմանագրով բռնագրավել գույքը և դրամական միջոցները որպես փոխհատուցում¹⁵: Այս կերպ մենք կկարողանանք գանձել փոխհատուցումը, ինչպես նաև կկտրենք այն բոլոր կապերը, որոնցով հունական կողմը երբևէ կապված կլիներ անատոլիական հողերի հետ: Այս գաղափարին համաձայն, ուշադրություն դարձնել հաշտության պայմանագրի իրագործման պահանջներին, այն տարածել և իրագործել թե հայ, թե հույն և թե հրեա տեղահանված բնակչության թողած գույքի և այլ հարստությունների նկատմամբ¹⁶: Ներկայացնում են տեղական կառավարության կողմից՝ շտապ կերպով իրագործելու պահանջով»¹⁷: Փաստաթուղթը կազմված է երկու օրինակից: Առաջին օրինակը ստորագրվել է 27/9/338թ. (4/7/1921), գործադիր իշխանության խորհրդի նախահագ Հուսեին Ռեֆաթի կողմից, երկրորդ օրինակը ռազմական ընդհանուր ատյանի նախագահի կողմից:



Նկ. 3

¹² 030 10.....218 472 11 (Պատճենը տե՛ս նկ. 3, նկ. 4, համապատասխանաբար՝ առաջին և երկրորդ օրինակներ:


¹³ Փաստաթղթի երկրորդ օրինակում. «կարևոր գումարի պահանջը բնական է»:

¹⁴ Երկրորդ բնագիր. Առկա վերջին հաղթանակների արդյունքում մեր երկրի սահմաններում հունական կողմը մեծ քանակությամբ լքված թողնված հունահայատականներին պատկան գույք և դրամական միջոցներ է թողել

¹⁵ Երկրորդ բնագիր. Զանի որ Հունաստանի առկա նյութական վիճակը չի կարող բավարարել ամբողջական դրամական փոխհատուցում ապահովելուն, ծանրակշիռ այս որոշմամբ որպես հատուցում այս համաձայնագրով

¹⁶ Երկրորդ բնագիր. Սա ռազմական նախարարությունից ստացված բեկանման կամ քննարկման ոչ ենթակա որոշման առկա պահանջն է: Այս կերպ մենք թե՛ ռազմական փոխհատուցումը կկարողանանք գանձել, թե՛ հույների կապը վերջնականապես կկտրենք անատոլիական հողերից ...

¹⁷ Նույն տեղում:



Նկ. 4

Վարչապետության Հանրապետական արխիվի մեկ այլ փաստաթուղթ 1938թ. Վարուֆների ընդհանուր վարչությանն ուղարկված մշակույթի նախարար Ս. Արիբանի նամակն է։ Այս փաստաթղթի համաձայն ազգային փոքրամասնությունների դպրոցների եկամուտը քննելու վերաբերյալ առաջ եկած տարակարծությունների և երերումների առնչությամբ ներկայացված գրությունը հիմք է հանդիսացել հարցը քննարկման դնելու համար¹⁸։ Այս գրությամբ սահմանափակվում են փոքրամասնությունների՝ վակուֆներից ստացված եկամուտների հատկացումները դպրոցներին և կրթական այլ հաստատություններին։ Իբրև կրճատելու հիմնավորում է ներկայացվում դպրոցների հակաթուրքական գործողությունները, սակայն որևէ օրինակ բերված չէ, ինչպես նաև այլ երկրների ներկայացուցիչների հետ գաղտնի հանդիպումներ ունենալը։

Մեկ այլ փաստաթղթում կարդում ենք. «Տպարանների սահմանափակման վերաբերյալ գրություն»¹⁹։ Ըստ գրության «Տպարանների սահմանափակումը պահանջն է երկրի միասնության և բարօրության»²⁰։ Նամակի շարունակությունից ելնելով միասնության և բարօրության տակ թաքնված է միատարր դարձնելու քաղաքականությունը։ «Թերթերն ու պարբերականները ներառյալ, տպագրության 85 %-ը հայերին են պատկանում, 5 %-ը հույներին և հրեաներին, մնացածը՝ թուրքերին»։ Նամակի մեջ բերված են հայ տպարանատերերի, հրատարակիչների և խմբագիրների մասին տեղեկություններ։ Ապա, որպես միավորման բուն առիթ և պատճառ է ներկայացված «տպարանների ոչ պրոֆեսիոնալ գործունեությունը, տպագրական ժամանակակից սարքավորումների բացակայու-

¹⁸ BCA 030 10 143 21 10

¹⁹ BCA 030 10 144 11 5

²⁰ Նույն տեղում։

թյունը²¹» և այլ բանասարկություններ: Գրության հեղինակը պահանջում է. «կասեցնել նման տպա-
րանների գործունեությունը, որովհետև նրանք չեն հարգում ընդունված նոր գրելաձևը»²²:

Այսպիսով «Թուրքիայի «Վարչապետության հանրապետական արխիվի» փաստաթղթերից մի քանի օրինակ ուսումնասիրելով, մեկ անգամ ևս ակամատեսն ենք դառնում Թուրքիան միատարր դարձնելու նպատակով, հայերի և այլ քրիստոնյաների իրավունքների սահմանափակման գործըն-
թացում կառավարությունների վարած հետևողական քաղաքականությանը:

Vera Sahakyan, Vazgen Poghosyan (Armenia)

ON RESTRICTIONS OF ARMENIANS' RIGHTS IN DOCUMENTS OF TURKISH “PRIME MINISTERIAL ARCHIVES”

By studying a few samples of the Turkish “Prime Ministerial Archives”, we are witnessing to the fact that, as it was in the Ottoman Empire period, the modern Republic of Turkey consistently pursues policies to extremely limit the rights of Armenians and other Christian groups in order to create a homogeneous country. In these archives, we find multiple examples of ethnic cleansing and the prohibition to return confiscated property and possession to their owners, despite the binding articles of the Lausanne Treaty. We also find many archival facts that bear the official signature of Mustafa Kemal Atatürk, which legitimizes the nationalization, or the turnover of the derelict properties to the “Turkish homes”. In one word, we could say that the “Prime Ministerial Archives” is saturated with laws, orders, decisions and letters that are accompanied with their archives, which extremely curb the rights of minorities. By studying even a very small section of the said archives, it becomes clear that the anti-Armenian and anti-Christian policies of Republic of Turkey, is an official government policy at all times.

Նվեր Սարգսյան (Հայաստան)

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ. ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

1. ՄՈՒՏՔ: Քաղաքակրթության իր բաժինն արարող, ազնիվ աշխատանքով հող ու աշխարհ շենացնող հայ ժողովուրդը, անցնելով հազարամյակների, պատերազմների, հաղթանակների ու պարտությունների միջով, քսաներորդ լուսավորյալ դարում եղեռնագրկվեց իր իսկ պատմական բնօրրանում... Ու կսկիծներից միացող սրտով ամենայն հայոց բանաստեղծը իր հանճարեղ մախորդից՝ Խորենացուց մեկուկես հազարամյակ հետո պիտի իր ողբն ասեր, իր հոգեհանգիստը կարդար փռված ու ցրված, անեմո ու անտեր գոհերին:

Հանգե՛ք, իմ որբե՛ր... իզուր են հուզմունք, իզո՛ւր և անշահ,

Մարդակեր գազան՝ մարդը դեռ երկար էսպես կը մնա...

Իհարկե, թե՛ որպես մեծ մարդ ու մարդասեր, հայ ու հայրենասեր, թե՛ որպես պապենական քահանայատոհմի զավակ՝ հենց նա պիտի հնչեցներ այսպիսի հոգեհանգիստ, բանաստեղծական այսպիսի պատարագ, որը միայն ցավի ու ընդվզումի խոսք չէր: Ազգային ճակատագրին առնչվող բազում իմաստությունների հետ դրա մեջ, իր հանճարեղ ժամանակակցի՝ Իսահակյանի «տառապանքս փորձ ունի» ձևակերպումով, արծարծվում էր նաև ցեղասպանության ու մարդու տեսակի կապի խնդիրը:

Եվ երևի պիտի սկսել հենց այդտեղից՝ դիմելով ընդհանրապես մարդ-էակին. «Ո՛վ մարդ արարծ, ո՛վ հոմո սապիենս, այս մոլորակի ո՛ր ծայրում էլ լինես, ինչ ազգից էլ լինես, եղեռն տեսել ես, թե՛ ոչ, խնդրում եմ՝ մի պահ նայես հոգուդ խորքն ու երդումի պես մեկընդմիշտ անթեղես նրա մեջ, որ իմ ցեղի եղեռնը միայն իմը չէ, բոլորինն է, որ այն մարդակերություն է՝ ինչ ձևով էլ դրսևորվի, որ այն առաջին հերթին Աստծու պատկերով արարված մարդու, ամբողջ մարդկության դեմ ուղղված հանցագործություն է, որ չունի վաղեմություն, չունի ներում և պիտի բացառվի»:

Հայոց Գողգոթայի սահմեկեցուցիչ տեսարանները ձեզ հետ վերհիշելու ցանկությունը չէ, որ մղել է խոսելու: Ընդհակառակը: Ուզում եմ մեկ անգամ էլ բացենք մեր սրտերը, մայր հողում ամփոփված ու չամփոփված, հայտնի կամ անհայտ գոհերին հարգանքի սրբազան տուրք մատուցելու զգացո-
ղությամբ մեկ անգամ էլ խոսենք *եղեռն* կամ *ցեղասպանություն* կոչված երևույթի մասին: Խոսենք

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում:

հանդարտ, ուղղակի առանձնացնենք որոշ կարևոր նշանոդներ որպես պատմության դաս և մեր մատը մեր քունքին դնելով՝ առնենք այդ դասը, միահամուռ ու միաբան որոշենք մեր անելիքը, որովհետև այսօր էլ այն մեր կյանքի բոլոր ոլորտներին ուղղված մեծագույն մարտահրավերներից է:

2. ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՈՆԱՏԻՐԱԿԱՆ ՄՈՋԱՎԱՆՁ: Հայոց հարցի ընդհանրական նշանակությունը առաջին հերթին մեր լինել-չլինելու, մեր գոյության խնդիրն է, արժանավայել ու արժանապատիվ գոյության խնդիրը: Այդ պատճառով էլ ազատությունը, մեր կազմավորման ակունքներից սկսած, եղել էր մեր անկախ գոյության առանցքային տեսլականը, նպատակների կիզակետը, որովհետև ցեղասպանությունը լինում է այնտեղ, ուր զազանաբարո բնագոյներն են, ուրիշներ խլելու, յուրացնելու վայրենի մոլուցքները, բռնատիրական մղձավանջը: Դա է պարզ իրողությունը. երբ վայրենի, սոված նախիրը կանաչ հովիտ է տեսնում, պիտի հովիտ լցվի՝ արածելու, կշտանալու, գոյատևելու: Այդ ներխուժումը լալով չես արգելի, ուրիշը քո փոխարեն չի արգելի, դա քո՝ գործն է, քո հովվի՝ գործը, այն էլ՝ մահալ ունեցող հովվի: Մեր պատմական հայրենիքը աշխարհի խաչմերուկներում ընկած մի կանաչ, բարեբեր հովիտ էր: Հմայիչ, գրավող, հրավիրող: Այն ու աշխարհից եկան, լցվեցին, երկիրը դարձավ խաչվող սրբերի հանգուցատեղի: Դարից դար բռնակալները շատացան, իսկ մենք մաքառելով ու մարտնչելով նվազեցինք, թուլացանք: Մեր հայրենիքի վրա իջավ բռնատիրական մղձավանջը, որը աղետավոր 1915-ին ծնեց ամենասոսկալի աղետը՝ Մեծ եղեռնը: Դա մեր դարի սկզբին էր, իսկ դրա սկիզբը շատ ավելի առաջ էր՝ 1064 թվականի այն օրը, երբ սելջուկ թուրքերի հորդանքերը ներխուժեցին մեր երկիր և հրոսակապետ Ալի Ասլանը գրավեց ու կործանեց Անի մայրաքաղաքը: Տեղը գտնված էր, ներխուժումը՝ կայացած: Մնում էր դառնալ լիիրավ տեր, որն էլ պիտի իրագործեին նրա օսմանյան հետնորդները: Իսկ ի՞նչ էր պետք դրա համար, ոչնչացնել իսկական տերերին՝ հայերին, որպեսզի առանց ընդդիմության կարելի լինի հայտարարել՝ այս հողը մերն է, այս երկիրը մերն է, տեղը մերն է: Մի քաղաքականություն, որը հավատարմորեն կիրառեցին միմյանց հաջորդած սուլթանները, նրանց երիտթուրքական ժառանգները, այսօր էլ նոր նրբերանգներով շարունակում է թուրքական կառավարությունը:

Այդ քաղաքականությունը ենթադրում էր հալածանքների, բռնությունների, ջարդերի իրագործում, մի բան, որ տևականորեն, պարբերաբար ու սկզբունքորեն արվում էր: Իսկ 18-19-րդ դարերից սկսած, երբ «խաղի մեջ մտավ» նաև ցարական Ռուսաստանը, լարվածությունն ավելի սրվեց: 1827-28 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Ռուսաստանը Պարսկաստանից նվաճեց Հայաստանի մի մասը: 1877-78 թթ. արդեն ռուսական զորքերը Պոլսի մատույցներում էին: Թուրքական բռնապետության տակ հեծող մի շարք ժողովուրդներ ազատագրական պայքարի էին ելել, Թուրքիայի առջև ծառացած էր «իր բաժին Հայաստանը» ևս կորցնելու վտանգը: Ռուսական ցարը ժամանել էր Պոլսից քիչ հեռու գտնվող Սան-Ստեֆանո գյուղաքաղաքը՝ իջևանելով Առաքել Բեյ Դադյանի բնակարանում: Նրան այցելեց Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը՝ խնդրելով ռուս-թուրքական առաջիկա դաշնագրում հայերի վերաբերյալ որևէ նպաստավոր կետ ընդունել: Այսպես Սան-Ստեֆանոյի պայմանագրում, հակառակ սուլթան Համիդի ընդդիմության, տեղ գտավ 16-րդ հոդվածը, որով նախատեսվում էր, որ ռուսական զորքերը պիտի մնան Հայաստանի գրավված հողերի վրա այնքան ժամանակ, մինչև Թուրքիան գործադրի որոշակի բարենորոգումներ: Ի՞նչ ոգևորություն հայերի մեջ... Բայց դեռ տեղի պիտի ունենար Բեռլինի կոնգրեսը՝ միջազգային դիվանագիտության շրջապատյալ նետելով Հայկական հարցը, որը մինչև այսօր էլ իր պատասխանը չի ստանում:

3. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԽԱՂԵՐ: Հազարամյակների մեր գոյությունը առնվազն հազար անգամ էլ մեզ հուշել է, որ մեր հույսը մենք պիտի լինենք: Ամեն գործ պիտի իրականանա մեր ջանքերով, մեզնով: Ուրիշը կօգնի՝ լավ է, չի օգնի՝ չպիտի դադարենք գործելուց, չպիտի հուսալքվենք, իրարից նեղանանք, գործը տանուլ տանք, թե ինչ է՝ չօգնեցին: Մերազնյա շատ մտածողներ թափառականի իրենց պտույտներում կյանքը մաշեցին հզոր աշխարհների դռների առաջ, բայց բոլոր տեսակի դիվանագիտական խաղերը, շողոմ խոստումները գործ չեն դարձել:

Միմյանց հաջորդած անհավասար մարտերում մենք հաղթանակել ենք, երբ ապավինել ենք առաջին հերթին մեզ, մեր կամքին ու վճռականությանը: Իսկ երբ հակառակն է եղել, երբ մեր ուժը փորձել ենք տեսնել ուրիշի մեջ, երբ տրված խոստումը համարել ենք իրական գործ, մեզ վրա ծանրացել է պարտության դառն մղձավանջը: Հիշենք, թե Սասունի ապստամբությունից մի քանի շաբաթ առաջ Հրայր Հայրուկը նամակով ի՞նչ էր ասում. «Ձյուն շատ, բութ ու բորան խիստ, ժողովուրդը մերկ, կոխը՝ անհասար: Ընկերներ, դիմում ըրեք քաղաքական աշխարհին, մեր բարեկամներուն, առանց վայրկեան մը կորսնցնելու, գուցե զազանութիւններուն սահման մը դրուի»¹: Այսպիսին է եղել մեր իրականությունը: Այսօր չպիտի թույլ տանք, որ մեր այրան մեջ մտնի ուրիշի միջոցով փրկվելու գաղափարը: Ինքներս պիտի գործենք, ապա նաև բարեկամներ, գաղափարակիցներ ու շահակիցներ որոնենք:

Երբեք չպիտի մոռանանք, որ, ինչպես ասում էր մեծ հայդուկապետը, օտար պետությունների պաշտպանությունը ուրիշ բան չէ, եթե ոչ պարզ պատրվակ՝ «ի սպաս իրենց շահերուն»: Երբեք չպիտի

¹ Մ. Պեշկաշևան, *Լուսաբերդ*, Փարիզ, 1952, էջ 111:

անտեսենք, որ միջազգային իրավունքների, արդարության կողքին կան միջազգային, միջպետական շահեր ու հարաբերություններ, և դրանցից պիտի բխեցվի դիվանագիտությունը: Արդարության փաստումը դեռ հաղթություն չէ:

Այս գիտակցությամբ նորից դառնանք Բեռլինի կոնգրեսին: Հայ ազգի բախտը վճռող այդ դիվանագիտական կատակերգությամբ, Խրիմյան Հայրիկի ղեկավարությամբ Բեռլին մեկնած հայ պատվիրակությանը չթողեցին նույնիսկ մասնակցել: 16-ը 61 դարձնելով՝ մասնակից տերությունները փակեցին ներկայացման վարագույրները՝ հայ ժողովրդին թողնելով օրհասական տառապանքի մեջ: Ի՞նչ փույթ հայերի դժբախտությունը, փոխարենը իրենք գոհ են. պարտված Թուրքիայից Անգլիան ստացել է Կիպրոսը, Գերմանիան՝ Բեռլին-Բաղդադ երկաթուղու մենաշնորհը, Ֆրանսիան՝ Թուրքիայի առևտրաֆինանսական ղեկավարության շահավետ դաշինքը, Իտալիան՝ Տրիպոլիս վերագրելու խոստումը, Ավստրիան՝ Բոսնիա-Հերցեգովինան իրեն միացնելու իրավունքը: Իսկ Թուրքիա՞ն. նրան մնում էր ավելի հաստատակամորեն վարել ոճրագործ հայաջինջ քաղաքականությունը: Ո՞րն էր հայերի փրկության ելքը: Կայսրության ամեն մի անդամ իր կյանքը, գույքը, պատիվը պաշտպանելու երկու միջոց ունի՝ պետական իրավունքը և սեփական ուժը: Հայերը գրկված էին պաշտպանության այդ երկու միջոցներից էլ: Եվ եթե, այնուամենայնիվ, դիմում էին ուժի, զենքի, Թուրքիան դա համարում էր հանցագործություն, անկախ պետություն ստեղծելու նպատակով արված ապստամբություն: Ու բոլոր հզոր պետությունները նորից թափահարում էին գլուխները՝ ա՛յ-ա՛յ-ա՛յ: Դա հանցա՞նք էր: Ո՛չ: Բայց հզորներից ոչ մեկին այդ պահին ձեռնադր չէր հայերի ցանկությունը: Եվ իզուր էր օգնություն ակնկալելը, իզուր էր նաև դիքորոշման քողարկումը: Անգլիան հայտարարում էր, որ իր նավերը չեն կարող բարձրանալ հայոց լեռներն ի վեր, ցարական կառավարությունը արտաքին գործերի նախարար Լոբանովի բերանով հայտնում էր, որ Հայաստանը Ռուսաստանին «պետք է առանց հայերի», նույնքան միանշանակ էր Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարարի հայտարարությունը՝ եթե չորս միլիանոց հայ ժողովուրդը ամբողջությամբ ջնջվելու վտանգին ենթարկվի, իրենք չեն կարող նույնիսկ մեկ զինվոր զոհել նրա պաշտպանության համար, իսկ Գերմանիայի վարչապետը բացեիքաց պիտի քամահերը՝ ամբողջ հայ ազգը իր մեկ զինվորի ոսկորն իսկ չարժե: Այս մթնոլորտում, երբ բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը, երիտթուրքական կառավարությանը մնում էր ավարտին հասցնել Արևմտյան Հայաստանը հայաթափելու, հայերին բնաջնջելու գործը՝ իրագործելու Մեծ եղեռնը:

Եվ իրականացվեց դա: Կար հարմար առիթը՝ համաշխարհային պատերազմը: Կար նպատակը՝ Հայկական հարցը լուծել այդ ճանապարհով: Կային ջարդարարական մեքենայի ղեկավարությունն ու կատարողները՝ հաստատված դեռևս 1915-ի փետրվարյան զաղտնի նիստում, կար գործողությունների կոնկրետ ծրագիրը՝ նույն նիստում հանգամանորեն մշակված: Կային նաև այլ կարգի բազմաթիվ պատրվակներ՝ հայերի անհնազդություն ու անհավատարմություն, կամավորական զնդերի կազմակերպում, զանազան տեղահանություն-տեղափոխություններ և այլն: Օգտագործվեցին ամեն ինչ ու ամեն բան, գործադրվեցին ոչնչացման ամեն տեսակի գազանաբարո հնարներ, և ողբերգությունը դարձավ փաստ:

Երեք տարի չանցած թուրքական զորագնդերը հրով ու սրով մտան նաև Արևելյան Հայաստան՝ արյան ու ավերումի նույն խրախճանքը այնտեղ ևս կատարելու: Հայ ժողովուրդը բռնկեցվեց, հայոց զինուժի հետ միաբան ու միակամ վճռական գոյամարտ մղեցին կուսակցություններն ու անհատները, հողի աշխատողն ու արհեստավորը, մտավորականն ու հոգևորականը, բոլորը: Եվ 1918-ի մայիսյան հերոսամարտերը ոչ միայն հաղթություն բերեցին հայերին, այլև վերականգնվեց մեր պետականությունը, որը 1920-ին դարձավ խորհրդային, իսկ 1991-ին հռչակվեց մեր նորոգ Հանրապետությունը:

4. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ ԹՂԹԵ ՇԵՐԵՓ: Հայոց ցեղի բազուկը երբեք անարդար սուր չի բռնել: Հայը զենք է առել ձեռքը միայն ինքնապաշտպանության համար: Այդպես է եղել Հայկ Նահապետից մինչև Մուշեղ սպարապետ, Ավարայրից մինչև Սարդարապատ: Անպարտելի է հայոց միաբան, հավաքական ուժը: Բայց մեզ հաճախ հենց այդ միաբանությունն է պակասել, մեզ այնքան էին զրկել ինքնապաշտպանության իրավունքից, որ մենք կորցրել էինք հավաքական պատրաստականությունն ու պատրաստակամությունը: Բոլորս գիտենք Խրիմյան Հայրիկի հանրահայտ խոսքը. հուսախաբված հզորների խարդավանքներից, գլխիկոր ու սրտաբեկ՝ նա Բեռլինից վերադարձավ հայրենիք և դառնությամբ հայտարարեց, որ մենք չկարողացանք Բեռլինի մեջ եփված հարիսայի կաթսայից օգտվել, որովհետև մեր ունեցած շերտերը թղթից էր: Մենք գիտենք նաև նրա կոչը, որ մեր ազատության խնդիրը կարող են վճռել միայն այն քաջերը, որոնց ձեռքին երկաթե շերտեփ, այսինքն՝ զենք կա: Մենք գիտենք նաև հայ ֆիդայիների զենքի ու բազկի անօրինական հրաշքը, քաջության ու հերոսության այն լեզվերը, որ հյուսեցին նրանք Արաբոյից մինչև Գևորգ, Անդրանիկից մինչև Նժդեհ: Գիտենք, և փառք նրանց, բայց 1915-ի այն եղեռնական օրերին կատարվեց սարսափելին, կատարվեց այն, ինչ տարիներ առաջ ցինիկաբար հայտարարել էր Օսմանյան կայսրության մեծ վեզիր Էլամիլ փաշան. «Հայ ազգը վերացնելու, անհետ, անճեռ ընելու ենք: Եվ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակասիլ մեզ, ամեն գործիք պատրաստ ունինք՝ քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան,

նստիկան, վերջապես ամենայն ինչ, կրոնական պատերազմ մը կը հրապարակենք և դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ոչ գենք ունի, ոչ զինավորություն և ոչ պաշտպան»²:

Եվ այսպես «ամեն ինչով» բռնազաղթվեց, մորթվեց, հոշոտվեց ու ոչնչացվեց շուրջ երկու միլիոն անգեն հայ: Ինչո՞ւ ԱՆՋԵՆ: Ռ՞իտ էր հայոց զինյալների հավաքական ուժը, չէ՞ որ միայն ռուսական բանակում կային մոտ 250 հազար հայ զինվորներ: Մենք այս հարցի պատասխանն էլ գիտենք: Այսօր, երբ կանգնած ենք նույն մարտահրավերի առաջ, երբ քաջ հասկանում ենք, որ սոսկ բողոքելով մեր ճշմարտությունն ու արդարությունը նվաճել անկարելի է, ճշմարիտ հետևությունը պետք է դարձնենք գործ: Դեռ երեկ մեր սահմանների վրա կանգնած էին մեր ազատամարտիկները ֆիդայական ռոմանտիկայով: Բայց ամենամեծ ֆիդային՝ Անդրանիկը, դեռ դարասկզբին պատգամում էր, որ հայերը «հրացանը անգամ մը ևս այն ատեն միայն առնելու են ձեռքերնին, երբ այդ հրացանը պետության մը պահեստէն է, որ իրենց կու գայ: Անանկ 100 մոսինով, 200 պերտանով, աչքը դեպի փամփուշտի ճամփան, պետության մը դեմ կռիվ չի մղուի»³: Պատգամի հասցեատերը մենք ենք: Պիտի լսենք:

Մենք մերժում ենք պատերազմը, մենք շատ լավ գիտենք խաղաղության գինը: Բայց առանց մարտունակ զինական ուժի, առանց գորեղ ինքնապաշտպանության մեզ ոչ ոք չի լսի: Ունենք այդպիսի բանակ, և նա է մեր ժողովրդի ու պետականության գոյության, մեր խաղաղության և անվտանգության գլխավոր երաշխիքը:

5. ԵՂԵՌՆԸ ԵՎ ՄԵՐ ԼԵՁՈՒՆ: Յեղասպանությունն ուսումնասիրվում է տարբեր հայեցակետերով՝ պատմական, իրավագիտական, քաղաքական, բարոյահոգեբանական, տնտեսական, ժողովրդագրական և այլն: Ձևավորվել է առանձին գիտակարգ՝ յեղասպանագիտություն: Բայց մարտահրավերները շատ են ու շարունակվում են: ՄԱԿ-ի համաձայնագրից հետո էլ (1948) երկրագնդի տարբեր վայրերում իրականացվել են յեղասպանության տարբեր դեպքեր: Որպես եղեռն տեսած ու վերապրած ժողովուրդ՝ մեր պայքարը ընդդեմ յեղասպանության պետք է լինի առավել ակտիվ բոլոր բնագավառներում (թե՛ տեսական, թե՛ գործնական առումներով): Հասցեատերը պիտի լինեն անհատը, ժողովուրդը, պետությունը, առաջավոր մարդկությունը: Այս համապատկերի վրա աչքաթող չպիտի անել նաև լեզվական կողմը, որի մասին գրեթե չի խոսվում: Թերևս բացառություն պիտի համարել ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի՝ այդ մասին վերջերս արված հայտարարությունը: Մինչդեռ եղեռնը միայն ֆիզիկական ոչնչացում, կոտորած ու սպանություն, հայրենական տարածքի բռնազավթում, պատմամշակութային և այլ նյութական արժեքների վերացում չէր. այն նաև ուղղված էր մեր լեզվին՝ աշխարհի հնագույն և զարգացած լեզուներից մեկին: Լեզուն է մեր հոգևոր ինքնության խարիսխը, մեր որպես հայ տեսակի, գոյության կայմն ու առազաստը: Կա՛ այն, կանք մենք: Այն, հիրավի, մեր հոգևոր հայրենիքն է: Մանավանդ նրանք, ովքեր գրկված են հայրենի տարածքից, հայ են այնքանով, որքանով նրա մեջ են: Դրանից դուրս ուժացումն է: Մեր լեզվի վրա եղեռնի ակնհայտ բացասական ազդեցություններից փաստենք գոնե բազմաթիվ ձեռագրերի ոչնչացումը, դարերի իմաստություն ու հիշողություն ամբարած մի շարք բարբառների անժամանակ վերացումը, անդառնալի կորուստը, իսկ մյուս մասի ցրումն ու խառնակումը, գրական արևմտահայերենի խոսակցական ընդհանուր բազայի բեկորացումը, նրա բնականոն զարգացման ընթացքի խաթարումը և այլ իրողություններ: Այս հարցում էլ մարտահրավերները ավելի քան մտահոգիչ են, անելիքներն էլ՝ ավելի քան շատ:

* * *

Ձուգահեռ գծերը չեն հատվում, բայց պատմության զուգահեռները կարող են հատվել: Ավելին, պատմությունն ինքը կարող է կրկնվել. վկան՝ մեր նորօրյա իրադարձությունները: Հիշենք, թեկուզ, Թուրքիայի հետ ճանապարհները բացելու համար մեր վարած «ֆուտբոլային» քաղաքականության ավարտը: Հիշենք ավելի կարևորը՝ Արցախի ինքնորոշման, մայր հայրենիքին միանալու հարցի առաջ-քաշումն անգամ իր պատասխանը Ադրբեջանում ստացավ նոր... եղեռնով՝ Սումգայիթով: Հետո շղթայական ռեակցիայով հրեշավոր ջարդերը տարածվեցին երկրով մեկ: Հիմա կարելի՞ է դեռ մնալ պատրանքի մեջ, թե աշխարհը, հատկապես՝ մեր հարևանները, շատ են փոխվել: Նույնը չե՞ն արդյոք թե՛ բիրտ ուժի քաղաքականությունը, թե՛ ջարդերի ձևերն ու մեթոդները, թե՛ սադրանքներն ու դիվանագիտական խաղերը:

Եղեռնը, այո՛, ողջ մարդկության դեմ ուղղված մեծագույն ոճիր է, այն ոչ մի անգամ ոչ մի վայրում այլևս չպիտի կրկնվի, իսկ եղածը չպիտի մնա անվարձահատույց: Նրա պատմական դասերը այսօր հատկապես արդիական են՝ կապված ցեղասպանության հետևանքների վերացման, միջազգային ճանաչման, պաշտոնական դատապարտման և մեր պահանջատիրության հարցերի հետ:

² Կ. Թառոյան, *Ժողովրդական շարժումները Սասունում*, Երևան, 1966, էջ 21:

³ Ա. Թերզիպաշեան, *Անդրանիկ*, Փարիզ, 1942, էջ 102:

LESSONS OF GENOCIDE. CONTINUING CHALLENGES

From the issues concerning the Armenian Genocide the thesis especially outlines the realities that mainly discuss the causes and the process to be presented as reasonably correct. They are analyzed in separate titles: “Freedom and despotic nightmare” “Self defense power and unification or a paper spoon?” “Justice and diplomatic plays”. A special reference is done to the language usage, its natural development as well as the negative influence of Genocide on the dialects.

Ռուբեն Սաֆրաստյան (Հայաստան)

ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՍԱՆ ՍԱՍԻՆ

Հայոց ցեղասպանության հետագա, ավելի խորը հետազոտման տեսակետից կարևոր նշանակություն ունի թուրքական վավերագրական նյութի գիտական շրջանառության մեջ դնելը: Վերջին տարիներին Թուրքիայում սկսել են հրատարակել կամ էլ անդրադարձ կատարել օսմանյան պետական արխիվներում պահվող պաշտոնական փաստաթղթերին: Անտարակույս, այդ արվում է ոչ թե այդ ծանրագույն հանցագործության վերաբերյալ առկա փաստացի նյութը հարստացնելու նպատակով, այլ ընդհակառակը, նպատակաուղղված է պատմական ճշմարտությունը կեղծելուն: Որոշ դեպքերում, մեր կողմից արձանագրվել են դեպքեր, երբ թուրք հեղինակները դիմում են տարբեր տեսակի հնարքների, նպատակ ունենալով քողարկել փաստաթղթերի բուն իմաստը: Այդ դեպքերին մենք հատուկ անդրադառնում ենք ստորև:

Միաժամանակ, թուրք հեղինակների կողմից նախաձեռնվող մամուլային հրապարակումներում ժամանակ առ ժամանակ հնարավոր է հանդիպել այնպիսի վավերագրերի, որոնք, ի հակադրումն նրանց հեղինակների ցանկությունների, լույս են սփռում Հայոց ցեղասպանության նախապատրաստման ուղղությամբ օսմանյան իշխանությունների իրականացրած գործունեության վրա:

Առանձնահատուկ ուշադրության արժանի են օսմանյան կառավարության՝ Նախարարների խորհրդի (Meclis-i Vükelâ) որոշումները և կարգադրությունները: Թուրք հեղինակները լավ են հասկանում կառավարման բարձրագույն այդ մարմնի հեղինակած փաստաթղթերի նշանակությունը: Այդ պատճառով պատահական չէ, որ նրանք դիմում են տարբեր հնարքների, որ քողարկեն նրանց բովանդակությունը: Այս տեսակետից կարևոր նշանակություն ունի հայ ժողովրդի բռնի տեղահանության վերաբերյալ օսմանյան կառավարության 1915 թ. մայիսի 30-ին¹ ընդունած որոշումը: Այն ստորագրել են ստորագամ (Նախարարների խորհրդի նախագահ) Մեհմեդ Սաիդ Հալիմ փաշան, ներքին գործերի նախարար Թալեաթը, Գլխավոր հրամանատարի տեղակալ ու ռազմական նախարար Էնվեր փաշան, հանրային աշխատանքների նախարար Աբբաս Հալիմ փաշան, լուսավորության նախարար Ահմեդ Շյուքրյուն, առևտրի նախարար Ահմեդ Նեսիմին, արդարադատության նախարար Փիրիզադե Իբրահիմ Հայրուլլահը²:

Անկախ իր հեղինակների կամքից, փաստաթուղթը բացահայտում է արևմտահայության տեղահանության իրական նպատակը, այն է՝ «զիովին ոչնչացնել ու վերացնել» («imhâ ve izâlesi kat'ıyyen muktezi») հայերի կարծեցյալ «վտանգավոր շարժումը», այլ ոչ թե նրանց վերաբնակեցնել կայսրության՝ ռուսական ռազմաճակատից հեռու գտնվող տարածաշրջաններում: Այդ արտահայտությունն հնարավորություն է տալիս ժամանակակից ցեղասպանագիտության հայեցակարգային մոտեցումների շրջանակում բացահայտելու օսմանյան կառավարության՝ տեղահանության շղարշի ներքո ցեղասպանություն իրականացնելու դիտավորությունը (intent):

Հասկանալով այդ, թուրք հեղինակները կիրառում են մի շարք հնարքներ, նպատակ ունենալով քողարկել օսմանյան կառավարության հայերի տեղահանության մասին որոշման բուն՝ ցեղասպանական բնույթը: Այսպես, օրինակ, նրանցից շատերը, հրատարակելով իրենց աշխատություններում «Որոշման» օսմաներեն բնագիրը, խուսափում են թարգմանել «imhâ ve izâlesi kat'ıyyen muktezi» արտահայտությունը ժամանակակից թուրքերենի, հույս ունենալով, որ ընթերցողներին անհասանելի է

¹ Բոլոր ամսաթվերը տրվում են Նոր տոմարով:

² Տե՛ս Օսմանյան կայսրության Նախարարների խորհրդի միատի արձանագրության տեքստում, որը հրատարակվել է Թուրքիայի Հանրապետության կառավարությանն առընթեր Պետական արխիվների Գլխավոր վարչության կողմից. Meclis-i Vükelâ Müzâkerâtına Mahsûs Zabıtname: Hülasâ-i me'âli, 17 Mayıs 1331, - Meclis-i Vükelâ Mazbatası, 198/163. - <http://www.devletarsivleri.gov.tr/icerik/1834/meclis-i-vukelanin-tehcir-karari/>:

օսմաներենը³: Մյուսներն էլ դիմում են բացահայտ կեղծիքի, միտումնավոր սխալ թարգմանելով վերը նշված արտահայտությունը⁴:

Օսմանյան կառավարությունը հեղինակել է նաև այն օրենքը, որի նպատակն էր իրավական քող ստեղծել Հայոց ցեղասպանության գործընթացի համար: Այն ընդունվել է 1915 թ. մայիսի 27-ին, գործողության մեջ է մտել 1915 թ. հունիսի 1-ին և նրա իրագործման պատասխանատվությունը դրվել է անձամբ Գլխավոր հրամանատարի տեղակալ ու ռազմական նախարար Էնվեր փաշայի վրա: Օրենքի տակ դրված են սուլթան Մեհմեթ Ռեշաթ V, սադրազամ Մեհմեթ Սաիդ Հալիմ փաշայի և Էնվերի անունները: Օրենքի պաշտոնական անվանումն է. «Պատերազմի ժամանակ կառավարության գործողությունների դեմ հանդես եկողների նկատմամբ ռազմական տեսանկյունից իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ ժամանակավոր օրենք»⁵: Այն հայտնի է նաև որպես «Տեղահանության օրենք»:

Այդ, մարդկային պատմության ամենադաժան և ամենաարյունալի «օրենքներից» մեկը, ըստ նրա հեղինակների, պետք է ծառայեր ցեղասպանության քողարկմանը: Սակայն նրանում առկա դրույթն առ այն, որ. «Բանակների և առանձին զորաբանակների և դիվիզիաների հրամանատարները ռազմական հատուկ օրենքների վրա հիմնվելով՝ լուստություն կամ դավաճանություն կանխազգալով, կարող են գյուղերի և գյուղաքաղաքների բնակչությանը առանձին-առանձին կամ զանգվածաբար այլ բնակատեղիներ ուղարկել և բնակեցնել», բացահայտում է օրենքի հեղինակների իրական ձգտումը՝ օգտագործել բանակը հայ ժողովրդի բնաջնջումն իրականացնելու նպատակով: Այս կետը հստակորեն ապացուցում է ցեղասպանության գործընթացի ժամանակ թուրքական զինվորականության լայնածավալ ներգրավվածության հանցավոր փաստը: Ընդգծենք, որ զինվորական ստորաբաժանումների հրամանատարը, համաձայն «Տեղահանության օրենքի», պարտավոր էին (ընդգծումը մերն է՝ Ռ.Ս.) «տեղահանել» խաղաղ հայ ազգաբնակչությանը միմիայն իրենց «կանխազգացումների» հիման վրա: Եթե հաշվի առնենք, որ այն ժամանակվա պայմաններում Օսմանյան կայսրությունում տեղահանումը հիմնականում ավարտվում էր սպանությամբ, ապա ակնհայտ է դառնում, որ օսմանյան բանակին հրամայվում էր, էստ էության, զբաղվել խաղաղ հայ ազգաբնակչության ֆիզիկական բնաջնջման: Հենց դրան էլ ձգտում էին «Տեղահանության օրենքի» հեղինակները:

Ժամանակակից թուրք պատմաբանները խուսափում են հրապարակել «Տեղահանության օրենքի» լրիվ տեքստը: Նրանք հիմնականում մախրնտորում են նշել, որ «Տեղահանության օրենքը» ունեցել է երեք հոդված, այլ ոչ թե չորս, ինչպես իրականում էր, կամ էլ չեն գրում, թե ում ստորագրություններն են դրված օրենքի տակ: Տեղահանության օրենքի աղճատված տարբերակը տեղ է գտել Թուրքիայում հրատարակված ինչպես գիտական աշխատություններում⁶, այնպես էլ հրապարակախոսական հոդվածներում⁷: Բերենք կոնկրետ օրինակ. երիտասարդ պատմաբան Հասան Բաբաջանը, դիմելով «գիտական» աճապարարության, կիրառում է հետևյալ հնարքը. «Թաքվիմ-ի վաքայիի» 1915 թ. հունիսի 1-ի համարում հրատարակված օրենքի տեքստից մեջբերում է օրենքի միայն երկու հոդվածները՝ երկրորդ հոդվածին կցելով օրենքի չորրորդ հոդվածի բովանդակությունը և ընդհանրապես անտեսելով երրորդի գոյությունը⁸: Այդպես վարվելով նա, թերևս, ենթադրում էր, որ «Թաքվիմ-ի վաքայիի» 1915 թ. հունիսի 1-ի համարը չի կարող հասու լինել նաև ոչ թուրք մասնագետներին...

Վերջերս թուրքական պաշտոնական պատմագրության մեջ տխրահռչակ այդ օրենքի նկատմամբ դրսևորվում է նոր մոտեցում. նրա գոյությունն ընդհանրապես անտեսվում է: Այդպես է վարվել, օրինակ, Թուրքական պատմական ընկերության (ԹՊԸ) կողմից հրատարակված «Հայեր. արքայի և վերաբնակեցում» գրքի հեղինակային խումբը: Այստեղ միայն նշված է, որ վերևում արդեն հիշատակված օսմանյան կառավարության մայիսի 30-ի որոշումը «հավանություն տվեց ներքին գործերի նախարարության որոշմանը և դրա՝ արդեն ընթացքի մեջ գտնվող իրագործմանը»⁹: Թերևս, թուրք հեղինակները, որոնց թվում էր նաև ԹՊԸ այն ժամանակվա նախագահ Յուսուֆ Հալաչօղլին, այդպիսով ուղղակի փորձել են խուսափել «Տեղահանության օրենքի» բովանդակության մասին կարծիք հայտնելուց:

Հարց է առաջանում. ինչո՞վ է պայմանավորված թուրք պատմաբանների նման մոտեցումը: Թերևս, կարելի է ենթադրել, որ դրա պատճառը ձգտումն է քողարկել օսմանյան բանակի մասնակցությունը հայ ժողովրդի զանգվածային կոտորածներին: Սակայն այն հնարավոր չէ թաքցնել: Այդ են

³ Տե՛ս, օրինակ, **A. Akgündüz**, Ermeni katliamı mı? Ermeni Tehciri mi? - *Yeni Türkiye*, 2001, ocak-şubat, yıl 7, sayı 37; Ermeni Sorunu özel sayısı I, s. 361-362:

⁴ Ավելի մանրամասն այդ մասին տե՛ս **Ռ. Սաֆրաստյան**, Օսմանյան կառավարության որոշումը հայերի տեղահանության մասին (1915 թ. մայիսի 30), «Հայագիտության հարցեր» հանդես, Երևանի պետական համալսարան, հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, 2014, 1, էջ 13-14:

⁵ Բնագիրը տե՛ս Tâkvim-i vakâyî, 18 receb 1333 / 19 mayıs 1331, 7. sene, nr. 2189, s. 1:

⁶ Տե՛ս, օրինակ, **Y. Ercan**, Ermeniler ve Ermeni Sorunu. - *Yeni Türkiye*, 2001, ocak-şubat, yıl 7, sayı 37: Ermeni Sorunu özel sayısı I, s. 49.

⁷ Տե՛ս, օրինակ, **S. Kaplan**. 1915'teki trajedi işte bu tehcir kanunuyla başladı. - *Hürriyet*, 29 Mart 2005.

⁸ **H. Babacan**, Ermeni Tehciri hakkında bir değerlendirme. - *Yeni Türkiye*, 2001, ocak-şubat, yıl 7, sayı 37: Ermeni Sorunu özel sayısı I, s. 410.

⁹ **H. Özdemir, K. Çiçek, Ö. Turan, R. Çalık, Y. Halaçoğlu**, Ermeniler: sürgün ve göç. İkinci Basım. Ankara, 2004, s. 64.

փաստում, մասնավորապես, ռազմական նախարարության և օսմանյան բանակի ղեկավարների կողմից հեղինակած մի շարք փաստաթղթեր: Այսպես, օրինակ, 1915 թ. մայիսի 26-ին Գլխավոր հրամանատարի տեղակալ ու ռազմական նախարար Էնվեր փաշան դիմում է ներքին գործերի նախարար Թալեաթին և պահանջում, որ բռնագաղթված հայերի թվաքանակը իրենց բնակեցման նոր վայրերում չզերազանցի մուսուլման ազգաբնակչության տասը տոկոսը¹⁰: Էնվերի պահանջի իմաստն ակնհայտ է. ներքին գործերի նախարարությունը պետք է ավելի «ջանադրաբար» զբաղվի «տեղահանվող» հայերի ֆիզիկական բնաջնջմամբ, որպեսզի նրանց հիմնական զանգվածը չհասնի նոր բնակեցման վայրերը:

Հայոց ցեղասպանության նախապատրաստման մեջ բանակի ղեկավարության ունեցած կարևոր դերակատարման մասին իր հուշագրություններում գրում է նաև Թալեաթը: Նա շեշտում է, որ բանակի ղեկավարությունը, համարելով, որ հայ ազգաբնակչությունը վտանգ է ներկայացնում ռազմական տեսակետից, պահանջում էր սկսել հայերի տեղահանությունը¹¹ և պնդում է, որ բանակի Գլխավոր շտաբն է նախապատրաստել «Տեղահանության օրենքի» տեքստը և ուղարկել այն կառավարություն¹²:

Երիտթուրքական կուսակցության փաստացի ղեկավար և ներքին գործերի նախարար Թալեաթի ջանքերը՝ բացահայտել բանակի դերը, բացատրվում են նրա ձգտումով հնարավորինս խուսափել Հայոց ցեղասպանության նախապատրաստման և իրականացման համար պատասխանատվությունը միանձնյա կրելուց և այն Էնվերի հետ կիսելու մղումով:

Իրականում, բազմաթիվ փաստաթղթեր, այդ թվում նաև պաշտոնական վավերագրեր, վկայում են, որ ներքին գործերի նախարարության և նրա ղեկավար Թալեաթի մեղսակցության աստիճանը այդ հանցագործության մեջ եղել են չափազանց մեծ: Բերենք միայն մեկ օրինակ: Թալեաթը 1915 թ. մայիսի 27-ին ներքին գործերի նախարարության հանրային անվտանգության վարչության խողովակով ծածկագիր է ուղարկում Կարինի (Էրզրումի) վիլայեթ և կարգադրում, որ այնտեղ «ոչ մի հայ չթողնվի»¹³: Ըստ էության, այդ հայերի զանգվածային սպանությունները արտոնող հրաման է: Ուշագրավ է, որ թուրք մասնագետները, հասկանալով այդ հանգամանք, երբ հրատարակում են Թալեաթի այս ծածկագրի համառատ նկարագրությունը, վերևում նշված կարևոր արտահայտությունը դուրս են թողնում տեքստից¹⁴: Հերթական անգամ ականատես ենք լինում այն կամայականություններին, որոնք հատուկ են Հայոց ցեղասպանության թեմայի վերաբերյալ փաստաթղթերի հետ աշխատող թուրք պատմաբաններին:

Թուրքական պաշտոնական փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Օսմանյան կայսրության պետական կառավարման բարձրագույն մարմինները, ինչպես նախարարների խորհուրդը, այնպես էլ առանձին նախարարություններ, ակտիվորեն ներգրավված են եղել Հայոց ցեղասպանության նախապատրաստման աշխատանքներում: Այն հիրավի եղել է ծանրագույն պետական հանցագործություն, որի պատասխանատվությունը կրում են ոչ միայն առանձին անհատներ, այլ նաև օսմանյան թուրքերի կողմից ղեկավարվող պետականությունը:

Բերված փաստերի հիման վրա կարող ենք եզրակացնել նաև, որ Օսմանյան կայսրության իրավահաջորդ պետականության՝ Թուրքիայի Հանրապետության պաշտոնական պատմագրությունը ներկայացնող մի շարք մասնագետներ առանց վարանելու դիմում են ոչ ազնիվ հնարքների, փորձելով քողարկել կամ կեղծել պատմական իրականությունը:

Ruben Safrastyan (Armenia)

TURKISH OFFICIAL DOCUMENTS ON THE PREPARATION OF ARMENIAN GENOCIDE

Recently in Turkey were published a number of official documents from State archives on the Armenian genocide. The purpose of these publications is to confirm the official version in the interpretation of this crime and to conceal historical truth. However, a close examination of some of the documents reveals the true goals and intentions of the organizers of the genocide.

¹⁰ K. Gürün, Ermeni dosyası. İkinci Baskı. Ankara, 1983, s. 213.

¹¹ [Talât Paşa], Talât Paşa'nın hatıraları: Sadırazam Talât Paşa'nın tarihin bir çok gizli taraflarını aydınlatan şimdiye kadar neşredilmemiş şahsi notları. İstanbul, 1946, s. 63 - 65.

¹² [Talât Paşa], Talât Paşa'nın hatıraları: Sadırazam Talât Paşa'nın tarihin bir çok gizli taraflarını aydınlatan şimdiye kadar neşredilmemiş şahsi notları. İstanbul, 1946, s. 63 - 64.

¹³ BOA. DH. ŞFR, nr. 53/129, -<http://www.devletarsivleri.gov.tr/icerik/1839/rus-hududuna-yakin-olmasi-dolayisiyla-erzurumda-bulunan-ermenilerin-ihraci/>.

¹⁴ Rus hududuna yakın olmasına dolayısıyla Erzurum'da bulunan Ermenilerin ihracı, -<http://www.devletarsivleri.gov.tr/icerik/1839/rus-hududuna-yakin-olmasi-dolayisiyla-erzurumda-bulunan-ermenilerin-ihraci/>.

ՀԱՅ-ԹՈՒՐԵԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ՍՓՅՈՒՈՔԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ (1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.)

1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը փորձեց ուրվագծել հայ-թուրքական հարաբերությունների հետագա ուղին:

Ընդհանրապես տարագիր հայ քաղաքական մտքի որոնումները հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարի հարցում պայմանավորված էին մի շարք գործոններով: Ամենահիմնականը, թերևս, նախընթաց տասնամյակում օսմանյան Թուրքիայի կողմից գործադրված Հայոց ցեղասպանությունն էր: Թուրքիայից բռնի տեղահանված արևմտահայության տեսակետը ներկայացնող քաղաքական մտածողները չէին կարող անտես անել այդ իրողությունը: Իսկ Թուրքիան ոչ միայն ցեղասպանության ենթարկեց և հայրենագրկեց արևմտահայությանը, այլև մեծ մասնակցություն ունեցավ Արևելյան Հայաստանում նորանկախ հայկական պետականության անկման գործում: Հետագայի հայ-թուրքական հարաբերությունները, հետևաբար, մեծապես պայմանավորված էին հայրենագրված հայության պատմական հայրենիք վերադառնալու և անկախ պետականությունը վերականգնելու ձգտումով: 1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչները հայ-թուրքական հարաբերությունների խնդիրը և հետագա ընթացքը տեսնում էին վերոնշյալ գործոնների դիտարկման պարագայում:

Սփյուռքի հայ հասարակական-քաղաքական միտքը հայ-թուրքական հարաբերությունների խնդիրը քննարկելիս տարակարծիք էր, որը պայմանավորված էր ոչ միայն բազմակուսակցականությամբ: Իրարամերժ տեսակետները գոյություն ունին նաև կուսակցությունների ներսում: Քննարկումներում զուգահեռ հնչեցվում էին փոխադարձ վիրավորանքներ, միյանց մեղադրելով թրքական կողմնորոշում ունենալու մեջ:

Հայ տարագիրների մեծագույն մասը ցեղասպանությունից մազապուրծ եղածներն էին, և նրանց հոգում անմիջականորեն էր նստած հայերնիքի կորստի և թուրքերի դաժանությունների ցավն ու կսկիծը: Տարագիրների այս հատվածից դուրս եկած քաղաքական մտածողները գտնում էին, որ առանց Արևմտյան Հայաստանը հայությանը վերադարձնելու թուրքերի հետ հաշտեցում չպետք է լինի: Նրանց կարծիքով, հայությունը իր բոլոր կարողությունները պետք է ծառայեցնի մեկ նպատակի՝ Արևմտյան Հայաստանի ազատագրմանը, և հայ-թուրքական հարաբերությունները պատկերացնում էին այդ հաստեքստում:

Ամերիկայում հաստատված ականավոր հասարակական գործիչ, ՀՅԴ- անդամ Ջարևանդը (Ջավեն Նալբանդյան) հայ-թուրքական հարաբերությունների խնդրում արմատական դիրքորոշում ուներ ոչ միայն ցեղասպանության պատճառած վնասների հատուցման և իրավունքների վերականգնման առումով:

Նա հիմնավորում էր թուրքերի՝ հայոց ցեղասպանությունը շարունակելու ծրագիրը, որը բխում էր պանթուրքիզմի գաղափարախոսությունից: Ջարևանդը 1926թ. հրատարակեց «Ինչ կը ծրագրեն թուրքերը – Միացեալ Անկախ Թուրանիա» աշխատությունը¹, որտեղ մանրամասն ներկայացնում է պանթուրքիզմի գաղափարախոսությունը և հայ ժողովրդին սպասվող վտանգները: Բոստոնի «Հայրենիք» օրաթերթի հոդվածագիրը, խոսելով Ջարևանդի այս գրքի մասին մատնանշում է, որ այն «իրական ահազանգ մըն է սպառնացող ահաւոր վտանգի մը, որու ազդարար ծայնին ի յուր չենք կարող խցկել մեր ականջները եւ թօթուելով ուսերնիս շարունակել մեր սովորական ճամբան»²: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պանթուրքիզմի գաղափարախոսությունը վտանգում էր նաև Ռուսաստանի ամբողջականությունը, ինչի մասին Ջարևանդը գրում է իր աշխատության մեջ, ավելի ուշ գիրքը թարգմանվում է նաև ռուսերեն³:

Ջարևանդի տեսակետի ամենաեռանդուն պաշտպաններից էր ՀՅԴ- Բյուրոյի անդամ Շահան Նաթալին: Նա գտնում էր, որ անկախ Խորհրդային Հայաստանի ռուսական հովանավորությունից, Թուրքիան ծրագրում է ամբողջապես ոչնչացնել հայությանը և Հայաստանը, «որը կանգնած է Անգո-

¹ **Ջարևանդ**, *Միացեալ Անկախ Թուրանիա*, կամ ինչ կը ծրագրեն թուրքերը, 1926, 228 էջ:

² **Մ. Օգանեան**, Միացեալ անկախ Թուրանիա, «Հայրենիք» օրաթերթ, Պոստոն, 1927, 18 յունուարի:

³ Ռուս վտարանդի գործիչ, պատմաբան Ալեքսանդր Կիզևետտերը Բեռլինի ռուսալեզու «Ռուլ» թերթի 1930թ. հունվարի 15-ի համարում կոչ է անում ռուս հասարակությանը լրջորեն վերաբերվել համաթուրանականությանը Ջարևանդի հնչեցրած մտահոգություններին: Սակայն, ինչպես ճիշտ է նկատում «Հայրենիք»-ի հոդվածագիրը, Կիզևետտերին ավելի շատ մտահոգում է Ռուսաստանի սպազան, այլ ոչ թե հայ ժողովրդի անվտանգությունը (տե՛ս **Պ. Վեմեան**, Համաթրքականության մասին, «Հայրենիք» օրաթերթ, 1930 թ., 20 փետրուարի):

րայի եւ Բագուի միջեւ»⁴։ Շահան Նաթալին, մտահոգիչ համարելով թուրքերի հետապնդած պանթուր-քիզմի գաղափարախոսության ծրագրերը, կոչ է անում տեսնել դրանք, զգոն լինել և չզիջել պահանջի ու պայքարի իրենց դիրքերը։

Այս տեսակետից բոլորովին այլ կարծիք ունեին ռամկավարները։ Ռամկավար գործիչ, պատմա-բան Արշակ Սաֆրաստյանը Փարիզի «Ապագայ» թերթում հրատարակած իր հոդվածում խոսելով Ջարևանդի գրքի մասին անիմաստ է համարում «համաթուրանական «վտանգին» տալ անսովորորէն հիւանդագին կարեւորութիւն»⁵։ Ըստ նրա, կարիք չկա հայ քաղաքական միտքը ծանրաբեռնել նման կարծիքներով։ Ջարմանալին այն է սակայն, որ Ա. Սաֆրաստյանը համաթրքության վտանգ չի տեսնում այն բացատրությամբ, թե իբր «իմաստուն թուրք պետական գործիչները» երբեք բանակներ չեն շարժի դեպի արևելք⁶։ Արշակ Սաֆրաստյանը դեռևս 1923թ. անիմաստ էր համարում թուրքերին ընդդիմանալը, փաստացի դեմ էր Փարիզում հայկական գույզ պատվիրակությունների գործունեությանը։ Նրա կարծիքով ավելի կարևոր ու ազդեցիկ պետք է լինի Կ. Պոլսի պատրիարքի խոսքը, իսկ հայ-թուրքական հարաբերություններում պետք է գերադասել Թուրքիայի հայության մնացորդացի անվտանգությունը⁷։ Ռամկավար գործիչը փաստացի, ելնելով իր ենթադրած իրողությունից, առաջարկում էր հաշտվել թուրքերի հետ։

Ընդհանրապես ռամկավարները հակված էին առանձնակի լրջությամբ չսկեռվել հայ-թուրքական հարաբերությունների վրա։ Նրանց մոտեցումը հիմնավորվում էր նրանով, որ Խորհրդային Հայաստանի շենագումն առավել կարևոր և գործնական է, քան հայ-թուրքական հարաբերությունների՝ իրենց համար անորոշ հեռանկարով զբաղվելը։ Փոխարենը առաջնային էր համարվում առավել սերտ հարաբերվել խորհրդային (ռուսական) իշխանությունների հետ։

Անդրադառնալով ՀՅԴ դիրքորոշմանը՝ նշենք, որ այս կուսակցությունն իր 10-րդ (1925թ.) և 11-րդ (1929թ.) Ընդհանուր ժողովներում հայտարարել է, որ շարունակելու է պայքարը Թուրքիայի դեմ «դիւանագիտական, ֆիզիքական եւ տնտեսական ճանապարհներով, մինչեւ որ դարատոր թշնամին զիջի նկատի առնելու համար Հայկական արդար իրաւունքները»⁸։

Տարագիր հայ հասարակական-քաղաքական մտքի մի թևն էլ (հիմնականում՝ դաշնակցական որոշ գործիչներ) կարծում էր, որ պետք է ընդունել ստեղծված իրականությունը և լեզու գտնել թուրքերի հետ։ Այս տեսակետին հարողները գտնում էին, որ հայ-թուրքական հարաբերությունների նման ընթացքը կարող է ավելի գործնական դարձնել Հայաստանի անկախացումն ու ռուսական ազդեցության թուլացումը։

1922-1923 թթ. հետաքրքիր հրապարակմամբ հանդես եկավ Հայաստանի Առաջին Հանրապետության արդարադատության նախարար, Բոստոնի «Հայրենիք» ամսագրի հիմնադիր-խմբագիր Ռուբեն Դարբինյանը (Արտաշես Չիլինգարյան), որ իր «Հայ քաղաքական մտքի դեգերումները» հոդվածաշարով առաջ էր քաշում այլ տեսակետ։ Ըստ նրա մեր ֆիզիկական գոյության վտանգը ստիպում է այնպիսի ուղի հարթել, որը կդյուրացնի հաշտությունը թշնամու հետ։ «Տարրական ողջամտութիւնը մեզի կ'ըսէ սակայն, որ, եթէ հայ ժողովուրդը կ'ուզէ ապրիլ Կովկասի մէջ ապահով ու ազատ, պարտատուր է հաշտուիլ Թուրքիոյ հետ ոեւէ կերպով,- վաղ թէ ուշ - աւելի լաւ է վաղ, քան ուշ, որպէսզի չափազանց ուշ չլինի», - գրում է Ռ. Դարբինյանը⁹։

Հայ-թուրքական հարաբերությունների վերլուծության հետաքրքիր փորձ է կատարել Հայաստանի Առաջին Հանրապետության զինվորական նախարար, ականավոր դաշնակցական գործիչ Ռուբեն Տեր-Սիմասյանը։ Իր «Հայ-թուրքական կնճիռը» աշխատության մեջ նա անխուսափելի անհրաժեշտություն է համարում անցյալի սխալներից դասեր քաղելը և համապատասխան քայլեր ձեռնարկելը։ Որպեսզի հնարավոր դառնա հայերի և թուրքերի համատեղ ու հաշտ գոյությունը, ըստ Ռուբենի, թուրքերը պետք է հրաժարվեն տիրող ժողովուրդ լինելու սկզբունքից, պետության առաջադիմությունը կասեցնող համախալամական գաղափարներից, ինչպես նաև Քեմալի որդեգրած պանթուրքական գաղափարներից¹⁰։

Ի դեպ, «Հայ-թուրքական կնճիռը» գրքի կապակցությամբ «Հայրենիք» ամսագրի հիմնադիր-խմբագիր Ռուբեն Դարբինյանը Ռուբեն Տեր-Սիմասյանին համարում է այն եզակի գործիչներից մեկը, որ կարողանում է զսպել իր բնական վրեժի զգացումները և «կատարեալ առարկայականութեամբ» քննարկել խնդիրը՝ կատարելով արժեքավոր գնահատումներ ու եզրակացություններ¹¹։ Նույն Ռ. Դարբինյանը 1924թ. մայիսին «Հայրենիք» օրաթերթում Ռուբեն Տեր-Սիմասյանի վերոնշյալ գրքին նվիրված

⁴ Շահան, Թիւրքիզըն Անգորայէն Բագու եւ թրքական օրիէանտալիսի (քննադատական հայ քաղաքական մտքի),

Աթէնք, տպագր. «Նոր օր», 1928, էջ 9։

⁵ Ա. Սաֆրաստեան, Համաթուրանականութիւն եւ մենք, «Ապագայ», Փարիզ, 1927, 3 սեպտեմբերի։

⁶ Նույն տեղում։

⁷ Ա. Սաֆրաստեան, Մեր քաղաքականութիւնը Թուրքիոյ հանդէպ, «Արև», Ալեքսանդրիա, 1923, 12 ապրիլի։

⁸ Կ. Ս. (Խմբագրական), Թրքական օրիանթալիսիոն, «Յառաջ», Փարիզ, 1930թ., 23 յուլիսի։

⁹ Ռ. Դարբինեան, Հայ քաղաքական մտիք դեգերումները, «Հայրենիք» ամսագիր, Պոստոն, 1923, հոկտեմբեր, էջ 142։

¹⁰ Ռուբեն, «Հայ-թուրքական կնճիռը», Գահիրէ, 1924, էջ 157։

¹¹ Ռ. Դարբինեան, Հայ-թրքական կնճիռը (գրախոսական), «Հայրենիք» օրաթերթ, 1924, 21 մայիսի։

գրախոսականում գրում է. «Դժբախտաբար հայ հրապարակագրությունը ...գրեթե երբեք ընդունակ չէ եղած անհրաժեշտ սառնասրտությամբ գնահատության ենթարկելու այն բոլոր խնդիրները, որոնք վերաբերում են թուրքի ժողովրդին եւ Թուրքիոյ: Մեր մտաւոր եւ քաղաքական առաջնորդներու մեծագոյն մասը ղեկավարուեր է աւելի զգացումներով եւ վրէժի ու ատելութեան ներշնչումներով քան առողջ բանականութեան եւ իրականութեան ազատ թելադրութիւններով: Ոչ մէկ հարցի մէջ խուժանավարական մղումներն ու ամբոխային գռեհիկ բռնկումները այնքան չեն իշխեր հայ քաղաքական մտքի վրայ, որքան մեր յարաբերութեանց մէջ հանդէպ Թուրքիոյ եւ թուրք ժողովրդին»¹²:

Մեր կարծիքով Ռուբեն Դարբինյանի և Ռուբեն Տեր-Սինասյանի խիստ չափավոր մոտեցումները պայմանավորված էին նրանց պետական աշխատանքի փորձառությամբ և հայ ժողովրդի իրական ներուժը գնահատելու համոզմամբ: Ի տարբերություն ռամկավար քաղաքական մտքի նրեկայացուցիչների, նրանք առաջնահերթ էին համարում նաև անկախության հարցը և հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարը պատկերացնում էին անկախ Հայաստանի գոյությամբ:

Խնդրի վերաբերյալ քաղաքական տարբեր հայացքների տեր մտածողների քննարկումները, փոխադարձ վիրավորանքները և սեփական ճշմարտացիությունն ապացուցելու փորձերը շարունակվեցին նաև 1930-ական թվականներին:

Կահիրեում հրատարակվող ռամկավար պաշտոնաթերթ «Արևի» խմբագիր Վահան Թեքեյանը գրում է, որ «զաղութահայությունը պէտք է դադրի ... Թուրքիոյ դէմ երկրային պահանջներ դնելէ»¹³: Վահան Թեքեյանի այս խմբագրականը քննադատության է ենթարկվում Փարիզի դաշնակցական օրաթերթ «Յառաջ»-ի կողմից¹⁴:

Այսպիսով՝ 1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարը պատկերացնում էր երեք հիմնական ուղղվածությամբ:

Տարագիր մտածողների մեծ մասը, ովքեր ցեղասպանության ցավն անմիջականորեն կրած արևմտահայեր էին, թուրքերի հետ հաշտեցումն ու հետագա հարաբերությունները պատկերացնում էին միան Արևմտյան Հայաստանը հայության վերադարձնելու պայմաններում:

Առավել չափավոր և իրենց տեսակետով իրատես գործիչներն առաջարկում էին ընդունել ընդունել ստեղծված իրականությունը և լեզու գտնել թուրքերի հետ: Այս տեսակետին հարողները գտնում էին, որ հայ-թուրքական հարաբերությունների նման ընթացքը կարող է ավելի գործնական դարձնել Հայաստանի անկախացումն ու ռուսական ազդեցության թուլացումը:

Սփյուռքում հաստատված հայ քաղաքական որոշ շրջանակներ էլ հակված էին առանձնակի լրջությամբ չսևեռվել հայ-թուրքական հարաբերությունների վրա: Նրանց մոտեցումը հիմնավորվում էր նրանով, որ Խորհրդային Հայաստանի շենացումն առավել կարևոր և գործնական է, քան հայ-թուրքական հարաբերությունների՝ իրենց համար անորոշ հեռանկարով զբաղվելը: Փոխարենը առաջնային էր համարվում առավել սերտ հարաբերվելը խորհրդային (ռուսական) իշխանությունների հետ:

Khachatur Stepanyan (Armenia)

THE ISSUE OF ARMENIAN-TURKISH RELATIONS BY ASSESSMENT OF ARMENIAN DIASPORA PUBLIC-POLITICAL THOUGHT (1920-1930S)

Wings representing Diaspora-Armenian's public-political thought 1920-1930s depicted prospective of Armenian-Turkish relations in the following main three directions: a) on the basis of any relation with Turks should be the condition of returning Western Armenia to Armenians; b) no considerable relation with Turks – considering prosperity of Soviet Armenia and improvement of relations with Soviet authorities the main objective; c) just be in normal relations with Turks for the sake of regaining independence of Armenia even for some time accepting the loss of Western Armenia.

¹² Ռ. Դարբինյան, Հայ-թրքական կնճիղը (գրախոսական), «Հայրենիք» օրաթերթ, 1924, 21 մայիսի:

¹³ Վ. Թեքեյան (Խմբագրական), Թուրքեիայ յարաբերութիւնները, «Արև», Գահիրե, 1931, 6 մարտի:

¹⁴ Ը. (Խմբագրական), Մինչեւ այստեղ իջանք, «Յառաջ», Փարիզ, 1931, 25, 26, 27 մարտի:

Համիկ Ստեփանյան (Հայաստան)

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՍՍԱՆՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՈՒ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԿԱԶՄԸ

Մինչև Սուլթան Մահմուդ Բ-ի գահակալության շրջանը (1808-1839), հայերը միշտ հեռու են գտնվել երկրի ղեկավարման աստիճաններից: Դրանք վերապահված են եղել տիրող թուրք ազգին: Վերջինս երկար ժամանակ իր համար անհարիր է համարել նստակյաց ազգերին հատուկ զբաղումները՝ արհեստները, երկրագործությունը, առևտուրը: Այն թողնվել է հայատակ ազգերին, որոնք և իրենց վրա կրելով երկրի տնտեսական զարգացման պարտականությունը, այնքան են առաջադիմել որոշ բնագավառներում, դարձնելով այն իրենց մենաշնորհը, որ նույնիսկ սկսել են ղեկավարել այդ բնագավառները, որպես պետական բարձրաստիճան պաշտոնյաներ:

1721թ., երբ Ահմեդ Գ-ն Փարիզ, Լյուդովիկոս 15-րդի պալատ պետք է ուղարկեր իր դեսպանին՝ Սեհմեդ Չելեպի էֆենդիին, նախապես հայտնի թուրք ընտանիքների շատ երիտասարդներ, որպես դեսպանատան աշխատակիցներ ուղարկվել էին արտասահման՝ սովորելու քաղաքացիական մասնագիտություններ և, իհարկե, զինվորական գործ: Ֆրանսերենն այդ ժամանակներում համարվում էր դիվանագիտական լեզու: Այս երիտասարդներից շատերը, ինչպես նաև սուլթանական շատ ու շատ բարձրաստիճան հպատակներ, ելնելով ազգային ավանդույթներից, չէին համաձայնում որպես դեսպաններ, նույնիսկ կարճ ժամանակով, մեկնել քրիստոնյա երկրներ: Այս պատճառով է, որ եվրոպական, օտար երկրներ դեսպաններ պատրաստելու առաջին փորձերն անհաջողության մատնվեցին:

Մի քանի պետական գործիչներ, որոնք եղել էին այդ երկրներում, տեսել ու հասկացել որոշ չափով Եվրոպան, գտան, որ եվրոպական տերություններից այդչափ ետ մնալն իրենց երկրի համար կարող է պատճառ դառնալ վաղահաս կործանման:

Մինչև 19-րդ դարի առաջին տասնամյակները թուրքերը համարյա ծանոթ չէին եվրոպական պետություններին, նրանց քաղաքականությանը, կյանքին, կենցաղին, մշակույթին և այլնին:

Իրապես, եվրոպական տերությունների կարծիքով Օսմանյան կայսրության պետական ու դիվանագիտական համակարգը հիվանդ մարմնի էր նման, որին ոչ թե բուժել էր պետք, այլ բաժանել, օգտագործել, նաև՝ հայերի օգնությամբ:

19-րդ դարի սկզբին սուլթանական պալատը հասկացավ, որ արտաքին քաղաքականության ասպարեզը շտապ կարիք է զգում արմատական փոփոխությունների ու նոր մոտեցումների, մեթոդների: Նրանք ստիպված էին հրաժարվել եվրոպական երկրների նկատմամբ մեծապետական ու առավելություններ ունեցողի կեցվածքից ու պատրաստ լինել գոնե հավասարը հավասարի նկատմամբ գործելակերպի: Միայն այդկերպ հնարավոր կլինեք գուցե պահպանել Օսմանյան միապետության ամբողջականությունը:

Այն, ինչ արդեն հնարավոր չէր լուծել զենքի ուժով, հույս ունեին հասնել դիվանագիտության օգնությամբ:

Այս պատմական շրջանի համար հետաքրքրական աղբյուրներ կարող են ծառայել դեսպանների կողմից պարբերաբար Յոլդզ ուղարկվող պաշտոնական գրությունները: Զեկուցագրերից շատերը հեռու են անգամ մնանվելու դիվանագիտական զեկույցների ընդունված ձևերին ու ավելի շատ ճանապարհորդական հուշերի են մնանվում:

1846թ. Աբդուլ Մեջիդի օրոք Ստամբուլում հիմնվեց համալսարան, որը պիտի ապագայի համար դիվանագետներ դաստիարակեր: Թուրք ապագա դիվանագիտական կորպուսը սկսեց սովորել լեզուներ, ծանոթանալ եվրոպական դիվանագիտական մշակույթին ու օրենքներին: Իսկ մինչ այդ օսմանյան դիվանագիտական կորպուսի համար անհրաժեշտ մի հզոր բանակ, որը կարող էր տրամադրել միայն Պոլսի հայ կրթյալ գաղութը: Եվ այս հանգամանքը փրկարար օղակ հանդիսացավ կայսրության համար անելանելի թվացող այս ժամանակաշրջանում:

Հայերը ճանաչված էին որպես մտավոր մեծ հնարավորությունների տերներ: Բազմիցս ապացուցվել էր նրանց, որպես կայսրության հավատարիմ ծառայող հպատակներ լինելու հանգամանքը: Սուլթանները հիմնականում նրանց հարստությանը չեն խանդել, համոզված լինելով որ անհրաժեշտության դեպքում այն անպայման կծառայի կայսրությանը: Պալատն ունեցել էր հայազգի վեզիրներ, ծովակալներ, հայազգի զորավարներ, թող որ մի մասը՝ դեշիրմեի (մանկահավաքի և բռնի կրոնափոխության) արդյունք: Հայերը գրավել են հնարավոր բարձր պաշտոններ, անգամ մինչև վեզիր, մեծ եպարքոս, կարևորագույն գավառների կառավարիչներ, հավակնել նույնիսկ խտիվության (Եգիպտոսի փոխարքա): Նրանք լծվեցին այս առաքելությանը, ծառայելով ոչ թե գուտ օգնական օղակներ, այլ որպես գործունեության կարևոր ու հիմնական ծանրությունն ապահովող լծակներ: Թուրք նախարարների հետ միասին նրանք վարեցին մի շարք նախարարությունների նախարարների, փոխնախարարների ու գերատեսչության ղեկավարների պատասխանատու պաշտոնները:

Այս մեկդարյա շրջանը հայերի համար եղավ երկրի կառավարության տարբեր բնագավառներում, վարչական ասպարեզում, իրավական կյանքում որոշակի դեր խաղալու և բարձր աստիճաններ գրավելու ժամանակաշրջան: Այն ոչ միայն օգնեց ներկայացնելու պատշաճ մակարդակով կայսրությունը եվրոպական քաղաքական, տնտեսական հարթություններում, այլև ի դերն բերեց հայկական մտքի, տաղանդի, ուշիմության ու հավատարմության արժանիքները: Հայերը ճանաչվեցին եվրոպական ամենաբարձր մակարդակներում, թագավորական տներում ու արքունիքներում, գիտական ու մշակութային ամենատարբեր ասպարեզներում, արժանանալով այդ երկրների տիրակալների ու կառավարությունների, ակադեմիաների և տարբեր հաստատությունների մեծագույն պարգևներին ու փառքի:

Որևէ դիվանագիտական ներկայացուցչության կազմ անհնարին էր պատկերացնել առանց հայազգի պաշտոնյայի: Փաստ է նաև, որ շատ քիչ բացառությամբ ողջ դիվանագիտական ներկայացուցչությունների ու նախարարությունների հիմնական աշխատուժը եղել են հայերը ու որ նրանց ուսերին է եղել ողջ ծանրությունն ու պատասխանատվությունը: Եվ դա վերաբերում էր ոչ միայն կայսրության օտարերկյա դեսպանատներին ու հյուպատոսարաններին, այլև նույն այդ օտար երկրների Պոլսում գործող դեսպանատներին ու հյուպատոսարաններին:

19-րդ դարի 30-ական թթ. թուրքական դիվանագիտության պատմության մեջ սկիզբ դրվեց նոր դարաշրջանի: Հայազգի դիվանագիտական կորպուսը ներկայացնող դեսպանները, հյուպատոսները, ավագ թարգմանիչները, խորհրդականները լծվեցին այս առաքելությանը, ծառայելով որպես երկրի հիմնական ծանրությունն ապահովողներ:

Նրանց ուսերին է եղել թարգմանական, արտասահմանյան, իրավաբանական խորհրդականներ, քարտուղարության, մինչև անգամ հաշվակալական բաժինների ողջ ծանրությունն ու պատասխանատվությունը: Ավելին, հայտնի են պոլսահայ դիվանագետներ, որոնք եվրոպական տերություններն էին ներկայացնում մի այլ եվրոպական պետության մեջ: Այս բոլոր գործիչները ոչ միայն բարձրացին միջազգային ասպարեզում Օսմանյան կառավարության հեղինակությունը, այլև իրենց գործունեությամբ պատիվ ու բարի համբավ բերեցին իրենց ազգին, լավագույնս ճանաչել տվին հային քաղաքական ամենաբարձր մակարդակներում: Նրանք հավատարմորեն ծառայեցին ոչ միայն սուլթանական արքունիքին, Բարձր Դռանը, այլև ազգաշահ գործերով ու բարեգործություններով շռայլ ու պայծառ էջեր գրեցին արևմտահայության պատմության մեջ:

Մենք հակված ենք այն մտքին, որ շուրջ 1000 հայազգի մասնագետներ դրսևում և ավելին երկրում զբաղված էին դիվանագիտական ծառայությամբ: Մենք անվանաբար գիտենք միայն նրանց մասին, որոնք սուլթանական կառավարությունից տարբեր աստիճանների պարգևներ, շքանշաններ են ստացել: Մինչդեռ դիվանագիտական ներկայացուցչություններում հայ թարգմանիչների, քարտուղարների, գրասենյակի պատասխանատուների, բժիշկների մեծ բանակի առկայությունն անհերքելի է:

19-րդ դարում Օսմանյան կայսրության դիվանագիտական արտաքին ու ներքին կորպուսի, տարբեր նախարարություններում կարևորագույն պաշտոններ ունեցող հայազգի գործիչների մի որոշակի մասը, նաև արտասահմանում եղած ժամանակ հարել են ֆրանսիական ու շոտլանդական օթյակներին և չեն թաքցրել այդ փաստը:

Նրանք հիմնականում ռոմանտիկներ են եղել, վեհ գաղափարների կրողներ ու զարմանալիորեն շուտափույթ գերի են դարձել առաջադիմական հովերին, տարվել դրանցով ու հավատացել, թե լուսավորական, եվրոպական առաջադեմ գաղափարները գնահատող ու կրողները կարող են իսկապես եղբայրներ լինել՝ անկախ դավանանքից, անկախ երկրում տիրող իրավիճակից: Այդ մարդիկ, որոնք սերուցքն են կազմել ազգի, փարվել են ամեն մի առիթի, որը երկրին ու այնտեղ ապրող ազգերին, մասնավորապես հայերին, մարդկային արժանապատիվ ապագա կխոստանար, ավելի ուշ՝ գուցե նաև ազատություն: Կարևոր շարժառիթ է հանդիսացել այն հանգամանքը, որ ինչպես բոլոր հպատակ ժողովուրդներն Օսմանյան կայսրությունում, այնպես էլ հայերը, Բարենորոգումների քաղաքականությունից (Թանգիմաթի շրջանից) չստացան իրենց երազանքների, հույսերի իրականացման տեսանելի մի գործոն և հույսերի իրականացումն ու ազգի փրկության ճանապարհը փորձելու էին փնտրել նոր, տարբեր ուղիներում ու «խոստումնալից» հնարավորություններում: Այսպիսի առիթներից էր եվրոպական ազդեցության ամենահին տեսակներից մեկով անհիմն խանդավառվելը: Այն է՝ եղբայրանալ մասոնական օթյակների շնորհիվ: Իսկ դրանց թիվը Պոլսում, 19-րդ դարի վերջերին, 50-ից էլ ավել էր: 19-րդ դ. և 20-րդ դ. սկիզբը նշանավոր է եղել հայկական մասոնական օթյակների հիմնադրմամբ:

Իրարամբժ կուսակցություններ ու միություններ, տարբեր եկեղեցիներ, դասակարգեր, մասոնականություն... Այս ամենը բերում է ազգային մի «հիվանդության ծայրակետի», երբ սկսում են «համարձակորեն» բարձրաձայնել սեփական ազգի խոցերի մասին՝ ավելորդ ստրկամտություն, այլ ազգերի նկատմամբ չափից ավելի երկրպագում, ի վնաս սեփական ժողովրդի, և անհիմն ժողովրդականություն ազգակցի նկատմամբ: Չէին կարողանում անվերապահորեն ընդունել ամենակարևորը՝ թե հայ ժողովրդի ուժը յուր միասնության մեջ է: Հենց այսպիսի ծվատված վիճակն է ժողովուրդներին մեծագույն ողբերգությունների հասցնում:

* * *

Դիվանագիտական առաքելությունները չեն սահմանափակվել տարբեր երկրների ներկայացուցչությունների մաս կազմելով ու գլխավորելով: Սուլթանի կողմից եվրոպական արքայական դեսպերին տարբեր առիթներով ներկայանալու, նվերներ, շքանշաններ հանձնելու կարևոր արարողությունների, ուր անհրաժեշտ է եղել ելույթներ ունենալ, որպես կանոն, տեսնում ենք ոչ թե դեսպան փաշաներին, այլ հիմնականում նրանց հայ խորհրդականներին:

Հայազգի պաշտոնյաները անդամակցել են դիվանագիտական, մասնավորապես պատերազմական ժամանակներում տարբեր տիպի բանակցությունների ու հաշտության դաշնագրերի ստորագրմանը, միջազգային կազմակերպությունների համաժողովներում, նաև՝ միջազգային ցուցահանդեսներում ներկայացրել են կայսրությունը, ստորագրել բազմաթիվ կարևոր համաձայնագրեր, վարել կարևորագույն բանակցություններ:

Մեծ է եղել Հայ մասնագետների ներդրումը միջազգային իրավական կազմակերպություններում թուրքական կողմի ներգրավման գործում (Կարմիր Խաչ և Կարմիր Մահիկ, Փոստ հեռագրական միջազգային կազմակերպություններ, Միջազգային տարբեր ցուցահանդեսներ և այլն):

Մինչ Մեծ Եղեռնը Նրանց մի մասի պաշտոնաթողությունը և արտագաղթը Թուրքիայից սկսվեց Ադանայի կրկնակի կոտորածներից հետո: Մինչ սուլթանական կառավարությունն ամեն ինչ անում էր այն կոծկելու համար: Օրինակ, Փարիզում կաշառվել էին երեք տասնյակից ավել պարբերականներ: Հենց այս խավի շնորհիվ է հիմնականում որ եվրոպական տերություններն իրազեկվեցին այս ոճրի մասին, և Եվրոպան ցնցվեց այս ջարդերից:

Սուլթանական դիվանագիտության կարկառուն շատ դեմքեր համիդյան ջարդերից սկսյալ հրաժարվեցին իրենց պաշտոններից և արտագաղթեցին, չցանկանալով կամ չկարողանալով ծառայել այս երկրին, որին նվիրվել էին, հուսալով որ սեփական ազգի անկախության համար իրենց ներդրումն են ունենալու:

Նրանց որոշ մասի սպանությունն ու աքսորը թուրքական երախտագիտության ապացույցներից կարելի է համարել:

Hasmik Stepanyan (Armenia)

ARMENIAN GENOCIDE AND ARMENIANS ON MINISTERIAL AND FOREIGN SERVICE IN THE OTTOMAN EMPIRE

Since the very forming of the Ottoman ministries and diplomatic body Armenians officials who had been mainly educated in European countries played an immense role in the establishment of the above institutions.

After the massacres in Adana top ranking officials of Armenian descent began to lose their positions and leave the country. Later - during the genocide part of the Armenian personnel was either victimized or displaced.

ՀԱՅ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Левон Батиев (Россия)

ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ ДИАСПОРЫ АРМЯН ДОНА И СОХРАНЕНИЕ ЭТНО-НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ

Юг России (Южный и Северо-Кавказский федеральные округа современной Российской Федерации) был и остается в силу объективных причин одним из наиболее привлекательных с точки зрения миграции армян регионов. За последние века сформировалось несколько организованных и стихийных переселенческих волн, обусловленных разными причинами, и проходивших в неодинаковых социально-экономических и политических условиях. Вследствие этого внутри южнороссийской части армянской диаспоры, объединенной единством происхождения, религии и языка (за редкими исключениями), сохраняются особенности диалекта, бытовой культуры, локальной исторической памяти и даже идентичности отдельных групп. Соответственно этому существовали и сохраняются особенности встраивания армянского населения в жизнь принимающего сообщества и практика сохранения этнокультурной идентичности армян.

В научной литературе и публицистике обычно называют три основные этнокультурные группы армян-переселенцев. Это – донские армяне (Ростовская область), черкесогаи (г. Армавир и Майкоп) и амшенские армяне (российское Причерноморье). Следует, однако, учитывать, что указанными группами не ограничивается этнокультурное многообразие армянского населения на территории современного юга России. Так, к примеру, нужно отметить армян из Карабаха переселившихся на Северный Кавказ в XVIII веке (Мушкурская и Дербентская провинции Дагестана, Кизляр, Моздок, Шелкозаводское, Карабаглы, г. Святой Крест, переименованный Советской властью в Прикумск, а затем – Буденновск). Многовековую историю насчитывает армянская колония в Астрахани. Наиболее интенсивно армянская община Астрахани росла во второй половине XVIII века, чему способствовал постоянный приток переселенцев из Закавказья и Ирана. Впервые именно астраханские армяне получили в 1747 г. в Российской империи автономию со своими судебными-административными органами.

Перечисленные выше группы относятся к так называемому старожильческому населению. К ним же можно прибавить и значительное число мигрантов начала XX века бежавших от геноцида 1915 года, а также небольшое число мигрантов советского периода, которые достаточно успешно «акклиматизировались» в новом социокультурном пространстве.

Новая переселенческая волна в конце XX века была обусловлена погромами и этническими чистками в Азербайджане, конфликтом в Нагорном Карабахе, спитакским землетрясением, распадом СССР, ростом национализма в бывших советских республиках и тяжелым экономическим положением.

По данным российской переписи населения 2010 г. всего в РФ проживает 1.182.388 армян (для сравнения: численность постоянного населения Армении, согласно результатам переписи 2011 года, составила чуть более 3 млн человек). Более половины из них зарегистрировано на юге России. При этом 5/6 от общего числа проживает в трех субъектах в пределах ЮФО и СКФО – в Краснодарском (281,7 тыс. чел.) и Ставропольском (161,3 тыс. чел.) краях и Ростовской области 110,7 тыс. чел.).

Если существенный рост численности армян в макрорегионе произошел в период между 1989 – 2002 гг., то в Краснодарском крае высокая динамика прироста армянского населения отмечается уже с 1979 г. За это время армянское население края выросло более чем в два раза – со 114,4 тыс. чел. до 281,7 тыс. Заметную долю в этом приросте составила миграция. Однако в последний переписной период общий миграционный приток в крае формируется не за счет внешних миграций, а за счет мигрантов из других регионов России (72 % миграционного прироста в 2002 г.), основную часть мигрантов составляют русские.

Большая часть армянского населения локализована в Причерноморье, это прежде всего район Большого Сочи, города Краснодар, Новороссийск, а также г. Армавир и др. В сравнении с предшествующим периодом плотность армянского населения в пределах этих территорий существенно возросла.

На втором месте по численности армянского населения на юге России находится Ставропольский край. Численность армян в крае увеличилась с 2002 на 12,1 тысячи человек, а с 1989 года - в

2,3 раза и составила на сегодня 161,3 тысячи человек (перепись 2010 г.). Сегодня армяне занимают второе место по численности населения в крае - 5,9%.

Начало формирования современной армянской диаспоры на Дону относится к 70-м годам XVIII в., когда из Крымского ханства по указу императрицы Екатериной II было организовано переселение армян на пустующие земли в низовьях реки Дон. Переселившиеся в XVIII веке на Дон, крымские купцы и ремесленники образовали город Новый Нахичевань (позднее – Нахичевань-на-Дону), а сельские жители – шести сел, продолжая заниматься теми промыслами, которыми они ранее занимались на крымской земле.

Второй этап формирования армянской диаспоры Дона относится к 1915 г., периоду армянского геноцида, когда тысячи армян из Западной Армении, спасаясь от геноцида, устроенного турецкими властями, бежали в южные районы Российской империи (и в том числе на Дон к донским соотечественникам, у которых многие нашли приют, кров и убежище). По оценкам исследователей, мигранты второй волны постепенно смешались с крымскими переселенцами, и на сегодняшний день практически не отличаются от них. В советский период армянское население Ростовской области менялось незначительно, его увеличение вполне соотносится с динамикой естественного прироста (49,3 тыс. чел. в 1939 и 1959 годах, 53,6 тыс. в 1970, 62,6 тыс. в 1989 годах).

Третий этап формирования армянской диаспоры Дона относится к концу 1980-началу 1990-х годов. В этот период в связи с межнациональными конфликтами на территории бывшего Советского Союза, сопровождавшими процесс образования молодых национальных государств на развалинах СССР, на территорию Ростовской области хлынули потоки беженцев из Грузии, Азербайджана и в связи с тяжелой экономической обстановкой – из самой Армении. Общий прирост армянского населения в период с 1989 г. до 2002 г. составил 48 тыс. чел. В Ростовской области произошло почти двукратное увеличение – от 62,6 тыс. до 110,7 тыс. человек. Доля армян в населении области выросла с 1,4 до 2,5%. Но на этом увеличение численности армянского населения практически остановилось. Как видно из официальных данных переписи, период с 2002 г. по 2010 год характеризуется практически полным отсутствием общего прироста. Другими словами, официальная статистика не подтверждает массовый приток армян на территорию нижнего Дона в последний переписной период. Такая же тенденция обнаруживается в Краснодарском крае, где был максимальный прирост на протяжении последних пяти десятилетий (от 75,2 тыс. в 1959 г. до 281,7 тыс. в 2010 г.). В Волгоградской области и Калмыкии также отсутствует прирост армянского населения. А в Астраханской области и Дагестане даже наблюдается уменьшение общей численности армян.

В подавляющем большинстве представители третьей волны армянских переселенцев осели в городах Ростовской области – армянские общины появились и были зарегистрированы в таких городах, как Таганрог, Шахты, Новочеркасск, Азов, там, где ранее до 1980-х годов армяне практически не проживали. Зарегистрированы культурно-национальные общины, организуются воскресные школы для обучения армянского языка, отмечаются общенациональные праздники, оказывается вновь прибывшим соотечественникам.

Важнейшей проблемой армянского анклава внутри Российской империи было сохранение национальной идентичности: культуры, языка, религии, исторической памяти. Существенным условием её сохранения было изначально организованное коллективное переселение, компактное проживание, а не дисперсное расселение и местное самоуправление. Вплоть до середины XIX в. Нахичевань-на-Дону оставался практически мононациональным городом, полностью состоявшим из армян. Самостоятельное существование г. Нахичевани-на-Дону отстаивалось армянской общиной и городскими властями. Основным борцом за самостоятельность выступала Городская Дума, которая вплоть до конца XIX века была по своему составу представлена исключительно местными армянами. Учащиеся как городских, так и сельских учебных заведений изучали армянский язык. В городе широко отмечались различные армянские праздники, на Дон приезжали видные деятели армянской культуры. Одним из средств обеспечения национальной идентичности армянской диаспоры Дона было также сохранение собственной веры (в городе вплоть до 1930-х годов сохранялось семь армянских церквей и монастырь Сурб Хач).

Быстрый рост русского населения и наоборот сравнительно медленное увеличение численности армян Новой Нахичевани (слабый приток населения извне и сильный отток в другие места) привели к тому, что накануне первой мировой войны армяне уже не имели численного превосходства: русские уже больше половины населения города, армяне – 40%. Сельские поселения оставались моноэтничными, включая в себя лишь несколько процентов инородных жителей.

В Советском союзе возможности этнокультурного воспроизводства малых групп населения в значительной степени определялось государственной политикой. Одним из элементов такой политики было создание национальных районов. Главной задачей национальных районов являлась вовлечение

национальных групп в социалистическое строительство, с одной стороны, и осуществление интересов национальных меньшинств, сохранение и развитие национального языка (в том числе перевод делопроизводства на местные языки, открытие школ с преподаванием на национальных языках) и культуры – с другой.

Один из двух армянских районов был организован на юге России на нижнем Дону постановлением Донского Окружного Исполнительного комитета: «как отвечающее непосредственному желанию самого армянского населения Донского округа в соответствии с условиями быта и языка этого населения». Центр Мясниковского района находился вначале в г. Нахичевани, а позднее с. Чалтырь. Нор-Нахичеван и Мясникованский сельсовет не были включены в состав национального района. Немного позднее Нор-Нахичеван стал частью Ростова-на-Дону. Население района составляло в этот период около 25 тыс. человек.

Национальные районы и сельсоветы как форма административно-территориальной организации населения должны были на своем уровне решать задачи «коренизации». Целью коренизации являлось вовлечение национальных групп в социалистическое строительство, с одной стороны, и сохранение и развитие национального языка и культуры – с другой.

В середине 1930-х гг., произошло принципиальное изменение национальной политики. Начало этому положили выводы о «решённости» национального вопроса в СССР, прозвучавшие в 1935 г., отмена Всесоюзного совещания по вопросам языка и письменности национальностей СССР, намеченная на апрель 1936 года. В Конституции СССР 1936 г. национальные меньшинства уже не упоминались. Развитие национальных районов и сельсоветов не укладывалось в рамки идеи «сближения и слияния наций» и формирования единой советской общности на основе русского народа. После 1936 года «национальную» принадлежность двух районов уже обозначали реже, не упоминали о 100% коренизации аппарата.

1 декабря 1937 года Оргбюро ЦК ВКП(б) рассмотрело вопрос «О ликвидации национальных районов и сельсоветов» и признало нецелесообразным их дальнейшее существование. Весь 1938 год шел процесс реорганизации районов и национальных сельсоветов. Решение Оргбюро «О ликвидации и преобразовании искусственно созданных национальных районов и сельсоветов» окончательно было утверждено на заседании Политбюро 20 февраля 1939 года. Одновременно с этим было принято решение о ликвидации национальных школ и вузов как наносящих вред делу советского воспитания.

В настоящее время в России существование национальных районов и сельсоветов не предусмотрено. Формами обеспечения этнокультурных прав и интересов населения являются национально-культурные объединения – автономии, общества, ассоциации, центры.

Приток большой массы мигрантов последней волны стал своего рода «экстенсивным» фактором обеспечения самоидентификации армян, роста общественных организаций, воспроизводства культурных традиций и обычаев. Резкое уменьшение миграции армян, наблюдаемое в последнее десятилетие, означает, что соответствующий ресурс уже исчерпан. Сейчас на повестке дня стоит задача «интенсивного» развития. За двадцать постсоветских лет произошел достаточно успешный процесс аккультурации. На повестке дня – снова вопрос сохранения идентичности. Для решения этой задачи необходимо четко осознавать специфический состав современной диаспоры. Если переселенцы из Армении (в первую очередь старшее поколение) отличаются хорошим знанием родного языка и письменности, поскольку получило среднее и зачастую высшее образование на армянском языке, то младшее поколение, особенно те, кто пошел в школу на новой родине скорее могут знать устную речь и не обязательно владеют армянской грамотой. Особое внимание в этом отношении следует уделить тысячам переселенцев из Закавказья, которые в союзных республиках зачастую обучались в русских школах, а также их детям и внукам.

Одним из принципиально важных факторов для сохранения этнокультурной идентичности, как показывает практика, является компактное проживание. Так, несмотря на достаточно длительный период проживания вне пределов исторической Родины относительно однородной остаются субэтническая группа донских (крымских или анийских) и амшенских армян, сохранивших свои культурные традиции. Но переселенцы новой волны в Ростове и других городах области по объективным причинам расселяются скорее дисперсно, чем компактно. В этих условиях особое значение имеют различные формы самоорганизации диаспоры.

Важными инструментами осуществления культурно-просветительской работы и поддержания армянской идентичности являются также газеты («Нахичеван-на-Дону» и «Ноев Ковчег»). Следует также отметить работу армянского виртуального колледжа и других армянских образовательных учреждений и программ, помогающих всем в освоении армянского языка, истории и культуры. Велика роль Армянской Апостольской церкви в сохранении армянской идентичности и воспитании духовных

ценностей армянской диаспоры. Не секрет, что религиозная принадлежность является одним из маркеров национальной идентичности.

Существенным условием сохранения общеармянской идентичности для диаспоры являются прочные разносторонние связи и активное взаимодействие со всеми заинтересованными организациями в Армении. Участие в реализации гуманитарных программ Республики Армения необходимо не только для обеспечения их эффективности. Оно создает чувство причастности к общенациональным идеям и целям, способствует укреплению армянской идентичности и ее воспроизводству в новых поколениях.

Вопросы сохранения самобытности, развития языка, образования, национальной культуры решаются в современной России в рамках национально-культурной автономии (общественных организаций, объединяющих российских граждан определенной этнической принадлежности) в соответствии с федеральным законом «О национально-культурной автономии» от 17 июня 1996 г. и других форм самоорганизации населения. Действующие в Ростовской области армянские общественные организации являются важным фактором в деле сохранения армянской идентичности, родного языка, культуры, национальных традиций, возрождения культурного и интеллектуального потенциала. Важную, в том числе объединительную, роль в этом деле играет Ростовская Региональная Армянская национально-культурная автономия «Нор Нахичеван». На повестке дня стоит задача преодоления разобщенности и усиление взаимодействия армянских общественных организаций Ростовской области для реализации общеармянских программ.

Levon Batiev (Russia)

THE PECULARITIES OF THE FORMATION OF THE DIASPORA OF ARMENIANS IN DON AND THE PRESERVATION OF ETHNO-NATIONAL IDENTITY

The formation of the Armenian diaspora in the South of Russia during several emigrant waves determined its diversity and its specific strategies of preserving the ethnocultural identity and integrating them into the region's life. Due to the lack of opportunity of compact living national and cultural associations of the diaspora and connections with Armenia are very important for ensuring All-Armenian identity.

Նվարդ Երնջակյան (Հայաստան)

ԱՁԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒՄ

Հոդվածում փորձ է արվում ներկայացնելու ազգային ինքնության¹ ընդգրկումն ու բազմաբնույթ հարացույցի լեզվամշակութային ու գրական-գեղարվեստական դրսևորումները Ջոյս-Մաթևոսյան գոյադրության քննությամբ:

Յուրաքանչյուր ազգային ինքնություն ունի առանձնահատկություններ, որոնք ի հայտ են գալիս ինքնության հարացույցի տարաբնույթ խոսույթներում^ա քաղաքական, իրավական, գիտական, տեխնիկական, այսօր նաև համակարգչային: Մասնավորեցնելով^ա նշենք, որ ազգային ինքնության լեզվամշակութային հայեցակերպը, որպես մշտապես գործոն՝ հաստատում, ամփոփված ժողովրդական ինքնագիտակցության մեջ, լավագույնս արտացոլվում է նաև գեղարվեստական երկերում ու հրապարակախոսական արձակում, յուրովի վերածվելով ինքնության տեքստերի՝ օժտված ազգային նկարագրի ձևավորման իր բազում գործառնություններով:

Ազգային ինքնության հարացույցը քննարկելիս առնչվում ենք բազմաթիվ խնդիրների, քանի որ ինքնությունը՝ որպես անհատական ու հասարակական գիտակցության դրսևորում, ունենալով իր կայուն բնութագծերը՝ հիմնականում կապված անհատական և էթնիկ ժառանգորդության հետ, այնուամենայնիվ ենթակա է փոփոխությունների: Այդ է պատճառը, որ արդի անգլիացին, իռլանդացին կամ հայը

¹ ՀՀ-ում ազգային ինքնության դիսկուրսը մեծ հնչերանգ է ձեռք բերել վերջերս, տարիներ առաջ նույնիսկ նախագիծ է ներկայացվել հայոց ինքնության օր հռչակելու վերաբերյալ՝ մտազուգորդված Հայկի^աԲեյին նետահարելու վիպասային դրվագի հետ: Հայապահպան ռազմավարության շրջանակներում այսօր էլ ազգային ինքնության հարացույցը դիտարկվում է պատմամշակութային ժառանգության արժեքման, մայրենի լեզվի ուսուցման (արևելահայերեն/արևմտահայերեն), մշակութային ու իրավահասարակական հաստատությունների զարգացման և, ընդհանուր առմամբ հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման արդիական և հրատապ խնդիրների շրջանակում:

նույնը չեն, ինչպիսին որ էին, ասենք վաղ միջնադարում կամ Վերածննդի շրջանում. տեղն ու ժամանակը իրենց կնիքն են դնում ազգերի, ժողովուրդների և մարդկանց վրա՝ նրանց ձևավորելով, ինչպես ասում են, «ի պատկերի յուրում»։ Օրինակ, Անգլիայի նախաձեռնողական-առաքելական քաղաքականությունը ունեցել է ոչ միայն միավորիչ և դրական նշանակություն, այլև հարուցել է նույն բրիտանական ազգային ու պետական ինքնությունը կերտող իռլանդացիների, շոտլանդացիների և ուելսցիների դժգոհությունը, որը հաճախ արտահայտություն է գտել նաև գրական երկերում՝ ձևավորելով բրիտանական բազմամշակութային շերտերի ինքնությունները։ Բրիտանական ազգային նկարագրին բնորոշ կայսերական, առաքելական, հասարակական բարձր ինքնագիտակցությունը տարիմաստ ընկալումներ է հարուցել իռլանդական քաղաքական ու մշակութային շատ գործիչների հայացքներում թե՛ դրական, և թե՛ ժխտողական առումներով։

Վերոնշյալի համատեքստում առանձնանում է Ջ. Ջոյսը, ով առաջադրում է համամարդկային հնչեղություն ունեցող հարցեր, որոնք դուրս են գալիս անգլիական կամ իռլանդական ազգային ինքնության սահմաններից։ Մյուս կողմից՝ սեփական երկփեղկված *ես*-ի² տեսանկյունից ազգային արժեքների նկատմամբ ատելության ու նվիրական սիրո, ավստասնքի, գայրույթի, հույսի ու իր իսկ ազգային ինքնությունը կերտողի և այն կատարելագործողի ակնկալիքով գրողը դիտարկում է իռլանդական իրականությունն ու հասարակությունը դուրիճյան քաղաքային առօրեական ու ծիսաարարողական կենցաղի հարահոսում, փաստագրական ճշմարտացիությամբ՝ *ջոյսյան* լավ փայլեցրած հայելու մեջ։ Ջոյս-Գաբրիել դերակատարությամբ *The Dead* (Մեռյալները) պատմվածքում նա շեշտադրում է մարդ էակի պատմականորեն ձևավորված ազգային պատկանելությունից ու մայրենի լեզվից հրաժարումը հոգեբանական անկման՝ հոգևոր անգոյության կորուստի էպիֆանիայի միջոցով. դիպվածով և հանկարծակի բացահայտվում է, որ Գաբրիելը անսեր մի էակ է, և նրա սեփական էությունը անէանում է, *His own identity was fading out into a gray inpalpable world*³:

Ջոյսը հեռանում է Դուրլինից, սակայն նրա ինքնության որոնումը չի ավարտվում նույնիսկ պատմամշակութային կամ կրոնահավատալիքային կտրուկ շրջադարձերի տարփողումով։ Մասնավորապես հետաքրքիր է Իռլանդիայի պատմաքաղաքական անցյալն ու ներկան պատկերագրող հետևյալ հատվածը, որը հեղինակային նուրբ հեզմանքով, ուրույն լեզվաոճական հնարներով ու տեքստային անդրադարձներով⁴ ներկայացնում է իռլանդական մի իրողություն. ծաղրանմանակվում են հասարակական կյանքի տարբեր ոլորտները՝ իրենց ներկայացուցիչներին բնորոշ արտեֆակտերի խորհրդրանշական կիրառությամբ, կարծես, ընթերցողին հուշելով, որ այլևս չկա ոչինչ ուշագրավ՝ թվարկումից զատ։ Այսպես, *Surrounded by pennons of the civic flag. The van of the procession appears headed by John Howard Parnell, city marshal, in a chessboard tabard, the Athlone Pursuivant and Ulster King of Arms. They are followed by the Right Honourable Joseph Houtchinson, lord mayor of Dublin, twentyeight Irish representative peers, sirdars, grandees and maharajahs beating the cloth of estate, the Dublin Metropolitan Fire Brigade, the Chapter of saints of finance in the their plutocratic order of precedence ...*⁵

Թե՛ Ջոյսը, և թե՛ Մաթևոսյանը ազգային ինքնությունը չեն արտահայտում իբրև օտարի-յուրայինի անսահման հարացույցում առկա տարբերությունների պարզունակ գրանցում, ընդհակառակը, շեշտադրում ու կարևորում են մարդ էակի ներաշխարհն ու լեզվամշակութային միջավայրը լեզվաբանաստեղծական դաշտում։ Այսուհանդերձ, մեկ այլ պատմամշակութային միջավայրից մեկնարկելով, Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործական և կենսագրական ինքնության մանրամասները ներդաշնակում են ազգային պատկանելության *մեր* ընկալման տեսլականին՝ յուրային-օտար բանաձևում հնչում է նրա «Ես նրանց որդին եմ, նրանցից եմ ստեղծվել, ինձ նրանք են ստեղծել... այդ մունջ մշակը... այդ հարևանուհին... այդ խեղճ հորթարածը... այդ մարտիկը...»։ Ակնհայտ է, որ նրա հերոսների կենսագրականների շարադրանքն ընդգրկում է ոչ միայն սոսկ կյանքի պատմություններ՝ անհատի/անհատականության դերակատարություններով հանրությամբ, այլև փաստարկների ու ընդհանրացումների արտատեքստային ու միջտեքստային իրողությունների կիրառում՝ վերնշանային մակարդակում։ Օրինակ՝ «Նրանց մասին Դուկասի Ավետարանն ասում է. և երբ քահանայապետերն ու

² Ինքնության լեզվամշակութային արժարժույթների առնչությամբ նշենք լեզվի տրամաբանական վերլուծության ուսումնասիրություններում դերանունների դեմագոգիկ կիրառությունների քննությունը, օրինակ *դու*-ի որպես *ես*-ին՝ *էզո*-ին ի սկզբանե. թշնամի լինելու գաղափարը։ Մա յուրովի առկա է *եսասիրություն*, *ինքնասիրություն* բառամիավորների ներիմաստներում, ի հակադրություն որոնց ձևավորվում են *խիղճ*, *ամոթ*, *պատիվ* և այլ համահասարակական հասկացություններ, որոնք վերահսկում են *էզո*-ի եսասիրական ինքնության դրսևորումները։ Այս համատեքստում ուշագրավ է *արքունական պոետ* բառակապակցության առնչականությունը՝ որպես բացասական, ի հակադրություն ազատ, անկանխակալ ստեղծագործողի իմիջի։

³ J. Joice, *The Dead, Modern English short stories*, Moscow, "Foreign Languages Publishing House", 1960 p. 76.

⁴ Այսօրինակ տեքստերը և դրանցում առկա տարաբնույթ անդրադարձները (նշանային, վերնշանային) բնորոշվում են որպես գլոբալ ուղղաձիգ համատեքստ։ Տե՛ս Гюббенет И. В., Основы филологической интерпретации литературно-художественного текста, М., МГУ, 1991, с.39.

⁵ J. Joyce, *Ulysses*, London, 1960, Penguin, p.456

իշխաններն նրան Գողգոթայ էին հանում, կյուրեմացի Սիմոն կոչված մեկին բռնեցին՝ որ հանդից էր գալիս, խաչը շալակը տվին, որ Հիսուսի հետևից բերի...»⁶

Ահա այս՝ ավետարանական բնութագիր ունեցող սիմոնների հետ է ուզում նույնանալ նա, քանի որ ինքն էլ այդպիսին է. տուրք տալով կարծրատիպերին նշենք, որ, գրողին ու նրա հերոսներին հատուկ է լռեցիների քախծախառն հումորը, գյուղացու/միամիտ vs քաղաքացու/երկմիտ նկարագրի քրիստոնեական ռեմինիսցենցիան (վերջինս բնորոշ է նաև Ջոյսին)՝ ներկա օրերում: Հեղինակային ինքնության զուգադրության առումով հետաքրքիր է Ինքնակարի փորձ-ից մեջքերված Մաթևոսյանի միջտեքստային անդրադարձը Ջոյսին.ֆոլկլորյան Մունկը կործանվելու է գնում... ինչպես Ռդիսը հուշկապարիկի երգի ետևից: Ուշագրավ են նաև Մաթևոսյանի «Ուզում եմ ձայնավորել այդ չժամկետավոր Մոցարտին, աստվածացնել եմ ուզում այդ չբացահայտված Քրիստոսին, ուզում եմ ազատել այդ կաշկանդված Պուգաչովին, այդ չբացված, սերմի մեջ խեղդված ծաղկի բույրը ուզում եմ արձակել...» (նույն տեղում, էջ 15) հատվածի վերջին տողերը հատկանշական են, թերևս, որպես խորհրդային գաղափարախոսությունից տարիներ անց հնչող յուրօրինակ անդրադարձ՝ հագեցած փոխաբերություններով ու տարաբնույթ մշակութային նշույթներով:

Հրանտ Մաթևոսյանն իր ստեղծագործություններով («Օգոստոս», 1967, «Ծառերը», 1978, «Երկեր», հ.1-2, 1985 և այլն) արտահայտել է հայկական ինքնության այն տեսակը, որ ի հայտ է եկել Լոռվա հեքիաթային լանդշաֆտն իր մեջ կրող ահնիժորցու մեջ. Ջոյսը դուրբինյան լանդշաֆտը պատկերել է ինչպես դասականները՝ Ֆլորենցիան⁷: Ինչ վերաբերում է Մաթևոսյանի ահնիժորյան-ժողովրդական կերպարների հետ նույնականանալու հայեցակետին, ապա այս պարագայում ևս գրողը հակադրամիասնության մեջ է մտնում ջոյսյան «լավ փայլեցրած հայելու» տեսակետի հետ, քանի որ, ի վերջո, իրեն նույնականացնելով հարազատ միջավայրի մարդկանց հետ՝ Մաթևոսյանը ինքը ևս օժտվում է «լավ փայլեցրած հայելու» հատկություններով և անդրադարձնում ազգային ինքնության մի շատ բնութագրական նիստը՝ որպես *ինքնակարի*, իսկ Ջոյսը՝ դիմանկարի վարպետ:

Nvard Yernjakyan

Manifestations of National Identity in Armenian and British Contemporary Literature

The research addresses the assumption of the possible parallel negotiation of H. Matevosyan's and J. Joyce's literary works in nation – culture – language – identity construction and practices. The heterogeneity of the two writers and their works actually stimulates fruitful discussion and considerations on fictionalized identity representations. The common features of both writers' narratives are rich in intercultural allusions and intertextual speculations. They associate issues of national belonging with Joyce's portrait of ambiguous identity in terms of otherness, sympathy and improvement to view the local community and Irishness, and Matevosyan's self-portrait of harmony, dedication and sameness with Armenianness.

Սեյրան Զաքարյան (Հայաստան)

ԱԶԳԱՅԻՆԸ ԵՎ ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ազգային ինքնության հարացույցների կառուցարկման պատմությունը ցույց է տալիս, որ դրանց ձևավորման ընթացքում բարդ ու հակասական հարաբերություններ են առաջանում մի կողմից ինքնության երկու բաղադրամասերի՝ էթնիկականի (ազգայինի) և աշխարհաքաղաքականի (վերազգայինի, ապազգայինի, քաղաքացիականի), մյուս կողմից՝ հին և նոր ինքնությունների միջև: Ժամանակի ընթացքում կառուցարկված հայոց ինքնության տարբեր հարացույցներում էական նշանակություն է ունեցել հենց էթնիկականի (ազգայինի) և աշխարհաքաղաքականի փոխհարաբերության հարցը: Ընդամենը, այդ հարացույցների փոփոխության ժամանակ նկատելի է հետևյալ օրինաչափությունը՝ ինքնության կառուցաստեղծման սկզբնական շրջանում աշխարհաքաղաքացիական սկզբունքները դիտվում են իբրև համամարդկային ու հումանիստական արժեքներ, որոնք առավել ու գերադասելի են համարվում ավանդական, իմա՝ ազգային արժեքներից: Այնուհետև տեղի է ունենում այդ աշխարհաքաղաքական սկզբունքների ու ինստիտուտների ազգայնացման գործընթաց, այսինքն՝ դրանք

⁶ Հ. Մաթևոսյան, Երևան, 1990, էջ 3:

⁷ Умберто Эко, Поэтика Джойса, Санкт-Петербург, Symposium, 2003,

սեփականվում են և հարմարեցվում տվյալ ազգի ավանդական արժեքներին կամ համապատասխանեցվում տվյալ ազգի հոգեկերտվածքի արխետիպային գծերին: Այսպես, ինքնության հեթանոսական հարացույցի հիմքում ընկած է էթնիկության, ցեղայնության սկզբունքը. մարդը իրեն ճանաչում է ցեղի միջոցով, ցեղն է ապահովում նրա նույնականությունը: Հարացույցը հայտնվում է ճգնաժամի մեջ, երբ էթնիկության սկզբունքը փոխարինվում է աշխարհաքաղաքացիական որևէ սկզբունքով, տվյալ դեպքում՝ քրիստոնեական կրոնով: Հեթանոսական հարացույցի արժեքները հեղինակագրվում են կամ՝ լավագույն դեպքում ստորադասվում նորերին: Անհատը իրեն նույնացնում է ոչ այնքան ցեղի, ազգի, որքան կրոնական համայնքի հետ: Կրոնական ինքնության և ազգային ինքնության սահմանները համընկնում են: Ինքնության լուսավորական հարացույցը կրոնականի փոխարեն առաջադրում է քաղաքացիական ինքնության նախագիծ՝ Պետություն, Սահմանադրություն և Քաղաքացի եռամիասնությամբ: Օրենքը փոխարինում է խղճին ու հավատքին, պետությունը՝ եկեղեցուն, քաղաքացին՝ կրոնական համայնքի անդամին: Եկեղեցին վերածվում է սովորական սոցիալական ինստիտուտի: Հայոց ինքնության լուսավորական նախագիծը սկսվում է կառուցակազմվել Մադրասյան խմբակի Սահմանադրությունից, Եկեղեցու և Գրաբարի դեմ պայքարից, ազգային հեղափոխությունից, քաղաքական կուսակցությունների ձևավորումից, ազգի, Հայրենիքի, այդ թվում Հոգևոր Հայրենիքի և պետության լիարժեք քաղաքացի դառնալու, մասամբ նաև անկախ պետություն ստեղծելու գաղափարների արծարծումներից: Ազգային ինքնության կրոնական հարացույցի սիմվոլիկ մասը Բեռլինի Վեհաժողովից հետո ազդարարում է Խրիմյան կաթողիկոսը՝ իր «երկաթե շերտի» փիլիսոփայությամբ, իսկ իրական մասը՝ երբ եկեղեցին վերածվում է կոլտնտեսության գոմի, պահեստի կամ կուսքջջի հավաքատեղիի:

Այսօր էլ ազգային ինքնության արդիականացման գործընթացում հակասական հարաբերություններ են առաջանում ինքնության ազգային և քաղաքացիական հարացույցների միջև: Ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս նկատելի է երկու ծայրահեղ տեսակետ: Մեկը ծայրահեղացնում է «համամարդկային» կամ եվրոպական արժեքները, այսինքն՝ գերազանցապես շեշտը դնում է քաղաքացիական ինքնության, իսկ մյուսը՝ էթնիկական ինքնության վրա: Ինքնության ազգային հարացույցի հենասյուններն են ազգ, հայրենիք, ազգային մշակույթ, ազգային արժեքներ ու ավանդույթներ, ազգային գաղափարախոսություն և ազգային կոչվող այլ իրողություններ, իսկ ինքնության քաղաքացիական հարացույցինը՝ պետություն, հասարակություն, Սահմանադրություն, քաղաքացի, մարդու իրավունքներ և այլն: Պետականության պայմաններում այս երկու հարացույցները կարող են համընկնել կամ կարող են որոշ հարցերում իրար հակասել: Օրինակ, ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածով ճանաչվում է գաղափարական բազմակարծությունը և բազմակուսակցությունը, մինչդեռ ազգային գաղափարախոսությունը, որի մասին ՀՀ Սահմանադրության մեջ խոսք չկա, ենթադրում կամ պահանջում է միակարծություն: Ազգային գաղափարախոսության մի տարբերակի տեսանկյունից ինքնության հիմնապատկեր է հեթանոսական հավատքը, իսկ մյուսի տեսանկյունից՝ քրիստոնեական կրոնը և Հայաստանյայց առաքելական եկեղեցին, մինչդեռ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ա) կրոնը անջատված է պետությունից, բ) գոյություն ունի խղճի ազատություն, այսինքն՝ յուրաքանչյուր քաղաքացի ազատ է դավանելու կամ չդավանելու որևէ կրոն: Այսինքն՝ մենք վաղուց այլևս կրոնական համայնք ու կրոնական հասարակություն չենք, այլ քաղաքացիական հասարակություն ու քաղաքական ազգ, որի ինքնության որպիսությունը չի կարող պայմանավորված լինել միայն կրոնական պատկանելությամբ: Միաժամանակ դա չի նշանակում պատմական ավանդույթի, մեր ինքնության պատմական բնույթի անտեսում կամ մեր ինքնության տարրերի խիստ հարաբերականացում: Օրինակ, որքան էլ կրոնը անջատենք պետությունից, միևնույն է, հնարավոր չէ պատկերացնել մեր ինքնությունը առանց քրիստոնեական արժեհամակարգի տարրերի:

Ինչպե՞ս պետք է լուծվեն ազգային և քաղաքացիական միջև առկա հակասությունները: Մի բան սկզբիցևեթ պարզ է, որ դրանց հակադրումը տանում է դեպի փակուղի: Մերօրյա ազգայնականները ազգն ու պետությունը, ազգայինն ու պետականը հակադրում են իրար, Սահմանադրությունը դիտում աշխարհաքաղաքական դրույթների հավաքածու, որն իբր անհամատեղելի է ազգային գաղափարախոսության հետ: Մինչդեռ ազգային և քաղաքացիական, ազգային գաղափարախոսության և Սահմանադրության հակադրումը ոչ թե նպաստում, այլ, ընդհակառակը, խոչընդոտում է բազմազանության վրա հիմնված միասնական ինքնության կառուցաստեղծման գործին: Հասկանալի է, որ Սահմանադրությունը Ս.Գ.իրք չէ, այսինքն՝ ենթակա է փոփոխության, հետևաբար այն կարող է լրացվել այնպիսի դրույթներով, որոնք բխում են մեր կյանքի տրամաբանությունից: Բացի դրանից, եթե մենք չենք առաջնորդվում և չենք ապրում ազգային արժեքներով ու ավանդույթներով, ապա դրանում մեղավոր են ոչ թե Սահմանադրության ընդհանրական դրույթները, այլ մենք՝ մեր գործելակերպով ու մտածելակերպով: Ինքնության պահպանման ու արդիականացման տեսանկյունից էականը ոչ թե ինչ-որ արժեհամակարգի փառաբանումն է, այլ դրանով առաջնորդվելը:

Միաեթնիկ պետության (կամ գրեթե միաեթնիկ, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը), բավարար նախադրյալներ կան ազգային և քաղաքացիական, էթնիկ և քաղաքացիական ինք-

նությունների նույնացման, դրանց փոխարկման ու հավասարակշռման համար: Ազգայինը պետք է դրսևորվի քաղաքացիականի միջոցով, քաղաքացիականը պետք է ունենա ազգային բովանդակություն: Ազգայինը պետք է դրսևորվի քաղաքացիական կառույցների միջոցով, իսկ վերջիններս էլ պետք է հարստացնեն ազգայինի բովանդակությունը, հանդես գան որպես ազգայինի դրսևորման միջոցներ: Միով բանիվ, քաղաքացիական կառույցներն ու արժեքները կյանքի կազմակերպման ընդհանրական ու քաղաքակրթական ձևեր են, որոնք պետք է օգտագործել ոչ թե ազգայինը «մոռացության տալու», այլ, ընդհակառակը, այն արդիականացնելու և նոր մակարդակի հասցնելու համար:

Սակայն այս փոխգործակցությունը հնարավոր է միայն այն դեպքում, եթե կարգավորվեն իշխանություն-քաղաքացի հարաբերությունները, եթե իշխանությունը և քաղաքացին հավատարիմ մնան իրենց կարգավիճակին ու գործառնություններին: Իշխանության խնդիրն է «ստեղծել» քաղաքացի, իսկ քաղաքացու խնդիրն է նպաստել պետության բարգավաճմանն ու հզորացմանը: Եթե քաղաքացին չի հարգում պետությանը, այսինքն՝ չի ենթարկվում օրենքներին, չի կատարում իր պարտականությունները, մտածում է օրենքները շրջանցելով խաբել պետությանը, ապա նա երբեք չի կարող լինել ո՛չ քաղաքացիական և ո՛չ էլ ազգային արժեքների պաշտպան: Օրինազանց քաղաքացին չի կարող ճշմարիտ ազգասեր լինել: Մյուս կողմից, եթե ո՛չ թե իրավունքը, այլ իշխանությունն է կարգավորում սոցիալ-տնտեսական, քաղաքական ու միջամենային հարաբերությունները, ապա անխուսափելի են դառնում բռնապետական կամ ավտորիտար վարչակարգերին բնորոշ անբարո երևույթները: Եթե իշխանությունը դիտվում է որպես հարստանալու, պետական ռեսուրսները սեփական շահին ծառայեցնելու միջոց, ապա այդպիսի պայմաններում վստահությունն իշխանության, օրինախախտության մարմնացում հանդիսացող «տերերի» հանդեպ նվազում է, աճում է սոցիալական դժգոհությունը, քաղաքացին օտարվում է պետությունից, օտարվում է նաև իր ազգային ինքնությունից կամ ավելի ճիշտ՝ այլևս գլուխ չի հանում իր իսկ ինքնությունից: Եթե ի պաշտոնն «ծառաները» վերածվում են «տերերի», օրինազանցությունը դառնում է խրախուսելի վարքագիծ, սեփական մեծության ու ամենակարողության անճաշակ ցուցադրումները՝ սոցիալական կարգավիճակի ցուցիչ, ապա ինքնաստեղծվող ինքնության հերոս է հռչակվում Homo trickster-ը՝ օրենքի ճեղքերում բնակվող այսպես կոչված «շնորհքով մարդը»¹, որը գործում է սոցիալական բոլոր տարածքներում՝ շուկայից մինչև Ազգային ժողով:

Նման պարագայում իշխանության կողմից ներկայացվող ինքնության նախագիծը հասկացվում է որպես իշխանական խմբերի հավակնությունների ու շահադիտական նկրտումների օրինականացման փորձ: Համընդհանուր անվստահության և անհանդուրժողականության պայմաններում պարտադրվող ինքնության հարացույցը, անգամ ծածկված ազգայնական փետուրներով, չի վերածվում անհատի նույնականությունն ապահովող միջոցի: Ձևավորվում են «կեղծ, անտարբեր ինքնություններ և նույնականացման կեղծ մեխանիզմներ», որոնք հանգեցնում են ինքնության թաքնված կամ բացահայտ ճգնաժամերի: Իսկ անտարբերության ու հիասթափվածության մթնոլորտում տարերայնորեն ու ակամայից ինքնություն կերտողները թրած ունեն թե՛ քաղաքացիական և թե՛ ազգային ինքնության նախագծերի վրա, որովհետև նրանց գոյաձևը դառնում է ցանկացած ինքնության այլասերումն ու արժեզրկումը կամ պարզապես փախուստը՝ հոգեբանական օտարման և արտագաղթի տեսքով: Այսինքն՝ վտանգավոր է դառնում ոչ թե արժեհամակարգերի բացակայությունը, այլ դրանց գործառնության խեղաթյուրումը: Փոխադարձ անվստահության մթնոլորտում թե՛ քաղաքացին և թե՛ իշխանությունը խաբում են պետությանը, այսինքն՝ բոլորս խաբում ենք բոլորին, և այդ ինքնախաբերության արատավոր շրջապատույթի մեջ խարխվում են ազգային ինքնության հիմքերը, տեսազրկվում ինքնության արդիականացման հեռանկարի ուրվագծերը:

Հայոց ինքնության արդիականացման նպատակը միասնական ինքնության հարացույց ստեղծելն է, ինչը, բնականաբար, ենթադրում է ինքնության տարբեր բաղկարարների, ինչպես նաև տարբեր նույնականությունների համատեղում-համադրում: Միասնական ինքնության ստեղծումը պետք է հենվի ո՛չ միայն և ո՛չ այնքան միանմանի, որքան տարբերվողի, բազմազանի ու տարասեռի վրա: Իսկ դա նշանակում է, որ ազգային ինքնության գաղափարախոսությունը պետք է ավելի լայն ընդգրկում ունենա՝ հաշվի առնելով Սփյուռքի գոյությունը:

¹ Տե՛ս **Ա. Ոսկանյան**, *HOMO TRICKSTER, կամ էսթետիզմի ծուղակները*, «Ռուբիկոն», 2004, թիվ 2/7/, էջ 86-93:

The Ethnic and The Civilian in the Process of Modernization of Armenian Identity

The history of construction of paradigms of national Identity shows that during their formation complex and controversial relations are emerging between the ethnic (national) and the cosmopolite (non-ethnic, trans-national) from one side, and between the new and the old identities from the other side. The following pattern could be seen during the change of paradigms of national Identity: in the initial phase of construction of the new paradigm cosmopolite principles are viewed as universal and humanistic values which are preferred against traditional, e.g. ethnic values. Then the process of nationalization of those cosmopolite principles takes place, e. g. these principles are accepted, internalized and adapted to traditional values of this nation or archetypical features of the given mentality. In the monoethnic state (or almost monoethnic as Republic of Armenia is) there are sufficient grounds for identification, complementarity and equilibrium between the ethnic and the civilian. The purpose of modernization of Armenian Identity is the creation of paradigm of unified identity, which naturally supposes synthesis of different components. The creation of the unified identity will be based not only and not so much on the similar, as on the different, the diverse and the heterogeneous (taking into account also the existence of Diaspora).

Бурастан Зулумян (Россия)

ИСТОРИОСОФИЯ ЛИТЕРАТУРЫ. Образ автора в «Истории Армении» Мовсеса Хоренаци

Литературное художественное слово отражает национальное самосознание и, в свою очередь, формирует его: через осмысление истории народ познаёт себя и своё место в мире.

Процесс историзации мифологического мышления начинается в эпоху Ервандидов (VI в. до н. э.), когда появляются эпические сказания, в основе которых лежат исторические события и персонажи, мифологическая картина мира медленно уступает место рационально-логическому мышлению и, в конечном итоге, историческому восприятию действительности, то есть миф с элементами истории превращается в историю с элементами мифа. Эта эпоха определяется как «ось времён» /К. Ясперс/¹, рассекающая циклически-неподвижный мир и дающая импульс к новому развитию литературного слова, в центре которого находится «преобразованный рефлексией» человек. Уже в древних эпических легендах и циклах явственно обозначилась онтологическая черта армянской литературы – историческая тематика и патриотический пафос, воплощённые в высокохудожественных текстах. Однако эта направленность литературы не осталась в пределах тематики, а обрела метафизический смысл, перейдя в область философии истории.

В письменном слове народ осмысливает и мир, и свою историю уже через индивидуально-авторскую рефлексии. Литература в условиях постоянных внешних угроз становится хранителем континуума национальной культуры и конструктором самосознания.

Специфику армянского культурного феномена V в. составляет жанр «Истории». «Истории Армении», которых написаны десятки, представляют собой развёрнутый нарратив с анализом, логическим причинно-следственным ходом изложения и, самое главное, автором-повествователем в центре. Они выполняют функцию доминанты, как и философия для греков, поэзия для персов, закон для евреев, то есть являются областью духовной жизни, где наиболее полно проявился народный гений. Произведения Хоренаци, Бюзанда, Агатангелоса, Егише выступают таким же стержнем идентичности для армянина, как и язык, религия, обычаи. Уже на этом этапе имеет место самоанализ, то, что в европейской науке Нового времени назовут историософией или философией истории. Этот уровень исторического самопознания достигает своего высшего проявления в «Истории Армении» Мовсеса Хоренаци.

В первую очередь для нас интересен образ автора – основная категория письменной литературы, отличающая её от устнопозитического слова. Именно он позволяет создать систему рассуждений и субъективно-эмоциональных оценок, возвышающих излагаемую фактическую историю до философии истории.

¹ Ясперс К. *Смысл и назначение истории*. М., 1991. С. 32-39.

У Корюна, Бюзанда, Агатангелоса авторское слово в значительной мере вплетено в повествование, выявляется через оценки, эмоционально-окрашенную лексику, в редких случаях авторский голос звучит в отступлениях и рассуждениях. Исключительной выразительностью и образностью отличается авторское слово Егише. Однако в своей «Истории Армении» Мовсес Хоренаци впервые создаёт целостный взгляд на историю, существующий порядок вещей. Именно осознанное авторство *демиурга*, творящего текст, как гармоничное целое, имеющее начало, развитие и конец, делает «Историю Армении» Хоренаци памятником искусства слова. Автор не безлично излагает объективную информацию, но выступает от своего лица. Автор-творец – конститутивный стержень художественной формы, и потому единство произведения – это «единство не предмета и не события, а единство обымания, охватывания предмета и события»².

Важнейшей конструктивной особенностью авторской речи является *диалогизм*. Центральная фигура диалога – сам Хоренаци, а адресатов же у него несколько. Во-первых – он сам, его внутренний поток рассуждений, характеристик составляют наиболее важную – аксиологическую – часть авторского слова; во-вторых, это его меценат и заказчик труда Саак Багратуни; в-третьих – это его читатель, современное ему общество, и возвышающийся над всеми уровнями корреспонденции – народ. Существенной особенностью, качественно отличающей труд Хоренаци от трудов своего времени, – это комментарии учёного, излагающего свою точку зрения. Он сам – действующее лицо и творец одновременно. Хоренаци полемизирует и осуждает, оценивает роль великих людей, их нравственные качества, и более всего – размышляет о судьбах родины, создав труд об истории народа, как и впервые – философию этой истории. Равно как и историю его души, личности неравнодушного гражданина и патриота, с его эмоциями, переживаниями и красотой научного и человеческого подвига.

На протяжении всей книги он вступает в разговор, а порой и в полемику со своим меценатом, имея всегда свой личностный подход. Так, приступая к выполнению просьбы Саака изложить какие-то персидские легенды, он пространно и эмоционально говорит: «Что за (странное) влечение у тебя к мерзостным и нелепым легендам о Бюраспи Аждахаке <...> Но ты велишь объяснить их бессмысленность и придать образ безобразному»³. Хоренаци противопоставляет их греческим, которые «изящные, гладкие и осмысленные, в коих под иносказаниями кроется истина» (48). Таким образом, он не только высказывает отношение к конкретным явлениям и фактам, но и определяет их место в системе ценностей, культурный и нравственно-духовный уровень различных миров.

На протяжении всего труда, помимо обращения к Сааку Багратуни, вычленяется ещё два уровня. Один – чрезвычайно важный – это научные комментарии к излагаемому материалу, другой – не менее значительные личные рассуждения автора, эмоциональные реакции. Комментирование, научное обоснование излагаемых фактов начинается почти с первых строк: формулируются задачи, то, какого рода труд это должен быть – «большой и полезный», что и каким образом нужно рассказать: «достоверно изложить историю своего народа и страны» (8). Неоднократно, на протяжении всего труда, Хоренаци утверждает свой принцип правдивости. Чрезвычайно важна его позиция по отношению к собственному народу, и здесь мы видим широкую амплитуду: от национальной критики до любви, боли и гордости за свой народ. В поток его рассуждений вплетается эмоциональный отклик в сторону правителей, которые были «нелюбознательны», никто, «жившие до нас и нынешние вельможи и правители Армянской страны» не проявили должного рвения и любопытства заказать такой труд, прибегнув к «чужеземной мудрости» (7). Хоренаци ясно осознаёт место армянского народа и страны в мире, утверждая, что «хоть мы и маленькая грядка <...> но и в нашей стране свершено много подвигов мужества, достойных быть письменно увековеченными» (7).

Диалогизм авторского слова Хоренаци проявляется в формулировании и возможных противоположных точек зрения. То есть мы имеем дело не просто с рассуждениями, а становимся свидетелями внутреннего диалога Хоренаци-автора и неких предполагаемых оппонентов, чьи возможные аргументы сводятся к тому, что история не записывалась из-за «отсутствия в то время письма и литературы, либо же из-за разнообразных войн, следовавших вплотную одна за другой». И тут же опровергает подобные предположения, считая их несостоятельными, «ибо были же промежутки между войнами, как и персидское и греческое письмо» (8).

Основной и самый объёмный дискурс авторского слова Хоренаци – научный, позволяющий констатировать несколько важнейших особенностей текста: во-первых, это масштаб его личности – мыслителя, учёного, патриота, – во-вторых, новое качество в написании исторических произведений. Неизменно критическое, аналитическое отношение ко всему, что он говорит или рассказывает, все факты пропущены через рефлектирующее сознание, эмоционально-нравственную оценку. Первейшая

² Бахтин М. *Вопросы литературы и эстетики*. М., 1975. С. 64.

³ Мовсес Хоренаци. *История Армении / Пер. с древнеарм., введение и прим. Г. Саркисяна. Ред. С. Аревшатян*. Ер., 1990. В тексте после цитат в скобках указаны страницы из этого издания.

забота Хоренаци – разбор источников, на которые он ссылается. Он их перечисляет (Мар Абас Катина, Бардацан), но первенство отдает грекам: «я не устану называть всю Грецию матерью и кормилицей наук» (7).

Научный комментарий сопровождает почти все эпизоды излагаемой истории, а научный подход обосновывается чётко и как сверхзадача. Если для Корюна в жизнеописании Маштоца основанием были его собственные воспоминания и впечатления, то перед Хоренаци стояла гораздо более сложная задача собирания и сведения воедино тех сведений, письменных и устных, которые были в его распоряжении. И в первую очередь, он обращается к обоснованию тех источников, которые он использовал. Автором определяется подлинность, а в ряде случаев также констатируется некоторая сомнительность фактов (скажем, устных преданий) Хоренаци почти всегда осознаёт разницу между легендарным, мифическим и реальным, историческим. Им проводится исследовательская работа по определению дат. К примеру, он пишет, что «тщательно исследовали и установили то, что восшествие на престол Трдата и его приход сюда с большой ратью произошли в третьем году правления Диоклетиана». Знаменитая формула Хоренаци «без хронологии нет подлинной истории» (127) неукоснительно выполняется им самим в меру сил и возможностей времени.

Тщательно комментируются и критически осмысляются вводимые в повествование факты, особенно когда это касается устнопоэтических источников. Ссылаясь на услышанное «собственными ушами», он оговаривает, что будет использовать те сведения, которые сочтёт достоверными. В другом случае, когда повествование переходит уже от легендарной части к собственно историческому и автор располагает трудами очевидцев, Хоренаци подчёркивает, выделяя важнейшие с его точки зрения аспекты: «Эта глава значительна и полна достоверных исторических сведений; она заслуживает отточенного и обстоятельного изложения» (62), либо прерывает себя, чтобы «длинные рассказы не были в тягость читателям», для него важно не только что он говорит, но и как это делает.

Особо значимым с точки зрения современного анализа является уровень авторского слова, направленного на читателя. Примечательно, что Хоренаци дистанцирует себя от читателя, у него есть понимание и осознание того, что он пишет и для кого. Читатель, как и Саак Багратуни, становится полноценной фигурой диалога. Называя его «разумным», Хоренаци призывает осмысленно отнестись к написанному, оставляет на его суд спорные вопросы.

Критическому анализу подвергаются и, казалось бы, общепринятые в то время предания. Хоренаци разбирает истории расселения народов, отмечая расхождения с Библией, на которую он как христианский писатель неизменно ссылается. Научный дискурс переплетается с эмоционально-личностным, авторским взглядом, рефлексия мыслителя с поэтическим вдохновением. В каждом эпизоде, давая яркие описания, характеристики своим героям и персонажам, исторической ситуации, Хоренаци проникает в причины и следствия явлений и событий, в характер народов. Временами он выступает как проповедник, взывая к благоразумию, добропорядочности: «О мужи Арамовы! Доколе вам быть жестокосердными». Самым глубинным (*анагогическим*, после буквального и дидактического, по определению средневековых риторик) уровнем духовно-нравственного содержания произведения Хоренаци являются его рассуждения и думы об армянском народе. Собственно он (народ) и есть последний и главный адресат и фигурант (молчаливый, как и читатель, но в слове автора заключаются возможные ответы) диалога. С безупречным вкусом художника («кертохаайра» – отца поэтов) он заканчивает свой труд «Плачем об утрате Армянского царства», который считается вершиной риторического и художественного мастерства своего времени. Здесь от воображаемого диалога Хоренаци переходит к монологу. Его пафос и пассионарность направлены на созидание душевного порыва, могущего укрепить национальное самосознание, подвигнуть народ на сопротивление существующему порядку, как социальному, так и политическому. Эмоциональные повторы, нагнетание образов, перечислений, сравнений позволяют создать лирически-субъективную и, в то же время, объективно-эпическую картину современного общества, над которым возвышается скорбящая и мысленно охватывающая глубины бытия и истории народа фигура патриота, мыслителя Хоренаци.

На протяжении всего труда из различных повествовательных уровней авторского слова вырастает грандиозная фигура автора-творца, возводящего здание своей «Истории» от легендарного прошлого, расцвета Великой Армении, до современного ему состояния разделённой страны. Это исторический труд, когда не только показывается, а творится целостная картина культурно-исторического бытия народа и его место во всемирной истории. Множественность уровней повествования скрепила сложную архитектуру целостного литературного творения – шедевра научного и художественного гения армянского народа. Это один из первых примеров многоаспектного авторского слова, который мы находим впоследствии в литературе, а именно в романном творчестве, а также в авторских исторических сочинениях.

Патриотическая тема в армянской литературе, «красной линией идущая от Егише» /Терьян/ и от Хоренаци и Бюзанда, со временем не остаётся на тематически-содержательном уровне, а обретает глубину историософского анализа, и первым на этом пути и непревзойденным по сей день был, несомненно, Мовсес Хоренаци.

Произведений патриотической направленности на всех этапах развития армянской литературы в различных жанрах и родах литературы огромное количество, и это предмет отдельного исследования. Вкратце отмечу только два этапа, когда патриотическая тема поднялась на новую высоту и обрела почти что главенствующее положение, статус «мировоззрения, идеологии» /П. Севак/.

В творчестве классицистов, затем романтиков (Багратуни, Алишан, Пешикташлян, Абовян, Налбандян, Патканян и т. д.) она заняла значительное место. Романтики противопоставляли современную им действительность героическому прошлому, укрепляли дух и вселяли надежду.

Новую страницу в истории армянской поэзии начала XX в. открыло творчество армянских символистов – В. Терьяна, Е. Чаренца, большинства западноармянских поэтов, испытавших сильное влияние этого направления, – М. Мецаренца, Сиаманто, Д. Варужана, В. Текеяна, Р. Севака. Если поэзия XIX в. имела несколько дидактический, описательный характер, то начало XX в. было периодом поэтического «взрыва», обретения нового качества. Восприняв символистскую эстетику, поэзия обрела новые образы иного – совершенного – мира, поиски которого были неотделимы от идеи свободной родины. Были созданы шедевры национальной поэзии без риторики и трибунности, характерных для такого рода произведений. Символисты создавали абстрактный мир добра и зла (Сиаманто). Обращаясь к собственной древности, через мифологические образы (Ваагна, Анаит) создавались новые символы красоты, мужества, огня (Варужан, Чаренц). Размышления Ваана Терьяна о «Духовной Армении» воплотились в поэтическом цикле «Страна Наири», где новым поэтическим языком, через ощущения, переживания и размышления поэта-странника создавался лирический образ родины. Этот цикл стал первоимпульсом для «Тагарана» Чаренца и его знаменитого стихотворения «Я солнцем вскормлённый язык моей Армении люблю», а также романа «Страна Наири». Размышления Сиаманто, Варужана, Текеяна, Терьяна, Чаренца о судьбах родины, христианства и варварства, о влиянии великих людей прошлого на культуру (Месроп Маштоц) по глубине и охвату проблем могут называться художественной историософией армянского народа. Идея Родины для армянских поэтов, как и для Александра Блока, становится тем Абсолютом, который придаёт смысл истории, преодолевает абсурд бытия.

Burastan Zulumyan (Russia)

HISTORIOGRAPHY OF LITERATURE

Character of the author in "The History of Armenia" by Movses of Chorene

Literature reflects the national consciousness and in turn generates it. The specific nature of the Armenian cultural phenomenon is the genre of "Stories" as a detailed narrative with self-analysis, the author-narrator in the center, performs the same core identification, like language, religion and customs, historiosophy or philosophy of history. Patriotic theme that goes from ancient legends and tales, folk songs wanderer in modern times is represented by a large number of highly artistic works, as in the works of Armenian Romantics and the Symbolists. In the poetry of the early XX century mythological symbolism actualized, the search of the perfect world is inseparable from the idea of free country. Reflections on the fate of the country and culture, Christianity and barbarism in the works Siamanto, Varuzhan, Tekeyan, Teryan, Charents become artistic historiosophy of Armenian people.

Փօլ Հայտնոյեան (Լիբանան)

ՍՓԻՒՔԱՀԱՅ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ ԵՒ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Մարդկային ընկերությունը կը ճանչցուի, կը զարգանայ, եւ հիմնական կերպով կը գոյատեւի իր հաստատություններով, այն պայմանով որ իբր հաստատություն մենք հասկնանք հաւաքական ճիզի ու համոզումի մշակուած ու հաւասարակշռուած համակարգ, ուր առաքելութիւն, ծրագիր, փոխյարաբերութիւններ, կառավարման կամ տնօրինման օրէնք, նիւթաբարոյական ու մարդկային աղբիւրներ, գործելակերպ ու մշակութային ենթահող, այս բոլորը յստակօրէն ամրապնդուած են եւ ընդհանրապէս կայուն:

Հոս յիշենք մարդկային ընկերության ընդհանրապես ճանչցում ու տարածում հաստատություններին կարելորդները:

1. Ընտանիք, ուր ֆիզիքականը, զգացականը, հոգեբանականը, ընկերայինը, ազգայինը, տնտեսականը, խորհրդանշականը, միասնաբար կը գտնեն մարդու պատկանելության, աճման, պտղաբերության եւ գոհունակության տարածք: Ընտանիքը ամուսնական վիճակ, դաշինք ու բնական ընթացք ըլլալէ անդին վերոյիշեալ ազդակներու հաւասարակշռութիւնն է:

2. Կրօն, որ կու տայ կեանքի սկիզբին, ընթացքին ու վախճանին մասին բացատրութիւն, ներշնչում եւ համոզում: Կրօնը ոչ միայն որպէս օրէնք եւ սովորութիւն կ'ընկալուի, այլ նաեւ որպէս ճանապարհ շնորհքի, ստեղծագործութեան, եւ ծառայութեան, այլապէս մարդ կրնայ մնալ ներքնապէս դատարկ ու ալլալած:

3. Տնտեսութիւն, ինչպէ՞ս կրնայ մարդ ստեղծել, գործածել ու արտադրել նիւթեր, անոնց լաւ տնտեսը դառնալ, բաժնեկցի, օգտակար ըլլալ եւ օգտուիլ, միաժամանակ զանազան պէտքեր գոհացնել իր եւ իր ընկերութեան համար: Հոս է որ մարդ արարածը, պտղաբեր աշխատանքի միջոցով իր իրաւատուկ ըլլալու գոհացումը զգալու առիթն ու ազատութիւնը կ'ունենայ:

4. Կառավարութիւն, որ կը նշանակէ մէկ կողմէն կարգուկանոնի համակարգ, միւս կողմէն՝ յստակ ճանչցում ու յարգում միասնական կեանքի չափանիշներու շարք կամ միասին ապրելու արժէ-չափեր: Ով ի՞նչ պարտականութիւն ու պարտաւորութիւն ունի, ով ի՞նչ, ե՞րբ եւ ինչպէ՞ս կը վատկի կամ կը ստանայ՝ այս բոլորը կը բնորոշեն կառավարութեան կերպը: Հո՞ն է ուր կը ճշդուին նաեւ անհատներու եւ խումբերու իրաւասութիւնները եւ այդ իրաւասութեանց գործադրութեան ոճն ու մշակոյթը: Պետական ծիրը վերոյիշեալ չափանիշներուն մեծ մասը կրնան ճշդել, սակայն կառավարութեան ըմբռնումին մէջ կայ աւելին, այսինքն ընկերութեան բոլոր հաստատութիւններուն կառավարման դերը:

5. Կրթութիւն, ուր կը յստականան գիտութիւնը ինչպէ՞ս պաշտօնապէս փոխանցելու համակարգն ու ուսումնական ծրագիրը: Կրթութիւն, ուր ճշմարտութիւն, ճշգրտութիւն, արժանահաւատութիւն եւ նման արժէքներ կը շեշտուին, հոն ուր կայ յստակ մեթոտ նիւթի ընկալման ու փոխանցման: Հոն է ուր ընկերութիւնը մարդ արարածը սորվելու ատակ նկատուելով, զանիկա մշակոյթի կեդրոնը սեպելով, ընդունելի վարուելակերպ, յարգանք, եւ չափանիշ կը ճշդուին, որուն կը հրաւիրուին ենթարկուելու բոլորը:

Ինչպէս վերոյիշեալ բացատրութիւններուն մէջ կը նկատենք, հաստատութիւններ պէտք չէ ընկալուին իբրեւ պարզ դասաւորում կառոյցներ: Անոնք պէտք է դիտուին որպէս մարդը հաստատող եւ գօտեպնդող ազդակներ, ուրեմն նաեւ մարդուն ինքնութիւնը հաստատող վստահելի միջոցներ:

Այս ներածականին պրիսմակէն եւ այս հայեցակարգով կու գանք յստակացնելու թէ հայկական սփիւռքի հաստատութիւնները նոյնպէս պէտք է քննել այսպիսի մտքերով ու համապատասխան ակնկալիքներով:

Եթէ կայ սփիւռքահայ ուժականութիւն, նոր սերունդներու մօտ հայկական ինքնութեան պահպանութիւն եւ համապատասխան դաստիարակութիւն, եթէ կայ սփիւռքահայ կարելորդ դերակատարութիւն տնտեսական, քաղաքական, կրօնական, մշակութային ոլորտներուն մէջ, այդ բոլորը կ'իրականանան աւանդական հաստատութիւններու ընդմէջէն:

Մինչեւ մեր օրերը, սփիւռքահայ հաստատութիւնները կարելորդ դեր կը կատարեն հայակերտումի եւ ինքնութեան ամրապնդումին մէջ:

Դասեր Անցեալէն

Լիբանանահայ կրօնական, կրթական, բարեսիրական, ընկերաբժշկական, քաղաքական եւ հայրենակցական հաստատութիւններու օրինակը եղած է ամէնէն պերճախօսներէն մին: Անոր յատկանիշներէն եղած են հաստատութիւններու բազմանպատակ ըլլալը, իրար ամբողջացնող եւ բնական միասնութիւն ստեղծող ըլլալը, սփիւռքի այլ երկիրները կամրջելու կարողութիւն ցուցաբերելը, Հայաստանի եւ Կիլիկիոյ հետ աշխարհագրական ու հոգեկան մօտիկութիւնը, ամբողջ սփիւռքին հայախօս ու հայաշունչ մարդուժ պատրաստողի դերն ու կարելիութիւնները, եւ այլ նմանօրինակ յատկանիշեր: Անցեալի բարի ու բեղուն օրինակը տակաւին այս օրերուն կը նկատուի մասամբ վտանգուած եւ յստակօրէն սահմանափակուած:

Հայն ու հայկականը հաւաքել, հաստատել, անցեալի հետ գտնել հասարակացը, օգտուիլ անցեալի փորձէն, նիւթապէս հովանաւորողներ գտնել, այս բոլորը դարձած են դժուար:

Լիբանանի մէջ կայ հարուստ անցեալի փորձ, հայերէնի շարունակուող օգտագործում, ազգի հարցերու եւ մարդկանց լայն ճանաչում, նպատակի հաւատարմութեան զգացում, բարի մրցակցութիւն հայուն ու ոչ-հայուն հետ, բայց նոյն ժամանակ կան նաեւ այսօր նիւթաբարոյական լուրջ հարցեր, դաստիարակութեան հին ոճեր եւ հաստատութիւններու մէջ ոչ-արհեստավարժ մօտեցումներ, կան նուազած թիւեր, տկարացած լեզու, եւ հայկական ընտանիքի գոյացման աճող դժուարութիւն: Այս չի նշանակեր թէ հոս ու հոն չկայ նաեւ լաւ կազմակերպուածութիւն, օրինակելի վիճակ: Տակաւին կան

մաեւ Հայաստանի Հանրապետութեան դուրս հայկական երկիր ու մշակոյթ ներկայացնելու կոչում եւ մասնակի իրականութիւն:

Հաստատութիւններու Ներկան

Ներկայիս յաճախ կը լսուին քննադատական խօսքեր լիբանանահայ հաստատութիւններու հասցէին, որովհետեւ չափանիշերը իրենց բարձրութեան վրայ պահուած չեն: Միւս կողմէն կայ այն գոհունակութիւնը թէ գոնէ անոնք գոյութիւն ունին տակաւին, եւ անոնց նպատակներէն ոմանք կ'իրագործուին: Այսպէս, գոյատեւելը եւ նուազագոյն չափի գործունէութիւնը կը սեպուի յաջողութիւն: Նկատելի է մաեւ պայքարը փիլիսոփայական կամ մեթոտական. ոչ միայն ազատամիտի ու պահպանողականի միջեւ, այլեւ հայաստի եւ այլաստի միջեւ: Կայ մաեւ Սուրիոյ օրինակը, ուր վերջին աղիտալի տարիներու փորձը անգամ մը եւս յայտնաբերեց հայկական բոլոր հաստատութիւններուն կարելորութիւնը ժողովուրդին տէր կանգնելու, օժանդակելու, ապահովութեան նուազագոյն աստիճանը ստեղծելու:

Յանկալի Ապագան

Սփիւռքահայ հաստատութիւններու մասին մտահոգութիւն եւ նոյնիսկ յոռետեսութիւն յայտնելով բարի պտուղ կարելի չէ քաղել: Ճիշդ է որ հայկական գիտակցութեան եւ երեսակայութեան պահպանութեան նիւթերով կան հարցեր, սակայն ցանկալին՝ հիմնել կամ բարեփոխելն է հաստատութիւններ որոնք պիտի շարունակեն յառաջացնել այդ գիտակցութիւնը: Անոնք պիտի համապատասխանեն զարգացող կարիքներու եւ վիճակներու, չափանիշներու ու արժէքներու:

Ստորեւ՝ այդպիսի սփիւռքահայ հաստատութիւններու յատկանիշներէն ոմանք.

- Բազմակողմանի առաքելութիւն ունենալու կարողութիւն եւ զգացում: Հաստատութիւններ որոնք կրնան միաժամանակ մեր ժողովուրդին ծառայել, զայն միաւորել, հայուն անունն ու վարկը բարձր պահել:

- Բարձրորակ ծառայութիւն, նկատի առած ընդհանուր ընկերատնտեսական շուկան եւ ընկերութիւնը:

- Ուժեղ բարոյական չափանիշներ եւ արժէքներ, հաւատարմութիւն սկզբունքներու, թափանցիկութիւն, պատասխանատւութեան բարձր գիտակցութիւն եւ մասնագիտական մօտեցում:

- Ամուր կապեր Հայաստանի Հանրապետութեան եւ ամբողջ հայաշխարհին հետ:

- Կեանքի եւ հաստատութեանական յստակ համաշխարհային ըմբռնում եւ լայնատարած հաղորդակցութեան ցանց, այն ըմբռնումով որ ապագան կը պատկանի անոնց որոնք գիտեն ստեղծել համագործակցութիւն եւ շահիլ գործընկերներ:

- Կանգուն հիմք մարդուժի պատրաստութեան. մարդոց եւ հաստատութիւններու վերապատրաստութեան եւ վերամշակման, ինչպէս մաեւ յարմարելու եւ արդիականանալու մշտական ծրագիրներ: Անոնք որոնք կարող չեն պատշաճիլ եւ յարմարիլ, չեն կրնար գոյատեւել կամ նոյնիսկ իրենց ճշդած նպատակներուն ծառայել արդի աշխարհին մէջ: Այս իրողութիւնը ճիշդ է թէ՛ անձերու եւ թէ՛ հաստատութեան արտադրութիւններու նկատմամբ:

- Ուժականութիւնն ու առկայ աղբիւրները լաւագոյն կերպով գործածելու ազդու միջոցներ: Հոս շեշտը չի դրուիր մեր ունեցածին վրայ, այլ ունեցածը լաւապէս գործածելու վրայ: Միայն այդ ժամանակ կրնանք ցանուածէն առաւելագոյնը քաղել:

- Պատրաստ եւ յօժար ըլլալ սփիւռքեան որեւէ երկրի մէջ ճանչցուելու որպէս եւ տեղացի հարազատ, եւ՝ Հայկական հայրենիքը փնտռող:

- Նիւթական անկախութիւն եւ դժուարութիւններու, ձախողութիւններու կամ աղէտներու պարագային կանխապատրաստութիւն:

Սփիւռքի բոլոր հաստատութիւնները կոչում ունին ըլլալու դպրոց եւ դարբնոց: Անոնք հայը կը պահեն, կը խրախուսեն եւ անոր կը մատակարարեն իմաստալից ու որակաւոր կեանք հայրենիքէն հեռու: Անոնք հայրենի հողը իրենց սրտին մէջ պահելու, եւ զայն սնուցանելու եւ անով սնանելու կը ձգտին: Եթէ անոնք ունին այնպիսի կարելորութիւն՝ ինչպէս նկարագրեցինք, ուրեմն անոնք կը կարօտին յատուկ ծրագրի եւ ռազմավարութեան, եւ պատահականութեան կարելի չէ ձգել զանոնք:

Իսկ այս բոլորէն անդին, կը մնայ մաեւ հարցը սփիւռքի եւ Հայաստանի Հանրապետութեան հաստատութեանց կապերու շարունակականութեան եւ զարգացման, եւ այն՝ թէ ինչ ձեւերով ազդեցիկ եւ լրացուցիչ են իրարու եւ կը կերտեն տեղական թէ համաշխարհային հայկական կայուն եւ ինքնավստահ ինքնութիւն:

Եզրափակութիւններ

Սփիւռքահայ հաստատութիւնները ընդհանրապէս կը դիտուին հետեւեալ երկու կարելի պատկերներով.-

Ա. Հաստատութիւնները որպէս հայ յիշողութեան եւ ինքնութեան կոթողներ կամ յուշարձաններ: Այս պատկերով, հիմնական ջանքը կ'ըլլայ զանոնք պահպանելն ու անոնց գոյութիւնը ապահովելը ամէն պայմանով: Մշակոյթը կորուստէ պահպանելը մեր կեդրոնական աշխատանքը կը դառնայ: Ասիկա պահպանողական մօտեցում է եւ բարի:

Բ. Հաստատութիւնները որպէս կամուրջներ՝ անցեալի եւ ապագայի միջեւ, այսինքն մեր ժամանակներու երաշխիք: Արդի օրերու բարդ հնարաւորութիւններու ընդմէջէն հայկականն ու խորապէս մարդկայինը փնտռելու առիթ:

Հաւասարակշռութիւն է պէտք այս երկուքին միջեւ:

Սփիւռքի հաստատութիւնները պէտք է գոյատեւեն համապատասխանելու համար հին ու մեր հայ մարդու պէտքերու: Անոնք չեն կրնար արձագանգել միայն մարդոց եւ խմբակներու ճաշակի եւ անցեալի հաւատարմութիւններուն: Անոնք պէտք է ստեղծեն որակի ամբողջութիւն, ներշնչեն վստահութիւն, եւ հայկական անցեալն ու ժառանգը սեպեն ամուր յենարան մոր օրերու եւ իրագործումներու ի խնդիր:

Վերջապէս կրկնենք թէ սփիւռքահայ հաստատութիւններու բարոյական բարձունքը, ծառայութեան որակը, շրջապատին հետ գտած հաւասարակշռութիւնը, ինքնաբաւ ըլլալու ջանքը, հայկականին ու միջազգայինին միջեւ գտնելիք եզրը՝ այս բոլորն են մեր կայուն հաստատութեանական ապագայի գաղտնիքները: Այսպիսի հաստատութիւններ կղզիներու պիտի չնմանին, այլ թերակղզիներու: Իսկ հայկական սփիւռքի ինքնութեան պահպանումն ու զարգացումը մեծ չափով պիտի ճշդուի անոր հին թէ մեր հաստատութիւններու որակով ու զարգացման ոճով:

Paul Haydostian (Lebanon)

Armenian Diaspora institutional culture and the issues of identity

Morality of the Armenian Diaspora institutions, quality of service, the balance with the surrounding, efforts for improvement, finding similarities between the Armenian and international culture –these are the main issue of our stabile institutional future. These institutions (family, religion, economy, government, education) should not function isolated. And the preservation of the Armenian diaspora identity should mainly be based on the quality and development of both old and new institutions.

Վերծինն Սվազլյան (Հայաստան)

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՑ ԲԱՆԱՎՈՐ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԵԶ

(Ըստ 1979, 1989, 2001, 2008 թթ. անձնական գրառումների և ազգաբանական դիտարկումների)

ԱՄՆ-ի հայ համայնքի բանավոր ավանդության նշխարները ցարդ ամբողջական և համակարգված ուսումնասիրության չեն ենթարկվել ո՛չ հայրենիքում և ո՛չ սփյուռքում:

1979-2008 թթ.՝ շուրջ 30 տարիների ընթացքում, ԱՄՆ կատարած իմ անձնական և գիտա-ժողովային չորս ուղևորությունների (Նյու Յորք, Բոստոն, Սան Ֆրանցիսկո, Լոս Անջելես, Ֆրեզնո, Մայամի և այլուր) ընթացքում բազմաթիվ հանդիպումներ են իրականացվել հայ համայնքի ավագ, միջին և կրտսեր սերունդների ներկայացուցիչների հետ, զորի է առնվել ժողովրդագիտական տարաբնույթ նյութեր (շուրջ 1.500 միավոր), որոնք հիմք են դարձել ժամանակակից էթնոմշակութային մի շարք ուշագրավ դիտարկումների: Այդ ընթացքում բացահայտվել են Արձակ, Չափածո և Ասույթային բանահյուսության տարաբնույթ **նյութերի** և ամերիկահայ **բանասացների** սեռատարիքային փոխհարաբերությունների, ինչպես նաև նրանց **ազգային ինքնության** մակարդակի շարժընթացը: Ամերիկահայ համայնքի ներկայացուցիչներից գրառված սկզբնաղբյուրային արժեք ներկայացնող բանահյուսական նյութերը դասակարգված են հետևյալ բաժիններում¹.

¹ Ժողովրդագիտական նյութերի մեջբերումները կատարված են իմ «ԱՄՆ-ի հայ համայնքի բանավոր ավանդությունը» անուիվ ժողովածուից:

1. **Արձակ բանահյուսության** բաժնում ամփոփված են վիպական բնույթի ժողովրդական ստեղծագործություններ՝ **Առասպելներ** («Նիագարա ջրվեժը»՝ ըստ մայաների դիցաբանության, «Գորշ Գայլը»՝ թուրքերի տոտեմ», «Մոր սիրտը» և այլն), **հրաշապատում հեքիաթներն** իրենց տեղը զիջել են **իրապատում հեքիաթներին**, որտեղ ժողովրդի ներկայացուցիչ հասարակ մարդիկ իրենց հնարամտությամբ և ճարպկությամբ հաղթում են թագավորներին («Թագավորն ու խաբեբան», «Թագավորն ու ձկնորսը», «Թագավորն ու իմաստուն ծերունին» և այլն):

Առակների իսկական հերոսը մարդն է, սակայն մարդկային կյանքի, բնավորության, հարաբերությունների դրական և բացասական կողմերն առակներում այլաբանորեն ներկայացվում են կենդանիների կամ բնության երևույթների միջոցով («Մինչև Ամերիկա լողացող ձկները», «Օտար լեզու սովորող շունիկը», «Ամերիկյան դեմոկրատիան», որտեղ երեք Գայլ և մեկ Ոչխար մատած որոշում են, թե ի՞նչ են ուտելու լանչին... և այլն):

Կենդանական գրույցներում հաստատվում է այն միտքը, որ կենդանիներն ավելի հավատարիմ են, քան մարդիկ:

Կենցաղային կամ **զավեշտական գրույցներն** ավելի իրական, տեղային հենք ունեն և ներկայացնում են ոչ միայն նրանց երբեմնի բնօրրանի՝ Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի, այլև տարագրության մեջ իրենց հետագա տարբեր գաղթօջախների, իսկ ավելի ուշ՝ նաև ԱՄՆ արտագաղթած նոր երկրի լեզվին չտիրապետող, աշխատանք չունեցող, ինքնահաստատման չենթարկված, կառավարության նպաստի հույսով ապրող հայաստանցիների առօրյան:

Բարոյախրատական գրույցներում, այուժետային գիծը զարգանալով, ժողովրդական ստեղծագործությանը հաղորդում է դաստիարակիչ, բարոյախոսական երանգ («Մերը և դրամը», «Ինչ ընես՝ դիմացդ կելլա», «Ուշացած սերը», «Իմաստուն հայրը», «Հոր սերը» և այլն):

Պատմական գրույցներ բաժնում ամփոփված են փոքրիկ պատումներ ամերիկյան հայրերի (Թոմաս Ջեֆերսոն, Բենջամին Ֆրանկլին, Ջորջ Վաշինգտոն, Աբրահամ Լինկոլն և այլք), նաև՝ Սուլթան Համիդի և հայ հոգևորականների (Խրիմյան Հայրիկ, Սահակ Խաբայան և այլք), ազգային գործիչների (Ջորավար Անդրանիկ, Սողոմոն Թեփիրյան, Նիկոլ Աղբալյան, Գարեգին Նժդեհ, Արշավիր Շիրակյան, Ջորջ Մարտիկյան, Ուիլյամ Սարոյան, Մոնթե Մելքոնյան և այլք), ինչպես նաև՝ **Հայոց ցեղասպանության ամերիկահայ ականատես վերապրողների և հետագա սերունդների հուշ-վկայություններն ու տարաբնույթ հարցազրույցները**:

Անեկդոտները ոչ մեծ զվարճալի պատմություններ են, որոնց մեջ երգիծվում են հասարակական-քաղաքական կյանքի ու կենցաղի հոռի կողմերը, ինչպես նաև՝ մարդկային բնավորության զավեշտական գծերը: Ժողովրդական այս անեկդոտները գաղափար են տալիս տարբեր երկրներում, պատմական տարբեր ժամանակաշրջաններում, հայտնի քաղաքական դեմքերին (Ջորջ Վաշինգտոն, Սուլթան Համիդ, Լենին, Ստալին, Ռուզվելտ, Ռեյգան, Գորբաչով, Ելցին, Լևոն Տեր-Պետրոսյան, Ջորջ Բուշ կրտսեր, Ռոբերտ Բոչարյան) ու դեպքերին առնչվող և հայության տվյալ հատվածին հուզող հարցերին՝ կապված հոգեբանական զանազան բարոյությունների հետ, որոնք, զավեշտական իրավիճակներ ստեղծելով, նրանց լուռ ողբերգության պատճառ են դառնում:

Երկխոսություններն իրենց բնույթով նոր ժանր են, որոնք սեղմ հարց ու պատասխանի միջոցով ներկայացնում են իմաստալից մի ամբողջական գործողություն՝ եզրակացությունը թողնելով առկախ: Ժողովրդական այդ մանրապատում ստեղծագործությունները մեծ թիվ են կազմում և իրենց թեմատիկայով խիստ բազմազան են: Օրինակ՝

«- Որբա՞ն է պետք մարդուն իսկապես երջանիկ ըլլալու համար:

- Շատ պետք չէ. միայն թե ուրիշը ավելի քիչ ունենա»:

Եվ կամ՝

«- Ես միլիոնատեր եմ. կարող եմ քեզ առնել և ծախել:

- Ես միլիարդատեր եմ. կարող եմ առնել և պահել քեզ»:

2. **Աստիճանական բանահյուսության** բաժնում ամփոփված են տարագիր ավագ և միջին սերնդի հայ գաղթականների հաղորդած ավանդական **առած-ասացվածքներ, հանելուկներ, աղոթքներ**, ինչպես նաև ամերիկահայ համայնքի արդի ապրելակերպին ու մտածելակերպին բնորոշ **բարոյախոսական խրատներ, իմաստուն խոսքեր**, առօրյա կենցաղի, գիտության նորագույն տեխնիկայի հետ կապված **հանելուկներ**, ինչպես նաև՝ **դարձվածքներ, մաղթանքներ և վարվելակերպի արտահայտություններ**, որոնք, թեպետ, մեծ մասամբ անգլերեն են, սակայն օգտագործվում են հայերեն խոսակցական մեջ: Ինչպես՝ «Մորի», «Թեք ի՞նչ իզի», «Այ դոնք քեր», «Նո փորթլեն», «Դոնք ոտրի», «Բի հեփի», «Մմայլ», «Գող բլես յու», «Ին Գող ուի թրաստ, դը ռեսք իզ քյաշ» և այլն:

Ամերիկահայերն իրենց պանդուխտ կյանքի փորձառությանը ստեղծած դաստիարակիչ **խրատներով** ջանում են նոր սերունդներին զերծ պահել վերահաս գաղթականություններից: Օրինակ.

«Դուլարով կզենես տուն, բայց ոչ՝ օջախ:
 Դուլարով կզենես ժամացույց, բայց ոչ՝ ժամանակ:
 Դուլարով կզենես գիրք, բայց ոչ՝ գիտելիք:
 Դուլարով կունենաս պաշտոն, բայց ոչ՝ հարգանք:
 Դուլարով կունենաս սեքս, բայց ոչ՝ սեր»:

3. **Չափաժողովրդականության** բաժնում ընդգրկված են ավագ սերնդի հետ Նոր երկիր գաղթած, նրանց պատմական հիշողության մեջ ամրագրված հայրենաբաղձ և հուզիչ **պանդխտի երգեր** («Կռու՛նկ, ուստի կուգաս, Ծարավ եմ ձայնիդ», «Շատ տարի է, որ չեմ տեսել երեսդ, Էրզրու՛մ» և կամ՝ Բարսեղ Կանաչյանի «Օրո՛ր, իմ բալա՛ս» օրորոցայինը, որը ժամանակի ընթացքում դարձել է «Օրո՛ր, իմ բե՛յբի»): Գրանցել եմ նաև **խաղիկներ, սիրային երգեր** ու **ձոներգեր**՝ նվիրված Հիսուս Քրիստոսին, հայ ազգային հերոսներին, լիբանանյան պատերազմին, Ֆրանսիային, Կանադային, Ամերիկային, ամերիկյան դուլարին, Լոս Անջելեսին, ինչպես նաև այնտեղ գործող «Արարատ Տուն» ազգային ծերանոցին, նրա ժրաջան աշխատակազմին, այնտեղ իրենց ծերությունը վայելող տարեցներին: Առանձին բաժին են կազմում **ամերիկյան ժամանակակից գայթակղիչ բարքերին**, Հայաստանին ու Արցախին, ինչպես նաև՝ մեր **զավթված երկրին ու պահանջատիրությանը նվիրված ինքնատիպ երգերը**:

Տարաբնույթ այդ երգերի մեջ ուշագրավ են ամերիկահայ **կյանք ու կենցաղին** հատուկ ժողովրդական երգերը, որտեղ ուրվագծվում է Ամերիկա հասած, «սիթիզըն» (քաղաքացի - անգլ.) դարձած, բայց տակավին բարեկեցության չհասած հայ մարդու կերպարը.

«Բաստոն, շափիսա, քրավաթ,
 Հագած-կապած ման կուգա,
 Սիտիզըն է՝ դերդ չունի,
 Գրպանը մեկ սենթ չունի»:

Այդ հասարակության մեջ, որտեղ ամեն ինչ չափվում է դրամով, և նույնիսկ ամերիկահայերի առօրյա խոսակցականի մեջ մշտապես հիշվում է «Դը թայմ իզ մանի», և որտեղ նույնիսկ մարդկային արժանիքները գնահատվում են դուլարով.

«Եթե բանկում դուլար չունես,
 Մարդ ըսվելու արժանի չես»:
 Եվ կամ՝ «- Հիսուն դուլար կրնա՞ս տալ, Կարայի՛ս:
 - Ո՛չ, չեմ կրնար տալ:
 - Չպիտի մոռնամ աս ըրածդ, Կարայի՛ս:
 - Գիտե՛մ, եթե տայի՝ անկասկած պիտի մոռնայիր»:

Նոր երկրի նոր բարքերը նոր ապրելակերպ են թելադրում և մոդայիկ բնույթ կրում՝ դառնալով համատարած.

«Աս անկուտի աշխարհում
 Ամեն ինչերն են փոխվում.
 Կրոնք, լեզու, ազգություն
 Մոդայի են վերածվում»:

«Կրոնք, լեզու, ազգություն»՝ ազգային ինքնության ամենագլխավոր հիմնահարցերն են, որոնք մտահոգում են հայրենի հողից կտրված ամերիկահայ համայնքին, քանի որ նոր սերունդներն օրեցօր կորցնում են իրենց մայրենին՝ հակառակ «հայապահպանման» համար ազգային կառույցների գործադրած անդուլ ջանքերին:

Ամերիկահայերի համար մտահոգիչ հարցերից է նաև համայնքի ներսում նոր սերունդների օրեցօր ուժացող, իրենց մայրենի լեզուն և ազգային ինքնությունը կորցնող հանգամանքը: Երեսուն տարիների պարբերական դիտարկումների ընթացքում հայոց լեզուն իր տեղը զիջել է անգլերենին:

Ուստի գրեթե անհնար է եղել կրտսեր սերնդի՝ աշակերտության, ներկայացուցիչներից որևէ ավանդական նյութ գրի առնել: Ինչպես **Զվարթ Գալստյանն** է նշել (ծնվ. 1930 թ., Կահիրե), «Երբ կհարցնես՝ ինչու՞ հայերեն չեք խոսիր, կպատասխանեն՝ չենք խոսիր, որ հայերեն լեզուն չմաշվի»:

Իսկ **Դանիել Գալստյանի** (ծնվ. 1924 թ.) հաղորդած հետևյալ ժողովրդական երգի խոսքերը տալիս են այդ հարցի պատասխանը.

«Հայ տիկինը իր տան մեջ / Անգլերեն է խոսում. / «Բեյբի, լեյդի, գուդ մորնինգ»², / Անգլի թութակ է դառնում: / Աս ի՞նչ է. / Մոդա՞ է, մոդա՞ է, մոդա՞ է, մոդա՞ է»:

Լուս Անջելեսի Արարատ Տան ծերանոցի բնակիչ **Ռոնիա Թերզյանը** (ծնվ. 1920 թ., Հալեպ) հետևյալ երկխոսությունն է մեջբերել.

«- Ամերիկայի մեջ հայերեն խոսող չէ մնացած, - կրսե ծերունին:

- Է՛, դուն որո՞ւն հետ կխոսիս:

- Միայն Աստուծո հետ»:

Անշուշտ սա գեղարվեստական չափազանցություն է, սակայն՝ իրողության ահագանգ:

Ամերիկահայ համայնքի համար մտահոգիչ է նաև հայ երիտասարդության խառն ամուսնությունների պարագան, որը, ըստ Գարեգին Նժդեհի բնորոշման. «*Խառնամուսնությունը Բաբելոն մըն է*», Ֆրեզնոյում վերհիշել է **Բարբարա Չուգասզյանը** (ծնվ. 1946 թ. Սան Ֆրանցիսկո):

Այդ հարցի մասին է պատմում **Ջորջ Կապլանի** (ծնվ. 1913 թ., Կահիրե) հաղորդած երգի բնութագրական խոսքերը.

«Կիրակի օր մը, երբ Նյու Յորք հասա, / Երազիս մեջեն չանցածը տեսա... / Շիկ-շիկ պարոններ, / Շիկ-շիկ օրիորդներ, / Թե-թեի մտած իրարու կրսեն. / «Այ լավ յու, դա՛րլինգ»³:

«Աս ալ աստեղի մոդա՞ն է», - ըսի / Ու իմ թևիս ալ մեկ հատ մը զարկի, / Բայց կուզե՞ս որ մեր անմեղ-աղավնին / Բեյբի մը բերավ հինգերորդ ամսին. / Ծո՛, ի՞նչ պիտի ընեն՝ հարը կլլեցի...»:

Ներկայիս համաշխարհայնացման պայմաններում օտարացման, ձուլումի և այլասերումի միտումներն ավելի են սաստկացել: Այդ իմաստով ուշագրավ է ամերիկահայության մեջ տարածված հետևյալ երկխոսությունը.

«-Է՛, գիտե՞ս, տղաս ամուսնացավ:

- Իրա՞վ, աչքդ լու՛յս:

- Բայց հարսերնիս տղա՞ է:

- Է՛, գոնե հա՞յ է»:

Սերնդափոխության հետ միաժամանակ ամերիկահայ համայնքի արձանագրած ազգային ինքնության աստիճանական նահանջն իր ցայտուն արտահայտությունն է գտել հետևյալ ժողովրդական բանավոր ստեղծագործության մեջ, որը գրի են առել մտավորական վաստակ ունեցող **Արա Գարրիեթյանից** (1943 թ., Նյու Յորք).

«Հայոց ցեղասպանությունեն ետքը, երբ հայերը եկան Ամերիկա, առաջին սերունդի տարեցները կնստեին իրարու քով, կհարցնեին.

- Դուք բնիկ ո՞րտեղացի եք, - ըստ այդմ ալ իրարու աղջիկ-տղա կուտային, կամուսնացնեին, որ հայկական ընտանիք կազմեն:

Տարիներ անցան, երկրորդ սերունդը քիչ մը փոխված իրարու կհարցնեին.

- Դուք ո՞ր կուսակցության կպատկանիք, - այսինքն՝ խելքի մո՞տ է խնամիսնալը:

Ավելի ուշ երրորդ սերունդը իրարու կհարցնեին.

- Տղադ ամուսնացա՞վ, հարսդ հա՞յ է, թե՞ օտար:

Չորրորդ սերունդը սկսավ հարցնել.

- Հարսդ սևակա՞ն է, թե՞ ճերմակ:

Հինգերորդ սերունդն վաղը արդեն պիտի հարցնե.

- Հարսդ աղջի՞կ է, թե՞ տղա, - այնքան որ բարքերը սերունդեսերունդ փոխված են Ամերիկայի մեջ»:

Ամփոփելով՝ նշենք, որ բանահյուսական նյութերի հետ միաժամանակ սերնդից սերունդ փոփոխության է ենթարկվում նաև ամերիկահայոց ազգային ինքնությունը, նրանց լեզվամտածողությունն ու հոգեգիտակցական աշխարհը: Անշուշտ, համաշխարհայնացման պայմաններում ազգային ինքնության աստիճանական նահանջը բնորոշ է հայրենի հողից կտրված ողջ հայ գաղթաշխարհին: Հետևաբար Ամերիկայի հայ համայնքը զերծ չի կարող մնալ պատմաքաղաքական այդ պարտադրանքից:

² Մանկիկ, տիկին, բարի լույս (անգլ.):

³ Ես քեզ սիրում եմ, սիրելի՛ս (անգլ.):

**THE REFLECTION OF IDENTITY IN THE ORAL TRADITION OF ARMENIAN-AMERICANS
(According to personal inscriptions and ethnological observations of 1979, 1989, 2001 and 2008)**

During my personal and scientific-conference trips to the USA in 1979, 1989, 2001 and 2008 (over a period of thirty years), I have numerous meetings with the representatives of senior, middle and junior generations of the Armenian Community and have written down diverse popular materials.

As a result of synchronous and diachronic analyze of folk materials and narrators, became obvious that the identity of the Armenian-Americans, their linguistic mentality and spiritual-cognitive inner world is being transformed.

Անդրանիկ Տազեխան (Լիբանան)

**ՃԱԿԱՏԱԳՐԱԿԻՑ ԻՆՔՆՈՒԹԻՒՆՆԵՐ.
ՈՉ-ՀԱՅ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ
ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ ԸՈՒՐՋ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ**

Մուտք

Լիբանանի մէջ պետութեան իշխանութեան դիրքերը բաժնուած են համայնքներու միջեւ. իրաքանչիւր պետական պաշտօն եւ իշխանութեան դիրք ու-նի իր սահմանադրականօրէն ճշդուած անշրջանցելի իրաւատէր համայնքը: Համայնքներու իրաւական կենսատրումի այս դրոյթը Լիբանանը կը վերածէ փոքրամասնութիւններու՝ պետականօրէն ապահովագրեալ գօտիի մը, ուր ձգտէր են շրջանի հալածուած փոքրամասնութիւններ, որոնք ուզէր են իրենց ինքնութիւնը պահպանել, չունենալով կառողութիւնը պետականակիր միատր դառնալու:

Հետեւաբար, Լիբանանի մէջ քաղաքական աթոռախաղ կայ. երբ առիթը ներկայանայ՝ համայնքի մը իրաւունք մը կրնայ ոտնակոխուիլ: Ուստի, համայնքային մնայուն զգօնութիւնը կենսական է, իսկ անուշադրութիւնը աննպաստ՝ համայնքին գոյատեւումին:

Զեկոյցին Հայեցակարգը

Ապահովագրեալ գօտիի, միջհամայնքային մրցակցութեան եւ զգօնութեան այս փորձառութեամբ է որ գրուցակիցներս հարցումներու պատասխանեցին եւ հումքը դարձան այս զեկոյցին: Զրուցակիցներս տարբեր համայնքներէն՝ քիւրտ (Բ), տիւրքի (Տ), յոյն օրթոտոքս (ՅՕ), յոյն կաթօլիկ (ՅԿ) եւ մարոնիթ (Մ)¹: Բացի Բ-էն (քարեկեցիկ դիրքի հասած անհատ մը), միւսները համալ-սարանական դասախօսներ են: Բոլորին հետ ունեցած եմ անջատ հանդիպում:

Նպատակս՝ հետեւութիւններ կատարել է լիբանանեան համայնքներու ինքնութեան, հայրենիքի եւ հայու բնորոշումի իրենց փորձէն: Մերտողութիւնս ունի սահմանափակումներ. հարցապնդողութեանը ներկայացուցչական չեն, հարցումներս կիսամշակուած են (semi structured), հարցապնդողութեան փորձառական դաշտը Լիբանանն է միայն, եւն.: Ընդհանրապէս շարադրանքս կառուցած է՝ հարցապնդողութեան ուղղակի խօսքին վրայ: Մերտողութիւնս ունի ընդելուզուած երկու օղակ՝ ներկայացում-պատում եւ կիրառականութեան առաջարկ:

Ա) Ինքնութիւն, Ինքնութեան Բաղադրատարրեր եւ Փոխանցելիներ

Ինքնութեան սահմանումի խնդրով, ոմանք շեշտեցին թէ ինչպիսի ինքնութիւն պէտք է ունենալ, քան թէ ի՞նչ է ինքնութիւնը: Բ-ն չկրցաւ բովանդակութիւն դնել՝ բացի կրօնքէն եւ աւելցուց հալածուած, հին պատմութիւն ունեցող ժողովուրդ մը ըլլալու փաստը: Ըստ ՅՕ-ին կրօնական երանգով չի սահմանափակուիր ինքնութիւնը. ան շեշտեց քաղաքացիական ինքնութիւնը եւ մատնանշեց մերօրեայ բազմամշակութայնութիւնը, առարկեց թէ մարդ բազմերես է եւ հարց է թէ ո՞ր երեսակը կ'ուզենք շեշտել, առարկելով որ նոյն կենսաբանական ինքնութեամբ տարբեր անձեր կրնան տարբեր ինքնութիւն ունենալ, ու ընդգծեց. «միջավայրն է որ մարդու ինքնութեան փոփոխութեան պատճառ կը դառնայ: Ընտանիքը, ծնողը՝ կեանքի տարբեր հանգրուաններու տարբեր ազդեցութիւն եւ ինքնութեան տարբեր ծանրութեամբ բաղադրատարր կը գոյացնեն»: Ան ինքնութիւնը նկատեց հեղուկային եւ ճկուն: Ըստ Մ-ին՝ «ինքնութիւնը պատկանելիութեան զգացումն է, քեզ անհատիդ վերածողն է, յարաբերական է՝ քեզ կը սահմանէ յաչս քու պատկանած եւ չպատկանած խումբերու»:

¹ Այս համայնքներէն քիւրտերը սահմանադրական ճանաչում չունին:

Բաղադրատարրերուն մասին, ՅՕ-ն առարկեց՝ «հան՛ ինձմէ՛ կրօնական պատկանելիութիւնս եւ ըսէ ինձի ի՛նչ կը մնայ իմ յոյն օրթոտոքս ինքնութենէս: Բաներ կան որ մարդ կրնայ չսիրել իր համայնքին մէջ, հետեաբար՝ պէտք է բացուիլ, դուրս ելլել մեր հանգիստ գօտիէն, առնել ուրիշներէն... կ'ուզեմ որ իմ զաւակներս իրենց ինքնութեան բաղադրատարրերը տարբեր աղբիւրներէ քաղելու ձգտին»: Ակնարկուեցաւ նաեւ համամարդկային արժէքներու:

ՅԿ-ն ակնարկեց անգիտակից-ենթագիտակից փոխանցումին, հաւաստելով թէ երեխաները կ'ընդօրինակեն ու կը կապկեն ընտանիքին մէջ անցած-դարձածը: Մ-ն նշեց որ փոխանցման իր եղանակը աշխուժօրէն իր զաւակներուն ցոյց տալն է փոխանցելիներուն յատկութիւնն ու արժէքը: Տ-ն վերահաստատեց. «պիտի ուզէի զաւակներուս ժառանգել լիբանանեան ինքնութիւնը, միայն»:

Բ) Հայկական Ինքնութիւն

Հարցապնդողները դժուարութիւն չունեցան նկարագրելու հայը. կարծէք հայը նկարագրելով կը ներկայացնէին հայուն ինքնութիւնը: Ըստ իրենց հայը սիրուած ժողովուրդ է, բոմանքիք սեր եւ կապուածութիւն ունի Հայաստանին հանդէպ, եթէ մոռնայ Հայաստանը՝ յանցաւոր կը զգայ: Հայուն ինքնութեան մաս կը կազմէ իր սէրը մշակոյթին հանդէպ, հպարտ է իր հայկական ժառանգութեամբ ու մշակոյթով. հալածուած, ազնիւ, աշխատասէր, գիտութեան հանդէպ սէր ունեցող, ինքզինք գերազանցող, դատ ունեցող, քրիստոնէայ, շինարար, խաղաղասէր, լեզուին կառչած ժողովուրդ է ան, ազգային-պատմական խորհրդանշներ ունի, իրաւունքն ունի ապրելու, իր ուժը չ'օգտագործել ուրիշ ժողովուրդներ ճնշելու: Հայերը ունին գոյատեւումի տագնապը, ժողովրդագրական տագնապ կը դիմագրաւեն: Մ-ն նշեց հայոց չմասնակցիլ լիբանանեան պատերազմին, եւ դիտողութիւն ըրաւ թէ հայ դատի խնդրով կարելի է գործակցիլ Եւրոպա հաստատուած այլ փոքրամասնութեանց հետ, որոնց կարգին՝ ասորիներու: ՅՕ-ն ակնարկեց սերնդագործութեան, նշելով թէ ոմանք կը ձգտին ներհամայնքային ամուսնանութեան կանխատեսելով որ մտայնութեան խնդիրներ կրնան դիմագրաւել խառն ամուսնութեամբ: Բ-ն մատնանշեց թէ՛ իբրեւ հետեւանք տնտեսական վիճակի բարելաման, քիւրտներէն ոմանք կ'ուրանան իրենց ինքնութիւնը եւ բացատրեց՝ «ի տարբերութիւն հայերուն, քիւրտներուն քով անգիտութիւն մը կայ իրենց մշակոյթին հանդէպ, քիւրտին իմէճը խեղճ է»: ՅԿ-ն զգուշացուց. չապրիլ միայն պատմութիւնը, այլեւ՝ ապագան, ու հարց դրաւ. «եթէ դուն մէկ կողմ դնես ցեղասպանութիւնը, ինչո՞վ զայն պիտի փոխարինես իբրեւ հայ ինքնութիւն»: Ան բացատրեց. «նոր սերունդը կը ձուլուի, որովհետեւ... երեց սերունդին արարքները-փոխանցածները գոհի վերածած են նոր սերունդները... բայց անոնց միջավայրը զիրենք իբրեւ հայ կը մատնանշէ»: Ըստ Տ-ին՝ «եթէ նոյնիսկ ես ամբօրէն կապուած չեմ իմ համայնքիս, միւսները զիս աշդպիսին պիտի տեսնեն»:

Գ) Փոքրամասնութեանց Գոյատեւում/Համարկում

Բոլորն ալ այն կարծիքին են որ փոքրամասնութիւնները պէտք է գոյատեւեն, որովհետեւ զանազանութիւնը մարդկութեան գեղեցկութիւնն է, երկրին զարդարանքն են փոքրամասնութիւնները, որոնք կ'արտացոլացնեն երկրի բազմահամայնքային համակեցութիւնը: ՅՕ-ն տուաւ օրինակը աչքին, բացատրելով թէ մարմնին վրայ աչքը փոքր տարածութիւն եւ չափ ունի, բայց՝ հիմնական դերակատարութիւն: Տ-ն առարկեց որ ինք պատրաստ է իր համայնքային ինքնութենէն ելլելու եւ ձուլուելու համալիբանանեան ինքնութեան:

Մ-ն զանազանութեան մէջ հարստութիւն գտաւ եւ զգուշացուց՝ «քրիստոնէութեան արմատախլուծը Միջին Արեւելքէն՝ աղիտալի պիտի ըլլայ: Մեծամասնութիւնը չի գոյատեւեր առանց փոքրամասնութեան»:

Բոլորին մօտ ալ մարտահրաւերը գոյատեւումի խնդիրն էր. ինչպէ՞ս ընել որ փոքրամասնութիւնը չվերանայ: Հարցը գոյատեւումի պայմաններու յառաջացումն է, որուն համար անհրաժեշտ է դերաստանձնում: Դ-եր ստանձնելու այս էական խնդրին կու գայ հակադրուիլ, անմիջական հարցադրումը. «իսկ ի՛նչ ընենք եթէ ենթական չ'ուզեր դեր ստանձնել, չ'ուզեր պատկանիլ այլ՝ պարզապէս ապրիլ, պարզապէս դառնալ *քոզմովոյիք*...»: Բ-ն պնդեց. «Իմ զաւակներուս պատուիրած եմ որ երբեւէ դուրս չելլեն իրենց քրտական ինքնութենէն: Չեր յղակը (reference) ձեր քրտութիւնն է»:

Բոլորը կարեւորեցին համարկումը: ՅՕ-ն նշեց համարկումի տարբեր ոլորտներ՝ ընկերային, տնտեսական, կրթական. «ենթական ի՛նք պիտի փափաքի եւ որոշէ թէ ինչպիսի՛ համարկում կ'ուզէ: Համարկումը հարստացնող է, ատիկա հետեւանքն է քու կեանքի ճամբորդութեանդ՝ քու միջավայրդ աւելի լայն միջավայր»: Մ-ն այսպէս սահմանեց. «համարկումը մեծամասնութեան մշակոյթին ներգրաւուիլն է պահպանելով հանդերձ բոլոր երեսակները իր արմատներու մշակոյթին՝ լեզու, կրօնք, ժառանգ, ասանդ, պատկանելիութիւն»:

Բ-ն տարակուսեցաւ. «խառն ամուսնութիւնը՝ կրօնքին բերմամբ, շատ դժուար կը նկատեմ... քրիստոնէայ կողակիցի պարագային երեխաները ու ը պիտի աղօթեն: Կը մերժեմ աղջիկս քրիստոնէայի ամուսնացնել: Եթէ ես ընդունիմ՝ աղջիկիս մեծհայրը, հօրեղբայները չեն ընդունիր: Նման

ամուսնություն մը անբնական պիտի հնչէ: Կը նախընտրեմ որ աղջիկիս ձեռքը խնդրողը ըլլայ իմ միլիթէս. եթէ ոչ՝ ապա սիւննի: Տիրգիները կը մերժեն: Շիիք քիւրտին հետ ամուսնացումը չեմ նախընտրեր սիւննի արաբին ամուսնութենէն: Պէտք է մտածել յետամուսնական պարագաներուն մասին»: Բ-ին համար իր *միլիթը* իր կրօնքն էր: ՅԿ-ն գանգատեցաւ հայկական կեթոյականութենէ. «Ոչ մէկ մշակոյթ միսէն լաւ է: Մարդկային իրաւանց մէջ շեշտը դրուած էր մարդու քան թէ հաւաքականութիւններու իրաւունքներուն. 1960ականներէն ետք բազմամշակութայնութիւնը ընթացք առաւ. ինքնութիւնը չի հակադրուիր բազմամշակութայնութեան»:

Դ) Հայրենիք

Բ-ն չկրցաւ տեսնել թէ Բիւրտիստանը կրնայ նպաստել սփիւռքի քիւրտերու գոյատեւման: Ան յոյս յայտնեց որ քիւրտերը կրնան հասնիլ իրենց պետականութիւն ունենալու իրաւունքին: Մ-ն խօսեցաւ ՀՀՆ իբրեւ յղակ եւ հեղինակութիւն ըմբռնումին մասին. «Իմա քիկունք ունիս եւ ուժի իբրեւ օրի-նակ յիշատակեց ՀՀ գումարտակ դրկելը Հարաւային Լիբանան, Աֆղանիստան: Ան ընդգծեց. «Հայկական պետութեան հռչակումը կ'օգնէ որ ամրակայուի հայապահպանումը: Հայերը որոշակի խարիսխի մը վրան են եւ ժամանակի ընթացքին կրնան վերատիրանալ իրենց (միւս) իրաւունքներուն»: ՅԿ-ն բացատրեց. «Պետականութեան վերահաստատմամբ դուք ազատագրուեցաք ցեղասպանութեան մղձաւանջէն, եւ առանց երկրորդայնացնելու Յեղասպանութիւնը կրնաք գամուած չմնալ, մղուիլ յառաջ: Յեղասպանութիւնը ձեզի առիթը կու տայ թէ՛ հակադարձելու եւ թէ՛ գոյատեւելու եւ այս բոլորին յետոյ ապրելու»: Ան ընդգծեց որ կարելի չէ 2013ը ապրիլ 1914ի կամ 1918ի քաղաքական լոգունգներով. «Լի-բանանի հայերուն այսօրուան քաղաքականութիւնը Լիբանանի հայոց առաջին սերունդին քաղա-քականութիւնն է: Նոր սերունդին կը պարտադրուի առաջին սերունդին ապրելու ձեւաչափը: Ան ասով բացատրեց հայ նորահաս սերունդի մէկ մասին հեռացումը հայկական միջավայրէն. «Ձեր երիտասարդ սերունդները կը լուսանցքայնէք եւ իրենք կը ստիպուին յարաբերիլ լուսանցքային այլ խմբա-ւորումներու հետ: Օտարին՝ քեզի հետ յարաբերելու տարածք չես հայթայթեր: Ընդհակառակը, պէտք է մտածել ցեղասպանութեան ճարտարարուեստին մասին. ստեղծագործէ՛, շատ քան ունիս՝ խոհանոցդ, հսկայ մշակոյթդ, դուն այլեւս նախկինը չես»: Ան առաջարկեց փափուկ ուժի (soft power)² հաս-կացութիւնը. «փափուկ ուժը ինչէր կ'ընէ, եւ դուք անոր պակասը չունիք» ու հաւաստեց թէ՛ նոր սերունդը առած է առնելիքը հայկականութենէն. ունի լեզուն, ունի տունը-երկիրը, ունի մշակոյթը, եւ պէտք է ազատ արձակել զինք դէպի քոզմոփոլիս աշխարհ: Ան վերստին շեշտեց. «այսօր միայն փափուկ ուժն է որ կրնայ յաջողակ ըլլալ. բացուիլ ուրիշին եւ լուսարձակել-շողարձակել: Հիմա որ Արցախը ազա-տագրուած է եւ ՀՀ-ն ալ հռչակուած, ի՞նչ պիտի ընէք... անցէք այլ բանի»:

Այս գաղափարին կու գայ միանալ Մ-ին տեսակէտը՝ ծրագրող եւ դիմադրող ինքնութիւններու առնչութեամբ³: Ան բացատրեց՝ «դիմադրող, ինքնութիւնը գոյատեւեցնելու, թուրք գոյումին, հալածանք-ներուն եւ հայութեան ոչնչացումին հակադրուելու ծառայող գործօն է: Իսկ ծրագրային ինքնութեան մասին, ան ըսաւ. «Իմա որ ՀՀ-ն կայացած պետութիւն է, կարելի է մտածել անցում կատարել դէպի հայոյ ծրագրային ինքնութեան, միշտ շեշտելով որ ցեղասպանութիւնը կը մնայ թիւ մէկ բաղադրատարր, կը մնայ նաեւ տեսիլքը ամբողջական Հայաստանի ու միշտ կը վերանորոգուի»: Ըստ իրեն՝ «նորօրեայ հայ ինքնութեան ծրագրային բաղադրատարրերը ամրագրուած չեն, բայց կայ կորիզ մը, ուր եթէ տարբեր համեմատութիւններով տեղ ունին լեզուն, կրօնքը, մշակոյթը, պատմութիւնը, ցեղասպա-նութիւնը, հայկական խոհանոցը, բայց տեղ ունի եւ ունենալու է նաեւ ՀՀ-ն: Տեղ ունենալու է նաեւ Սփիւռքի գոյութեան փաստը: Հայկական ծրագրային ինքնութիւնը ունի գոյատեւութեան բոլոր գրա-ւակները»:

² Ճոզըֆ Նայ soft power հասկացութիւնը կը սահմանէ իբրեւ՝ «կարողութիւնը ձեւաւորելու այլոց նախընտրու-թիւնները» (Joseph S. Nye Jr., Soft Power, Hard Power and Leadership, էջ 2, դասախօսութիւն՝ կարդացուած 26 Հոկտեմբեր 2006ին):

³ Զատեղ ինքնութեան երեք խմբաւորում կը սահմանէ՝ Իրաւականացնող, Դիմադրող (resistant) եւ Ծրագրային (project identity): Դիմադրող ինքնութիւնը «կը յառաջացուի այն դերակատարներուն կողմէ, որոնք արժեզրկուածութեան պայմաններու կամ դիրքերու վրայ կը գտնուին, եւ որոնք խարանուած են տիրող տրամաբանութեամբ: Ասոնք դիմադրութեան եւ գոյատեւումի խրամատներ կը կերտեն, սկզբունքօրէն տարբերուելու համար անոնցմէ կամ հակա-դրուելու անոնց որոնք [իրենց] ընկերութեան հաստատութիւնները կը ներթափանցեն»: Ան Ծրագրային ինքնութիւնը կը բացատրէ հետեւեալ կերպ. «Երբ ընկերութեան դերակատարներ իրենց մշակութային հումքի հիմքին վրայ կը կառուցանեն նոր ինքնութիւն մը, որ կը վերասահմանէ իրենց տեղը՝ ընկերութեան մէջ. ասով անոնք կը ձգտին փոխա-կերպել ընդհանրական ընկերային կառոյցը: Այսպիսի պարագայ է, օրինակի համար, երբ ֆեմինիզմը դուրս կու գայ կանանց ինքնութեան եւ կանանց իրաւունքներու դիմադրական խրամատներէն, որպէսզի մարտահրաւիր կարգայ հայրիշխանութեան...» (Manuel Castells, The Power of Identity. The information Age: Economy, Society, and Culture, Volume II, 2nd ed., Wiley-Blackwell, 2010, էջ 8):

Ան պնդեց. «Էական է նաեւ լուսարձակի տակ առնել նոր երեւոյթներ եւ զանոնք վերածել ինքնութեան ժամանակաւոր կամ մնայուն դրամագլուխի. ի վերջոյ ինքնութիւնը, մնայուն կերտումի մէջ է»: Մ-ն պնդեց, որ հայութիւնը պէտք է օգտագործէ իր փափուկ ուժը՝ վկայակոչելով քաղաքական տեսաբան Շոզրֆ Նալը, որ կ'առաջադրէ տկար ժողովուրդներու իրաւունքներու վերատիրացման՝ փափուկ ուժի օգտագործումով: Ան թելադրեց չթերագնահատել զայն, մատնանշեց ոչ-ամերիկացիներու անհամատեղելի զգացումները ամերիկեան քաղաքականութեան եւ մշակոյթին հանդէպ, ու զայն բացատրեց փափուկ ուժի հզօրութեամբ: Հոսկ, ան զգուշացուց. «Սփիւռքը իր երրորդ սերունդը կ'սպարի. ասիկա անկիւնադարձային հանգրուան է. հիմա պէտք է շարժիլ»:

Եզրակացութիւն

Նորահաս սերունդին *քոզմոփոլիթ* աշխարհ մտնելու, համաշխարհայնացման, հայ իրականութեան քաղաքական նորագոյն զարգացումներուն եւ հայ ինքնութեան շարունակուող նորակերտումին անխուսափելի փաստերը հայութիւնը, պէտք է մղեն որդեգրելու ծրագրային ինքնութիւնը, ուր ընդգրկուին նոր բաղադրատարրեր՝ թէ՛ Սփիւռքի, թէ՛ Հայաստանի Հանրապետութեան, Արցախի ու Ջաւախքի՝ նորագոյն դրական, նախանձելի իրագործումներէն:

Պայման չէ, որ հայկական տարրեր հաւաքականութիւններ ունենան նոյն ինքնութիւնը, այլ՝ մնան ինքնութիւններ, ուր կան հասարակաց գիծեր: Արդարեւ, այսօր կարելի է յառաջացնել հայկական ինքնութեան բաղադրատարրեր որոնք նոր ամրակայութիւն տան հայ ինքնութեան. եթէ հայոց ցեղասպանութեան խնդիրը կորիզն է հայկական դիմադրող ինքնութեան, ապա ՀՀն որուն գաղափարական հիմքին մէջ Յեղասպանութիւնը կորիզ է, կրնայ դառնալ կորիզը ծրագրային ինքնութեան, իսկ ասոր իրագործման մեծագոյն դերակատարը հայկական փափուկ ուժն է՝ հայկական քաղաքակրթութեան փաթեթը:

Փաստ է թէ հայութեան ընդհանրական հասարակաց գիծերը աւելի կ'առնչուին անցեալին, քան՝ ներկային: Ժամանակն է որ յառաջացուին եւ շրջանառուին ժամանակակից հայութեան կենցաղային, քաղաքացիական, ազգային, մանաւանդ մշակութային ինքնութեան բաղադրատարրեր: Հոս է որ կիրառութեան կը դրուին ծրագրային ինքնութիւնը, ու փափուկ ուժի հասկացութիւնը:

Antranik Dakessian (Lebanon)

IDENTITIES OF SIMILAR DESTINIES: CONTEMPLATING ISSUES OF ARMENIAN AND NON-ARMENIAN MINORITY GROUP IDENTITIES

The paper is a cross-cultural examination of perceptions of identities, identity preservation, fatherland and integration.

Through a set of questions raised to diverse minority group representatives in Beirut (namely a Kurd, a Greek Catholic, a Greek Orthodox, a Maronite, and a Druze) the author constructs their attitudes and the extent of their awareness regarding matters of identity and its ingredients.

The interviewees draw parallels between the ingredients of their identities and those of the Armenian community in Lebanon and generate insights pertaining to different aspects of Armenian identity.

Using these findings as a base, the author underlines the proposal of two of the interviewees regarding the reconstruction of Armenian identity: the development of an Armenian 'project identity' and the strategic role soft power can play for that purpose.

ՀԱՅ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ. ՉԵՆՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Սեն Արևշատյան (Հայաստան)

ՍԱՐԳԻՍ ԲԵՐԻԱՑԻ՝ ԱՆՀԱՅՏ ՀԱՅ ՓԻԼԻՍՈՓԱ

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրաց հավաքածուն պահպանել է փիլիսոփայական մի բնագիր (հմր. 2361, էջ 240ա-259բ), որը վրիպել է հայ փիլիսոփայական մտքի պատմությամբ զբաղվող մասնագետների ուշադրությունից: Միակ օրինակով մեզ հասած այդ բնագիրը մեր առջև բացում է 17-րդ դարի անհայտ իմաստասերի թողած ժառանգության ուշագրավ մի էջ, որը եղել է ժամանակի պայծառ դեմքերից մեկը:

Աշխատության վերնագրում հեղինակը համեստորեն նշում է, որ այս երկը գրված է «Ի Սարգսի ումեննէ, պիտակ անուամբ քահանայէ», և որ նրա նպատակը եղել է ամփոփել փիլիսոփայական գրականությունը «սակս վարժման անձին իւրոյ» (էջ 240ա):

Սակայն, ինչպես ցույց է տալիս բնագրի վերլուծությունը, այն բացում է ընթերցողի առջև հեղինակի լայն մտահորիզոնը, քաջաժանոթությունը ոչ միայն մինչև 17-րդ դարի կեսերը կուտակված անտիկ շրջանի և միջնադարյան փիլիսոփայության ներկայացուցիչների թողած ժառանգությունը: Աշխատության տասներեք գլուխներում շարադրված են հեղինակի տիեզերաբանական և հոգեբանական հայացքները: Հատուկ ուշադրության արժանի են հոգեբանությանը (հին առումով) նվիրված վերջին գլուխները:

Սարգիս Բերիացին (1592-1662 թթ.) ծնվել, ստեղծագործել և կյանքն ավարտել է Հալեպ քաղաքում (հին անվանումն է Բերիա):

Սարգիս Բերիացու՝ որպես ժամանակի մտավորականի մասին ուշագրավ տեղեկություններ է հայտնում իր ժամանակակից, պետք է ասել հասակակից՝ Առաքել Դավրիժեցին, 17-րդ դարի անվանի պատմիչը և եկեղեցական գործիչը: Նրանք լավ ծանոթ են եղել, մի քանի անգամ հանդիպել և համագործակցել են Էջմիածնում և Հալեպում:

Ինչպես գրում է Առաքել պատմագիրը, Սարգիս Բերիացին հայտնի էր ժամանակակիցներին որպես բազմակողմանի գիտելիքների տեր անձնավորություն, մի քանի արևելյան և արևմտյան լեզուներ իմացող լայնախոհ գիտնական, ակնագործ և բժշկապետ:

«Այժմու ժամանակին ժամանեալ, - գրում է Առաքել Դավրիժեցին,- ոմն քահանայ Սարգիս անուամբ ի մերս ազգէ, հմուտ եւ տեղեակ բանից Գրոց, որ բնակեալ էր ի քաղաքն Բերիայ, որ այժմ ասի Հալապ: Եւ էր կարի վարժ ի լեզուն արապի եւ օսմանցոյ եւ ֆռանկին, այլն ծանոթ հոռոմի լեզուին եւ ջիտիս»¹:

Սարգիս քահանան թողել է մի շարք աշխատություններ՝ տարբեր բովանդակությամբ՝ բժշկաբան (հեքիմարան), թանկագին քարերի մասին արժեքավոր աշխատություն, որն Առաքել Դավրիժեցին զետեղել է իր «Պատմության» մեջ², եղել է հմուտ վարպետ, ակնագործ, որ պատուական ակունս հարթ է եւ շինէ, այլ եւ գնող եւ վաճառող սոցին»³: Գրել է նաև տաղեր և հարստացրել 17-րդ դարի գեղարվեստական գրականությունը ուշագրավ գործերով⁴:

Չեռագիրը, որը պարունակում է Սարգիս Բերիացու խնդրո առարկա երկը, նշված է «Փիլիսոփայական աշխատությունները Մատենադարանի հայերեն ձեռագրերում (համառոտ մատենագիտական ուղեցույց)»-ում⁵: Կազմողները գրում են, որ «կենսագրական տեղեկություններ չկան», սակայն վերնագրի տակ նշում են՝ (XVI դար), իսկ ձեռագրի տվյալները գրանցում են 1679 թ.՝ ելնելով հիշատակարանի տվյալից⁶: Պարզ է, որ ձեռագիրը 17-րդ դարի է և ոչ թե 16-րդ: Սարգիս քահանան, ինչպես պարզել է արք. Ա. Սյուրմեանը, հենվելով տապանաքարի վրա արձանագրված տվյալների վրա, մահացել է 1662 թ.: Որդիները, որոնք իրենց հոր՝ Սարգիս քահանայի մասին հաղորդում են նույն

¹ Առաքել Դավրիժեցի, *Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ.Ա. Խանլարյանի*, Եր., 1990, էջ 448:

² Նույն տեղում, ԵՁ 449-456: Այս երկը ռուսերեն թարգմանությամբ «Драгоценные камни» հրատարակել է Զ. Պատկանյանը, СПб., 1873, Ռուսաստանի գիտությունների կայսերական ակադեմիայի հանձնարարությամբ:

³ Նույն տեղում, էջ 462:

⁴ Նույն տեղում:

⁵ Տե՛ս «Философские труды в армянских рукописях Матенадарана (Краткий библиографический указатель)», «Вестник Матенадарана», т. 3, 1956, с. 443.

⁶ Նույն տեղում:

տվյալները, ինչ որ նրա մասին ասում է Առաքել Դավրիժեցին, ավելացնելով, որ նա մոտ յոթանասուն տարեկան էր: Դրանից ելնելով՝ արք. Սյուրմեանը նշում է, որ Սարգիս քահանան ծնվել է Հալեպում, մոտ 1592 թվականին⁷ և մահացել է մոտավորապես վաթսուհինգ-յոթանասուն տարեկանում:

Մյուս տեղեկությունը Սարգիս Բերիացու մասին նույնպես հաղորդում է Առաքել Դավրիժեցին: «Եւ եղեւ ի գնալն մեր յԵրուսաղէմ, յորժամ հասաք ի Հալապ, պատահեցաք այս Սարգիս քահանային, որ ի կարգս գրուցաց հանապազ խօսէր ընդ մեզ գորպիսութենէ ականց»⁸: Դավրիժեցին խնդրում է Սարգիսից այն ամենը, ինչ վերաբերում է թանկարժեք քարերին, գրել և տալ իրեն՝ իր աշխատության մեջ գետեղելու համար: Սարգիսը կատարում է նրա խնդրանքը: Երուսաղեմից վերադառնալիս Դավրիժեցին Հալեպում ստանում է գրավոր շարադրանքը և իր հետ բերում է Էջմիածին, և իր «Պատմագրության» վրա աշխատելիս, մուծում է այն իր շարադրանքում Սարգիս անունով, փրկելով այդ արժեքավոր գործը կորստից:

Մենք ենթադրում ենք, որ հենց այդ ժամանակ էլ Սարգիս քահանան տալիս է Առաքել Դավրիժեցուն այս փիլիսոփայական գործը, որն Էջմիածնում մոտավորապես 1655-1657 թվականներին ընդօրինակում է Հակոբ աբեղան (տե՛ս հմր. 2361 ձեռագրի 231 էջը): 1662 թ. Առաքել Դավրիժեցին ավարտում է իր «Պատմագրությունը», այդ նույն թվականին Հալեպում մահանում է Սարգիս քահանան: Նրա մարմինն ամփոփվում է Հալեպի Քառասուն մանկանց եկեղեցու գերեզմանատանը: Նրա թանկարժեք քարերի մասին աշխատությունը փրկվում է Առաքել Դավրիժեցու շնորհիվ, որի աշխատությունը հրապարակվում է դեռ իր կենդանության օրոք՝ 1669թ. Ամստերդամում՝ Ոսկան Երևանցու ջանքերով:

Ինչ վերաբերում է Սարգիս Բերիացու «Յաղագս աշխարհի» երկին, ապա այն պարունակող ձեռագիրը (հմր. 2361) այստեղ՝ Էջմիածնում հարստացվում է կարևոր հիշատակարանով: Այն գրվել է ձեռագրի վերջին ազատ էջերում Երևանի 1679թ. ահավոր երկրաշարժի ակամատեսի ձեռքով, հենց երկրաշարժի օրերին, երբ փլվեցին Երևանի և շրջակա գյուղերի գրեթե բոլոր եկեղեցիները և տները, փլվեց Գառնիի հեթանոսական տաճարը և նրան կից կլոր եկեղեցին: Պարզ է, որ այս հիշատակարանը (էջ 335ա-337ա) գրվել է երկրաշարժից անմիջապես հետո՝ 1679 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Բուն ձեռագիրը գրվել է երկրաշարժից մեկ-երկու տասնամյակ առաջ՝ 1650-ական թվականներին: Այն պարունակում է հիմնականում քերականական և փիլիսոփայական աշխատություններ և սկսվում է 17-րդ դարի հայտնի քերական և փիլիսոփա Սիմեոն Զուղայեցու «Քերականությամբ»: Մեր կարծիքով, Սարգիս քահանայի «Յաղագս աշխարհի» երկը Առաքել Դավրիժեցին Հալեպից բերել է Էջմիածին և հանձնարարել այն Հակոբ աբեղային ընդօրինակել հմր. 2361 ձեռագիրը կազմելու ժամանակ: Այն միակ ընդօրինակությունն է, որը հասել է մեզ և որն այժմ ունենք և հրապարակել ենք՝

Սարգիս քահանան «աշխարհ» հասկացողության երեք իմաստների մասին խոսելիս և շեշտելով նրա «աստուած, մարդ եւ զգալի աշխարհ» իմաստները, հատուկ նշում է, որ այս գործում քննելու է նրա երրորդ իմաստը՝ «զգալի աշխարհս այս, որ եւ տրին վասն է բանս. աշխարհ ասի, զի է բաղկացութիւն յերկնէ եւ յերկրէ եւ որ ի նոսա են բնութիւնք տարբերք եւ զանազանք» (էջ 241ա): Հետագա ողջ շարադրանքը ունի տիեզերաբանական-տիեզերագիտական բովանդակություն, և այսպես՝ մինչև իններորդ (Թ) գլուխը, որից սկսվում և ընթանում է մինչև աշխատության վերջը՝ (գլուխ ԺԳ) հոգեբանությանը նվիրված շարադրանքը:

Գլուխների անվանումները բավականին խոսում են «Յաղագս թէ որպէս ձեւ ունին երկինք եւ երկիր...» (գլ. Բ), «Յաղագս որքանութեան երկնից...» (գլ. Գ), «Յաղագս թէ զինչ է լոյս» (գլ. Դ), «Յաղագս թէ զինչ է ժամանակ» (գլ. Ե) և այլն: Հեղինակը բնագիտական ուղղության հետևորդ է, որ դեռևս վաղ միջնադարում հայ փիլիսոփայության մեջ հիմնադրել էր Անանիա Շիրակացին:

Շարադրելով հիմնական ավանդական դրույթները (երկրակենտրոն համակարգ, երկրի գնդաձևություն, Արևի և Լուսնի խավարումների պատճառների բացատրություն, մոլորակների շարժում ևն), Սարգիս Բերիացին հայ գիտական գրականության մեջ թերևս առաջինն է, ով խոսում է «նորագիտ աշխարհի» (էջ 241բ) և «դերբիսիսականի» (էջ 242բ) մասին: «Նորագիտ աշխարհը», որպես հակակշիռ «հին աշխարհին», ըստ հեղինակի, արևմտյան կիսագունդն է, որ օվկիանոսով անջատված է և ավելի մեծ «քան զաս», այսինքն «հին աշխարհը»: Դա Ամերիկան է, որի անունը Հալեպում ապրող հեղինակը դեռ չգիտի, բայց նրան հասել է այն լուրը, որ կա նոր հայտնագործած մայրցամաք: Նրան հայտնի է նաև «դերբիսիսականը», այսինքն՝ Անտարկտիկան, այն հակադիր է երկրագնդի հյուսիսային մասին՝ Արկտիկային, բայց նա չգիտի մայրցամաք Անտարկտիկայի գոյության մասին, որը հայտնաբերվեց միայն 19-րդ դարում:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում հոգեբանությանը նվիրված գլուխները (Թ-ԺԳ), որտեղ հեղինակն ամփոփել է հին և միջնադարյան փիլիսոփաների տեսակետները հոգու, նրա տեսակների (տնկական, զգայական, բանական), հատկությունների և այլնի մասին, սկսած Արիստոտելից և

⁷ Տե՛ս Ա. արք. Սյուրմեյան, *Պատմութիւն Հալեպի հայոց*, հ. Գ, Փարիզ, 1950, էջ 455:

⁸ *Առաքել Դավրիժեցի*, նշվ. աշխ., էջ 448:

⁹ Տե՛ս Սարգիս Բերիացի, *Յաղագս աշխարհի եւ այլ մասնատր իրաց, բնագրի հրապարակումը*, առաջաբանը և ծանոթագրությունները Ս.Ս. Արևշատյանի, Երևան, Եվրոպրինտ, 2011:

Դավիթ Անհաղթից մինչև միջնադարյան մտածողները: Նա վիճաբանում է Ալբերտ ֆոն Բոլշտեդտի հետ (էջ 253բ), գտնելով, որ հոգու սննդական գործընթացը նախորդում է ծննդական գործընթացին և ոչ թե հակառակը, ինչպես պնդում է Ալբերտը, «զի սննդականն, որ է նախկին ի մասունս տնկականին, ունի չորս գործընթաց (...), որք են առիթ կենդանութեան, զի առանց սոցա ոչ է կար կենդանոյ զոյ, եւ քանակ նորին պահի»:

Հետաքրքրական տեղեկություններ և դատողություններ է պարունակում բանական հոգու ճանաչողական հատկությունների և աստիճաններին նվիրված հատվածը՝ «հասարակ զգայություն, երևակայություն, կարծիք, տրամախոսություն և յիշողական» (էջ 254բ): Սարգիս Բերիացու երկը ուշագրավ մանրամասնություններով լրացնում է 17-րդ դարի մյուս հայ մտածողների, մասնավորապես Սիմեոն Ջուղայեցու, Ստեփանոս Լեհացու, Հովհաննես Ջուղայեցու հոգեբանությանը նվիրված շարահղանքները:

Գիտական շրջանառության մեջ դնելով Սարգիս Բերիացու «Յաղագս աշխարհի եւ այլ մասնաւոր իրաց» երկը, համոզված ենք, որ այն իր արժանի տեղը կգտնի 17-րդ դարի հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ:

Sen Arevshatyan (Armenia)

SARGIS BERIATSI - THE UNKNOWN ARMENIAN PHILOSOPHER

Priest Sargis Beriatsi (approx. 1592-1662) is the author of philosophical treatise “On the universe and other particular things” (Matenadaran, MS № 2361), which was preserved in the unique manuscript. It contains 13 chapters and is divided into three parts - cosmography, metereology and psychology.

Sargis Beriatsi was the first in the history of the Armenian science to mention the New World - America, and the South Pole - Antarctica.

Particularly noteworthy in the treatise is the discussion with famous medieval philosopher Albert Graf von Bollstädt on different qualities of human anima.

Համլետ Գևորգյան (Հայաստան)

ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱՆ ԵՒ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԳՐՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՒ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ա) Երբ խոսքը վերաբերում է անտիկ և միջնադարյան հայերեն թարգմանական գրականությանը, ապա սովորաբար առաջին հերթին հիշատակվում են այն երկերը, որոնք պահպանվել են միայն հայերեն թարգմանությամբ: Սակայն միջնադարյան հայերեն թարգմանական գրականությունը կարող է շատ ավելի լայն կիրառություն ունենալ և նպաստ բերել փիլիսոփայության պատմագրությանը, աղբյուրագիտությանը, մշակույթի պատմությանը ընդհանրապես: Արիստոտելի «Ստորոգութիւնը...», «Վերլուծական...» և «Յաղագս մեկնութեան» աշխատությունների և Պորփյուրի «Ներածութիւն Ստորոգութեանց Արիստոտելի» աշխատության հայերեն թարգմանությունները, ինչպես որ Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» երկը մեզանում գիտական շրջանառության մեջ են մտել շնորհիվ Ս.Ս.Արևշատյանի, որին պատկանում են համահավաք քննական բնագիրը կազմելը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանը և ծանոթագրությունները: Այդուհետ, հետազոտողները նոր վերլուծությունների, մեկնաբանությունների, քննարկումների ժամանակ հղումներ են անում հենց այդ քննական բնագրերին ու թարգմանություններին¹:

Առանձնապես նշենք, որ այդպես է վարվել Գևորգ Հ. Գրիգորյանը հետագա դարերի և հատկապես XIII–XIV դդ. հայ փիլիսոփայական մտքի պատմությունը շարադրելիս: Ընդսմին Գ.Հ.Գրիգորյանը «Դավիթ Անհաղթը և միջնադարյան հայ փիլիսոփայական միտքը» հոդվածում² մի շատ կարևոր դիտարկ-

¹ Իհարկե, այս խնդրում իրենց մեծ ներդրումն են ունեցել (և դա հատկապես նշում է Ս.Ս.Արևշատյանը) Հ.Հ.Մանանդյանը և Վ.Կ.Չալոյանը: Մասնավորապես՝ Մանանդյանն է հրապարակել «Մեկնութիւն Ստորոգութեանց Արիստոտելի» երկի հայերեն/գրաբար տարբերակի քննական բնագիրը, և այդ թարգմանությունը պահպանում է իր եզակի, մնայուն արժեքը: Վ.Չալոյանը Արիստոտելի «Օրգանոնի», Պորփյուրի «Ներածության» թարգմանությունը և այդ երկերի հայերեն/գրաբար վերլուծություններն ու մեկնությունները համարում է նշանակալից այն տեսակետից, որ դրանք բերեցին տրամաբանական մշակույթի համեմատաբար վաղ առաջացմանը հայկական մատենագրության մեջ (տես Վ.Կ.Չալոյան, Հայոց փիլիսոփայության պատմություն. հին և միջին դարեր: ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975, էջ 115):

² Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1980, հմ. 5:

կում է անում. «Հետագա դարերի... փիլիսոփայության լեզուն, նրա բառաֆոնդը, հասկացությունների համակարգն ու դատողությունների ոճական առանձնահատկությունները շատ ընդհանրություններ ունեն այն լեզվի հետ, որը ձևավորվել ու ստեղծվել է Դավիթ Անհաղթի ժամանակներում... Այդ, այսպես կոչված, հունաբան գրաբարը՝ հիմնականում փիլիսոփայության, տեսական մտածողության լեզուն, փոխանցվել է հետագա դարերի մտավորականներին...»: Գ.Հ.Գրիգորյանը նկատի ունի Գրիգոր Մագիստրոսին, XIII–XIV դդ. փիլիսոփաներ Հովհաննես Երզնկացի Պլուզին, Հովհան Ռոտմեցուն, Վահրամ Բաբունուն, որոնց ուսմունքների վերլուծությանն է նվիրված Գ.Հ.Գրիգորյանի տվյալ հոդվածը: Գ.Հ.Գրիգորյանի դիտարկումը ևս մի հանգամանք է, որը կարևորում է V–VI դդ. հայ փիլիսոփայական, թարգմանական գրականությունը:

բ) Կա մի առանձնահատկություն, որը բացառիկ է դարձնում Արիստոտելի աշխատությունների հայերեն /գրաբար թարգմանությունները, մեկնություններն ու վերլուծությունները: Անտիկ գիտական երկերը գրված են չափազանց սեղմ՝ լապիդար ոճով, իսկ հայերեն/ գրաբար թարգմանություններն առավելագույնս մոտեցված են հունարեն բնագրերին, կարելի է ասել՝ պատճենային են թե՛ լեզվական, տերմինաբանական տեսակետից և թե՛ բովանդակությունը ճշտորեն արտահայտելու տեսակետից³: Սրան պետք է ավելացնել նաև հետևյալ նկատառումը. նորապլատոնականության Ալեքսանդրյան դպրոցի համար, որին պատկանում է Դավիթ Անհաղթը, բնորոշ է դասական հունական ու հելլենիստական փիլիսոփայական երկերի նկատմամբ վերլուծական-մեկնողական մոտեցումը՝ մտքի հստակությունը, լեզվական արտահայտությունների միանշանակությունը, սահմանումների ճշգրտությունը: Սա համապատասխանում է Արիստոտելի և արիստոտելականության ռացիոնալ, վերլուծական-տրամաբանական մտածելակերպին:

գ) Նորապլատոնականության Ալեքսանդրյան դպրոցին հատուկ արիստոտելական ռացիոնալ-տրամաբանական վերլուծական միտումն է, որ, փոխանցվելով եվրոպական ուշ միջնադար՝ X–XV դդ., նպաստեց տրամաբանության, մաթեմատիկայի, բնափիլիսոփայության զարգացմանը և աշխարհով եղավ մտահայեցողական մետաֆիզիկական փիլիսոփայության / կրոնափիլիսոփայության իրական այլընտրանքը: Դավիթը որպես Ալեքսանդրյան դպրոցի ներկայացուցիչ նկատելի դեր է կատարել հին հունական փիլիսոփայական ժառանգությունը ուշ միջնադարյան եվրոպական մշակույթին փոխանցելու գործում առհասարակ: Սա բոլորովին էլ գերազանցատու է չի լինի. հիշենք, որ Դավթի երկերը, իրենց հունարեն տարբերակով, շրջանառության մեջ են եղել ողջ միջնադարում⁴:

դ) Հաջորդ դիտարկումը: Հայ միջնադարյան փիլիսոփայական տեքստերում հանդիպում են դասականների երկերի նկարագրություններ, վերարտադրություններ, բովանդակության վերաշարադրանքներ և այլն, որոնք դեռևս քիչ են օգտագործվում աղբյուրագիտական հետազոտությունների մեջ: Ահա մի ցայտուն լուսաբանող օրինակ: Դավիթ Անհաղթը տվել է Արիստոտելի գրվածքների («շարագրութեանց») լրիվ դասակարգումը իր «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի» աշխատության մեջ: Սա հնուց եկող մի դասակարգում է, որը սկզբնաղբյուրի արժեք ունի, եթե նկատի ունենալու լինենք ժամանակը (V–VI դդ.): Այդ դասակարգումը տողերիս հեղինակը առանձնացրել է և վերարտադրել ակնառու ձևով, ծառի տեսքով⁵: Հարկ չկա ապացուցելու, թե ինչ կարևոր նշանակություն ունի Դավթից բերված հատվածը առհասարակ արիստոտելագիտության համար (նամանակաձև, որ այս աղբյուրը՝ «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի» աշխատությունը, հունարեն տարբերակով

³ Եվ դա արվել է՝ շատ դեպքերում խախտելով հայերենի քերականական և սեմանտիկական կադապրները, նշում է Հ.Մանանդյանը, բայց, այսուհանդերձ, նա առանձին նշանակություն է տալիս, ինչպես ինքն է անվանում՝ «այսպիսի հատուկ տեսակի թարգմանությանը»: Տե՛ս Հ.Մանանդեան, Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի: Ս.Պետերբուրգ, 1911 /Ներածություն, պարագրաֆ 8 (էջ V–VI):

⁴ Այս հանգամանքի կարևորությունը գիտակցելու համար նորից հիշեցնենք, որ, ինչպես նշում են գիտության պատմաբանները, և մասնավորապես տրամաբանության պատմաբան Ն.Ստյաժկինը, ճշգրիտ գիտությունները և մաթեմատիկա-տրամաբանական նախնական հետազոտությունները սկիզբ են առնում այն ժամանակ, երբ *արիստոտելականություն* է տարածվում Եվրոպայում (XIII դարից), և նրանից անցնում են Նոր ժամանակի տրամաբանությանը և գիտության մեթոդաբանությանը (տե՛ս *Н.И.Стяжкин. Формирование математического логика. М., 1967, с. 150*). Իսկ փիլիսոփայության նշանավոր պատմաբան Վ.Վինդեյբանդը, ընդգծելով Արիստոտելի երկասիրություններին և մեկնություններին հատուկ մտքի ճշգրտությունը, ձևակերպումների հստակությունը և լեզվական արտահայտությունների միանշանակությունը, դրանք հակադրում է Պլատոնի երկասիրություններին, որոնք պատկերավոր են և այլաբանական, ուստի և՛ դուրս են մաթեմատիկատրամաբանական ռացիոնալ մտածելակերպի ծիրից (տե՛ս *В.Виндельбанд. История Древней философии. М., 1911, с.249-250*): Սակայն Արիստոտել – Պլատոն, արիստոտելականություն – պլատոնականություն դիմակայությունն ունի նրբերանգներ և տարբեր մեկնաբանություններ: Դրանց վերլուծությունը կարելի է գտնել, մասնավորապես, իմ «Փիլիսոփայություն. Պատմություն. Մշակույթ» և «Философия. Наука. Культура» գրքերում՝ ըստ անվանացանկի Դավիթ Անհաղթ, Արիստոտել, Պլատոն, Բոեթիոս, Վինդեյբանդ, Ռիկերտ, Ստյաժկին բառահոդվածներում:

⁵ Տե՛ս Հ.Ա.Գևորգյան, Հայ փիլիսոփայության պատմության մշակութաբանական տեսանկյունները: // «Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում», Եր., ՀԳԱ հրատ., 1992, էջ 16–48: Նույնը՝ «Փիլիսոփայություն. Պատմություն. Մշակույթ», ՀԳԱ հրատ., 2005, էջ 7 – 38:

շրջանառության մեջ է եղել ամբողջ միջնադարում⁶): Սա միայն մեկ լուսաբանող օրինակ է, որով կարելի է տեսնել, թե ինչ նոր հնարավորություններ են բացվում փիլիսոփայական աղբյուրագիտության համար, եթե նույն տեսանկյունից և նույն եղանակով աչքի անցկացվի հայ ամբողջ միջնադարյան փիլիսոփայական գրականությունը. կցուցադրվի հայ փիլիսոփայական ժառանգության ներքին հարստության ևս մեկ կողմը և կշահի նրա վարկը փիլիսոփայության ընդհանուր պատմագրության մեջ:

ե) Արևմուտքը իմացավ անտիկ փիլիսոփայությունը, տրամաբանությունը, գեղագիտությունը ոչ թե անմիջապես հունարեն սկզբնաղբյուրներից, այլ Բոեթիոսի (մ.թ. V-VI դդ.) կատարած լատիներեն թարգմանությամբ և այն մեկնաբանությամբ, այն ըմբռնումներով, որ պարունակվում են Բոեթիոսի աշխատություններում: Լատիներենը դարձել էր եվրոպական Արևմուտքի գիտական-գրական լեզուն: Հիմա պատկերացրեք, որ երկու սյունակով կողք-կողքի են դրվում Արիստոտելի «Յաղագս մեկնութեան»-ի հունարեն բնագրի երկու թարգմանությունները, այն է՝ Բոեթիոսի կատարած լատիներեն թարգմանությունը և հայերեն թարգմանությունը՝ կատարված նույն ժամանակ՝ V դ. վերջերին - VI դ. սկզբներին: Մեծ հիմունքով կարելի է պնդել, որ դա արդյունավետ կլինի մի քանի տեսանկյուններից. դա հնարավորություն կտա ճշտվել կազմելու նրա համահավաք քննական բնագիրը, կատարելու ճշգրտումներ փիլիսոփայության և տրամաբանության տերմինաբանական և հասկացութային համակարգի մեջ, տալու նոր ստուգաբանություններ⁷:

Hamlet Gevorgian (Armenia)

ON CHARACTERISTIC TRAITS OF THE ARMENIAN TRANSLATIONS AND EXEGESES OF ARISTOTLE'S PHILOSOPHICAL AND LOGICAL TREATISES

The Armenian translations and exegeses of treatises of classical Antiquity and of Middle Ages are the subject of this paper, particularly the treatises of VI-VII cc. which are considered as original literary sources in philosophy, logic and methodology of science. The comparison of Boetius' translation of Aristotle's *Perihermeneias* with the Armenian translation of the same time is productive for studies in terminology, etymology, exegesis.

Moreover, these texts — the Armenian translations and exegeses of treatises of classical Antiquity and of Middle Ages — can be effectively more useful for studies in philosophy, logic and methodology, because they contain, particularly, references to many literary sources of great importance. So, the author has revealed, in a text of David Anghaght, the full and detailed description of Aristotle's writings; he has reconstructed it, and presented it in classification tree diagram.

Յակով Խաչիկյան (Հայաստան)

ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾ ՀԱՅ ԷՍԹԵՏԻԿԱԿԱՆ ՄՏԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

Բուն հայկական գեղագիտական մտքի սկզբնավորումը թվագրվում է մ.թ. 4-5-րդ դարերով, թեև Հայաստանի տարածքում նախագեղագիտական պատկերացումները վերաբերում են շատ ավելի վաղ ժամանակաշրջանի¹: Սակայն գեղագիտության տեսության ու պատմության հարցերի տեսական մշակումը սկսվեց բավականին ուշ: Դրանց գիտական ծավալումն քննությունը, ինչպես նաև Հայաստանում գեղագիտական մտքի պատմության վերլուծությունը վերաբերում են 20-րդ դարակեսին: Երկու ուղղությունների հիմնադիրն էլ միևնույն մարդն է՝ խորհրդային նշանավոր երաժշտագետ ու գեղագետ, 1924-1926 թթ. Երևանի կոմսերվատորիայի ռեկտոր Արշակ Աղամյանը:

⁶ Ինչպես հիմնավորում է Ս.Ս. Արևշատյանը, «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի» աշխատության հեղինակը Դավիթ Անհաղթն է և ոչ թե Ալեքսանդրյան դպրոցի մեկ ուրիշ ներկայացուցիչը՝ Էլիասը, ինչպես որ համարում էր (բայց՝ խիստ վերապահումներով) Հակոբ Մանանդյանը: Այս հիմունքով Ս.Ս.Արևշատյանը «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի» աշխատության՝ Հ.Մանանդյանի հրապարակած տեքստը՝ ծանոթագրություններով հանդերձ, լիիրավ կերպով գետեղել է «Դավիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք» ժողովածուում (ՀՍՍՌ հրատ., 1980: Այստեղ տե՛ս նաև Ս.Ս.Արևշատյանի Առաջաբանը, էջ 15-16):

⁷ Հենց մամն նպատակներով տեքստերի այդ զուգադրումները տողերիս հեղինակը կատարել է «Դասական ձևական տրամաբանության հարաբերությունը ժամանակակից տրամաբանական ուսմունքների և մաթեմատիկական տրամաբանության հետ» հոդվածում (տե՛ս *Գիտության և մշակույթի փիլիսոփայության և մեթոդաբանության հարցեր* : Երևան, ԳԱԱ հրատ., 2013, էջ 40-41):

¹ Տե՛ս **Надежда Трухтанова**. *К вопросу о протоэстетических представлениях в культуре народов Армянского нагорья*. – “Из истории эстетической мысли в Армении”, сборник исследований, книга 7, Е., “Титутион”, 2008, с. 65-76.

Հայրենական պատերազմի կապակցությամբ, Լենինգրադից տարհանված լինելով Տաշքենդ, 1943-ին նա հրավիրվեց Հայաստան՝ երևանյան բուհերում (Պետհամալսարան, Պետկոնսերվատորիա, Գեղարվեստաթատերական ինստիտուտ) «Էսթետիկա» առարկայից կարդացած իր դասախոսություններով նպաստելով հասարակության մեջ էսթետիկական գաղափարների քարոզչությանն ու տարածմանը: ՀՀ գիտությունների ակադեմիայի հիմնումից հետո՝ 1944-ից սկսած, նա աշխատեց նաև Գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայության սեկտորում, որտեղ գեղագիտության հետ միասին սկսեց ուսումնասիրել նաև Հայաստանում էսթետիկական մտքի պատմությունը: Նրա երկու հրապարակումները՝ «Հին Հայաստանի էսթետիկական հայացքների պատմությունից, արվեստը որպես օգտակար գործունեություն»² և «Էսթետիկան որպես հասարակական գիտություն»³, կարելի է համարել Հայաստանում էսթետիկական մտքի տեսության ու պատմության հարցերի գիտական ուսումնասիրության մեկնակետ: Այդ կապակցությամբ անդրադառնանք Ա.Ադամյանի կյանքի ուշագրավ մի փաստին:

1915 թ. Պետրոգրադում լույս տեսավ Ն.Ադոնցի «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները»⁴ լայնորեն հայտնի աշխատությունը՝ նվիրված առաջին հայ քերականների գործերի վերլուծությանը: Իր բարձրարժեք հետազոտության մեջ նա ներկայացրեց նրանց աշխատությունները և խոր գիտականությամբ բացահայտեց նրանց լեզվաբանական բովանդակությունն ու նշանակությունը՝ միաժամանակ ակամա հրամցնելով նրանց մեջ պարունակված վաղ ֆեոդալիզմի Հայաստանի էսթետիկական միտքը: Բանն այն է, որ այդ դարաշրջանում գեղագիտության հարցերը քննվում էին նաև քերականական տրակտատներում: Սակայն Ն.Ադոնցն ինքը «չնկատեց» էսթետիկական ասպեկտը և չառանձնացրեց այն՝ նույնիսկ չհիշատակելով նրանցում առկա պատմաէսթետիկական «հատիկը»: Հենց այդ «հատիկը» հետագայում «կեղևահան» արվեց և հանգամանորեն վերլուծվեց Ա.Ադամյանի կողմից նրա դասական դարձած «Միջնադարյան Հայաստանի էսթետիկական հայացքները. վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջան» աշխատության մեջ⁵: Դեպի այն տանող առաջին քայլը մեր կողմից վերը հիշատակված և 1946 թ. հրատարակված հոդվածն էր, որտեղ նա արդեն հատուկ անդրադարձ էր կատարել հայ քերականներին և Ն.Ադոնցի գրքին՝ բացահայտելով քերականական տրակտատների էսթետիկական բովանդակությունը: Այսպիսով՝ Ն.Ադոնցը կարող էր դառնալ, սակայն չդարձավ Հայաստանում էսթետիկական մտքի պատմության ուսումնասիրության սկզբնավորող:

Այդ դերին չի կարող հավակնել նաև Մխիթարյան միաբանության անդամ Ս.Երեմյանը, որի ոչ ծավալուն «Գրականության պատմությունը և գեղեցիկը»⁶ (1915) գիրքը որևէ առնչություն չունի էսթետիկական մտքի պատմության ո՛չ տեսության, ո՛չ էլ պատմության հետ: Դա ոչ շատ խորը գրականագիտական աշխատություն է, որում գեղեցիկի հասկացության միջոցով գնահատական է տրվում եվրոպական և հայ գրականության առանձին ստեղծագործությունների, այն էլ՝ ոչ թե տեսական-վերլուծական, այլ զգացական-դեկլարատիվ մակարդակի վրա:

Ցավոք սրտի, Հայաստանում գեղագիտական մտքի պատմության հետազոտության նախահայր չդարձավ նաև գրականության հարգարժան պրոֆեսոր, 2 աշխատությունների հեղինակ, ակադեմիկոս Ա.Տերտերյանը՝ «Նալբանդյանի էսթետիկան» (1939) և «Պարոնյանի էսթետիկական հայացքները» (1941)⁷: Դրանցում մենք հանդիպում ենք «էսթետիկա» բառի այնպիսի ընդլայնված գործածության, որ ողջ աշխարհում ազատ ու լայնորեն կիրառվում է կյանքի տարբեր բնագավառներում այլևայլ, հաճախ ոչ էսթետիկական ոլորտների անվանման համար: Դա ավելի հաճախ հանդիպում է որպես գրականության ու արվեստի, դիզայնի և այլն առանձին ներկայացուցիչների ստեղծագործության հավաքական գնահատական, որն ուղղակի կապ չունի էսթետիկայի և նրա պատմության հետ: Եվ ահա, Ա.Տերտերյանի 2 աշխատությունները՝ գրված նրան հատուկ տաղանդով և շարադրանքի հոյակապ ոճով ու հարստությամբ, հագեցած են 19-րդ դարի հայ գրականության 2 նշանավոր ներկայացուցիչների ստեղծագործության մուրբ վերլուծությամբ: Սակայն երկու աշխատանքներն էլ ունեն գուտ գրականագիտական բնույթ և դարձյալ չեն կարող դիտվել որպես Հայաստանում գեղագիտական մտքի պատմության ուսումնասիրման սկիզբ: Գրականագիտական ընդգծված ուղղվածություն ունի նաև

² Ст'н А.Адамян. Из истории эстетических воззрений в Древней Армении: искусство как полезная деятельность. – “Известия общественных наук АН АрмССР”, 1946, N4, с. 9-22.

³ Ст'н А.Адамян, *Էսթետիկան որպես հասարակական գիտություն*, «Սովետական գրականություն և արվեստ», 1947, N1, էջ 100-115, N2, էջ 84-95:

⁴ Ст'н Н.Адонц. Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, 308 с.

⁵ Ст'н А.Адамян. Эстетические воззрения средневековой Армении. Период раннего феодализма. Е., “Айастан”, 1955, 223 с.

⁶ Ст'н Ս.Երեմյան, *Գրականության պատմությունը և գեղեցիկը*, Վենետիկ, 1915, 34 էջ:

⁷ Ст'н Ա.Տերտերյան, *Նալբանդյանի էսթետիկան*, «Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ», հ.10, 1939: Ա.Տերտերյան, *Պարոնյանի էսթետիկական հայացքները*, «Սովետական գրականություն», Ե., 1941, N1-3, 5-6, 9-10:

Ա.Հովհաննիսյանի «Նալբանդյանը և իր ժամանակը» (1956)⁸ կապիտալ աշխատության «Նալբանդյանի էսթետիկան» բաժինը:

Ա.Աղամյանը բառիս բուն իմաստով իմ ուսուցիչը չի եղել: Բայց նա դարձավ այն մարդը, որը ինքն էլ չիմանալով՝ երկու անգամ ճակատագրական դեր խաղաց իմ կյանքում: Առաջին անգամ 1943-ի վերջին էր: Ռազմաճակատ մեկնելուց առաջ որոշեցի այցելել հարազատ համալսարան, հանդիպել չգորակոչված ուսանողների հետ և պարզապես հրաժեշտ տալ *Alma mater*-ի պատերին: Կուրսի ավագ, իմ լավ ընկեր ու բարեհոգի մարդ Արմիկ Բորյանը ուրախությամբ հաղորդեց, որ այդ օրը լինելու է պրոֆ. Ա.Աղամյանի հերթական դասախոսությունը և հրավիրեց ունկնդրելու: Ա.Աղամյանը սիրալիր ընձեռեց այդ հնարավորությունը, և ես առաջին ու վերջին անգամ լսեցի նրա հրաշալի դասախոսությունը գեղեցիկ կատեգորիայի շուրջ: Այդ ժամանակ սովորելով ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետում՝ ես արդեն որոշել էի իմ հետբուհական գործունեության բնագավառը՝ փիլիսոփայություն: Ա.Աղամյանը լրացուցիչ նրբագիծ ավելացրեց իմ պլաններին, ես հասկացա, որ փիլիսոփայության մեջ ընտրելու եմ էսթետիկան: Այդպես էլ եղավ: Ես ասպիրանտուրա ընդունվեցի այդ գծով, ատենախոսություն պաշտպանեցի էսթետիկայից, 1953-ի վերջին աշխատանքի ձևակերպվեցի Հայկական ՍՍՀ ԳԱ-ի փիլիսոփայության սեկտորում և 1959 թ. աշնանը հասցրեցի հրատարակել «Արվեստի ճանաչողական նշանակությունը»⁹ մենագրությունը:

Ինչպես վերը նշվեց, 1955-ի աշնանը լույս տեսավ Ա.Աղամյանի «Միջնադարյան Հայաստանի էսթետիկական հայացքները, վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջան» չափսերով ու ծավալով ոչ մեծ գիրքը, որը դարձավ Հայաստանում էսթետիկական մտքի պատմության առաջին ուսումնասիրությունը: Այդտեղ առաջին անգամ ամենայն որոշակիությամբ հարց դրվեց 1. արդեն հնում Հայաստանում էսթետիկական մտքի առկայության և 2. դրա պատմության համակարգված ուսումնասիրություն ու շարադրանք սկսելու անհրաժեշտության վերաբերյալ: Հայաստանում պատմաէսթետիկական մտքի ուսումնասիրության ուղղությամբ այդ առաջին նպատակադիր գիտական վերաբերմունքն էլ նշանավորեց այդ գործընթացի սկիզբն ու ծնունդը: Ինձ համար այն դարձավ իմ կյանքը Ա.Աղամյանի ներմուծած երկրորդ նրբագիծը. առանց տատանման ես որոշում ընդունեցի մի կողմ չդնելով էսթետիկայի տեսական հարցերի քննությունը՝ կենտրոնանալ Հայաստանում էսթետիկական մտքի պատմության ուսումնասիրման վրա՝ ինչպես անձնական մասնակցությամբ, այնպես էլ այդ պատմության համակարգված հետազոտությունը կազմակերպելով՝ դրանում ներգրավելով մի շարք մասնագետներին:

Նշված ուղղությամբ ջանքերի ակտիվացմանն ինձ մղեց Ա.Աղամյանի հանկարծակի հեռանալը կյանքից 1956 թ. փետրվարի 17-ին, այսինքն՝ կես տարի անց, նրա՝ պատկերավոր ասած՝ պիոներական գրքից, նրա մենագրությունից: Դա հեղինակի յուրօրինակ կտակն էր, որը ես ընդունեցի որպես էստաֆետ և ողջ գործունեությունս ուղղեցի նրա սկսած գործի շարունակության ընդլայնմանը՝ ինչին էլ հավատարիմ մնացի մինչ օրս: Այդ գործընթացն ինձ համար սկսվեց, այսպես ասած, խնդրի շուրջ գիտելիքների նախասկզբնական կուտակմամբ: Ես ուսումնասիրեցի իր աշխատությունում Ա.Աղամյանի գրքում հիշատակած բոլոր աշխատությունները: Էսթետիկայի ակնոցներով ընթերցեցի ու վերընթերցեցի գրականության, արվեստի ու մշակույթի հայ գործիչների ասույթներն ու մտքերը, դրանց միջից վերհանելով պատմաէսթետիկական նյութը և վերջապես 1959-ի առաջին կեսին հրատարակեցի այդ ուղղությամբ իմ առաջին աշխատանքը՝ «Խաչատուր Աբովյանի գեղագիտական հայացքների բնութագրման շուրջը»¹⁰ գրված հայ մեծ գրողի հոբելյանի առիթով:

Բայց, իհարկե, բարդ էր միայնակ շարունակել այդ հսկա աշխատանքը: Թեև հանրապետության գիտական այլ կենտրոններում ու բուհերում իմ օրինակով որոշ էնտուզիաստներ սկսել էին ինքնակա անդրադառնալ էսթետիկայի տեսության ու պատմության հարցերին: Այդ աշխատանքն ընդլայնելու և դրան կազմակերպական ու նպատակամետ բնույթ հաղորդելու նպատակով 1962 թ. ամռանն իմ նախաձեռնությամբ փիլիսոփայության սեկտորում ստեղծվեց էսթետիկայի աշխատանքային խումբ (1969-ից՝ Փիլիսոփայության ու իրավունքի ինստիտուտի էսթետիկայի բաժին), որի արդյունավետությունը գերազանցեց մեր սպասելիքները: Խումբը կազմավորվեց գիտությունների թեկնածուներից (Ստ.Թովչյան, Ալ.Քալանթար, Ժ.Ստեփանյան), հայցորդներից (Գ.Հակոբյան, Հ.Ավետիսյան) և ասպիրանտներից (Ե.Հակոբջանյան, Մ.Քացախյան, ովքեր հետագայում նաև դոկտորական ատենախոսություն պաշտպանեցին): Նրանց ավելացան Լ.Լաճիկյանը, Վ.Չալոյանը, Պ.Նահապետյանը և Վ.Շահնագարյանը: Գրվում և հրատարակվում էին ոչ միայն խմբի անդամների, այլև մյուս ստորաբաժանումների էսթետիկական նախապատրաստություն ունեցող աշխատակիցների (Ս.Թովմասյան) հոդվածներն ու մենագրությունները: Խմբի ազդեցությամբ հայոց փիլիսոփայության պատմության գծով

⁸ Տե՛ս Ա.Հովհաննիսյան, *Նալբանդյանի էսթետիկան*, «Նալբանդյանը և իր ժամանակը» գրքում, գիրք 2, Ե., «Հայպետհրատ», 1956:

⁹ Տե՛ս Я.И.Хачикян. *О познавательном значении искусства*, изд-во АН АрмССР, 1959, 177 с.

¹⁰ Տե՛ս Յա.Ի.Խաչիկյան, *Խ.Աբովյանի գեղագիտական հայացքների բնութագրման շուրջը*, «Պատմա-բանասիրական հանդես», 1959, N2-3, էջ 211-218:

աշխատությունների հեղինակները (Վ.Չալոյան, Գ.Գրիգորյան, Ա.Թևոսյան) իրենց հրապարակումներում սկսեցին պատշաճ տեղ հատկացնել հայ մտածողների նաև էսթետիկական հայացքների բնութագրմանը: Այդ միտումը սկսեց նկատվել նաև ԵՊՀ հայ փիլիսոփայության պատմության մասնագետների աշխատություններում: Հիշյալ խումբը վերածվեց մեր հանրապետությունում էսթետիկական հետազոտությունների կենտրոնի, որին դիմում էին հետաքրքրվող անձինք: Վերջիններս մասնակցում էին խմբի նիստերին, խորհրդատվություն ստանում, իրենց աշխատանքները ներկայացնում քննարկման: Օրինակ, ինձ հանձնարարվեց Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտից նաև 2 ասպիրանտների գիտական ղեկավարությունը (երկուսն էլ հետագայում հաջողությամբ պաշտպանեցին իրենց ատենախոսությունները): Մենք խմբի (նաև բաժնի) աշխատանքներին ներգրավում էինք նաև մասնագետներ Մոսկվայից: Մեզ հետ ակտիվորեն համագործակցում էին Հայկական ՄՍՀ ԳԱ ակադեմիկոս, գրականագետ Էդ.Ջրբաշյանը և ԵՊՀ դոցենտ Վ.Հովսեփյանը:

Մոսկվայում հայ էսթետիկական մտքի պատմությամբ աշխատանք ծավալեց մեր հայրենակից, պրոֆեսոր Հ.Ապրեսյանը, որը մի քանի գրքեր ու հոդվածներ հրատարակեց ինչպես Հայաստանում¹¹ (ներառյալ մեր ժողովածուներում), այնպես էլ Մոսկվայում:

1967-ից սկսեցին հրատարակվել իմ հիմնած «Էսթետիկայի հարցեր» (լույս է տեսել 7 գիրք) և «Հայ էսթետիկական մտքի պատմությունից» (լույս է տեսել 8 գիրք) մատենաշարերը, «Հայ արվեստի գործիչները արվեստի մասին» (լույս է տեսել 8 գիրք): Մեր նախաձեռնությամբ 1973 թ. հանրապետության ղեկավար մարմինների որոշումով (առաջինը՝ ԽՍՀՄ-ում) հանրակրթական դպրոցներ ներմուծվեց «էթիկայի և էսթետիկայի հիմունքներ» առարկան:

Վերջապես, Մոսկվայում 1976 թ. «Իսկուստով» հրատարակչությունը լույս բնծայեց իմ ղեկավարությամբ և հեղինակային մասնակցությամբ նախապատրաստված և իմ ընդհանուր գիտական խմբագրությամբ «Հայաստանում էսթետիկական մտքի զարգացման ակնարկը»¹² կոլեկտիվ մենագրությունը, որը կարևոր դեր խաղաց համաշխարհային հանրությանը Հայաստանում էսթետիկական մտքի պատմությունը ներկայացնելու առումով:

Հետագայում էսթետիկայի հարցերի քննությանը միացան Ժ.Վարդանովան, Կ.Միրումյանը, Ռ.Միրումյանը, Մ.Հարությունյանը, Ս.Արզումանյանը, Ա.Օսիպյանը: Կային նաև այլ դրական արդյունքներ:

Եզրափակելով ուզում եմ նշել, որ ի հարգանս մեծ գիտնական Ա.Ադամյանի և ի նշան իմ կյանքում ակամա խաղացած նրա դերի, Մոսկվայում 10 հազար տպաքանակով ես հրատարակեցի նրա ուսումնասիրությունների «Էսթետիկայի և արվեստի տեսության հարցեր» ժողովածուն¹³, որտեղ նրա մի քանի ուսումնասիրությունների հետ մեկտեղ վերահրատարակեցի «Միջնադարյան Հայաստանի էսթետիկական հայացքները, վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջան» մենագրությունը, որը Երևանում հրատարակված լինելով՝ սակավածանոթ էր ԽՍՀՄ-ի և արտասահմանի գեղագետներին: Բացի դրանից «Հայ էսթետիկական մտքի պատմությունից» մատենաշարի 4-րդ գրքից սկսյալ ես ներմուծեցի «Նյութեր» նվիրված Ա.Ադամյանի կյանքին ու գործունեությանը՝ բաժինը, որն ուներ «Ա.Ադամյանի աշխատություններից», «Ա.Ադամյանի նամակներից», «Ա.Ադամյանի ժամանակակիցների հուշերում և նրանց գնահատմամբ» ենթաբաժինները:

Գեղագիտության բնագավառում կատարած աշխատանքի մասին ամփոփ ձևով պատկերացում է տալիս «Գեղագիտական միտքը Հայաստանում X-XI դարի սկզբին» մատենագիտական տեղեկատուն, որտեղ ներկայացված են հայ գեղագիտական մտքի պատմության և գեղագիտության տեսական և ընդհանուր հարցերին նվիրված հրատարակված գրքերը: Բացի այդ տպագրվել են բազմաթիվ հոդվածներ:

Yakov Khachikyan (Armenia)

SHORT OVERVIEW OF HISTORY OF AESTHETIC THOUGHT IN ARMENIA

The report presents a brief history of the research of the aesthetic thought in Armenia. The role of the founder of the research Professor A. Adamian and his successor Professor Ya. Khachikyan who with a group of colleagues undertook a comprehensive study of the history of the aesthetic thought in Armenia. It is due to their efforts that the study upgraded its status to a new, independent branch of the Armenian studies. The report contains some data on publications on theory and history of the aesthetic thought (primarily in Armenia).

¹¹ Տե՛ս Գ.Ապրեսյան. *Из истории армянской эстетической мысли*, Е., «Айастан», 1973, книга 1, 292 с.; книга 2, Е., 1977, 342 с.

¹² Տե՛ս *Очерк развития эстетической мысли в Армении* (под ред. Я.И.Хачикяна), М., «Искусство», 1976, 280 с.

¹³ Տե՛ս Ա.Ադամյան. *Вопросы эстетики и теории искусства* (составитель Я.И.Хачикян), М., «Искусство», 1978, 300 с.

Գագիկ Հարությունյան (Հայաստան)

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ «ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ»

Հայագիտությունը, անշուշտ, լոկ ակադեմիական-հիմնարար գիտություն չէ: Հայագիտության ճյուղավորումները՝ պատմագիտությունը, գրականությունը, ճարտարապետությունը և այլն, մեր քաղաքակրթական ինքնության արտահայտումներն են, իսկ այդ արտահայտումներն, իրենց հերթին, նոր բովանդակություն են հաղորդել (և շարունակում են հաղորդել) մեր ինքնությանն ու արժեհամակարգին, այսինքն՝ այն հասկացություններին, որոնք, ժամանակակից պատկերացումների համաձայն, ազգային անվտանգության համակարգի հենքն են հանդիսանում: Այսպիսով՝ հայագիտությունը, ըստ էության, ազգ ձևավորող և պետականաստեղծ բնագավառ է:

Մինչդեռ պետք է ընդունել, որ հայագիտության նման մեկնաբանումը միշտ չէ, որ աղեկվատ է ընկալվում մեր հանրության կողմից, և այդ ոլորտի կիրառական նշանակություն ունեցող դրույթներն ու արդյունքները հազվադեպ են օգտագործվում գործնական 512 քաղաքական խնդիրներում¹: Ի թիվս այլ հանգամանքների, դա պայմանավորված է նրանով, որ հայագիտությունը մեր գիտակրթական համակարգի մասն է կազմում, իսկ այդ համակարգն այսօր գտնվում է ոչ բարվոք վիճակում: Ակնհայտ է, որ նման իրավիճակն անխուսափելիորեն անդրադառնում է նաև ազգային քաղաքական մտքի զարգացման վրա: Այս պատճառահետևանքային օրինաչափությամբ պետք է բացատրել այն փաստը, որ առ այսօր սակավ են միջոցիսցիպլինար հետազոտությունները, որոնցում համադրվում և համատեղվում են հայագիտության (և ընդհանրապես գիտության այլ ճյուղերի) ու քաղաքականության ոլորտները: Մինչդեռ դա թույլ կտար ոչ միայն բացահայտել այդ ոլորտների միջև առկա ընդհանրությունները, այլև մշակել դրանց փոխլրացման մեխանիզմները և կիրառական ձևաչափերը:

Նման հարցադրումը, հաշվի առնելով հայկական հանրությանը նետված մարտահրավերները (մեր երկու պետություններում կիսապատերազմական իրադրություն է, մերձավոր արևելյան համայնքները հայտնի աշխարհաքաղաքական զարգացումների արդյունքում կազմալուծման եզրին են կանգնած, խնդիրներ կան ընդհանուր առմամբ Սփյուռքում, քանի որ զուտ Յեղասպանության միջազգային ընդունման վրա խարսխված ինքնության պահպանման մարտավարությունն արդի պայմաններում արդյունավետ չի գործում և չի երաշխավորում ազգային զարգացումը), ավելի քան հրատապ է: Ելնելով վերոնշյալ իրողություններից՝ ներկայացնենք որոշ դիտարկումներ նշված խնդիրների վերաբերյալ՝ նախապես համառոտ ներկայացնելով ազգային անվտանգության վերաբերյալ արդի, էական ընդլայնված պատկերացումներից մի քանիսը:

Անվտանգության բնագավառում այսօր առաջնային նշանակություն են ձեռք բերել հանրությունների հոգևորմտավոր ռեսուրսների ապահովության, արդյունավետ կազմակերպման և զարգացման խնդիրները: Այդ համատեքստում փոխվել են նաև պատերազմի վերաբերյալ ավանդական մոտեցումները և սահմանումները. քաղաքականությունն ու ռազմավարությունը ներկայումս հիմնականում իրագործվում են, այսպես կոչված, «փափուկ ուժի» և դրա մաս կազմող «տեղեկատվական պատերազմների» միջոցով: Այս առիթով նկատենք, որ հոգևոր-մշակութային խնդիրները ներգրավված են ազգային անվտանգության քաղաքականա հանդիսացող տեղեկատվական անվտանգության ոլորտում, որը մեզանում երբեմն փոքր-ինչ պարզունակ է մեկնաբանվում և երբեմն ներկայացվում է զուտ որպես հայկական ու թուրք-ադրբեջանական լրատվամիջոցներում և սոցիալական ցանցերում ընթացող բանավեճեր որոշ քաղաքական-պատմական հարցերի շուրջ կամ էլ փոխադարձ հաբերային հարձակումներ: Անշուշտ, նման գործողությունները, որոնք հանդիսանում են տեղեկատվական պատերազմների տարրեր, նույնպես անհրաժեշտ են, սակայն դրանք սահմանափակ մարտավարական նշանակություն և հետևանքներ ունեն:

Մինչդեռ հայտնի է, որ տեղեկատվական պատերազմների տեսությունը և կիրառվող մեթոդները վերջին շրջանում որակական էվոլյուցիա են ապրել: Հատուկ ուշադրության են արժանի այսպես կոչված «երկրորդ սերնդի» ցանցային տեղեկատվական պատերազմները, որոնց գլխավոր նպատակը.

- հակառակորդի հասարակության սոցիալ-քաղաքական հիմքերի և արժեհամակարգի կազմալուծումն է,

- մանիպուլյացիոն տեխնոլոգիաների միջոցով սեփական մշակութային կողմի ներմուծումն է հակառակորդի (իսկ երբեմն նաև՝ դաշնակցի) հանրության գիտակցության մեջ:

Հայաստանը և հայությունը հայտնի պատճառներով ներքաշված են նման տիպի պատերազմներում և այդ առումով գտնվում են ռիսկային գոտում: Ստեղծված պայմաններում մեր մտավոր-

¹ Հարությունյան Գ., Հայագիտության ազգային ռազմավարության որոշ դրույթներ, «Գլոբուս», #1(9), էջ 3, 2007:

քաղաքական ընտրանին պարտավոր է մշակել առկա մարտահրավերներին ադեկվատ ռազմավարություն, որում պետք է հաշվի առնվեն, մասնավորապես, հետևյալ հանգամանքները:

Անվտանգության դոկտրիններում, որպես կանոն, առանցքային է համարվում այսպես կոչված «կրիտիկական ենթակառուցվածքների» պաշտպանությունը, որոնց տակ հասկացվում են այն կարևորագույն ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական ու տեղեկատվական նշանակություն ունեցող կառույցները, որոնց խոցումը հանգեցնում է անվտանգության ողջ համակարգի փլուզմանը: Ըստ մեզ, «կրիտիկական ենթակառուցվածքների» կարգավիճակ պետք է տրվի նաև հոգևոր-մտավոր զարգացումն ապահովող համակարգերին և կառույցներին, որոնց խաթարումը կարող է հանգեցնել հանրության բարոյալքմանը: Նման մոտեցումն ինչ-որ չափով այսօր տարածում է գտնում, և համեմատաբար վերջերս հրապարակված Իսրայելի ռազմական դոկտրինում անվտանգության կրիտիկական ենթակառուցվածքի կազմում առաջնային տեղեր են հատկացվել, օրինակ, ազգային խորհրդանիշներ համարվող կառույցներին, մասնավորապես՝ Հոլոքոստի թանգարան Յադ Վաշեմին, հոգևոր տաճարներին և այլն²: Կարծում ենք, որ նման մոտեցումն անհրաժեշտ է կիրառել նաև Հայաստանի պարագայում, սակայն չսահմանափակվելով միայն նյութական կառույցներով: Այս տեսանկյունից փորձենք համառոտ դիտարկել մի քանի հիմնախնդիրներ, որոնք մասնավորապես կապված են մեր արժեհամակարգի³ և նորագույն պատմության վերաբերյալ հանրային մեկնաբանումների հետ:

Հայտնի է, որ հանրության արժեքային համակարգը ստատիկ կատեգորիա չէ. այն փոփոխվում է՝ կախված պատմառազմաքաղաքական, ինչպես նաև հասարակության էվոլյուցիոն կամ հեղափոխական զարգացումներից: Այսօր արժեհամակարգի վրա էապես ներգործում են տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներով լայնորեն սփռվող և՛ նպատակաուղղված, և՛ այսպես կոչված քառտիկ տեղեկատվական հոսքերը, որոնք նկատելի չափով ձևավորում են գլոբալ հանրության մտածելակերպը, հոգեկերտվածքը և այդպիսով նաև՝ արժեքային համակարգը:

Վերոնշյալ իրողությունները, բնականաբար, բնորոշ են նաև հայկական հանրությանը: Ակնհայտ է, որ ուրույն քաղաքակրթական հատկանիշներով օժտված հայկական արժեհամակարգն այն հիմնասյուներից է, որոնց շնորհիվ պահպանվել է մեր ազգային-պատմական շարունակականությունը: Միևնույն ժամանակ, այդ ոլորտի խնդիրներն ուսումնասիրելիս հարկ է, մասնավորապես, հաշվի առնել մեր վերջին մեկդարյա պատմության որոշ առանձնահատկությունները:

Յեղասպանությունը և Արևմտյան Հայաստանի կորուստը խորապես ազդել են ողջ հայկական հանրության և հատկապես Սփյուռքի հոգեբանության և աշխարհընկալման վրա: Հայության այս հատվածին բնորոշ է նաև մեկ այլ օրինաչափություն. արտերկրի համայնքները գտնվում են ոչ միայն գուտ ներազգային կամ գլոբալ, այլև իրենց բնակության երկրին հատուկ ազգային-քաղաքակրթական ներազդեցությունների տիրույթում: Իր առանձնահատկություններն ունի նաև հայաստանաբնակ հանրությունը: Վերջին երկու հարյուրամյակում տեղի ունեցած աշխարհաքաղաքական և հեղափոխական գործընթացների հետևանքով հայության այս հատվածը մի քանի անգամ փոխել է իր կեցության հասարակական-գաղափարախոսական միջավայրը. բավական է հիշատակել պարսկական տիրապետությունը, Ռուսական կայսրությունը, Առաջին, Երկրորդ և վերջապես Երրորդ հանրապետությունները: Արդյունքում՝ հանրության արժեհամակարգում կատարվեցին զգալի, երբեմն՝ հակասական, բովանդակային փոխակերպումներ:

Մասնավորապես, նախորդ դարի 20-30-ական թվականների բոլշևիկյան «տեռորից» հետո, ժամանակի ընթացքում Երկրորդ հանրապետության հանրությանը պարտադրված կոմունիստական հիմնադրույթները նկատելիորեն փոխակերպվեցին և հնարավորինս համատեղվեցին ազգային արժեհամակարգին հատուկ պատկերացումների հետ: Սակայն ներկայումս դրանց մի զգալի մասը հակասության մեջ է գտնվում ազատական գաղափարախոսության դրույթների հետ, որոնց՝ ՀՀ-ում ահաբեկչությանը (այս անգամ՝ սոցիալ-տնտեսական բնույթի) ներմուծվելու փուլը կարելի է բնութագրել որպես «վուլգար ազատականության ժամանակաշրջան» և որն այս կամ այն չափով շարունակվում է մինչ օրս: Այդ վերջին ժամանակահատվածը խիստ բացասական հետևանքներ ունեցավ 1965 թվականին Յեղասպանության հետ կապված և դրան հաջորդած Գևորգյան շարժումների ընթացքում ձևավորված ազգային-գաղափարախոսական ընկալումների վրա: Վերոնշյալ գործընթացների համախումբը Հայաստանում զգալի անորոշություններ է մտցրել արժեքների վերաբերյալ հանրային պատկերացումներում:

Նկատենք, որ հանրության արժեհամակարգի ուսումնասիրությունը համարվում է հրատապ խնդիր և, օրինակ, միջազգային *World Values Survey (WVS)*⁴ կազմակերպությունը լայնածավալ հետազոտություններ է իրականացնում ողջ աշխարհում: Ստացված արդյունքները կիրառվում են և՛ տնտեսա-

² Гриняев С., О взгляде на проблему безопасности критической инфраструктуры в государстве Израиль, <http://www.csef.ru/index.php/ru/component/csef/project/-/-/?id=3229>.

³ Այս խնդիրը վերջին ժամանակահատվածում առանձնապես շատ է շահարկվում ՀՀ ինտեգրացիոն կողմնորոշումների համատեքստում:

⁴ Տե՛ս worldvaluessurvey.org:

կան, և՛ քաղաքական ռազմավարական որոշումներ ընդունելիս. մասնավորապես այսպես կոչված «գունավոր հեղափոխություններ» իրագործելու տեխնոլոգիաները խարսխված են տվյալ հանրության սոցիալ-հոգեբանական հատկանիշների իմացության վրա: Այդ կազմակերպության Հայաստանում իրագործած ուսումնասիրությունների համաձայն՝ ՀՀ բնակչությունը գտնվում է Հարավային Ասիայի և հեղափոխության երկրների մշակութային տիրույթում, որտեղ գերակայում են ավանդական և գոյապահպանական տիպի արժեքները:

Ներկայումս Հայաստանում արժեհամակարգի ոլորտում հետազոտություններ են կատարում ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնում (ղեկավար՝ Նարինե Խաչատրյան): Տեղեկատվական միջավայրի ազդեցություններն արժեհամակարգի վրա ուսումնասիրվում են նաև «Նորավանք» հիմնադրամում⁵: Սակայն ակնհայտ է, որ կատարվող աշխատանքներն այս բնագավառում բավարար չեն և, առավել ևս, հեռու են կիրառական նշանակություն ձեռք բերելուց: Այսինքն՝ կարելի է ամրագրել, որ Հայաստանում և առավել ևս՝ Սփյուռքում իշխող արժեհամակարգի վերաբերյալ պատկերացումներն ընդհանրական-զգացողական բնույթ են կրում և հեռու են գիտականորեն հիմնավորված լինելուց: Առավել ևս դժվար է, կամ, թերևս, անհնարին պատասխանել այն հարցին, թե արժեքային ինչ ուղղվածությամբ է շարժվում հայկական հանրությունը, և ինչ վերափոխումներ կարող են սպասվել ապագայում: Այս իրավիճակը քաղաքական-տեղեկատվական հարթությունում հաճախ տեղիք է տալիս հակասական մեկնաբանությունների, ինչն ամենևին չի նպաստում արդյունավետ ազգային անվտանգության համակարգի կայացմանը և համապատասխան քաղաքական ռազմավարության իրագործմանը⁶:

Պետք է հատուկ շեշտել, որ հայագիտության և քաղաքականության առնչությունների սերտացումն ու դրանց կիրառական հարթություն փոխադրելն անհնար է պատկերացնել առանց համապատասխան տեղեկատվական քաղաքականության, և սա վերաբերում է ոչ միայն արժեհամակարգի հետ կապված խնդիրներին:

Մասնավորապես, եթե ազգային անվտանգության տեսանկյունից դիտարկենք, թե ինչպես է լուսաբանվում հայրենական տեղեկատվական տարածքում մեր պատմության խորհրդային շրջանը, ապա կհամոզվենք, որ այստեղ առկա են լուրջ հիմնախնդիրներ, որոնք անմիջականորեն կապված են տեղեկատվական անվտանգության գլխավոր օրենքներից մեկի՝ պատմության և ազգային հիշողության անխազելիության պահպանման հետ: Հայտնի է, որ այն հանրությունները, որոնք կորցնում են պատմական հենքը, առավել շատ են ենթակա տեղեկատվահոգեբանական ազդեցություններին, ու այս առիթով տեղին է հիշել չինական այն ասացվածքը, թե «պատմության մոռացությունը դավաճանություն է»:

Տեղեկատվական տարածքում Երկրորդ հանրապետության վերաբերյալ հնչող մոտեցումները հիմնականում կրում են «ողբերգական» կամ «հեզանական» երանգ և հիշեցնում են բոլշևիկյան ոճը, երբ պախարակվում էր այն ամենը, ինչ կապված էր Առաջին հանրապետության հետ: Թերևս, ճիշտ էր Կառլ Ծմիլդտը, երբ պնդում էր, թե «Մարքսիստական և լիբերալ գաղափարախոսական/տնտեսական դիվականացման (դեմոնիզմի) փիլիսոփայական պարադիգմերը նույնն են»:

Մինչդեռ Երկրորդ Հանրապետության գնահատականի հարցում նման մոտեցումն օբյեկտիվ պատմության խեղաթյուրում է, քանի որ բացասական և ողբերգական շրջաններից բացի, Խորհրդային Հայաստանում ստեղծվել է հզոր գիտատեխնոլոգիական-արդյունաբերական համակարգ, իսկ ժողովրդագրական աճի պայմաններում ձևավորվել է բարձր կրթական և բարոյական ցենզ ունեցող ստեղծագործ հանրություն. բավական է հիշել, որ նախորդ դարի 80-ականներին Հայաստանում աշխատում էր ավելի քան 30 հազար գիտաշխատող, ներկայումս այդ թիվը մոտ 6 հազար է, իսկ 1984թ. տնտեսությունում ներդրվել է շուրջ 200 հայտնագործություն⁷:

Պետք է, թերևս, հստակ գիտակցել, որ ցանկացած երկրի պատմություն ոչ միայն նրա քաղաքական վարչակարգի, այլև, առաջին հերթին, այդ երկրի հասարակության և ժողովրդի պատմությունն է: Այդ համատեքստում մենք պարտավոր ենք արձանագրել, որ հայաստանյան հանրությունն ավելի քան արժանապատիվ կերպով է տարել իրեն բաժին հասած քաղաքական-ռազմական և հեղափոխական փորձությունները: Հանրահայտ մտավորական և քաղաքագետ Բորիս Կազարյիցյին, որն, ի դեպ, անցել է մորդովյան ճամբարների բռնություն, բավական դիպուկ է նկատել, որ խորհրդային պատմության թերագնահատումը առաջին հերթին դավաճանություն է խորհրդային համակարգի գոհերի հանդեպ:

Մենք խնդիր չենք դնում իդեալականացնելու մեր ոչ վաղ անցյալը, ինչպես և չի կարելի իդեալականացնել կամ դիվականացնել ցանկացած պատմական դարաշրջան: Միևնույն ժամանակ, պետք է ամրագրել, որ Առաջին հանրապետությունը Երկրորդ հանրապետության, իսկ վերջինս էլ Երրորդ հանրապետության հենքն է, և այս հանգամանքը պետք է համապատասխան կերպով մեկնաբանվի ու լուսաբանվի: Այլ մոտեցումները միայն խաթարում են ազգային անվտանգության համակարգը և ավելորդ պատանեկացնում ու հեղինակազրկում են մեր պետական-քաղաքական ինստիտուտները. բավա-

⁵ Տե՛ս, օրինակ, *Իդեոլոգիաները ՀՀ տեղեկատվական տարածքում*, Երևան, «Նորավանք» Գ.ԿՀ, 2013թ.:

⁶ **Հարությունյան Գ.**, *Բնտեգրացիայի որոշ հիմնախնդիրների մասին արժեքային համակարգի համատեքստում*, «Գլոբուս», #4(37), էջ 20, 2013:

⁷ **Арутюнян Г.**, *Распад системы и формирование будущего*, Ереван, НОФ «Нораванк», 2011.

կան է ուշադրություն դարձնել, օրինակ, ժամանակին հայտնված «Հայկական բանակը 20 տարեկան է» պատահաներին այն պարագայում, երբ մեր բանակը հազարավոր տարիների պատմություն ունի:

Ներկայացված և նմանատիպ բազմաթիվ այլ խնդիրների կապակցությամբ, թերևս, անհրաժեշտ է ստեղծել քաղաքական-պետական և ակադեմիական-փորձագիտական համատեղ համաձայնագրված, որոնք կքննարկեն և օպտիմալ լուծումներ կտան այս բնույթի հարցերին:

Gagik Harutyunyan (Armenia)

ARMENIAN STUDIES AS A “CRITICAL INFRASTRUCTURE” OF NATIONAL SECURITY

Armenian Studies (Armenology) is an academic discipline but knowledge gained in this area rarely gets transferred to practice so as to serve national interests. The reason for this is the cause-and-effect pattern in our scientific and educational system, where numerous unsolved problems exist, affecting in turn the development of the political thought. In this regard it is worth mentioning the well-known fact that Armenia and Armenianness are involved in information wars, where the main objective is “to disintegrate the adversary’s system of values and to impose one’s own cultural code on that society’s consciousness.” It is clear that forming and maintaining a national system of values depends on ideas and orientations of the public *vis-à-vis* the Armenian studies (including history). Hence, well-developed Armenian Studies are a cornerstone of national security, which necessitates classification of this discipline as one of the “critical infrastructures”, the protection of which is a priority objective.

Վալերի Սիրգոյան (Հայաստան)

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՄԱՆ ԸՄՔՈՆՈՒՄԸ ՀԱՅ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՄՏՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Հայ հասարակական-քաղաքական միտքը մշտապես անդրադարձել է իշխանության էության և գործադրման եղանակների, առաջնորդի վարքագծի խնդիրներին: Անցյալի տեսական ըմբռնումները մասամբ արտացոլված են հայ փիլիսոփայական, իրավաբանական, տնտեսագիտական մտքի պատմությանը վերաբերող հիմնարար աշխատություններում: Այդուհանդերձ, առավել ամբողջական ձևով դրանք հնարավոր է վերլուծել և արդիականության դիրքերից գնահատել հատկապես կառավարաբանության իմացական առանձնահատկությունների լույսով: Նպատակադրումը հրատապ է նաև կառավարման հայկական համակարգի («հայկական մենեջմենթի») կայացման համար. ինչպես ցույց է տալիս ամերիկյան կառավարաբանությունից տարբերվող համակարգերի («ճապոնական մենեջմենթ», «չինական մենեջմենթ», «սկանդինավյան մենեջմենթ» և այլն) ձևավորման պատմությունը, անդրադարձը սեփական անցյալին պարտադիր պայման է համամարդկային գիտելիքը ազգամշակութային առանձնահատկություններին ներդաշնակ գործադրելու և զարգացնելու համար:

Հակիրճ՝ տեսական լուծումները հետևյալն են.

1. Հանրային իշխանության և պետական կառավարման ծագման ու գործառության, առաջնորդի դիրքի և հանրային դերի վերաբերյալ մեկնաբանությունները հիմնականում հարում են աստվածաբանական (Գրիգոր Տաթևացի, Ներսես Շնորհալի, Խրիմյան Հայրիկ), հանրային դաշինքի (Գրիգոր Չոփրապ), մասամբ նաև՝ նահապետական (Խրիմյան Հայրիկ) տեսություններին:

2. Իշխանության և առաջնորդման աստվածաբանական և օրգանական մոտեցումների համատեղմամբ հիմնավորվել է «Ներդաշնակ կառավարման» հայեցակարգը՝ որպես ներազգային համերաշխության սկզբունք (Գր. Տաթևացի, Խրիմյան Հայրիկ):

3. Հանրային կյանքի կարգավորման մեջ կարևորվել է պետական և եկեղեցական իշխանությունների միջև համագործակցությունը (հակասությունները դիտարկվել են, որպես կանոն, առաջինը երկրորդին ենթարկելու բացահայտ կամ գերակա նպատակադրմամբ):

4. Իշխանության և առաջնորդման տարբերակումը, իշխանավորի վարքականոնի ուրվագծումը՝ ըստ Եզնիկ Կողբացու, «բարեկարգող կառավարչի» ըմբռնումը, մանկավարժ-առաջնորդի վարվելակերպի կանոնների ձևակերպումը՝ ըստ Ղ. Աղայանի:

5. Կառավարման համակարգային ճգնաժամի բացատրությունը՝ որպես «ճիշտ մարդը՝ ճիշտ տեղում» սկզբունքի խախտման (Մովսես Խորենացի), իշխանավորի անպատասխանատու վարքագծի, անպատժելության հետևանք (Լեոնահայաստանի կործանման պատճառների մասին Գարեգին Նժդեհի դիտարկումները)՝ պետական կառավարման համակարգի ճգնաժամի հանգամանալից վերլու-

ծության դասական օրինակ): Հայոց դյուրին կառավարելիության հիմնավորումը՝ օրինական իշխանության պարագայում (Մատթևոս Մամուրյան):

6. Առաջնորդման էության մեկնաբանումը՝ որպես հետևորդների հանրության սպասարկման գործառնություն («թագավորել հավատարիմ ծառայի պես»։ Կողբացին՝ «սպասարկող առաջնորդման» ժամանակակից տեսության նախահայր):

7. «Իշխանական բռնության» բնութագրումը (Ղազար Փարպեցի)՝ որպես կառավարման սուբյեկտի հոռի վարվելակերպ, կառավարման օբյեկտի առանձնահատկությունների անտեսման հետևանք:

8. Հանրային կյանքի իրավական կարգավորման եղանակները պետք համապատասխան լինեն հայոց մտածելակերպի առանձնահատկություններին: Հարկավոր է խուսափել օտար մեթոդների անքննադատ, «կապկական» ընդօրինակման վտանգից, «եվրոպական մոլորանքից» (Ղևոնդ Ալիշան, Մկրտիչ Պեշկեպաշյան, Եղիա Տեմիրճիպաշյան, Դանիել Վարուժան, Հայկ Ասատրյան, Մատթևոս Մամուրյան):

9. Հայ ընտանեվարության սկզբունքների ձևակերպումը, «ընտանիքի սոցիոլոգիայի» սկզբնավորումը (Խրիմյան Հայրիկ):

10. Իշխանության օրինականության հիմքում՝ պետության և քաղաքացիների փոխադարձ վստահությունը: Հանրային կառավարման մեջ օրինականության նորմատիվային կարգավորման շեշտադրումը, Սահմանադրության համահանրային գործառնությունների պարզաբանումը («Կանոնագիրք հայոց», Դավիթ Ալավկատրոյի, Ներսես Լամբրոնացի, Մխիթար Գոշ, Սմբատ Սպարապետ, «Որոգայթ Փառաց», Մատթևոս Մամուրյան), հայերի օրինապաշտության, «սահմանադրական ազգ» լինելու հիմնավորումը (Գրիգոր Չոփրապետ):

11. Հանրային կյանքում «ինքնօգնության», «ինքնաշխատ առաջադիմության», «համայնականության ոգու», «տնտեսական հեղափոխության», «ինքնավարության ոգու» կարևորությունը, կառավարման պետական և հանրային, իրավական և բարոյական լծակների համադրման անհրաժեշտությունը (Ղազարոս Աղայան, Միքայել Նալբանդյան, Գրիգոր Չոփրապետ, Սիմոն Զավարյան):

12. «Պետություն–ժողովուրդ» փոխհարաբերության դիտարկումը կողմերի փոխադարձ իրավունքների և պարտականությունների հարաբերակցության լույսով, «իշխանափոխության» արդարացումը (Խրիմյան Հայրիկ):

Փոքր-ինչ հանգամանորեն անդրադառնանք մի քանի հեղինակի:

Եզնիկ Կողբացին իշխանավորին նմանեցնում է հզոր սյան, որը խորտակվելիս՝ խորտակվում է ամբողջ կառույցը. «Ով սիւն եղեալ է եւ զբոլոր շինուածն յինքն հաստատեալ, եթէ խորտակի՝ զամենեսեան ի վայր կործանէ»¹: Վճռորոշ է իշխանավորի անձնական օրինակը: Թագավորը կամ ընտանիքի հայրը կարող է ճշմարտություններ բարբառել, սակայն ոչ միայն օգուտ չտալ, այլև՝ վնասել: Պատճառն այն է, որ շրջապատի մարդկանց ավելի համոզում է առաջնորդի օրինակը, քան քարոզը կամ պահանջը. «Մեծ հերձուած եւ անբժշկելի չարիք է այնպիսի առաջնորդութիւնն, զի մարդիկ յօրինակն առաւել հային, քան ի ճշմարտութիւն»: Ընդհակառակը, պարկեշտ, գիտուն, առաքինի առաջնորդը մի իսկական «աստվածային հուր» է, շուրջն ազնվություն է սփռում, միաբանում հետևորդներին: Շիտակ իշխանավորը ոչ թե իշխում է մարդկանց վրա, այլ կառավարում, հավատարմորեն ինքն է նրանց ծառայում. «ինքն ըստ հաւատարիմ ծառային թագաւորէ»². այս լուծումը կանխել է հետագա շատ փիլիսոփաների և բարոյագետների հայացքները տվյալ խնդրի շուրջ: Իշխանությունը ոչ թե սոսկ իրավունք է, կամաժին վարվելակերպ, այլև կառավարելու պարտականություն: Հոգնած կամ վատառողջ՝ հարկ է խուսափել վճիռ կայացնելուց (անողորմելի սխալ չլինի). «Եթէ հիւանդ ես կամ աշխատեալ, մի՛ իշխանութեամբ վարիր»: Հանդիմանելու–չհանդիմանելու երկընտրանքը լուծվում է ենթակայի անձնական մեղավորության չափով. միգուցե զանցանքն ակամա՞ է, ոչ թե դիտավորության հետևանք. «Սի՛ բարկանար աշակերտի մեղուցելոյ, զի հիւանդն ոչ թէ յիւր կամաց հիւանդանայ»³: Պատասխանատվությունն էլ անկապտելի է անհատի ընտրության հնարավորությունից. եթե մարդն իր կամքով չի կատարել, ապա չպետք է պատժվի. «Եվ որ ոք ոչ կամօք ինչ գործէ, ընդ այնոր չպարտի կրել»⁴: Դրան է վերաբերում կառավարման ժամանակակից ըմբռնումներին համահունչ մյուս խրատը՝ մեղավորին մեկուսի հանդիմանալու մասին. «Աստուածասիրութիւն է առանձին յանդիմանել»⁵:

Գրիգոր Տաթևացու հայեցակարգային լուծումն է՝ աստվածատուր իշխանություն և հնազանդություն՝ հանուն ներդաշնակության: Աստծո կամքով է սահմանված կողմերի կապը և կառավարման եղանակը. «մեծատունս և զաղքատ ի ձեռն միմեանց կառաւարէ աստուած. զի աղքատն մեծատամբն ապրի. և մեծատունն աղքատովն շինի»⁶: Իշխանություն տրված է, որ ոչ թե թագավորներն «անձնիշ-

¹ Ե. Կողբացի, *Խրատք* // Եղծ աղանդոց, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1994, էջ 258:

² Անդ:

³ Անդ, էջ 254, 248:

⁴ Ե. Կողբացի, *Եղծ աղանդոց*, էջ 42:

⁵ Ե. Կողբացի, *Խրատք*, էջ 248:

⁶ Գր. Տաթևացի, *Գիրք քարոզութեան*, Ամատան հատոր, Կ.Պոլիս, 1740, էջ 370:

խան կամօք գործեն զչար»։ Աստվածահաճո վարքով բնութագրվողներին Աստված իշխանությամբ է օժտում, որ ինչպես պատժեն մեղավորներին, այնպես էլ բարերարություն անեն արժանավորներին («կա՛մ վասն վրեժխնդրության մեղուցելոց, կա՛մ վասն բարերարության արժանատրաց»⁷։ Կառավարման մեջ աստվածադիր օրենսդրությունը պիտի պահպանեն թե՛ իշխողները, և թե՛ իշխյալները։ Ամբողջ երկրում, առանձին իշխանի տիրություն, ընտանիքում պիտի իշխի օրենքը. օրինավոր կյանքի միակ եղանակն է դա. «Օրենքն է գլուխ օրինատրաց»⁸։ Որքան արդարացի է այն, որ տերերն իշխում են, ծառաները՝ հնազանդվում (և պարտավոր են կամովին հնազանդվելու), նույնքան արդարացի պիտի լինի տերերի վարվեցողությունը։ Իշխանն իրավունք չունի զրկել ծառաներին վաստակից. «ոչ է պարտ զվարձս մշակացն և ծառայիցն հատանել և զրկելն գնոցաս»⁹։ Խելացի, շրջահայաց տերերը մշտապես պետք է հենվեն իմաստության վրա և սիրեն ճշմարտությունը. այդ վարվելակերպն էլ բնութագրում է նրանց որպես կառավարչի. «Ձի իմաստասերն ու ճշմարտասերն հանապազ իմաստութեամբ և ճշմարտութեամբ կառավարին»։ Իշխանավորները պետք է հենվեն ոչ թե սոսկ սեփական իմացության վրա, այլև խորհրդակցեն գիտակների հետ, գտնեն «խորհրդակից և օգնական մտացն իրոց»¹⁰։

Գազարու Աղայանը առաջնորդ-հետևորդներ փոխհարաբերությունների բանաձև է առաջարկել. «Մեր մեջ շատ կան թոկից փախած շառլատաններ, որոնք ժողովրդի վրա մեծություն են ծախում, դառնում են նրա առաջնորդը դեպի խավարն արտաքին։ Մեծ պետք է համարել այն անհատներին, որոնք աշխատում են ժողովրդին ազատել այդ խավարի արբանյակներից և առաջնորդել նրան դեպի լույս և ճշմարտություն, դեպի բարին և կատարյալն»։ Ժողովրդավարության հաստատման, կառավարման դեկին «բարեկարգող կառավարիչ» ունենալու մասին է Աղայանի նուրբ դիտարկումը առաջնորդ-հետևորդներ փոխադարձության մասին. «Մեծ բռնակալները մեծանում են ժողովրդի զարգացման ստոր մակերևույթի վրա և նրա հաշվով։ Երբ որ բարձրանում է ժողովուրդը, էլ այդ տեսակ մեծեր չեն լինում, այլ լինում է «մեծ ժողովուրդ»¹¹։ Ուշագրավ են «Պարտավորություն վարժապետացը», սեղմ դատողությունները ուսուցանող-ուսանող կապի վերաբերյալ։ Օրինակ՝ «Վարժապետաց հարաբերությունը աշակերտների հետ պիտի լինի եղբայրական սիրով, այդ սերը զգալի պիտի լինի աշակերտներին»¹², «Աշակերտի անկարգությունը, անուշադրությունը, բթամտությունը և այլ շատ թերությունների հարյուրից 99-ը վարժապետի տվածն է»¹³։

Ըստ **Գրիգոր Չոհրապի**՝ հանրային կառավարման հաջողությունը համադրումն է երկու գործոնի՝ պետական մարմինները պետք է ունակ լինեն կառավարելու, բայց և կառավարվողները պետք է տրամադրված լինեն կառավարվելու. «Կառավարչություն մեկ կողմն չլլար. որպեսզի յաջողի՝ կառավարելու յատկություններ կ'ուզե պետութենէն եւ կառավարուելու տրամադրութիւններ՝ ժողովուրդէն»¹⁴։ Իսկ այդ վիճակի, այսօրվա լեզվով՝ իշխանության օրինականության ապահովման համար, ըստ Չոհրապի, կողմերի միջև փոխադարձ վստահություն է հարկավոր։ Եթե պետությունը կորցնում է վստահությունը, եթե, ի դեմս պաշտոնյաների վարքագծի, ինքը չի կատարում հանրային կյանքի ներդաշնակության երաշխավորի պարտականությունը, ապա դրանով իսկ պետությունն ինքն է անբարոյականացնում հասարակությանը, քաղաքացիներին դրդում ապօրինի գործողությունների։ Բուն կառավարման մեջ, որպես նպատակամետ գործողությունների ամբողջություն, կարևոր է պլանավորման գործառնությունը. «Կառավարելը կը նշանակե պետքերը նախապես գուշակել։ Երբ կրակը ծաւալած է, անօգուտ է զայն մարելու ջանալ»¹⁵։ Գործողությունների հստակ կանխատեսումը պարտադիր է, եթե կառավարելիս ձգտում ենք ոչ թե սոսկ արձանագրել կատարված իրողությունը, այլ մասնակցել դրա կայացմանը։ Չոհրապի դրույթը շատ նրբագեղ է. «Կառավարչությունները երկու տեսակ են. մեկը քաղաքական անցուղարձերը ինք կը պատրաստե, երկրորդը ուրիշներէն պատրաստուած անցուղարձերուն ենթակայ կ'ըլլան»¹⁶։

Ըստ **Խրիմյանի**՝ «իշխանություն-ժողովուրդ» գույզի մեկ կողմը մյուսին պահանջ կարող է ներկայացնել, եթե սեփական պարտականություններն անթերի է կատարում։ Ահավասիկ մի ձևակերպում, որ կարող է համարվել հանրային կառավարման իդեալական տիպար. «Երբ պետական աթոռի վերայ նստող թագաւոր արդարութեամբ կը գործէ, իշխանն՝ իրաւունքով կ'իշխէ, դատաւորն օրէնքով կը

⁷ Գր. Տաթևացի, *Սողոմոնի առակների մեկնությունը*, Երևան, «Անկյունաքար», 2000, էջ 102–103։

⁸ Գր. Տաթևացի, *Գիրք բարոգութեան*, Չմեռան հատոր, Կ.Պոլիս, 1740, էջ 192։

⁹ Անդ, էջ 194։

¹⁰ Անդ, էջ 194, 192։

¹¹ Գ. Աղայան, *Մեծ մարդկանց մասին* // Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 3, Երևան, Հայպետհրատ, 1963, էջ 48։

¹² Գ. Աղայան, *Դաստիարակության մեջ կարելի՞ է պատիժը որպես կրթողական հնարներից միմը ընդունել, թե՞ ոչ* // Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 4, Երևան, Հայպետհրատ, 1963, էջ 77։

¹³ Գ. Աղայան, *Իմ կյանքի գլխավոր դեպքերը* // Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 4, Երևան, Հայպետհրատ, 1963, էջ 457։

¹⁴ Գր. Չոհրապի, *Օրագրություններ* // Երկերի ժողովածու չորս հատորով, հ. Դ., Երևան, Գրականության և արուեստի թանգարանի հրատ., 2004, էջ 352։

¹⁵ Գր. Չոհրապի, *Երկերի ժողովածու չորս հատորով, յաւելեալ հատ., գիրք Ե.*, Երևան, 2004, էջ 405։

¹⁶ Գր. Չոհրապի, *Երկերի ժողովածու չորս հատորով, յաւելեալ հատ., գիրք Զ.*, Երևան, 2004, էջ 62։

դատի, ժողովուրդն՝ օրինաց կը հնազանդի»¹⁷: Սրանից ածանցյալ է այլ ըմբռնում. եթե մի կողմը չի կատարում պարտականությունները, դրանով ոտնահարում է մյուսի իրավունքները: Այս լույսով են քննության առնվում «զեղծումները»՝ պարտականությունները պատշաճ չկատարելը: «Երկրին իշխանությունը կը զեղծանի, եթե այդ պարտիքներ չկատարելով ընդհակառակն վարի, եթե թողու օրինաց արդարություն եւ միայն բռնի եւ սրով իշխէ»¹⁸: Ժողովուրդն է զեղծում, երբ «ժողովուրդի խղճի գիտակցութեան խայթ խապառ կը բթանայ», «կ'ստահակի ժողովուրդը, երկրին եւ ազգին օրէնքները հնազանդութեամբ չի յարգեր, կը հետտէ եւ անիշխան վարիլ կ'ուզէ»: Չեղծումները կարող են հանգեցնել համակարգային խաթարման. «երբ ազգի եւ երկրի կառավարութեան անձնիւր կարգեր գերիվայր լինելով կը շփոթին», «տէրն իբրեւ ծառայ եւ ծառան իբրեւ տէր», «երբ անարգն իբրեւ պատուական կը յարգուի եւ պատուականն կ'անարգուի, երբ տգէտք ու խաբեբայք կը տիրեն, ժողովուրդի հաւատարիմներ կը մերժուին»: Ընդ որում, թեպետ մեղքը մեկինն է, վնասը երկկողմանի է. «Ձի երկրի վարիչներ կը գործեն մեղք, երկիր եւ ժողովուրդ կը տուժէ եւ կը կործանէ...», առաջնորդներ կը խոտորին եւ ժողովուրդ մոլորելով կը հետևի»¹⁹: Առավել ևս պարտավորեցնող է իշխանության դերը այդ վարիչների առաջխաղացման մեջ. իշխանությունը խաթարում է իրերի բնականոն վիճակը, երբ պայմաններ է ստեղծում, որ անարժաններն ու տգետները կառավարեն արժանավորներին և գիտուններին: «Իշխանութիւն կեղծանի իւր վարչութեան մեջ, երբ անընտրող կը լինի, արժանատիքն եւ անարժանին յարգ մի կշռով կը չափէ. մերթ եւս պատիւ եւ բարձ կ'ընծայէ նմա, որ երկրին շինութեան հիման մի քար չէ դրեր. կը թողու լաւն ու կարող, եւ ժողովուրդին կառավար կը դնէ այնպիսիներ, որոց միտքը թափուեր է կառավարութեան ուսմունքէն եւ օրէնքէն, որք առաւել կարօտ են կառավարուելու քան թէ կառավարելու»: Ո՞րն է ելքը այս պարագայում՝ իշխանափոխություն. «երբ իշխանութիւն մի իւր իրաւունք ժողովուրդէն լիովին կ'ստանայ եւ առ ժողովուրդն ունեցած պարտիքներ կը մոռնայ, այլ եւս ժողովուրդ ինչ միջոցաւ կարող է այդ անվճար եւ մոռացեալ իրաւունքը ձեռք բերել»²⁰:

Այսպիսով, հայ հեղինակների ըմբռնումները, ընդհանուր առմամբ, համընկնում են կառավարաբանության համամարդկային զարգացման տրամաբանությանը, երբեմն՝ կանխում հետագայի որոշ գաղափարներ: Սեփական մշակութային անցյալն իմանալն անհրաժեշտ է ոչ միայն ինքնին, այլև հանրային կյանքի կառավարման արդիական խնդիրներն արդյունավետ լուծելու համար:

Valeri Mirzoyan (Armenia)

THE CONCEPT OF POWER AND LEADERSHIP WITHIN THE FRAMEWORK OF ARMENIAN MANAGEMENT THOUGHT

All in all, the concept of power and leadership in the history of Armenian management thought coincides with a general logic of public administration theories, and some ideas of historians and philosophers are ahead of their time. Among the latter the, most important are the interpretation of leadership as a form of servant; description of the so-called «power violence» as a result of subject's ineptitude to adequately take into consideration main peculiarities of a management object; demarcation of the essence and functions of power and leadership; well-grounded necessity of a harmonic use of government management with different forms of social self-regulation; elaboration of leader's behavioral code and so on.

Կառլեն Միրումյան (Հայաստան)

ԱԶԳԱՅԻՆ ՄԻՏՔԸ ԱՐԴԻ ՍԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Այժմ՝ ազգի պատմության անցումային շրջանում, գաղափարախոսական ուղենիշների ու չափանիշների սրընթաց փոփոխությունների պայմաններում, ազգային ինքնորոշման և ինքնահաստատման նախորդ շրջանից ժառանգած արժեքների մեջ կողմնորոշվելու անհրաժեշտություն է ծագում: Ավելին՝ աշխարհաքաղաքական տոտալ գործընթացների համընդհանուր համարվող արևմտյան արժեհամակարգի (իրականում՝ առանձին, երբեմն իրարամերձ սկզբունքների, նորմերի և այլն) տարածման ու գերիշխանության դարաշրջանում, ազգային՝ ազգային մշակույթը, ազգային արժեհամակարգը, այդ թվում՝ ազգային միտքը, բնականաբար, հետզհետե հետին պլան է մղվում: Դա հասկանում են բոլորը, հասկանում են նաև ազգային արժեքների վտանգավածությունը, սակայն գործնականում չափա-

¹⁷ Խրիմյան Հայրիկ, *Միտք և Մամուլ* // Երկեր, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1992, էջ 395:

¹⁸ Անդ, էջ 336:

¹⁹ Անդ, էջ 392–393, 394:

²⁰ Անդ, էջ 337, 336:

զանց քիչ բան է արվում դրանց պահպանման ու զարգացման ուղղությամբ: Մինչդեռ մեր նման ժողովուրդների համար բազմադարյան մշակույթի ու արժեհամակարգի համահարթեցումը և վերջինիս փոխարինումը այսպես կոչված համաշխարհային արժեհամակարգով գործնականում տանում է ազգային կործանման:

Այս ամենը, մեր կարծիքով, փիլիսոփայական լուրջ ու բազմակողմանի հետազոտության ու իմաստավորման կարիք ունի, առանց որի դժվար կլինի նշարել ազգային փրկության ու առաջընթացի ուղիները: Առանց չափազանցության կարելի պնդել, որ նշված խնդրի լուծումը հայ ազգային մտքի առաջնահերթ առաքելությունն է:

Բացի այդ՝ խորհրդային համակարգի կազմալուծումը առաջադրեց աշխարհայացքային կողմնորոշիչների ու սկզբունքների, կուտակված գիտելիքի ճանաչողական (կոգնիտիվ) անորոշություն և անկայունություն, մեթոդաբանական խոր ճգնաժամ: Առաջացած մեթոդաբանական վակուումը, իհարկե, հնարավորություն է ստեղծում մեթոդաբանական պլյուրալիզմի (բազմակարծության) և հետազոտական ազատության համար, ինչը, ցավոք, իրականում հանգեցրեց մեթոդաբանական «անարխիզմի» և էկլեկտիզմի, իսկ հետազոտական պրակտիկայում՝ խայտաբղետության, գիտականության նորմերի ու սկզբունքների անտեսման կամ մոռացության և ինչու ոչ՝ չիմացության: Դրա հետևանքով գիտական գիտելիքը գրկվել է իրեն ներհատուկ միասնականությունից, ամբողջականությունից, համակարգվածությունից, վերածվել է առանձին, իսկ երբեմն՝ անկախ հետազոտությունների շարքի:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար օբյեկտիվորեն գոյություն ունեն հետևյալ ուղիները. ա) նախկին մարքսիստական մեթոդաբանության ձևափոխում կամ «վերանորոգում», բ) բազմազան արևմտյան մեթոդաբանական համադրություններից մեկի ընտրություն, գ) առկա մեթոդաբանությունների հիման վրա նոր հայեցակարգի ստեղծում, դ) ազգային մտքի պատմության ուսումնասիրության սեփական մեթոդաբանական հիմքերի մշակում:

Վերջին երկու տասնամյակների հրապարակումները վկայում են, որ հայ գիտնականները նախապատվությունը տալիս են հիմնականում առաջին երկու ուղիներին: Սակայն մեթոդաբանական և կոնկրետ հետազոտական սկզբունքների ընտրության ազատությունը բնավ չի նշանակում գիտական «կամայականություն», ինչը հաճախ տիրում է մեզանում: Դա նույնպես ենթադրում է ընտրած մեթոդաբանական հայեցակարգի հիմնավորում, այսինքն՝ անհրաժեշտ է թե՛ տեսականորեն, թե՛ գործնականում ապահովել իմացության օբյեկտի և այդ օբյեկտը բացատրող հայեցակարգի համապատասխանությունը:

Վերոհիշյալ հետազոտական մոտեցումը թերի է սկզբունքորեն, որովհետև. ա) արևմտյան մեթոդաբանությունները, այդ թվում՝ մարքսիստականը, ստեղծվել են պատմամշակութային, մտածական, սոցիալ-քաղաքական այլ հիմքի վրա, ուստի կարող են կիրառվել համապատասխան երկրների ու ազգերի պատմական անցյալի ուսումնասիրության ժամանակ, բ) առկա մեթոդաբանությունների մեծ մասը հիմնականում խառնված է տեսական-տրամաբանական կառուցումների վրա, գ) այս կարգի մեթոդաբանությունների տարածումը ոչ եվրոպական ժողովուրդների պատմության վրա հղի է ազգային յուրահատկությունների համահարթեցման վտանգով և կոնկրետ գործընթացը «համաշխարհային» (հիմա՝ եվրոպական) պատմության վերացական ուրվագծին կամ մտակաղապարներին ենթարկելու միտումով: Այս հանգամանքները բնորոշ են թե՛ խորհրդային, թե՛ արևմտյան մեթոդաբանությանը, ինչը հանգեցրեց մեթոդաբանության և կոնկրետ հետազոտությունների միջև անջրպետի առաջացման: Ուստի ո՛չ մարքսիստական, ո՛չ որևէ այլ արևմտյան մեթոդաբանություն, չեն կարող համարժեք դերակատարություն ունենալ մեր ազգային պատմության և մտքի ուսումնասիրության համար:

Բանն այն է, որ սոցիոլոգիական մեթոդաբանությունները կառուցվում են **հասարակության և հասարակական կեցություն** հասկացությունների վրա, ուստի դրանք բավարար չեն, երբ խոսքն այնպիսի ազգերի պատմական անցյալի մասին է, որոնք դարեր շարունակ չունեին քաղաքական անկախություն և ազգային պետականություն: Դրա հետևանքով նրանց պատմական զարգացումը ստանում էր գերազանցապես ազգային-պատմական, ազգային-քաղաքական և ազգային-մշակութային բնույթ՝ հետին պլան մղելով հասարակական գործոնը: Ազգայինը և հասարակականը միասնական գործընթացի տարբեր, բայց փոխկապակցված կողմեր են: Խոսքը երկու սկիզբներից մեկի գերակայության մասին է, այն էլ պատմության առանձին հատվածում, ինչը պայմանավորված է պետականության, հետևաբար՝ նաև հասարակության առկայությամբ կամ բացակայությամբ:

Սույն հայեցակարգային տեսանկյունից կատարած հետազոտությունները հանգեցնում են այն եզրակացության, որ ազգային պատմության ուսումնասիրության մեթոդաբանության ելակետային պետք է դիտել **ազգ** կամ ավելի ճիշտ՝ **ազգային կեցություն** հասկացությունը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք մեր պատմության ողջ ընթացքում իրոք ելակետային նշանակություն են ունեցել հայ գործիչների և մտածողների (աշխարհիկ և հոգևոր) համար: Մեթոդաբանական առումով արդիական է հնչում նաև այն հանգամանքը, որ ազգային կեցություն հասկացությունը ազգի գաղափարախոսներն ու տեսաբանները միաժամանակ ընկալում էին որպես նպատակադրույթ: Տվյալ հասկացության երկակի ըմբռնումը կապակցվում է ազգային ինքնագիտակցություն հասկացության միջո-

ցով: Դա հիմք դարձավ ազգային գաղափարախոսության և քաղաքականության, մշակույթի, կրթական համակարգի և դաստիարակության ազգային ծրագրերի մշակման համար:

Ազգային միտքը ազգին մատչելի բոլոր գիտելիքների հիման վրա ազգային կեցության տեսական-տրամաբանական վերլուծությունն ու իմաստավորումն է: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն տվյալ ազգի, այլև մյուս քաղաքակիրթ ժողովուրդների գիտական նվաճումների ստեղծագործաբար յուրացմանը ազգային խնդրակարգի ու արժեհամակարգի պահանջների համատեքստում և գործնական կիրառմանը ազգային խնդիրների լուծման նպատակով: Ազգային մտքի առանձնահատկությունն այն է, որ ազգային կեցության կողմերն ու մակարդակները և դրանք արտացոլող ազգային գիտակցության մակարդակներն ու ձևերն իմաստավորում է իրեն հատուկ մեթոդների ու սկզբունքների և հասկացական-կատեգորիալ համակարգի միջոցով: Ընդ որում՝ համադրող, ընդհանրացնող, այսինքն՝ մեթոդաբանական գործոնի դեր է կատարում փիլիսոփայությունը, որի շնորհիվ ազգային միտքը ներկայացվում է որպես մի ամբողջական երևույթ՝ անկախ տարբերակվածության (դիֆերենցիացիայի) աստիճանից:

Ի տարբերություն ազգային գաղափարախոսության, ազգային միտքն առնչվում է ազգային կեցության հետ միջնորդավորված ձևերով, ինչը պայմանավորված է իմացական միջոցների վերացական-հասկացական բնույթով: Մյուս կողմից, ինչպես և ազգային գաղափարախոսությունը, այն ազգային ինքնագիտակցության դրսևորման բարձր ձև է և գոյության միջոց: Երկուսն էլ ազգային գիտակցության տարբերակման արդյունք են, ինչը տեղի է ունենում զարգացման հասունացած փուլերում: Երկուսն էլ գործ ունեն ճանաչողության միևնույն օբյեկտի հետ, իսկ տարբերությունը մոտեցման և կիրառվող իմացական մեթոդների մեջ է: Կարելի է պնդել, որ ազգային գաղափարախոսությունը վերաբերում է հիմնականում ներկային և ապագային, իսկ ազգային միտքը՝ անցյալին և ներկային:

Հետևաբար, ազգային մտքի և գաղափարախոսության ուսումնասիրությունը ազգային գիտակցության և ինքնագիտակցության բացահայտման անհրաժեշտ նախապայման է: Իր հերթին, ազգային մտքի պատմության ուսումնասիրությունը ազգային գաղափարախոսության ուսումնասիրության կարևոր ուղիներից է:

Վերոշարադրյալից հետևում է, որ յուրաքանչյուր ժողովրդի պատմական անցյալը, այդ թվում՝ մշակութային, գիտափիլիսոփայական և այլն, կարող է սեփական տեսական-մեթոդաբանական հիմքի իմաստավորման ու մշակման: Ընդ որում, **մեթոդաբանական սկզբունքները և հայեցակարգերը պետք է բխեցվեն իրական պատմամշակութային և հատկապես փիլիսոփայապատմական գործընթացի կոնկրետ վերլուծությունից, տեսական վերլուծության այս կամ այն մակարդակի վրա արտացոլեն այդ գործընթացների էությունն ու տրամաբանությունը:** Միայն այս դեպքում մեթոդաբանությունը կարող է լիարժեք կատարել իր հետազոտական գործառնությունը՝ չվերածվելով մի անորոշ, վերացական, իմաստագրված հասկացության, ինչը լայնորեն նկատելի է այսօր:

Ակնհայտ է, որ դա ամենևին չի բացառում, այլ ընդհակառակն՝ անհրաժեշտաբար ենթադրում է հաշվի առնել գոյություն ունեցող մեթոդաբանական հիմնական հայեցակարգերը և հետազոտական սկզբունքները, որոնք, սակայն, չպետք է դիտվեն որպես մեկընդմիջ տրված ինվարիանտներ, այլ մշտապես ստուգվեն, ճշգրտվեն կոնկրետ պատմական հետազոտությունների ընթացքում: Այլ կերպ ասած՝ դրանք կոչված են տեսական-մեթոդաբանական, հայեցակարգային կողմնորոշիչների, այլ ոչ թե բուն տեսությունների դեր կատարելու: Դա չի բացառում նաև որոշ տեսական գաղափարների ուղղակի կամ միջնորդված օգտագործումը:

Առաջադրված խնդրի տեսանկյունից անհրաժեշտ է ընդգծել այն միտքը, որ ազգային կեցության, որպես ելակետային մեթոդաբանական հասկացություն, առանձնացումը կարևորվում է ինչպես բուն պատմական իմացությամբ, ավելի ճիշտ՝ պատմական գործընթացի իմացությամբ, այնպես էլ **մեթոդաբանական մտածողության պատմությամբ:** Ընդգծված հասկացությունը գրեթե հաշվի չի առնվել հետազոտողների կողմից: Մեթոդաբանական և առաջին հերթին ազգային մտածողության պատմությունը ուշադրության չի արժանացել: Նման վերաբերմունքի պատճառներից մեկն այն է, որ գիտական հասարակության հոգեբանության մեջ արմատավորվել է այն համոզմունքը, թե իբր մեթոդաբանությունը՝ որպես տեսական մտադրության ու գիտելիքի յուրահատուկ ձև, XX դարի ծնունդ է:

Մինչդեռ մեթոդաբանական մտածողության շարժման կամ պատմության ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում, մի կողմից՝ քննել մեթոդաբանական գիտակցության ձևավորումն ու զարգացումը և հասուն մեթոդաբանությունների ստեղծումը, իսկ մյուս կողմից՝ մեթոդաբանական մտքի ուսումնասիրությունը կարող է դառնալ այն կապակցող օղակը, որը կմերձեցնի մեթոդաբանական որոնումները և կոնկրետ պատմական հետազոտությունները:

Նշված խնդրի առանձնացումը կնպաստի նաև բացահայտել փիլիսոփայական հայեցակարգերի ու ուսմունքների հարաբերակցումը հոգևոր մշակույթի մյուս ձևերի հետ, այն էլ դարաշրջանի տեսական ռեֆլեքսիայի (անդրադարձի) մակարդակի վրա: Դրանով իսկ այն էապես կխթանի պատմական գործընթացի համարժեք ընկալումն ու իմաստավորումը: Հետևաբար՝ մեթոդաբանության պատմությունն իբրև կապակցող օղակ կոչված է կատարելու երկակի դեր. 1) պատմական գործընթացի

օբյեկտիվ լուսաբանում և 2) պատմական անցյալի ուսումնասիրության ժամանակակից մեթոդաբանական հայեցակարգի մշակում: Բացի այդ, այն կարող է ամուր հիմք ծառայել արդի պատմական, քաղաքական, քաղաքակրթական, մշակութային և այլն գործընթացների ուսումնասիրության մեթոդաբանական հայեցակարգերի ստեղծման համար:

Ազգային կեցությունը նյութական և հոգևոր գոյացումների ամբողջությունն է, որոնք կազմում են ազգի գոյատևման և գործառնության հիմքը: Նյութական գոյացումների տակ հասկացվում են տնտեսական, հարկային հարաբերությունները, ռազմաքաղաքական իրավիճակը և այլն, իսկ հոգևորի՝ ազգի հոգևոր-մշակութային գործունեության նյութականացված ձևերը՝ ուսումնական կենտրոնները, ակադեմիաները, արվեստի ինստիտուտները, ազգի գոյապահպանության առումով կարևոր պատմական իրադարձությունների ընկալման և արտահայտման գիտակցական ձևերը, որոնք ժամանակի ընթացքում ձեռք են բերել գոյաբանական կարգավիճակ և նշանակություն:

Ազգային կեցություն հասկացությունը որոշակի առնչություններ ունի հասարակական կեցություն հասկացության հետ, թեև դրանք նույնական չեն, առաջինը միաժամանակ երկրորդի կոնկրետացումը կամ մասնավոր դրսևորումը չէ: Երկու հասկացություններն էլ ամանցյալ են կեցություն ընդհանուր փիլիսոփայական կատեգորիայից, իսկ տարբերությունը պայմանավորված է հասարակություն և ազգ հասկացությունների ծավալի և բովանդակության տարբերությամբ: Հարկ է նկատի ունենալ և այն հանգամանքը, որ այս, ինչպես նաև բազում այլ դեպքերում, միշտ չէ, որ հնարավոր է հստակ տարբերակիչ գիծ անցկացնել դրանց միջև:

Այսօր ևս ազգի առջև ծառացած են ավանդական դարձած ծանրագույն խնդիրներ՝ կապված ազգային ինքնության, ազգային արժեհամակարգի պահպանման, ի վերջո՝ ազգի գոյատևման հետ (առաջին հերթին՝ Հայաստանի Հանրապետության տարածքում): Ստեղծված ճգնաժամային իրավիճակը զանազան խորքային պատճառներ ունի, ինչի մասին գիտեն շատերը և խոսում են շատերը: Սակայն «իմացություն» ու ելույթները կրում են արձանագրային բնույթ, սահմանափակվում են փաստերի թվարկումով, ինչը միանգամայն բնական է, քանզի առ այսօր չկա հայեցակարգային վերլուծություն, առավել ևս՝ ազգային կեցության պահպանման առումով:

Բանն այն է, որ դա հենց ազգային հավաքական մտքի գլխավոր, ռազմավարական խնդիրն է: Յավոք ազգային միտքը, ինչպես մյուս բնագավառները, այսօր զբաղված է մասնավոր, թեև կարևոր խնդիրների լուծմամբ: Ուստի՝ որպեսզի ազգային միտքը կարողանա կատարել իր առաքելությունը, հավանաբար, անհրաժեշտ է այն կենտրոնացնել (չպետք վախենալ կամ զգուշանալ այդ բառից) մի գիտահետազոտական կառույցի մեջ, ինչը հիմք կստեղծի համակարգելու և ուղղորդելու առկա գիտական ներուժն ու հնարավորությունները: Հասկանում են, որ դա բավականին բարդ խնդիր է թե՛ գիտական, թե՛ կազմակերպական, թե՛ ֆինանսական առումով: Բայց չէ՞ որ լուծվելիք խնդիրը նույնպես բարդ է և կարող է ճակատագրական նշանակություն ունենալ ողջ ազգի ապագայի համար:

Նման գիտական կառույցի ստեղծումը, իմ կարծիքով, ամենահրատապ խնդիրներից է, որովհետև առնչվում է, որքան էլ տարօրինակ թվա, նաև ազգային անվտանգությանը: Բանի որ խնդիրը համազգային բնույթ ունի, ապա դրա հրատապությունը առաջին հերթին պետք գիտակցի քաղաքական իշխանությունը, այն պետք է դառնա քաղաքական մտածողության, գիտակցության փաստ: Հակառակ պարագայում մենք կշարունակենք ընդամենը խոսել և դժգոհել:

Բացի այդ, մենք տարբեր ամբիոններից խոսում ենք ազգային հոգևոր ժառանգության ուսումնասիրության ու պահպանման մասին: Դա, իհարկե, չափազանց կարևոր ու անհրաժեշտ խնդիր է: Այս ուղղությամբ վերջին տարիներին որոշակի աշխատանք է կատարվել, հատկապես Հայ Առաքելական եկեղեցու գիտահրատարակչական գործունեության շնորհիվ: Սակայն հայագիտական հետազոտությունների առումով վիճակը հուսադրական չէ: Ընդամենի՝ աշխատանքները իրականացվում են մեկուսի, անձնական հետաքրքրասիրություններից ու հնարավորություններից ելնելով, քանզի բացակայում է հայեցակարգային-ծրագրային հիմքը: Այլ կերպ ասած՝ եթե մեզ հաջողվի նույնիսկ բազմապատկել հայագիտական գրականության քանակը, ապա դա չի կարող տալ որակական արդյունք:

Այս տեսանկյունից արդիական նշանակություն ունի մեր նախնիների կուտակած ու հաջորդությամբ իրականացված փորձը: Հայ մշակույթի բազմադարյան ու հարուստ պատմության ընթացքում գիտնականները թե՛ թարգմանությունների, թե՛ ինքնուրույն ստեղծագործությունների, թե՛ կրթական ոլորտում առաջնորդվել են հստակ հայեցակարգով ու գիտականորեն մշակված ծրագրով: Ընդամենի՝ բոլոր ոլորտներում և պատմության բոլոր, այդ թվում՝ պետականության բացակայության փուլերում ազգային միտքը ստեղծագործաբար յուրացրել է հին հունական ու հելլենիստական, իսկ հետագայում արաբական, լատինական և այլն մտքի կարևորագույն նվաճումները, համադրել է (և ոչ թե պատճենահանել է, ինչպես այսօր) քաղաքակիրթ ազգերի արժեհամակարգերը ազգային մշակույթի հիմքի վրա: Ուստի՝ լուծելով մշակութային խնդիրներ, հայ մտածողները լուծում էին նաև ազգային ինքնության և ինքնիշխանության խնդիրը:

NATIONAL IDEA WITHIN THE CONTEXT OF MODERN CHALLENGES

During an epoch of total globalization processes the national system of values, including the national idea, is pushed to the background. With the gain of national independence in Armenia a deep methodological crisis is also observed. We act on the premise that any methodology should be deduced from the researches of specific historical process but should not be imposed on it. Therefore, the only way out of the existing situation is the development of our own methodology based on the concept of national being.

Ռիմա Միրումյան (Հայաստան)

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԽՈՐԵՆ ԱՇԸԳՅԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ - ՓԻԼՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄԵՋ

Մարդկային պատմության նոր հազարամյակը նշանավորվել է «բնական» մարդու և առաջադիմության մասին մտապատկերների վերջնական հաղթահարմամբ, ծնունդ տալով նախկին արժեհամակարգը մերժող հասարակությանը: Իմաստային անորոշությամբ «տառապող» այդ հասարակության մեջ անհնարին է նախորոշել նոր իրողության ուրվագիծը: Արդի հասարակության մեջ նկատելի միտումների գլխավոր պատճառներից մեկը (եթե չասել ամենագլխավորը) հասարակական կեցության աշխարհկացումն է (ապակրոնացումը), այն է՝ կեցության միասնականության մասնատումը: Հասարակական աշխարհի ապակրոնացման արդյունքում առաջացած «հավերժականը-ժամանակավորը», «ավանդույթ-իրավակարգ» երկճյուղավորումները հաստատում են անկախության նոր ձևաչափ: Հասարակական տիեզերքից բնական աշխարհի վրա բուն մարդկային աշխարհի կառուցող հոգևոր նախասկզբի վտարումը հարցականի տակ է դրել բուն մարդկային աշխարհի պահպանման հնարավորությունը: Հասարակության համընդհանուր ճգնաժամի պայմաններում մարդկային աշխարհի պահպանման հարցն ուղղակիորեն առնչվում է պատմության իմաստի ու նպատակի ըմբռնման հետ: Մինչդեռ արդի հասարակության «բարբարոսացման» (բարոյագրկման) շարժընթացը նպաստում է առաջադիմության հարաբերականության մասին գաղափարի արագ տարածմանը՝ մարդկությանը կանգնեցնելով պատմությունից «դուրս ընկնելու» վտանգի առջև: Խնդիրն այն է, որ պատմությունը անհրաժեշտորեն բովանդակում է իմաստային որոշակի ուրվագիծ, որի մեջ տեղավորվում են բոլոր իրադարձությունները: Ուստի այն «ընդունակ» է մշտապես իրականացնելու մարդկային աշխարհի վերարտադրումն ու մշակույթի «կուտակումը»: Արդիականությանը բնորոշ է մշակութային մշտատև անկայունություն, որի պատճառով փոխվել է «ճգնաժամ» հասկացության բուն իմաստը: Հասարակության հոգևոր հիմքերի քայքայումը հանգեցրել է հասարակության քայքայմանը, ինչն, իր հերթին, վտանգում է ազգային ինքնությունը: Արդի հասարակությունը ընդունակ է ծնունդ տալ «ոռոգված» ինքնություն ունեցող մարդկանց: Ազգային ինքնության հիմնախնդրի նկատմամբ այսօր դրսևորվող մեծ հետաքրքրությունը ավելի շատ է խոսում արդի հասարակության վիճակի մասին, քան այդ հիմնախնդրի իմաստավորման արդյունքները, քանզի առանց էթնիկ պատկանելության աշխարհում ոչ մի մարդ գոյություն չունի:

Նույնականացումը բնորոշվում է որպես մարդու հասարակայնացման գերագույն ձև, ազգային պատմության իմաստների և մշակույթի արժեքների հետ կապի հաստատման հիմնական միջոց: Մարդուն հատուկ է սեփական պատմության արժատների գիտակցմամբ և մշակութային դաշտի պահպանմամբ իր կեցության ամբողջականության ապահովման ձգտումը: Նույնականացումը, ըստ էության, համահարաբերական է ազգի պատմափիլիսոփայական գիտակցությանը: Ես ելնում եմ այն նախադրյալից, որ յուրաքանչյուր ազգի պատմափիլիսոփայությունը նույն ազգի ինքնագիտակցության, այն է՝ ինքնաճանաչման ձև է, ուղղորդված ազգի պատմության, մշակույթի և յուրաքանչյուր դարաշրջանում նրա առկա կեցության իմաստավորմանը, արժեքորմանը և հեռանկարի կանխորոշմանը¹: Քրիստոնեական մարդաբանության մեջ մարդը բնութագրվում է որպես եզակի էակ, որում գոյակցվում են երկու՝ բնական (մարմնավոր) և գերբնական (հոգևոր) նախասկզբներ: Մարդու այսպիսի ըմբռնման վրա հիմնված կրոնական պատմափիլիսոփայության համատեքստում պատմական հեռանկարը պայմանավորվում է հոգեբարոյական օրենքի համապատասխան իր անձը և հասարակա-

¹ Ռ. Միրումյան, Պատմափիլիսոփայական հայեցակարգերը XIX դարի հայ փիլիսոփայության մեջ, Մեթոդաբանական վերլուծություն, Երևան, 2003, էջ 83:

նության (մարդկային) աշխարհը կատարելագործելու մարդու ընդունակությամբ: Կրոնական պատմափիլիսոփայության շրջանակներում է առ այսօր գործում պատմության և պատմականության զգացման վերակենդանացմանը և հասարակության իռացիոնալ հիմքերի վերահաստատմանը, դրանով իսկ նաև մարդու հոգևոր ազատության ձեռքբերմանը և իր ազգի հոգեմտակերպով պայմանավորված՝ կոնկրետ պատմական իրականության հետ նույն մարդու կապի ճանաչմանը նպաստող պահպանողականության արդի վարկածը: Այսպիսով ազգի նույնականացման մոդելը ոչ թե ոչնչանում է, այլ միայն արդիականանում՝ ձեռք բերելով պատմական նոր բովանդակություն և ընդունելով պատմական նոր ձև: Այդ իսկ պատճառով արդիականության մարտահրավերների համարժեք պատասխանները նախ և առաջ որոնելի են ազգի պատմամշակութային ժառանգության մեջ, այն է՝ կրոնական պատմափիլիսոփայական մտքի պատմության մեջ:

Այս տեսանկյունից ուշագրավ է XIX դ. արևմտահայ կրոնական մտածող Խորեն Աշըգյանի ստեղծագործական ժառանգությունը՝ միտված հայ ազգի գոյաբանական հիմքերի սահմանմանն ու արժևորմանը: Մտածողի պատմափիլիսոփայական աշխարհայացքը համահարաբերական է XIX դ. հայ պատմափիլիսոփայությանը, որի առանցքն է դարաշրջանի մշակույթում գերիշխող առաջադիմության գաղափարը: Դրա էության ըմբռնմամբ նա փորձում է բացահայտել պատմության ներքին տրամաբանությունը՝ կապված մարդկային կեցության բարձրագույն իմաստների ու զարգացման նպատակների հետ: Առաջադիմությունը սահմանվում է իբրև մարդու (ազգի) զարգացման բնատուր, անհրաժեշտ ու բնական օրենք: Ըստ այդմ՝ մարդու առաջադիմելու (կատարելագործվելու) բնատուր կարողությունը մարդկության վերջնական նպատակին՝ երջանկության (նյութական, իմացական և բարոյական բարօրության) հասնելու գլխավոր միջոցն է: Եվ, չնայած այն բանին, որ մարդու բանականության զարգացումը (հետևաբար՝ նաև ազատության դաշտի ընդլայնումը) նրա բարօրության տարրն է կազմում, մտավոր առաջադիմությունը ինքնին չի ապահովում հասարակայնության առաջադիմությունը և չի երաշխավորում քաղաքակրթությունը. «Յառաջադիմութեան պայմաններն են ոչ թե գիտական գաղափարներն ու ծանօթութիւնները, այլ պարտույց և պատուոյ սկզբունքներն ու զգացումը, բարոյականի ճշդութիւնը, բարի կամքը, և մէկ խօսքով, առաքինութիւնը»²:

Իմաստավորելով դարաշրջանի աշխարհայացքային դիրքորոշումներին բնորոշ «առաջադիմության նպատակը ազատության ձեռքբերումն է» կարգախոսը, մտածողը, ի տարբերություն ժամանակաշրջանի հայ լուսավորիչների, ազատությունն ըմբռնում է որպես հոգեբարոյական նշանակություն ունեցող գաղափար: Ազատությունը մեկնաբանելիս Խ.Աշըգյանը ելնում է հետևյալ դրույթից՝ առանց ազատության չկա բարոյականություն: Սակայն, ազատությունը բարոյական է՝ ըստ էության. «Օրէնքները, սովորութիւնները, բռնաւորները և դահիճները՝ անգոր և տկար են այս ներքին ազատութեան դէմ՝ որ մեր մարդկութիւնը կը կացուցանէ»³: Մարդու համար էական՝ ազատության հենքի վրա է հաստատվում մարդու քաղաքական և քաղաքացիական իրավունքը. «Պետք է որ կամք ունենամք՝ մեր կամքը յարգել տալու իրաւունքը պահանջելու համար: Աշխարհի մէջ քաղաքացի ըլլալէ յառաջ՝ նախ գիտակցութեանս մէջ պիտի գգամ՝ թէ ես ինքնակաց անձնաւորութիւն մ'եմ»⁴: Հետևաբար, ազատությունը օրինավոր է, երբ գիտակցվում է դրա բնականությունն ու անհրաժեշտությունը: Դա նշանակում է, որ ազատության գաղափարն ազատության ծնունդ է, այսինքն՝ «որոշման յատկանիշ է»:

Այսպիսով, առաջադիմությունը ըմբռնվում է որպես շարժում մարդկային ոգու զարգացման ուղղությամբ, ինչին էլ, ըստ էության, «ձգտում» է պատմությունը: Ընդամին, այդ իդեալի կենսագործումը պայմանավորվում է ազգային ոգու զարգացմամբ, ինչի խթանիչը ազգային լուսավորությունն է: Կրոնական մտածողի պնդմամբ, ազգը կենդանություն է ստանում, գոյատևում և զարգանում է «նոյն ազգութիւնը իւր մէջ եզրափակող» անհատների միջոցով: Նման մոտեցումը բխեցվում է հետևյալ աշխարհայացքային սխեմայից: Պատմության նպատակը՝ մարդու ազատության ձեռքբերումը, հնարավոր է բարոյական (աստվածային) օրենքով նախասահմանված եռակի (առ սեփական անձը, առ ազգը և առ Աստված) պարտականության մարդու կատարման պայմանով: Ընդամին, այդ պարտականությունների կատարման անհրաժեշտությունը մարդկային (պատմական) կեցության համապարփակ սկզբունք է. «Մարդկութեան վրայ հաստատուած այս օրէնքներն (պարտականությունները. – Ռ. Մ.) Յաւիտենականին Աստուծոյ ինքնադրոշմ կ'իքներն ըլլալով՝ անշուշտ՝ անեղծ են յաւիտեանս. որոց հպատակող բազմադարեան ազգեր հեղեղի պէս անցեր՝ և դեռ ապագաներ ալ պիտի սահին ու անցնին. առանց օրինաց վրայ փոփոխութիւն մ'ըլլալու. և չէ թէ միայն ազգեր՝ այլ և երկինք և երկիր պիտի անցնին, ու տակաւին օրէնքներն՝ օրէնք պիտի մնան»⁵: Նշված պարտականությունները դիտարկվելով փոխկապակցվածության մեջ՝ դրանց իրականացումը համարվում է մարդու կատարելագործման, հետևապես՝ նաև մարդկության երջանկության և առաջադիմության կարևորագույն պայման: Ելնելով այն նախադրյալից, որ բնական իրավունքով մարդուն տրված ազատությունը «կանոնադրեալ ազա-

² Խ. Աշըխեանց, Յառաջադիմութիւն. – Յոյսե (Արմաշ), 1865, N10, էջ 580, տե՛ս նաև N9, էջ 194:

³ Նույն տեղում, տե՛ս նաև N9, էջ 194:

⁴ Նույն տեղում:

⁵ Խ. Աշըխեանց. Օրէնք – Յոյսե (Արմաշ), 1864, N4, էջ 74

տութիւնն է», այսինքն՝ մարդու մեջ ներդրված բարոյական օրենքով (արդարությամբ) սահմանափակված ազատությունը, Խ. Աշղբանցի հաստատում է. «Ընկերութիւնը հաստատուած է միայն ազատութիւնը բռնութեան դէմ պաշտպանելու համար, եւ այս այնչափ ճշմարիտ է, որ՝ ընկերութիւնը՝ միայն ընդհանուր ազատութեան արգելք չեղող անձնական ազատութեան զոհողութիւնը կրնայ պահանջել մեզմէ, ասկէջ անդին ինչ որ ընէ, բռնութիւն ըրաց կը համարուի»⁶:

Հասարակական կեցոյքայն պայմանը, այսպիսով, ոչ թէ անձի (անգամ ոչ անհատի), այլ հասարակութեան ազատութիւնն է: Ընդամին, վերջինիս իրականացումը պայմանավորված չէ քաղաքական (գրավոր) իրավունքի առկայութեամբ, որի առաքելութիւնը հասարակութեան անվտանգութեան ապահովումն է: Այն ենթադրում է հասարակութեան հոգևոր «բաղադրիչի» առկայութիւն, ինչը հնարավոր է «ազգային համակեցոյքայն» (որի առանձնահատկութիւնը, ինչպէս արդեն նշվել է, կրօնական մտածողի համար հոգևորն է) մեջ. «Եթէ ազգ մը ազատ ըլլայ, սակայն եթէ նոյն ազգին ընկերական կապն ուժգին պնդեալ չըլլայ հաւատքով, անձնութեամբ, ազգային և ընտանեկան ոգով, եթէ նոյն ազգին իւրաքանչիւր անհատին վրայ և իւրաքանչիւր ընտանեաց մէջ կրօնական և փիլիսոփայական անտարբերութիւն նշմարուի, անշուշտ ըլլանք որ նոյն ազգը կորստեան խորխորատին մօտեցած է: Այս չարեաց՝ որոնք տգիտութեան անհրաժեշտ արդիւնքն են, դարմանն միայն և միմիայն դաստիարակութեան մէջն է, պէտք է այս չարեաց առաջքն առնելու համար, մեր զաւակաց ճշմարիտ դաստիարակութիւն տալ»⁷: Այս դիրքորոշման մեջ ներդրում է նաև «Իրաւունք Աստուծոյ ի վերայ արարածոց իւրոյ և պարտք մարդոյ առ Արարիչ իւ» սկզբունքը: Բանն այն է, որ ազգի շրջանակներում հնարավոր մարդու վեհացումն Աստծո նկատմամբ նրա պարտքի կատարումն է. մարդու առաքելութիւնը Աստծուն պաշտելն է, այսինքն՝ «բարոյական օրինաց հնազանդիւն է: Աստուած գերագոյն Բարին է: Աստուած է որ աշխարհի մէջ գտնուած բարիքներն ըրած է: Բարոյն հակառակիւր Աստուծոյ հետ կռուի և իւր յայտնի կամաց անհնազանդել, և իրեն մեզի լաւ կերպով գործածելու համար տուած կարողութիւններն արհամարհել է»⁸: Բարոյական օրենքի նման մեկնաբանութիւնից բխեցվում է հայրենասիրութեան բնականութեան ըմբռնումը: Այս տեսակետից ընդունելի է պահպանողականի պաշտպանած տեսակետը, ըստ որի՝ ազգային քաղաքականութեան գլխավոր գերակայութիւնը ազգի բարոյական հիմքերի պահպանումն է, ինչը քաղաքական անկախութեան բացակայութեան պարագայում կրօնով է ապահովվում: Պատահական չէ, որ Ազգային սահմանադրութիւնը նա համարում է ազգի «կրօնական և բարոյական ինքնօրինութիւնը պահպանող կառույց, որի կիրառելիութեան սահմանը ոչ թէ օրենքների իրավաբանական ճշգրտութիւնն ու կարելութիւնն» է, այլ դրանք կենսագործելու ազգի ընդունակութիւնն ու պարտավորութեան գիտակցումը. «Ամէնէն բարի և հաստատուն սահմանադրութիւնն այն է՝ որ մեր ամենուս սրտին մէջ կտիրէ. նուրբ և քաղաքագիտական հանճարներ միմեզ հոն չմօտեցած օրենքները բոլորն ալ ոչինչ են: Կհետևի ուրեմն՝ թէ օրենսդրութեան խնդրոյն դժուար կողմը չէ թէ օրինաց կարելիութիւնը փնտրելն է, այլ ժողովրդեան սրտին բարոյական վիճակը...»⁹:

Տվյալ պարագայում պահպանողականը ընդգծում է սեփական ներկայի և ապագայի համար ժողովրդի պատասխանատւութեան խնդիրը: Նրա ըմբռնմամբ, Ազգային սահմանադրութիւնը ամեն մի հային իրավունք է տալիս իր «Հայ ըլլալը ճանչնալու», ինչպէս նաև նրան պարտավորեցնում է իր «Ազգը սիրելու, անոր ծառայելու և ըստ կարի օգնելու անոր նիւթական, բարոյական և մտաւորական զարգացմանը, վերջապէս ճշմարիտ հայ ըլլալու»: Ըստ էության, իրավունքը ծառայելու իրավունք է, որից էլ բխում է իր և իր ազգի ճակատագրի համար մարդու պատասխանատւութիւնը: «Իրավունք-ծառայութիւն-պատասխանատւութիւն» ուղիվագծվող շաղկապման մեջ առանցքայինը, ըստ ամենայնի, պէտք է համարվի ծառայելու սկզբունքը՝ իրավունքի նախապայմանը և պատասխանատւութեան հիմքը: Հենց նշված եռամիասնութեան տեսակետից էլ նպատակահարմար է արժևորել պահպանողականի՝ ազգի ներկայի իմաստավորումը և պատմական հեռանկարի կառուցումը: Վերը նշվածից հետևում է, որ ազգային կրօնի պահպանման անհրաժեշտութեան գիտակցումը պահպանողականի հայեցակետում շաղկապված է ազգի բարոյական կատարելագործման և հայութեան «տոհմային միասնութեան, ազգայնութեան» պահպանման կարևորութեան ըմբռնման հետ:

⁶ Խ. Աշղբանց, Իրաւունք անձին – Յոյսն (Արմաշ), 1874, N10, էջ 598

⁷ Խ. Աշղբանց, Իրաւունք այլոց – Յոյսն (Արմաշ), 1874, N12, էջ 720-721

⁸ Խ. Աշղբանց, Իրաւունք Աստուծոյ ի վերայ արարածոց իւրոյ եւ պարտք մարդոյ առ Արարիչ իւր – Յոյսն (Արմաշ), 1875, N1, էջ 17

⁹ Խ. Աշղբանց, Ինքնորոշ տարեդարձ Սահմանադրութեան – Յոյսն (Արմաշ), 1869, N33, էջ 204-210

THE ISSUE OF NATIONAL IDENTITY IN KHOREN ASHYGIAN'S POLITICAL AND PHILOSOPHICAL CONCEPTUAL FRAMEWORK

The article examines the creative heritage of the Armenian religious thinker of the XIX century, the prominent representative of Armenian conservatism, the ideologue of the nation and the Armenian Patriarch in Constantinople (1888-1894) Khoren Ashygian. The heritage aims at comprehension, identification and characterization of ontological (national-cultural, religious-ecclesiastical, political and legal) foundations of the Armenian nation.

The meaning of History - the achievement of individual freedom ~~of the~~ is possible only under the conditions of performance of their moral duties towards themselves, their own nation and God. Freedom presupposes the existence of spiritual component of the society, possible only in the national community, the specificity of which is determined by its spirituality. Awareness of the need to preserve the national religion is associated in the thinker's conceptual framework with the perception of the importance of moral perfection of the nation and the preservation of Armenians' "generic uniformity and national identity".

Լևոն Շիրինյան (Հայաստան)

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՆԵՂՈՒՑՆԵՐԸ (1914 թ. հունվարի 26-ի համաձայնագիրը)

Մեզանում, ինչպես հայտնի է, ավանդականորեն զարգացած են եղել պատմագրությունը, փիլիսոփայությունը, դասական բանասիրությունը, թերևս աշխարհագրությունը, որոշ չափով նաև մշակույթի տեսությունն ու պրակտիկան, բայց, ցավոք, ոչ այնքան՝ ռազմավարական մտածողությունը: Եվ ճիշտ է, որ հազարամյակների քաղաքակրթական զարգացման ընթացքում ինչ-ինչ պատճառներով փորձ չի արվել, ո՛չ որակի և ո՛չ տեսակի առումով, ստեղծել այնպիսի գործեր, ինչպիսին են, օրինակ, հնդիկ Կաուտիլյայի «Արտհաշաստրան» («Քաղաքականության արվեստ»), չին Սուն Ցզիի «Մարտական ռազմագիտություն» տրակտատը, անգլիացի Բեդլի Լիդլի Հարթի «Անուղղակի գործողությունների ռազմավարություն» աշխատությունը, սակայն 20-րդ դարի առաջին կեսին, այդուհանդերձ, կյանքի կոչվեցին ռազմավարական մտածողության այնպիսի կոթողներ, ինչպիսին էին, օրինակ, Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայաստան. միջմայրցամաքային ուղիներու վրա», Վահան Նավասարդյանի «Նեղուցները. Վոսփոր և Դարդանեղ: Թրքական ջրուղիները և Հայ դատը» աշխատանքները, որոնք կարծես թե կոչված էին հեղաշրջելու հայոց ռազմավարական մտածողության խորքային շերտերը: Եվ դա խիստ անհրաժեշտ էր և է: Զանգի՝ երկրի անվտանգ ու դիմամիկ զարգացման իմպերատիվը առաջադրում է մնալ խնդիր և հանուն այդ նույն երկրի անվտանգ ապագայի անհրաժեշտ է **ազատության** քաղաքական հավերժական իդեալի տեսանկյունից (տե՛ս Միքայել Նալբանդյանի «Ազատություն» ստեղծագործությունը) իմաստավորել Հայաստանի քաղաքական պատմության ելևէջները:

Այս հարցադրման շրջանակներում է, որ հույժ կարևորություն է ձեռք բերում Վահան Նավասարդյանի կողմից Հայկական հարցի քննությունը «թրքական ջրուղիների» ու նրանց շուրջ ժամանակի գիշանգոյների կողմից ներկայացված բեմականացումները, երբ Վահան Նավասարդյանը ռազմավարական մտածողության խորքային ծալքերի շերտ առ շերտ բացահայտման ճանապարհով արժևորում է Արևմտյան Հայաստանի «ռուսական բարեփոխումների» իմաստը՝ թերևս իր տեսակի մեջ մնալով եզակի (ունիկալ), ինչպես հայկական, այնպես էլ համաշխարհային հարուստ գրականության հորձանքի մեջ:

Նկատի ունենալով հիմնախնդրի հայաստանյան տեսանկյունը՝ որպես լրացում վերոշարադրյալի՝ ներկայացնում ենք հեղինակային մի հատված:

Եվ այսպես.

Ավստրիական գահաժառանգի՝ Ֆրանց-Ֆերդինանդի, սպանությունը բունիական փոքրիկ քաղաքի՝ Սարաևոյի մեջ 1914 հունիս 28-ին, սերբ բանակի սպաների գաղտնի կազմակերպության՝ «Սև ձեռք»-ի որոշումով լոկ **պատրվակ** էր Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումի մեջ, բայց ոչ **պատճառ**:

Պատճառները խորն էին և նրանք էին բուն աղբյուրը համաժավալ հրդեհի: Համայն աշխարհը մտած էր խորհրդավորապես լուռ հրաբխի բաց խառնարանների վրա, որտեղից հրահեղուկը ավերիչ թափով ամեն վայրկյան դուրս կարող էր ժայթքել:

Գործելու միշտ պատրաստ ահագոցիկ հրաբուխներից մեկը գտնվում էր ջարդերի և անիրավությանց դասական երկրի՝ Թուրքիո մեջ:

1913-ին Թուրքիա կարծես իր հոգեվարն էր ապրում: Երկու մրցող պետությանց դեսպանները Պոլսո մեջ՝ Մ. Գիբս և Բարոն Վանգրենհայմ՝ իրենց կառավարություններին ամենն մոռալ գույներով էին ներկայացնում երբեմնի հզոր ու մեծագոցիկ Օսմանյան կայսրության ներքին վիճակը: Սակայն, միաժամանակ, նույն կառավարությունները, թե՛ ռուս, և թե՛ գերմանական, ձգտում էին **բարեփոխությանց** միջոցով կասեցնել Թուրքիո քայքայումն ու բաժանումը: [...]

[Եվ], ինչպես հայտնի է, 1914 հունվար 26-ին ստորագրվեց ռուսական բարեփոխությանց համաձայնագիրը:

Այս առթիվ [...] Մանդելշտամը [...] նկատում էր.

«1914 հունվար 26-ի համաձայնագրի ամենամեծ նշանակությունը Ռուսաստանի համար կայանում է նրանում, որ այդտեղ Դուռը պաշտոնապես ընդունում է ռուսական հովանավորությունը տաճկահայերի վրա, այսինքն՝ Բերլինի դաշնագրի 61-րդ հոդվածից մենք նորից վերադառնում ենք Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածին»¹:

Ինչպես տեսնում եք, բարեփոխությանց հարցում քաղաքական նպատակ և այն էլ ոչ թե երկրորդական, այլ չափազանց կարևոր Ռուսաստանը հետապնդում էր:

Հին էր այս նպատակը. եթե մենք Կարլովցիի (Հունգարիա) 1699 հունվար 26-ի հաշտության դաշնագիրն ընդունենք որպես անջրպետ, որից այս կողմ սկսվում է եվրոպական մեծ պետությունների միջամտությունը Ռուսաստանի և Թուրքիո փոխհարաբերությունների խնդրին, միշտ Արևելյան հարցի կապակցությամբ, ապա կտեսնենք, որ միայն այն պարագան, թե ո՛վ է «հովանավոր»-ը քրիստոնյա ժողովուրդների, կարողացել է հզորապես գատել ու զոդել աշխարհի տերերին, մա հանդիսացել է այն առանցքը, որի շուրջ են դարձել այդ պետությանց արևելյան քաղաքականության բոլոր վերիվայրումները: Քուչուք-Բայնարջիում (1774)՝ **միայն** Ռուսաստանը, իսկ 1840-ի և 1841-ի Լոնդոնի համաձայնություններից հետո 1856-ի Փարիզի վեհաժողովում՝ գրեթե **ամբողջ** Եվրոպան. Սան Ստեֆանոյում՝ կրկին **միայն** Ռուսաստանը, իսկ Բերլինի վեհաժողովում՝ նորեն **ամբողջ** Եվրոպան. 1914 թվի հունվար 26-ի համաձայնագրով՝ վերստին **միայն** Ռուսաստանը... և միշտ նույնը նույն կախարդական շրջանակում²:

Ոչ, հունվար 26-ի համաձայնագրով ցարական Ռուսիան ոչ թե մեզ նկատի ուներ, այլ գերազանցաբար իր հետապնդած քաղաքական նպատակը. մենք պատրվակ էինք և ոչ պատճառ, մենք միջոց էինք և ոչ նպատակ:

Եվ այս պարագան գիտե՛ր թուրքը:

[...] Բայց հունվար 26-ի համաձայնագրի միակ նպատակը Ռուսիո «հովանավորության» տարածումը չէր թրքահայերի վրա:

Եթե 1913-ին Նեղուցների հարցի կարգադրությունը, ի նպաստ Ռուսիո, հնարավոր լիներ, 1914 հունվար 26-ի համաձայնագիրը ապահովաբար ծնունդ չէր առնի:

Ապացո՛ւյց մաս այն Հատուկ խորհրդամարմինը, որ ճիշտ այդ օրերին միատի հրավիրված էր Պետերբուրգում:

Համաձայնագրով, ինչպես ասացինք, Նեղուցների հարցը շոշափված չէր, մա մնում էր անլույծ, մինչ աշխարհ գալիք սպանդի մախերգանքն էր ապրում:

Եվ ահա 1914 փետր. 8-ին, այսինքն Համաձայնագրի ստորագրումից հազիվ երկու շաբաթ **վերջ**, Պետերբուրգում, Հատուկ խորհրդամարմնի մեջ, քննության է առնվում **Նեղուցների** հարցը³:

Քննության նյութը այն հիշատակագիրն էր, որ Սազոնովի 1913 դեկտ. 23-ի մեզ ծանոթ հիշատակագրից ուղիղ մեկ ամիս առաջ, 1913 նոյ. 23-ին, նույն Սազոնովը ներկայացրած էր կայսեր՝ Նիկոլայ Բ-ին: Նկատի առնելով պատմական կարևորությունը այս հիշատակագրի՝ մի քիչ ավելի կանգ առնենք նրա վրա:

¹ Ա.Մանդելշտամ, *Երիտասարդ թուրքերի պետությունը*, Էջմիածին, 1916(տե՛ս գրքի հայերեն թարգմանությանը կցվաց **մեք** «Հառաջաբան»-ը, էջ XVIII):

² Մեծերի այս թաքուն խաղերին թափանցելով՝ խորամիտ Պատրիարքը՝ Ներսես Վարժապետյան՝ գուր էր աշխատում, որպեսզի Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը Բերլինի վեհաժողովում *«բարեփոխվի այն կերպով, որ հոդվածը մնա իբրև Հայոց համար խմբագրյալ հոդված. Հայաստանը բարեկարգի Հայաստանի համար, և Հայկական խնդիրը չեզոքանա՝ լոկ Հայկական խնդիր ըլլա»* (տե՛ս **Լեո**, *Հայոց հարցի վավերագրերը*, Թիֆլիս, 1915, էջ 123):

Այդ օրից մինչև այսօր Մեծերն իրենց պայմաններով ամեն կերպ արգելք եղան մեր Հարցի «չեզոքացում»-ին. նրանք թույլ չտվին, որ Հայաստանը բարեկարգվի լոկ Հայաստանի համար...

³ Հատուկ խորհրդամարմինը կառավարական բարձրագույն օրգան էր, փոփոխվող կազմով, որ միատի էր հրավիրվում կայսեր հրահանգով և բացառիկ դեպքերում: 1914 փետր. 8-ի միատի մասնակցում էին՝ **Մ. Սազոնով** (արտ. գործոց մախարար), **Ծով. Գրիգորովիչ** (ծովային մախարար), **գոր. Ժիլինսկի** (ընդհ. սպայակույտի պետ), **Մ. Գիբս** (Պոլսո ռուսական դեսպանը) և շահագրգիռ վարչությանց ուրիշ երեք ներկայացուցիչները:

Թուրքիան ջախջախիչ պարտություններ կրած էր բալկանյան պատերազմներում. հաղթականները, բալկանյան փոքր ազգեր, եթե չպառակտվեին ներսից, և եթե Մեծերի պառակտիչ միջամտությունները չլինեին դրսից՝ Թուրքիան վաղուց քշված կլիներ Պոլսից և Նեղուցներից:

Թուրքիո այս ծանր պարտությունները, տեղեկագրում էր Նիկոլայ Բ-ին իր արտ. գործոց նախարարը, «եվրոպական բոլոր կառավարությանց մեջ այն համոզումը ստեղծած են, որ այլևս շատ կարելի չէ հուսալ վերածնունդը այդ պետության, և որ թրքական տիրակալության տևականությունը ենթակա է լուրջ կասկածի: Այս տրամադրությանց կապակցությամբ բոլոր մեծ պետություններն առանց բացառության այժմեից իսկ հաշվի են առնում կարելիությունը Օսմանյան կայսրության քայքայումի և մտահոգ են կանխապես ապահովելու իրենց իրավունքներն ու շահերը Փոքր Ասիո զանազան շրջաններում»:

Նախարարը գտնում է, որ իր հերթին Ռուսիա ևս չի կարող չխորհել ի՞ր շահերի և ի՞ր ապահովության մասին:

«Կարելի է տարբեր կարծիք ունենալ այն մասին, - նկատում էր Սազոնով, - թե Ռուսիա արդյոք պե՞տք է որ ձգտի տիրանալու Նեղուցներին», սակայն անկասկած է, որ **տիրող գոյակիճակի փոփոխման դեպքում**՝ նա չի կարող թույլ տալ մի այնպիսի լուծում, որ հաշտ չէ իր շահերին:

Հիմնական հարցը հետևյալն է. - *«Ռուսիո շահերի տեսակետից թույլատրելի՞ է, որ Թուրքիո փոխարեն մի այլ պետություն գա և տիրանա Նեղուցներին»:*

Նախարարը իր այս հարցումին պատասխանում է բացասաբար:

«Նեղուցների պահպանման բարդ և դժվարին հարցը իրականին մեջ ներկայիս, ռուսական անմիջական շահերի լույսի տակ, լուծված է բավական գոհացուցիչ կերպով: Թուրքիան այնքան թույլ չէ՝ որ ընդունակ չլինի սպառնալու մեզ, բայց և այնքան ուժեղ չէ՝ որ հարկադրված չլինի հաշվի առնելու իրենից ավելի հզոր Ռուսիան»:

Այս պայմաններում «թույլ տալ, որ Նեղուցները անցնեն որևէ օտար պետության լիակատար իշխանությանը տակ», նախարարը գտնում էր անհանդուրժելի Ռուսիո թե՛ տնտեսական և թե՛ ռազմաքաղաքական շահերի տեսակետից:

Մասնավորաբար այս վերջին կետին դառնալով՝ Սազոնովը նկատում էր. *«Արդարև, նա, ով տիրում է Նեղուցներին, նա միայն Սև և Միջերկրական ծովերի բանալիները չէ՛, որ առնում է իր ձեռքերի մեջ: Նա միաժամանակ տիրանում է հարձակողական շարժման բանալիներին դեպի Փոքր Ասիա և դառնում իշխանապետող ուժը Բալկաններում»:*

Դեմ արտահայտվելով Թուրքիո փոխարինումին որևէ այլ պետությամբ Նեղուցների մեջ (առանձնաբար հիշատակվում է Բուլգարիո անունը, իբրև հավանական տիրակալի), Սազոնով դեմ է խոսում նաև Նեղուցների չեզոքացումին. այդ ջրաճամբաների ապագինման և նրանց վերազինումի արգելքի մեջ նա բավարար երաշխիք չի տեսնում Սև ծովի ապահովության համար:

Իր հիշատակագրի վերջին մասի մեջ նախարարը անդրադառնում է թե՛ Ռուսիո ներկա կացության և թե՛ այն միջոցներին, որ 1883-ից այս կողմ, վերջին 30 տարիներին, մինչև 1913-ը, գործադրված են ի խնդիր ռուսական շահերի պաշտպանության:

Իր հետաքրքրական բնույթը նկատի առնելով՝ թարգմանաբար տանք այդ հատվածը իր ամբողջությամբ մեջ.

«Արդեն 30 տարիներ անցած են այն օրից, - եզրափակում է իր հիշատակագիրը Սազոնով, - երբ հանգուցյալ Կայսր Ադեքսանդր Գ-ի վեհապետական կամքով վերածնվեց սևծովյան մեր տորմոլը: Իսկ շուրջ 60 տարիներ անցած են այն ժամանակից, երբ մեր առևտրական մավազնացությունը սկսվեց Սև ծովում: Այս երկու ձեռնարկներով, որոնց աղբյուրը Ռուսիո հզորանքն էր, մենք նպատակ ունեինք մեր շահերը հաստատել Նեղուցներում: Հարյուրավոր միլիոններ ծախսված են ինչպես այս գործի, այնպես նաև Օդեսայի ռազմաշրջանի գործի վրա, որ նախասահմանված էր համատեղ ռազմագործողությանց մեր տորմոլի հետ միասին: **Ինչպես հայտնի է, տակավին 1895-ին, հայկական ջարդերի կապակցությամբ, խնդիր դրված էր Պոլսո առժամյա զրավման մասին մեր զորքերի կողմից, գիտությամբն ու հավանությամբը այդ շրջանի մեր հավանական մրցորդներից ամենեն վտանգավորի - Անգլիո: Այդ ծրագրից մենք հարկադրվեցինք հրաժարվել՝ փոխադրական միջոցների և ցամաքային զորակոչի թերությանց պատճառով** (ընդգծումները՝ մեզանից - Ն.):

«Անցյալ տարի (այսինքն՝ 1912-ին - Ն.), երբ խոսք դարձավ մեր զորքերի շարժման հավանականությանը մասին դեպի Պոլիս, պարզվեց, որ երկու ամսվա մեջ մենք կարող ենք աստիճանաբար փոխադրել միայն երկու զորամաս, ընդ որում փոխադրական մավերի հավաքումն ու զորքի տեղափոխությունը այնքան ժամանակ պիտի առնեին, որ մեր ռազմաձեռնարկը պիտի դադարեր անակնկալ լինելուց որևէ մեկի համար, այլ խոսքով՝ նա ուղղակի անիրագործելի պիտի դառնար, այլևս չխոսելով այն մասին, թե թվաքանակը ավիանման սահմանված մնան մի բանակի որքան համապատասխան պիտի լիներ այն առաջադրանքներին, որ այդ բանակը կոչված էր ի կատար ածելու: Սազոնովը եզրափակում էր. *«Թուրքիո քայքայումը չի կարող ցանկալի լինել մեզ համար, ուստի մեզ մնում է դիվանագի-*

տական ազդեցության սահմաններում ամեն կարելին անել նման մի վախճան հետաձգելու համար»⁴:

Այս հուշագիրն է ահա, որ ցար Նիկոլայ Բ-ի հրահանգով 1914 փետր. 8-ին դրված էր Հատուկ խորհրդամարմնի քննության: Ուրեմն, ճիշտ այն օրերին՝ 1913 նոյեմբեր, երբ վերջնապես ձևավորվում էր Հայկական բարենորոգության համաձայնագիրը Պոլսո մեջ, այդ նույն օրերին ռուս երկրի արտ. գործոց վարիչը իր կայսեր արտոնությունն էր խնդրում Հատուկ խորհրդամարմնի քննությանը դնելու համար Ռուսիան շահագրգռող բուն խնդիրը՝ **Նեղուցների** հարցը:

Հայկական բարենորոգության մասին իսպառ խոսք չկա, խոսքը բացառաբար թրքական ջրուղիների մասին է, որ կարելի է պահել՝ միայն Թուրքիա'ն փրկելով, ուստի և մախարարը արտահայտվում է ի նպաստ Թուրքիո՝ պահպանումին:

Հայկական բարենորոգության մասին խոսք չկա նաև Հատուկ խորհրդամարմնի 1914 փետր. 8-ի նիստին, ուր, ի ներկայության Պոլսո ռուսական դեսպանի, քննության էր առնվում Սազոնովի 1913 նոյ. 23 թվակիր մեզ արդեն ծանոթ հուշագիրը:

Աշխարհում տիրող խառնակ վիճակը նկատի առնելով, Խորհրդամարմինը անհրաժեշտ է գտնում զենքով գրավել Նեղուցները, բայց միայն այն դեպքում, երբ փորձ կկատարվի Պոլսում Թուրքիան փոխարինելու մեկ այլ պետությամբ:

Միաժամանակ, քանի տակավին համաշխարհային պատերազմը պայթած չէ, Խորհրդամարմինը որոշում է արագորեն կարգի բերել Ռուսիո զինական ուժերը, նոր ռազմական շինել, փոխադրական միջոցները բարելավել, զորաշարժի ժամկետները կրճատել և արագացնել, ցամաքահաման բանակը մեծացնել և այլն:

Նիկոլայ Բ 1914 մարտ 23-ին հաստատում է Խորհրդամարմնի այս որոշումները:

1914 օգոստ. 1-ին պայթում է, սակայն, համաշխարհային պատերազմը, և այս որոշումներն իրենց մեծ մասով մնում են լոկ թղթի վրա:

Գանք պատերազմին:

Էդուարդ Բենեշ, Չեխոսլովակիո հանրապետության նախագահը, իր մի աշխատության մեջ խոսելով Առաջին մեծ պատերազմի մասին, նկատում է. «Համաշխարհային պատերազմը ծագեց ամեն-մեն ավելի անպահելի քաղաքականությունից թուրքական կայսրության»⁵: Անառարկելի է Բենեշի սահմանումը գեթ այն չափով, ինչ չափով Ռուսիո մասնակցությունը այդ պատերազմը դարձրեց համաշխարհային: Իսկ Ռուսիան մտավ պատերազմի, որովհետև կար Պոլսո և Նեղուցների խնդիրը:

Միայն և բացառաբար:

Levon Shirinyan (Armenia)

ARMENIA AND THE STRAITS

The problem of "Armenian Reforms" is analyzed in the theories of the straits, especially within the context of Russian interests. The real reasons of the war are revealed in this article.

Աշոտ Ոսկանյան (Հայաստան)

ԳԱՅԹԱԿՐՈՒԹՅՈՒՆ ՇՊԵՆԳԼԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ («ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՖԵՆՈՄԵՆԸ ԶԱՐՅԱՆ–ՕՇԱԿԱՆ–ՉԱՐԵՆՑ ԵՌԱՆԿՅՈՒՆՈՒ ԼԱՐՄԱՆ ԴԱՇՏՈՒՄ) «Հայկականության խորհուրդն» ու «մոզական հոգին»

Կոստան Զարյանը Շպենգլերի մեթոդաբանության օգնությամբ փորձել է նկարագրել հայոց մշակույթի «հոգին» և նրանից սերվելիք *նոր մարդուն*.

«Ապողոնեան, Դիոնիսեան եւ Ֆաուստեան մարդու նոր համադրութիւնը պիտի անհրաժեշտօրեն իրականանայ այստեղ... Պիտի ծնի Արարատեան մարդը»:

Առաջինն, ինչ աչքի է զարնում այս ծրագրային հատվածում, դասական սկզբնաղբյուրի խեղված ներկայացումն է: Զարյանը չէր կարող չիմանալ, որ իր կազմած շարքում կամայականորեն միավորված են երկու տարասեռ դասակարգում՝ Նիցշեի «ապողոնյանն» ու «դիոնիսյանը», մի կողմից, Շպենգլերի «ապողոնյանը», «մոզականը» և «ֆաուստյանը»՝ մյուսից: Իրականացված սինթիզի ար-

⁴ «Կրասնի արխիվ», հ. VI, էջ 69-76:

⁵ Էդ. Բենեշ, *Սլավ քաղաքականության կնիքը* («Վ. Ռուսիի», 1926, Պրագա, գիրք Ժ, էջ 84):

¹ Կ. Զարյան, *Անցողիկ եւ իր ճամբան*, Եր., 2010, էջ 297:

դյունքում Ջարյանն ազատվել է շպենգելերյան եռյակի միջին օղակից՝ «մոզականից», այն փոխարինելով նրանում բացակայող «դիոնիսյանով»։ Ինչու՞ :

Խնդիրն, ըստ երևույթին, «մոզականի» և «արարատյանի» անհամատեղելիությունն է եղել։ Բանն այն է, որ Շպենգելի մոտ հայկական մշակույթը՝ վաղ քրիստոնեական, բյուզանդական և արաբական կուլտուրաների հետ մեկտեղ, տեղակայված է «մոզական հոգու» տիրույթում։ Եվ եթե Ջարյանի առաջարկած եռյակին առանց դժվարության հնարավոր էր ավելացնել չորրորդ տիպը՝ «արարատյանը», ապա նույն շարքում «մոզականի» առկայության պարագայում, պետք կլինեի ցույց տալ, թե ինչու հայկական մշակույթը նկարագրելի չէ վերջինիս շրջանակներում, այլ պահանջում է բոլորովին այլ՝ արտոնյալ մոտեցում։ Դա է, որ Ջարյանի համար դժվար պետք է լինեի անել՝ *հայկականության խորհրդին* հետամուտ նրա սպեկուլացիաները հազվագյուտ են հատել «մոզական» հարացույցի ձգողության սահմանները։

Հայկական մշակույթի նախաֆենոմենը Ջարյանը փորձել է բացորոշել ազգային լանդշաֆտի և ճարտարապետության կառուցիկ փոխառնչությունների նկարագրության միջոցով։ Կապը, որ Ջարյանն ի տես է դնում հայրենի բնապատկերի և ճարտարապետական կառույցների միջև, առարկայանում է որպես տաճարի գմբեթի և լեռան գագաթի նույնացում։

*«Ու մենք մեր քրիստոնեական տաճարները գետեղեցինք լեռների վրայ։ ...Մասիսի գագաթը գմբեթի վերածեցինք, դաշտերի ծաղիկներից միտռն եփեցինք...»*²։

«...այստեղ գմբեթը ինքը իրեն նպատակ է, ինչպես լեռան գագաթը։ Հայկական տաճարը այն տունը չէ, ուր ապրում է Աստուծո՛ւ եւ ուր ժողովում է համայնքը, այլ լեռան խորհրդանշանն է, սրտերի հետ ապրող Մասիսի գագաթը, անհունի հետ կանգնած աստուածների բարձրաբերձ հայրենիքը»։

*«...հայ եկեղեցին ինքը իր մեջ պարփակված իրականություն է»*³։

Մեջբերված տողերն առանձնահատուկ ուշադրություն են պահանջում։ Հայերեն «եկեղեցին» սերում է հունարեն ἐκκλησία բառից, որը հավատացյալների համայնք է նշանակում⁴։ Այն հիշեցնում է, որ իրական եկեղեցին չի նույնանում ոչ պաշտամունքային շենքի և ոչ էլ նրանում իրականացվող ծեսի հետ։ Դա, նախ և առաջ, *հավատի մեջ միավորված մարդկանց հավաքականությունն է*։ Այնինչ, Ջարյանի ձևակերպումը կարծել է տալիս, որ հայկական եկեղեցին ոչ միայն *մարդկային հանրությունից զատ և անկախ*, այլև *հոծ քարեղեն* իրականություն է։ Հարցը, որի պատասխանը Ջարյանը չի տվել, այն է, թե այդ մոդելում որտե՞ղ են, այնուամենայնիվ, տեղակայված մարդիկ։

Արարատյան մարդու թեման զարգացվել է 1926-27 թվերին։ Ավելի ուշ, 50-ականներին, Ջարյանը վերանայել է իր փախուստը «մոզական ոգուց» և անդրադաժել բուն շպենգելերյան եռյակին։ Այն համարելով անբավարար՝ նա ներմուծել է Արայական կամ Արմենական մարդու գաղափարը։ Վերջինս նորից տեղավորված է ապոդոնյանի և ֆաուստյանի արանքում⁵։ Բայց այստեղ արդեն Ջարյանը տեղին է համարում ուղիղ համեմատության մեջ դնել արմենական և մոզական մշակութային տիպերը։ Նա գտնում է, որ *«ոլոր գմբեթը հատուկ է մոզերի մշակութին, մզկիթին, բյուզանդական բազիլիկային, որովհետև նրանք արդյունքն են քարանձավային մարդկության տենչանքների»*⁶։

Դժվար է ասել, ինչ նկատի ունի Ջարյանը քարանձավային մարդկության տենչանքներ ասելով։ Համեմայն դեպս, գիտենք, որ Շպենգելի պատմամշակութային համակարգում մոզականին հատուկ է որոշակի նախասկզբնական դուալիզմ, որի շրջանակներում անհատական *հոգին*, թեև հաղորդված է տիեզերական *ոգուն*, բայց դրանց միջև փոխթափանցում չկա։ Քարանձավի տարածական պատկերը հենց դրա մարմնավորումն է՝ մոզական հոգու երազկոտության մեջ դրսևորվում է արևելյան հայեցողական միստիցիզմի բուն էությունը։

Այնինչ, Ջարյանի համար, հայկականության խորհրդի և մոզական հոգու նույնացումն անընդունելի է։ Նրա հայր *«գագաթի, լույսի»* մարդ է. *«Նա ժխտում է լեռան տակ փակված ոգիներին, ուր նա բանտարկել է իր բացասական ոգիները և»*⁷, և ձգտում է բարձրության, երկնայինին։ *Ուստի և նրա գմբեթը սրածայր է, ութանկյունի, ոչ թե դեպի վար դարձված, ինչպես մզկիթինը, այլ դեպի վեր»*⁸։

Մշակութային տիպերի տարբերակման հիմնական միջոցը Ջարյանի համար, փաստորեն, մնում է մարդկանց տեղը մշակութային լանդշաֆտում։ Անտիկ աշխարհի *ինքնաբավ մարմիններով* բնակեցված տարածքում ապոլոնյան «մարդ-իրը» գոյատևում է «տաճար-իրի» կողքին՝ որպես *իրն*

² Նույն տեղում, էջ 295։

³ Նույն տեղում, էջ 296։

⁴ Նույն իմաստն ունեն ֆրանսերեն église-ն, գերմաներեն Kirche-ն, անգլերեն՝ church-ը, congregation-ը, assembly-ն, ռուսերեն՝ собор-ը։

⁵ Կ. Ջադեան, *Դեպի Արարատ*, Եր., 2001, էջ 149։

⁶ Նույն տեղում, էջ 151։

⁷ Մնիսկանյանի է, արդյո՞ք Ջարյանը քարանձավում ծվարած *մոզական* մարդկանց նույնացրել է հայերիս «լեռան մեջ բանտված բացասական ոգիներ» հետ։ Մանավանդ, եթե նկատի ունենանք, որ բանտվածների մեջ երբեմն հանդիպում են այնպիսի ոչ միանշանակ ֆիգուրներ, որպիսին է Փոքր Սիեբը։

⁸ Կ. Ջադեան, *Դեպի Արարատ*, էջ 151։

իրերի մեջ, մոգական մարդիկ ծվարել են իրենց տաճար-քարանձավներում, երազելով անհունի մասին, ֆաուստյան մարդը կառուցել է տաճար, որը ներսից բաց է անվերջի առջև՝ նրա բուսական ծառ-սյուները և քափանցիկ վիտրաժ-պատուհանները ծլարձակում են դեպի երկինք... Սրանց կողքին առանձնանում են արմենականները, որոնք ժողովվել են իրենց լեռներում՝ հոծ տաճար-լեռան գազաթի շուրջը:

Բայց չմոռանանք, ըստ Ջարյանի, «լեռը սահման է, իսկ լեռնային մարդը անհորիզոն և սահմանափակ»⁹: Դա նշանակում է, որ լեռնցու միակ հորիզոնը երկինքն է, իսկ նրա հախտոն միտվածությունը դեպի անվերջը *անորոշ և վերացական փոխաբերություն է*. իրական կյանքում նա ոչ միայն հեռանկար, այլև ընդհանրապես գնալու տեղ չունի:

Նման հարաբերությունը գուրկ է ներքին դինամիկայից: Ջարյանի կառուցավորած «հայկականություն» արքետիպն ի ցույց է դնում գոյության երկու՝ երկրային և երկնային, պլանների ակնհայտ խզումը, որն առավելապես հատուկ է մոգական մշակույթին:

Վանքը

Հակոբ Օշականը մերժել է Ջարյանի՝ շպենգլերյան փուլերի վրա հենված որոնումները որպես մտացածին և սխեմատիկ, նշելով, որ դրանք հավակնություն ունեն «արմենիզմը փոխադրել ապառնիին» և ապագա առաքելություն վերագրել հայ ժողովրդին¹⁰: «Հայ խորհրդի» վերաբերյալ սեփական պատկերացումների շրջանակներում Օշականն առաջարկել է հայկականության համադրական մոդել՝ «վանքը», որն ըստ իր վարկածի, կենտրոնական տեղ ունի *հայ մշակույթի հոգու* «իրավ շերտերում»:

«...վանքը տեսակ մը խորհրդաւոր վառարան, որ իրեն քաշեր հոգեղէն բոլոր ճառագայթումները, խորունքէն փրթած բոլոր վերելակող ուժերը, պատրաստելու համար ինչ որ մշակույթի հոգի կանուսները»¹¹:

Վանքի հղացքն առաջին անգամ չէ, որ հայտնվում է Օշականի ստեղծագործության մեջ: «Մնացորդաց»-ում այդ անվան տակ ներկայանում է Պրուսայի Առաջնորդարանը, որի ցուցադրական շքեղությունն այլասերման բացահայտ նշաններ է ցուցաբերում: Այլասերումը միայն արտաքին չէ. Էականը հավատի բովանդակագրկումն է: Իր կորիզային հատկությունները կորցրած հիմնարկությանը Օշականը հակադրել է նույն տեղում երկու հարյուր տարի առաջ գոյություն ունեցած ՎԱՆՔԻ մասին վերհուշը, ուր *շատրվանների, լյուքս և անբեր ծառերի* տեղը հատկացված է եղել *«լույլիկի, բողկի, վարունգի, դդումի եւ ընթացիկ բանջարեղէններու»*, մարդիկ տներում ապրելիս են եղել Նարեկացին և Շնորհալին *«երկնառաքելով»*, իսկ առաջնորդները, եպիսկոպոս կամ վարդապետ, ողջ-առողջ տուն են ուղարկելիս եղել իրենց քղանցքին համբույրի երկարած հիվանդներին, բժշկելով կույրերին, անդամալույծներին, գառնուկ ժողովրդի վրայից հեռացնելով ցատումը անհավատի¹²: Էլեգիակա՞ն աշխարհ, որն իրականում երևի երբևէ գոյություն չի ունեցել...

Երկու հարյուր տարի առաջ իսկապես գոյություն ունեցածը *գյուղական համայնքն է՝* իր պարզ բնատնտեսությամբ և մահապետական բարբերով: Եվ Օշականի նկատի ունեցած Վանքն էլ ոչինչ այլ բան չէ, քան համայնքային կյանքի իդեալականացումը, «հոգևորացումը»՝ այն միջնադարյան Վանքին հատուկ կրոնական և մշակութային համատեքստ ներմուծելու միջոցով:

Մյուս կողմից, չպետք է մոռանալ, որ վանքը *մենաստան է*: Նրա կազմորոշ հատկություններից են *ինքնաբավությունը, մեկուսացումը, արտաքին աշխարհից կտրված գոյությունը*: Այդ հատկությունների շնորհիվ Վանքի փակ տարածությունն առաջարկում է այն միակ ֆորմատը, որում հնարավոր է արտաքին (ընկերային կամ ազգային) կործանարար ազդեցություններից զերծ պահել՝ *կոնսերվացնել* քայքայվող գյուղական համայնքը որպես անխառն, անշփոթ հայկականության մարմնավորում:

Վանքը որպես հիմնարկություն ոչ միայն պահպանում է ավանդական-ազգայինը, այլև սերնդեսերունդ փոխանցում է այն: Հասկանալի է, սակայն, որ արտաքին աշխարհի ազդեցություններից պաշտպանված փակ տարածքում իրականացվող այդ փոխանցումը գուրկ է իրական զարգացման մոդուսից: Խոսքն ավելի շուտ եղածի պահպանության մասին է: Հանգամանք, որ լիովին համահունչ է Օշականի այն պնդմանը, որ 1880-ից 1910-ը մեր ժողովուրդն ունեցել է *միայն գոյության* հարց: Եվ պատահական չէ, որ հայոց ազգային բնավորությունը ներկայացնող նրա բնորոշումներում կենտրոնական տեղ է գրավում *«դիմանալը, որում ավելի խորունկ հոմանիշն է տեսելը»¹³:*

Մոգական հոգու մետամորֆոզը

Չարենցի հետաքրքրությունը Շպենգլերի նկատմամբ կապված չի եղել «անկրկնելիորեն հայկական» մշակութային տիպի մտահայեցողական կամ բանաստեղծական կառուցավորման հետ: 1937 թվի ծրագրային գրառման մեջ Շպենգլերը հիշատակված է «գիտակցության սահմանի», այսինքն՝ մշակույթների փոխադարձ անթափանցելիության սկզբունքի համատեքստում, որը կենտրոնական է

⁹ Կ. Ջարյան, *Անցորդը եւ իր ճամբան*, էջ 96:

¹⁰ Յ. Օշական, *Համապատկեր արեւմտահայ գրականութեան*, հ. 10, Անթիլիաս, 1982, էջ 446:

¹¹ Նույն տեղում, էջ 487:

¹² Յ. Օշական, *Մնացորդաց*, հ. Գ., Անթիլիաս, 1988, էջ 424-425:

¹³ Նույն տեղում, էջ 420:

շպենգլերյան հոգացում: Չարենցին հետաքրքրել է սահմանի հաղթահարումը, անցումը, տրանսցենզուսը որպես այդպիսին:

Չարենցը դատողություններ չի անում Մոզական և Ֆաուստյան մշակութային տիպերի մասին, նա ինքն է ճանապարհ ընկնում: Նա ոչ միայն հեղինակ է, այլև պերսոնաժ, ոչ միայն Գյոթե, այլև Ֆաուստ¹⁴: Սա է, որ հիմք է տալիս, շրջելով հարցադրումը, Չարենցի մասին խոսելու շպենգլերյան պատմափիլիսոփայության տերմիններով, դիտարկելով նրա ստեղծագործությունը որպես ստատիկ մոզական հոգու հաղթահարում և անցում ֆաուստյան հարացույցին, որ եզակի է հայկական մշակույթի համատեքստում:

Չարենցը «մոզական հոգու» կադապարի միակ հաղթահարողն է մեզանում, և նրա ներքին մետամորֆոզը – *հարսնյակից՝ քիթեռ* – հարթել է մեր ճանապարհը դեպի ֆաուստյան մշակույթը՝ ոչ միայն այն հասկանալու (հասկացողներ ունեցել ենք), այլև *նրանում գործելու և այդպիսին ստեղծելու առումով*:

Հայ ժողովրդի անցյալի, ներկայի և ապագայի նկատմամբ հետևողական ռեֆլեքսիան Չարենցն ամբողջացրել է «Գիրք ճանապարհի»-ում: Նրա *իրական պատգամը* ոչ այնքան նույնանուն բանաստեղծությունն է, որքան «Գիրքը» որպես ամբողջություն: Այստեղ մենք գործ ունենք ոչ թե *պատմություն պատմող հեղինակի արտոբիոգրի* հետ, այլ՝ գործող *կոնցեպտուալ պերսոնաժի*: Բանաստեղծը նորովի է անցնում ժողովրդի անցած ճանապարհը՝ հետամուտ լինելով այդ ճանապարհից բացվող ապագայի հեռանկարին:

Այդպես Ֆաուստն է անհատապես և նորովի անցել մարդկության անցած ճանապարհը, այդպես է կառուցված Հեգելի Ոգու ֆենոմենոլոգիան:

Եթե ճիշտ է, որ կոնցեպտուալ պերսոնաժի գործառույթը կոնցեպտի ձևավորումն է¹⁵, ապա կարող ենք պնդել, որ «ճանապարհը» այն կոնցեպտն է, որ կյանքի է կոչել Եղիշե Չարենցը: Դրա կազմող առանցքներն են *ինքնահաղթահարումը* և դրանով պայմանավորված *պատմականությունը*:

Երեք գրողների դիրքորոշումների այս տարբերությունն էքզիստենցիալ հիմքեր ունի: Ի դեմս Օշականի և Ջարյանի հանդիպել են *վերջին արևմտահայը* և *առաջին սփյուռքահայը*: Առաջինը ստանձնել է իր վերջացած աշխարհի պահապանի դերը, երկրորդը դիրքավորել է իրեն որպես հետադետային լանդշաֆտների դիստանցավորված դիտող, որն իր ինքնությունը մտային կառույցներում է փնտրում: Չարենցն, ի տարբերության սրանց, *առաջին հայաստանցին է*¹⁶: Նրա հայացքը պատմական է: Չարենցի շնորհիվ մենք պատմություն ունենք:

Ashot Voskanian (Armenia)

TEMPTATION BY SPENGLERIANISM (PHENOMENON OF 'ARMENIANNESSE' IN THE TENSION FIELD OF THE ZARIAN – OSHAKAN – CHARENTS TRIANGLE) “THE MYSTERY OF ARMENIANNESSE” AND “THE MYSTIC SOUL”

Oswald Spengler is not a hero of our politically correct century. However, his ideas played a considerable role in the attempts of the Armenian authors (K. Zarian, H. Oshakan and Y. Charents) to rethink the phenomenon of ‘Armenianness’. Our exploration of this triangular constellation is also partially influenced by the language and logic of Spenglerian concept. Shall we designate this conscious intellectual adventure as ‘temptation by Spenglerianism’?

Գևորգ Պողոսյան (Հայաստան)

ՀԱՅԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ

Հայտնի փաստ է, որ հայերն աշխարհով մեկ սփռված ազգ են: Փորձագետների հաշվարկներով հայերի թիվը այսօր աշխարհում հասնում է մոտ 8 միլիոնի: Հայաստանի Հանրապետությունում 2011թ. մարդահամարի տվյալների համաձայն բնակվում է 3 458 303 մարդ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում այսօր բնակվում է 138.000 հայ:

Տարբեր աղբյուրների համադրումը թույլ է տալիս պնդել, որ հայերն այսօր բնակվում են

¹⁴ Հմմտ. **Ա. Ոսկանյան, Ս. Գվդյան**, *Համատեղ ներկայացումներ (կոն)ֆիգուրատիվ երևակայության բեմահարթակում /Չարենցը որպես կոնցեպտուալ պերսոնաժ/*՝ <http://www.arteria.am/hy/1372671605>:

¹⁵ Տե՛ս **Ж. Делез, Ф. Гваттари**. *Что такое философия*, М., 2009, с. 73-74:

¹⁶ Նույնիսկ Թումանյանը և Տերյանը դեռևս «արևելահայեր» են:

աշխարհի ավելի քան 79 երկրներում, նրանց նվազագույն քանակությունը գրանցվել է Ինդոնեզիայում (20 հայ), Ջիմբաբվեում (28 հայ), Պերուում (35 հայ), Գվատեմալայում (40 հայ), Սինգապուրում (35 հայ), Կոստա-Ռիկայում (40 հայ) և այլն: Իսկ ամենահայաշատ երկրներն են Ռուսաստանի Դաշնությունը (1.130.500 հայ), Միացյալ Նահանգները (1.000.000 հայ), Ֆրանսիան (500.000 հայ), Իտալիան (400.000 հայ), Վրաստանը (248.900 հայ), Սիրիան (մինչև վերջերս՝ 190.000 հայ), Լիբանանը (140.000 հայ), Արգենտինան (130.000 հայ) և այլն: Նշենք, որ բոլոր այս տվյալները մոտավոր բնույթ են կրում, քանի որ վերցված են համապատասխան երկրների մարդահամարների արդյունքներից, որոնք իրականացվել են վերջին 10-15 տարիների ընթացքում: Հայտնի է, որ մարդահամարների ժամանակ բնակիչների ազգությունը գրի է առնվում իրենց իսկ պատասխանների համաձայն: Այսպիսով, իրենց ազգությունը հայ նշել են նրանք, ովքեր իրենց հայ են համարում և չեն խուսափում ինչ-ինչ պատճառներով իրենց ազգությունը թաքցնել: Հետևաբար, հայերի թիվը տարբեր երկրներում կարող է շատ ավելի մեծ լինել, քան այն, որ նշվում է մարդահամարի ժամանակ:

Կան նաև բազմաթիվ երկրներ, որտեղ բնակվող հայերի թիվը վերցված է հայ եկեղեցու կամ հայ համայնքի կողմից տրամադրված տեղեկության հիման վրա: Այսպիսով՝ 8 միլիոնը կարելի է համարել հայերի այն նվազագույն թիվը, որ բնակվում են այսօր աշխարհում:

Պատմականորեն հայերն աշխարհում ավելի մեծ թիվ են կազմել: Միայն Տիգրան Մեծի Հայաստանում բնակվել է մոտ 4 միլիոն մարդ (140-90թ. մինչև մեր թվարկությունը): Եթե վերցնենք վերջին 100-150 տարիները, ապա կտեսնենք, որ բազմաթիվ հայ համայնքներ Մերձավոր Արևելքի ու Կովկասի երկրներում, գնալով կրճատվել են, հայաթափվել: Կրճատման ու հայերի թվաքանակի նվազեցման պատմական գործընթացները շատ պարզ երևում են Թուրքիայի, Սիրիայի, Լիբանանի, Եգիպտոսի, Իրաքի, Վրաստանի ու Ադրբեջանի օրինակով: Բոլոր այս երկրներում վերջին 100 տարվա ընթացքում հայ բնակչության կտրուկ նվազում է տեղի ունեցել: Փաստորեն հայերի բնօրրանը կազմող տարածքներից հայ էթնոսի արտամղում է տեղի ունեցել: Պատմության ընթացքում հայերը տեղահանվել են կամ ոչնչացվել այն երկրներում, տարածաշրջաններում, որտեղ նրանք ծնունդ են առել և պատմականորեն բնակվել են:

Ահա թե ինչ ժողովրդագրական տեղաբժեր կատարվեցին Ախալցխայի նահանգում՝ թուրքական տիրապետության առաջին փուլում՝ մինչև 18-րդ դարը: Միայն մեկ հարյուրամյակի ընթացքում շեշտակի նվազել էր նահանգի բնակավայրերի թիվը: Եթե 1595թ. նահանգում կար 84 հայաբնակ բնակավայր, ապա 1694-1732թթ. նրանց թիվը նվազեց մինչև 33-ը: Վերին Ջավախքի երեք գավառներով մույն ժամանակաշրջանում հայերի բնակավայրերի ընդհանուր թիվը 358-ից նվազեց մինչև 142-ը: Այսպիսով ընդամենը մեկ տարում հայկական բնակավայրերի թիվը կրճատվել էր 58%-ով, իսկ հայ բնակչությունը՝ 60%-ով¹:

Էրզրումի նահանգում 1809թ. կար 931 հայկական բնակավայրեր, իսկ ուղիղ մեկ հարյուր տարի անց՝ 1909թ. այնտեղ մնացել էր ընդամենը 391 բնակավայր: Նույն ժամանակաշրջանում կրկնակի նվազել էր նաև հայերի թիվը՝ 381 230-ից մինչև 151 949 մարդ²:

Այսօր հայերի առկայությունը տարածաշրջանում ունի բոլորովին այլ պատկեր:

Աղյուսակ 1.

Հայերի թիվը տարածաշրջանում 2003թ.³

| Երկրներ | Բնակչության թիվը | Հայերի թիվը |
|------------------|------------------|------------------|
| 1. Ադրբեջան | 7,6 մլն | 34.000 |
| 2. ԱՄԷ | 2,7 մլն | 2000 |
| 3. Աֆղանստան | 18,8 մլն | 1000 |
| 4. Եգիպտոս | 67 մլն | 6000 |
| 5. Թուրքիա | 63,450 մլն | 80.000 |
| 6. Իրան | 69 մլն | 80.000 |
| 7. Իրաք | 21,8 մլն | 10.000 |
| 8. Լիբանան | 4 մլն | 70-80.000 |
| 9. Կիպրոս | 793 963 | 4000 |
| 10. Հորդանան | 4,8 մլն | 3000 |
| 11. Հունաստան | 10,6 մլն | 45.000 |
| 12. Ռուսաստան | 141,8 մլն | 2,2մլն |
| 13. Սիրիա | 15,6 մլն | 65-70.000 |
| 14. Վրաստան | 4,335 մլն | 350.000 |
| Ընդհանուր | | 2 963 000 |

¹ Ա. Մեքենյան, Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր, Երևան, 2011:

² Armenian Karin/Erzerum, (Edited by **Richard G. Hovannisian**), California, 2003, pp. 134-145.

³ Հայ Սփյուռք. Հանրագիտարան, Երևան, 2003, 732 էջ:


Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա վիճակագրությունը վկայում է այն մասին, որ 1991 թվականից ի վեր անկախ Հայաստանում բնակչությունը նույնպես տարեցտարի նվազում է՝ հիմնականում հայերի արտագաղթի պատճառով:

1926 թ. առաջին Համամիութենական մարդահամարի տվյալներով Հայաստանի ՍՍՀ բնակչության թիվը կազմել է 881 000 մարդ:

1939 թ. երկրորդ Համամիութենական մարդահամարի տվյալներով Հայաստանի ՍՍՀ բնակչության թիվը արդեն կազմել է 1 282 338 մարդ, որոնցից 83%-ը հայ էին (1 061 997), 10% - ադրբեջանցի (130 896), ռուս (51 464) և քուրդ (20 481): 1959 թ. երրորդ Համամիութենական մարդահամարի տվյալներով Հայաստանի ՍՍՀ բնակչության թիվը կազմել է 1 763 048 մարդ, որոնցից 88%-ը հայ էին (1 551 610 մարդ): 1970 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով Հայաստանի ՍՍՀ բնակչության թիվը կազմել է 2 491 873 մարդ, որոնցից 88%-ը հայ էին (2 208 327 մարդ): 1979 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով Հայաստանի ՍՍՀ բնակչության թիվը կազմել է 3 037 259 մարդ, որոնցից 90%-ը հայ էին (2 733 533 մարդ): 1989 թ. վերջին Համամիութենական մարդահամարի տվյալներով Հայաստանի ՍՍՀ բնակչության թիվը կազմել է 3 304 776 մարդ, որոնցից 93,3%-ը հայ էին (3 083 356 մարդ): 2001 թ. ՀՀ առաջին մարդահամարի տվյալներով բնակչության թիվը կազմել է 3 458 303 մարդ, որոնցից 97,1%-ը հայ էին (3 358 012 մարդ): 2011 թ. ՀՀ մարդահամարի տվյալներով բնակչության թիվը կազմել է 3 285 767 մարդ:

Գծապատկեր 1

Հայաստանի բնակչության մարդահամարները 1926-2011 թթ.



Բացի արտագաղթից բնակչության թվի նվազումը տեղի է ունենում ծնելիության կտրուկ անկման պատճառով⁴:

Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայությունը հրապարակել է 2011թ. անցկացրած բնակչության մարդահամարի նախնական տվյալները: Այդ տվյալների համաձայն՝ Հայաստանի բնակչության թիվը (ներառում է ինչպես երկրում գտնվողներին, այնպես էլ բացակայողներին) կազմել է 3 միլիոն 285 հազար 767 մարդ: Իսկ Հայաստանում մարդահամարի պահին գտնվող բնակչության թիվը կազմել է 2 միլիոն 871 հազար 509: Մինչդեռ, 2001թ. մարդահամարի տվյալների համաձայն Հայաստանի բնակչության թիվը կազմել է 3 միլիոն 458 հազար 303, իսկ այդ ժամանակ հանրապետությունում գտնվում էր 3 002 598 մարդ:

Այսպիսով, 10 տարիների ընթացքում (2001 – 2011) Հայաստանի De Jure բնակչությունը նվազել է 172 536 հոգով: ($3\,285\,767 - 3\,458\,303 = -172\,536$): Իսկ Հայաստանի De Facto բնակչությունը 10 տարվա ընթացքում նվազել է 131 089 հոգով: ($2\,871\,509 - 3\,002\,598 = -131\,089$): Ընդ որում, ծնելիության ցուցանիշների և բնակչության մահացության հաշիվը հենց այդ տասը տարիների ընթացքում ցույց է տալիս բնակչության աճ 134 147 հոգով:

Այլ կերպ ասած՝ 10 տարվա ընթացքում Հայաստանի De Jure բնակչությունը միայն բնական աճի միջոցով պետք է աճեր 134 147 հոգով և, այդպիսով, կազմեր $3\,458\,303 + 134\,147 = 3\,592\,450$ մարդ: Սակայն 2011թ. մարդահամարի արդյունքն է 3 285 767 մարդ, որը 306 683 հոգով քիչ է: Իսկ ներկա (De Facto) բնակչությունը պետք է լիներ $3\,002\,598 + 134\,147 = 3\,136\,747$ մարդ: Սակայն 2011թ. մարդահամարը ցույց է տվել միայն 2 871 509 մարդ: Տարբերությունը կազմում է 265 236 մարդ: Հիմնվելով այս հաշվարկների վրա՝ կարելի է եզրակացնել, որ վերջին 10 տարվա ընթացքում Հայաստանից դուրս է եկել ևս մոտ 300 000 մարդ: Միջին հաշվով ստացվում է տարեկան 30 000 մարդ: Օրինակի համար

⁴ Հայաստանի ժողովրդագրական տեղեկատու, Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական վարչություն, Երևան, 2010, p. 55:

նշենք, որ միայն 2011թ. Հայաստանից հեռացող և ժամանող քաղաքացիների թվաքանակի տարբերությունը բացասական է եղել՝ մոտ 49 000 մարդով⁵:

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կանխատեսումներով Հայաստանի բնակչությունը 2025 թվականին կկազմի մոտ 3 181 000, իսկ 2050 թվականին կարող է նվազել մինչև 3 018 000: Այսպիսով՝ բոլոր հաշվարկները վկայում են մեր հանրապետության ազգաբնակչության կայուն նվազման մասին:

Կան ժողովրդագրական մի շարք գուտ հայկական առանձնահատկություններ, որոնք անհրաժեշտ է այստեղ նշել և հաշվի առնել: ՀՀ-ի բնակչությունը կազմում է աշխարհի բնակչության մոտ 0,05%-ը: 2009թ. ՄԱԿ-ի տվյալներով ամբողջ աշխարհում կար մոտ 200 մլն. միգրանտներ: Դա երկրագնդի բնակչության մոտ 0,33%-ն էր կազմում: Հայ միգրանտների թիվն այդ տարիներին հասնում էր 1 միլիոնի: Դա կազմում էր աշխարհի միգրանտների 0,5%-ը: Այսպիսով՝ ՀՀ-ի բնակչության բաժինը աշխարհի բնակչության մեջ 0,05%-ն է, իսկ ՀՀ-ի միգրանտների բաժինը աշխարհի միգրանտների մեջ՝ 0,5%, այսինքն 10 անգամ ավել է: Աշխարհի միգրանտների բաժինը 0,33% է, իսկ ՀՀ-ի միգրանտների բաժինը մեր բնակչության մոտ 30%-ն է կազմում, այսինքն 100 անգամ ավել է: Հայերը ՀՀ-ում մոտ 3 մլն. են, իսկ աշխարհում հայերը մոտ 8 մլն. են, այսինքն՝ 2,7 անգամ ավել: Հայերի բաժինը ՀՀ-ում 97,2% է, ինչը եզակի երևույթ է աշխարհում (95%-ը հայ քրիստոնյա են իրենց համարում): Մայրաքաղաք Երևանում բնակվում է երկրի բնակչության մոտ 37%-ը, ինչը նույնպես եզակի երևույթ է աշխարհում: Ուրբանիզացիան աշխարհում 50% է կազմում, իսկ ուրբանիզացիան ՀՀ-ում ավելի բաժր է՝ 65% է:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Հայաստանի համար կարելի կանխատեսել հետևյալ հնարավոր զարգացումները 2015-2050թթ.: Հայաստանի բնակչությունը, հաշվի առնելով ներկայիս արտագաղթի ծավալները, կարող է նվազել մինչև 1,5 միլիոն: Արդյունքում ՀՀ-ն կթուլանա, իսկ ազգային բանակի համալրումն ավելի կդժվարանա: Ղարաբաղի հարցի լուծման դանդաղումը կարող է փոխել Հայաստանի դեմոգրաֆիական պատկերը: Ղարաբաղի հարցը դիտավորյալ լուծում չի ստանում Ադրբեյջանի կողմից, որպեսզի լարվածությունը հայերի մոտ միշտ մնա (թուրքական հին սցենարի համաձայն): Թուրքերը ժամանակին այդպես վարվել են Արևմտյան Հայաստանի, Նախիջևանի, Ադրբեյջանի հայ բնակչության հետ. փորձում էին նույնը անել Ղարաբաղում, սակայն չստացվեց: Հիմա փորձում են անել Հայաստանում՝ հայաթափել ՀՀ-ն և լուծել իրենց ազգային խնդիրները:

Դրա հետ մեկտեղ՝ ինքնալիկվողացման ու ներքին դեգրադացիայի գործնականներին դիմա-կայելու համար նախ և առաջ անհրաժեշտ է կանխել արտահոսքը երկրից: Այս պարագայում միակ ելքը դա՝ կազմակերպված ճոճանակային կամ այսպես կոչված «ցիրկուլյար» միգրացիա մոդելի կիրառումն է, որը իրեն արդարացրել է շատ այլ երկրներում: Մեր երկրում այն կարող է իրականացվել «Այրել Հայաստանում – աշխատել դրսում» կարգախոսի ներքո: Աշխատուժի կազմակերպված արտահանումը՝ համապատասխան երաշխիքներով, ապահովագրությամբ, միջպետական պայմանագրերով, զգալի մուտքեր է ապահովում երկրի պետությունը: Ֆիլիպինները, օրինակ, աշխատուժի կազմակերպված արտահանումով տարեկան 17 մլրդ. դոլարի եկամուտ են ապահովում:

Հայաստանի համար չափազանց կարևոր է նաև ծնելիության խթանումը: Այսօր մահացածի համար պետությունը 200 000 դրամ նպաստ է տրամադրում: Իսկ առաջին նորածին երեխայի համար 40 000 դրամ: Փաստորեն ծնելիությունը պատշաճ կերպով չի խթանվում: Իրավիճակը պետք է կտրականապես փոխել. օրինակ, 10 անգամ ավելացնել ծնելիության ֆինանսական խթանումը: Եվ, վերջապես, ամենաանհրաժեշտը՝ պետք է նոր աշխատատեղեր ստեղծել փոքր ու միջին բիզնեսի հաշվին, այլ ոչ թե մենաշնորհի օլիգարխիայի: Ավելացնենք նաև, որ շատ կարևոր է սփյուռքի մարդկային ռեսուրսները ներգրավել ՀՀ ամրապնդման ու զարգացման նպատակների համար՝ «Այրել սփյուռքում և աշխատել (զոնե 1-2 տարի) Հայաստանում» ձևաչափով:

Gevorg Poghosyan (Armenia)

ARMENIANS IN THE WORLD. HISTORICAL MOVEMENTS OF POPULATION

During many centuries Armenians lived in the territories of their own historical homeland in the Armenian Mountains and Middle East. It is estimated that today there about 8 billion of Armenians in the world.. They are residents of more than 79 countries. According to the 2011 census, the current population of the Republic of Armenia is slightly over 3 million. The analysis of historical movements of Armenian population during the last 100-150 years shows that Armenian communities in the countries of Middle East and the Caucasus shrank. Ethnic Armenians practically were forcibly displaced from the countries of their historical homelands such as Turkey, Syria, Iraq, Egypt, Lebanon, Georgia and Azerbaijan. Currently the process of displacement of ethnic Armenians from the region of their historical habitas is still underway.

⁵ Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական վարչություն: <http://www.armstat.am/file/doc/99469163.pdf>.

Անահիտ Ջիջյան (Հայաստան)

**ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ» ՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Ետխորհրդային տարածաշրջանում առաջ եկած նորանկախ պետությունների առջև ներկայումս առաջնահերթ է քաղաքացիական հասարակություն կերտելու հիմնախնդիրը: Քաղաքակիրթ հասարակություն ստեղծելն իր մեջ ներառում է առկա տնտեսական, սոցիալական, քաղաքական, իրավական, կրթական, մշակութային և այլ հիմնախնդիրների լուծում: Ոմանց տեսակետից՝ այդ գործընթացի ճանապարհին առանցքայինը տնտեսական հիմնախնդրի լուծումն է, այսինքն՝ նոր տնտեսական հարաբերությունների կայացումը, այլ տեսակետից՝ ժողովրդավարական սկզբունքներով հասարակության գործունեությունը, իսկ ոմանց համար՝ վերադարձը մեր ակունքներին... Սակայն քաղաքակիրթ հասարակության կերտման առանցքը պետք է լինի այդ ամենի կրողը՝ մարդը, այն քաղաքացին, որը կոչված է լինելու իրագործել նոր հասարակարգի կայացման գործընթացը: Այսպիսով, էապես կարևորվում և առանցքային է դառնում նոր մարդու դաստիարակության և կրթության խնդիրը, և դրա իրականացման կարևորագույն օղակ հանդիսանում է ընտանիքը:

Աշխարհակարգի փոփոխման, նոր իրողությունների առաջացման և հաստատման հետ մեկտեղ փոխվում են նաև «նոր» աշխարհում մարդու մասնակցության հնարավորություններն ու եղանակները, ինչը ենթադրում է նաև փոփոխություններ մարդկանց մտքերի ոլորտում: Անընդհատ փոփոխվող կյանքի պայմաններում նախկինում հաստատում գտած գործունեության եղանակներն այլևս սպասելի արդյունքին չեն հանգեցնում, դառնում են անկանխատեսելի, ինչը բերում է մարդկանց մեջ ակտիվության նվազմանը, գործունեությունից հրաժարմանը: Արդյունքում, մարդկանց մեծ բազմություն պասիվության մատնվելով, դառնում է տեղի ունեցող փոփոխությունների՝ սոցիալական, տնտեսական, կրթական, ... գործելաեղանակների, վարքի ու բարքի, նորահաստատ բոլոր այդ իրողությունների ազդեցության տակ **կրողը**, կրավոր օբյեկտը, այլ ոչ՝ մասնակիցը, արդյունքում հոգեբանորեն առանձնանալով ու անհաղորդ դառնալով նորովի ձևավորվող սոցիալական կյանքին: Հասարակական կյանքում առաջ եկած փոփոխությունները հանգեցրին անձանց ու խմբերի գիտակցությունում իրենց կենցաղի ու գոյապայմանների այլևայլ խնդիրների ճանաչման և դրանց լուծման՝ կենցաղավարության բազմալ գործունեության տեսակներում դիտավորության ու անելիքի, ապա և՛ արվածի ու սպասելիք արդյունքի խնդրակարգում սոցիալական կանխատեսելիության արմատական փլուզմանը և անսպասելին ու անորոշը իրենց կյանքում անմիջականորեն ներկա ու վերապրման ենթակա տեսանկյուն: Առավելապես անկայուն վիճակում հայտնվեցին ինչպես ավանդական սոցիալապես խոցելի խմբերը՝ տարեց կենսաթոշակառուները, միայնակները, հաշմանդամները, բազմազավակ և բազմանդամ ընտանիքները, ծնողագուրկ երեխաները, այնպես էլ՝ այն ընտանիքները, որոնք չկարողացան աղապտացվել և աղեկվառ արձագանքել տեղի ունեցող փոփոխություններին: Հուսալքությունը դառնում է համատարած... Բերենք վերլուծության համար նշանակալի մի քանի տվյալներ. ՀՀ-ի սպառողական նվազագույն զամբյուղը Ազգային վիճակագրական ծառայության հաշվարկով կազմում է 50 հզ. 443. դրամ, իսկ պարենային զամբյուղի ամսական արժեքը 28 հզ. 498.9 դրամ է՝ մեկ անձի հաշվարկով: Այսպիսով, ընտանեկան նպաստներն այսօր հնարավորություն չեն ընձեռում ապահովելու բնակչության առողջ ֆիզիկական վերարտադրության համար անհրաժեշտ նվազագույն սննդամթերքը՝

Սոցիալական աշխատանքի ծագումը և բազմաբնույթ ծավալումը, ըստ էության, պատասխանն է մարդկանց (անձանց, ընտանիքների) և՛ առանձնացող կյանքում, և՛ համակեցության մեջ շեշտված **կարիքի**, որը և ակնառու է դառնում հատկապես «փոփոխությունների» (քաղաքական, սոցիալական, տնտեսական, արժեքային, կրթական, աշխատանքային...) այսպիսի ժամանակաշրջանում: **Սոցիալական աշխատանքն ուղղված է խոցելի՝ սոցիալական կյանքից տարանջատված անձանց, խմբերի կարիքային հիմնախնդիրների լուծմանն աջակցությանը և հասարակական կյանքում նրանց վերստին ներգրավմանը:** Անձանց և խմբերի **կարիքավորության ու տկարության** բոլոր այս ֆենոմենները, որպես այդպիսին, կարող են դառնալ և իրապես դառնում են **սոցիալական աշխատանքի օբյեկտ:** **Կարիքը անձի, ընտանիքի առկա կեցությունում բարեկարգի համեմատ և դրան հասնելու համար անհրաժեշտ ներքինի և արտաքինի, այն է՝ հոգևոր առաքինությունների, գիտելիքների, կարողունակությունների և կարելություն ընձեռող պայմանների, պակասն է, որոնց իսկ ձեռքբերումը կարող է էականորեն նպաստել, հասանելի դարձնել և հենց էացնել կեցության բարեկարգությունը:** Սոցիալական աշխատանքի համար ճշմարիտ ու նախընտրելի է ըստ կարիքի աջակցության իրագործումը: Կարիքի

¹ Տվյալները բերվում են ըստ 2012 թ. երրորդ եռամսյակ Ազգային վիճակագրական ծառայության հաշվարկների <http://www.armstat.am/am/>

ճշմարտության ստույգ բացահայտումն է հնարավոր դարձնում այդ **կարիքին աղելվատ աջակցության** իրագործումը:

Սոցիալական աշխատանքը գոյության է կոչված հասարակության կյանքում բարեկարգության հաստատման կարիքով և դիտավորությամբ²: Հարկ է նաև ամրագրել, որ սոցիալական աշխատանք գիտակարգում ու գործընթացում «բարեկարգության» հասկացությունն ունի և՛ հիմնորոշ՝ **գոյութենական**, և՛ կատարումային՝ **նպատակաբանական** նշանակություն: Ե՛վ մարդկային ինքնության, և՛ կենսակերպի, և՛ մշակույթի կայացման, որով և՛ մարդկության հոգևոր քաղաքակրթության ներկայի ու հեռանկարի իդեալի ու իրագործման բովանդակ խնդրակարգում, որին և ըստ ամենայնի առնչվում ու հենց կոչված է սոցիալական աշխատանքը, **«բարեկարգության»** հասկացությունը գիտական՝ հայեցակարգային ու մեթոդաբանական կիրառության առումով՝ առավել անհրաժեշտ, նպատակահարմար ու հենց նախընտրելի է, քան մասնագիտական գրականությունում համատարած և ոչ միշտ տեղին օգտագործվող **«բարեկեցության» (welfare)** հասկացությունը³, նրա հետ փոխլրացականությամբ՝ սոցիալական գիտություններում ու հետազոտություններում հնարավորություն ընձեռելով լրումի բերել մարդկային կյանքի **խսկությունը հայտող իմաստի ու իմաստության խորհուրդի հասկացում ու մեկնողաբար բացորոշում:**

Կարիքավորության առանձնահատկության բացահայտումը կարող է ի հայտ բերել նաև **հոգացության** իրագործման առանձնահատկությունները: Կարիքավոր են համարվում այն մարդիկ, խմբերը, ընտանիքները որոնց կենսագրության ներկա ժամանակում առկա է սոցիալական կյանքից դուրս մնալու, լուսանցքում հայտնվելու փաստը: **Կարիքավորը մա է, որի հնարավորությունները՝ բնությամբ կամ ձեռք բերովի, կամ այլ կերպ ասած՝ ունակությունները, հմտությունները, կարողությունները նվազ են ու անհամապատասխան ժամանակակից կյանքի պայմաններին և-կամ պահանջներին:**

Ժամանակակից Հայաստանում գործող սոցիալական քաղաքականությունն ունի երկու բաղկացուցիչ՝ պասիվ, որն իրենից ներկայացնում է պետության կողմից մշակված՝ աղքատության չափորոշիչներին համապատասխան ընտանիքներին տրամադրվող նպաստների համակարգը և ակտիվ՝ խոցելի խմբերի ներկայացուցիչների շուկայական հարաբերությունների կողմից ներկայացվող աշխատանքային չափորոշիչներին համապատասխան հմտությունների և ունակությունների զարգացողական ծրագրեր: **Կարիքային հիմնախնդիրների** ուղղությամբ պետության կամ հասարակական կազմակերպությունների կողմից իրագործվող **հոգածությունն** իրագործելի է երկու ուղղությամբ.

1. Ստեղծել պայմաններ կարիքավոր անձանց, խմբերի արդեն իսկ առկա հնարավորությունների համապատասխան՝ դրանք իրագործելի դարձնելու համար, ինչը կնշանակի՝ մատչելիություն ապահովել՝ ժամանակակից պահանջներին համապատասխան նրանց տկար հնարավորությունների դրսևորման համար:

2. Կարիքավոր անձանց, խմբերի ներքին հնարավորությունների, այսինքն՝ ունակությունների, հմտությունների, կարողությունների աճի, զարգացման ապահովում:

Մասնագիտական գրականության մեջ և՛ պետական, և՛ ոչ-կառավարական ծրագրերում **խոցելի** և-կամ արդեն իսկ **վտանգված (troubled)** ընտանիքների հետ տարվող սոցիալական, հոգեբանական և այլ աշխատանքների հիմնական նպատակն է նրանց **բարեկեցության** ապահովումը տվյալ հասարակության «միջին դասին» համապատասխան մվագագույն ստանդարտների տեսակետից⁴: Միջին դասի ընտանիքների բարեկեցության հասկացողության մեջ առաջին հերթին մտնում են նյութական ապահովության՝ վարձատրվող աշխատանքի առկայության, նորմալ բնակարանային պայմանների, առողջապահական, կրթական և այլ հասարակական որակյալ ծառայություններից օգտվելու հնարավորությունների ապահովումը և ներընտանեկան այնպիսի հարաբերությունների առկայությունը, որոնք հնարավորություն են ընձեռում զարգացնելու ընտանիքի յուրաքանչյուր անդամի ունակությունները⁵: Սակայն «բարեկեցության» հասկացությունն ունի ավելի ընդարձակ **բովանդակություն** մարդկային կեցության համար անհրաժեշտ ու նաև բավարար գոտիների համալիրում և, որպես առաջնային, **կենսապահովման** ու, որպես հաջորդող, **կենցաղապահովման** հետ մեկտեղ, նրանց նկատմամբ որպես հիմնադիր ու առանցքային՝ ներառում է **հոգևոր** բաղադրիչը:

Քրիստոնեական հայացեկարգային և հենց հոգևոր ու քաղաքակրթական մոտեցմամբ՝ կարիքին համապատասխան աջակցություն էր իրագործվում Երևանում գործող Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի 2001-2006թթ. «Մենք պարտավոր ենք ապրել» (ՄՊԱ) բարեգործական ծրագրի շրջանակներում, ըստ էության՝ իրականացնելով «քրիստոնեական սոցիալական աշխատանք»: «Քրիս-

² Տե՛ս **Ջիջյան Ա., Քոչարյան Ռ.,** *Սոցիալական աշխատանքը, բարեգործությունը և «քրիստոնեական կենսակերպի արմատավորումը»*, Եր., 2009, էջ 20:

³ «Բարեկեցություն» հասկացության տեղի ու դերի վերաբերյալ տե՛ս **Morales A. T. & Sheafor B. W.,** *Social work. A profession of many faces*, Boston, 1992, էջ 5:

⁴ Տե՛ս **Heraud B. J.,** *Sociology and social work. Perspectives and problems*, Pergamon Press, Oxford, 1970, էջ 221:

⁵ Տե՛ս **Feldman F. L. & Schers F. H.,** *Family social welfare. Helping troubled families*, Atherton Press, N-Y, 1967, էջ 38:

տոնեական սոցիալական աշխատանքը ուղղված է քրիստոնեական կենսակերպի արմատավորմանը, և այն, ինչն ըմբռնվում է «քրիստոնեական կենսակերպ» ասելով, իրենում արդեն իսկ նկատի ունի «կյանքի» որոշակի մոդել, «հաղորդակցականության» որոշակի կերպ, «վարքային» որոշակի կազմակերպվածություն և, անշուշտ, ընտանիքների «կառուցվածքային» ներկայակերպվածություն: Այս բնույթի սոցիալական աշխատանքում ևս կարող է լինել ու կա «ընդհանուրը» կամ «համընդհանուրը» և սոցիալական խմբի ու նրա կարիքավորության առանձնահատկությամբ պայմանավորված (ալկոհոլ, թմրամոլություն, տարեցներ, հաշմանդամություն...) «հատուկը» կամ «լոկալը»: Բազմաթիվ և բազմապրոֆիլ խնդիրներ ունեցող անզավակ տարեց զույգեր, բազմազավակ, երկկողմանի կամ միակողմանի ծնողազուրկ երեխաներով ընտանիքներ, պարզապես չբավորության եզրին կանգնած ընտանիքներ, որոնցում երբեմն՝ մուրացկանությամբ և երբեմն՝ շեղված տարատեսակ վարքի դրսևորումներ ցուցաբերող անձինք, մասնագիտական գրականության մեջ ստացել են families with multiply problems սահմանումը: Սոցիալական աշխատանքի թիրախ խմբի այդպիսի զանազանությամբ էր պայմանավորված կարիքին համապատասխան կազմակերպվող աջակցողական ծրագրի ուղղորդվածությունը:

Նյութական օգնություն. շահառու ընտանիքներին տրամադրվում էր պարենային օգնություն, ըստ մեկ անձին միջին պարենային ապահովության ու անդամների թվի չափորոշիչի, ամիսը 2 անգամ հաճախականությամբ: Մթերքի փաթեթավորումը և բաշխումը կազմակերպվում էր շահառուների ընդգրկումով, որպես վճարովի աշխատանք և ակտիվացման միջոց: Բնակարանների ջեռուցման կազմակերպման և կենցաղային պայմանների բարելավման նպատակով տրամադրվում էր ֆինանսական ու նաև հագուստի աջակցություն:

Առաջնային բժշկական օգնություն՝ շահառուների առողջապահական կարիքների վերհանում, դեղորայքային աջակցության տրամադրում (ըստ թաղամասային բժշկի նշանակումների), ուղղորդում համապատասխան բուժօգնություններ, նաև միջնորդություն որոշ լաբորատոր-դիագնոստիկ հետազոտություններ կազմակերպելու համար:

Կենցաղավարության, կենսապահովման, ծնողվարության դասընթացների կազմակերպում՝ ընտանեկան բյուջեն կազմելու, երեխաների հետ փոխհարաբերությունները կառուցելու և այլ նշանակալի թեմաներով:

Հոգևոր աջակցություն՝ սերտ կապ հաստատելով Հայ առաքելական եկեղեցու սպասավորների հետ և կազմակերպելով ամենշաբաթյա հանդիպումներ քահանաների հետ, որտեղ շահառուները հնարավորություն էին ունենում ստանալ պատասխաններ իրենց հուզող հարցերին: Շահառուներին աջակցություն էր ցուցաբերվում մկրտության կազմակերպման հարցերում: Ընտանիքներն իրար հետ ծանոթացնելու, շփման շրջանակներն ընդլայնելու նպատակով կազմակերպվում էին ուխտագնացություններ Հայաստանի հոգևոր կենտրոններ: Այդ ուխտագնացությունները հնարավորություն էին ընձեռում մտերմանալ հայոց պատմությանը, հարազատանալ հայ հոգևոր արժեքներին, և, որ ամենակարևորն է, ապրել հոգևոր կյանքով: Շահառուների կյանք էր մուտք գործում ու կյանքից անբաժանելի դառնում աղոթքը, Սուրբ գրերի ընթերցանությունը, կյանքում աստվածայինը, լուսավորը, օգտակարն ու պիտանին տեսնելը, աստվածային պատվիրանների համաձայն կենցաղավարելը, միմյանց օգնելու կարևորության գիտակցումը, հոգևոր կյանքին նպաստավոր կենցաղավարության համար սրբերից բարեխոսություն, Աստծուց օգնություն և օրհնություն խնդրելը:

Սոցիալ-հոգեբանական աջակցություն՝ բարելավվում էր ներընտանեկան մթնոլորտը, աջակցություն ցուցաբերվում շահառուներին՝ դուրս գալու խոր դեպրեսիայի վիճակներից, և աճում էր սեփական ուժերի նկատմամբ վստահությունը:

Այսպիսով, հատկապես նշանակալի ենք համարում զուգորդել նյութական, ֆինանսական, զարգացողական ծրագրերը և հոգևոր աջակցությունը, ինչը հնարավորություններ է ստեղծում բարելավել ու բարեկարգել ընտանիքների կարգավիճակը՝ չհակադրելով, այլ՝ նպաստելով ընտանիքի առաջնային ֆիզիոլոգիական կարիքների բավարարման խնդիրներին:

Առաջնորդվելով Հայ առաքելական եկեղեցու քրիստոնեական վարդապետության ուսուցմամբ, բարեկարգության ու բարեկեցության՝ մարդկային կյանքի բարի կարգավորության հասնելու համար հոգևոր կյանքը դիտվում է հիմնարար, անհրաժեշտորեն գերակա, ամբողջական կենցաղավարությունը իմաստացնող, այդպիսով նաև կյանքին իմաստ հաղորդող նպատակային բաղադրիչ: Քրիստոնեական խոկումի տեսադաշտում «հոգևոր կյանք» հասկացությունն իրենում ներկայումս միասնականությամբ բովանդակում է աստվածասեր ու աստվածապաշտ, մարդասեր ու բարեգործ, Աստծո նկատմամբ հավատով, հույսով ու սիրով իր կյանքն ապրող, առաքինասեր ու փրկությունասեր, ճշմարտության (տեսականի) ու բարու (գործնականի) մեջ ուսյալ ու ներկրթյալ, աստվածամանության ձգտող յուրաքանչյուրի կեցողություն: Կարիքավոր ընտանիքների հետ «քրիստոնեական սոցիալական աշխատանքի» նպատակն է՝ ընտանեկան փոխհարաբերություններում սիրո ու հոգատարության նշանակալիության բացահայտումն ու տարածումը, արտաքին կողմնորոշվածությունից դեպի ներքին՝ հոգևոր ու կրթական խնդիրներին սահունորեն անցումը, այդ թվում՝ ունակությունների աճն ու նոր հմտություն-

ների ձեռքբերումը, աշխատանքի նկատմամբ վերաբերմունքի փոփոխումը, հոգե- ու կենսա-կրթական զարգացողական ընթացքը:

Anahit Jijyan (Armenia)

THE SPECIFICITY OF CHRISTIAN SOCIAL WORK WITH NEEDY FAMILIES IN THE REPUBLIC OF ARMENIA

The principles of Christian social work and specificity of its practice in the Republic of Armenia are discussed.

Սուրեն Սարգսյան (Հայաստան)

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԸ ԵՎ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻՆ ՈՐՊԵՍ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ

Ընդունված տեսակետի համաձայն՝ հայագիտությունը ձևավորվել է XVIII-XIX դարերում, որի համար նաև նախադրյալ են եղել հնագույն ժամանակների ու հետագայի հայկական ու օտարազգի՝ հունական, հռոմեական, միջագետքյան, իրանական, արաբական և այլ սկզբնաղբյուրները իրենց ամենատարբեր նյութական ու գրային դրսևորումներով, հնագիտական հայտնություններով և այլ միջոցներով¹:

Հավանաբար այդպիսի մոտեցումը պայմանավորված է նաև նրանով, որ, սովորաբար, արդի գիտության ու մեթոդաբանության սկզբնավորումը կապվում է XVII- XVIII դարերի հետ: Սա անշուշտ վերաբերում է գիտության առաջին համակարգի ձևավորմանը, գիտության ոլորտների ավելի համակարգված ուսումնասիրությանն ու կազմավորմանը: Սակայն այդ դեպքում անտեսվում է ժամանակի սահմանափակումներից վեր բարձրացող, դրանք հաղթահարող անհատականացված բացառությունները, այն իրական փաստը, որ առանձին գիտություններ ու մեթոդաբանական եղանակներ ձևավորվել են ավելի վաղ, և դա հատկապես կապված է նշանավոր գիտնականների, մտածողների գործունեության հետ: Նշվածի հավաստի օրինակը Հին Հունաստանն է: Բացի այդ, հատկապես հումանիտար գիտության ոլորտի համար մեթոդաբանական որոշակի ուղեցույց է նաև սեփական նպատակի իրականացման համար մտածողի, գիտնականի որդեգրած գիտահետազոտական հստակությունը, մտքի կազմակերպվածությունը, հնարավոր գիտականությունը, տրամաբանվածությունը, համակարգվածությունը, քննադատական, վերլուծական և նման այլ կարողությունները, որոնք մենք տեսնում ենք նաև Մեսրոպ Մաշտոցի ու Մովսես Խորենացու գիտահետազոտական հավատամքում և աշխատություններում: Ավելին, որոշ դեպքերում հնարավոր է մինևույն նպատակին, գաղափարին ու գիտելիքներին, ընդհանրացումներին հասնել նաև հետազոտական ու հայեցակարգային տարբեր մոտեցումներով: Իսկ հայագիտական հետազոտության առումով նշենք հետևյալը՝ դեռևս չկա գիտական կամ ընդհանուր հայագիտական միասնական մեթոդաբանություն: Ավելին, դասական հայագիտությունը ձևավորվել է տարբեր մեթոդաբանական սկզբունքներով ստացված, կուտակված արդյունքների, գիտելիքների համադրության ու համակարգման շնորհիվ: Այսպիսով, կարծում ենք, որ հայագիտությունը կարող էր ձևավորվել V դարում և դրա հավաստիքը Մաշտոցի ու Խորենացու գիտահետազոտական գործունեությունն է: **Նրանք հայագիտության առաջին ու նշանավոր ներկայացուցիչներն են, գիտության ականավոր երախտավորներ:**

Նշենք նաև հետևյալը, առանձին հետազոտողներ Մաշտոցին ու Խորենացուն համարել են հայագետներ, բայց այդ միտքը չի վերածվել հայագիտական սկզբունքային հիմնավորման, քանզի անտեսվել է հայագիտության սկզբնավորման ու կազմավորման իրողությունը բուն հայկական մշակույթի համակարգում, իսկ եթե դա չի իրականանում անորոշ ու անցողիկ է լինում նաև Մաշտոցին ու Խորենացուն հայագետ համարելը: Բայց հիշատակելի է այն, որ վերջին տարիներին ավելի մեծ ուշադրություն է հատկացվում հայագիտական հետազոտություններին, իրականանում են նոր բացահայտումներ, ձևավորվում են նոր մոտեցումներ, զարգացման միտումներ: Դա արտահայտվեց նաև հայագիտական միջազգային երկրորդ համաժողովում: Այս առումով ուշագրավ է հայագիտության

¹ Տե՛ս Վ. Բաղխտարյան., *Հայագիտության արդի վիճակը Հայաստանում և զարգացման հեռանկարները*, - Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները: Միջազգ. համաժողով, Երևան, 15-20 սեպտեմբեր, 2003: Զեկուցումների ժողովածու, Երևան, 2004, էջ 73: «Հայագիտություն», Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, Երևան, 1980, էջ 130- 133: «Հայագիտություն», Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 3, Երևան, 1999, էջ 100- 103: *Հայոց պատմություն*, Երևան, ԳԼՀ հրատ., 2012, էջ 481-85:

զարգացման չորս փուլերի պարբերացման ակադեմիկոս Յուրի Սուվարյանի տեսակետը, ըստ որի առաջին փուլը ներառում է V-IX դարերը²: ***Այս մոտեցմանը մենք տալիս ենք սկզբունքային նշանակություն, քանզի դա իր հերթին գալիս է հաստատելու մեր առաջադրած գաղափարը այն մասին, որ պետք է վերանայել հայագիտության առաջացման ժամանակի ու հիմնադիրների հարցը:***

Արդ, Մաշտոցի ու Խորենացու գիտական գործունեությունը, նրանց վերաբերյալ առկա գիտահետազոտական աշխատությունները, մեր սեփական դիտարկումներն ու եզրակացությունները հնարավորություն են տալիս նրանց համարել հայագիտության սկզբնավորողներ, որով նաև նոր արժեքավորումներ ու իմաստավորված չափորոշիչներ են առաջադրվում հայ երկու ամենանշանավոր երախտավորների գործունեության և հայագիտության առաջացման, պատմական զարգացման ընթացքի վերաբերյալ³:

Ա. Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ այն, թե որքանով է Մաշտոցը հայագետ, առավել ևս, հայագիտության հիմնադիր, կամ արդյոք հայկական գրերի (և այբուբենի) ստեղծումը ենթադրում է, որ նա հայագետ է: ***Այս հարցում մենք առաջնորդվում ենք հետևյալ համոզմունքով՝ հայոց գրի ստեղծումը հայագիտական մեծագույն հայտնագործություն է ու դրա հեղինակը պետք է լինե՞ր հանճարեղ ու բազմակողմանի զարգացած մտածող, գիտնական և, հատկապես, հայերենը խորությամբ ու համակողմանի յուրացրած լեզվաբան, հայերենագետ, լեզվաբանական հայագիտության հիմնադիր:*** Ինչպես հայտնի է, իր գերնպատակի՝ հայկական գրի ստեղծման համար, Մաշտոցը կատարել է գիտահետազոտական հսկայածավալ աշխատանք՝ ուսումնասիրել է գրային տարբեր համակարգեր, դրանց տրամաբանական ու կազմաբանական սկզբունքները, հնարավորությունները, հայերենի հետ ունեցած գոյաբանական ու իմացաբանական, իմաստային յուրահատկությունները, լեզու-գիր հարաբերությունները և այլ մանրամասներ: Սա մի բարդ աշխատանք էր, իմացական հասունացման, գիտականության, գրագիտության (գրի իմացության, գրաստեղծման իմաստով) ձևավորման հստակ ու անառարկելի չափանիշ, որը զգալիորեն շրջանցում էր V դարի գիտական, լեզվաբանական նվաճումների հնարավորությունը: Բուն լեզվաբանական ու հետազոտական տեսանկյունից հատկանշական է նաև այն, որ Մաշտոցը տիրապետել է հունարենին, ասորերենին, պարսկերենին, վրացերենին: Հատուկ ուշադրություն է դարձրել հատկապես հունարեն-հայերեն էթնոլեզվական համեմատությունների պարզաբանմանը, հունարեն գրի յուրահատկությունների ուսումնասիրությանը: Մաշտոցի գործունեության ընդհանուր բնութագիրը հետազոտողները՝ Ա. Մեյե, Հ. Աճառյան, Էդ.Ադայան և ուրիշներ, բնորոշել են որպես ստեղծագործություն, մեծագույն հայտնագործություն: Եվ հատկանշական է, որ.

- մաշտոցյան գիրը՝ լեզվաբանական, հոգեբանական, մարդաբանական առումներով լիարժեքորեն համապատասխանում էր հայերենի հնչյունային համակարգին, դառնում դրա հաստատագրված արտահայտչամիջոցը, հոգևորի իմաստավորման նոր արտահայտությունը,

- հայոց լեզուն նաև անցում էր կատարում բնապատմական, էթնոպատմամշակութային զարգացման, ինքնաբացահայտման, ինքնաձևավորման մի նոր, ավելի բարձր մակարդակի՝ հարուստ գրավոր խոսքի ու գրավոր մշակույթի,

- ինչպես հայն իր մարդակազմությամբ, հոգեկերտվածքով, էթնիկ այլ յուրահատկություններով, լեզվով տարբերվում էր այլ ազգերից, այդպիսին է դառնում նաև նրա գիրը՝ որպես զուտ հայկական իրողություն, հային այլ ազգերից տարբերակող գոյաձև:

Այս և մասնագետների կողմից հիշատակվող. մեր կողմից առաջադրվող այլ մանրամասներ ու յուրահատկություններ վկայում են այն մասին, որ Մաշտոցը հանճարեղ հայերենագետ էր, հայոց լեզվամտածողությունը, լեզվի հոգեբանությունը յուրացրած, գրաստեղծման նրբություններն ու նշանակությունը խորությամբ գիտակցող լեզվաբան, ում ստեղծած՝ գրային հարուստ ու ինքնատիպ համակարգը լավագույններից է աշխարհում: «Հայերեն այբուբենին իր արժեքը տվողը հենց այն է, որ այդ ստեղծագործության հեղինակը չի կաշկանդվել նախապես գոյություն ունեցող սովորույթներով և տվել է իր լեզվի հնչյունական համակարգի հարազատ պատկերը... Ամենքին հայտնի է, որ հայերեն այբուբենի համակարգը գոյութգործոց է.... նա սկզբից ևեթ կատարյալ էր»⁴:

Բ. Մաշտոցի իրականացրած հայագիտական աշխատանքը ավելի հիմնավորեց ու բազմակողմանիորեն հարստացրեց Մովսես Խորենացին, ում անառարկելիորեն կարելի է համարել հայագիտության մեծագույն ռաիվիրան, հայոց հնադարյան պատմության ու հայկականի վերծանողը: Հայոց պատմության ամբողջական շարադրանքը և «Հայոց պատմության» մի շարք արժանիքներ՝ հնարավորություն են տալիս պնդել, որ հայ գրավոր մշակույթի համակարգում ձևավորվում է հայագիտությունն իր իսկական իմաստով՝ որպես գիտելիքի ու գիտության հատուկ դրսևորում, հայագիտության ընդհանուր համակարգի ենթահամակարգ՝ ***պատմագիտական հայագիտությունն իր տարրեր հիմնավորում-***

² Տե՛ս Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով...Լիսպոմար միստերի գեկուցումներ, Երևան, 2013, էջ 32-33:

³ Այդ մասին մանրամասն տե՛ս մեր (իմ) հեղինակած աշխատությունը՝ **Ս. Ա.Սարգսյան-Կատվայան, Հայագիտության ձևավորման ժամանակի ու հիմնադիրների հարցի շուրջ**, Երևան, 2013:

⁴ **Ա. Մեյե, Հայաստանի, հայերի ու հայերենի մասին:** Կազմող և խմբագիր Ֆ. Խլղաթյան, Երևան, 2006, էջ 34, 35:

ներով ու հնարավոր գիտական, մշակութային, փաստագրական, մեթոդաբանական մանրամասներով, պատմագիտությանը բնորոշ այլ հայագիտական իրողություններով, օրինակ, աղբյուրագիտություն, ժամանակագրություն և այլն: Այս նույն մոտեցմամբ, կարելի է հավաստիորեն պնդել, որ Խորենացին ոչ թե պարզապես պատմագիր է, այլ պատմագետ է անցյալի ու ներկայի, նաև հայագիտության չափանիշներով: *Սա վկայում է, որ Մաշտոց - Խորենացի գիտահետազոտական աշխատանքը հայոց մշակույթի պատմության մեջ սկզբնավորում է ազգային մշակույթի մի նոր կայուն բնագավառ՝ հայագիտությունը:*

Խորենացու ձևավորած պատմագիտական հայագիտության հիմնական նվաճումներից է հետևյալը՝ այն մնայուն ելակետ ու կողմնորոշիչ դարձավ տվյալ ոլորտի, ու, ընդհանրապես, հայագիտության հետագա զարգացման համար և այդ ուղղվածությունը պահպանվում է մինչև օրս: Այդ իրականացնելու համար, նա առաջադրել է գիտահետազոտական մի լայնածավալ աշխատանք՝ հավաստի ու ամբողջական դարձնել հայոց ծննդաբանությունը, հայոց նահապետների, նախարարությունների ձևավորման ընթացքն ու ազգաբանությունը⁵: Այս ընդհանուր համակարգում Խորենացին «Պատմության» մեջ շարադրել, արձանագրել է էթնոագգային, արժեքաբանական, հասարակական, քաղաքական, մշակութային հնչեղություն ունեցող բազմաթիվ իրադարձություններ, փաստեր, եղելություններ, Հայաստանի ու հայոց էությանն ու նկարագրին վերաբերող բացահայտումներ, բնորոշումներ, որոնք հայոց պատմության ներքին ու արտաքին հարաբերությունների, զարգացումների, հայոց ու նրա պետական կազմավորման ընթացքի իմացության վերաբերյալ ունեն էական նշանակություն: Բայց մեր կարծիքով նրա գիտահետազոտական աշխատանքը ու հայագետ լինելու առաքելությունը պայմանավորված է ոչ միայն դրանցով, որոնցում անհրաժեշտաբար կարող են լինել նաև սխալներ, վրիպումներ, բացթողումներ, այլ հիմնական գաղափարական, մեթոդաբանական սկզբունքներով, ազգային իղեալներով, գիտահետազոտական աշխատանքի ոճով: Խորենացու շարադրանքին ու ընթերցումներին բնորոշ են նաև հիմնավորվածությունը, տրամաբանվածությունը, համակարգվածությունը, պատմական նյութի ու փաստերի նկատմամբ քննադատական վերաբերմունքը, որոնցով ավելի հավաստի է դառնում նրա գիտահետազոտական նվաճումը: Այս համակարգում հիշատակելի ենք համարում նաև հետևյալները՝

ա. հայոց պատմության իմացությունը, ազգաճանաչումը որպես ազգային գիտակցության, ինքնաճանաչման, ինքնարժեքավորման անհրաժեշտ հրամայական, որոնք բխում են նրա առաջադրած *հայի «փոքր ածու», «բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնը»* լինելու, *«Ողբի»* համադրությամբ ձևավորված գաղափարական հասունացումից: Դա կարևոր ուղերձ էր հայոց ապագա սերունդներին, հետազոտողներին, մշակութային ու պետական գործիչներին, ողջ հայ ժողովրդին,

բ. Խորենացու պատմագիտական, հայագիտական հայացքները ներծծված են նաև ուշագրավ պատմափիլիսոփայական իմաստավորումներով, որոնց թվում կարելի է ներառել պատմության ընթացքի, իմաստի ու պատմականության, պատմական հիշողության վերականգման սկզբունքները և այլն:

Խորենացին գործադրել է նաև գիտահետազոտական որոշ մեթոդներ (հնարներ), կողմնորոշիչներ, որոնց համար հիմնականը հետազոտության առարկայի՝ հայոց պատմության և նպատակի՝ այդ պատմության ամբողջության, ինքնատիպության, հանգուցային պահերի բացահայտումն է: Այս խնդիրների լուծումը նա իրականացրել է հետևյալ եղանակներով՝ պատմահամեմատական ու պատմաքննական, վերլուծական ու համադրական, փաստագրական-տրամաբանական-տեսական, առասպելականի, կրոնականի և իրականի, գիտականի զատում, տարանջատում, դրանց առանձնահատկությունների գիտակցում, տրամաբանությունից զուրկ պատկերացումների բացառում և այլն:

Ամփոփելով շարադրվածը, նշենք հետևյալը՝

Եթե դասական հայագիտության նվաճումները ընդունենք որպես չափանիշ և համեմատենք Մաշտոցի ու Խորենացու գիտահետազոտական աշխատանքների ու հիմնական նպատակների հետ, ապա կարելի է պնդել հետևյալը՝ նրանք կատարել են նույնը, ինչը Մ. Մեբաստացին, Մ. Չամչյանը, Մ. Ադոնցը, Ա.Այտընյանը, Ք.Պատկանյանը, Դ.Ալիշանը, Հ.Պետերմանը, Ֆ. Վինդիշմանը, Հ. Հյուբշմանը, Ա. Մեյեն և ուրիշներ, որոնք, սակայն, իրենց տրամադրության տակ ունեցել են ավելի շատ ու բազմակողմանի սկզբնաղբյուրներ, հետազոտական պայմաններ, միջոցներ, գիտական մտքի զարգացման հսկայական ավանդույթ: Այնինչ, Մաշտոցը և Խորենացին ստեղծել են գրեթե զրոյական վիճակից, ամրապնդել են գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու կշռադատվածությունը, ուղղվածությունը հաղորդել գիտահետազոտական ու հայագիտական աշխատանքների իրականացմանը: Ավելին, Մաշտոցի ու Խորենացու կատարածի շնորհիվ նորովի է իմաստավորվում դարը ներկայացնող մյուս երևելիների՝ Բուզանդի, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Թարգմանիչների, քերականների, աստվածաբանների գիտամշակութային գործունեությունը հայագիտական հարստացումներով ու լրացումներով:

⁵ **Մովսես Խորենացի, Պատմություն հայոց:** Գրքերից աշխարհաբարի թարգմանությունը, ներածությունը, ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 6:

րով: Այդ ամենի առավել կարևոր դրսևորումներից է նաև «Աշխարհացոյցը», անկախ նրանից Խորենացին է նրա հեղինակը, թե Ամանիա Շիրակացին, բայց այն զգալիորեն համադիր է նաև «Հայոց պատմությանը», ունի հայագիտական ակնառու նշանակալիություն ու հայ քարտեզագիտության ու աշխարհագրության մեծագույն հավաստիքներից է: Այսպիսի և այլ կարգի նվաճումների շնորհիվ է **ձևավորվել հայագիտության հայկական առաջին համակարգը, որը հիմք էր դառնալու նաև հայագիտության հետագա զարգացման համար ընդհուպ մինչև մեր օրերը**: Այս ամենը պարտավորեցնող նշանակություն ունի ներկայիս հայագետների համար: Մեր օրերի հայագետների, հատկապես հայ հետազոտողների հիմնական նպատակներից պետք է լինի ավելի մեծ ուշադրություն դարձնել հայագիտության ձևավորման ու զարգացման ընթացքի բացահայտմանը, հաղթահարել այն սահմանափակությունները, որոնք գալիս էին խորհրդային գաղափարախոսության ու մտածողության թելադրանքով, կամ զանազան երկրներում գործող կեղծ հայագետների, հայագիտության զեղծարարների հորինվածքների արդյունք են՝ հակադիր հայոց պատմությանը, մշակույթին, հայագիտության զարգացման հեռանկարներին: Հայագիտության անելիքները նույնքան անսահման ու խորն են, ինչպես հայոց մշակույթն ու պատմությունը իրենց հայտնի ու անհայտ դրսևորումներով, հասկացվածով ու չհասկացվածով, առեղծվածներով:

Ժամանակն է, որպեսզի պետականորեն գիտակցվի այն իրական փաստը, որ հայագիտությունը հայ մշակույթի ամենակարևոր ոլորտն է, նաև ունի քաղաքական գոյնեղություն, Հայաստանի ու հայոց անվտանգության իրականացման համար պետք է ունենա ռազմավարական կողմնորոշվածություն հայաստանյան ու միջազգային չափանիշներով: Հետևաբար, հայագիտության հեռանկարային զարգացումների համար անհրաժեշտ են հոգեբարոյական ու գիտական մոր քարենպաստ պայմաններ ու, առավելապես, դրամական ներդրումներ:

Suren Sargsyan (Armenia)

MESROP MASHTOTS AND MOVSES KHORENATSI AS FOUNDERS OF ARMENOLOGY

According to the accepted point of view, Armenology was established in the 18th-19th centuries. These assertions were based on Armenian and foreign sources. Unlike that view, we share an opinion that Armenology was founded in the 5th century and genius thinkers, scholars Mesrop Mashtots and Movses Khorenatsi played a great role in that process.

Հայկ Սուքիասյան (Հայաստան)

ՊՈՍԿԵՍՈՒՄՈՒՄ, ԹԵ՞ՆԵՈՏՈՏԱԼԻՏԱՐԻԶՄ

Հասարակություն-պետություն փոխհարաբերությունների հիմնախնդիրը միշտ էլ առաջնային հիմնախնդիրներից է եղել քաղաքական գիտության համար: Որպես պետության կառավարման լավագույն ձև, հասարակություն-պետություն, անհատ-պետություն փոխհարաբերությունների լավագույն մոդել՝ ընդունված է համարել ժողովրդավարությունը: Ժողովրդավարության վերաբերյալ հետազոտությունները անցյալում և ժամանակակից քաղաքագիտության համար չեն դադարում մնալ որպես հետազոտության առաջնային հիմնախնդիրներ: Մարդկության քաղաքական և հասարակական զարգացմանը համընթաց՝ ավելանում են ժողովրդավարության վերաբերյալ տարատեսակ մոտեցումները, հետազոտողների կողմից առաջարկվում են ժողովրդավարական կառավարման վերաբերյալ տարբեր մոդելներ: Այսօր էլ այդ գործընթացը շարունակվում է և մեծ թափ է հավաքել՝ կապված հատկապես 1960-ական թվականներին սկիզբ առած տեղեկատվական-տեխնոլոգիական հեղափոխության հետ:

Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հսկայական ճեղքում առաջացրեց քաղաքագիտական հետազոտությունների համար և ծնունդ տվեց լավատեսական հեռանկարների ժողովրդավարական սպասումների տեսանկյունից: Կանխատեսումները արդարացիորեն լավատեսական էին՝ քաղաքական և քաղաքացիական մասնակցության մակարդակի աճ, ընդ որում՝ մասնակցության այդ ձևերը պետք է որակապես տարբերվեին նախկին ձևերից, ուղղակի կամ մասնակցային ժողովրդավարության վերականգնման հնարավորություն, քաղաքական տեղեկատվության հրապարակայնություն և քաղաքացիների համար դրանց առավել լայն հասանելիություն, ընտրությունների էլեկտրոնային անցկացման եղանակներ և այլն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժողովրդավարության պայմաններում պարզադիր է իշխանության գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողությունը, ապա ակնհայտ է, որ տեղեկատվական հասարակության պայմաններում իշխանության նկատմամբ հասարակական վերահսկողության հնարավորությունները, առավել քան երբևէ,

ավելանում են՝ ավելի արդյունավետ փոխգործակցության և բազմակողմ դիսկուրսի միջոցով՝ հիմնված ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների հնարավորությունների վրա:

Քաղաքականության մեջ տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը իրական հնարավորություններ ստեղծեց ուղղակի ժողովրդավարության վերականգնման համար:

Օրինակ՝ ինտերնետը հնարավորություն է տալիս իշխանության և քաղաքացիների միջև էլեկտրոնային հետադարձ կապի շնորհիվ իրական ժամանակում ապահովել մշտական հասարակական-քաղաքական քննարկում՝ ընձեռելով իշխանական կառույցների հիերարխիկ բուրգի հաղթահարման իրական հնարավորություն: Հետևաբար, քաղաքացիների կախվածությունը ինստիտուցիոնալ միջնորդներից, կուսակցական կազմակերպություններից և շահերի խմբերից, տեսականորեն պետք է նվազի և փաստացի կարող է հասնել նվազագույնի: Սա ուղղակի ժողովրդավարության վերականգնման ակնհայտ օրինակ է:

Գլոբալ ցանցը կարող է նպաստել քաղաքական մասնակցության մակարդակի նվազման նկատվող միտումների հաղթահարմանը, քանի որ հեշտացնում է քաղաքացու և կառավարության միջև ուղղակի շփումների հնարավորությունը: Ինտերնետը նվազեցնում է քաղաքական գործունեության հնարավոր ուղիների համաձայնեցման ծախսերը համանման հայացքների տեր, սակայն իրական աշխարհում միմյանց հետ չհամագործակցող անհատների միջև:

Ինտերնետը նկատելիորեն ընդլայնում է անհատների և հասարակական կազմակերպությունների քաղաքական գործունեության շառավիղը: Շնորհիվ օնլայն ռեժիմով հաղորդակցության և դրա ոչ բարձր գնի՝ կարելի է ձևավորել ամբողջ աշխարհին ընդգրկող վիրտուալ կոալիցիաներ, այսպես կոչված՝ «չտարբերակված հանրություններ»: Դրանք կարող են միավորել համախոհներին և նրանց, ովքեր իրենց առջև դնում են միանման նպատակներ: Դրանց անդամները կարող են օգնել միմյանց՝ փոխանակելով տեղեկություններ, մշակելով կամ գործնականում իրականացնելով գործողությունների ռազմավարություն: Համաշխարհային սարդոստայնի օգտագործման շնորհիվ՝ քաղաքական գործընթացի ցանկացած մասնակից գործնականում կարող է ուղարկել իր հաղորդագրությունները անասհմանափակ թվով պոտենցիալ հասցեատերերի: Արդյունքում ձևավորվում է մի իրավիճակ, որը ստիպում է վերախմաստավորել անձի քաղաքական մասնակցության դերի և հնարավորությունների մասին հնացած պատկերացումները: Նման մասնակցությունը ընկալվում է որպես առանձին անձանց՝ քաղաքական որոշումների ձևակերպման և ընդունման գործընթացի վրա ազդելու նախաձեռնություն: Ինտերնետի կիրառմամբ ստեղծվում են այսպիսի մասնակցության աննախադեպ հնարավորություններ:

Որոշ հեղինակներ, օրինակ, խոսելով «Ինտերնետ և ժողովրդավարություն» հիմնախնդրի մասին, էականը համարում են անձի՝ կառավարության և քաղաքականության վրա ազդելու հնարավորությունը: Որքան ավելանում են քաղաքացիների՝ կառավարության հետ անմիջական, ուղղակի կապի հնարավորությունները, այնքան ավելի ներգրավված կլինեն նրանք քաղաքականության մեջ, իսկ դա հասարակական կյանքի ժողովրդավարական փոխակերպման հիմնական չափանիշներից է: Թեև որոշումների ընդունման ժամանակ «վերջին խոսքը» պատկանում է իշխանական լիազոր մարմիններին, այդուհանդերձ այդ որոշումների լեգիտիմությունը և իշխանության նկատմամբ հասարակական վստահությունը էականորեն մեծանում է հասարակայնության նմանօրինակ լայն մասնակցության պարագայում: Որքան խորն ու բովանդակալից ընթանա այս փուլի զարգացումը տեղեկատվական հասարակությունում, այնքան բարձր կլինի տվյալ երկրում մասնակցության ժողովրդավարության մակարդակն ու նրա սոցիալական կապիտալը:

Ինտերնետը մեծ հնարավորություններ է ընձեռում ընդդիմադիր հայացքներ արտահայտելու և քաղաքական տարաբնույթ հարցերի վերաբերյալ բողոքական վարքի դրսևորման համար: Վերջին տարիներին, օրինակ, կտրուկ աճել է հակազլոբալիստական բովանդակությամբ կայքերի թիվը: Արդյունքում՝ այս կայքերը կարևոր միջազգային հանդիպումների և համաժողովների անցկացման առնչությամբ վերածվում են տարբեր երկրների քաղաքացիների բողոքական վարքի դրսևորման գլխավոր տեղեկատվական աղբյուրի: Դա ակնհայտորեն դրսևորվում է Առևտրի համաշխարհային կազմակերպության, Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի համաժողովների օրերին: Այս առումով ինտերնետը նոր, չափազանց արդյունավետ գործիք է, որն օժտված է միջազգային և գլոբալ ներուժով: Հաշվի առնելով առաջադրված խնդիրը և ցանցային ընդգրկման ծավալները՝ այս ներուժը հնարավորություն է ընձեռում համաշխարհային հանրության և հնարավորինս շատ երկրների կառավարությունների վրա ճնշում բանեցնելով արգելափակել կամ, ընդհակառակը, օգնել իրականացնելու այս կամ այն քաղաքականությունը: Ավտորիտար վարչակարգերի գործունեության պայմաններում իշխանության չարաշահման փորձերը և տարբեր բռնի գործողությունների սաստկացումը վայրկենապես արժանանում են միջազգային հանրության գնահատականին՝ շնորհիվ տեղեկատվության տարածման էլեկտրոնային միջոցների:

Տեղեկատվական հասարակության պայմաններում հատուկ հետաքրքրության առարկա է ինտերնետ-տեխնոլոգիաների օգտագործմամբ էլեկտրոնային քվեարկության խնդիրը: Դա կապված է այն բանի հետ, որ բազմաթիվ երկրներում ընտրական արշավները ուղեկցվում են սոցիալական լարվա-

ծության կտրուկ աճով, հասարակական կյանքի ապակայունությամբ՝ առանձին դեպքերում սոցիալական պայքարունակների դրսևորումներով: Նմանատիպ բացասական երևույթներ դրսևորվում են նաև ՀՀ-ում խորհրդարանական և, հատկապես, նախագահական ընտրությունների ժամանակ: Տարբեր երկրների՝ էլեկտրոնային քվեարկության հաջողված փորձերը վկայում են նմանատիպ բացասական երևույթների նվազեցման արդյունավետության մասին¹:

Սակայն այս ամենով հանդերձ ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը ոչ միայն հնարավորություն է ստեղծում ժողովրդավարական գործընթացների կատարելագործման համար, այլև ստեղծում է լայն հնարավորություններ պետական վերահսկողության գործիքակազմի համալրման համար:

Այսօր արդեն քաղաքացիական հասարակության վերահսկողությունը և ճնշումը քաղաքական իշխանության նկատմամբ այնքան է մեծացել, որ համաշխարհային մակարդակով, նույնիսկ պարզ դիտարկմամբ, նկատվում է իշխանության լեգիտիմության անկում: Արդյունքում քաղաքական իշխանությունն էլ իր հերթին ուժեղացնում է իր ավտորիտար վերահսկողության միջոցները այդ նույն տեղեկատվական տեխնոլոգիաների շնորհիվ:

Այսօր համակարգչային ցանցերում և տարատեսակ էլեկտրոնային տվյալների բանկերում կուտակվում և պահվում են ձեռնարկությունների, պետական և հասարակական կազմակերպությունների, առանձին քաղաքացիների գործունեության վերաբերյալ բազմաքանակ և բազմազան տեղեկություններ: Այս տեղեկությունների վերլուծությունն ու ապօրինի օգտագործումը իրական հնարավորություն են ստեղծում քաղաքական և արդյունաբերական լրտեսության, հասարակական գիտակցության մանիպուլյացիայի, անձի նկատմամբ լիակատար վերահսկողություն իրականացնելու համար: Հետագայում հասարակության տեղեկատվացման և զրբալացման գործընթացների զարգացմանը զուգահեռ՝ այդ հանցագործությունների հնարավորությունները արագորեն կընդլայնվեն: Չէ՞ որ տեղեկատվական հասարակությունում ոչ միայն մարդկանց գործունեությունն է դառնում ավելի «թափանցիկ», այլև հենց հասարակությունն է ավելի ու ավելի սերտորեն կապվում ժամանակակից տեղեկատվական հաղորդակցությունների հետ: Դրան առանձնապես նպաստում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ ապրանքների և ծառայությունների էլեկտրոնային վճարման եղանակի լայնորեն տարածումը, էլեկտրոնային փոստի, ինտերնետ-հեռախոսների և բջջային ռադիոհեռախոսակապի զարգացումը: Մարդկանց տեղեկատվական փոխգործակցության այս բոլոր նոր միջոցները խոցելի են դառնում տեղեկատվության ապօրինի օգտագործման առումով, ուստի և հեշտությամբ կարող են օգտագործվել մրցակիցների, քաղաքական հակառակորդների և քրեական տարրերի կողմից²:

Ժամանակակից տեղեկատվական տեխնիկայի օգնությամբ քաղաքական և ոստիկանական վերահսկման վտանգը դառնում է ավելի ու ավելի իրական: Այսպես, 1970-ական թթ. ամերիկյան հասարակությանը հայտնի դարձավ, որ Կենտրոնական հետախուզական վարչությունը իր համակարգչային տվյալներում ներառել է 3000 «անբարեհույս» համերկրացիների անուններ: Բազմաթիվ քաղաքական գործիչների վերաբերյալ տեղեկատվություն է հավաքվել էլեկտրոնային թղթապանակներում: Բջջային հեռախոսներից օգտվող շվեյցարացիների բոլոր տեղաշարժերին հետևում է հզոր համակարգիչը: Այն կարող է օգտագործվել աշխատողների և ծառայողների ամենօրյա գործունեությանը հետևելու համար: Ռուսաստանում կապի նախարարությունը որոշում է կայացրել տեխնիկական միջոցների համակարգ տեղադրել բոլոր հեռախոսային ցանցերի էլեկտրոնային հեռախոսային կայաններում՝ օպերատիվ-հետախուզական գործողությունների ապահովման նպատակով³: Ռուսաստանում փորձ էր արվում ներդնել «էլեկտրոնային չիպի» հայեցակարգը: Սա իրենից ներկայացնում էր մի գործընթաց, երբ քաղաքացիների բոլոր սոցիալական գործողությունները պետք է կատարվեին այդ չիպի միջոցով: Արդյունքում ստեղծվում էր մի իրավիճակ, որ պետությունը ցանկացած պահի կարող էր անջատել այդ չիպը, և քաղաքացին կարող էր ապրել այսպես կոչված «սոցիալական մահ»: Նման փաստերի թվարկումը կարելի է շարունակել: Բայց հատկապես վտանգավոր է այն, որ տեղեկատվության նկատմամբ վերահսկողությունը հաճախ օգտագործվում է քաղաքական չարաշահումների նպատակով՝ սկսած տեղեկատվությունը գաղտնի պահելուց մինչև այն ապօրինաբար գաղտնագերծելը և քաղաքական պայքարի այլ ձևերի ժամանակ այս կամ այլ անձանց արատավորելու համար: Որոշ սոցիոլոգներ հիմնավոր կերպով նշում են, որ ներկայումս տեղեկատվական տեխնիկայի միջոցով անձանց ոստիկանական և քաղաքական վերահսկման վտանգը դառնում է ավելի ու ավելի ակնհայտ: ԱՄՆ-ի կոնգրեսի նախկին սենատոր Ս. Էրվինը նշում է, որ երկրի՝ գործնականում բոլոր քաղաքացիների

¹ Вердероса Э. Электронные выборы в Бразилии. Государственное управление в переходных экономиках: ежеквартальное издание программы “Инициатива реформирования местного самоуправления и государственных услуг”. Институт открытого общества. 2003, с. 22-23.

² Մորիսյան Հ., *Տեղեկատվական հասարակություն. սոցիալ-քաղաքական հիմնախնդիրներ*, Երևան, «Սարվարդ» հրատ., 2009, էջ 214-215:

³ Смолян Г. Сетевые информационные технологии и проблемы безопасности личности. “Информационное общество” №1, 1999, с. 21-25.

վերաբերյալ գոյություն ունեն հսկայական քթապանակներ, որոնք պահվում են մեծ քանակությամբ պետական տվյալների բանկերում: Այդ մասին տեղեկություն տրամադրող 54 գործակալություններ զեկուցել են 858 տվյալների բանկերի գոյության մասին, որոնք պարունակում են անհատների վերաբերող 1.25 մլրդ ձայնագրություններ⁴:

Էլեկտրոնային միջոցներն օգտագործվում են բանկային հաշիվները ստուգելու, առողջության վիճակին ծանոթանալու, գաղտնալսումներ իրականացնելու և մարդկանց հետևելու համար: Յուրաքանչյուր գործնական համաձայնություն պլաստիկ փողերի և առևտրային գործարքների համակարգչայնացման պարագայում կարող է հայտնի դառնալ: Տեղեկատվական հասարակությունում շարքային քաղաքացին, գտնվելով երկրագնդի ցանկացած կետում, կարող է փոխանցել և ստանալ ցանկացած տեղեկատվություն տեսողական, ձայնային կամ տեքստային ձևով: Մարդիկ կսկսեն անմիջականորեն ավելի քիչ շփվել իրար հետ և զգալիորեն զրկվել այն բանից, ինչը մենք անվանում ենք անձնական կյանք: ՀՀ-ում ճանապարհատրանսպորտային երթևեկի վերահսկման և կարգավորման համար տեղադրված նկարահանման սարքերը, ինչպես նաև սպասվելիք էլեկտրոնային անձնագրերի ներդրումը կարող են ծառայել նաև մարդկանց տեղաշարժերի էլեկտրոնային վերահսկմանը թույլ քաղաքացիական հասարակության պայմաններում⁵: Այս պայմաններում ժողովրդավարության բազմաթիվ ձեռքբերումներ, ինչպիսիք են՝ անձնական կյանքի անձեռնմխելիությունը, մամակագրության գաղտնիությունը, բժշկական և ծառայողական գաղտնիքները և այլն, կարող են վերածվել դատարկ հռչակագրերի, որոնք իրական կյանքի հետ ոչ մի ընդհանուր բան չեն ունենա:

Այս համատեքստում հարց է առաջանում. արդյո՞ք տեղեկատվական տեխնոլոգիան նպաստում է նոր տեսակի ժողովրդավարության ստեղծմանը, թե՞՝ ճիշտ հակառակը, պայմաններ է ստեղծում էլեկտրոնային դիկտատուրայի կամ նոր տոտալիտար վարչակարգերի ստեղծման համար:

Բնականաբար, տեղեկատվական տեխնոլոգիան վերջնականորեն չի կանխորոշում քաղաքականության բնույթը, որը կարող է լինել ինչպես ժողովրդավարական, այնպես էլ՝ հակաժողովրդավարական: Սակայն, այնուամենայնիվ, այն քաղաքականության վրա մեծ ազդեցություն ունի:

Hayk Sukiasyan (Armenia)

POST-DEMOCRACY OR NEO-TOTALITARIANISM?

In the modern world the development of the latest information technologies cause profound transformations in all spheres of public life. Under their influence the global metamorphosis is experienced in the system of state administration. Information technologies have generated both positive and negative phenomena. Some theorists argue that further development of information technologies will lead to more effective democratization of political processes in the society. Some political scientists even speak about the restoration of direct democracy referring to the concept of e-democracy or e-government. Other authors, on the contrary, speak about the excessive strengthening of state control over society. Thus, the question is will the application of advanced information technologies in socio-political life to true democracy or to neo-totalitarianism?

Ռոմիկ Քոչարյան (Հայաստան)

ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱԿԱՆ ԽՆԴՐԱԿԱՐԳԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՈՒՄԵՎ ՍՈՎՄԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

1. Պատմության գոյությունում անհրաժեշտորեն ու նաև նախընտրելիորեն առնչվում ենք **խկության գոյության**¹, կամ այլ կերպ ասած՝ **խկության ներկայության** խնդրին: Ինչպե՞ս է եղելության որպիսությունը ներկայանում մարդկային անձին որպես խկություն: Այս հարցի պատասխանին է մերձեցնում պատմության ու հերմենևտիկայի հարաբերակցության բացորոշումը: Պատմության և հերմենևտիկայի հարաբերությունը չի ներկայանում որպես առանձին գիտաճյուղերի հարաբերություն: Հերմենևտիկայի խնդրակարգը սկզբունքորեն ներկա է պատմության մեջ: **Պատմությունը որպես**

⁴ Նույն տեղում:

⁵ Օրդովանյան Է., Սուքիասյան Հ., Քաղաքական մշակույթի առանձնահատկությունները Հայաստանում, Երևան, «Լուսաբաց», 2012, էջ 87:

¹ Հերմենևտիկական իրադրությունում այս կարևորագույն խնդրակարգը հետազոտվել է՝ Քոչարյան Ռ., Հանս-Գեորգ Գադամերի փիլիսոփայական հերմենևտիկան, Եր., 2006:

այդպիսին իր գոյությամբ՝ մեկնողական է: Հասկացման ու մեկնաբանության խնդրակարգն անհրաժեշտորեն ու հենց հիմնարար ներհյուսված է պատմության որպես այդպիսին գոյությամբ:

2. Պատմության գոյությունը ներկայանում է հիմնականում որպես երեք փուլերի՝ **պատմական մյուսի հավաքման, հետազոտության ու շարադրանքի եռամիասնություն**, կամ միայն երկու փուլերի՝ **հետազոտության ու շարադրանքի երկմիասնություն**: Հերմենևտիկայի խնդրակարգը Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում ներկա է պատմության կատարումի բոլոր այս փուլերում: Հեղինակն առնչվում է **խկության ներկայության** խնդրին՝ հասկանալով ու մեկնողաբար բացորոշմամբ ամրագրելով այն: Հետազոտական փուլում հերմենևտիկայի խնդրակարգը ներկա է պատմաբան հեղինակի կողմից եղելությունների իսկության, հասկացման մեջ: Պատմությունն իր **հետազոտական փուլում** կայանում է որպես **իսկության բացահայտություն ու հենց ներկայություն՝ հասկացման ուղիով և հենց ճշմարտորեն կազմակերպված հասկացման մեջ**:

3. Պատմության **շարադրանքում** ևս առնչվում ենք **իսկության ներկայության** խնդրին: Քանզի պատմության շարադրանքը ներկայանում է որպես պատմումի յուրահատուկ կերպով **մեկնողաբար բացորոշմամբ՝** ընթերցողի հասկացման կարողությանն ու ձգտմանը արդեն իսկ հասկացյալ իսկությունները հայտող իմաստների միահյուսություն ներկայացող «պատմության տեքստ» արարող գործունեություն: Պատմության շարադրանքում իրագործվում է, իսկ ավելի ճշգրիտ՝ անհրաժեշտ ու մասնախընտրելի պիտոյականությամբ **պե՛տք է իրագործվի** եղելությունների՝ արդեն հետազոտության փուլում նախապես **հասկացյալ իսկությանն աղեկվատ պատմում**: Ավելին՝ շարադրանքում պատմիչ հեղինակն առնչվում է, պատմվող իսկության աղեկվատությունն անխախտ պահելու պայմանով, այդ իսկությունը մարդկային հասկացման կարողությանն այնպե՛ր ու այնչափ մեկնողաբար բացորոշմամբ մատուցելու խնդրի հետ, որ տեքստով «ասված իսկությունը» ընթերցողի հասկացման ձգտմանն ու ջանքին ներկայանա **նույնորոշելի ու կրկնորոշելի** իր որպիսությամբ:

Պատմությունը կարող է կայանալ ըստ իր կոչման և ուրեմն՝ **նախընտրելի իսկությամբ միմիայն այնժամ, երբ իբրև հետազոտություն՝ կայանա որպես աշխարհի, որում և՛ մարդկային ինքնության, կյանքի ու մշակույթի, նշանակալի եղելումի իսկությունը հայտող իմաստների ու դրանց պատճառականությամբ ներկապակցված միահյուսության հասկացում և իբրև շարադրանք՝ մեկնողաբար հյուսմամբ ներկայացված բացորոշություն**:

4. Հերմենևտիկական խնդրակարգը ներկա է մաս ընթերցողի կողմից **պատմության տեքստի ընթերցանությունում**: Ամենայն պատմիչ և կոնկրետորեն՝ Մովսես Խորենացին, պատմության իր շարադրանքի դիտավորություն, կերպարանում ու կատարում ունի՝ հայտնել բովանդակ ու միահյուս այդ իմաստը, որում և՛ իմաստության խորհուրդները, «ընթերցասէր»² և «ուսումնասէր»³ ժամանակակիցներին ու սերունդներին՝ ի հասկացում ու իմաստացում: **Պատմությունը որպես շարադրանք, որում և՛ հեղինակի կողմից հասկացված իմաստի մեկնողաբար բացորոշմամբ իրագործված ամրագրում, հղված է ընթերցողի հասկացմանը**: Պատմությունը արդեն հասկացված և-կամ խորհրդածությամբ **էական** նկատված իմաստները մեկնողաբար բացորոշությամբ հղում է ընթերցողի հասկացմանը, դիտավորություն, ըստ այդմ՝ կերպարանում ու կատարում ունենալով՝ մաս կենսագործել հասկացված **իսկության և իմաստության խորհուրդի ներկայության հնարավորություն** ամենայն «ընթերցասէրի» և «ուսումնասէրի» ինքնության ու այլոց հետ համակեցության ներկայում ու ապագայում: **Պատմության գոյությունն ինքնանպատակ չէ**: Պատմությունը հասկանալով ու իր պատմամբ՝ մեկնողաբար բացորոշելով իսկություն, ըստ էության, պատմում է իմաստություն, որով և իմաստության կոչում ընթերցող ու հասկացման ձգտող՝ «ուսումնասէր» ամենայն անձանց ինքնությունն ու կենսակերպը: **Պատմության որպես այդպիսին գոյությունը կոչված է մարդու ինքնահասկացմանը՝ նրա ինքնությանն առնչվող ամենայնի՝ աստվածային ու մարդկային իրողությունների, կյանքում եղելումի իսկության և հենց այդ առնչության բուն նշանակության հասկացմամբ ու մեկնողաբար բացորոշմամբ**: Նկատի ունենալով պատմության ու հերմենևտիկայի այսպե՛րպես հարաբերակցությունը՝ կարելի է արձանագրել, որ **պատմությունը գիտություն է՝ աշխարհի, որում և՛ մարդկային ինքնության, կենսակերպի ու մշակույթի նախկին՝ ընդհուպ մինչև ներկան, «ի նչ» ու «ինչպե՛ս» եղելումի իսկությունը հայտող իմաստի ու իմաստության խորհուրդի հասկացման ու մեկնողաբար բացորոշման դիտավորությամբ, կերպարանմամբ ու կատարումով**:

5. Ընդհանրապես՝ պատմությունը և կոնկրետորեն՝ Մովսես Խորենացու հայոց պատմությունը գործ ունի նախկինում տեղի ունեցած իրադարձությունների ու գործերի հետ և վերաբերում է աշխարհի ու կյանքի եղելությանը, սակայն նրա բնությունը իրեղեն և-կամ մարմնեղեն չէ, նույնական չէ իրադարձությունների ու գործերի՝ ըստ ինքյան լինելությանը: Դեպքերի կամ իրադարձությունների գոյության կերպը էապես տարբեր է պատմության գոյության կերպից: Աշխարհի ու կյանքի ամենայն կոնկրետ իրադարձություններն ու գործերը տեղի են ունենում ժամանակի ընթացքում և հենց ներկայում,

² «Իսկ դու, ո՛վ ուշիմ ընթերցասէրդ, հայե՛աց ... և զարմացի՛ր» (Մովսես Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, Եր., 1991, էջ 17 (գլուխ Ե, տ. 12-14)):

³ «...ո՛վ ուսումնասէր դու և յայտսիկ զմեզ աշխատեցուցանող» (նույն տեղում, էջ 22 (գլուխ Զ, տ. 11)):

ապա մասնաճյուղում և որպես կոնկրետ հենց այդպիսի դեպք՝ «մնում» իրենց ներկայում: Ներկայի դեպքերը դառնալով նախկին և իրենց առնչվածությունը պատմությանը իմանալ տալով որպես նախկինում տեղի ունեցած «իրք ու գործք», ամենևին էլ չեն փոխանցվում ներկային ու ապագային իրենց կոնկրետ ու որոշակի դեպքային կամ իրադարձային գոյության իմաստա-նյութեղեն բնության նույնությամբ: Դեպքերը, իրադարձությունները, ըստ իրենց բնության գոյության, լինում են ժամանակի հոսքին իրենց ենթակայությամբ և որպես այդպիսին՝ անհետանում են: Իսկ պատմության գոյությունը, ընդհակառակը, ժամանակի հարահուս բնությանն այդպիսի կապանքված չէ: Պատմությանը հատուկ չէ այն, ինչը հատուկ է իրեղենին ու մարմնեղենին՝ տեղի ունենալ, մնալ ու կապանքված լինել իր տեղի ունենալու ժամանակի մեջ: **Պատմության բնությունը հոգևոր է**, և նրան հատուկ չէ իր գոյության ամրագրված տեղայնացումը կամ կայացածության արձանագրությունը ժամանակի՝ մինչ ներկան ընթացքում, «նախկինում»: Պատմությունն, արդարև, ունի կոչում և իր կոչումի խնդրառությամբ՝ անհրաժեշտ ու նախընտրելի պիտոյականությամբ և ուրեմն՝ իմաստուն ազատությամբ՝ ունի դիտավորություն, կերպարանում ու կատարում՝ **հասկանալ ու մեկնաբանել կյանքի նշանակալի եղելումի իսկությունն ու խորհուրդը հայտող իմաստը**: Պատմությունն իր պատմումն իրագործելով այնպես, որ նրանում իրագործվի իրերի ու գործերի որպիսության, այսինքն՝ «ինչ», «ինչպիսի ինչ», «ինչ պատճառով, ինչի համար» և «ինչպես» գոյության բացահայտություն, ըստ էության, կայանում է որպես իրերի ու գործերի եղելության, այսինքն՝ իրենց ժամանակում և տեղում ըստ ինքյան գոյության **իսկության** բացահայտման պատմություն, ըստ մարդկային կարողության: Եվ հենց այդ բնույթի բացահայտությունն է անվանվում **ճշմարիտ և ուղիղ իմաստ**, որ և ներկայանում է որպես հենց այդ իրերի ու գործերի **հասկացում ու մեկնություն**:

6. Հարկ է հասկանալ, որ **պատմությունը ոչ թե դեպքերի, այլ՝ իմաստների պատմություն է**, և հենց այդպիսին է պատմության գոյության վերաբերյալ Մովսես Խորենացու հայեցակետը: Իսկ պատմել կյանքի եղելության որպիսությունը բացահայտող իմաստ, կնշանակի՝ **հասկանալ ու մասնաճյուղաբար բացահայտել** այդ իմաստը: Ըստ Խորենացու, **հասկանալ որևէ եղելություն՝ իրադարձություն և-կամ գործ, կնշանակի բացահայտել եղելության բնությունը՝ որակային որպիսությունը, եղելության իսկությունն իրենում և-կամ իրենով հայտող իմաստը**: Պատմությունն այսպիսի կայացնելով իրենում և-կամ իրենով ասման բերվող իսկությունը հայտող իմաստը, ըստ էության, **արդեն որպես իսկ իմաստ և իմաստություն՝ հաղթում է ժամանակն ու ժամանակայինը**: Պատմությունը գործ ունենալով իրադարձությունների ու գործերի գոյության ժամանակատեղիության, այսինքն՝ մարմնատեղիության (կամ՝ նյութատեղիության) ու ժամանակայ(ի)նության հետ, իր **իսկական գոյության** կոչմանն ու կարգին հարազատության պարագայում, ըստ էության, **անդրանցում է իրադարձությունների ու գործերի գոյության մարմնատեղիությունն ու ժամանակայ(ի)նությունը՝ առ իմաստ և իմաստություն**:

7. Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում **պատմությունը ներկայանում է որպես հայոց կյանքի նշանակալի եղելումի իրադարձությունների գործերի ու կարգավորության՝ այդ իսկ նշանակալիության բացահայտում**: Այս առնչությամբ ստույգ ու դիպուկ է Ա. Ստեփանյանի բնորոշումը, ըստ որի՝ «Հեղինակն անցյալի հոսքից ընտրում է, որպես կանոն, նշանակալի իրադարձությունները»⁴: Նշանակալիությունը հասկացմանն ու մեկնորոշմանը ներկայանում է որպես «իրաց և գործոց» **իսկությունը հայտող իմաստ**: Իսկություն հայտող այդ **ի՞նչ նշանակությունների ու իմաստների միահյուսություն** է պատմությունը: Եվ իսկություն հայտող նշանակությունների ու իմաստների **ինչպիսի՞ միահյուսություն** է պատմությունը: Խորենացին գրում է. «...զպատճառս և զգործքին իրացն միայն յայտնելով, և զերկարութիւն գործոյն համառօտ բանի յանդիման կացուցանելով» (ընդգծումը՝ Ռ. Բ.)⁵: Հարկ է հասկանալ, որ նշանակալի եղելումի ներքին գործության և լինելության կարգավորության (պատճառների ու իրադարձային ողջ ընթացքի) բացահայտությամբ կայանում են եղելումի իսկությունը հայտող նշանակությունը կամ իմաստը, որոնցով և՛ հնարավորվում «իրերի ու գործերի» որպիսության ստույգ իմանալիությունը, նույնորոշելիությունն ու կրկնորոշելիությունը: Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգում **պատմությունը հասկացվում ու մեկնողաբար բացորոշմամբ ներկայանում է որպես բուն հայոց ու մասնաճյուղ կենսաշխարհի, որում և՛ հայոց ինքնության ու կյանքի, նշանակալի իրադարձությունների, գործերի ու մասնաճյուղի նպաստավոր և-կամ աննպաստ կարգավորության իսկություն հայտող իմաստների՝ պատճառականությամբ կապակցված միահյուսություն**:

8. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգին բնորոշ առանձնահատկություն է մասնաճյուղ, որ այս կյանքի՝ ժամանակի մեջ ունիվերսալ և հենց Պատմահոր ներկայի **հոգևոր կարիքով** պայմանավորված հոգածության խնդրակարգի ու պատմական հետաքրքրության, գիտական որոնումի ու հասկացման իմաստային տեսադաշտում անհատի, ազգի, մարդկային հանրության անցյալը՝ կյանքի նախկին ու մասնաճյուղ շարունակական եղելումը, բացահայտվում է որպես **նշանակալի**

⁴ Степанян А. А., Развитие исторической мысли в древней Армении, Ер., 1991, с. 156.

⁵ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 45:

անցյալ: Ինքնության կարգավոր գոյության խնդրի տեսակետից պատմությունը մեր նկատմամբ ի հայտ է բերում նշանակություն և դառնում մեկնաբանության քեմա: Միջնադարյան հայերից մեզ ավանդված տեքստամշակության ժառանգության պատմական երկերում և հենց պատմությունում, ինչպես և կոնկրետորեն իմանալի է Մովսես Խորենացու երկի ուսումնասիրությունից, արդեն իսկ առկա է կարիքի, ժամանակների, տեղի ունեցածի, աշխարհի, աստվածային և մարդկային իրողությունների մեկնություն: **Մարդկային լեզուն իսկ երկնային և երկրային իրողությունների մեկնություն է:** Ավելի ճշգրիտ՝ մարդկային լեզուն երկնային և երկրային իրողությունների ու մասնաբաժնի երևակայությամբ մտացածին հնարավորի մեկնություն է: Իսկ պատմությունը հենց լեզվով՝ պատմում է մասնաբաժնի մեկնությունը՝ իր յուրահատուկ շարակարգությամբ: **Պատմությունը սկզբունքորեն տեղի ունեցածի «լեզուն» է, ամբողջական տիեզերական իրադարձության մեկնություն:** Կարելի է մասնաբաժնի պատմության էություն և իմաստության խորհուրդ բացահայտելու հնարավորություն ընձեռող մտքի այլ բանաձև ևս. **պատմությունն, ըստ էության, իրենում պատմվող ու ներկայավորվող «աշխարհ» եղելումի հասկացություն է և մեկնություն:** Ամեն մի մասնավոր պատմություն, այսինքն՝ բանի որպես յուրահատուկ շարակարգություն՝ շարակարգություն, տվյալ եղելումի լեզուն է, որում հայտնվում է տեղի ունեցածի իմաստը, եղելության հոգևորությունը: Հոգևորությամբ ու հենց իմաստով է պատմությունը նման տեղի ունեցածին, այլ ոչ վերջինիս հատուկ նյութերեն թանձրացականությամբ: Տեղի ունեցածում մարմնավորված, որով և՛ պատմիչին ի հայտ հոգևորը կամ իմաստը պատմվելով՝ փոխում է այս կյանքում իր գոյավորության կարգը: **Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգում պատմությունը աշխարհի ու կյանքի նշանակալի եղելումի իմաստապատում է՝ իրենում հասկացյալ ու մեկնաբանյալ և գուցե իսկ՝ լոկ ակնարկյալ իմաստության խորհրդով:** Պատմության մեկնողականությունն են ի հայտ բերում և ուսուցանում հայերը և հենց Մովսես Խորենացին: Պատմությունն իր բնույթով մեկնողական է, իսկ պատմության մեկնությունը, ըստ ս. Հովհան Ռոտունցու բանաձևի, որ նա տալիս է Արիստոտելի «Յադագս մեկնութեան» աշխատության վերաբերյալ, **մեկնության մեկնություն է՝**

9. Կարելի է ամրագրել, որ պատմությունը ու մասնաբաժնի բովանդակային՝ ոչ զուտ ձևական գիտություն, սկսվում է ամենայն գոյի՝ աշխարհի, որում և մարդկային ինքնության, կյանքի ու մշակույթի, ժամանակի մեջ եղելության հասկացման խնդրից և կատարումի գալիս այդ հասկացման ձեռքբերմամբ ու մեկնողաբար բացորոշմամբ: **Հերմենևտիկական հարցադրումն ու բովանդակ խնդրակարգը հիմնադրում, աղեկվատորեն կայացման ու կատարումի է ուղղորդում մարդկային միտքը՝ ամենայն գիտություն ու բանական արվեստ և հենց պատմությունը որպես գիտություն:**

Romik Kocharyan (Armenia)

THE PRESENCE OF HERMENEUTIC ISSUES IN HISTORY AND HISTORICAL-SCIENTIFIC CONCEPTUAL FRAMEWORK OF MOSES KHORENATS'I

This paper presents the problem of understanding and interpretation in the actualization of the destination of history and thus in the being-of-truth of history. Understanding and interpretation are necessarily interwoven in the being of the history as such. Both the historian author in his research and exposition of the history itself and the reader in his relatedness to the historical text in necessarily and also preferably due way is involved in this problem.

⁶ Հովհան Ռոտունցու այս բնորոշման մասին մանրամասն տե՛ս Մինասյան Ա., Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի Հովհան Ռոտունցու մեկնությունները, աշխատություններ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի, Եր., 1988, պր. 1, էջ 73:

ԸՆՏՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀՀ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Խորհրդային Միության փլուզման արդյունքում ձևավորված ժողովրդավարացման ալիքը սկսեց մեծ ուժգնությամբ ներթափանցել հետխորհրդային երկրներ՝ այդ թվում նաև ՀՀ: Այս քաղաքական գործընթացը ողջունում էին ոչ միայն քաղաքական ուժերը, այլև՝ հասարակությունը, որոնք երկուստեք ցանկանում էին տեսնել նորանկախ Հայաստանը որպես ժողովրդավարական երկիր, քանի որ ժողովրդավարական վարչակարգի պայմաններում է հնարավոր դառնում ապահովել հասարակության լայն զանգվածների մասնակցությունը քաղաքական գործընթացներին:

Ընտրական մշակույթը նախընտրական և հետընտրական գործընթացների հավաքական ամբողջությունն է, որի հաղորդակցական կողմն ապահովում է քաղաքական խոսույթը: Ընտրական մշակույթը, լինելով քաղաքական մշակույթի տարր և ժողովրդավարության չափման կարևոր գործիք, լուրջ դերակատարություն ունի ներպետական քաղաքական գործընթացների հավասարակշռման և համակարգման գործում: Ընտրական մշակույթի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վերլուծելու և բացահայտելու տեղի ունեցած և ունեցող ընտրական գործընթացների իրական պատկերը, դրանց առանձնահատկությունները, ազդեցությունը քաղաքացիական հասարակության ձևավորման և գործառնության, քաղաքական վարքագծի մոդելների, քաղաքական գիտակցության, սոցիալականացման, ժողովրդավարության աստիճանի և, առհասարակ, պետականաշինության քաղաքական գործընթացի վրա: Ընտրական մշակույթի բազմաթիվ տարրերի շարքում կարելի է առանձնացնել մի քանիսը, որոնց հետազոտությունը կարող է թույլ տալ ընդհանուր պատկերացում ձևավորել տվյալ քաղաքական երևույթի մասին: Խոսքը վերաբերում է ընտրական գործընթացներին քաղաքական մասնակցությանը, ընտրությունների ժամանակ քաղաքական խոսույթի դրսևորումներին և դրա առանձնահատկություններին:

Անկախացման արդյունքում ՀՀ-ում ձևավորված բազմակուսակցական համակարգը և տեղի ունեցող քաղաքական գործընթացները ստեղծեցին բոլոր անհրաժեշտ հիմքերն ընտրական մշակույթի ձևավորման համար: Սակայն այդ գործընթացը՝ որպես քաղաքական մշակույթի կարևոր բաղադրատարր, դեռևս երկար և խրթին ճանապարհ ունի անցնելու, քանի որ ժողովրդավարացումը և քաղաքական արդիականացումը պահանջում են ոչ միայն քաղաքական կամք, այլև արհեստավարժ մոտեցում: Այս պարագայում խնդիրը ոչ միայն ընտրական ինստիտուտի ձևավորման և կայացման ձևական կողմն է, այլ նաև քաղաքական ուժերի և հասարակության մոտ վերջինիս վերաբերյալ համահունչ քաղաքական գիտակցության ձևավորումը, որը խնդրի առավել կարևոր բովանդակային կողմն է:

Այսօր ՀՀ-ում ընտրական մշակույթի համատեքստում քաղաքական մասնակցության դինամիկայի, դրա առանձնահատկությունների հետազոտության և վերհանման համար անհրաժեշտ է էմպիրիկ տվյալների միջոցով ուսումնասիրել ընտրական գործընթացները, մասնավորապես՝ ընտրազանգվածի և քաղաքական ուժերի մասնակցությունն ընտրություններին: Այսպիսի մոտեցումը թույլ է տալիս ամբողջական պատկերացում ձևավորել ՀՀ-ում ընտրական գործընթացների դինամիկայի մասին:

Պաշտոնական տվյալների համաձայն¹ 1991-2013 թթ. ՀՀ-ում համընդհանուր քվեարկություններին ընտրազանգվածի մասնակցության ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ քաղաքացիների մասնակցության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2008 թ. փետրվարի 19-ի ՀՀ նախագահի ընտրություններում (72.20%): 2-րդ տեղում 1991 թ. հոկտեմբերի 16-ի ՀՀ նախագահի ընտրությունների ցուցանիշն է (70.40%): 3-րդ տեղում 2003 թ. մարտի 30-ի ՀՀ նախագահի ընտրությունների 2-րդ փուլի ցուցանիշն է (68.40%): ՀՀ-ում ընտրազանգվածի մասնակցության ամենացածր ցուցանիշները գրանցվել են 1999 թ. մայիսի 30-ի ՀՀ ԱԺ ընտրություններում (51.70%) և 2003 թ. մայիսի 25-ի (ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագծի) հանրաքվեում (51.90%):

Կարևոր է նաև արձանագրել, որ երկու փուլով անցկացված ՀՀ նախագահի ընտրությունների երկրորդ փուլում քաղաքացիների մասնակցության ցուցանիշները միշտ եղել են ավելի բարձր, քան առաջին փուլի ցուցանիշները: Սա վկայում է այն մասին, որ նախագահական ընտրությունների երկրորդ փուլում, երբ ընտրապայքարին մասնակցում են թեկնածուներից միայն երկուսը, հասարակությունն առավել ակտիվությամբ է կատարում իր քաղաքացիական պարտքը, քանի որ այդ դեպքում անհատն ավելի հեշտ է կողմնորոշվում՝ իր քվեն տալով թեկնածուներից մեկի օգտին: Այս պարագայում քաղաքական խոսույթի ազդեցությունը հասարակական գիտակցության վրա ավելի է մեծանում, քանի

¹ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողով /www.elections.am/.

որ 2-րդ փուլ անցած թեկնածուները հնարավորություն են ստանում իրենց ընտրական ելույթների, քննարկումների և բանավեճերի միջոցով ավելի ռեալ պայքարել ընտրազանգվածի քվեների համար: Հետևաբար՝ կարելի է պնդել, որ քաղաքական խոսույթը կարող է լուրջ ազդեցություն թողնել ընտրազանգվածի վարքագծի վրա՝ այդպիսով իսկ պայմանավորելով ընտրական գործընթացին նրա մասնակցությունը: Հարկ է ընդգծել, որ նախընտրական շրջանում քաղաքական խոսույթը կարևոր դեր է կատարում ընտրական մշակույթի ձևավորման գործում:

Վերադառնալով ՀՀ-ում ընտրազանգվածի մասնակցությանը՝ նկատենք, որ 1991-2013 թթ. մասնակցության ամենաբարձր ցուցանիշները միջին հաշվով գրանցվել են նախագահական ընտրություններում (1991թ., 1996թ., 1998թ., 2003թ., 2008թ., 2013թ.), իսկ ԱԺ ընտրությունների (1995թ., 1999թ., 2003թ., 2007թ., 2012թ.) և Սահմանադրության հանրաքվեների (1995թ., 2003թ., 2005թ.) ժամանակ ընտրազանգվածի մասնակցության ցուցանիշները զիջել են նախագահական ընտրությունների ցուցանիշներին:

Ընտրական մշակույթի համատեքստում քաղաքացիների մասնակցության այսպիսի պատկերը պայմանավորված է նախագահական ընտրությունների ժամանակ քաղաքական քննարկումների տիրույթի, տեղեկատվության տարածման ծավալների և հասարակության կողմից դրանց ուղղված արձագանքների ավելի լայն շրջանակով, քանի որ նախագահական ընտրությունների ժամանակ հասարակության գրեթե բոլոր շերտերը ցուցաբերում են ավելի բարձր քաղաքական ակտիվություն՝ մեծ մասամբ կապելով իրենց շահերի իրացման, պահանջների բավարարման, սոցիալական խնդիրների լուծման հնարավորությունները նախագահի հետ: Վերոնշյալ բոլոր գործոնները նպաստում են լայնածավալ հասարակական-քաղաքական քննարկումների կազմակերպմանը, ինչն էլ իր հերթին քաղաքական խոսույթի միջոցով ազդում է ընտրազանգվածի գիտակցության և վարքագծի վրա: Սա է պատճառներից մեկը, որ ՀՀ-ում նախագահական ընտրությունների ժամանակ ընտրազանգվածի մասնակցության ցուցանիշները հիմնականում լինում են ավելի բարձր:

Վերլուծությունը հավաստում է, որ ՀՀ-ում 1991-2013 թթ. համընդհանուր քվեարկությունների ժամանակ ընտրազանգվածի մասնակցությունը՝ որպես ընտրական մշակույթի տարր, հիմնականում ուղղորդվել է քաղաքական և քաղաքացիական անկայունությամբ, կոնֆլիկտային քաղաքական խոսույթով: Սակայն 2012 թ.-ին ԱԺ նախընտրական պայքարը հիմնականում ընթացել է մեղմ մթնոլորտում՝ չհանգեցնելով կտրուկ քաղաքական բախումների: 2013 թ. ՀՀ նախագահի ընտրությունը լի էր բուռն իրադարձություններով. օրինակ՝ թեկնածուներից մեկի հացադուլ: Նույնիսկ նախընտրական շրջանում առաջին անգամ տեղի ունեցավ մահափորձ՝ ուղղված թեկնածուներից մեկի դեմ, որը, ինչպես ցույց տվեց հետաքննությունը, կազմակերպվել էր մեկ այլ թեկնածուի կողմից: Այս իրադարձությունը խիստ բացասական ազդեցություն թողեց ՀՀ-ում ընտրական մշակույթի կայացման գործընթացի վրա՝ ավելացնելով վախի և անվստահության գործոնը հասարակական-քաղաքական շրջանակներում: Հետ-ընտրական շրջանն այս անգամ ևս ուղեկցվեց բողոքի ակցիաներով, ցույցերով, երթերով և հանրահավաքներով, ինչպես նախորդ նախագահական ընտրություններում: Ուշագրավ է, որ 2013 թ. հետ-ընտրական զարգացումները մեծապես տարբերվում են մյուս համընդհանուր քվեարկությունների հետ-ընտրական զարգացումներից: Ի դեպ՝ նախորդ ընտրություններում դրսևորված բոլոր հետընտրական հրապարակային դժգոհությունների, բողոքների և բախումային իրադարձությունների համեմատ՝ այս վերջինն ամենաերկարատևն էր: 2013 թ. հետընտրական շրջանն առանձնահատուկ էր նաև գործող նախագահի և ընդդիմության թեկնածուի միջև քաղաքական խոսույթի տեսանկյունից: Նշենք, որ առաջին անգամ հետընտրական զարգացումները, հագեցած լինելով բողոքի ակցիաներով և հասարակական դժգոհություններով, չհանգեցրին լուրջ բախումների՝ պահպանելով պայքարի երկկողմ հավասարակշռված վարքագիծը: Ե՛վ իշխանությունը, և՛ ընդդիմությունը իրենց գործողություններում հիմնականում դրսևորում էին հանդուրժողականություն, ինչը կարգավորվում և վերահսկվում էր իշխանության և ընդդիմության լիդերների կողմից: Ընդդիմության լիդերը հաճախ իր ելույթներում քաղաքակիրթ, իրավական պայքարի և զսպվածության կոչեր էր անում՝ հանդարտեցնելով իր հետևորդներին: Այդ ընտրություններն առանձնանում են նաև արևմտյան ընտրական տեխնոլոգիաների լայն ներդրմամբ, որոնք պատշաճ կիրառում էր ընդդիմության լիդերը: Վերոնշյալ զարգացումները, հասնելով իրենց հանգուցակետին, ընդդիմադիր զանգվածի մի մասի մոտ առաջացրեցին խոր հիասթափություն և անվստահություն ընդդիմադիր լիդերի նկատմամբ, իսկ զանգվածի մյուս մասի մոտ ձևավորվեց քաղաքացիականության զգացում և պահանջատիրոջ գիտակցություն: Այս ընտրությունների արդյունքում ընտրական մշակույթում որոշակիորեն ընդգծվեց քաղաքական պայքարում հանդուրժողականության կարևորությունը, ինչպես նաև քաղաքացիական բողոքի և անհանդուրժողականության իրական ուժը, որը իշխանությունը չպետք է անտեսի՝ հանուն պետության բարօրության:

ՀՀ-ում ընտրական մշակույթի ընդհանուր պատկերը պարզելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև քաղաքական ուժերի մասնակցությանը ընտրական գործընթացներին, որը հնարավորություն կտա ամբողջացնելու ընտրական մշակույթի ուսումնասիրությունը:

Այսպես՝ 1995 թ. հուլիսի 5-ին և 27-ին երկու փուլով տեղի ունեցած ՀՀ առաջին գումարման ԱԺ ընտրություններին մասնակցել է 14 քաղաքական ուժ, որոնցից 5-ն են անցել խորհրդարան: 1999 թ. մայիսի 30-ի ՀՀ երկրորդ գումարման ԱԺ ընտրություններին մասնակցել է 21 քաղաքական ուժ, որոնցից խորհրդարան են անցել 6-ը: 2003 թ. մայիսի 25-ի ՀՀ երրորդ գումարման ԱԺ ընտրություններին մասնակցած 21 քաղաքական ուժերից կրկին 6-ն են անցել խորհրդարան: 2007 թ. մայիսի 12-ին տեղի ունեցած ՀՀ չորրորդ գումարման ԱԺ ընտրություններին մասնակցած 23 քաղաքական ուժերից 5-ն են անցել խորհրդարան: Իսկ 2013 թ. մայիսի 6-ի ԱԺ ընտրություններին մասնակցած 9-ը քաղաքական ուժերից 6-ն են անցել խորհրդարան²:

Վերը նշված տվյալների դիտարկման արդյունքում տեսնում ենք, որ խորհրդարան մուտք գործած քաղաքական ուժերի թիվը տատանվում է 5-ից 6-ի միջակայքում, ինչը ընտրական մշակույթում որոշակի օրինաչափության հիմք կարող է համարվել: Իսկ ինչ վերաբերում է ԱԺ ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերի թվին, ապա այստեղ տատանման միջակայքը շատ ավելի ընդարձակ է՝ 23-ից 9-ը: Այս իրողությունը վկայում է ՀՀ-ում որոշ քաղաքական ուժերի իրավիճակային ակտիվացման մասին, որոնք մինչ ընտրական գործընթացը չեն ցուցաբերում քաղաքական կենսունակություն: Սա փաստում է այն մասին, որ հասարակությունը նախապատվությունը տալիս է հայտնի և որոշակի քաղաքական փորձ ունեցող ուժերին՝ չվստահելով քաղաքական «նորեղություններին»: Այս համատեքստում թերևս բացառություն էր ԲՀ-ն, որն առաջին իսկ մասնակցությամբ 2007 թ.-ին, հետո նաև՝ 2012 թ.-ին, խորհրդարանում զբաղեցրեց 2-րդ տեղը: Տվյալ քաղաքական ուժի ակնառու հաջողությունը, թերևս, պայմանավորված էր նյութական հզոր ներուժով և քաղաքական լիդերի անձնական հատկանիշներով: Ինչ վերաբերում է ընդդիմադիր ուժերին, ապա մինչև 2012 թ. ԱԺ ընտրությունները խորհրդարանում նրանց թիվը պարբերաբար նվազել է:

Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքական համակարգում այսօր գործում է դե ֆակտո *կեղծ բազմակուսակցական* համակարգ: Պետական և տեղական ինքնակառավարման բոլոր ներկայացուցչական մարմիններում մեծամասնություն ունի մեկ քաղաքական ուժ (ՀՀԿ), իսկ այս երևույթը, բնականաբար, չի կարող լինել ժողովրդավարացման խթան: Հայտնի ճշմարտություն է, որ իրական քաղաքական մրցակցության բացակայությունը պետական ներկայացուցչական մարմիններում վերացնում է իշխանության ճյուղերի միջև հավասարակշռության և փոխզսպման իրական հնարավորությունները: Հետևաբար՝ կայացվող քաղաքական որոշումները չեն կարող հիմնվել բազմակարծության սկզբունքի վրա, չեն կարող ներկայացնել հասարակության լայն շերտերի շահերը, որոնք ժողովրդավարության կարևորագույն չափանիշներից են: Ուստի, ինչպես խորհրդային շրջանում, այնպես էլ այսօր, փաստացիորեն, քաղաքական բոլոր որոշումները կայացվում են մեկ քաղաքական ուժի կողմից, որը միանձնյա կարող է որոշել պետության ներքին և արտաքին քաղաքականությունը:

Այսօր ՀՀ-ում գրեթե բացակայում է հայեցակարգային գաղափարական պլյուրալիզմը, քանի որ քաղաքական դաշտում ակտիվություն ցուցաբերող ուժերի ծրագրերը հիմնականում չեն տարբերվում միմյանցից: Արդյունքում՝ քաղաքական ուժերը հիմնականում հենվում են իրենց առաջնորդի անձնական որակների և հեղինակության վրա: Այդ իսկ պատճառով քաղաքական ուժերի ներկայությունը և ներգրավվածությունը քաղաքական գործընթացներում մեծապես պայմանավորված է առաջնորդով: Որպես ասվածի գործնական դրսևորում՝ հարկ է հիշել 2012 թ. ԱԺ ընտրություններում հանրապետության նախագահ Ս. Սարգսյանի կողմից ՀՀԿ նախընտրական քարոզարշավի ղեկավարումը և դրան անձնական մասնակցություն ունենալը: Նկատենք, որ այս կերպ ղեկավարվող կուսակցություններում առաջնորդի անձնական վարքագծով է պայմանավորվում նաև ամբողջ քաղաքական ուժի վարքագիծը և հասարակության մոտ վերջինիս նկատմամբ վերաբերմունքը: Այսպիսով, ընտրական մշակույթի հիմնական տարրերի հետազոտությունը մեզ հնարավորություն տվեց բացահայտել վերջինիս ընդհանուր պատկերը, զարգացման դինամիկան, առանձնահատկությունները և դրանում առկա խնդիրները:

Ընդհանրացնելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք նշել, որ ՀՀ ընտրական մշակույթում հիմնականում նկատվել են կոնֆլիկտային դրսևորումներ, որոնք հաճախ հանգեցրել են բախումների քաղաքական և քաղաքացիական ուժերի մասնակցությամբ: Հիմնականում նախագահական ընտրություններում և դրանցից հետո դրսևորվել է հասարակական-քաղաքացիական անհնազանդություն, որն ուղեկցվել է բողոքի ակցիաներով, նույնիսկ հասարակական կարգի խախտումներով, որոնց խստորեն արձագանքել է իշխանությունը: Խիստ քննադատական, ծայրահեղ բողոքական, կոնֆլիկտային, զեղծարարական և նույնիսկ քրեական դրսևորումներով կրկին առանձնանում են նախագահական ընտրությունները, որոնք մեծապես խոչընդոտում են ընտրական մշակույթի ձևավորման գործընթացը: Այս բոլոր բացասական երևույթների առատությունն ընտրական գործընթացներում փաստում է ընտրական մշակույթի անկայունության և պետականաշինության գործում վերջինիս կայացման կենսական անհրաժեշտության մասին:

² ՀՀ Ազգային ժողով, <http://parliament.am/parliament.php?id=history&lang=arm>.

Emil Ordukhanyan (Armenia)

ELECTORAL CULTURE IN POLITICAL PROCESSES IN ARMENIA

Democratization in post-Soviet countries does not proceed smoothly and it gives rise to various conflicts, rarely engaging consensual political processes. The electoral institute as one of necessary elements of the electoral political culture plays a very important role in the formation of the political process. The study of the democratization process excluding electoral culture is impossible because this institution is one of the main catalysts of democratization. From this perspective, in the context of political participation and political discourse, we examine the electoral processes in Armenia from 1991 to 2013, identifying the problems, the dynamic and the characteristics of the electoral institute in Armenia.

Summarizing the results of the study, we note that the electoral institute in Armenia is not stable and has a conflict nature, mainly the political forces are personalized and have no ideological differences. All these processes have a negative impact on the electoral culture, which is essential for the democratization and development of civil society. To improve the electoral culture and to restore public confidence in elections we must also raise the level of political consciousness of the political forces and society besides the legislative reforms that make power.

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Անահիտ Ավագյան (Հայաստան)

ԱԹԱՆԱՍՅԱՆ ՀԱՎԱՏՈ ՀԱՆԳԱՆԱԿԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ս. Աթանաս Ալեքսանդրացու անվամբ հայերեն թարգմանական ժառանգությունը ներառում է և՛ վավերական, և՛ կեղծ աթանասյան գրվածքներ: Կան նաև այնպիսի երկեր, որոնք կրում են նշյալ եկեղեցական հոր անունը և պահպանված լինելով միայն հայերենով՝ կասկածելի են դարձնում հեղինակի պատկանելության վավերականության հարցը: Այս խնդիրը, սակայն, հատուկ է բոլոր այն գրվածքներին, որոնց բնագրերը կորած են, և որոնց երբևիցե գոյություն ունենալու մասին են վկայում այս կամ այն լեզվով պահպանված հին թարգմանությունները:

Ս. Աթանաս Ալեքսանդրացու անվամբ հայերեն թարգմանությամբ պահպանվել են մի քանի Հավատո հանգանակներ ու նմանատիպ տեքստեր, որոնցից են.

1. *Atanasianum* / *Quicumque vult* (CPG 2295). «Աթանասյան հանգանակ / Յուրաքանչյուրն, ով ցանկանում է» (Դաւանութիւն ս. Աթանասի)¹,

2. *Expositio fidei* (2804). «Հավատքի շարադրանք» (Յադագս սրբոյ Երրորդութեանն),

3. *Didascalia cccxviii patrum Nicaenorum* (CPG 2298). «Նիկիական 318 հայրերի վարդապետությունը» (Հատարք որ ի Նիկիայ) պահպանվել է Եվագր Պոնտացու անվամբ,

4. *De trinitate* (CPG 2203). «Երրորդության մասին» (Յամենասուրբ Երրորդութիւնն),

5. *Epistula ad Liberium* / *Contra theopaschitas* (CPG 2805). «[Նամակ] ուղղված Լիբերիոսին / Ընդդեմ հայրաշարժարների» (Թուղթ առ Լիբերիոս եպիսկոպոս Հռովմայ),

6. *Ad Iovianum* (CPG 3665). «[Նամակ] ուղղված Հովիանոսին» (Արտադրութիւն առաքելական) և այլն:

Նշված երկերը ներկայացնում են թեմատիկ մի խումբ, որում ընդգրկված են հիմնականում կեղծ աթանասյան գրվածքներ, որոնց ուսումնասիրությունը թե՛ աստվածաբանական, թե՛ բանասիրական հետաքրքրություն է ներկայացնում:

Թվարկված հանգանակներից անդրադառնալու ենք միայն *Athanasianum* անվամբ հայտնի հանգանակին²: Այս հանգանակի մասին Ջոն Բելլին ասել է. «Միայն երկու հավաստի փաստեր կան Աթանասյան հանգանակի առնչությամբ, որ այն ոչ հանգանակ է, ոչ էլ [գրվել է] Աթանասի կողմից»³: Ահա այս են երկու նախադրությունները, որոնցից սկսվում է Աթանասյան հանգանակի ուսումնասիրությունը:

Ձեռագրական ժառանգությունը: Մաշտոցյան Մատենադարանի, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան, Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքի և Փարիզի ազգային գրադարանի հավաքածուներից մեզ հայտնի դարձավ 36 ձեռագիր⁴, որոնցում գտնում ենք Աթանասյան հանգանակի տեքստը: Հաստատուն թվագրությամբ ամենահին ձեռագիրը Փարիզի ազգային գրադարանի հայերեն թիվ 121 ձեռագիրն է, որը թվագրվում է 1386 թ.: Սրանցից 26-ի հիման վրա կազմվեց համեմատական տեքստ:

¹ Այս և հաջորդ վեց միավորների փակագծերում նշված վերնագրերը ըստ *Ս. Աթանասի Ալեքսանդրացույ հայրապետի ճանք, թուղթ եւ ընդդիմասացութիւնը*, Վենետիկ, 1899:

² Գիտաժողովի ձևաչափի համաձայն գեկուցման համար հատկացված տասը ռուպեններ ենթադրել տվեցին, որ կիսացնենք խոսել միայն մեկ երկի մասին: Նույնպես և հոդվածի համար նախատեսված հինգ էջի սահմանաչափը:

³ J.N.D. Kelly, *The Athanasian Creed*, New York / Evanston, "Harper & Row" Publishers, 1964, p. 1.

⁴ Մաշտոցյան Մատենադարան՝ ՍՄ 41, fol. 61b-64a (D), ՍՄ 462, fol. 173b-174a (E), ՍՄ 467, fol. 218a-219a (S), ՍՄ 576, fol. 148a-149b (F), ՍՄ 682, fol. 47b-48a (G), ՍՄ 739, fol. 254a-256a (T), ՍՄ 1653, fol. 240b-244a (H), ՍՄ 1756, fol. 212a-213b (V), ՍՄ 1712, fol. 86a-88a (U), ՍՄ 1760, fol. 240b-242a (W), ՍՄ 1850, fol. 146b-147b (X), ՍՄ 2368, fol. 42a-43b (I), ՍՄ 3206, fol. 106a-107a (J), ՍՄ 3527, fol. 30a-31b (K), ՍՄ 3527, fol. 53b-56a (L), ՍՄ 3964, fol. 83b-84b (M), ՍՄ 4246, fol. 13a-15a (Y), ՍՄ 4669, fol. 52a-53a (N), ՍՄ 6987, fol. 182a-184b (O), ՍՄ 7211, fol. 89b-94b (P), ՍՄ 9170, fol. 6a-7b (Q), ՍՄ 9360, fol. 1a-4b (R), ՍՄ 10561, fol. 24b-26a (Z),

Վենետիկի Մխիթարյան միաբանության գրադարան՝ *Cod. Ven. 57*, fol. 24b-25b (A), *Cod. Ven. 375*, fol. 111 ff. (B), *Cod. Ven. 398*, fol. ? (C), *Cod. Ven. 605*, fol. 46a ff. (a), *Cod. Ven. 1297*, fol. 10 ff. (b), *Cod. Ven. 2859*, fol. 113 ff. (c),

Վիեննայի Մխիթարյան միաբանության գրադարան՝ *Cod. Vind. 502*, fol. 107a ff. (d), *Cod. Vind. 546*, fol. 1b ff. (e), *Cod. Vind. 677*, fol. 21a ff. (f), *Cod. Vind. 817*, fol. 31a-32a (g), *Cod. Vind. 988*, fol. 93a-95b (h),

Երուսաղեմի Հայոց պատրիարքության գրադարան՝ *Cod. Hierosol. 1084*, fol. 675b-685b (i),

Փարիզի ազգային գրադարան՝ *BnF Ms. Arm. Nr. 121*, fol. 34v⁰-38v⁰ (j):

Տեքստային տարբերակները: Ըստ սկսվածքի կազմվեցին տեքստային տարբերակների կամ խմբագրությունների հետևյալ խմբերը.

Inc. Quiquaque vult salvus esse

1. ABCDFIP Սկս. Ամենայն ոք որ կամի փրկիլ
2. GJLNZ Սկս. Որ ոք կամեսցի փրկեալ լինել
3. OSTUVWXY Սկս. Որ ոք կամիցի փրկիլ
4. EM Սկս. Ով ոք կամի փրկիլ
5. Q Սկս. Քանզի ո՞վ ոք կամեսցի փրկեալ լինել
6. HKR Սկս. Ով ոք կամի կեցուցեալ լինիլ

Տպագրությունները: Հայտնի է չորս տպագրություն⁵.

1. Վարդապետութիւն Քրիստոնէական ըստ Հայոց: Արտադրեալ առ Հռօմայեցիս միջնորդութեամբ, Կարապետի Վարդապետի Անդրիանացոյ և Թեոդորոսեան Պետրոսի Սիմպրի, Ամստերդամ, 1667, էջ 62-70 (գուգահեռ լատ. հետադարձ թարգմանությամբ),
2. Ժամագիրք սրբուհոյ կուսին Մարիամու Աստուածածնին եւ Ննջեցելոց, Վենետիկ, 1706, էջ 204-209,
3. Կարգաւորութիւն հասարակաց աղօթից եկեղեցոյն մեծին Հռօմայ, Մարսել, 1708, էջ 239-242,
4. Ս. Աթանասի Աղեքսանդրացոյ հայրապետի Ծառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք, Վենետիկ, 1899, էջ 478-481 ← Cod. Ven. 57, fol. 24b-25b (A), Cod. Ven. 375, fol. 111 ff. (B), Cod. Ven. 398, fol. ? (C):

Հայերենի սկզբնագրի լեզուն: Հավատո հանգանակները իրենցից ներկայացնում են հստակ, կոնկրետ, լակոնիկ դավանաբանական ձևակերպումներ: Այս դեպքում հունարեն և լատիներեն տեքստերը այնքան մոտ են իրար, որ մեծ օգնություն չեն հանդիսանում հայերենի սկզբնագիրը պարզելու հարցում, օր.

§ 25 in hac trinitate nihil prius aut posterius, nihil maius aut minus.

Kai én taύτη τη Τριάδι οὐδέν πρῶτον ἢ ὕστερον, οὐδέν μεῖζον ἢ ἔλατον.

Այս պարագրաֆի հայերեն տարբերակներն ու տարրնթերցումներն են.

- և ներ այսմիկ երրորդութեան ո՛չ ինչ նախկնագոյն կամ վերջագոյն, ո՛չ ինչ մեծագոյն կամ փոքրագոյն: HKR

- Եւ ի յայսմ երրորդութիւնս ո՛չ գոյ որ է առաջին, և կամ վերջին, և կամ մեծ և փոքր: Q

- Եւ ի սոյն Երրորդութիւնս՝ ոչ ինչ առաջին կամ վերջին, ոչ ինչ երէց կամ կրտսեր.

Տարրնթերցումներ՝ ի օմ. IO | սոյն] յայս DFIOSTUVWXY այս P | ի սոյն] նայսմ EM | Երրորդութիւնս] երրորդութեանս DFP երրորդութեան EM | վերջին + և J | ոչ ինչ առաջին կամ վերջին] ոչինչ է յառաջ կամ յետոյ STUVWXY O (lectio varia առաջ) ոչինչ յառաջագոյն կամ յետնագոյն EM օմ. B(?)CDPFI | երէց] երէց JNZ | ոչ ինչ երէց կամ կրտսեր] ոչինչ մեծ կամ փոքր OSTUVWXY V (lectio varia ոչինչ + է) ոչ է իր ինչ մեծ կամ փոքր B(?)CDPFI ոչինչ մեծագոյն կամ փոքրագոյն EM:

Թարգմանությունները: HKRah խմբի ձեռագրերից մեկում ունենք հետևյալ հիշատակությունը. Թարգմանացեալ ի լատինականէ ի հայս; ըստ խնդրոյ Յովհաննեսի Եպիսկոպոսի Բաղիշեցոյ, և Կոստանդնուպոլսոյ պատրիարքի (ՄՄ 9360):

Հովհաննես Բաղիշեցի Կոլոտ պատրիարքի հանձնարարությամբ լատիներենից թարգմանություններ կատարել է Ղուկաս վրդ. Խարբերդցի Աբրահամեանը կամ Գասպարեանը: Այս մասին կան հիշատակարաններ, գրված նաև հենց Հովհաննես Կոլոտի կողմից: Սրանից ելնելով համարվում է, որ Աթանասյան հանգանակի այս տեքստի թարգմանիչն է Ղուկաս Խարբերդցին: Ուղիղ հիշատակություն, որ Ղուկաս Խարբերդցին թարգմանել է նաև Աթանասյան հանգանակը, չունենք: Ավելին, Ղուկաս Խարբերդցու ամենահին թարգմանությունը թվագրվում է 1717 թ., իսկ վերջինը՝ 1753 թ. (սրանից հետո էլ դրվում է նրա մահվան թվականը):

Բնագրային համեմատությունները ցույց տվեցին, որ մի առանձին, մյուսներից տարբեր թարգմանություն է ներկայացնում ՄՄ 9170 (Q)-ի տարբերակը, որը դարձյալ կատարվել է լատիներենից. Հաւատամք կաթողիկէ եկեղեցոյ. և դաւանութիւն զոր ասացեալ է սրբոյն աթանասի աղեքսանդրոս Հայրապետին:

Մյուս ձեռագրերը ներկայացնում են մեկ այլ թարգմանություն, որ նախորդում է այս երկուսին: Արդեն նշվեց, որ Աթանասյան հանգանակի հայերեն թարգմանության ամենահին ձեռագիրը 1386 թ. է թվագրվում, ուրեմն պիտի ընդունենք, որ ամենաուշը 14-րդ դ. վերջին արդեն ունենք Աթանասյան հանգանակի հայերեն մի թարգմանություն:

Տպագրերի դեպքում պիտի ընդունենք, որ թարգմանությունների բնագիրը եղել է լատիներենը, քանի որ դրանք իրենցից ներկայացնում են Հռոմեակաթոլիկ եկեղեցու ծիսական մատյանների թարգմանություն:

⁵ Տպագրությունները նշում ենք այն պատճառով, որ դրանք ժամանակագրական առումով մասամբ նախորդում են ձեռագրական ժառանգությանը և առանձին թարգմանություններ են:

Քանասիրական հարցերը: Տեքստի բոլոր թարգմանություններում ու տարբերակներում հանդիպում ենք այնպիսի բառերի և քերականական կառույցների, որոնք խորթ են դասական լեզվին: Այս դեպքում դրանք պիտի որակենք իբրև լատիներենի և ոչ հունարենի ազդեցություն. օր.՝

§ 3 in trinitate → ներորոգութեան (HKR) հմմտ. օր.՝ յերորոգութեան (A),

§ 3 in unitate → ըն միութեան (HKR) հմմտ. օր.՝ ի միութեան (A),

§ 25 in hac trinitate → և ներ այսմիկ երրորդութեան (HKR) հմմտ. օր.՝ եւ ի սոյն երրորդութիւնս (A),

§ 4 substantiam → զգոյացութիւն (HKR) հմմտ. օր.՝ զենթակայութիւն (A),

§ 19 quia sicut singillatim unamquamque personam et deum et dominum confiteri christiana veritate compellimur → Քանզի որպէս զհորաքանչիւր անձն Աստուած և Տէր առ անձնապէս խոստովանիլ ի քրիստոնէականէ ճշմարտութենէ համաստիպիմք (HKR) հմմտ. օր.՝ զի որպէս առանձնաբար զհորաքանչիւր անձն Աստուած կամ տէր խոստովանել քրիստոնէական ճշմարտութեամբ բռնադատիմք (A):

Աստվածաբանական խնդիրները: Կողմ ենք թողնում Աթանասյան հանգանակի աստվածաբանական վերլուծությունը և ցանկանում ուշադրությունը հրավիրել երկու ձևակերպումների վրա, որոնք «քննադատվել են» կամ ուղղակի բաց թողնվել գրիչների, միգուցե հենց թարգմանիչների կողմից, եթե իհարկե ընդունենք, որ սկզբնագիրը ունեցել է այդ եզրերը:

§ 23 spiritus sanctus a patre et filio, non factus nec creatus nec genitus, sed procedens. → Հոգին սուրբ ի Հօրէ՝ ոչ արարեալ և ոչ ստեղծեալ և ոչ ծնեալ, այլ բխեալ.

Տարբերություններ՝ ի Հօրէ + և յորդոյ EMOTUWXI S (varia lectio որդոյ) QVY (lectio varia որդոյ):

ABCDFIP, GJLNZ և HKR խմբերում բաց է թողնված fillioque-ն: STUVWXY-խումբը լուսանցքում կամ տեքստում և *յորդոյ*-ի դիմաց տալիս է «թիւր (է)»: Այսպիսով միայն EM և Q ձեռագրերն են միանշանակորեն ավելացնում և *յորդոյ*-ն:

§ 33 aequalis patri secundum divinitatem, minor patre secundum humanitatem:

→ հաւասար Հօր՝ ըստ աստուածութեան. կրտսեր Հօր՝ ըստ մարդկութեան.

Տարբերություններ՝ կրտսեր Հօր՝ և փոքր քան զհայր BDFPI OSTUVWXY (lectio varia կրտսեր) ? փոքրագոյն քան զհայր E M (lectio varia և փոքրագոյն) նոյն փոքրկանս ի մօրէ Q | կրտսեր Հօր՝ ըստ մարդկութեան om. C | մարդկութեան՝ մարդկութեանն EFILJMQSTUVWY:

STUVWXY-խումբը լուսանցքում կամ տեքստում *կրտսեր*-ի դիմաց տալիս է «թիւր (է)»:

Ամփոփում: Աթանասյան հանգանակի հայերեն թարգմանության ձեռագրական համեմատությունը (26 ձեռագրերի հիման վրա) առաջ բերեց տեքստի 6 տարբերակներ, որոնք բոլորն էլ ամենայն հավանականությամբ կատարվել են լատիներենից: Առաջին հայացքից տարօրինակ պիտի թվա 14-րդ դարավերջից չդադարող հետաքրքրությունը մի կաթոլիկ հանգանակի նկատմամբ, որը հենց արտագրելիս դիտվել է որպես «թիւր» ուսմունք, իսկ թարգմանելիս՝ «հաւատ ուղղափառ» կամ «հաւատ կաթողիկէ» (fides catholica):

Այս հոդվածի հիմնավորումներն ու հարցադրումները ընդամենը սկիզբն են Աթանասյան հանգանակի հայերեն թարգմանության ուսումնասիրության: Առավել մանրակրկիտ (համեմատական բնագրով հանդերձ) այն կներկայացնենք առաջիկայում ավելի ընդարձակ հոդվածի տեսքով:

Anahit Avagyan (Armenia)

ARMENIAN TRANSLATIONS AND REDACTIONS OF THE ATHANASIAN CREED

Some Creeds and similar texts are prescribed to St. Athanasius of Alexandria in the literature of the Armenian translations. The problems connected with translation, redaction and manuscript heritage, as well as theological and philological questions related to the Armenian text only of the so-called *Athanasianum* or *Quicumque vult* are represented in the article. The collation of 26 (from the found 36) manuscripts revealed six types of the Armenian text, which all, more probably than not, were translated from Latin. While copying or, perhaps previously, while translating the scribes and/or translators marked the dogmatic formulations, which did not accord with the teaching of the Armenian Church, as “falsely” (թիւր). A more detailed discussion and critical texts of the Armenian translations of Athanasian creeds will follow.

Քնարիկ Ավետիսյան (Հայաստան)

ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՊԱՏԿԵՐՆԵՐ 17-ՐԴ Դ. -19-ՐԴ Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՐՔԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Եկեղեցական կերպարվեստի կարևորագույն խնդիրներից մեկը վերաբերում է պատկերին: Այն, պաշտամունքային և աստվածաճառողական նշանակության շնորհիվ, ծիսական մյուս բոլոր առարկաներից ավելի ներգործություն ունի, քանի որ զգայական կենդանի արտահայտչականությամբ և կերպարային տպավորությամբ մարմնավորում է տերունական խորհուրդները և միաժամանակ դրանց հետ հաղորդակից լինելու միջոց է¹: Այս գործառույթն էլ կանխորոշել է քրիստոնեական արվեստի պատկերագրական կանոնների առաջացումն ու դրա պահպանումը հետագա դարերում, ինչը ներառում է նաև սիմվոլիկ, այլաբանական բովանդակության իրերի, առարկաների, բույսերի, կենդանիների պատկերները: Արևմտյան Եվրոպայում 12-րդ դ. տարածված են եղել նկարագարող, բարոյախրատական մեկնաբանություններով «Բեստիարիում» (լատ. Bestia- կենդանի, գազան արմատից) ժողովածուները²: Դրանցում ամփոփված թռչունների, կենդանիների, երևակայական արարածների մասին անտիկ երկերի քրիստոնեական մեկնաբանությունները հիմնվում են Ս. Գրքի և Եկեղեցու հայրերի ուսմունքի վրա: «Բեստիարիումների» համար սկզբնաղբյուր են հանդիսացել 2-րդ դ., հավանաբար, Ալեքսանդրիայում ստեղծված անհայտ հույն հեղինակի «Ֆիզիոլոգոս» տրակտատը (մեզանում՝ «Բարոյախոս»), որը 5-6-րդ դդ. թարգմանվել է լատիներեն, ասորերեն, հայերեն, եթովպերեն՝ նպաստելով դրանց տարածմանն ու տեղայնացմանը³: Այս ամենին ավելացնենք նաև 8-17-րդ դդ. հայ եկեղեցական գործիչների (Ստեփանոս Սյունեցի, մահ. 735թ., Ներսես Շնորհալի, 1100-1173, Գրիգոր Տաթևացի, 1347-1409 և ուրիշներ) «Խորանների մեկնություններին» նվիրված գրվածքները, որոնցում բույսերը, թռչունները, կենդանիները մեկնացվում են աստվածաբանական և բարոյագիտական պատկերների ու հասկացությունների⁴: Գրավոր այս աղբյուրները նպաստել են բուսական, կենդանական աշխարհի պատկերամոտիվների սիմվոլիկ, այլաբանական իմաստների կայունացմանն ու դրանց գործածմանը միջնադարյան արվեստում: Այդ պատկերամոտիվները հավասարապես օգտագործվում են հայկական մանրանկարչության՝ հատկապես խորանների ու անվանաթերթերի նկարագործումներում, ճարտարապետական քանդակագործման մեջ և հաստոցային սրբապատկերներում:

Հոդվածում դիտարկվում է 17-րդ դ.-19-րդ դ. առաջին կեսի հայկական մի շարք սրբապատկերներ, որոնց ավանդական հորինվածք ներմուծված խորհրդանշական պատկերամոտիվների (օրինակ՝ լուսնի մահիկ, օձ, գավաթ, հրե սայլ, ագռավ և այլն) միջոցով լրացվում ու ամբողջացվում է տեսարանի բովանդակությունը, երբեմն դրանցով ընդգծվում ավետարանական պատմության կոնկրետ դրվագը կամ էլ քրիստոնեական արվեստի շրջանակներում ստեղծագործող հեղինակի անհատական ընկալումն ու մեկնաբանումը:

Քրիստոնեական արվեստում Մարիամի ուղբերի տակ պատկերվող լուսնի մահիկը համարվում է Ս. Կույսի անարատ, գերբնական հղիության խորհրդանշանը, որը արևմտաեվրոպական արվեստի շրջանակներում ձևավորված «Անարատ հղիություն» տիպի կարևոր բաղադրիչն է⁵: Նկատենք, որ հայ նկարիչները լուսնի մահիկը պատկերում են Աստվածածնի զանազան կերպավորումներում (Օղիգիտրիա, Թագուհի, Օրանտ, Վերափոխումն, դրանով իսկ կարևորում Կույս Մարիամի սրբությունը և Փրկչի մայր դառնալուն արժանի լինելը: Նշանավորներից են՝ Նաղաշ Հովնաթանի (1661-1721) «Աստվածածինը Աստվածն հետ» (Էջմիածնի Մայր տաճարի բեմապատ), Հովնաթան Հովնաթանյանի (1730-1801/ 02) «Աստվածածնի թագադրումը» (Մայր Աթոռ Ս. Էջմիածին, թիվ 32) և «Վերափոխումն Աստվածածնի» (1769-1771 թթ., կտ., յուղ., 251x133, ՀԱՊ, Գ-824), 18-19-րդ դդ. անհայտ նկարչի «Աստվածածնի թագադրումը» (1815 թ., կտ., յուղ., 185x140, ՀԱՊ, Բ-1413) և այլն: Երբեմն լուսնի մահիկը սրբապատկեր ներմուծված միակ խորհրդապատկերն է, ինչպես Նաղաշի և Հովնաթանի՝ Մայր տաճարում գտնվող աշխատանքներում է, երբեմն համադրվում է այլ խորհրդանիշերի հետ՝ իմաստային նոր շերտեր ավելացնելով պատկերին, ինչպես 18-րդ դ. հայ եկեղեցական գեղանկարչության բարձր-

¹ **Տ. Խաչատրեան**, Հոգևոր պատկերը մոնոֆունկցիոն է կանոնի նշանակությամբ եկեղեցական կերպարվեստում, «Գանձասար», Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի Աստվածաբանական հանդես, N Գ, 1993, էջ 321:

² *Средневековый Бестиарий* / Автор статьи и коммент. К. Муратова., Москва, „Искусство“, , 1984, 242 с., ил. рус., англ. Գրքում ներկայացվում է Սանկտ-Պետերբուրգի Մ. Սալտիկով-Չշեդրինի անվ. պետական հանրային գրադարանում պահվող «Лат. Q. v. V. I» ձեռագիրը:

³ Նույն տեղում, էջ 5, 11, 13:

⁴ *Խորանների մեկնություններ* / Աշխատասիրեց՝ Վ. Դազարյանը, Երևան, «Սարգիս Խաչենց ԱՅԲԵՆԳԻԲ» հրատ., 1995, 191 էջ, նկ.:

⁵ *Энциклопедия символов*, Москва, „Крон Прес“, , 1998, с. 152. **Т. Знамеровская**, *Хусене Рибера*, Москва, „Искусство“, , 1981, с.128-138, ил. 63.

արժեք ստեղծագործություններից մեկը համարվող Հովնաթանի «Վերափոխումն Աստվածածնի» սրբապատկերում⁶։ Ս. Կույսը պատկերված է գնդաձև ամպերով շրջապատված մանդորլայի մեջ կանգնած, գլխի շուրջ՝ ճաճանչափայլ լուսապսակ, ոտքերի տակ՝ լուսնի մահիկ, ձեռքերն աղոթելու դիրքով կրծքի վրա բռնած, իսկ գլխավերևում, սպիտակաթույր ամպերով երիզված աստվածային ոլորտում՝ Ս. Երրորդությունը։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Աստվածածնին բնորոշող 28 խորհրդանիշ-պատկերները, որոնք տեղավորված են ամպերի շղթայից դուրս՝ նկարադաշտի վրա և ունեն համապարասխան բացատրագրեր (օրինակ՝ «Գեղեցիկ որպես լուսին», «Պարտեզ փակեալ», «Մաքուր աղավնի», «Սափոր ոսկեղեն», «Աշտարակ Դավթի» և այլն)⁷։ Դրանց միջոցով գեղարվեստական մարմնավորում է ստացել Հին ու Նոր Կտակարանների հոգևոր և գաղափարական միասնությունը, որն իրականացնում է Աստվածածինը, որպես «Մայր Աստուծոյ եւ Մայր Եկեղեցոյ»⁸։

1815 թ. հիշատակային մակագրությամբ «Աստվածածնի թագադրումը» պատկերում աղոթողի դիրքով կանգնած և Ս. Երրորդության կողմից թագադրվող Կույս Մարիամի ոտքերի տակ լուսնի մահիկից բացի պատկերված է ատամներով խնձոր բռնած երկար օձ։ Խորհրդանշական այս մանրամասնի միջոցով Աստվածածնի կերպարում իր արտահայտությունն է գտել աղամական մեղքից ազատվելու գաղափարը, Գրիգոր Նարեկացու ձևակերպմամբ՝ որպես «տաճար սրբափայլ», որ «աղամական մարմնի կործանված խորանը վերականգնեց»⁹։ Տեսարանի բովանդակությունը հարուստանում է նաև կտավի ուղղահայաց եզրաշերտերին տեղադրված Աստվածային խոսքը քարոզող առաքյալների պատկերներով։

Հայկական սրբանկարչության մեջ բավականին տարածված են սրբերի, առաքյալների, մարգարեների, Հայ եկեղեցու հովվապետների ու վարդապետների պարզ հորինվածքով միաձև պատկերները։ Կամարաձև վերնամասով կտավի ուղղահայաց առանցքին գիրք, գալար կամ նահատակության առարկան ձեռքին, հասակով մեկ կանգնած սրբի ով լինելը ներկայացվում է նրա վարքի փոքրադիր դրվագների կամ անձը բնորոշող խորհրդանշական այլ մանրամասների միջոցով։ 18-րդ դ. ուշագրավ աշխատանքներ են ստեղծվել Էջմիածնի Մայր տաճարի համար, որոնցից են Հայաստանի ազգային պատկերասրահում ցուցադրվող Եզեկիել (կտ., յուղ., 220x97, Գ - 809) և Եղիա (կտ., յուղ., 218x97, Գ - 825) մարգարեների պատկերները։

Եզեկիելի ձեռքին կրծքի վրա բռնած գրքի բացված էջերին ընթերցվում է նրա հայտնի խոսքերից մեկը (Եզեկիել, Գլ. 10, 9-10, Գլ. 44, 3-4), ոտքերի մոտ Աստվածհայտնության տեսիլի խորհրդապատկերներն են՝ աջից փոքր չափերով հրե սայլի չորս անիվներ, ձախից՝ երկնային ուժերը խորհրդանշող քառակերպ, այնպես, ինչպես նկարագրված է մարգարեի տեսիլքում (Եզեկիել, Գլ. 1, 4-11)։ Այդ պատկերների կարևորությունը շեշտվում է ինչպես հստակ ուրվագծերով ու մանրակրկիտ մշակումով, այնպես էլ այդ հատվածների առավել լուսավոր խորքով։ Կրակի լեզվակներով շրջապատված սայլի անիվներն ու քառակերպը պատկերման ձևով հիշեցնում են Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու (7-րդ դ.) նշանավոր որմնանկարը, ինչը մտածել է տալիս, որ հեղինակը ծանոթ է Աստվածհայտնության տեսարանի պատկերագրության հայկական տարբերակին և կիրառել է տեղական պատկերատիպին բնորոշ կերպավորման այլաբանական, սիմվոլիկ եղանակը։ Այս առանձնահատկությունը տեսնելու համար բավական է մեր սրբապատկերը համեմատել բյուզանդական և արևմտաեվրոպական արվեստի գործերի հետ (Սալոնիկի Հոսիոս Դավիդ եկեղեցու, 5-6-րդ դդ. խճանկար, Փարիզի ազգային գրադարանի 14-րդ դ. սրբապատկեր)¹⁰։ Տարբեր դարաշրջանների ու երկրների մշակույթի, գեղարվեստական մտածողության ու ոճի բազմազանությամբ հանդերձ, վերոհիշյալ հուշարձանների համար ընդհանուր է տեսարանի ընկալման ու մեկնաբանման պատմողական, նկարագրական ձևը։

Եղիա մարգարեի պատկերում նրա ոտքերի մոտ, կտավի աջ անկյունում, նկարված է հաց կտցին ագռավ, ուսից վերև, ամպերի վրա, կրակի բոցերով շրջապատված ձիակառք, որոնք կապվում են Եղիա մարգարեի վարքի հետևյալ երկու դրվագների հետի։ Առաջինն այն է, որ երաշտի ժամանակ Աստծո հանձնարարությամբ Եղիան գնում, թաքնվում է Քոռաթի հեղեղատի մոտ, և Տիրոջ հրամանով ագռավներն են նրան կերակրում՝ ամեն առավոտ և երեկոյան հաց ու միս բերելով (Թագ. Գ. 17. 2-6)։ Այս պատմության հիման վրա «Եղիա մարգարեն անապատում» սյուժեով առաջին պատկերները ստեղծվել են 9-րդ դ. ճարտարապետական քանդակագործման ու մանրանկարչության մեջ¹¹։ 13-14-րդ

⁶ Գ. Հովսեփյան, *Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. 2*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 289։

⁷ Խորհրդանիշ-պատկերների սկզբնաղբյուրները և վերլուծությունը տես՝ Ա. Ս. Ավետիսյան, Սիմեոն կաթողիկոսի պատվիրած մի նկարի մասին, «*Էջմիածին*» ամսագիր, 1992, N 9-10, էջ 149-156։

⁸ Նույն տեղում, էջ 152։

⁹ Գրիգոր Նարեկացի, *Ներքող Աստվածածնին* / Թարգմ. գրաբարից՝ Ասողիկ եպս., Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 1996, էջ 25։

¹⁰ В. Лазарев, *История византийской живописи*, т. 1, Москва, „Искусство“, 1986, с. 31, 169, таб. 12-14, 555.

¹¹ *Lexikon der christlichen ikonographie / Allgemeine ikonographie*, том 1, Herder. Edt. Rom. Frelburg. Basel. Wien, 1968, p. 607. *Каталог древнерусской живописи, т. 1* / Сост. В. Антонова, Н. Мнеева, Москва, „Искусство“, 1963, с. 182-183, ил. 91(140), т. 2, с. 457-458, ил. 165. В. Лазарев, նշված աշխ., էջ 98, տախտակ 332։

դդ. արևելաքրիստոնեական արվեստում (Սինայի Ս. Եկատերինա եկեղեցու 13-րդ դ. սրբապատկեր, Տրետյակովյան պատկերասրահի 13-րդ դ. սրբապատկեր) տարածված հորինվածքում մարգարեն մերկայացվում է պատկառազու ծերունու կերպարանքով, քարայրում մտածողի դիրքով (գլուխը ձեռքին հենված) նստած, գլխավերևում՝ ժայռի ծերային, կտցին հաց ագռավ (երբեմն նաև մի քանի թռչող ագռավներ), ոտքերի մոտով հոսող գետ կամ թիկունքի կողմում՝ ջրվեժ: Այս ամենին մեր նկարում փոխարինում է կտցին հաց ագռավը, որը Եդիս մարգարեի պատկերագրության տարածված բաղադրիչն է¹²:

Պատկերագրական առանձին կերպավորում ունի Եդիսի երկինք բարձրանալու պատմությունը (Թագ. Դ. 2. 8-14): Այս սյուժեով առաջին գործերը ստեղծվել են վաղ միջնադարյան բյուզանդական արվեստում (Վիա Լատինայի 4-րդ դ. կատակոնքների որմնանկար, Սիլանի Սան Լորենցո եկեղեցու 4-5-րդ դ., խճանկար) և լայն տարածում գտել 13-14-րդ դդ.¹³: Եդիսն պատկերվում է բոսորագույն, 3-5 նժույգներ լծած կառքում, սանձը ձեռքին դեպի երկինք սրընթաց շարժման մեջ: Այս հորինվածքով պատկերները խորհրդաբանորեն կապվում են Բրիստոսի համբարձման տեսարանի հետ և դիտարկվում որպես վերջինիս նախազադափար: Ավանդական պատկերագրությամբ աշխատանքների հետ համեմատելով մեր նկարը՝ տեսնում ենք, որ հայ նկարիչը տեսարանի գաղափարն արտահայտել է կրճատումով և ընդհանրացված ձևով. ամպերի մեջ երկու հրաշեկ ձի է՝ գավակին՝ կառքի նստատեղը:

Գեղարվեստական ու խորհրդանշական հարուստ բովանդակություն ունի Հովնաթանի «Աստվածածինը Մանկան, Ս. Հովհաննեսի և Ս. Հակոբի հետ» մեծակտավ աշխատանքը (կտ., յուղ., 207x93): Նկարիչը մեծ վարպետությամբ համատեղելով Աստվածածնի զանազան կերպավորումների բնորոշ մանրամասներ՝ ստեղծել է նոր ու հարուստ բովանդակությամբ սրբապատկեր: Մարիամը՝ որպես Աստվածորդու մայր, գործվանքով գրկել է իր թևին նստած Մանուկ Հիսուսին, որպես Երկնային և Երկրային թագուհի, բազմել է շքեղ ու քանդակազարդ գահի վրա, ոտքերի տակ երկաստիճան պատվանդան է, հագին կարմիր շապիկ և ոսկետտուն կապույտ թիկնոց, գլխին՝ գոհարազարդ ոսկե թագ (նման թագով է նաև Հիսուս): Նրա երկու կողմերում հանդիսավոր կեցվածքով կանգնած են բարեխոս սրբերը: Հովնաթանը հետևել է նրանց պատկերագրության ավանդական կանոնին: Գլխատվելով նահատակված Ս. Հակոբը պատկերված է կտրված գլուխը կրծքին բռնած դիրքով, Հովհաննես ավետարանիչը՝ գեղեցկատես երիտասարդի կերպարանքով, որի մի ձեռքին ոսկեգույն սկիի է, մեջը՝ օձ, ինչը ցույց է տալիս մյուս ձեռքով: Բրիստոնեական արվեստում բաժակ, որի մեջ օձ է, համարվում է Հովհաննես ավետարանիչի բաղադրիչներից մեկը¹⁴: Դասական օրինակներից են Հանս Մեմլինգի (1433-1494) «Ս. Հովհաննես ավետարանիչ» (1468, փայտ, յուղ., 71x30, Լոնդոնի ազգային թանգարան) և Էլ Գրեկոյի (1541-1614)՝ Մադրիդի Պրադոյում գտնվող, նույնանուն (մոտ. 1605 թ., կտ., յուղ., 99,7x78) աշխատանքները¹⁵: Այս խորհրդանշական պատկերի առաջացումը կապվում է սրբի վարքի հետևյալ պատմության հետ: Ավանդության համաձայն հերձվածողները նրան տվել են մահաբեր թույնով բաժակ: Հովհաննեսը խաչակնքել է բաժակը և թույնի ազդեցությունը չեզոքացել է, երբ խմել է այն չի վնասվել¹⁶: Ավետարանի կերպարի մեկնաբանման համար կարևոր նշանակություն ունի այն, որ նրա ձեռքին ոչ թե առօրյա գործածության գավաթ է, ինչով փորձել են նրան թունավորել, այլ հաղորդության սկիի՝ որպես պատարագի սրբազան խորհրդի և աստվածային սիրո նշան: Նկատենք, որ վանդակավոր հատակի միջոցով հեռանկարի տպավորություն ստեղծելու ձգտումը, ավետարանի մարմնի դիրքն ու ձեռքի շարժումը, ոսկե սկիի հիշեցնում են Հ. Մեմլինգի համանուն նկարը: Ակնհայտ է, որ նկարիչը ծանոթ է եվրոպական նախօրինակի: Հովնաթանը երբեմն օգտվել է եվրոպական արվեստի ստեղծագործությունից, ինչը զուգորդելով ազգային սրբանկարչության ավանդույթին՝ ստեղծել հայկական հավաքական, ընդհանրացված դիմագծերով, ոգեղեն ու ներհույն կերպարներով սրբապատկերներ:

Վերոհիշյալ սրբապատկերների վերլուծությունից հանգում ենք այն հետևության, որ քրիստոնեական ու հայ արվեստի պատկերագրության իմացությունը նկարիչներին հնարավորություն է տվել, ըստ անհրաժեշտության գործածել խորհրդանշ-պատկերները, երբեմն նոր ու ինքնատիպ մեկնաբանությամբ հարստացնել սրբապատկերի բովանդակությունը, ինչպես նաև դրսևորել իրենց վարպետությունն ու հոգևոր գիտելիքները:

¹² Дж. Тресиддер, Словарь символов, Москва, 1999, с. 49-50.

¹³ Lexikon der christlichen ikonographie, նշված աշխ. էջ 608: М. Алпатов, Древнерусская иконопись, Москва, „Искусство“, изд., 1978, с. 312, ил. 129. В. Лазарев, նշված աշխ., էջ 26:

¹⁴ Д. Апостолос-Каппадонна, Словарь христианского искусства, Москва, „Искусство“, 2000, с. 97-98.

¹⁵ М. Герман, Мемлинг, Ленинград, „Искусство“, 1983, с. 47-50, ил. 15. Т. Кантерева, Искусство Испании. Очерки, Москва, „Искусство“, 1989, с. 348, ил. 189.

¹⁶ Մ. վրդ. Ազգերեան, Լիակատար վարք եւ վկայարանութիւն Սրբոց, Վենետիկ, Ս. Ղազար, 1810, էջ 1020:

A NUMBER OF SYMBOLIC IMAGES IN ARMENIAN ICON- PAINTING OF THE 17th-19th CENTURIES

The article examines symbolic and allegorical objects, animals and plants (crescent, snake, stars, chalice, crow, etc) incorporated in Armenian icons of the 17th-19th centuries (Madonna with Child by Naghash Hovnatani; The Assumption of the Virgin by Hovnatani Hovnatani; Madonna and Child with St. John and St. Jacob by 18th-century unknown artist; Prophet Elijah and others) with regard to the origin of their attributed meaning.

Iconographic and pictorial knowledge of Christian and Armenian art provided the painters with an opportunity to enrich the subject matter of an icon with new interpretations through the use of symbolic images, as well as to demonstrate their mastery and spiritual knowledge.

Մելանյա Բալայան (ԼՂՀ)

ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 6-7-րդ ԴԱՐԵՐՈՒՄ

Աղվանից կաթողիկոսության հոգևոր քաղաքական սահմանները, այլ կերպ ասած, նրանում միավորված եպիսկոպոսությունների հիմնահարցը առ այսօր հեռու է պատմագիտական սպառնիչ վերլուծությունից՝ հիմնականում պահպանված սկզբնաղբյուրների սակավաթիվ լինելու պատճառով: Սակայն հիմնախնդրի կարևորությունն ու արդիականությունը մեծ է և, թեկուզև աղբյուրների սակավության պայմաններում, պատմագիտական լուրջ քննության կարիք ունի:

Քննարկվող հիմնախնդրի շրջանակներում մեր նպատակն է առկա աղբյուրների համադրման և պատմագիտական քննության արդյունքում բացահայտել Հայ Աղվանից կաթողիկոսության հիմնադրման ժամանակաշրջանում նրանում միավորված եպիսկոպոսությունները, հետևաբար պարզել նաև կաթողիկոսության վարչաքաղաքական գործունեության շրջանակները:

Հարցին առաջին անգամ անդրադարձել է Մակար արքեպիսկոպոս Բարխուդարյանը, որ սակայն բավական հպանցիկ է. «Արցախեան մէն մի գաւառ ունեցած է իւր սեպիական վանքը եւ իւր առանձին գաւառակալ առաջնորդը՝ միաբաններով հանդերձ, որ, նստելով իւր իսկ վանքում, հովուած է նոյն գաւառի բանաւոր հօտը, օրինակ՝ Դիզակ գաւառն՝ իբրեւ եպիսկոպոսարան, նախ՝ ունեցած է Դիզակի վանքը, ապա՝ Կաւաք, ապա՝ Գտիչ եւ յետոյ՝ Սպիտակ-Խաչ վանքը. Վարանդան՝ Ամարասը եւ Հիւրիների տաճարը եւ երբեմն՝ Քոչիզի շինութիւնը. Խաչենն՝ Մեծ-արանց կամ Մեծ-իրանաց վանքը եւ Մայրաքաղաք, Ընստակ գաւառն՝ Դատի վանքը, Ջրաբերդը՝ Ջրվշտի կամ Եղիշ-առաքելի վանքը, Մեծ Կողմանք կամ Կիւլտանն՝ նախ՝ Հոռեկայ, եւ ապա՝ Ամենափրկիչ վանքերը, Գարդմանն՝ նախ՝ Մլգնաբերդ եւ յետոյ՝ Թարգմանչաց վանքերը, Փառիստն՝ նախ՝ Փառիստի, ապա՝ Խորանաշատի եւ յետոյ՝ Չարեքայ վանքերը, Քուստի կամ Քաւս գաւառն՝ Շխմուրատայ եւ Վարագայ վանքերը եւ այլն, եւ այլն»¹: Սակայն հարկ է նկատել, որ հոգևորական-պատմագրի այդ հպանցիկ անդրադարձն, այնուամենայնիվ, որոշակի հնարավորություն է ընձեռում ծավալել ուսումնասիրության շրջանակները նախանշած ուղղություններով:

Մակար արք. Բարխուդարյանցի նշած. «Արցախեան մէն մի գաւառ ունեցած է իւր սեպիական վանքը եւ իւր առանձին գաւառակալ առաջնորդը՝ միաբաններով հանդերձ, որ, նստելով իւր իսկ վանքում, հովուած է նոյն գաւառի բանաւոր հօտը», բավական տրամաբանական է և կասկածի տեղիք չի տալիս այն տեսակետը, որ, իրավամբ, Արցախի գավառներից յուրաքանչյուրն ուներ իր հոգևոր կենտրոնը՝ եպիսկոպոսարանը, մանավանդ, որ Հայ եկեղեցու թեմական բաժանումը հենց նույն սկզբունքով էր արված, մի հանգամանք, որի բավական հետաքրքիր վերլուծությունը, սկզբնաղբյուրների հիման վրա, կատարել են Նիկողայոս Ադունցը², Բաբկեն Հարությունյանը³ և այլք: Մակար արք. Բարխուդարյանցի տեղեկությունը գավառակալ առաջնորդների վերաբերյալ հնարավորություն է տալիս ուսումնասիրելու նաև բուն Աղվանքի տարածքում գոյություն ունեցած և Աղվանից եկեղեցու ենթակայության տակ եղած եպիսկոպոսությունների հիմնահարցը, որ նույնպես կարևորություն է ներկայացնում հիմնախնդրի ըստ էության պարզաբանման բնագավառում:

¹ Մ. Բարխուդարյանց, *Արցախ, էջ 155-156*:

² Նիկողայոս Ադունց, *Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987*:

³ Բաբկեն Հարությունյան, *Հայոց եկեղեցու թեմական բաժանումը, ՊԲՀ, հմ. 2, 2000*:

Հիմնահարցի քննության ընթացքում, մեր կարծիքով, պետք է հաշվի առնվի նաև այն հանգամանքը, որ չնայած Աղվանից եկեղեցին, ըստ էության, հանդիսացել է Հայ եկեղեցու ընդհանուր կառուցվածքային տարրերից մեկը, սակայն, ինչպես որ իրավացիորեն նշել է Ն. Աղոնցը. «Պատմական Հայաստանը ոչ մշակութային, ոչ էլ քաղաքականապես միատարր ամբողջություն չէր, և նրա յուրաքանչյուր մասի բախտը պետք է քննության առնվի տվյալ մասի սեփական պայմաններում: Հայ եկեղեցին Հայաստանի մի մասում բոլորովին այն չէր, ինչ էր մյուս մասում. դա կախված էր նրան շրջապատող քաղաքական մթնոլորտից»⁴: Հետևաբար, հիմնախնդրի քննարկման հիմքում պետք է դրվի Հայոց արևելից գավառների քաղաքական ու վարչական կացությունն ու դրա փոփոխությունները պատմաքաղաքական իրադարձությունների ազդեցության տակ և, իհարկե, նաև բուն եկեղեցու պատմական աստիճանական ընթացքի վրա:

Հիմնախնդրի քննարկման հիմնակետ պետք հանդիսանա մախ և առաջ Հայ եկեղեցու կազմավորման հանգամանքներն ու սկզբունքները, որը բնականորեն իր ուղղակի անդրադարձներն է ունեցել նրա իսկ ենթակառույցը հանդիսացող Աղվանից կաթողիկոսության վրա:

Հիմնախնդրի պարզաբանմանը նպաստող վկայություն պետք է ընդունել Ստեփանոս Օրբելյանի տեղեկությունները Գրիգոր Լուսավորչի կողմից 36 եպիսկոպոսական աթոռներ հիմնելու մասին⁵, որին լրացնող ու հաստատող տվյալներ պարունակում է նաև «Գահնամակը»: Ինչպես նշում է Ն. Աղոնցը, IV դարի սկզբին եպիսկոպոսական թեմեր հավանաբար ունեին ազդեցիկ նախարարական տոհմերը: Եվ քանի որ Գրիգոր Լուսավորչին Կեսարիա ուղեկցողները մույնպես Հայոց ամենաազդեցիկ նախարարական տոհմերի ներկայացուցիչներն էին, որոնց թվում էին նաև «Ուտիացուց, Գարդմացուց և Ծավդեացուց իշխանները»⁶, ուստի անկարելի է, որ նրանք չունենային իրենց եպիսկոպոսական աթոռները:

Օրբելյանի հիշատակած 36 եպիսկոպոսությունների ստեղծման վկայությամբ, ինչպես նաև «Գահնամակի» և այլ սկզբնաղբյուրների քննության արդյունքում Բ.Հարությունյանը, թվարկելով 36 եպիսկոպոսությունները, նշել է, որ «քրիստոնեության պետական կրոն հռչակման ժամանակներում Մեծ Հայքի կաթողիկոսը հաստատեց 36 եպիսկոպոսական աթոռներ, որոնց հիմքում դրված էր երկակի սկզբունք՝ թագավորության, ըստ աշխարհների վարչական բաժանումը, և ավատականության ուղին բռնած Հայաստանի առավել նշանավոր իշխանական ընտանիքների եպիսկոպոսական թեմերի իրավունք տալը»⁷: Բ. Հարությունյանը 36 եպիսկոպոսությունների շարքում իրավացիորեն դասում է նաև Ծավդեցի եպիսկոպոսին, որը ներկայացնում էր Մեծ Հայքի Արցախ նահանգը և Ուտիքի եպիսկոպոսին⁸: Սակայն հարկ է նկատել, որ սկզբնապես հաստատված այդ 36 եպիսկոպոսությունները, բնականաբար, քրիստոնեության ավելի հիմնավոր հաստատմանը զուգընթաց, չէին կարող մնալ մույնը, ինչպես թվաքանակի, այնպես էլ տարածքային տեսանկյունից: Ինչպես իրավացիորեն նշել է Բ. Հարությունյանը, որ «եպիսկոպոսական աթոռների հաստատման հիմքում դրված էր երկակի սկզբունք՝ թագավորության, ըստ աշխարհների վարչական բաժանումը», ապա պետք է այդ հիմքի վրա նկատել նաև, որ վարչական բաժանումները պատմաքաղաքական իրադարձությունների ազդեցության տակ մշտական փոփոխություններ են կրել, մասնավորապես կամ ավելի մանրատվել, և կամ վարչական այս կամ այն միավորին կցվել, մի հանգամանք, որն ուղղակիորեն անդրադարձել է նաև եկեղեցական հաստատության վրա: Այսինքն, կարելի է վստահաբար ասել, որ քաղաքական հանգամանքների բերումով գոյություն ունեցած եպիսկոպոսությունները երբեմն տրոհվել են, իսկ երբեմն էլ պարզապես ստեղծվել են նորերը և բնականաբար այս ամենի արդյունքում նախապես հաստատված եպիսկոպոսական թեմերի քանակը աստիճանաբար ավելացել է:

Հիմնախնդրի պարզաբանման տեսանկյունից մեծ կարևորություն են ներկայացնում նաև եկեղեցական ժողովների արձանագրությունները, վիմագիր աղբյուրները, այդ թվում տապանաքարերը: Վիմագիր աղբյուրների առումով արժանահիշատակ գործեր են հանդիսանում Սարգիս արք. Ջալալյանցի⁹, Մակար արք. Բարխուդարյանցի¹⁰, Ս. Բարխուդարյանցի¹¹, Ս. Կարապետյանի¹² աշխատությունները:

Հայ Աղվանից եկեղեցական ժողովների մասին առաջին հիշատակությունը Վաչագան Բարեպաշտի կողմից նախաձեռնած Աղվենի ժողովն է, որի մասնակիցների անունները, բարեբախտաբար, գրի է առել Մ. Դասխուրյանցին, և այն ևս մեծ կարևորություն է ներկայացնում հիշյալ հիմնախնդրի

⁴ Նիկողայոս Աղոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 359:

⁵ Ստեփանոս Օրբելյան, էջ 25:

⁶ Ագաթանգեղոս, էջ 446:

⁷ Բ. Հարությունյան, Հայոց եկեղեցու թեմական բաժանումը, ՊԲՀ, 2000թ., N 2, էջ 126:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 123:

⁹ Ս. Ջալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս Ա, Տիփլիս, 1842, մաս Բ, Տիփլիս, 1858:

¹⁰ Ս. Բարխուդարյանց, Արցախ, Աղվանից երկիր և դրացիք, Եր., 1999:

¹¹ Ս. Բարխուդարյանց, Դիվան հայ վիմագրության, սյրակ V, Եր., 1982:

¹² Ս. Կարապետյան, Բուն Աղվանների հայերեն վիմագրերը, Եր., 1997: Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Եր., 1999: Հյուսիսային Արցախ, Եր., 2004:

պարզաբանման համար: Ժողովի մասնակից եպիսկոպոսներն էին. «Շուփհադիշոյ՝ Պարտավայ արքեպիսկոպոս, Մանասէ՝ Կապադակայ եպիսկոպոս, Յունան՝ Հաշուայ՝ եպիսկոպոս, ... Անանիա, Սահակ և Ռտոյ Փոդ եպիսկոպոսներ, ... Շմատոն՝ Յրոյ (Գիզակի Յոր նշանավոր հոգևոր կենտրոնը-Մ.Բ) քորեպիսկոպոս»¹³: Այս տեղեկությունները կարևոր հիմք են հանդիսանում համապատասխան եպիսկոպոսությունների գոյությունը փաստացիորեն ընդունելու և ներկայացնելու համար: Ակնհայտորեն, պատմագիրը թվարկել է ժողովին միայն ներկա եպիսկոպոսների անունները, որոնք թվով 7-ն էին:

Այստեղ հարկ ենք համարում կրկին անդրադառնալ քաղաքական պայմանների թելադրանքով 5-րդ դարում կատարված վարչաքաղաքական փոփոխություններին, որոնք շրջադարձային ազդեցություն ունեցան եկեղեցական հաստատության կառուցվածքային նկարագրում: 462 թ. Պարսից արքունիքի կողմից կատարած վարչական քաղաքականության արդյունքում պատմական Հայաստանի Արցախ և Ռտիք նահանգները կցվեցին Աղվանից մարզպանությանը, որի հետևանքով հայկական հիշյալ նահանգների հոգևոր կենտրոնները հայտնվել էին մեկուսացման մեջ: Ծանր վիճակում էին նաև բուն Աղվանքի հայաբնակ վայրերի հոգևոր առաջնորդությունները: Ստեղծված պայմաններում հիշյալ հոգևոր առաջնորդությունները գերադասեցին միավորվել: Այսպես ձևավորվեց Աղվանից կաթողիկոսությունը՝ ենթակա եպիսկոպոսական կենտրոններով: Եպիսկոպոսներից մեկն էլ, տվյալ պարագայում, Մեծ Առանքի Աբաս եպիսկոպոսն ընտրվեց Հայ Աղվանից առաջին կաթողիկոս:

«Գիրք թղթոյմ» պահպանվել է Հովհաննես Բ. Գաբելենացու «Թուղթ գոր Տէր Յովհաննէս հայոց կաթողիկոս և այլ եպիսկոպոսունք, առ Աղուանից եպիսկոպոսունս արարին»¹⁴ վերնագրով նամակը, որն ուղղված էր. «Աբասու Պարտավայ եպիսկոպոսի, Մովսէսի Բախադատու եպիսկոպոսի, Գրիգորի Կապադականու եպիսկոպոսի, Հռոմակայ Ամարասու եպիսկոպոսի, Տիմաթէի Բաղասականու եպիսկոպոսի, Ամբակունայ Շաքիոյ եպիսկոպոսի, Յոհանակայ Գարդմանաց եպիսկոպոսի, Ղևոնդի Մեծկուանց եպիսկոպոսի»: Նույն գրությունը պահպանվել է նաև Մ. Կաղանկատվացու աշխատության մեջ, սակայն պետք է նկատել, որ երկրորդ տարբերակում Աբասը հիշատակվում է ոչ թե որպես «եպիսկոպոս», այլ «կաթողիկոս»¹⁵: Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնելու, որ Աղվանից եկեղեցին Հայոց կաթողիկոսության հարաբերությամբ ճանաչվում էր որպես ենթակա թեմ և ոչ առանձին կաթողիկոսություն:

Ս. Երեմյանը, հենվելով Հովհաննես Բ. Գաբելենացու կողմից հիշատակված անունների վրա, գտնում է, որ Աղվանից կաթողիկոսությունը հիշյալ ժամանակաշրջանում բաղկացած էր 8 եպիսկոպոսական թեմերից¹⁶: Սակայն Բ. Ուլուբաբյանը վիճարկելով հիշյալ կարծիքը, իրավացիորեն նշել է, որ Հովհ. Գաբելենացին պարզապես չի հիշատակել Աղվանքի եպիսկոպոսական բոլոր թեմերի առաջնորդների անունները: Առաջադրված տեսակետը նա հիմնավորում է, մեջբերելով նույն ժամանակաշրջանին պատկանող այլ աղբյուրներում հիշատակված Մեծառանից, Գուշա, Չողի և այլ առաջնորդանիստ կենտրոնները¹⁷:

Melanya Balayan (NKR)

Bishoprics of the Albanian Catholicosate (6th-7th cc.)

The spiritual-political borders of the catholicosate of Albania, in other words, the problem of the bishoprics that were involved in it, even today is very far from complete historical analysis because of the small number of basically preserved sources. However, the importance and actuality of the problem is great, and, even in case of small number of sources, it needs deep historical examination.

* Հաշու- բնակավայր բուն Աղվանքում:

¹³ Մ. Կաղանկատվացի, էջ 89-90:

¹⁴ «Գիրք թղթոյմ», էջ 81-84:

¹⁵ Մ. Կաղանկատվացի, էջ 126:

¹⁶ С.Т.Еремян, Экономический и социальный строй Албании III-VII веках, в кн. «Очерки истории СССР III-IX веков», Москва, 1958, стр. 324.

¹⁷ Բ. Ուլուբաբյան, Հայոց Արևելից եկեղեցին և մշակույթը, էջ 117:

Հրաչիկ Միրզոյան (Հայաստան)

ԶԱԶԱՐԻԱ ԱԳՈՒԼԵՑՈՒ ԵՐԿԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՆԱԴՐՅՈՒՐ

Հայ վաճառականության թողած մատենագրական հարուստ ժառանգության մեջ առանձնահատուկ արժեք ունի XVII դ. ականավոր վաճառական Զաքարիա Ագուլեցու «Օրագրություն» երկը, որն իրավամբ համարվում է դարի երկրորդ կեսի (1647-1681 թթ.) հայոց պատմության «ստուգապատում ու փաստառատ»¹ սկզբնաղբյուր:

Ագուլեցին ծնվել է պատմական Հայաստանի Գողթն գավառի Ագուլիս գյուղաքաղաքում 1630 թ. «սուրբ Գեորգի կիրակի օրն կես օրեն յետն»²: Ուսումնառել է իր հորեղբորորդի Տեր-Մելքումի մոտ, որի մասին գոհունակությամբ ասում է, որ «լաւ քահանայ էր» (էջ 93): Տասնյոթ տարին դեռ չըլլորած, այսինքն՝ 1647 թ. մարտի 5-ին, «աղուհացից առաջի շաբթոյն ուրբաթ օրն» իր հոր, մոր և եղբոր «հրամանաւ» ու իր «յօժար» կամքով «հօրեղբորդի պարոն Նիկողոսին յետ» բռնում է աստանդական վաճառականի ցուպը և մեկ բեռ մետաքսով ճանապարհվում դեպի Զմյուռնիա, որով սկսվում է դեպքերով ու իրադարձություններով, հաջողություններով ու անհաջողություններով, տագնապներով ու դժվարություններով հարուստ նրա վաճառականական գործունեությունը և տևում մինչև 1663 թ. նոյեմբեր ամիսը: Բանն այն է, որ ավելի քան 16-ամյա առևտրական գործունեությամբ կուտակելով անհրաժեշտ դրամագույն՝ այնուհետև անցնում է խոջայական վերնախավի շարքերը, այսինքն՝ դառնում է *աղապարոն* և զբաղվում նստակյաց գործունեությամբ: Այլ խոսքով, եթե մինչ այդ նա առևտուր էր անում այլոց դրամագլխով, ապա դրանից հետո իր ունեցած դրամագույնը շարժման մեջ է դնում ուրիշների միջոցով. համաձայն գործող սկզբունքի՝ ստացված եկամտի երեք չորրորդը պատկանում էր դրամատիրոջը, իսկ մեկ չորրորդը՝ շրջիկ վաճառականին³: Ունենալով պատշաճ գրագիտություն և սեփական մտքերը թղթին հանձնելու բնատուր ձիրք՝ Զաքարիա Ագուլեցին սկզբից երեք որոշում է Աստծու կամքով ուր որ գնա՝ «թէ գիւղ, թէ քաղաք, թէ ավեր ճանապարհ, ուր և հանդիբիցէ, գատիկ կամ վարդավառ կամ սուրբ խաչ կամ ջրարհինիք» (էջ 5), գրի առնի: Ավելին, ինչ որ տեսնում ու որոշում է գրի առնել, թղթին է հանձնում ոչ թե իր ստացած անմիջական, գուցե և սխալ տպավորությունը, այլ իմաստուն մարդկանց, այսինքն՝ այդ ամենին ավելի քաջագիտակներին «հարցանելով»: Ընդ որում, առաջին՝ 16,5 տարվա գրառումներն ըստ էության հապճեպորեն կատարված սևագրություններ էին՝ «ոմն ըստուք, ոմն սխալ» (էջ 6). անցնելով նստակյաց կյանքի՝ Ագուլեցին 1664 թ. հանգիստ պայմաններում մաքրագրել է դրանք՝ բերելով վերջնական տեսքի: Անշուշտ, հետագայում ևս Ագուլեցին շարունակել է կատարել համապատասխան գրառումներ, բայց սրանք իրենց բնույթով ու բովանդակությամբ էապես տարբերվում են նախորդներից: Այդ է պատճառը, որ ականավոր պատմաբան Ա. Հովհաննիսյանն Ագուլեցու երկն անվանում է նաև «տարեգրություն»⁴:

Իբրև իր նկարագրած պատմական դեպքերի, փաստերի ու իրադարձությունների անմիջական ականատես ու մասնակից՝ հայ վաճառականը կարողացել է ստեղծել XVII դ. երկրորդ կեսի հայոց պատմության, ի մասնավորի տնտեսական, քաղաքական, մշակութային ու եկեղեցական կյանքի, հայ վաճառականության վարք ու բարքի, օտար տիրակալների վարած հարկային ու կրոնական դաժան քաղաքականության ու համանման այլ իրողությունների մասին բացառիկ մի երկ: Պատմագիտական իր արժանիքների համար էլ հենց Զաքարիա Ագուլեցու երկը դեռևս XIX դարավերջին արժանացել է մասնագետների ուշադրությանը. ոմանք օգտվել են նրանից, նույնիսկ անհաջող փորձ կատարել այն հրատարակելու, բայց ի վերջո լույս է տեսել 1938 թ., իսկ մեկ տարի անց՝ 1939 թ., տպագրվել է նաև ռուսերեն: Ինչ խոսք, սա հայ բազմադարյան տպագրության պատմության փայլուն էջերից է և վկայում է ոչ միայն Ագուլեցու երկի կարևորության, այլև հրատարակիչների գիտական բարձր մտածողության մասին: Այսուհանդերձ չպետք է մոռանալ, որ խնդրո առարկա տպագրություններն իրականացվել են խորհրդային բռնատիրության ամենադժնդակ ժամանակաշրջանում, որը, անշուշտ, անջնջելի հետք է թողել դրանց վրա: Ի հաստատումն ասվածի՝ հարկ է նշել, որ հայերեն հրատարակության «Առաջաբանի տեղ» անստորագիր⁵ ներածականում թեև ընդհանուր առմամբ շատ բարձր է գնահատված Ագուլե-

¹ Տե՛ս Ա. Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*, գիրք երկրորդ, Եր., 1959, էջ 123:

² «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», Եր., 1938, էջ 5: Այսուհետև այս հրատարակությունից մեջբերում կատարելիս էջահամարը նշվելու է տեքստում՝ փակագծերի մեջ:

³ Այդ մասին տե՛ս «Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու հաշվետվածքը», *աշխատասիրությամբ* Լ. Ս. Խաչիկյանի և Հ. Դ. Փափազյանի, Եր., 1984, էջ 10, 20, «Շահվելու որդի Սահրադի հաշունեմատեանը», *աշխատասիրությամբ* Շ. Լ. Խաչիկյանի, Եր., 1994, էջ 11, 23 ևն:

⁴ Տե՛ս Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 208:

⁵ Ուշագրավ է, որ թեև խնդրո առարկա տպագրության իրականացման համար կատարվել է շատ լուրջ գիտական աշխատանք, սակայն, ցավոք, ոչ մի նշում չկա ոչ աշխատասիրողի և ոչ էլ առաջաբանի հեղինակի մասին: Այսուհանդերձ ենթադրելի է, որ այդ ամենն իրականացրել է անվանի հայագետ, պրոֆ. Սմբատ Տեր-Ավետիսյանը: Նման ենթադրու-

ցու «Օրագրության» պատմագիտական արժեքը, բայց ոչինչ չի ասված ո՛չ հեղինակի կրոնական բարեպաշտության, ո՛չ էլ Հայ եկեղեցու պատմության համար նրա երկի կարևորության մասին: Միանգամայն հասկանալի է, որ ստալինյան բռնարարքների ամենադաժան տարիներին, երբ Սուրբ Էջմիածնում սեփական գահի վրա խեղդամահ արվեց Ամենայն Հայոց ընտրյալ Կաթողիկոսը, երբ զանգվածաբար ավերվում կամ պահեստների ու ախոռների էին վերածվում հայոց բազմադարյան եկեղեցիները, ոչ մի խոսք չէր կարող ասվել Ագուլեցու երկի կրոնակեղեցական նշանակության մասին:

Պատկերն ավելի տխուր է ռուսերեն հրատարակության պարագայում. այստեղ արդեն ոչ միայն դրական ոչինչ չի ասված մեզ հետաքրքրող տեսանկյունից, այլև մասամբ փորձ է արված նսեմացնելու հայ վաճառականի բարոյական նկարագիրն ու կրոնական բարեպաշտությունը: Բանն այն է, որ անկախ իր գտնվելու վայրից ու պայմաններից, իբրև բարեպաշտ վաճառական, Ագուլեցին բարեխղճորեն նշել է եկեղեցական տոները, հաճախ մասնակցել ուխտագնացությունների կամ կազմակերպել այդպիսիք, սերտ հարաբերություններ (նույնիսկ տնտեսական-ֆինանսական) ունեցել բարձրաստիճան հոգևորականների, այդ թվում Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Դ Ջուղայեցու հետ, անգամ մասնակցել Հայ եկեղեցու բարենորոգման գործընթացին:

Հայ բազմադարյան մատենագրության մեջ, առանց չափազանցության, դժվար է գտնել մեկ այլ գրավոր հուշարձան, որտեղ նույնպիսի բարեխղճությամբ նշված լինի, թե հեղինակն իր կյանքի երեսունչորս տարիներից յուրաքանչյուրի կրոնական բոլոր տոները որտե՞ղ, ո՞ր օրը, ի՞նչ պայմաններում և ի՞նչպե՞ս է նշել: Եվ ահա բարձր գնահատելով պարսից խաների վարած հարկային դաժան քաղաքականության մասին Ագուլեցու հայտնած տեղեկությունները՝ ռուսերեն առաջաբանում այնուհետև ասվում է, որ խաների նման «գյուղացիության համար նույնպիսի պարագիտ էր նաև հայկական և մուսուլմանական հոգևորականությունը: Բացի Սուրբ Էջմիածնի աթոռին գյուղացիության մուծած ամենամյա տուրքերից՝ տարբեր «նվերների» անվան տակ մեծ գումարներ էին տրվում այդ վանքի ներկայացուցիչներին կամ անձամբ Սուրբ Էջմիածնի Կաթողիկոսին՝ նրա պարտքերը փակելու համար: Դրանից բացի հոգևորականությունը գյուղացիությանը շահագործում էր բնական աղետների ժամանակ՝ երաշտ, անբերրիություն, երկրաշարժ, տարափոխիկ հիվանդություններ. նա գյուղեր էր տանում սրբերի մաստուցները և հավաքում խոշոր գումարներ: Չաքարիա Ագուլեցին այդ ամենը նկարագրում է համառոտակի՝ չանելով հանգամանալից դատողություններ և **չբողոքելով գոյություն ունեցող անարդարությունների դեմ**: Նա բավարարվում է միայն այն բանով, որ բոլոր ձախորդությունները վերագրում է մարդկային մեղքին» (Էջ 8-9, ընդգծումն իմն է - Հ. Մ.): Պարզվում է՝ գոյություն ունեցող սոցիալական անարդարությունների դեմ Ագուլեցու չբողոքելու հիմնական պատճառն այն է, որ իբր «վաճառականությունը և հոգևորականությունը» համագործակցում էին «ընդդեմ շահագործվող գյուղացիության» (Էջ 10):

Հայ եկեղեցու պատմության ուսումնասիրության համար Ագուլեցու երկի բացառիկ կարևորության ի սկզբանե անտեսումը, ցավոք, դարձել է յուրատեսակ ավանդույթ և շարունակվել նաև հետագա տասնամյակներում, որի պատճառով այն ինչպես հարկն է չի գնահատվել ու օգտագործվել: Ասվածի լավագույն հաստատումը կարող ենք տեսնել «Հայկական սովետական հանրագիտարանի» «Չաքարիա Ագուլեցի» բառահոդվածում⁶, որտեղ շատ բարձր գնահատելով Ագուլեցու երկի պարունակած բազմաբնույթ տեղեկությունների նշանակությունը XVII դ. երկրորդ կեսի հայոց պատմության տարաբնույթ հարցերի լուսաբանման համար, ընդհակառակը, ոչինչ չի ասվում մեզ հետաքրքրող տեսակետից: Այս առումով պատկերն ավելի անմխիթարական է «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանում (Եր., 2002), որտեղ ընդհանրապես բացակայում է Չաքարիա Ագուլեցու անունը⁷: Մինչդեռ Ագուլեցու օրագրություն-տարեգրությունը հարուստ տեղեկություններ է պարունակում ոչ միայն տվյալ շրջանի եկեղեցական տոների, ծեսերի, վանական մի շարք միաբանությունների կացության, եկեղեցաշինության, նշանավոր հոգևորականներից շատերի կյանքի, գործունեության ու բարոյական նկարագրի, ներեկեղեցական և միջեկեղեցական հարաբերությունների, թուրք ու պարսիկ տիրակալների՝ Հայաստանում վարած հակաքրիստոնեական քաղաքականության, մեր ժողովրդի ազգային նկարագրի ու ինքնության պահպանման ուղղությամբ հայ եկեղեցու ծավալած դժվարին գործունեության և այդօրինակ այլ հարցերի, այլև Հայ եկեղեցու բարենորոգման գործում հեղինակի գործուն մասնակցության մասին: Օրինակ՝ 1680 թ. վերաբերող գրանցումներում կարդում ենք. «1129 յունվարի **ի**եռում Աբուլիս Վերի քաղի սուրբ Քրիստափոր եկեղեցումն այսօր զանձանակ սահմանեցինք, որ ամեն շաբաթ իրիգուն զանձանակ բռնեն, եկեղեցուն համար շորագին լինի: Առաջմէ կայր ոչ, նոր ըսկսբն արարք: **Դուքի շինեցի**, ֆռանկի փակով, միրեցինք, որ թաբաղ բռնեն, ինչ որ գայ, ածէն դուրսին: **Ես Չաքարես, դ, ե տարի այ,**

քյան տեղիք է տալիս գրքի չորրորդ (IV) էջի ներքևում մանր տառերով կատարված նշումը՝ «Պատ. խմբագիր՝ պրոֆ. Ս. Վ. Տեր-Ավետիսյան»:

⁶ Տե՛ս Վ. Փափագյան, Ա. Աղանյան, *Չաքարիա Ագուլեցի*, ՀՍՀ, հ. 1, Եր., 1974, էջ 61:

⁷ Ի դեպ, մեզ հետաքրքրող տեսանկյունից Ագուլեցու երկի գնահատության հարցում նկատվում է որոշ տեղաշարժ. Պ. Հովհաննիսյանը ի թիվս Ագուլեցու երկի արժանիքների, նշել է, որ հեղինակն «անդրադառնում է նաև տվյալ ժամանակաշրջանի հայ ժողովրդի, մասնավորապես եկեղեցու կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձություններին» («Հայ ժողովրդի պատմություն», հ. 3, գիրք 1, Եր., 2010, էջ 110):

ասելով՝ այսօր ըսկիսքն ընկաւ Աստուծով» (էջ 147, ընդգծ. իմն է - Հ. Մ): Փաստորեն եվրոպական երկրների եկեղեցիներում տեսած լինելով փակ-կնքված գանձատուփերի գործածությունը՝ Ագուլեցին որոշել է այն կիրառության մեջ դնել նաև հայրենի գյուղաքաղաքի եկեղեցում և առնվազն 4-5 տարի պայքարել է դրա համար և ի վերջո հասել նպատակին: Ինչ խոսք, դա ինքնին վերցրած միանգամայն դրական երևույթ էր, քանզի նախ՝ դրանով մեծանում էր նվիրատուների վստահությունը, որ հավաքված գումարը կծախավի՝ հենց եկեղեցու կարիքները բավարարելու նպատակով, երկրորդ՝ հավատացյալ-աշխարհականները ձեռք էին բերում եկեղեցում հավաքված դրամական միջոցների վրա վերահսկողության իրավունք, որին, անշուշտ, ոչ բոլոր հոգևորականներն էին կողմնակից, ուստի երկար ժամանակ դիմադրել էին Ագուլեցու առաջարկին:

Թե որքան կարևոր է Ագուլեցու երկր XVII դ. երկրորդ կեսի Հայ եկեղեցու պատմության լուսաբանման համար, հարկ եմ համարում բերել մեկ օրինակ ևս. սկսած Մ. Չամչյանից՝ հայագիտական գրականության մեջ ամրագրված է այն տեսակետը, որ Հակոբ Դ Ջուղայեցին մահացել է 82 տարեկան հասակում⁸: Բայց ահա Ջաքարիա Ագուլեցին, որ սերտ հարաբերությունների մեջ էր Ջուղայեցու հետ, և նրա հայտնած տեղեկություններն աչքի են ընկնում ստուգությամբ. այդ առիթով գրել է. «Թվին **ռճիք** օգոստոսի քումն Ըստամբոլ Աստուածածին եկեղեցումն Յակոբ կաթողիկոսն առ Աստուած փոխեց: Տարան Բէկ-օղլի հանգիստումն քաղեցին: Օգոստոսի **իէ**ումն գիրն եկաւ Երևան: Յակոբ կաթողիկոսն էր **իգ** (73) ամաց: Սա կաթողիկոսութիւն արաւ **իէ** տարի» (էջ 151): Ինչպես տեսնում ենք, Ագուլեցու նշած 73 և գրականության մեջ ընդունված 82 տարիների միջև կա 9 տարվա տարբերություն, իսկ դա շատ կարևոր է Ջուղայեցու գործունեության ինչ-ինչ դրվագներ ճիշտ հասկանալու համար: Օրինակ, պատմությունից քաջ հայտնի է, որ 1665-1672 թթ. Հակոբ Դ Ջուղայեցին, բացակայելով Մայր Աթոռից, եռանդազին պայքարել է Եղիազար Այնթափցու պառակտողական գործունեության դեմ և ուժերի գերազույց լարումով կարողացել մի կերպ կանխել հայ եկեղեցու՝ գրեթե իրականություն դարձած երկփեղկումը՝ ընկնելով դրամական ահավոր պարտքերի տակ, որից չկարողացավ ազատվել մինչև կյաքի վերջը: Եթե ճիշտ համարենք գրականության մեջ ընդունված 82-ամյա տարիքը, ապա դժվար է պատկերացնել, որ մա այդ պայքարն սկսել է 65-ամյա հասակում և ավարտել 74 տարեկանում: Ավելին, ինչպես գիտենք, մահվանից 3 տարի առաջ, որպես հայ ազատագրական պայքարի ռահվիրա, Սուրբ Էջմիածնում գումարել էր խորհրդածողով և Իսրայել Օրու հետ ճանապարհ ընկել՝ Եվրոպա գնալու նպատակով, բայց երկար դեգերումներից հետո հասնելով Կ. Պոլիս՝ այլևս չկարողացավ շարունակել ուղևորությունը և այնտեղ էլ մահացավ: Արդ, այդպիսի պատասխանատու և դժվարություններով լի առաքելության համար ո՞ր տարիքն էր ավելի պատշաճ՝ 70, թե՞ 79-ամյա: Կարծում ենք՝ միանշանակ առաջինը, այլապես հազիվ թե Հակոբ Ջուղայեցին 79-ամյա հասակում համարձակվեր ձեռնամուխ լինել նման քայլի, իսկ շրջապատի մարդիկ համաձայնվեին դրան: Հետևաբար, այսուհետև Հակոբ Դ Ջուղայեցու ծննդյան թվական պետք է համարվի ոչ թե 1598, այլ 1607 թվականը, ինչպես հետևում է Ջաքարիա Ագուլեցու գրածից:

Թվում է՝ վերը ասվածը լիովին հիմք է տալիս եզրակացնելու, որ ժամանակն է մտածելու Ջաքարիա Ագուլեցու օրագրություն-տարեգրության վերահրատարակության մասին, մանավանդ, որ այդ հարցը կարևորվել է սրանից մոտ երեք տասնամյակ առաջ. 1984 թ. լույս տեսած «Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը» կոթողային հրատարակության «Երկու խոսքում» կարևորելով նորահաստատ «Տնտեսական պատմության վավերագրեր» մատենաշարը՝ աշխատասիրողներն ի մասնավորի նշել են. «Անցյալում ևս հրապարակվել են տնտեսական պատմության մեկ-երկու արժեքավոր սկզբնաղբյուրներ՝ Սիմեոն կաթողիկոս Երևանցու «Ձամբը», **Ջաքարիա Ագուլեցու «Օրագրությունը**», հայերեն կալվածագրերի մի փոքր ժողովածու և այլն: **Մրանց գիտական նոր հրապարակումները, օժտված անհրաժեշտ պատմաբանասիրական ներածականներով ու ծանոթագրություններով նույնպես ընդգրկվելու են հրատարակվող մատենաշարում**»⁹ (ընդգծ. իմն է - Հ. Մ.): Այս շատ կարևոր ցանկությունը, ցավոք, մինչ օրս չի իրականացվել:

Դույզն-իսկ չժխտելով Ագուլեցու երկի կարևորությունը տնտեսական պատմության տեսակետից՝ դրա գիտական նոր հրատարակությունը առավել կարևորում ենք հայ եկեղեցու պատմության նորովի լուսաբանման առումով: Ի հավելումն ասվածի՝ նշենք, որ Ագուլեցու երկը անչափ բարձր է գնահատված նաև աղբյուրների գրող Աբրահամ Այլիսիի՝ վերջերս մեծ աղմուկ հանած «Քարե երազներ» վեպ-ռեքվիզիտում: Դա արդեն հուշում է, որ ոչ միայն պետք է վերահրատարակել այն հայերեն և ռուսերեն, այլև թարգմանել ու տպագրել անգլերեն և այլ լեզուներով, քանզի, գիտականից բացի, այն ձեռք է բերում նաև քաղաքական կարևորություն:

⁸ Տե՛ս Միքայել Չամչյանց, Պատմութիւն հայոց, հ. Գ, Եր., 1984. էջ 719, Մաղաքիա Օրմանյան, Ազգապատում, հ. Բ., Ս. Էջմիածին, 2002, սյուն. 2912, Էլեոնորա Հարությունյան, Հակոբ Դ Ջուղայեցի, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., 2002, էջ 518, Հրաչիկ Միրզոյան, Հակոբ Դ Ջուղայեցի, «Հայ եկեղեցու հանրագիտարան», պր. Ա, «Ամենայն հայոց կաթողիկոսներ», Ս. Էջմիածին, 2008, էջ 120 նմ:

⁹ «Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը», էջ 7:

**Zaqaria Aguletsi's *Diary* as a Source
for the History of the Armenian Church**

This paper discusses the *Diary* by the famous merchant of the 17th century Zaqaria Aguletsi as a primary source for the history of the Armenian Church (the original text was published in 1938 and a Russian translation followed in 1939). However, in the period of communist ideology, aggressive atheism and blatant anticlerical hatred, this important aspect of the *Diary* was undeservedly neglected and in the end forgotten. Regrettably, this approach prevails even today. The author stresses that it is high time Aguletsi's book were not only reprinted in Armenian and Russian but also translated into English.

Տեր Արարատ քահանա Պողոսյան (Հայաստան)

**ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ
(1944-2013 ԹԹ.)**

Դեռևս Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման առաջին իսկ օրերից Մայր Աթոռի և կառավարության միջև ծավալված բանակցությունների արդյունքում Մայր Աթոռին իրավունք է տրվում 1922 թ. հրատարակել ամսագիր, ունենալ տպարան եւ վերաբացել Գևորգյան հոգևոր ճեմարանը: Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ.-ի անվան հետ է կապվում Մայր Աթոռի հոգևոր, վանական-վարչական, կրթական-կազմակերպչական լուրջ գործունեությունը, պաշտոնական ամսագրի հրատարակությունը¹:

Գևորգ արք. Չորեքչյանի հմուտ քաղաքականության շնորհիվ 1944 թ. հունվարին, չնայած խիստ գրաքննությանը, այնուամենայնիվ պաշտոնապես թույլատրվում է հրատարակել Մայր Աթոռի պաշտոնական «Էջմիածին» ամսագիրը²: Ամսագրի էջերում տեղ են գտնում այնպիսի հոդվածներ, որոնք լուսաբանում էին խորհրդային ու եվրոպական գրականության կարևորագույն խնդիրները՝ տալով գրական դեմքերի գնահատականը: Ամսագիրը պարբերաբար հրատարակում է մատենագրական նորություններ: 2013 թվականին լրացավ ամսագրի հրատարակության 70-ամյակը, ուստի նպատակահարմար ենք համարում գիտական հանրությանը ևս մեկ անգամ ներկայացնել ամսագրի դերը հայ ժողովրդի հոգևոր, բարոյական, գիտական, և ինչու չէ նաև նյութական արժեքները հարստացնելու ազնիվ գործում³:

Ամսագիրը, արժևորելով մեր ազգային կյանքում նշանակալից տեղ ունեցող իրադարձություններն ու գործիչներին, տպագրում է Հայրապետական կոնդակներ և արժեքավոր հոդվածներ՝ մասնավորապես նվիրված Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600⁴, Ղևոնդ Ալիշանի 150⁵, Գարեգին Ա. Հովսեփյանցի 80⁶, Գևորգ Զ. Չորեքչյան Կաթողիկոսի 80, Ներսես Ե. Աշտարակեցու 200⁷, Վազգեն Ա. Կա-

¹ Տե՛ս «Էջմիածին», 1974, ԺԱ., էջ 25:

² ՀՀ ԱԱ, ֆ. 113, ց. 43, գ. 30, թ. 1:

³ Այս մասին տե՛ս «Էջմիածին» ամսագրի հրատարակության երեսնամյակը, 1974, ԺԱ., էջ 24-26, Ս. Անթրոսյան, Հայ լեզվաբանությունը «Էջմիածին» ամսագրի էջերում, 1975, Բ., էջ 56-62. Պետրոսյան Եզնիկ արք., Հայ դավանաբանական գրականությունը «Էջմիածին» ամսագրի էջերում: 1975, Ա., էջ 38-44. Ն. Թահմիզյան, «Էջմիածին»-ը և հայ երաժշտության հարցերը, 1975, Ա., էջ 63-70. Արթուր Հատիսյան, Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի հրատարակության երեսնամյակը, «Էջմիածին», 1975, Բ., էջ 4-21. Նուբար Տեր-Միքայելյան, «Էջմիածին» ամսագրի հրատարակման 50-ամյակի առթիվ, «Էջմիածին», 1994, ԺԱ.-ԺԲ., էջ 81-86 ի գիտություն, «Էջմիածին», 1980, Ա., էջ 27: Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումը, «Էջմիածին», 1985, Ա., էջ 8: Մանրամասն տե՛ս նաև «Էջմիածին» ամսագրի զույգ մատենագիտությունների առաջաբանները՝ Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի (1944-1973), կազմող՝ Ս. Կոծինյան, Ս. Էջմիածին, 1975, Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի (1974-2008), կազմող՝ Ս. Արարատ քահանա Պողոսյան, Ս. Էջմիածին, 2012:

⁴ Տե՛ս Մ. Գաապարյան, Մեսրոպ Մաշտոցը որպես գրուսույց, 1959, ԺԱ., էջ 38-44, Մեսրոպյան այբենարանները ԺԺ. և Ի. դարերում, 1961, Ժ., էջ 51-61, Գ. Հակոբյան, Հայ առաջին բանաստեղծը՝ Մեսրոպ Մաշտոց, 1963, Բ., էջ 16-25:

⁵ Տե՛ս «Հայր Ղևոնդ Ալիշանի ծննդյան 150-ամյակին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում», 1970, ԺԲ., էջ 19-26:

⁶ Տե՛ս Ստեփան Մալխասյանց, Մեծի Տանն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոս Ս. Տ Գարեգին Ա.-ի ծննդյան 80-ամյա հոբելյանը, 1947, Ա.-Բ., էջ 19-20:

⁷ Տե՛ս Հակոբ արք. Գյուլյան, Ժամանակագրություն Ներսես Ե. Աշտարակեցի Կաթողիկոսի (1770-1857), 1970, Թ., էջ 47-51, Ա. Հատիսյան, Ներսես Աշտարակեցի (1770-1857), 1970, Թ., էջ 6-8, 22-40, Վկայություններ Ներսես Աշտարակեցու մասին, 1970, Թ., էջ 13-24:

թողիկոսի 60⁸, Սկրտիչ Ա. Խրիմյանի 150⁹, Եղիշե Չարենցի 70, Հովհաննես Թումանյանի 100, Սիբայել Նալբանդյանի 125¹⁰, Կոմիտաս Վարդապետի 100¹¹, Ներսես Շնորհալու 800¹², «Արարատ» ամսագրի հիմնադրման 100¹³, «Էջմիածին» ամսագրի հրատարակության 30¹⁴, Սարգսրապատի հերոսամարտի 50¹⁵, Վարդանանց հերոսամարտի 1500¹⁶, Աստվածաշնչի հրատարակության 300¹⁷ ամյակներին. այս հոդվածներում միաժամանակ լուսաբանվում են մեր ազգային-եկեղեցական կյանքի կարևորագույն հարցերն ու արդի խնդիրները:

«Էջմիածին» ամսագիրը, լինելով «Արարատ»-ի ավանդույթների ժառանգորդն ու շարունակողը, բացի կրոնաեկեղեցագիտական¹⁸, կրոնապատմական¹⁹, քարոզիտական²⁰, կրոնաքարոզագիտական²¹

⁸ Տե՛ս Արթուր Հատիտյան, Ս. Տ. Վազգեն Ա. Հայոց Հայրապետի կենսագրությունը, 1976, Ը.-Թ., էջ 3-13. **Կարապետ Սուրենյան**, Վազգեն Ա. Հայրապետ Հայոց, 1977, Բ., էջ 31-47:

⁹ Տե՛ս **Գոհար Ազնավուրյան**, Խրիմյան Հայրիկի նամակագրական ժառանգությունից, 1971, Բ., էջ 59-62. **Թորգոմ եպս. Գուշակյան**, Խրիմյան Հայրիկ, 1971, Բ., էջ 33-39, **Հուսիկ արք. Զոհրաբյան**, Խրիմյան Հայրիկի մահը, 1971, Բ., էջ 40-45. **Հովհաննես Թումանյան**, Երկու հայր, 1971, Բ., էջ 46, **Ավետիք Իսահակյան**, Խրիմյան Հայրիկը, 1971, Բ., էջ 47-51. **Վազգեն Ա. Կաթողիկոս**, Խրիմյան Հայրիկը որպես դաստիարակ, 1971, Բ., էջ 5-10:

¹⁰ Տե՛ս Արթուր Հատիտյան, Սիբայել Նալբանդյան, 1954, ԺԲ., էջ 3-5. **Մ. Գ. Սարգսյան**, Սիբայել Նալբանդյան, 1954, ԺԲ., էջ 6-17. **Վահան արք. Գալանդաբյան**, Նոր նյութեր Սիբայել Նալբանդյանի մասին, 1955, Գ., էջ 50-67:

¹¹ Տե՛ս **Ռոբերտ Աթայան**, Կոմիտասի երկերի հրատարակությունը, 1969, ԺԲ., էջ 37-43, **Հրաչյա Աճառյան**, Հուշեր Կոմիտասի մասին, 1969, Բ., էջ 23-26, **Ասքանազ Աճեմյան**, Կոմիտասի պատկերի մոտ, 1969, ԺԲ., էջ 16. **Սամվել Անթոնյան**, Խոհեր Կոմիտաս Վարդապետի մասին, 1969, ԺԲ., էջ 43-48, **Առաքել Առաքելյան**, Մեծ Կոմիտասը, 1969, ԺԲ., էջ 34-39, **Գրիգոր Գյուլյան**, Սողոմոնից Կոմիտաս, 1969, ԺԲ., էջ 40-42, **Էդվարդ Գուլանճյան**, Մեծ սգավոր երգչին Կոմիտաս Վարդապետին, 1969, ԺԲ., էջ 51-52:

¹² Տե՛ս **Ռոբերտ Աթայան**, Ներսես Շնորհալու «Վարդանանց նորահրաշը» Եկմայանի և Կոմիտասի մշակմամբ, 1973, ԺԲ., էջ 100-109. **Շահն արք. Աճեմյան**, Շնորհալուն օտար քարգմանությամբ, 1973, ԺԲ., էջ 44-48, **Շնորհ արք. Գալստյան**, Ս. Ներսես Շնորհալու Հայրապետը, 1973, ԺԲ., էջ 17-31, **Նիկողայոս Թահմիզյան**, Ներսես Շնորհալուն և արևելյան քրիստոնեական երգարվեստը, 1973, ԺԲ., էջ 110-124, **Գրիգոր Հակոբյան**, Ներսես Շնորհալուն և հայոց հոգևոր երգերը, 1973, ԺԲ., էջ 93-99:

¹³ Տե՛ս **Սամվել Անթոնյան**, Հայ լեզվաբանությունը «Արարատ»-ի էջերում, ԺԱ.-ԺԲ., էջ 53-63: **Առաքել Առաքելյան**, «Արարատ» ամսագիրը, ԺԱ.-ԺԲ., էջ 6-13, **Նիկողայոս Թահմիզյան**, «Արարատ»-ն ու երգ երաժշտության հարցերը, ԺԱ.-ԺԲ., էջ 60-69, **Արթուր Հատիտյան**, «Արարատ»-ը և հայ դավանաբանական գրականությունը, 1968, ԺԱ.-ԺԲ., էջ 15-29: **Ներսես Ժ. վրդ. Ռոզասյան**, «Արարատ» ամսագիրը և Գևորգյան ճեմարանը, 1968, ԺԱ.-ԺԲ., էջ 30-38:

¹⁴ Տե՛ս **Ս. Անթոնյան**, Հայ լեզվաբանությունը «Էջմիածին» ամսագրի էջերում, 1975, Բ., էջ 56-62, **Ն. Թահմիզյան**, «Էջմիածին»-ը և հայ երաժշտության հարցերը, 1975, Ա., էջ 63-70, **Արթուր Հատիտյան**, Սայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի հրատարակության երեսունամյակը, 1975, Բ., էջ 4-21, **Եզնիկ արք. Պետրոսյան**, Հայ դավանաբանական գրականությունը «Էջմիածին» ամսագրի էջերում, 1975, Ա., էջ 38-44:

¹⁵ Տե՛ս **Հարություն Թուրշյան**, Սարգսրապատի հերոսամարտի 50-ամյակը, 1968, Ե., էջ 16-23, Հայության մեծ գոյամարտը, 1973, Ե., էջ 42-44, **Սիիրան Մուրադյան**, Հայրենասեր հոգևորական Ս. Հովհաննես քահանա Տեր-Սկրտչյան, 1972, Ե., էջ 57-59, Սարգսրապատի և Բաշապարանի հերոսամարտերի հոգևորական մասնակիցները, 1973, Ե., էջ 44-48:

¹⁶ Տե՛ս **Ռուբեն արք. Դրամբյան**, Վարդանանց անմահ հիշատակին, 1951, Բ.-Գ., էջ 17-28:

¹⁷ Տե՛ս **Գևորգ Արգաթյան**, Սիրաքի գրքի հնագույն քարգմանության նորահայտ հատվածներ, 1966, ԺԱ.-ԺԲ., էջ 59-70, **Հակոբ Անասյան**, Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը, 1966, 1966, ԺԱ.-ԺԲ., էջ 71-97, **Նիկողայոս Թահմիզյան**, Ոսկան վարդապետն ու խազագրության արվեստը, 1966, ԺԱ.-ԺԲ., էջ 159-167, **Ռաֆայել Իշխանյան**, Նոր նյութեր հայ հին տպագրության պատմության վերաբերյալ, 1966, Է., էջ 48-54, Ոսկանյան տպարանը և նրա հրատարակած Աստվածաշունչը, ԺԱ.-ԺԲ., էջ 130-158, **Ջնարիկ Կորկոտյան**, Նիմեղ Ոսկանյան, Հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրությունը և նրա տարբերակը, 1966, ԺԱ.-ԺԲ., էջ 168-175 եւ այլն:

¹⁸ Տե՛ս **Արտավազդ արք. Մյուրմեյան**, Հայ լատին հարաբերությունները հույն-լատին հարաբերությանը լույսով, 1945, Գ.-Դ., էջ 19-24. **Հովսեփ Գրիգորյան**, Պողոս առաքյալի կյանքը և գործունեությունը, 1946, Ը.-Թ.-Ժ., էջ 19-22, **Երվանդ Շահազիզ**, Կաթողիկոսական կոնդակներ և օրհնության թղթեր, 1947, Ե.-Զ., էջ 26-28, **Արթուր Հատիտյան**, Եկեղեցական ուխտապահություն և հայրենասիրություն, 1959, Բ., էջ 3-5, **Գրիգոր Հակոբյան**, Ներսես Լամբրոնացու «Պատարագի մեկնություն»-ը, 1968, Ժ., էջ 46-51, 1969, Դ., էջ 39-44, 19720, Բ., էջ 43-48. **Հայկ Մեյրումյան**, Հայ թովմասի ասորական վարքը, 1968, Գ., էջ 55-63, **Սահակ վրդ. Ամատունի**, Հոգևոր երգը Սահակայ եւ Մեսրոպայ, 1970, Զ.-Է., էջ 81-85:

¹⁹ Տե՛ս **Հովսեփ Գրիգորյան**, Հռիփսիմյանց և Գալանյանց կույսերի մահատակությունը, 1944, Զ., էջ 46-49, Վարդանանց մահատակությունը, 1944, Բ.-Գ., էջ 29-37, **Ռուբեն վրդ. Դրամբյան**, Էջմիածինը, 1944, Բ.-Գ., էջ 19-20, **Սուրեն Ժ. վրդ. Թորոսյան**, Ս. Հռիփսիմյանց կույսերը, 1944, Զ., էջ 41-45:

²⁰ Տե՛ս **Բաբկեն Ա. Կաթողիկոս Կիլիկիո**, Հոգեգալուստ, 1960, Ե., էջ 8-10, **Գաբեգին Ա. Կաթողիկոս Հովսեփյան**, Գ-արձ դեպի լուսավոր կյանք, 1959, Գ., էջ 7-9, Ապաշխարության քարոզ, 1961, Գ., էջ 7-9, **Գևորգ Զ. Զորեքյան Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հայ Եկեղեցու պարտքը իր ժողովրդի հանդեպ, 1944, Ա., 1-3, Հայրենական պատերազմը և հայ ժողովուրդը, Բ.-Գ., էջ 2-5, Հայոց Եկեղեցին, 1946, Ը.-Թ., էջ 17-20, Մ. Էջմիածնի տոնը, 1950, Ե.-Զ., էջ 20-22, **Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Վարդավառի տոնին խոսված քարոզ, 1956, Է., էջ 13-18, Քարոզ՝ խոսված Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առիթով, 1961, Ժ., էջ 5-7, Քարոզ՝ խոսված Ս. Հարության տոնի առիթով, 1969, Դ., էջ 4-6:

²¹ Տե՛ս **Եղիշե արք. Տերտեղյան**, Մեր Աստուծո նկատմամբ, 1955, Զ., էջ 7-9, Մեկ քանքար ստացողը, 1955, Բ., 6-10, Դաստիարակիչ կինը, 1958, Ը., էջ 16, **Վարդան քնն. Տյուկերյան**, Ժամանակին արժեքը: Հույսերու մայրամուտ, հույսերու արևածագ, 1963, Ա., էջ 22-24:

նյութերից, տպագրում է նաև եկեղեցական արվեստի և Հայ եկեղեցու պատմության²², ձեռագրագիտության²³, աղբյուրագիտության, հնագրության, հայ արվեստի, տոմարագիտության²⁴, հայ ժողովրդի²⁵ և գաղթավայրերի պատմության²⁶, հայ երաժշտության և շարականագիտության²⁷ խնդիրներին նվիրված հոդվածներ՝ մեծապես նպաստելով հայագիտության զարգացմանը:

Ամսագիրն աչքի է ընկնում ձևավորման բարձր մշակույթով. դրա ձևավորումը վստահվել է տաղանդաշատ նկարիչներ՝ Հակոբ Կոջոյանին, Տարագրոս Տեր-Վարդանյանին, Գրիգոր Խանջյանին, Ալբերտ Կարազյանին, ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանին և այլոց:

Ամսագրին աշխատակցում են Մայր Աթոռի միաբաններ, Սփյուռքի բարձրաստիճան հոգևորականներ, հայ մշակույթի վաստակավորներ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ ու Գևորգյան հոգևոր ճեմարանի դասախոսներ: Մայր Աթոռի պաշտոնական ամսագրի դերի եւ հեղինակության բարձրացմանը նպաստում է նաև Մատենադարանի, ՀԽՍՀ, այժմ՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի և հայագիտական այլ հաստատությունների հետ ունեցած համագործակցությունը:

Ամսագրում տպագրվում են միջնադարյան անտիպ բնագրեր, ինչպես օրինակ՝ Մխիթար Գոշի, Հովհաննես վանական Տավուշեցու, Պողոս Տարոնեցու, Կիրակոս վրդ. Երզնկացու, Մովսես վրդ. Երզնկացու, Նեկտարիոս Պատրիարքի, Ամանիա վարդապետի, Ագաթանգեղոսի, Մամբրե Վերծանողի, Հովհաննես վրդ. Պյուզի, Խոսրով Անձեւացու, Հովհան Ոսկեբերանի, Թեոդոտոս Անկյուրացու, Վահրամ Բաբունու, Հովհաննես Կոզեռնի, Թովմա Մեծոփեցու և այլոց երկերը: Հայագիտության սեփականությունն են դառնում նաև արխիվային բազմաթիվ նյութեր, որոնք վերաբերում են Մանվել վրդ. Կյումիշ-խանեցուն, Խ. Աբովյանին, Պ. Պողոսյանին, Գ. Աղայանին, Շահագիզին, Հովհ. Այվազովսկուն, Թ. Թորամանյանին, Ավետիք Իսահակյանին, Սկրտիչ Ա. Խրիմյանին, Պերճուհի Սյուրմենյանին, Տիրայր արք. Տեր-Հովհաննիսյանին, Երևանի Ս. Կաթողիկե եկեղեցուն, Մայր Աթոռի տպարանին, Գևորգյան հոգևոր ճեմարանին, Մեծ Եղեռնին: Առանձնահատուկ ուշադրության են արժանանում վանական կառույցներն ու եկեղեցիները, տպագրվում են առանձին հետազոտություններ և հոդվածներ՝ Ամարասի, Շուշիի, Գանձասարի, Հաղպատ-Սանահինի, Մաքենացվոց, Աբրակունիսի Ս. Կարապետ, Թեղենյաց, Աստվածըկալ վանքերի, Նարեկավանքի, Գուշավանքի մասին: Անդրադարձ է կատարվում նաև Հայ Եկեղեցու երախտավորների՝ Մաղաթիա արք. Օրմանյանի, Եղիշե արք. Դուրյանի, Նիկողայոս Աղոնցի, Կոմիտաս Վարդապետի կյանքին: Սփյուռքահայ գործիչ Հ. Սիրունին ամսագրի էջերում հրատարակում է «Պոլիս եւ իր դերը» աշխատությունը, որտեղ ցույց է տալիս Սփյուռքի մի հատվածի դերն ու նշանակությունը: Լույս են տեսնում հայկական գրեթե բոլոր գաղթօջախների պատմությանը նվիրված արժեքավոր հոդվածներ:

Ամսագրում տպագրվում են նաև փրկված կամ ոչնչացած ձեռագրերը ներկայացնող հոդվածներ, ուսումնասիրվում են Լիմ անապատի, Կտուցի, Արտեր կղզու, Սանահինի, Հաղպատի, Մուկաց աշխարհի Ս. Կարապետի, Հերիերի Ս. Գևորգի, Շուղրի անապատի Կարմիր վանքի, Թբիլիսիի Ս. Ստեփանոս կուսանաց անապատի և այլ վանքերի ձեռագրերը, արձանագրությունները, արժևորվում և կարևորվում է գրչության կենտրոնների դերն ու նշանակությունը: Հանդեսում թարգմանաբար ընդգրկվում են նաև օտարալեզու, սակայն հայ մատենագրության հետ սերտորեն առնչվող նյութեր. լույս է տեսնում Ագաթանգեղոսի պատմության հունական նորահայտ մի խմբագրություն, իսկ դրա նորահայտ արաբերեն խմբագրությունը ներկայացվում է ասորերենից թարգմանաբար:

Նյութեր են տպագրվում նաև Մայր Տաճարի՝ ճարտարապետ Ա. Սահինյանի կատարած պեղումների մասին: Լուսաբանվում է հայ դպրության պատմությունը՝ ուրույն տեղ հատկացնելով Գևորգ-

²² Տե՛ս **Գաբեգին Հովսեփյանց**, Հայոց Հայրապետության մասին, 1944, Է.-Ը.-Թ., էջ 9-10, **Ստեփան Մալխասյան**, Ե՞րբ են հայերն ընդունել քրիստոնեությունը, 1944, Ա., էջ 22-26, **Ռուբեն վրդ. Գրամբյան**, Մովսես Կաթողիկոսը որպես հայրենասեր և շինարար, 1945, Ա.-Բ., էջ 24-29, **Հովսեփ Տեր-Գրիգորյան**, Գուկաս Կաթողիկոս Կարնեցի, 1950, Թ.-Ժ., էջ 41-47, 1951, Ա.-Բ.-Գ., էջ 29-34:

²³ Տե՛ս **Գաբեգին Հովսեփյանց**, Իններորդ դարի ձեռագրական մի հատակտոր և Ատոմ Անձևացյաց իշխան, 1946, Ժ., էջ 50-54, **Աշոտ Աբրահամյան**, Խորենացու պատմության մագաղաբյան հնագույն պատառիկները, 1950, Ա.-Բ., էջ 44-57:

²⁴ Տե՛ս **Լևոն Միլոնով**, Ակնարկներ հայկական տոմարի մասին, 1944, Զ., էջ 50-54, Հայկական դարագլխի թվի ճշտման հարցը, 1950, Թ.-Ժ., էջ 56-59, **Աշոտ Աբրահամյան**, Հովհաննես սարկավազի մաթեմատիկական աշխատությունը, 1950, Գ.-Դ., էջ 33-42, Սարգիս փիլիսոփայի չափածո տոմարը, 1952, Ը., էջ 56-62, **Նիկողայոս Թահմիզյան**, Հասարակ օրերի կանոնագրությունները, 1971, Գ., էջ 37-43:

²⁵ Տե՛ս **Աշոտ Աբրահամյան**, Հայրենիքի գիտնականների կարծիքը հայ ժողովրդի կազմավորման մասին, 1955, Ե., էջ 40-50, Վավերագրեր 17-րդ դարի հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, 1953, Ե., էջ 21-30, **Գաբեգին Հովսեփյանց**, Պատմական վայրերի հին անունների վերականգնում, 1946, Զ.-Է., էջ 56-58:

²⁶ Տե՛ս **Նուպար Մազառտյան**, Արձագանք մը Կիպրոսի հայության պատմութենէն, 1946, Ա., էջ 62-63, Կիպրահայ քրոնիկ, 1946, Գ.-Ե., էջ 82, **Աշոտ Աբրահամյան**, Մաղրասի հայ գաղութի դերը հայ ազատագրական պայքարում, 1947, Ե.-Զ., էջ 43-54:

²⁷ Տե՛ս **Գաբեգին Լեւոնյան**, Էջեր հայ եկեղեցական երաժշտության պատմությունից, 1945, Ե., էջ 48-50, **Արամ Երեմյան**, Միջնադարյան հայ կոմպոզիտորներ, 1946, Ա., էջ 43-47 եւ այլն:

յան հոգևոր ճեմարանին: Հովսեփ Եղիազարյանը հոգևածներ է գրում Հաղարծինի, Կեչառիսի, Մարմարաշենի, Հառիճի, Սանահինի, Սաղմոսավանքի, Հավուց թառի և այլ վանքերի մասին:

Լույս է տեսում Էջմիածնի տպարանի հիմնադրման 200-ամյակին նվիրված հատուկ համար, որտեղ տպագրվում է Արտակ եպս. Սմբատյանցի «Ս. Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը» հոդվածը: 1968 թ. նշվում է «Արարատ»-ի 100-ամյակը. այս առիթով եւս լույս է ընծայվում հատուկ համար՝ ընդգրկելով «Արարատ»-ի և «Էջմիածին»-ի մատենագիտությունները, որոնք կարևոր նշանակություն ունեն հայագիտությամբ զբաղվողների համար:

Ամսագրում լույս են տեսնում հայ և օտարազգի հայագետների մասին հոդվածներ, նրանց աշխատությունների մատենագիտություններ, գրախոսություններ:

Լեզվաբանության հարցերը ևս պատշաճ ուշադրության են արժանանում (ակադեմիկոսներ՝ Ստ. Մալխասյան, Հր. Աճառյան, Հ. Մխիթարյան, Ա. Առաքելյան, Լ. Խաչիկյան, Ռ. Ղազարյան, Ս. Անթոսյան և ուրիշներ): Ամսագրում տեղ են գտնում հոգևոր և ժողովրդական բազմաթիվ երգերի ուսումնասիրություններ. հատկապես ընդգծվում է Կոմիտաս Վարդապետի դերը «Հայոց գանձերի» հավաքման, ուսումնասիրման, խազագրման և պահպանման գործում: Ամսագիրն իր լույսն ունի Հայկական հարցի և Մեծ Եղեռնի ճանաչման ուղղված գործընթացներում: Այս առումով բազմաթիվ են ոչ միայն կաթողիկոսական կոնդակներն ու հայտարարությունները, այլ նաև Հայոց ցեղասպանությանը նվիրված հոդվածները: Ամսագրում տեղ են գտնում նաև ազգագրությանը վերաբերող հոդվածներ:

Վերջին տարիներին ամսագրում ավելացել են «Ճեմարանականներ» և «Հոնոր ընթերցումներ» նոր բաժինները: «Ճեմարանականներ» բաժնում լույս են ընծայվում Գևորգյան հոգևոր ճեմարանի անվանի սաների, դասախոսների և տեսուչների կենսագրությունները, իսկ «Հոնոր ընթերցումներ» բաժնում ընդգրկվում են հանրությանը հետաքրքրող և մատչելի նյութեր: Այս բաժնում հատկապես արժեքավոր է Գևորգյան քահանա Մայիլյանի «Նոր մարտահրավերներ» հոդվածաշարը, որ ներկայացնում է Հայաստանում գործող աղանդների պատմությունը, դավանանքը, դրանց վտանգավորությունը Հայ Եկեղեցու և պետության համար:

Ամսագիրը հետևողական է նաև իր մատենագիտական ցանկերը կազմելու և գիտական հանրության օգտագործմանը հանձնելու գործում: Այս մատենագիտությունները նպաստում են ամսագրից օգտվելուն և փնտրած նյութը արագ գտնելուն, որը, վստահաբար, ամսագրի գիտական արժեքներից մեկն է: Պետք է նշել, որ պարբերականների շարքում «Էջմիածին»-ը, լինելով ավանդույթ ստեղծող, պահպանող և ժամանակին համընթաց քայլող ամսագիր, ունի իր էլեկտրոնային կայք էջը, որտեղ զետեղվում են ամսագրի նյութերը: Ամսագիրն այսօր առաքվում է Մատենադարանին, գիտական հաստատություններին, Հայ եկեղեցու բոլոր (նաև արտասահմանյան) թեմերին:

Մայր Աթոռի պաշտոնական ամսագիրը հեղինակություն է վայելում հոգևածագիրների, ընթերցողների շրջանակում: Սփյուռքում ամսագիրն ընդունվում է առանձնահատուկ սիրով՝ համարվելով հայրենասիրության ակունք, հայապահպանման կարևորագույն միջոց: Պարբերաբար լույս տեսնող համարներում սփյուռքահայերը ծանոթանում են Հայրենիքի նվաճումներին և Մայր Աթոռի գործունեությանը: Այսօր Հայ եկեղեցու, հետևապես հայ ազգի զարգացմանը և լուսավորմանն ուղղված կարևորագույն քայլերից պետք է համարել կրոնագիտական և հայագիտական հանդեսների շարքում իր ուրույն տեղն զբաղեցնող «Էջմիածին» ամսագրի հրատարակությունը:

Fr. Ararat Poghosyan (Armenia)

ARMENOLOGY IN THE “ETCHMIADZINE” MONTHLY (1944-2013)

This paper tends to present briefly all the armenological studies published in “Etchmiadzine” review, concerning the domains of religious studies, history, philology and art history. Taking into consideration the great number of published armenological studies in “Etchmiadzine” review, the author tries to consider and reflect on some of the most important studies and publications.

Սաթենիկ Վարդանյան (Հայաստան)

ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՄԵՆԱԿԱԼ ՔՐԻՍՏՈՍԸ

Ավանդույթ և արդիականություն

«...Եթե կամիք Քրիստոսի Աստուծոյ ծառայել և սիրել զըստուիրանս նորա՝ զընդոյն զիրս զորոց զանուանս ի սմա գրեալ է յուզեցէք, և յորժամ գտանէք՝ նոքա ցուցանեն զճշմարիտ ճանապարհին Աստուծոյ: Եւ վասն պատկերացն այսչափ և եթ քառական լիցին որ միտ ունին»:

Վրթանես Քերթոզ*

Վերջին տարիների հայկական եկեղեցաշինության մեջ Արոյան քաղաքի նորակառույց Ս. Հովհաննես Սկրտիչ տաճարը առանձնանում է իր ճարտարապետական լուծումներով, քանդակագարդ շքեղ հորինվածքներով և հանդիսավորությամբ¹: Ուշագրավ են հատկապես այս կառույցի ներքին տաճարածքը զարդարող որմնանկարները և առանձնապես գմբեթի Ամենակալ Քրիստոսի վեհաշուք պատկերը (Col. 28): Ինչքանով է արդիական և ինչով է կարևորվում վերջինիս հայտնությունը հայ իրականության մեջ:

Հիսուս Քրիստոսի կերպարի աստվածային գեղեցկությունը շուրջ 2000 տարի անփոփոխ է մնում իր կատարելության մեջ: Սակայն ամեն մշակույթ, ամեն ազգ, ամեն անհատ յուրովի է մեկնաբանում նրան: Այդ մեկնաբանություններն արտացոլում են տվյալ հասարակության բարոյահոգեբանական նկարագիրը: Հոգևոր կատարելությամբ, աղոթքի ինքնամոփոխվածությամբ, խոր հայեցողությամբ է համակված Հիսուս Քրիստոսի կերպարը բյուզանդական արվեստում. այն հիմք դարձավ քրիստոնեական ամբողջ մշակույթի համար: Այս արվեստի պատկերագրական ու ոճական սկզբունքները ձևավորվեցին նախ և առաջ սիմվոլների համակարգի վրա: Դարերի ընթացքում բյուզանդացի նկարիչները, պահպանելով հելլենիստական արվեստի սկզբունքները և նրբորեն վերափոխելով դրանք, կարողացան պատկերները մոտեցնել քրիստոնեական գաղափարներին: Հիսուս Քրիստոսի կերպարն օժտվում էր հոգևոր լույսով՝ ներքին իմաստով: Արևելաքրիստոնեական մշակույթի կրող Հայկական միջնադարյան արվեստը ձևավորվեց հենց այս սկզբունքներով, ինչպես նաև քրիստոնեական կրոնի ազգային ընկալումներով: Հիսուս Քրիստոսի առանձին պատկերն ի հայտ է գալիս Արուճի, Աղթամարի, և XII-XIV դդ. որոշ որմնանկարներում և մանրանկարներում: Քրիստոսի աստվածային և մարդկային էությունը շեշտվում էր հիմնականում սյուժետային պատկերներում: Հետագա դարերի պետականության բացակայությունը, թուրք-պարսկական տևական բռնությունները և գաղթը կանխորոշեցին հայկական մշակույթի յուրօրինակությունը: XVII դարից մինչև XIX դարի ավարտը հայկական եկեղեցական գեղանկարչության հիմնական առանձնահատկությունն էր եվրոպական բարոկկոյի և իրանական (ղաջարական) արվեստի ոճերի համախառն դրսևորումը: Մյուս կողմից՝ նրան բնորոշ էր հայ միջնադարյան առավելապես ժողովրդական արվեստի միամիտ պարզությունը: Եվրոպական ազդեցություն կրող հայ վարպետներն արդեն փորձում էին արտահայտել անատոմիական կառուցվածքն ու հեռանկարը: XIX դ. երկրորդ կեսի արվեստում Փրկչի կերպարը՝ ազդված ռեմանյան գաղափարախոսությունից ներկայանում է իբրև հոգևոր քարոզիչ, պատմական անձ կամ ժամանակակից մտավորական²: Այս միտումների անմիջական կրողը դարձավ XIX դ. ռուսական կերպարվեստը, որի հետևորդներն էին XX դ. սկզբի մեր հայ նկարիչները (Վ. Սուրենյանց, Ե. Թադևոսյան, Գ. Բաշինջաղյան, Ա. Ֆեթվաճյան):

* Վրթանես Քերթոզ, Յաղագս Պատկերամարտաց, մեջբերված է՝ Ս. Տեր-Ներսեսյանի «VII դարի մի երկ, նվիրված պատկերների պաշտպանությանը», Ս. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 14:

¹ Եկեղեցու ճարտարապետն Արտակ Դուլյանն է, նախագծի կոնստրուկտորները՝ Հովհաննես Մեյրոյանը և Տիգրան Դադայանը: Որմնանկարների հեղինակներն են հայր և որդի Աբրահամ ու Հայկ Ագաբյանները: Եկեղեցու քանդակագարդն աշխատանքներին մասնակցել է շուրջ 40 քանդակագործ և զարդագործ-վարպետ: Եկեղեցին կառուցվել է Գ. Ծառուկյանի նախաձեռնությամբ և հովանավորությամբ: Հիմնարկերը կատարվել է 2006 օգոստոսի 24-ին: Օծման արարողությունը տեղի է ունեցել 2013թ. մայիսի 14-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեզին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսատեսությամբ և ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ու Հայաստանում պաշտոնական այցով գտնվող Բելառուսի Հանրապետության նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի ներկայությամբ:

² Ռուս արվեստաբան Ս. Դանիելն իր հետազոտություններում XIX դ. երկրորդ կեսում ստեղծված ավետարանական դիպաշարերի այսօրինակ մեկնաբանություններն անվանում է «ռեալիզմ»՝ իրապաշտություն:

Մարդկությունը **XX դար** մուտք գործեց փիլիսոփայական բազմաբնույթ տեսություններով և քրիստոնեական կրոնի հանդեպ թերի (չվստահող) վերաբերմունքով: Այդուհանդերձ XX դ. էքսպրեսիոնիզմի, կուրիզմի, սյուրռեալիզմի և մյուս բացարձակ աշխարհիկ բնույթ կրող հոսանքների ներկայացուցիչները ստեղծեցին Հիսուս Քրիստոսի կերպարը: **Խորհրդային կարգերի հաստատումից հետո՝** Արևելյան Հայաստանում նվազելով գրեթե ավարտվեց Քրիստոսի պատկերման ավանդույթը, թեպետ սայրուքում այն շարունակվում էր: Հիսուս Քրիստոսի կերպարն արժանացավ հայ արվեստագետների ուշադրությանը միայն 50-60-ական թվականների խորուշովյան «ձմեռաքից» հետո, երբ տեղի ունեցավ արժեքների վերագնահատում: Միմաս Ավետիսյան, Սկրտիչ Քամալյան, Ռուդոլֆ Խաչատրյան, Արտո Չաքմաքչյան և մի շարք այլ նկարիչներ՝ ազատություն որոնող իրենց գեղարվեստական միջոցներում հաճախ օգտագործում էին քրիստոնեական թեմատիկան:

Երրորդ հանրապետության շրջանում ազատության և անկախության հովերով քրիստոնեությունն ամփոփող թափանցեց մեր տները, մեր սրտերի մեջ: Բազմաթիվ արվեստագետներ կրկին փորձեցին նոր հայացք գցել, տեսնել, հասկանալ Քրիստոսի կատարյալ կերպարը: Նայելով այդ բոլոր՝ իրար չնմանվող կերպարներին՝ հասկանալի է դառնում դարաշրջանի իրարամերժ գաղափարախոսության, թերահավատության, իմաստի մասնատվածության, երբեմն հոռետեսության, երբեմն ինքնախաբեության միտումները:

Այսօր ազգային նոր ծրագիր, միավորող նոր գաղափարախոսություն կերտելու գործում առաջ է գալիս կատարյալին նմանվելու կարևորությունը: Գաղափարախոսությունն այդ պիտի առաջնորդվի հայոց անհատականությանն այդքան անհրաժեշտ բացարձակ կամքը, իմաստությունը և սերը մարմնավորող Քրիստոսի կերպարով: Երբեք ուշ չէ վերգտնել և նոր հնչեղություն տալ մեր հավատքի ուղղափառ ավանդույթներին: **Եվ ահա, Սբ Հովհաննես եկեղեցու ներքին տարածության վրա իր բացարձակ իշխանությամբ և կենարար ուժով, վերերկրային առկայությամբ և իմաստավոր հանգստությամբ Հիսուս Քրիստոսի կերպարը հաստատել է քրիստոնեական կրոնի հաղթանակը:**

Քրիստոսի հսկայական պատկերը տեղադրված է տաճարի կորնթարդ գմբեթում, հատակից 37 մ. բարձրության վրա, ունի 20 մ. տրամագիծ: Սրբապատկերի հորինվածքն իրենից ներկայացնում է ուղիղ գմբեթի կենտրոնը գրկող գնդաձև ոսկե շրջան: Այս մեծ՝ 24 հրեշտակներ պարունակող շրջանն ամփոփում է առավել փոքր՝ Քրիստոսի պատկերով շրջանը, որն առանձնանում է կապույտից դեպի կարմիրը զարգացող ծիածանանման բարակ գոտիով: Ե՛վ հրեշտակները, և՛ Փրկչի պատկերն առաջանում են ոսկելույս տարածությունից՝ ինչն ստեղծում է գերիրական և նշանակալի երևույթի մթնոլորտ: Ամենակալ Քրիստոսը գմբեթում՝ շրջապատված հրեշտակներով պատկերին կարելի է հանդիպել արևելաքրիստոնեական և՛ միջնադարյան, և՛ ժամանակակից մի շարք պատկերներում: Ընդ որում ժամանակակից պատկերների կողքին մեր Քրիստոսն առանձնանում է իր հայեցի խառնվածքով, մտայնությամբ և դիմագծերով:

Եկեղեցու ուղղափառ ուսմունքը պահանջում է տաճարի նկարագրողման հատուկ գիտելիքներ. աստվածաբանության և պատարագի, Եկեղեցու և Սրբազան ավանդության պատմության, դիպաշարերի տեղադրման և գեղարվեստական լեզվի խոր իմացություն, նաև սեփական անձի մասնակցություն ու փորձ: Տաճարը կերպավորելու համար նկարիչն առաջին հերթին պետք է կազմի որմնանկարների իր ծրագիրը, որը համապատասխան է եկեղեցական կանոնակարգին և ծիսակարգին, ինչպես նաև կարողանա ստեղծել տվյալ ճարտարապետության հետ ներդաշնակություն³: Հայտնի է, որ **Հայկ Ազարյանը** սարկավագ ձեռնադրվելուց բացի ուսանել է Բուխարեստի պատրիարքարանի եկեղեցական նկարչության դպրոցում, ապա 1995-2000 թթ. սովորել է Բուխարեստի Աստվածաբանական համալսարանի մշակութային ժառանգության ռեստավրացիայի բաժնում, իսկ 2003 թ. գրելով «Սրբապատկերի աստվածաբանությունը մեր օրերում» թեմայով ատենախոսությունը, ստացել է աստվածաբանական գիտությունների թեկնածուի աստիճան: Նրա հայրը և գործընկերը՝ **Աբրահամ Ազարյանը** նույնպես պրոֆեսիոնալ նկարիչ է, մոնումենտալ արվեստի գիտակ և եկեղեցում ձեռնադրված դպիր: Պետք է նշել նաև, որ նկարիչներն առաջնորդվել են արևելաքրիստոնեական գեղարվեստական ոճով, տեխնիկատեխնոլոգիայով, դրա հետ մեկտեղ համադրելով ժամանակակից որմնանկարչության մեջ օգտագործվող միջոցները, օրինակ գերմանական «հենկել» ֆիրմայի նախասերերը, վինիլային ներկերը՝ իրենց առանձին չգունագրվող կայուն պիգմենտներով, ինչպես նաև որմնանկարչության համար նախատեսված խտալական մոնումենտալ թիթեղյա ոսկին:

Ըստ քրիստոնեական պատկերագրության «Քրիստոս Պանտոկրատոր»՝ «Ամենակալ» տիպը Քրիստոսին ներկայացնում է մինչև գոտկատեղը (հազվադեպ կարող է պատկերվել ամբողջ հասակով), օրհնող աջ ձեռքով և Ավետարանը ձախ ձեռքում: Բյուզանդիայում այն առաջանում է մոտավորապես

³ Stn Искусство церкви: факультет Церковных художеств Православного Свято-Тихоновского гуманитарного университета. 1992-2007, М., Издательство Православного Свято-Тихоновского Гуманитарного Университета, 2007, с.141-158.

IV-VI դարերում, իսկ ամենավաղ օրինակ կարող է համարվել Քրիստոս Ամենակալի VI դ. սրբապատկերը Սինայի Ս. Կատարինե վանքից: «Քրիստոս Պանտոկրատոր»-ը՝ տեղադրված տաճարի ամենաբարձր հատվածում՝ տիրում է ամբողջ տարածության վրա, միավորելով հայրապետներին, մարգարեներին, առաքյալներին, եկեղեցու հայրերին, սրբերին, նահատակներին: Բոլոր նրանց, ովքեր նախագուշակել էին եկեղեցու հաղթանակը: Նրա հսկայական կերպարը մարմնավորում է դեմիուրգի, արարչի, աշխարհի տիրակալի ստեղծագործական պաթոսը⁴:

Ավաղ, հայկական միջնադարյան եկեղեցիների կիսավեր վիճակը թույլ չի տալիս լիարժեք և ամբողջական պատկեր կազմել «Պանտոկրատոր» տիպի տարածված լինելու մասին: Այդուհանդերձ Քրիստոսի Ամենակալ որմնանկարին հանդիպում ենք Տիգրան Հոնենցի Ս. Գրիգոր եկեղեցու գմբեթում (1215), իսկ մեզ հասած Ամենակալի բազմաթիվ դրսևորումների առկայությունը փաստում է հայ արվեստում այս տիպի ընդունելության և հետագա զարգացման մասին: (**Քրիստոս Ամենակալ** (մեղալիոնի մեջ), Անիի Բախտաղեկի եկեղեցու որմնանկար, XIII դ., Սանկտ Պետերբուրգ, Էրմիտաժ, «**Հիսուսը բազմած գահին**», Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու որմնաքանդակ, X դ., **Քրիստոս**, որմնանկար Քոբայրի գլխավոր եկեղեցու «Հաղորդություն» տեսարանից, XIII դ., «**Բարեխառություն**» Հաղպատի Ս. Նշան եկեղեցու, XIII դ. սկիզբ, **Քրիստոս Ամենակալ** որմնաքանդակ Սպիտակավոր եկեղեցու ապսիդում, XIV դ., **Հիսուս Քրիստոս**, XIII դ. մանրանկար, Մ. Մաշտոցի անվ. մատենադարան., ձ. N 155, ...)

Փրկչի խիստ դիմահայաց կերպարն ունի սրբապատկերային բնույթ և ենթադրում է պատկերին նայելով աղոթքով դիմելու ծիսական գործառնություն: Սրբապատկերներում կերպարները չեն գործում. նրանք առկա են իմաստավոր հավերժության մեջ: Հարթապատկերային սկզբունքը և «հակադարձ հեռանկարը» ձևավորվում է ոչ թե իրականության տեսողական ընկալման վրա, այլ նախ և առաջ սիմվոլների՝ նշանների համակարգի, որը համապատասխանեցված է մտահայեցված կերպարին: Նկարիչը հարազատ է մնացել Ամենակալ Քրիստոսի պատկերագրությանը, ուր բացառվում են մարմնի փոքր անգամ շարժման, բեկման փորձերը: Արտաքին հանգստությունը այստեղ համապատասխանում է ներքին՝ հոգևոր համակենտրոնացմանը: Պատկերի խոշոր չափերը, հանդիսավորությունը, շքեղությունը և սահմանված ներքին խաղաղությունը, որն ուղղորդված է մտահայեցողությամբ հիշեցնում են մակեդոնյան և կոմնինյան շրջանի բյուզանդական արվեստը (XI դ. երկրորդ կես – 1204): Այս շրջանում կերպարի խառնվածքը և գեղարվեստական միջոցները՝ ներդաշնակորեն կապակցված լինելով՝ հմայում էին իրենց անառարկելի կատարելությամբ («Քրիստոս Պանտոկրատոր»-ի խճանկարը Չեֆալու (Սիցիլիա) տաճարի ապսիդում, XII դ. 40-ական թթ., Քրիստոսի պատկերը Կոստանդնուպոլսի Ս. Սոֆիայի տաճարի հարավային սրահի «Դեհիսուս» խճանկարի հորինվածքից, XIII դ. 60-ականներ):

Քրիստոսը պատկերված է որպես միջին տարիքի այր՝ մինչև ուներ երկար շագանակագույն վարսերով, ոչ երկար (նույնպես երկատված) բեղերով և մորուքով, հունա-հայկական գեղեցիկ, ճիշտ համաչափություն ունեցող դիմագծերով, բաց շագանակագույն խոշոր աչքերով: Նրա դիմագծերի և դեմքի արտահայտության մեջ նկատելի է հոգևոր և մտավոր նրբությունը: Ակնհայտ է կերպարից թափանցող աստվածային վերահսկողությունը, լույսի ճառագույնը, կենարար ուժի առատությունը: Մյուս կողմից նրա դիմագծերի շոշափելի մարմնեղությունը՝ երկատված գեղեցիկ վարսերի դարսերը, բացահայտ մեծ արևելյան արտահայտիչ աչքերը, բարակ, երկու համաչափ մասերից կազմված՝ քիթը, ամուր հպված, ոչ մեծ չափի կարմիր շուրթերը՝ ներքինի ուռուցիկ շեշտադրությամբ, հագուստի վառ կարմիր պատմունճանի և կապույտ քիկնոցի գունեղությունը շեշտում են Փրկչի մասնակցող, ամենատես, անքնին էությունը: Այս կերպարը կարծես մեր կողքին է մեզ հետևող, մարդկանց կյանքի մեջ ներգործող և օգնող:

Հմտորեն են հաղորդված ծավալները, հաշվի են առնված մարմնի պլաստիկայի բոլոր նրբերանգները: Գույների ընտրությունը, կիսատոները ներդաշնակված են, ներկերի անցումները ճկուն են համապատասխանեցված մարմնի ձևերին, լուսավորությունը նույնպես հաղորդված է սահուն անցումներով: Համաձայն բյուզանդական խորհրդաբանության, ցանկացած կերպար կամ առարկա պատկերելիս կարևորագույն դերը պիտի հատկացվի լույսին, ընդ որում ստվերի միանգամայն բացակայության պարագայում⁵: Մեր պատկերը ևս պայծառացել է ներքին էներգիայով՝ լույսը բնական կերպով՝ ներկերի օգնությամբ միահյուսվել է մարմնին, այն լուսավորում է կերպարն ամբողջությամբ, ստեղծելով ուժեղ ճառագույն:

Նշանավոր աստվածաբան՝ Պավել Ֆլորենսկին նշում է. ««Պատկերը» օնտոլոգիայի⁶ գոյաբանության դրսևորումն է: «Պատկերը» դեմքի մեջ իրագործված Աստծո նմանությունն է, ուրեմն՝ այն Աստծո վկայությունն է: Պատկեր (հունարեն – εἶδος, ἰδέα) նշանակում է գաղափար, հավերժական

⁴ St' u **В.И. Лазарев**, Система живописной декорации византийского храма IX-XI веков. «Византийская живопись», Москва, «Наука», 1971, с. 96-109.

⁵ St' u **О.С. Попова**, Свет в византийском и русском искусстве XI-XV веков // **О.С. Попова**, Проблемы византийского искусства. Мозаики, фрески, иконы. Москва, "Северный паломник", 2006., с. 83-84.

⁶ **Օնտոլոգիա**, գոյաբանություն՝ իդեալական ուսմունք կեցության մասին:

իմաստի հայեցողություն, հոգևոր էության հայտնություն, երկնային մախապատկեր»։ Ֆլորենսկին գտնում է, որ «սրբապատկերի նպատակն է դուրս հանել գիտակցությունը հոգևոր աշխարհի ոլորտ, ցույց տալ խորհրդավոր գերբնական տեսիլքներ, և եթե դա չի հաջողվում, ուրեմն սրբապատկերն ստանում է միայն նյութական կամ հնագիտական արժեք»⁷։

Այսպիսով, Աբովյան քաղաքի նորակառույց Ս. Հովհաննես եկեղեցու գմբեթի Ամենակալ Քրիստոսի պատկերը իրավամբ կարող է համարվել մեր հոգևոր հաղթանակը՝ քրիստոնեական հավատքի լիակատար և այժմեական փառաբանումը։ Այն պատկերագրությամբ գրագետ, վարպետորեն բարձր որակի աշխատանք է՝ ստեղծված արդի լավագույն սրբանկարիչներ՝ Հայկ և Աբրահամ Ազարյանների աստվածապարզ և տաղանդով և խոր իմացությամբ։ Տասնամյակներ շարունակ զրկված լինելով հավատքի զորեղ սկզբունքներից մենք կրկին խաղաղվում ենք Ս. Հովհաննես Սկրտիչ եկեղեցու Ամենակալ Քրիստոսի վերահսկողության ներքո, քանզի մեր հոգին և գիտակցությունը հաղորդակից է դառնում Նրա իմաստությանը, հզոր կամքին և սիրո էությանը։

Satenik Vardanyan (Armenia)

CHRIST PANTOCRATOR IN THE NEWLY BUILT ST. HOVHANNES CHURCH OF ABOVYAN CITY. TRADITIONS AND ACTUALITY

Christ Pantocrator cupola of the newly built St. Hovhannes Church in Abovyan is an iconographically literate, high quality professional work created by contemporary best icon painters Haik and Abraham Azaryans with their God-pleasing talent and deep knowledge. This icon can exactly be considered as the absolute and actual glorification of the Christian faith. Being deprived of the powerful principles of faith for decades we again obtain our inner peace under the control of the Almighty Christ of this church as our soul and mind get in with His essence of wisdom, powerful will and love.

Ավետիս Քալաշյան (Հայաստան)

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՍԱՐԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

Յանկացած քաղաքակրթված ժողովրդի մտավոր կյանքի անբաժան մասն են կազմում ուսումնակրթական բարձրագույն հաստատությունները, որոնք ասպարեզ են իջնում հասարակության կրթամշակութային կյանքի պահանջմունքները բավարարելու հրամայականով։

Արևելահայ իրականության հոգևոր կրթական կյանքի դարակազմիկ իրադարձություններից է Ալեքսանդր Բ ցարի կողմից 1874 թ. հոկտեմբերի 1-ին հաստատված Գևորգյան ճեմարանի կանոնադրությունը, որը հավաստում է. «**Հոգևոր ճեմարան Հայոց Ս. Էջմիածնի է բարձրագույն հոգևոր կրթական հաստատություն**, որոյ նպատակն է՝ մատակարարել զընդհանուր և զաստվածաբանական կրթութիւն յաղագս լուսաւոր սպասաւորութեան Եկեղեցւոյ Հայոց և պատրաստել զուսուցիչս վասն հոգևոր կրթական հաստատութեանց Հայ լուսավորչական դասնութեան (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)»¹։ Դա գործնականում Գևորգ Դ Սեմազործ Կաթողիկոսի մտահղացման իրականացումն էր, քանի որ Գևորգյան ճեմարանի հիմնադրմամբ նա նպատակ էր հետապնդում «... ընծայել լրութեան Ազգիս զկուսակրօն եկեղեցականս, բայց զայնպիսիս ոմանս՝ որք զաղարեալք բարձրագոյն ուսմամբք կրօնական գիտելեաց և կարեւորացն աշխարհականաց լեզուաց և գիտութեանց, ... առ ի բանալ հետզհետէ զազգային դպրոցս և յաւելլոյ յԱզգիս մերում զբիւ հոգևոր դաստիարակաց, բանիբուն քարոզչաց, քաղցրութեան վարդապետաց բարեսէր դպրապետաց, արիասիրտ հովուաց, մեծարգոյ իմաստասիրաց, համառօտ ասել ի բարեպաշտ վարս կրթեալ և կարևոր ուսմամբք պերճացեալ եկեղեցականաց և ուսուցիչ վարժապետաց ... (ընդգծումները մերն են՝ Ա. Ք.)»²։

Երկրի հասարակական, տնտեսական, քաղաքական ու հոգևոր կյանքի բարդ պայմաններում «Արևելահայ առաջին բարձրագույն դպրոցը պատվով է կատարել իր առջև դրված խնդիրները։ Այդ իրողությունն է վկայում այն փաստը, որ Գևորգյան ճեմարանում դասավանդվող դասընթացները նպա-

⁷ П. Флоренский Иконостас. Москва. «Мир книги», «Литература», 2007, с. 65-72.

¹ ՀՀ Ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 57, ց. 2, գ. 84, ք. 10։

² «Արարատ», 1874, էջ 261։

տակամղվել են Հայ եկեղեցու և ժողովրդի հոգևոր ու հասարակական կյանքի համակողմանի ուսումնասիրությանը և դրանց տեսական յուրացմանն ու ընդհանրացմանը: Գնահատելի է նաև այն, որ ճեմարանն այդ գործընթացում կարևորել է ինչպես կրոնաստվածաբանական, այնպես էլ տեսական գիտելիքների ներդաշնակ զուգորդությունը, ինչն արտացոլվել է անհրաժեշտ ծավալի պատմատեսական, բանասիրական և հայագիտական դասընթացների դասավանդման տեսքով: Իր հերթին ճեմարանի դասախոսական կազմը ևս իր նվիրված գործունեությամբ կարողացել է կարճ ժամանակամիջոցում ապահովել հաստատության ուսումնական կրթական մակարդակը: Քաջ գիտակցելով վստահված գործի վիթխարի պատասխանատվությունը, ճեմարանի մանկավարժական կազմն իր կարողություններն ու եռանդը անմնացորդ ներդրել է հոգևորական նոր սերնդի և հայագետների պատրաստման ու դաստիարակության գործին, որով «ուսումնական տեսակետից» հաստատություն վերածվել է իրական բարձրագույն դպրոցի:

Ճեմարանի կայացման այս փուլում բավականին բարդ խնդիրներ էին ձևավորվել նաև կազմակերպչական ոլորտում: Բանն այն էր, որ Ռուսաստանի ներքին գործոց նախարարի 1874 թ. նոյեմբերի 4-ի գրությամբ թեև հավաստվում էր, որ «բացումը ճեմարանի գոյությունը վավերացրած է՝ Ալեքսանդր Բ կայսեր Բարձրագույն հաճութեամբ», այդուհանդերձ «... ի նկատի առնելով յատկապես Լուսավորութեան նախարարի և Սրբ. Սինոդի Օբեր-պրոկուրորի մի քանի նկատողությունները, կարևոր էր համարել ի Բարձրագույն հաստատություն առաջարկել Հայրապետի ծրագրից ինչ-ինչ փոփոխություններով կազմած մի ժամանակավոր կանոնադրություն, որով 9 տարի պետք է կառավարուէր ճեմարանը, և ապա ձեռք բերուած փորձառութեանց հիման վերայ նոր ծրագիր առաջարկուէր»³: Ռուսաստանի լուսավորութեան նախարարը դեմ էր հատկապես այն բանին, որ հիմնադիրը թերևս «շրջապատող պայմաններն ու միջոցների սղությունն նկատի ունենալով՝ 6 տարուայ սահմանափակ դասընթաց էր որոշել իւր ճեմարանի համար» և «այդ չափը անհամապատասխան էր գտել ճեմարանի անուան ու դիրքին և աշխատել էր նորա ծրագիրը յարմարեցնել Ռուսաց հոգևոր ճեմարանների ծրագրին»⁴:

Այդ արգելքը հաղթահարվեց Մակար Ա Կաթողիկոսի հետևողական ջանքերով⁵: Բանն այն էր, որ «... Ռուս կառավարությունը պահանջել էր ունենալ ճեմարանի կանոնադրությունը: Սա նշանակում էր, որ ճեմարանի վիճակն անորոշ էր և պահանջված ծրագիրը երբեք չէր ներկայացվել կառավարությանը: Ա. Նահապետյանն իր ընկերակիցների հետ միասին մշակեց ծրագիր, կազմեց մի գրություն, ուր մի առ մի հերքվում էր բոլոր այն լուտանքները, որ մութ ուժերը կուտակել էին ճեմարանի վրա ...: Այս հին և կնճռոտ խնդիրը ևս իր լուծումն ստացավ (ընդգծումները մերն են՝ Ա. Բ.)»⁶: Միաժամանակ մշակվեց նաև հաստատության նոր ծրագիր-կանոնադրություն՝ «... իննամեայ շրջան որոշելով և բաժանելով 6 տարուայ դպրանոցական (ռուսական կրթահամակարգի լիցեյների կարգավիճակով՝ Ա. Բ.) և 3 տարուայ բուն ճեմարանական կամ մասնագիտական (բարձրագույն կրթություն՝ Ա. Բ.) դասընթացի», որով էլ «... ճեմարանը իսկական բարձրագույն կրթարան լինելու շատի վերայ դրուեցաւ, և Հիմնադիրը քաջալերուեցաւ կրկնապատկելու և եռապատկելու իւր ջանքերը, որպէս զի հասցնէ այն իւր նպատակին (ընդգծումը մերն է՝ Ա. Բ.)»⁷: Հոգևոր հաստատությունն իր կոչման և առաքելության բարձրության վրա պահպանելու Մակար Ա. Կաթողիկոսի ունեցած անուրանալի ծառայություններից հաջորդը պետք է համարել այն, որ 1889 թ. հոկտեմբերի 10-ի կոնդակով նրա կողմից հաստատվեց Մայր Աթոռի ուսումնական հանձնաժողով: Ճեմարանական կրթության կատարելագործման այդ հիմնադրույթները կյանքի կոչելու հետևանքով բարեփոխվեցին կրթական հաստատության ուսումնական պլանները և ծրագրերը, ներդրվեցին մասնագիտական և հայագիտական

³ «Արարատ», 1899, էջ 510:

⁴ «Օծվելուց հետո Մակարի (Մակար Ա Կաթողիկոսի՝ Ա. Բ.) առաջին գործը եղավ դպրոցների խնդիրը: Խորհրդակցության հրավիրեց ձեռնահաս դեմքեր, ամենն կարող մասնագետներ, ինչպես Սեդրակ Մանդինյան՝ նշանավոր մանկավարժ, Կարապետ Կոստանյանց՝ մեծանուն հայագետ, Արշակ Նահապետյան՝ ճեմարանի տեսուչ, հետագայում եկեղեցական, Ստեփանոս Պալասանյան՝ պատմագետ, և սրանցից կազմեց մի հատուկ հանձնաժողով, որին և հանձնեց խնդրի խորունկ ու բազմակողմ ուսումնասիրությունը՝ մի քանի վանականների աջակցությամբ: Հանձնաժողովը ստուգեց վիճակագրական տեղեկությունները ծխական դպրոցների թվի և նյութական աղբյուրների մասին: ... Սրանց համար ևս մշակվեց ընդհանուր ծրագիր», Ն. Գ. Աղոնց, Մի էջ կաթողիկոսության մերձավոր անցյալից, Երևան, 2012, էջ 45: Հարցի կարևորությունը նկատի ունենալով Մակար Ա Կաթողիկոսի հրահանգով ծրագիրն ամբողջությամբ հրատարակվել է «Արարատ» հանդեսում: Ավելի ուշ այն հրատարակվել է նաև առանձին գրքուկով, տե՛ս Կանոններ հայոց եկեղեցական-ծխական դպրոցների, Վաղարշապատ, 1899:

⁵ Ականատես-ճեմարանավարտ, ականավոր հայագետ Ն. Աղոնցը հավաստում է, որ «Մակար կաթողիկոսն անօրինակ փայփայանք ունեցավ ճեմարանի հանդեպ», և դա բացատրում է նրանով, որ «Մակար կաթողիկոսը առաջին տարին լեթ, շրջապատեց իրեն այն ժամանակվա ամենն պատրաստված և հրապարակի վրա կանգուն մտավոր բարձր ուժերով, նրանց հավատաց ճեմարանի դեկը, և օգտվեց նրանց կարողությունից նաև հայրապետական գործերի մեջ», Ն. Գ. Աղոնց, Մի էջ կաթողիկոսության մերձավոր անցյալից, էջ 45:

⁶ Նույն տեղում, էջ 45-46:

⁷ «Արարատ», 1899, էջ 510:

կրթությունը խթանող նոր առարկաներ: Ծննդարանի ուսումնականական գործընթացի նկատմամբ այդ պատասխանատվությամբ սաներից սկզբունքորեն պահանջվում էր «ամրագրված բնագրային փաստով կայուն գիտելիքների յուրացումը»: Քայլեր կատարվեցին նաև ճննարանի ուսումնական ծրագրերը կատարելագործելու և իր «բուն նպատակին» ծառայեցնելու, ուսումնական գործընթացների համար ահնարաժեշտ հրատարակչական գործը խթանելու, ուսումնական կարգապահությունը բարձրացնելու և այլ ոլորտներում:

Այդ ամենով ճննարանը հայագիտության զարգացմանը նպաստել է երկու ուղղությամբ: Նախ, ուսանողներին հավասարապես շահագրգռել է ինչպես աստվածաբանական, այնպես էլ՝ պատմության և գրական-բանասիրական սկզբնաղբյուրների ուսումնասիրությանը: Ընդ որում, ճննարանի տեսչությունն իր առջև կանգնած աստվածաբանական, հայագիտական և կրոնաբարոյական խնդիրների լուծումը սերտորեն շաղկապել է ոչ թե վարչարարության, այլ՝ բարոյական դաստիարակության հետ:

Այդ կապակցությամբ անդրադառնալով ճննարանի նախընթացին ականավոր հոգևորական և հայագետ Կարապետ Տեր-Սկրտչյանը գրում է. «Եթե նախորդ շրջանները ուսումնական տեսակետից բնորոշել կամենանք, պետք է նկատենք, որ Գաբրիել արքեպիսկոպոսի օրով Ծննդարանում իշխում էր լեզուական կրթությունը՝ ուսուցման կենտրոն կազմում էր հայոց լեզուն ... և յիշատի այդ շրջանի սաները աչքի են ընկնում մինչև այժմ իբրև լավ հայագետ-գրաբարագետներ (ընդգծումը մերն է՝ Ա. Բ.)»⁸: Փաստը հայ ժողովրդի մտավոր և կրթական կյանքում ակնառու դեր կատարած հայագետ-բանասեր շրջանավարտներն են (Մ. Աբեղյան, Ռ. Աբրահամյան, Ստ. Կանայան, Խ. Կանայան, Ա. Առաքելյան և այլք), որոնք Արևելյան Հայաստանում ոչ միայն հիմք դրեցին հայագիտության զարգացմանը, այլև անձնական մեծ ներդրում ունեցան Ծննդարանի ուսումնական կրթական գործընթացներում:

Կարապետ Տեր-Սկրտչյանը հավաստում է նաև. «Երբ Նահապետեան տեսուչ հրապարակեց՝ Հայոց ծխական դպրոցների ծաղկման ժամանակ էր, ... նորա խմբի մեջ էր մեր ամենից հմուտ ու անուանի մանկավարժը, խմբի միւս անդամներն էս մեծ մասամբ փիլիսոփայական կրթություն ստացած (բառի ընդարձակ նշանակությամբ, որ իր մեջ է առնում գրականություն, պատմություն ևն) մարդիկ էին. ուստի այս շրջանում փիլիսոփայական կրթությունը տիրապետող դարձա՝ կենտրոն ունենալով մանկավարժությունը (ընդգծումը մերն է՝ Ա. Բ.)»⁹: Փաստը հայ ժողովրդի մտավոր և կրթական կյանքում ակնառու դեր կատարած ճննարանավարտ հայագետներ-պատմաբաններն են (Ա. Աբեղյան, Բ. Խալաթյան, Ստ. Մալխասյանց, Ն. Աղոնց, Թ. Ավդալբեկյան, Վ. Ռշտունի և այլք), գրականագետ-գրողները (Ե. Մաղաթյան, Ա. Ջամինյան, Պ. Մակինցյան, Լ. Շանթ, Գ. Հայկունի, Դ. Դեմիրճյան, Ավ. Իսահակյան, Լեո Կամսար և այլք), մանկավարժները (Գ. Էդիլյան), երաժիշտները (Ա. Բրուտյան, Ս. Մելիքյան և այլք) և բժիշկ-բնագետները (Հ. Կանայան, Հ. Կարապետյան, Ա. Տեր-Պողոսյան և ուր.):

Պետք է առանձնահատուկ կերպով շեշտադրել նաև այն, որ ճննարանն իր գործունեության առաջին քառորդ դարում նման ակնառու հաջողությունների է հասել շնորհիվ խնամքով մշակված ուսումնական ծրագրերի, որտեղ հայագիտական և «արտաքին» գիտությունների տեսակարար կշիռն ավելին էր, քան աստվածաբանական դիսցիպլիններինը: Կարապետ Տեր-Սկրտչյանն այդ գործունեությունը է բացատրում այն, որ ողջ այդ ընթացքում «ուսումնասիրությունից դեռ ոչ ոք չէր յօժարել հոգևորական կոչումն ընդունել», այնինչ «... Մայր Աթոռի միաբանության անդամների թիւը տարեցտարի պակասում էր, հոգևորականի կարիքը աւելի ու աւելի զգալի դառնում, իսկ նոցա տեղը լեցնող չկար»¹⁰: Եվ Մաղաթիա արք. Օրմանյանի անուրանալի ջանքերի շնորհիվ ճննարանականների մեջ արմատավորվեց նաև այն վստահությունը, որ աստվածաբանական կրթությունը շաղկապված է գործնական կյանքին և որ այդ կապը, ինչպես Կարապետ Տեր-Սկրտչյանն է պնդում «...աստուածաբանի ներքին ըմբռնողությունը պետք է լինի՝ կրօնի մեջ էականը, աստուածայինը տեսնելու ընդունակությունը»¹¹: Ահա թե ինչու աստվածաբան հոգևորականների պատրաստման հրամայականով սաների մեջ արմատավորել է նաև այն հիմնարար գաղափարը, որ «քրիստոնեությունը բարոյականության հետ սերտ կապով է նվաճել աշխարհը», որ քրիստոնեությունը ոչ միայն «մի նոր վարդապետություն է, այլև մի նոր իրական կենսություն», որը «հիմնական նորոգություն է ձգում Աստծո և մարդկանց հարաբերության մեջ, որի պատճառով ... մարդկային հասարակության մեջ միշտ էլ քրիստոնեական իսկական բարոյագիտություն է զգացվում. մեղքի և ապականության մեջ ընկղմվող աշխարհը միայն սա կարող է փրկել, այժմ քան երբեք կրկնակի մեծ է քրիստոնեության դերը»¹²:

Ծննդարանական զարգացումների այս փուլի համար ծրագրային է եղել, «...ուսման ծրագիրը մօտեցնել պետության իր հոգևոր ճննարանների համար մշակված ծրագրին՝ կրօնի ուսուցման

⁸ Նույն տեղում, էջ 514:

⁹ Նույն տեղում, էջ 514: Կարապետ Տեր-Սկրտչյանը նաև վկայում է. «... Ա. Նահապետեան իր խմբով մի նոր հոսանք մտցրեց Ծննդարանի մեջ, որով նա սկսաւ բարձրագոյն դպրոցի կերպարանը ստանալ և բաւարարութիւն տալ ներքին ու արտաքին պահանջներին: Իսկ այդ խիստ կարևոր գործ էր (ընդգծումը մերն է՝ Ա. Բ.)», նույն տեղում, էջ 513:

¹⁰ Նույն տեղում, էջ 514:

¹¹ Նույն տեղում, էջ 427-429:

¹² Կարապետ Տեր-Սկրտչյանի արխիվ, Մաշտոցի անվ. Մատենադարան, գ. 45, թղթ.100, վավ. 1 (ձեռ.):

կենտրոնական տեղ տալով և անուշադիր չթողնելով միանգամայն մեր ժողովրդի ու եկեղեցույ ինքնուրոյն պահանջները. **իսկ ընդհանուր կրթութիւնը վարել այնպէս, որ իրենց կոչման համար ըստ կարելոյն պատրաստ հոգեւորականներ ելնեն այստեղից** (ընդգծումը մերն է՝ Ա. Բ.)»¹³: Եվ միանգամայն բնական պետք է համարել, որ հետևողական այս գործունեության օրինաչափ արդյունքը հանդիսացավ XIX դարի 90-ական թվականների հոգևորական նոր սերնդի (Գևորգ Չորեքչյան (հետագայում՝ Գևորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոս), Գարեգին Հովսեփյան (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս), Կարապետ Տեր-Սկրտչյան, Կոմիտաս, Մելիք-Թանգյան, Երվանդ Տեր-Սիմասյան, Գալուստ Տեր-Սկրտչյան (Սիաբան), Տիրայր արք. Տեր-Հովհաննիսյան, Հուսիկ վրդ. Ջոհրաբյանը, Եզնիկ և Մամբրե վարդապետներ և շատ ուր.) ձևավորումը, որոնցից շատերը հոգևոր ծառայությանը զուգընթաց համալրեցին նաև ճեմարանի դասախոսների շարքը:

Հայագիտության զարգացմանը նպաստող ճեմարանի գործունեության երկրորդ կողմն այն է, որ դասախոսական կազմը չսահմանափակվելով միայն հոգևոր, պատմական ու տեսական գիտելիքներ արմատավորելով, զարկ է տվել նախկինում չտեսնված գիտատեսական գործունեության: Պատմական կարճ ժամանակահատվածում հրապարակ իջան հայոց լեզվի, հայ գրականության, հայոց պատմության և աշխարհագրության, Հայ եկեղեցու պատմության, հայ ազգագրության և հնագիտության, միջնադարյան մի շարք բնագրերի, եկեղեցական և մշակութային գործիչների և ազգային այլ արժեքների պատմաբանասիրական, լեզվաբանական, գրականագիտական և բնագրագիտական մի քանի տասնյակ մենագրություններ, սովորաբար սովորաբար գրքեր և հարյուրավոր հոդվածներ:

Արդյունքում ճեմարանը ոչ միայն դարձավ հայագետների պատրաստման կարևորագույն կրթական կենտրոնատեղի, այլև՝ հայագիտական հետազոտությունների կենտրոն: Այս շրջանում մեկը մյուսի հետևից հրատարակվեցին **հայ միջնադարից պահպանված բնագրեր** (Ստեփանոս Օրբելյանի «Ողբ ի Ս. Կաթողիկէն» (1885), «Թովմա Մեծոփեցու Հիշատակարանը» (1892), «Նոր ժողովածու. Միջնադարեան հայոց տաղեր ու ոտանաւորներ» (1892-1903), «Համամ Արևելցի» (1896) և այլն), **պատմագիտական** («Այրիվանք կամ Գեղարդա վանք» (1871), «Հիսուսած քանից նախնի պատմագրաց հայոց» (Բ. հրատ., 1894), Առաքել Դավրիժեցի, «Պատմութիւն» (1896), Մատթեոս Ուռհայեցի, «Ժամանակագրութիւն» (1898), Սամուել Անեցի, «Հաւաքումնք ի Գրոց պատմագրաց» (1893), «Խորենացու պատմութեան ուսումնասիրութիւն» (Գ. Տեր-Սկրտչեան, 1896), «Պարթևները Պարսկաստանում եւ նրանց յարաբերութիւնները Հայոց հետ» (1897) ևլն, ևլն) և **բանասիրական** ուսումնասիրություններ («Յովհաննէս Թլկուրանցի եւ իւր տաղերը» (1892), «Գրիգորիս Աղթամարցի եւ իւր տաղերը» (1898), «Սկրտիչ Նաղաշ եւ իւր տաղերը» (1898), «Ուրարտեան բեռնագրերի լեզուն» (1893) և արժեքավոր այլ աշխատանքներ):

Մեծ արժեք են ներկայացնում նաև **Հայ եկեղեցու պատմության** («Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց Եկեղեցու հանդերձ կանոնագրութեամբք» (1874), «Երախտաւորաց արդի վանօրէից» (1886), «Հայոց վանքերը» (1886), «Ս. Էջմիածնի նշանակությունը Հայ ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքում» (1892), «Ս. Լուսավորչի Աջը» (1896), «Տեր Պետրոս Ա Գետադարձ» (1897), «Գետրոգ Դ Մեծագործ Կաթողիկոս Ամենայն Հայոց» (1899) ևլն, ևլն), **պատմաեկեղեցագիտական** («Սոկրատ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն» (1897), «Բաղդատութիւն տպագիր Սոկրատի եւ յերուսաղէմի ձեռագրի» (1897), «Պատմութիւն Եկեղեցական անվանեալ Փոքր Սոկրատ և վարք սրբոյն Սեդեատրոսի» (1897), Եպիփան Կիպրացու «Գիրք Հերձուածոց» (1892) ևլն, ևլն), **կրոնագիտական** («Հայոց Հեթանոսական կրոնը» (1879), Ջեռնարկ կրոնագիտության ... (1887) ևլն.), **աստվածաբանական** (Անանիա Նարեկացի, «Գիր խոստովանութեան» (1892), «Աստուածաբանական գիտութիւնները» (1893), «Աթոռ Հայաստանեայց» (1886), «Խոսրովիկ Թարգմանիչ ...» (1899) ևլն., ևլն.), **կանոնագիտական և ծիսաստվածաբանական** («Դասագիրք եկեղեցական ձայնագրութեան Հայոց» (1874), «Կանոն օրհնութեան Սրբալոյս Միռոնին (1876), «Մաշտոց ձեռնադրութեան ...» (1876), «Կանոն ձեռնադրութեան եւ Օծման Կաթողիկոսի եւ Հայրապետի Ամենայն Հայոց» (1876), «Խորհրդատետր Սրբոյ Պատարագի ըստ ծիսի Առաքելական Եկեղեցույ Հայաստանեայց» (1880), Կարգ թաղման Կարգաւորաց...» (1892), «Տոմար եւ Տոնացոյց Հայաստանեայց Ս. Եկեղեցույ. հայոց թեմական դպրոցների եւ Հայ Եկեղեցույ պաշտոնեաների համար» (1890) ևլն), **ազգագրության, հնախոսության և ազգային մշակույթի** («Հնախօսական տեղեկագրութիւն Հաղբատա աշխարհաւոյն Վանից Սրբոյ Նշանի» (1886), «Ծրագիր Հայ Ազգագրութեան եւ Ազգային Իրավաբանական սովորութիւնների» (1887), «Հնութիւնք Վանօրէից...», մաս Ա-Զ (1890-1892), «Տեղեկագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի որ այժմ Նոր-Բայազետ գաւառ» (1895), «Վաղարշապատ» հ. Ա-Բ, (1874-1875), «Մխիթար Սասնեցի (1260-1337) /նմանահանութիւն/» (1899) և **արժեքավոր տասնյակ այլ հետազոտություններն ու դասագրքերը** («Ծաղկաբաղ արձակ և չափածոյ բանից. ի պէտս վարժարանաց» (1880), «Գրաբարի խոնարհումը» (1881), «Գրաբարի հոլովումը մի աղիւսակի մէջ (գործնական եւ գիտական ուսումնասիրութեան համար)» (1881), «Նախաշավիղ գրաբար լեզուի» (1881) ևլն., ևլն):

¹³ «Արարատ», 1899, էջ 515:

Ահա թե ինչու միանգամայն օրինաչափ ու տրամաբանական և արդարացի է այն պնդումը, որ «Չկա որևէ բնագավառ, որտեղ ճեմարանը թողած չլինի իր գործունեության հետքերը: Գևորգյան ճեմարանը միանգամից բարձրացրել է հայ ժողովրդի մտավոր մակարդակը՝ հասցնելով բարձրագույն՝ եվրոպական չափանիշների: Մինչև Երևանի պետական համալսարանի հիմնադրումը ճեմարանը հայ իրականության միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն էր և որպես այդպիսին մի նվիրական ու պատկառելի երևույթ էր հայ կյանքի բոլոր հանգուցակետերում ...»¹⁴:

Avetis Kalashyan (Armenia)

ARMENOLOGY AT THE GEVORKYAN THEOLOGICAL SEMINARY DURING THE LAST QUARTER OF THE NINETEENTH CENTURY

The Gevorkyan Theological Seminary is the only institution of higher learning in Eastern Armenia; its principal mission has been to contribute to the formation of clergy and the education of intellectuals and teachers, providing them with religious and secular knowledge and know-how.

In pursuit of this objective, the formation-education process was constructed on the basis of a healthy and harmonious balance of religious and secular subjects, with special attention to the field of Armenology.

The Seminary's contributions included textual, historical, philological, linguistic and literary studies of various primary sources preserved in the medieval Armenian tradition, covering also articles and monographs on scholars of significance for ecclesiastical, cultural and various other domains within Armenology. Its thus became an unique centre of Armenian studies and research.

Սոֆյա Օհանյան (Հայաստան)

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԿՈՂՄԻՑ

XX դարասկզբին հայ սոցիալ-փիլիսոփայական մտքում գերիշխում էին հայ ազգային գիտակցության ու ինքնագիտակցության, հայոց լեզվի ու մշակույթի պահպանման, ազգային արժեքների ճանաչման, հայության ազգային ինքնակազմակերպման և ազգային պետականության վերականգնման գաղափարները, սոցիալական ու կրոնական պատկանելությունից անկախ ժողովրդի տարբեր հատվածների միավորման գործում ազգայնականության առաջնային նշանակության շեշտման սկզբունքները: Այդ հարցերը կենտրոնական տեղ էին գրավում նաև հայ մշակույթի ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ պատմաբան, գրականագետ, հրապարակախոս, հասարակական գործիչ **Դավիթ Անանունի** տեսական ժառանգության մեջ: Դրանց քննարկմանն է նվիրված նրա «Ռուսահայերի հասարակական զարգացումը» եռահատոր աշխատությունը:

Դավիթ Անանունը (Տեր-Դանիելյան) ծնվել է 1879թ. Արցախում: Դեռևս պատանի հասակում նա հարել է Հնչակյան կուսակցությանը, հետո՝ Դաշնակցությանը, իսկ 1905թ. դարձել է Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության (սպեցիֆիկներ) տեսաբանը: Նա մեծ դեր է խաղացել հայ մամուլի կայացման գործում, եղել է «Մեր ուղին» (1912թ.), «Գործ» (1917թ.) հանդեսների հիմնադիրներից մեկը: 1918թ. վերջերին Անանունն ապրել է Թիֆլիսում և աշխատակցել «Մշակ», «Նոր հոսանք» թերթերին, 1919թ. բնակություն է հաստատել Երևանում ու կազմակերպել «Հայաստանի կոռպորացիա» (1919թ.), «Նորք» (1922թ.) և այլ պարբերականների հրատարակությունը: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ մինչև 1926թ., նա աշխատել է որպես Հեղափոխության թանգարանի տնօրեն, իսկ 1926թ. հետո ապրել է Կովկասի սահմաններից դուրս: Մահացել է 1943թ. Աստրախանում:

Դ. Անանունի գրական ժառանգության մեջ, ինչպես նշվեց, հատուկ տեղ է գրավում «Ռուսահայերի հասարակական զարգացումը» եռահատոր աշխատությունը (առաջին հատորը լույս է տեսել 1916թ. Բաքվում, երկրորդը՝ 1922թ. Էջմիածնում, երրորդը՝ 1926թ. Վենետիկում): Բացի այդ՝ նա հրապարակախոսական հոդվածներով հանդես է եկել տարբեր պարբերականներում:

Դ. Անանունի տեսական ժառանգության միջուկն ազգային ինքնորոշված գործնական փիլիսոփայությունն է, ըմբռնումների այն համակարգը, որը վերածվում է ազգային յուրահատուկ գաղա-

¹⁴ Պ. Հ. Հովհաննիսյան, *Հայ մշակույթի նշանավոր օրրանը*, Նշանավոր ճեմարանականներ, պրակ. 1, Ս. Էջմիածին, 2005, էջ 9:

փարախոսության: Նրա նպատակն էր հայ ազգի ու հայ մարդու ինքնահաստատումն ազգային արժանապատվության ու պատասխանատվության չափանիշներով, նրանց հասարակական ու անհատական գոյության կազմակերպումը: Անանունը փորձում է հայ հասարակական կյանքի զարգացման դրդապատճառները փնտրել բուն հայկական իրականության, այլ ոչ թե գերիշխող այս կամ այն պետության մեջ: Անանունը ոչ գիտական է համարում այն տեսակետը, որը մեր զարգացումը կապում է արտաքին ազդեցությունների, հատկապես հայկական գաղութների գործունեության հետ: Իր համոզմունքը նա բացատրում է այն հանգամանքով, որ դրսից ներմուծված գաղափարները չեն կարող զանգվածային իրադարձության ձևավորման պատճառ դառնալ, եթե բացակայում են այդ գաղափարների յուրացման և տարածման համար համապատասխան հասարակական-տնտեսական պայմանները: Եթե այդ պայմանները գոյություն ունեն, ապա դրանք կազմում են առաջընթացի կարևորագույն գործոնները, իսկ ներմուծված գաղափարի դերը դառնում է երկրորդական: Այս իմաստով Անանունին հետաքրքրում է եղածը և ոչ թե ներմուծվածը:

Ըստ Դ. Անանունի՝ ազգերն իրենք են տնօրինում իրենց ճակատագիրը, եթե ցուցաբերում են համապատասխան գիտակցություն ու կամք¹: Ազգը միատարր զանգված չէ, այլ սոցիալական տարբեր վիճակ ու նպատակներ ունեցող խավերից բաղկացած բարդ մարմին: Հետևաբար, ազգային հավաքման ձգտումը տարբեր չափով է արտահայտվում այս կամ այն խավի մոտ, թեև յուրաքանչյուր խավ կրում է պատասխանատվության ու ակտիվ գործունեության իր բաժինը:

Անանունի կարծիքով՝ XX դարի սկզբին հայկական միակ միասնական կազմակերպությունը և ազգի ներկայացուցիչը եկեղեցին է, որը, չնայած իր մի շարք թերություններին, ձուլման ու այլասերման դեմ հսկայական պատնեշ է եղել և իր նվիրապետական աստիճանակարգությամբ ու շնորհալի, ազգանվեր առաջնորդներով ու հոգևորականներով ազգային հավաքական միության օղակն է կազմել, իսկ կրոնի ու եկեղեցու մենաշնորհը համարվող գրականությունը մեղմացրել է հայի իրարամերժ ոգին և հայությանը փրկել ոչնչացումից:

Փորձելով բացահայտել եկեղեցու կենսունակության պատճառները՝ Անանունն ուսումնասիրում է Հայ եկեղեցու պատմությունը: Առաջին քրիստոնյաները Հռոմից Հայաստան էին բերել տեղի քաղաքացիական ու պետական կյանքին համապատասխան կազմակերպչական մեծ փորձ: Ու երբ Հայաստանի աշխարհիկ իշխանությունն ընկավ ներքին ու արտաքին մի շարք պատճառներով, եկեղեցին իր կազմակերպչական փորձառության ու նյութական հզորության շնորհիվ կարողացավ պաշտպանվել համընդհանուր ավերածությունից: Հայ եկեղեցու պատմության մեջ կարևոր նշանակություն ունեցավ նաև այն, որ Հայաստանը նվաճեցին վարչական բարդ համակարգեր ստեղծելու անկարող թափառական ժողովուրդներ, որոնց հասարակական կյանքում կրոնն առաջնակարգ տեղ էր գրավում: Իսկա՞նք, որքան էլ քրիստոնեությանը հակառակ, այնուամենայնիվ, ընդունեց նրա անհրաժեշտությունը և նրա սպասավորներին պատվավոր տեղ հատկացրեց. քանի որ իսլամի հոգևոր առաջնորդը նաև պետության ղեկավարն էր, ապա Հայ եկեղեցու սպասավորները մահմեդականների համար նաև ազգի ղեկավարներ էին: Այդ վերաբերմունքի հետևանքով Հայ եկեղեցին դարձավ ազգը ներկայացնող կազմակերպություն, իսկ այդ հանգամանքն ավելի նշանակալի դարձրեց Հայ եկեղեցու դերը երեք տեսանկյունից՝ *քաղաքական, տնտեսական ու հասարակական*²:

Հայ եկեղեցու *քաղաքական* նշանակությունը կապվում է այն ժամանակահատվածի հետ, երբ քաղաքական հորիզոնում հայտնվեց իրեն քրիստոնեության պաշտպան հռչակած Ռուսաստանը: Երբ սկսվեց ամրապնդված Ռուսաստանի առաջխաղացումը դեպի հարավ և արևելք, երբ Ռուսաստանն սկսեց աջակիցներ ու համակիրներ փնտրել սահմանամերձ երկրներում, Հայ եկեղեցու կազմակերպությունը համարվեց այն կարևոր ուժերից մեկը, որը կարող էր ինչ-որ օգուտ տալ ռուսական նվաճողական քաղաքականությանը: Ռուսաստանը, հանդես գալով խոստացողի և հուսադրողի դերում, աշխատում էր կազմակերպել իր օգնությանը դիմող քրիստոնյաների դիմադրողական ուժը և այն օգտագործել սպասվելիք պատերազմների ընթացքում: Բացի դրանից՝ միացնելով իրեն մի նոր տարածք՝ Անդրկովկասը, Ռուսաստանը պետականորեն հնարավորություն չուներ մեծամասշտաբ մշակութային կառուցողական գործունեություն ծավալել նորանվաճ երկրում: Այդ պատճառով պետությունը նպատակահարմար համարեց հասարակական որոշ գործառնություններ զիջել Հայ եկեղեցու կազմակերպությանը՝ միաժամանակ չիրաժարվելով գերիշխողի, հրամայողի ու վերահսկողի իր դիրքերից:

Հայ եկեղեցու *տնտեսական* նշանակությունն Անանունը կապում է նվիրակության հետ, որի միջոցով եկեղեցին կարողանում էր կապ պահպանել աշխարհի տարբեր անկյուններում ցրված հայերի հետ ու նրանց նվիրաբերություններով թե՛ շեն պահել իրեն և թե՛ գոհացնել իշխանություններին³:

Եկեղեցու *հասարակական* կարևորությունն այն էր, որ նրա մոտ էր կենտրոնացած ժողովրդի

¹ Տե՛ս ՀՀ Գրականության և արվեստի թանգարան, Դ. Անանունի ֆոնդ, Դ. Անանունի գրությունը պարոն վարչապետին, Եր., 1920:

² Այդ մասին տե՛ս Դ. Անանուն, *Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870)*, հ.1, Բագու, 1916, էջ 82-97, 256-279:

³ Տե՛ս Դ. Անանուն, Իր իսկական դերում. «Մշակ», Թիֆլիս, 1916, ք. 28, էջ 3:

դաստիարակության ու կրթության գործը: Հասարակական կյանքի որոշ գործառույթներ հանձնված էին կրոնի ներկայացուցիչներին, երկրի հասարակական դրությունը կազմում էր Հայոց եկեղեցու հասարակական անհրաժեշտության հիմքը: Եկեղեցուն ընդհանրապես և Հայ եկեղեցուն մասնավորապես մեծ ազդեցություն բաժին ընկավ նաև այն պատճառով, որ նրա պաշտոնավարությունը երկար դարերի ընթացքում գրավեց երկրի մտավոր ուժի մեծ մասը, գիտությունն ու գրագիտությունը եկեղեցական դասի մենաշնորհներն էին, իսկ այդ դասը՝ միակ մտավորականությունը: Անանունի կարծիքով՝ «Երբ խօսվում է եկեղեցու կապակցող ոյժի մասին՝ պիտի շեշտել, որ դա հնարաւոր էր նրա սպասաւորների ինտելիգենտութեան շնորհիւ»⁴: Մեր ազգային կյանքի խաթարված դասավորության պատճառով հոգևորականությունն ստանձնել էր ազգային մտավորականության պարտականությունների մեծագույն մասը: Եկեղեցու և հոգևոր դասի անվտանգ գոյությունը խարսխվում էր բարոյական այն արժեքների վրա, որոնցով նրանք ներկայանում էին հայ ժողովրդին: Եթե մի պահ վերանար եկեղեցու և ժողովրդի միջև գոյություն ունեցող բարոյական կապը, հոգևորականությունն անկարող կլիներ պահպանել իր գոյությունը, քանի որ նրան պաշտպանում էր միայն ժողովուրդը, իսկ ժողովրդի համակրանքն ու աջակցությունը շահելն այնքան էլ դժվար չէր այդ «խավար» ժամանակաշրջանում, երբ ուսումն ու կրթությունը եկեղեցական դասի անխախտ մենաշնորհն էին: Կրթություն տարածելը թողնված էր եկեղեցական դասի կամքին, իսկ դա համարվում էր և՛ նյութական բարեկեցության աղբյուր, և՛ բարեգործություն:

Երբ հայ ժողովրդի ճակատագիրը կապվեց Ռուսաստանի հետ, և նրա առաջ բացվեց աշխարհիկ զարգացման հեռանկարը, անջրպետ առաջացավ ժողովրդի, ազգի և այդ ազգի ներկայացուցչությունն ու ղեկավար ուժը կազմող հոգևոր դասի միջև, որովհետև կարճ ժամանակահատվածում հանդես եկան աշխարհիկ միջավայրից ելած ուսյալ մարդիկ, որոնք ազդարարեցին եվրոպական ուսման առավելությունները: Այսպիսով, հոգևորականների հեղինակությունը սասանվեց: Հայ եկեղեցին կկորցներ իր ազդեցությունը, եթե չկրթեր աշխարհիկ մտավորականներին մրցակից հոգևորականների, մասնավորապես որ արտաքին քաղաքական հալածանքների պատճառով եկեղեցու կազմակերպությունը դարձավ ազգային հոգևոր ինքնապաշտպանության ամենագորեղ կռվաններից մեկը:

Այսպիսով, Դ. Անանունը, ազգային ինքնակազմակերպումը համարելով ազգի գերագույն նպատակը և վերլուծելով այդ գործում ազգի յուրաքանչյուր խավի մասնակցությունը, քննարկում է հայ ազգի ներկայացուցիչ համարվող Եկեղեցու նշանակությունը՝ քաղաքական, տնտեսական և հասարակական առումներով:

Sofya Ohanyan (Armenia)

The appreciation of the armenian church role by David Ananun

David Ananun was armenian historian, specialist in literature and public man at the beginning of the twentieth century, and his theoretical in heritance central subject is the question of consolidation. He studies the political, economic and public meaning of the armenian church, analysing the participation of each stratum of society in that context.

⁴ Դ. Անանուն, Հայոթեան հաւաքական գորութիւնը. «Մշակ», Թիֆլիս, 1915, ք. 181, էջ 2:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---------------------------------|---|
| Յուրի Սուվարյան. Առաջաբան | 5 |
|---------------------------------|---|

ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ

| | |
|--|----|
| ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյան. Բացման խոսք | 7 |
| Մերժ Սարգսյան. Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի մասնակիցներին | 9 |
| Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնության խոսքը հայագիտական միջազգային երկրորդ համաժողովին | 10 |
| Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ հայրապետական գիր օրհնության հայագիտական միջազգային երկրորդ համաժողովին | 12 |
| Յուրի Սուվարյան (Հայաստան). Հայագիտության արդի վիճակը Հայաստանում և զարգացման հիմնախնդիրները | 14 |
| Վալենտինա Կալցուարի (Շվեյցարիա). Եվրոպական հայագիտության արդի վիճակը և խնդիրները | 26 |
| Գևորգ Բարդակչյան (ԱՄՆ). Հայագիտությունը Ամերիկայի Միացյալ Նահանգներում (հակիրճ ընդհանուր ակնարկ) | 30 |
| Сергей Саядов (Россия). Арменоведение в России: Историографический очерк | 33 |
| Հրանուշ Հակոբյան (Հայաստան). Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները և հայագիտության հիմնախնդիրները | 43 |
| Արամ Սիմոնյան (Հայաստան). Հայագիտության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները | 49 |
| Աշոտ Մելքոնյան (Հայաստան). Հայ պատմագիտության խնդիրները արդի ժամանակաշրջանում | 53 |
| Տիգրան Զարգարյան (Հայաստան). «Հայկականը» Հայագիտական հանգույցի ձևավորման ուղղությամբ Հայաստանի գրադարաններում կատարվող աշխատանքների ներկա վիճակը | 55 |
| Ռազմիկ Փանոսեան (Փորթուկալ). Լիզպոնի «Գալուստ Կիլպէնկեան» հիմնարկության հայկական համայնքներու բաժանմունքին հնգամեայ ծրագրին ամփոփումը | 58 |

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----|
| Рубен Атоян, Лариса Атоян, (Беларусь). Методика и технические аспекты создания серии обзорных карт армянского исторического и культурного наследия | 63 |
| Varoujan Aharonian (Italy). The places and paths of armenian presence in rome over the centuries | 66 |
| Զնարիկ Ավագյան (Հայաստան). Հողապահպանության դրսևորումը ԱՄՆ-ի հայ համայնքում պատմական տարբեր շրջափուլերում | 68 |
| Վահրամ Բալայան (ԼՂՀ). ԼՂԻՄ կարգավիճակը Խորհրդային Միության վարչաքաղաքական համակարգում | 71 |
| Վահան Բալթուրյան (Հայաստան). Հայերը և լեանոյան առևտուրը XVII դարում | 74 |
| Օլեքսանդր Բոժկո (Ուկրաինա). Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայ տարեգրությունը՝ որպես XV–XVII դարերի կարևոր պատմամշակութային հուշարձան | 76 |
| Ազատ Բոգոյան (Հայաստան). Կիլիկյան Հայաստանը Բյուզանդական կայսրության ընկալումներում (կոմենտսների դարաշրջան) | 80 |
| Էդուարդ Դանիելյան (Հայաստան). Հայաստանի և այլ երկրների պատմության թուրք-ադրբեջանական կեղծարարությունների քննադատությունը | 84 |
| Gérard Dédéyan (France). The military role of the Armenians in Cyprus (6 TH – 11 TH century) | 88 |
| Анджей Земба (Польша). Армянский вопрос в политической и гуманитарной деятельности поляков и Польши в XIX и в первой половине XX века | 92 |
| Рафаил Зинуров /Уфаеци/ (Россия). Армянское оружие против македонской фаланги (источники и факты) | 95 |
| Կարեն Խաչատրյան (Հայաստան). Հայաստանի Երկրորդ (Խորհրդային) հանրապետության պատմության հիմնահարցերի ուսումնասիրության արդի վիճակը | 101 |
| Հայկո Կոնրադ (Գերմանիա). Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն. պատմիչի մտքերը և պատմության մեկնությունը | 105 |
| Bálint Kovács (Germany). On the myths of belonging to the origin: Armenians about hungarians and themselves in Transylvania in the 19 TH Century | 106 |
| Ալեքսան Զակոբեան (Հայաստան). «Առանշահիկներ – Միհրանեաններ» տոհմաբանական առասպելի պատմական հիմքերը | 109 |
| Ирина Гаюк (Украина). Роль армянских колоний в развитии юго-западного региона Украины | 114 |
| Մհեր Հարությունյան (ԼՂՀ). ԼՂՀ զինված ուժերի շինարարության լուսաբանումը և տեղեկության անվտանգությունը | 118 |
| Մհեր Հովհաննիսյան (Հայաստան). Համացանցային քարոզչության հակահայկական դրսևորումները | 121 |
| Ռոբերտ Ղազարյան (Հայաստան). Խեթագիտությունը Հայաստանում. անցյալ, ներկա և ապագա | 124 |
| Վարդան Մատթեոսեան (ԱՄՆ). Ամերիկեան հակա-գաղթականական հոսանքը և հայերը (1890-1914) | 127 |
| Արտակ Մաղալյան (Հայաստան). Արցախի մեկնությունների պատմության մի քանի հարցերի շուրջ | 131 |
| Էդուարդ Մելքոնյան (Հայաստան). Հայաստան – Սփյուռք հարաբերությունները. սպասումներ և իրականություն | 134 |
| Էդիկ Մինասյան (Հայաստան). Հայաստանի Երրորդ հանրապետության պատմության ուսումնասիրության վիճակն ու հայ պատմագիտության արդի խնդիրները | 136 |
| Ֆելիքս Մովսիսյան (Հայաստան). Միաբարյան միաբանության անդամները Նապոլեոն Բոնապարտի մասին | 141 |

| | |
|--|-----|
| Claude Mutaftian (France). Quelques erreurs récurrentes concernant l'arménie cilicienne | 144 |
| Ալբերտ Մուշեղյան (Հայաստան). Հայկագուհիների հարստության վերականգնումը Հայաստանում (Ուրարտու) մ.թ.ա. 585 թ. և նրա հիմնադիր Արմենիոս թագավորը | 148 |
| Anna Sirinian (Italy). The Armenians in medieval rome the most ancient manuscripts and inscriptions (with a newly discovered epigraph of the 16th century) | 151 |
| Էռնստ Մանես Շիրինյան (Հայաստան). Ալմարկներ հայ միջնադարյան դպրության պատմությունից | 155 |
| Marie-Anna chevalier (France). Some common aspects of the care policy of the military orders and the princes of Armenia | 158 |
| Ирина Скворцова (Беларусь). Армянские текстильные мануфактуры Речи Посполитой | 162 |
| Кжыштоф Стопка (Польша). Армяне и Армянский вопрос в польской политике с XV до XVIII века | 166 |
| Գարրիելյա Ուրուհեան (Բուլղարիա). Արեւելեան Եւրոպայի մէջ հայոց վաղ ներկայութեան նոր վկայութիւն մը՝ Ֆիրենցէի Մետիչէա Լաւրենցիանա գրադարանի ձեռ. S. Marco 790 | 168 |
| Isabelle Augé (France). Nersēs Šnorhali's letters and the role of the catholicos in the XII TH century | 171 |

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----|
| Կարինե Բազեյան (Հայաստան). Հայկական ժողովրդական արվեստի զարգացման դիմամիկան. ավանդույթ և արդիականություն | 178 |
| Երվանդ Գրեկյան, Հասմիկ Հմայակյան (Հայաստան). Միապաշտության դրսևորումները Հայկական լեռնաշխարհում | 181 |
| Բորիս Գասպարյան (Հայաստան). Արենի-1 քարայրի ուսումնասիրության հիմնական արդյունքները | 183 |
| Лусинэ Гулян (Россия). Из истории формирования западно-армянских коллекций в собрании РЭМ | 187 |
| Լարիսա Եզանյան (Հայաստան). Աստղի պատկերով հմայաթաւ վաղբրոնզեդարյան Մեծ Մեպասարից | 190 |
| Սուրեն Հոբոսյան (Հայաստան). Գինեգործության ժողովրդական հմտությունները Լոռու և Տավուշի մարզերում... Հարություն Մարության (Հայաստան). Դարաբաղյան շարժման կամ հայկական հեղափոխության (1988-1990) հիմնական առանձնահատկությունները | 193 |
| Լատրա Մելիքյան (Հայաստան). Աշխարհի արժեքային պատկերի արտացոլումը հայկական բարենադրանքներում | 197 |
| Հուսիկ Մելքոնյան (Հայաստան). Մետաքսի ճանապարհի վայոցձորյան հանգույցի պաշտպանական համակարգը | 200 |
| Գայանե Շագոյան (Հայաստան). Հայկական հարսանիք. վերականգնությունից ապակազմություն | 203 |
| Արմեն Պետրոսյան (Հայաստան). Ընտանիքի մահապետը և նրա առասպելաբանական արտացոլումը (հայ-միջագետքյան հնագույն առնչություններ) | 206 |
| Համլետ Պետրոսյան (Հայաստան). Հուշարձանը և հասարակությունը. Արցախի Տիգրանակերտ | 210 |
| Գագիկ Սարգսյան (Հայաստան). Հայոց եկեղեցու թեմերի ստեղծման վիճական վկայագրերը | 213 |
| Konrad Siekierski (Poland). Armenian files in the archive of the keston center for religion, politics and society: an overview | 216 |
| Հակոբ Սիմոնյան (Հայաստան). Բրոնզի դարի արքայական դամբարաններ Արագածոտնում | 219 |
| Նվարդ Տիրացյան (Հայաստան). Ուրարտական թաղման ծիսակարգի որոշ դրսևորումներ Արգիշտիխիմիլի դամբարանադաշտից | 222 |
| Պատրիկ Տոնապետյան (Ֆրանսիա). Նոր պրակտումներ Երերույք հնավայրում | 226 |

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----|
| Անահիտ Աբրահամյան (Հայաստան). Հայերենից փոխառյալ գործիքանիշ բառերը անդրկովկասյան տարածաշրջանի այլ լեզուներում | 234 |
| Սարգիս Ավետյան (Հայաստան). Հորանջի դիրքում i եւ u ձայնավորների կայունության աստիճանը բառակազմում և բառամիջում (տարածամանկյա-տիպաբանական քննություն) | 237 |
| Յուրի Ավետիսյան (Հայաստան). Ժամանակակից գրական հայերենի նորմավորման հարցեր | 240 |
| Արմինե Գագինյան (Գերմանիա). Քերականացման փուլերը և չափանիշները | 243 |
| Անահիտ Գալստյան (Հայաստան). Հայերեն լեզվաբանական տերմինների գործածության և կանոնակարգման հարցեր | 246 |
| Գոհար Գրիգորյան (Հայաստան). Հայերենի և անգլերենի հուզագնահատողական արտահայտությունների ձևախմբատային հարաբերակցությունը | 247 |
| Սուսաննա Գրիգորյան (Հայաստան). Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի նորահայտ բառերի բառակազմական կադապարները | 250 |
| Գայանե Գևորգյան (Հայաստան). Դիտարկումներ հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի զուգադրական քննության շուրջ | 253 |
| Հովհաննես Զաքարյան (Հայաստան). Լեզվաշինության արդի խնդիրները հայերենի մրցունակության բարձրացման տեսանկյունից | 256 |
| Լեոնիդ Թեյյան (Հայաստան). Շարահյուսական հոմանիշության չափանիշների մասին | 259 |
| Ռոբերտ Թոխմախյան (Հայաստան). Դասական հայերենի հնչյության ձևակարգը | 261 |
| Ամալյա Խաչատրյան (Շվեդիա). Արդյո՞ք պատահական է շվեդերենի և հայերենի հոգերի նմանությունը | 263 |
| Լալիկ Խաչատրյան (Հայաստան). Ծանաչողական լեզվաբանության հարցեր | 266 |
| Հասմիկ Խաչատրյան (Հայաստան). «Ծանապարհ» հասկացության բառանվանումների գործառնական-ձագումնաբանական քննությունը հայերենի բարբառներում | 270 |
| Վիկտոր Կատվալյան (Հայաստան). Տարբերակայնությունը իբրև բարբառի կարևոր հատկանիշ | 273 |
| Վազգեն Համբարձումյան (Հայաստան). Նկատառումներ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» | |

| | |
|--|-----|
| ստուգաբանությունների վերաբերյալ | 277 |
| Խաչիկ Հարությունյան (Հայաստան). Անճանաչումները XIV-XV դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում | 280 |
| Նազիկ Հովհաննիսյան (Հայաստան). Վերլուծական կազմություններ հոմանիշների՝ XVIII դարի ձեռագիր բառարաններում | 283 |
| Լիանա Հովսեփյան, Շուշան Ասիլբեկյան (Հայաստան). Հոլովական գուգաձևությունները V դարի պատմագրության լեզվում | 286 |
| Հայկանուշ Մեսրոպյան (Հայաստան). Քրիստոնեական հիմնական խորհրդանիշի բարբառային դրսևորումները.. Ժամնա Միքայելյան (Հայաստան). Բայի երկրորդական նկարագրական ժամանակները հայերենի արևելյան խմբակցության բարբառներում | 290 |
| Գայանե Մխիթարյան (Հայաստան). Երաժշտական հասկացությունները Աստվածաշնչում | 293 |
| Գարիկ Մկրտչյան (Հայաստան). Միջին հայերենի տարբերակվածության հարցը հայագիտության մեջ | 297 |
| Անահիտ Մուրադյան, Օֆելյա Խաչատրյան (Հայաստան). Վարդան պատմիչի «Պատմություն թաթարաց» աշխատության բառապաշարի բառակազմական վերլուծություն | 300 |
| Միլվա Պապիկյան (Հայաստան). Նեո/ն/ բառի մասին | 304 |
| Լիլիթ Պետրոսյան (Հայաստան). «Երկրաչափություն եզրիտին» թարգմանական երկի գիտաբաններն ու դրանց պատմական զարգացումը | 307 |
| Նորայր Պողոսյան (Հայաստան). 16-17-րդ դարերի հայերեն գրավոր աղբյուրների բնութագիրը | 310 |
| Արմեն Սարգսյան (ԼՂՀ). Ղարաբաղի բարբառը 19-20-րդ դարերի լեզվաբանական ուսումնասիրություններում | 313 |
| Նեկտար Սիմոնյան (Հայաստան). Հնդեվրոպական ձայնդարձի արտացոլումը հին հայերենի բայաբանություններում | 316 |
| Հենրիետա Մուքիայան (Հայաստան). Բժշկագիտական տերմինաբանություն և լեզու | 319 |
| Նարինե Վարդանյան (Հայաստան). Ժամանակակից հայերենի գրական նորմերի խախտումները համացանցում (սոցիալական ցանցերի օրինակով) | 322 |
| Anaid Donabédian-demopoulos (France/Lebanon). Armenian dialects database and its relevance for areal linguistics: contact linguistics and geolinguistics | 324 |
| | 327 |

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----|
| Ալեխտ Դոլոխանյան (Հայաստան). Ֆրանսիացի հայագետ Սեն-Մարտենի գլոխգործոցի արդիականությունը | 333 |
| Վանո Եղիազարյան (Հայաստան). Պատվիրատուն հայ պատմական արձակում (սկզբնավորման շրջան) | 336 |
| Мака Элдакидзе, Ирма Ратиани (Грузия). Образ святой Нино в грузинских и армянских источниках | 339 |
| Ավետիք Բասիակյան (Հայաստան). Ավետիք Բասիակյանը և Հայկական հարցը | 343 |
| Կարեն Խանյան (Հայաստան). Հովհաննես Աղաջանյանի «Հեղափոխական դար» գրքի մոտիվները | 346 |
| Սոկրատ Խանյան (ԼՂՀ). Արդի արձակի զարգացման միտումները Արցախում | 348 |
| Վլադիմիր Կիրակոսյան (Հայաստան). Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը (ուսումնասիրության մեթոդաբանության հարցեր) | 351 |
| Եվա Մնացականյան (Հայաստան). Թումանյանի ստեղծագործությունների գնահատումը «Մշակի» էջերում | 353 |
| Ирина Модебадзе (Грузия). Кавказские реалии в современной грузинской прозе (Ака Морчиладзе) | 357 |
| Հերիքնազ Որսկանյան (Հայաստան). Աշխարհի և մարդու փոխհարաբերության Շնորհալու ընկալումը | 360 |
| Ռուզան Պողոսյան (Հայաստան). Հին արևելյան խրատները Մխիթար Գոշի «Խրատը ոգեշահի»-ում | 363 |
| Մերգել Սարինյան (Հայաստան). Մեթոդաբանական նորոգության միտումները արդի գրականագիտության մեջ.. | 367 |
| Լիլիթ Սաֆրաստյան (Հայաստան). Հայի կերպարը արդի իրանական արձակում Շահրնուշ Փարսիփուր. «Ասիյեն երկու աշխարհների միջև» | 369 |
| Ժենյա Քալանթարյան (Հայաստան). Արդի հայ գրականության ճանաչողական նշանակությունը | 371 |

ԱՐՎԵՍ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|-----|
| Արարատ Աղայան (Հայաստան). Մոռացված անուն. նկարիչ և ճարտարապետ Քրիստափոր (Խաչատուր) Հուսիկյանց (1840-1910) | 375 |
| Աննա Ասատրյան (Հայաստան). Դանիել Ղազարյանի ստեղծագործական ժառանգությունը | 378 |
| Աննա Արևշատյան (Հայաստան). Գրիգոր Գապասաբալյանի երաժշտագիտական ժառանգությունը | 382 |
| Լիլիթ Երնջակյան (Հայաստան). Հայ երաժշտարվեստի մեկնությունները օտար աղբյուրներում | 385 |
| Андрей Иванов (Россия). Градостроительное наследие Еревана: вернакуляр vs. модернизм | 388 |
| Михаил Кокжаев (Армения). Александр Арутюнян. Особенности композиторского стиля | 392 |
| Մուրադ Հասրաբյան (Հայաստան). Հայաստանի XIII-XIV դդ. երկհարկ եկեղեցիների ճարտարապետությունը.... | 394 |
| Հենրիկ Հովհաննիսյան (Հայաստան). Թեոն Ալեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեանց» երկի 13-րդ պարագրաֆը | 398 |
| Армен Казарян (Россия). Архитектурные новации монастыря Оромос. особенности расположения жаматуна и его композиции | 399 |
| Վիգեն Ղազարյան (Հայաստան). Արտաշես Հունանյան նկարիչը | 403 |
| Յուրի Յուզբաշյան (Հայաստան). Կոմիտասի երաժշտամանկավարժական հայացքների համամարդկային նշանակությունը | 405 |
| Միք Նավոյան (Հայաստան). Շարականի կարգի կառուցվածքն ու մի քանի բնութագրերը | 409 |
| Տաթևիկ Շախկուլյան (Հայաստան). Կոմիտաս և Բարտոկ. հետազոտական և ստեղծագործական գուգահեռներ | 412 |
| Збигнев Шмурло (Польша). Армянские хачкары в Польше | 415 |
| Татевик Саргсян (Украина). Храм святой Рипсиме в Ялте | 419 |

| | |
|--|-----|
| Ռուգան Սարյան (Հայաստան). Մարտիրոս Սարյանի գրքարվեստը | 422 |
| Գարեգին Քոթանջյան (Հայաստան). Հակոբ Կոջոյանի ստեղծագործության գեղարվեստական առանձնահատկությունները | 425 |

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՎԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

| | |
|--|-----|
| Մարի Ռոզ Աբուսեֆյան (ԱՄՆ). Հայոց ցեղասպանության արտացոլումը Հակոբ Օշականի գործերում | 429 |
| Մելինե Անուժյան (Հայաստան). Ցեղասպանության հանցագործների դատապարտումը երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների օրինակով | 432 |
| Անահիտ Աստոյան (Հայաստան). Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ. | 435 |
| Ջեմմա Բառնաթյան (Հայաստան). Հայոց ցեղասպանությունը և հայ բարբառները | 438 |
| Սեդա Գասպարյան (Հայաստան). Հայոց ցեղասպանության արժարժումները լեզվաճանաչողական մեկնակետից | 441 |
| Анушаван Закарян (Армения). Русские литературные деятели об Армянском вопросе и о геноциде армян (10-е годы XX века) | 444 |
| Աշոտ Հայրունի (Հայաստան). Գերմանիան և Մեծ եղեռնը | 447 |
| Արմենուհի Դամբարյան (Հայաստան). Հայկական հարցն ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում 1918 թ. սկզբին | 451 |
| Արմեն Մարուքյան (Հայաստան). Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման նոր հայեցակարգի ընդունման անհրաժեշտությունը | 454 |
| Barlow der Mugrdchian (USA). The theme of genocide in twentieth century Armenian-American literature | 457 |
| Քրիստինե Մելքոնյան (Հայաստան). Հայկական տարածքների պահանջատիրության խնդիրը թուրքական և արևմտյան մամուլում (1945-1947 թթ.) | 460 |
| Վերա Սահակյան, Վազգեն Պողոսյան (Հայաստան). Թուրքիայի «Վարչապետության հանրապետական արխիվի» փաստաթղթերի տվյալները հայերի իրավունքների սահմանափակումների վերաբերյալ | 463 |
| Նվեր Սարգսյան (Հայաստան). Ցեղասպանության դասերը. շարունակվող մարտահրավերներ | 469 |
| Ռուբեն Սաֆրաստյան (Հայաստան). Թուրքական պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության նախապատրաստման մասին | 473 |
| Խաչատուր Ստեփանյան (Հայաստան). Հայ-թուրքական հարաբերությունների խնդիրը սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (1920-1930-ական թթ.) | 476 |
| Հասմիկ Ստեփանյան (Հայաստան). Ցեղասպանությունը և օսմանյան նախարարական ու դիվանագիտական հայկական հանձնակազմը | 479 |

ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

| | |
|---|-----|
| Левон Батиев (Россия). Особенности формирования диаспоры армян Дона и сохранение этно-национальной идентичности | 482 |
| Նվարդ Երնջակյան (Հայաստան). Ազգային ինքնության դրսևորումները հայկական և բրիտանական գրական երկերում | 485 |
| Մեյրան Զաքարյան (Հայաստան). Ազգային և քաղաքացիական հայոց ինքնության արդիականացման գործընթացում | 487 |
| Бурастан Зулумян (Россия). Историософия литературы. Образ автора в «Истории Армении» Мовсеса Хоренаци | 490 |
| Փոլ Հայտոսթեան (Լիբանան). Սփիռքահայ հաստատությունական մշակոյթը և ինքնութեան խնդիրներ | 493 |
| Վերծին Սվազյան (Հայաստան). Ազգային ինքնության դրսևորումը ամերիկահայոց բանավոր ավանդության մեջ (ըստ 1979, 1989, 2001, 2008 թթ. անձնական գրառումների և ազգաբանական դիտարկումների) | 496 |
| Անդրանիկ Տազեխան (Լիբանան). Դակատագրակից ինքնութիւններ. ոչ հայ փորձամասնութիւններու եւ հայութեան ինքնութեան խնդիրներու շուրջ մտորումներ | 500 |

ՀԱՅ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ, ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ. ՁԵՌՋԲԵՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՁԱՐԳԱՅՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

| | |
|---|-----|
| Սեն Արևշատյան (Հայաստան). Սարգիս Բերիացի՝ անհայտ հայ փիլիսոփա | 504 |
| Համլետ Գևորգյան (Հայաստան). Արիստոտելի փիլիսոփայական և տրամաբանական գրվածքների հայերեն թարգմանությունների եւ մեկնությունների բնորոշ առանձնահատկությունների մասին | 506 |
| Յակով Խաչիկյան (Հայաստան). Համառոտ ուրվագիծ հայ էսթետիկական մտքի պատմության ուսումնասիրության | 508 |
| Գագիկ Հարությունյան (Հայաստան). հայագիտությունը որպես անվտանգության «Կրիտիկական ենթակառուցվածք» | 512 |
| Վալերի Միրզոյան (Հայաստան). Իշխանության և առաջնորդման ըմբռնումը հայ կառավարչական մտքի շրջանակներում | 515 |
| Կառլեն Միրումյան (Հայաստան). Ազգային միտքը արդի մարտահրավերների համատեքստում | 518 |
| Ռիմա Միրումյան (Հայաստան). Ազգային ինքնության հիմնախնդիրը Խորեն Աշրգյանի քաղաքական - փիլիսոփայական հայեցակարգի մեջ | 522 |
| Լևոն Շիրինյան (Հայաստան). Հայաստանը և նեղուցները (1914 թ. հունվարի 26-ի համաձայնագիրը) | 525 |
| Աշոտ Ոսկանյան (Հայաստան). Գայթակալություն շպենզերականությամբ («հայկականության» ֆեմոմենը Զարյան-Օշական-Չարենց եռանկյունու լարման դաշտում) «Հայկականության խորհուրդ» ու «մոգական հոգին» | 528 |
| Գևորգ Պողոսյան (Հայաստան). Հայերն աշխարհում. բնակչության պատմական տեղաշարժեր | 531 |
| Անահիտ Զիջյան (Հայաստան). Կարիքավոր ընտանիքների հետ իրականացվող «քրիստոնեական սոցիա- | |

| | |
|---|-----|
| լական աշխատանքի» որոշ առանձնահատկությունները ՀՀ-ում | 535 |
| Սուրեն Սարգսյան (Հայաստան). Մեսրոպ Մաշտոցը և Մովսես Խորենացին որպես հայագիտության հիմ- նադիրներ | 538 |
| Հայկ Սուքիասյան (Հայաստան). Պոստդեմոկրատիա, թե՞ մետոտալիտարիզմ | 541 |
| Ռոմիկ Քոչարյան (Հայաստան). Հերմենևտիկական խնդրակարգի ներկայությունը պատմությունում և Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը | 544 |
| Էմիլ Օրդուխանյան (Հայաստան). Ընտրական մշակույթը ՀՀ քաղաքական գործընթացներում | 548 |

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

| | |
|---|-----|
| Անահիտ Ավագյան (Հայաստան). Աթանասյան հավատո հանգանակի հայերեն թարգմանություններն ու խմբագրությունները | 552 |
| Քնարիկ Ավետիսյան (Հայաստան). Խորհրդանշական մի շարք պատկերներ 17-րդ դ. -19-րդ դ. առաջին կեսի հայկական սրբանկարչության մեջ | 555 |
| Մելանյա Բալայան (ԼՂՀ). Աղվանից կաթողիկոսության ենթակա եպիսկոպոսությունները 6-7-րդ դարերում | 558 |
| Հրաչիկ Միրզոյան (Հայաստան). Ջաքարիա Ագուլեցու երկը որպես հայ եկեղեցու պատմության սկզբնաղբյուր ... | 561 |
| Տեր Արարատ քահանա Պողոսյան (Հայաստան). Հայագիտությունը «Էջմիածին» ամսագրում (1944-2013 թթ.) ... | 564 |
| Սաթենիկ Վարդանյան (Հայաստան). Աբովյան քաղաքի նորակառույց Ս. Հովհաննես եկեղեցու ամենակալ Քրիստոսը (ավանդույթ և արդիականություն) | 568 |
| Ավետիս Քալաշյան (Հայաստան). Հայագիտությունը Գևորգյան հոգևոր ճեմարանում XIX դարի վերջին քառորդին | 571 |
| Մոֆյա Օհանյան (Հայաստան). Հայ եկեղեցու դերի գնահատումը Դավիթ Անանունի կողմից | 575 |

Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ

17–19 հոկտեմբերի, 2013 թ.

Ջ ե կ ու ց ու մ ն ե ի ի ժ ո դ ո վ ա ծ ու

Հրատ. խմբագիրներ՝ Ա. Սահակյան, Ա. Հովակիմյան, Ն. Նանասյան
 Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր N 549
 Ստորագրված է տպագրության՝ 10.11.2014թ.:
 Չափսը՝ 60 x 84 ¹/₈, թուղթ N 1, օֆսեթ տպագրություն,
 37,25 տպագրական մամուլ:
 Տպաքանակը՝ 250 օրինակ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան
 Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24